

ԱՅ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

1826



АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР

Институт литературы имени М. Абегяна

АРМЯНСКИЕ НАРОДНЫЕ СКАЗКИ

Под общей редакцией
академика
ИОСИФА ОРБЕЛИ

II

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР

Ереван 1959

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ

Մ. Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ

Ընդհանուր խմբագրությամբ
ակադեմիկոս
ՀՈՎՍԵՓ ՕՐԲԵԼՈՒ



II

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Երևան 1959

Տպագրվում է Հայկական ՍՍՌ
Գիտությունների ակադեմիայի խմբագրական-հրատարակչական
խորհրդի որոշմամբ

Խմբագրական կոլեգիա
ՅՈՐԴԱՆ Ս. Ե., ՀՈՎՆԱՆ Գ. Ն., ՂԱՆԱԼԱՆՑԱՆ Ա. Տ.,
ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՑԱՆ Կ. Ա., ՆԱՋԻՆՑԱՆ Ա. Մ.

Հատորը պատրաստեց և նախաբանը գրեց
Ա. Մ. ՆԱՋԻՆՅԱՆԸ

Խմբագիր՝ Կ. Ա. ՄԵԼԻՔ-ՕՀԱՆՋԱՆՅԱՆ

ՆԱԽԱԲԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԻ

«Հայ ժողովրդական ճեմիաթների» գիտական հրատարակության երկրորդ հատորը պարունակում է Արարատյան դաշտի միայն Վաղարշապատ գյուղի (այժմյան էջմիածին քաղաքի) ճեմիաթները:

Պատմական Վաղարշապատը տեղադրվում է Մեծ Հայքի Այրարատ նահանգի Արագածոտն գավառում, Վաղարշապատի դաշտում: Պատմագիրների տեղեկություններին համաձայն Վաղարշապատը որպես բնակավայր հիշվում է վաղ ժամանակներից: Հայտնի է, որ դեռ նախահեթանոսական մեր թվականությունը Վաղարշապատը կոչվել է Վարդգեսավան, որի մասին Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ պահպանվել է ժողովրդական վիպական երգի մի պատառիկ:

Հետագայում, 117—140 թթ. Արշակունի Վաղարշակ Ա. թագավորը վերակառուցել, մեծացրել ու պարսպապատել է այդ ավանը և դարձրել իր մայրաքաղաքը, վերանվանելով Վաղարշապատ: Վաղարշապատն ունեցել է նաև այլ անուններ՝ Նոր քաղաք, Քաղաքուղաշտ, Քաղաքամայր, ուշ շրջանում՝ էջմիածին: Վաղարշապատի բնակչությունը դեռ հին ժամանակներից զբաղվել է գյուղատնտեսական կուլտուրաների մշակությամբ, հատկապես խաղողագործությամբ ու պտղաբուծությամբ:

Խոշոր ու նշանակալից դեր է խաղացել Վաղարշապատը պատ-

մական Հայաստանի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքում: Քրիստոնեությունը Հայաստան մուտք գործելուց հետո Վաղարշապատը երկար ժամանակ ճանդիսացել է Հայաստանի կրոնական կենտրոնը:

Վաղարշապատի դաշտի մյուս գյուղերի համեմատ բուն Վաղարշապատում բնիկ ազգաբնակությունը գերակշռող է եղել և համեմատաբար լավ է պահպանել տեղի լեզվա-բարբառային ու ազգագրական երանգը, մի հանգամանք, որն իր վառ արտացոլումն է գտել նաև Վաղարշապատի ենթիաթներում:

Այս հատորում զետեղված Վաղարշապատի ենթիաթների գերակշռող մասը հավաքել ու գրի է առել ջանասեր ու նմուտ բանահավաք-հրատարակիչ Տիգրան Նավասարդյանցը:

Տ. Նավասարդյանցը հայկական մշակույթի այն բազմերախտ ու երանդուն մշակներից է, որն առանձնահատուկ նշանակություն է տվել ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքմանն ու հրատարակմանը:

Ինչպես Գ. Սրվանձտյանցը Արևմտյան Հայաստանում, այնպես էլ Տ. Նավասարդյանցը Արևելյան Հայաստանում առաջիններն էին, որ բարձր գնահատեցին աշխատավոր ժողովրդի բանավոր ստեղծագործությունը և իրենց կյանքի ու գործունեության ընթացքում անձնանձիր ու մեղվաջան ձեռնամուխ եղան բանավոր գրականության նյութերի հավաքմանն ու հրատարակմանը: Հայ բանահյուսության այդ ռահվիրաներն ուղեցույց օրինակ հանդիսացան բանահավաքների ու բանասերների հետագա մի ամբողջ սերնդի համար:

Տ. Նավասարդյանցը դեռ վաղ մանկությունից սիրել է ժողովրդական բանահյուսությունը: Տասնինգ տարեկան հասակում, դեռևս Ներսիսյան դպրոցում սովորելու ժամանակ, արձակուրդներին նա սկսեց հավաքել ժողովրդական բանահյուսության նյութեր, որը և հետագայում դարձավ նրա ամենասիրած զբաղմունքը:

Երկարաձիգ տարիների ընթացքում Տ. Նավասարդյանցը, գյուղից գյուղ շրջելով, իմն անձամբ ժողովել է շատ նյութեր և ուրիշներին՝ համակներով, մամուլում տպագրած հայտարարություններով ոգեշնչել ու բաջալերել է՝ հավաքել և կորստից փրկել հայ ժողովրդի տարբեր հատվածների բանավոր երգերը, ենթիաթները,

զրույցներ, առածներն ու մյուս ժանրերի ստեղծագործությունները:

Տ. Նավասարդյանցի եռանդուն ջանքերի ու անձնվեր գործունեության շնորհիվ սկսած 1876 թվականից հավաքվում ու կուտակվում է ժողովրդական բանահյուսության բազմաժանր նյութերի մի պատկառելի ժառանգություն: 1882 թ. լույս է տեսնում Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներին» առաջին գիրքը, որի առաջաբանում երիտասարդ խանդավառ բանահավաքը մեծ ոգևորությամբ խոսում է հայ ժողովրդական բանահյուսության նյութերի հավաքման նշանակության ու կարևորության մասին և շարադրում իր նպատակներն ու պլանները:

Զրկված լինելով նյութական միջոցներից ու հնարավորություններից՝ Տ. Նավասարդյանցը, իր կատարած գործի խոր գիտակցությամբ ու նվիրվածությամբ, դժվարին պայմաններում ու զոհողությունների գնով շարունակում է բանահավաքչական գործունեությունը և մինչև 1903 թ. մեկը-մյուսի հետևից լույս ընծայում «Հայ ժողովրդական հեքիաթների» տասը գիրք և «Հայ ժողովրդական ավանդությունների» մի ժողովածու: «Հայ ժողովրդական հեքիաթների» հերթական 11-րդ գիրքը, կիսամամրագիր ձեռագիր վիճակում բազմաթիվ այլ անտիպ նյութերի հետ մնացել է Տ. Նավասարդյանցի արխիվում:

Ժամանակի մամուլը և գրական-հասարակական գործիչները բարձր են գնահատել Տ. Նավասարդյանցի կատարած գործը: Հայ վիպասանության մեծ վարպետ Րաֆֆին մի առիթով գրել է. «Ես դարձյալ կրկնում եմ միևնույն միտքը, որ վերևում հիշեցի. մեզանում ընկերությունները կազմվում են ոչ թե գործ կատարելու համար, այլ գործը սպանելու համար: Իսկ մասնավոր մարդիկ իրենց եռանդով, անձնանվիրությամբ, տոկունությամբ ավելի են գործում, ավելի արդյունք են ցույց տալիս, քան թե մի ամբողջ ընկերություն:

Ինձ համար ավելի մեծ նշանակություն ունի մի երիտասարդ Նավասարդյանցի աշխատությունը, որը աղոտ, ամեն միջոցներից զուրկ, բայց սիրտը լի եռանդով դերվիշի նման ոտով մաս է գալիս հայոց գյուղերը, մտնում է ժողովրդի ամեն ծալրերի մեջ, հեքիաթներ է հավաքում և մեր գավակներին ընթերցանության տետրակներ է տալիս: Բայց ի՞նչ է շինում հայոց գրքերի տպագրական ընկերությունը.— ոչ ոք չգիտե:

Այդ բոլորը ինձ ակամայից ասել տվին մի քանի տխուր հանգամանքներ, որոնց վրա երկար խոսելը ավելի հետու կտաներ: Բայց ինչ որ ճշմարիտ է, այն է, որ մեզանում մեծ պետք է զգացվում մեր երկիրը, մեր ժողովուրդը, մեր անցյալը և ներկան ուսումնասիրելու»[1]:

Ոգեշնչված Տ. Նավասարդյանցի անձնվեր ու եռանդուն գործունեությամբ և հետևելով նրա օրինակին, բազմաթիվ հայ մտավորականներ Հայաստանի տարբեր գավառներում սկսեցին հավաքել ժողովրդական բանավոր գրականության առատ նյութերը, խոշոր ավանդ ներմուծելով հայկական բանահյուսության գանձարանը:

Տ. Նավասարդյանցի հավաքած ու ձեռք բերած տպագիր ու անտիպ նյութերը պարունակում են բանահյուսական գրեթե բոլոր ժանրերի նմուշները: Գերակշռող տեղ են գրավում հեքիաթները, որոնք ժողովված են տարբեր վայրերից:

Այս հատորում տեղ են գտել Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» I—X գրքերում տպագրված և XI անտիպ գրքում զետեղված Վաղարշապատի հեքիաթները: Տ. Նավասարդյանցի արխիվում գտնվող Վաղարշապատի և Արարատյան դաշտի բնակավայրերի անտիպ մյուս հեքիաթները կընդգրկվեն ներկա հրատարակության հաջորդ, հերթական երրորդ հատորի մեջ: Նույն արխիվում հավաքված այլ բնակավայրերի հեքիաթները կտեղաբաշխվեն համապատասխան հատորներում, ըստ տեղագրական սկզբունքի:

«Հայ ժողովրդական հեքիաթների» սույն հատորում տեղ գտած Վաղարշապատի հեքիաթների մյուս մասը հավաքել է բազմավաստակ ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանը և հրատարակել «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուի երկրորդ գրքում:

***

«Հայ ժողովրդական հեքիաթների» երկրորդ հատորում հետևողական կերպով պահպանված են տեքստաբանական այն սկզբունքներն ու կանոնները, որոնք մշակված են ամբողջ հրատարակության հա-

[1] Րաֆֆի, *Համասյի մելիքությունները, Թիֆլիս, 1882, էջ 413—414:*



Բանահավաք-հրատարակիչ ՏԻԳՐԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆՑ
(1861—1927)

մար, հաշվի առնելով նաև այս հատորի նյութերի բնույթն ու առանձնահատկությունները: Անհրաժեշտ ենք համարում այստեղ համառոտակի նշել տեքստաբանական այն ընդհանուր սկզբունքները, որոնց մասին խոսված է առաջին հատորի առաջաբանում:

1. Պահպանված է հեքիաթների պատումների ամբողջականությունը: Տպագիր ու ձեռագիր աղբյուրներից առնված նյութերը չեն ենթարկված որևէ խմբագրական փոփոխության (հապավում, հավելում և այլն): Տպագիր նյութերի գրառման ձեռագրերը պահպանված լինելու դեպքում, տպագրվածը հիմք ընդունելով՝ համեմատված է ձեռագրի հետ և նշված տեքստային տարբերություններն ու փոփոխությունները, երբ դրանք իմաստային կամ լեզվա-բարբառային արժեք են ներկայացնում: Ասացողների «սխալները»՝ պատմելու ընթացքում այուժետային գծից խոտորումներ, դեպքերի, դեմքերի, բվերի շփոթում ու անհամաձայնություն և այլն, չեն ուղղված, բայց դրանց մասին նշումներ է արված ծանոթության կարգով: Չեն ուղղված նաև գրական լեզվից ու օտար լեզուներից վերցված այն բառերը, որոնք ասացողները գործ են ածել աղավաղված ձևով: Այդպիսի դեպքերում աղավաղված բառը շարված է շղատառով և անհրաժեշտության դեպքում ծանոթագրված: Հեքիաթների վերնագրերը մնում են այնպես, ինչպես սկզբնաղբյուրներում է. երբ հեքիաթը անվերնագիր է, ապա վերնագրված է մեր կողմից՝ հաշվի առնելով թեման կամ այուժետը և այդ մասին նշված է ծանոթագրության մեջ:

2. Հեքիաթների լեզուն չի փոփոխված, այսինքն՝ թողնված է այնպես, ինչպես գրի են առել բանահավաքները ասացողներից: Բարբառների կամ խոսվածքների ձևաբանական կամ հնչյունական արտասանական նշգրիտ պատկերը վերականգնելու նպատակով փոփոխություններ չեն կատարված: Դրա փոխարեն համապատասխան հատորի վերջում որպես հավելված տրված է որևէ հեքիաթ՝ տվյալ բարբառի կամ խոսվածքի լեզվական օրինաչափությունների և տառադարձության նշգրիտ պահպանմամբ: Յուրաքանչյուր հատորի հեքիաթների մեջ բառերի արտասանական-ուղղախոսական բնույթի խայտաբղետություն չստեղծելու համար միօրինակ են դարձված նույն բառերի գրության տարբեր ձևերը:

3. Անցյալում հրապարակված հեքիաթների տեքստերում և բանահավաքների գրառման ձեռագրերում հետևողականորեն ու

ճիշտ չեն օգտագործված տրոհության ու առոգանության նշանները, ինչպես և հստակ չի կատարված տեխտերի պարբերությունների ու երկախոսությունների բաժանումը: Մինչդեռ դրանք շատ կարևոր են բանաձյուսական ստեղծագործության բովանդակությունը ճիշտ ըմբռնելու և բանավոր խոսքի գեղարվեստական-արտահայտչական յուրահատկություններն հաղորդելու համար: Ներկա հրատարակության մեջ հետևողականությամբ ուղղված ու նշված են տեխտերի պարբերությունների ու երկախոսությունների բաժանումը, հստակ ու որոշակի է դարձված ուղղակի և անուղղակի խոսքի կիրառումը: Ելնելով ժողովրդական բանավոր խոսքի առանձնահատկություններից ու պահանջներից և նկատի ունենալով այդ խոսքի իմաստային ու արտահայտչական նրբերանգները՝ նշված է նաև տեխտերի կետադրությունը:

Բացի հատուկ անուններից տեխտերում մեծատառով են գրված նաև կենդանական ու բուսական աշխարհի առանձին ներկայացուցիչներին տրված անունները և հեքիաթներում գործող հերոսներին տրված մականունները:

4. Տեխտերի նկատմամբ միջամտություն է ցուցաբերված միայն այն դեպքում, երբ սկզբնաղբյուրներում եղել են բացահայտ վրիպումներ: Երբ հանդիպած վրիպումը կասկած է հարուցում, էջատակին տրված է նաև նշվող բառը կամ արտահայտությունը: Սկզբնաղբյուրներում հանդիպող բանահավաքների ընդմիջարկությունները (բառերի և արտահայտությունների բացատրություններ, առանձին դեպքերի ու դրվագների մեկնաբանություններ և այլն) առանձնացված են բուն տեխտից և դրված էջատակին: Ասացողների ընդմիջարկումներն ու հավելումները թողնված են բուն տեքստում, առնելով փակագծի մեջ, իսկ էջատակին համապատասխան ծանոթություն է տրված:

Բոլոր տեսակի նշումների, բացատրությունների ու ծանոթագրությունների դեպքում էջատակին հատկապատասխան նշում է կատարված՝ Ժ. Բ. (ծանոթություն բանահավաքի), Ժ. Կ. (ծանոթություն կազմողի), Ժ. Ա. (ծանոթություն ասացողի):

Այս ընդհանուր սկզբունքների ու կանոնների կիրառմանը զուգընթաց հաշվի են առնված նաև սույն հատորի նյութերի առանձնահատկությունները:

***

Երկրորդ հատորում ընդգրկված Տ. Նավասարդյանցի և Եր. Լալայանի գրի առած ու հավաքած Վաղարշապատի հեքիաթները որոշ չափով զանազանվում են իրարից գրառման եղանակով ու սկզբունքով:

Ինչպես ցույց են տալիս Տ. Նավասարդյանցի արխիվում պահվող նրա գրառման ձեռագրերը, տպագիր նյութերի վրա կատարած ուղղումները, սեպագիր նշումներն ու կոնսպեկտները, բանահավաքը սղագրական եղանակով չի վերարտադրել ասացողների պատմածը:

Հավաքորեն նա լսել է ասացողներին, կատարել հեքիաթի սյուժետային կմախքն ուրվագծող նշումներ, հետո վերարտադրել ըստ րովանդակության և ապա ասացողներին նորից պատմել տալով ստուգել և ճշտել վերարտադրածը: Այս բոլորը ենթադրում են՝ ելնելով մահրագրած օրինակներից, նույնիսկ տպագրած տեքստերի վրա նրա կատարած բազմապիսի ուղղումներից ու խմբագրումներից: Այդ ուղղումներն ու խմբագրումները, սակայն, գրական մշակման կամ ժողովրդական պատումներից հեռանալու բնույթ չեն կրում. ընդհակառակը դրանք նպատակ ունեն վերականգնել բովանդակությունը, հարազատորեն պահպանել բարբառի առանձնահատկությունները, ժողովրդական պատմելաձևի ոճական ու արտահայտչական երբեմնագծերը: Լինելով բնիկ վաղարշապատցի ու նրա շալի տիրապետելով բարբառի մանրամասներին, ինչպես և օժտված լինելով ժողովրդական բանաստեղծության ընկալման ու վերարտադրման արտակարգ հմտությամբ, Տ. Նավասարդյանցը տվել է Վաղարշապատի հեքիաթների առաջնակարգ պատումներ, որոնք սլացիկ ու կուռ են իրենց սյուժետային զարգացմամբ և պահպանում են ժողովրդական լեզվի համն ու հոտը: Տ. Նավասարդյանցի հավաքած ու գրի առած հեքիաթների պատումներում հարազատորեն պահպանված է Վաղարշապատի խոսվածքի բառակազմական յուրահատկությունները: Տ. Նավասարդյանցը չի վերարտադրել Արարատյան բարբառի բաղաձայնների տեղաշարժի ենթումն ու գրությունը, այլ հետևել է հայերենի բաղաձայնների ավանդական գրությանը: Բացառություն են կազմում թերևս էգել (փոխանակ՝ զգել) և մի քանի այլ բառեր, որոնց գրությունը հարմարեցված է բարբառային ընթերցմանը: Բարբառի ձևաբանության ու հնչյունափոխության իրողու-

թյուններր, սակայն, Տ. Նավասարդյանցի գրառումներում հիմնականում պահպանված է:

Ինչ վերաբերում է սույն հատորում զետեղված Ր. Լալայանի գրի առած ու հավաքած Վաղարշապատի հեքիաթներին, ապա պետք է ասել, որ դրանք ասացողների պատմած նյութի անմիջական ընդօրինակումներ են: Ր. Լալայանը նույնպես ձգտել է պահպանել բարբառի յուրահատկությունները: Նա փորձել է վերարտադրել նույնիսկ բաղաձայնների հնչական-արտասանական տեղաշարժերը, որը սակայն հետևողականորեն ու նշտորեն չի տառադարձված:

Մի բանի խոսք ներկա հրատարակության համար հիմք ծառայած հեքիաթների հրատարակված կամ ձեռագիր տեքստերի վիճակի մասին: Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» գրքերում տպագրված նյութերի գրառման ձեռագրերը չեն պահպանվել: Ներկա գիտական հրատարակության համար հիմք են հանդիսացել «Հայ ժողովրդական հեքիաթների» տպագիր I—IX գրքերի Տ. Նավասարդյանցի սեփական օրինակները [1], որտեղ տեքստերի վրա պահպանված են իրեն՝ բանահավաք-հրատարակիչ Տ. Նավասարդյանցի ձեռքով կատարված բազմապիսի ուղղումներն ու խմբագրումները: Դրանց մեծ մասը վրիպակների, կետադրության, բառերի արտասանության, երկխոսությունների, պարբերությունների նշգրտումներ են, որոնք փոխանցված են ներկա հրատարակության մեջ առանց ծանոթագրության: Կան ուղղումներ ու խմբագրումներ, որոնք նպատակ ունեն, առանձին բառեր ու արտահայտություններ փոխելով, ավելի հարազատ մնալ ժողովրդական պատմելաձևին ու ոգուն: Այդպիսի ուղղումներն ու խմբագրումները ևս փոխանցված են, բայց էջատակին տրված է նաև սկզբնաղբյուրի չուղղված ձևը: Վերջապես կան նաև այլ կարգի ուղղումներ, որոնք ավելի շատ տեքստի մշակման ու վերահայման միտում ունեն: Այս կարգի ուղղումներն ու խմբագրումները ներկա հրատարակության մեջ չեն փոխանցված, բայց էջատակին դրված են բանահավաք-հրատարակչի կատարած այդ ուղղումները: Բոլոր դեպքե-

---

[1] *«Հայ ժողովրդական հեքիաթների» I—IX գրքերի Տ. Նավասարդյանցի սեփական օրինակները օգտագործման համար սիրահոժար մեզ տրամադրեց դոկտոր պրոֆ. Ր. Տեր-Մինասյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: «Հայ ժողովրդական հեքիաթների» 10-րդ գրքի տեքստերի վրա Տ. Նավասարդյանցը ուղղումներ չի կատարել* (Ս. Կ.):

ռում հնարավորություն է տրված ընթերցողին կամ ուսումնասիրողին դիտելու կատարված ուղղումներն ու խմբագրումները և իրեն վերաբերմունքն արտահայտելու դրանց նկատմամբ:

Էջատակին հիշվող «տպագիր տեքստ» արտահայտությունը վերաբերում է Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներին» գրքերի ուղղումներով տեքստին:

Ներկա հատորում տեղ գտած Տ. Նավասարդյանցի անտիպ նյութերի նկատմամբ այլ վերաբերմունք է ցուցաբերված: Քանի որ այդ անտիպ հեքիաթների գրառումները գրեթե կիսասևագիր վիճակում են և վրիպումներ ու սխալներ ավելի շատ են հանդիպում, ներկա հրատարակության մեջ ուղղված են այդ սխալներն ու վրիպումները, առանց էջատակի ծանոթության ու բացատրության:

Տեքստերի պատրաստման հետ կապված բոլոր հարցերը մանրամասնորեն լուսաբանված են «Ծանոթագրություններ» բաժնում:

Ր. Լալայանի հրատարակած տեքստերի գրառման ձեռագրերը չեն պահպանվել. ներկա հրատարակության համար հիմք են ծառայել «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուի երկրորդ հատորում տպագրված տեքստերը: Այստեղ կատարված են հետևյալ մասնակի փոփոխությունները:

Հատորում միևնույն բառերի ճիշտական-արտասանական խայտաբղետություն չստեղծելու համար փոխված է Ր. Լալայանի հրատարակած տեքստերում բաղաձայնների բարբառային ճիշտումները, դարձնելով այնպես, ինչպես Տ. Նավասարդյանցի տեքստերումն է, այսինքն՝ հետևելով ավանդական գրությանը, օրինակ՝ թաֆավոր> թաֆավոր, մարթ>մարդ և այլն: Այս փոփոխություններ անհրաժեշտ էր, որովհետև Ր. Լալայանի տեքստերում էլ հետևողական ու ճշտորեն չի պահպանված բաղաձայնների բարբառային ճիշտումն ու գրությունը, մանավանդ որ հատորի վերջում որպես հավելված տրված է համապատասխան ճմուշ բարբառի նշված տառադարձությամբ: Ր. Լալայանի Վաղարշապատի հեքիաթների տեքստերում ուղղված և հանված է որոշ բառերի սկզբից ավելացող ձայնեղ Հ–ի (ճ'աղպուր, ճ'իրա, ճ'ամեն, ճ'անգալ), որը Աշտարակի և Օշականի խոսվածքների ճմանությամբ է ներմուծված:

Այն դեպքերում, երբ Ր. Լալայանի հավաքած ու հրատարակած տեքստերի մեջ կան բառեր, որոնք Տ. Նավասարդյանցի գրառումների նույնպիսի բառերից տարբերվում են ձևաբանական կամ հնչյու-

ճափոխության պատկերով, այդպիսի տարբերությունները պահպանվում են վրիև||վրեև, կաՅնում||կանում, հետ||հեննա և այլն):

«Հայ ժողովրդական հեքիաթների» այս հատորում ընդգրկված վաղարշապատի հեքիաթները անմիջականորեն անդրադարձնում և արտացոլում են Արարատյան դաշտի վաղեմի բնակիչների լեզուն ու բարբառը: Բուն վաղարշապատի խոսվածքը հարազատորեն պահպանել է Արարատյան բարբառի հիմնական առանձնահատկությունները, որպիսիք որոշ զանազանությամբ ընդհանուր են նաև Փարպիի, Օշականի և Աշտարակի խոսվածքներին: Թվենք դրանցից կարևորագույնները:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԵՎ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ: 1. ե>է (եկել>էկել, եփել>էփել, երազ>էրազ): 2. ե>ի (երեք>իրեք, երեկո>իրիկուն): 3. Ա3>է (հայր>հէր, մայր>մէր, սայլ>սէլ, փայտ>փէտ): 4. Ո3>ի (լոյս>լիս, հոյր>հիր): 5. ԻՒ>ի (հարիւր>հարիր, ձիւն>ձին, արիւն>արին ալիւր>ալիր):

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՏԵՂԱՇԱՐԺ ԵՎ ՄԱՍՆԱԿԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ:

Վաղարշապատի խոսվածքին հարազատ է Արարատյան բարբառի բաղաձայնական համակարգը: Այս հատորի նյութերը բանահավաքները գրի առնելիս այդ համակարգը չեն պահպանել, կամ հաշվի են առել միայն մասնակի դեպքեր: Բուն տեքստերում փոփոխություններ չկատարելով, «Հավելվածի» մեջ աշխատել ենք վերականգնել բաղաձայնական այդ համակարգի պատկերը:

Բաղաձայնների մասնակի փոփոխության դեպքերը Վաղարշապատի խոսվածքում հետևյալն են: 1. Ո–ից առաջ Հ–ն դառնում է Ֆ (հոգի>ֆոգի, հորս>ֆորս, հող>ֆող, հոտ>ֆոտ): 2. Ղ–ից առաջ Խ–ն մի քանի բառերի մեջ դառնում է Հ (խաղ>հաղ, խաղող>հավող): 3. Ղ–ն և Ր–ն ընկնում են մի շարք բառերի վերջում էստեղ>ըստե, էնտեղ>ընտե, վեր կացավ>վե կացավ, բեր>բե): 4. ՏՆ հընչյունակապակցությունը դառնում է ՆՆ (գետնին>գեննին, հետո>հեննա, ետուց>եննուց): 5. Բաղաձայնների հետադասություն (ականջ>աննկաջ, սպիտակ>սիպտակ):

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ էլ մասնիկի հետ գործածելիս նրանց ե կամ ի ձայնավորները դառնում են Ը (մեկ էլ>մրկ էլ, միհ էլ>մրհ էլ, իննձ էլ>ըննձ էլ, մենք էլ>մրնք էլ):

ԲԱՅԵՐԻ ՄԵՋ՝ 1. Օժանդակ բայի եզակի 3–րդ դեմքը է–ի փոխարեն ունի Ա (գրում է>գրում ա): 2. Օժանդակ բայի անցյալ ան–

կատարի միայն եզակի 3-րդ դեմքում է, որ պահպանվում է է ձայնավորը, իսկ մնացած դեմքերում ընկնում է (բերում էի>բերում ի, բերում էիր>բերում իր և այլն): Աշտարակի խոսվածքում անկատար ներքայի ՈՒՄ վերջավորությունը փոխվում և դառնում է ԸՄ (բերում>բերըմ, ունենում>ուններըմ), որպիսին Վաղարշապատի խոսվածքում չենք նկատում: 3. Հրամայականում Աշտարակի և Վաղարշապատի խոսվածքները ունեն Ա վերջավորությունը (վառա՛, ֆցա՛, լցրա՛): 4. Անորոշ դերբայի նոլովական ՈՎ վերջավորությունը դառնում է ՈՆ (վազելով>վազելոն, ասելով>ասելոն, էթալով>էթալոն, լաց ըլելով>լաց ըլելոն): 5. Երբ նախադասության մեջ օժանդակ բայը առաջ է ընկնում, դերբայի Լ կամ Ս վերջավորություններ ընկնում է (ես սիրել եմ>ես եմ սիրե, խի՞ գալիս չես>խի՞ չես գալի, ընչի տալիս չես>ընչի չես տալի): 6. Ժխտական մասնիկը կարող է լինել բայից և՛ առաջ և՛ հետո (չեմ ուզում||ուզում չեմ):

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎԸ սովորաբար կազմվում է ԵՐ, ՆԵՐ մասնիկներով (տուն>տներ, ոչխար>ոչխարներ), բայց պատահում են նաև Ք (գեղացի>գեղըցիք), ԱՐՆՔ (տեղ>տեղարենք), ԻՔ (կնիկ>կնաճիք), ՏԻՆՔ (աղպեր>աղպրտինք) ձևերը:

***

Պահպանելով «Հայ ժողովրդական հեքիաթների» առաջին հատորի տեքստաբանական սկզբունքների միասնականությունը երկրորդ հատորում նույնպես հաշվի են առնված և կատարված հետևյալ նշգրտումները:

1. ԿԸ պայմանական եղանակիչը, որը սկզբնաղբյուրներում անջատ է դրված, ներկա հրատարակության մեջ միացված է և գրված է առանց Ը-ի (կը տանի>կտանի, կը բերի>կբերի և այլն): 2. Բառամիջում լսվող Ը-ն թողնված է միայն այն դեպքերում, երբ առանց դրան դժվար է ընկալվում բառիմաստը: 3. Հիմնավորապես վերահայված է կետադրությունը և նշված պարբերությունների ու երկխոսությունների բաժանումը: Սկզբնաղբյուրներում գիծը օգտագործված է բութի փոխարեն, իսկ բութը հաճախ անտեղի դրված է ստորակետի փոխարեն: Ուղղված են դրանք՝ գիծը վերացնելով, իսկ բութի ու ստորակետի գործածությունը հստակ դարձնելով: Ուղղակի խոսքը տարբերված է անջատման գծիկով, իսկ տվյալ ուղղա-

կի խոսքի մեջ հանդիպող ուրիշի ուղղակի խոսքը տարբերելու համար օգտագործված է չակերտներ: 4. Համեմատաբար բարդ է շեշտի գործածությունը: Աւարատյան բարբառում շեշտը ընկնում է նախավերջին վանկի վրա: Բայց բառի տրամաբանական շեշտը տարբերվում է հրամայական շեշտից և նայած բառակապակցությանը և խոսքի մեջ դրված վերաբերմունքին ու ինտոնացիային տրամաբանական այդ շեշտը (որը երբեմն արտահայտվում է նաև հարցական նշանով) փոխում է իր տեղը: Տ. Նավասարդյանցի մոտ Աւարատյան բարբառի շեշտադրության կանոնները լավ են պահպանված [1], բայց բոլոր տեքստերում հետևողականորեն չեն կիրառված: Եր. Լալայանի տեքստերում շեշտադրության այդ նրբությունները հաշվի չեն առնված:

Ներկա հրատարակության մեջ սկզբնաղբյուրների շեշտադրությունը չի վերահայված, հաշվի առնելով, որ դա շատ դեպքերում հարաբերական է և կարող է տեղիք տալ վրիպումների ու սխալանքների: Ուղղված են միայն հրամայական այն շեշտադրումները, որոնք բացահայտորեն վրիպած են: Բարեբախտաբար Տ. Նավասարդյանցի տեքստերի մեջ պահպանված է մի հեքիաթ՝ «Հոր տված իրեք խրատը» («Հայ ժողովրդական հեքիաթներ», VI գիրք), որտեղ հետևողականորեն ու ճշտորեն պահպանված է շեշտադրությունը: Այդ հեքիաթն էլ տրված է հատորի վերջում, հավելվածի մեջ՝ որպես վաղարշապատի խոսվածքի լեզվա-բերականական նմուշ:

***

«Հայ ժողովրդական հեքիաթների» երկրորդ հատորը ունի հետևյալ կառուցվածքը.

1. ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՔՍՏԵՐԻ բաժնում դրված են Տ. Նավասարդյանցի և Եր. Լալայանի հավաքած տպագիր ու անտիպ Վաղարշապատի հեքիաթների համեմատաբար ամբողջական ու ընտիր պատումները: Հիմնական տեքստերը բաժանված են երկու

---

1 *Պրոֆ. Մ. Աբեղյանը «Նոր-Դարի» 1890 թ. № 142—144-ում տպագրած «Ժողովրդական լեզվի շեշտադրությունը» հոդվածում բարձր է գնահատում Տ. Նավասարդյանցի տեքստերը՝ որպես Արարատյան բարբառի շեշտադրության արժանահավատ ու վստահելի աղբյուր* (Մ. Կ.):

խմբի: Նախ տրված են հրաշապատում (կախարդական), ապա իրապատում (կենցաղային) հեքիաթները՝ հերթական համարակալումով:

ՀՐԱՇԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ (1—32) դասակարգված է ըստ հետևյալ սյուժետների ու թեմաների:

Մարդուն ու բնությունը վերակենդանացնող Անմահական ջրի ու խնձորի, Հազարան բլբուլի, Ոսկե ձկան և այլ կենսաբեր զորությամբ օժտված էակների ձեռք բերումը (1—2):

Պայծառ գերբնական չար ուժերի դեմ՝ արգելափակված ու կախարդված գեղեցկուհիներին ու անմեղ մարդկանց ազատելու համար (3—5):

Արդար, ազնիվ, եշմարտախոս ու պարտաճանաչ մարդը հովանավորվում, պաշտպանվում է ու երջանկության հասնում (6—11):

Երեխա չունեցող ամուսիններին կենդանակերպ կամ հրեշակերպ զավակ է ծնվում: Ամուսնացնելուց հետո հարսը բացում է կերպարանափոխության գաղտնիքը, որի պատճառով տղան աննետանում է: Մեծ դժվարություններից ու փորձություններից հետո հարսը գտնում է ամուսնուն, որը հաղթելով կախարդական էակին վերստանում է իր մարդկային կերպարանքը (12):

Աղջատ ծնողների զավակը արհեստ է սովորում կախարդի մոտ և տիրապետելով նրա արհեստի գաղտնիքներին, հալածվում ու փորձությունների է ենթարկվում: Վերջիվերջո նա հաղթում է կախարդին և հասնում իր նպատակին (13):

Բարությունն ու երախտիքը միշտ փոխհատուցվում են (14—17):

Ջրպարտված ու հալածված անմեղ կինը, հույրը, խորթ զավակները կամ այլ հարազատները երկար տառապանքներից ու փորձություններից հետո փրկվում ու մեծարվում են, իսկ հանցավորները պատժվում (18—21):

Ազնիվ ու հավատարիմ կինը հովանավորվում, պաշտպանվում ու մեծարվում է (22—23):

Նախախնամության սահմանածը կատարվում է (24—26):

Աղջատ գյուղացու իմաստուն տղան պարզում է արուի մսից հրաժարվող բագավորի աղջկա խարդախությունն ու անպատկառությունը և նշանավոր երեք առակ-զրույցները պատմելով՝ բացում ծիծաղող ձկների գաղտնիքը (27):

Նենգ, խարդախ ու դաժան վրիժառուն միշտ պատժվում է (28—29):

Կենդանու տեսքով կերպարանափոխված մարդը նալածվում է թագավորի կողմից՝ ենթարկվելով ծանր փորձությունների, բայց հաղթանարում է դրանք և հրաշագործ զորությամբ օժտված ընկերների օգնությամբ հասնում է իր նպատակին (30):

Մարդակեր հրոչ նալածանքը եղբոր դեմ: Եղբայրը հավատարիմ շների օգնությամբ փրկվում է պատուհասից (31):

Կնոջ կերպարանքով Վիշապ-օձը գայթակղում է աշխատանք փնտրող աղքատ մարդուն, որը բացում է օձի գաղտնիքը, ոչնչացնում նրան և մեծ հարստության տեր դառնում (32):

ԻՐԱՊԱՏՈՒՄ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ԽՈՒՄԲԸ (33—56) դասակարգված է ըստ նետևյալ սյուժետների ու թեմաների.

Աղքատ ու հասարակ մարդը սրամտությամբ ու ճարպիկությամբ նաղթում է հարստին (33—37):

Առօրյա կյանքում ու կենցաղում անարդարն ու չար նախանձողը դատապարտվում ու պատժվում է (38):

Զրկակեր, վատնող ու անխելք որդին անարգվում է ու պատրժվում, իսկ համեստ, աշխատասեր ու ծնողասեր որդին նովանավորվում ու մեծարվում (39—40):

Սգահեն ու ընչահաղցը դատապարտվում ու կործանվում է (41):

Կնոջ դրական ու բացասական նատկանիշները ընտանիքում ու կենցաղում: Հարսի ու սկեսրոչ փոխհարաբերությունները (42—49):

Աշխարհում հավիտենական ու մնայուն ոչինչ չկա. ամեն ինչ փոփոխվում է (50—51):

Դիպվածի ու պատահականության շնորհիվ աղքատ, հասարակ մարդը հաջողության է հասնում (52—53):

Անհավատալի, անիրական, անբնական դիպվածների վրա հիմնված գործողություններ, որոնք զավեշտ ու ծիծաղ են առաջացնում (54—56):

Պետք է նկատի ունենալ, որ ինչպես նեքիաթների երկու խմբի բաժանումը (հրաշապատում և իրապատում), այնպես էլ յուրաքանչյուր խմբի մեջ թեմատիկ ու սյուժետային դասակարգումը որոշ չափով պայմանական է: Տվյալ դեպքում հաշվի են առնված բնորոշ ու գերակշռող մոմենտները:

2. ՀԱՎԵԼՎԱԾ I-ում զետեղված են այն նեքիաթները, որոնք կամ հիմնական տեքստերում դրված նեքիաթներին շատ մոտ տարբերակներ են, կամ թե իրենց ընդգրկմամբ, սյուժետային գծի կոտ

զարգացմամբ, դեպքերի մեկնաբանմամբ, լեզվա-բարբառային աճադարտությամբ ու գեղարվեստական-պատմողական վարպետությամբ չեն կանգնած հիմնական տեխստերի մակարդակին:

3. ՀԱՎԵԼՎԱԾ II-ում ներկայացված է հատորի հիմնական տեխստերից վերցված մի հեքիաթ («Հոր տված իրեք խրատը») վաղարշապատի խոսվածքի ձևաբանական ու արտասանական առանձնահատկությունների գիտական նշգրիտ տառադարձությամբ:

4. ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մեջ հերթականությամբ լուսաբանված են հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման հանգամանքները ու հրատարակության պատմությունը, նշելով նաև սույն հատորի նյութերի առնչությունը ներկա հրատարակության նախորդ՝ առաջին հատորի հեքիաթների սյուժեների հետ:

5. ԲԱՌԱՐԱՆՆ ընդգրկում է այս հատորում տեղ գտած բարբառային դժվար հասկանալի և փոխառյալ բառերի բացատրությունը:

6. ՑԱՆԿԵՐԻ ՄԵՋ տրված են այս հատորում պարունակվող հեքիաթները ըստ տեղի ու ասացողների, ինչպես նաև այբբենական կարգով:

ԱՅՐԱՐԱՏ





1· ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽՆՁՈՐ

Ըլնում ա չիլնում ավալ ժամանակին մի թագավոր, ունենում ա իրենք տղա։

Էս թագավորը իրա պալատի աղաքին մի լավ գյուղի բաղ ա ունենում՝ մեջը Անմահական խնձորի ծառ։ Համա ի՛նչ անում ա չի անում, չի կարում էդ Անմահական խնձորի ծառի բարը ուտի։ Նրա կատեպանները էդ ծառը պահում ին, բեջարում, հենց գալիս էր հասնելու վախտը՝ տենում ին ծառի վրեն էլ ո՛նչ խնձոր կա, ո՛նչ ղադ։

Մի տարի էլ թագավորի մենծ տղեն գալիս ա հորն ասում. — Ա՛յ հեր, էս տարի էլ թո՛ղ ես մուտաթ կենամ. բալի կարենամ էդ խնձորի գողին կալնի։

— Դո՛ւ զիտաս, ա՛յ որդի,—ասում ա հերը,—թե կարաս՝ գնա մուտաթ կա՛ց։

Հենց որ գալիս ա խնձորի հասնելու վախտերքը, էս մենծ աղպերը վեր ա կենում, էթում Անմահական խնձորի ծառի տակին գշեր-ցերեկ զարավուլ քաշում, ընչանք հասնիլը։ Գալիս ա խնձորը հասնում. հենց էն էր՝ առավոտը որ լիսանար, պտի քաղեր տաներ տար հորը։ Սաղ գշերը չի քնում. գալիս ա լիսադեմին քունը տանում ա։ Ընդհան մի դև գալիս ա, շուլալվում ծառը, խնձորներն ուտում՝ էթում։

Տղեն աչքը բաց ա անում, թամաշ անում ծառին. տենում ա ծառը լափ դարտակ՝ ո՛նչ խնձոր կա, ո՛նչ զադ։ Շատ գլխին, ոտին ա անում, համա էլ որդե՞։ Գալիս ա հորը նաղլ անում։

— Ա՛յ հեր,— ասում ա,— ես էսքան վախտ խնձորի ծառը պահեցի, որ զադ չմոտանա. հենց էկավ քաղելու վախտը՝ էդ գշեր սատանական մի սհաթ աչքս կպցրի. մին էլ վե կացա՝ տեհա ո՛նչ խընձոր կա, ո՛նչ զադ։

Էն մի տարին էլ գալիս ա միջնեկ տղեն։

— Ա՛յ հեր,— ասում ա,— թո՛ղ էս տարի էլ ե՛ս էթամ մուղաթ կենամ. մարդ ա, բալի ես կարում եմ խնձորի գողին սրպանի։

— Ա՛յ որդի, դու գիտաս,— ասում ա հերը,— գնա՛ մուղաթ կա՛ց։

Միջնեկ աղպերն ա՝ նետուանեղը վեր ա ունում, գալի էդ խընձորի ծառի տակին ղարավուլ քաշում։ Գալիս ա հասնելու վախտերքը, որ էն գշեր պտի մնար, առավոտը քաղեր, տաներ թագավորին՝ մի ղաֆիլ լիսադեմին քունը տանում ա։ Էն դհիցը էլ եդ դևը գալիս ա շուլալվում ծառը, խնձորներն ուտում՝ էթում։ Տղեն բիրդան վեր ա թռնում, ծառին մտիկ տալի՝ տենում ա լափ դարտակ. ո՛նչ խնձոր կա, ո՛նչ զադ։ Փոր-փոշման գալիս ա տուն, հորը նաղլ անում, որ խնձորի գողին չկարաց բռնի։

Էն մի տարին էլ, կգա պուճուր տղեն։

— Ա՛յ հեր,— կասի,— էս տարի էլ թո՛ղ ես էթամ խնձորին մուղաթ կենամ։

Հերը կասի.— Ա՛յ որդի, մենծ աղպերդ, միջնեկ աղպերդ գնացին՝ ի՞նչ չաթեցին, որ դու էթաս՝ ի՞նչ չաթես։

Պուճուր տղեն որ շատ կզոռի հորը, հերը կասի.— լա՛վ, թե որ էդքան սրտով ուզում ես՝ գնա՛, էս տարի էլ դո՛ւ մուղաթ կաց։

Պուճուր աղպերն ա՝ նետուանեղը վե կունի, կէթա խնձորի ծառի տակին ղարավուլ կքաշի։ Կկենա մի շաբաթ, էրկու շաբաթ, խընձորները կհասնեն։ Կասի. «Թո՛ղ էս մի գշերն էլ մնա, լավ հասնի՝ առավոտը քաղեմ, տանեմ հորս»։ Էդ սաղ գշերն էլ, որ ասես, աչքը չի կպցնի։ Կգա լիսադեմին տղի քունը կզոռի։ Կհանի էն սհաթը դանակը, մատը կկտրի՝ վրեն աղ կանի, որ մատը մոմոա, բալի քունը չտանի։

Հենց էն ա լիսվե-լիս էր՝ տղեն կտենա էն դհիցը մի եքա դև էկավ, շուլալվեց ծառը, որ խնձորներն ուտի։ Ջա՜նըմսան տղեն,

նետուանեղը կքաշի, տալու բաշտան դևը ծառիցը գըրըմփալեն վե կընկնի։ Վրա կհասնի, որ մըն էլ տա՝ դևը վե կկենա ընենց յարաւու կփախնի։ Տղեն էլ կընկնի եննուցը։

Դևը կէթա, կէթա՝ գըրըմփալեն կընկնի մի խոր ֆորի մեջ։ Տղեն կկոանա՝ կտենա որ էդ ֆորը ո՛նչ տուտ ունի, ո՛նչ տակ։ Ֆորը ըտե նշան կանի, ինքը կգա էդ բաղը, Անմահական խնձորները կքաղի, կտանի հորը։

Հերը խնձորները որ կտենա թե չէ՝ էն սհաթը թախտիցը վե կգա, տղի ճակատը կպաչի։

Տղեն կասի.— Ա՛յ հեր, խոսքն էս չի, որ էս տարի խնձորները բերեցի, խոսքն է՛ն ա, որ էն դևին սըպաննենք, որ ամեն տարի գալիս ա խնձորներն ուտում։ Ես որ նրան յարալու արի, թողաց փախավ. եննուցն ընկա, տեհա գնա՛ց, գնա՛ց՝ ընկավ մի խոր ֆորի մեջ։ Էդ ֆորն էլ նշան եմ արե. թող մեկել աղպրտինքս էլ հեննես գան՝ էթանք էդ դևին սպաննենք։

Թագավորը կասի.— Գնացե՛ք, ա՛յ որդիք. լա՛վ կանեք, որ կարենաք էդ դևի հախիցը գաք, թե չէ գյալաջաղը էլի կգա մեր խնձորները կտանի։

Իրեք աղպերով խոսքները մին են անում՝ վե կենում, էթում։ էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են էն ֆորի ղրաղը։ Աղաք մենծ աղպորն են կախ տալի։

Մի քիչ որ ներքև ա էթում, ձեն ա տալի.— Ա՛յ հարա՛յ, ես էրվե՛ցի, քաշե՛ք։

Աղպրտինքն էլ եդ քաշում են, հանում։

Ննենա միջնեկ աղպորն են կախ տալի։ Սա էլ որ մի քիչ էթում ա, էթում, ձեն ա տալի.— Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի, քաշե՛ք։

Աղպրտինքը քաշում են, հանում։ Ննենա պուճուր աղպերն ա կախ ըլնում։ Ասում ա.— Որ կասեմ՝ էրվե՛ցի, խորովվե՛ցի, դուք անկաջ չեք անի, հա՛ կախ կտաք, ընչանք հասնեմ։

Պուճուր աղպորը կախ են անում։ Ինչքամ ձեն ա տալի. «Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, փոթոթվե՛ցի», աղպրտինքը անկաջ չեն անում. հա՛ կախ են տալի, ընչանք որ անտակն ա հասնում։

— Աղպրտի՛նք,— կասի,— դե պարանը քաշե՛ք, հասա. ես հմի էթամ դևի հավարին։

Տղեն մի քիչ երըմիշ էլավ, տեհավ աղաքը մի դուռը. բաց արեց, անսաս նի մտավ։ Տեհավ մի հուրի-մալաք աղջիկ ընդե նստել ա,

քարգա ա անում. աղաքին էլ դրած ա մի Ոսկե սինի՝ միջին Ոսկե աղվես, Ոսկե թաղի, որ աղվեսի ննուցն ա ընկե, ուզում ա կալնի։ Օխտը գլխանի դևն էլ գլուխը դրել ա աղջկա ծնկանը, քնե։

Աղջիկը կասի.— Հը՛, ա՛յ տղա, օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը չի կարացե ըստերանք գա, դու ո՞նց ես սիրտ արե էկե։

— Քու սե՛րն ա բերե,— կասի։

— Սերո՛ւմ կենաս,— կասի աղջիկը։— Բա՛ չե՞ս վախում, որ Օխտը գլխանի դևը վե կենա՝ քեզ թիքա-թիքա անի՞։

— Խի՞ պտի վախենամ, ես հենց դրա հավարին եմ էկե։

Տղեն կասի ու թուրը կքաշի, տալու բաշտան՝ օխտը գլուխն էլ մի հետ կթռցնի։

Դևը կասի.— Տղա՛, մըկ էլ տո՛ւ։

— Մորիցս մի հետ եմ էլե,— կասի,— մի հետից ավել չեմ տա։

Դևը տեղն ու տեղը կսատկի։

— Ա՛յ տղա,— կասի աղջիկը,— դու որ էդքամ ղոչաղ ես էլե. բա՛ս գնա էս դևի աղպոր կուշտը. հրե՛նիկ կողքի օթախումն ա։ Միջնեկ քիրս էլ նրա ձեռին ա։

Տղեն վե կկենա կէթա էն մի օթախը։ Դուռը բաց կանի՝ կտեսնա մի հուրի-մալաք աղջիկ. մենծ քվորից դհա սիրուն, նստել ա քարգա ա անում։ Աղաքին Ոսկե սինի՝ միջին Ոսկե հավը, Ոսկե աքլորը ֆըրֆըրահար են գալի։ Տասնէրկու գլխանի դևն էլ՝ գլուխը դրել ա աղջկա ծնկանը, քնե։

Աղջիկը կասի.— Ա՛յ տղա, դո՞ւ ըստերանք։ Օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք հմի սիրտ չի արե ըստերանք ոտ դնի, դու ո՞նց էս սիրտ արե էկե։

— Քու սե՛րն ա բերե,— կասի։

— Սե՛րում կենաս։ Բա՛ էս Տասնէրկու գլխանի դևիցը չե՞ս վախենում, որ էս ա որդե որ ա վե կկենա՝ քու մենծ թիքեն անկաշդ կթողա։ Գնա՛, մեղք ես, քանի թեզ ա փախի՛. թե չէ որ վե կացավ՝ էլ նրա ձեռիցը չես պրծնի։

— Ես էլ հենց դրա հավարին եմ էկե. խի՞ պտի վախենամ. մին նա՛ ա՝ մին ե՛ս։

Կասի թե չէ, տղեն [1] թուրը կքաշի, որ չի տա՝ տասնէրկու գլուխն էլ մի հետ էն դիհը կընկնի։

---

[1] Տպագիր տեքստում այս բառը չնշված է բանահավաքի ձեռքով։ Բանահավաք-հրատարակիչ Տ. Նավասարդյանցը իր հրապարակած «Հայ ժողովրդական

Դևը կասի.— Տղա՛, մըկ էլ տո՛ւ։

— Չէ՛,— կասի,— մի հետ կտամ. ես մի հետ եմ էլե մորս փոքիցը։

Էս դևն էլ ըստե ա սատկում, մնում։

Աղջիկն ասում ա.— Ա՛յ տղա, դու որ էդքամ զոռով ես էլե, բա՛ս գնա էս դևի աղպոր կուշտը. հրե՛նիկ կողքի օթախումն ա։ Իմ պուճուր քիրն էլ նրա՛ ձեռին ա։

Տղեն կէթա մենծ դևի օթախը։ Դուռը բաց կանի, կտենա մի սիրուն, նաշխուն աղջիկ, որ օխտն օր, օխտը գշեր չուտես, չիմես՝ հենց նրա գյուլ-ջամալին թամաշ անես. նստել ա, քարդա ա անում։ Աղաքին էլ Ոսկե սինին դրած՝ միջին Ոսկե կաքավն ու մադեն, ընենց իրար հեննա հաղ են անում, ֆըրֆըրահար գալի, որ դռնիցը մննողի խելք ու քյամալ են տանում։ Քսանըշորս գլխանի դևն էլ գլուխը դրել ա աղջկա ծնկանը՝ քնե։

Աղջիկը կասի.— Ա՛յ հողածին, դո՛ւ ըստերանք։ Օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք օրս չի կարացե ըստերանք ոտ դնի, դու ո՞նց ես սիրտ արե, էկե։

— Քու սե՛րն ա բերե,— կասի։

— Սե՛րում կենաս։ Բա՛ չե՞ս տենում, որ Քսանըշորս գլխանի դևը քնել ա. որ վե կենա, էլ նրա ձեռիցը կպրծնե՞ս։ Մե՛ղք ես, ջահել-ջիվան ես. քանի վախտով ա՝ փախի՛, գլուխդ պրծացրա՛։

— Խի՞ փախնեմ. ես հենց դրա հավարին եմ էկե, որ սըպանեմ։ Մի ջան նա՛ ա, մի ջան՝ ե՛ս, էլ խի՞ պտի վախենամ։

Էս ասում ա թե չէ, գիդիջը՛ղ տղեն, թուրը հանում ա, որ չի՛ շեպում դևի քյալլի մեջտեղիցը՝ քսանըշորս գլուխն էլ մի հանքի ա ֆը՛ռում, ընդե վեր ընկնում։

Դևն ասում ա.— Տղա՛, մըկ էլ տո՛ւ։

— Չէ՛,— ասում ա,— էլ չեմ տա. մորիցս ես մի հետ եմ էլե, էրկու հետ չեմ էլե։

Էս դևն էլ ըստե ա չորանում, մնում։

Աղջիկը որ տենում ա տղի ղոչաղությունը, վազում ա փաթըթ-

Հեքիաթներիդ գրքերի սեփական օրինակում, տպագիր տեքստերի վրա ուղղումներ է կատարել։ Տողատակի հետագա ծանոթություններին մնջ «տպագիր տեքստ» արտահայտությունը վերաբերում է Տ. Նավասարդյանցի կողմից ստուգված հիշյալ տեքստերին, որոնք հիմք են ծառայել ներկա հրատարակության համար (Ս. Կ.)։

վում տղի ճտովը։ Ասում ա. «Ես քունն եմ, դու՝ իմը»։ Նո՛ր սրանք նստում են ըստե, իրար հեննա զրից անում։

Աղջիկն ասում ա.— Մենք իրեք քիր ենք՝ ֆլան թագավորի աղջըկեքը։ Էս դևերն էկան մեզ փախցրին, բերին շինեցին իրանց կնիկ։ Էս քանի տարի ա մենք մեռանք էդ ջանավարների ձեռին։ Աստոծ քու կռանն ըլնի, տղա՛. դու էլ որ չգայիր մեզ չազատեիր, հա մենք պտի ֆողեց-ֆոգի կորչեինք։

Տղեն կասի.—Էս լա՛վ էլավ. հազիր մըենք էլ իրեք աղպեր ենք, իրեքս էլ ազապ. մենծ քվորդ մենծ աղպերս կառնի. միջնեկ քվորդ՝ միջնեկ աղպերս. դու էլ զաթի ի՛մն ես ու իմն ես։

Աղջիկը եննա հանում ա տղին մի թլիսիմը տալի։

— Ա՛ռ,— ասում ա,— ինչ վախտ պետքը գա՝ չախմախին տաս, էն մեր իրեք քվոր Ոսկե սինիքն էլ, իրանց ամեն սարք ու կարգովը կգան աղաքիդ կկաննեն։

Եննա վեր ա ունում, տանում գոմը։—Հրես տե՞նում ես էս իրեք ձին՝ մինը Սև ա, մինը՝ Սիպտակ, մինը՝ Կարմիր. սրանց ամեն մեկիցը մի-մի մազ պոկա՛, պահա՛ մոտիդ. մարդ ա, բալի պետք ա գալի։ Ո՛ր մազը կրակին տաս՝ էն ձին էն սհաթը, իրա ամեն սարք ու կարգովը, կգա աղաքիդ կկաննի. եր ուղեննաս էլի կթողաս՝ կէթա։— Էլ եդ գոմի դուռը շինում ա, բալանիքը տալի տղին։

Նո՛ր ընդհան էրկսով վեր են կենում գալի էն մեկել քվորտանց կուշտը, նրանց էլ վեր են ունում, եննա գալի, դևերը ինչքամ խազինա ունեին՝ կրում են ֆորի բերանը։

Տղեն ձեն ա տալի.— Դե՛, աղպրտի՛նք, պարանը կախ արե՛ք, իրեք դևին էլ սրպանել եմ. նրանց ունեցած-չունեցածն էլ քոմմա հավաքե, բերե։ Սավայի էս՝ իրեք հատ էլ սիրուն, ձեր հավան կացած, աղջիկ եմ գտե. մարդիս՝ մինը։

Աղպրտինքը ուրախ-ուրախ պարանը կախ են տալի, խազինեն դուս քաշում։ Վերջը մնում են աղջկերքը։

Տղեն ամենքից աղաք մենծ քվորն ա պարանիցը կապում.— Էս քե՛զ,— ասում ա,— մե՛նծ աղպեր, քաշե՛ք։— Աղպրտինքը քաշում են։

Եննա միջնեկ քվորը.— Էս էլ քե՛զ, մի՛ջնեկ աղպեր։— Սրան էլ են քաշում։

Համ մնում են պուճուր քիրն ու տղեն։ Աղջիկն ասում ա. «Աղաք դո՛ւ դուս արի»։ Տղեն ասում ա. «Ջէ՛, դո՛ւ աղաք դուս արի»։

Վերջը որ տղեն շատ ա զոռում, աղջիկն ասում ա.— Ինձ անկաջ չե՛ս անում, համա տե՞ս, քու աղպրտինքը քեզ պտի մուխանաթություն անեն։ Մարդ ա, թե որ ըտենց մի բան ըլնի, չե՛ս վախենա. կէթաս ուրբաթ օրը, ըստե մի աղբուր կա, էդ աղբրի վրեն կնստես։ Մըկ էլ կտեսնաս իրեք ոչխար էկան՝ մինը Սև, մինը Սիպտակ, մինը Կարմիր, որ էդ աղբրիցը ջուր խմեն։ Դու քեզ կքցես աղաք Սևի վրեն, Սևը կքցի Կարմրի վրեն, Կարմիրն էլ Սիպտակի վրեն՝ Սիպտակն էլ քեզ Լիս աշխար կհանի։ Համա չըլնեմ-չիմանամ աղաք Սիպտակի վրեն ընկնես. թե չէ Սիպտակը քեզ կքցի Կարմրի վրեն, Կարմիրն էլ Սևի վրեն՝ Սևն էլ քեզ Մութն աշխարք կհանի։

Աղպրտինքը պարանը կախ են տալի։ Տղեն պուճուր քվորը կապում ա պարանիցը։

— Էս էլ ի՛նձ,— ասում ա,— աղպրտինք, քաշե՛ք։

Աղպրտինքը քաշում են, տեսնում, որ էս պուճուր քիրը քոմմքին էլ գլխեց իրա սիրունությունովը։ Իրար մեջ միտք են անում, թե՝ մեր պուճուր աղպերը էսքան ղոչաղություն արեց, էս թավուր էլ սիրուն աղջիկ ա տանում. բա՛ մենք ի՞նչ էրեսով էթանք մեր հոր կուշտը. բա՛ մեզ համար ամոթ չի՞։ Էկե՛ք պարանը կտրենք, նրան ֆորումը թողանք. էթանք մեր հորն ասենք, թե. «Իրեք դևին էլ մենք ենք սըպանե, էսքամ խազինեն էլ բերե։ Մեր պուճուր աղպորն էլ,— կասենք,— դևերը կերել են»։

Իրար մեջ խոսք են կապում, պարանը կախ տալի։ Պուճուր աղպերը պարանը կապում ա մեջքիցը։

— Աղպրտի՛նք,— ձեն ա տալի,— դե համի ի՛նձ քաշեք։

Աղպրտինքը մի պուճուր տեղ քաշում են, քաշում՝ մի ղաֆիլ պարանը կտրում։ Պուճուր աղպերը գըրըմփալեն էլ եդ ընկնում ա ֆորը։ Էրկու աղպերով իրանց զադը-մադը հավաքում են, գալի իրանց քաղաքը։

— Ա՛յ որդիք, բա ձեր պուճուր ա՞ղպերն ուր ա,— հարցնում ա թագավորը։

— Բա չե՛ս ասի, ա՛յ հեր. նրան դևերը կերան։ Էսքամ խազինեն, մալ ու դովլաթն էլ էն դևերինն ա. մենք էրկսով նրանց սըպանեցինք, ունեցած-չունեցածներն էլ վե կալանք բերինք։

Խեղճ հերն էլ, բեխաբար, աղպորտանց խոսքին հավատում ա։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք պուճուր աղպորիցը։ Պուճուր աղպերը մնաց ֆորումը մենակ. դե՛ս ընկավ, դե՛ն ըն-

կավ՝ դուս գալու իլլաջ չգտավ։ Վերջը պուճուր աղջկա ասածը միտն ընկավ, որ կենա ընչանք ուրբաթ օրը, էթա աղբրի կշտին նստի, նրա ասած ոչխարների ճամփեն պահի. բալի նրանցով իրան քցի լիս աշխարք։

Ուրբաթ օրը որ էկավ, տղեն վեր կացավ գնաց աղբուրը։ Մի քիչ կացավ, տեհավ իրեք ոչխար էկան՝ մինը Սև, մինը Սիպտակ, մինը Կարմիր. էնքամ էլ սի՞րուն, էնքամ էլ նա՞շխուն, որ տեննողի խելքն էր էթում։ Ջուր խմեցին պրծան, ուզում ին էթա՝ տղեն իրան քցեց. ուզեցավ Սևի վրեն ընկնի, շշկլվեց Սիպտակի վրեն ընկավ։ Սիպտակը քցեց Կարմրի վրեն, Կարմիրը՝ Սևի, Սևն էլ քցեց Մութն աշխարք։

Խեղճ տղեն էդ Մութն աշխարքումը դե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ՝ տեղ չգտավ, որ սթար անի։ Վերջը մի պառավի ռաստ էկավ։

— Ա՛յ մերա,— ասեց,— ղոնաղ չե՞ս ուզի։

— Խի՞ չեմ ուզի, ա՛յ որդի, ղոնաղն ա՛սսունն ա։

Պառավը տղին կանչեց, տարավ տուն։ Խեղճ տղեն, էս քամամ իրեք օր, ծարավ էր։

— Ա՛յ մերա,— ասեց,— մի քիչ ջուր տա՞ս խմեմ, էս իրեք օր ա ծարավ բուք ու մուքս կպել ա։

Պառավը գնաց մի փարչ պղտոր ջուր բերեց, էնքամ պղտոր, որ կասես ցեխ ըլներ։

Տղեն հարցրեց.— Մե՛րա, ձեր ջուրը խի՞ ա ըսենց պղտոր։

— Ա՛յ որդի,— ասեց,— մեր ջուրը տարեն-տասնէրկու ամիս ըսենց պղտոր ա ըլնում, մենք ըսկի պարզ ջրի էրես տե՛նում ենք որ... Մեր աղբրի ակումը մի Օխտը գլխանի վիշապ ա էկե նստե, չի թողում որ ջուր գա։ Շաբաթը մի էրեխա ենք տանում տալիս Վիշապին, ուտում ա, նոր մի պուճուր ջուր ա թողում, որ ինչ ա՝ խալխը ծարավ չկոտորվենն։ Էգուց էլ թագավորի աղջկա նոբաթն ա, պտի տանեն Վիշապին տան ուտի, որ ջուր բաց թողա։

— Ա՛յ մերա, բա չե՞ք կարում էդ Վիշապին սրպանի։

— Ա՛յ որդի, նրան ըսկի սրպանելու ճար կըլնի, սաղ երկիրը զվիր ա բերե։ Քանի հետ թագավորը սաղ իրա ղոշնովը գնացել ա վրեն կռիվ՝ բան չի կարացե անի։

Առավոտը որ լիսանում ա, տղեն տեննում ա, որ հրեն թագավորի աղջկանը սև շորեր հագցրած տանում են Վիշապին տան։ Ինքն էլ թաքուն աղջկա եննուցն էթում ա։

Վիշապը հեռվան տեսնում ա, որ ըսօր մի ֆոգու տեղակ էրկուան ձեն գալի իրան կիրակուր ըլնեն, ուրախանում ա. ատամները սրում ա՝ հազրում, որ դալու բաշտան էրկսին էլ մի դրբբի կուլ տա։ Համա տղեն Վիշապին մոտանում ա թե չէ, թուրը հանում ա՝ ո՛ր չի տալի՜, օխտը գլուխն էլ մի հանքի ա թռնում, էն դիհն ընկնում։

— Տղա՛, մըկ էլ տո՛ւ,— ձեն ա տալի Վիշապը։

— Չէ՛,— ասում ա տղեն,— ես մորիցս մի հետ եմ էլե, էրկու հետ չեմ էլե։

Վիշապը արենկոլոլ աղբրի ակումը վեր ա ընկնում, սատկում։ Էն սհաթը աղբրի ջուրը վարարում ա, խալխը լիանում են, բոլ-բոլ խմում՝ ասսուն փառք տալի։ Թագավորի աղջիկն էլ ուրախ-ուրախ գալիս ա տուն, հորն ու մորը նաղլ անում, որ մի անճանանչ տղա էկավ Վիշապին սրպանեց, իրան էլ նրա ձեռիցը ազատեց։

— Բա՛ էն տղին որ տեսնաս՝ չե՞ս ճանանչի,— հարցնում ա թագավորը։

— Որ տեսնամ, խի՞ չեմ ճանանչի,— ասում ա աղջիկը։

Թագավորը սաղ իրա երկրումը ջառ ա գոռալ տալի, որ իրա ձեռի տակը ինչքամ մարդ կա՝ քոմմա հավաքվեն իրա պալատի աղաքը։ Նրա երկրումն է՛լ մարդ չի մնում՝ քոմմա էլ գալիս են կիտվում նրա պալատի աղաքին։

— Դե լա՛վ թամաշ արա,— ասում ա թագավորը իրա աղջկանը,— տես էն տղին կճանա՞նչես։

Աղջիկը աչքը դե՛ս, դե՛ն ա ման ածում, ալբիալը էն տղին գըտնում ա։

— Հրե՛ն, հրե՛ն, էն տղեն էր,— ձեն ա տալի հորը։

Թագավորը հրամայում ա իրա նազիր-վեզրին, որ էն տղին բերեն իրա կուշտը։ Նազիր-վեզիրը էթում են, տղին բերում։

— Տղա՛, ուզա՝ տամ,— ասում ա թագավորը։

— Թագավորն ապրած կենա, ես զադ չեմ ուզում, թաքիլան ինձ մի լիս աշխար քցես,— ասում ա տղեն։

— Լիս աշխար ղրկիլը դժար ա, ա՛յ որդի. էդ իմ բանը չի։ Համա ֆլան մեշումը, ֆլան ծառի վրեն մի Ջմռուտ ղուշ կա. թե կարենա, նա կտանի, էլ մարդ՝ չէ՛։ Էս քանի տարի ա, էդ ղուշը գալիս ա ինձ գանգատ, թե. «Ես ամեն տարի խեղճ ու կրակ ճուտ եմ հանում, մեծացնում, մի Վիշապ կա, գալիս ա, ճուտերս ուտում, էթում»։ Դու կէթաս էն ծառի տակին ղարավուլ կքաշես, կտեսնաս

որ էն Վիշապն էլի էկավ, շուլալվեց ծառը, որ ճուտերն ուտի՝ կտաս Վիշապին կսըպանես։ Զմռուտ ղուշը որ գա, տենա քու արած լավությունը՝ կհարցնի, թե. «ի՞նչ ես ուզում»։ Դու կասես, թե. «ես ղադ չեմ ուզում, մենակ ինձ կիս աշխար տա՛ր»։ Նա էն սհաթը կդնի քեզ թևերի վրեն՝ կտանի։

Թագավորի ասածը տղի բեյինը մննում ա. վեր ա կենում էթում էն մեշեն։ Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի՝ էն ծառը գտնում ա։ Նստում ա էդ ծառի տակին, Վիշապի ճամփեն պահում։

Մի քիչ կենում ա, տենում ա՝ մի եքա Վիշապ հրեն էկավ, շուլալվեց ծառը, որ Զմռուտ ղշի ճուտերն ուտի. էն սհաթին հանում ա թուրը, տալի սրսպանում, ղիմա-ղիմա անում, տանում քցում ճուտերի աղաքը, որ ուտեն։ Ինքն էլ չունքի բեզարել էր՝ պառկում ա էդ ծառի տակին, քնում։

Էն դհից, Զմռուտ ղուշը գալիս ա, տենում՝ մի մարդ հրեն ծառի տակին քնած։

«Ա՛յ հարա՛յ,— ասում ա,— կա-չկա՝ սա ա իմ ճուտերի յուխում տվողը»։

Վրա ա պրծնում, որ ձվիկ-ձվիկ անի՝ ճուտերը չեն թողնում. ասում են, որ սա ա իրանց պրծացրե Վիշապի ձեռիցը։ Նո՛ր Զմռուտ ղուշը էլ ձեռ չի տալի, դեռ հլա թևերը փռում ա վրեն՝ շվաք անում, որ դինջ քնի։

Մի քիչ կենում ա, տղեն զարթնում ա, տենում՝ Զմռուտ ղուշը թևերը վրեն շվաք ա արե։

— Ա՛յ հողածին,— ասում ա Զմռուտ ղուշը,— ուզա՝ տա՛մ։ Դու որ ինձ էս թավուր լավություն արիր՝ ես էլ պտի քեզ մի լավություն անեմ։

— Ղադ չեմ ուզում քեզանից,— ասում ա տղեն,— Զմռո՛ւտ ղուշ, թաքիլան ինձ մի քցես կիս աշխարք։

— Ափսո՛ս, ծեր վախտս ես ռաստ էկե. թե չէ կիս աշխարք տանիլը ինձ համար հաղ ու պար ա։ Համա ինչ արած. ինչքամ էլ ծերացած ըլնեմ, ճա՛րն ինչ, պտի տանեմ. բալի սրանով էլ ա քու լավությունի տակիցը դուս գամ։ Կէթաս թագավորիցը կուզես քառասուն տիկ [1] ջուր, քառասուն հատ էլ գառան դմակ. ո՛նց ըլնի՝ ես քեզ կիս աշխարք կքցեմ։

---

[1] Տպագիր տեքստում՝ բուլուխ, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Տղեն կէթա թագավորիցը քառասուն տիկ ջուր կուզի, քառասուն հատ էլ գառան դմակ, կբերի Ջմռուտ ղշի կուշտը։

— Դե՛, հմի նստի մեջքիս վրեն,— կասի Ջմռուտ ղուշը,— էդ քառասուն տիկ ջուրը, քառասուն հատ գառան դմակն էլ դի վրես։ Որ «բո՛ւ» կանեմ՝ ջուրը կքցես, «ղի՛» կանեմ՝ դմակը կքցես. կքցես՝ ընչանք հասննենք Լիս աշխարք։

Տղեն նստում ա Ջմռուտ ղշի մեջքին. քառասուն տիկ ջուրը, քառասուն հատ դմակն էլ դնում ա վրեն։ «Բո՛ւ» ա անում՝ ջուրն ա քցում, «ղի՛» ա անում՝ դմակը։ Ըսենց գալիս են, գալի՝ հասնում Լիս աշխարք։ Ջմռուտ ղուշը ըստե տղին վեր ա դնում, ինքն էլ եդ թռնում, գալի Մուբն աշխարքը։

Էս տղեն ա, մի ճամփա ա բռնում՝ դպա իրա հոր քաղաքը։ Գալիս ա, գալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, ճամփին մի չոբանի ա ռաստ գալի։

— Բա՛րով,— ասում ա,— չո՛բան աղպեր։

— Ա՛սու բարին, թագավորի ցեղ։

— Ի՞նչ տամ, որ քու ոչխարներիցը մի հատ մորթես։

— Ինչ որ քեֆդ ա, թագավորի ցեղ, ես ի՛նչ ասեմ։

Չոբանը բերում ա իրա ոչխարներիցը մի հատ վեճ քցում՝ մորթում։ Տղեն մենակ ոչխարի ղառինն ա վեր ունում, միսը թողում ա չոբանին։

— Չո՛բան աղպեր,— ասում ա,— բե մեր շորերն էլ փոխենք. քու շորերն ինձ տու, իմը տամ քեզ։

Չոբանը ուրախ-ուրախ իրա քրչոտ-մրչոտ շորերը հանում ա տալի նրան, նրա լավ-լավ շորերն առնում։ Տղեն չոբանի շորերը հագնում ա, չոբանին էլ բոլ փող բաշխում, էլ եդ էթում իրա ճամփեն։

Գալիս ա, գալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, որ հասվե-հաս ա ըլնում հոր քաղաքին, էն ոչխարի ղառինը հանում ա, ճխտում գլուխը՝ ըլնում ա լա՛փ զրո-քաչալ. ըսենց մննում ա հոր քաղաքը։ Բազարի մեջ դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի. էթում ա է՛ս դուքանի աղաքին կաննում, է՛ն դուքանի աղաքին կաննում՝ թամաշ անում։

Վերջը գալիս ա թագավորի զարգյարի դուքանի աղաքին որ երկար կաննում ա, մտիկ անում, զարգյարը հարցնում ա.— Ա՛յ քաչալ, ի՞նչ ես ուզում, ի՞նչ մարդ ես, ըստերանք ի՞նչ ես շինում։

1646—3

— Լսկի՛, ո՛ւստա, ղարիբ տղա եմ, էկել եմ ըստե մի փեշակի, մի բանի կպնեմ, բալի վերջը մի կտոր հացի տեր դառնամ։

— Կգա՞ս, քեզ վեր ունեմ ինձ աշկերտ։

— Խի՞ չեմ գա, ո՛ւստա ջան, դեռ ձեռդ էլ չեմ պաչի՞։

Թագավորի զարգյարը էս քաշալին վեր ա ունում իրան աշկերտ։

Գանք հմի խաբար տա՛նք սրա աղպորտանցիցը։

Նրանք որ էկան թագավորին ասեցին, թե իրանց պուճուր աղպորը դևերը կերել են, թագավորը աղաք ավատաց. համա եննա ինքն իրան միտք արեց, թե չըլնի՞ սրանք նրա գլուխը մի օղիա են էկե, սուտ ասում են՝ դևերը կերել են։ Սրա համար էլ մարդ ղրկեց, որ աշխարե աշխար, երկրե երկիր ման գան, հարցու ու փորձ անեն՝ բալի գտնվում ա. նրանց էլ չթողաց, որ պսակվեն, ընչանք պուճուր աղպոր գտնիլը։

Համա անցկացավ մի տարի, էրկու տարի, իրեք տարի, ո՛րդե հարցրին, ո՛րդե ման էկան պուճուր տղին չգտան ու չգտան։

Վերջը թագավորի նազիր-վեզիրը էկան թագավորի կուշտը, ասացին.— Թագավո՛րն ապրած կենա, ախա՛ր ընչանք ե՞ք պտի տղեքանցդ չպսակես, չէ՞ որ նրանք էլ մեղք են։ Էս իրեք տարին անց ա կենում. խալխը ի՞նչ կասեն, չէ՞ որ քու անըմին էլ ա ամոթ։

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— էկեք պսակենք։

Բերում ա պսակում. մենծ տղեն մենծ քվորն ա առնում, միջնեկ տղեն՝ միջնեկ քվորը. պուճուր քիրը մնում ա։

Հարսանքից եդը, թագավորը պուճուր քվորը կանչում ա իրա կուշտը, հարցնում.— Ա՛յ որդի,— ասում ա,— ասա՛ տեննանք, դո՞ւ ումն ես ուզում առնի։ Տենում ես նշանածդ քու բախտիցը էսքան տարի կորել ա. ով գիտա հմի ինչ փորձանքի ա ռաստ էկե. էլ նոր աստոծ գիտա՝ գա՞, չգա՞։ Դու էլ մեղք ես, էս իրեք տարի ա նրա խաթեր ազապ ես կացե։ Հմի ասա՛, ո՞ւմ սիրտդ ուզում ա, բերեմ պսակեմ։

— Թագավորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— ում տալիս ես՝ տո՛ւ. ես ղա՛բուլ եմ։

— Իմ նազրի տղին կո՞ւզես։

— Դու գիտաս, թագավորն ապրած կենա. հենց ո՛վ ըլնի՝ ես ռազի եմ։

— Որ ռազի ես, բա՛ս ես քեզ իմ նաղրի տղին եմ տալի։

— Լա՛վ, Թող նաղրի տղեն ըլնի, Թագավորն ապրած կենա. համա ես քեզանից իրեք բան կուզեմ. ընչանք չբերիլ տաս՝ չեմ պսակվի։

— Մ՛չքիս վրա, ո՛րդի, ասա՛. ասա՛ տեննանք՝ ի՞նչ ես ուզում.

— Թագավո՛րն ապրած կենա, քեզանից կուզեմ իրեք հատ ընենց Ոսկե սինիք, որ մի սինու միջին Ոսկե կաքավը, Ոսկե մադեն ֆըրֆըրահար գան. մեկի միջին Ոսկե հավը ու Ոսկե աքլորը կանանած ըլնեն. էն մեկելի միջին էլ՝ Ոսկե Թազի, Ոսկե աղվես. որ Թազին աղվեսի եննուցը վազելիս ըլնի։ Թագավորն ապրած կենա, հրե՛ս իմ ուղած իրեք բանը սրանք են։

— Լա՛վ, ա՛յ որդի. դրանից հեշտ բա՞ն։ Հրե՛ս իմ զարգյարին կանչիլ կտամ, Թամբահ կանեմ՝ շինի։

Թագավորը էն սհաթը կանչիլ ա տալի իրա զարգյարին, Թամբահ անում, որ աղջկա ուզած իրեք սինիքը շինի։

— Թե չշինեցիր,— ասում ա,— իմաց կաց գլուխդ Թռցնիլ կտամ։

— Թագավո՛րն ապրած կենա,— ասում ա զարգյարը.— ինձ մի ամիս մհուլ տո՛ւ, միտք անեմ, չկարացի շինի՝ արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ, քեզ մի ամիս վադա եմ տալի. գնա՛ շինա,— ասում ա Թագավորը։

Զարգյարը քիթ ու պռունգը վե Թողած՝ դառը, տխուր գալիս ա տուն։

— Հը՛, ո՛ւստա, ի՞նչ կա. խի՞ ես ըտենց նոթերդ կիտե,— հարցնում ա քաչալը։

— Կո՛րի, քա՛չալ,— բարկանում ա ուստեն,— դո՛ւ էլ իմ դարդից խաբար չես [1]։

Քաչալը ինչ անում ա, չի անում, ուստեն չի ասում իրա դարդը։ Վեր ա կենում էթում դուքան։ Միտք ա անում, միտք անում, շինում՝ քանդում, շինում՝ քանդում, բան չի դուս գալի։ Ամիսն էլ մնացել էր մի հինգ օր, որ Թամամի՝ ղեռ նա ըսկի զադ չէր շինե։

Մի օր էլ, որ ըսենց իրա մտքի հեննա էր ընկե՝ քաչալը էլի մոտանում ա, հարցնում.— Ո՛ւստա ջան, ո՛ւստա, մի ասա տե-

---

[1] Տպագիր տեքստում՝ «վազը չես գալի», ուղղումը բանահավաքինն է (Ս. Ի.)։

նանք. ախար խի՞ ես էդքան միտք անում, հալբաթ մի բան կա։

Վերջը որ քաչալը շատ ա զորում, ուտեն մին-մին նաղլ ա անում թագավորի ուզածը։

— Լա՛վ, դրանում ի՞նչ կա, ո՛ւստա, որ դու էսքան միտք ես անում,— ասում ա քաչալը,— ուզում ես՝ էս սհաթը շինեմ։ Ինձ մի չվալ պոպոք տու, մի չվալ էլ պնդուկ, էլ զադ չէ, որ հետը չարդեմ ուտեմ, հետը շինեմ. էս քշեր էլ թո՛ղ դուքանումը քնեմ. առավոտը արի տես հա՞զիր ա, թե չէ՛։

Ուտեն, ասենք չէր ավատում, որ քաչալի ձեռիցը էս թավուր հունար դուս գա. համա ասեց. «Մարդ ա, մի փորձեմ տենամ. բալի շինում ա՞։ Մի չվալ պոպոք ա տալի, մի չվալ էլ պնդուկ։ Քաչալը առնում ա մննում դուքանը. ուտեն դուքանի դուռը վրեն շինում ա, էթում։

Էդ սաղ գշեր քաչալը պնդուկն ու պոպոքը չարդում ա ուտում, չարդում ա ուտում ընչանք լիս։ Որ լիսանում ա, քաչալը հանում ա էն թլիսմը, չախմախին տալի թե չէ՝ էն սհաթը իրեք սինիքն էլ, իրանց սարք ու կարգովը գալիս են աղաքին կաննում։

Խեղճ ուտեն վաղուց էր դուքանի դռանը ղուլ էլե, կաննե՝ տեսնա քաչալը ե՞ր պտի ձեն տա, որ դուռը բաց անի։

— Ո՛ւստա,— ձեն տվեց քաչալը,— դուռը բաց արա, թագավորի ուզած սինիքը՝ իրեքն էլ հազիր ա։

Ուտեն ուրախ-ուրախ դուքանի դուռը բաց ա անում։ Որ աչքը չի ընկնում ոսկե սինիքանցը՝ խելքը գլխիցը թռնում ա. էն սհաթը վազում ա քաչալի ճակատը պաչում։

— Ջորա՛նաս դու,— ասում ա,— քա՛չալ, զորանաս. ո՛ր էս թավուր հունար ուննիր, բա խի՞ չիր թեզ ասում։ Ես էսքան վախտ մեռա չարչարվելուն՝ ըսկի խելքս բան չկտրեց. ասում ի՝ պտի թագավորը ինձ քյալլա անի. հմի ո՛վ գիտա դեռ բոլ էլ փող բաշխի ու ընենց ճամփու դնի։

Ջաթի վադեն էլ թամմել էր. ուտեն ոսկե սինիքը վե կալավ, տարավ դուզ թագավորի պալատը։ Թագավորը որ չտեհավ՝ մնաց մաթ էլած վրեն մտիկ անելուն։ Հրամայեց, որ իրա խազինիցը ուտին բոլ փող բաշխեն, ընենց ճամփու դնեն։

Ննա կանչեց աղջկանը.— Ա՛յ որդի,— ասեց,— է՞ս ա քու ուզած սինիքը։

— Էդ ա, թագավորն ապրած կենա. հմի ի՞նչ կասեմ։

Աղջիկը սինիքը որ տեհավ՝ մատը կծեց. «Բալի՛,—ասեց,—էրեվում ա նշանածս էկել ա, թե չէ էս սինիքը նրանից սավայի մարդ չէր կարա շինի»։ Աղջկա սիրտը անջախ որ մի քիչ հանդարտեց։

Սրանից եդը թագավորը բերեց աղջկանը նշան դրեց, որ էրկու օրեն եդը հարսանիք անի։ Նշանդրեքից եդը, նորափեսեն իրա թայդաշ տղերանցով դուս էկավ թագավորի պալատի աղաքը՝ ջդիր հաղալու։

Սրանց թողանք ըստե ջդիր հաղան, գանք խաբար տանք մեր քաշալից։

Էդ նշանդրեքի օրը քաշալը ուստից իզին ուզեց, ասեց. «էթամ հանդր մի շալակ ցախ բերեմ»։ Որ դուս էկավ հանդր, կարմիր մազը կրակ տվեց թե չէ՝ Կարմիր ձին, իրա ամեն սարք ու կարգովը էկավ աղաքին կաննեց։ Քաշալը ղառինը գլխիցը հանեց, շորերը փոխեց. նի էլավ ձին, էկավ ջդիր հաղալու։

Քաշալի ձիուն էլ ձի՜ կարար հասնի. ընենց էր թռնում, ծուլծուլ ըլնում, հենց գիտենաս երկնքի աստղերի հեննա էր հաղում։ Մի քանի գլուխ որ մեյդանի միջին դե՛ս քշեց, դե՛ն քշեց՝ ջրավորները քոմմա էլ մեյդանը թողին, փախան։ Ջունքի հենց ոմ հասնում էր ո՛ր ջրով չէր տալի՝ տեղն ու տեղը էրեսհարքի վրեն փռվում էր, վեր ընկնում։

Խաբարը տարան թագավորին, թե ըսենց մի Կարմիր ձիավոր ա էկե, ջրավորների մեջը խառնըվե. հենց ո՛ւմ ետևիցը որ ընկնում ա, ջրով տալի՝ ալբիալը ձիուցը կունտկի ա անում՝ յա՛լլա գետինը։ Թագավորը դուս ա գալի. ասում ա՝ տենամ էդ ի՛նչ ձիավոր ա. որ էդքամ ղոչաղություններ ա անում։

Քաշալը թագավորին տենում ա թե չէ՝ էն սհաթը ձիուցը վեր ա գալի. էթում ձեռը պաչում։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա թագավորը։

Նո՛ր տղեն նստում ա ըստե մին-մին, ինչ որ գլխովը անց էր կացե, թագավորին նաղլ ա անում։

— Ջա՜նլաթ,— ձեն ա տալի թագավորը։ Ջանլաթները գալիս են։

— Ի՞նչ ես հրամայում, թագավորն ապրած կենա։

— Էս սհաթին կէթաք իմ էրկու տղին էլ կբերեք ըստե, հենց իմ աչքի աղաքին քյալլա կանեք։

Նոր ըստե պուճուր տղեն ընկնում ա թագավորի ոնները, աղա-

չանք-պաղատանք անում.— Բա՛ն չկա, ա՛յ հեր,— ասում ա,— իմ խաթեր պտի աղպորտանցս բաշխես։ Նրանք ինձ մուխաննաթյուն արին, ես չեմ-անի։ Աստծ նրանց թո՛ղ բարի տա։

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— չունքի դու ասում ես՝ քու խաթեր հմար նրանց բաշխում եմ։

Թագավորը իրա թախտիցը վեր ա գալի, պուճուր տղին նրստացնում։ Էնչ խեղճ աղջիկը զաթի էսքամ տարի սրա ճամփեն էր պահում։ Թագավորը իրա վեզրի տղի նշանը քանդում ա, բերում է՛ն սհաթը թազադան նշան դնում տղի վրեն՝ օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։ Ի՛նչ դափ ու զուռնա, ի՛նչ քեֆ, ի՛նչ ուրախություն, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։





2· ՈՍԿԵ ՁՈՒԿԸ

Ըլնում ա չիլնում ավալ ժամանակին՝ մի թագավոր։ Էս թագավորը հենց մի մինուճար տղա ա ունենում, էլ զադ չէ։

Էս տղեն որ մեծանում ա, ըլնում ութ, իննը տարեկան՝ թագավորը տալիս ա սրան վարժատուն՝ կարդալու։ Մի հինգ, վեց տարի էդ տղեն մնում ա վարժատանը, լավ ուսում առնում, խելք սովորում, վերջը լավ գիտուն մարդ դուս գալի, որ արար աշխարքումը սրա հատը գիտուն չիլնում։

Անց ա կենում մի տարի, էրկու տարի՝ էս թագավորի աչքերը մի ղաֆիլ բռնվում ա, քոռանում։

Աշխարքումը էլ հեքիմ չի մնում բերում են՝ սրա աչքերին ճար, իլլաջ չիլնում։ Վերջը սալըղ են առնում, որ Ջինումաշինա քաղաքումը մի Լողմա հեքիմ կա. թե լավացնի՝ նա կլավացնի, էլ մարդ չէ։

Թագավորը մարդ ա ղրկում Ջինումաշինա քաղաքը, էն Լողմա հեքմին բերիլ տալի։

Լողմա հեքիմն ասում ա.— Թագավորն ապրած կենա, ինչքամ ղեղ, դարման անեն՝ զուր ա. քու աչքերին ճար չիլնի։ Մնում ա մի բան. թե որ էն ճարեցիք՝ կլավանա, թե չէ՝ հո՛ չէ։ Ծովի միջումը մի Ոսկե ձուկը կա. թե կարացիք բռնի բերի, որ մորթեմ՝ նրա արինը քսեմ աչքերիդ՝ կլավանա, թե չէ՝ էլ սաղանալու իլլաջ չկա։

Թագավորը էն սհաթը ջառ ա գոռալ տալի սաղ իրա երկրոմը, որ ինչքամ թոռչի կան՝ քոմմա հավաքվեն ծովի ղրաղը, թող քցեն։ Սաղ նրա երկրի թոռչիքը հավաքվում են, ծովը թող քցում։

Քցում են քցում, մի տարի, էրկու տարի, իրեք տարի, հինգ տարի, մախլասի տասը տարի՝ էն Ոսկե ձուկը չեն կարում հանի։ Վերջը մրն էլ որ թոռը քցում են քաշում, տենում են ի՛նչ՝ դուս էկավ մի ձո՛ւկը, մի ձո՛ւկը, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ կասեննաս հրեշտակ ըլներ. կուզեննայիր չուտես, չխմես՝ հենց նրա գյուլ-ջամալին թամաշ անես. էնքա՛մ մի սիրունիկ զադ էր[1]։

Թոռչիքը ուրախությունից աշխարով մին էլան, որ թագավորի ուղած ձուկը հանեցին։ Համա դու արի տես՝ թագավորի տղեն սեվասրտել ա՝ տխրե, թե ո՞նց էս թավուր գյոզալ ձուկը պտի տանեն մորթեն, որ ինչ ա՝ հոր աչքերը լավանա։ Տղի ղմիշը չի գալի. վեր ա ունում անսաս Ոսկե ձկանը էլ եդ քցում ծովը։

Թոռչիքը դառը-տխուր գալիս են թագավորին նաղլ անում, թե.— Թագավորն ապրած կենա, մենք էս տասը տարի մեռանք չարշարվելուն՝ անջախ կարացինք Ոսկե ձուկը կալնի, տղեդ էլ եդ քցեց ծովը։

Թագավորը էս որ լսում ա՝ կատաղում ա, հրամայում՝ որ էն սհաթը տղին իրա երկրիցը սուրգյուն անեն, քշեն, որ մին էլ նրա էրեսը չտեննա։

Թագավորի հրամանն էր. ի՞նչ կարային անի. ճամփի համար ինչ որ պետքն էր տվին ու տանից դուս արին։ Թագավորի տղեն ա՝ հացից-մացից լցրեց տոպրակը ու ճամփա ընկավ։

Գնաց ծովի ղրաղովը անց կացավ, ձեն տվեց.— Ո՛սկե ձուկ, մնա՛ս բարով, ես գնացի։

Էթում ա էթում, շատն ու քիչը աստոծ գիտա, մի աղբրի կշտի սրան մի Արաբ ա ռաստ գալի։ Թագավորի տղեն ասում ա.— Բար՛աջողում, Արա՛բ աղպեր։

— Բարո՛վ, հազար բարին, թագավորի ցեղ. էդ ո՞ւր էս էթում։

— Խեղճ մարդ եմ, էթում եմ Ստամբոլ՝ աշխատանքի. տենամ մի քանի շայի ձեռս կընկնի՞, թե չէ։

---

[1] Տպագիր տեքստում այս պարբերության վերջում բանահավաքը փոփոխություն է կատարել, դարձնելով. «...էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ թամաշ անելուց մարդ չէր կշտանում»։ Նույնությամբ թողնում ենք տեքստում տպագրվածը (Ս. Կ.)։

— Չե՞ս գա իրար հեննա աղպեր ըլննենք. ի՛նչ որ աշխատենք՝ հալալ աղպոր նման փայ անենք։

— Լա՛վ,— ասեց Թագավորի տղեն,— արի՛ ըլնենք. ինչքամ կաշխատենք՝ կեսն ինձ, կեսը քեզ։

Էս էրկսով աղպեր էլան, գնացին։ Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիտա, հասան Ստամբոլա քաղաքը։ (Ստամբոլը էդ վախտը Ուռումի Թագավորի ձեռին էր[1])։ Ըստե էրկսով մի օթախ քրեհեցին՝ միջին կացան։ Թագավորի տղեն էթում էր բանելու, Արարը մնում էր տանը՝ կերակուր-մերակուր էփում, հազրում, որ աղպերը աշխատանքից գա՝ ուտեն։

Էդ վախտերքը սալըղ-սուլուղ էր ընկե քաղաքը, թե Թագավորի աղջկա լիզուն բռնվել ա՝ չի խոսում. ո՛վ կարենա խոսացնի, Թագավորը իրա աղչիկը նրան կտա, վրեն էլ օխտը ղաթրաբեռ ոսկի։ Ո՛վ գնացել ա՝ չի կարացե խոսացնի, քոմմքի գլխներն էլ կտրիլ ա տվի։

Էս բանը որ ընկնում ա Արարի անկաջը՝ միտք ա անում, որ էթա փորձի, բալքի կարենա Թագավորի աղջկանը խոսացնի։ Ու մի օր էլ, որ աղպերը առավոտը էթում ա իրա բանին, ինքն էլ նրանից թաքուն, վեր ա կենում էթում Թագավորի խնամաքարի վրա նստում։

Թագավորը հարցնում ա.— Ա՛յ հողածին, խի՞ ես էկե։

— Թագավորն ապրած կենա, էկել եմ աղջկանդ խոսացնեմ։

— Էսքամ մարդիկ էկել են՝ ի՞նչ են չաթե, որ դու ինչ չաթես։ Գնա՛, ո՛րդի, մեղք ես, ջահել-ջիվան ես. գնա՛ արևիդ ձենն ածա։

— Չէ՛, Թագավորն ապրած կենա, ես իմ քքածը չեմ լիզի, պտի խոսացնեմ. թե չկարացի՝ արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ,— ասում ա Թագավորը,— որ ինձ չես լսում՝ մեղքն ու վարձքը քու ղլինքը, արի՛. համա աղաքուց պտի իմանաս, որ շարքը իրեք հետ ա, աղջկանս իրեք հետ պտի խոսացնես։

— Լա՛վ, թո՛ղ իրեք հետ ըլնի,— ասեց Արարը,— ղա՛բուլ եմ։

Արարը գնաց դուզ նի մտավ Թագավորի աղջկա օթախը. տեհավ ի՞նչ՝ մի հուրի-մալաք աղջիկ, որ չուտես, չխմես՝ հենց նրա գյուղ-ջամալին թամաշ անես. նստել ա քարգա ա անում, համա որ

---

[1] Փակագծում դրված ծանոթությունը ասացողինն է։ Ուռումը՝ Հոռոմ բառն է հնչյունափոխված, որ նշանակում է Բյուզանդիա, բյուզանդացի (Ս. Կ.)։

ասես ձեն, ծպտոն չի հանում։ Արաբը դե՛ս մտիկ արեց, դե՛ն մտիկ արեց՝ աչքովը զադ չընկավ, մի ժանգոտած շամադանից սավայի։ Գնաց, էդ ժանգոտած շամադանը բերեց դրեց աղաքը, հեննեն խոսաց։

— Բարո՛վ,— ասեց,—շամադան աղպե՛ր. քե՞ֆդ, հա՞լդ։ Շատ[1] վախտ ա իրար չենք տեհե. ըսկի ի՞նչ թազա խաբար։

— Ասսո՛ւ բարին, Ա՛րաբ աղպեր. փա՛ռք աստու, լավ եմ. դու ո՞նց ես։ Ի՞նչ թազա խաբար պտի ըլնի. դո՛ւ ես դռնիցը գալիս, թազա խաբարը ի՛նձ ես հարցնում։ Ես ըսկի դուս գա՞լիս եմ, որ իմանամ աշխարումը ի՞նչ ա ըլնում, ինչ՝ չէ. հենց էս ա տարեն-տասնէրկու ամիս ըստե վեր ընկած եմ։

— Բաս ըսկի, շամադան աղպեր. հեքաթից-մեքաթից չե՞ս իմանում՝ ասես, անկաջ դնենք։

— Ջէ՛, Ա՛րաբ աղպեր, ես հեքաթ չեմ գիտա, թե դու գիտաս, ասա՛։

— Լա՛վ, կասեմ. համա պտի լա՛վ անկաջ դնես, հա՛։

— Ասա՛, անկաջ կանեմ։

Արաբն ասում ա.— Կըլնի, չիլնի մի մարդ։ Էս մարդն ունենում ա էրկու տղա՝ մինը պսակված, մեկելը չէ։ Ջատկի իրա օրը էդ պսակված տղի կնիկը մարդի հեննա էթում ա հերանց գեղը, ընդե մի քանի օր մնում։ Ջատիկը որ անց ա կենում, էս ազապ աղպերը վեր ա կենում գալի՝ հարսին բերի։ Աղպերն ասում ա. «Դու կնկանս վե կալ գնա՛, ես էլ հրես եղևներիցդ գալիս եմ»։ Էս ազապ աղպերն ա՝ հարսին նի՛լցնում ա ձին, ինքն էլ աղաք ընկնում, գալի։ Գալիս են գալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, մի զուլալ աղբրի ռաստ են գալի։ Էս տղեն ասում ա. «Հա՛րսի, կա՛ց էս աղբրումը մի պուճուր լեղանամ, էլ եդ էթանք»։ Ձին կանացնում ա, շորերը հանում, լեղանում։ Որդիան որ էր՝ էն դհիցը աղպերը գալիս ա, տեսնում՝ իրա աղպերը լեղացել ա, հրեն շորերն ա հագնում։ Մտքովը ուրիշ բան ա անց կենում. գալիս ա թուրը հանում՝ աղպորը վրա քշում, որ սրպանի։ Նա սրա՛ն ա տալի, սա նրա՛ն՝ էրկու աղպեր տալիս են իրար գլուխ թռցնում։ Խեղճ կնիկը մնում ա գլխի վրեն մոլորած. չի իմանում ի՞նչ անի. չի իմանում

---

[1] Տպագիր տեքստում նախորդում է՝ էս, որը բանահավաքի ձեռքով չրնչված է (Ս. Կ.)։

ո՞րն ա իրա տեքոր ջամդաքը, ո՞րը՝ մարդինը։ Վեր ա ունում մարդի գլուխը տեքոր ջամդաքի վրա ա դնում, տեքոր գլուխը՝ մարդի ջամդաքի վրա։ Նստում ա ընդե աստուն էնքամ աղոթք անում, լաց ըլնում, որ աստոծ լսում ա սրա աղոթքը՝ էս էրկսին էլ ֆոգի ա տալի, սաղացնում։ Էրկու աղպեր հմի էլի կռիվ, ղալմաղալ են անում. մինն ասում ա. «Էս իմ կնիկն ա», մեկելն ասում ա. «Չէ՛, իմ կնիկն ա»։ Թագավորն ապրած կենա, կնիկը հմի ո՞րին կհասնի։

Թագավորն ասում ա.— Հալբա՛թ որ, մարդի գլուխը ո՛ր ջամդաքի վրա էլ ա՝ նրան կհասնի։

Եննա թագավորի նազիր-վեզրին ա հարցնում.— Նազի՛ր-վեզի՛ր. կնիկը ո՞րին կհասնի[1]։

— Հալբա՛թ որ, մարդի գլուխը ո՛ր ջամդաքի վրա ա՝ նրան կհասնի։

Թագավորի աղջիկը էլ չի կարում իրան պահի, ընդհան ձեն ա տալի.— Ա՛յ ձեր դատաստանը քանդվի. խի՞ կնիկը էն ջամդաքին կհասնի, որ ջամդաքի վրա որ մարդի գլուխն ա. հազի՛ր էն ջամդաքին կհասնի՝ ո՛ր ջամդաքի վրա որ տեքոր գլուխն ա։ Ինչ անենք, որ գլուխը մարդինը չի. սաղ ջամդաքը հո՞ մարդին ա։

— Թե որ էն կնիկը նրան կհասնի,— ասում ա Արաբը,— բա՛ս դու էլ ինձ կհասնես։

Թագավորը, նրա նազիր-վեզիրը քումմա մնացին սառած, թե ո՞նց խոսացրեց աղջկանը։

— Էս մի հետը խոսացրիր,— ասեց թագավորը,— մնաց էրկու հետ, թե որ էս էրկու հետն էլ խոսացրիր, հո ի՛նչ որ խոստացել եմ՝ կտամ. թե չէ՝ իմաց կաց գլուխդ կֆը՛ռա։

— Լա՛վ, թագավորն ապրած կենա, թո՛ղ ըտենց ըլնի,— ասում ա Արաբը։

Արաբն էթում ա տուն. կերակրից, զադից էփում, հազիր անում, որ աղպերը գա՝ հաց ուտեն։ Աղպերը որ գալիս ա տուն, Արաբը, որ ասես՝ նրան բան չի ասում, թե գնացել էր թագավորի աղջկանը խոսացնելու։

Առավոտը որ լիսանում ա, աղպերն էթում ա իրա բանին՝

---

[1] Ասացողը վրիպել է. սկզբում հայտնում է, որ Արաբը մենակ է մտնում թուգավորի աղջկա օթախը, մինչդեռ այստեղ պարզվում է, որ ներկա են նաև թագավորն ու իրեն նազիր-վեզիրը (Ս. Կ.)։

Արաբն էլ վեր ա կենում դուզ էթում թագավորի խնամաքարի վրա նստում։ Թագավորը էն սհաթը դուս ա գալի, Արաբին կանչում, տանում աղչկա օթախը։

Արաբը օթախի մեջը դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի՝ տենում ա էն ժանգոտ շամադանը չկա. դու մի ասի թագավորի ա՛ղջիկն ա ղաստի վեր ունիլ տվե, որ Արաբը գա՝ հեննեն խոսալու էլ զադ չգտնի։ Էթում ա օթախները ման գալի՝ մի ժանգոտ, քնձռոտ թուր ա գտնում, բերում դնում աղաքը, հեննեն խոսում։

— Բարո՛վ, ժանգոտ թուր աղպեր. էս քանի տարի ա իրար չենք տեհե. ըսկի չես ասում՝ իմ Արաբ աղպերն էս ո՞ւր ա, չի էրևում։

— Բա՛րին արևդ, Արաբ աղպեր։ Ի՞նչ անեմ, ամեն մարդ իրա դարդովն ա մոլորե, ես էլ իմ դարդովը։ Աղաք ես ի՛նչ թավուր լավ թուր ի. թագավորը ինձ վրեն էր կապում, էթում կռիվ. կըռվումը ով գիտա քա՛նի գլուխ մի դըրբումն ի թռցնում։ Համա հմի թագավորը էլ ինձ մտիկ չի անում. ժանգոտել եմ՝ էլե ղոռադա զադ. ըսկի էրեսիս թամաշ անող չկա։

— Բա՛ն չկա, թուր աղպեր. աստոծ ողորմած ա։ Դու էն ասա՛, հեքաթից, մասալից չե՞ս գիտա, ասես՝ անկաջ դնենք, օր մբնացնենք։

— Ջէ՛, Ա՛րաբ աղպեր, ես զադ չեմ գիտա, թե էդ թավուր հունար ունես՝ ասա՛, հազիր պարապ եմ, անկաջ դնեմ։

— Լա՛վ, կասեմ. համա պտի լա՛վ անկաջ դնես, հա՛։

— Ասա՛, անկաջ կդնեմ։

Արաբն ասում ա.— Ըլնում ա չիլնում մի խառադ, մի դերձիկ, մըն էլ մի տերտեր։ Սրանք իրեքով աղպեր են դառնում, վե կենում էթում ղարբություն՝ աշխատանքի։ Էթում են էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, մի մեշի ղրաղի մութը վրա ա հասնում։ Ըստե վեր են գալի, որ գշերը մնան՝ առավոտը էլ եդ էթան իրանց ճամփեն։ Ջունքի հեննները բո՛լ փող ին վե կալե՝ ասում են. «էկե՛ք գշերը դորեդոր ղարավուլ քաշենք, որ մեզ հարամի, զադ չմոտանա»։

«Լա՛վ,— ասում ա խառադը,— էդ շա՛տ լավ կըլնի։ Ուզո՞ւմ եք, հենց իրիկնեց ե՛ս ղարավուլ կքաշեմ. եննա մի քիչ կկենամ, դերձկին կզարթացնեմ՝ ես կքնեմ. լիսադեմին նա էլ թող տերտերին վե կացնի»։ Բիրադնով էլ ռազի են ըլնում ու աղաք խառադն ա ղարավուլ քաշում։ Համա ըս էլ պտի ասեմ, որ էս խառադը շա՛տ

գլուխ ուստա ա ըլնում. որ սաղ աշխարքումը սրա հատը ուստա չէր ըլնի։ էս մեր խառադն ա՝ ուրագը մեջքն ա խրում, ղարավուլ քաշում, ընկերտիքն էլ քնում են։ էդ գշեր էլ սատանական է՛ն թավուր ցուրտ էր, է՛ն թավուր ցուրտ, որ իմ միս կտրողին ռաստ չգա։ Խեղճ խառադը ցրտու ղրնգըռ-ղրնգըռ դողում էր. չէր իմանում ինչ անի։ Վերջը ասեց. «Աբի՛ մի իշկիլ սարքեմ, եննա պառկեմ քնեմ. ո՞վ կիմանա, թե ես քնել եմ»։ Էթում ա մեշեն, լավ-լավ շամի փետեր կտրտում, բերում էնթավուր մի փետե իսան շինում, որ գշերը մարդ տենար՝ կասեր. «էն ի՞նչ մարդ ա ընդե կաննած», էնքան մարդի նման էր։ Ըսենց շինում ա, դիք կաննացնում, ինքը պառկում քնում։ Քնում ա, քունն առնում, եննա գիշերվա մի վախտ զարթնում ա, դերձիկի կողքին բոթում. «Դե՛րձիկ աղպեր, վե կաց. քու դորն ա. ղարավուլ քաշա՛»։ Ասում ա՝ ինքը քնում։ Դերձիկը վեր ա կենում, տենում ի՛նչ՝ մի մարդ ընդե դիք կաննած ա. ոնչ ժաժ ա գալի, ոնչ էլ էն [1]. ինքն իրան ասում ա. «Աբի՛ որ սա գող ըլնի՞»։ էլ ձեն, ծպտուն չի հանում. կամաց-կամաց մոտանում ա, ֆուրը քաշում՝ տալի վե քցում։ Քրի ծերովը դե՛ս, դե՛ն ա բոթում, տենում ա որ ղորթմանց իսան չի՝ փետից ա շինած։ Նոր գլխի ա ընկնում, որ էս խառադի սատանությունը կըլնի։ Ինքն իրան ասում ա. «Բա՛ ես էլ չկարենա՞մ խառադին մի ֆանդ գա»։ Էթում ա մեշեն, ծառի լեն տերևներ պոկոտում, բերում էս փետե մարդի համար մի ձեռք շոր ա կարում [2], հագցնում։ Էս հետ որ տենայիր, իսանից չէիր ջոկի. կասեիր՝ ղորթմա՛նց որ մարդ աւ Լիսադեմին վեր ա կենում, տերտերին բոթում. «Տերտե՛ր, տերտե՛ր, վե՛ կաց. դորը քունն ա. մի քիչ էլ ե՛ս աչքս կպցնեմ»։ Տերտերը վեր ա կենում, տենում ի՛նչ՝ մի երկեն մարդ, շորերը սիրուն հագին՝ ընդե կաննած։ Թուքը-մուքը կպչում ա. մոտանում ա ձեն տալի. «Ո՞վ ես, ո՞վ ես, ո՞վ ես» [3]. Ձեն չի տալի։ Տանում ա բերում, որ մի դըրբ չի տալի՝ էրեսհարքի վրա փրռկվում ա, վեր ընկնում։ Նո՛ր վարավուրդ ա անում, որ փետե մարդ ա. նո՛ր որ սիրտը մի քիչ հանդարտում աւ Իմանում ա որ խառադի ու դերձկի սատանու-

---

[1] Տպագիր տեքստում բացակայում է, հավանաբար վրիպված է. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում նախորդում է՝ կտրում, բանահավաքը հանել է (Ս. Կ.)։

[3] Վերջին «ո՞վ ես» արտահայտությունը բանահավաքը հանել է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքստումն է (Ս. Կ.)։

թյունն ա։ «Ա՛յ հարա՛յ,— ասում ա,— նրանք էնքամ էլան՝ էսքա-վուր իսան շիննեցին. բա՛ ես էլ չկարե՞նամ սրան ֆոգի տա, որ էս-քամ սուրբ տերտեր եմ»։ Էս մեր տերտերն ա՝ էն ցուրտ ղիամաթին չոքում ա՝ աստուն աղոթք անում, աղոթք անում. էնքա՛մ աղոթք ա անում, որ աստոծ լսում ա նրա ձենը՝ էս փետե մարդին ֆոգի ա տալի։ Ըլնում ա ղորթմանց մարդ, հեննները խոսում, զրից անում, մախլասի՝ թամամ մարդ։ Դու արի տես հմի էս իրեքով իրար հեննա ղալմաղալ են քցում. խառադն ասում ա. «Էս մարդը ինձ կհասնի, չունքի ես գնացի մեշիցը փետ կտրեցի, բերի շիննեցի»։ Դերձիկն ասում ա. «Չէ՛, ինձ կհասնի. չունքի ե՛ս նրա համար շոր կարեցի՝ հագցրի. թե չէ հմի ցրտու դի՛ք չորացել էր»։ Տեր-տերն էլ ասում ա. «Հազի՛ր ինձ կհասնի. ես որ չլոքեի, աստուն աղոթք չանեի, նրան ո՞վ ֆոգի կտար. դարդակ փետե մարդը որ ֆոգի չունենար՝ ընչի՞ էր պետք»։ Թագավորն ապրած կենա. հմի էն մարդը ո՞րին կհասնի։

— Հալբա՛թ որ խառադին. որ քոմմքից աղաք նա միտք արեց, բերեց փետից մարդ շիննեց։

— Նազիր-վեզիր, ո՞ւմ կհասնի։

— Հալբա՛թ որ դերձկին. որ նրա համար շորեր կարեց՝ ցրտից պրծացրեց։

Թագավորի աղջկա սիրտը էլ չի դիմանում, էն դհիցը ձեն ա տալի.— Տո՛ ձեր դատաստանը քանդվի, ո՞րդիան նրանց կհասնի. տերտերը որ չըլներ, էն փետե մարդին ո՞վ ֆոգի տալ կտար, հազի՛ր տերտերին կհասնի՞։

— Թե որ նա տերտերին կհասնի,— ասում ա Արաբը,— բա՛ս դու էլ ի՛նձ կհասնես։

Թագավորը, նրա նազիր-վեզիրը էլի մնում են զարմացած, թե ո՞նց Արաբը էս էրկու հետ աղջկանը խոսացրեց։

— Մնա՛ց մի հետ,— ասում ա թագավորը,— թե խոսացրիր, հո խոսացրիր՝ աղջիկս քունն ա. թե չէ՝ գլուխդ պտի ֆը՛ռա։

— Լա՛վ, թագավորն ապրած կենա,— ասում ա Արաբը,— թո՛ղ ըտենց ըլնի։

Արաբը գալիս ա տուն, աղպոր համար կերակուր հազրում։ Հացի վախտը աղպերը գալիս ա՝ հաց են ուտում։ Համա դեռ ըն-չանք հմի նրան զադ չի ասում։

Առավոտը աղպերը որ էթում ա իրա բանին, Արաբն էլ վեր ա կենում գալի թագավորի խնամաքարի վրա նստում։

Թագավորը դուս ա գալի, Արաբին կանչում՝ տանում աղջկա օթախը։

Արաբը օթախի մեջը դե՛սն ա մտիկ տալի, դե՛նն ա մտիկ տալի՝ տենում օթախը լափ դարտակ ա. ըսկի զադ չկա, որ բերի հեննեն խոսա։ Էթում ա թագավորի աղջկա քարգահը բերում դնում աղաքը՝ հեննեն ըրից անում։

— Ախար բարո՛վ, քարգա աղպե՛ր, բո՞ւ չի բանես, մի քիչ էլ դինջացի, մե՛ղք ես։

— Է՛հ, ինչ դինջանամ, Արաբ աղպեր. տարեն-տասնէրկու ամիս իմ բան ու փեշակը հա՛ էս ա, հա՛ էս, հո նոր չի։

— Լա՛վ. բաս մի հեքաթ, բան չե՞ս գիտա, ասես՝ անկաջ դնենք։

— Չէ՛, Ա՛րաբ աղպեր. ես ի՞նչ հեքաթ իմանամ. թե դու գիտաս՝ ասա։

— Լա՛վ, ուզում ես՝ ասեմ. համա պտի լա՛վ անկաջ դնես, հա՛։

— Ասա՛, անկաջ կդնեմ. ասա՛, տենանք։

Արաբն ասում ա.— Ըլնում ա չիլնում մի թագավոր. էս թագավորը մի հուրի-մալաք, սիրուն աղջիկ ա ունենում։ Էս աղջկանը հա՛մ թագավորի նազրի տղեն ա սիրած ըլնում, հա՛մ վեզրի տղեն, հա՛մ էլ նրա սինոթապետի տղեն։ Համի թագավորը չի իմանում՝ ո՞րին տա։ Համա ըս էլ պտի ասեմ, որ նրա աղջկանը քոմմքից աղաք վեզրի տղեն էր սիրե։ Թագավորն ապրած կենա, քու խելքով աղջիկը ո՞րին կհասնի։

— Հալբա՛թ որ թագավորի սինոթապետի տղին,— ասում ա թագավորը։

— Նազի՛ր-վեզի՛ր, աղջիկը ո՞ւմ կհասնի։

— Հալբա՛թ որ թագավորի սինոթապետի տղին։

Թագավորի աղջիկը էս հետ էլ չի դիմանում, ընդհան ձեն ա տալի.— Տո՛ ձեր դատաստանը քանդվի. աղջիկը խի՞ պտի սինոթապետի տղին հասնի. հազի՛ր վեզրի տղին կհասնի, որ քոմմքից աղաք իրար հեննա խոսք ու զրից են ունեցե, իրար սիրե։

— Որ նա նրա՛ն կհասնի,— ասում ա Արաբը,— բա՛ս դու էլ ի՛նձ կհասնես։

Թագավորը էլ ի՛նչ պտի ասեր, որ աղջկանը չտար. ըս էլ իրեք հետ խոսացրեց։ Բերում ա աղջիկը տալի Արաբին, վրեն էլ օխտը ղաթրաբեռ ոսկի։

Արաբը աղջիկը վեր ա ունում՝ գալի տուն, աղպոր համար կերակուր էփում, հազիր անում։ Աղպերը որ գալիս ա տուն, աղջկանը տենում՝ մնում ա զարմացած։

Հարցնում ա.— Արա՛բ աղպեր, էս աղջիկը ո՞րդիան ա։

Նո՛ր Արաբն ասում ա.— Բա՛ չես ասի, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան,—ո՛նց որ ես ձեզ նաղլ արի, Արաբն էլ նրան նաղլ ա անում։

Արաբն ասում ա.— Թագավորի ցեղն ապրած կենա, բո՛լ ա ինչքամ աշխատանք արինք. արի՛ ըստիան վե կենանք էթանք։ Փա՛ռք ասսու, համի էլ հո՞ քյասիբ չենք. թագավորի տված օխտը ղաթրաբեռ ո՛սկին սաղ ըլնի։

Էրկսով իրանց զադ-մադը հավաքում են՝ ճամփա ընկնում։ Գալիս են գալի, շատ ու քիչն ասսած գիտա, հասնում են էն աղբրի կուշտը. որդե աղաք աղպեր ին դառե։ Ըստե բեռները վեր են դնում, նստում հաց ուտում։

Հաց են ուտում՝ պրծնում, Արաբն ասում ա.— Է՛, թագավորի ցեղ, դե՛ արի մեր աշխատանքը փայ աննենք. ո՛նց որ ըստե աջպերացանք, ընենց էլ համի բաժանվենք։

— Ա՛յ ջանը՛մ, գյոզը՛մ, խի՞ բաժանվենք,— ասում ա թագավորի տղեն,— հազիր աղպեր ենք, էլի՞. կէթանք իրար հեննա էլի մի տեղ կկենանք։

— Չէ՛,— ասում ա Արաբը,— պտի բաժանվե՛նք, որ պտի բաժանվենք։

Ինչքամ փող ին աշխատե՝ բերում ա Արաբը հալա՛լ կես անում. մնում ա աղջիկը։ Թուրը քաշում ա, որ աղջկանն էլ կես անի։

— Ա՛յ աղպեր,— ասում ա թագավորի տղեն,— էլ աղջկանը խի՞ ես կես անում. էդ աղջիկը քունն ա ու քունը, դրանից ես փայ չեմ ուզում, էլի՛։

— Չէ՛ որ չէ՛,—ասում ա Արաբը,—պտի էս աղջկանն էլ կես անեմ. թե փայ ենք անում՝ հա՛լալ փայ աննենք։

Թուրը քաշում ա որ տա՝ էն սհաթը աղջկա բերնիցը մի եքա վիշապ ա դուս գալի, ընդե վեր ընկնում։ Արաբը աղջկանը էլ ձեռ չի տալի. հասնում ա վիշապին սրպանում, կտոր-կտոր անում։

— Ինձ ճանա՞նչում ես,— ասում ա Արաբը,— թագավո՛րի ցեղ. ես էն Ոսկե ձուկն եմ, որ չղրմշեցիր մորթես, որ ինչ ա՝ հորդ աչքերը լավանա, էլ եդ քցեցիր ծովը։ Իմ խաթեր՝ հերդ քեզ սուրգյուն արեց, տանիցը դուս արեց։ Էս որ իմացա, ես էլ ծովի միջիցը դուս էկա, էլա Արաբ, որ քու արած լավությունի տակիցը դուս գամ, ձեռիցս էկած լավությունն էլ ե՛ս քեզ անեմ։ Հրես ա՛ռ. էս քա՛մ փողն էլ քեզ, է՛ս աղչիկն էլ քեզ. ես էս ա էթում եմ էլ եդ ծովը. աստծ շնորհավո՛ր անի. աստծ էրկսիդ մի բա՛րձի ծերացնի։ Իմ փարիցն էլ քեզ մի հատ կտամ, տար հորդ աչքերին քսա՝ էն սհաթը կբացվի։

Արաբը էն սհաթը ըլնում ա էլի աղաքվա Ոսկե ձուկը։ Իրա փարիցը մի հատ պոկում ա՝ տալի թագավորի տղին, մնաս բարով անում հենենեն, էթում ընկնում էլ եդ ծովը։

Թագավորի տղեն բեռները կապում ա, ընկնում ճամփա՝ դպա իրանց երկիրը։ Գալիս ա գալի, շատն ու քիչն աստծ գիտա, հասնում ա հոր քաղաքը։ Տենում ա, որ դեռ հլա էն լողմա հեքիմը հոր աչքերի վրա չարչարվում ա։ Էն սհաթը հանում ա Ոսկե ձկան փարեն, քսում հոր աչքերին թե չէ՝ ա՛լբիալը բացվում ա։

Թագավորը իրա թախտիցը վեր ա գալի, տղին նստացնում։ Բերում ա աղչկանն էլ տղի հետ պսակում՝ օ՛խտն օր, օ՛խտը գշեր հարսանիք անում։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։





3· ՋԱՆ–ՓՈԼԱՏ

Ավալ ժամանակին ըլնում ա՝ չիլնում մի թագավոր, ունենում ա օխտը տղա. վեցը մենծ են ըլնում, մինը քոմմքից պուճուր, ըսենց՝ տասը—տասնէրկու տարեկան։ Էդ վեցը, չունքի լավ հասել ին, ընենց որ աշխար մննելու վախտն էր, էթում են իրանց հորն ասում.— Թագա՛վորն ապրած կենա, ուզում ենք պսակվի, ի՞նչ կասես։

— Լա՛վ, ո՛րդիք,— ասում ա հերը,— ասեք տենամ ո՞րդ ում աղջիկն ա սիրե՝ էթամ ուզեմ, բերեմ պսակեմ։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,—ասում են,—մենք օխտն աղպեր ենք, օխտս էլ մի տանից պտի աղջիկ ուզենք, օխտն էլ մի հալալ մոր կաթնակեր, որ մեր մեջը խորթ ու փորթ չըլնի ու քեզանից եղը մեր թագավորությունը չքանդվի, չկործանվի։

— Ա՛յ որդիք, հմի ո՞րդիան բերեմ ընենց աղջկեք, որ օխտն էլ մի տանից ըլնեն, մի հալալ մոր կաթնակեր։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են,— մեզ հրաման տո՛ւ, էթանք գտնենք. աշխարե-աշխար, երկրե-երկիր ընկնենք, ճարենք, բերենք։

— Լա՛վ, կարաք՝ գնացե՛ք,— ասում ա թագավորը,— աստծ ձեզ բարի ճամփա տա, բա՛րով էթաք, բա՛րով գաք։

Էս վեց տղեն ա՝ տասնըհինգ տարվա ճամփի պաշար են վեր

ունում, էթում իրանց հոր ձեռը պաչում, մոր ծիծը պաչում, ընկ-նում ճամփա։

Գալիս են գալիս, շատն ու քիչն աստծ գիտա, մի սարի դո-շի, մի շայիր-չիման տեղ վեր են գալի, չադիր տալի, որ գշերն ըտե մնան, մի քիչ հաց-մաց ուտեն, առավոտն էլի վե կենան էթան իրանց ճամփեն։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք պուճուր աղպո-րիցը։

Խեղճ էրեխեն խաբար չիլնում աղպորտանց գնալը. իրիկունը գալիս ա տուն, տենում չկան։

Էթում ա մորն ա հարցնում. մերն ասում ա.— Բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, գնացել են աղջիկ բերելու։

— Ո՞րթ։

— Ո՛րթ. տասնըհինգ տարվա ճամփի պաշար են վե կալե. գնացե։

— Բաս ե՛ս էլ եմ էթում։

— Ո՞ւր։

— Նրանց կուշտը։

— Ա՛յ որդի, դեռ հլա էրեխա ես, ճամփա չես գիտա, զագ չես գիտա, ո՞ւր ես էթում։

— Ջէ՛, որ չէ՛,— ասում ա,— պտի էթամ, ո՛ր պտի էթամ։

Վերջը մերը որ շատ զոռում ա, տենում ա չիլնում, մի հետ սատանի ձին նի ա էլե, չի ուզում վե գա, հարցնում ա.— Ո՛րդի, համի որ էթում ես՝ լա՛վ, ճամփի համար ասպաբ-մասպաբ ո՞նես. բալի ջին-ջանավար ա ռաստ գալի, կա՞րաս ջուղաբը տա։

— Բա ի՞նչ անեմ,— ասում ա։

— Ա՛յ, ինչ արա՝ գնա հորդ կուշտը, ասա. «Թագավորն ապ-րած կենա, էթում եմ աղպորտանցս բննուցը, Սև թուրդ տա՞ս կապեմ վրես, ճամփին բալի ջին-ջանավար ա ռաստ գալի», տես ինչ կասի։

— Լա՛վ, կէթամ։

Էթում ա հոր կուշտը.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էթում եմ աղպորտանցս բննուցը։

— Ա՛յ տղա,— ասում ա թագավորը,— հո չե՞ս գժվե. դու դեռ էրեկվա էրեխեն ես, ճամփա չես գիտա, զադ չես գիտա, էթում ես, ի՛նչ անես։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, չի՛լնի. մի հետ մուրազ եմ արե, պտի էթամ։

— Դո՛ւ գիտաս, ո՛րդի, էթում ես՝ գնա՛, մեղքն ու վարձքը քու շլինքը։

— Թագա՛վորն ապրած կենա, էթալը կէթամ, համա ճամփի համար ասպար-մասպար չունեմ, ո՛նց անեմ. բալի դուշման, յա չին-ջանավար ա ռաստ գալի։ Ի՞նչ կըլնի Սև թուրդ տաս՝ կապեմ վրես։

— Ա՛յ քու սարվացնողի շլինքը կոտրվի,— ասում ա թագավորը,— էդ թուրը իմ աչքի լսիցը շատ եմ սիրում, համա որ ուզում ես, ճարս ի՛նչ, պտի տամ։

Էն սհաթն էթում ա, Սև թուրը բերում, կապում տղի մեջքը։

— Ա՛ռ, ո՛րդի,— ասում ա,— քանի էս թուրը վրեդ ա՝ ըսկի մի՛ վախի, քու աղաքին էլ զոդ չի դիմանա. սա՛րի տաս, քա՛րի տաս, քո՛ւի տաս՝ կկտրի կանցկենա։ Հեռվանց որ դուշման գալու ըլնի՝ էն սհաթը էդ թուրը ղնիցը դուս կգա, կընկնի աղաքդ, որ ֆիմանաս, քեզ հազիր պահես։

Տղեն հոր ձեռը պաչում ա, էթում մոր կուշտը։

— Հորդ Սև թուրն առա՞ր,— հարցնում ա մերը։

— Հա՛,— ասում ա,— առա։ էլ ինձ հո զոդ չի՞ պակաս։

— Ո՛նց չէ, ձի ո՞ւնես. էնքամ ճամփեն հո ոտով չպտի էթաս։

— Չէ՛,— ասում ա,— ինձ ո՞րդիան ա ձի։

— Բա՛ս էլի գնա հորդ կուշտը, ասա. «Թագավորն ապրած կենա, էսքամ ճամփա պտի էթամ, ձի չունեմ. ի՞նչ կըլնի Սև ձիդ տաս, նիլնեմ էթամ»։ Ձի՛, ձի՛, ձի՛ եմ ասում, որ երկնքի աստղերի հեննա ա հաղ անում։

— Լա՛վ, էթամ ըտ էլ ուզեմ։

Էթում ա հոր կուշտը.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էսքամ ճամփա պտի էթամ՝ ձի էլ չունեմ. չի՞լնի Սև ձիդ տաս, նիլնեմ էթամ։

— Ի՛նչ ասեմ, ո՛րդի,— ասում ա թագավորը,— քու սարվացնողի շլինքը կոտրվի։ Սաղ թագավորությունս ուզեիր լավ էր, քան թե իմ Սև ձին, որ էս աչքիցս էն աչքը չեմ փոխում. համա որ ուզում ես, ճա՛րս ինչ, պտի տամ։ Գնա՛ տար, ո՛րդի. տա՛ր, ըտ էլ քեզ ղուրբան։

Տղեն ուրախ-ուրախ էթում ա Սև ձին գոմիցը դուս քաշում,

հայաթումը կաննացնում, էթում հոր ձեռը պաչում, մոր ծիծը պաչում, թռնում ձին՝ յա՛լլա։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի չայիր-չիման տեղ, մի աղբրի կշտի վեր ա գալի, մի քիչ հացմաց ուտի, էլի վե կենա էթա իրա ճամփեն։ Որ հաց կուտի կպըրծնի՝ թուրը ղնիցը դուս կգա, կընկնի աղաքը։

— Ա՛յ հարա՛յ,— կասի,— բաս դուշման պտի գա աղաքս, ես վախտով իմ գլխի ճարը տենամ։

Կասի ու թուրը ձեռին տեղն ու տեղը կկաննի։ Կկենա, կկենա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ կտենա էն դհիցը մի ղո՛վտ ա գալի, մի ղո՛վտ ա գալի, մի ղո՛վտ ա գալի, ոնց որ մի եքա սար։ Ջամի գերանը շինել ա թեշի, եքա չաղացաքար՝ թեշուն գլուխ, մի եքա էրկաթ՝ թեշուն ծիծեռ ու պարան մանելոն գալիս ա դպաիրան։

Տղին որ կտենա թե չէ՝ ձեն կտա.— Ա՛յ հողածին, դո՛ւ ըստերա՛նք, օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը, ընչանք համի իմ ահիցը ըստերանք ոտ չի կոխե, դու ո՛նց ես սիրտ արե, էկե։ Ո՛նց ես, էս թեշու պոչովը մի դըրբ տամ՝ էթաս, էլ եդ չգաս։

— Լա՛վ,— կասի տղեն,— էլ խի՞ պտի վախենամ. աստոծ մի ֆոգի քեզ ա տվե, մի ֆոգի՝ ինձ։ Ուզո՞ւմ ես, արի կռվենք. էն վախտը մալում կանի՝ ե՞ս եմ ղոչաղ, թե դու։

Ղովտն էս որ լսում ա, դհա՛ ա գժվում, կատաղում։ Ձեռի թեշին վրա ա անում տղին, որ տա բանֆոգի անի՝ նա Սև թուրը աղաքին բռնում ա։ Թեշին ո՛ր չի դիպնում թրին՝ հազար կտոր ա ըլնում, թափում գետինը։ Ջա՛նըմսան տղեն թուրը քաշում ա քյալլի միջիցը ո՛ր չի շեպում, ղովտը արենկոլոլ ընկնում ա գետինը։ Վրա ա հասնում, նրա քիթ ու պռունգը, անկաջները կտրատում, ածում խուրջինը, էլ եդ վե կենում, էթում իրա ճամփեն։

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, է՛ս սարը դիպնում, է՛ն սարը դիպնում, վերջը էրկու սարի միջի մի չայիր-չիման տեղ վեր ա գալի։ Ոտը ձիու օրղանգուիցը հանում ա թե չէ՝ էն սհաթը թուրը ղնիցը դուս ա գալի, ընկնում աղաքը։

— Ա՛յ հարա՛յ,— ասում ա,— էլի դուշման պտի գա աղաքս։

Թուրը վեր ա ունում, հազիր կաննում, դուշմանի ճամփեն պահում։ Մի քիչ կենում ա, կենում, տենում ա էն դհիցը էլի մի ղո՛վտ ա գայի. մի ղո՛վտ ա գալի, որ մի պռոշը երկնքումն ա,

մինը՝ գետընքումը. ծծերն էլ էնքամ էրկեն, որ գեննին քաշ ա գալի։ Էկա՛վ, էկա՛վ՝ դուզ դպա տղեն։

— Ա՛յ հողածին, դո՛ւ ըստե՞րանք. օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք հմի իմ ահիցը չի կարացե ըստե ոտ դնի, դու ա՛նց ես սիրտ արե էկե։

Ղովտն էս ասում ա թե չէ՝ բերանը բաց վրա ա սլրծնում, որ տղին փորը քաշի. տղեն թուրը ո՛ր վրա չի բերում քյալլին ծեփում՝ ղովտը գլխի վրեն յա՛լլա ընկնում ա գետինը, ֆոգին տալի։ Վրա ա հասնում, էս ղովտի էլ քիթ ու պռունգը, անկաշները կըտրատում, ածում խուրջինը։ Ըստե մի պուճուր մնում ա, դինջանում, էլ եդ վե կենում, էթում իրա ճամփեն։

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հեռվանց տեսնում ա մի սարի վրա հրեն մի սիպտակ չադիր։ Թուրը հանում ա, ձիու գլուխը բաց թողում։

— Ո՞վ եք,— ձեն ա տալի հեռվանց,— ի՛նս եք, չի՛նս եք, ջանա՛վար եք՝ դուս էկեք, թե չէ որ էկա, իմաց կացեք մահներդ կտամ։

Չադրի մարդիկը վախլուբյուններից էն սհաթը դուս են գալի։

— Ձլա՛ն թագավորի տղեքն ենք,— ասում են։

— Բա էդ ո՞ւր եք էթում,— հարցնում ա։

— Մենք օխտն աղպեր ենք, էթում ենք մեզ համար կնիկ բերենք, որ օխտն էլ մի տանից ըլնեն՝ մի հալալ մոր կաթնակեր։

Էս լսում ա թե չէ՝ ալբիալը ճանանչում ա. էն սհաթը ձիուցը վեր ա գալի, աղպորտանց ճտովը փաթթվում, ուրախությունից լաց ըլնում։

— Ե՛ս,— ասում ա,— ձեր պուճուր աղպերն եմ, բա չե՞ք ճանանչում։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

Վարավուրդ են անում տենում, որ դրուստ իրանց պուճուր աղպերն ա, ուրախանում, աշխարով մին են ըլնում։ Նո՛ր նստում են ըստե իրար հեննա զրից անում՝ ըստիան, ընդիան, դաղդան, դաշդան հարցնում, ասում, խոսում, մասլահաթ անում։

— Դո՞ւ խի էկար,— հարցնում են աղպրտինքը։— Մենք մեր հորնըմորը մենակ թողինք՝ հերիք չէ՞ր. խեղճերը, ով գիտա, մեզ վրա էնքամ միտք անեն, միտք անեն, որ օր-ծերուբյուն դարդա-

վարամ ըլնեն, մեռնեն։ Դու արի՛ եդ դա՛ռ, գնա՛, ընչանք էս ա մընք էլ որդե որի ա կգանք։

Ինչ անում են, չեն անում՝ պուճուր աղպորը չեն կարում ճամփից եդ դարձնի։

— Չէ՛, որ չէ՛,— ասում ա,— կուզի մորթեք, կուզի քերթեք. ես եդ դառնողը չեմ։ Ո՛ւր էթաք՝ պտի հեններդ գամ. սաղ կմնաք՝ սաղ կմնամ. կմեռնեք՝ կմեռնեմ։

Նրանք էլ տենում են որ չէ՛, չիլնում, ասում են.— լա՛վ, դո՛ գիտաս, կենում ես՝ կա՛ց. մեղքն ու վարձքը քու շլինքը։

Ջադիրը հավաքում են, վե՛ կենում, որ իրանց ճամփեն էթան։

Ըստե պուճուր աղպերը նրանցից ջոկնվեց.— Ե՛ս,— ասեց,— է՛ս ճամփովը կէթամ, դուք՝ էդ։ Թե իրար գտանք՝ հո գտանք, թե չէ հո՝ աստոծ աջողա, հալբաթ սաղ-սալամաթ կէթանք մեր հորնըմոր կուշտը՝ ընդե կտեննանք իրար։

Աղպորտանց հեննա մնաս բարով արեց, էն ճամփեն բռնեց գնաց։

Գնաց, գնաց՝ լի՛ս գնաց, գշե՛ր գնաց, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր՝ վերջը մի եքա քալավի ռաստ էկավ։

Էս քալավի տեղը աղաք մենծ քաղաք էր էլե. էրկու ղովտ էկել ին քարուքանդ, բրիշակ արե, գնացե ու սաղ նրա խալխը թողե տակին։ Էս է՛ն էրկու ղովտն ին, որ ճամփին պուճուր տղին ռաստ էկան, նրանց մենծ թիքեն անկաջը թողաց։

Մտավ էս քալավեն, ասեց. «Տենամ ի՛նչ կա, ինչ չկա»։

Դես գնաց, դեն գնաց, տեհավ մարդ-մադաթ չկա։ Վերջը որ շատ դես-դեն ընկավ, ման էկավ՝ տեհավ մի եքա կոլոլ քար։

— Դու արի՛,— ասեց,— սրա տակին խազինա ըլնի. վեր ունեմ տե՞նամ։

Քարը գլորեց, տեհավ, ըհը՛, մի ծակ. գլուխը կռացրեց, որ մտիկ տա, մի ղաֆիլ ոտը սոթ տվեց [1], գըրըմփալեն ընկավ մեջը։ Դու մի ասի՝ ըտե ֆոր ա էլե։

Տղեն ֆորի միջին դե՛ս մտիկ տվեց, դե՛ն մտիկ տվեց, տենա ընդհան դուս գալու ճար, իլլաջ կա՞, թե չէ։ է՛ս դիհը գնաց, է՛ն դիհը գնաց, տեհավ հրե՞ մի պուճախից ճրագի լիս ա էրևում։

Ասեց.— Բա՛լի, ըստե իսանաորդի ա էլե։

---

[1] Տպագիր տեքստում՝ սլմվեց, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Թուրը հանեց.— Ցա՛ սուրբ Կարապետ, դու ըլնես իմ կռանը,— ձեն տվեց ու գնաց աղաք։

Գնաց, գնաց, տեհավ օղլուշաղի հարա՛յ-հրոցի ձեն ա գալի։ Ջս որ լսեց՝ կաննեց։

— Ո՞վ եք,— գոռաց,— ի՛նս եք, չի՛նս եք, ջանա՛վար եք՝ ձեն հանեք։

— Մենք ֆլա՛ն թագավորի աղջկեքն ենք,— ձեն տվին ընգիան։— Բա դու ի՛նչ մարդ ես։

— Ես էլ ֆլա՛ն թագավորի տղեն եմ,— ասեց։

Որ իմացավ աղջկեք են, նո՛ր որ սիրտը հանդարտեց։ Թուրը խրեց տեղը, գնաց կշտները, տեհավ ղորթ որ օխտն աղջիկ՝ օխտն էլ մեկ-մեկուց սիրուն։

— Բա՛ մեն-մենակ էս ֆորումը ի՞նչ եք անում,— հարցրեց։

— Մեր հերը էս քաղաքի թագավորն էր,— ասեցին աղջկեքը։— Սրանից մի ամիս աղաք, էրկու ղովտ էկան սաղ քաղաքը քարուքանդ արին, տակնուվրա արին, մեր հորնըմորն էլ սրպանեցին, թողին, գնացին. մենակ մենք պրծանք էդ արենխում ջանավարների ձեռիցը, փախանք, էկանք մտանք էս ֆորը, տափ կացանք, որ մըզ էլ չգան ուտեն։ Թագավորի ցեղ, բա դո՞ւ ո՛նց պըրծար, չե՞ս վախենում, որ գան մենծ թիքեն անկաջդ թողան։

— Հա՛, թե որ սաղ ըլնեն,— ասում ա։ Նոր հանում ա խուրջնիցը էրկու ղովտի քիթ ու պռունգը, անկաջները նրանց շանց ա տալի ու մին-մին նաղլ անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Աղջկեքը ղովտերի սրպանվիլը որ լսում են՝ ուրախանում, աշխարով մին են ըլնում։ Օխտն էլ վազում են, ընկնում տղի ճտովը։

— Թագա՛վորի ցեղ,— ասում են,— աստուծ քու կռանն ըլնի, որ մեզ ազատեցիր էդ մարդակեր ջանավարների ձեռիցը։ Սրանից դենը՝ մենք քունն ենք, դու՝ մերը. ի՛նչ կուզես արա՛. կուզես՝ տար ջուրը քցա՛, կուզես՝ մորթա՛, կուզես՝ սաղ թո՛ղ, քեֆը քունն ա։

— Ես էլ հենց ձեզ ի՛ման գալի,— ասում ա տղեն։— Մենք օխտն աղպեր ենք, ուզում ենք պսակվի։ Էս քա՛նի տարի ա, էկել ենք աշխարե-աշխար, երկրե-երկիր, սարե-սար, քարե-քար ընկե, որ օխտն աղջիկ ճարենք՝ օխտն էլ մի հալալ մոր կաքնակեր։ Որդե գնացինք, որդե հարցրինք՝ չգտանք ու չգտանք. անջախ որ աստուծ

աչքը վրներս քաղցրացավ, ձեզ մեզ ղամաթ արեց։ Դուք հմի էն ասեք, մեզ կա՞ռնեք,— հարցնում ա։

— Խի՞ չենք առնի, դեռ աղանչանք էլ չենք անի՞,— ասում են։

— Դե բաս որ[1] ըտենց ա, դուք ըստե կացեք, ես էթամ աղպորտանցս գտնեմ, բերեմ. նոր ըստիան իրար հեննա վե կենանք էթանք մեր հոր քաղաքը, ընդե դափ ու զուռնով, քեֆով, ուրախությունով, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անենք։

— Լա՛վ,— ասում են աղչկեքը,— գնա՛, աստոծ քեզ հետ, համա տե՛ս՝ էլի գաս, հա՛։

— Կգա՛մ, արխեին կացեք,—ասում ա ու ճամփա ընկնում։

Պուճուր աղպերն ա՝ էթում ա, էթում՝ է՛ս սարը դիպնում, է՛ն սարը դիպնում, վերջը գալիս ա տենում մի սարի դոշի աղպրտինքը վեր են էկե, չադիր տվե։

— Հը՛, աղպրտի՛նք,— ասում ա,— գտա՞ք, թե չէ։

— Չէ՛, չգտանք. դո՞ւ։

— Ըսկի մի՛ք ասի, որ ես գտել եմ՝ լա՛վ եմ գտե։ Օխտը քիր, օխտն էլ թագավորի աղչիկ. ընենց էլ մի սի՛րուն, մի նա՛շխուն, որ արևին ասում են՝ դու մեր մտի, մենք դուս ենք գալի, ընենց մի սիրունիկ զադեր են։ Ես էկա ձեզ էլ կանչեմ, տանեմ շանց տամ. թե հավան կկենաք, մարդս մինն առնենք, վեր ունենք էթանք։

— Բա ո՞րդի են,— հարցրին,— էթա՛նք տենանք։

— Էթա՛նք,—ասեց,—հենց էս ճամփեն բռնենք, դուզ էթանք։

Պուճուր աղպոր էկած ճամփեն բռնում են՝ գալի։ Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր՝ հասնում են էն խարաբա քաղաքը։ Ֆորի քարը դեն են քցում, կախ ըլնում ֆորը, օխտը քվորն էլ ընդիան հանում լիս աշխարք։

— Մե՛նծ աղպեր, էս մենծ քիրը քեզ. չունքի դու քոմմքիցս էլ մենծ ես։ Լա՛վ։

— Նրա՛նից պուճուր աղպեր, ըս էլ քեզ կհասնի։ Ըս էլ լա՛վ։

— Ըս էլ սրա՛նից պուճուրին։ Լա՛վ։

— Ըս էլ նրան։ Լա՛վ։

— Ըս էլ դրան։ Լա՛վ։

— Ըս էլ մեկելին։ Լա՛վ։

---

[1] Տպագիր տեքստում բացակայում է, ավելացված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

— Պուճուր քիրն էլ զաթի ինձ կհասնի ու ինձ կհասնի, չունքի քոմմքիդ պուճուրր ե՛ս եմ։

Պուճուր քիր մի՛ ասի՝ մի մարգարիտ, արեգակի կտոր, հրեշտակ ասա, քվորտանց քոմմքին էլ գլխում էր իրա սիրունությունովը։

— է՛, աղպրտի՛նք, հա՞լալ փայ արի, թե չէ՛,— հարցնում ա պուճուր աղպերը։

— Հա՛լալ, հա՛լալ,— ձեն են տալի աղպրտինքը,— քոմմեքս էլ ռազի ենք։

— Դե բաս հմի էթա՛նք։

— էթա՛նք։

Օխտն աղպեր, օխտը քիր վեր են կենում ըստիան ճամփա ընկնում։ Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի իրեք ճամփի միջի վեր են գալի, չադիր տալի, որ մի պուճուր դինջանան, հաց-մաց ուտեն, էլ եդ վե կենան էթան իրանց ճամփեն։ Ըստե դես են ընկնում, դեն են ընկնում, ըստե էթում, ընդե էթում, ման գալի, որ ասես, մի պուտ ջուր էլա չեն գտնում, որ բերեն կերակուր էփեն, յա խմեն։

— Բա ո՞նց անենք,— ասում են։

— Ո՛նց պտի անենք,— ասում ա պուճուր աղպերը,— դուք ըստե կացեք, ես մի ձիս նիլնեմ, էթամ ըստերանք ման գամ, բալի առու, զադ գտնեմ, մի քիչ ջուր լցնեմ բերեմ։

Սև ձին նիլնում ա՝ թռնում։ Դես ա ընկնում, դեն ա ընկնում, է՛ս սարը չափում, է՛ն սարը չափում, որ ասես, ջրի թրիշա չի գտնում։ Վերջը որ շատ ման ա գալի, տենում ա մի քարափի տակի, ըհը՛, հրես մի ֆոր։

Ասում ա. «կաց քար քցեմ տե՞նամ, բալի միջին ջուր ա լինում»։ Վեր ա ունում մի քար քցում ֆորը. քցելու բաշտան չըրրպալեն դիպնում ա ջրին։

— Էս լավ էլավ,— ասում ա,— էթամ աղպորտանցս իմաց անամ, գանք ըստե չադիր տանք. հազիր ջուրն էլ մոտիկ՝ կհանենք, կբանացնենք։

Թողում ա գալի։

— Աղպրտի՛նք,— ասում ա,— էկե՛ք որ ֆլան տեղը ջրֆոր եմ գտե. էթանք ընդե չադիր տանք։

— Լա՛վ,— ասում են,— էթա՛նք։

Ջադրները հավաքում են, բերում են շրֆորի կշտին վե տալի։

— Դե՛,— ասում ա պուճուր աղպերը,— ո՞վ կմննի ֆորը ջուր հանի։

— Ե՛ս,— էն դհիցը ձեն ա տալի մենծ աղպերը։

Բերում են պարանը կապում մենծ աղպոր մեջքը՝ կախ տալի։

Մի քիչ որ էթում ա, էթում, ձեն ա տալի.—Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի, փոթոթվե՛ցի՝ քա՛շեք։

Աղպրտինքը քաշում են հանում։

— Համի ի՛նձ,— ձեն ա տալի սրանից պուճուրը։

— Լա՛վ, համի էլ քեզ։

Բերում են սրան կախ տալի։

Սա էլ որ մի պուճուր ներքև ա էթում, ձեն ա տալի.— Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, կրակվե՛ցի, խաշվե՛ցի, տապակվե՛ցի՝ քա՛շեք։

Պարանը քաշում են, սրան էլ են հանում։

— Համի էլ ի՛նձ,— ձեն ա տալի նրանից պուճուրը։

— Լա՛վ, համի էլ քեզ։

Բերում են պարանը կապում մեջքը՝ կախ տալիս։

Դա էլ մի պուճուր տեղ էթում ա, չի էթում, գոռում ա.—Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի[1], տապակվե՛ցի[2], փոթոթվե՛ցի՝ հա՛նեք։

Քաշում են, դրան էլ են հանում։ Մախլա՛ս, գլխներդ ինչ ցավացնեմ, ըսենց վեց աղպերն էլ իրար ննուց կախ են ընում ֆորը, վեցն էլ ճամփի կիսին ձեն են տալի.— էրվեցի՛, խորովվե՛ցի, տապակվե՛ցի՝ հա՛նեք,— քաշում են, հանում։

Վերջը դորը դալիս ա քոմմքից պուճուր աղպորը։

— Աղպրտի՛նք,— ասում ա,— համի ի՛նձ քաշ արեք տե՛նամ։ Համա ինձանից ձեզ ամանաթ, ինչքամ ձեն կտամ. «էրվե՛ցի, խաշվե՛ցի, տապակվե՛ցի[3], քա՛շեք», ըսկի անկաչ չեք անի՝ հա՛ պարանը կթողաք, ընչանք հասնեմ։

— Լա՛վ,— ասում են,— արի՛։

Բերում են պարանը կապում պուճուր աղպոր մեջքը, կախ տալիս։

---

[1], [2], [3] Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով շնչված են. թողնում ենք, ինչպես տպագիր տեքստում է (Ս. Կ.)։

Մի քիչ էթում ա, էթում, ձեն ա տալի.— Ա՛յ հարա՛յ, էրվե՛ցի, խաշվե՛ցի, փոթոթվե՛ցի [1], քաշե՛ք։

Անկաջ չեն անում, հա՛ կախ են տալի, կախ են տալի՝ ընչանք հասնում ա անտակը։

— Աղպրտի՛նք, հա՛սա,— ձեն ա տալի։— Դե հմի փարխաջը կախ տվեք, լցնեմ։

Վիրևից փարխաջը թողում են ֆորը։ Նա ընդե լցնում ա՝ քաշում են, լցնում ա՝ քաշում են, լցնում ա՝ քաշում են, ընչանք ձեն են տալի.— Բո՛լ ա, կա՛ց պարանը կախ տանք, դո՛ւս արի։

Պարանը կախ են տալի, կապում ա մեջքը։

— Դե՛, քաշե՛ք,— ձեն ա տալի ֆորիցը։

Քաշում են։ Քաշում են, քաշում են, քաշում են՝ կիսաճամփին աղպորտանց միտքը փոխվում ա։

— Լա՛վ,— ասում են իրար,— հմի որ դրան հանում ենք, ինչ էրեսով պտի էթանք տուն։ Նա պուճուր տեղովը էնքամ ղոչաղություններ արեց, չէ՞ կէթա մեր հորը մին-մին նաղլ կանի, կպարծևնա, մեզ կթողա նրա կշտին սևէրես. բա մենք էն վախտը գետինը մննենք լավ չի՞։ Հազիր լա՛վ ա ռաստ էկե, էկեք պարանը կտրենք, էլ եդ քցենք ֆորը. թող ընդե մնա, սովածությունից մեռնի։ Տանը որ կհարցնեն, կասենք. «Ջենք տեհեց», պրծավ գնաց։

Վեցով էլ խոսքները մին են անում, դանակը քցում, պարանը կտրում։ Պուճուր աղպերը գըրըմփալեն էլ եդ ընկնում ա ֆորը։ Աղպեր, ըսօր ես մեռե, թե էգուց. ուշագնա ա ըլնում, մնում։

Նրանք էն սհաթը չադիրը հավաքում են, բեռները կապոտում, ճամփա ընկնում դպա իրանց հոր քաղաքը։ Ուզում են պուճուր աղպոր ձին էլ հեննները քշեն, տանեն՝ ինչ անում են, չեն անում՝ չեն կարում։ Խեղճ հայվանը ֆորի էս գլխովն էր պտիտ գալի, էն գլխովն էր պտիտ գալի, դե՛ս վազում, դե՛ն վազում, խրխնջում, ուզում էր իրան քցի ֆորը, տիրոնչ կուշտն էթա՝ տենում էր չիլնում, ճար, իլլաջ չկա։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, անջախ որ հասնում են իրանց հոր քաղաքը։ Ձիանիքը քշում են դո՛ւզ թագավորի պալատի աղաքին վեր գալի, դուռը ծեծում։ Նոքարը գալիս ա բաց անում։

[1] Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով շնշված. է. թողնում ենք, ինչպես տպագիր տեքստում է (Ս. Կ.)։

— Ո՞ւմն եք ուզում,— հարցնում ա։

— Թագավորի՛ն,— ասում են։

Էթում ա իմաց տալի։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— վեց մարդ, հենեները օխտը սիրուն աղջիկ, քոչով, բարխանով էկել են պալատիդ դռանը վեր էկե, ուզում են քեզ տենա։ Թո՞ղամ գան, թե չէ՛։

— Թո՛ղ գան,— ասում ա Թագավորը,— տենանք ի՛նչ մարդ են։

Նոքարն էթում ա կանչում, բերում Թագավորի կուշտը։ Թագավորը տենալու բաշտան ճանանչում ա, ընկնում տղերանց ճտովը, պաչպչորում, ուրախանում, աշխարով մին ըլնում։

— Ո՛րդիք,— ասում ա,— անջախ էկաք, աչքս ջուր դառավ ձեր ճամփեն պահելուն։ Էս ո՞ւր եք էսքամ վախտ։

— Դե ի՛նչ անենք,— ասում են,— էսքամ տարի մեռանք մանգալոն. երկրե-երկիր, աշխարհ-աշխար մանէկանք՝ անջախ գտանք։ Հրե՛ս օխտն էլ հալալ քվերտինք են՝ մի հորից, մի մորից. սավայի էդ՝ օխտն էլ Թագավորի աղջիկ։

— Լա՛վ,— ասում ա Թագավորը,— բա ձեր պուճուր աղպե՞րն ուր ա. ճամփին նրան ոաստ չէկա՞ք։

— Չէ՛, Թագավորն ապրած կենա, մենք պուճուր աղպեր չենք տեհե։

— Ո՛նց չէ, ախա՛ր ձեր ննուցն էկավ։ Հազար հետ ասեցինք. «Մի՛ էթա, մի՛ էթա», անկաչ չարեց, ասեց. «Պտի էթամ, որ պտի էթամ». վե կացավ էկավ։ Ցարաբ ի՞նչ էլավ, ղուշ կերավ նրան, ղուրդ կերավ, ջանավար կերավ, թե ընչանք հմի սաղ ա մնացե։

— Թե ի՛նչ ա էլե՝ չենք գիտա,— ասում են աղպրտինքը,— համա մենք նրան աչքով էլ չենք տեհե։

Թագավորը շատ ա լաց ըլնում, գլխին վա՛յ տալի, համա էլ ո՞ւր՝ բանը բանից անց էր կացե։ Ինքը բեխաբար, ինչ իմանա աղպորտանց մուխաննաթությունը, հենց իմանում ա՝ ղորթ են ասում, բերում ա վեցին էլ պսակում, ամեն մեկին իրա նշանածը տալիս։ Մնում ա քոմմքից պուճուր քիրը։

— Բա՛ դո՞ւ ումն ես ուզում,— հարցնում ա։

— Ըսկի մարդի էլա չեմ ուզում, Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— թե պուճուր տղեդ սաղ-սալամաթ եդ էկավ հո ես նրանն եմ, նա իմը. թե չէ՝ հո չէ՛, ես ուխտ եմ արե ընչանք վերջը կուա մնամ, կուա էլ մննեմ գերեզմանե։

Ասենք սա աղպորտանց արարմունքը լավ գիտար, համա քաշվում էր նրանցից, որ նստեր թագավորին մին-մին նաղլ աներ։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք պուճուր աղպորիցը։

Պուճուր աղպերը մի վախտ ուշքի ա գալի, աչքը բաց անում, տէնում ֆորումն ա։ Ինչքամ ձեն ա տալի. «Աղպրտի՛նք, աղպրտի՛ք, աղպրտի՛նք», լսող չիլնում։

«Հե՛յ գիդի աշխարք,— ասում ա ինքն իրան,— աղպորն էլ էհտիբար չի մնացե։ Նրանց ի՛նչքամ լավութիւն արի, ի՛նչքամ փորձանքից պրծացրի՝ վերջը գլխիս էս օղիեն բերին։ Է՛, բան չկա. աստծ ողորմած ա. հալբաթ ինձ մի լիս ու ճար կանի, էրկու դռնից մի դուռը բաց կանի, էս նեղ տեղիցը կազատի»։

Նրա Սև ձին էլ ֆորի ղրաղին կաննած՝ վախտ-վախտ գլովը կախ էր անում ֆորը, խրխնջում, ուքուր-ուքուր լաց ըլնում։ Ջիու արտասունքները գըլգըլալեն էթում ին թափում տղի աչքերին, տղեն էլ նրա հեննա ընդե էր լաց ըլնում։

— Ջա՛ն, ա՛նլիզու հայվան ջա՛ն, ջա՛ն,— ձեն էր տալի տղեն ֆորիցը,— դարդ մի՛ անի, ես դեռ հլա սա՛ղ եմ, սա՛ղ։

Թամա՛մ օխտը պոլոլիկ տարի պուճուր աղպերը մնաց ֆորումը։ Սև ձին ամեն օր էթում էր հանդը, ալապստրակից, յա ղշից ղնչով կալնում, բերում քցում ֆորը, որ իրա տերն ուտի, սովածութիւնից չմեռնի։

Օրեն մի օրը, մի բեզրգյան գալիս ա էս ճամփովն անց կենում։ Գշերը որ վրա ա հասնում, էդ ֆորի կշտին վեր ա գալի, չաղիր տալի, մնում, որ առավոտը էլ եդ վե կենա էթա իրա ճամփեն։ Որ լիսը բացվում ա, տենում ա ֆորի ղրաղին հրեն մի ձի։ էթում ա որ բռնի, փախնում ա։

— Յարաբ էդ ձին խի՞ էր ընդե պտիտ գալի,— միտք ա անում ինքն իրան,— չըլնի՞ ֆորումը զադ ա տեհե. արի քար քցեմ տենամ։

Վեր ա ունում մի պուճուր քար, քցում ֆորը։

— Էդ ո՞վ եք,— ձեն ա տալի տղեն ֆորիցը։

— Հողածին ենք,— ասում ա բեզրգյանը,— բա դո՞ւ ով ես։

— Ես ֆլա՛ն թագավորի տղեն եմ։

— Բա ըտե ի՞նչ ես շինում։

— է՛, հողածին, իմ դարդերը շատ ա, մի՛ հարցնի. ինձ մի քոտիան հանա՛, հերիք ա։

Բեղրդյանը հրամայում ա նոքարներին, պարանը կախ են տա-
լի, տղին ֆորիցը հանում։

— Դու ասում ես՝ ֆլան թագավորի տղեն ե՞ս,— հարցնում ա։

— Հա՛, բեղրդյանը սաղ ըլնի, ֆլա՛ն թագավորի տղեն եմ։

— Ձե՞ս գա քեզ տանեմ ինձ տղա շինեմ,— հարցնում ա բե-
ղրդյանը,— հազիր ես էլ տղա չունեմ։

— Չէ՛, բեղրդյանը սաղ ըլնի, չե՛մ կարա. ես դեռ հլա մու-
րազ ունեմ, պտի էթամ։

— Լա՛վ, դո՛ւ գիտաս, որ մուրազ ունես՝ դնա՛. աստծ քեզ
հետ։

Բեղրդյանի հեննա մնաս բարով ա անում, նիլնում Սև ձին,
էթում։ էթում ա, էթում, շատն ու քիչն աստծ գիտա, մի չայիր-
չիման տեղ վեր ա գալի, որ մի քիչ դինջանա, էլ եդ վե կենա, էթա։
Մի լավ դինջանում ա, հաց ուտում, վե կենում նիլնում ձին, որ
էթա՝ թուրը ղնիցը դուս ա գալի, ընկնում աղաքը.

— Ա՛յ հարա՛յ,— ասում ա,— բաս պտի դուշման գա աղաքս։

էն սհաթը թուրը վեր ա ունում ձեռը՝ ընդե հազիր կաննում,
դուշմանի ճամփեն պահում։ Մի քիչ կենում ա կենում, տենում ա
էն դհիցը մի ղո՛վտ ա գալի, մի ղո՛վտ ա գալի, մի ղո՛վտ ա գալի՝
ոնց որ մի եքա սար։

— Հը՛, հողածին,— ձեն ա տալի,— օձն իրա պորտովը, ղուշն
իրա թևովը ընչանք հմի իմ ահիցը չի կարացե ըստերանք ոտ դնի,
դու ո՞նց ես սիրտ արե, էկե։

— Ղո՛վտ աղպեր,— ասում ա տղեն,— էլ խի՞ ես պարծենում,
աստծ մի ֆոգի քեզ ա տվե, մի ֆոգի՝ ինձ. ուզո՞ւմ ես՝ արի մեյ-
դան, կռվենք։

— Լա՛վ,— ասում ա,— արի՛։

Էս ասում են թե չէ, հասնում են իրար։ Կռվում են, կռվում են,
կռվում՝ ընչանք իրիկուն կռվում են, իրար արենճեճեխ, արենկո-
չոլ անում, նրանցից ոչ մինն էլա չի կարում զոռի։

— Թագա՛վորի ցեղ,— ասում ա ղովտը,— ըսօր հե՛չ. արի
էթանք իմ ամարաթը, ընդե քնենք, դինջանանք, առավոտը էլի գանք
կռվենք. հալբաթ աստծ յա ինձ կտա, յա քեզ։

— Լա՛վ,— ասում ա,— է՛թանք։

— Էթում են ամարաթը։ Էդ գշերն ըտե քնում են, առավոտը
առուրջ ծեքին էլ եդ գալիս կռվում։ Կռվում են, կռվում են, կռվում՝

ընչանք իրիկուն կուվում են, իրար յարալու-փարալու անում, արեն-
լվիկ անում, թողում՝ էլի ոչ մինն էլա չի ախտում։

— Թագա՛վորի ցեղ,— ասում ա ղովտը,— արի ըսօր էլ էքանք իմ ամարաթը՝ դինջանանք, առավոտը էլի գանք կուվենք. էս հետ որ աստոծ յա ինձ կտա, յա քեզ։

— Լա՛վ,— ասում ա,— է՛քանք։

Էքում են։ Գշերն ընդե քնում են, առավոտը լիսը բացվում ա թե չէ՝ էլ եդ վե կենում, գալիս են, որ կուվեն։

— Թագա՛վորի ցեղ,— ասում ա ղովտը,— էս չէլավ. ո՛նչ ես եմ քեզ ախտում, ո՛նչ դու՝ ինձ։ Արի՛ էս հետ էլ կոխ պրծնենք. դու քու թուրը դեն քցա, ես էլ իմ զըրխը։ Ո՛վ գեննովը տվեց, նա ախտել ա։

— Լա՛վ,— ասում ա,— արի՛։

Կոխ են պրծնում։ Ղովտը որ չի վրա պրծնում տղին վեր ունում գեննովը տալի՝ ընչանք գոտիկը խրվում ա գետինը։ Հասնում ա, որ շլինքը թռցնի, ջա՛նըմսան տղեն, ինչքամ ջանումը ջան կա, ո՛ր իրան չի թափ տալի՝ էլ եդ դուս ա գալի գեննիցը, վրա հասնում ղովտին. ո՛ր չի վեր ունում իրա բոյովը մին տալի գեննովը՝ ընչանք ծծերը գեննի միջին տնկվում ա։ Վազում ա թուրը բերում, որ գլուխը թռցնի՝ ղովտը էն սհաթը սիպտակ, կոկոմ ծծերը դուս ա քցում։ Տղի ձեռները թուլանում ա, թուրը վեր ընկնում ձեռիցը. նոր տենում ա՝ ի՛նչ ղովտ... մի սի՛րուն, ջա՛հել-ջի՛վան աղջիկ։ Էքում ա թևիցը բռնում, էլ եդ քաշում, գեննիցը հանում։

— Հո՛ղածին,— հարցնում ա,— դու ա՞ղջիկ ես։

— Հա՛, թագա՛վորի ցեղ, աղջիկ եմ։

— Ո՞ւմ աղջիկն ես, ըստե ի՞նչ ես շինում,— հարցնում ա։

— Ցլա՛ն թագավորի,— ասում ա։— Հերնըմերս ուղում ին ինձ մարդի տան՝ չուզեցի, ասեցի. «Ընչանք ինձանից ղռչաղ մարդ չըլնի, չեմ առնի»։ Թողի տո՛ւն, տե՛ղ, հե՛ր, մե՛ր էկա ըստե, ղովտի գեյմ մտա, ամարաթ շինեցի, միջին կացա։ Ո՛վ էս ճամփովն անց էր կենում՝ թագավորի ցեղ, բեզրգյանի տղա, մախլա՛ս, հենց ո՛վ ըլնում էր՝ հեննեն կոխ ի պրծնում. ում գեննովն ի տալի՝ գլուխը կտրում ի, քցում էն դիհը։ Էսքամ տարի ես ըստե եմ՝ ի՛նչքամ թագավորի ցեղ, ի՛նչքամ բեզրգյանի տղա ա էկե, որ ըստիան անց կենա, հեննեն կոխ եմ պրծե, ղուռե՝ գլուխը թռցրե, թողե. համա ընչանք օրս, քեզանից սավայի դեռ իսանաորդի չի էլե, որ ինձ գեն-

նովը տա։ Համի որ՝ խոսք չունեմ, դու իմ մարդն ես, ես քու կնիկը։ Ո՞ւր ես։

— Չէ՛,— ասում ա,— ես նշանած ունեմ, որ օխտը սարի քամակին, դշեր-ցերեկ իմ ճամփեն ա պահում. պտի էթամ հավարին հասնեմ։ Ուզում ես՝ ես կըլնեմ քեզ աղպեր, դու ինձ՝ քիր, ղաբո՞ւլ ես։

— Հա՛, դրան էլ եմ ղաբուլ,— ասում ա աղջիկը,— թող քու ասածն ըլնի՝ քիր ու աղպեր ըլննենք։

— Լա՛վ, ըլննենք,— ասում ա։

Թամամ օխտը պոլորիկ տարի տղեն էս աղջկա կյտին կացավ։ Ասում իրա օրը ձին նիլնում էր, էթում. ավղուշ, իրիկունը գալի տուն. մրկ էլ տեհար բերեց կամավ, սարեկ, ես ինչ գիտամ՝ ծիտ, չոբան-խաբուկ, լոր, ծառկուտուտ, տատրակ, օրդակ, ձկընկուլի. մախլաս [1], հենց ինչ ռաստ էր գալի, էլ հալալ-հարամը չէր հարցնում, տալիս էր վե քցում, վեր ունում բերում. աղջիկն էլ դրանցից կերակուր էր շինում՝ ուտում ին, կշտանում, բերաննները սրբում, դրաղ կանենում [2], ասում փառք տալի։

Աղջիկը աղաքուց նրան ղադաղա էր արե, որ ավղուշ էթալիս իրա անուտիցը դուս չգա։

— Տե՛ս,— ասել էր,— իմ հանդը լեն-բոլ, ո՞ւր ուզում ես գնա՛, քեզ համար ավ արա՝ ձեն, ծպտուն հանող չիլնի. համա խալխի հանդերը չըլնեմ-չիմանամ էթաս հա՞, թե չէ գլուխդ փորձանք կգա։

Նա էլ, թե.— Լա՛վ, որ ասում ես, շեմ էթա։

Օրեն մի օրը, էլի վեր ա կենում, էթում ավղուշ։ Ճամփին ինքն իրան միտք ա անում. «Ցարաբ խի՞ պտի թագավորի աղջիկը ինձ ղադաղա անի, թե իմ անուտիցը դենը չէթաս, գլուխդ փորձանք կգա։ Կա-չկա, ըստե մի բան կա. դու արի՛ մի փորձեմ, էթամ տեննամ ինչ կա, որ ասում ա։ Հը՞. էթամ՝ չէթամ, էթամ՝ չէթամ, էթամ՝ չէթամ»։ Ըսենց մնում ա շիվարած, չի իմանում. ինչ անի. էթա՝ վախում ա. չէթա՝ չիլնում, ուզում ա ո՛նց ըլնի, թեկուզ գլուխը մահի տա, իմանա։

Վերջը. «Ջհա՛նդամը գյոռ,— ասում ա,— մի օր էլել եմ, մի օր էլ պտի՛ մեռնեմ, ի՛նչ ուզում ա ըլնի, պտի էթամ»։

---

[1], [2] Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով չնշված են. թողնում ենք, ինչպես տպագիր տեքստում է (Ս. Կ.)։

էս ասում ա թե չէ, էրեսը խաչակնքում ա, ձիու գլուխը բաց թողում, տալիս սնուն անց կենում։ էթում ա, ի՜նչ ա տենում՝ լավ-լավ չայիր-չիման կանանչ տեղեր, որ վրեն նստիլ, մի կտոր հաց ուտիլը հենց ինչ ասես աժի. լավ-լավ անմահական աղբրներ, որ հարիր տարեկան ծերը ընդիանց ջուր խմեր՝ կջահելանար, կդառնար տասնըհինգ տարեկան տղա. հազար մի ռանգ ծաղկներ, որ նրանց անուշ ֆոտը չէր դիպնում մարդի քթի՝ հենց իմանում էր դրախտումն ա. ղշերն էլ հո հալ ու հեսաբ չկար. ամեն դհից ո՛ր չին խոսում, ծըլվըլում՝ մարդի քեֆ ին բերում։ Մախլա՛ս, գլխներդ ինչ ցավացնեմ, տղեն ըստերանք ո՛ր չի տենում՝ բերանը մնում ա բաց։

«Օխա՜յ,— ասում ա,— ֆոգիս փառավորեց. էսթավուր դրախտում կենողն էլ յարաբ դա՞րդ կանի։ Լա՜վ, բա էն աղչիկը խի՞ չէր թողում գամ ըստերանք. հալբաթ ըստե մի բան կա, էթամ տենամ»։

Ձին քշում ա մի քիչ դես ման գալի, դեն ման գալի, ըստե էթում, ընդե էթում, իրա համար ալ անում, մի քանի ղուշ վե քցում, հավեսը հանում. հենց էն ա ուզում էր էլի եդ դառնա գա իրանց սնուրը, թուրը էն սհաթը ղնիցը դուս ա գալի, ընկնում աղաքը։

«Ա՛յ հարա՜յ,— ասում ա,— բաս պտի դուշման գա աղաքս. ես վախտով իմ գլխի ճարը տենամ»։

Թուրը վեր ա ունում, հազիր կաննում, դուշմանի ճամփեն պահում։ կենում ա կենում, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, տենում ա, ըհը՛, հրեն ընդիան մի կոլոտիկ, կարճ մարդ դուս էկավ։

— Հո՛ղածին,— գոռաց,— դո՞ւ ըստերանք։ Օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք օրս իմ ահիցը սիրտ չի արե ըստերանք ոտ կոխի, դու ո՞նց ես սիրտ արե, էկե. ո՛նց ես մենծ թիքեն անկաջդ թողամ։

— Լա՛վ,— ասեց տղեն,— էլ խի՞ ես ղուղուզանում. աստոծ մի ֆոգի քեզ ա տվե, մի ֆոգի ինձ։ Ուզո՞ւմ ես արի կուվենք, տենանք որս ա ղոչաղ, ե՞ս, թե դու։ Ղա՞բուլ ես։

— Ղա՛բուլ եմ,— ասեց,— արի՛։

Էս ասում են թե չէ, հասնում են իրար։

— Յա՛ սուրբ Կարապետ,—ձեն ա տալի տղեն, թուրը վրա բերում։

Վրա բերելու բաշտան որ չի դիպնում նրա ջանին՝ հազար տեղան կրակ ու բոց ա դուս գալի, քիչ ա մնում տղին էրի, փոթոթի,

քուլ շինի։ Խեղճը մնում ա շիվարած։ «Էս ի՞նչ թավուր իսան ա,— ասում ա ինքն իրան,—որ ջանիցը կրակ ա դուս գալի. կաց մի հետ էլ տամ, տենամ»։

Թուրը քաշում ա, մին էլ ա տալի, տենում ա էլի կրակ դուս էկավ։ Մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը, քսա՛ն, մախլա՛ս՝ քանի տվեց, կրակ դուս էկավ նրանից։

Վերջը էն կարճլիկ մարդը տեհավ, որ շատ ա չարչարվում, ասեց.— Տղա՛, բո՛լ չի տաս, խի՞ ես ղուր տեղը չարչարվում. յարար դի՞տաս ե՛ս ով եմ։

— Ո՞վ ես,— հարցրեց։

— Ե՞ս, ըհը՛, ես Ջան-Փոլատն եմ,— ասեց,— որ արար աշխարքը իմ ձեռիցը ղվիր ա էկե։ Ըսկի բա չե՞ս լսե անում։ Ընչանք օրս դեռ աղամաորդի սիրտ չի արե իմ անուտը ոտ կոխի, քեղանից սավայի, որ գլխիցդ ձեռ ես վե կալե, էկե ինձ կերակուր։ Իմ ջանը որ կա, սաղ փոլատից ա. Թուր, թվանք, յարաղ-ասպաբ, որ ասես, քյար չի անի. հո տված, չտված՝ մին ա։

Տղեն էս որ լսեց, վախլուքյունից քիչ մնաց լեղին պատռի։ Ճարը կտրած, նո՛ր օձի նման լիզու հանեց, ընկավ աղաչանք, պաղատանք։

— Ամա՛ն, գիտաս,— ասեց,— Ջա՛ն-Փոլատ, քու ոտն եմ ընկե. մեղք եմ, ջահել-ջիվան եմ, թո՛ղ էքամ իմ արևի ձենն ածեմ։

— Լա՛վ, որ թողամ, դո՞ւ ինձ ինչ լավուքյուն կանես։

— Սրտիդ ինչ մուրազ ունես,— ասեց,— ասա՛, էքամ, գլուխս մահի տամ, կատարեմ. սրանից էլ լավ բա՞ն։

— Է՛, տղա՛, սաղ աշխարքը որ իմ ձեռին դողում ա՝ ըսկի ես չկարացի սրտիս մուրազը կատարի, դո՞ւ պտի կարենաս, թահո՛ւ։

— Հա՛, ես կարամ, կարացի՝ կարացի, չկարացի՝ արինս քեզ հալալ ա։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

— Լա՛վ, կասեմ։ Պտի էքաս Չինումաչինա քաղաքի թագավորի աղջիկը բերես, կա՞րաս։

— Կա՛րամ. չկարացի՝ արինս քեզ հալալ։

— Լա՛վ, գնա՛,— ասեց Ջան-Փոլատը,— էդ աղջիկը բերիր՝ հո մուրախաս ես, կթողամ կէքաս, թե չէ հո՝ իմաց կաց քեզ էլ պըրծնում չկա։ Ղա՞բուլ ես։

— Ղա՛բուլ եմ,— ասեց։— Մնաս բա՛րին։

— Գնաս բա՛րին, աստոծ բարի ճամփա տա՛։

Տղեն ա՝ էն սհաթը ոտը դնում ա օրղանգուն, թռնում Սև ձին, աստու անումը տալի, ընկնում ճամփա՝ դպա Ջինումաչինա քաղաքը։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, բիրդան ճամփի վրեն տենում ա հրեն մի փուշ, միջին մի սի՛րուն, նա՛շխուն աղունիկ խրվել ա, չի կարում թռնի։

Ջիու վրիցը ձեռը մեկնում ա, որ բռնի մորթի, էլ ղմիշը չի գալի. ասում ա. «Մե՛ղք ա, հալբաթ ճուտեր կունենա, բաց թողամ էթա»։

— Աղա՛տ, ազա՛տ, քու աստուն ազատ,— ասում ա ու բաց թողում։

Աղունիկը ուրախ-ուրախ թռնում ա էթում։ Մի քիչ տեղ թռնում ա թռնում՝ էլ եդ գալի կաննում տղի գլխին.

— Թագա՛վորի ցեղ,— ասում ա,— դու ինձ ընենց մի լավություն արիր, որ չեմ գիտա ո՛նց տակիցը դուս գամ։ Իմ բմբլիցը հրես մի հատ կտամ քեզ,— ասում ա,— կշտիդ պահա՛. նեղն ընկած վախտը կրակին տաս թե չէ՝ էն սհաթը քու հավարին կհասնեմ։

Աղունիկն էս ասում ա թե չէ՝ թռնում ա, վրիցը կտցով մի բմբուլ պոկում, քցում գետինը։

Նա էլ վեր ա ունում պահում. ասում ա. «Մարդ ա, բալի պետքն ա գալի»։ Բմբուլը դնում ա ծոցը, էլ եդ վե կենում էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս՝ անջախ որ հասնում ա Ջինումաչինա քաղաքը։ Էթում ա դուզ թագավորի խնամաքարի վրեն նստում։

Թագավորի աղջիկը իրա օթախիցը թամաշ ա անում, տենում մի սիրուն, բոյ ու բուսաթով տղա հրե խնամաքարի վրեն նստած։

Ղարավաշին ղրկում ա, ասում ա.— Գնա՛ էն տղին կանչա՝ դա փանջարիս[1] աղաքը։

Ղարավաշն էթում ա. կանչում, բերում։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա աղջիկը,— ի՞նչ բանի համար ես էկել։

— Ցլա՛ն թագավորի տղեն եմ,— ասում ա,— էկել եմ Ջինումաչինի թագավորի աղջիկը տանեմ։

---

[1] Տպագիր տեքստում՝ ակուշկիս, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Քու ուզած աղջիկը հենց ե՛ս եմ,— ասում ա,— լա՛վ թամաշ արա՛, տես կհավա՞նես։

Գլուխը որ չի բանձրացնում մտիկ տալի, ի՞նչ ա տենում՝ մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, էնքա՜մ սիրուն, էնքա՜մ նաշխուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես՝ հենց նրա գյուղ-ջամալին թամաշ անես. մի խոսքով՝ արեգակի կտոր, մի՛ հրեշտակ, մի՛ մարալ, մի՛ ջեյրան, մի՛ հուրի-մալաքի մեկը, որ արևին ասում ա՝ դու մեր մտի, ես դուս եմ գալի, էնքա՜մ սիրուն էր [1]։

Նրան ո՛ր չի տենում՝ ջանը մահման դող ա ընկնում, սրսրըթում, լիդուն կապնվում, էլ չի կարում խոսա՝ հենց խելքամաղ ա ըլնում, մնում։

— Հը՛, տղա՛,— մըկ էլ հարցնում ա աղջիկը,— ինձ հա՞վան կացար, թե չէ՛։

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, քեզ աստոծ ա հավանե, ես կա՞րամ չհավանի։

— Լա՛վ,— ասում ա,— որ էկել ես ինձ տանի՝ հերս քեզ իրեք բան կասի՝ կա՛նես։

— Ի՞նչ իրեք բան,— հարցնում ա տղեն։

— Մի՛ն որ,— ասում ա,— փետե կացինը պտի վեր ունես, տաս, էրկաթե սինը կտրես. կա՞րաս։

— Թագավորի աղջիկը սաղ ըլնի, ըտենց բան կըլնի՞, փետե կացնով էրկաթե սին կկտրվի՞։

— Էդ հո էդ։ Պտի մի տոլու լիքը գինի դնես ծոցդ, նիլնես մեր էրկեն բարդու գլուխը՝ էլի վե գաս, ընենց որ գինուցը մի պուտ էլա չթափի. կա՞րաս։

— Չէ՛,— ասում ա,— թագավորի աղջիկը սաղ ըլնի, չէ՛, չեմ կարա։

— Ըտ էլ հո էդ։ Վրա իրեքն էլ՝ պտի իրեք օրավար տեղ կորեկ ցանեն, եննա փոցխեն, որ խառնվի ֆողի հեննա։ Մի օրումը պտի էդ կորեկը քոմմա հավաքես, որ մի հատ էլա չմնա. կարա՞ս։

— Չէ՛, թագավորի աղջիկը սաղ ըլնի, էդ էլ չեմ կարա. բաս ասա հերդ պտի ինձ քյալլա անի, է՞լի։

— Չէ՛, տղա՛,— սիրտ ա տալի աղջիկը,— քանի ջանումս ջան կա՝ չեմ թողա որ քու մի մազն էլա թեքվի։ Էդ իրեքից էրկսի հունարը ես գիտամ, կսովրացնեմ, կէթաս կանես՝ կպրծնես. համա էն

[1] Տպագիր տեքստում՝ «...էնքա՜մ մի սիրուհիկ զադ էր». ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

որ պտի իրեք օրավար տեղ կորեկ ցանեն, հավաքես՝ էդ չեմ գիտա. սուտ ասեմ՝ ի՛նչ։

— Բա՛ն չկա,— ասում ա տղեն,— դեռ մի էն էրկուան ասա՛ տենամ՝ ո՛նց պտի անեմ, էդ մինն էլ աստոծ ողորմած ա, հալբաթ հավարիս կհասնի։

— Ա՛յ ոնց պտի անես։ Ա՛ռ հրես Մարիամ աստոծածնա աղլուխը. որ կէթաս թագավորի կուշտը, կասի՝ փետե կացինը վե կալ էրկաթե սինը կտրա. կտանես էս աղլուխը կքցես սան վրեն, կացինը վե կունես, կասես. «Ո՛վ սուրբ Մարիամ աստոծածին, քեզ եմ ապավինես»։ Կասես ու կտաս. տալու բաշտան էրկաթե սինը էրկու կըլնի, ընդե վե կըննկնի։ Էս ըսենց կանես։ Ըս էլ Մարիամ աստոծածնա մատանիքն ա, ա՛ռ կշտիդ պահա. թագավորը տոլուն որ կլցնի, կտա քեզ, կասի. «Ծոցդ դիր, նիլ բարդու գլուխը», էս մատանիքը մի ֆանդով քցա մեջը, եննա նի՛լ, մի՛ վախի, նիլնես, վե գաս՝ մի պուտ էլա չի թափի։ Հրե՛ս, էն էրկու բանի հունարն էս ա. ոնց որ ասեցի, ընենց էլ կանես։ Բա՛ էն մեկե՞լը։

— Էն մեկելն էլ ումուդ աստոծ, հալբաթ մի բան կանեմ,— ասում ա տղեն,— էթում էլ եդ թագավորի խնամաքարի վրա նըստում։

Թագավորը դուս ա գալի, տենում մի սի՛րուն, նա՛շխուն, բոյով-բուսաթով տղա հրեն խնամաքարի վրեն նստած։

— Հը՛, տղա՛,— ասում ա,— ի՞նչ խնդիրք ունես։

— Սա՛ղությունդ, թագավորն ապրած կենա, էկել եմ աղջըկանդ տանեմ։

— Լա՛վ, որ էկել ես տանես, իրեք բան պտի ասեմ, կա՞րաս անի։

— Խի՞ չեմ կարա, թագա՛վորն ապրած կենա. չկարացի՝ արինըս քեզ հալալ ա։

— Լա՛վ, որ կարաս՝ արի՛, մեղքն ու վարձքը քու շլինքը։

Կռնիցը բռնում ա, տանում էրկաթե սան կշտին կաննացնում, փետե կացինը տալի ձեռը։

— Ա՛ռ,— ասում ա,— էս փետե կացնովը պտի տաս, էս էրկաթե սինը կտրես. մինն էս ա, դե արա՛ տենամ։

— Աչքիս վրեն,— ասում ա տղեն,— կանեմ։

Էն սհաթը ծոցիցը հանում ա Մարիամ աստոծածնա աղլուխը, քցում սան վրեն։

— Ո՛վ սուրբ Մարիամ աստուածածին,— ասում ա,— քեզ եմ ապավինե։

Ասում ա ու տալի։ Տալու բաշտան սինը միջիցը կես ա ըլնում, ընդե վեր ընկնում։

— Հը՛, կարա՞ցի, թե չէ, թագավորն ապրած կենա,— ձեն ա տալի։

— Ա՛ֆարիմ, էս մինը կարացիր. մնաց էրկուսը։ Համի մի տոլու դինի պրոտեպռունդ լիքը, պտի դնես ծոցդ, նիլնես մեր բարդու գլուխը, վե գաս՝ որ մի պուտ էլ ա չթափի. կա՞րաս։

— Կա՛րամ, խի՞ չեմ կարա,— ասում ա։

Թագավորն էթում ա մի տոլու լիքը դինի լցնում, բերում տալի տղին, տանում բարդու կուշտը։

— Դե ա՛ռ,— ասում ա,— դի՛ր ծոցդ, նի՛լ տեննամ։

Տղեն էն սհաթը Մարիամ աստուածննա մատանիքը հանում ա, քցում տոլուն, դնում ծոցը՝ նիլնում, վե գալի, որ ասես մի պուտ էլ ա չի թափում։

Թագավորը, նրա նազիր-վեզիրը քոմմքով մնում են մաթ էլած տղի վրեն, թե էս ի՞նչ իսան ա, ի՞նչքամ հունար ունի, որ ըս էլ էրկու հետ թագավորի ասածն արեց, չունքի քա՛նի-քա՛նի մենծ-մենծ մարդիկ՝ է՛լ թագավորի տղա, է՛լ նազրի տղա, է՛լ վեզրի տղա, ես ինչ գիտամ՝ բեղրդյանի տղա, մախլա՛ս էլ ով ասես էկել էր, չէր կարացե էդ իրեքից մինն էլա անի. թագավորը քոմմքի գլուխն էլ կտրիլ էր տվե, թողե։

— Դե գնացե՛ք,— ասեց թագավորը իրա նոքարներին,— իրեք օրավար տեղ վարեք, կորեկ ցանեք, լավ փոցխեք, թող էս տղեն մին-մին հավաքի։ Հավաքեց՝ հավաքեց, աղջիկս մոր կաթի նման հալալ ա սրան. թե չէ հո սրա արինն ա ինձ հալալ։ Տղա՛, ռա՞զի ես։

— Ռա՛զի եմ,— ասում ա։

Նոքարներն էթում են իրեք օրավար տեղ վարում, ցանում, լավ-լազաթին փոցխում, թողում գալի, որ տղեն հավաքի։

Տղեն հավաքեց։ Հավաքեց, հավաքեց, հավաքեց, ընչանք ճաշ հավաքեց՝ դեռ հլա հարիր կորեկ անջախ էր հավաքե։ Բերնով ասիլը հեշտ ա, ախար իրեք օրավարեն տեղ կորեկ, ըն էլ մի օրումը հավաքել կըլնի՞։

— Բանս բուրդ ա,— ասեց ինքն իրան,— էս հետ որ թագավորը ինձ քյալլա կանի։

Մնացել էր խեղճը գլխի վրեն մոլորած, չէր իմանում ինչ անի. մեկ էլ [1] աղունկի բմբուլը միտն ընկավ։

«Սրանից էլ նե՛ղ տեղ,— ասեց,— արի՛ մի փորձեմ էս բըմբուլը կրակ տամ, տենամ. բալի հավարիս հասնում ա»։

Էն սհաթը հանում ա կրակ տալի։ Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ տենում ա էկավ, աղո՛նիկ էկավ, աղո՛նիկ էկավ, աղո՛նիկ էկավ, ոնց որ մի սելավ. սաղ կորկի արտը աղունկով լցվեց, որ ասեղ քցեիր՝ գետինը չէր ընկնի՝ էնքամ լցվել էր։ Է՛, էսքամ աղունկին էլ կո՛րեկ կդիմանար։ Կես սհաթումը քոմմա հավաքեցին, ղրաղին կիտեցին, էլ եդ թռան, գնացին։ Տղեն ուրախացավ, աշխարով մին էլավ։

«Ջա՛ն,—ասեց,—էս հետ էլ պրծա, հմի որ թագավորի աղջիկը տարա»։

Իրիկունը նոքարներն էկան տենան տղեն ինչ հալի ա, հավաքե՞լ ա, թե չէ։ Տեհան քոմմա հավաքել, է՛, եքա ամբար ա արե, արտի կողքին կիտե։ Խաբարը տարան թագավորին։

— Թագավորն ապրած կենա,— ասեցին,— էն տղեն իրեք օրավար կորեկը քոմմա հավաքել ա, պրծե. որ ասես մի հատ էլ չի թողե։

— Գնացե՛ք, կանչեք գա,— ասեց։

Գնացին կանչեցին, բերին։

— Տղա՛,— ասեց թագավորը,— դու իմ ուզած իրեք բանն էլ արիր. հմի էլ խոսք չունեմ. աղջիկս քեզ մորդ կաթի նման հալալ ա, տա՛ր։ Համա մի բան էլ որ ասեմ, անկաջ կա՞նես,— հարցրեց։

— Ասա՛, թագա՛վորն ապրած կենա, խելքս կկտրի, անկաջ կանեմ, թե չէ՛, հո չէ։

— Տղա՛,— ասեց,— ես քեզ շատ սիրեցի, ուզում եմ որ ըստիան էլ չէթաս. չե՞ս գա քեզ ինձ տղա շինեմ։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, չեմ կարա. ես դեռ հլա մուրազ ունեմ, պտի էթամ։

Շատ զոռեց որ կենա, տղեն չկացավ, ասեց.— Պտի էթամ, որ պտի էթամ։

— Լա՛վ, որ մուրազ ունես, գնա՛, աստոծ քեզ հետ։

---

[1] Տպագիր տեքստում՝ ղաֆիլ տեղը, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Բերեց աղջկա հեննա լավ բաժինք դրեց, լավ մալ ու դոլվա-թով, լավ-լավ փեշքաշներով ճամփու դրեց։

— Գնացե՛ք, ո՛րդիք,— ասեց,— աստծ էրկսիդ մի բարձի ծե-րացնի, ծլե՛ք, ծա՛ղկեք, ճղքճղքնոտեք. առջնեկներդ տղա ըլնի։

Խեղճ թագավորը հենց գիտար աղջկանը իրա համար ա տա-նում. չէր գիտա, որ Ջան-Փոլատի համար ա։

Տղա, աղջիկ գնացին թագավորի ձեռը պաչեցին, էկան բեռ-ները բարձեցին, ընկան ճամփա։

Գնացին, գնացին, շատն ու քիչն աստծ գիտա, գշերը մի տեղ վեր էկան, չադիր տվին, կացան։ Մի քիչ հաց-մաց կերան, բերին տեղները քցեցին, որ քնեն։ Տղեն էն սհաթը թուրը հանեց, դրեց արանքները։

— Էլ թո՞ւրն ինչ ա,— հարցրեց աղջիկը,— չէ՞ մենք մարդ ու կնիկ ենք։

— Չէ՛,— ասեց,— մենք մարդ ու կնիկ չենք, քիր-աղպեր ենք։

— Ո՞նց թե քիր-աղպեր. բա ես քու կնիկը չե՞մ։

— Չէ՛։

— Բա ո՞ւմ։

— Ջան-Փոլատի։ Քեզ նրա համար եմ տանում։

— Պա՞հ քու տունը հրեղեն սուր մննի,— ասեց աղջիկը,— ինձ տանում ես էն արենխում. ջանավարի ձեռը քցես, ֆողեց-ֆոզի կորցնե՞ս։

— Չէ՛, թագավորի աղջիկ, դարդ մի անի. մի գլուխ ունեմ՝ քեզ ղուրբան կանեմ, Ջան-Փոլատի ձեռիցը կպրծացնեմ. համա հմի որ խոսք եմ տվե, չեմ կարա, պտի տանեմ։

— Դու քու աստծը,— ասեց աղջիկը,— ես որ ոտով-գլխով քունն եմ, ի՛նչ կուզես, արա՛։

— Մի՛ վախի,— ասեց,— խոսքը խոսք ա։

Առավոտը որ լիսը բացվեց, ըստիան վեր կացան, չադիրը հա-վաքեցին, էլ եդ գնացին իրանց ճամփեն։ Գնացին, գնացին, շատն ու քիչն աստծ գիտա, գշեր-ցերեկ գնացին, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս՝ հասան Ջան-Փոլատի ամարաթը։ Ջան-Փոլատը հեռ-վանց աղջկանը որ տեհավ՝ ուրախացավ, աշխարով մին էլավ։ Վա-զեվազ էկավ աղաքները։

— Ա՛ֆարիմ, տղա,— ասեց,— Ջինումաչինա թագավորի աղ-ջիկը որ բերիր, հմի մուրախաս ես. գնա՛ արևիդ ձենն ածա։

Աղջիկը տալիս ա Ջան-Փոլատին, հեննեն մնաս բարով անում, ձիու գլուխը բաց թողում, էթում։ Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, մի սհաթվա, էրկու սհաթվա, իրեք սհաթվա ճամփա էթում ա, էլ եդ դառնում։

— Խոսքը խոսք ա,— ասում ա,— պտի էթամ։

Գալիս ա Ջան-Փոլատի ամարաթի կշտին մի տեղ տափ կենում։ Որ լավ մուրը գետինը կոխում ա, Ջան-Փոլատը գալիս հաց ուտում, մննում տեղը, խրոըմփալեն շնթռկում՝ տղեն ուսուլով ամարաթի դուռը բաց ա անում, մննում նեքսև, աղջկա գլխավերևը կանում։ Նրան էլ աղաքուց ասել էր հազիր կենա, որ էդ գշեր պտի գա փախցնի, տանի։

— Հը՛,— ասում ա,— էթա՞նք, թե չէ։

— Էթա՛նք,— ասում ա։

Աղջկանը դուս ա բերում, քաշում ձիու թարքը՝ յա՛լլա։

Թող նա էթա, դանք խաբար տանք Ջան-Փոլատիցը։ Առավոտը վեր ա կենում, տենում աղջիկ չկա։

— Կա չկա,— ասում ա,— էն քյաֆուր տղեն ա փախցրե։

Էլ մաջալ չի տալի, թռնում ա ձին, ընկնում եննուցը։ Քշում ա, քշում ա, ո՛նց ա քշում, ո՛նց ա քշում, որ էրկու սհաթվա ճամփեն մի սհաթումն ա էթում։ Էթում ա, էթում, ճամփի կլուսին տղին հասնում ա, աղջիկը ձեռիցը խլում։

— Հը՛, տղա՛,— ասում ա,— ո՛նց ես մենծ թիքեն անկաջդ թողամ։

— Ամա՛ն գիտաս, Ջան-Փոլատ,— ասում ա տղեն,— քու ոտն եմ ընկե, էս հետ բաշխա՛, էլ չեմ անի։

— Լա՛վ,— ասում ա,— էս հետ բաշխում եմ, չունքի դու չըլնեիր՝ հազար տարի ճգնեի, Չինումաչինա թագավորի աղջիկը չէի կարա բերի։ Գնա՛, տղա, գնա՛. դեռ ջահել-ջիվան ես, գնա արևիդ ձենն ածա՛։

Եդ ա դառնում, գալի։

Համա տղեն ո՛նց կարար կաշվումը սթրի, չունքի մի հետ աղջկանը խոսք էր տվե։ Մի քիչ կենում ա, էլի ձիու գլուխը շուռ ա տալի, գալի Ջան-Փոլատի ամարաթը։

«Խոսքը խոսք ա,— ասում ա,— պտի էթամ»։

Ըտերանք մի տեղ տափ ա կենում, ընշանք լավ մթնում ա,

Ջան-Փոլատը ավից գալիս ա, հաց ուտում, շնթռկում՝ ուսուլով ամարաթի դուռը բաց ա անում, մննում նեքսև, էթում աղջկա գըլխավիրևը կաննում։

— Հը՛,— ասում ա,— էթա՞նք, թե չէ։

— Էթա՛նք,— ասում ա։

Աղջկանը դուս ա բերում, ձին զաթի ամարաթի դռանը կապած՝ նիլնում, նրան էլ քաշում թարքը՝ յա՛լա։

Թո՛ղ նա էթա, դա՛նք Ջան-Փոլատիցը խաբար տանք։ Առավոտը որ լիսը բացվում ա, վեր ա կենում տենում էլի աղջիկ չկա։ Դե՛ս աղջիկ, դե՛ն աղջիկ՝ չկա, որ չկա։

— Կա չկա,— ասում ա,— էլի էն քյաֆուր տղեն ա փախցրե։

Էն սհաթը նիլնում ա ձին, ընկնում եննուցը։ Տղեն հենց էն ա՝ քիչ էր մնացե սնուտն անց կենար, եղևիցը հասնում ա, աղջիկը ձեռիցը խլում։

— Հը՛, տղա,— ասում ա,— է՞ս հետ ոնց ես. մենծ թիքեն անկաջդ թողա՞մ, թե չէ՛։

— Ամա՛ն, ասսու սիրուն, Ջան-Փոլատ,— ասում ա,— քու ոտն եմ ընկե, մե՛ղա, ես արեցի՝ դու մի անի. ջահել-ջիվան եմ, թող էթամ մուրազիս հասնեմ։

— Լա՛վ,— ասում ա Ջան-Փոլատը,— գնա՛, էս հետ էլ եմ բաշխում, գնա՛ մուրազիդ հասի։

Եդ ա դառնում, գալի։

Համա բե, որ տղեն էլի դինջ չի մնո՛մ։

«Ջրհա՛նդամ,— ասում ա,— ի՛նչ ուզում ա ըլնի, խոսքը խոսք ա՝ պտի էթամ»։

Ձիու գլուվը ծռում ա դպա Ջան-Փոլատի ամարաթը։ Էլի ըտեղանք մի տեղ տափ ա կենում, ընչանք մութը գետինը կոխում ա, Ջան-Փոլատը ավից եդ ա գալի, շնթռկում՝ ուսուլով ամարաթի դուռը բաց ա անում, մննում նեքսև, էթում աղջկանը զարթացնում։

— Ա՛ղջի,— ասում ա,— բա ո՞նց անենք. ըս էլ էրկու հետ ուզեցա քեզ փախցնեմ՝ չէլավ, Ջան-Փոլատի ձեռիցը չպրծա, իմացավ, էկավ եղևիցս հասավ։ Վրա իրեքն էլ որ բռնել ա՝ իմաց կաց էրկսիս էլ բանֆոգի կանի, մեր մենծ թիքեն անկաչը կթողա։ Արի՛ դու էլի բալքի մի ֆանդով հարցնես, իմանաս նրա ֆոգին ո՞րդի ա. թե չէ ըսենցով բան չի դառնա. դրան էլ սըպանելու ճար, իլվաչ չկա։

— Ո՞նց հարցնեմ;— ասում ա աղջիկը։

— Ա՛յ ոնց. էգուց իրիկունը որ նա ավիցը կգա, դու դառը-տխուր, նոթերդ կիտած տանը նստի. որ կհարցնի՝ խի՞ ես ըտենց, ասա. «Բա՛ ինչ անեմ, դու էթում ես քեզ համար սեհրն անում, ինձ թողում բուբուի նման տանը նստած»։ Որ կասի. «Բա ո՞նց անեմ, որ մենակ չըլնես», ասա. «Քու ֆոգին ո՞րդի ա, տեղն ասա, էթամ բերեմ, դնեմ կողքս, հեննեն խոսամ, զրից անեմ. էն վախտը ոնչ մենակ կըլնեմ, ոնչ էլ»։ Քանի նա չեմ ու չում կանի՝ դու հենց էրեսիցը կախ իլ, հա՛ ասա, ընչանք զահլեն տանես։ Իմացա՞ր։

— Իմացա,— ասում ա,— դե բաս դու գնա, քանի Ջան-Փոլատը չի վե կացե, թե չէ մահներս կտա։

Տղեն դուռ ա գալի, էլի ըտերանք մի տեղ տափ կենում։ Իրիկունը Ջան-Փոլատը ավից գալիս ա տուն, տենում աղջիկը դառը-տխուր, նոթերը կիտած նստել ա, որ ասես չի խոսում։

— Հը՛, ի՞նչ ա էլե,— հարցնում ա,— խի՞ ես ունքերդ վե թողե. չըլնի՞ քեֆ չունես։

— Բա՛ ինչ անեմ,— ասում ա,— դու քեզ համար էթում ես ման գալի, սեհրն անում, ինձ թողում ըստե սաղ օրը մեն-մենակ։ Ոնչ մարդ կա, ոնչ մադաթ, որ հեննես զրից էլա անի. բուբուի նման մնում եմ նստած. հա թամաշ արա, թե պտի իրիկունը գաս։

— Բա՛ ոնց անեմ, ա՛յ կնիկ. ես էլ որ ավի չէթամ, ի՞նչ պտի ուտենք. սոված հո չե՞նք կոտորվի։

— Ա՛յ ոնց արա,— ասում ա աղջիկը,— ասում իրան օրը, ավի էթալիս՝ ֆոգիդ թող ըստե, հեննեն զրից անեմ, մենակ չմնամ։

— Լա՛վ,— ասում ա,— իմ ֆոգին հրես էս ավլի միջին ա, որ ըստիան դուս կէթամ, բե դի կողքդ, ինչքամ ուզում ես հեննեն խոսա, որ մենակություն չքաշես։

— Լա՛վ,— ըտենց կանեմ։

Էդ գշերն ըտենց անց ա կենում։ Առավոտը լիսը բացվում ա թե չէ, Ջան-Փոլատը վիր ա կենում, էթում ավղուշ։ Աղջիկն էն սհաթն էթում ա ավիլը բերում, մարդի շորերը նրան հագցնում, դնում կողքը, որ հեննեն զրից անի։ Ինչ խոսում ա՝ ձեն չի հանում, ինչ խոսում ա՝ ձեն չի հանում։

«Էս ի՞նչ թավուր ֆոգի ա,—ասում ա,—որ ոնչ խոսում ա, ոնչ էլ. էն յաղին նա ինձ խարեց»։

Իրիկունը Ջան-Փոլատը եդ ա գալի, տենում ավլին հագցրել ա իրա շորերը, դրե կողքը, հեննեն զրից անում։

— Ա՛յ անխելք կնիկ,— ասում ա,— ավլի միջին ֆոգի կըլնի. ըսկի ավատալու բա՞ն ա։

— Բա ո՞րդի ա,— հարցնում ա։

— Ա՛յ էս կժի միջին,— ասում ա,— բե՛ դի կողքդ, ինչքամ ուզում ես հեննեն խոսա։

— Լա՛վ, ըտենց կանեմ։

Էդ գշերն էլ ա ըտենց անց կենում։ Առավոտը լիսը բացվում ա, Ջան-Փոլատը վեր ա կենում, էթում ավզուշ։ Աղջիկն էն սհաթին էթում ա կուժը բերում, մարդի շորերը լավ-լաղաթին հագցնում նրան, դնում կողքը։ Համա ինչ անում ա, չի անում՝ չի խոսում. մնում ա արմացած։

— Ցաղին, էն քյաֆուրն էս հետ էլ խաբեց. նրա ֆոգին էս կժի միջին էլ չի, ուրիշ տեղ ա։

Ջան-Փոլատը իրիկունը ավլիցը գալիս ա տենում՝ իրա շորերը հագցրել ա կժին, լավ սիրունիկ զուգե, զարդարե, դրե կողքը, հեննեն խոսում։

— Ա՛յ անխելք կնիկ,—ասում ա,—էդ ինչ ես անում. ես ասեցի, դու էլ ավատացիր. կժի միջին ֆո՞գի կըլնի։

— Բա ո՞րդի ա,— հարցնում ա,— դե դրուստն ասա՛, տե՛նամ։

— Դրուստը կասեմ,— ասում ա,— համա իսանաորդի չի կարա էթա ընդե։

— Բան չկա, դու ասա՛, բերիլ տալը իմ շլնքին։

— Բաս ըտենց ա, կասեմ։ Իմ ֆոգին հրե հա՞ ֆլան մեշումը, ֆլան ասլանի փորին. ըն էլ ի՛նչ՝ իրեք ծիտ ա, մի ղուբիկի միջի դրած. իմ ֆոգին էդ ա։ Դե բերիլ տո՛ւ, տե՛նամ։

— Լա՛վ, բերիլ կտամ,— ասում ա։

Էդ գշերն ըտենց անց ա կենում։ Առավոտը որ լիսը բացվում ա թե չէ, Ջան-Փոլատը վեր ա կենում, էթում ավզուշ։

Աղջիկն էթում ա տղին մին-մին նաղլ անում.—Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան,— ասում ա,— ֆլան մեշումը, ֆլան ասլանի փորին մի ղուբիկ կա, միջին իրեք ծիտ, Ջան-Փոլատի ֆոգին հենց էդ իրեք ծիտն ա. որ դրանց սըպանեցիր, իմաց կաց նրա բանը պրծած ա։

— Ո՞րթ։

— Ղո՛րթ. Ջան-Փոլատը իրա բերնով ըսենց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց։

— Բա՛ս լավ,— ասում ա տղեն,— ես էթում եմ. մնաս բա՛րին։

— Էթաս բա՛րին, աստոծ բարի ճամփա տա. բարո՛վ էթաս, բարո՛վ գաս։

Տղեն ա՝ էն սհաթը Սև ձին նիլնում ա ու յա՛լլա՝ աղչկա ասած մեշեն։ Էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, մախլասի մի շաբաթ[1], սա՛ր, քա՛ր, քո՛ղ ոտի տակ տալի՝ անջախ որ հասնում ա մի նքա ծովի ղրաղ։ Սև ձին գալիս ա գալի՝ ըստե կաննում. դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, մի կոլոլ քարի կշտի տղին վե բերում։

— Վե՛ր արի,— ասում ա,— էդ քարը շուտ տու. ղրա տակին ա սուրբ Սարգսի ձիու գյամը, վե կալ թաթխա ծովը, ձին էն սհաթը ընդիան դուս կգա։ Դուս գալու բաշտան, էլ մի՛ թողա հանք քաշի՝ գյամը դի բերանը, քշա՛։ Մի քիչ տեղ որ կքշես. «Տղա,— կասի ձին,— մուրազդ ասա՝, կատարեմ»։ Կասես. «Իմ մուրազն էն ա, որ ինձ անց կացնես ծովի էն դիհը, ընդե մի մեշա կա, մեշի միջին մի ասլան, էդ ասլանին սըպանես՝ էլ զադ չէ»։

Տղեն իրա իմաստուն ձիու խոսքին անկաջ ա անում. էն սհաթը վեր ա գալի, քարը բանձրացնում, տենում ըհը՛, ղորթ որ տակին մի գյամ։ Տանում ա թաթխում ծովը թե չէ՝ ալբիալը սուրբ Սարգսի ձին ֆըռընչացնելուն ծովիցը դուս ա գալի։ Էն սհաթը գյամը տալիս ա բերանը, նիլնում, քշում։ Քշում ա, քշում ա, մի քիչ տենդ քշում ա, տենում ա ձին կաննեց, էլ երըմիշ չիլնում։

— Հը՛, սուրբ Սարգսի ձի,— ասում ա,— խի՞ կաննեցիր։

— Ասա՛ մուրազդ՝ կատարեմ,— ասում ա ձին։

— Իմ մուրազն էն ա,— ասում ա,— որ ինձ անց կացնես ծովի էն դիհը. ընդե մի մեշա կա, մեշի միջին մի ասլան, էդ ասլանին սըպանես, էլ զադ չէ։

— Աչքիս վրա,— ասում ա ու գլուխը բաց թողում, էթում։

Էթում ա, էթում ա, հե՛նց ա էթում, հե՛նց ա էթում՝ ոնց որ մի քամի։ Մի օր, էրկու օր, իրեք օր էթում ա, ծովը կտրում, տալիս դուս գալի ղրաղը. ըտեղ էլ զաթի մեշեն էր, իրան քցում ա

[1] Տպագիր տեքստում «Մախլասի մի շաբաթ» արտահայտությունը բանահավաքի ձեռքով չնչված է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքստում է (Ս. Կ.)։

մնշեն։ Ասլանը հեռվանց տղին որ տեսնում ա ձիու վրեն՝ ուրախանում, աշխարով մին ա ըլնում.

«Աստծ ըսօր ինձ ջուխտ ձեռով ա տվե,— ասում ա,— թամամ օխտը տարի իսանաորդու մսի համ չեմ տեհե, անջախ մի ըսօր պտի ուտեմ, հասրաթս հանեմ»։

Ասում ա ու ատամները ղրճտացնելուն վրա հասնում, որ էրկսին էլ մի հանքի կուլ տա։ Համա սուրբ Սարգսի ձին ո՛ր վրա չի քշում, ասլանին ոտատակ տալի, ջարդ ու խուրթ ա անում, խժռում, թիքա-թիքա անում, թողում. ասլանը հենց տեղն ու տեղը սատկում ա, մնում։ Տղեն էն սհաթը ձիուցը վեր ա գալի, թուրը քաշում, ասլանի փորը ճղում, ղուբիկը ընդհան հանում։ Բաց ա անում, տենում՝ ղո՛րթ որ իրեք ծիտ միջին ծլվլում են. էն սհաթը իրեքի ճիտն էլ քաշում ա։ Ջան-Փոլատի ֆոդին ղաթի էս իրեք ծիտն ին, սրանց ճիտը քաշում ա թե չէ՝ ալբիալը նա ընդե բանից պըրծնում ա։

— Տղա՛,— ասում ա ձին,— դե հմի նի՛լ վրես, տանեմ ծովն անց կացնեմ։

Տղեն նիլնում ա, ծովն անց կենում են էրեսը։ Ընտե ձիու գյամը հանում ա, իրան բաց թողում ծովը, գյամն էլ եդ տանում, դնում քարի տակը. Սև ձին էլ հո ծովի ղրաղին էր, նիլնում ա, ընկնում ճամփա դպա Ջան-Փոլատի ամարաթը։ Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախվասի մի շաբաթ [1], հասնում ա ամարաթը։

Աղջիկն էն սհաթը դուս ա գալի, ճտուվը փաթթվում.— Տղա՛,— ասում ա,— էս հետ որ ես քունն եմ, դու իմը. արի՛ որ Ջան-Փոլատի ձեռիցը լավ պրծանք։

— Ո՞ր թ։

— Ո՛ր թ։ Չես ավատում, արի՛ տես։

Էթում ա տենում՝ դրուստ որ Ջան-Փոլատը էրկեն մեկնվել ա, ո՛նչ սասը կա, ոնչ սամուրը։ Նո՛ր ըստե քոչ ու բարխանա են կապում, ինչ կար-չկար Ջան-Փոլատի ամարաթումը՝ մալ, դոլվաթ, խաղինա, էրծաթ, ոսկի, բուլիանդ քոմմա բարձում են ձիանիքը, ընկնում ճամփա։

[1] Տպագիր տեքստում «մի օր, երկու օր, իրեք օր, մախլասի մի շաբաթ» արտահայտությունը բանահավաքի ձեռքով ջնջված է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքստում է (Ս. Կ.)։

էթում են, էթում են, էթում են՝ մի օր, էրկու օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մի ամիս՝ հասնում են էն աղջկա ամարաթը, որ տղի հեննա կոխ էր պրծե, տղեն նրան տվել էր գեննովը։ Ըստիան էլ էդ աղջկանն ա վեր ունում, էլ եդ էթում իրա ճամփեն։ Գալիս ա, գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստծ գիտա, հասնում ա հոր քաղաքը։ Խաբարը տանում են թագավորին, թե պուճուր տղեդ, էրկու սի՛րուն, նա՛շխուն, արեգակի կտոր աղջիկ էլ հետը՝ հրեն գալիս ա։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

— Ո՞րդի ա։

— Հրե՞ ֆլան տեղը։

Թագավորը ուրախանում, աշխարով մին ա ըլնում, իրա նազիր-վեզրով, մենծ հեծելով դուս ա գալի աղաքը։ Տղեն հորը տեսնալու բաշտան՝ ձիուցը վեր ա գալի, էթում ձեռը պաչում։ Հեր ու տղա ըստե իրար փաթթվում են, լաց ըլնում, ուրախությունից ըսկի չեն էլ կարում խոսա. վեր են կենում գալի տուն։ Մեկել աղպրտինքը իրանց սևէրեսությունից ամանչում, քիչ ա մնում գետինը մննեն. ըսկի պուճուր աղպոր աչքին էլա չեն էրևում։

— Դե՛, ասա՛ տեննանք, ո՛րդի,— հարցնում ա թագավորը,— ախա՛ր էս ո՞նց էլավ, որ դու սաղ-սալամաթ եդ էկար. էսքամ տարի մեռանք քու ճամփեն պահելոն։

Նոր ըստե պուճուր տղեն նստում ա, մին-մին հորը նաղլ անում աղպորտանց արարմունքը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Թագավորը ըստոնք որ չի լսում՝ կատաղում ա.— Ջա՛նլաթ,— ձեն ա տալի։

Ջանլաթները գալիս են թագավորին գլուխ տալի.— Ինչ կհրամայես,— ասում են,— թագավորն ապրած կենա։

— Կէթա՛ք,— ասում ա,— է՛ս սհաթը իմ վեց տղին էլ կբերեք աղաքիս քյալլա կանեք։

Պուճուր տղեն նոր աղաչանք, պաղատանք, թե.— Թագավորն ապրած կենա, աղպրտինքս ինչ մուխաննաթություն[1] արին՝ արի՛ն, բան չկա, նրանք էլ մերն են՝ յադ չեն, բաշխա՛։— Նոր որ թագավորը նրանց բաշխում ա։

Պուճուր աղպոր նշանածն էլ հո ուրախությունից չէր գիտա ինչ

---

[1] Տպագիր տեքստում՝ բերախաություն. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

անի. էսքան տարի խեղճի աչքը ջուր կտրեց նրա ճամփեն պահելուն։ Թագավորը նոր բերում ա սրանց պսակում. օխտն օր, օխտը գշեր՝ էլ ի՞նչ հարսանիք, էլ ի՞նչ դափ-զուռնա, էլ ի՞նչ քեֆ, ուրախություն, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Տղեն հետը բերած էրկու աղջիկն էլ՝ մինը տալիս ա թագավորի նաղրի տղին, մինը՝ վեզրի։

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինն՝ անկաջ դնողին, մինն էլ՝ ապսուն։



4· ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՐԱՄԻ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ քյասիբ, դառն-աղքատ են ըլնում։ Սրանք ունենում են մի մինուճար տղա։ Էդ տղին ինչ փեշակի տալիս ին, ինչ գործի դնում ին, ոնչ մի տեղ էլա չէր բնակալում. մի քանի օր մնում էր, էլ եդ թողում, գալի իրանց տունը։

Վերջը էդ տղեն գալիս ա հորնըմորը ասում.— Համի էլ բե՛րեք ինձ տվե՛ք դերձակի աշկերտ. բալքի էդ փեշակը սիրտս վեր ա ունում, հավանում եմ, մնում եմ, մարդ դառնում։

— Լա՛վ,— ասում են հերնըմները,—ա՛րի ըտա էլ փորձենք, տենանք ի՛նչ կդուս գա։

Վեր են ունում դրան տալի դերձակի աշկերտ։ Էդ դերձիկն էլ թագավորի դերձիկն ա ըլնում։

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, օրեն մի օրը թագավորը իրա դերձակին կանչում ա, մի խաս կտոր տալի, ասում.— Տա՛ր ինձ համար մի կապա կարա՛. համա որ խարաբ ես արե, իմաց կաց գլուխդ կֆը՛ռա։

— Ա՛չքիս վրեն,— ասում ա դերձիկը։

Թագավորին գլուխ ա տալի, կտորը վեր ունում, թողում գալի։ Գալիս ա դուքան, կտորը դնում դազգյահի վրեն ու ինքը էթում

տուն հայց ուտելու։ Հենց ուտեն ուր դուքանիցը դուս ա դնում թե չէ, էդ աշկերտն ա՝ վեր ա ունում մկրատը, ընկնում էդ կտորի ջանին, մանդր-մանդր կոտորում, վեր ածում, յանի թե ձևում ա։ Անց ա կենում մի սհաթ, ուտեն գալիս ա. ո՛ր չի տենում աշկերտի արարմունքը, մազերը գլխին բիզ-բիզ ա կաննում։

— Ա՛յ քու եդ քցողի ըսե՛նց, ընե՛նցը...։

Ասում ա ու փեշը վեր ունում, վրա պրծնում, որ նրան մի լավ սալջարդ անի թողա։ Ընչանք նրա փեշ վեր ունիլը, աշկերտը ծըլկվում ա, յա՛լլա դպա դուզ տուն։ Որ գալիս ա տուն, հերնըմները բարկանում են տղի վրեն։

— Ա՛յ որդի,— ասում են,— բա՛ ի՞նչ անենք. ո՛րդե տալիս ենք, բանդ չես ըլնում, թողում ես, փախնում։ Չէ՛ որ մընք էլ մեղք ենք. խի՞ ես մեր սիրտը մաշում, թողում։

— Բաս որ ըտենց ա, ա՛յ հեր,— ասում ա տղեն,— էգուց մի բոլ չամիչ ա՛ռ, լցրա՛ արխալղիս ջուխտ ջեբը, իրար հեննա էթանք. որդե չամիչը հատնի, ընդե ինձ աշկեռտ տո՛ւ։

— Լա՛վ,— ասում ա հերը,— ըտ էլ փորձենք, տեննանք։

Էգսի օրը, առավոտը գշերով-գշերհանա հերը ճամփի պաշար ա վեր ունում, տղին աղաք անում, տանում բազար, մի քանի գըրվանքա չամիչ ա առնում, լցնում տղի ջուխտ ջեբը, ընկնում ճամփա։ Էթում են, էթում են, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ մի օր, իրիկունը հասնում են մի չոլ, յարանի տեղ։ Ըտե չամիչը հատնում ա։

— Ա՛յ հեր,— ասում ա,— ես ըստե աշկերտ կըլնեմ։

— Ա՛յ որդի,— ասում ա,— ըստե ո՞ւմ կշտին ես աշկերտ ըլնում, ըստե ո՛նչ մարդ կա, ո՛նչ մադաթ։

Հենց էդ խոսքի վրեն տենում են էն դհիցը մի մարդ ա գալի։

— Ա՛յ հեր,— ասում ա,— հրեն էն դհիցը մի մարդ ա գալի. ինձ տո՛ւ նրան աշկերտ։

Էդ մարդն ա՝ գալիս ա, հասնում դրանց կուշտը։

— Բա՛րով,— ասում ա էդ մարդը։

— Բա՛րով, ասսու հազար բարին, խերին,— ասում ա հերը։

— Ի՞նչ մարդ եք, ի՞նչ եք շինում ըստերանք,— հարցնում ա էդ մարդը։— Օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք օրս ըստերանք ոտ չի դրե, դուք ո՞նց էք սիրտ արե, էկե։

— Քու սե՛րն ա՛ բերե,— ասում ա հերը,— բերել եմ տղիս քու

կուշտը աշկերտ տամ։ Ի՞նչ փեշակի ես, ա՛ղպեր,— հարցնում ա։

— Մենք որ կանք,— ասում ա.— քառասուն Հարամի ենք։ Գշերները գալիս ենք գեղարենքը, թալանում, տուն կտրում, մախլասի՝ ի՛նչ ձեռներս ընկնում ա, թռցնում ենք, գալի ըստես։ Համի դու գիտաս,— ասում ա,— որ տղիդ տաս մեր կուշտը աշկերտ, ըստոնք պտի սարվացնենք. կտաս՝ դու գիտաս, չես տա՝ էլի դու գիտաս։

— Ա՛յ հեր,— ասում ա բեդովլաթ տղեն,— էս հենց իմ բանն ա, սրանից էլ լավ փեշակ չկնի. աշխարքի հարստություն, խազինա, մալ ու դովլաթ թոփ կանեմ։

— Դո՛ւ գիտաս, ա՛յ որդի,— ասում ա,— մեղքն ու վարձքը քու շլինքը։

Ասում ա, տղի ջուխտ թուշը պաչում, տղի կուռը բռնում, տալի էդ մարդին, նրա հեննա մնաս բարով անում, վե կենում, եդ դառնում դպա տուն։

Էդ Հարամին ա, տղին աղաք ա անում, տանում։ Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են մի մենծ քարի կուշտ։

— Էս քարը տե՞նում ես,— ասում ա Հարամին,— մեր տունը սրա տակին ա, որ կէթանք կմննենք նեքսև, մեր Հարամբաշին քոմմքի վիրևը նստած ա, կէթաս նրան գլուխ կտաս, եննա կգաս, քոմմքի ներքևը, դռան տակին կնստես։

— Լա՛վ,— ասում ա տղեն վախլուքյունիցը դողալոն,— ըտենց կանեմ։

Հարամին էդ քարը բանձրացնում ա. էդ քարի տակին մի ծակ ա բաց ըլնում, էդ ծակովը վեր են գալի ներքև, էլ եդ քարը դնում ծակի բերնին։ Էթում են էթում, հասնում են դրանց ամարաթը։ Մննում են ամարաթը, տղեն տենում ա հրեն քառասուն Հարամին, յարաղ, ասպարի միջի կորած, նստոտած են։ Էթում ա Հարամբաշուն գլուխ ա տալի, դռան տակին նստում։

Անց ա կենում մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, Հարամբաշին ձեն ա տալի.— Ո՞րդի ա մի ղոչաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՞։

Էդ տղեն մնում ա արմացած, որ տենում ա՝ ընկորտանցից ոչ մինն էլ ա ձեն-ծպտոն չի հանում։ Վեր ա կենում տեղիցը, կանում։

— Աղա՛,— ասում ա,— ես կէթամ, կանեմ, կբերեմ։

— Սո՛ւ,— ասում ա Հարամբաշին,— էսքամ խալխը ձեն չհանեցին, դու բիրադնիցը ղոչա՞ղ էլար։

Տղեն էլ եդ նստում ա իրա տեղը, տազ անում։ Անց ա կենում մի սհաթ, Հարամբաշին թաղադան հարցնում ա.— Ո՞րդի ա մի ղոչաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՞։

Ընկերտինքը էլի ձեն չհանեցին։ Տղեն էս որ տեհավ, էլի տեղիցը վեր կացավ։

— Աղա՛,— ասեց,— ես կէթամ, կէփեմ, կբերեմ։

— Ձենդ կտրա՛,— ասեց Հարամբաշին,— շա՞տ պտի զահլես տանես։

Էլի խեղճ տղեն սուս կացավ, տեղը նստեց։

Անց կացավ մի վախտ, էլի Հարամբաշին ձեն տվեց.— Ա՛յ մի ղոչաղ տղա, էթա համամումը հալվա անի, բերի, ուտեմ, հա՞։

Ընկերտինքը էլի տազ են անում։ Տղեն էս որ տենում ա, էլի չի համբերում, վեր ա կենում, կաննում։

— Աղա՛,— ասում ա,— դրանում ի՛նչ կա. թող ես էթամ, անեմ, բերեմ, է՛լի։

— Լա՛վ,— ասում ա Հարամբաշին ընկորտանցը,— տարե՛ք սրան համամը շա՛նց տվեք, թող էփի՝ տեննանք, որ ըսենց ղուդուզանում ա։

Հարամիքը վեր են ունում ինչ որ պետքն ա՝ եղ, ալիր, շաքար, ցախ, տանում են համամը հեռվից շանց տալի, իրանք թողում գալի։

Էդ տղեն ա՝ զադ-մադերը վեր ա ունում, մննում համամը. տեննում ա՝ մարդ, մադաթ չկա։ Էն սհաթը բերում ա օջաղը սարքում ա, կրակ անում, թավեն դնում վրեն։

Հալվեն էփում ա պրծնում, թավի պոչը բռնում ա, հենց ուզում ա դուս գա, էն սհաթը հերդկիցը մի կնիկ, փեսեն գդալը ձեռին, ձեն ա տալի.— Ա՛յ տղա, ա՛յ տղա,— ասում ա,— ի՞նչ կըլնի մի գդալ հալվա տաս՝ ուտեմ։

— Բե՛, նա՛նի ջան,— ասում ա տղեն,— բե՛ տամ։

Տղեն գդալը ձեռիցն առնում ա, տալի հալվի մեջը, վեր ունում, տալի էն կնկանը։ Էդ կնիկը հալվեն ալուստի ուտում ա, պրծնում, էլի ա ուզում։ Տղեն էլի ա տալի։ Ըսենց մին, էրկու, իրեք, էն կնիկը քանի ուզում ա՝ տղեն տալիս ա։

Վերջը որ շատ զահլեն տանում ա, թավեն վեր ա ունում, հենց ուզում ա դուս գա, կնիկը ձեն ա տալի.— Ա՛յ տղա, ա՛յ տղա, քեզ վարձք ա, ի՛նչ կըլնի կաննես, ոտս դնեմ ուսիդ, վե գամ, լեղանամ։

Տղեն էն սհաթը թավեն վեր ա դնում, կաննում, կնիկը ոտը դնում ա տղի ուսին, վե գալի ներքև։ Հենց վեր ա գալի թե չէ, վրա ա հասնում տղին, որ վեր ունի, գեննովը տա. տղեն էլ կնկա յախա-մախեն ա հավաքում, ըստե էրկսով կոխ են պրծնում։ Կոխ են պրծնում, կոխ են պրծնում, տղեն կնկանը տալիս ա գեննովը։ Կնիկը ամոթու վեր ա կենում, փախնում, մաշկի թայն էլ թողում ա ընդե։

Տղեն մաշիկը վեր ա ունում, ի՛նչ սենում՝ չուտես, չխմես, էդ մարգարտաշար մաշկին թամաշ անես, էնքա՜մ մի սիրունիկ զադ էր։ Էդ մաշիկը վեր ա ունում, բերում, տանում հալվի հեննա դնում Հարամբաշու աղաքը։ Հարամբաշին էս որ չի տենում, մնում ա բերանը բաց. վեր ա կենում, տղի ճակատը պաչում։

— Աֆֆա՛րիմ,— ասում ա,— էսքամ տարի սրտիս ուզածն էս էր, ընկորտանցիցս ոչ մինն էլ ա սիրտ չէր անում, էթա, բերի. քոմմքից ղոչաղը դու էլար, որ սիրտ արիր, գնացիր, սրտաուզելիքս բերիր։

Ասում ա ու տղին իրա կշտին նստացնում։ Անց ա կենում մի քանի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը Հարամբաշին ասում ա.— Մեկն ու մեկդ էս մաշկի թայը վե կալեք, տարեք բազար ծախեք, հալբաթ մի քանի շայի կտան, հաց-մաց առե՛ք, ի՛նչ որ պետքն ա՝ առե՛ք, բերե՛ք։

Ո՛վ կտանի, ո՛վ չի տանի, Հարամբաշուց ոչ մինն էլ ա սիրտ չի անում տանի։ Վերջը էլի գալիս են, կպնում մեր ղոչաղ տղի յախեն։

— Թե տանես,— ասում են,— էլի դու կտանես, կծախես, մարդ չէ։

— Շա՛տ լավ,— ասում ա տղեն,— որ ասում եք՝ կտանեմ։

Վեր ա ունում մաշկի թայը, էթում դպա բազար։ Էթում ա, ո՛ւմ տենում ա, շանց ա տալի, չեն առնում, թե. «Մի թայ մաշիկն առնենք, ի՛նչ անենք»։ Վերջը որ շատ ման ա գալի, տենում ա, ըհը՛, հրես թագավորի նազիրը մոտացավ դրան։

— Ա՛յ տղա,— հարցրեց նազիրը,— էդ մաշկի թայը քեզ ո՞րդիան ա, որ ծախում ես։

— Քե՛զ ինչ,— ասեց տղեն,— ծախում եմ, ուզում ես՝ ա՛ռ, չես ուզում՝ մի՛ առնի։

— Էս թագավորի կնկա մաշիկն ա,— ասեց նազիրը,— արի էթանք թագավորի կուշտը։

Ասում ա ու դրան քաշ տալի դպա թագավորի ամարաթը։ Տանում ա դուզ թագավորի կուշտը։

— Ա՛յ տղա,— ասում ա թագավորը,— էս իմ կնկա մաշիկն ա, ո՞րդիան ա ընկե քու ձեռը. դրուստն ա՛սա, թե չէ գլուխդ թռցնիլ կտամ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— էս մաշկի թայը ես ֆլա՛ն վախտը, ֆլա՛ն համամումն եմ գտե։

Նստում ա ըստե էրկեն ու բարակ, մին-մին, տեղը-տեղին նաղլ ա անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— բաս որ ըտենց ա, քեզ բաց չեմ թողա, ընչանք սրա թայն էլ չբերես։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— որ ինձ բրոնես, ո՛նց բերեմ, ֆլա՛ն տեղը քառասուն ընկեր ունեմ, մարդ տո՛ւ, էթամ նրանց բերեմ, թողամ կշտիդ գրավ, ես էթամ մաշկի թայը բերեմ. քառասուն օր էլ ինձ մհոլ տու. չբերեցի՝ մեր արինը քեզ հալալ ա, ինչ ուզում ես ա՛րա։

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— թո՛ղ ըտենց ըլնի։

Տղի հեննա ղոշուն ա դնում, էթում են էն քառասուն Հարամուն բերում իրա կուշտը։ Թագավորը հրամայում ա սրանց քցեն մի օթախ, դուռը վրնները ղայիմ շինեն, ընչանք տղի գալը։

Էդ տղեն ա՝ ճամփի թադարեք ա տենում, վեհ կենում, ընկնում ճամփա։ Էթում ա, էթում ա, էթում ա, մի օր, էրկու օր, մախլասի՝ իրեք օր, հասնում ա մի գեղի կուշտ։ Տենում ա ըտեղ մի պառավ կնիկ ճիպոտը ձեռին կանգնել ա մի գերեզմանի վրա, ճիպոտով տալիս ա ֆողին, ասում. «Ֆո՛ղ, եդ գնա՛», ֆողը եդ ա էթում, տալիս ա մեռլին, ասում. «Մե՛ռել, սաղա՛ցի», մեռելը սաղանում ա։

Էդ տղեն էս որ տենում ա, մնում ա արմացած։

«Ա՛րի,— ասում ա ինքն իրան,— մի ճիպոտը ձեռիցն առնեմ, տենամ հունարը ճիպոտումն ա, թե պառավումը»։

Ասում ա ու վրա հասնում պառավին։ Սա՛ նրան, նա՛ սրան, սա՝ նրան, նա՛ սրան, վերջը տղեն ղոռում ա, պառավի ձեռիցը ճիպոտն առնում ա ու պո՛ւմ։

էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա մի քաղաք։ Տեսնում ա սաղ քաղաքը տխուր-տրտում, որ ասես, սաս ու սամուր չկա։ Մի մարդ ընդիան տեսնում ա էդ ղարիպ տղին, մոտանում ա դրան։

— Ղա՛րիպ աղպեր,— ասում ա էդ մարդը,— օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք օրս սիրտ չի արե ըստերմնք ոտ դնի, դու ո՞նց ես սիրտ արե, էկե. որ թագավորը իմացել ա, մենծ թիքեն անկաջդ կթողա։

— Խի՞, ի՞նչ ա պատահե,— հարցնում ա տղեն։

— Է՛լ ի՞նչ պտի պատահի,— ասում ա էն մարդը,— մեր խեղճ թագավորն էր՝ մի միհուճար տղա, էս ա մի տարի ա՝ մեռել ա. հիվանդ վախտը աշխարքումը ի՛նչքան գլուխ հեքիմ կար՝ բերին, ի՛նչ դեղ, դարման ասես՝ արին, ճար, իլլաճ չէլավ, չլավացավ, հմի էլ մի պոլոլիկ տարի սաղ քաղաքը սուգ ա պահում թագավորի տղի համար. անդամը ղարիպ մեր քաղաքը չի կարում ոտ դնի, թագավորը քոմմքի գլուխն էլ, սրտի հերսիցը, կտրիլ ա տալի։

— Ո՞րդի ա ձեր թագավորի տղի գերեզմանը,— ասում ա,— ես կսաղացնեմ։

— Ա՛յ տղա, մի՛ անի, մի՛ ըլնի, ջահել-ջիվան ես, աչքդ մուրազի ա, գնա՛ արևիդ ձենն ածա. խի՞ ես զուր տեղը անղալ գլուխդ ղալմաղալի մեջ քցում։

— Ջէ՛, որ չէ,— ասում ա տղեն,— քու ի՛նչ բանն ա, դու ինձ տար թագավորի կուշտը։

— Լա՛վ,— ասում ա,— որ ուզում ես՝ է՛թանք։

Էդ մարդն ա՝ տղի կուռը բռնում ա, տանում դուզ թագավորի ամարաթը։ Նրան դռանը կաննացնում ա, ինքը մննում նեքսև, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Հը՛, խի՞ ես էկե, ի՞նչ խնդիրք ունես,— հարցնում ա թագավորը հերսոտած։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— մի ղարիպ տղա ա էկե մեր երկիրը, ասում ա. «Ես թագավորի տղին մեռած տեղիցը կվեկացնեմ»։

— Ո՞րդի ա էդ տղեն,— հարցնում ա թագավորը։

— Հրե՛ն դռանը կաննած ա. թագավորն ապրած կենա, թե կհրամայես, էթում կանչեմ, գա։

— Թո՛ղ գա,— ասում ա,— տեսնանք ի՛նչ մարդ ա։

Էս մարդն ա՝ էթում ա տղին կանչում, բերում թագավորի կուշտը։ Տղեն գալիս ա, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա թագավորը,— ո՞րդիան ես գալի։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— ես ֆլա՛ն մարդն եմ, ֆլա՛ն երկրիցն եմ գալի։

— Բա ո՞նց ես սիրտ արե, էկե իմ քաղաքը. չես գիտա, որ սրտիս հերսիցը քոմմքի գլուխն էլ կտրիլ եմ տալի։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էկել եմ տղիդ սաղացնեմ։

— Բերան չի, եկեղեցի ա,— ասում ա թագավորը,— էրնակ չի՛ սաղացնես. սաղացրիր՝ քաշովդ մին ոսկի կտամ. չսաղացրիր՝ իմաց կաց գլուխդ կֆը՛ռռա։ Ղա՞բուլ ես։

— Ղա՛բուլ եմ, թագա՛վորն ապրած կենա։

— Ղաբո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ։

— Ղաբո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ, թագա՛վորն ապրած կենա. չկարացի՝ արինս քեզ հալալ ա։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա,— սրան տա՛րեք տղիս գերեզմանը շա՛նց տվեք։

Նազիր-վեզիրը սրան աղաք են անում, տանում թագավորի տղի գերեզմանի վրեն կաննացնում, որ ամարաթի կշտին էր։ Թագավորն էլ էթում ա իրա փանջարի աղաքին կաննում, ասում ա. «Տենամ ոնց ա տղիս մեռած տեղիցը վե կացնում»։

Էդ տղեն ա՝ պառավի ճիպոտը փեշի տակիցը հանում ա, տալիս ա գերեզմանի քարին. «Քար, դե՛ն գնա», ասում ա։

Ալբիալը քարը դեն ա էթում։ Եննա ճիպոտովը ֆողին ա տալի. «Ֆո՛ղ, դե՛ն թափի» ասում ա։

Էն սհաթը ֆողը դես, դեն ա ցվրվում, մեռելը էրևում ա։

Ճիպոտովը մեռլին ա տալի. «Մեռե՛լ, սաղա՛ցի» ասում ա։

Մըն էլ տեհան ի՞նչ՝ թագավորի տղեն փռշտաց, մեռած տեղիցը վե կացավ, դիք կաննեց։ Թագավորը էս որ տեհավ, ուրախությունիցը իրան փանջարիցը քցեց ներքև. վազեց փաթթվեց տղի շլնքովը։

— Տղա՛,— ձեն տվեց թագավորը,— լիզուդ ինչ պտտում ա,

ասա՝ տամ. սաղ թագավորությունս էլ ուզես, իմաց կաց կտամ, չեմ խնայի։

— Ջէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասեց տղեն,— զադ չեմ ուզում, մենակ քո գյամչուն ա՛սա, որ ինձ ծովն անցկացնի էն էրեսը։

— Էդ ի՞նչ ա, որ ուզում ես,— ասեց թագավորը զարմացած,— քաշովդ մին ո՛սկի ուզա, մա՛լ ուզա, դո՛լվաթ ուզա՝ տամ։

— Ջէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— քու մալ ու դոլվաթը քեզ հալալ ըլնի, ինձ մենակ անցկացրա՛ ծովի էն ղրաղըսրանից սավայի ուրիշ բան չեմ ուզում։

Թագավորը տղին որ շատ զոռում ա, տենում ա ո՛նչ ոսկի ա ուզում, ո՛նչ մալ, ո՛նչ դոլվաթ, մախլասի՝ ոսկի զատ չի վեր ունում, կանչում ա իրա գյամչուն։

— Էս տղին,— ասում ա,— կդնես գյամին, կտանես սաղ-սալամաթ կանցկացնես ծովի էն ղրաղը, էլ եդ կթողաս, կգաս։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա գյամչին,— էս մի ամիս ա՝ գյամին չի բանում. հենց էթում ա, հասնում ծովի մեջտեղը, բիրդան ջուրը տակն ու վրա ա ըլնում, լափին տալի, գյամին քիչ ա մնում շուռ գա, չենք գիտա էս ի՛նչ բաս ա։

— Ի՛նչ ուզում ա ըլնի,— ասում ա տղեն,— որ իմանամ պտի ձկների փայ ըլնեմ, էլի պտի անցկենամ։

— Դո՛ւ գիտաս,— ասում ա գյամչին,— մեղքն ու վարձքը քու շլինքը, որ ասում ես՝ կտանեմ։

Էթում ա գյամին սարքում, տղին նստացնում, ընկնում ճամփա։ Էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են հենց ծովի մեջտեղը՝ ջուրը էլի տակն ու վրա ա ըլնում, քիչ ա մնում գյամին շուռ տա։ Դիդիչըղ տղեն՝ ալբիալը շորերը հանում ա, իրան քցում ծովը, սըկվում ջրի տակը։ Ջրի տակին էթում ա, էթում, հասնում ա՛ ծովի անտակը, ի՛նչ տենում՝ մի պառավ կնիկ նստել ա, մատին էլ մի մատանիք կա, որ մատանքի ակը անում ա դպա ջուրը, էն սհաթը ծովը տակն ու վրա ա ըլնում, ալեկոծումն ընկնում։ Ջանըմսան տղեն՝ էս որ տենում ա, վրա ա հասնում պառավին, հեղտխտորում, մատանիքը ձեռիցն առնում, էլ եդ դուս գալի ջրի էրեսը։ Ալբիալը ծովը հանդարտում ա։ Գյամչին մնացել էր շիվարած, թե էս տղի միչին ի՛նչ հունար կա, որ սըկվեց ջրի տակը, ծովը ալբիալը հանդարտեց։ Էթում են, էթում, շատն ու

քիչն աստոծ գիտա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, դուս են գալի ծովի էն էրեսը։ Որ հասնում են ծովի ղրաղը, տղեն գյամչու հեննա մնաս բարով ա անում, մի ճամփա բռնում ա, էթում։

Էթում ա, էթում ա, էթում ա, հասնում ա մի գյուղի բաղ։ Բաղիցը վեր ա գալի էն դիհը, տեսնում ա միջին մի ամա՜րաթ, մի ամա՜րաթ, մի ամա՜րաթ, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես, հենց էդ ամարաթին թամաշ անես՝ էնքա՜մ մի լավ շինած էր։ Դուռը բաց ա անում, մննում նեքսե՛ր ի՜նչ տեսնում՝ մի սո՜ւփրա ա բաց արած, մի սո՜ւփրա ա բաց արած, որ ասսու ամեն բարիքը միջին կար։ Էդ տղեն էլ զաթի սոված, նխտից ընկած, վրա ա պրծնում, որ ուտի։ Հացին ձեռ ա տալի՝ ուզում ա կտրի, դնի բերանը, հացը դառնում ա մի բուռը ցորեն, շաղ անցնում գեննին. տապակած հավի վրեն ա ձեռը դնում՝ հավն ա սաղանում. խաշած ձկանն ա ձեռ տալի՝ ձուկն ա սաղանում, խըլպլտալեն ձեռիցը վեր ընկնում. մախլաս՝ գլխներդ ի՜նչ ցավացնեմ, ընչի ձեռ ա տալի՝ տեղիցը ժաժ ա գալի, դե՛ս, դե՛ն թափում, յա սաղանում, ձեռիցը դուս պրծնում, վեր ընկնում։

«Բա՛լի,—ասում ա ինքն իրան,—կա չկա, ըստե մի՜ բան կա»։

Տեսնում ա դռան կշտին հրենիկ մի բուվարի, վրեն էլ սիպտակ փարդեն կախ արած։

Ասում ա. «Մննեմ էս բուվարին, տափ կենամ, տեսնամ սրա վերջն ի՜նչ ա ըլնում»։

Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մըն էլ տեսնում ա՝ հրենիկ իրեք նաշխուն, սիրուն աղունիկ թռան, էկան, վեր էկան, իրանց խրխիքը հանեցին, դառան իրեք ջա՜հել, ջի՜վան, ջե՜յրան, հուրի-մալաք աղջկեք, ընդե կաննեցին։ Ննա մոտացան սուփրին, որ հաց ուտեն, տեհան ամանիքը ըստե-ընդե գեննին թափոտած, շաղ անցած, կիրակրները խառնըշտորած, վեր ածած, մախլասի՝ ոնչ մի բան իրա տեղը չի։

— Կա չկա,— ասեցին,— ըստե իսանաորդի ա մտե, մեր սուփրին իսանաորդու ձեռ ա դիպե։ Տեննաս ո՛վ ա էլե, ո՛վ չի էլե, որ սիրտ ա արե, մտե մեր ամարաթը։

Շատ միտք արին, խելք խելքի տվին, ման էկան՝ չգտան։

— Ա՜խ,— ասեց մենծ քիրը,— քաշկա էն տղեն ըլներ, որ համամի միջին հալվա էփեց, հեննես կոխ պրծավ, ինձ ախտեց, մաշ-

կիս թայը վե կալավ, գնաց։ Ըստե ըլներ, ես պաչեի՝ քեզ տայի, դու պաչեիր՝ նրան տայիր, նա էլ պաչեր՝ ինձ տար։

— Ա՜խ,— ասեց միջնեկ քիրը,— էրնեկ էն տղեն ըլներ, որ ես ճիպոտով մեռելներ ի սաղացնում, էկավ գլխիս բամբաչեց, ճիպոտը ձեռիցս առավ, գնաց։ Ըստե ըլներ, ես պաչեի՝ քեզ տայի, դու պաչեիր՝ նրան տայիր, նա էլ պաչեր՝ ինձ տար։

— Ա՜խ,— ասեց պուճուր քիրը,— քաշկա էն տղեն ըլներ, որ սըկվեց ծովի անտակը, մատանիքը ձեռիցս խլեց, փախավ։ Ըստե ըլներ, ես պաչեի՝ քեզ տայի, դու պաչեիր՝ նրան տայիր, նա էլ պաչեր՝ ինձ տար։

Էդ տղեն բուխարու միջին ըստոնք որ քոմմա լսում ա, ալբիալը մատը կծում ա։

«Բա՛լի,— ասում ա ինքն իրան,— կա չկա էս էն աղջկեքն են, որ սար ու ձոր ընկած, քար ու քոլ ընկած սրանց հավարին ման եմ գալի»։

Ասում ա ու փարդեն ետ ա տանում, բուխարու միջիցը դուս գալի, արշա ընկնում, ընդե կաննում։ Էն իրեք քիրն էլ դրան որ տենում են, ուրախանում, աշխարով մին են ընում. վրա են պըրծնում ամեն մինը մի դհիցը տղին պաչում, պաչպչորում, պաչելուց չեն կշտանում։ Նո՛ր նստում են թազադան հացի. ուտում են, խմում, քեֆ անում, ասում, խոսում, ջան ասում, ջան լսում։

— Հը՛,— ասում են աղջկեքը,— օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը, ընչանք օրս սիրտ չի արե ըստերանք ոտ դնի, դու ո՜նց սիրտ արիր էկար։

— Ձեր սերն ա բերե,— ասում ա տղեն։

— Սերում կենաս,— ասում են աղջկեքը։— Արի դրուստն ասա, դու մի փորացավ կունենաս, որ ըսենց չոլե-չոլ ես ընկե։

— Հա՛,— ասում ա տղեն,— ձեզանից պահեմ, աստանից ի՛նչ պահեմ. հալ նաղլ՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։— Նստում ա մին-մին իրա գլխով անցկացածը նաղլ անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի։— Էգուց էլ,— ասում ա,— վադեն թամմում ա, մաշկի թայը հասցրի՝ հասցրի, չհասցրի՝ ընկորտանցս գլխները պտի ֆը՜ռա։

— Արխեին կա՛ց,— ասում են քվերտինքը,— հլա վադա շատ ունես. մենք իրա վախտին քեզ ընենց կտանենք, կհասցնենք էն Թագավորի երկիրը, որ դու էլ չես իմանա։

— Դուք գիտաք,— ասում ա տղեն,— ինչ ուզում եք արեք,

ձեր արած լավությունը հուր հավիտենական մտիցս չեմ քցի, չունքի դուք չըլնեիք, ես էլ ի կորած, իմ քառասուն ընկերտինքն էլ, որ թագավորի կշտին թողել եմ դրավ, վե կացե, էկե։

— Դարտ մի՛ անի,— ասում են,— էն մաշկիցը ինչքամ ուզում ես՝ էս դշեր կգործենք, հազիր կանենք, էդուց վե կունես, կտանես։ Համի դու էն ա՛սա, որ էթաս, ե՞ր կգաս։ Սրանից դենը դու գիտաս, որ մենք քունն ենք, դու մերը։

— Իրեք օր ինձ մհո՛ւլ տվեք,— ասում ա տղեն, էկա՝ հո էկա, չէկա՝ իմաց կացե՛ք գլուխս փորձանք ա էկե։

— Լա՛վ,— ասում են աղջկեքը,— իրեք օր քեզ մհուլ։

Էդ դշեր իրեք քիրը նստում են, հայդե հա՛յ, էն մաշկիցը գործում են. մի էրկու, իրեք հարիր ջուխտ գործում են, հազիր անում։ Առավոտը դշերով-դշերհանա վեր են կենում, ճամփի թադարեք տենում, ոսկե մաշկները լցնում են մի խուրջնի մեջ, բերանը ղայիմ կապում, եննա էդ աղջկեքը իրանց խրխիքը հագնում են՝ դառնում իրեք սիրուն, նազխուն աղունիկ, էդ տղին սրով նստացնում իրանց թևերի վրեն ու թռնում։ Էդ իրեք աղունիկը թռնում են, թռնում են, թռնում են. ընչանք իրիկունը հասնում են էն թագավորի երկիրը. գալիս են դուզ թագավորի ամարաթի կշտին վե գալի։ Տղեն խուրջինը վեր ա ունում, քցում շալակը, էթում մննում դուզ թագավորի ամարաթը։ Հենց ընդե ա հասնում, որ ջանլաթները հազրվել են, պտի նրա ընկորտանց գլխները թռցնեն։ Տղեն խուրջինը ուսին գալիս ա թագավորին գլուխ տալի, խուրջինը դնում թագավորի աղաքը, ինքը ընդե կաննում։ Թագավորը մնում ա զարմացած տղին մտիկ անելոն, թե ալուստի էս ո՛րդիան դուս էկավ, ընդե կաննեց։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— մի մաշկի տեղակ հրես խուրջինը լիքը մաշիկ եմ բերե։

Ասում ա, խուրջնի բերանը բաց անում, մին-մին մաշկները հանում, թագավորին շանց տալի, նրա աղաքին կիտում։ Թագավորը մնում ա բերանը բաց տղի էրեսին մտիկ անելոն։ Ալբիալը հրամայում ա՝ նրա ընկորտանցը բաց թողան, նրանց լավ-լավ փեշքաշներ տան, ճամփու դնեն։

Քառասուն Հարամին հո ուրախություններիցը չին իմանում՝ ի՛նչ անեն, ո՛նց էդ տղի լավությունի տակիցը դուս գան։

Տղեն ըստե ընկորտանց հեննա մնաս բարով ա անում, ասում ա.— Ես մուրազ ունեմ, պտի էթամ։

Դուս ա գալի չոլը, էն աղունկներին ման գալի, գտնում։

— Համի ո՞ւր ես էթում,— հարցնում են աղունկները։

— Հորնըմորս կուշտը,— ասում ա տղեն,— ընդհան էլ նրանց վեր ունենք, է՛թանք ձեր երկիրը։

— Լա՛վ,— ասում են աղունկները,— է՛թանք։

Սրան դնում են սրով էլ եդ իրանց թևերի վրեն, թռնում։ Թրռնում են, թռնում, հասնում են տղի երկիրը, տանում են նրանց տան կշտին վեր բերում։ Տղեն էթում ա իրենց տունը։ Հորնըմերը որ իրանց տղին տեսնում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում։

— Ա՛յ որդի,— ասում են,— էս ո՞ւր իր էսքան վախտ, էլ իզ ու թողդ չէրևաց. մի խաբար էլ ա չես ղրկում, որ իմանանք սաղ-սալամաթ ես, մընք էլ միամտվենք։

Նո՛ր տղեն ըստե նստում ա մին-մին իրա գլխով անցկացածը նաղլ անում հորնըմորը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։ Էդ գշեր իրանց զադ-մադերը, ունեցած-չունեցածը քոմմա հավաքում են, հարևաններին, բարեկամներին բաշխում, սրա՛ն, նրա՛ն տալի, իրանք դափ-դարտակ վե կենում, տանիցը դուս գալի։ Նո՛ր ամեն մինը մի աղունկի վրեն նստում են, ընկնում ճամփա դպա աղունկների ամարաթը։

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն ասած դիտա, հասնում են էն գյուղի բաղը։ Աղունկները դրանց ըտե վեր են բերում, ամարաթի դռները բաց են անում, մննում նեքսև։ Աղունկները իրանց խրխիքը հանում են, դառնում ամեն մինը մի մի հուրի-մալաք աղջիկ, որ չուտես, չխմես, հենց սրանց գյուլ-ջամալին թամաշ անես՝ էնքա՜մ մի սիրունիկ զադեր ին։

Նո՛ր հարսանքի թադարեք են տեսնում։ Էդ տղեն էդ իրեք աղջկա հեննա պսակվում ա, օխտն օր, օխտը գշեր հարսանիք են անում։ Ինչ քե՜ֆ, ինչ ուրախությո՜ւն, ինչ դափ ու դուռնա՜, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրա՛նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրազին։



5· ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի թագավոր կար, էդ թագավորին ուներ եռեսուն տղա։ Էդ եռեսուն տղեն երոր մենծացան, յաշներն առան, թագավորը կանչեց իրա վեզրին, ասեց.— Իմ տղերքանց յաշները հասել են, պտի պսակվեն, պտի էթաս, ման գաս, եռեսուն աղջիկ մի տանից գտնես, որ առնենք մեր տղերքանցը, որ մեջները խորթուվչյուն չըլնի, չբաժանվեն։

Վեզիրը թագարիք ա տենում, վեր ա կենում էթում։ Ման գալով, ման գալով էթում ա մի գեղ, ղոնաղ ա ըլնում տերտերի տանը։

Տերտերին հարցնում ա.— Մի բանի եմ ման գալի, եռեսուն աղջիկ մի տանից պտի գտնեմ, ուղեմ թագավորի տղեքանցը։

Տերտերն ասեց.— Մտածեմ, կարելի ա գտնել էլ։

Տերտերը երկար ժամանակ մտածում ա, ասում ա.— Հլա ուշս վրես չի, մինչև լիսը բացվի, մտածենք՝ տենանք։

Սրոր լիսը բացվեց, վեզիրը վե կացավ, գնաց քաղաքի ղրաղը ման գալու. տեհավ գեղի ղրաղին մի առու կա, գնաց առվի վրա կաննեց, թամաշ էր անում։ Մի հինգ հրոպեից եդը տեհավ մի մարդ էկավ ըտի՛ կաննեց։ Մի քիչ եդը տավարը սկսեցին բերիլը. տավարի հետ տեհավ մի քանի աղջկերք էլ էկան կաննեցին դրա կըշտին։ Վեզիրը մոտ գնաց, բարևեց. տեհավ աղջկերքը ոտաբոբիկ, գլուխ բաց են, ասեց.— Ըստոնք քու աղջըկե՞րքն են։

Ասեց.— Հա՛։

Ասեց.— Քանի՞ աղջիկ ունես։

Ասեց.— Փա՛ռք աստու, եռեսուն աղջիկ ունեմ։

Ասեց.— Բիրադի եռեսուն աղջիկ ա՞։

Ասեց.— Եռեսուն ա։

Ասեց.— Եբոր եռեսուն ա, էլ ըսօր նախիրը մի էթա, ես քեզ հետ գործ ունեմ։

Նախրչին ասեց.— Ջեմ կարա եդ ընկնի, տավարը կկորչի։

Ասեց.— Տավարը դու ղրկա էթա, հինգ շահի ա, տասը շահի կտամ՝ դու բանդ ի՛լ[1]։

Ասեց.— Ջե՛մ կարա, ես պտի էթամ նախիրս։

Տեհավ՝ չի լսում, հանեց հինգ մանեթ տվեց նախրչուն, թե.— Դու մի էթա՛, ուրշին ղրկա։

Նախրչին, որ տեհավ հինգ մանեթը, ուրախացավ, ասեց.— լա՛վ, ես չեմ էթա, ուրիշ մարդ կղրկեմ։

Եբոր նախրչին նախիրը ճամփու քցեց, վեզրի հետ էկան իրանց տուն։ Վեզիրը տեհավ՝ դրուստ եռեսուն աղջիկ են, մեկ մեկուց անղալաթ սիրուն են։

Վեզիրն ասեց.— Նախրչի աղպեր, քու աղջկերքը պտի տաս թագավորի տղերքին։

Նախրչին ասեց.— Թագավո՞րն էլ ունի եռեսուն տղա։

Ասեց.— Ըտենց ա, եռեսուն տղա թագավորինն ա, եռեսուն աղջիկ էլ քունն ա, տանք իրար։

Նախրչին ասեց.— Բախտավորություն կըլի, որ թագավորին խնամի ըլնեմ, էլ նախիր խի՞ եմ էթում։

Վեզիրն ասեց.— Ըստեղ անմոլ դերձիկ կա՞։

Նախրչին ասեց.— Կա՛։

Ասեց.— Դե գնա՛, կանչա գա՛։

Նախրչին վե կացավ, գնաց, կանչեց։

Վեզիրը դերձկին հրամայեց, ասեց.— Սրանց ոտից գլուխ թամուզ շոր պտի հագցնես։

Դերձիկն ասեց.— Շա՛տ լավ, փողը ձեղանից, առնիլն ու կարիլն ինձանից։

Դերձիկը չափաներն առավ, մի շաբթվա մեջ կարեց, հազրեց։

---

[1] Սպասիր (Ս. Բ.)։

Աղջկերքը դնացին համամ, թազա շորերը հագան, էլան մի մի լսի կտոր։ Վեղիրը որ տեհավ, խելքը դնաց, ասեց.—Նո՛ր որ թագավորի լայլաղ են։

Մի օրինավոր տուն էլ ճարեց, տարավ դրեց մեջը, մի գյադա բռնեց, ամեն պետքը հոգաց։

Վեղիրը խարար ղրկեց թագավորին, թե.—Քու թագարեքդ տե՛ս, ա՛րի, աղջկերքը ճարել եմ։

Թագավորը իրա եռեսուն տղեն ու հինգ հարուր ջան ղոշունը վե կալավ՝ էկավ։

Վեզիրը դնաց թագավորի առաջ, վե կալավ, բերեց։ Թագավորն էկավ, տեհավ որ շատ սիրուն աղջկերք են, շատ հավանեց։ Հարսանիք արին, օխտն օր, օխտը գշեր, օխտը ձեռք դափ ու դուռնա ածեցին, կերան, խմեցին, քե՛ֆ արին։ Երբոր օխտն օրը թամմեց, էկավ վրա ութ օրը, թագավորը կանչեց վեզրին, ասեց.— Թագարեք տե՛ս, է՛թանք։

Վեզիրը թագարեք տեհավ էթալու։ Թագավորը կանչեց խնամուն, ասեց.— Կուզես էթանք մեր քաղաքը, կուզես ըստի կաց, ես քու ապրուստդ կտամ։

Նախրչին ասեց.— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, ես ըստեղ կմնամ։

Թագավորը տեհավ, որ չի գալի, ասեց.— Գնա՛, ըսօրվանից Թիֆլիս քաղաքի խարջը ժողովա, կե՛։

Եդո «մնաս բարի» ասեց, առավ իրա հարսներն ու տղեքը դնաց։

Մեկ օր գնացին, էրկու օր գնացին, վրա իրեք օրը չադիր տվեցին, որ մի քիչ դինջանան։ Հաց կերան, պառկեցին քնեցին։ Վե կացան, տեհան որ մի վիշապ չադրների չորս ղրաղը փաթըթվել ա, դլուխը դրքել ա ու կաննել ա։ Թագավորը որ տեհավ, շատ վախեցավ, թուրը քաշեց, հասավ, որ գլուխը կտրի։

Վիշապն ասեց.— Ի՞նչ բանի վրա ես, քե՛ղ էլ, քո՛ւ սաղ ղոշունդ էլ կփաթըթեմ պոչիս, կհանեմ երկինք, կէրեմ, կթափեմ գետինը։

Թագավորը լաց էլավ, խնդրվեց, ասեց.— Ուզում ես թագավրությունս տամ, ուզում ես սաղ երկիրս տամ, թո՛ղ տղեքս ու հարսներս առնեմ էթամ։

Վիշապն ասեց.— Չիլնի՛, քու պուճուր տղեն պտի ինձ տաս։

1646—7

Թագավորը շատ տխրեց ըստեղ, լաց էլավ։ Կանչեց վեզիրին, ասեց.— Մեր հալը ի՞նչ պտի ըլնի։

Վեզիրն ասեց.— Ո՛չ սուր կբանի դրա վրին, ո՛չ թուր, լավ ա մի տղեդ տաս՝ քսան իննը ազատես։

Թագավորը շատ լաց էլավ, տեհավ իլլաճ չկա, պուճուր տղին տվեց, Վիշապը վեր կալավ, գնաց,

Վիշապը տղին տարավ մի ջոկ օթախի մեջ վեր դրեց։ Իրեք օրից եդը Վիշապը գնաց օթախի դուռը բաց արեց, մտավ նեքսև։

Ասեց.— Խի՞ ես լաց ըլնում։

Տղեն ասեց.— Ես հո բռնավոր չեմ, բերել քցել եք ըստեղ, ես թագավորի տղա եմ, լավ կերել եմ, լավ խմել եմ, ազատ մարդ եմ էկե։

Վիշապը հարցրեց.— Անումդ ի՞նչ ա։

Ասեց.— Մարտիրոս ա։

Ասեց.— Էգուց պտի քեզ ղրկեմ Սպահան։

Տղեն էլի լաց էլավ, ասեց.— Ես ճամփա չեմ գիտա, ո՞նց էթամ։

Ասեց.— Քեզ մի իմաստուն ձի կտամ, ձին նի՛լ, գնա՛։

Տղեն ասեց.— Ինչի՞ համար էթամ։

Ասեց.— Պտի էթաս Զարգյարի կնկանը բերես։

Ասեց.— Ո՞նց բերեմ, Զարգյարի կնիկն ա ու չէկա՞վ։

— Ինչքա՛ն փուղ ուզում ես՝ կտամ, փողի դռոը քցա, վեր կալ բե՛ր։

Էն էգսի օրը տղեն վեր կացավ, ծախսի փողը վեր կալավ, ձին նիլլավ, որ էթար, ասեց.— Բա որ ընտեղ փողս հատնի, ի՞նչ անեմ։

Ասեց.— Երդոր իրիկունը տանից դուս գաս, ձևռով անես, ձեն տաս. «Վիշա՛պ», ես հազիր եմ ընտեղ, ինչ ուզես՝ կբերեմ։

Տղեն ընկավ ճամփա, գնաց։ Համարյա հինդ օրվա ճամփեն մեկ օրը գնաց։ Երդոր տեհավ շատ ա հեռացել, ասեց.— Վիշապը էլ ինձ չի գտնի, հազիր լավ ա, էթամ հորս տունը։

Ճամփեն ծռեց, որ էթար՝ Վիշապն էկավ աղաքը փակեց, ասեց.— Ո՞ւր ես էթում։

Ասեց.— Դու ո՞րդիան էկար ինձ հասար, ես միտքս փոխել ի, պտի էթայի մեր տուն։

Ասեց.— Ջուր ա, հինդ ամսվա ճամփա էլ որ էթաս, ինչ որ մարդվդ անց կենա, ես քու մոտին եմ, չես կարա փախնի ինձանից։

Տղեն էլի տխրվեց, մտածեց, տեհավ որ իլլաջ չինի ազատվելու, եդ դառավ, Սպահանի Համփեն բռնեց ու գնաց։

Շատ գնաց, քիչ գնաց, աստված գիտա, գնաց հասավ Սպահան քաղաքը։ Գնաց, մի դուռ ծեծեց, մի պառավ կնիկ դուս էկավ։

Ասեց.— Բարո՛վ, նա՜նի, մի տեղ տաս, մի քանի օր մնամ։

Ասեց.— Քու լայաղին տեղ չկա։

Հանեց մի բուռ ոսկի տվեց, ասեց.— Կկառավորվենք, մի տեղ արա։

Պառավը վե կացավ, կուժ ու բժուխ ջարդեց, դուս ածեց, ձին բաշեց նեքսև, ասեց.— Քեզ էլ ղուրբան, քու ձիուն էլ ղուրբան, էս սհաթին էթամ բաղար, ինչ հարկավոր ա բերեմ։

Իրիկունը տղեն դուս էկավ, տեհավ մի ընե՛նց լիս ա ընկել բաղաքի վրին, որ վառվում ա, ասեց.— Ա՛յ նանի, հլա դուս արի, էս ի՞նչ լիս ա։

Պառավը դուս էկավ, ասեց.— Էս Զարգյարի կնիկն ա, գլուխը փանջարիցը հանել ա, շաֆաղը տվել ա քաղաքը։

Տղեն ասեց.— Նանի՛, Զարգյարի կնիկն ըդքան սիրուն ա՞։

— Հա՛, ղադեդ առնեմ, ընքան սիրուն ա, որ Զարգյարը վախենալուցը քառասուն օթախից նեքսև ա դրել, քառասուն դուռը վրին փակել, մի-մին բաց ա անում, նեքսև ա մտնում։

Առավոտը տղեն վե կացավ, գնաց Զարգյարին դտավ, բարով տվեց, բարովն առավ, ասեց.— Ուստա՛, մի բան եմ շինել տալի, կարա՞ս շինի։

Ասեց.— Ի՛նչ լիղուդ պըտըտի՝ կարամ։

Ասեց.— Մի ջուխտ մաշիկ ա պետք, խալիս ոսկուց, կարա՞ս շինի։

Ասեց.— Մի խուրջին ոսկի բերես, հինգ հարուր մանեթ էլ ձեռնամուղդ[1] տաս, խի՞ չեմ շինի։

Ասեց.— Քանի՞ օրումը կարաս հաղրի։

Ասեց.— Էրկու օրումը կհաղրեմ։

Տղեն թողաց գնաց պառավի տունը. մնաց ընչանք իրիկուն. իրիկունը որ ճրագները կպավ, քնելու հանգամ[2] տղեն դուս էկավ, ձեն տվեց.— Վի՛շապ, վի՛շապ, վի՛շապ։

---

[1] Աշխատանքի վարձ (Ե. Բ.)։

[2] Ժամանակ (Ե. Բ.)։

Վիշապը ծոր տալով, ծոր տալով[1] էկավ, ասեց.— Հը՛, տղա՛, ի՞նչ ես ուզում։

Տղեն ասեց.— Ինձ փող ա հարկավոր։

Ասեց.— Գնա՛ արևելին քնի, առավոտը կըլնի։

Տղեն գնաց քնեց։ Առավոտը վեր կացավ, տեհավ մի խուրջին ոսկի հազիր ա։ Գնաց մի համբալ վեր կալավ, էկավ, տվեց համբալի շըլակը, տարավ Զարդյարի դուքանը։ Հանեց մի ոսկի, տվեց համբալին։

Զարդյարն ասեց.— Մի շահի տալու տեղակ մի ոսկի խի՞ տվիր։

Ասեց.— Բա՛ն չկա, քյասիբ մարդ էր, տվեցի։

— Դե՛,— ասեց,— գնա՛, էրկու օրից եղը արի, տա՛ր։

Տղեն վեր կացավ, գնաց էլի պառավի տունը։

Էրկու օրից եղը վեր կացավ էկավ Զարդյարի դուքանը, բարով տվեց։

Զարդյարը տեղիցը վեր կացավ, բարևն առավ, ասեց.— Նըստի՛։— Նստեց։

Ասեց.— Հազի՞ր ա։

Ասեց.— Հա՛զիր ա։

Գնաց բերեց. տղեն տեհավ, որ շատ լավ բան ա, համարյա մի թամաշի բան. առավ հագավ, ըսկսեց դուքանումը մաև գալ։ Եդո հանեց, ասեց.— Ուստա՛, արի դու մի հագի՛, տեննանք։

Ասեց.— Ախար քեզ համար եմ հազրե, ոնց ես հագնեմ։

Ասեց.— Բա՛ն չկա, դու հագի, մի ես մտիկ տամ։

Ուստեն հագավ, տղեն ասեց.— Ոտիդ շատ լավ էկավ, քե՛զ փեշքաշ։

Ասեց.— Ըղբան փող տվիր ու փեշքաշ ես անում։

Ասեց.— Բա՛ն չկա։

Ասեց.— Մնաս բարով,— ու գնաց։

Էգուի օրը էլի էկավ, ասեց.— Ուստա՛, կարա՞ս ղաբլամա ոսկուց մի շալվար կա՞րի։

Ասեց.— Շա՛տ լավ, շատ լավը կկարեմ։ Էրկու խուրջին ոսկի կուտաս, հազար մանեթ էլ ձեռնամուղդ։ Իրեք օրից եղը արի տա՛ր։

Տղեն վեր կացավ, գնաց։ Իրիկունը, քնելու հանգամին դուս էկավ դուռը ձեն տվեց.— Վի՛շապ, Վի՛շապ, Վի՛շապ։

---

[1] Բարակել, երկարել (Ծ. Բ.)։

Վիշապը ծոր տալով, ծոր տալով էկավ, ասեց.— Ի՞նչ ուզում ես, ուզա՛, առավոտը հազիր ա։

Տղեն ասեց.— էրկու խուրջին ոսկի։

Ասեց.— Գնա՛ տեղդ արխեին քնի, առավոտը հազիր կըլնի։

Տղեն թողաց, գնաց քնեց։ Առավոտը վե կացավ, տեհավ էրկու խուրջին ոսկին գլխի վիրևը դրած ա։ Վե կացավ գնաց բազար, էրկու համբալ կանչեց, տվեց շըլակները, տարավ Զարգյարի դուքանը։ Համբալներին ամեքին էրկու ոսկի տվեց։

Զարգյարն էլի նախանձեց, ասեց.— Մի մի շահի տո՛ւ, ընչի՞ համար էրկու-էրկու ոսկի տվիր։

Ասեց.— Քյասիբ ին, տվեցի։

Իրեք օրից եդը վե կացավ, էկավ, ասեց.— Հազիր ա՞։

Ասեց.— Հա՛զիր ա։

Վե կացավ բերեց, տղեն տեհավ խելքը գլխիցը գնաց, ընքան լավ բան էր կարել։

Հագավ, դուքանի մեջը մաև էկավ, ասեց.— Ուստա՛, հլա արի դո՛ւ հագի, տենանք, վրովդ հա՞րմար ա։

Զարգյարը ասեց.— Քեզ համար եմ կարե, ինձ հարմար չիլնի։

— Չէ՛,— ասեց,— հագի։

Զարգյարը հագավ, վե կացավ մաև էկավ։

Տղեն ասեց.— Ուստա՛, քեզ շատ հարմար ա, քե՛զ փեշքաշ ըլնի։

Ասեց.— Քեզ համար եմ կարել, ինչ նեղություն ես քաշում։

Ասեց.— Բա՛ն չկա, քեզ փեշքաշ եմ անում։

Զարգյարը շատ շնորհակալ էլավ, տղեն վե կացավ գնաց։ Մնաց ընչանք իրիկուն, Զարգյարը էթալու վախտը դրեց աղլըխի մեջը, տարավ տուն։ Ծըռոր քառասուն դուռը բաց արեց, մտավ կընկա օթախը, դրեց ըստուլի վրա։

Կնիկն էկավ թամաշ արեց.— Էս ի՞նչ անգին բան ա, ա՛յ մարդ։

Զարգյարն ասեց.— Էլի էն թագավորի տղեն ա փեշքաշ արե։

— Բա ընչի՞ համար չես կանչում գա, մի կտոր հաց ուտի մեր տանը։

Ասեց.— Պտի կանչեի, չէլավ։

Ասեց.— Ընքան բան փեշքաշ անելուց եդը պտի կանչեիր։

Էգսի օրը տղեն էլի վե կացավ, էկավ Զարգյարի դուքանը ասեց.— Ուստա՛, մի լավ աբա պտի կարես ոսկուց, որ գին չունենա։

Ասեց.— Ա՛չքիս վրա. իրեք խուրջին ոսկի բեր, հաղար հինգ հարուր մանեթ էլ շինելու փող տու, չորս օրից եղը արի, տա՛ր։

Տղեն վե կացավ գնաց. իրիկունը էլի կանչեց Վիշապին։ Վիշապը ծոր տալով, ծոր տալով էկավ։

— Հը՛,— ասեց,— ի՞նչ ես ուզում։

Ասեց.— Իրեք խուրջին ոսկի։

Ասեց.— Առավոտը հաղիր կըլնի։

Տղեն եդ գառավ, էկավ քնեց։ Առավոտը վե կացավ, տեհավ գլխավիրեն ա, գնաց իրեք համբալ կանչեց, տվեց շլակները, տարավ Զարգյարի դուքանը։ Հանեց ամեն մի համբալին իրեք ոսկի տվեց։

Զարգյարը նախանձեց.— էս ի՞նչ բան ա,— ասեց,— ամեքին մի-մի շահի տո՛ւր, ընչի՞ համար ես իրեք-իրեք ոսկի տալի։

Ասեց.— Քյասիբ են։

Տղեն թողաց, գնաց։

Չորս օրից եղը տղեն էկավ Զարգյարի դուքանը, ասեց.—Ուստա՛, հաղիր ա՞։

Ասեց.— Հա՛ղիր ա։

Բերեց, տղեն հագավ, դուքանի մեջը ման էկավ։ Հանեց, ասեց.— Ուստա՛, ա՛րի դու հագի, ես տենամ։

Ուստեն հագավ։

Տղեն ասեց.— Շա՛տ հարմար ա քեզ, քե՛զ փեշքաշ ա։

Ասեց.— Ախար քեզ համար ի կարե, էդ խի՞ ես քեզ համար կարել տալի, փեշքաշ անում ինձ։

Տղեն ասեց.— Ոչինչ, քեզ ավելի հարմար ա գալի։

Տղեն վե կացավ գնալու, ասեց.— Մնա՛ս բարին։

Ասեց.—Էթա՛ս բարին,—էս անգամ էլ չկանչեց։

Զարգյարը ընչանք իրիկուն բանում ա, իրիկունը ոսկի աբեն գնում ա աղչխի մեջը, տանում ա տուն, բաց ա անում, շանց ա տալի կնկանը։

Կնիկը որ տենում ա՝ զարմանում ա, ասում ա.— էս ի՛նչ սիրուն բան ա, էլի էն թագավորի տղեն տվե՞ց։

— Հա՛,— ասեց։

— Բա խի՞ չի կանչեցիր տուն, մի կտոր հաց ուտեր։

Ասեց.— Պտի կանչեի, շըշկլվեցի, չկանչեցի։

Տղեն տեհավ, որ Զարգյարը իրան տուն չկանչեց, ումուդը կըտրեց, մի քանի օրից եդը ինքը հիվանդացավ մախսուս, պառավին ղրկեց Զարգյարի դուքանը։

Պառավն ասեց.— Թագավորի տղեն շատ հիվանդ ա։

— Դրա հը՞մար էս քանի օրը չէր էրևում։

— Շատ դժար հիվանդ ա, քեզ կանչում ա։

Տղեն ասեց.— Հանքս կտրվում ա, ըստիան ինձ տար մի լավ տուն։

Զարգյարն ասեց.— Մեր տանիցը լավ տուն չկա, ա՛րի տանեմ մեր տունը։

Վե կալավ, տարավ իրա տունը։ Զարգյարի կնիկը սկսեց դրան լավ մտիկ տալ։ Երբոր Զարգյարը գալիս էր, տղեն հոգու հետ էր ըլնում, երբոր էթում էր, նստում կնկա հետ անուշ-անուշ զրից էր անում։ Մեկ, էրկու, էդ կնկա կամքն առավ, ասեց.— Ես էկել եմ քեզ տանեմ, կդա՞ս։

Կնիկն ասեց.— Ես ուրախ կըլնեմ՝ էս բանտարկությունից պըրծնեմ։

Տղեն ասեց.— Ես կէթամ պառավի տունը, ընտեղան լախում կտամ մինչև ըստեղ, դու էն վախտը կէթաս-կգաս, Զարգյարն էլ կարծիք չի անի։

Իրիկունը որ Զարգյարը տուն էկավ, տղեն վե կացավ նստեց, ասեց.— Զարգյա՛ր, ես ըսօր շատ լավ եմ, էգուց կէթամ իմ տունը։

Զարգյարն ասեց.— Քո՛ւ կամքն ա։

Էգսի օրը տղեն վե կացավ, Զարգյարի հետ գնաց պառավի տունը։

Էգսի օրը կանչեց լախմչի, ասեց.— Կարա՞ս վախտեց վախտ[1] լախում տաս ըստիան ընչանք Զարգյարի օթախները։

Լախում տվողն ասեց.— Ա՛չքիս վրին։

Լախումը տվեց, Զարգյարի կնիկը վե կացավ, էկավ տղի մոտը, կերան խմեցին, քեֆ արին, վե կացավ գնաց։

Մի հինդ օրից եդը տղեն գնաց Զարգյարի մոտն, ասեց.— Ուստա՛, ա՛րի էթանք, որ ես նշան պտի դնեմ։

---

[1] Մի օրում (Ե. Բ.)։

Զարգյարն ասեց.— Շա՛տ լավ բան ես արե, է՛թանք։

Իրար հետ վե կացան, էկան պառավի տունը, Զարգյարը տեհավ, որ իրա կնիկը ըտեղ ա, աչքերին չհավատաց, ինքն իրան ասեց.— Մի՛ էթամ տուն, տենամ։

Տղեն ասեց.— Զարգյա՛ր, գնա տերտերին կանչա։

Ասեց.— Չէ՛, ես էթամ տուն դիպնեմ, գա՛մ։

— Որ էթում ես տուն՝ ուստակնկանը բե՛ր։

Ասեց.— Լա՛վ։

Վե կացավ գնաց տուն։ Կնիկը ընչանք նրա տուն էթալը լախըմով անցավ, գնաց իրա օթախը, նստեց։

Զարգյարն էկավ տուն, տեհավ կնիկը ընտեղ ա, ասեց.— Մ՛յ կնիկ, թագավորի տղեն նշան ա դնում, վե կաց, էթանք։

Կնիկն ասեց.— Ես չեմ գա, էթում ես՝ գնա՛։ Ես ըսքան վախտ եր եմ ուրախացե, մարդամեջ մտե, որ հմի նոր ուրախանամ։

Զարգյարը վե կացավ, գնաց։ Գնաց տեհավ էլի էդ կնիկը տղի կշտին նստած ա։ Վե կացավ գնաց տերտերի քամակը, վե կալավ էկավ։ Տերտերն էկավ նշան դրեց։ Կերան, խմեցին, լավ քեֆ արին։ Տերտերը վե կացավ, գնաց իրա տունը, Զարգյարն էլ վե կացավ գնաց իրա տունը։ Գնաց, տեհավ որ կնիկը էլի տանն ա։ Կնկանն ասեց.— Մ՛յ կնիկ, կասես դու ընտե ըլնեիր։

Կնիկն ասեց.— Դու կարծըքավոր[1] մարդ ես, ընտեղ ըլնեի, սիրտդ կճաքեր։

Մի տասն օրից եղը տղեն վե կացավ, գնաց Զարգյարի դուքանն, ասեց.— էթա՛նք, պտի պսակվեմ, էթամ. ըսօր հարսանիքս ա։

Զարգյարը վե կացավ, գնացին. գնաց, տեհավ իրա կնիկը ընտեղ նստած ա։ Էլի աչքերին չհավատաց, ասեց.— էթամ տուն դիպնեմ, գա՛մ։

Տղեն ասեց.— Սբոր տուն ես էթում, ուստակնկանը վե կալ, արի՛։

Գնաց, տեհավ կնիկը տանն ա։

Ասեց.— Մ՛յ կնիկ, թագավորի տղեն պսակվում ա, վե կաց, էթա՛նք։

---

[1] Կասկածոտ (Մ. Բ.)։

Ասեց.— Բախտավոր ինձ, ե՞ր եմ տանից դուս էկե, որ ըսօր դուս գամ, էթում ես՝ գնա՛։

Վե կացավ գնաց։ Գնաց, տեհավ կնիկն էլի ընտեղ նստած ա։ Նոր վե կացան, թագարեք քաշեցին, գնացին դպա ժամը։ Գնաց, պսակվեց, եդ դառան էկան տուն։ Էկան, լավ կերան, խմեցին, լավ քեֆ արին։

Լիսը բացվեց, Զարգյարը վե կացավ, գնաց իրանց տուն. գնաց, տեհավ, որ կնիկը անուշ քնած ա։

Զեն տվեց, ասեց.— Վե՛ր, թագավորի տղեն էթում ա, էթանք ճամփու դնենք։

Ասեց.— էթում ես, դո՛ւ գնա, ես չեմ գա, ես ըսքան վախտ տանից դուս չեմ էկե, ո՞ւր պտի էթամ։

Զարգյարը վե կացավ, գնաց։ Գնաց, տեհավ որ իրա կնիկն էլի ըտե նստած ա։

Թագավորի տղեն նիլլավ իրա ձին, Զարգյարն ու թագա հարսը նստեցին փայտոն, պառավին «մնաս բարով» արին, գնացին։

Գնացին, քաղաքից դուս եկան, թագավորի տղեն ասեց.—Դե՛, Զարգյար, դու եդ դա՛ռ, շատ շնորհակալ եմ։

Թագա հարսը Զարգյարի հետ «մնաս բարով» արեց, նիլլավ իրա մարդի թարքը, քշեցին, գնացին։

Զարգյարը եդ դառավ, էկավ հասավ իրա տունը, քառասուն դուռը բաց արեց, մտավ կնկա օթախը, տեհավ, որ կնիկը չկա։ Հասկացավ, որ էն իրա կնիկն էր, թագավորի տղեն տարավ։ Վազեց, նիլլավ կտուրը, որ տենա թե տղեն հեռո՞ւ ա, թե մոտիկ ա։ Տեհավ որ շատ հեռու ա, սրտի հերսիցը իրան քցեց կտրիցը՝ մեռավ։

Թագավորի տղեն վե կալավ կնկանը, գնաց դպա Վիշապը։ Շատ գնաց, քիչ գնաց, հասավ Վիշապի տեղը, տեհավ Վիշապը դուս էկավ, ասեց.— Գալըդ բա՛րին, բերի՞ր։

Ասեց.— Բերի՛։

— Ը՞ս եմ սիրուն, թե Զարգյարի կնիկը,— ասեց Վիշապը։

Ասեց.— Դու օձ ես, ո՞րդիան սիրուն ըլնես, Զարգյարի կնիկը մի հուրի-փարի ա։

Վիշապը մտավ նեքսև, իրա օձի շապիքը թողաց, մի աղջկա շորեր հագավ, դուս էկավ, ասեց.— Թագավորի տղա, ե՞ս եմ սիրուն, թե Զարգյարի կնիկը։

Թագավորի տղեն որ տեհավ՝ զարմացավ, տասը ղաթ Զարդյարի կնկանիցը սիրուն էր։

Ասեց.—Դու տասը ղաթ Զարդյարի կնկանիցը սիրուն ես։ Ի՞նչ էր պատճառը, որ դու դառել իր օձ։

Ասեց.— էդ իմ քիրն ա, երոր տվեցի Զարդյարին, էդ օյինը հանեց իմ քվոր ղլուխը, քառասուն օթախի մեջ դրեց, ո՛նչ լիս էր տեսնում, ո՛նչ արևդակ, դրա համար սրտիս հերսիցը ես դառա օձ։ Շնորհակալ եմ քեզանից, դու ազատեցիր նրան, ես էլ ուրախությունից դառա աղջիկ. Զարդյարի կնիկն էլ քեզ ղուրբան, ես էլ քեզ ղուրբան։

Ասեց.— էթամ Զարդյարի տունը, ինչքան ոսկի, արծաթ կա, հավաքեմ, բերեմ, էթանք։

Էրկու օրվա մեջ գնաց, ինչ կար չկար, վե կալավ բերեց։ Վե կացան գնացին տղի հոր տունը. հերը դաի ու ղուռնով դրանց առաջն էկավ, տարավ տուն, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց, էդ էրկու աղջկա հետ էլ պսակեց։

Նրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Ասանիկ իրեք խնձոր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ անկաչ դնողին։





6· ԽՈՋԱՐԱՆ

Կար չկար, ժամանակով մի թագավոր կար։ Էդ թագավորը շատ զորքա թագավոր էր և մշտական էթում էր ավղուշ անելու։ Մի օր շատ ման էկավ մեջեն, պատահեց մի ջանավարի. էդ ջանավարը արեգակի ղայդա պսպղում էր։

Թագավորը հրամայեց վեզրին, թե.— Մի հնար գտի, բռնենք, ափսո՞ս ա, չսրպանենք։

Բերին տուզաղ[1] դրին, բռնեցին, վե կալան բերին ամարաթ։

Թագավորը հրամայեց, թե.— Մի շուշաբանդ օթախ սարքե՛ք, դնենք մեջը, որ գալողը թամաշ անի։

Օթախը շինեցին, դրին մեջը, աշխարքն էկավ թամաշա։ Տենողը զարմանում, արմանում էր։

Թագավորին ուներ մի մինուճար տղա. եբոր տղեն դառավ տասնիրեք տարեկան, նետվանեղն առավ, էթում էր ավի։ Մեկ օր բիրդան նետվանեղը քցելուն պես նետը շուշեն ջարդեց, ընկավ ջանավարի առաջը։

Տղեն էկավ ջանավարից խնդրվեց, թե.— Տո՛ւ իմ նետը։

Ջանավարն ասեց.— Գնա՛ հորդ բարձի տակիցը բալանիքը հանա, բե՛, հա՛մ նետդ վե կալ, հա՛մ էլ ինձ բրախա՛, էթամ, մեղք եմ, ես քու լավությունի տակից դուս կգամ։

---

[1] Թակարդ (Ս. Բ.)։

— Բա՛ որ իմ հերը ինձ սրպանի։

Ասեց.— Չի՛ սրպանի. դու մինուճար տղա ես։

Տղեն գնաց, բալանիքը վեր կալավ, էկավ, դուռը բաց արեց, ջանավարն ասեց.— Թե որ քու հերը քեզ նեղացնի, ա՛րի ինձ դռի, ես մեջի մեջը, աղբրի կշտին կըլնեմ։

Ասեց ու փախավ գնաց։

Թագավորը որ իմացավ տղեն ջանավարին բրախել ա, ասեց.— Գլուխը կտրե՛ք։

Նազիր-վեզիրը խնդրեցին, թե.— Դո՛ւ ես, մինուճար մի տղա, մի ջանավարի հըմար խի՞ ես սրպանում, տանից դուս ա՛րա, թո՛ղ էթա։

Թագավորը կանչեց վեզրի տղին, հանեց մի բոլ փող տվեց ճամփի ծախս, ասեց.— Ա՛ռ, էս տղին հետդ տա՛ր, կսրպանես՝ դո՛ւ գիտաս, սաղ կթողաս՝ դո՛ւ գիտաս, էլ իմ երկիրը ոտ չպըտի դնի։

Վեզրի տղեն Թագավորի տղի հետ վեր կացան գնացին։

Շատ գնացին, քիչ գնացին, հասան մեջեն. ըստեղ վեզրի տղեն ասեց.— Պտի սրպանեմ ըստեղ։

Թագավորի տղեն շատ լաց էլավ, մուննաթ արեց, որ չսրպանի։

Վեզրի տղեն ասեց.— Կոիդ բազմանդը ո՛ր տաս ինձ՝ չեմ սրպանի։

Ասեց.— Ա՛ռ բազմանդը, չեմ ուզում, քե՛զ ըլնի։

Սրտր վեզրի տղեն բազմանդը առավ, ասեց.— Ըսօրվանից Թագավորի տղեն ես եմ, դու իմ գյադեն ես։

— Գյադեդ եմ, գյադեդ եմ, ճա՛րս ինչ։

Ըտեղ ծառի տակին վեզրի տղեն քնեց։ Թագավորի տղեն գնաց ման դալու։ Ման գալով, ման գալով գնաց աղբրի կուշտը, տեհավ ջանավարը ըտեղ նստած ա։ Լաց էլավ, իրա գլխի էկածը պատմեց ջանավարին։

Ջանավարն ասեց.— Բա՛ն չկա, ես քեզ ընենց կանեմ, որ դու շատ լավ կապրես։ Գնա էդ աղբրի ջրիցը խմա։

Տղեն գնաց խմեց։

— Էդ ծառը մի թափ տո՛ւ,— ասեց ջանավարը։

Տղեն թափ տվեց, քոքըհան էլավ։

Ասեց.— Գնա՛, մեկ էլ ջուր խմա։

Խմեց, էկավ։

Ասեց.— Էդ մենծ ծառը թափ տո՛ւ տենանք։

Թափ տալուն պես քոքիցը հանեց։

Ասեց.— Էդ ուժը բոլ ա քե՞զ, թե էլ տամ։

Ասեց.— Չէ՛, մի քիչ էլ ըլնի, դհա՛ լավ կըլնի։

Ասեց.— Գնա՛ էլի ջուր խմա։

Գնաց խմեց. էկավ էրկու էն ծառի հաստությունից ծառ էլի թափ տվեց ու քոքըհան արեց։

Ասեց.— Բո՞ւ ա։

Ասեց.— Բո՛ւ ա, շնորհակալ եմ։

Տղեն թողաց, գնաց վեզրի տղի կուշտը, ճամփա ընկան գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, հասան մի թագավորի քաղաք։

Վեզրի տղեն խաբար ղրկեց թագավորին, թե ես ֆլա՛ն թագավորի տղեն եմ, գալիս եմ տեսություն։

Թագավորը մարդ ղրկեց, պատվով ընդունեց։

Թագավորը շատ հավանեց էս էրկու տղին էլ, ասեց.— Դու իմ փեսացուն ես, իմ աղջիկը ես պտի տամ քեզ։ Քու նոքարին ի՞նչ գործի դնենք։

Վեզրի տղեն ասեց.— Դո՛ւ գիտաս, ինչ գործի կդնես՝ դի՛։

Թագավորն ասեց.— Կէթա՞ս մեր խոզերը պահելու։

Տղեն ասեց.— Կէթա՛մ։

Գնաց խոզանոցը, տարավ խոզերը արածացնելու։ Սբոր իրիկունն էկավ, խոզերը բերեց, տեհավ ըտեղ մի գերան վեր ընկած ա։ Առավոտը էդ գերանը վե կալավ ձեռը, խոզերը քշեց, գնաց։ Տարավ մինչանք իրիկուն արածացրեց։

Էգսի օրը գերանն առավ գնաց թագավորի բալկոնին թըրը՛փ, թըրը՛փ տվեց. զարթնեցին, էկան, ասին.—Ի՞նչ ես ուզում։

Ասեց.— Մի շահի տվեք, էթամ. պոպոք առնեմ։

Թագավորն ասեց.— Ա՛ռ մի մանեթ։

— Ինձ մանեթը հարկավոր չի՛, ես ո՞րդե տանեմ խուրդեմ, ինձ մի շահի տվեք։

Շահին առավ, գերանովը էս դուքանի դուռը ջարդեց, էն դուքանի դուռը ջարդեց, մի շահու պոպոք առավ, խոզերը տարավ արածացնելու։

Իրիկունը եդ դառավ էկավ, գնաց թագավորի առաջին կանգնեց, ասեց.— Ինձ համար մե կարգին էրկաթե դագանակ շինիլ տու։

Ասեց.— Եքա գերանը ձեռիդ ա, բոլ չի՞։

Ասեց.— Չէ՛, ճիպոտ ա, քսանհինգ փթանոց մի դագանակ շինել տու՝

Թագավորը խոստացավ, որ շինել տա։

Առավոտը էլի էկավ՝ թըրը՛խկ, թըրը՛խկ, տվեց գերանով բալկոնին։

Նըռը դուս էկան, ասեց.— Մի շահի տվե՛ք, պոպոք առնեմ։

Մի շահին տվին, էլի հինգ-տասը դուքանի դուռ ջարդելով պոպոք առավ, էկավ խոզերն առավ գնաց։ Իրիկունը եդ էկավ, գնաց քնեց։

Առավոտը տեհավ իրա էրկաթե դագանակը շինած ա. գնաց վե կալավ, ծանդր ու թեթև արեց, ասեց.— Օ՛հ, էս իմ ուզած դագանակն ա,— դրեց ուսին, խոզերը վե կալավ գնաց։

Խոզերը քշեց տարավ Սև դևի սահմանը։ Տեհավ որ մի եքա դարվազա ա, ասեց.— Կարող ա ըստեղ տուն ըլնի, էթամ տենամ ի՛նչ կա։

Մոտացավ, տեհավ դուռը շինած ա, մի թիքա հեռու կաննեց, էդ դագանակով մի էրկու դըրբ տվեց, կտորտանքը թռան Արևելք ու Արևմուտք, խոզերն արեց նեքսև, տեհավ բաղ-բախչա, եմիշ, ձմերուկ, ամեն բարելիք կա։ Բրախ տվեց խոզերին, ինքը գնաց ծառի տակին քնեց։

Ճաշ էր դառե, Սև դևն էկավ. էկավ, տեհավ դարվազեն ջարդ ու փշուր ա էլած, խոզերը բախչումը եմիշ, ձմերուկ են ուտում, քանդըրտել են։

Ասեց.— Յա՛ռաբ էս ո՞վ պտի ըլնի, որ սիրտ ա արե, էկել ա ըստի։

Գնաց ման էկավ, տեհավ ծառի տակին քնած ա։

Զեն տվեց.— Հողածի՛ն, հողածի՛ն։

Տղեն էդ ձենը լսելուա չվեկացավ։

Ասեց.— Ղո՛ւշն իրա թևովը, օ՛ձն իրա պորտովը սիրտ չէր անի գա ըստե, էս ո՞նց ա, որ դու էկել ես։

Տղեն ասեց.— Ընքան մարդկություն էլ չունես, որ համբերես, քնատեղիցս վե կենամ, նո՛ր կռիվ անես։

— Մենծ թիքեդ անգաշդ կթողամ,— ասեց դևը,— հլա խոսում էլ ե՞ս։

Տղեն վե կալավ, թե.— Մըխելի հեռու կա՛ց, նոր խոսա։

Տղեն վե կացավ, ոտի կաննեց։

Դևն ասեց.— Կովի նոբաթն իմն ա՞, թե քունը։

Տղեն ասեց.—Քո՛ւնն ա, քցա՛։

Դևը, որ մի գուրզ քցեց, ընենց մի թոզ ու դուման էլավ, որ տղեն թոզի միջին չէրևաց։

Դևն ասեց.— Իմ կուռը կոտրվի՛, մի քիչ ծանդր տված չըլնեի, մի էրկու մենծ թիքա մնացած ըլներ՝ ուտեի։

Տղեն ասեց.— Համի նոբաթը ի՛մն ա, դու հենց գիտաս ես մեռե՞լ եմ։

Տղեն քաշեց դագանակը մի ընենց տվեց դևի շլնքաքոքին, որ գլուխը կտրվեց ու գնա՞ց, հլա էթում ա՞։

Տղեն վե կացավ, դևի ամարաթը մտն էկավ, գնաց տեհավ մի օթախի միջի տասը հատ ձի, մարդիկը վրեն ասպաբավորված[1] հագիր։

Տղեն ասեց.— Ի՞նչ մարդիկ եք։

Ասեցին.— Մենք ղոչաղ մարդիկ ենք, դևը մեզ բերել բռնավոր ա արել. ո՛ր մեզ բրախես, ժամանակին քու հավարին մենք կհասնենք։

Տղեն դևի ձին էլ քաշեց, մի ձեռք թամուզ շոր կապեց, ձիանոնց պոչերից մի-մի մազ քաշեց, քոմմըքին բրախեց։ Գնացին։ Ինքը խոզերը վե կալավ, էկավ թագավորի տունը։ Էկավ, տեհավ՝ դափ ու զուռնեն ածում են։

Ասեց.— Էս ի՞նչ խաբար ա։

Ասին.— Թագավորն իրա աղջիկը տալիս ա էդ նոր էկած թագավորի տղին։

Տարավ խոզերն արեց նեքսև, գնաց իրա տեղը նստեց։

Թագավորի պուճուր աղջիկն էկավ, բարև տվեց, ասեց.— Բա՛րև քեզ։

Ասեց.— Ա՛սու բարին, ի՞նչ կա։

Ասեց.— Էկել եմ քեզ հետ մի քիչ խոսամ։

Ասեց.— Ես խոզարած մարդ եմ, ինձ հետ ի՞նչ պտի խոսաս, խոզերի ֆո՞տին ես կարոտ, թո՛ղ գնա։

Ասեց.— Իմ սիրտն ուզում ա քեզ հետ մի քիչ խոսամ։

Ասեց.— Գնա՛, գնա՛, գնա՛, հարկավոր չես։

Աղջիկը լաց էլավ գնաց, համա ուշըմիտքը դպա տղեն էր։ Գնաց հաց շինեց, վե կալավ էկավ, դուռը թըխկթըխկացրեց։

---

[1] Զինված (Ս. Բ.)։

Տղեն վե կացավ, դուռը բաց արեց, տեհավ էլի թագավորի աղջիկն ա, ասեց.— Ի՞նչ ա։

Ասեց.— Հաց եմ բերե, դուռը բաց արա՛, իրար հետ ուտենք։

Հացն առավ ձեռիցը, իրան բրթեց, դուռը շինեց։

Աղջիկը վեր ընկավ, վե կացավ, լաց ըլնելով գնաց։

Էգսի օրը էլի վե կացավ, էկավ բալկոնի ճաղերին՝ թըրը՛խկ, թըրը՛խկ, տվեց։

— Ի՞նչ ա, ա՛յ մարդ։

— Մի շահի տվե՛ք, էթամ պոպոք առնեմ։

Մի շահին տվին, գնաց։ Իրիկունը ո՛ր ետ դառավ, տեհավ սաղ քաղաքը սուգ ա անում։

Հարցրեց.— Էս ի՞նչ ա պատահե։

Ասեցին.— Դևերն էկել են, ուղում են թագավորի մենծ աղջկանը տանեն, թագավորը զորքը հավաքում ա, էթա կռիվ անի։

Տղեն խոզերն արեց նեքսև, տեհավ թագավորի պուճուր աղջիկը էկավ մտավ նեքսև, շատ լաց էլավ։

Տղեն ասեց.— Ախ՛ ես լաց ըլնում։

Ասեց.— Ջանս դուս գա՛, քվորս տանում են դևերը։

— Բա դու խի՛ էս էկե հմի։

— Էկել եմ քեզ խնդրվեմ, որ իմ քվորը էթաս ազատես։

— Ես,— ասեց,— խոզարած մարդ եմ, ես անջախ իմ խոզերը պահեմ, խի՛ չես էթում ձեր փեսին խնդրում, թագավորի տղա ա։

Ասեց.— Նրա բանը չի՛։ Էդ դագանակը որ քու ձեռին ա, դու ամեն բան կարաս անի։

Խոզարածը բրթեց աղջկանը, թե.— Գնա՛, գնա՛, գլուխս մի՛ տանի։

Աղջիկը լաց ըլնելով գնաց։

Առավոտը վե կացավ, դագանակը դրեց ուսին, գնաց բալկոնը, թըրը՛խկ, թըրը՛խկ։

Ընդրանք լալիս են, մղկըտում, թե. «Դևերն էկե՛լ են, ի՛նչ պտի անենն», սա թե. «Իմ շահին տվե՛ք, ես վռազ եմ, խոզերը մնացին տանը»։

Մի շահի տվեցին, գնաց պոպոք առավ, խոզերը վե կալավ գնաց։ Տարավ խոզերը հանդումը բրախեց, ծոցիցը Սև դևի ձիանոնց մազերը հանեց, կրակեց, տեհավ դևի ձին, տասը ձիավորի՝ հետ էկան։ Դևի ձիու վրի շորերը վե կալավ հագավ, նիլլավ ձին, քշեցին։

Թագավորը իրա ղոշունը առել էր, դուս էկել դևերի աղաքը, հեռվանց տասնըմին ձիավոր էկան, իրանց առաջովը տվեցին չափարխանի[1], գնացին։ Գնացին հասան դևերի ղոշնին, տվին, էդ դևերին, ընենց ջարդեցին, որ դևերից մնաց մի ֆոգի, էն էլ տղեն բռնեց, ատամները քաշեց, տվեց ճակատին, ասեց.— Գնա՛ քու տիրոնչը խաբար տա՛ր։

Նստով ձիանոնց գլուխը եդ դարձրին ու եդ գնացին։

Թագավորը ձեն տվեց ղոշունին.— Բռնե՛ք, հա բռնե՛ք, բռնե՛ք, մի փեշքաշ տանք,—ձիավորները փախան, գնացին։

Տղեն վեր էկավ ձիուցը, շորերը փոխեց, ձիավորներին բռախեց, խոզերը վի կալավ, էկավ դպա տուն։ Տեհավ սաղ քաղաքը քեֆի մեջ ա, դափ ու զուռնեն ածում ա, հա՛ ածում։ Ինքը գնաց, քաշվեց իրա խոզանոցը։

Թագավորի պուճուր աղջիկը մի լավ խոնչա շինեց, առավ գնաց խոզարածի կուշտը։

Տղեն դուռը բաց արեց, ասեց.— Հը՛, ի՞նչ կա ա՛ղջի։

Ասեց.— Ես քու կարոտը քաշում եմ, հաց եմ բերե, որ իրար հետ ուտենք։

— Չէ՛, չէ՛, հարկավոր չի, գնա՛ բանիդ,— ասեց տղեն,— խոնչեն ձեռիցն առավ ու իրան բրթեց դուս, դուռը շինեց։

Աղջիկը լաց ըլնելոն գնաց տուն։

Տղեն առավոտը վե կացավ, իրա շահին առավ, պոպոքը լցրեց ջերը, քշեց խոզերը, գնաց դուս էկավ Կարմիր դևի սահմանը։

Տեհավ մի դարվազա, ասեց. «էրևում ա՝ էս էլ ա դևի տուն, տանեմ խոզերս մի կուշտ ուտացնեմ»։

Հասավ դարվազի կուշտը, էրկու դագանակ տվեց, դռան ամեն մի կտորը ընկավ Հալեպ ու Զինիմաչին։

Խոզերը քշեց նեքսև, տեհավ բոստան ա, ասեց.— Էս լավ էլավ, թո՛ղ մի կուշտ ուտեն։

Ինքը գնաց մի մենծ ծառի շվաքում պառկեց։

Ճաշվա դեմը Կարմիր դևն էկավ դպա տուն, տեհավ դարվազեն ջարդված ա՝ արինը գլուխը տվեց. մտավ նեքսև, տեհավ խոզերը բոստանը քանդռտում են, բարկացած դես ու դեն ընկավ, տեհավ տղեն ծառի տակին քնած ա, ձեն տվեց.— Հողածի՛ն, հողածի՛ն, վե կա՛ց։

---

[1] Արագ (Ս. Բ.)։

Տղեն զարթնեց, տեհավ կարմիր դևը գլխավիրևը կաննած ա։

— Ի՛նչ ես ախմախի պես էկե գլխավիրևիս կաննել, չե՞ս թողում քնեմ, դինջանամ։

Դևն ասեց.— Մննծ թիքեդ անկաջդ կթողամ, ի՛նչքան ինձ վնաս ես տվել, համի էլ բերան ունես ըտենց խոսալու։ Ղուշն իրա թևովը, օձն իրա պորտովը չէր սիրտ արե գալ ըստեղ, դու ո՞նց ես էկե, հլա բարկանում էլ էս վրի՞ս։ Ատամներս եռ ու քոր ա գալի, քու մննծ թիքեն կթողամ անկաջդ։

Տղեն դագանակն առավ ու վե կացավ կաննեց. դևին ասեց.— Նոբաթը քո՛նն ա, կուվա՛։

Դևը մի գուրզ քցեց դրան. թող ու դումանը վե կացավ, տղեն միջին չէրևաց։

Դևն ասեց.— Ափսո՛ս, մի կտոր էլ ա չմնաց, ուտեի։

Երոր թողը սկսեց բարակիլը, տղեն ասեց.— Նոբաթն ի՛մն ա։— Տարավ բերեց դագանակը ո՛ր չտվեց շլնքաքոքին, գլուխը պոկվեց ու գնաց. գնաց, դիպավ Մասսա սարին, Մասիսը տեղիցը ժաժ էկավ։

Տղեն վե կացավ էդ դևի ամարաթի մեջ ման էկավ, տեհավ մի օթախ, տասը ձիավոր միջին հազիր կաննած։

Ասեց.— Ի՞նչ մարդ եք։

Ասեցին.— Բռնավոր ենք, կարմիր դևն ա բերե. մեզ բաց թո՛ղ, մենք քու հավարին կհասնենք։

Տղեն գնաց կարմիր դևի կարմիր ձին էլ բերեց, մի թամուզ կարմիր շոր վրեն կապեց, էդ ձիանըքոնց պոչերիցը քաշեց, բիրադնին բրախեց։ Նդ դառավ, խողերը վե կալավ, էկավ տուն։

Էկավ տեհավ սաղ քաղաքը քեֆի մեջ ա, ուրախություն էն անում։

Խողերը տարավ տուն, թագավորի պուճուր աղջիկն էկավ կուշտը, ասեց.— Վե՛, է՛թանք իմ օթախը, միշնեկ քվորս նշանդրեքն ա, սաղ քաղաքը ուտում, խմում ա, ի՛նչ ա, դու ըստեղ վեր էս ընկե։

Տղեն ասեց.— Գնա՛, գնա՛, ես ձեր լայաղին մարդ չեմ, ես մի խոզարած եմ։

Ասեց.— Ես քեզ սիրում եմ, դու ինձ համար թագավոր ես։

— Գնա՛, գնա՛, ես չե՛մ գա,— ասեց տղեն,— աղջկանը բըրթեց, դուռը շինեց։

Աղջիկը գնաց մի լավ խոնչա շինեց, բերեց տղին. ինքը դուրը բաց արեց ու մտավ նեքսև։

Ասեց.— Հաց եմ բերե, վե կա՛ց, իրար հետ ուտենք։

Տղեն խոնչեն առավ ձեռիցը, աղջկանը բրթեց, թե.— Էս քու տեղը չի՛, դու գնա՛։

Առավոտը վե կացավ, էլի թըրը՛կ, թըրը՛կ.— Իմ շահին տվե՛ք, պոպոք առնեմ,— ասեց։

Պոպոքն առավ գնաց։ Իրիկունը էկավ, տեհավ որ սաղ քաղաքը էլի սուգ ա անում։

Հարցրեց, թե.— Էս ի՞նչ խաբար ա։

Ասեցին.— Առավոտը դևերը պտի գան, որ թագավորի միջնեկ աղջկանը տանեն։

Խոզերը բերեց տուն. թագավորի պուճուր աղջիկը լաց ըլնելով էկավ մտավ նեքսև, ասեց.— Վերև աստված, ներքև դու, ես գիտամ, որ իմ մենծ քվորը դու ազատեցիր, իմ միջնեկ քվորն էլ ազատա՛։

Ասեց.— Գնա՛, գնա՛, ձեր թագավորի տղին, վեզրի տղին ասա՛, էթան ազատեն, ես մի խոզարած եմ, ես ի՞նչ կարամ անի։

Ասեց.— Չէ՛, նրանց բանը չի՛, ազատես՝ դո՛ւ կազատես։

Տղեն վե կացավ, կռնիցը բռնեց, քցեց դուրը, աղջիկը լաց ըլնելով գնաց։

Առավոտը վե կացավ, խոզերը վե կալավ գնաց հանդը, մաղերը կրակին տվեց, Կարմիր դևի ձին, մեկ էլ քսան ձիավորն էկան։ Հագավ կարմիր շորերը, նիլլավ ձին ու քշեց գնաց։

Թագավորը մտիկ տվեց տեհավ, որ մի թոզ ա բանձրացել, ասեց.— Աչքներդ լի՛ս, հրես գալիս են, մեզ կազատեն։

Երոր մոտացան, թագավորի ձեռ ու ոտը ուրախությունից իրար խառնվեց։— Տղե՛ք, ճամփա՛ տվեք։

Կրակի պես քշելով էկան անց կացան, ընկան դևերի վրեն, ջարդ ու խուրդ արեցին։

Բիրադնին ջարդեցին, մնաց մի հոգի. տղեն բռնեց, անկաջները կտրեց, ասեց.— Դե գնա՛, խաբար տա՛ր։

Ձիավորները եդ դառան, թագավորը ձեն տվեց ղոշընին.— Բռնե՛ք, հա, բռնե՛ք, ընդրանց փեշքաշ տա՛նք։

Ընդրանք ձիանիքը չափարխանի քշեցին գնացին։

Թագավորն ասեց.—Վա՛յ, չէլա՜վ, մի՛ բռնեինք տենայինք՝ ըդոնք ի՛նչ մարդիկ ին։

Իրիկունը որ տղեն գալիս ա տուն, տենում ա սաղ քաղաքը թնդում ա, քե՜ֆ, ուրախություն էն անում։ Ինքը գալիս ա իրա խոզանոցը, նստում։

Թագավորի պուճուր աղջիկը վեր ա կենում, վազելով գալիս դրա կուշտը, ասում ա.— Վե՛ կաց, է՛թանք իմ օթախը, ուտե՛նք, խմե՛նք, քեֆ աննենք, տենում ես՝ սաղ քաղաքը ուտում, խմում, քեֆ ա անում։

Տղեն ասում ա.— Ես խոզարած մարդ, ես ի՞նչ գործ ունեմ ձեր օթախումը, վե կաց գնա՛, վե՛ կաց։

Աղջիկն ասում ա.— Իմ սրտի սիրականը դու ես, ի՛նչ ես կեղտոտ տեղը նստե, վե՛ կաց, վե՛ կաց, է՛թանք։

— Չէ՛, չէ՛, ես մի խոզարած մարդ եմ, ձեզ չեմ սազի։

Աղջիկը վե կացավ, փոր ու փոշման գնաց։

Գնաց, մի լավ խոնչա հագրեց, վե կալավ բերեց, ասեց.— Չես գալիս, չե՜ս, ըտեղ էլ ա նստենք իրար հետ հաց ուտենք։

Տղեն ասեց.— Վե՛ր, վե՛ր, վեր գնա՛, էս ֆոտին դու չես կարա հաց ուտի։

— Ք՛ու կշտին ըլնեմ, ջայնա՛մ թե ֆոտ կգա։

Տղեն վե կացավ, կուռը բռնեց.— Դե գնա՛, գնա՛,— ասեց,— աղջկանը քցեց դուռը՝ դուռը եդ արեց։ Աղջիկը լաց ըլնելով գնաց։

Առավոտը տղեն էլի վե կացավ, խոզերին վե կալավ գնաց։ Գնաց, հասավ Սիպտակ դևի սահմանը, տեհավ մի դարվազա, ասեց.— Կարող ա է՛ս էլ դևի տուն ըլնի։

Քշեց, գնաց։ Գնաց հասավ դարվազին, տեհավ շինած ա, էդ իրա քսանհինգ փեթանոց դազանակովը ո՛ր մի անգամ տվեց, դուռ-մուռ էլ չէրևաց։ Խոզերը արեց նեքսև, տեհավ եմիշ, ձմերուկ, ամե՜ն բան կա։ Խոզերը բրախեց, ինքը գնաց աղբրի վրա լվացվեց, ծառի տակին պառկեց, քնեց։ Ճաշվա վախտը Սիպտակ դևն էկավ տեհավ՝ դարվազեն ջարդված ա. սրտի հերսիցը գլխի ղուղը ժաժ էկավ։

Մտավ նեքսև, տեհավ խոզերը ընենց են քանդրտում, ուտում, ո՛ր պրծար. ման էկավ տեհավ՝ մի մարդ ծառի տակին պառկած ա, ձեն տվեց.— Հողածի՛ն, հողածի՛ն, վե՛ր,— ասեց, ու ոտը տվեց գեննին՝ ժաժ էկավ։

Տղեն զարթնեց, ասեց.— Ի՞նչ էլավ քեզ, չիր կարա մի քիչ համփերի՞, քնեի, դինջանայի։

— Օխտը տարի ա՝ իսանի միս չեմ կերե, ատամներս եռըքոր ա գալի, շատ մի խոսա՛, վե՛ կաց, քու մենծ թիքեն թողամ անկաջդ։

Տղեն դագանակն առավ կաննեց, ասեց.— Նորաթը քունն ա, տո՛ւ։

Սիպտակ դևը եդ կաննեց ու մի գուրզ քցեց, ընե՞նց մի թոզ ու դուման էլավ, որ տղեն միչին կորավ։

Դևն ասեց.— Գնաց գեննի տակը, մի կտոր էլ ա չմնաց՝ ուտեի։

Երոր թողը քաշվեց, տղեն ասեց.— Ի՞նչ շատ էս պարծենում, ես տեղս կաննած եմ, դե հմի դու տես, նորաթն իմն ա։

Ասեց, դագանակը պըտըտեց ու մի դըրբ տվեց շըլընքաքոքին։

Դևն ասեց.— Մին էլ տո՛ւ։

Տղեն ասեց.— Մորիցս մեկ եմ էլե, իմ դըրբը մեկ ա։

Դևի գլուխը պոկվեց ու գնաց, հլա էթում ա։

Տղեն մտավ դևի ամարաթը, տեհավ տասը սիպտակ ձիավոր, ասեց.— Ի՞նչ մարդ եք դուք։

Ասեցին.— Մենք բռնավոր ենք, Սիպտակ դևը մեզ բերել ա ըստեղ բռնել ա. մեզ բաց թո՛ղ, ինչ նեղությունի մեջ ըլնես՝ մենք կազատենք քեզ։

Գնաց Սիպտակ դևի ձին էլ բերեց. մի ձեռք սիպտակ շոր ջոկեց ձիու վրին կապեց, ձիանքանց պոչերիցը մի-մին մազ քաշեց, դրեց ծոցը, ըտրանց բրախեց։ Եդ դառավ, խոզերը քշեց, էկավ տուն։

Թագավորի պուճուր աղջիկն էլի վազելով էկավ, ասեց.— Վե՛ր, էթանք մեր օթախը։

Ասեց.— Խոսքը մի՛ հետ կասեն, չե՛մ գալի, ես մի խոզարած մարդ, դու թագավորի աղջիկ, ո՛նց կսազենք։

Ասեց.— Ես էլ քե՛զ ղուրբան, իմ հերն էլ քե՛զ ղուրբան, իմ մերն էլ քե՛զ ղուրբան, դու ինձ համար աշխարքի բարեբար ես։

— Գնա՛, գնա՛, գլուխս մի՛ տանի,— թևիցը բռնեց, տանիցը դուս արեց ու դուռը եդ արեց։

Աղջիկը լաց ըլնելով թողաց, գնաց։

Գնաց, մի լավ խոնչա շինեց բերեց, ասեց.— Ա՛րի իրար հետ նստենք, ուտենք։

Ասեց.— Էդ դի՛ ըստեղ, դու վե կաց գնա՛։

Աղջիկն ասեց.— Սըպանես էլ, չե՛մ էթա։

Վե կացավ, աղջկա կռնիցը բռնեց, քցեց դուրը։

Առավոտը էլի խոզերը առավ, գնաց հանդը, մնաց ընչանք իրիկուն, իրիկունը եդ դառավ էկավ։ Էկավ տեհավ վա՛յ-վա՛յը դրել են քաղաքի մեջը։

Էկավ խոզանոցը, թագավորի պուճուր աղջիկը լաց ըլնելով էկավ, դուռը բաց արեց ու ընկավ տղի ոնները, ասեց.— Ո՛նց որ ազատեցիր իմ էրկու քվորը, ինձ էլ պտի ազատես, հմի էլ դևերը էկել են ինձ տանելու։

Տղեն ասեց.— Տանում են՝ տանեն, ե՞ս ինչ անեմ։

Աղջիկն ասեց.— Ես քու գլխին ղո՛ւրբան, ոնց որ քվորտանցս ազատեցիր, ի՛նձ էլ կազատես։

Ասեց.— Գնա՛ քու բանին, իմ ձեռիցը բան չի գա, ես խոզաբուծ մարդ եմ, ես գիտամ՝ իմ խոզերը, գնա՛, թագավորի տղեն, վեզրի տղեն կազատի քեզ։

— Ա՛յ ֆողեմ նրանց գլուխը, նրանց ձեռիցը ի՞նչ կգա։

Տղեն վե կացավ, աղջկա կռնիցը բռնեց, ասեց.— Գնա՛, գնա՛։

Աղջիկը վե կացավ, լաց ըլնելով գնաց։ Գնաց մի խոնչա հաց հաղրեց, առավ էկավ։

Ասեց.— Էլի էկա՞ր, քու էրեսը բոշի էրե՞ս ա։

Ասեց.— Հաց եմ բերե, քեզ սոված հո՛ չի թողա։ Նստի՛, իրար հետ ուտենք։

Տղեն նստեց։ Աղջիկը մի յանիցը ուտում էր, մի յանիցը աչքը քցում տղին՝ լաց ըլնում։

Տղեն ասեց.— Խի՞ ես լաց ըլնում։

Ասեց.— Ջանս դուս գա, լաց կըլնեմ, բա չե՞մ ըլնի, առավոտը դևերը ինձ պտի տանեն։

— Ոնց որ քվորտանցդ տարա՞ն։

— Քվորտանցս ազատեցիր, ինձ չես ազատի։

Ասեց.— Քե՛զ էլ կազատեմ, համա մարդի բան չասես։

Գնաց, տեհավ մերը իրա օթախումն ա։

Մերը տեհավ, որ ախչիկը ծիծաղում ա, ասեց.—Ի՞նչ ա պատահել, առավոտը դևերը քեզ պտի տանեն, դու ծիծաղում ես։

Ասեց.— Ա՛յ մե՛ր, իմ քվորտանց աղատողը ինձ էլ կազատի։

Ասեց.— Բախտավոր ես, քե՛զ էլ կազատեն։

— Ինձ խոսք տվեց։

— Ո՞վ։

— Իմ քվորտանցը աղատողը։

— Մի ասա՛, տենանք ո՞վ ա։

— Մարդի բան չես ասի՞։

— Չէ՛։

— Մեր Խոզարածը։

— Ի՞նչ ա ասում։

— Ա՛ստված վկա։

— Բա էթանք ես էլ խնդրվեմ։

Ասեց.— Որ իմանա թե քեզ ասել եմ, ինձ էլ կսըպանի, քեզ էլ։

Էգսի առավոտը թագավորը իրա ղոշումը հավաքեց, գնաց դեվերի աղաքը կաննեց, համա շատ երկուղ էր անում, հրոպե-հրոպե թամաշ էր անում, թե էն սարիցը ձիավորներ գալիս են, թե չէ։ Մըն էլ տեհավ մի սիպտակ ձիավոր եռեսուն ձիավորների հետ էկավ։

— Տղե՛ք, աչքներդ լի՛ս,— ասեց,— ճա՛մփա, ճա՛մփա, ճամփա բա՛ց արեք։

Ճամփա տվին, ձիավորներն էկան անցան, ընկան դևերի վրա, քշի, հա՛ քշի, տուր հա՛ տուր, ջարդա հա՛ ջարդա, ընենց ջարդեցին, մնաց մի հոգի։

Ձիավորը բռնեց անկաջները կտրեց, պինչը կտրեց, ասեց.— Դե՛ գնա, խաբար տա՛ր։

Եդ դառան։ Թագավորը իրա ղոշընին ասեց.— Ընենց արե՛ք, որ կարենաք բռնի։

Ձիավորները ո՛ր մոտացան թագավորին, տղեն ասեց.— Դուք քշե՛ք, գնացեք, ինձ բռնում են, թող բռնեն։

Ձիավորները քշեցին գնացին։ Տղեն հանեց դանակը, բիլակը մի քիչ արնացրեց, կամաց քշելով գնաց։ Էկան տղին բռնեցին, տարան թագավորի մոտը։

Թագավորը վազեց, տղի ձիու ճակատը պաչեց, կռացրեց տղի ճակատն էլ պաչեց, ասեց.— Իմ թագավորությունը քեզ ղուրբան։

Տեհավ կռիցը արին ա գալի, այլուխը չեբիցը հանեց, կապեց կուռը, հենց որ կապեց, տղեն ձիուն էրկու օրզանդու տվեց՝ թռավ գնաց։

Տղեն ձին բրախեց, խոզերն առավ, էկավ տուն։ Էկավ տուն, տեհավ դաի ու զուռնա, չրաղդան, ուտի՛լ, խմի՛լ, քեֆ անի՛լ։ Թագավորի պուճուր աղջիկը մի լավ խոնչա շինեց, վե կալավ էկավ, նստեցին, իրար հետ անուշ արեցին։

Թագավորը կնկանը պատմեց, թե մի սիպտակ ձիավոր եռեսուն ձիավորով էկավ դևերին ջարդեց, էդ ձիավորին բռնեցին, կուռը յարալու էր էլե, իրա այլուխը հանեց, կապեց. կապեց, ուզում էր բերի տուն, ձիուն օրղանգվով տվեց՝ փախավ։

Թագավորի կնիկը ծիծաղում ա։

Թագավորը հարցնում ա.— Ի՞նչ ես ծիծաղում։

Ասում ա.— Քու ասած ձիավորը մեր խոզարածն ա։

— Ի՞նչ ա ասում։

— Դրուստ եմ. ասում, առավոտը կանչա՛, հարցրա՛։

Թագավորը ղրկեց էն հրոպպեին կանչեց, տեհավ թևը կապած ա, քանդեց՝ տեհավ իրա այլուխը, ասեց.— Էս ի՞նչ բան ա։

Ասեց.— Սրոր թագավորի տղեն կըլնի խոզարած, վեզրի տղեն կըլնի թագավորի տղա, պարզ բան ա թագավորի տղեն իրան կտա գժությունի։ Ջես հավատում՝ կանչա քու թագավորի տղին, տե՛ս իմ բազմանդը նրա կռին ա՞, թե չէ։

Թագավորը կանչում ա փեսին, տենում ա, որ կռան բազմանդը դրանն ա, ձեռաց ձեն ա տալի.— Ջանլա՞թ։

Ջանլաթները գալիս են, գլուխը կտրում։

Բազմանդը հանըմ ա տալիս տղին, ասում.— Իմ պուճուր աղջիկն էլ քե՛զ փեշքաշ։

Օխտն օր, օխտը գշեր հարսանիք են անում, պսակում։ Մի հինգ օրից եղը կնկանը առնում ա՝ էթում ա իրա երկիրը, տենում ա հերը մեռած ա ըլնում, ինքը նստում ա թագավոր։

Նրանք հասան իրանց մուրազին, ինչ մարդ էլ կարոտ ա՝ հասնի իրա մուրազին։

Աստանից իրեք խնձոր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



7. ԿՈՄԲԱԼ ՏՈՒ...

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ դառն-աղքատ, օրեն հացի մուրացկան են ըլնում։

Ասսու իրան օրը կնիկը կպնում էր մարդի յախեն.— Ա՛յ մարդ,— ասում էր,— ընչանք ե՞ր պտի ըսենց աղքատ, օրվա հացի կարոտ մնանք. ըսենց հո չի՞լնի, մընք էլ մեղք ենք, սովից կոտորվեցինք. վե՛ գնա մի աշխատանքի տուտ բռնա, փո՛ղ աշխատա, բե սթար անենք, գլուխ պահենք, ընչանք տենանք վերջներս ի՞նչ ա ըլնում, ըսենց պարապ-սարապ ման գալոն ի՞նչ կըլնի։

— Ի՞նչ անեմ, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— փեշակ չունեմ, որ բանացնեմ, ֆահլություն էլ չեմ կարա անի, ի՛նչ անեմ, ո՛ր ջուրն ընկնեմ [1], հո չի՞լնի էթամ սրա, նրա դուռը ծեծեմ, ձեռս մեկնեմ, ողորմություն ուզեմ, հաց հավաքեմ, յա թե չէ էթամ գողություն անեմ, մարդ սըպանեմ, որ ինչ ա՝ պտի ապրենք։

— Ես ի՛նչ անեմ,— ասում ա,— որ կնիկ չիր կարա պահի, խի՞ իր ուզում [2]։

---

[1] Գրաման ձեռագրում այս արտահայտության փոխարեն եղել է. «Գլուխս ո՛ր քարին տամ», որը չնչել է բանահավաքը (Ս. Կ.):

[2] Գրաման ձեռագրում այս բառին հաջորդում է. «Քա ճո մենք սոված չպտի մնոնենք», որը բանահավաքը չնչել է (Ս. Կ.):

Ըսեն, կնիկը դնում ա իրան անզգամությունը, մարդի յախից ձեռը չի քաշում, ամեն օր կռիվ, դավի ա անում, թե.— Գնա՛, աշխատանք արա՛, որ սոված չմնանք։

Խեղճ մարդի ամալ-աջալը ո՛ր կտրում ա, տենում ա կնկա ձեռիցը չի կարում ազատվի, ասում ա. «Գլուխ առնեմ, վե կենամ էթամ մի դհով, աշխարե-աշխար, երկրե-երկիր ման գամ, բալքի աստոծ ինձ մի լիս ու ճար ա անում, մի աշխատանքի տուտ եմ բռնում, մի քանի շայի աշխատեմ, բերեմ սևացնեմ սրան, յախես ազատեմ սրա ձեռիցը»։

Մի քանի օրվա ճամփի թաղարեք ա տենում, վե կենում ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի ամարաթի ա ռաստ գալի։ Էթում ա դուզ էդ ամարաթի դուռը ծեծում։ Գալիս են դուռը բաց անում։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում են,— խի՞ ես էկե։

— Ղոնաղ չի՞ք ուզի,— ասում ա,— ճամփորդ եմ, մի քանի օր ըստե մնամ, էլի վե կենամ, էթամ իմ բանին։

— Ղոնաղն աստունն ա,— ասում են,— խի՛ չենք ուզի։

Դրան աղաք են անում, բերում ամարաթը։

Հացի վախտը ո՛ր գալիս ա, բերում են դաստախունը բաց անում, չորս բոլորը նստոտում։ Էդ ղոնաղը տենում ա դաստախանի վրեն մի պուճուր Քարից սավայի, որ ասես, զադ չկա դրած. մնում ա զարմացած նրանց էրեսին մտիկ անելոն։

Ննանա էդ ամարաթի տերը էդ Քարը վեր ա ունում, դնում լիզվի տակը, ասում.— Ա՛յ Քար, սոված ենք, հա՛ցը քցա։

Ասելու բաշտան մըն էլ ի՛նչ ա տենում՝ է՛լ լավ-լավ էփած կիրակրներ ասես, է՛լ տեսակ-տեսակ, լավ-լավ խաշած ձկներ ասես, է՛լ տապակած հավեր ասես, է՛լ ղազեր ասես, է՛լ ջուռա-ջուռա ֆորսի մսեր ասես, մի խոսքով՝ ասսու ի՛նչ բար ու նուբար ասես, ի՛նչ խորակ ասես՝ էկավ լցվեց դաստախունը։ Քոմմքով կերան, կշտացան, բերաննները սրբեցին, ասսուն փառք տվին, էն դիհը կաննեցին։

Ամարաթի տերը էլի Քարը դրեց լիզվի տակը, ասեց.— Ա՛յ Քար, հացը հավաքա՛։— էն սհաթը դաստախունը դարտըկվեց, որ ասես, մի զադ էլա չմնաց դաստախանի միջին։ Դաստախունը ծալեցին, վե կալան, էն Քարն էլ տարան մի տեղ պահեցին։

էդ ղոնաղը ըստոնք որ տեհավ, աչքը մնաց էդ Քարի վրեն, միտքը բիրդան փոխվեց. «Ո՛նց անեմ, ո՛նց չանեմ,— ասեց,— որ էս Քարը մի ֆանդով գողանամ, ըստիան ծլկվեմ, էթամ»։

Էդ գշեր, որ բիրադի մննում են տեղերը քնում, ոտքը[1] հանդարտվում ա, էդ ղոնաղը վեր ա կենում, ուսուլով էթում, ման գալի, էն հունարով Քարը գտնում, վեր ունում, դնում ջեբը, մոտանում ա դռանը, որ բաց անի, փախնի, բիրդան դուռը ձեն ա տալի. «Ա՛յ հարա՛յ, է՛կեք, հա՛սեք, բռնե՛ք, որ ղոնաղը Քարը տարա՛վ»։

Էս ձենի վրա ղոնաղը ափալ-թափալ Քարը էլ եդ տանում ա դնում իրա տեղը, ինքն էլ սուս ու փուս էթում մննում տեղերը, դաստաքուն տալի։

Ամարաթի տերը ձենը որ լսում ա, ալբիալը քնատեղիցը վեր ա թռնում, ճրագ վառում, էթում ա տենում, որ Քարը իրա տեղին ա, եննա գալիս ա ղոնաղին ա ակը տալի, տենում ա, ղոնաղն էլ իրա տեղերումը քնած ա։

— Բա՛ս կա, չկա,— ասում ա,—մեր դուռն ա սուտ ասե, ղուր տեղը մեզ դիվադաթար արե։— Գալիս ա թեք ընկնում, քնում։

Անց ա կենում մի վախտ, էդ ղոնաղը տենում ա ամարաթի տերը քնեց, էլի վեր ա կենում, ուսուլով էթում Քարը վեր ունում, հենց ուզում ա դուռը բաց անի, դուռը էլի ձեն ա տալի. «Ա՛յ հարա՛յ, է՛կեք, հա՛սեք, ղոնաղը Քարը փախցնում ա»։

Ղոնաղը էլի վռազ-վռազ Քարը տանում ա դնում իրա տեղը, ինքն էլ ափալ-թափալ էթում ա մննում տեղերը՝ տազ անում, սաբի թե քնած ա։

Ամարաթի տերը էս ձենի վրեն վե թռավ տեղիցը, էլի ճրագ վառեց, գնաց տեհավ Քարը ընդե ա. գնաց ղոնաղի կուշտը, տեհավ ղոնաղն էլ իրա տեղերումն ա քնած։ Ինքն իրան շատ հերսոտեց, որ ըս էլ էրկու հետ դուռը զուր տեղը իրան վեր ա կացնում. եննա փոր ու փոշման գնաց մտավ իրա տեղերը, քնեց։

Չանցկացավ մի սհաթ, ամարաթի տերը որ աչքը կպցրեց, ղոնաղը էլի վե կացավ, ուսուլով գնաց դպա Քարը. էլի ուզեց դու-

---

[1] Գրաման ձեռագրում այս բառին նախորդում է. «Գշերվա մի վախտ որ...», որը բանահավաքը ջնջել է (Ս. Կ.)։

ոը բաց անի, դուռը էլի ձեն տվեց. «Ա՛յ հարա՜յ, հա՛սեք, ղոնաղը Քարը տանում ա»։

Ղոնաղը էլի տարավ Քարը դրեց իրա տեղը, ինքն էլ գնաց իրա տեղերը մտավ, տազ արեց։

Ամարաթի տերը դռան ձենի վրեն էլի զարթնեց. համա էն սրտի էր էս հետ, որ դրուստ էր էլե՝ ղոնաղին պտի փարչա-փարչա աներ թողար, էնքա՛մ հերսոտել էր։ Էլի տեսավ զադ չկա՝ ղոնաղն ընդե ա քնած, Քարն էլ իրա տեղումն ա։ Բարկացած վրա ա հասնում դռանը, կրնկահան ա անում, քցում էն դիհը։

— Բա՛ էս գշեր,— ասում ա,— մեզ չպտի թողաս աչքներս կպցնե՜նք, ըս էլ իրեք հետ վեհ կացրի՛ր, թե՝ Քարը տանում են. Քարս որն ա, զադս որն ա, էն խեղճ ղոնաղն հրեն իրա համար սուս ու փուս քնած ա. ես էլ քեզ էս օրը կքցեմ, տենանք հմի ո՜նց ես ձեն հանում։— էթում ա արխեին թեք ընկնում՝ քնում։

Ղոնաղը էդ խոսքերը որ լսում ա, ուրախությունից քիչ ա մնում գժվի։ Ամարաթի տերը քնում ա թե չէ, վեր ա կենում կամաց-կամաց էթում, ման ա գալի՝ Քարը գտնում, վեր ունում դնում չեքը ու յա՜լլա, դռնե դուս։ Դուռը էս հետ ձեն-ծպտուն չի հանում։

Հունարով Քարը էս հետ գնա՜ց, «վա՛յ տեր» կանչելոն։

Լիսանում ա։ Ամարաթի տերը վեր ա կենում, ի՜նչ տենում՝ ո՜նչ ղոնաղ կա, ո՜նչ Քար։ Շատ ա գլխին վա՜յ տալի, մղկտում, վշվշում, սուգ ու շիվան անում, համա էլ ո՞րդե՝ բանը բանից անց էր կացե։

Էս մարդն էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչը աստոծ գիտա, ճամփին սրան մի մարդ ա ռաստ գալի։

— Բա՛ր՛աղողում, ա՛ղպեր,— ասում ա։

— Բարո՛վ, ասսու հազա՜ր բարին,— ասում ա էն մարդը։

— Խե՛ր ըլնի, էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ ղարբություն, աշխատանքի։ Ա՛ղպեր,— ասում ա,— ըսկի հացից-մացից չե՞ս ունենա, տաս ուտեմ, սոված եմ։

— Խի՛ չեմ ունենա,— ասում ա,— ա՛րի ըստե մի տեղ նըստենք, զաթի ես էլ եմ սոված, իրար հեննա ուտենք[1]։

---

[1] Գրաման ձեռագրում այս բառին հաջորդում է. «Աղ ու հաց, սիրաը բաց», որը բանահավաքը չնչել է (Ս. Կ.)։

Գալիս են մի ծառի տակի նստում։ Էս մարդը խուրջինը դաստախտնը հանում ա, բաց անում. եննա Քարը չիբխոցը հանում ա, դնում լիզվի տակը։

— Սո՛ւփրա, բա՛ցվի,— ասում ա։

Ասելու բաշտան կիրակուր ասես, ի՛նչ խորակ ասես, գինի, արաղ ասես, սուփրեն լցվում ա։ Էրկսով ուտում են, խմում, կըշտանում։ Եննա Քարը թազադան դնում ա լիզվի տակը, ասում.— Սո՛ւփրա, խփվի՛։— Ալբիալը սուփրեն ինքն իրան հավաքվում ա։

Էդ ճամփորդի աչքը մնում ա էդ Քարի վրեն։

— Ա՛ղպեր,— հարցնում ա,— էդ ինչ հունարով Քար ա. չէ՞ս ծախի առնեմ։

— Ի՞նչ ունես, որ հարցնում ես. եննա կա՞րաս սրա գինը տա։

— Զա՛դ չունեմ,— ասում ա,— ես եմ, էս Կոմբալը. արի՛ սրա հեննա փոխենք։

— Էդ Կոմբալի հունարն ի՞նչ ա, որ փոխեմ։

— Որ ասեմ. «Կոմբալ տո՛ւ, ինչքամ մարդ ըլնի, քոմմքին էլ կկոտորի, ջարդ ու փշուր կանի, կթողա. սաղ ղոշում էլ որ աղաքը գա, էլի սրա հախից չի կարա գա։

— Լա՛վ,— ասում ա,— որ էդ հունարն ունի, ա՛րի փոխենք։

Քարը տալիս ա դրան, Կոմբալն առնում։ Էթում ա դրանից մի քիչ հեռու կաննում, ասում. «Կոմբալ տո՛ւ։ Ասելու բաշտան էդ Կոմբալը վրա ա հասնում իրա տիրոնչը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ ծեծում ա, սալջարդ անում, թողում։

— Ամա՞ն, ա՛սու սիրուն,— ձեն ա տալի էդ ճամփորդը,— ա՛րի, էս Կոմբալի ձեռիցը ինձ ազա՛տա, Քա՛րն էլ քեզ, Կո՛մբալն էլ քեզ, տա՛ր, մորդ ծծի նման քեզ հալալ ըլնի, ես զադ չեմ ուզում։

Էթում ա նրան Կոմբալի ձեռիցը ազատում ա, Քարը ձեռիցն առնում, Կոմբալը վեր ունում, նրան թողում ըտե, մի ուրիշ ճամփա բռնում, էթում։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, սրան մի ուրիշ մարդ ա ռաստ գալի։

— Բա՛ր աջողում, ա՛ղպեր,— ասում ա։

— Բարին ա՛րևդ,— ասում ա էդ ճամփորդը։

— Էդ ո՞ւր ես էթում,— հարցնում ա։

— Էթում եմ աշխատանքի, ա՛ղպեր,— ասում ա,— հացից-

մացից ըսկի ի՞նչ ունես. հացս հատել ա, ըստերանք էլ մոտիկ գեղ չկա, որ էթամ առնեմ, սաղ օրը նշխարք չեմ դրե բերանս։

— Ունե՛մ, խի՞ չունեմ,— ասում ա։— Արի մի տեղ նստենք, զաթի ես էլ եմ սոված, հաց ուտենք. մի քիչ դինջանանք, էլի վե կենանք, էթանք մեր ճամփեն։

Ըստե մի տեղ նստում են. էդ մարդը խուրջնիցը դաստախուն հանում ա, փռում։

Եննա Քարը ջիբիցը հանում ա, դնում լիզվի տակը, ասում.— Սո՛ւփրա, բա՛ցվի։

Ասելու բաշտան դաստախունը ամեն տեսակ խորակով լըցվում ա։ Էրկսով ուտում են, կշտանում։ Էդ ճամփորդի աչքն էլ ա մնում էդ Քարի վրեն։

— Ա՛ղպեր,— ասում ա,— ես աշխարքումը ի՛նչ հունար ասես՝ տեհել եմ, համա քու Քարի հունարը ամեն բանից անցկացավ։ Ա՛ղպեր,— հարցնում ա,— էդ Քարը չե՞ս ծախի, առնեմ։

— Լավ,— ասում ա էդ մարդը,— որ ծախեմ՝ ի՞նչ ունես, էա Քարի գինը կա՞րաս տա։

— Էս խանչալից սավ֊յի զադ չունեմ. ո՞ւզում ես՝ արի՛ սրա հեննա փոխենք։

— Էդ խանչալի հունարն ի՞նչ ա, որ փոխեմ։

— Իմ խանչալի հունարն էն ա, որ ասեմ. «խա՛նչալ, կոտորա՛», ինչքամ մարդ ըլնի՝ քոմմքին էլ սոխի նման կկոտորի, կփրթի, վե կածի. տասը թագավոր որ իրա ղոշնովը աղաքը գա, սրան ախտելու ճար, իլլաջ չկա՝ բիրադնին էլ ղիմա֊ղիմա կկոտորի, կթողա։

— Դե որ էդ հունարն ունի, ա՛րի փոխենք։

Քարը տալիս ա սրան, խանչալն առնում։

Եննա հրամայում ա Կոմբալին.— Կո՛մբալ, տո՛ւ։

Ասելու բաշտան Կոմբալը վրա ա հասնում էդ խանչալի տիրոնչը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ, քու հավան կացած սըխկում ա թողում։

— Ամա՛ն, ա՛սու սիրուն,— գոռում ա էդ ճամփորդը,— ինձ սրա ձեռիցը ա՛զատա, խա՛նչալն էլ քեզ, Քա՛րն էլ քեզ, ես զադ չեմ ուզում։

Էթում ա նրան Կոմբալի ձեռիցն ազատում ա, իրա Քարն էլ

Նրանից հդ ա առնում, նրան թողում ըտե, ինքը մի ուրիշ ճամփա ա բռնում, էթում։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստծ գիտա, ճամփին մի մարդի էլ ա ռաստ գալի։

— Բա՛ր աջողում, ա՛ղպեր,— ասում ա։

— Բարին որդկերանցդ ա՛րևը,— ասում ա էդ մարդը։

— Առաջ բարի, էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ աշխատանքի։ Բա դո՞ւ։

— Ես էլ եմ էթում աշխատանքի. ի՞նչ անեմ, ա՛ղպեր, մեր երկրումը փող չկա, փարա չկա, աշխատանք չկա, որ մարդ մի բանի կենա, սթար անի, գլուխ պահի։ Համի էթում եմ, տենանք աստծ ի՛նչ ա ողորմում։

— Ա՛ղպեր,— վրա ա բերում էդ ճամփորդը,— հաց չո՞ւնես, մի կտոր տաս՝ ուտեմ, սաղ օրը զադ չեմ. դրե բերանս։

— Ունեմ, խի՛ չունեմ,— ասում ա,— զաթի ես էլ եմ սոված, նստենք հաց ուտենք, փորներս պնդենք, մի պուճուր էլ դինջանանք, էլի վե կենանք էթանք մեր ճամփեն։

Էրկուսն ըտե մի տեղ վեր են գալի, նստում։ Էդ մարդը դաստախուանը խուրջնիցը հանում ա, փռում. ննա Քարը ջիբիցը հանում ա դնում լիզվի տակը, ասում.— Սո՛ւփրա, բացվի՛։

Ալբիալը դաստախուանը լցվում ա. ի՛նչ կիրակուր ասես, որ ընտե չկար։ Էս մարդը, որ իրա օրումը ըտենց բան ո՛նչ տեհել էր, ո՛նչ լսե, մնում ա զարմացած դրա էրեսին մտիկ տալոն։

Էրկուսով կուշտ ու կուռ ուտում են, կշտանում։

Որ հաց են ուտում, պրծնում, էն ճամփորդը հարցնում ա.— Ա՛ղպեր, էդ ի՛նչ հունարով Քար ունես. չե՞ս ծախի, առնեմ։

— Կծախեմ, խի՛ չեմ ծախի,— ասում ա,— որ ծախեմ, դու մի խեղճ մարդ ես, ի՛նչ ունես, որ ի՛նչ տաս։

— Սուտ չկա, ա՛ղպեր,— ասում ա,— ալեյի-մալեյի էս ցափընջին ա, էլ, որ ասես, զադ չունեմ. ուզո՞ւմ ես սրա հեննա փոխենք։

— Շա՛տ լավ, փոխենք. դե ասա՛ տենամ քու ցափնջու հունարն ի՞նչ ա։

— Իմ ցափնջու հունարն էս ա, որ ինչքամ մեռած մարդ ըլնի, որ քցես վրեն ալբիալը կսաղանա։

— Դե որ էդ հունարն ունի, ղա՛բուլ եմ, բե՛ փոխենք։

Քարը տալիս ա, Յափնչին առնում։ Ննջա մի քիչ էթում ա, ձեն ա տալի.— Կո՛մբալ, տա՛։

Էն սհաթը Կոմբալը վրա ա պրծնում էդ մարդին մի գո՛րսա ա տալի, մի գո՛րսա ա տալի, որ աստոծ փրկի, աղատի։

— Ա՛սու սիրուն,— գոռում ա էդ մարդը,— Քա՛րն էլ քեզ, Յա՛փնչին էլ քեզ, էս Կոմբալի ձեռիցը ինձ մի ա՛ղատա, ես զադ չեմ ուզում։

Ջաթի նա էլ էդ էր ուզում. էթում ա նրան Կոմբալի ձեռիցն աղատում ա, Քարը նրանից եդ առնում, թողում նրան լուս մղկըտալոն, ինքը գլուխ առնում էթում։

«Ա՛ղպեր,— միտք ա անում էդ մարդը,— աշխարքում էլ հունար չմնաց՝ ձեռք բերի, էլ ուրիշ երկիր էթալը հարամ ա. հմի վե կենամ, էթամ մեր երկիրը, կնկանս հավարին հասնեմ. սրանից դենը քանի սաղ կենդանի ենք, գլխներս դինջ կապրենք, թոփի գյուլլեն էլ մեզ քյար չի անի»։

Իրանց երկրի ճամփեն բռնում ա, էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, ի՛րեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում ա իրանց երկիրը։

Էթում ա դուռ իրանց տունը։ Կնիկը, որ տենում ա մարդին, ուրախանում ա, աշխարով մին ա ըլնում, վազում ա փաթըթվում ճտուվը. ուրախությունիցը քիչ ա մնում լաց ըլնի։

Մարդը խուրջինը վեր ա դնում, Կոմբալը, Խանչալը վեր ա ունում. կնիկը գալիս ա չոքում, չաքմեքը քաշում. տախտի վրեն դոշակ ա քցում, որ նստի։ Մարդ ու կնիկ իրար կողքի նստում են, ասում, խոսում, մասլահաթ անում։

— Հա՛, ա՛յ մարդ,— հարցնում ա կնիկը,— էսքան վախտ գնացել ես, ըսկի զադ-մադ աշխա՞տել ես, թե չէ. բե՛ տենամ ի՞նչ ա քու բերածը։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— հենա ինչ ասես՝ բերել եմ. դու բե մի հաց քցա, ուտեմ, սաղ օրը զադ չեմ կերե, վերջը կիմանաս ինչ աշխատանք եմ արե։

Կնիկն էթում ա, որ հաց թրջի, կիրակուր էփի, ձու խաշի, կողակ խաշի, պանիր բերի, մախլասի՝ ինչ աստոծ տվել էր, բերի՝ մարդը չի թողնում։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— ճամփից բեզարած, ջարդված էկել ես, սոված-ծարավ էկել ես, բա զադ չպտե՞ս ուտի։

— Ա՛յ կնիկ, ես քեզ ի՛նչ ասում եմ՝ դու ինձ ականջ արա. դարտակ դաստախունը բե՛, ուրիշ բան պետքը չի։

Սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, վերջը կնիկը տենում ա մարդի հախիցը չի կարում գա, էթում դարտակ դաստախունը բերում ա դնում աղաքը, բաց անում, ինքն էլ կըշտին նստում, տենա մարդը դարտակ դաստախունին թամաշ անելոն ո՛նց պտի կշտանա։

Մարդը Քարը ջիրիցը հանում ա, դնում լիզվի տակը,— Սո՛ւփրա, բացվի՛,— ասում ա։

Բացում ա, ի՛նչ բացում. էփած, հազիր տեսակ-տեսակ կիրակուրներ ասես, ձկնեղեն ասես՝ ո՛րը տապակած, ո՛րը խաշած, փլավ ասես՝ ճուտը տապակած, վրեն դրած, ղաբլու փլավ ասես՝ գլխին չամիչ, բադամը դրած, ֆորսի միս ասես՝ ջուռա-ջուռա էփած, հաղրած. մի խոսքով՝ ասսու ի՛նչ բար ու նուբար ասես սուփրի միջին կար։ Ըստոնք կնիկը որ չի տենում, բերանը մնում ա բաց. ուրախությունիցը քիչ ա մնում գժվի։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— էս ի՛նչ հրաշք ա, էս ի՛նչ բաս ա. էս քոմմա հո էրազո՞ւմ չեմ տենում։

— Է՞րազս որն ա, զա՞դս որը, ա՛յ կնիկ, զարթուն վախտն էլ էրազ կըլնի, չէ՞ս տենում, որ ես էլ հրես կշտիդ նստած եմ։

— Ա՛յ մարդ, բա էս ի՞նչ նաղլ ա. մի ասա տենամ էս հունարով Քարը որդիան ես ճարե։

— Բա չե՛ս ասի,— ասում ա,— ա՛յ կնիկ, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. ճամփին գնացի մի տուն ղոնաղ. գշերը ըտե մնացի, էս հունարով Քարը նրանց տանիցը գողացա. սրանից ի՛նչ ուզեմ, ի՛նչ որ լիզուս պտտի՝ ալբիալը կբերի, կհազրի։ Էս հո,— ասում ա,— էս. ճամփին մի Կոմբալ, մի Խանչալ, մըն էլ մի Յափնջի եմ ճարել, որ սրանից դհա հունարով են։ Ըսկի մի՛ ասի, ա՛յ կնիկ, սրանից դենը էլ դարտ չունենք, աստոծ մեզ ձախու ձեռով ա տվե, քանի սաղ ու կենդանի ենք, թագավորի պես գլխներս դինջ կապրենք։— Նստում ա ըստե մին-մին, տեղը-տեղին կնկանը նաղլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Ենենա, թագադան Քարը դնում ա լիզվի տակը, ասում.— Քեզանից ընենց մի ձեռք տներ եմ ուզում իրա սարք ու կարգով, ընե՛նց մի ձեռք տներ, որ տենողի խելքն էթա։

Առավոտը մարդ ու կնիկ վեր են կենում, տենում իրանց ուզած

տները հազիր ա. տնե՛ր, տնե՛ր, տնե՛ր եմ ասում, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես՝ հենց էդ տներին թամաշ անես։ Կնիկը, հո, խելքամաղ էր էլե մնացե, քիչ էր մնում բերնի չուրը էթա։ Աղաքվա դառն-աղքատ, օրեն հացի կարոտ մարդ ու կնիկը հմի դառան հարուստ, էդ թաղա տների միջին կացըն։

Հարևանները մնացել ին զարմացած, թե էդ մարդը էսքան հարստությունը, մալ ու դոլվաթը ո՞րդիան աշխատեց, բերեց։

Անց ա կենում ըսենց մի քանի վախտ, օրեն մի օրը կնիկը կպնում ա մարդի յախեն։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— էսթավուր լավ տներ ունենք, լավ սարք ու կարգ ունենք, ա՛րի մի օր թագավորին կանչենք ղոնաղ. աստած մեզ տվել ա՝ չի խնայե, մենք հմի ը՞նչով ենք նրանից պակաս։

— Ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— չես թողա մեր քյասիպ հալովը վեր ընկնենք, ախա՞ր մենք թագավորի լայաղ մարդիկ ե՞նք, որ նրան ղոնաղ կանչենք։

— Խի՞,— ասում ա կնիկը,— քու ի՞նչն ա պակաս, քու դոլվա՞թն ա պակաս, քու հարստությո՞ւնն ա պակաս, թե քու նիստ ու կացը. դու պակաս անըմով մարդ ե՞ս, որ թագավորին չես կարա ղոնաղ կանչի։

Սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛. մարդը ո՛ր տենում ա կնիկը իրանից ձեռը չի քաշում, ասում ա.— Տե՛ս, ա՛յ կնիկ, կկանչեմ, համա վերջը կփոշմանես, հա՛։

— Ջե՛մ փոշմանի,— ասում ա,— դու կանչա։

— Լա՛վ, թող քու ասածն ըլի, կկանչեմ։

Օրեն մի օրը էս մարդը վեր ա կենում, էթում թագավորի ամարաթները։ էթում ա դուռ թագավորի խնամաքարի վրեն նըստում։

Թագավորի նազիր-վեզիրը սրան որ վարավուրդ են անում, դուս են գալի հարցնում.— Ի՞նչ մարդ ես, ի՞նչ բանի համար ես էկե։

— Ցլա՛ն մարդն եմ,— ասում ա,— էկել եմ թագավորի կուշտը, խնդիրք ունեմ ասելու։

Թագավորի նազիր-վեզիրը գալիս են, թագավորին հարցնում.— Թագա՛վորն ապրած կենա, ցլա՛ն մարդն էկել ա, ուզում ա քեզ տենա, թո՞ղանք գա, թե չէ։

— Թո՛ղեք գա, տենանք ի՞նչ ա ուզում,— ասում ա թագավորը։

Նաղիր-վեզիրն էթում են էն մարդին աղաք անում, բերում թագավորի կուշտը։ Էդ մարդը ձեռները դոշին դրած, թագավորին գլուխ ա տալի, ընտե կաննում։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա թագավորը,— ասա տենամ խնդիրքդ ի՞նչ ա։

— Ֆլա՛ն մարդն եմ,— ըսում ա,— էկել եմ քեզ, քու կնկանը, քու նաղիր-վեզիրին կանչեմ մեր տունը ղոնաղ։

Թագավորը մնում ա զարմացած՝ էս ի՞նչ մարդ ա, որ իրան ղոնաղ ա կանչում. աղաք ուզում ա չէթա, համա որ տենում ա՝ շատ ա դեմ ընկնում.— լա՛վ,— ասում ա,— ֆլա՛ն օրը, ֆլա՛ն սհաթին կգամ։

Էս մարդն ա՝ թագավորին թազադան գլուխ ա տալի, թողում, էթում։ Էթում ա տուն, կնկանը իմաց տալի, որ թագավորը, նրա կնիկը, նրա նաղիր-վեզիրը ֆլա՛ն օրը, ֆլա՛ն սհաթին պտի գան ղոնաղ, որ ինքն էլ էնու դյորա թադարեք տենա. որ ո՛նց որ կարգն ա՝ թագավորին պատիվ տան։

Թագավորը էդ մարդի խոսքը չի կոտրում. իրա ասած օրը վեր ա կենում իրա կնկա, իրա նաղիր-վեզիրի հեննա գալիս ա դրա տունը ղոնաղ։ Էդ մարդը դուս ա գալի թագավորի աղաքը։

— Թագա՛վորն ապրած կենա, իմ տունը քեզ փե՞շքաշ, բա՛-րով, ասում հա՞զար բարին ես էկե, ի՛մ գլխի, ի՛մ աչքի վրեն ես էկե։

Թագավորը որ մննում ա նեքսև, մնում ա զարմացած, թե էս լավ տները, էս լավ սարք ու կարգը դրան ո՞րդիան ա։ Նստում են դեսից, դենից խոսում, զրից անում։ Հացի վախտը գալիս ա. էդ մարդը դարտակ դաստախուանը բերում ա, դրանց աղաքին բաց անում։ Սա էն Քարը դնում ա լիզվի տակը։

— Սո՛ւիրա, բացվի՛,— ասում ա։

Ալբիալը դաստախուանը ամեն տեսակ, թագավորի լայեղ կի-րակուրներով լցվում ա։ Թագավորը էս որ տենում ա, աչքը մնում ա էդ Քարի վրեն։

«Ես թագավոր ըլնեմ,— ասում ա ինքն իրան,— էս թավուր զադ չունենա՞մ, էս քյասիբ մարդը ունե՞նա. ուզում ա խաթրով ըլնի, ուզում ա զոռով՝ սրա ձեռիցը էդ Քարը պտի առնեմ»։

Հացը որ ուտում են, պրծնում, թագավորը հարցնում ա.— Ա՛յ մարդ, էդ հունարով Քարը չե՞ս ծախի, առնեմ. ի՛նչ ուզես, լիզուդ հենց ի՛նչ պտի՝ կտամ, քաշովդ մին ոսկի էլ որ ուզես՝ իմաց կաց չեմ խնայի, կտամ, թաքիլան էդ Քարը տաս ինձ։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— չեմ ծախի, ես էլ էդ Քարովն եմ ապրում, ո՛նց ծախեմ։

— Չե՞ս ծախի,— ասում ա թագավորը բարկացած,— զորով կառնեմ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— խաթրով չե՛մ տա, զորով կառնես՝ ի՛նչ կարամ ասի։

— Ա՛յ մարդ,— էլի ասում ա թագավորը,— բե՛ տո՛ւ, թե չէ՝ տե՛ս, կփոշմանես։

— Չե՛մ տա,— ասում ա,— ի՛նչ ուզում ես ա՛րա, արինս քեզ հալալ ա։

— Չէ՞ս տա։

— Չե՛մ տա։

— Չէ՞ս տա։

— Չե՛մ տա։

Թագավորը տենում ա՝ խաթրով չի տալի, բարկացած վեր ա կենում իրա կնկա, իրա նազիր-վեզրի հեննա գալիս ա իրա ամարաթը։

Թագավորը որ էթում ա, էդ մարդը կպնում ա կնկա յախեն։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— բա որ ասում ի՝ մեզ ի՛նչ կսազի թագավորին ղոնաղ կանչենք, դու հենց քեզ դնում իր անզգամությունը. տեհա՞ր վերջը ինչ դուս էկավ. հմի որ թագավորը մարդիկ ղրկի, գան զորով էս Քարը խլեն ձեռներիցս, տանեն, ի՞նչ կանենս։

Կնիկը տենում ա, որ մեղավոր ա, ամոթու ձեն, ծպտուն չի հանում։

Անց ա կենում ըսենց մի վախտ՝ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, օրեն մի օրը էդ թագավորը եքա ղոշուն ա վեր ունում, գալի էդ մարդի վրեն կռիվ, որ ինչ ա՝ զորով էն Քարն առնի։

Էս մարդն ա՝ որ տենում ա ղոշունը գալիս ա, խանչալը ղնիցը հանում ա, Կոմբալն էլ բերում ընդե վե դնում, ասում.— Խա՛նչալ կտրա՛, Կո՛մբալ տո՛ւ։

Ասելու բաշտան էս խանչալն ու կոմբալը վրա են հասնում,

ընկնում թագավորի ղոշնի մեջը. խանչալը մի դհիցն էր փրթում, կոտորում, Կոմբալը մի դհիցը. եննա քոմմքին էլ չարդուխուրթ են անում թողում, մի մարդ էլա սաղ չի պրծնում նրանց ձեռիցը։

Թագավորը էս որ տեսնում ա, գալիս ա ընկնում էդ մարդի ոտները։

— Ամա՜ն,— գոռում ա,— քեզ էլ մեղա, քու աստուն էլ մեղա, սաղ ղոշունս կոտորիլ տվիր, հերիք ա, ինձ էլա բա՛շխա. Քարն էլ քեզ ըլնի, հլա ի՛նչքամ մալ ու դոլվաթ էլ ուզում ես՝ տամ, մենակ խանչալիդ ու Կոմբալիդ աստա, որ եդ գան։

Նո՛ր էդ մարդը հրամայում ա, խանչալն ու Կոմբալը թողում են, գալի տուն։ Եննա էթում ա տանիցը ցափնչին վեր ունում, գալի. բերում ա ցափնչին մին-մին թագավորի ղոշնի վրեն փռում. փռում ա թե չէ՝ սաղանում են, ընտե կաննում, ըլում ո՛նց որ մորեն մին։ Թագավորը բերում ա էդ մարդին լավ-լավ փեշքաշներ տալի, բոլ մալ ու դոլվաթ տալի՝ ճամփու դնում, ինքն էլ փորփոշման թողնում ա, էթում իրա ամարաթը։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ աստղին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։





8· ՂԱՄԲԱՐ

Կըլնի չիլնի մի կնիկ։ Էս կնիկը մի մինուճար տղա ա ունենում՝ անումը ըլնում ա Ղամբար։ Սրանք շատ դառն-աղքատ, անճար են ըլնում։ Տղեն աստու իրան օրը պարանը վեր էր ունում, էթում հանդը, փուշ թոփ անում, թիթեն-միթեն կիտում, բերում բազար՝ ծախում, մի քանի շայի աշխատում տալիս ին հացի, ուտում, գլուխ պահում։

Օրեն մի օրը էդ Ղամբարը կիտած փուշը-մուշը բերում ա բազար՝ թագավորի ամարաթի աղաքը, մեյդանումը ծախում ա։

Թագավորի աղջիկը, որ Ղամբարի քըրչ ու փալասը, քրքըրված շորերը տենում ա, էթում ա հորն ասում.— Խե՛ղճ տղա, որ կնիկ ունենար հո՛ ըսենց քրչոտ ճղճղված չէր ման գա։

Թագավորը էս որ լսում ա, էլ ձեն ծպտուն չի հանում. կանչում ա իրա նազիր-վեզիրին.— Գնացե՛ք,— ասում ա,— էն փուշ ծախող տղին կա՛նչեք գա։

Նազիր-վեզիրն էթում են Ղամբարին կանչում։

Ղամբարը էս որ լսում ա, շատ ա վախենում, մնում ա մոլորած, թե յարաբ թագավորն ինձ խի՞ պտի կանչի։

Վեր ա կենում գալի թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— քեզ կանչել եմ, որ իմ աղջիկը տամ քեզ, կա՞ռնես։

Ղամբարը մնում ա շշմած, թե թագավորը էս ի՞նչ ա ասում։ Թագավորի աղջիկը էս որ տենում ա, մեջ ա ընկնում։

— Ա՛յ տղա,— ասում ա,— խի՞ մոլորեցիր. հերնումերս ո՛ր տալիս են, դու խի՞ ես վախենում, դե ա՛րի ինձ ո՛ւզա էլի։

Թագավորը բերում ա աղջկանը տալի Ղամբարին, պսակում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։ Ղամբարը թագավորի աղջիկը վեր ա ունում, տանում իրանց տունը։

Որ հասնում են տուն, Ղամբարը մորն ասում ա.—Նա՛նի թագավորը կանչեց, աղջիկը տվեց ինձ. հրես ըս էլ քու հարսը. բե՛ մի զադ քցա թագավորի աղջիկը նստի։

Ղամբարենց տունը շատ քոսոտ, քնձրոտ տուն ա ըլնում. պատերը կեղտոտ-մեղտոտ, աթարի մխիցը սևացած, միչին էլ, որ ասես, կարպետի թրիշա չիլնում, հենց թաք էրկու իծի փոստ ա ըլնում, ըն էլ քրքրված, չունքի մերը էդ փոստերիցը Ղամբարի շորերի համար կարկատաններ էր պոկում։ Մերը մի քրքրված փոստ բերում ա քցում թագավորի աղջկա տակը։

Թագավորի աղջիկը նստում ա, տենում ա տան հալը ի՛նչ ա, ասում փառք ա տալի. «Հալբա՛թ,— ասում ա,— իմ՛ ճակատին էլ էս էր գրած»։ Սննա բերում ա իրա շորերիցը Ղամբարի համար կարկըտաններ ա կտրատում, նրա շորերը կարկտում, սրբում, թամզացնում, շնորքի բերում։ Էգսի օրը Ղամբարը էլի վեր ա կենում, էթում հանդը փուշ-մուշ կիտում, թիթեն հավաքում, տանում թագավորի ամարաթի աղաքի մեյդանումը ծախում։ Թագավորր ակուշկիցը տենում ա՝ դրուստ որ ըսօր Ղամբարի շորերը ամեն վախտվա պես ճըղճըղոտված չի։

Իրիկունը Ղամբարը որ տուն ա գալի, կնիկը տենում ա սաղ ձեռները փուշ քաղելուց քրքրված, ծակծկված ա, սիրտը մղկտում ա։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— ըս էլ մի ապրուստ չի, սաղ օրը ըսենց քրքրվում ես, քարի հեննա քաղվում, ավազի հեննա մաղվում, աշխատում ես, աշխատում, օձի, գորտի հեննա ջուր խմում, դառը դատում, մաղրուն նստում. աշխատածդ էլ էրկու-իրեք շայի ա. հաղիր գնա՝ մի ուրիշ գործ գտի, նոքարությո՛ւն արա, ֆահլությո՛ւն արա, որ մեր աչքն էլ զադ տենա։

— Լա՛վ, ա՛յ կնիկ,— ասում ա Ղամբարը,— որ ասում ես՝ ըտենց կանեմ։

Առավոտը էն բաշտեն Ղամբարը վեր ա կենում, էթում բա-

զարի դուռը, բալքի ֆահլա բռնվի, յա ամսով մնի կուշտը նոքար ըլնի, աշխատանք անի։ Դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, սրա՛ն հարցնում, նրա՛ն հարցնում, վերջը տենում ա հրես մի բեզրգյան ընկել ա, նոքարի ա ման գալի։

Էս բեզրգյանը գալիս ա Ղամբարի կուշտը, հարցնում.— Տղա՛, նոքար չե՞ս ըլնի։

— Խի՞ չեմ ըլնի,— ասում ա Ղամբարը,— ես էլ զաթի տեղի ի ման գալի։ Ննա, տարեկան հախս ի՞նչ կտաս,— հարցնում ա Ղամբարը։

— Հալալիցը՝ մի աղչա, հարամիցը՝ էրկու աղչա,— ասում ա բեզրգյանը։

— Բա՛ս որ ըտենց ա, էթամ կնկանս հարցնեմ, գամ,— ասում ա Ղամբարը։

Էթում ա տուն, կնկանն ասում.— Մի բեզրգյան ուզում ա ինձ նոքար բռնի. ասում ա՝ հալալիցը մի աղչա կտամ, հարամիցը՝ էրկու, համի չեմ գիտա ո՞րը վեր ունեմ։

— Հարամիցը որ տասը աղչա էլ տա՝ վե չունես, հալալիցը մի աղչա էլ տա՝ վե՛ կալ,— ասում ա կնիկը։

— Բաս որ ըտենց ա, կէթամ բեզրգյանին նոքար, նա էլ զաթի պտի էթա ուրիշ երկիր ապրանքի։

Կնկա հեննա մնաս բարով ա անում, վե կենում էթում բեզրգյանի կուշտը։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա Ղամբարը,— հալալից որ մի աղչա տաս, քու կուշտը նոքար կմննեմ։

— Լա՛վ, ասում ա բեզրգյանը,— կտամ, խի՞ չեմ տա։

Էս Ղամբարն ա՝ ճամփի թաղարեք ա տենում, քոչ ու բարխանա ա անում, բեռները բարձոտում, կապում, կապկպում, բեզրգյանի հեննա ընկնում ճամփա։ Էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասնում են մի չոլ-յաբանի տեղ։

Ըստե բեզրգյանը Ղամբարին ասում ա.— Արի՛ բեռները վե դնենք էս ջրֆորի կշտին, համ ղավլաղաթիրը ջրենք, համ էլ մի քիչ հաց-մաց ուտենք, դինջանանք, նոր վե կենանք, ընկնենք ճամփա։

Բեռները ըստե վեր են դնում, հացի թաղարեք են տենում, որ ուտեն։ Հաց են ուտում, պրծնում, եննա բեզրգյանը Ղամբարին

հարցնում ա.— Կա՞րաս մննի էս ֆորը, փարխաջով ջուր հանես, որ ղավլաղաթիրը ջրենք։

— Կարամ, խի՞ չեմ կարա,— ասում ա Ղամբարը։

Բերում են պարանը կապում Ղամբարի միջքիցը, կախ տալի ֆորը։ Ղամբարը կախ ա ընում ֆորը, փարխաջը լցնում ա՝ քաշում են, լցնում ա՝ քաշում են, լցնում ա՝ քաշում են, ընչանք սաղ ղավլաղաթիրը ջրում են պրծնում։

Եննա Ղամբարը ձեն ա տալի.— Բեզրգյա՛նը սաղ ըլնի, դե՛ հմի պարանը կա՛խ տվեք դուս գամ։

Պարանը կախ են տալի ֆորը. Ղամբարը հենց էն ա ուզում էր կապի մեջքը, մըն էլ ի՞նչ տենա՝ փեշիցը քաշում են, չեն թողում դուս գա։ Ղամբարը մնում ա մոլորած, թե էս ի՞նչ բաս ա. եդ ա մտիկ տալի, տենում ա հրես էրկու դուռ ա բաց էլե ֆորի միջին։ Մի դռնովը մտիկ ա տալի, տենում լիքը իսանի ջամդաք ա, մեկել դռնովն ա մտիկ տենում՝ գլուխ ա. մխելի դպա նեքսև ա մտիկ տալի, տենում. ա հրես իրեք սիրո՛ն, նաշխո՛ն, հուրի-մալաք աղջիկ նստած քարգահ են անում. էն դիհն էլ մի էրծաթե սինու վրեն մի չեչոտ Գորտ ա դրած, մի սիրո՛ն, նաշխո՛ն տղա էլ հենց հայիլ-մայիլ էլած էդ Գորտին ա մտիկ տալի։

— Տղա՛,— հարցնում են էդ աղջկեքը,— ա՛րի դրուստն ասա, մենք ենք սիրուն, թե էդ չեչոտ Գորտը, որ էդ տղեն հայիլ-մայիլ էլած դրան ա մտիկ տալի։

— Ի՛նչ ասեմ,— ասում ա Ղամբարը,— սրտի սիրածը սիրուն կըլնի։

Էս ասելու բաշտան Գորտը չաթմիշ կըլնի, կպատռվի, միջիցը մի դհա՛ սիրուն, դհա՛ նաշխուն աղջիկ դուս կգա, էն դիհը կկաննի։

— Է՞ս ինչ բաս ա, էսքամ իսանի ջամդաքն ու գլուխը ո՞րդիան ա,— հարցնում ա Ղամբարը տղին։

— Տղա՛,— ասում ա,— թամամ քառասուն տարի ա էս ֆորի միջին եմ, ինչքամ մարդիկ են կախ էլե էս ֆորը, քեզանից սավայի մինն էլա չէր ասե, թե. «Սրտի սիրածը սիրուն կըլնի», քոմմքի գլուխն էլ կտրել ենք, ըստե վե քցե։— Եննա աղջկերանցն ասում ա.— Դե՛, սրա խալաթը բերեք, որ ըսենց խելոք ջուղաբ տվեց։

Աղջկեքը կէթան իրեք նուռ կբերեն, կտան Ղամբարին։ Տալու բաշտան էդ էրկու դուռն էլ եդ կըլնի, կշինվի։ Ղամբարը ափալ-

թափալ նռները կդնի չբբը, ձեն կտա.— Բեզրգյա՛նը սաղ ըլնի, դե՛ քա՛շեք։

Բեզրգյանը Ղամբարի ձենը որ կըլսի, շատ կուրախանա, ասսուն փառք կտա, որ նոքարը սաղ-սալամաթ էդ ֆորիցը պրծավ, չունքի թամամ քառասուն նոքար էր բռնե, քառասունն էլ մին-մին որ մտել ին էդ ֆորը ջուր հանելու, էլ եդ դուս չին էկե, քոմմա կոբել ին էդ ֆորի միջին։ Պարանը կքաշեն, Ղամբարին կհանեն։ Ղամբարը որ ֆորիցը դուս կգա, ըսկի բեզրգյանին բան չի ասի, թե ի՛նչ էր տեհե, յա ի՛նչ էր լսե ֆորումը։ Բերում են բեռները կապոտում են, բարձում, ընկնում ճամփա։ Էթում են, էթում են, մխելի տեղ էթում են, սրանց մի ուրիշ քարվան ա ռաստ գալի, որ էթում էր դպա Ղամբարենց երկիրը։ Ղամբարը աչքը մանե ա ածում, տեննում ա իրանց գեղցի մի տղա էդ քարվանի միջին ա։

— Էդ ո՞ւր եք էթում,— հարցնում ա Ղամբարը էդ տղին։

— Էթում ենք մեր գեղը,—ասում ա էդ տղեն։

— Դե՛ որ էթում ես,— ասում ա Ղամբարը,— ի՛նչ կըլնի էս իրեք նուռը տանես մեր տունը, կնկանս տաս։

— Դրա մալիաթն ի՞նչ ա, որ չտանեմ. տո՛ւ, տանեմ,— ասում ա էն տղեն։

Նռները Ղամբարի ձեռիցն առնում ա, դնում ծոցը, Ղամբարի հեննա մնաս բարով ա անում, էթում իրա ճամփեն։ Սրանց քարավանը դեսն ա էթում, Ղամբարենց քարվանը՝ դեն։

Թող սրանք էթան, դանք խաբար տանք Ղամբարի կնկանիցը։

Էդ վախտերքը Ղամբարի կնկա ոտը ծանդր էր, սիրտը նուռ էր ուզում, համա ձեռը չէր ընկնում։ Օրեն մի օրը դրանց քուչի դուռը կծեծեն. Ղամբարի կնիկը կգա կտեննա իրանց հարևանի տղեն։

— Բա՛րով, ա՛յ քիր,— կասի էս տղեն,— ա՛ռ էս նռները, Ղամբարը ճամփին ռաստ էկավ, տվեց, որ քեզ հասցնեմ, ինքն էլ սաղ-սալամաթ ա, քեզ շատ բարև ա անում։

Ղամբարի կնիկը տղի ձեռիցը նռներն առավ, մտավ նեքսև.— Ցավաշ,— ասեց,— մի նուռը կտրեմ, համը տեննամ։— Կտրեց ի՛նչ տեննա՝ ա՛կնունք ասես, բուլիա՛նդ ասես, ա՛լմաստ ասես, մի խոսքով՝ աշխարքումը ինչքան թանկագին քարեր կային՝ քոմմքիցը մեջը լիքն էր։ Սրանք որ տեհավ՝ ուրախացավ, աշխարով մին էլավ, ուրախությունիցը չէր իմանում ի՛նչ անի։ Ջաթի ձեռն էլ պակաս էր. էն

սհաթը մի քար ղրկեց բազար սարաֆի կուշտը, ծախիլ տվեց, էն փողովը տան հմար զադ-մադ առավ։ Կամանց-կամանց էն մեկել քարերն էլ ղրկեց բազար ծախոտեց, թազա տներ շինիլ տվեց, լավ տան մեջ, սարք ու կարդ առավ, կովեր, ոչխարներ առավ, մախլասի՝ գլուխներդ ի՛նչ ցավացնեմ, ամեն բան առավ, հազրեց ընչանք Ղամբարի եդ գալը։ Հա՛, ինքն էլ պառկեց մի սիրուն, նաշխուն, դմբռճիկ տղա բերեց։

Սրան թողանք ըստե, գանք խաբար տանք Ղամբարիցը։

Բեղրդյանի քարվանը գալիս ա, գալի, հասնում ա իրա երկիրը։ Տասնըօխտը կոլոլիկ տարի Ղամբարը էդ բեղրդյանի կշտին նոքարութիյուն ա անում։

Օրեն մի օրը էլի բեղրդյանը Ղամբարին ասում ա.— Ղա՛մբար, ճամփի թաղարեք տե՛ս, որ էլի պտի էթանք ուրիշ երկիր ապրանքի։

Ղամբարը էս որ իմանում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում, չունքի պտի իրանց երկրովը անցկենալին. միտք էր անում, ոնց որ ըլնի կէթա իրա տունուտեղը, օղլուշաղը կտենա։ Ղամբարը ճամփի թաղարեք ա տենում, քոչ ու բարխանա են անում, բեռները բարձոտում, ընկնում ճամփա։ Գալիս են, գալիս են, գալիս են, շատն ու քիչն աստծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, գշեր-ցերեկ գալիս են, հասնում են էն ջրֆորի կուշտը, որ Ղամբարը մտավ, ջուր հանեց։ Էլի Ղամբարը մննում ա ֆորը, ջուր ա հանում, ղավլաղաթիրը ջրում են, համա էն աղջկեքը չեն էրևում. ո՛նչ դուռ ա բացվում, ո՛նչ զադ։ Ըստե մի քիչ դինջանում են, հաց-մաց ուտում, պրծնում, էլի վե կենում էթում իրանց ճամփեն։ Էթում են, էթում են, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասնում են Ղամբարենց երկրի սնուռը։ Ըստե բեռները վեր են բերում, որ մի քիչ դինջանան, հաց ուտեն, էլի վե կենան էթան։ Որ վեր են գալի, տենում են հրես մի եքա ոչխարի սուրու ա պրածում։ Ղամբարը մոտանում ա էդ սուրուին.

— Բա՛րով, չոբան աղպեր,— ասում ա։

— Ա՛յսու բարին, ճամփորդ աղպեր,— ասում ա չոբանը։

— Դու ֆլա՞ն գեղիցն ես,— հարցնում ա Ղամբարը։

— Հա՛,— ասում ա չոբանը։

— Էն Ղամբարին կճանա՞նչես, որ գնացել ա ղարբութիյուն,

յարաբ ի՞նչ խաբար ունես նրա տանիցը,— հարցնում ա Ղամբարը։

— Ո՜նց չեմ ճանանչի, հենց էս սուրուն էլ նրանն ա, ես էլ նրա չոբանն եմ,— ասում ա։

— Ի՞նչ Ղամբար,— զարմացած հարցնում ա։

— Էն փուշ ծախող Ղամբարը, որ հլա թագավորն էլ ինադ արեց, իրա աղչիկը տվեց նրան,— ասում ա չոբանը։

Ղամբարը ըստե մնում ա միտք անելոն, թե էս ի՞նչ բաս ա, էս հարուստ Ղամբարը ո՞վ ա, որ էս չոբանը ասում ա։ Էդ չոբանին թողում ա, վե կենում գալի իրանց քարվանի կուշտը։ Հաց են ուտում պրծնում, թազադան բեռները բարձում են, ընկնում ճամփա դպա Ղամբարենց գեղը։ Ճամփին դհա-դհա ուրիշ սուրու, նախիր, իլխի ա ռաստ գալի. ինչքամ չոբան ա տենում, Ղամբարը հենց ո՛ւմ հարցնում ա, թե. «էս ո՞ւմն աա», քոմմա ասում են. «Ղամբարինն աա։ է՛հ, էս Ղամբարն ա՝ մնում ա շիվարած, թե յարաբ էս ի՞նչ բաս ա, իրա կնիկը ո՞նց ա ըսենց հարստացե. էնքամ մալ ու դովլաթի տեր դառե։ Վերջը գլխներդ ինչ ցավացնեմ, ըսենց միտք անելոն, միտք անելոն Ղամբարը ճամփա էր գալի։

Գալիս են գալի, հասնում են Ղամբարենց գեղը։

Հասնելու բաշտան Ղամբարը իղին ա ուղում բեզրգյանիցը, որ էթա իրանց տունը։

Բեզրգյանը ասում ա.— էթում ես, գնա՛։

Մեր Ղամբարն ա՝ ուրախ-ուրախ վեր ա կենում գալի։ Գալիս ա, մննում ա իրանց քուչեն, հա՛ վիրև-ներքև ա անում, իրանց տունը չի գտնում. ըսենց հինգ-վեց հետ էթում ա գալի իրանց քուչովը, էլի չի գտնում, չունքի իրանց տան տեղը մի ընե՞նց տներ ին կաննացրե, մի ընե՞նց տներ ին կաննացրե, որ տենողի խելք էր էթում։ «Ա՛րի,— ասում ա,— մի մննեմ էս տունը, հարցնեմ, բալքի մի խաբար եմ իմանում իմ կնկանիցը»։ Ըսենց դառը-տխուր էդ հայաթն ա մննում։ Մննելու բաշտան աչքը քցում ա օթախի ակուշկին, ի՞նչ տենա՝ հրե՛ս իրա կնիկը նստած ա, մի ջահել, սիրուն, նաշխուն, շենքով-շնորքով տղա էլ կողքին, իրար հեննա զրից են անում։ Ուսուլով մոտ ա էթում ակուշկին, որ էդ տղի ու կնկա զրիցը լավ լսի։

Կնիկը էդ տղին ասում ա.— Ա՜խ, բա՛լա ջան, աչքե՛րիդ ղուրբան, ջա՛նիդ ղուրբան հերդ որ գա տենա հասած տղա ես դառե՝ ի՞նչքամ կուրախանա, աշխարով մին կըլնի։

— Է՜հ, աղի ջան,— կասի տղեն,— աչքս բաց եմ արե, հենց քեղանից էդ եմ լսում. բա ե՞ք պտի գա, ախար աչքներս ջուր կըտրեց նրա ճամփեն պահելուն։

— Ա՛յ որդի, աստծ ողորմած ա, մըն էլ տեհար՝ էկավ, ջանը սաղ ըլնի, եր գալիս ա, թող գա։

Էդ խոսքի վրեն Ղամբարը էլ չի կարում իրան պահի, էլ չի համբերում, մննում ա նեքսև։ Միղաֆիլ որ նեքսև ա մննում, մեր ու տղա սառում են, իրար էրեսի մտիկ տալի։

— Բա՛ ինձ չե՞ք ճանանչում,— հարցնում ա Ղամբարը,— ախր ես Ղամբարն եմ։

Որ էս չի ասում, մեր ու տղա վրա են պրծնում, փաթթվում նրա ճառվը։ Կնկա վրեն հո՛ էլ հալ չմնաց, էնքա՜մ ուրախությունիցը լաց էլավ։ Նոր նստում են ըստե ասում, խոսում, մասլահաթ անում, ջան ասում, ջան լսում։ Եննա կնիկը բերում ա հաց ա քցում, ուտում են, խմում, կշտանում, աստուն փառք տալի։

— Ա՛յ կնիկ,— հարցնում ա Ղամբարը,— էսքամ մալ ու դուվաթը ո՞րդիան ա, որ ըսենց լավ տներ ես շինե, սուրուփ, նախրի, իլխու տեր ես դառե։

— Բա՛ չե՞ս ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսենց բան։ էն իրեք նուռը, որ դու ղրկել իր, մի հատ բերի ճղեցի, ի՜նչ տենամ՝ մեջը լիքը ակն ու մարգարիտ, բուլիանդ ու հազար ու մի տեսակ թանկագին քարեր։ Ղրկեցի բաղար սարաֆի կուշտը, ծախեցի, էն փողովը մեր տուն ու տեղը սարքեցի։

Էթում ա Ղամբարի ղրկած նռներից մինը բերում ա տալի Ղամբարին։ Ղամբարը նուռը վեր ա ունում, ճղում, ի՜նչ տենա, դրուստ որ մեջը լիքը սաղ ակն ու մարգարիտ, անգին քարեր. ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Նոր նստում ա ըստե իրա գըլխով՝ անցկացածը մին-մին նաղլ ա անում կնկանը, ո՛նց որ ես ձեզ նաղլ արի։

— Բա՛ս որ ըսենց ա, ա՛յ կնիկ, սրանից դենը էլ խի՞ եմ նոքարություն անում. էթամ բեղրգյանին իմաց տամ, թող իրա համար նոքար գտնի։

— Շա՛տ լավ կանես,— ասում ա կնիկը,— բոլ ա ինչքամ նեղ օրի դիմացանք. բոլ ա ինչքամ գշեր-ցերեկ մալուլ-մուշկուլ անց կացրի, սև օրեր տեհա. մի քիչ էլ մեզ համար ապրենք, օր տենանք, դուվրան քաշենք, քանի սաղ ու կենդանի ենք գլխներս դինջ ապրենք։

Ղամբարը վեր ա կենում, էթում բեզրգյանի կուշտը։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա,— ինձ մուրախաս արա էթամ իմ բանին, բոլ ա ինչքամ նոքարություն արի։

— Դու գիտաս,— ասում ա բեզրգյանը,— էսքամ տարի կշտիս նոքարություն ես արե, քեզանից գանգատավոր չեմ, համա հմի որ էլ չես ուզում կենա, ըն էլ դու գիտաս. գնա՛, աստոծ քեզ հետ։

Բեզրգյանը բերում ա ինչ որ նրա հախն էր տալիս ա, ճամփու դնում։ Ղամբարը բեզրգյանի հեննա մնաս բարով ա անում, վեր ա կենում ուրախ-ուրախ գալի տուն։

Որ տուն ա գալի թե չէ, կնկանը հարցնում ա.— Ղորթ իմ գնալուց եղը թագավորը ըսկի քեզ հարցրել ա՝ ի՞նչ ես անում, ո՞նց ես ապրում, սա՞ղ ես, մեռած ես։

— Չէ՛,— ասում ա կնիկը,— որ ասես, չի հարցրե. էրևում ա թունդ ա ինադ արե։ Համա ես միտք եմ արե,— ասում ա,— որ դու սաղ-սալամաթ գաս, մի օր հորս կանչենք իրա նաղիր-վեղրի հեննա մեզ ղոնաղ. ո՛վ գիտա, նա ընենց ա իմանում՝ մենք սովածությունից մեռել ենք, պրծե։

— Ա՛յ կնիկ,— ասում ա Ղամբարը,— էդ լավ ես միտք արե, բաս որ ըտենց ա, թաղարեք տե՛ս, հենց էգուց թագավորին կանչենք ղոնաղ։

— Կանչե՛նք,— ասում ա կնիկը,— ո՛վ գիտա, մեզ որ տենա, ըսկի չի էլ ճանանչի։

Է՜հ, Ղամբարի կնիկն ա՝ փա՛ռք ասսու, տունուտեղը լիքը, դուռը լիքը, վեր ա կենում թաղարեք տենում, մի լավ ղոնաղլըղ սարքում։

Էգսի օրը Ղամբարն էթում ա թագավորին կանչում ղոնաղ։ Թագավորը վեր ա կենում իրա նաղիր-վեղրի հեննա գալիս ա սրանց տունը։ Թագավորին լավ պատիվ են տալի. ուտում են, խմում, քեֆ անում։

Հենց էն թունդ քեֆի վախտը Ղամբարի կնիկը թագավորին հարցնում ա.— Թագա՛վորը սաղ ըլնի, դու մի աղջիկ ունեիր, ի՞նչ էլավ.

— Ի՞նչ ասեմ,— ասում ա թագավորը,— մի փուշ ծախող կար. աղջիկս աչքը քցեց նրան, ես էլ ինադ արի, վե կալա տվի, համա, հմի որ միտս ա ընկնում, լերդ ու ջիգյարս էրվում ա, փոթոթվում մնում։ Արել եմ ձեռներովս, լաց եմ ըլնում աչքերովս,— ասում ա

թագավորը։— Համի շատ եմ փոշմանել, շատ եմ գլխիս վա՜յ տալի, ձեռս դադ չի ընկնում. տենաս սա՞ղ ա, թե սովածությունից մեռել ա։ Ա՜խ, նրան մի տեննայի, էլ դարդ չէի ունենա։


Էդ խոսքի վրեն Դամբարի կնիկը էլ չի կարում համբերի. վրա ա պրծնում, փաթթվում հոր ճտուվը։

— Ես քու աղջիկն եմ,— ասում ա,— բա չե՞ս ճանաչում, ըս էլ իմ տղեն ա, ըս էլ գաթի իմ փուշ ծախող մարդն ա. բաս որ ասում ի՝ էս փուշ ծախողի միջին մի հունար կա, դու չիր ավատում։ Համի տե՞նում ես իրա հալալ քրտնքովը ինչքամ մալ ու դուլվաթ ա կիտե։

Թագավորը մնացել էր սառած նրանց էրեսին մտիկ անելոն, իրա աչքերին չէր ուղում ավատա, հենց իմանում էր՝ էրազում ա։

Նոր թագադան ի՜նչ քեֆ, ի՜նչ ուրախություն, ի՜նչ դափ ու դուռնա, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։



9. ՂԱՀՐԱՄԱՆ-ԲԼՈՒԹ

Ավալ ժամանակին մի թագավոր ա ըլնում, ունենում ա իրեք տղա։ Էդ թագավորն ա՝ որ շատ ծերանում ա, ձեռ ու ոտից ընկնում, ասում ա. «Կանչեմ տղեքանցս, խրատ տամ. մարդ ա՝ բա՛լի մի ղաֆիլ մեռնում եմ»։

Օրեն մի օրը տղեքանցը կանչում ա։

— Ա՛յ որդիք,— ասում ա,— տենում եք ծերացե, դեն եմ ընկե, ըսօր կամ էգուց չկամ. ձեզ ուզում եմ,— ասում ա,— մի վասիաթ անի. ինձանից եղը կլսեք՝ դո՛ւք գիտաք, չեք լսի՝ է՛լի դուք գիտաք, մեղքն ու վարձքը ձեր շլինքը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են տղեքը,— ասա՛, կլսենք, խի՛ չենք լսի։

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— որ կլսեք, կասեմ։ Ա՛յ որդիք,— ասում ա,— ինձանից ձեզ ամանաթ. ո՛ր ճամփովն ուզում եք՝ գնացեք, համա չըլնեմ-չիմանամ է՛ս մի ճամփովն էթաք հա՞, թե չէ, դո՛ւք գիտաք, նհախ տեղը գլխներդ շառի մեջ կքցեք։

— Լա՛վ, թագավորն ապրած կենա,— ասում են տղեքը,— որ ասում ես՝ չենք էթա։

Անց ա կենում մի վախտ՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս,

1646—10

մախլասի՝ վեց ամիս[1], էդ թագավորը օրեն մի օրը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում, էլ չի վե կենում, տղեքանց չարը տանում ա։ Է՛հ, էդ տղեքն են՝ վեր են ունում իրանց հորը, ոնց որ կարգն ա, տանում են առոք-փառոք թաղում, թողում գալի տուն։

Հոր մահից եղը թագավորությունը մնում ա էդ իրեք աղպորը, որ դորե-դոր պտի թագավոր նստեին։ Ի՛նչ ասիլ կուզի, որ քոմմըքից աղաք մենծ աղպերն ա թագավոր ըլնում։

Անց ա կենում մի վախտ. էս մենծ աղպերն ա՝ օրեն մի օրը ինքն իրան միտք ա անում. «Աղպեր,— ասում ա,— ախար մեր հերը խի պտի վասիաթ աներ, թե որ ճամփովն ուզում եք գնացեք, էն մի ճամփովը չէթաք. կա չկա՝ ըստե մի բան կա. պտի հազար մարդ վեր ունեմ,— ասում ա,— էթամ տենամ՝ ընդերանք ի՛նչ կա, ի՛նչ չկա»։

Լա՛վ։ Էս մենծ աղպերն ա՝ թագավորությունը թողում ա միջնեկ աղպորը, ճամփի թադարեք տենում, հազար ձիավոր վեր ունում, ինքն էլ ասպաբավորվում, յարաղ-ասպաբը կապում, նիլնում ձին, ընկնում աղաք, էդ ճամփեն բռնում՝ էթում։

Էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ քանի էթում ա, տենում ա լավ-լավ չայիր-չիման, կանանչ տեղեր, որ վրեն նստիլ, մի կտոր հաց ուտիլը՝ հենց ի՛նչ ասես աժի. հազար մի ռանգ ծաղիկներ, որ նրանց ֆոտը չէր դիպնում մարդի պնչի[2], խելքամաղ էր անում, թողում. լավ-լավ անմահական աղբրներ, լավ-լավ ջրեր, էնքա՛մ զուլալ, էնքա՛մ զուլալ, որ ասեղը քցեիր մեջը՝ տակին կէրևար, էնքա՜մ զուլալ էր. ավին հո՝ էլ հալ ու հեսաբ չկար, աստու ստեղծած ի՛նչ թավուր ղուշ ասես, ի՛նչ ջուտա ջանավար ասես՝ լիքը։ Մախլաս, գլխներդ ինչ ցավացնեմ, մենծ աղպերը ըտերանք որ չի տենում՝ բերանը մնում ա բաց։

— Հե՜յ գիդի աշխարք,— ասում ա ինքն իրան,— էսթավուր չայիր-չիման տեղերը, էս լավ-լավ անմահական աղբրները հալբաթ հերս միջնեկ աղպորս համար էր պահում, չէր ուզում, որ ես էլ գամ ըստերանք, ման գամ, քեֆ անեմ, իմ աչքն էլ բաց ըլնի, ասեմ՝ աշխարումը ես էլ եմ բան տեհե, մարդկերանց ջերկ ընկե։

---

[1] Տպագիր տեքստում «մախլասի վեց ամիս» արտահայտությունը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում fքի, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Մենծ աղպերն ա՝ էս ասելու բաշտան, էն սհաթը վեր էկավ, ըտե չադիր տվեց, ասեց. «Մի քիչ հաց-մաց ուտենք, դինջանանք. էս լավ-լավ տեղերը ման գամ, սեհր անեմ, մի քանի օր կենամ, էլի վե կենամ, էթամ մեր երկիրը»։

Նոքարներին հրամայեց հացի թադարեք տենան, մնին էլ ղրկեց, որ էթա ավ անի, բալթի ղշից-մշից վե քցի բերի, խորովեն, ուտեն։

Էդ մի նոքարն ա՝ նետուանեղը վեր ա ունում, էթում ավղուշ։ Դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, որ շատ ման ա գալի, տենում ա՝ հրենիկ հա՞, երկնքի էրեսին մի մենծ Սև ղուշ. նետուանեղը որ չի քաշում տալի, էդ ղուշը բանձրանում ա, կրակ դառնում, ընկնում ներքև, թագավորին իրա ղոշնով, նոքարներով, չադրներով, բանով քոմմա էրում, քուլ շինում թողում։

Անց ա կենում մի վախտ, միջնեկ աղպերը տենում ա՝ մենծ աղպերը եղացավ, չէկավ։

— Կա չկա,— ասում ա,— ըստե մի բան կա. մի հարիր մարդ վեր ունեմ, էթամ աղպորս հավարին։

Թագավորությունը թողում ա պուճուր աղպորը, ճամփի թադարեք ա տենում, հարիր մարդ վեր ունում, յարաղ-ասպաբը կապում, ասպաբավորվում, նիլնում ձին, ընկնում աղաք, աղպոր գնացած ճամփեն բռնում, էթում։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ քանի էթում ա, տենում ա լավ-լավ չայիր-չիման, կանանչ տեղեր, լավ-լավ անմահական աղբըրներ։ Ըստոնք որ չի տենում, քեֆը գալիս ա։

— Հե՛յ գիդի աշխարք,— ասում ա,— էս չայիր-չիման, կանանչ տեղերը, էս սիրուն աղբրները հերս հալբաթ պուճուր աղպորս համար էր պահում. չէր ուզում, որ ես էլ մի օր գամ ըստերանք սեհր անեմ, քեֆ քաշեմ, սիրտս մի քիչ բացվի, ուրախանամ, էլի վե կենամ էթամ մեր երկիրը։

Էս ասում ա թե չէ, նոքարներին հրամայում ա՝ ըտե վե գան, չադիր տան, մի քիչ դինջանան, էթա էդ չայիր-չիման տեղերը մխելի ման դա, սեհր անի, մի քանի օր մնա, նո՛ր վե կենա էթա իրանց երկիրը։

Նոքարներն էն սհաթը վեր են գալի, չադիր տալի, զադ-մադերը տեղավորում, ձիանիքն էլ էդ կանանչ խոտերի միջին օրըգում, որ արածեն։

Ննան միջնեկ աղպերն ասում ա՝ հացի թադարեք տենան, նոքարներից մնին էլ ղրկում ա ավի, ասում ա՝ բա՛լի ղշից-մշից վե քցի, բերի, խորովեն ուտեն։

Էդ նոքարն ա՝ նետուանեղը վեր ա ունում, էթում։ Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, է՛ս դիհն էթում, է՛ն դիհն էթում, զադ չի ռաստ գալի. վերջը որ շատ պտտվում ա, տենում ա երկնքի էրեսին հրենիկ մի մենծ Մև ղուշ. ասում ա.—Ա՛րի վե քցեմ, տենամ էդ ի՛նչ ղուշ ա։

Ըտերանք մի քարափ ա ըլնում, մննում ա էդ քարափի տալդեն, նետուանեղը քաշում, ո՛ր չի տալի, ղուշը բանձրանում ա, կրակ դառնում, ընկնում գետինը, թագավորին իրա ղոշնով, ձիանըքանցով, շադրներով, մախլաս՝ ինչ ունեին-չունեին էրում, քուլ շինում թողում։ Համա էդ ավչին չունքի քարափի տալդեն էր մտե՝ մնում ա սաղ-սալամաթ, որ ասես, նրա մի մազն էլ ա չի թնքվում։ Ըստոնք որ չի տենում, ափալ-թափալ դուս ա գալի քարափի տալդիցը ու դո՞ւզ [1] դպա իրանց երկիրը։

Գալիս ա գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա իրանց երկիրը, էթում թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։ Պուճուր աղպերը մնում ա արմացած։

— Բա մեկելներն ո՞ւր են,— հարցնում ա,— բա միջնեկ աղպերս խի՞ չէկավ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. էն ճամփեն բռնեցինք գնացինք, տեհանք՝ լավ-լավ շայիր-չիման, կանանչ տեղեր, լավ-լավ անմահական աղբրներ, որ տենողի խելք էր էթում. ըտե վեր էկանք, չադիր տվինք, կացանք։ Թագավորն ասեց՝ նետուանեղը վեր ունեմ, էթամ ավի. ես էլ վե կալա, գնացի։ Գնացի, գնացի, տեհա երկնքի էրեսին հրենիկ մի Մև ղուշ։ Ասեցի՝ վե քցեմ տենամ էդ ի՛նչ ղուշ ա։ Տալու քաշտան ղուշը բանձրացավ, կրակ դառավ, ընկավ գետինը, թագավորին իրա ղոշնով, ունեցած-չունեցածովը [2] էրեց, քուլ շինեց, թողաց։ Աստոծ խնայեց, քարափի տալդեն ի մտե, թե չէ ես էլ պտի էն ղազարին գայի, ֆողեց-ֆոգի կորչեի։

Պուճուր աղպերն էս որ լսում ա, ձեն ա տալի.— Ա՛յ հարա՛յ,—

---

[1] Տպագիր տեքստում՝ պուկ, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ զադ-մադով, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

ասում ա,— կա չկա մենծ աղպերս էլ ա էդ ճամփեն բռնե գնացե, էդ քյաֆուր ղշին ռաստ էկե, քուլ դառե մնացե։

Շատ ա սուգ ու շիվան անում, գլխին վա՛յ տալի, մղկտում, լաց ըլնում, համա էլ որդե՝ բանը բանից անց էր կացե։

— Ի՛նչ ուղում ա ըլնի,— ասում ա,— մի օր էլել եմ, մի օր էլ պտի մեռնեմ. հարիր ձիավոր պտի վեր ունեմ, էդ ճամփեն բռնեմ էթամ, գլուխս մահի տամ, աղպորտանցս ինադը հանեմ էդ ղշիցը՝ նո՛ր որ սիրտս հովանա։

Ջա՛նըմսան տղեն, թագավորությունը թողում ա մորը, ճամփի թադարեք տենում, հարիր ձիավոր վեր ունում, յարաղ-ասպաբը կապում, ասպաբավորվում, ասսու անումը տալի, թռնում ձին, աղպորտանց գնացած ճամփեն բռնում, էթում։ էն ավչուն էլ ա հեննեն վեր ունում, որ ճամփեն շանց տա։

Գալիս ա, գալի, շատն ու քիչն աստոծ ա խաբար, մի օր, էրկու օր, իրեք օր, տենում ա՝ ղո՛րթ որ լավ-լավ չայիր-չիման, կանանչ տեղեր, լավ-լավ անմահական աղբրներ, որ տենողի խելք էր էթում։ Գալիս ա հասնում աղպորտանց վեր էկած տեղը, ըտե վե գալի, չադիր տալի։ Նստում են հաց-մաց ուտում, դինջանում, նո՛ր պուճուր աղպերը ըտե ղոշունը թողում ա, էն ավչու հեննա վե կենում, էթում Սև ղշի հավարին։

Դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, բո՛ւ յան, օ՛ յան [1], մախլաս՝ շատ որ ման ա գալի, տենում ա Սև ղուշը հրենիկ երկնքի էրեսին էրեվաց։ Ավչու հեննա քաշվում ա քարափի տալդեն, որ փորձանք չպատահի, նո՛ր նետով տալիս ա. տալու բաշտան ղուշը էլի բանձրանում ա, կրակ դառնում, ընկնում ներքև, թագավորի մարդկերանցը քոմմըքին էրում, քուլ շինում, թողում։ Պուճուր աղպերը ո՛ր ամեն բան իրա աչքովը տենում ա, էս հետ ավատում ա ավչուն։

— Ի՛նչ աննենք, ի՛նչ չաննենք,— ասում ա,— որ իմանանք էդ ղուշը ի՞նչ ջանավար ա, որ էս զուլումը բերեց մեր գլուխը։ Է՛թանք,— ասում ա,—էս մոտիկ գեղարեենքը, սրանից, նրանից սալըղ առնենք, հարց ու փորձ անենք, բալի ասեն։

Լա՛վ։ Զիանիքը նիլնում են՝ յա՛լլա։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, է՛ս գեղը, է՛ն գեղը, սրա՛ն են հարցնում, նրա՛ն են հարցնում, թե.— Ցլա՛ն տեղը մեզ

---

[1] է՛ս կողմ, է՛ն կողմ (Ս. Կ.)։

մի Սև ղուշ ռաստ էկավ. էդ ղուշը ըսե՛նց, ըսե՛նց հունար ունի ու էս օյինը բերեց մեր գլուխը. ա՛սու սիրուն, մի ա՛սեք, տենանք՝ էդ ղուշը ի՞նս ա, ջի՞նս ա, ջանա՞վար ա, քե՞ ուրիշ զադ ա։

— Էդ ղուշը որ կա,— ասում են,— հողածին ա, ինքը աղջիկ, անումն էլ Ղահրաման-Բլութ։ Էդ աղջիկը էնքա՜մ ղոչաղ ա, էնքա՜մ հունարով, որ սաղ աշխարքը ձեռին դողում ա. ձեղանից ղոչաղ, ջահել-ջիվան տղամարդիկ են էկե դրա հավարին, համա ձեռները զադ չի ընկե, քոմմըքին էլ էրել ա, քուլ շինե թողե, ընե՜նց մի զուլում-քյար զադ ա։ Մեղք եք,— ասում են,— ջահել-ջիվան եք, էկեք ետ դառեք, գնացեք ձեր արևի ձենն ածեք։

— Չէ՛ որ չէ,— ասում են,— ի՛նչ ուզում ա ըլնի, պտի էթանք, ո՛ր պտի էթանք։ Ջրհանդա՜մը գյոռը, մի օր էլել ենք, մի օր էլ պտի մեռնենք։ Բա էդ աղջկա ամարաթը ո՞րդի ա,— հարցնում են։

— Էդ աղջկա ամարաթը,— ասում են,— ըստիան շատ հեռու ա. էս ճամփեն կբռնեք, կէթաք, կէթաք, կէթաք՝ դուս կգաք դո՛ւզ էդ աղջկա ամարաթի կուշտը։ Նրա երկրի սնուռը հասնեք թե չէ, դուք էլ կքոռանաք, ձեր ձիանիքն էլ, ո՛ր ասես, զադ չեք տենա. համա չվախենաք, ըտենց քոռե-քոռ կէթաք ընչանք ամարաթը հասնիլը. հասաք թե չէ, ալբիալը ձեր աչքն էլ կբացվի, ձեր ձիանոնցն էլ. կտենաք ամարաթի աջ ու ձախ դիհը հրենիկ ասլան, ղափլանը նըստոտած՝ մուղաթ են կենում, որ մարդ-մադաթ, անումը իսանորդի չմննի նեքսև. էն սհաթը կբերեք ձեր ձիանոնցից մինը վե կքցեք. կմորթեք, կես կանեք, կեսը ասլանի աղաքը կքցեք, կեսը ղափլանի, նոր ուսուլով ամարաթի դուռը բաց կանեք, կմննեք նեքսև, կտենաք՝ Ղահրաման-Բլութը աչքերը բաց քնած ա, իրա թլսմի շուշեն էլ հրենիկ գլխավիրևը՝ թարեքի վրեն դրած. ինչքամ թլիսմ ունի, բիրադի էդ շուշի միջին ա. որ կարենաք էդ շուշեն ձեռ քցի, իմաց կացե՛ք Ղահրաման-Բլութը ոտով գլխով ձերն ա, որ ձերն ա։

Պուճուր աղպերն էս որ լսում ա, էլ մաջալ չի տալի, ալբիալը նիլնում ա ձին, էն ավչու հեննա ընկնում ճամփա՝ դո՛ւզ դպա Ղահրաման-Բլթի ամարաթը։

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ հինգ օր [1], դուս են գալի Ղահ-

---

[1] Տպագիր տեքստում «հինգ օր» արտահայտությունը բանահավաքի ձեռքով շնջված է (Ս. Կ.)։

բաման-Բլթի երկիրը. սնուցը հասնելու բաշտան, ոնց որ ասել ին, իրանք էլ են քոռանում, իրանց ձիանիքն էլ, որ ասես, զադ չեն տենում։ Ասում են. «էթանք աղաք, տեննանք, բա՛լքի աչքներս բացվում ա, թե չէ բստերանք ղուրդուղուշի փայ կըլնենք, կմնանք»։ Ըսենց էփեշա տեղ որ էթում են, մի ղաֆիլ աչքները բացվում ա, տեննում են՝ ղորթ որ, հրենիկ աղաքներին մի ամա՛րաթ, մի ամա՛րաթ, մի ամա՛րաթ, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն շինած, որ բերանները մնում ա բաց նրան մտիկ անելոն. տեննում են ամարաթի դռանը հրենիկ ասլան, ղափլան նստոտած, որ ասես իսանորդի չեն թողում մոտանա։ Ալրիալը բերում են ձիանոնցից մինը վե քցում, մորթում, կես անում, կեսը ասլանի աղաքը քցում, կեսը ղափլանի՝ իրանք ուսուլով մննում նեքսև։ Մննում են ի՛նչ տեննում՝ մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, մի ա՛ղջիկ, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ արեվին ասում ա՝ դու մեր մտի, ես դուս եմ գալի, աչքերը բաց խռըմփալեն ընտե քնած ա։ Սրան որ չտեհան՝ խելքամաղ էլան, մնացին, ինադն էլ մտներից ընկավ, զադն էլ։ Պուճուր աղպերը դե՛ս աչք ածեց, դե՛ն աչք ածեց, տեհավ, ըհը՛, հրենիկ թլսմի շուշեն թարեքի վրեն դրած ա։ Ալրիալը վե կալավ, ծովն էլ զաթի մոտիկ, վազեվազ տարավ, քցեց ծովը, վե կացավ էկավ։ Քցելու բաշտան, էն սհաթը Ղահրաման-Բլութը տեղիցը վե կացավ, նստեց։

— Ա՛յ հողածին,— ասեց,— էդ ի՛նչ արիր. էլ թլսմիս շո՛ւշեն խի քցեցիր ծովը, էն ա ես քունն եմ, դու իմը։

— Էդ հո ըտենց ա,— ասեց տղեն,— համա ի՛նչ անեմ, աչքս քեղանից շատ ա վախեցե. ընդուր համար էլ տարա քցեցի ծովը, որ դհա արխեյին ըլնեմ։

Դե՛, Ղահրաման-Բլութն էլ ինչ պտի աներ, կշտին թլսմի շուշա չկար, զադ չկար, որ էլ եղ իրա հունարը շանց տար, ձեն, ծպտուն չհանեց, ասեց. «Տեննամ՝ վերջն ի՛նչ ա ըլնում»։

Ըստե էրկսով էլան մարդ ու կնիկ, էդ ամարաթումը կացան։ Էն ավչուն էլ ամարաթի միջին ջոկ օթախ տվին, որ էթա իրա համար ընդե կենա։ Լա՛վ։

Մի ուրիշ թագավորի աչքն էլ էր ընկե Ղահրաման-Բլթի վրեն։ Էդ թագավորը շատ դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, եքա ղոշուն վե կալավ գնաց վրեն կռիվ, ինչ արեց, չարեց՝ ձեռը զադ չընկավ. փորփոշման թողաց, վե կացավ, էկավ։

Օրեն մի օրը խաբարը բերին էդ թագավորին թե.— Բա՛ չես

ասի՝ Ղահրաման-Բլուքը հրեն ֆլա՛ն թագավորի տղին առել ա, իրա ամարաթի միջին նստե։

Էս որ իմացավ, իրա նոքարներին հրամայեց.— կէթա՛ք,— ասեց,— որդիան որ ըլնի, ման կգաք, մի պառավ կնիկ կգտնեք, կբերեք իմ կուշտը։

Նոքարներն էթում են, դե՛ս ման գալի, դե՛ն ման գալի, մի գզըզված պառավ գտնում, կանչում, բերում թագավորի կուշտը։

— Ա՛յ պառավ,— ասում ա թագավորը,— քեզ մի բան պտի ասեմ, կարա՞ս անի։

— Խի՞ չեմ կարա, թագա՛վորն ապրած կենա,— ասեց պառավը,— ասա՛, տենամ. չկարացի՝ արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ, որ կարաս՝ կասեմ։ Ֆլա՛ն երկրումը,— ասում ա,— մի աղջիկ կա, անումը՝ Ղահրաման-Բլուք։ Էդ աղջիկը սաղ աշխարքը զվիր ա բերե։ Էլ թագա՛վոր ասես, էլ թագավորի ցե՛ղ ասես, մախլասի՝ աշխարքում ինչքամ ղոչաղ տղամարդիկ կան՝ գնացել են նրա հավարին, ձեռները զադ չի ընկե, քոմմըքին էլ էրել ա, ֆող ու մոխիր չինե, թողե։ Համի քեզ տենամ, ա՛յ պառավ, թե կարացիր մի ֆանդով էդ աղջկանը բերի, իմաց կաց՝ քաշովդ մին ոսկի կտամ քեզ։

— Ա՛ղքիս վրեն, թագա՛վորն ապրած կենա,— ասեց պառավը,— դրանից էլ հեշտ բա՞ն։

— Բաս որ ըտենց ա, առ ըս էլ քե ճամփի խարջըղ։

Թագավորը բերում ա դրան մի գոդ ոսկի տալի, ճամփու դնում։

Էս պառավն ա՝ ճղված, ճոթռած, հին-մին, քնձրոտ-մնձրոտ շորեր ա հագնում, բերում մի խնոցի քցում ծովի էրեսը, խնոցու բերանը շորով ղայիմ կալնում, որ մեջը ջուր չլքցվի, վրեն նստում ու գյամու ղայդա քշում դպա Ղահրաման-Բլթի ամարաթը։

Գալիս ա գալի, շատն ու քիչն աստծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, հինգ օր, մախլասի՝ մի շաբաթ [1], դուս ա գալի ծովի էն մի էրեսը։ Պառավը խնոցին ըտե ծովի ղրաղին մի թաքուն տեղ պահում ա, էթում Ղահրաման-Բլթի ամարաթի պատի տակին թեք ընկնում, ղաստահիվանդ տալի։

— Խե՛ղճ, անտեր, անտիրական կնիկ եմ,— ասում ա,— ա՛սու սիրուն մի տեղ տա՞ք սթար անեմ։

---

[1] Տպագիր տեքստում «մի շաբաթ» արտահայտությունը բանահավաքի ձեռքով չնչված է (Ը. Կ.)։

Դե՛, Ղահրաման-Բլուքը իմաստուն էր, է՛լի, տենալու բաշտան ալբիալը գլխի ա ընկնում, որ էդ պառավի միջին մի սատանություն կա. էթում ա քաշում դրան՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ, ձեր հավան կացած, գորսում, սալշարդ անում, ընդհան դուս անում։

Մարդը սրան ղնամիշ ա անում.— Ա՛յ կնիկ,— ասում ա,— էդ խնդե՞, դառն-աղքատ պառավը քեզ ի՞նչ ա արե. խի՞ ես ծեծում։ Հադիր ա՛րի, բերենք հաց տաենք պահենք, թո՛ղ մեր տան բանն անի, էփի, թափի, լվանա, ավիլ անի, մախլաս՝ ինչ որ ձեռիցը գա՝ կանի էլի. խեր չտված՝ հո վնաս չի՞ տա մեզ։

— Ա՛յ մարդ,— ասում ա Ղահրաման-Բլուքը,— տե՛ս դրանից շատ կգա մեզ, հա՞. եննա չասես, թե՝ ըսենց չի, ընենց ա։

— է՛հ, ա՛յ կնիկ, դա ի՞նչ ա, որ դրա շատն ի՞նչ ըլնի. դու էլ ընենց բան ես ասում ո՞ր...

— Դո՛ւ դիտաս, ա՛յ մարդ, ես մի բան էր՝ ասեցի. սրանից դենը մնդրն ու վարձքը քու շլինքը։

Բերում են, վարձք դնին էդ պառավին վեր ունում, ամարաթուն պահում։

Էդ պառավն ա՝ մնում ա ըտե, դրանց աղաքին ղուլլուղ անում, էփում, թափում, լվանում, ավլում. մախլաս՝ կնիկ ա, էլի՛, ի՛նչ որ ձեռիցը գալիս ա՝ անում ա։ Անց ա կենում ըսենց մի վախտ՝ մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մի ամիս, էդ պառավը ընե՞նց մի ղուլլուղ ա անում դրանց աղաքին, ընե՞նց մի նստում, վե կենում, ժաժ գալի, որ մարդ ու կնիկ դրան էնքա՞մ սիրում են, էնքա՞մ ուզում, ոնց որ իրանց հալալ մորը։ Էդ պառավը հեննեն քնացնելու դեղ էր բերե. օրեն մի օրը որ խուլվաթ ա քցում, դեղը մոտացնում ա մարդ՛ու կնկա պնչին, ալբիալը նրանք քնում են։

Պա՛ռավ, դու պառավ, էլ մաջալ մի՛ տա, էն սհաթը շալակա Ղահրաման-Բլթին, յա՛լլա դպա ծովի ղրաղը։ Խնոցին պահած տեղիցը հանում ա, Ղահրաման-Բլթին կոխում մեջը, եննա խնոցին քցում ծովի էրեսը, ինքն էլ շեք անում, վրեն նստում ու դո՛ւզ դպա էն թագավորի երկիրը։

Գալիս ա, գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, դուս ա գալի ծովի էն մի էրեսը։

Խաբարը տանում են թագավորին թե.—Պառավը հրեն Ղահրամանի-Բլթին բերում ա։

Թագավորը ուրախանում, աշխարով մին ա ըլնում, էն սհաթը եքա ղոշուն ա վեր ունում, դուս գալի պառավի աղաքը։

— Ա՛յ դու բարո՜վ, հազա՜ր բարին ես էկե,— ասում ա թագավորը,— ամեն ճամփից[1] սալամա՜թ, ո՞նց ես, լա՞վ ես։

— Բարին ա՛րևդ, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա պառավը։

Ասում ա ու խնոցու բերանը բաց անում, Ղահրամանի-Բլթին ընդհան հանում՝ մի ա՜ղջիկ, մի ա՜ղջիկ, մի ա՜ղջիկ, էնքա՜մ սիրուն, էնքա՜մ նաշխուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես՝ հենց նրա բամբակի նման սիպտակ, շարմաղ էրեսին թամաշ անես, հայիլ-մայիլ ըլնես մնաս. աղջիկ մի ասի, մի ակն ու արեգակ, մի մարալ, մի ջեյրան, մի հուրի-մալաք ասա։

Թագավորը Ղահրամանի-Բլթին որ չտեհավ, խելքամաղ էլավ, մնաց։ Պառավը նստեց ըստե մին-մին իրա գլխով անցկացածը նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Նո՛ր ըստիան Ղահրամանի-Բլթին առոք-փառոք վեր կալան, բերին թագավորի ամարաթը։ Պառավը չիբիցը մի ուրիշ դեղ հանեց, մոտացրեց Ղահրամանի-Բլթի պնչին թե չէ, Ղահրամանի-Բլութը ալբիալը վեր կացավ նստեց։

Խեղճ աղջիկը՝ որ աչքերը բաց չարեց, տեհավ էդ թագավորի ամարաթի միջին, մնաց սառած սրա, նրա էրեսին մտիկ անելոն, թե՝ ես ով, էս թագավորն ով, որ էկել եմ սրա կուշտը։

Միտք արեց, միտք արեց, միտք արեց, նո՛ր գլխի ընկավ, թե բանն ընչումն ա։

— Բա՛լի,— ասեց,— կա չկա ըստոնք քոմմա էն ջադուբյար պառավի բաներն ա, էլ մարդի չէ։

Շատ գլխին վա՛յ տվեց, լաց էլավ, համա էլ որդե՝ բանը բանից անց էր կացե։ Տհհավ, որ պրծնելու ճար, իլլաճ չկա, միտք արեց ֆանդով ժաժ գա, ընչանք տենա՝ վերջն ինչ ա ըլնում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— ես գիտամ խի՛ ես ինձ բերիլ տվե. միտքդ էն ա, որ քեզ առնեմ, ընենց չի՞։

---

[1] Տպագիր տեքստում՝ «ամեն ճամփեդ սալամաթ», ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Հա՛,— ասեց թագավորը,— էդ չէլած, բա ի՞նչ պտի ըլնի։

— Բաս որ ըտենց ա, ինձ մի տասնըհինգ օր մհուլ տու, նրանից դենը ես քունն եմ, դու իմը։ Ո՞ղի ես։

— Ուզի եմ,— ասեց թագավորը,— թող քու ասածն ըլնի՝ տասնըհինգ օր քեզ մհուլ։

Բերեց դրան իրա ամարաթի միջին չոկ օթախ տվեց, որ իրա համար կենա, ընչանք պսակվիլը։

Էն չադուքյար պառավը գիտար, որ Ղահրաման-Բլթի Թլսմի շուշեն ծովի միջին ա. էկավ թագավորին ասեց.— Թագա՛վորն ապրած կենա, Ղահրաման-Բլթի Թլսմի շուշեն հրեն ծովի միջին ա, կարաս՝ հանիլ տու. որ հանիլ տաս, իմաց կաց նրա ֆոգին քու ձեռին ա, էլ բան չի կարա անի։

— Լա՛վ,— ասեց թագավորը,— դրանից էլ հեշտ բա՞ն։

Էն սհաթը չաո գոռալ տվեց սաղ իրա երկրումը, որ ինչքամ թոռչի կա, քոմմա հավաքվեն ծովի ղրաղը, թոռ քցեն, բալի էդ Թլսմի շուշեն հաննեն։ Թագավորի հրամանն էր՝ ի՛նչ պտի ասեին, չգային։ Սաղ նրա երկրի թոռչիքը հավաքվեցին ծովի ղրաղը, թոռ քցեցին։

Քցեցին՝ հաննեցին, քցեցին՝ հաննեցին, քցեցին՝ հաննեցին, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի սաղ շարաթ քցեցին, անջախ ինչ հալոն հաննեցին, բերին տվին թագավորին։ Թագավորը վե կալավ պահեց։ Սննա էն պառավին, ոնց որ խոստացել էր, բերեց իրա քաշովը ոսկի տվեց, ճամփու դրեց։

Ղահրաման-Բլթին թողանք էդ թագավորի կշտին, գանք խաբար տանք նրա մարդիցը։

Խեղճ տղեն մնաց ընենց քնած ամարաթի միջին։ Ավչին էլ բեխաբար, ի՛նչ իմանար ինչ ա էլէ, ինչ չէ, որ գար հավարին հասներ։ Դե՛, ախար ո՞ւմ մտքովը կանցկենար, թե էն չադուքյար պառավը էդ օյինը կգա նրանց գլուխը։ Էդ պուճուր աղպերն էլ, որ թագավորությունը թողել էր մորը, ինքը վե կացե էկե Ղահրաման-Բլթի հավարին, դրա մերը մի դհից, երկրի խալխը մի դհից միտք ին անում. «Ա՛դպեր,— ասում ին,— ըսենց բան չիլնի, մեր թագավորը գնաց, էլ չէկավ, ո՛նչ իզն ա էրևում, ո՛նչ թողը. էկե՛ք մեր միջիցը մի իրեք մարդ ջոկենք, էթան աշխարե-աշխար, երկրե-երկիր ման գան, հարց ու փորձ անեն, սալըղ առնեն, տեննանք՝ ի՛նչ էլավ՝ ղուշ

կերավ նրան, ղուրդ կերավ, ջանավար կերավ, թե ընչանք հմի սաղ ա»։

Բերում են իրենք մարդ ջոկում, որ էթան իրանց թագավորի ենեսուցը։

Էդ մարդիկն են՝ մի քանի ամսվա ճամփի պաշար են վեր ունում, ասպարավորվում, նիլնում ձիանիքը, պուճուր աղպոր գնացած ճամփեն բռնում էթում։

Էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ քանի էթում են, տեսնում են լավ-լավ չայիր-չիման, կանանչ տեղարեենք, լավ-լավ անմահական աղբրներ։ Ասում են. «Ըստե վե գանք, մի քիչ հաց-մաց ուտենք, դինջանանք, էլ վե կենանք, մեր ճամփեն էթանք»։ Վեր են գալի, ձիանիքը կանանչ խոտերի միջին օրըգում են՝ արածեն, իրանք նստում են, խուրջինները բաց անում, հացները դնում աղաքները, կուշտ ու կուռ ուտում, էն անմահական աղբրների ջրիցն էլ վրեն խմում, մի քիչ դինջանում, եննա վե կենում, նիլնում ձիանիքը՝ էթում իրանց ճամփեն։ Դե՛ս են էթում, դե՛ն են էթում, մախլաս՝ ո՛ւր էթում են, հարցնում են, թե. «Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց նշանով մարդիկ հո չե՞ն էկե, դեսը անցկացե»։

Որը «հա՛» ասում, որը «չէ՛», մախլաս՝ մի դրուստ ջուղաբ չեն իմանում։

Վերջը գալիս են մի գեղ հարցնում.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց նշանով մարդիկ հո չե՞ք տեհե։

— Ո՛նց չէ,— ասում են,— ֆլա՛ն վախտը ըտենց էրկու ձիավոր էկան, դեսը անցկացան։

— Բա չիմացա՞ք՝ ուր ին էթում,— հարցնում են։

— Էթում ին Ղահրաման-Բլթի հավարին. ի՛նչ արինք, չարինք, չկարացինք եղ դարձնի՝ վե կացան գնացին. աստոծ գիտա՝ ընչանք հմի սա՞ղ են, թե էն անիսաֆ աղջկա ձեռն են ընկե, նրանց մենծ թիքեն անկաչն ա թողե։

— Էդ աղջկա ամարաթը ո՞րդի ա,— հարցնում են,— մընք էլ էդ էրկու ձիավորի մարդիկն ենք, էկել ենք նրանց եննուցը, աշխարեաշխար, երկրե-երկիր ման ենք գալի, բալի գտնենք։

— Էս ճամփեն կբռնեք,— ասում են,— կէթաք, կէթաք, կէթաք, կէթաք՝ դուս կդաք դո՛ւզ էդ աղջկա ամարաթի կուշտը։ Հենց որ հասաք էդ աղջկա երկրի սնուտը, դուք էլ կքոռանաք, ձեր ձիա-

նիքն էլ. ըտենց քոռե-քոռ կէթաք, ընչանք ամարաթը հասնիլը. հենց որ հասաք, ալբիալը աչքներդ կբացվի, կտեսնաք՝ հրեն նրա ամարաթի դռանը ասլան, ղափլան նստոտած՝ իսանորդի չեն թողում նէքսև մննի. ալբիալը ձեր ձիանոնցից մինը վե կքցեք, կմորթեք, կես կաննք, կեսը ասլանի աղաքը կքցեք, կեսը ղափլանի, նո՛ր անսաս կմննենք նեքսև։

Էդ իրեք ձիավորը նրանց շանց տված ճամփեն բռնեցին, գնացին։ Գնացին, գնացին, շատն ու քիչն աստոծ ա խաբար, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ հինդ օր, հասան Ղահրամանե-Բլթի երկրի սնուռը։ Սնուռը հասան թե չէ, իրանք էլ քոռացան, իրանց ձիանիքն էլ։ Ըտենց քոռե-քոռ գնացին, գնացին, գնացին, մի վախտ աչքները բացվեց, տեհան ղորթ որ աղաքներին մի ամարաթ՝ ասլան, ղափլանն էլ հրենիկ ամարաթի դռանը նստոտած են։ Ալբիալը բերին ձիանոնցից մինը վե քցեցին, մորթեցին, կես արին, կեսը ասլանի աղաքը քցեցին, կեսը՝ ղափլանի, իրանք մտան նեքսև։ Դե՛ս ման էկան, դե՛ն ման էկան, է՛ս օթախը, է՛ն օթախը, տեհան մարդ-մադաթ չկա։ Վերջը մի օթախ մտան, տեհան՝ մի մարդ հրենիկ ընդե քնած ա։ Մոտացան, ի՛նչ տենան՝ իրանց թագավորը։ Ոտեցան վե կացնի, ինչ արին, չարին՝ չկարացին. բոթեցին, ձեն տվին, տեհան՝ չէ, ըսկի նրա այնումն էլ չի։ Թագավորը ընենց չէր քնե, որ հեշտ ու հանգիստ վե կենար։

Վերջը տեհան, որ նրան վե կացնելու ճար, իլլաջ չկա, ընենց թողացին, դուս էկան, գնացին մեկել օթախները, տենան ընդերա՞նք ով կա, ով չկա։ Ամարաթի միջին դե՛ս ման էկան, դե՛ն ման էկան, է՛ս օթախը մտան, է՛ն օթախը մտան, վերջը մի օթախի դուռ էլ բաց արին, տեհան, ըհը՛, էն ավչին ընդե։ Տենալու բաշտան ալբիալը ճանանչեցին։

— Ա՛յ դու բարո՛վ, հազա՛ր բարին,— ասեցին,— ո՞նց ես, լա՞վ ես։ Ախար ըսենց բան չիլնի. էսքամ վախտ մեռանք մեր թագավորին ման գալոն՝ անջախ գտանք, ըն էլ քնած ա. ինչ անում ենք, չենք անում՝ վե չի կենում։

— Ո՞նց թե քնած ա,— ասում ա ավչին։

— Քնածը ո՛նց կըլնի, քնած ա էլի. էնքամ ձեն տվինք, բոթեցինք, ըսկի այնումն էլ չի։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։ Չես ավատում, ա՛րի տես։

Ավչին նրանց հեննա գալիս ա տենում, ղորթ որ թագավորը հրենիկ քնած ա, կնիկն էլ կշտին չի։ Դե՛ս կնիկ, դե՛ն կնիկ, է՛ս օթախը, է՛ն օթախը, որդի էթում ա՝ չկա, ո՛ր չկա։

— Բա՛լի,— ասում ա,— կա չկա՝ ըստե մի բան կա։

Բերում ա ալբիալը մի դեղ ա մոտացնում պնչին, թագավորը վեր ա կենում նստում։

— Ովվե՛, էս ի՛նչ շատ եմ քնե,— ասում ա թագավորը։

Ենենա որ դե՛ս, դե՛ն ա մտիկ տալի, տենում ա կնիկը կշտին չի, ալբիալը մատը կծում ա.— Բա՛լի,— ասում ա,— կա չկա՝ էս էն ջադուքյար պառավի բաներն ա, էլ մարդի չէ՛։

Նո՛ր նստում են դնսից, դենից, դաղդան, դաշդան ասում, խոսում, մասլահաթ անում, իրար հալ հարցնում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում, ընչանք դառը կես-գշեր։ Ենենա բերում են հացը քցում, նրստում հացի։ Հաց են ուտում պրծնում, պառկում են քնում։

Առավոտը լիսը բացվում ա թե չէ, խարարը բերում են պուճուր աղպորը, թե՝ «Ծովի էն էրեսին մի թագավոր կա, էդ թագավորն ա Ղահրաման-Բլրին փախցնիլ տվել ու ըսօր ա, յա էգուց պտի պսակվի. ճար ունես՝ ճարդ տե՛ս»։

Պուճուր աղպերը էս լսում ա թե չէ, ալբիալը գեյմը փոխում ա, աղքատի շորեր հագնում, մեն-մենակ վե կենում, ճամփա ընկնում դպա ծովի էն էրեսը՝ կնկա հավարին։ Որ հասնում ա էն թագավորի երկիրը, էթում ա մի պառավի դուռ ծեծում։ Պառավը դուս ա գալի։

— Ա՛յ նանի,— ասում ա,— ղոնաղ չե՞ք ուզի. ղարիբ մարդ եմ, մի քանի օր ձեր տանը սրթար անեմ, էլի վե կենամ, էթամ իմ բանին։

— Խի՞ չենք ուզի,— ասում ա պառավը.— ղոնաղն աստունն ա։

Դրան աղաք ա անում, բերում տուն, հաց դնում աղաքը, մախլաս, ո՛նց որ կարգն ա, պատվում։ Էդ պառավը թագավորի տունը գնալ-գալ ա ունենում։

— Ա՛յ նանի, ըսկի ի՞նչ թազա խաբար կա ձեր երկրումը,— հարցնում ա պուճուր աղպերը։

— Ըսկի, ի՛նչ պտի ըլնի ո՛րդի,— ասում ա պառավը,— թազա խաբարն էն ա, որ էգուց մեր թագավորը պսակվում ա։

Տղեն էս որ իմացավ, էլ չկարաց իրան պահի, սիրտը պառավի աղաքին բաց արեց։

— Ա՛յ նանի,— ասեց,— բա չես ասի՝ ես ֆլա՛ն մարդն եմ,

ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բանի համար եմ էկե։ Քու ֆոգուն վարձք ա, նա՛նի, ի՛նչ կըլնի մի ֆանդով Ղահրամանի-Բլթին իմաց տաս իմ գալը։

— Լա՛վ, ա՛յ որդի,— ասեց պառավը,— հենց էգուց պտի թագավորի ամարաթն էթամ, կասեմ։

Էգսի օրը պառավը վեր կացավ, գնաց թագավորի ամարաթը։ Տեհավ խոլվաթ ա, մարդ-մադաթ չկա, ուսուլով մտավ Ղահրամանի-Բլթի օթախը։

— Ա՛նուման սաղ ըլնի,— ասեց,— բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսենց բան։

— Ա՛յ պառավ, ո՞րթ ես ասում, թե սուտ։

— Ո՛րթ եմ ասում, խա՛նում ջան, չես ավատում, էթանք քու աչքովը տես։

— Բաս որ ըտենց ա,— ասեց,— կէթաս կասես՝ արխեյին կենա. ըսօր ա, յա էգուց, ոնց որ ըլնի, գլուխ կառնեմ, կէթամ ըստիան։

Էդ օրն էլ հենց Ղահրամանի-Բլթի հարսանիքն էր։

— Ո՛նց անեմ, ո՛նց չանեմ,— միտք ա անում Ղահրամանի-Բլութը,— որ թլսմիս շուշեն ձեռ քցեմ։

Մարդ ա ղրկում թագավորին կանչիլ տալի։

— Թագավորն ապրած կենա,— ասում ա,— քեզ մի բան եմ ուզում ասի։

— Էրկուսն ասա,— ասում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում՝ ա,— հմի հո ես քունն եմ, դու իմը. էս իրիկուն էլ գաթի պտի պսակվենք. ինչ կըլնի՝ թլսմիս շուշեն տաս ինձ։

— Աչքիս վրեն,— ասում ա թագավորը,— ես քեզանից գա՛տ կխնայեմ։

Էն, սհաթն էթում ա բերում, տալի նրան. նա էլ վեր ա ունում, դնում ջեբը։

Դե՛, էդ իրիկուն նրանց հարսանիքն էր, է լի։ Հարս ու փեսա, զուգված, զարդարված, կուռ-կռի տված, թագավորի նազիր-վեզիրը էններուցը, էթում ին ժամ։ Հենց էդ վախտը Ղահրամանի-Բլութը միզաֆիլ ընկնց աներևութք էլավ, էլ չէրևաց, որ սաղ հարսանքավորը մնաց բերանը բաց մտիկ անելուն, թե էս աղչիկը սատանա՞ էր, ի՛նչ էր, ընենց աներևութք էլավ, որ ո՛նչ իզն էրևաց, ո՛նչ թոզը։

Դե՛ս ընկան, դե՛ն ընկան, ինչ արին չարին՝ չգտան, ո՛ր չգտան։

Ղահրաման-Բլութը փախավ մտավ էն պառավի տունը, նո՛ր ընդհան մարդի հեննա ճամփա ընկավ դպա իրա ամարաթը։ Մարդ ու կնիկ էկան, էկան՝ հասան ամարաթը. ըտե մի քանի վախտ կացան, եննա ինչ կար չկար ամարաթի միջին՝ մա՛լ, դո՛լվա՛թ, հարըստությո՛ւն, խազինա՛, քոմմա կիտեցին, բարձեցին ձիանիքը, ավչուն ու էն իրեք ձիավորին էլ հեննները վե կալան, ընկան ճամփա՝ դպա պուճուր աղպոր երկիրը։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, էրկու շաբաթ[1], հասնում են պուճուր աղպոր երկիրը։ Նո՛ր ըստե Ղահրաման-Բլութն ու պուճուր աղպերը թազադան պսակվում են, օխտն օր, օխտը գշեր հարսանիք ըլնում։ Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛ւն, ինչ դափ ու զուռնա՛, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրա՛նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրազին։

---

1 Տպագիր տեքստում «մի շաբաթ, էրկու շաբաթ» արտահայտությունը բանահավաքի ձեռքով չնչված է (Ս. Կ.)։





10· ՉՈՓՉԻ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի Չոփչի։ Էս Չոփչին հենց ինքն ա ըլնում, մի կնիկ. ո՛նչ տղա, ո՛նչ աղջիկ, ո՛նչ մեր, ո՛նչ քիր, ո՛նչ աղպեր, մախլաս ըսկի զադ չի ունենում՝ մարդ ու կնիկ են ըլնում, իրանց չոր գլուխը։

Էս մեր Չոփչու բան ու փեշակը հենց էս էր. ասսու իրան օրը, դեռ լիսն ու մութը չբաժանված, վե կկենար, պարանը վե կուներ, կէթար հանդը չոփ կիտելու, իրիկունը կգար տուն։ Ընենց էլ մի ղուլում չոփ կիտող էր, որ հանդումը մի չոփի կատր էլա չէր թողա, որ ղշերը տաննեն իրանց համար բուն շինեն, յա՛ մի ճամփորդ ռաստ գալիս, ցուրտ վախտը մի քանի չոփ էլա հավաքեր, բերեր վառեր, տաքանար։

Օրեն մի օրը էս Չոփչին էլի վեր ա կենում, պարանը քցում ուսը, էթում հանդը, ճամփին սրան մի Օձ ա ռաստ գալի։

— Բարո՛վ, Չո՛փչի աղպեր,— ասում ա։

— Բարո՛վ, հաղա՞ր բարին,— ասում ա,— Օ՛ձ աղպեր։

— Ախար ըսենց բա՞ն կըլնի,— ասում ա Օձը,— էլ աշխարքումը չոփ չես թողում՝ հավաքում ես. ջանավա՛ր ասես, ղո՛ւշ ասես՝ բոմմա քեզանից գանգատավոր են։

— Ի՞նչ անեմ, Օ՛ձ աղպեր,— ասում ա,— քյասիբ մարդ եմ, իմ ապրուստն էլ դրանից ա. էթում եմ հավաքում, բերում ծախում, տուն, տեղ, օղլուշաղ պահում։ Ուրիշ փեշակ էլ չունեմ, որ ասեմ հա։

— Լա՛վ,— ասում ա Օձը,— որ քյասիբ ես՝ մի բան ասեմ անկաջ կա՞նես։

1646—11

— Խի՞ չեմ անի, Օ՛ձ աղպեր. ասա՛ տենամ։

— Հրեդ վե կալ դագանակդ,— ասեց,— տո՛ւ, գլուխս ջընջխա՛. եննա մի քիչ գլխիս դհիցը կտրա՛, մի քիչ պոչիս դհիցը, դեն քցա՛, մնացածը վե կալ տա՛ր ձեր հայաթումը մի ղրաղ տեղ ֆորա՛, վրեն էլ մի լավ մատուռ կապա՛։ Մի քանի ամսեն վրա,— ասեց,— էդ մատռի միջին մի նռան ծառ դուս կգա, եքա-եքա նռներ կտա. հենց որ նուռը պոկես, բերես տապակ անես՝ կտենաս միջին ակն ու մարգարիտ[1], մարջան ու հազար մի ջուտա անգին քարեր։ Կտանես քեզ համար կծախես, կհարստանաս, մըկ էլ չես գա ըստերանք քյասիբ-քյուսուբի ռուզղը կտրի։

— Չէ՛, Օ՛ձ աղպեր,— ասաց Զոփչին,— էդ գլուխ գալու բան չի, ի՛նչ ասես՝ կանեմ, էդ՝ չէ։ Քյասիբ եմ, քյասիբ՝ դո՞ւ ինչ անես։

— Քե՞զ ինչ, ա՛ղպեր,— ասեց Օձը,— ի՛նչ ասում եմ՝ արա՛. դու հո իմ գլխի վեքիլը չե՞ս։

Զոփչին աղաք չէր հավատում, վախում էր չըլնի՞ թե շանթի. համա տեհավ որ չէ՛, շատ ա զոռում, էլ թամաշ չարեց. վե կալավ դագանակը, տվեց Օձի գլուխը ջընջխեց, մի քիչ գլխի դհիցը կըտրեց, մի քիչ պոչի դհիցը դեն քցեց, մնացածը բերեց տուն, հայաթումը մի ղրաղ տեղ ֆորեց, ոնց որ ասել էր՝ վրեն էլ բերեց մի լավ մատուռ կապեց։

Անց կացավ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը վե կացավ գնաց ակը տալու։ Գնաց ի՞նչ տեհավ՝ ղո՛րթ որ, մատռի միջին հրեն մի նռան ծառ. վրի նռանն էլ հո՛ հալ ու հեսաբ չկա։

Ասեց.— Տենամ միջին զադ կա՞ թե չէ։

Մի հատ քաղեց, տապակ արեց՝ ի՞նչ նուռը, քոմմա ակն ու մարգարիտ, մարջան ու հազար մի ջուտա անգին քարեր։

— Փա՞ռդ շատ ըլնի,— ասեց,— աստո՛ծ, էս հետ ինձ հասցըրիր՝ լա՛վ հասցրիր. ախար ես մեռա էսքամ տարի չոփչությունանելոն, ձեռս զա՛դ չընկավ։

Ուրախությունիցը էդ գշեր Զոփչու քունը չի տարե, սաղ գշեր խեղճը բաց աչքով ա լիսացրե։

Առավոտը գշերով-գշերհանա վե կացավ, նուռը վե կալավ, ղրեց ջեբը, տարավ բազար, որ ծախի։ Է՛ս զարգյարի կուշտը, է՛ն

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ Բուլիաճու, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

զարգյարի կուշտը, դե՛ս տարավ, դե՛ն տարավ՝ առնող չէլավ։ Վերջը որ շատ ման էկավ, մի Ջհուդ զարգյար ռաստ էկավ։

— Ա՛ղպեր,— հարցրեց,— էդ ի՞նչ ես ծախում։

— Ակն ու մարգարիտ,— ասեց։

— Հատը ո՞նց ես տալի։

— Հենց ո՛նց որ ուզում ես։

— Հատին հազար մանեթ տա՞մ։

— Տո՛ւ,— ասեց,— տա՛ր խերը տես։— Համա ինքն իրա միջին ընենց էր իմանում, թե վրեն ծիծաղում ա։

Ջհուդն անխոս հանեց, հատին հազար մանեթ համբրեց, ձեռից առավ։

— Սրանից է՞լ ունես,— հարցրեց,— թե հենց էս ա։

— Հենց ի՛նչքամ ուզում ես,— ասեց,— որ բերեմ կա՞նես։

— Կառնեմ,— ասեց Ջհուդը,— խի՞ չեմ առնի։

Ջոփչին ուրախ-ուրախ տուն ա գալի, մնացած նռներից մի քանի հատ էլա պոկում, տապակ անում, քարերը հանում, բերում էդ Ջհդի վրեն հատը հազար մանեթով սաղացնում։ Մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը՝ ըսենց հարստանում ա, եքա փողի, մըլքի տեր դառնում։

Խալխը մնացել ին միտք անելոն, թե էս խեղճ, քյասիբ, անճար, օրեն հացի մուրացկան Ջոփչին ոնց հարստացավ, էսքամ մալ ու դոլվաթի տեր էլավ։

Էդ քաղաքումը մի շատ հարուստ բեզրգյան ա ըլնում։

Էս բեզրգյանը ինքն իրան միտքն ա անում. «Ա՛ղպեր,— ասում ա,— էս մարդը էրեկվա Ջոփչին չէ՞ր, որ պարանը վեր էր ունում, էթում հանդը չոփ կիտելու. համի էսքամ մալ ու դոլվաթը, հարստությունը ո՞վ տվեց սրան, չոփչությունով հո չաշխա՞տեց։ Կա չկա,— ասում ա,— ըսենց մի բան կա. ո՛նց որ ըլնի, ես պտի իմանամ։ Լա՛վ»։

Մարդ ա ղրկում, մի պառավ կնիկ ա կանչիլ տալի կուշտը։

— Ա՛յ բաջի,— ասում ա,— էն Ջոփչուն հո ճանա՞չում ես, որ համի էնքամ հարստությունի, մալ ու դոլվաթի տեր ա դառե։

— Լա՛վ, շատ լա՛վ եմ ճանանչում, բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա պառավը։— Խի՞ որ, ի՞նչ ես անում։

— Ջե՞ս կարա մի ֆանդով իմանա, տենանք էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթը նրան ո՞վ ա տվե։

— Խի՞ չեմ կարա,— ասում ա,— դրանից էլ հեշտ բա՜ն։

— Քեզ տենամ, հը՜, բա՛ջի, որ իմացել ես, հենց ինչ ուզես՝ կտամ։

Էս ջադուքյար պառավն ա՝ քնձրոտ-մնձրոտ, ճղված-ճոթռած շորեր ա հագնում, վե կենում, էթում դուզ Ջուփչու տունը։

— Ի՞նչ բանի համար ես էկե,— հարցնում ա Ջուփչին։

— Խեղճ անտեր, անտիրական կնիկ եմ,— ասում ա,— ի՞նչ կըլնի ձեր արևի սադաղին մի կտոր հաց տաք՝ պահեք. ես էլ աղաքներիդ ղուլլուղ կանեմ՝ ջուր կբերեմ, ավիլ կանեմ, մախլաս, ինչ որ ձեռիցս կգա՝ կանեմ։

— Լա՛վ,— ասում են մարդ ու կնիկ,— զաթի մընք էլ քեզ նման կնկա ինք ման գալի, որ էփի, թափի, լվանա, մեր տան բանն անի։—Վեր են ունում, վարձքի խաթեր իրանց տանը պահում։

Անց ա կենում մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, էս պառավը ընե՞նց մի լավ ղուլլուղ ա անում, ընե՞նց մի ժաժ գալի, նստում, վե կենում, որ Ջուփչին, իրա կնիկը սրան շատ սիրում են. մի խոսքով, իրանց հալալ մորը էնքան չին ուզի, ինչքան սրան չին ուզում։ Ըսենց նրանց աչքը մննելուց նդը, օրեն մի օրը, Ջուփչու կնկանը որ մենակ ա քցում, կպնում ա յախին։

— Խա՛նում ջան,— ասում ա,— քեզ ուզում եմ մի բան հարցնի, համա քաշվում եմ։

— Խի՞ ես քաշվում, ա՛յ բաջի, ասա՛. ասա՛ տենամ ի՞նչ ես ուզում։

— Խա՛նումը սաղ ըլնի,— ասում ա պառավը,— ես ուզում ի հարցնեմ, տենամ՝ էսքան հարստությունը, մալ ու դոլվաթը ձեզ որդիան ա. ի՛նչքան միտք եմ անում, միտք եմ անում, խելքս չի հասնում, թե ասեմ էսքանն էլ աշխատել եք, ըսկի ավատալու բան չի. ասեմ՝ գտել եք, ըտ էլ չիլնի։ Մախլա՛ս. կա՛, չկա՛՝ ըստե մի բան կա. դու արի՛, խա՛նում ջան, դրուստն ասա՛։ Ես էլ գիտաք, որ ձեր մերն եմ, չեմ էթա մեր սրուը խալխին ասի։

Ջուփչու կնիկը աղաք չեմ ու չում արեց, ուզեցավ չասի, համա տեհավ, որ շատ ա դեմ ընկնում, նստեց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց։

— Ա՛յ բաջի,— ասեց,— բա չե՞ս ասի, մեր քյասիբ վախտը, մի օր մարդս էթում ա հանդը չոփ կիտելու, ճամփին նրան մի օձ ա ռաստ գալի. «Ջուփչի աղպեր,— ասում ա,— ըտենց հո չի՞լնի,

հանդումն էլ չուփ չես թողում՝ հավաքում ես. խեղճ ղշերի ուղղն էլ ես կորում»։ «Ի՞նչ անեմ, Օ՛ձ աղպեր,— ասում ա մարդս,— ես էլ խեղճ եմ, անճար եմ, դրանով եմ ապրուստ անում»։ «Բաս որ ըտենց ա,— ասում ա Օձը,— տո՛ւ, ինձ սրպանա. մի քիչ գլխիս դհիցը կարա՛, մի քիչ պոչիս դհիցը, մնացածը տար ձեր հայաթումը ֆորա՛, վրեն մատուռ կապա՛։ Մի քանի ամսեն վրա,— ասում ա,— կգաս, կտեսնաս էդ մատռի միջին նռան ծառ ա դուս էկել, եքա-եքա նոներ ա տվել։ Հենց որ նուռը քաղես, տապակ անես, կտեսնաս մեջը լիքը ակն ու մարգարիտ, մարջան ու հազար մի ջուռա անդին քարեր։ Կտանես,— ասում ա,— կծախես, մըն էլ չես գա ըստերանք չուփ կիտի»։ Մարդս էլ քաշում ա դագանակը, տալի Օձին սրպանում, մի քիչ գլխի դհիցը կարում, մի քիչ պոչի դհիցը՝ դեն քցում, մնացածը բերում մեր հայաթումը ֆորում, վրեն էլ մի լավ մատուռ կապում։ Անց կացավ մի վախտ, բա չե՞ս ասի, ա՛յ բաջի, ինչ որ Օձն ասել էր՝ մին-մին, տեղը-տեղին կատարվեց։ Հրենիկ տե՞նում ես էն մատուռը,— մատով շանց ա տալի,— նռան ծառը էդ մատռի միջին ա. վրի նռանն էլ հո՛ հալ ու հեսաբ չկա. ինչքամ քաղել ենք ծախե, քսան էնքամ էլ դեռ կենում ա։ Համի ա՛հար, ա՛յ բաջի, ո՛նց ենք հարստացե։

— Տեհա՛, խա՛նում ջան, տեհա՛. աստոծ ձեր մինը հազար անի, ո՞վ չի ուզի։

— Համա չըլնեմ-չիմանամ, ա՛յ բաջի, էթաս սրան, նրան ասես, հա՛, թե չէ էլ մարդիս ձեռիցը չեմ պրծնի՝ մահս կտա [1]։

— Չէ՛, խա՛նում ջան, ես հո էրեխա չեմ, էթամ մեր սրոը խալխին ասեմ։

Համա ո՞րդե. հենց հեգսի օրը, ինչ որ լսել էր, փեշումը կոլոլեց, գնաց բեղրգյանին խաբար տվեց։

— Բեղրգյա՛նը սաղ ըլնի,— ասեց,— բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։— Նստեց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց։

— Լա՛վ,— ասեց բեղրգյանը,— հմի ե՛ս գիտամ, նա՛։— Հանեց պառավին մի գոգ ոսկի տվեց՝ ճամփու դրեց։

Անց կացավ մի քանի վախտ, օրեն մի օրը, վե կացավ գնաց Զուիչու կուշտը։

---

[1] Տպագիր տեքստում՝ կբուրացնի, կբողա. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Բարո՛վ, Ջո՛փչի աղպեր,— ասեց բեզրգյանը։

— Բարո՛վ, հազա՜ր բարին։

— Ջո՛փչի աղպեր, քեզ մի բան եմ ուզում հարցնի, համա պտի դրուստն ասես, հա՜։

— Էրկուսը հարցրա՛, բեզրգյա՛նը սաղ ըլնի։

— Դու արի՛ դրուստ ասա՛։ Ջոփչի աղպեր, էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթը քեզ ո՞րդիան ա։

— Ո՞րդիան պտի ըլնի,— ասեց Ջոփչին,— ճակատիս հալալ քրտնքովն եմ աշխատե։

— Չէ՛, սո՛ւտ ես ասում. ուզո՜ւմ ես մարջ գանք։

— Լա՛վ, մարջ գանք. ընչի՞ վրեն։

— Հե՛նց ընչի վրեն ուզում ես։

— Թե գտար,— ասեց,— ես իմ տուն ու տեղը, մալ ու դոլվաթը քոմմա քեզ տամ. թե չէ հո՛, դո՛ւ քունը ինձ տաս։ Ռա՞զի ես։

— Ռա՛զի եմ, ա՛ղպեր, ռազի եմ։ Դե արի էթանք մի քանի մարդ էլ կանչենք շհադ, որ մարջը մարջ ըլնի, ո՛նչ ես խոսքիցս եդ դառնամ, ո՛նչ դու։

— Լա՛վ, էթա՛նք։

Վեր են կենում, էթում մի քանի մարդ էլ կանչում, բերում ընդե շհադ կաննացնում։

— Դե հմի ասա՛, բեզրգյա՛նը սաղ ըլնի, տեննանք իմ հարըստությունը ո՞րդիան ա։

— Ձեր հայթումը,— ասում ա,— մի մատուռ կա, մատռի միջին՝ մի նռան ծառ...

— Լա՛վ, լա՛վ, լա՛վ. էլ մի՛ ասի,— խոսքը կտրում ա Ջոփչին,—տա՛րար։ Ինչ ունեմ-չունեմ՝ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դոլվա՛թ քոմմա քեզ. տա՛ր, մորդ կաթի նման քեզ հալալ ըլնի. ես կէթամ էլի աղաքվա նման չոփչություն կանեմ։ Փա՛ռք աստու ողորմությունին, ոնց որ տվեց, ընենց էլ պռավ։

Ասում ա ու կնկա կուռը բռնում, տանիցը լափ դարտակ դուս գալի, էթում մի քնձռոտ-մնձռոտ տուն, քրեհում, միջին կենում։

Էլ էն Ջոփչին, էլ էն Ջոփչին։ Առավոտը լիսը բացվում էր թե չէ, պարանը քցում էր ուսը, էթում հանդը չոփ կիտելու, իրիկունը գալի տուն։ Ասենք կնիկը ննա գլխի ա ընկնում, որ ըստոնք քոմմա էն քավթառ պառավի բաներն ա, համա վախլությունիցը մարդին չի ասում, անսաս իրա համար տազ ա անում, մնում։

Ըսենց անց ա կենում մի շաբաթ, էրկու շաբաթ, մի ամիս, էրկու ամիս՝ օրեն մի օրը էս մեր Զոփչին ինքն իրան միտքն ա անում. «Ա՛ղպեր,— ասում ա,— ըսենց բան չիլնի. ես պտի վե կենամ էթամ ասսու կուշտը գանգատ, մի տենամ ես ի՞նչ մեղքի տեր ի. որ էսքան մալ ու դոլվաթը տվեց՝ էլ եդ ձեռիցս առավ»։

Էթում ա կնկա հեննա ա մասլահաթ տենում։ Կնիկն էլ, բե.— Դու դիտաս, ա՛յ մարդ, էթում ես՝ գնա՛։

Զոփչին ա՝ մի քանի ամսվա պաշար ա վեր ունում, փետն առնում ձեռը, ընկնում ճամփա՝ դպա ասսու կուշտը։ Էթում ա էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, մի մեշի միջի սրան էրկու վիրունի ղաթիր ա ռաստ գալի։ Տենում ա էրկսի մեջքն էլ յարա-փարեն կոխել ա։

— Բարո՛վ,— ասում ա Զոփչին։

— Բարո՛վ, հազա՛ր բարին։ Ի՞նչ մարդ ես,— հարցնում են ղաթրները։

— Ես ֆլա՛ն Զոփչին եմ,— ասում ա։

— Բա էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ։

— Որ էթում ես, ի՞նչ կըլնի մեր դհիցն էլ գանգատ անես։ Էս տասը տարի՝ մեր մեջքը յարա-փարեն կոխել ա. ի՛նչ դեղ, դարման անում ենք, լավանալու ճար, իլլաճ չիլնում։ Մի հարցրա՛, տես մենք ի՞նչ մեղքի տեր ենք, որ աստոծ մեզ ըսենց պատճել ա։

— Աչքիս վրեն,— ասում ա,— կասեմ։

— Աչքդ վարդի վրեն,— ասում են ղաթրները։

Էս մեր Զոփչին ա, սրանց տալիս ա անց կենում, թողում էթում էլ եդ իրա ճամփեն։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա մի քաղաք։ Էս քաղաքի միջովը անց կենալիս տենում ա էրկու սի՛րուն, նա՛շխուն, արեգակի կտոր աղջիկ։

— Բարո՛վ,— ասում ա Զոփչին։

— Ա՛յ բարո՛վ, ասսու հազա՛ր բարին, խերին։ Ի՞նչ մարդ ես,— հարցնում են աղջկեքը։

— Ես ֆլա՛ն Զոփչին եմ,— ասում ա։

— Բա էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ։

— Որ էթում ես,— ասում են,— ի՞նչ կըլնի մեր դհիցն էլ գան-

գատ անես։ Մեր հերը լավ հարստությունի, լավ մալ ու դոլվաթի տեր ա. մընք էլ, տենում ես, էսքամ սիրուն, էսքամ նաշխուն, ի՛նչ անես՝ մեզանից գեշերը մարդի են էթում, մենք ըսենց մնացել ենք տանը։ Մի հարցրա՛ տես մե՞ր ճարն ինչ պտի ըլնի։

— Լա՛վ,— ասում ա,— ձեր գանգատն էլ տեղ կհասցնեմ։

Ասում ա, տալի անց կենում, էթում։ Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, մի եքա անտուտ, անտակ ծովի ա ռասը գալի։ Տենում ա էդ ծովի միջին մի ղուշ կաննել ա, սաղ ծովը փորն ա քաշում էլի չի կշտանում, հարա՛յ-մադաթը քցում ա.— Ամա՛ն, ասսո՛ւ սիրուն, ես ծարավ մեռա՝ մի պուտ ջո՛ւր։

— Բարո՛վ,— ասում ա Ջուփչին։

— Բարո՛վ, հազա՛ր բարին, հողածին։ Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա ղուշը։

— Ես ֆլա՛ն Ջուփչին եմ,— ասում ա։

— Բա էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ։

— Որ էթում ես,— ասում ա,— ի՞նչ կըլնի իմ դհիցն էլ գանգատ անես։ Ես էսքամ տարի էս ծովի միջին կաննած՝ սաղ ծովը փորս եմ քաշում, էլի չեմ կշտանում. մի հարցրա՛ տե՛ս իմ ճարն ի՛նչ պտի ըլնի։

— Ջո՛ւխտ աչքիս վրեն,— ասում ա,— քու գանգատն էլ տեղ կհասցնեմ։

Տալիս ա անց կենում, էթում էլ եղ իրա ճամփեն։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, վերջը դուս ա գալի [1] աշխարքի անծերը։ Տենում ա ընդե սիպտակ միրքով մի ծեր, գզգված մարդ հրեն թախտի վրեն բազմել ա։ Էթում ա դրան գլուխ տալի։

— Բարո՛վ, ա՛յ բաբի,— ասում ա Ջուփչին։

— Բարո՛վ, հազա՛ր բարին։ Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա հալիվորը։

— Ես ֆլա՛ն Ջուփչին եմ,— ասում ա։

— Բա էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ։

---

[1] Տպագիր տեքստում՝ «...մի օր, երկու օր, իրեք օր, մախլասի մի շաբաթ, տալիս ա դուս գալի...». խմբագրումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Աստոծ հենց ես եմ, որ տենում ես. ասա՛ տենամ գանգատդ ի՞նչ ա։

Զուփչին էս լսեց թե չէ, էն սհաթը ընկավ աստու ոնները։

— Տե՛ր աստոծ,— ասեց,— ես մի խեղճ, դառն աղքատ ի, ամեն օր պարանը վեր ի ունում, էթում հանդը չոփ կիտելու, իրիկունը դալի տուն։ Ըսենց մարդ ու կնիկ քարի հեննա քաղվելոն, ավազի հեննա մաղվելոն, ղունդ-ղունդ անելոն յոլա ինք էթում։ Օրեն մի օրն էլ, վեր ի կացե գնացե ցախի, ճամփին մի Օձ ռաստ էկավ։ «Զո՛փչի աղպեր,— ասեց,— հերիք չի՞ դու էս հանդի չոփերը կիտես. տնա՛շեն, խեղճ ղշերի ռուզդն էլ ես կտրում, որ տանեն իրանց համար բուն շիննեն»։ Ի՞նչ անեմ,— ասեցի,— քյասիբ մարդ եմ, ես էլ դրանով եմ ապրում։ «Բաս որ ըտենց ա,— ասեց Օձը,— դագանակդ վե կալ, տո՛ւ գլուխս ջընջիա. եննա մի քիչ գլխիս դհիցը կորա՛, մի քիչ պոչիս դհիցը՝ դեն քցա՛, մնացողը[1] տար ձեր հայաթումը մի ղրաղ տեղ ֆորա՛, վրեն էլ մի լավ մատուռ կապա՛։ Մի քանի ամսեն վրա,— ասեց,— էդ մատռի միջին մի նռան ծառ դուս կդա, եքա-եքա նոներ կտա. հենց ո՛րը քաղես, տապակ անես՝ կտենաս մեջը լիքը ակն ու մարգարիտ, հաղար մի ջուտա անգին քարեր։ Կտանես կծախես,— ասեց,— կհարստանաս, մըկ էլ չես գա ըստերանք չուփ կիտի»։ Ես էլ նրան անկաջ արի, դագանակով տվի գլուխը ջընջխեցի. ոնց որ ասել էր, ընենց էլ արի, տարա մեր հայաթումը ֆորեցի, վրեն էլ մի լավ մատուռ կապեցի։ Ղո՛րթ որ, Օձը ոնց որ ասել էր, մին-մին, տեղը-տեղին կատարվեց։ Հարըստացա, լավ մալ ու դոլվաթի տեր դառա. համա վերջը չեմ գիտա ոնց էր էլե, մեր քաղաքումը մի բիսրդյան կա, էս բանը իմացել էր. էկավ հեննես մարջ էկավ՝ տարավ։ Ինչ ունեի, չունեի՝ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դոլվա՛թ, քոմմա տվի նրան, կնկանս կուռը բռնեցի, թողի տանիցս լա՛փ դարտակ դուս էկա։ Էլա էլ էն Զուփչին, էլ էն Զուփչին, ամեն օր պարանը վեր ի ունում, էթում հանդը չոփ կիտում, բերում՝ սրթար ինք անում։ Ըսենց մի քանի վախտ անց կացավ, օրեն մի օրը միտք արի, ասեցի՝ էթամ աստու փեշը բռնեմ, հարցնեմ տենամ ես ի՞նչ մեղքի տեր ի, որ էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթը տվեց՝ էլ եդ ձեռիցս խլեց։ Համի էկել եմ ընկե քու ոնները։ Տե՛ր աստոծ, բալի էլի դու մի լիս ու ճար անես։

---

[1] Տպագիր տեքստում՝ մնողը, ուղղումը մեր կողմից է (Ս. Կ.)։

— Կէթաս էլ եդ ձեր քաղաքը,— ասեց աստոծ,— էն բեզրգյանի հեննա մարջ կգաս՝ կասես. «Արևը ո՞րդիան ա դուս գալի»։ Կասի. «Հալբա՛թ որ է՛ս դհիցը»։ Կասես. «Չէ՛, է՛ն մի դհիցը. ուզո՞ւմ ես, արի մարջ գանք»։ Որ մարջ էկար, էն վախտը՝ ես արևը քու ասած դհիցը կհանեմ։ Մարջը կտանես, մալ ու դուլվաթդ էլ եդ կգա քու ձեռը։

— Փա՛ռքդ շատ ըլնի,— ասեց,— տե՛ր աստոծ, ոնց որ հրամայեցիր՝ ընենց էլ կէթամ կանեմ։ Էդ հո էդ՝ Մի ուրիշ գանգատ էլ ունեմ։ Ճամփին մի մեշի միջի ինձ էրկու ղաթիր ռաստ էկան։— Ո՞ւր ես էթում,—հարցրին։ Ասեցի.— էթում եմ աստու կուշտը գանգատ։— Որ էթում ես,— ասեցին,— ի՞նչ կըլնի մեր դհիցն էլ գանգատ անես։ Էս տասը տարի՝ մեր մեջքը յարա-փարեն կոխել ա. ի՛նչ անում ենք, չենք անում՝ լավանալու ճար, իլյաճ չիլնում։ Մի հարցրա՛ տես մեր ճարն ինչ պտի ըլնի։

— Ես նրանց ստեղծել եմ,— ասեց աստոծ,— որ մարդկերանցը պետքը գան, բեռ շալակեն, բան անեն, չէ թե տարեն տասնէրկու ամիս պարապ-սարապ մեշեքը չափչփեն։ Ուզո՞ւմ են,—ասեց,— աղաք արա՛, տա՛ր ձեր քաղաքը, վրնեերը փալան դի, բանացրա՝ ալբիալը մեջքների յարեն կլավանա։

— Էդ հո էդ՝ էկա, էկա, էկա՝ հասա մի քաղաք. ըտե էրկու սի՛րուն, նա՛շխուն, ակն ու արեգակ աղջիկ ռաստ էկան։ Հարցրին. «Էդ ո՞ւր ես էթում»։ Ասեցի.— էթում եմ աստու կուշտը գանգատ։ «Որ էթում ես,— ասեցին,— ի՛նչ կըլնի, մեր դհիցն էլ գանգատ անես։ Մենք ըսենց լավ օջախից ենք, ըսենց էլ սիրուն, ոնց որ տենում ես, համա ինչ անես, մի հետ մեր բախտը կապվել ա, մնացել ենք տանը։ Մի հարցրա՛, տես մեր ախրն ի՞նչ պտի ըլնի։

— Էդ էրկու սիրուն աղջիկն էլ քո՛ւ ղսմաթն ա,— ասեց աստոծ,— վե կունես, կտանես ձեր քաղաքը, ընդե մարդի կտաս։

— Էդ էլ հո էդ,— վրա բերեց Ջոփչին։— Գալիս ճամփին մի անտակ ծովի ռաստ էկա. տեհա մի ղուշ էդ ծովի միջին կաննել ա, սաղ ծովը փորն ա քաշում, էլի չի կշտանում՝ ձեն ա տալի. «Ամա՛ն, աստո՛ւ սիրուն, էրվեցի, խորովվեցի, տապակվեցի՝ մի պուտ ջո՛ւր»։ Էս ղուշն էլ իրա գանգատն արեց. «Էսքամ տարի ա, էս ծովի ջուրը սաղ փորս եմ քաշում, էլի ինձ կշտում չկա։ Մի հարցրա՛ աստուն,— ասեց,— տենանք ես ի՞նչ մեղքի տեր եմ, յա իմ ճարն ի՞նչ պտի ըլնի»։

— Էդ ղշի տեղը,— ասեց աստոծ,— հենց էդ ծովն ա, որ կա. որ ընդիան բաց թողամ՝ արար աշխարքը քար ու քանդ, բրիշակ կանի։ Ըսենց էլ կէթաս կասես իրան։

— Տեր աստոծ,— ասեց Զոփչին,— պրծա. էլ գանգատ չունեմ։

Սննա աստու ձեռը պաչեց, թողաց եդ դառավ էլ էն ճամփովը, որ ճամփով որ էկել էր։

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, հասավ էն անտակ ծովի ղրաղը։

— Զո՛փչի աղպեր,— հարցրեց ղուշը,— աստուն տե՞հար, իմ գանգատն արե՞ցիր։

— Հա՛, դո՛ւշ աղպեր, տեհա. գանգատդ արեցի։ Աստոծ ասեց. «Ներա տեղը հենց էդ ծովն ա, որ կա, ընդիան որ թողամ՝ արար աշխարքը քար ու քանդ կանի»։

Ասեց, տվեց անց կացավ։ Էկավ, էկավ, էկավ, հասավ էն աղջըկերանց քաղաքը։ Հարց ու փորձ արեց, նրանց գտավ։

— Աստոծ լսեց ձեր գանգատը,— ասեց,— հրամայեց որ էրկրսիդ էլ տանեմ մեր քաղաքը ընդե մարդի տամ։ Հմի ի՞նչ եք աստում. կգա՞ք էթանք։

— Կգանք, խի՞ չենք գա,— ասեցին,— աստու հրամանն ա՝ ինչ կարանք ասի։

Վև կացան հեննեն էկան։ Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մեջի միջին էն էրկու ղաթիրը ռաստ էկան։

— Զո՛փչի աղպեր,— հարցրին,— աստուն տե՞հար. մեր գանգատն արե՞ցիր։

— Հա՛, տեհա,— ասեց։

— Բա ի՞նչ ասեց։

— Ես նրանց ստեղծել եմ,— ասեց,— որ մարդկերանցը պետքը գան, բեռ շալակեն, բան անեն։ Ուզում են,— ասաց,— աղաք արա՛, տա՛ր բանացրա՛ մեջքների յարեն ալբիալը կլավանա։ է՞, կգա՞ք տանեմ։

— Կգա՛նք, խի՞ չենք գա,— ասեցին։

Զոփչին էն սհաթը ղաթրների բեռանը գյամ դրեց, մինը մի աղյկանը տվեց, մինը մեկելին, նստեցին՝ ընկան ճամբա։ Նստելու բաշտան՝ էրկու ղաթրի յարեն էլ ալբիալը սաղացավ։

Էս մեր Զոփչին ա՝ էկա՛վ, էկա՛վ, էկա՛վ, շատն ու քիչն աստոծ գիտա, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի

ամիս, հասավ իրանց երկիրը։ Սաղ քաղաքը չավ էլավ, թե Զուփչին էկել ա, հեննեն էլ էրկու սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաք աղջիկ ա բերե, որ տենողի խելքն ա էթում։ Բեզրգյանը էս իմանում ա թե չէ, ալբիալը վեր ա կենում, էթում կուշտը։

— Բարո՛վ ես էկե,— ասում ա,— Զո՛փչի աղպեր. ամեն ճամփեդ սալամա՛թ։ Էդ էրկու սիրուն աղջիկը ո՞րդիան ա,— հարցնում ա,— չե՞ս ծախի առնեմ։

— Չէ՛,— ասում ա,— չե՛մ ծախի. որ քու սաղ մալ ու դոլվաթն էլ տաս՝ էլի չեմ ծախի։ Ուզո՞ւմ ես, արի՛ էլի մարջ գանք։

— Լա՛վ, մարջ գանք,— ասում ա բեզրգյանը։— Ընչի՞ վրեն։

— Դու ինձ մի աղաք ասա՝ արևը ո՞ր դհիցն ա դուս գալի։

Բեզրգյանը մատով շանց ա տալի.— Հալբա՛թ է՛ս դհիցը,— ասում ա։

— Չէ՛,— ասում ա Զուփչին,— մարջ գա՞լիս ես, որ էգուց էդ դհիցը չդուս դա։

— Հա՛, մարջ եմ գալի։

— Ընչի՞ վրեն։

— Թե դո՛ւ տարար, իմ տուն ու տեղը, մալ ու դոլվաթը քոմմա քեզ. թե ես տարա՝ էդ էրկու աղջիկն ինձ։ Լա՞վ։

— Լա՛վ,— ասում ա Զուփչին,— թող ըտենց ըլնի։

Հեգսի օրը, դեռ լիսն ու մութը չբաժանված մի քանի մարդի հեննա վեր են կենում, էթում են քաղաքիցը դուս։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա,— լավ վարավուրդ արա, հա՞, տե՛ս արևը ո՞ր դհիցն ա դուս գալի։

Աստու հրամանով էդ օրը արևն էն դհիցն ա դուս գալի, որ դհիցը ամեն օր էր մննում։ Քոմմա մնում են սառած, իրար էրեսի մտիկ անելոն։ Բեզրգյանի հալը հո՛ էլ միք հարցնի՝ սփրթնել ա, դառե պատի ծեփ։

— Հը՛, բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ձեն ա տալի Զուփչին,— տա՞րա, թե չէ։

— Տարա՛ր, ինչ կասեմ, տարա՛ր։

— Տարա՞։

— Տարա՛ր։

— Տարա՞։

— Տարա՛ր, աղպեր, տարա՛ր։ Ինչ ունեմ, չունեմ՝ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դոլվա՛թ՝ քոմմա մորդ կաթի նման քեզ հալալ ըլնի։

— Չէ՛, բեղդյա՛նը սաղ ըլնի,— ասում ա Չուխչին,— քու հարստությունը ինձ հարամ ա կացե. ինչ որ դու ինձանից աղաք տարել ես՝ վև կունեմ, քունը քեզ ըլնի, չեմ ուզում։

Ըտենց էլ անում ա. իրա հարստությունը, մալ ու դոլվաթը վեր ա ունում, բեղդյանինը եդ տալի իրան։ Չուխչին դառնում ա էլ էն հաբուստը, էլ էն հարուստը։

Հեննեն բերած էրկու աղչիկն էլ՝ մինը թագավորի նազրի տղին ա տալի, մինը՝ վեզրի. օխտն օր, օխտը գշեր դափո՛վ, զուռնո՛վ, չալ քեֆո՛վ, ուրախությո՛ւնով հարսանիք անում։

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն ասողին, մինն ասիլ ասողին, մինն էլ անկաշ դնողին։





11. ԹԱՐԽՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

Կար չկար, ժամանակով մի թագավոր կար։ Էդ թագավորին իրեք աղջիկ ուներ. եր որ աղջկերքը մենծացան, հասակներն առան, թագավորը գնաց մենծ աղջկա օթախը, ասեց.— Ձեր պսակվելու վախտն ա։

— Եր որ վախտը գա՝ կպսակվենք, ա՛յ հեր։

Գնաց միշնեկ աղջկա կուշտը, էդ աղջիկն էլ էդ պատասխանը տվեց։

Գնաց պուճուր աղջկա օթախը, նրան էլ էդ խոսքն ասեց։ Պուճուր աղջիկն ասեց.— Ինձանից հլա էրկու մենծը կա, ինձ նորաթ եր կհասնի։

Հերը աղջկա վրին նեղացավ, գնաց։ Գնաց իրա օթախը, կանչեց վեզիրին. վեզիրն էկավ, գլուխ տվեց կայնեց։

Թագավորը վեզիրին հրամայեց.— Մի թամբալ տղա գտի՛, բե՛։

Վեզիրն ասեց.— Հինգ օր ժամանակ տո՛ւ, մտածեմ գտնեմ։

Վն կացավ դպա իրանց տունը գնաց. ճամփին տեհավ թագավորի մեյթարխանի առաջին փեյնի վրա մի տղա նստած ա։ Վեզիրը մտածեց, թե ըստուց թամբալ չեմ կարա գտնի՝ ամառ, ձմեռ փեյնի վրա վեր ընկած ա։ Նդ դառավ, գնաց թագավորին ասեց։

Ասեց.— Ի՛նչ թեզ գտար։ Մարդ ղրկա՛, հա՛մ պուճուր աղջկանս կանչի, հա՛մ էլ էդ տղին։

Կանչեց, էկան։

Տղեն էկավ կայնեց. թագավորը տեհավ, որ թամբալությունը էրեսիցը թափում ա, վեզրին հրամայեց, որ էրկու յասավուլ բերիլ աս. բերիլ տվեց։

Թագավորը հրամայեց, թե.— էս տղին ու էս աղջկան վե կալեք տարեք Օսմանցվի երկիրը, էլ իմ աչքին չէրևան։

Վե կալան տարան։ Տարան Իգդիր, եկեղեցու պատի տակին նստեցին, դինջացան։ Թագավորի աղջիկը լաց էլավ, ու յասավուլներին խնդրվեց, թե.— Մի՛ք տանի ինձ Օսմանցվի երկիրը, թողե՛ք մնամ ըստեղ, իմ մարդը թամբալ ա, չի կարա բան անի։

Շատ խնդրվեց, յասավուլի մինը խղճահարվեց, ասեց.— Թո՛ղ մնա ըստեղ, մե՛ղք ա։

Էն մինը ասեց.— Թագավորը իմանա՝ մեզ քյալլա կանի, չի՛ կարելի։

Թագավորի աղջիկը էլի խնդրվեց, թե.— Իմ հերն ի՞նչ պտի իմանա, թե ինձ տարաք Բայազիթ, թե թողիք Իգդիր։

Էդ յասավուլները թողացին, եդ դառան գնացին։

Եկեղեցու պատի էն դիհը մի հալիվոր էր նստած։ Եր որ էդ հալիվորը դրանց ձենը լսեց, վե կացավ էկավ դրանց կուշտը, հարցրեց.— Ո՞ւր էք էթում։

Թագավորի աղջիկն ասեց.— Իմ հերը բարկացել ա իմ վրին, տվել ա էս տղին, տանից դուս արել։

Հալիվորը ասեց.— Ինձ ո՛նչ տղա ունեմ, ո՛նչ աղջիկ, է՛կեք էթանք մեր տունը, մեկդ՝ ինձ աղջիկ, մեկդ՝ տղա։

Վե կացան, գնացին։ Գնացին տեհան մի պուճուր հացատուն էր, ինքն էր ու պառավը։

Աղջիկն ասեց.— Հե՛ր, ընչո՞վ էս կառավարվում։

— Օրական մի շլակ ցախ եմ բերում, ծախում ենք, կառավարվում ենք։

— Առավոտը տղիդ էլ տա՛ր հետդ։

— Շա՛տ լավ, կգա՝ կտանեմ։

Իրիկունը քնելու վախտը պառավը տղի տեղը քցում ա դռան ետևը, աղջկանը առնում իրա ծոցը, պառկում ա։

Առավոտը, որ քնատեղիցը վեր են կենում, պապը պարանը վեր ա ունում, էթում ա ցախի։ Տղեն էլ ա վե կենում, էթում հետը։ Էթում են հասնում մեշեն։ Պապը ըսկսում ա ցախ-մախ հավաքիլը։

Տղեն ասում ա.— Ես ըստեղ ցախ չեմ հավաքի, ըստիան ցախը մանդր ա։

Ասում ա.— Դո՛ւ գիդաս։

Տղեն էթում ա, էթում, տենում ա բաղի պատ. նիլլում ա պատը, տենում ա պատի տակին ընքան ցախ կա կոտորած, օխտը սարի կրի՝ չի հատնի։

Վեր ա գալի պատը, ցախից վեր ունում, շպրտում պատի էն դիհը։ Ննջա էթում ա բաղի մեջը ման գալու, տենում ա մառմառ քարից մի հավուզ։ Սբոր մխելի մոտանում ա, տենում ա մի ջուխտ աղունիկ ծափ էն տալի, թռնում։ Մոտանում ա հավրզին, տենում ա ըտեղ մի ոսկե թաս. վեր ա ունում, դնում ծոցը։ Եդ ա դառնում, ցախը շըլակում, գալի։ Գալիս ա հասնում պապի կուշտը։

Տենում ա պապը նոր շըլակը կապում ա, ասում ա.— Դե՛ վեկալ է՛թանք։

Վեր ա ունում, էթում են։ Սբոր հասնում են քաղաքը, Ջհրդի մեկը գալիս ա տղի աղաքը, ասում ա.— Էդ ցախը չե՞ս ծախի։

Ասում ա.— Կծախեմ։

Թե.— Գինն ի՞նչ ա։

— Դո՛ւ գիտաս, ինչ կտաս տո՛ւ։

Ջհուդը ասում ա.— Տասը մանեթ տա՞մ։

Ասում ա.— Իմ վրա խի՞ ես ծիծաղում,— ասում ա,— վրես մի՛ ծիծաղա։

Ասում ա.— Հիթսուն մանեթ կտամ։

Ասում ա.— Դե՛ հանա, տո՛ւ։

Ասում ա.— Տանենք տուն, փողդ տա՛մ։

Տանում ա տուն, հանում ա հիթսուն մանեթը տալիս ա. տղեն առնում ա, ուրախ-ուրախ էթում ա տուն։

Թագավորի աղջկանն ասում ա.— Աչքդ լի՛ս, մի շըլակ ցախ տվեցի հիթսուն մանեթի։

Թագավորի աղջիկն ասում ա.— Կարող ա մի կտորը հի՞թսուն մանեթ աժենա, էգուց մի կտոր բե՛, տենանք։

Տղեն ոսկու թասը ծոցիցը հանեց, տվեց աղջկանը, ասեց.— Էս էլ գտել եմ։

Աղջիկը շատ ուրախացավ, ասեց.— Էս թասն էլ կաժենա հազար մանեթ։

1646—12

Իրիկունը էկան, հաց կերան, քնեցին։ Էլի առավոտը վե կացան գնացին ցախի։ Տղեն եգին-եգին գնաց, ցախը շըլակեց էկավ։

Էկավ հասավ պապի կուշտը, մի կտոր էդ ցախիցը տվեց պապին, ասեց.— Պահա՛, տաննենք տուն։

Երբոր մտան քաղաքը, էլի Ջհուդն էկավ, ասեց.— Հարուր մանեթ տա՞մ ըսօրվա ցախիդ։

Տղեն չհավատաց, ասեց.— Իմ վրին մի՛ ծիծաղա։

Ասեց.— Էրկու հարուր մանեթ տա՞մ։

Ասեց.— Իրեք հարուր մանեթ տաս, կտամ։

Ասեց.— Տաննենք տուն, իրեք հարուր մանեթ տամ։

Գնաց տուն, իրեք հարուր մանեթը առավ, էկավ իրանց տուն։

Թագավորի աղջկանն ասեց.— Ըսօրվա մի շըլակ ցախը տվեցի իրեք հարուր մանեթի։

Երբոր թագավորի աղջիկը տեհավ պապի բերած մի կտոր ցախը, ասեց.— Էս մի կտորը կաժեննա հազար մանեթ։

Սրանից եղը տղեն հա՛ բերեց, հա՛ էվելի գնով ծախեց։

Երբոր հարստացան, տղեն ասեց պապին.— Պա՛պի, մի ձեռք տներ պտի շինեմ։

Ասեց.— Դո՛ւ գիտաս, ո՛րդի։

Սկսեց շինիլը։ Երբոր շինեց պրծավ, անումը դրին՝ Իգդիրա ամարաթի տերը։

Սրանք մնան ըստի, մենք խաբարը տանք էն ջուխտ աղունըկիցը։

Ջուխտ աղունիկը որ ծափ տվին գնացին, Ըռեհան թագավորի աղջիկն ին։

Մենծ աղջիկը գնաց հոր կուշտը, գանգատ արեց, ասեց.— Իգդիրա ամարաթի տերը էկավ մտավ իմ բախչեն, ցախը տարավ, բյասիր էր, հլա չհա՞ննամ, էկավ հավըզի կուշտը, մենք լեղանում ինք, մենք թռանք, մեր թասը վե կալավ. բա՛ էդ օրենք ա, ա՛յ հեր, որ գա հա՛մ մեր ցախը տանի, հա՛մ թասը վեր ունի, հա՛մ էլ մեր տկլոր ջանը տենա, բա՛ ամոթ չի՞։

Թագավորը բարկացավ, կանչեց իրա Թոման դևին, ասեց.— Սհաթի տասնէրկըսին Իգդիրա ամարաթի տերը քեզանից կուզեմ։

Թոման դևը վե կացավ գնաց դպա Իգդիր. էն վախտը գնաց,

որ չորսով նստած հաց ին ուտում, վեր էկավ բալկոնիցը, մտավ հաշտը, հաշտիցը ձեռը քցեց տղին ու քցեց շըլակը, առավ ու թռավ։

Դրանք՝ «վա՜յ, վա՜յ, տարա՜վ», լաց, արտասունք՝ Թոման դևը տարավ թագավորի պալատի տակին վե դրեց, ասեց.— Գնա՛, թագավորը կանչում ա։

Գնաց թագավորի կուշտը, գլուխ տվեց, ձեռները կապեց, կայնեց։

Թագավորն ասեց.— Իդիրա ամարաթի տերը դո՞ւ ես։

Ասեց.— Ե՛ս եմ։

Ասեց.— Կանչե՛ք աղջկանս, գա՛։

Կանչեցին, աղջիկն էկավ։

Հերն ասեց.— Է՞ս ա տղեն։

Աղջիկն ասեց.— Էդ ա։

Ջեն տվեց.— Ջանլա՜թ։

Ջանլաթները թրերը քաշեցին մտան նեքսև, աղջիկն էկավ առաջ, խնդրվեց, ասեց.— Թագա՛վորն ապրած կենա, երոր դրան սրպանում ես, մենակ դրան չես սրպանում, Թարխուն թագավորի աղջկանն էլ հետն ես սրպանում։ Թարխուն թագավորը բարկացել ա իրա աղջկա վրին, տվել ա էս տղին ու քաղաքիցը հեռացրե։

Թագավորը ասում ա.— Մեղքը քու շլինքը, դո՛ւ էկար գանգատ արիր. որ ըտենց ա, իմ ախչիկն էլ տվեցի քեզ, ա՛յ տղա։ Դու գնա՛, իրիկունը քառասուն ղարավաշով ինքը կգա, գլերը կմնա կշտիդ, առավոտը ղարավաշները եդ կգան։

Տղեն դուս էկավ, մոլորվեց. տեհավ որ չի կարա էթա, մտավ նեքսև, թագավորին խնդրվեց, ասեց.— Ցա գլուխս տո՛ւ, յա ո՛նց որ բերել ես, ընենց էլ ճամփու դի։

Թագավորը կանչեց Թոման դևին, ասեց.— Վե կալ տա՛ր էս տղին իրա տեղը։

Վե կալավ, տարավ։ Տղեն որ բանձրացավ վիրև, տեհան՝ շա՛տ ուրախացան։ Մնաց մինչև արևմըտոց, մեկ էլ տեհան քառասուն ղարավաշով Ըռեհան թագավորի աղջիկը վեր էկավ բալկոնը թրփ-թրփալով։

Ըռեհան թագավորի աղջիկը մտավ նեքսև, բարև տվեց ու կաննեց. ղարավաշները էկան մին-մին գլուխ տվեցին ու կաննեցին։ Էկավ հացի վախտը, նստեցին հաց կերան։ Վե կացավ պառավը, տեղ շինեց։ Քառասուն ղարավաշի համար մի ձեռք տեղ

գնեց, Ղռեհան թագավորի ու Թարխուն թագավորի աղջկեքանցն առավ իրա ծոցը, քննեց։ Տղի տեղն էլ դռան քամակին գցեց։ Սբոր վիսը բացվեց, ղարավաշները վե կացան գնացին, Ղռեհան թագավորի աղջիկը մնաց ըտեղ։

Խաբարը տանք Թարխուն թագավորիցը։

Թարխուն թագավորը կանչեց վեզրին, թե.— Թադարեք տե՛ս, է՛թանք ման գալու երկիրը։

Վե կացան գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, էկան հասան Իգդիր։ Աղջիկը իմացավ որ հերը գալիս ա՝ գնաց համամ, իրա շորերը փոխեց, թագավորական շորերը հագավ, զուգվեց, իրանց ամարաթի դռանը կաննեց։ Հերն էկավ, ըտոնց դռան առաջովն անցկացավ։ Անցկենալու վախտը տեհավ ըտեղ մի կնիկ կաննած ա, անղալաթ սիրուն էր. սբոր թագավորը տեհավ՝ ուշը գնաց։ Սբոր ջուր բերին տվին էրեսովը, աչքերը բաց արեց, տեհավ էլի կայնած ա դռանը, էլի ուշը գնաց։ Թագադան որ ուշն էկավ վրեն, վե կացավ ու գնաց։ Գնաց հասավ իրա քաղաքը։

Կանչեց իրա վեզրին, ասեց.— Էն իմ տեհած կնիկը ո՛ր չբերես ինձ համար, ես կմեռնեմ։

Վեզիրն ասեց.— Ո՞նց բերեմ, նրա մարդը, հալբա՛թ, հարուստ մարդ ա, չի՛ տա. լավն էն ա՝ կանչե՛նք, մի ընենց տեղ ղըրկենք, որ էթա, չգա։

Թագավորն ասեց.— Մտածա՛, գտի՛։

Մարդ ղրկեցին, էդ տղին կանչեցին։ Տղեն էկավ, օխտը հետ գլուխ տվեց, բարև բռնեց, կաննեց։

Թագավորն ասեց.— Տղա՛, մենք փուշկ ենք գցե, ընկել ա քու վրա, դու պտի էթաս Մարջան թագավորի քաղաքը, Անմահական ջուր ու խնձոր բերես։

Տղեն ասեց.— Ես ճամփեն չե՛մ գիտա, ո՞նց պտի էթամ։

Ասեց.— Անպատճառ պտի էթաս, մի հնար գտի, գնա՛, թե չէթաս՝ գլովդ կկտրենք։

Տղեն երկար ժամանակ մտածեց, ասեց.— Լա՛վ, կէ՛թամ։

Գլուխ տվեց, գնաց իրանց տուն։ Սբոր հասավ իրանց տուն, Ղռեհան թագավորի աղջիկը դուս էկավ, տղին հարցրեց.— Ընչի՞ համար էր թագավորը քեզ կանչե։

Ասեց.— Կանչել էր, որ ղրկի Մարջան թագավորից Անմահական ջուր բերեմ ու խնձոր։

Աղջիկն ասեց.— Էրնա՜կ քեզ, էրնա՜կ քու աչքի լսին, կէթաս ընտեղարենք ման կգաս, կտեննաս՝ ինչքա՜ն լավ տեղ ա։

Ասեց.— Ես ճամփեն չեմ գիտա, ո՞նց էթամ։

Ասեց.— Բա իմ քիրն ի՞նչ ա, իմ քիրը վե կունի կտանի հերանցս տունը, Թուման դևովը կղրկի, կէթաս, էրնա՜կ քեզ, էրնա՜կ քու աչքի լսին։

Մի հինգ օրից եղը տղեն գնաց Ըռհհան թագավորի աղջկա բախչեն։ Գնաց հավըղի վրա կաննեց, ձեն տվեց.— Քե՛նի բա՛ջի, քե՛նի բա՛ջի։— Քենին դուս էկավ։

— Դո՞ւ էս էկե, փեսա, արի՛ նեքսև։

Ասեց.— Վոազ եմ, չե՛մ կարա։ Ինձ պտի տանես հերանցդ տունը։

Քենին առավ փեսին թևերի վրա ու թռավ, տարավ հերանց տունը։ Տղեն գնաց թագավորի կուշտը, բարև տվեց, բարևն առավ։

Թագավորը շատ ուրախացավ, վե կացավ թշերը պաչեց, ասեց.— Ո՞նց ա, յա՜րաբ, մեր ախչիկը։

Ասեց.— Շա՛տ լավ ա, շա՛տ-շա՛տ բարևում ա։

Սբոր թագավորի կնիկը իմացավ, վե կացավ վազելով էկավ, ընկավ փեսի ճտովը.— Փեսա ջա՛ն, յա՜րաբ իմ ախչիկը ո՞նց ա։

— Շա՛տ լավ ա, շա՛տ էլ բարև ա անում։

Ասեց.— Խե՞ր ըլնի քու գալը։

Ասեց.— Փա՛ռք ասսու, խեր ա,— ասեց,— ես պտի էթամ Մարջան թագավորի աղջկա բաղիցը Անմահական ջուր ու խնձոր բերեմ։

Ասեց.— Էրնա՜կ քեզ, էրնա՜կ քու աչքի լսին. կէթաս ընտեղարենք ման կգաս, կտեննաս։

Ըստեղ հինգ օր ղոնաղ էլավ, զանքաչը չթողաց էթա։ Սբոր հինգ օրը թամմեց, վռազեց, ասեց.— Ճամփեն չեմ գիդա, ո՞նց էթամ։

Թագավորը հրամայեց Թուման դևին.— Արի վե՛կալ ու գնա՛։

Թուման դևը վեկալավ ու գնաց։ Գնաց հասավ Մարջան թագավորի աղջկա ամարաթի տակը, ասեց.— Վե կաց գնա՛, ես ըստեղ բանդ կըլնեմ, ի՛նչ պըտի վեր ունես՝ գնա վեկալ, արի՛ էթանք։

Տղեն մտավ բախչի մեջը, ման էկավ, Անմահական աղբուրը գտավ, ջրիցը վե կալավ, ման էկավ՝ Անմահական խնձորն էլ գտավ, քաղեց, էկավ մտավ թագավորի աղջկա օթախը, տեհավ հացը հազիր դրած ա, նստեց, կերավ։ Տեհավ՝ ըտեղ մի սլապիրոս էլ կար, կևսը քաշած էր, կեսը մնում էր, վե կալավ քաշեց։ Ննևա թագավորի աղջկա օթախի դուռը բաց արեց, մտավ նեքսև, տեհավ որ թագավորի աղջիկը քնած ա. ոննևրի տակը դրած շամադաննևրը դրեց գլխավիրևը, գլխավիրևի շամադաննևրը դրեց ոննևրի տակը, եդ դառավ՝ իրա մատանիքը դրեց աղջկա մատը, աղջկա մատանիքը դրեց իրա մատը, կռացավ էրկու թուշն էլ պաչեց, դուս էկավ՝ էկավ, խնձորն ու ջուրը վե կալավ, նիլլավ Թոման դևին. Թոման դևն էր՝ թռավ, գնաց։ Տասն օրվա ճամփեն համարյա մի սհաթումը տարավ։ Տարավ Ըռեհան թագավորի ամարաթի տակին վե դրեց։ Տղեն բանձրացավ վիրև, թագավորն ու թագուհին էկան ընկան շըլընքովը։

— Գալդ բա՛րի ըլնի,— ասեցին,— գնացիր, ման էկար, էկար։

Հինգ օր էլ պահեցին ըտեղ, լավ ուտացրեցին, խմացրին, հինգ օրից եդը թողին էթա։

— Շա՛տ բարև կտաննես մեր աղջկանը,— ասեցին։

Էլի նստեց Թոման դևի վրա, Թոման դևը թռավ գնաց, տարավ իրա տանը վե դրեց։

Էգսի օրը տղեն վե կացավ, նիլլավ ձին, գնաց Թարխուն թագավորի ամարաթը, հանեց Անմահական ջուրն ու խնձորը տվեց թագավորին։

Թագավորը տխրեց, մի խոսք էլ ա չասեց։ Տղեն եդ դառավ, գնաց իրանց տուն։

Թագավորը շատ թունդ բարկացավ վեզրի վրա, ասեց.— Դու ասում իր՝ կէթա, էլ չի գա, բա խի՞ էկավ։

Վեզիրն ասեց.— Ընտեղ քոմմա սեհրբազ են, թե ո՞նց ա եդ գառե՝ չեմ իմանում։

Խաբարը տանք Մարջան թագավորի աղջկանիցը։

Թագավորի աղջիկը երոր զարթնում ա, բիրդան տենում ա շամադաննևրը փոխված ա. էթում ա լվացվելու, տենում ա՝ մատի մատանիքը փոխված է, իրա մատանիքը չի։ էթում ա հայլուն թամաշ անում, տենում ա՝ էրկու էրեսին էլ խալ կա, բաց ա անում

էն մեկել օթախի դուռը, տենում ա՝ պապիրոսն էլ են քաշե։ Ինքը շատ իմաստուն էր, ձեռաց իմացավ, որ Իգդիրա ամարաթի տերն էր արել։

Վե կացավ բարկացած գնաց հոր մոտն, ասեց.— Ա՛յ հեր, ո՛չ դու ըլնես, ո՛չ քու թագավորությունը։

Թագավորն ասեց.— Ա՛ղջի, հո՛ դու չես գժվել։

Ասեց.— Ի՞նչ անեմ, Իգդիրա ամարաթի տերը էկել ա մտել իմ բախչեն, հա՛մ ջուր, հա՛մ խնձոր ա տարե, դե էն հլա դեղապետ ա, տանում էր՝ տաներ, բա բանձրանա իմ օթախի կողքը, հայը ուտի, պապիրոսը քաշի՝ էդ էլ բաշխենք, սոված ա էլել՝ կերել ա, բա ո՞նց ա սիրտ արե, մտել ա իմ օթախը, իմ քնած վախտը շամադաններս փոխել, մատանիքս փոխել և կոացել իմ էրեսիցն էրկու պաչ առել. մի մտիկ արա՛, տե՛ս էրեսիս ո՞նց խալ ա ընկե։

Ըտեղ թագավորը շատ բարկացավ, ասեց.— Կանչե՛ք իմ Թըման դևին։

Կանչեցին, էկավ։

Թագավորը հրամայեց, որ էթա Իգդիրա ամարաթի տիրոնչը վեր ունի, բերի։

Թըման դևը թռավ, վեր էկավ Իգդիրա ամարաթի բալկոնը, ուսուլով մտավ հաշտը, տեհավ, որ նստած հաց են ուտում, տղի թևիցը բռնեց ու քցեց շըլակը։

Լաց էլան. «Վա՛յ, վա՛յ, տարա՛ն, հա տարա՛ն, ո՞նց պըտի ըլնի»։

Ըռեհան թագավորի աղջիկը ասեց.— Բա՛ն չկա, տարան, էլի կգա, երկյուղ մի՛ք անի։

Թըման դևը տղին տարավ դրեց Մարջան թագավորի բալկոնը, ասեց.— Դե՛ վեր արի գնա՛, թագավորը կանչում ա։

Տղեն մտավ նեքսև, օխտը հետ գլուխ տվեց, ձեռները դրեց դոշին, կաննեց։

Թագավորը հարցրեց, ասեց.— Իգդիրա ամարաթի տերը դո՞ւ ես։

Ասեց.— Ե՛ս եմ։

Ասեց.— Ձեն տվե՛ք իմ աղջկանը, գա՛։

Կանչեցին, էկավ։

Թագավորը ասեց.— Է՞ս ա։

Ասեց.— Է՛ս ա։

Բարկացած ձեն տվեց.— Ջանլա՞ր։

Ջանլաթները թրերը քաշեցին, մտան նեքսև։

Աղջիկը որ տղին տեհավ՝ սիրուն տղամա՞րդ, սիրտը կպավ, ասեց.— Ա՛յ հեր, մեղք ա, գլուխը մի կտրի, իրեքին էս սրպանում, ո՛չ թե մնին։

Թագավորն ասեց.— Ո՞նց։

Ասեց.— Թարխուն թագավորը բարկացել ա, աղջիկը տվել ա սրան, Ըռեհան թագավորն էլ ա բարկացե՝ աղջիկը տվել սրան, համի երոր դրան սրպանես, էն էրկուսն էլ հետը կսրպանվեն։

— Ախար չէ՞ որ դու էկար գանգատվեցիր։

Աղջիկն ասեց.— Տղա ա, սխալվել ա, բա՛ն չկա։

— Որ ըտե՛նց ա,— ասեց թագավորը բարկացած,— ես էլ քեզ կտամ սրան։ Տղա՛, թող գնա, իրիկունն իմ աղջիկը իրա քառասուն ղարավաշովը կգա։

Տղեն դուս էկավ, չորս յանը թամաշ արեց, մոլորվեց. եդ դառավ, թագավորին խնդրվեց, ասեց.— Ցա գլուխս տո՛ւ, յա ինձ Թռման գևովը ճամփու քցա՛։

Թագավորը հրամայեց Թռման գևին, վե կալավ, տարավ իրա տունը, վե դրեց։

Տղեն որ մտավ նեքսև, քոմմքը վե կացան կաննեցին, ուրախացան ու բարովեցին։

Իրիկունը, մին էլ տեհան, թը՛փ, թը՛փ, թը՛փ, էկան վեր էկան քառասունըմեկ աղունիկ. դառան աղջիկ, մտան նեքսև։ Թագավորի աղջիկը գլուվ տվեց քոմմքին, կաննեց. ղարավաշները էկան միմին գլուխ տվին, կաննեցին։ Հացի թադարեք տեհան, նստեցին հաց կերան։ Պառավը վե կացավ, տղի տեղը դռան բամակը քցեց, քառասուն ղարավաշին մի ջոկ օթախ տվեց, իրեք աղջկանն առավ իրա ծոցը, քննեցին։

Առավոտը ղարավաշները գնացին, աղջիկը մնաց ըտեղ։

Եդ դառնանք, խաբարը տանք ո՞ւմից՝ Թարխուն թագավորից։

Թարխուն թագավորը հրամայեց վեզրին.— Թադարեք տե՛ս, է՛թանք ման գալու։

Էկան ման գալու, հասան Իգդիր։ Աղջիկը երոր իմացավ, որ իրա հերը գալիս ա, գնաց համամ, հագավ, զարդարվեց, էկավ

իրանց դռան միջին կաննեց։ Երոր թագավորը էկավ անց կենալու, տեհավ հրես մի կնիկ ըտեղ կաննած ա, սիրո՜ւն, սիպտա՜կ, փրմփո՜ւխ, արեգակին ասում էր՝ դու մի՛ դուս գա, ե՛ս դուս եմ գալի, բո՛լ ա։

Թագավորի ուշը գնաց. վեզիրը ձեն տվեց.— Ջո՜ւր, հա ջո՜ւր։ Ջուր բերեցին, տվին էրեսովը. ուշն էկավ վրին։ Վե կացավ, գնաց։ Երոր հասավ իրա քաղաքը, թագավորը վեզրին ասեց.— Անպատճառ պտի բերես էն կնկանը, որ չբերես՝ ես կմեռնեմ։

Վեզիրն ասեց.— Ո՞նց բերենք, խի՞ պըտի տա, մի պատճառ պտի գտնենք, բալքի մարդին վնասենք, նո՛ր կնկանը բերենք։

Ասեց.— Ի՛նչ ուզում էս արա, կնկանր պտի բերես։

Վեզիրն ասեց.— Կանչե՛նք տղին, ասենք՝ մեր սաղ ղոշընին ու քաղաքի մարդկանց հաց տա, երոր մեկը գանգատավոր կըլնի՝ գլուխը կտանք։

Թագավորը մարդ ղրկեց՝ կանչեց, ասեց.— Լսել եմ, շա՛տ հարուստ ես, իմ սաղ ղոշընին ու քաղաքի մարդկանցը պտի մի օր հաց տաս, թե որ չտվիր՝ գլուխդ կտա՛մ։

Տղեն ասեց.— Շա՛տ լավ, մի հինգ օր ժամանակ տվեք, էթամ տուն, գամ՝ տա՛մ։

Ժամանակ տվին, գնաց տուն։ Ըռեհան թագավորի աղջիկը գրուս էկավ առաջը, ասեց.— Յա՜րաբ ի՞նչ խաբար ա։

Ասեց.— Թագավորը ուզում ա, որ ղոշընին ու քաղաքին մի օրվա միջին հաց տամ. թե որ տալու չըլնեմ՝ գլուխս կտա։ Մի գողը ջանս առել ա, թե ո՛նց պտի հազրեմ։

Ըռեհան թագավորի աղջիկն ասեց.— Դրա համար խի՞ ես երկյուղ անում, շատ հեշտ բան ա։

Տղեն ասեց.— Ո՞նց հեշտ բան ա, ըտքան պատրաստություն տենալը հե՞շտ ա։

Աղջիկն ասեց.— Քանի՞ օր ժամանակ էս ուզե։

Ասեց.— Հինգ օր։

— Դե՛,— ասեց,— վե կաց գնա քվորս կուշտը. երոր կհասնես հավըզի վրա, ձեն տու, քիրս դուս կգա, նրան ասա, թե. «Քիրդ պուճուր էրկանքներն ուզում ա»։

Տղեն վե կացավ գնաց հավըզի ղրաղը, ձեն տվեց.— Քե՛նի բա՛ջի, քե՛նի բա՛ջի։

Քենին դուս էկավ, ասեց.— Բարո՛վ ես էկե, փեսա, արի՛ նեքսև, արի՛ նեքսև։

Ասեց.— Չէ՛, վռազ եմ, պտի էթամ։ Քիրդ,— ասեց,—պուճուր էրկանքներն ուզում ա։

Մտավ նեքսև ու բերեց.— Ա՛ռ,— ասեց,— փեսա ջա՛ն։

Վե կալավ, էկավ տուն։

Ներր էկավ տուն, Թարխուն թագավորի աղջիկը, Ըռեհան թագավորի աղջիկը, Մարջան թագավորի աղջիկը պատրաստություն տեհան, մի չադիր վե կալան գնացին թագավորի քաղաքի ղրաղը, մի չայիր-չիման տեղ վեր էկան։

Ըռեհան թագավորի աղջիկն ասեց.— Դե՛ գնա, թագավորին իմաց տո՛ւ, թող ղոշունն ու իրա ժողովուրդը վեր ունի գա հաց ուտի։

Տղեն վե կացավ գնաց, կանչեց։ Թագավորը հրամայեց՝ ղոշունն ու բիրադի քաղաքացիք, մենծ ու պուճուր վե կացան, գնացին։

Տղեն որ եդ դառավ, Ըռեհան թագավորի աղջիկն ասեց.— էս էրկանքները մի պըտըտի՛։

Տղեն պըտըտեց, վըզզալեն ամեն տեսակ եմակ միջիցը դուս էկավ։ Ղոշունն էլ կերավ, ժողովուրդն էլ կերավ, հացն ու եմակը էլ եդ մնաց կիտուկ։

Թագավորն ու վեզիրն ասեցին.— էթանք տեննանք, հո՛ գանգատավոր չկա, տղի գլուվը կտրենք։

Էկան տեհան, որ ինչքան որ կերել են, էնքամ էլ կիտած ա։

Տղեն գնաց առաջ, թագավորին գլուխ տվեց կաննեց, ասեց.— Թագա՛վոր, էսքան եմակը պատրաստել եմ, ուտող չկա, բա ո՞ւր ա ուտողը։

Թագավորն ասեց.— Բիրադի ղրկել եմ, էկել ա։

Էլի նիաթը կախեց, վեզրի հետ թողաց գնաց։

Ըտոնք էլ չադիրը քանդեցին, գնացին դպա իրանց տուն։

Մի քանի օրից եդը էլ եդ թագավորը վեզրին վե կալավ էկավ դպա Իգդիր։ Էլի աղջիկը գնաց համամ, զուգվեց, զարդարվեց, էլի իրանց դռանը կաննեց։

Թագավորը ներր էկավ անցկենալու, աչքը առավ, էլի ուշը գնաց, նվաղեց։

— Ջո՛ւր հա, ջո՛ւր,— աղջիկը ջուրը վե կալավ ու գնաց։

Գնաց ջուրը տվեց հոր էրեսուվը։ Հերը բիրդան աչքերը բաց արեց, տեհավ, ըհը՛, իրա տեհած աղջիկն ա ջուրը էրեսին տվել։

— Վա՛յ,— ասեց,— գլխիդ ղո՞ւրբան, իմ ուշ-միտքս գլխերեկ դպա քեզ ա։

Ասեց.— Աչքերդ քոռ հո՛ չի, բա չե՞ս ճանանչում։

Ասեց.— Ո՞վ էս, չե՛մ ճանանչում։

Ասեց.— Ախար աղջիկդ եմ, Հնազանդն եմ, որ տվեցիր Թամբալ տղին։ Համի էս ամարաթը էն Թամբալ տղինն ա։ Ա՛րի էթանք տուն։

Թագավորը փաթըթվում ա աղջկանը, լաց ա ըլնում։

Աղջիկը վեր ա ունում հորը, տանում ա տուն։ Թագավորը թամաշ ա անում դրա օթախներին, տենում ա իրա օթախներիցը տասը անգամ լավ ա։

Ըռեհան թագավորի աղջիկը գալիս ա՝ թագավորին բարևում ա, Մարջան թագավորի աղջիկն էլ ա գալի, տղեն էլ ա գալի բարևում։ Հալիվորն ու իրա կնիկն էլ են գալի բարևում։

Երոր ըտե նստում են, նո՛ր թագավորը հարցնում ա.— Պսակվա՞ծ ես, տղա ունե՞ս։

Ասում ա.— Հլա պսակվածծ չենք, ազապ ենք։ Էս՛ էրկուան էլ են իմ մարդինը, նրանք էլ են ազապ։

Թագավորն ասեց.— Հազիր ես ըստեղ եմ, պսակեմ քոմմքիդ, նո՛ր էթամ։

Գնացին հարսանըքի թադարեք տեհան, օխտը օր, օխտը գշեր, օխտը ձեռք դափ ու զուռնեն ածեցին, կերա՛ն, խմեցի՛ն, քե՛ֆ արին, սֆթա Թարխուն թագավորի աղջկա հետ պսակեցին, էգսի օրը Ըռեհան թագավորի աղջկա հետ, երրորդ օրը՝ Մարջան թագավորի աղջկա հետ։

Ընտրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Ասսանից իրեք հատ խնձոր ընկավ, մինը՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ անկաջ դնողին։



12· ՄՈԹԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ

Ըլնում ա չիլնում ավալ ժամանակին մի մարդ, մի կնիկ. սրանք ըսկի պտուղ չեն ունենում։ Էս խեղճերը մեռան սրբերի դուռը էթալո՛ն, մատաղ անելո՛ն, ողորմություն տալո՛ն՝ չէ՛, չէ՛ վավ. աստոծ սրանց պտուղ չտվեց։

Անց կացավ ըսենց հի՛նգ տարի, տա՛սը տարի, քսա՛ն տարի. վերջը մարդը միտք արեց՝ իրանց դռան աղաքին մի նոր ֆոր փորիլ տա. էրեսըհանց ընենց ֆողով ծածկի, որ մալում չանի։

Ասեց.— Ո՛վ կգա մի ղաֆիլ էս ֆորի մեջը կընկնի՝ հենց նրա յախեն ղայիմ բռնեմ, ասեմ. «Դո՛ւ կարաս իմ դարդին դարման անի, էլ մարդ չէ՛»։ Բերում ա ըտենց էլ անում ա՝ իրանց քուչի դռան կշտին մի քառասուն գազանոց ֆոր ա փորիլ տալի, էրեսըհանց էլ ֆողով ծածկում, կոկլկացնում, դղում, որ վրովը անցկացողը ըսկի չէր ֆահմի, թե տակին[1] եքա ֆոր ա քանդած։

Առավոտը, դեռ լիս ու մութը չբաժանված, էս մարդը վեր ա կենում տենում՝ ֆորի միջիցը մի նվոցի ձեն ա գալի։ Էթում ա ֆորի բերանը բաց անում, տենում քոռաղաղընա մի դարվիշ ա ընկե մեջը։

---

[1] Տպագիր տեքստում նախորդում է՝ նրա, որը բանահավաքի ձեռքով չնչված է (Ծ. Կ.)։

— Ա՛սու սիրուն,— ասում ա դարվիշը,— մի ինձ ըստիան աղատա, ի՛նչ ուզես՝ կտամ. թե կնիկդ էրեխա չի բերում՝ ընենց կանեմ, որ էրեխա բերի. թե տանդ հիվանդ ունես՝ կլավացնեմ. մախլաս, ի՛նչ հունար ասես՝ ձեռիցս կգա...

— Ջա՛ի ես հենց քեզ ի ման գալի, դա՛րվիշ աղպեր, էդ լա՛վ էլավ։ Էսքամ տարի մեռա դեղ, դարման անելոն, սրբերի դուռը մաշելոն՝ ճար, իլլաջ չէլավ, կնիկս պտուղ չբերեց. որ կարենաս ընենց մի բան անի՝ դեռ հլա քեզ բոլ փող էլ կբաշխեմ։

Դարվշին հանում ա ֆորիցը, տանում իրանց տունը։

Դարվիշը մի խնձոր ա ուզում, կես անում, տալի էն մարդին։

— Ա՛ռ,— ասում ա,— խնձորի մի տապակը դո՛ւ կուտես, մի տապակը կտաս կնկա՛նդ. վեց ամսեն վրա կնիկդ մի տղա կբերի։

Էն մարդը դարվշին բոլ փող բաշխեց, ճամփու դրեց։ Ուրախ-ուրախ խնձորի մի տապակը ինքը կերավ, կեսն էլ պահեց, որ կընկանը տա՝ չունքի կնիկը տանը չէր, հարևանի տունն էր գնացե։ Շատ կա՛ցավ, կա՛ցավ՝ տեհավ եդանում ա. ասեց.— Արի՛ էս մի տապակն էլ ես ուտեմ. ինչ պտի ըլնի. մին չի՞, ե՛ս կերած՝ կնի՛կս կերած։ Վեր ա ունում էն մի տապակն էլ ա ուտում։

Անց ա կենում մի՛ ամիս, է՛րկու ամիս, մախլասի վե՛ց ամիս՝ էս մարդը էրկրֆոգսանում ա, ազատվում. բերում ա ըն էլ ի՛նչ՝ մի մոթալի տիկ։ Հենց պղատվելիս էլ ինքը մեռնում ա։

Խեղճ կնիկը մնում ա միտք անելոն, թե էս մոթալի տկի մեջը ի՞նչ զորություն պտի ըլնի, որ ո՛նչ բերան ունի, ո՛նչ ուռ, ո՛նչ ձեռ, մախլաս, ո՛նչ մի մարդի նշան չկա վրեն։ Վեր ա ունում էդ տիկը տանում իրանց շիրախանում վե քցում. ասում ա. «Տենամ, բա՛լի սրա միջին մի բան կա. թո՛ղ մնա մի քանի շաբաթ էլ, տենանք ինչ կըլնի»։

Անց կացավ մի շաբաթ, էրկու շաբաթ, տեհավ շիրախանում մինը իրան ձեն ա տալի.— Ա՛զի, ա՛զի, արի՛ ըստե, բան եմ ասում։

Մնում ա զարմացած. վեր ա կենում էթում տենում՝ էն մոթալի տիկն ա ձեն տվողը։ Հիսուս-Քրիստոս ա անում՝ մոտին կանում։

— Ա՛զի,— ասում ա Մոթալը,— էգուց կէթաս մեր թագավորի կուշտը, նրա աղջիկը կուզես ինձ, կասես. «Թագավորն ապրած կենա, իմ Մոթալ տղեն աղջկանդ ուզում ա»։

— Ի՛նչ ես ասում, ա՛յ որդի. գիժ ես, խև ես, ի՛նչ ա. քեզ ո՞վ աղջիկ կտա. ուզում ես իմ գլուխն էլ կտրիլ տաս, հենց էն ըլնի՞։

— Ա՛յ մեր, ես քեզ ասում եմ գնա՝ գնա՛. էդ քու բանը չի՝ կտան, չեն տա։

Խեղճ կնիկը չի իմանում ի՛նչ անի. ո՞նց էթա թագավորի աղջիկը ուզի Մոթալին։ Համա որ տենում ա Մոթալը շատ ա զոռում՝ վեր ա կենում էթում թագավորի խնամաքարի վրա նստում։

Թագավորը դուս ա գալի, հարցնում.— Ա՛յ մերա, խի՞ ես էկե. ի՞նչ խնդիրք ունես ասելու։

— Թագավորն ապրած կենա, ի՞նչ ասեմ. մի տղա ունեմ, ինձ զոռով-գյուջով ղրկել ա, որ քու աղջիկը ուզեմ նրան։ Ես հազար ասեցի, թե թագավորը քեզ աղջիկ չի տա՝ չլսեց. համի էկել եմ ոններդ եմ ընկե, դու քու աստոծը, ինչ ուզում ես արա՛։

— Կտամ, խի՞ չեմ տա. համա իրեք բան կուզեմ, թե տղեդ կարաց բերի՝ հո աղջիկս իրանն ա ու իրանը. թե չէ՝ էրկսիդ գլուխն էլ թռցնիլ կտամ։ Էս հետ կէթաս տղիդ կասես, թե՝ թագավորն ուզում ա օխտը ընենց դև, որ հա՛մ քոռ ըլնեն, հա՛մ քառ, հա՛մ լալ։ Իմ ուզած իրեք բանից մինն էս ա։

Խեղճ մերը վեր ա կենում, դառը, տխուր գալի տուն. հենենեն ճամփին տղին անրծում. «Ժո՛ւռ ու մուռ ըլնես,— ասում ա,— ա՛յ Մոթալ, որ ինձ ըսենց կրակի մեջ քցեցիր. համի ո՞րդիան պտի ճարենք օխտը էն թավուր դև, որ հա՛մ քառ ըլնեն, հա՛մ քոռ, հա՛մ լալ»։

Գալիս ա Մոթալին ասում թագավորի ուզածը։

Մոթալն ասում ա.— Կէթաս գերեզմանատունը. ֆլան Մարմարե քարին իրեք հետ մատդ կքսես, կասես. «Մոթալը քեզանից օխտը դև ա ուզում, որ հա՛մ քառ ըլնեն, հա՛մ քոռ, հա՛մ լալ», էլ եդ կգաս։

Մերը վեր ա կենում էթում գերեզմանատունը, ման գալի, էն Մարմար քարը գտնում, մատը իրեք հետ քսում քարին, ասում.— Մոթալը քեզանից օխտը էնթավուր դև ա ուզում, որ հա՛մ քոռ ըլնեն, հա՛մ քառ, հա՛մ լալ,— էլ եդ գալի տուն։

Մոթալը հարցնում ա.— Ա՛զի, գնացի՞ր. գտա՞ր Մարմար քարը. ասե՞ցիր։

— Հա՛, ա՛յ որդի. գտա, ասեցի. համա ըսկի բան չասեց։

— Լա՛վ, գնա՛. հմի դևերը գնացած կըլնեն թագավորի կուշտը. ասա՛, տեննանք՝ է՞վ ինչ ա ուզում։

Մերը վեր ա կենում էթում թագավորի խնամաքարի վրա նըստում։ Թագավորը էն սհաթը դուս ա գալի։

— Հը՛, մերա. էս մինը տղեդ բերիլ տվեց. մնաց էրկուսը։ Էս հետ էլ կէթաս տղիդ կասես, որ աղջկանս համար մի ձեռք էնթավուր շոր կարիլ տա, որ ո՛նչ մկրատ դիպած ըլնի, ո՛նչ ասեղ, ո՛նչ թել. ինքն էլ ակն ու մարգարտներով, բուլիանտներով զարդարած. որ աղջիկս հագնի թե չէ՝ դուզ վրեն գա, ո՛նչ ավել ըլնի, ո՛նչ պակաս։

Մերը վեր ա կենում գալի տղին ասում թագավորի ուզածը։

Մոթալը ասում ա.— Գնա էլի էն Մարմար քարին իրեք հետ[1] մատդ քսա՛, իմ անումը տո՛ւ, ասա. «Մոթալը քեզանից էնթավուր մի ձեռք աղջկա շոր ա ուզում, որ վրեն ո՛նչ մկրատ բանած ըլնի, ո՛նչ ասեղ, ո՛նչ թել»։

Մերը վեր ա կենում էթում, էն Մարմար քարին իրեք հետ մատը քսում ա, ասում.— Մոթալը քեզանից մի ձեռք էնթավուր աղջկա շոր ա ուզում, որ ո՛նչ մկրատ դիպած ըլնի, ո՛նչ թել, ո՛նչ ասեղ,— էլ եդ գալի տուն։

Մոթալը հարցնում ա.— Հը՛, ա՛ղի. գնացի՞ր, Մարմար քարին ինչ ասել ի՝ ասե՞ցիր։

— Հա՛, որդի, գնացի, ասեցի. համա չեմ գիտա խոսքդ կլսի՞, թե չէ։

— Թե ասել ես, բա՛ս հմի ղրկած կըլնի. գնա՛ թագավորի կուշտը, հարցրա՛, տես էն մի ուզածն ի՞նչ ա. թեզ արի՛, ինձ խաբար բե՛։

Մերը վեր ա կենում էթում թագավորի խնամաքարի վրա նըստում։ Թագավորը էն սհաթը դուս ա գալի։

— Հը՛, մե՛րա. էլի էկել ե՞ս։ Տղեդ իմ ուզած մի ձեռք շորն էլ ա ղրկե. մնաց մի բան. թէ որ ըս էլ կարաց անի՝ հո պրծած ա. աղջիկս ոտով-գլխով տղինդ ա։ Իմ պալատիցը ընչանք ձեր տունը պտի էնթավուր շորս ատեժ տներ շինի, որ պատերը սաղ բուլիանտներո՛վ, մարջաններո՛վ, ակներո՛վ զարդարած ըլնի, որ ֆըրֆըրահար գա՝ մարդի խելք գլխիցը տանի. աղջիկս ըստիան օթախների

---

[1] Տպագիր տեքստում՝ դաճ, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

միջով գա ձեր տունը, ընդհան գա ըստեւ։ Հրե՛ս իմ մի ուզածն էլ էս ա. գնա տղիդ ասա՛. թե արեց՝ հո արեց. թե չէ՝ էրկսիդ էլ պտի բյալլա անեմ։

Մերը վեր ա կենում գալի տուն՝ Մոթալին ասում թագավորի ուզածը։

Մոթալն ասում ա.— էս հետ էլ գնա էն Մարմար քարի կուշտը, ասա. «Մոթալը քեզանից ուզում ա, որ թագավորի պալատիցը ընչանք մեր տները էնթավուր չորս ատեժ տներ շինես, որ պատերը քոմմա ակներով, բուլիանտներով, մարջաններով ձեռիցը ֆըրֆըրահար գան»։

Մերն էթում ա էլի էն Մարմար քարին իրեք հետ մատը քսում, ասում.— Մոթալը քեզանից էնթավուր չորս ատեժ տներ ա ուզում, որ թագավորի պալատիցը ընչանք մեր տները ձգվի. օթախների պատերն էլ քոմմա ակներով, մարգարտներով զարդարած ըլնի։

Ասում ա, եդ գալի տուն։

Մոթալը հարցնում ա.— Ադի՛, հը՛, ի՞նչ էլավ, գնացի՞ր. Մարմար քարին ասեցի՞ր։

— Հա՛, ա՛յ որդի. գնացի, ինչ որ թամբահ իր արե՝ ասեցի։

— Բաս լա՛վ. առավոտը թագավորի ուզած օթախները հազիր կըլնի. էս հետ էլ տենանք թագավորը ի՞նչ պտի մհանա բռնի՝ աղջիկը չտա։

Ղո՛րթ որ, թագավորը առավոտ վեր ա կենում տենում՝ իրա ուզած չորս ատեժ տները հազիր ա։ Տնե՛ր, տնե՛ր եմ ասում, որ տենողի խելքն էր էթում։ Թագավորը ասեց.— Է՛ս հետ որ պառավի տղեն աղջկանս տարավ։

Մոթալի մերը վեր ա կենում, թազա շինած օթախների միջովը էթում դուզ թագավորի խնամաքարի վրա նստում։ Թագավորը էն սհաթը դուս ա գալի։

— Հը՛, մե՛րա. էկել ե՞ս. բա տղե՞դ ուր ա. դե գնա՛, բե տենանք. էս հետ որ աղջիկս նրան հալալ ա. էլ ասելու բան չունեմ։

Մերը գալիս ա Մոթալին ասում, թե.— Թագավորը կանչում ա։ Մոթալն ա՝ թոլեթոլ ըլնելո՛ն, թոլեթոլ ըլնելո՛ն, օթախների միջովը գալիս ա թագավորի աղաքին կաննում։ Թագավորը Մոթալին որ տենում ա, մնում ա զարմացած թե էս ի՞նչ թավուր իսան ա, որ ո՛նչ ոտ ունի, ո՛նչ ձեռ, ո՛նչ զադ։

Ուզում ա աղջիկը չտա Մոթալին, համա աղջիկը ինքը իրա բերնովն ա ասում.— Չէ՛, ա՛յ հեր. ինչ որիս ա, ինձ ղաբուլ ա. ես պտի դրան առնեմ. հալբաթ դրա միջին մի հունար կա։

Թագավորն էլ ի՛նչ պտի ասեր, որ աղջիկը ինքը ղաբուլ էր։ Բերեց էրկսին էլ նշան դրեց՝ պսակեց, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց։ Պսակից եդը Մոթալը թագավորի աղջկանը վե կալավ, տարավ իրանց տունը։

Ասենք, թագավորի աղջիկն ու Մոթալը իրար հեննա խոսում ին, գրից անում՝ համա թագավորի աղջիկը չէր իմանում, թե Մոթալի միջին ինչ թավուր զադ կա։ Մի օր էլ, որ մարդ ու կնիկ մենակ ին մնացե տանը, Մոթալը խրխու միջիցը դուս էկավ. դուս էկավ, ի՛նչ դուս էկավ. մի սի՛րուն, նա՛շխուն, բոյ ու բուսաթով տղամարդ, որ չուտեիր, չխմեիր՝ հենց նրան թամաշ անեիր, ի՛նչ ասեմ, մի խոսքով թագավորի աղջկանիցը սիրուն։

Թագավորի աղջիկը էս որ չտե՞հավ, էն սհաթը վազեց փաթըթվեց Մոթալի ճտովը, լաց էլավ.— Տնաշեն,— ասեց,— դու որ էս թավուր սիրուն տղամարդ իր, բա խի՞ իր մեզ ըսենց լեղաճաք անում, թողում. բաս արի՛, թե՛զ, էս սհաթին էթանք հորն ու մորս կուշտը՝ մի տենան, նրանք էլ ուրախանան։

— Չէ՛, ա՛յ կնիկ, չէ՛. ես ըսենց եմ ստեղծվե. աստոծ հրամայել ա, որ հուր-հավիտենական ես էս խրխու միջիցը դուս չգամ, խալխին չէրևամ։ Ասենք դո՛ւ, հերն ու մերդ ինձ տեննաք՝ բան չկա. համա ուրիշ մարդ չպտի տեննա, թե չէ վերջը փիս կըլնի։

Թագավորի աղջիկը էն սհաթը գնաց հորն ու մորն ասեց իրա տեհածը։ Հերն ու մերը ուրախացան, աշխարով մին էլան. համա խեղճերը չին իմանում ի՛նչ անեն, որ Մոթալը էլ խրխու մեջը չմննի։

Վերջը միտք արին, որ մի օր թունդիրը վառեն, Մոթալին բռթեն քցեն մեջը, բալի խրխին էրվի՝ պրծնի։ Ըտենց էլ արին. թունդիրը լավ թեժ վառեցին ու Մոթալին բռնեցին քցեցին կրակի մեջը։ Խրխին էրվեց, համա խեղճ Մոթալին չկարացին եդ կրակի միչիցը հանի. ինքն էլ խրխու հեննա էրվեց, մնձրվեց՝ քուլ դառավ։ Շատ գլխներին վա՛յ տվին, համա էլ որդե՝[1] բանը բանից անց էր կացե։

Մի քիչ կացան՝ տեհան էն քլի միջիցը մի նա՛շխուն, սի՛րուն աղունիկ դուս էկավ, թռավ իրանց երդկի վրա նստեց։

[1] Տպագիր տեքստում՝ ուր, ուղղումը բանահավաքինն է (Ը. Կ.)։

— Թագավորի աղջիկ,— ասեց աղոմիկը,— դու որ ինձ էս օրը քցեցիր՝ քեզ էլ չի մնա։ Էրկաթե տրեխներ կհագնես, պողպատե գավազան կառնես ձեռդ, լալով, լալաշկով կգաս եննուցս մաղ կգաս։ Էնքա՛մ մաղ կգաս, որ տրեխներդ կծակվի, գավազանիդ կեսը կմաշվի, որ նոր ինձ կգտնես։

Էս ասեց թե չէ, աղոմիկը թռավ գնաց։ Խեղճ թագավորի աղջիկը մնաց եննուցը սառած մոխիկ անելոն։

Շատ միտք արեց, վերջը ասեց հորն ու մորը.— Պտի էրկաթե տրեխ հագնեմ, պողպատե գավազան առնեմ ձեռս՝ էթամ մարդիս եննուցը, աշխարե աշխար, երկրե երկիր մաղ գամ. էնքա՛մ մաղ գամ, որ գտնեմ։

Հերն ու մերը աղջկանը ղադաղա չարին, ասեցին.— Էթում ես՝ գնա՛։

Թագավորի աղջիկն ա՝ շորերը փոխեց, տղամարդի գեյիմ մտավ, էրկաթե տրեխներ հագավ, պողպատե գավազան առավ ձեռը ու ընկավ ճամփա։ Գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, սարե-սար դիպավ, քոլե-քոլ դիպավ՝ վերջը մի անմահական բաղչի ռաստ էկավ։ Պատովը վեր էկավ[1] բաղչեն՝ տեհավ լա՛վ-լա՛վ անմահական խնձորներ, տանձեր, հավողներ ու հազար մի չեշուտ-չեշուտ բար ու նուբարներ, որ տենողի խելքն էթում էր։ Համա ո՛ր բարին մոտացավ, որ պոկի ուտի՝ տեհավ ձեն տվեց. «Բաղմանչի՛, ինձ կերան, հասի»։

Վերջը տեհավ որ չէ՛, էս բաղն էլ իրան տեղ չի տալի, որ գշերը ընդե սթար անի՝ դուս էկավ ընդիան, գնաց։ Գնաց, գնաց, շատ ու քիչը աստոծ գիտա, մի ուրիշ գյուղի բաղի ռաստ էկավ։ Նի մտավ մեջը՝ տեհավ լա՛վ-լա՛վ ամարաթներ, լա՛վ-լա՛վ շենքսեր. ասեց.— Հա՛լբաթ ըստե մարդ ա կենում. էթամ տե՞նամ։

Ուսուլով ամարաթի դուռը բաց արեց, տուն մտավ. տեհավ սուփրեն քցած՝ հազար ու մի տեսակ կերակրներ վրեն դրած. համա որ ասես մարդ չի էրևում։ Է՛ս մի օթախը մտավ, է՛ն մի օթախը մտավ՝ տեհավ իսանորդի չկա, ինքն էլ զաթի սուված, նխտից ընկած՝ հենց էսթավուր բանի[2] էր մաղ գալի։

---

[1] Տպագիր տեքստում այս արտահայտության փոխարեն եղել է՝ աշմիշ էլավ, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ կերակրի, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Ասեց.— Նստեմ էս կերակրներիցը մի կուշտ ու կուռ էլա ուտեմ։

Համա խեղճը հենց ո՛ր կերակրի վրեն ձեռ դրեց՝ տեհավ ամանը շուռ էկավ, թափվեց։ Մախլասի, ի՛նչ արեց, չարևց՝ չկարաց էն կերակրներիցը բերանը զադ դնի՝ մնաց էլ եդ սոված։

— Էրևում ա,— ասեց,— որ էս կերակրները մի մարդի համար են հազրե. դու արի՛ ես մննեմ էս բուխարին, տաք կենամ. տենամ ո՞վ ա գալի էս կերակրներիցը ուտում։— Մտավ բուխարին՝ տաք կացավ։

Անցկացավ մի սհաթ, էրկու սհաթ՝ մըն էլ տեհավ էկան իրեք սիրուն, նաշխուն աղունիկ, խրխիքը հանեցին վըրներիցը՝ տեհավ իրեք ջահել-ջիվան տղերք։ Նստեցին էդ սուփրի վրեն, կերան, մեր Մոթալն էլ սրանց միջին էր, կերան պրծան, եննա իրար կենաց խմեցին։

Որ դորը Մոթալին էկավ՝ թասը[1] դինի լցրեց, ասեց.— Ըս էլ խմենք է՛ն թագավորի ու նրա աղջկա կենացը, որ ինձ էս օրը քցեցին,—ասեց ու դարդկեց թասը։ Թագավորի աղջիկը բուխարուց էս քոմմա տենում էր։

Աղջիկը էնքամ կենում ա, որ հացները ուտում են պրծնում, ուղում են էլ եդ իրանց խրխիքը հագնի, թռնի՝ էն սհաթը բուխարու միջիցը դուս ա գալի, Մոթալի ճտովն ընկնում, փաթթվում։

— Ք՛ե՛զ էլ մեղա՞, քու ստեղծողին էլ մեղա՞. ի՛նչ էլավ՝ էլավ, բա՛ն չկա,— ասում ա ու աղբրի պես արտասունքը աչքերիցը թափում։

Մոթալը կնկանը բաշխում ա ու էրկսով աղունիկ են ըլնում՝ թռնում էլ եդ իրանց երկիրը։

Էս վախտերքը էն Մարմար քարը աշըղ էր դառե, սաղն առե ձեռը՝ աշխարե-աշխար, երկրե-երկիր ընկե, որ Մոթալին գտնի, իրա ինադը նրանից հանի, որ խրխուն լավ մուղաթ չէր կացե՝ էրիլ էր տվե։ Որդե էթում էր, ո՛ր մի սազին չէր տալի, հեննեն ձեն հանում՝ սա՛ր, քա՛ր, քո՛լ լացացնում էր, թողում. մի խոսքով, հենց իմանաս բերնիցը կրակ էր թափում։ Լսել էր, որ Մոթալը էն գյուլի բաղումն ա՝ վեր էր կացե էկե ընդե. համա ասել ին, որ իրա

---

[1] Տպագիր տեքստում այս բառի փոխարեն եղել է՝ բաս, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

կնկա հեննա աղունիկ ա էլե, թռե՝ ինքն էլ հա՛յդե-հայդ ընկել էր սրանց եննուցը, որ հասնի։

Է՛կավ, է՛կավ, հենց էն ա հասվեհաս էր՝ Մոթալը եդ մտիկ արեց, տեհավ Մարմար քարը ետևներիցը գալիս ա ու որդե որ ա՝ կհասնի, կնկանն ասեց.— Ա՛յ կնիկ, թե՛զ մեր գլխի ճարը տենանք. Մարմար քարը ետևներիցս գալիս ա, մեզ մի զիան կտա. ես հրես բոստան կըլնեմ, դու էլ կըլնես բոստանչի։ Կգա ինչքամ սազ կածի, կասի. «Ձմերըկից, եմշից տո՛ւ ուտեմ», չըլնեմ-չիմանամ. տաս, հա՛, իմաց կա՛ց, որ ի՛նչ տաս՝ էն ն՛ս եմ, վեր կունի կտանի։

Մոթալն ըլնում ա բոստան, կնիկը՝ բոստանչի։ Մարմար քարը գալիս ա, սազը ածում, ածում՝ վերջը ասում.— Քու արևի սադաղին, ա՛յ բոստանչի. մի ձմերուկ յա մի եմիշ տա՛ս ուտեմ՝ սիրտս հովանա, շոքու լերթ ու ջիգյարս էրվում ա։

— Կորի՛, շա՛նորդի,— ասում ա աղջիկը,— քեզ ո՞վ էր ասում դաս սազ ածես, որ հմի ձմերուկ ես ուզում. գնա՛, գնա՛, ես քեզ տալու ձմերուկ չունեմ։— Ասում ա ու դուս անում։

Մարդ ու կնիկ էլ եդ աղունիկ են ըլնում, թռնում։ Մխելի տեղ թռնում են, թռնում՝ տենում են էլի Մարմար քարը ետևներիցը գալիս ա, գալիս ա, ո՞նց ա գալի՝ ո՛նց որ մի գյուլլա։

— Ա՛յ կնիկ,— ասում ա Մոթալը,— էս չէլավ. Մարմար քարը հրեն էլի ետևներիցս գալիս ա. պտի մի իլլաջ անենք։ Ես կըլնեմ ջաղաց, դու ի՛լ ջաղացպան. կգա ինչքամ սազ կածի, աղաչանք կանի, ալրից, յա կլոճից կուզի՝ չես տա, հա՛։

Մոթալն ըլնում ա ջաղաց, կնիկը՝ ջաղացպան։ Մարմար քարը գալիս ա ջաղացի դռանը կանգնում՝ սազը քոքում։

Ածում ա ածում, վերջը ասում.— Ա՛սու սիրուն, ջաղացպան աղպեր. մի բուռը ալիր, յա մի կլոճ տա՛ս, սուված մեռնում եմ, ուտեմ։

— Գնա՛, կորի՛, շա՛նորդի. շան էրես ունես, էլի էկա՞ր. գնա՛, ոադ ի՛լ գլխիցս. ես ո՛նչ ալիր ունեմ, ո՛նչ կլոճ։— Ասում ա ու ջուղաբ անում։

Մարմար քարը որ էթում ա, մարդ ու կնիկ էլ եդ աղունիկ են ըլնում, թռնում։ Թռնում են, թռնում, շատն ու քիչը աստոծ գիտա, գալիս են հասնում իրանց երկիրը։ Թռնում են էթում էրկսով էլ դուզ թագավորի պալատը մննում. տենում են թագավորը թախտի վրա նստած ա։ Մինը թագավորի աջ թևի վրա ա նստում՝ մինը ձախ թևի։

Մարմար քարն էլ ա սրանց եննուցը գալի՝ սազը ձեռին դուզ մննում թագավորի պալատը։ Ո՛ր սազին չէ՞ր տալի, հեննեն հազ ասում՝ սազ պալատը նրա ձենը վեր էր ունում, դըմբդըմբում, զընգզընգահար գալի։ Թագավորը իրա օրումը էս թավուր աշըղ չէր տեհե, մնացել էր հայիլ-մայիլ նրա ձենին, սազ ածելուն։

— Ա՛յ հողածին,— ասում ա թագավորը,— չունքի դու էդքամ չավ սազ ածող ես, ի՞նչ ես ուզում, ասա՛ տամ. որ թագավորությունիս կեսն էլ ուզես՝ կտամ, արևսեյին կա՛ց։

— Թագավորը սազ ըլնի,— ասում ա Մարմար քարը,— ըսկի զադ չեմ ուզում՝ մենակ ձախ թևիդ վրի նստած աղունիկը տո՛ւ ինձ։

Թագավորը, ասենք, չէր ուզում տա, համա ինչ աներ, մի հետ խոստացել էր. վե կալավ տվեց նրան։ Էդ ձախ թևի աղունիկը թագավորի աղջիկն էր. ո՛ր տվեց Մարմար քարին թե չէ՝ էն սհաթը աղունիկը կորեկ էլավ, նրա ձեռիցը վեր ընկավ։ Մարմար քարն էլ հավ էլավ, ուզեց կորեկը կոցի ուտի, է՛ն դհիցը Մոթալը աղվես էլավ, հավին կոխեց տակը հեղտեց, չթողաց որ ուտի։ Մոթալը էլ էդ էլավ մարդ։

Թագավորը մնացել էր սառած կաննած. թե էս ի՞նչ խաբար ա. իրա աչքի աղաքին էս ի՞նչ թավուր բաներ են ըլնում։ Նոր Մոթալը գեննիցը կորեկը վե կալավ, մոտացավ թագավորին։

— Թագավորն ապրած կենա,— ասեց,— ինձ ճանանչո՞ւմ ես, թե չէ՛. ես ձեր Մոթալ փեսեն եմ, որ քցեցիք թունդիրը՝ էրեցիք, հա՛. միտդ գա՞լիս ա։ Բա՛ ո՞ւր ա աղջիկդ, չի էրևում։

Թագավորն ասում ա.— էս թամա՛մ օխտը տարի ա, խեղճ-աղջիկս էրկաթե տրեխներ ա հագե, պողպատե գավազան ա առե ձեռը՝ քու եննուցն էկե. չենք գիտա ի՞նչ էլավ՝ ղո՛ւշ կերավ, ղո՛ւրդ կերավ, ջանավա՛ր կերավ, թե ընչանք հմի սաղ ա։

Նո՛ր Մոթալը կորեկը էլ եդ աղջիկ ա շինում, ընդե կաննացնում։

Ասում ա.— Հրե՛սիկ ըս էլ ձեր աղջիկը։

Էն սհաթը թագավորը իրա թախտիցը վեր ա գալի, Մոթալին իրա տեղը նստացնում։ Էլ ի՞նչ մատաղներ անիլ, էլ ի՞նչ աղքատների ողորմություն տալ, էլ ի՞նչ ուրախություն անիլ։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։



13. ՕԽԱՑ–ԲԱԲԻ

Ժամանակով մարդ ու կնիկ են ըլնում, ունենում են մի մինուճար տղա։ Իրանք էլ շատ դառն աղքատ, անճար են ըլնում։ Ասսու իրան օրը մարդը կացինը վեր ա ունում, էթում մեշեն, փետ կըտրում, տանում ծախում, բերում. օղլուշաղը պահում։ Սրանց տղեն որ մենծանում ա, տասը-տասնէրկու տարեկան դառնում, հերը միտք ա անում տանի փեշակի տա, բալի մի զադ սարվի, մարդ դառնա, աշխատանք անի, բերի իրանց պահի։ Մերը սրան ղաբուլ չիլնում։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— ի՛նչ դրա փեշակի վախտն ա, դեռ հլա պուճուր ա։ Մընք էլ, տեսնում ես, քյասիբ, անճար ենք. լավ չի՞լնի տանես հեննեդ մեշեն, փետ կտրիլ սարվացնես, տղա ա, է՛լի, ինչքամ չըլնի՝ մեզ պետք կգա։

— Լա՛վ, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— որ ռազի չես՝ փեշակի չեմ տա. կկենամ՝ ընչանք մենծանա։

Անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էլի հոր միտքը փոխվում ա։

Կանչում ա տղին.—Ա՛յ որդի,—ասում ա,—կուզե՞ս քեզ տանեմ փեշակի տամ։

— Խի՞ չեմ ուզի, ա՛յ հեր,— ասում ա տղեն,— համա թե ուզում ես՝ բան սարվեմ, վերջը մի կտոր հացի տեր ըլնեմ, ինձ տա՛ր մի ուրիշ քաղաք, ընդե փեշակի տո՛ւ, որ մորս աչքիցը հեռու ըլնեմ, չգա էլ եդ վեր ունի, բերի։

Հերը ղաբուլ ա ըլնում էդ խոսքին. կնկանն ասում ա՝ մի քանի բոքոն թխի, որ առավոտը տղին պտի վեր ունի, տանի ուրիշ քաղաք՝ փեշակի տա։ Կնիկը էս հետ բան չի ասում, հեգսի օրը բոքոնը թխում ա, դնում խուրջինը, տղի ջուխտ թուշը պաչում. հեր ու տղա փետները վեր են ունում, ընկնում ճամփա։ Էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, ընչանք ճաշվա թեքվիլը հասնում են մի ջրի ղրաղ։

Հերը տենում ա շոքը շատ ա զոռում.— Ա՛յ որդի,— ասում ա,— արի՛ նստենք մի քիչ հաց-մաց ուտենք, դինջանանք, կենանք ընչանք հովն ընկնի, նո՛ր վե կենանք, էթանք։

Էդ ջրի ղրաղին նստում են, խուրջինը բաց անում, բոքոնները դնում աղաքները, ուտում։ Տղեն մի քանի դուռում որ դնում ա բերանը՝ ծարավում ա. վեր ա կենում ջրի վրեն մոզի անում, խմում։

Էս ջուրը շա՛տ դիր ա գալի տղին, գլուխը բանձրացնում ա, ասում.— Օխա՛յ[1], էս ի՛նչ լավ ջուր ա։

Էս խոսքի վրեն էն սհաթը ջրի միջիցը մի գլուխ ա էրևում։

— Տղա՛,— ասում ա,— ի՞նչ ես ուզում. խի՞ ես ինձ կանչում։

— Ք ե՛զ ով ա կանչում, բա՛բի[2],— ասում ա տղեն,— ես հորս ի՛ ասում, քեզ հե՞ննա ով ա։

Օխայ-Բաբին էրեսը շուռ ա տալի, տենում ղորթ որ մի մարդ հրենիկ էն դիհը նստե, հաց ա ուտում։

— Բա՛ր'աջողում, ա՛ղպեր,— ասում ա,— էս տղեն քո՞ւնն ա. էդ ո՞ւր ես տանում։

— Բարո՛վ, ասսու հազար բարին,— ասում ա հերը։— Հա՛, էս իմ տղեն ա, տանում եմ տամ փեշակի։

— Ինձ աշկերտ չե՞ս տա. ես դրան ընենց լավ փեշակ սարվացնեմ, որ քեֆդ գա։

— Ի՞նչ փեշակ գիտաս, որ սարվացնես,— հարցնում ա հերը։

— Հինց ի՛նչ փեշակ ասես՝ գիտամ., կսարվացնեմ։

— Լա՛վ, բաս որ ըտենց ա՝ կտամ. եննա քանի՞ տարով վե կունես։

— Չո՛րս տարով,— ասում ա Օխայ-Բաբին։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ բաբի, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում բացակայում է. ավելացված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

— Ջորս տարին շատ ա. արի՛ իմ խաթեր իրեք տարի ու կիսով վե կալ։

— Լա՛վ, որ ասում ես՝ քու խաթեր վե կունեմ։

— Բա ո՞րդի ա ձեր տունը,— հարցնում ա։

— Էս ջրի միջին,— ասում ա։

— Ախար, իմ տղեն որ մննի ջուրը, կհեղտվի։

— Մի՛ վախի,— ասում ա,— ես ընենց կանեմ, որ տղիդ բան չիլնի։

— Դե լավ, որ ըտենց ա՝ տա՛ր։— Տղի թշերը պաչում ա, տալի ուստին։

— Ա՛յ տղա, ձեռդ տո՛ւ ինձ,— ասում ա Օխայ-Բաբին։

Մի ձեռով նրա կուռն ա բռնում, մեկելը թաթխում ա ջուրը, ընենց թաց-թաց քսում տղի էրեսը։

— Աչքերդ խփա՛,— ասում ա։— Աչքերը խփելու բաշտան, Օխայ-Բաբին կուռը քաշում ա՝ էրկսով էլ սկվում են ջրի տակը։

Հենց որ հասնում են անտակը.— Տղա՛,— ասում ա,— աչքերդ բաց արա՛։

Տղեն աչքերը բաց ա անում, ի՞նչ տենում։ Լավ-լավ ամարաթներ, լավ-լավ տներ, լավ-լավ շենքսեր՝ քոմմա[1] ակներից, մարգարըտներից, մարջաններից, ես ինչ գիտամ հազար մի ջուռա անգին քարերից շինոտած, որ ամեն դհից չին ֆըրֆըրում, շողշողահար գալի՝ մարդի քեֆ ին բերում։ Մտիկ ա տալի, տենում էն մի դհին էլ՝ եքա գյուլլի բաղ, որ ասսու ինչ բար ու նուբար ասես միշին լիքը. ղշերին էլ հո՝ հալ ու հեսաբ չկա. ամեն դհից ո՛ր չին խոսում, ծըլվըլում՝ մարդի խելք գլխիցը թռցնում ին, թողում. մի սի՛րուն, նա՛շխուն, ակն ու արեգակ, հուրի-մալաք, ջահել-ջիվան աղջիկ էլ հրենիկ բաղի միջին սեհր ա անում։

Օխայ-Բաբին ձեն ա տալի աղջկանը.— Ա՛ղջի,— ասում ա,— ախար թազա աշկերտ եմ բերե, արի՛ տես կհավանե՞ս. լա՞վ ա, լավ չի։

Էս աղջիկը Օխայ-Բաբու աղջիկն ա ըլնում. գալիս ա տենում մի սի՛րուն, մի նա՛շխուն, բոյով, բուսաթով տղա. համա ափսո՛ս, հագինը քըրչ-մըրչ ա։ Տեսալու բաշտան էդ տղեն մի կաթ արին ա դառնում, կաթում աղջկա սիրտը։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ բոլիանոներից. որը բանահավաքի ձեռքով շնջված է (Ս. Կ.)։

Եննա Օխայ-Բաբին ասում ա.— Ա՛ղջի, գնա՛ մի ձեռք թազա շոր բե, հագցրա՛ դրան, ոնց որ գիտաս՝ զուգա՛, զարդարա՛:

Աղջիկն էթում ա ղումիկը բաց անում, մի ձեռք լավ շոր հանում, բերում տղին ոտից ընչանք գլուխ զարդարում, ընդե կանացնում: Տղեն թազա շորերը որ հագնում ա, դհա՛ ա սիրունանում, դհա՛ շնորք ընկնում, դհա՛ աղջկանը դիր գալի:

Անց ա կենում ըսենց մի վախտ, տղեն Օխայ-Բաբու կշտին մնում ա, նրանից թազա բաներ, թազա հունարներ սարվում՝ ղշերի, ջանավարների լիզուն ա սարվում, հեննները խոսում, հասկանում. եր ուզում էր՝ էշ, ձի, ուղտ, ալապաստրակ, մախլաս ինչ ուզենար, դառնում էր, եր չէ, հո էլ եդ ըլնում իսան: Նրա աղջիկը հո դհա շատ բան ա սարվացնում սրան, էնթավուր բաներ, որ հերը ըսկի չէր ուզենա սարվացնի: Ուստեն տանը չէլած վախտը, էրկսով էթում ին բաղումը նստում, ասում, խոսում, մասլահաթ անում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում, սեր անում:

Աղջիկը տղին խրատ ա տալի.— Ա՛յ տղա,— ասում ա,— հերս որ քեզ կհարցնի՝ էս բանը գի՞տաս, ասա՝ չէ՛. ֆլան բանը սա՞րվել ես, էլի ասա՝ չէ՛. մախլաս ի՛նչ կհարցնի, կասես՝ չե՛մ գիտա: Ջըլնեմ-չիմանամ ասես՝ սարվել եմ, հա՛, թե չէ իմաց կա՛ց գլուխդ փորձանք կգա: Սրանից դենը դու գիտաս, մեղքն ու վարձքը քու շլինքը. ըս էլ ընդուր եմ ասում, չունքի ես քեզ սիրում եմ...

Սրանց թողանք ըստե սեր անեն, գանք խաբար տանք տղի հորից: Ջրի ղրաղին մի քիչ մնում, դինջանում ա, էլ եդ վե կենում, խուրջինը քցում ուսը, փետն առնում ձեռը, ընկնում ճամփա՝ դպա իրանց գեղը: Իրիկունը մութն ընկնում ա, հասնում ա տուն:

Կնիկը հարցնում ա.— Ա՛յ մարդ, էրեխեն ի՞նչ արիր:

— Տվի աշկերտ,—ասում ա:

— Ո՞ւմ:

— Ֆլա՛ն մարդին:

— Քանի՞ տարով:

— Իրեք տարի ու կիսով,— ասում ա:

Բերում են հաց ուտում, պրծնում, եննա մարդ ու կնիկ թեք են ընկնում, քնում: Լիսանում ա թե չէ, էլի մարդը պարանը քցում ա ուսը, կացինը վեր ունում, էթում մեշեն ցախի:

Ըսենց անց կացավ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց

ամիս, մախլասի մի տարի՝ օրեն մի օրը կնիկը կպավ մարդի յախեն.— Ա՛յ մարդ,— ասեց,— ախար մենք սուված, ծարավ կոտորվեցինք, է՛. հրես մի տարին թամմեց. վե՛ կաց գնա՝ մեր տղին էլա բե՛. ընչանք հմի ի՛նչ սարվել ա՝ ըն էլ բոլ ա իրան։

— Ա՛յ կնիկ,— ասեց մարդը,— ես ո՞նց էթամ բերեմ. ի՞նչ ասեմ նրա ուստին. ախար հեննեն իրեք տարի ու կիսով եմ կապնըվե, մի տարին հլա նոր ա թամմում։

— Ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— ուստեն հո մեր գլխի տե՞րը չի, նրա՞ն ինչ. գնա ասա՛. «էլ չեմ ուզում տղես մնա կշտիդ», պըրծավ գնաց. վե կալ հեննեդ բե՛։ Ըստե էլ ի՞նչ կա, որ ասում ես՝ ֆլա՛ն չի, բեհման ա։

Խեղճ մարդը տեհավ կնիկը շատ ա իրա ամալ-աջալը կտրե.— Լա՛վ,— ասեց,— ա՛յ կնիկ, կէթամ. համա որ դարտակ եդ էկա, մեղքը քու շլինքը, դու գիտաս։ Դե որ ըտենց ա, մի քանի բոքոն թխա՛, հազիր արա՛, առավոտը վե կենամ, ընկնեմ ճամփա։

Կնիկը բոքոնը թխում ա, դնում խուրջինը, հազիր անում։ Առավոտը, դեռ լիսն ու մութը չբաժանված, մարդը վեր ա կենում, խուրջինը քցում ուսը, փետն առնում ձեռը՝ յա՛լլա։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա ջրի ղրաղը։ Էդ ջրի ղայդեն զաթի գիտար, մի բուտը վեր ա ունում, խմում, ասում. «Օխա՛յ», ալբիալը ուստեն դուս ա գալի։

— Բարո՛վ, ա՛ղպեր,—ասում ա.—ի՞նչ կա, ի՞նչ չկա, խեր ըլնի, յա՞ղուզ ես էկե։

— Բարո՛վ, ասսու հազա՛ր բարին, ուստա. էկել եմ տղիս տանեմ։

— Ախար,— ասում ա,— ես քեզ հեննա իրեք տարի ու կիսով եմ կապնըվե, մի տարին հլա նոր ա թամմում, ո՞նց կըլնի ըսենց։

— Դե ի՛նչ անենք, մենք էլ քյասիբ ենք, ապրուստ չունենք. կնիկս զոռում ա, թե. «Գնա տղես բե»։ Հմի կտաս՝ դու գիտաս, չես տա՝ էլի դու գիտաս։

— Բաս որ ըտենց ա, ասում ես՝ քյասիբ եք, անճար եք, մի զադ կտամ, տարեք յոլա գնացեք, ընչանք տղիդ վադեն թամմի։— Էս ասում ա թե չէ, սկվում ա ջրի տակը, մի քիչ կենում, դուս գալի, հեննեն մի էշ բերում։— Ա՛ռ,— ասում ա,—էս էշը տա՛ր, քանի սաղ ու կենդանի եք, սրա դատումը ձեզ հերիք ա. էլ չգաս, ընչանք տղիդ վադեն թամմի։

— Հալբաթ էս էշը մի հո՞ւնար կունենա, որ ասում ես՝ քանի սաղ ու կենդանի ենք, մեզ հերիք ա։ Դե ասա՛ տենանք սրա հունարն ի՞նչ ա, որ մենք էլ էնու գյորա ժաժ գանք։

— Տե՛ս,— ասեց,— սրա հունարն էս ա։ Որ ասես. «էշա՛կ, զը՛ռա, ալբիալը կզռա, պոչը կբանձրացնի, կփթրի, փթրի հեննա մի հատ ոսկի վե կքցի, վե կունես, կտանես կխարչես։ Ըսենց մին, էրկու, հինգ, տասը, մախլաս՝ քանի զռացնես, ամեն հետ ոսկի վե կունես։

Էս ասեց թե չէ, ալբիալը սրկվեց էլ եդ ջրի տակը։

Էս մարդը ուրախ-ուրախ էշն աղաք արեց՝ չո՛շ հա չոշ, չո՛շ հա չոշ, չո՛շ հա չոշ՝ քշեց դպա իրանց գեղը։ Էկավ, էկավ, էկավ, ճամփի կիսին միտք արեց՝ արի մի փորձեմ, ասեց, տենամ, բա՞լի ուտեն ինձ խաբել ա։ Էն սհաթը էշը կաննացրեց. «էշա՛կ, զը՛ռա,— ասեց։ Ալբիալը էշը զռաց, փթրեց, փթրի հեննա մի ոսկի վե քցեց։ Ոսկին վե կալավ, սրբեց, դրեց ջեբը, ուրախացավ՝ աշխարով մին էլավ։

Էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, դեռ հլա ճրագվառոց չէր՝ հասավ իրանց գեղը։ Էշը քշեց դուզ դպա բազարը, ոսկին խուրդեց, միս առավ, հաց առավ, պանիր առավ, մախլաս՝ տան համար զադ-մադ առավ, բարձեց էշը, էկավ տուն, դուռը ծեծեց. կնիկը դուս էկավ։

— Ա՛յ մարդ,— ասեց,— բա ո՞ւր ա մեր էրեխեն։

— Ուստեն չտվեց, ասեց. «էս էշը տարեք, յոլա գնացեք, ընչանք վադեն թամամի»։

— Քու տունը չքանդվի, ո՛նց խեղճ ես,— ասեց,— էդ ինչ ա, որ դրանով յոլա գնալն ինչ ըլնի։

— Ջէ՛, ա՛յ կնիկ,— ասեց,— դու չես գիտա. էս էշը էնթավուր հունար ունի, որ քանի սաղ ու կենդանի ենք մեզ կպահի։ Որ ասես. «էշա՛կ զը՛ռա, ալբիալը կզռա, կփթրի, կտենաս փթրի միջին մի ոսկի. մախլաս, որ օրը հազար հետ ըսենց ասես, իմաց կաց հազար ոսկի դուս կքցի, վե կունես։ Համի իմա՞ցար։

— Իմացա, ա՛յ մարդ, էդ լավ բան ա. համի բոլ-բոլ կուտենք, կխմենք, քեֆ կանենք։ Օրես դենը թե էլ ասեմ. «Գնա տղիս բեռ» ինչ կուզես արա. թո՛ղ կենա, ընչանք վադեն թամամի։

Էշը տարան գոմումը կապեցին, վրի զադ-մադը վե կալան, բե-

րին տուն, կնիկը օջաղ արեց, կերակուր էփեց, հաց շինեց, բերեց կերան, կշտացան, ասսուն փառք տվին, պառկեցին քնեցին։

Առավոտը բարըլսի հեննա կնիկը վեր կացավ, գնաց դոմը, ասեց՝ տենամ մարդիս ասածը ղո՞րթ ա, թե սուտ։ «Էշա՛կ, ըզ՛ռա,— ասեց։ Ալբիալը էշը ղռաց, փթրեց, փթրի հեննա մի ոսկի վեր քցեց. մին, էրկու, իրեք, հինգ հատ ղռացրեց, հինգ հատն էլ էշը ոսկի փթրեց։ Կնիկը ուրախ-ուրախ ոսկիքը վեր կալավ, սրբեց, դրեց ջեբը, բերեց տվեց մարդին, ասեց. «Հրե՛ս, դու հաջաթ ա՛ռ, սարք ու կարգ ա՛ռ, բե՛, մընք էլ տնավորվենք։ Քեզ համար էլ, ինձ համար էլ մի-մի ձեռք լավ շոր ա՛ռ, մախլաս ինչ կուզես ա՛ռ, բե՛»։

Մարդն ա՝ ոսկիքն առավ, գնաց բազար, է՛ս առավ, է՛ն առավ սան համար, իրանց համար ինչ խելքը կտրեց առավ, բերեց բոլ-բոլ տունը լցրեց։

Անց կացավ ըսենց մի վախտ, մարդ ու կնիկ լավ ուտում ին, խմում, քեֆ անում. ըսկի տղեն մտներն էլ չէր ընկնում։ Օրեն մի օրը կնկա սիրտն ուզեց էթա համամ։ Բերեց իրանց էշը փալանեց, փոխնորդ-մոխնորդի բողչեն դրեց վրեն, նի էլավ, քշեց էկավ համամ։ Էկավ համամի հայաթումը վեր էկավ, համամչուն կանչեց.— Համա՛մչի,— ասեց,— էշս տար մի լավ տեղ կապա՛, ես էթամ լեղանամ։— Բողչեն վրիցը վեր կալավ, նի մտավ համամ։ Համամչին էլ էշը տարավ մի բհըրից կապեց, որ չփախնի։

Էս կնիկն ա՝ լեղացավ, պրծավ, շորերը հագավ, դուս էկավ։— Համա՛մչի,— ասեց,— էշըս բե էթամ։—Համամչին էշը բերեց, կընկանը նի հանեց վրեն, նոխտեն տվեց ձեռը։

— Էշա՛կ, ըզ՛ռ,— ասեց կնիկը։— Ալբիալը էշը ղռաց, փթրեց, փթրի հեննա մի ոսկի վեր քցեց։

— Համա՛մչի,— ասեց,— վե՛ կալ, ըտ էլ քու համամի հախը։

Համամչին ուրախ-ուրախ ոսկին վեր կալավ, սրբեց, դրեց ջեբը։ Խեղճի աչքը մնաց էդ իշի վրեն։ «Ո՛նց ըլնի,— ասեց ինքն իրան,— ես պտի մի ֆանդով էդ էշը նրա ձեռիցը հանեմ»։

Կնկա եննուցը գնաց, լավ մտիկ արեց, տենա էշը ինչ նշան ունի, ինչ չէ. մին-մին, տեղը-տեղին վարավուրդ արեց։ «Լա՛վ գտա ֆանդը,— ասեց,— կէթամ սրա նման մի էշ կառնեմ, կբերեմ ըստե կկապեմ, որ մըն էլ էկավ համամ, էն կկապեմ տեղը, կնկա էշը կտանեմ կպահեմ»։ Էն սհաթը գնաց բազար, հենց դրա պես մի էշ

առավ, կասենաս օխտն օր հենց էդ կնկա էշն ըլներ. բերեց գոմումը կապեց։

Անց կացավ մի օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, էլի էս կնկա սիրտն ուզեց էթա համամ։ Էշը փալանեց, բողչեն դրեց վրեն, նի էլավ, քշեց դպա համամ։ Էկավ համամի հայաթումը կաննեց, համամչուն կանչեց. «Համա՛մչի,— ասեց,— տար էշս կապա՛, ես էթամ լեղանամ»։ Համամչին էլ զաթի էս էր ուզում, ուրախ-ուրախ էշը նի էլավ, քշեց իրանց գոմը։ Ֆանդն էլ հո գիտար. «էշա՛կ, զը՛ռ» ասեց։ Էշը ալբիալը զռաց, մի ոսկի փթրեց։ Համամչին ոսկին վեր կալավ, փթրի միջին կոլոլեց, մի ֆանդով դրեց իրա իշի պոչի տակը, բանդ արեց, նի էլավ էկավ համամ, որ չըլնի թե կնիկը դուս գա, բան ֆահմի. կնկա էշն էլ հո թողաց իրանց գոմումը կապած։

Էկավ տեհավ կնիկը լեղացե, պրծե, համամիցը նո՛ր ա դուս գալի։

— Համա՛մչի,— ասեց կնիկը,— էշս բե էթամ։

Համամչին էշը տարավ աղաքին կաննացրեց. կնիկը, որ ասես, բան չֆահմեց, հենց իմացավ իրա էշն ա, նի էլավ։— էշա՛կ, զը՛ռ,— ասեց։

Սատանական էշը զռաց, պոչը բանձրացրեց, համամչու դրած ոսկին փթրի հեննա վեր ընկավ։

— Ըս էլ քու համամի հախը,— ասեց,— համա՛մչի, վե՛ կալ։— Ասեց ու էշը քշեց, էկավ տուն։

Համամչին ուրախությունիցը քիչ էր մնացե վեր-վեր թռնի, յա կըլըխկոնձի տա, որ կնիկը բան չֆահմեց, թողաց գնաց, էշը ոտով-գլխով մնաց իրան։

Անց կացավ մի քանի վախտ, մարդ ու կնիկ իշին էլ չզռացրին, չունքի դեռ հլա փող ունեին։ Որ փողները հատավ, մարդը գնաց իշի կուշտը։

— էշա՛կ զը՛ռ,— ասեց։— Տեհավ չի փթրում. էլի ասեց.— էշա՛կ զը՛ռ։— էլի զադ դուս չէկավ։ Մին, էրկու, հինդ, տասը, ինչ արեց, չարեց՝ չէլավ։

Վազեց դպա կնիկը.— Ա՛յ կնիկ,— ասեց,— ա՛յ քու ըսենց-ընենցը, էդ ի՞նչ օղիա ես բերե իշի պոչը. ինչ արի- չարի՝ չփթրեց։

Կնիկն էլ էկավ, նա էլ.— էշա՛կ, զը՛ռ,— ասեց՝ էլի բան չէլավ։

— Ձը՛ռ հա ղըռ, ղը՛ռ հա ղըռ, ղը՛ռ հա ղըռ,—մեռան չարչարվելոն, իշին բղելոն, պոչն օլորելոն՝ ըսկի նրա այնուման էլ չէր։

Նո՛ր կնիկը մատը կծեց.— Բալի,— ասեց,— կա չկա՝ էս էն համամշու բանն ա, էլ մարդի չէ։

Մարդ ու կնիկ վե կացան գնացին համամշու վրեն կռիվ։ Սրանք նրան ասեցին, նա սրանց, կռիվ, ղալմաղալ արին, իրար ուշումց տվին, համամշին ո՛նչ էշ տվեց, ո՛նչ ղադ, դեռ հլա գյադեքանցը վրա արեց, նրանց մի լավ գորսոց տվին, համամիցը դուս արին։ Մարդ ու կնիկ փոր-փոշման վե կացան էկան տուն։

Խեղճերն էլան էլի աղաքվա դառն աղքատը, էլի աղաքվա դառն աղքատը։ Մարդը ասսու իրան օրը էլի պարանը քցում էր ուսը, կացինը վեր ունում, էթում մեշեն ցախի. բերում. ծախում, աշխատանք անում, իրանց գլուխը պահում։ Ըսենց յոլա գնացին, ընչանք էկավ էրկու տարին թամմեց։

Օրեն մի օրը, էլի կնիկը մարդին դանգ ու սար արեց.— Ա՛յ մարդ,— ասեց,— ախար մենք սոված, ծարավ կոտորվեցինք. ընչանք ե՞բ մեր էրեխեն ուստի կշտին կենա. հրես էրկու տարին էլ թամմեց. վե՛, գնա՛ բե, բալի գա մեր հավարին հասնի, մեր գլուխը պահի։

— Լա՛վ, ա՛յ կնիկ, որ ասում ես՝ ճարս ինչ, պտի էթամ։ Դե մի քանի 'բոքոն թխա՛, առավոտը վե կենամ, ընկնեմ ճամփա։

Կնիկը բոքոնը թխում ա, գնում խուրջինը, հազիր անում, մարդը էն գլխեն վեր ա կենում, խուրջինը քցում ուսը, փետն առնում ձեռը՝ յա՛լլա դպա ուստեն։

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա ջրի ղրաղը, ջրիցը մի բոտը վեր ունում, խմում, ասում. «Օխա՛յ»։

Ուստեն ալբիալը դուս ա գալի.— Հը՛, ա՛ղպեր,— ասում ա,— է՞լի էկար դու. չէ՞ ես ասեցի՝ չգաս, ընչանք տղիդ վադեն թամմի։

Նա էլ վե կալավ,թե. — Ի՞նչ անեմ, ո՛ւստա ջան, ախար մընք էլ քյասիբ ենք, անճար ենք, սոված, ծարավ կոտորվում ենք։ Էկել եմ աղաչանք անեմ, տղիս տաս՝ տանեմ. տղա ա, ինչքամ չըլնի, մեր հավարին կհասնի։

— Ախար ես քեզ մի էշ տվի, որ քանի սաղ ու կենդանի իք, նրա դատումն ուտեիք, չէր հատնի. բա ի՞նչ արիք։

— Բա չե՞ս ասի, ո՛ւստա ջան, համամշին կնկանս գլուվը թըլըսորել ա, էշը ձեռիցն առե, ինչ անեմ, ոչ ու փո՛ւչ ըլնի փիս կնիկը, հը՛։

— Բաս որ ըտենց ա, սաբր արա, ես հրես գալիս եմ։— Ասեց ու սկվեց ջրի տակը, մի քիչ կացավ, էլ եդ դուս էկավ, հեննեն մի դաստախուն բերեց։

— Ա՛ռ,— ասեց,— էս դաստախունը տա՛ր, որ ձեր օխտը պորտն էլ սրա միջի հացն ուտի՝ էլի չի հատնի. համա լավ մուղաթ կացեք, որ ըս էլ ձեռներիցդ չէթա։

— Դարտակ դաստախունը ախար ո՞նց ուտենք. հալբաթ սրան մի հո՞նար ունի՝ սարվացրա՛, որ մընք էլ էնու գյորա ժաժ գանք։

— Ընք կսովածանաք,—ասեց,—էդ դաստախունը կդնեք աղաքներդ. կասեք. «Բա՛ցվի»։ Ալբիալը կբացվի, հենց ինչ կերակուր ուզեք, ինչ ուզեք միջին կըլնի։ Որ կուտեք կպրծնեք, կասեք. «Խըփվի՛», էլ եդ կխփվի, վե կունեք, կտանեք կպահեք։ Դե գնա՛, էլ չըլնեմ-չիմանամ գաս իմ դուռը հա՛, ընչանք տղիդ վադեն թամմի։— Ասեց, էն սհաթը էլ եդ սկվեց ջրի տակը։

Էս մարդն ա՝ դաստախունը դրեց կռնատակը, ուրախ-ուրախ ընկավ ճամփա՝ էլ եդ դպա իրանց գեղը։ Մի էրկու մանգղիլ նոր էր անց կացե, բիրդան դաստախունը միտն ընկավ. ասեց. «Արի՛ մի փորձեմ տենամ, բա՛լի ուտեն ինձ խաբել ա»։ Էկավ, էկավ, մի չայիր-չիման տեղ նստեց. դաստախունը դրեց աղաքը, ասեց. «Բացվի՛»։ Էն սհաթը բացվեց, ի՛նչ բավեց. հազար մի ջուռա կերակրներ, հազար մի ջուռա գինանիք, ես ինչ գիտամ՝ ուտելու ուրիշ բաներ մեջը լիքը։ Խեղճը շշկլվեց, չէր իմանում ո՛րն ուտի, ո՛րը թողա. մի քիչ հարամ-զարամ կերավ, չկերավ, էլ եդ ափալ-թափալ ասեց. «Խփվի՛», խփվեց. դրեց կռնատակը վե կացավ գնաց իրա ճամփեն։

Էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, մութը գետինը կոխել էր, հասավ գեղը, գնաց իրանց դուռը ծեծեց, կնիկն էկավ բաց արեց։

— Ա՛յ մարդ,— ո՞ւր ա, է՞լի մեր տղին չբերիր։

— Ի՛նչ անեմ, ա՛յ կնիկ, չտվեց. ասեց. «Շատը համբերել եք, քիչն էլ համբերեք»։ Հրես էս դաստախունն էլ տվեց, որ սրանով յոլա էթանք, ընչանք վադեն թամմի։

— Լա՛վ, դրա հունարն ի՞նչ ա,— հարցրեց կնիկը։

— Տե՛ս,— ասեց,— սրա հունարն էս ա։— Բերեց իրա ու կնկա աղաքին փռեց. «Բա՛ցվի» ասեց, ալբիալը բացվեց։ Ինչ ջուռա կերակրներ ասես, ի՛նչ ասես՝ որ միջին չկար. խեղճ կնիկը

մորից էլել էր, էսթավուր կերակրներ ո՛նչ տեհել էր, ոնչ կերե. ուրախությունից քիչ էր մնացե խելքը գլխից թռցնի։ Կուշտ ու կուռ կերան, խմեցին, պրծան. մարդն ասեց. «Խփվի՛», խփվեց։ Կնիկը վե կալավ, տարավ դրեց ղութիկը, պահեց։

Ըսենց մի քանի վախտ էս դաստախունով յոլա գնացին. առավոտ, իրիկուն ուտում ին, խմում, քեֆ անում, դամաղ, դովրան քաշում։

Օրեն մի օրն էլ, որ մարդը մի քանի օրով ուրիշ տեղ էր գնացե, կնկա բէյինն ընկավ, թե պտի էթամ թագավորի կնկանը կանչեմ, բերեմ ղոնաղ։ Վե կացավ գնաց թագավորի կնկա կուշտը։

— Խի՞ ես էկե, ինչ խնդիրք ունես,— հարցրեց թագավորի կնիկը։

— Խա՛նումը սաղ ըլնի,— ասեց,— եկել եմ քեզ, քու նազիր-վեզրի կնկանը տանեմ ինձ ղոնաղ։

— Ախար դու ո՞վ ես,— ասեց թագավորի կնիկը,— որ մեզ ղոնաղ ես կանչում։

— Ես ձեր ուրհաթի կնիկն եմ,— ասեց,— ի՛նչ կըլնի որ մի օր էլ ես ձեզ ղոնաղ արած ըլնեմ։

— Լա՛վ, որ էդքան մուննաթ ես անում, էգուց ֆլան վախտը կդանք։ Ձեր տունը ո՞րդի ա,— հարցրեց թագավորի կնիկը։

— Ֆլա՛ն տեղը,— ասեց։

— Լա՛վ,— ասեց թագավորի կնիկը,— դու գնա՛. արխեին կաց, էգուց կգանք։

Թագավորի կնկանը գլուխ ա տալի, վե կենում գալի տուն։ Էդ գշերը քնում ա, առավոտը գշերով-գշերհանա վեր ա կենում, դուռ, դուս, օթախ, հայաթ քումմա ջրրջրրհանում, սրբոտում, թամզացնում, հազիր անում, ղոնաղների ճամփեն պահում։ Վախտին թագավորի կնիկը, նազիր-վեզրի կնիկը վեր են կենում գալի դրա տունը։ Էն սհաթը դուս ա գալի աղաքները. «Համեցե՛ք, համեցե՛ք, բարո՛վ, հազա՛ր բարին էք էկե, իմ տունը ձեզ փեշքաշ ա»։ Բերում ա տակները դոշակ քցում, վրեն նստացնում։

Նստում են, կնանիք են էլի, դեսից, դենից, ըստիան, ընդիանըրից անում, մասլահաթ անում, ասում, խոսում, ծիծաղում, ընչանք հացի վախտը գալիս ա. էդ կնիկը վեր ա կենում, ղութիկը բաց անում, դաստախունը հանում, բերում աղաքներին փռում, ինքն էլ կողքներին նստում։ «Բա՛ցվի» ասում ա, էն սհաթը դաս-

տախտակը բացվում ա։ Հազար մի ջոտա կերակրներ, լավ-լավ գինանիք, լավ-լավ ուտելու բաներ մեջը լիքը, որ, ով գիտա, թագավորի կնիկը ո՛նչ տեհել էր, ո՛նչ կերե։ Քոմմա մնում են բերանները բաց էս դաստախնին մտիկ անելոն։ Ուտում են, խմում, քեֆ անում։ Որ կշտանում են պրծնում՝ «խփվի՛» ասում ա, խըփվում ա. վեր ա ունում, տանում, պահում։

Հացից եդը մեր ղոնաղները վեր են կենում, էթում իրանց տները։ Ճամփին թագավորի կնիկը ինքն իրան միտք ա անում. «Ես թագավորի կնիկ ըլնեմ,— ասում ա,— էնքավուր դաստախուն չունենամ, նա մի ուըշպարի կնիկ՝ ունենա՞. էս աստոծ վե՞ կունի։ Ո՛նց ըլնի, զոռով ա, յա փողով, պտի էդ դաստախունը նրա ձեռիցը խլեմ»։ Սրանից դենը էդ կնկա հեննա լավ սըխ բարեկամանում ա. նրան իրա կուշտն ա ղոնաղ կանչում, ինքն էթում նրա կուշտը՝ մին, էրկու, հինգ, տասը, որ հեննեն լավ դաստանում ա, օրեն մի օրն էլ մեն-մենակ վեր ա կենում էթում նրա տունը։

— Համեցե՛ք, համեցե՛ք, ա՛յ խանում. ո՞նց ես, լա՞վ ես, քե՞ֆդ, հա՞լդ։— Բերում ա դոշակ քցում տակը, վրեն նստացնում։

— Փա՞ռք աստու, լավ եմ, դո՞ւ ոնց ես, ինչ ես անում, ինչ չես անում։— Ըսենց նստում են, էրկեն ու բարակ ասում, խոսում, զրից անում, ընչանք հացի վախտը գալիս ա. էդ կնիկն էթում ա դաստախունը հանում, բերում փոռում, բաց անում. ուտում են, խմում, քեֆ անում, ուրախանում, խնդում, ծիծաղում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում. էդ կնկա մարդն էլ էդ օրը տանը չիլնում։

Հացի վախտը թագավորի կնիկը դաստախնի վրեն խոսք ա բաց անում։

— Էդ դաստախունը,— ասում ա,— իմ քեֆը շատ ա բերե. ինչ կըլնի կըլնի՝ արի դու ծախա՛, առնեմ։

— Չէ՛, խա՛նումը սաղ ըլնի,— ասում ա կնիկը,— ես չեմ կարա. դրա ծախիլը մարդիս ձեռին ա։

— Լա՛վ, որ չես ծախում՝ դու գիտաս։— Տեհավ որ կնկանը չկարաց խաբի, հեննեն քնացնելու դեղ էր բերե, հանեց մի ֆանդով մոտացրեց նրա պնչին թե չէ՝ ալբիալը կնկա քունը տարավ, քնեց։ Թագավորի կնի՛կ, դու թագավորի կնի՛կ, դաստախունը անսաս կոլոլա, դի՛ կռնատակդ՝ յա՛լլա դպա ամարաթը։

Էդ կնիկը ընչանք իրիկուն քնած ա մնում։ Իրիկունը մթնով

մարդը գալիս ա, տենում կնիկը քնած։ Կնկանը բոթում ա, որ վեր կացնի։

— Ա՛յ կնիկ, ա՛յ կնիկ,— ձեն ա տալի,— էդ ի՞նչ խաբար ա. ի՛նչ վախտ ես գտե քնելու. չըլնի՞ հիվանդ ես։— Ի՞նչ հալով կընկանը զարթնացնում ա։

— Օվվե՛, էս ինչ շատ եմ քնե,— ասում ա կնիկը։

— Վե՛, ա՛յ կնիկ, դաստախումը բե հաց ուտենք. ախար ես սոված մեռա էսքամ վախտ, է՛։

Կնիկը վեր ա կենում, որ էթա դաստախումը բերի. դե՛ս դաստախուն, դե՛ն դաստախուն, մանե ա գալի՝ չի գտնում։ Նո՛ր գըլխին, ոտին որ տալիս ա, մարդը գլխի ա ընկնում։

— Ա՛յ կնիկ, էս ի՞նչ խաբար ա. չըլնի՞ դաստախնի գլուխն էլ իշի օյինն ես հաղացե։

Նո՛ր կնիկը թե՝ հալ, նաղլ ըսենց, ըսենց, ըսենց բան։ Մարդը շատ ա հեննեն կռիվ անում, ուշունց տալի, համա էլ ո՞ւր, բանը բանից անց էր կացե, ի՞նչ կարայլին անի. հո չի՞ն էթա թագավորի կնկա վրեն կռիվ. ճարները կտրած՝ տազ են անում, մնում։ Դառնում են էլ աղաքվա քյասիբը, էլ աղաքվա քյասիբը։ Մարդը ամեն օր պարանը քցում էր ուսը, կացինը վեր ունում՝ էթում մեշեն ցախի, իրիկունը գալի տուն։ Ըսենց մի քանի վախտ ապրում են, ընչանք դալիս ա իրեք տարին թամմում, օրեն մի օրը կնիկը էլի կպնում ա մարդի յախեն։

— Ա՛յ մարդ,— ասում ա,— ախար սոված, ծարավ կոտորվեցինք. ընչանք ե՞ր մեր տղեն ուստի կշտին մնա, ինչ որ կացավ՝ բոլ ա. գնա՛ վե կալ բե, գա մեր հավարին էլա հասնի։

— Լա՛վ, ա՛յ կնիկ, որ ասում ես՝ կէթամ։ Դե մի քանի հատ բոքոն թխա՛, առավոտը վե կենամ ընկնեմ ճամփա։

Կնիկը բոքոնը թխում ա, դնում խուրջինը, հազիր անում, առավոտը սուրբ ծեքի հեննա մարդը վեր ա կենում, խուրջինը քցում ուսը, փետն առնում ձեռը, յա՛լլա դպա ուստի կուշտը։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էն ջրի ղրաղը, մի բուռը ջուր ա վեր ունում, խմում, ասում. «Օխա՛յ»։

Ուստեն ալբիալը դուս ա գալի.— Հը՛, ա՛յ հայ,— ասում ա,— խե՛ր ըլնի. յա՛ղուզ ես էկե։ Ախար ես քեզ ասեցի՝ չդաս, ընչանք տղիդ վադեն թամմի։

— Ի՞նչ անեմ, ո՛ւստա ջան, քյասիբ ենք, անճար ենք. էկել եմ մունաթ անեմ՝ տղիս տաս, տանեմ։

— Ախար ես քեզ դաստախուն տվի, որ քանի սաղ ու կենդանի իք՝ ձեզ հերիք էր, ի՞նչ արիք։

— Բա չես ասի, ո՛ւստա ջան, ըն էլ թագավորի կնիկն ա էկե, կնկանս խաբե, ձեռիցը խլե տարե. հմի մնացել ենք քյաֆրի ֆողումը։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա,— կա՛ց, ես գալիս եմ։— Ասում ա ու ալբիալը սկվում ջրի տակը, մի պուճուր կենում, դուս ա գալի մի դդում ձեռին։

— Ա՛ռ,— ասում ա,— սրանով համ քու էշը եդ կառնես, համ քու դաստախունը։

— Հալբաթ,— ասում ա,— էս դըդումը մի հունար կունենա. ասա՛, որ մընք էլ էնու գյորա ժաժ գանք։

— Տե՛ս, սրա հունարն էս ա։ Վե կունես կէթաս աղաք համամշու կուշտը, կասես. «Բե՛ էշս տո՛ւմ։ Տվեց՝ լա՛վ, չտվեց՝ դըդըմին կասես. «Քո՛թակ տվեք». էն սհաթը նրա միջիցը էրկու ֆոգի դուս կգան, մարդի ձեռին մի-մի դագանակ. կքաշեն դրան տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, էնքամ կտան, ալիր-աղցան կշինեն, ընչանք կէթա ինքն իրա խոշովը էշդ կբերի կտա քեզ։ Նոր կասես. «Բո՛լ ա», էլ եդ էն մարդիկը կմննեն դդումը։ Էշդ որ առար պրծար, եննա կէթաս թագավորի կնկա կուշտը, կասես. «Դաստախունս տո՛ւմ։ Տվեց՝ հո լավ, չտվեց՝ էլի դըդըմին կհրամայես. «Քո՛թակ տվեք»։ Միջի մարդիկը, դագանակները ձեռներին դուս կգան, սրան էլ էնքամ դըրբոց կտան, ընչանք ինքն իրա խոշովը կէթա դաստախունը կբերի կտա քեզ։ Նոր կասես. «Բո՛լ ա», էլ եդ կմննեն դըդումը։ Դե հմի գնա, էլ չգաս, ընչանք տղիդ վադեն թամամի։— Ասեց ու ալբիալը սկվեց ջրի տակը։

Էս մարդն ա՝ դըդումն առավ, ուրախ-ուրախ ընկավ ճամփա, դպա իրանց գեղը։ Էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, ճամփին ինքն իրան միտք արեց. «Արի՛,— ասեց,— մի փորձեմ տենամ էս դըդըմի միջին ի՞նչ կա. բալի ուստեն խաբել ա»։ Կանգնեց, դըդումը դրեց գետինը, ասեց. «Քո՛թակ տվեք»։ Ասեց թե չէ, մըն էլ էն տեհավ դըդըմի միջիցը էրկու ֆոգի դուս էկան՝ մարդի ձեռին մի-մի դագանակ, դե՛ս մտիկ տվին, դե՛ն մտիկ տվին, տեհան նրանից սավայի ուրիշ մարդ չկա, քաշեցին դրան տո՛ւր

թե կտաս, տո՛ւր թե կտաս՝ մին, էրկու, հինգ, տասը, մախլաս մի լավ ձեր հավան կացած սկսեցին։ Վախլուբյունիցը խեղճի մտիցն էլ էր ընկե թլխամը, չէր գիտա ի՛նչ ասի, որ ձեռը վեր ունեն իրանից, նո՛ր ինչ հալով միտն ա քցե՝ ասե. «Բո՛լ ա», նոր որ էլ եդ մտել են դրդումը։ Դրդումը վե կալավ, իրա ճամփեն բռնեց՝ գնաց։ Էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, հասավ գեղը, գնաց իրանց դուռը ծեծեց, կնիկն էկավ բաց արեց։

— Ա՛յ մարդ,— ասեց,— էլի դու դարտակ էկա՞ր. խի՞ չի բերիր մեր էրեխին, ախար ընչանք ե՞ր։

— Դե ա՛յ կնիկ, ինչ անեմ, չտվեց, ասեց. «էս դդումն ա՛ռ, տա՛ր. սրանով համ ձեր էշը եդ կառնեք, համ ձեր դաստախունը, յոլա գնացեք, ընչանք վադեն թամամի»։

— Ա՛յ մարդ, դե շանց տո՛ւ տեննանք ինչ ա դրա հունարը, որ պտի մեր էշը, մեր դաստախունը եդ առնի։

Մարդը բերեց դրդումը դրեց գետինը, ասեց. «Քո՛թակ տվեք»։ Ասելու բաշտան դրդըմի միջիցը մարդիկը դուս էկան, վրա հասան կնկանը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, սրան մի լավ ծեծեցին, ընչանք մարդն ասեց. «Բո՛լ ա, նո՛ր որ էլ եդ մտան դդումը։

— Ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— էս լավ էլավ. հմի՛ որ համամշու ու թագավորի կնկա հախիցը կգանք։

Մարդ ու կնիկ էդ գշերը քնեցին, առավոտը վե կացան, դրդումը վե կալան, գնացին համամշու կուշտը։ Գնացին տեհան համամը խոլվաթ ա, որ ասես մարդ-մադաթ չկա. համամշին էլ ընդե մենակ նստել ա։

— Համա՛մշի,— ասեց կնիկը,— ախար բո՛լ չի, ինչքամ մեր էշը պահեցիր. չէ՞ մընք էլ մեղք ենք, բե հմի էլ տո՛ւ մեզ։

— Ա՛յ կնիկ,— ասեց համամշին,— դեռ հլա ինձանից ձեռը չես վե կալե. կորի՛ գլխիցս ռա՛դ իլ, թե չէ որ վե կացա՝ ոտ ու գլուխդ ջարդ ու խուրդ կանեմ։

— Ոտ ու գլուխ ջարդիլը բաենց չիլնի,— ասեց մարդը,— ա՛յ ըսենց կըլնի։— Դրդումը դրեց գետինը. «Քո՛թակ տվեք» ասեց։ Էն ահաթը դրդըմի միջիցը մարդիկը դուս էկան՝ դագանակները ձեռներին, վրա հասան համամշուն՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մին, էրկու, հինգ, տասը, ձեր հավան կացած մի լա՛վ դորսեցին։

— Ամա՜ն, աստու սիրուն,— ձեն տվեց համամչին,— ինձ պրծացրեք սրանց ձեռիցը, ինչ ուզում եք՝ տամ։

Նոր մարդն ասեց. «Բո՛լ ա». նրանք էլ եդ մտան դըդումը։ Համամչին էն սհաթը գնաց էշը բերեց, տվեց նրանց։ Մարդ ու կնիկ աղաք արին, բերին տուն։

Հեգսի օրը դըդումը վե կալան, գնացին դպա թագավորի կնիկը։ Մարդը դռանը կաննեց, կնիկը դըդումն առավ մտավ թագավորի ամարաթը. գնաց տեհավ թագավորի կնիկը մեն-մենակ իրա օթախումը նստած։

— Խա՛նումը սաղ ըլնի,— ասեց,— իմ դաստախունը ինչքամ բանացրիր՝ հերիք ա. չէ՞ մընք էլ քյասիբ, օրեն հացի կարոտ ենք, բե՛ հմի էլ տո՛ւ մենք բանացնենք։

— Ա՛յ կնիկ,— ասեց,— ինձ դաստախուն ե՞ր ես տվե. գըժվե՞լ ես, ինչ ա։ Գնա կորի՛, թե չէ նոքարներիս վրա կանեմ էնքամ կտան, որ մենծ թիքեն անկաջդ կմնա։

Էդ կնիկը տեհավ, որ խաթրով չիլնում, դըդումը հանեց, դրեց գետինը. «Քո՛թակ տվեք», ասեց։ Էն սհաթը դըդըմի միջիցը մարդիկը դուս էկան, վրա հասան թագավորի կնկանը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ սալչարդ արին, թողին։

— Ամա՜ն, աստու սիրուն,— ձեն տվեց թագավորի կնիկը,— ինձ ազատա սրանց ձեռիցը, էթամ դաստախունդ բերեմ տամ, ա՛ռ գնա՛, խաթեդ ինձանից քաշա՛։—Նոր ասեց. «Բո՛լ ա», մարդիկը մտան էլ եդ դըդումը։

Թագավորի կնիկը գնաց դաստախունը բերեց տվեց նրան, նա էլ կոլոլեց, դրեց կռնատակը, թողաց դուս էկավ։ Մարդ ու կնիկ ուրախ-ուրախ վե կացան էկան տուն։

Անց կացավ մի քանի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց ամիս, մախլասի մի տարի, սրանք լավ ապրում ին, լավ ուտում, լավ խմում, ըսկի տղեն մտներն էլ չէր ընկնում։

Օրեն մի օրը էլի կնիկը կպավ մարդի յախեն.— Ա՛յ մարդ,— ասեց,— ախար մեր տղեն մնաց, դեռ վադիցն էլ կես տարի անց ա կացե, վե գնա բե. բո՞լ չի ինչքամ կացավ ուստի կշտին։

— Լա՛վ ես ասում, ա՛յ կնիկ. ճամփի համար բոքոն թխա՛, էգուց վե կենամ էթամ։

Կնիկը բոքոնը թխում ա, դնում խուրջինը, հազիր անում. առավոտը աղոթարանը բացվում ա թե չէ, մարդը վեր ա կենում,

խուրջինը քցում ուսը, փետն առնում ձեռը, ընկնում ճամփա։ Օխայ-Բաբու աղջիկը զաթի իմաստուն էր, ալբիալը իմանում ա սրա գալը, տղին թաքուն կանչում ա, տանում իրանց բաղը։

— Տղա՛,— ասում ա,— ըսօր պտի հերդ գա քեզ տանի։ Ինչ որ քեզ սարվացրել եմ՝ գիտաս հո գիտաս, մնում ա մի էրկու բան՝ հրես ըն էլ կասեմ, որ անես՝ գլուվդ փորձանք չի գա։ Հորս աղաթն ա,— ասում ա,— ինչ աշկերտ ունենա, որ վադեն թամամեց, պրծավ՝ պտի վերջը նրան ըսպանի. համա ինձ որ անկաջ անես, ինչ ասեմ՝ անես, քու մի մազն էլա չի թեքվի։ Մին՝ ո՛ր ինչ կդառնաս՝ ձի, ուղտ, ալապստրակ, մի խոսքով ինչ որ կըլնես, քեզ կտանեն ծախելու, թամբահ արա գյամդ, յա նոխտեդ հեննեդ չտան, թե չէ իմաց կաց՝ եննա ուղենաս իսան դառնա, ինչ անեսչանես, չես կարա, հուր-հավիտենական հենց ընենց կմնաս. վրա էրկուան էլ՝ որ քեզ ում ուզում են ծախեն՝ աչքերը ճղրիկ մարդի չծախեն։ Հրես էս էրկու բանն ի ուզում քեզ ասի. մնացածն էլ հո քոմմա դու գիտաս, էլ ինչ ասեմ։

— Ա՛ղջի,— ասում ա տղեն,— դու որ ինձ էսքամ փորձանքից պրծացրիր, էսքամ լավություն արիր, ո՞նց անեմ, որ տակիցը դուս գամ։

— Քու սիրուց սավայի զադ չեմ ուզում քեզանից,— ասում ա աղջիկը։

— Ասսու կշտին շարթ ըլնի,— ասում ա տղեն,— թե սաղ մնացի՝ ես քո՛նն եմ, դու՝ ի՛մը։

Տղա ու աղջիկ ըստե իրար ճտով են փաթթվում, տղեն արտասունք թափում, իրար հեննա մնաս բարով անում, թողում գալի տուն։

Գանք խաբար տանք տղի հորիցը։

Գալիս ա գալի, հասնում ջրի ղրաղը, ջրիցը մի բուռը վեր ա ունում խմում, ասում. «Օխա՜յ»։

Ալբիալը ուստեն դուս ա գալի.— Հը՜, խե՛ր ըլնի,— ասում ա,— չըլնի՞ էկել ես տղիդ տանես։

— Հա՛, ո՛ւստա ջան,— ասում ա,— վադիցը դեռ հլա կես տարի էլ անց ա կացե, էկել եմ տանեմ։

— Լա՛վ,— ասում ա,— կա՛ց, էթամ բերեմ։— Կասի ու ալ-

քիալը էլ եդ կսըկվի ջրի տակը, կէթա աշկերտին կկանչի։— Ո՛րդի,— կասի,— հերդ էկել ա քեզ տանի, կէ՞թաս։

— Ո՛ւստա,— ասում ա աշկերտը,— որ մուրախաս աննես՝ կէթամ, խի՞ չեմ էթա. մի բան որ վադես թամմել ա, ըստե մնամ ի՞նչ անեմ։

— Լա՛վ, որ էթում ես՝ էսքամ տարի ըստի ես, զադ սա՞րվել ես, որ էթաս հորնըմորդ պետքը գաս։

— Չէ՛, ո՛ւստա,— կասի տղեն,— ըսկի զադ չեմ սարվե։

— Գնա՛, է՛,— կասի ուստեն,— իմ աշկերտների միջին քոմմըքից քոռոտլուփը դու իր, ըսկի բան էլա չկարացիր սարվի։— Կասի ու տղի ճակատը կպաչի, տղեն էլ ուստի ձեռը կպաչի, դուս կգան ջրի էրեսը, կբերի կտա հորը։— Հրե՛ս,— կասի,— քու տղեն սաղ-սալամաթ քեզ եմ տալի. վե կալ տա՛ր։

Հերը տղին որ կտենա, կվազի, կփաթթվի ճտովը, թշերը կպաչի, լաց կըլնի։ Ինչքամ չըլնի, չիգյար ա էլի, էս չորս տարի նրան չէր տեհե։ Հեր ու տղա մնաս բարով կանեն ուստի հեննա, կթողան կգան։ Մի մանգղիլ որ կգան, տղեն կուզի իրա հունարը հորը շանց տա. հորիցը եդ կընկնի, ալապստրակ կդառնա, կվազի հոր աղաքը։ Հերը ինչքամ կշարշարվի, ինչ կանի, չի անի՝ չի կարա կալնի. ալապստրակը կփախնի, կմննի մի քարի տակ, կդառնա էլ եդ իսան, կգա հոր եննուցը կհասնի։

— Ա՛յ որդի,— կասի հերը,— խի՞ եդացար. նոր մի ալապըստրակ էկավ, կշտովս անց կացավ. ինչքամ արի՝ չկարացի կալնի, թողաց փախավ։ Որ ըստե ըլնեիր, հո՛ էրկսով կկալնեինք, կտանեինք տուն, իրիկունը մերդ լավ-լազաթին կխորովեր, կուտեինք։

Տղեն չի խոսա, արշա չի ընկնի, թե էն ալապստրակը ինքն ա էլե։ Մխելի տեղ կգան, էլի տղեն հորիցը եդ կընկնի, մի լավ ղոչ կդառնա, կվազի հոր աղաքը՝ դե՛ս կթռչկոտա, դե՛ն կթռչկոտա, հերը ինչքամ կշարշարվի, էլի չի կարա կալնի։ Ղոչը կփախնի կէթա կմննի մի քարի տակ, կդառնա իսան, կգա հորը կհասնի։

— Ա՛յ որդի,— կասի հերը,— էլի դու գըմվեցի՞ր։ Նոր մի լավ ղոչ էկավ կշտովս անց կացավ. ինչ արի, չարի՝ չկարացի կալնի. որ ըստե ըլնեիր, հո՛ էրկսով կկալնեինք, կտանեինք տուն, ղավուրմա կանեինք։

Տղեն էլի լիս չի ընկնի։ Մախլա՛ս, գլխներդ ինչ ցավացնեմ,

ընչանք տուն հասնիլը՝ տղեն ըսենց իրա հունարը կխարջի՝ մին ձի կդառնա, մին ղաթիր կդառնա. ես ինչ գիտամ՝ ուրիշ ջանավար կդառնա, հերը ըսկի չի ֆահմի, թե ըտոնք քոմմա իրա տղեն ա։ Կգան, կգան, շատն ու քիչն աստոծ գիտա, իրիկունը կհասնեն տուն։ Մերը տղի թշերը կպաչի, աչքերը կպաչի, կնստեն իրար հալ կհարցնեն, դե՛սից, դե՛նից կխոսան, մասլահաթ կանեն, մերը կէթա դաստախուանը կբերի, բաց կանի, կուշտ ու կուռ կուտեն, կխմեն, կպառկեն կքնեն։

Առավոտը լիսը կբացվի՝ թե չէ, տղեն կկանչի հորը.— Ա՛յ հեր,— կասի,— էրեկ ճամփին ո՛ր մի ալապստրակ տեհար, եննա մի ղոչ, եննա մի ձի, մախլա՛ս, ինչ որ տեհար՝ ըտոնք քոմմա ես ի. ուտիս կշտին է՛նթավուր հունար եմ սարվե, որ ինչ ուղենամ կըլնեմ, եր չէ, հո էլ եդ իսան կըլնեմ, ընդե կկաննեմ։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։ Չես ավատում, հրես կըլնեմ ղաթիր, կտանես բազար, կծախես, որ կհարցնեն. «Ի՞նչ տամ, ինչ չտամ», կասես. «Հարիր մանեթից պակասով չեմ տա, ըն էլ առանց նոխտի»։ Ըլնեմ-չիմանամ նոխտես էլ հեննես տաս հա՛, թե չէ իմաց կաց՝ էլ ինձ պրծնում չկա, հուր-հավիտենական հենց ընենց ղաթիր էլ կմնամ։ Էս հո էս. մըն էլ՝ ո՛ր ինձ աչքերը ճղրիկ մարդի չծախես. ինչ տա՝ չես տա, թեկուզ քաշովս մին ոսկի էլ տա՝ չես ծախի, թե չէ տե՛ս, գլուխս փորձանք կգա, դու գիտաս։

Տղեն էս կասի ու կըլնի մի լավ, սի՛րուն, նա՛շխուն ղաթիր՝ ընդե կկաննի. հերը ուրախ-ուրախ կնիլնի, կտանի բազար, որ ծախի։ Բազարավորը քոմմա կմնան բերաննները բաց էդ ղաթրին մտիկ անելոն։

— Ա՛ղպեր, ի՞նչ աժի էդ ղաթիրը,— կհարցնեն։

— Հա՛րիր մանեթ,— կասի,— առանց նոխտի։

Ընդիան մի մարդ դուս կգա, հարիր մանեթը նաղդ կհամբրի աղաքը, ղաթիրը կառնի. ինչ կանի, չի անի՝ հերը նոխտեն չի ծախի, բերնիցը կհանի, կբերի տուն։ Վրիցը մի սհաթ չի անց կենա, էդ ղաթիրը էլ եդ իսան կըլնի, կգա իրանց տունը։ Հեգտի օրը կդառնա մի ուղտ, հորը կասի. «Կտանես կծախես, իրեք հարիր մանեթից պակասով չես տա»։ Հերը ուղտը աղաք կանի, կտանի բազար, իրեք հարըրով կծախի, նոխտեն էլ վե կունի կբերի։

Հերը դեռ տուն հասած չիլնի, ուղտն էլ եդ իսան կդառնա, նրանից աղաք կգա տուն։

Օրեն մի օրն էլ կդառնա մի քյահլան ձի, հորը կասի.— Կտանես կծախես. ո՛ր կհարցնեն. «Ի՞նչ տանք», կասես. «Հինգ հարիր մանեթ». գյամն էլ մտիցդ չես քցի, վե կունես կբերես։

Հերը ձին կնիլնի, կքշի դպա մեյդանը։ Բազարավորը քոմմա կկիտվեն, կմնան մաթ էլած էդ ձիուն մտիկ անելոն։

— Էդ ձին ի՞նչ ածի,— կհարցնեն։

— Հինգ հարիր մանեթ,— կասի։

Էն դհիցը մի ճղրիկ մարդ ա դուս գալի, ասում ա.— Էդ ձին ես առնում եմ։— Հանում ա էն սհաթը հինգ հարիր մանեթը նաղդ համբրում, ձին ձեռիցն առնում։ Ձիու աչքը որ ընկնում ա էդ առնողի էրեսին, ալբիալը լացը գալիս ա, ուքուր-ուքուր լաց ա ըլնում։

Հերը ուզում ա գյամը ձիու բերնիցը հանի, էդ մարդը չի թողում, ասում ա.— Ես ձին առել եմ, գյամն էլ հեննեն եմ առե։

Հերը որ շատ կռիվ, ղալմաղալ ա անում, էդ մարդը հանում ա մի հինգ հարիր մանեթ էլ ա տալի։

— Ա՛ռ,— ասում ա,— ըս էլ քու գյամի դինը։ Ռազի՞ ես։

— Չէ՛,— ասում ա հերը,— ռազի չե՛մ. հինգ հարիր չէ, թեկուզ հազար մանեթ տաս, գյամը չեմ ծախի։

Ըտե թոփ էլած մարդիկը քոմմա հորը ղնամիշ են անում, թե գյամի մալիաթն ի՞նչ ա, որ չի ծախում, հազիր լավ գին ա տալի։ Սա՛ ըստիան, նա՛ ընդիան, մախլա՛ս, մարդը մի դհից ո՛ր չեն ասում, վրա քցում՝ հոր բեյինը մննում ա, մարդ ա է՛լի, թամահ ա անում, բերում գյամն էլ ձիու վրեն ծախում, փողն առնում, դնում ջեբը, թողում գալի տուն։

Էդ ճղրիկ մարդը Օխայ-Բաբին էր, որ էկել էր իրա աշկերտի հավարին։ Հենց որ ձին առավ, պրծավ ալբիալը նի էլավ վրեն, գլուխը բաց թողաց։ Դե՛ս քշեց, դե՛ն քշեց, մի քանի գլուխ ջղիր հաղաց, մախլասի՝ է՛նքամ քշեց, է՛նքամ քշեց, որ քրտինքը խեղճ ձիու պճեղներովը վեր էր գալի։ է՛կավ, է՛կավ, հասավ էն ջրի ղրաղը. քշեց նի մտավ ջուրը, սըկվեց՝ ձիու հեննա դուս էկավ իրա ամարաթը։

Աղջկանը ձեն տվեց.— Ա՛ղջի,— ասեց,— մեր էն մենծ դանակը հրեն պադրհանումն ա, գնա՛ բե էս ձիուն մորթեմ։

Դե աղջիկը էս որ լսեց, էն սհաթը գլխի ընկավ, թե բանը ընչումն ա։

Դնաց պադրհանը ման էկավ, տեհավ դանակը սրե, դրել ա ընդե, վե կալավ, տարավ պահեց, որ հերը ման գա՝ չգտնի։

Էկավ հորն ասեց, թե.— Սաղ պադրհանը քար ու քանդ արի, ման էկա, ո՛նչ դանակ գտա, ո՛նչ զադ։

Հերը բերեց ձիու գյամը ղայիմ կապեց սանիցը, գնաց որ դանակը բերի։ Հերը որ էթում ա, աղջիկն էն սհաթը ձիու գյամը բերնիցը հանում ա. հանելու բաշտան ձին ծլկվում ա՝ յա՛լա։

— Ա՛յ հարա՛յ, ձին փախա՛վ,— ձեն ա տալի աղջիկը։

Ընչանք Օխայ-Բաբու գալը, տղեն իրա մանգղիլը կտրում ա։ Օխայ-Բաբին գալիս ա տենում՝ ի՛նչ ձի, ի՛նչ զադ, ո՛նչ ժամ կա, ո՛նչ ժամատեղ. ալբիալը իրան քցում ա ջրի էրեսը, տենում հրենիկ տղեն դառել ա մի աղվես՝ ո՛նց ա փախնում, ո՛նց ա փախնում, ոնց որ մի գյուլլա. ալբիալը ինքն էլ դառնում ա թազի՝ ընկնում եննուցը։ Տղեն մի վախտ եդ ա մտիկ տալի տենում ուստեն թազի ա դառե, եննուցը կրնկում, որդե որ ա՝ իրան հասվեհաս ա, դառնում ա մի սի՛րուն, նաշխուն աղունիկ՝ թռնում։ Ուստեն տենում ա տղեն աղունիկ դառավ, թռավ՝ ինքն էլ ղրղի ա դառնում, ընկնում եննուցը։ Տղեն եդ ա մտիկ տալի, տենում ուստեն ղրղի ա դառե հակալ-հակալ ա քցում, որ կալնի՝ հայդե-հայդ թռնում ա, հասնում մի գեղ։ Տենում ա մի տան երդկիցը ղալմաղալի ձեն ա գալի. երդկովը մտիկ ա տալի, տենում էդ տանը քե՛ֆ, ուրախությո՛ւն, դա՛փ, զուռնա՛, դու մի՛ ասի, ըտե հարսանիք ա լընում. ալբիալը դառնում ա մի կարմիր խնձոր, ընկնում դո՛ւզ թազափեսի գոգը։ Թազափեսեն մնում ա արմացած, թե ո՞րդիան վեր ընկավ էդ խնձորը. վեր ա ունում ֆոտ քաշում, ձեռին հաղացնում։ Ուստի ամալ-աջալը որ կտրվում ա, ինքն էլ էն սհաթը աշըղ ա դառնում, սազը ձեռին մննում էդ հարսանքատունը։

— Աշըղ չե՞ք ուզում,— հարցնում ա։

— Խի՞ չենք ուզում,— ասում են,— արի՛ նստի մեզ համար հա՛ղ ասա։

Աշըղը գալիս ա, քոմմքից վիրևը, թազափեսի կողքին բազմում, սազը քօքում։ Ո՛ր սազին չէր տալի, հեննեն կլկլացնում, հաղ ասում, սաղ հարսանքատունը նրա ձենը վեր էր ունում,

դըմբդըմբում, զընգզընգահար գալի։ Հարսանքավորը քոմմա մնացել ին հայիլ-մայիլ նրա ձենին, սազ ածելուն. ամեն դհից փող էր, որ շպռտում ին նրա աղաքը, համա որ ասես ո՛նչ միննը էլա չէր վեր ունում։

— Բա ի՞նչ ես ուզում, ա՛շըղ,— հարցնում ա թազափեսեն,— յեզ էսքամ ուրախացրիր, քեֆ շանց տվիր, ասա՛ տենամ սիրտդ ինչ ա ուզում՝ բերեմ տա՛մ։

— Թազափե՛սեն սաղ ըլնի,— ասում ա աշըղը,— բաս որ ըտենց ա, զադ չեմ ուզում, էդ ձեռիդ խնձորը տո՛ւ ինձ, բո՛լ ա։

Թազափեսեն աշըղի խաթրը չի կոտրում, վեր ա ունում խընձորը տալի նրան. նա էլ ձեռիցն առնում ա, ուզում ա կոխի բերանը ուտի՝ խնձորը էն սհաթը դառնում ա մի բուռը կորեկ, շաղ անցնում գեննին։ Աշըղը տենում ա խնձորը դառավ կորեկ, ինքն էլ ալբիալը դառնում ա աքլոր, վրա ա հասնում շաղ անցած կորեկը մին-մին կտկտալեն հավաքում, ուտում։ Դու մի՛ ասի, մի հատ կորեկ մնացած ա ըլնում մի մարդի մաշկի միջի. մաշկի միջից էդ կորեկը դուս ա գալի դառնում կուզ, վրա հասնում աքլորին տեղն ու տեղը հեղտում, ըռխում՝ յա՛լլա դռնե դուս։ Հարսանքավորը քոմմա մնացել ին սառած մտիկ անելոն, թե էս ինչ բաս ա, իրանց աչքի աղաքին էս ինչ թավուր բաներ են ըլնում։

Կուզը աքլորին որ ըռխում ա, տանում ա գեղիցը դուս մի չոլ-չաբանի տեղ, ըտե մի խոր ֆոր ա քանդում, դրան քցում մեջը, ֆողը վրա տալի։ Ինքն էլ եդ իսան ա ըլնում, ընկնում ճամփա դպա Օխայ-Բաբու ամարաթը։ Գալիս ա հասնում էն ջրի ղրաղը, սրկվում ջրի տակը, էթում Օխայ-Բաբու աղջկա կուշտը։ Աղջիկը տենալու բաշտան վազում ա, փաթթվում տղի ճտովը։

— Տղա՛,— ասում ա,— նո՛ր որ ես քունն եմ, դու իմը։

Նո՛ր ըստե տղեն նստում ա աղջկանը մին-մին, տեղը-տեղին իրա գլխով անցկացածը նաղլ անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Ննննա քոչ, բարխանա ա անում, Օխայ-Բաբին ինչ ուներ, չուներ՝ մա՛լ, դուլվա՛թ, հարստությո՛ւն, խազինա՛, քոմմա կիտում ա, բարձում ձիանիքը, աղջկանը վեր ունում, ընկնում ճամփա՝ դպա իրանց գեղը։

Գալիս ա գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա իրանց գեղը։ Հերնըմները տղին որ տենում են, ուրախանում, աշ-

խարույկ մին են ըլնում, տղի թշերը պաչում, պաչպչորում, ասում, խոսում, ըստխան, ընդխան, էրկեն ու բարակ մասլահաթ անում։

Նո՛ր տղեն ըստե Օխայ-Բաբու աղչկա հեննա պսակվում ա, օխտն օր, օխտը գշեր հարսանիք ըլնում։ Ինչ քե՛ֆ, ինչ ուրախութ֊յո՛ւն, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։





14. ԽՈՒԴԱՎԵՐԴԻ[1]

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր։ էդ թագավորը էնքամ մալ ու դոլվաթի տեր ա ըլնում, որ էլ չէլած. սաղ աշխարքի թագավորներից հարուստ ա ըլնում, համա ընչին էր պետքը, խեղճի աչքին ոչ մի բան չէր գալի։

Խեղճը ըսքան մալ ու դոլվաթի միջին մի պտուղ չուներ, որ իրանից եղը իրա կարողությունը, իրա թագավորությունը վայելեր։

Ամեն օր ըսենց դառը-տխուր դուս էր գալի իրա ամարաթի աղաքի Անմահական բաղչումը ման գալի, էլի ըտենց դառը-տխուր եդ դառնում ամարաթը։

Մի դարվիշ ա ըլնում, որ աչքը մի սարի վրա ա ըլնում, չումքի էդ սարումը շատ մալ ու դոլվաթ կար, միջին էլ մի հունարով Ծանառ. էդ Ծանառը ինչ ուզենայիր՝ անիլ կտար քեզ համար։

Էդ դարվիշը լավ ռամ քցել ա իմանում։

Մի օր ասում ա. «Բերեմ ռամ քցեմ, բալքի մինը գտնվի, որ կարենա մննի էդ սարը՝ Ծանառը հանի տա ինձ»։ Ռամ կքցի՝ դուս կգա էդ թագավորի տղի վրա։

Էգսի օրը վե կկենա կընկնի ճամփա դպա էդ թագավորի երկիրը։

---

[1] Խուդավերդի թուրքերեն նշանակում է՝ Աստվածատուր (Մ. Բ.)։

Ըսենց կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, կհասնի էն թագավորի երկիրը։

Դուղ կէթա թագավորի ամարաթի աղաքի խնամաքարին կնըստի. թագավորի նոքարները դուս կգան էս դարվիշին կհարցնեն.— Հը՛, ի՞նչ ես ուզում, դարվիշ բաբա։

Դարվիշը կասի.— Եկել եմ թագավորի կուշտը, բան ունեմ։

Նոքարները կէթան թագավորին իմաց կտան, թե՝ ըսենց մի դարվիշ էկել ա քեզ տենա։

Թագավորը կհրամայի մի բուռ ոսկի տան, ճամփու դնեն։ Կտանեն մի բուռը ոսկի կտան դարվիշին, որ էթա։

Դարվիշը չիբիցը կհանի էրկու բուռը կղրկի թագավորին, կասի.— Ես աղքատ չեմ, ես էկել եմ թագավորին իրան տենամ, թագավորի հենց գործ ունեմ։

Նոքարները կէթան թագավորին կասեն դարվշի ասածները։

Թագավորը էն սհաթը կհրամայի, որ նեքսև թողան՝ գա տենա ի՛նչ ա ուզում էդ դարվիշը։

Կէթան դարվշին կբերեն թագավորի կուշտը։ Դարվիշը նեքսև կմննի խոր պլուխ կտա, ձեռները կդնի դոշին կկաննի։

— Հը՛, դարվիշ բաբա, ի՞նչ ես ուզում, խի՞ ես էկե,— հարցնում ա թագավորը։

— Զա՛դ չեմ ուզում, քու սաղո՛ւթյունն եմ ուզում,— ասում ա դարվիշը,— էկել եմ, որ քու դարդին դարման անեմ։

— Է՛հ, դարվիշ բաբա, ուզա ուզածդ տամ, թող գնա՛ քու բանին, դու ի՞նչ կարաս իմ դարդին դարման անի,— ասում ա դառը-տխուր թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա, ես փողի կարոտ չեմ. ո՛չ էլ բանի համար եմ էկե, հենց քու դարդի խաթեր էկել եմ դարդիդ դարման անեմ,— ասում ա դարվիշը։

— Որ ըտքան դեմ ես ընկնում, ա՛յ դարվիշ, քեզ կասեմ իմ դարդը, համա դու իմ դարդին դարման չես կարա անի։ Ա՛յ, տենո՞ւմ ես իմ ըսքան մալ ու դոլվաթը, իմ զորբայությունը, որ ինձանից զորբա, ինձանից հարուստ թագավոր չկա սաղ աշխարքումը, համա ի՞նչ անեմ, մի պտուղ չունեմ, որ իմ մահից եդը իմ ըսքան մալ ու դոլվաթը վայելի, իմ երկրին թագավոր ըլնի. հենց էդ դարդն ա, որ ինձ գշեր-ցերեկ էրում ա, փոթորթում,—ախ անելոն ասում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա, ի՞նչ կտաս, որ ես մի ընենց դեղ անեմ, որ քեզ մի լավ տղա ըլնի,— ասում ա դարվիշը։

— Որ սաղ թագավորությունս էլ ուզես կտամ, թաքլա դուշմանահար չըլնեմ ես։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, սաղ թագավորությունդ քեզ հալալ ըլնի. թե որ խոսք կտաս տղեդ մենձացած վախտը տաս ինձ, էնա դարդիդ էս սհաթը դարման կանեմ, որ էլի սաղ-սալամաթ բերեմ տղեդ քեզ տամ. թե ղաբուլ ես՝ լավ, թե չէ՝ հո դու գիտաս. ես հենց եկել եմ քու խաթեր, ոնց որ քեզ սրտացավ բարեկամ։

— Ղա՛բուլ եմ, աղպեր, բա՛ ղաբուլ չե՞մ. թո՛ղ ինձ տղա ըլնի՝ մի քանի տարի էլ թո՛ղ քու կշտին ապրի. բան չկա, մինակ ընդար ըլնի, որ էլի տղիս սաղ-սալամաթ բերես տաս ինձ,— ասում ա ուրախ-ուրախ թագավորը։

Էն սհաթը դարվիշը չիբիցը մի խնձոր ա հանում տալի թագավորին, ասում ա.— Ա՛ռ, թագա՛վորն ապրած կենա, էս խնձորը կես արա, կեսը դու կե, կեսն էլ տու թագուհուն, որ նա ուտի. թե քեզ տղա չէլավ՝ իմ արինը քեզ հալալ ա,— ասում ա դարվիշը ու խոր գլուխ տալի, ամարաթից դուս գալի, էթում իրա բանին։

Թող դարվիշն էթա, մենք գանք խաբարը տանք մեր թագավորիցը։

Թագավորն ա՝ ուրախ-ուրախ խնձորը առնում ա մենում թագուհու օթախը. խնձորը կես ա անում, կեսը տալիս ա թագուհուն, կեսն էլ ինքն ա ուտում։ Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մախլասի՝ ինն ամիս, մեր թագուհին ծունկ ա չոքում մի նաշխուն, սիրուն տղա ա բերում. էնքա՜մ սիրուն, էնքա՜մ սիրուն, որ էլ չէլած։ Թագավորը, որ տղին չի տենում՝ ուրախությունիցը խելքը էթում ա, էնքամ ա ուրախանում. բերում են լավ կնունք են անում, սաղ պալատականներովը օխտն օր, օխտը գշեր քեֆ են անում, տղի անումն էլ դնում են Խուդավերդի։

Ըսենց ուրախ անց ա կենում մի տարի, էրկու տարի, տասը տարի, տասնհինգ տարի, ըսկի թագավորի միտը չի ընկնում դարվիշին տված խոսքը։ Հենց էդ վախտերքին օրեն մի օրը թագավորի նոքարները դալիս են թագավորին ասում.—Թագա՛վորն ապրած կենա, մի դարվիշ ա էկե. ուզում ա քեզ տենա։

Թագավորը հենց էս ա լսում՝ ուշը էթում ա, վեր ընկնում։ Քոմմա նաղիր-վեղիրը, քոմմա պալատի մարդիկը թոփ են ըլնում թագավորի ուշը վրա են բերում. նո՛ր թագավորի խելքը, որ գլուխն ա գալի, կանչել ա տալի նեքսև դարվիշին։

Դարվիշը գալիս ա նեքսև, խոր գլուխ ա տալի թագավորին, ասում.— Թագա՛վորն ապրած կենա, մի՞տդ ա, որ դու ինձ խոսք ուվիր տղիդ համար. հմի էկել եմ, խոսքիդ տե՞ր ես, թե չէ։

— Ամա՜ն, դարվիշ բաբա, վերև՝ աստղած, ներքև՝ դու, ուզա ե՛րկիր, քա՛ղաք, մա՛լ, դո՛լվաթ, հարստությո՛ւն՝ քոմմա տամ, թաքլա տղիցս ձեռ քաշի, մեղք եմ, ումուդ-ապավենս մի՛ կտրի,— մղկտալոն ասում ա թագավորը։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա, մի զադի էլա փափաղ չեմ, մեննակ տղեդ եմ ուզում, դու գի՛տաս. իմացի, որ չտաս ախրը շատ փիս կըլնի,— ասում ա դարվիշը։

Թագավորն ա՝ դառը-տխուր լալով-լալաչքով էթում ա տղի կուտը բռնում բերում տալի դարվիշին, ասում ա.— Դա՛րվիշ, դո՛ւ քու ասածը արիր, ասսու սիրուն, ամանաթ, ամանաթ տղես քեզ ամանաթ տա՛ր, համա էլի տղես բերես,— աղաչանք ա անում թագավորը։ Տղի ղլուխը, թուշը պաչում ա՝ ճամփու դնում։

Թագավորին թողանք ըստե, գանք խաբարը տանք դարվշիցն ու թագավորի տղիցը։

Դարվիշը թագավորի տղին վեր ա ունում ընկնում ճամփա. էթում են, էթում են, էթում են՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շարաթ, հասնում են մի մենծ սարի. դարվիշը չիբիցը էրկու թլսմի գիրք ա հանում. մինը տալիս ա թագավորի տղին, ասում ա.— Ա՛ռ էս գիրքը դու կարդա, էս մինն էլ ես կկարդամ, էնքա՜մ կկարդանք, որ էս մենծ սարը, տեսնում ես, էրկու փայ կըլնի, հենց որ սարը կրացվի՝ դու անխոս նեքսև կմննես, ընտե մի Ջանառ կա՝ վի կունես էլի անխոս դուս կգաս։ Տե՛ս, ընտե լիքը ակնունք, անդին քարեր կա, չըլնի՞ թե թամահ անես՝ վերնես հա՞, թե չէ՝ սարը էլի եղ կխփվի, դու կմնաս ընտե, ես՝ ըստե։ Հենց որ Ջանառը դուս բերես էն քոմմա մերն ա ու մերը, չունքի էն Ջանառը մենծ հունար ունի. իմացա՞ր էրկուսս էլ ֆողեց-ֆոգի կկորչենք։—էս քոմմա թամբահ ա անում դարվիշը թագավորի տղին ու ասում.— Դե՛, կարդա՛. ես էլ եմ կարդում։

Էրկուսն էլ իրար հեննա կաննում են ու կարդում. ըսենց կարդում են, կարդում են. մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մին էլ ի՛նչ տեհան՝ հրես, դրուստ որ, սարը ճղվեց. էրկու կես էլավ, էն սհաթը թագավորի տղեն նի կմննի նեքսև, կէթա Ֆանառը վե կունի, եդ կգա դպա դուս, համա դե իսանի թամահ էր էլի՝ չէլավ, որ էն անգին քարերը, էն կիտուկ-կիտուկ բուլիանտները չտեհա՛վ, խելքը մաղելոն միտք արեց, թե. «Շա՛տ էլ դարվիշը ասեց՝ մի՛ վերնի. ըստե ի՛նչ կա որ, հազիր վե կունեմ, ղրաղին էլ մոտ եմ, էն սհաթը մի ոտ կքցեմ՝ դուս կթռնեմ էն էրեսը. ընչանք սարերը գան իրար կպնեն զաթի ես էլ դուս կթռնեմ»։ Կասի, կպզվի էդ կիտած-կիտած բուլիանտների կշտին՝ ծոցերը, ջեբերը կլցնի։

Էնքա՛մ դարվիշը ձեն կտա. «Ա՛ման, Խուդավերդի, վեր ածա՛, վեր ածա՛, սարերը կխփվի», Խուդավերդին չի լսի, ջեբերը կլցնի. հենց կուզենա, որ դուս գա՝ սարերը էլ եդ էն սհաթին կգան իրար կկպնին, թագավորի տղեն կմնա սարի միջին, դարվիշը՝ էս դիհը։

Դարվիշը էս որ կտեննա՝ շատ վա՛յ կտա գլխին, համա դե էլ ի՞նչ կարար անի, ձեռին ճար չկար։

Վախլությունիցը գլուխ կառնի էն թագավորի երկրիցը կկորչի, որ ինչ ա՝ թագավորը չիմանա իրա արածը, իրան քյալլա անել չտա։

Թող դարվիշը գլուխ առնի կորչի, մենք գանք խաբարը տանք էն խեղճ տղիցը։

Տղեն էս զուլումը որ տեննում ա, շատ ա գլխին ոտին տալի, համա դե՛ ձեռին ի՞նչ կար, ի՞նչ կարար անի, ո՛նչ մի հնարք չէր գիտա՝ ո՞նց դուս գա էդ եքա սարի միջիցը. էնքան ըսենց միտք ա անում, լալիս ա, ընչանք լավ նղըղում ա, գլուխը դնում գեննին, ֆողի վրա քնում ա։

Շատ ա քնում, թե քիչ, աստոծ ա խաբար, բիրդան մի ջրի խշոցից զարթնում ա. զարթնում ա տեննում ա՝ էլի էն սարի միջին ա. էս յան ա ման գալի, էն յան ա ման գալի. տեննում ա հրեն մի փետի կտոր. էթում ա փետը վերնում գալի էն ջրի խրշշոցի տեղը։ Փորփըրում ա ըսենց, էնքամ փորում ա՝ բիրդան մի եքա գետ ա բացվում, ընե՛նց վարար, ընե՛նց վարար, որ էլ չեմ կարա ասի։ Մին էլ տեննում ա հրես մի մենծ տախտակի կտոր ջրի էրեսին գալիս ա. անխոս տախտակը կալնում ա, ինքը վրեն նստում, ասում

անումը տալիս ա՝ ընկնում ճամփա. միտք ա անում, թե բալքի էս ջուրը տանի մի լիս աշխար հանի։

Ըսենց տղեն ջրի էրեսին տրմպտրմպալոն էթում ա. էթում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ մի օր, տենում ա յավաշ-յավաշ լիս ա էրևում։ Մի թիքա էլ որ էթում ա՝ բիրդան տախտակը դեմ ա ըլնում մի ծառի քոքի, էլ չի էթում։ Տղեն որ տենում ա տախտակը էկավ ղրաղ, ինքն էլ վեր ա գալի վրիցը է՛ս յան ա էթում, է՛ն յան ա էթում՝ տենում ա ըստերանք ըսկի իսանաոտ չի էրևում, լափ վիրունի տեղ ա։ Նստում ա մի քարի վրա, մի կուշտ լաց ա ըլնում. սրա ձենին մի չորան ա գալի, տենում ա հրես մի սիրունիկ տղա նստած մեն-մենակ լաց ա ըլնո՞ւմ, լաց ա ըլնո՞ւմ, ո՞նց լաց, որ կողքի քարերն են մղկտում։

Մոտ ա գալի հարցնում.— Տղա՛, օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ըստերանք չէր էկե, դու ո՞նց սիրտ էս արե էկե։

Տղեն ո՛ր գլուխը բանձրացնում ա չորանին տենում՝ ուրախանում, աշխարովը մին ա ըլնում, ասում ա.—Ա՛մի ջան, ա՛մի, սուված մեռա, ըսկի ղադ չո՞ւնես ուտելու։

Չորանը ասում ա.— Ա՛ռ, այ որդի, ես եմ էս էրկու գարե ճաթը, ա՛ռ ըս էլ դու կե՛ր։

Տղեն ճաթը առնում ա ուրախ-ուրախ վրա պրծնում՝ ընե՛նց ա ուտում, կասես գառան խորոված ըլներ։

Չորանը վերնում ա տղին տանում իրա տունը, կնկանը ասում.— Ա՛ռ, ա՛յ կնիկ, աստծ մեզ մի թազա տղա էլ ա ղրկե. թող օխտը տղա չունեննաք, ութը ունեննաք։ Լա՛վ պահի, մուղայիթ կաց, քու էրեխեքանցիցը մի չկի. ես էլ էն վիրունի տեղը կաթ, մածուն, ղադ կշինեմ, կբերեմ յոլա կէթանք։

Կնիկը ուրախ-ուրախ ջուր ա դնում, թամուզ տղի շորերը լվանում, գլուխ-մլուխը թամզացնում ու իրա էրեխեքանց հեննա խառնում։

Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, օրենը մի օր էս տղի միտն ա ընկնում, որ իրա ջիբին անգին քարեր կա։

Մինը հանում ա տալի մորը, ասում ա.— Ա՛ռ, ա՛յ մեր, տար բազար էս անգին քարը ծախի, բե՛ յոլա էթանք, համա տես չխաբնվես։

Մերը ուրախ-ուրախ քարը տղի ձեռիցը առնում ա, էթում բա-

ղար. դուզ տանում ա մի սառաֆի կուշտ, հանում ա քարը սա-
ռաֆին շանց ա տալի ասում ա.— Ջէ՞ս առնի էս քարը։

Սառաֆը որ չի տենում էդ անգին քարը, խելքը էթում ա՝ էն-
քա՛մ հավանում ա, ասում ա.— Խի՞ չեմ առնի, զաթի ես էլ ըզենց
քարի ի՞ման գալի, գինն ի՞նչ ա։

— Ի՛նչ արժողությունն ա, էն տու,— ասում ա կնիկը։

— Հարիր մանեթ կտամ,— ասում ա սառաֆը։

Կնիկը հենց իմանում ա իրա վրա ծիծաղում ա, ասում ա.—
Ի՞նձ ես ձեռ առե։

— Հինգ հարիր կտամ,— ասում ա սառաֆը ու ջիբիցը փողը
հանում ա, համբրում։

Կնիկը ուրախ-ուրախ փողը վերնում ա լցնում ջերը, քարը
տալի սառաֆին, էթում։ Էթում ա բազար, է՛ս յան ա ման գալի,
է՛ն յան ա ման գալի, ի՛նչ որ պետք ա առնում ա, էրեխեքանց
համար շորեր, իրա համար մաշկներ, շորեր, մախլաս՝ ի՛նչ որ
պետքն էր, քոմմա առնում ա, էթում ա տաք կիրակուր էփում,
ուտում են, խմում, քեֆ քաշում, պառկում քնում։

Օրենը մի օր էս տղեն մորիցը թաքուն վեր ա կենում էթում
բազար, դուզ մի սառաֆի կուշտ։ Տղեն էթում ա մի էրկու քար ա
ծախում՝ հատը էրկու-իրեք հազար մանեթով։ Էթում ա բանահի,
խառատի կուշտ, բարշում ա, որ էգսի օրը գան իրանց համար մի
ձեռք լավ տներ շինեն։ Թողում ա գալի տուն։

Դրուստ որ, էգսի օրը էն բաշտեն ուստեքը իրանց ֆահլեքանց
հեննա գալիս են սրանց տները շինում։ Մի շաբթումը մի էնթա-
վուր տներ են կայնացնում, որ տենողի խելքը էթում էր։ Տղեն բերում
ա դրանց հաշիվ-մաշիվ վերջացնում, ուստեքանց ճամփու դնում.

Իրիկունը հերը գալիս ա, տղեն ասում ա հորը.— Ա՛յ հեր, բոլ
ա չորանուբյուն անես, մեզ ընքան մալ ու դոլվաթ ունենք, որ քա-
նի սաղ ու կենդանի ենք ուտենք չի հատնի. ուր մնաց, որ քոմմքս
էլ հասել ենք. ա՛յ մի-մին ախպորտանցս պսակենք, մի-մի գործի
դնենք, մեզ համար էլ դինջ ապրենք, զաթի քու էլ դինջանալու
վախտն ա։

Հերը տղի խոսքին շատ ա հավանում, վեր ա կենում տղի ճա-
կատը պաչում, օրհնում, որ ըզենց բարի ժառանգ ա, ուրախանում,
աշխարովը մին ա ըլնում։

Բերում են ամեն ամիս մին-մին տղերքանցը նշան դնում,

պսակում, լավ-լավ աղջկերք ուզում իրանց համար, մին-մին գործի կպնում՝ գլուխ պահում։

Մի օր էլ հերը կանչում ա Խուդավերդուն, ասում ա.— Որդի՛, սրեն համի բունն ա, քեզ համար պտի աղջիկ չկենք, պսակենք։

Տղեն էս որ լսում ա՝ հորը, նստում ա, մին-մին նաղլ ա անում իրա գլխի անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Հորը ասում ա.— Համի պտի ես էթամ իմ հորնումոր կուշտը, համի նրանք դարդավարամ են էլե. մեղք են, նրանց ծերուքյան վախտը մի մխիթարեմ, նոր դինջ մեռնեմ։

Չորանը որ իմանում ա, թե Խուդավերդին թագավորի տղա ա՝ շատ ա զարմանում, որ էսքան լավություն ա արե իրանց, ըսքան տարի էլ իրան հնազանդ տղություն ա արե։ Շատ դեմ կընկնի, որ չէթա, համա դե, ինքն էլ էր չիգյարատեր, չէր կարա եդ քցի։

Կնկանը ասում ա.— Ա՛յ կնիկ, վե՛ր, լավ ճամփի թադարեք տես, որ մեր տղեն պտի ճամփա էթա, ճամփին նեղություն չքաշի։

Կնիկն ա՝ վեր ա կենում, ոնց որ կարգն էր, լավ ճամփի թադարեք ա տենում։ Մի էրկու հավ ա խաշում, քուֆթա ա էփում, գաթա ա թխում, ճամփի պաշար ա կապում, հազրում, էդ դշերն էլ ընչանք լիս լավ քեֆ են անում, էն բաշտեն Խուդավերդուն ճամփու դնում։

Թագավորի տղեն ա՝ ասսու անումը տալիս ա, ընկնում ա ճամփա։

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, մի չոլ յաբանի տեղ մութը վրա ա կոխում. տղի պաշարն էլ գաթի հատել էր, մտքումը ասում ա. «Էս գշեր ըստեն սթար անեմ, նո՛ր էն բաշտեն կընկնեմ ճամփա»։ Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի՝ մի մենծ քարի տալդի նստում ա դինջանա, որ ինչ ա ջանավար, զադ չմոտանա։ Տղեն, որ ըտենց մենակ նստած կըլնի, բիրդան միտը կընկնի իրա Ֆանառը, կասի. «Հլա մի վառեմ տենամ սրա հունարը ինչ էր, որ ես էսքան տարի Հուդի չարշարանքը քաշեցի էս Ֆանառի խաթրու»։ Ֆանառը կվառի, ի՞նչ տենա՝ հրես չորս արաբ էկան աղաքին կանննեցին։

— Հը՛, թագա՛վորի ցեղ, աշխարքը քանդենք, թե՞ շինենք,— կասեն արաբները։

Տղեն էս որ կտենա շատ կզարմանա, կասի.— Ո՛նչ քանդեք, ո՛նչ շինեք, ես շատ սուված եմ, ինձ մի բան տվեք ուտեմ, դուք գնացեք ձեր բանին։

Արաբները էն սհաթը մի՛ սուփրա բաց կանեն թագավորի տղի աղաքին, մի՛ սուփրա, որ էլ չեմ կարող ասի, աստու ստեղծած բարիքը լիքը կըլնի, ընե՛նց լավ-լավ կիրակրներ, ընե՛նց լավ-լավ կիրակրներ, որ սկի Խուդավերդին իրա օրում չէր կերե, չէր տեհե։

Խուդավերդին ա՝ սոված վրա ա պրծնում, մի կուշտ ուտում։ Որ կշտանում ա, արաբները հացը հավաքում են իրանք անէրեվույթք ըլնում։ Թագավորի տղեն էլ թինկն ա տալի էդ քարին, քնում ընչանք լիս։

Որ լիսը բացվում ա, Ֆանառը վառում ա, արաբները գալիս են հարցնում.

— Հը՛, թագա՛վորի ցեղ, աշխարքը քանդե՞նք, թե՞ շիննենք։

Խուդավերդին ասում ա— Ո՛նչ քանդեք, ո՛նչ շիննեք, ինձ մի Քյահլան ձի տվեք, էթամ մեր երկիրը։

Էն սհաթը արաբները մի Քյահլան ձի կբերեն, իրա լավ-լավ սարքերով, ընե՛նց ձի, ընե՛նց ձի, ընե՛նց ձի, որ էլ չեմ կարա ասի։

Էն սհաթը թագավորի տղեն կնստի ձին, կօրզանգի՝ ձին կթռնի կէթա։ Շատ կէթա, քիչ կէթա, կհասնի մի գեղի ղրաղի. կտեննա հրե գերեզմաններ ա էրևում, մի բոլ մարդ էլ կիտվել են մի մեռլի գլխի, իրար ձեռից խլում են ու ջարդում. ո՛նց են ծեծում, ո՛նց են ծեծում, որ աստոծ ա խաբար։

Դուզ ձին քշում ա դրանց կուշտը. ձիուցը վեր ա գալի, դրանց հարցնում ա.— էդ խեղճ մեռելը ձեզ ի՞նչ ա արե, որ ըդենց ծեծում, ջարդոտում եք. մեղքը չի՞։

Էն մարդիկը ասում են.— Դու չես խաբար, թե սա մեր գլուխը ի՞նչ օյին ա դրե։— Մինը ասում ա. «Ինձ քսան մանեթ ա տալու», մեկելն ասում ա, թե. «Ինձ հիսուն մանեթ», մինը՝ «Տասս», մախլաս՝ ի՞նչ գլխներդ ցավացնեմ, սրանց քոմմքին էլ պարտք ա էլե էս մեռելը. հենց ումից վեր ա կալե, եդ չի տվե։

Էն սհաթը Խուդավերդին ջիբիցը մի բոլ փող ա հանում, սրանց քոմմքի պարտքն էլ տալիս ա, ճամփու ա դնում իրանց բանին։ Եննա մի պուճուր էրեխա ա ռաստ գալի, ղրկում ա, տերտեր ա բերիլ տալի, մարդ ա բերում, ոնց որ կարգն ա, թազադան էս մեռլին թաղում են, էթում իրանց բանին. ինքն էլ ձին սարքում ա, էլ եդ նիլնում ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի սհաթ, էրկու սհաթ, բիրդան

եղ ա մտիկ անում, ի՞նչ տենա՝ էրկու ձիավոր ընկել են իրա են-նուցր, ո՞նց են քշում, ո՞նց են քշում, ո՛նց որ գյուլլա դիպած։ Աղաքի ձիավորի ձին սև ա ըլնում, ետևինը՝ կապիտ։ Խուդավերդին սրանց որ տենում ա, վախլուխյունիցը չի իմանում, թե որդե տափ կենա։ Մին էլ ինչ ա տենում՝ եղի կապիտ ձիավորը էկավ վրա հասավ աղաքի սև ձիավորին վե կալավ տվեց գեննովը, բանֆոգի արեց։

Շատ զարմացավ, թե էս ի՞նչ բան էր, էս կապիտ ձիավորը ով էր, որ ըսենց իրան ազատեց. կայնում ա ընչանք էն կապիտ ձիավորր գալիս ա թագավորի տղի կուշտը, ասում ա.— Սրանից եղը դու արխեին գնա՛. էլ ոչ մի զիան չի գա քեզ։

Էս ասում ա, ուղում ա, որ էթա, Խուդավերդին ասում ա.— Ցավա՛շ, դու ո՞վ իր, որ էկար ինձ ըդենց փորձանքից ազատեցիր, էդ լավությանդ տակիցը ընչով կարամ դուս գա։

Կապիտ ձիավորն ասում ա.— Ես էն մեռլի Հրեշտակն եմ, որ դու էն մարդկերանց ձեռիցը պրծացրիր, ընենց առոք-փառոք թագնցիր. էն սև ձիավորն էլ էն դարվիշն էր, որ քեզ ըդենց փորձանքի մեջ էր բցե. հմի որ իմացել ա, թե դուս ես էկել լիս աշխարք, էկել էր, ուղում էր քեզ սպանի, որ Ցանառը ձեռիցդ առնի. համա ես նրան ընե՛նց տվի գեննովը, որ ո՛նչ տվեց, ո՛նչ առավ՝ հենց տեղն ու տեղը մնաց մեռած։

Ննենա մեռլի Հրեշտակը ջիբիցը մի խնձոր ա տալի թագավորի տղին, ասում ա.— Ա՛ռ էս խնձորը, հերնումերդ կուտեն կջահելանան, աղյուխդ էլ տուր ձիուս քրտինքը սրբեմ՝ տամ տար, հերնումերդ բու համար էնքամ լաց են էլե, որ ջուխտն էլ քոռացել են՝ էս աղյուխը որ քսեն աչքներին, էն սհաթը կսաղանան։

Խուդավերդին ա՝ ուրախ-ուրախ աղյուխը տալիս ա մեռլի Հրեշտակին, նա էլ ձիու քրտինքը սրբում ա՝ էլի եղ տալի Խուդավերդուն, հեննեն մնաս բարով ա անում ու էն սհաթը անէրևույթք ա ըլնում։ Խուդավերդին շատ ա զարմանում, թե՝ էս ի՞նչ էր, ըսենց էկավ ու գնաց. ասուն փառք ա տալի ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ա, էթում ա՝ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մի օր, մախլասի՝ մի շաբաթ, հասնում ա իրա քաղաքի անուռը. տենում ա հրե մի նախրչի նախիրը արածացնում ա, էթում ա էդ նախրչու կուշտը հարցնում ա.— Բարո՛վ նախրչի,— ասում ա,— ըսկի ձեր քաղաքումը ի՞նչ կա, ի՞նչ չկա։

— Աստու հա՛զար բարին, ա՛յ ճամփորդ աղպեր,— ասում ա նախրչին,— մեր քաղաքի մենծ ցավն էն ա, որ մի լավ թագավոր ունենք՝ նա մինուճար մի տղա ուներ, էդ տղեն խաբլությունով մի դարվիշ տարավ, էլ եդ չբերնց. մեր թագավորը ու իրա կնիկը էնքա՜մ լաց էլան, որ էս էրկու տարի ա ջուխտն էլ լավ քոռացել են, աշխարքի լուիցը զրկվել, մեր սաղ խալխն էլ էն խեղճերի համար դարդի մեջ ա։

Տղեն էս որ լսում ա, նախրչուն ասում ա.— Որ ըտենց ա՝ թեզ վազի խաբար տար ձեր թագավորին, ասա՛, որ տղեդ էկել ա, համի, որդե որի ա կգա։

Նախրչին, որ էս խաբարը չի լսում, ուրախությունիցը օխտը գազ ծլունկ ա ըլնում, ընկնում էդ տղի ոնները. ուզում ա, որ աղի պես լիզի, նոր որ ուշը վրա ա գալի, վազելոն էթում ա թագավորին խաբար տանում։ Դուզ էթում ա թագավորի ամարաթի դուռը ծեծում, նոքարները դուռ են գալի հարցնում.— Էդ ո՞վ ա.

Նախրչին ասում ա.— Ես եմ՝ ձեր գեղի նախրչին, ուզում եմ թագավորին թեզ տենամ, վռազ գործ ունեմ հեննեն։

Նոքարները էթում են թագավորին իմաց անում. թագավորն ասում ա.— Գնացեք կանչե՛ք, տենանք ո՞վ ա։

Նոքարները էթում են նախրչուն բերում նեքսև։

Նախրչին ա՝ ուրախ-ուրախ էթում ա թագավորին գլուխ ա տալի ասում.— Թագա՛վորն ապրած կենա, տղեդ գալիս ա, հրե մեր սնոռումը դինջանում ա։

Թագավորը էս որ չի լսում՝ ուրախանում, աշխարովը մին ա ըլնում։ Էն սհաթը հրամայում ա նախրչուն լավ-լավ փեշքաշներ տան, ճամփու դնեն. ինքն էլ իրա կնկա հեննա, պալատականների հեննա վեր ա կենում էթում տղի աղաքը։

Տղեն հորն ու մորը տենալու բաշտան վազում ա փաթթվում նրանց ճտովը, պաչպչում. էնքա՜մ ուրախանում են, որ էլ հալ ու հեսար չկար։ Նո՛ր էն սհաթը տղեն մեռլի Հրեշտակի տված աղլուխը հանում ա հորնումոր աչքերը սրբում ա։ Էն սհաթը սրբելու բաշտան էրկսի աչքերն էլ բացվում ա։ Ննա ջիբիցը հանում ա Հրեշտակի տված խնձորն էլ տալիս ա հորնումորը, որ ուտեն։ Ուտում են, էրկուսն էլ հենց ուտելու բաշտան դառնում են ջահել-ջիվան մարդ ու կնիկ։ Էլ ի՜նչ քեֆ, ի՜նչ ուրախություն, որ էլ չեմ կարող ասի։

Մի քանի օր, որ տղեն դինջանում ա պրծնում, հերն ասում ա.— Ա՛յ որդի, չե՛ս ասի Ֆլա՛ն թագավորը ղոշուն ա վե կալե, գալիս ա մեր վրեն կռիվ։

Տղեն ասում ա.— Ա՛յ հեր, դու ըսկի դարդ մի անի, էս Ջանաոր ըննց հունար ունի, որ ի՛նչ ուզենանք՝ անիլ կտանք, դու արևևին կաց։ Հենց էս Ջանաոի խաթրու էր, որ էն դարվիշը ինձ տարավ ու ես էլ էսքան չարչարվեցի։

Նոր տղեն նստում ա, հորը մին-մին նաղլ ա անում իրա գըլխով անց կացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի, ու էն սհաթը Ջանաոր վառում ա։

Արաբները գալիս են հարցնում.— Հը՛, թագա՛վորի ցեղ, աշխարքը քանդե՞նք, թե՞ շինենք։

Թագավորի տղեն ասում ա.— Ո՛նչ քանդեք, ո՛նչ շինեք, գնացեք Ֆլա՛ն թագավորի ղոշնի վրա կռիվ,— ու հոր հեննա իրանք թաղարնք են քաշում, էթում ավի։

Անց ա կենում մի օր, էրկու օր, բիրդան նաղիր-վեզիրը գալիս են խաբար բերում, թե.— էն թագավորի ղոշունը քոմմա կոտորվել են, նրանցից մի էրկու մարդ անջախ սաղ-մնացին, որ խաբար տանեն իրանց թագավորին։

Նո՛ր թագավորը հրամայում ա նաղրի աղջիկը տան իրա տղին։ Նաղրի աչքը ղաթի վաղուց էր թագավորի տղի վրա։ Բերում են աղջիկը տալի, նշան դնում, օխտը օր, օխտը գշեր հարսանիք անում։ Հերն էլ իրա թախտիցը վեր ա գալի Խուդավերդուն դնում իրա ձեռովը թագավոր։

Աստանից իրեք խնձոր ա վեր ընկնում. մինը՝ ասողին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



15· ԳԵՂՑՈՒ ՏՂԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

Կըլնի չիլնի մի Գեղցի։ էդ Գեղցին ըսկի զադ չի ունեննա, թաք մինուճար, մի պուճուր էրեխա կունեննա։

Օրեն մի օր էս Գեղցին բահը կդնի ուսին, կէթա իրանց արտը ջրելու։ Կէթա կհասնի արտի ղրաղին, ի՞նչ կտեննա՝ հրես էրկու օձ իրար հեննա կռիվ են անում։ Մի օձը էնքամ մի Սիրուն, նաշխուն ա ըլնում, որ մարդ հենց ուզում էր կաննի թամաշ անի, կասեննաս ըսկի օձ չըլներ. համա մինը՝ Սև, մուրտառ օձ էր, որ մարդ զզվում էր թամաշ անի։

էդ էրկու օձը ընե՞նց են իրար հեննա կռվում, ընե՞նց են կըռվում, որ էլ չէլած։ Քիչ էր մնում, որ Սև մուրտառ օձը էն նաշխուն Սիրուն օձին քրքրի իրա կատաղությունիցը։ Էս որ Գեղցին չի տեսո՞ւմ՝ վրա ա պրծնում էն Սև օձին ընենց բահով տալիս գըլխին, որ հենց տեղնուտեղը ջնջխում ա թողում։

Սիրուն օձը ուրախանում, աշխարով մին ա ըլնում, որ էս Գեղցին իրան էն մուրտառ օձիցը ազատեց։ Գալիս ա մոտ, Գեղցուն ասում.— Ես որ կամ օձերի թագավորի աղջիկն եմ, արի էթանք հորս կուշտը. որ քեզ կհարցնի, թե. «Ի՞նչ տամ, որ աղջրկանս ազատել ես», դու կասես. «Զադ չեմ ուզում. ինձ տո՛ւր Ցասը, Շվին ու Քիսենն»։

Մեր Գեղցին օձի ետևից էթում ա, էթում ա, էթում ա՝ տե-

նում ա հրես մի մենծ օձի բուն. օձը մննում ա իրա բունը, Գեղցուն ասում ա.— Դու ըտե կա՛ց, ես հորս դուրս կղրկեմ։

Գեղցին մնում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մին էլ ի՞նչ ա տենում՝ հրես էս օձի բնիցը մի եքա Շահմար, կարմիր օձ ա դուս գալիս։

Դուս ա գալի Գեղցուն բարով ա տալի, ասում.— Շնորհակալ եմ, ա՛յ աղպեր, որ իմ աղջիկը պրծացրել ես էն օձիցը. ուզա՝ տամ, ինչ որ ուզում ես։

Գեղցին ասում ա.— Ջադ չեմ ուզում քեզանից՝ մի Ցաս, մի Շվի, մին էլ մի Քիսա։

Էն սհաթը օձը կէթա կբերի, կտա Գեղցու ուզածները ու էլի կէթա կմննի իրա բունը։

Գեղցին էլ թողում ա էթում իրա արտի ջրի վրեն։ Որ իրիկունը պրծնում ա արտը ջրելուցը, էթում ա տուն. էն Քիսեն, Ցասը ու Շվին վերնում ա քցում՝ իրանց մի ջախլախ ղութի ունեին, նրա մեջը, մտքում ասում ա. «Թող մնա ըստոնք ըստե, հալբա՛թ մի օր պետքը կգա»։

Ըսենց անց ա կենում մի վախտ։ Գալիս ա օրչն մի օր էս Գեղցին հիվանդանում ա, վեր ընկնում տեղով-բարձով, երկար հիվանդ ա դառնում՝ խեղճ կնկա գլխին։

Ըսենց պառկում ա մի վախտ, էրկու վախտ, վեր ա ընկնում մեռնում։

Խեղճ կնիկը սև օրով էրեխան պահում ա մենծացնում։

Եր էրեխեն մի քիչ թափնովանում ա, խելքը գլովխն ա գալի, մորը ասում ա.— Ա՛յ նանի, մեղք ենք մենք՝ ընենց դառը օրով ապրենք, վե կենամ էթամ ղարբություն, բալի փող աշխատեմ, բերեմ գլուխ պահենք։

Մերն ասում ա.— Դու գիտաս, ա՛յ որդի, որ ուզում ես գնա։

Տղեն ա՝ ուրախ-ուրախ ճամփի թաղարեք ա տենում, որ ընկնի ճամփա։

Բիրդան միտն ա ընկնում, մորը ասում ա.— Նանի ջա՛ն, նանի, մի Ցասից, զադից չկա տանը, տա՛ս համ ճամփին կդնեմ գլուխս, համ էլ առու-մառու պատահելուս ջուր կխմեմ։

Մերը ասում ա.— Եսի՞մ, ա՛յ որդի, հերդ քու քորփա վախտը մի օր Ցաս բերեց, ո՞վ ա գիտում ո՞ր պուճախներն ա ընկե, յավաշ ման գամ գտնեմ, տա՛ր։

Մերն ա՝ է՛ս յան, է՛ն յան ա ման գալի, էն ջախլախ ղուբին բաց անում, տենում ա ընդի ա մարդի բերած Ֆասը. ուրախ-ուրախ տանում ա տալի տղին։

Տղեն մոր հեննա մնաս բարով ա անում դուս գալի, Ֆասը ճխտում ա գլուխը, ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ա, շատն ու քիչը աստոծ դիտա, հասնում ա մի պարզ ղուվալ աղբրի, մտքումը ասում ա. «Էս լավ էլավ, հազիր ըստե նստեմ մի քիչ հաց-մաց ուտեմ, նոր ընկնեմ ճամփա»։

Նստում ա էդ աղբրի կշտին, հացի դաստախունը բաց անում, որ ուտի՝ տենում ա էն դիհը, հրես, մի քանի գող նստած հաց են ուտում, էն դիհն էլ մի բոլ մալ-դուլվաթ էր կիտած։ Էդ գողերը, որ տենում են, ձեն են տալի.— Ա՛յ տղա, ա՛յ տղա, արի մի քիչ ցախ-մախ կիտի, բե կրակի վրեն ածա։

Տղեն էն սհաթը Ֆասը դնում ա գլուխը, էթում մի բոլ խուրուխուշ, փետ ու փտուտ ա կիտում, բերում ա ածում ա կրակի վրա. մնացածն էլ կրակի կողքին կիտում ա։

Բիրդան գլուխը քոր ա գալի. Ֆասը վերնում ա, որ գլուխը քորի՝ էն դհիցը գողերը ձեն են տալի.— Տղա՛, քեզ չասեցի՞նք մի քիչ կրակի համար խուրուխուշ կիտես։

Տղեն էն սհաթը մատը կծում ա, ասում ա. «Բալի էս Ֆասումը մի հունար կա, որ սրանք ինձ չտեսանն։ Նդո ասում ա.—Հրե՛ս, տես ինչքան եմ կիտե։

— Էդ եր բերեցիր, որ մենք քեզ չտեսանք, լա՛վ. դի գնա քո բանին։

Տղեն էթում ա ղրաղ, Ֆասը դնում ա գլուխը, գալի գողերի կշտին կայնում։

Հենց գողերը մի քիչ դինջանում են, բերում են իրենց գողացած ապրանքը, փողերը բաժանում են։ Ուսուլով էթում ա, նրանց կողքին կայնում ա, հենց որ փողերը բաժանում են իրար մեջ, որ տալիս են իրար՝ ձեռը քցում մի բուռը վերնում ա, ձեռը քցում ա՝ մի բո՛ւռը վերնում, ձեռը քցում ա՝ մի բո՛ւռը վերնում։ Գողերը տենում են, չէ՛, հրնկերտինքը պակաս են տալի, կռիվ ղալմաղալը ընկնում ա դրանց մեջը։ Գողերը քոմմա տալիս են իրար արինշեղեղ անում, սպանում. մալ ու դուլվաթը մնում ա անտեր։

Գեղցու տղեն ա՝ ղոչաղ-ղոչաղ հավաքում ա, լցնում խուրջինը, ընկնում ճամփա։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչը

աստած դիտա, հասնում ա էն երկրին, որտեղ որ պտի էթար աշխատանքի։ Էթում ա մի ղրաղ տեղ, մի պուճուր դուքան ա քրեհում իրա համար, առուտուր ա անում, էժան, էժան ծախոտում ա՝ բոլ մուշտարի կիտում։ Համա իրանից ըսկի մայա, յա փող չէր ծախսում, որ ապրանք, զադ առնի դուքանի համար։

Հա միալար են Ջասը ճխտում էր գլուխը, էթում լավ-լավ հարուստ դուքաններից ապրանք գողանում, բերում էժան-էժան ծախոտում։

Մին, էրկու, հինգ, տասը, էդ երկրի վաճառականները քոմմա թուփ են ըլնում, էթում թագավորի կուշտը գանգատ, թե.— Ա՛խր ըսենց բան չիլնի. մենք մեղք ենք, էլ չենք կարում օղլուշաղ պահի, պահպանի. քասատացել ենք էն ղարիր վաճառականի արարմունքից։ Մեր մալը օրը ցերեկով, կասես սատանա կա, սատանեքը քաշում են տանում, էլ ո՛նչ մուշտարի ա մոտ գալի, ո՛նչ ղադ, ընդուր որ էն տղեն ընենց էժան ապրանք ա ծախում, որ մարդ մնում ա զարմացած։ Ասսու սիրուն, ճար ունես՝ տե՛ս, մեղք ենք. քու երկրի վաճառականները, սովդաքյարները քոմմա քասատուբյունից կթողանք կփախնենք։

Էն դհիցը թագավորի աղջիկը մեյտան ա գալի, ասում ա.— Դուք արևսյին կացեք, 'ես մի ֆանդով կէթամ դրա թլիսմը կիմանամ։

Քոմմեքն էլ շնորհակալ կլնեն թագավորի աղջկանից, կէթան իրանց բանին։

Էդ թագավորի աղջիկն ա՝ բոլ թագարեք ա տենում, լավ-լավ դինինիք, լավ-լավ ուտելեղեն՝ էլ փուռը տված գառը, հնդուշկա, լավ-լավ խորակներ վերնում ա, էթում դո՛ւզ դպա էն Գեղցու տղի դուքանը։

Էթում ա հասնում դուքանը, դուզ մննում նեքսև։

— Բարո՛վ, բարո՛վ, ա՛յ աղպեր, ըսենց բան կըլի՝ դու ընչանք հմի ըստեղ առուտուր ես անում, ինձ ըսկի աչքիդ տակը չես առնում, չէ՞ մեղք եմ՝ մնռա քու ճամփեն պահելոն։

Գեղցու տղեն, որ չի տենում թագավորի աղջկանը, ուրախանում, աշխարքովը մլին ա ըլնում. որ ում գշերը ճրագով էր ման գալի, ցերեկն ա գտնում։ Բերում ա լավ հաց սարքում. թագավորի աղջիկն էլ իրա բերած պաշարն ա բաց անում, էդ տղի հեննա լավ ուտում հն, խմում։

Մի կուշտ գինի ա խմացնում, լավ հարբացնում ա, կպնում ա յախեն, թե.— Տենում ե՞ս, ես քեզ ըդենց սիրում եմ, իմ ոտովը էկա քու կուշտը, համա դու ինձանից պահում ես, չես ասում, թե դու ո՞նց ես ըդենց էժան-էժան առուտուր անում, որ օգուտ էլ ես անում, ըդենց հարստացել ես։

Տղեն զաթի ընենց հարբած էր, որ էլ ըսկի հալ չկար վրեն. նստում ա մին-մին նաղլ անում, թե քոմմա հունարը էս Ֆասումն ա։

Է՛հ, որ լավ քեֆ են անում, հարբում, խմում ա էդ տղեն, քնում։ Զաթի քոռն ի՞նչ կուզի՝ ջուխտ աչք։ Թագավորի աղջիկն ա՝ Ֆասը վերնում ա՝ յա՛լլա դպա իրա հոր ամարաթը։

Բեզրգյանները բերում են լավ-լավ փեշքաշներ տալիս թագավորի աղջկանը, որ իրանց պրծացրեց էն տղի ձեռիցը։

Թող սրանք մնան ըստե, գանք խաբար տանք Գեղցու տղիցը։ Խեղճ տղեն ա՝ որ չի՛ զարթնում տենում գլխի էկածը, մուխը պնչերքիցը դուս ա գալի. մտիկ անում է՛ս յան, է՛ն յան, է՛ս դիհը Ֆաս, էն դիհը Ֆա՛ս, Ֆաս չկա ու չկա։ Նո՛ր գլխին վայ տալոն ապրանք-մապրանքը հավաքում ա, ընկնում ճամփա դպա իրա երկիրը։ Գնաց, գնաց, շատն ու քիչը աստոծ դիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասավ իրանց երկիրը։ Ուրախ-ուրախ գնաց իրանց տուն, զաթի մոր ուրախությունը հո՞ էլ պատմելու չիլնում, էնքա՛մ ա ուրախանում խեղճ անճար մերը, որ իրա տղին տենում ա։ Տղեն մի քանի օր մնում ա մոր կշտին, ընչանք ձեռի փողը քոմմա խարջում ա, մնում ա մի քանի մանեթ. դրանցից մի քանի մանեթը տալիս ա մորը, ձեռին խարջլըղ, մի հինգ մանեթանոց էլ դնում ա էն հոր բերած Քիսիկի մեջը, դնում ա ջեբը, ընկնում ա ճամփա դպա էն թագավորի երկիրը, որ աղջիկը ընենց օյին դրեց խեղճի գլուխը։

Կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ դիտա, կհասնի մի գեղ, կասի. «Միննեմ ձեռիս հնգանոցը խուրդեմ, մի քիչ զադ-մադ առնեմ»։ Ջիբիցը Քիսեն հանում ա, բաց անում, որ փողը հանի, ի՞նչ տենա՝ հինգ մանեթը դառել ա տասը մանեթ։ Մատը կծում ա. «Բալի, կա, չկա սրա միջին էլ մի հունար կա»։ Էլ ձեռ չի տալիս փողին, անխոս կդնի ջեբը, կընկնի ճամփա. դուզ կէթա կհասնի էն երկիրը, որ աղաք դուքան էր դրե։ Կէթա իրա հին դուքանի

տեղը էլի դուքան կբռնի, ընենց ֆանդուֆելով էլի առըտուր կանի։

Մի քանի վախտ անց կկենա էդ երկրի բեզրգյանները, սովդաքյարները կէթան Թագավորի աղջկա ոննները կընկնեն, կասեն.— Աստու սիրուն, մեզ էն տղի ձեռիցը պրծացրա, էլի էկել ա մեր տունը քանդում ա։

Թագավորի աղջիկն ա՝ էլի թադարեք ա տենում, հեննեն էլ քնացնելու դեղ ա վերնում, էթում դպա տղեն։ Կէթա նի կմննի նեքսև, աղաքվա պես գլուխ կդնի, մի ֆանդով կիմանա տղի թլիսը։

Ախղճ տղեն միամիտ մին-մին նաղլ կանի, թե.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, քոմմա հունարը էս Քիսումն ա։

Էն սհաթը աղջիկը դեղը մի ֆանդով կխմացնի տղին։ Խմելու բաշտան ընենց խոր կքնի, որ ոտիցը վերնեիր քցեիր քուչեն չէր իմանա։

Թագավորի աղջկան էլ զաթի էդ էր պետք. անսաս Քիսեն վերնում ա ու յա՛լա դպա իրանց ամարաթը։ Էն բեզրգյանները, սովդաքյարները էլի լավ-լավ փեշքաշներ են բերում աղջկանը, որ ըս էլ էրկու հետ ա իրանց պրծացրեց էն տղի ձեռիցը։

Ախղճ տղեն ընենց կքնի մի սհաթ, էրկու սհաթ, մի օր, էրկու օր, բիրդան կղարթնի, ի՜նչ զարթնի, կտենա լափ դառ-դարտակ, ո՛նչ Քիսա կա, ո՛նչ փող, ո՛նչ զադ։

Դառը-տխուր միտք աննլոն կընկնի ճամփա դպա իրանց երկիրը, մտքումը կասի. «Յավա՛շ, Թագավորի աղջիկ, քու հախիցը տես ո՞նց եմ գալի, ընենց օյին դնեմ գլուվդ, որ մնաս շշմած»։ Միտք կանի, թե՝ բալի Շվին իրան սրա ձեռիցը պրծացնի, իրա էրեսը պարզ անի։

Էթում ա, էթում ա, էթում ա հասնում ա իրանց երկիրը։

Էթում ա տուն, մորը տենում ա, ասում ա.— Նա՛նի ջան, շատը գնաց, քիչը մնաց, մի քանի վախտից եղը տուն կգամ հա՛ միալար կմնամ քու կշտին, մեր տուն ու տեղը իրար հեննա յոլա կտաննենք. էս անգամ բաշխի՝ թեզ պտի էթամ։

Կէթա՝ Շվին վե կունի, մոր ծիծը կպաչի, կընկնի ճամփա։

Էթում ա, էթում ա, շատն ու քիչը աստոծ գիտա, հասնում ա մի սարի, ասում ա. «Յավաշ հլա Շվին փորձեմ տեննամ ի՞նչ հունար ունի»։ Դնում ա դնչին ու փչում ա. փչելու բաշտան էնքամ

ղոշուն ա լցվում սաղ հանդը, որ ասեղ քցելու տեղ չկար։ Ասում ա. «Հլա՝ թազա փչեմ, տենամ սրանք ի՞նչ են անում»։ Թազա փչելու բաշտան սաղ ղոշունը անէրևույթք են ըլնում, ասում ա. «Էս լավ էլավ, էս Շվին թագավորի աղջկա հախիցը կգա»։ Թազադան ընկնում ա ճամփա էն թագավորի երկիրը։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչը աստոծ գիտա, հասնում ա թագավորի երկիրը։ Հանդումը կաննում ա ու Շվին բռնում դուզ դպա թագավորի ամարաթն ու փչում ա։

Փչելու բաշտան սաղ թագավորի երկիրը ընե՞նց մի ղոշնով լցվում ա, որ ո՛նչ թե մի թագավորի ղոշո՛ւն, տասը թագավորի ղոշուն էլ իրար գլխի հավաքեին, էնքան չէր ըլնի։

Թագավորը իրա նազիր-վեզիրի հեննա կմնա շշմած, թե էս որդիան լցվեց էս ղոշունը իրանց երկիրը. յա թե չէ ի՛նչ հնարք անեն, որ դրանց ցրվեն։

Նո՛ր էն դհիցը աղջիկը կասի.— Դուք ըսկի դարդ մի՛ք անի, կա՛ չկա՛, էս քոմմա էն Գեղցու բաներն ա։ Ես էթամ աղաքը կառնեմ, էլի մի ֆանդով թլիսմը կիմանամ։

Թագարևք ա տենում, վե կենում էթում ա տղի հավարին։ Կէթա, կէթա կհասնի տղին. էլի քեֆ ուրախություն կսարքի, տղի գլուխը կդլի, թլսմի հունարը կիմանա. տղի քեֆը որ լավ կչաղանա, աղջկանը կասի իրա հունարը. կնստի մին-մին նաղլ կանի, ոնց որ ես ձեզ նաղլ արի.— Թե չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, իմ քոմմա հունարը էս Շվին ա. էս դհիցը փչում եմ՝ ղոշունը թուփ ա ըլնում, թարս դհիցը փչում եմ՝ քոմմա էլ եդ են էթում։

Աղջիկն ա՝ ուրախանում ա, աշխարքովը մին ա ըլնում. էն սհաթը տղին մի ֆանդով դեղը խմացնում ա քնացնում, Շվին վերնում ու յա՛լա դպա իրանց տուն։ Էթում ա թարս ա փչում՝ քոմմա ղոշունն էլ անէրևույթք են ըլնում։

Նո՛ր թագավորը է՛լ լավ-լավ փեշքաշներ, է՛լ լավ-լավ շորեր առնիլ աղջկա համար, ընե՛նց զարդարում ա աղջկանը, ոնց որ մի ոսկու ծառ։

Սրանց թողանք ըստե, դանք խաբար տանք Գեղցու տղիցը։

Ըսենց քնում ա մի էրկու օր. բիրդան որ չի զարթնում տենում ո՛նչ Շվի կա, ո՛նչ թագավորի աղջիկ, էն սհաթը մատը կծում ա, թե. «Բալի ըս էլ իրենք հեննա թագավորի աղջիկը իմ գլուխը օյին

դրեց. յալա՛շ, տես թե ես քու գլուխը ի՛նչ օյին պտի դնեմ. բաս ես մարդ չեմ, որ թագավորի աղջկանը դին-դինի չխաղացնեմ»։

Խեղճ տղեն դառը-տխուր գլուխ կառնի մի ուրիշ երկիր կէթա, մտքումը կասի. «էթամ էս հետ մի ուրիշ երկիր, տենամ բալի մի քանի շահի աշխատեմ, էթամ մեր երկիրը, մեր տունը՝ իմ հոր օջախը շէննացնեմ»։

Ըսենց միտք անելուն կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ դիտա, կհասնի մի ծովի ղրաղ։ Էդ ծովի ղրաղը կբռնա, դուզ կէթա։

Շատ ծարավացած կըլնի, հենց էդ վախտը աչքը կքցի ծովի էն ղրաղը, կտենա ի՛նչ՝ մի լավ գյուղի բաղ, մեջն էլ լիքը Կարմիր ու Սիպտակ հավող, կասի. «էս լավ էլավ, հաղիր էթամ համ հավող կուտեմ ծարավս կկոտրի, համ էլ մի քիչ գյուղի բաղումը մաղ գամ»։

Կէթա նի կմննի բաղը, վրա կպրծնի մի կուշտ էդ Կարմիր հավողիցը կուտի. հենց ուտելու բաշտան կդառնա մի եքա դոմեշ։ Շատ գլխին, ոտին կտա, համա էլ ո՞րդե՝ բանը բանիցը անց էր կացե։ Միտք անելուն կէթա Սիպտակ հավողի կուշտը, հենց մի քիչ Սիպտակ հավող կուտի թե չէ՝ էլ եդ կդառնա իսան։ Կասի. «էս լավ էլավ, հաղիր ճարը գտա»։

Կվերնի էրկու քաղալակ լիքը հավող կքաղի. մինը Սիպտակ հավող կլցնի, մինը՝ Կարմիր, կընկնի ճամփա դպա թագավորի աղջկա հավարին։

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ դիտա, կհասնի թագավորի երկիրը։ Սրկրի ղրաղին մի տեղ թաքուն Սիպտակ հավողը կպահի, Կարմիր հավողի քաղալակը կդնի ուսին, դուզ կէթա թագավորի ամարաթի ակուշկեքանց աղաքին հա՛ կգոռա.— Ա՛յ լավ հա՛վող, գնաց, չմնաց։

Էս որ թագավորի աղջիկը կտենա, ղարավաշներին կղրկի, թե. «Գնացե՛ք քոմմա հավողը դուք առեք բերեք, լավ հավող ա՝ մի քանի վախտ կուտենք»։

Ղարավաշները կէթան հավողը կառնեն կբերեն։ Աղջիկը որ մի էրկու գիլա կդնի բերանը թե չէ՝ էն սհաթը կդառնա մի եքա սև դոմեշ, տուննդալեն կէթա է՛ս յան, կգա է՛ն յան։

Էլ թագավորը սաղ աշխարքումը գլուխ հեքիմ չի թողա՝ կկանչի, ո՛նչ մինն էլա չեն կարա, որ ճար անեն։

1646—16

Մի օր էն Գեղցու տղեն կգա Թագավորի կուշտը, կասի.— Թագա՛վորն ապրած կենա, ես քու աղջիկը կարամ լավացնի։

Թագավորը կասի.— Մեղք ես, ա՛յ որդի, ջահել-ջիվան ես, գնա քու արևի ձենն ածա, իմ աղջկանը էնքա՞մ գլուխ հեքիմները ի՞նչ արին, որ դու ի՞նչ անես։

— Չէ՛,— կասի Գեղցու տղեն,— թե չլավացնեմ՝ արինս քեզ հալալ ա, ինչ կուզես արա՛։

Էդ տղին կտանեն Թագավորի աղջկա օթախը։ Տղեն թաքուն պահած Սիպտակ հավողի հեննեն վե կունի մի լավ կակուղ ճիպոտ, կմննի աղջկա օթախը։ Ճիպոտը վե կունի կրնկնի գոմշի ջանին՝ տո՛ւր, թե կտաս, տո՛ւր, թե կտաս, տո՛ւր, թե կտաս, մի լավ սալջարդ կանի կթողա, կասի.— Իմ Ֆասի, Քիսի, Շվի տեղն ասա, թե չէ էնքամ կծեծեմ, որ կսատկես։

Գոմեշը կրնկնի տղի ոնները, կասի.— Ամա՛ն, ասսու սիրուն, ինձ պրծացրա՝ էթամ բերեմ։

— Չէ՛,— կասի տղեն,— իմ այնոյինը բե՛, տու ինձ, նոր քեզ ընենց լավացնեմ, շինեմ մորե մին։

Աղջիկը, գոմեշ դառած, տղին կտանի տեղը շանց կտա. Ֆասը, Քիսեն, Շվին տղեն ուրախ-ուրախ վե կունի կդնի ջերը, նո՛ր սալով Սիպտակ հավողը կդնի գոմշի աղաքը։ Գոմեշը վրա կպրծնի էդ Սիպտակ հավողին, էն սհաթը կուտի կթամզացնի սաղ սալեն, կդառնա ոնց որ մորե մին։ Ընե՛նց մի սիրուն, հուրի-մալաք աղջիկ կդառնա, որ էլ չեմ կարա ասի։

Էն սհաթը խաբարը կտանեն Թագավորին, որ աղջիկդ սաղացավ։ Թագավորը ուրախ-ուրախ կէթա աղջկա ճակատը կպաչի, տղին կպաչի, տղին կասի.— Ա՛յ որդի, զաթի ես էլ տղա չունեմ, արի իմ աղջիկը տամ քեզ, դու էլ ինձանից եղը կդառնաս Թագավոր, իմ երկիրը յոլա կտանես։

Տղեն ա՝ ուրախանում ա, աշխարքովը մին ա ըլնում։ Մարդ են ղրկում, տղի մորը բերում։ Թագավորի աղջկանը ու Գեղցու տղին իրար հեննա պսակում են։

Օխտն օր, օխտը գշեր հարսանիք են անում. էլ ի՞նչ քեֆ, ի՞նչ ուրախություն, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։



16· ՄԵՌԼԻ ՀՐԵՇՏԱԿԸ

Ավալ ժամանակին մի թագավոր ա ըլնում, ունենում ա իրեք տղա՝ իրեքն էլ մինը մնից բեթար ասում էրեսիցը թափած, չար Հուլիանոս։ Խեղճ հերը մեռնում էր նրանց խրատելուն։

— Ա՛յ որդիք,— ասում էր,— ախար ընչանք ե՞ք. չէ՞ դուք էլ մեղք էք, ես էլ. տենում էք ծերացել եմ, ըսօր կամ, էգուց չկամ՝ էն վա՞խտը։ Խելք ունեք, քանի գլխներիդ սաղ եմ, ինձ լսեք, մի բանի, մի փեշակի կպեք, մի կտոր հացի տեր էլեք. թե չէ աստոծ չանի, աստոծ էն հավը չխոսացնի, որ գլովս վե դրի, էն վախտը շատ ա՞խ ու վա՞խ կանեք՝ էլ ձեռներդ չեմ ընկնի։

Համա ո՞ւմ ես ասում. հո պա՛տին ասած, նրանց՝ մի՛ն էր։

Ըսենց անց կացավ մի տարի, էրկու տարի, իրեք տարի, չորս տարի, ընչանք տղեքը մենծացան, բոյ արին, խելքները քիչ-միչ բան կտրեց, թագավորը միտք արեց, ասեց՝ «Բերեմ սրանց առուտուրի տամ տենամ, բա՞լի խելոքանում, մարդ են դառնում»։

Կանչեց մենծ տղին.— Ո՛րդի,— ասեց,— ա՛ռ էս իրեք հարիր մանեթը, տա՛ր քեզ համար առուտուր արա, ինչ կանես՝ կանես, դու դիտաս։

Տղեն հոր ձեռը պաչեց, իրեք հարիր մանեթն առավ, տարավ բաղար, դե՛ս տվեց, դե՛ն տվեց, ինչ որ աչքն ընկավ՝ առավ. համա ի՛նչ առավ, ծախեց՝ ղիան արեց, ի՛նչ առավ՝ ղիան արեց,

ըսենց փողերը քոմմա ֆող ու մոխիր արեց, իրիկունը լափ դարտակ էկավ ընդե կաննեց։

— Ո՛րդի,— հարցրեց թագավորը,— ըսօր առուտուրդ ո՞նց անց կացավ. ըսկի զադ-մադ աշխատեցի՞ր։

— Չէ՛, ա՛յ հեր,— ասեց տղեն,— ի՛նչ առա՝ վնաս արի, ի՛նչ առա՝ վնաս արի, զադ էլա դատում չմնաց. սավայի աշխատանքը՝ մայեն էլ վրեն դրի։

— Գնա՛, ո՛րդի,— ասեց թագավորը,— դու մարդ դառնողը չես. մարդ դառնայիր, հմի վաղուց իր մարդ դառե։

Կանչեց միջնեկ տղին, հաննեց նրան էլ իրեք հարիր մանեթ տվեց։

— Ա՛ռ, ո՛րդի,— ասեց,— հմի էլ քեզ եմ իրեք հարիր մանեթ տալի. տար քեզ համար առուտուր արա՛։

Միջնեկ տղեն ա՝ հոր ձեռը պաչեց, իրեք հարիր մանեթն առավ, տարավ բազար, է՛ս առավ, է՛ն առավ, սրա՛ն տվեց, նրա՛ն տվեց, ի՛նչ առավ, ծախեց՝ վնաս արեց, ի՛նչ առավ՝ վնաս արեց. փողերը քոմմա ֆող ու մոխիր արեց, իրիկունը դարտակ[1] ձեռով էկավ ընդե կաննեց։

— Հը՛, ո՛րդի,— հարցրեց թագավորը,— ի՞նչ արիր, ինչ չարիր, զադ-մադ աշխատեցի՞ր, թե չէ։

— Չէ՛, ա՛յ հեր,— ասեց տղեն,— հենց ի՛նչ առա՝ վնաս արի, ի՛նչ առա՝ վնաս արի, սավայի աշխատանքը, դեռ հլա մայեն էլ քոռ ու փուչ արի, թողի։

— Գնա՛, ո՛րդի, դո՛ւ էլ աղպորդ նման մարդ դառնողը չես. մարդ դառնայիր, հմի վաղուց իր մարդ դառե։

Կանչեց պուճուր տղին.—Ո՛րդի,—ասեց,—հմի էլ քեզ եմ տալի իրեք հարիր մանեթ, տա՛ր առուտուր արա։ Քեզ տենամ, ո՛րդի, աղպորտանցիցդ ճրագ չկպավ, բալի էլի քեզանից կպնի։

Պուճուր տղեն ա՝ հոր ձեռը կպաչի, իրեք հարիր մանեթը կառնի, կէթա մեյդանը, կտենա էնքա՜մ խալխ են կիտվե, էնքա՜մ խալխ են կիտվե, որ ասեղ քցելու տեղ չկա։ Կմոտանա, կտենա մի մեռել գեննին վեր են քցե, հենց ո՛վ հասնում ա՝ տալի, ո՛վ հասնում ա՝ տալի, էրես-մերես, քիթ, պռունգ չեն հարցնում, որդեղ ըլնում ա տալիս են։

[1] Տպագիր տեսքում այս բառից առաջ եղել է՝ լափ, որը ջնջել է բանահավաքը և հետո ավելացրել՝ ձեռով (Ս. Կ.)։

— Ա՛յ աղպեր,— հարցնում ա թագավորի տղեն,— էդ խեղճ մեռելը ձեզ ի՞նչ ա արե. խի՞ էք տալի, բա դուք իսաֆ չունե՞ք։

— Թագավո՛րի ցեղը սաղ ըլնի,— ասում են,— մեզ փող ա տալու. սաղ վախտը ինչ արինք-չարինք, չկարացինք առնի, համի մեռել ա, ծեծում ենք, բալի մեր փողի ինադն[1] էլա հա՞նենք նրանից։

— Ո՞ւմ ի՛նչքամ ա տալու,— հարցնում ա թագավորի տղեն։

— Քսա՛ն մանեթ ինձ ա տալու,— էն դհից մինը ձեն ա տալի։

— Ա՛ռ էս քու քսան մանեթը,— ասում ա։ Տալիս ա՝ ճամփու դնում։

— Երե՛սուն էլ ինձ ա տալու,— ձեն ա տալի մի ուրիշը։

— Ըս էլ քու երեսուն մանեթը։— Սրան էլա տալի, ճամփու դնում։

— Հի՛սուն էլ ինձ,— ձեն ա տալի մեկելը։

— Ըս էլ քու հիսունը։ Դե ասե՛ք տենամ էլ ո՞ւմ ինչքամ ա տալու։

— Հա՛րիր մանեթ էլ ինձ ա տալու,— ձեն ա տալի մի ուրիշ մարդ։

— Ա՛ռ, ըս էլ քու հարիրը։

Մախլաս՝ գլխներդ ինչ ցավացնեմ, հենց ո՛վ ինչքամ ուզեց՝ հանեց տվեց, ո՛վ ինչքամ ուզեց՝ հանեց տվեց, ընչանք պարտքը քոմմա պրծավ։

— Էս մեռելը էլ հո մարդի զադ չի՞ տալու,— հարցրեց թագավորի տղեն։

— Չէ՛,— ասեցին,— համի ինչ ուզում ես՝ արա՛, տա՛ր, ոտովդլխով քեզ։

Թագավորի տղեն էն սհաթն էթում ա տերտեր կանչում, բերում, մեռլին տանում ժամը, ընդիան էլ իրա ծախսովը տանում թաղիլ տալի։ Ըսենց իրեք հարիր մանեթն էլ քոռ ու փուչ ա անում, իրիկունը լափ դարտակ գալի ընդե կաննում։

— Հը՛, ո՛րդի,— հարցնում ա թագավորը,— ըսօր դո՞ւ ինչ ես արե, ասա՛ տենամ։

— Ըսկի՛, ա՛յ հեր. տված փողերդ քոմմա ֆող ու մոխիր եմ արե, ղրաղին կաննե։

---

1 Տպագիր տեքստում՝ ճարիֆն, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Նստում ա հորը մին-մին նաղլ անում՝ ո՛նց գնաց մեյդանը, տեհավ մի մեռել գեննին վեր են քցե՝ ամեն դհից ծեծում. հարցրեց. «ախ՞ էք ծեծում». ասեցին. «Մեզ փող ա տալու», ննա հանեց քոմմա պարտքը տվեց, գնաց տերտեր կանչեց, տարավ թաղիլ տվեց։

— Աֆա՜րիմ, ո՛րդի,— ձեն ա տալի թագավորը,— զորա՜նաս, շա՛տ լավ բան ես արե. էն մեռլի վարձքն էլ քեզ հերիք ա։

Ասում ա թե չէ, թախտիցը վեր ա գալի, տղի ճակատը պաչում։ Էն սհաթը հրամայում ա իրա նազիր-վեզրին, որ էթան խաղինիցը մի գոգ ոսկի բերեն՝ տան տղին։

— Ո՛րդի,— ասում ա,— գնա՛ ուրիշ երկիր ապրանք ա՛ռ, բե՛ ըստե ծախա, աղպորտանցդ միջին բալի էլի դո՛ւ իմ էրեսը պարզ անես։

— Լա՛վ, ա՛յ հեր, որ հրամայում ես՝ կէթամ։

Թողում ա էթում մեյդանը, ասում ա՝ ինձ համար մի նոքար բռնեմ, որ ճամփին աղաքիս ղուլլուղ անի, բան անի, յա ապրանքին մուղաթ կենա։ Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, սրան հարցնում, նրան հարցնում նոքար չի գտնում։ Վերջը որ շատ ման ա գալի, մի շեկ, ճղրիկ մարդ ա ռաստ գալի։

— Աղա՛,— ասում ա,— նոքար չե՞ս ուզի։

— Խի՞ չեմ ուզի,— ասում ա,— զաթի ես էլ նոքարի եմ ման գալի։ Տարենը ի՞նչ տաս,— հարցնում ա։

— Ըսկի զադ չեմ ուզում,— ասում ա։

— Ո՞նց թե զադ չես ուզում։

— Չե՛մ ուզում, էլի. ես անփող պտի քեզ ղուլլուղ անեմ,— ասում ա։

— Լա՛վ, որ ուզում ես՝ դո՛ւ գիտաս. մեղքն ու վարձքը քու շլինքը։

— Էդ հո էդ։ Մի բան էլ պտի ասեմ. թե ռազի էլար, հո ես քու նոքարն եմ, դու իմ աղեն. թե չէ՝ հո չէ, աստոծ քեզ էլ բարի տա, ինձ էլ։

— Ի՞նչ պտի ասես,— հարցնում ա թագավորի տղեն,— ասա՛ տեննամ։

— Աղա՛,— ասում ա,— որ քու նոքարն ըլնեմ, ի՛նչ ասեմ, ի՛նչ անեմ, ո՛ւր տանեմ՝ ո՛ր ասես ձեն-ծպտուն չպտի հանես։ Որ ճամփա դուս էկանք, ասեմ. «Ըստե վե գանք», պտի վե գաս, «է՛ս

անննք», պտի անես. մախլաս, հեռը քեղանից որ ասեմ՝ ջո՛ւրն ընկի, պտի ընկնես։ Դա՞ բուլ ես, թե չէ։

— Դա՛ բուլ եմ,— ասում ա.— հենց ինչ ասես՝ անկաջ կանեմ։

— Թե դու ղաբուլ ես, բաս ես էլ քու նոքարն եմ։

Թագավորի տղեն էս նոքարին աղաք արեց, բերեց տուն։ Էդ դշեր ըստե կացան, ճամփի թադարեք տեհան, մի քանի ամսվա պաշար վե կալան, մախլասի՝ ճամփի համար ինչ պետքն էր վե կալան, հեգսի օրը, էնգլխեն վե կացան, տղեն գնաց հոր ձեռը պաչեց, ասաու անումը տվին՝ ընկան ճամփա։

Գնացին, գնացին, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, ցերեկ գնացին, դշեր գնացին, լիս գնացին, մութ գնացին էկան մի գեղի կշտի վեր էկան։ Տեհան էդ գեղիցը մի ջահել-ջիվան, աչքը մուրազի տղա տանում են թաղելու։ Մեռլատերերն էլ ո՞նց են լաց ըլնում, ո՞նց են լաց ըլնում, ո՞նց սուգ ու շիվան անում, որ աստոծ փրկի, աղատի՝ մարդի լերդ ու ջիգյար էրում են, փոթոթում թողում։

Թագավորի տղի նոքարը էս որ տենում ա, տեղիցը վեր ա կենում, էթում եղ մեռլի աղաքն ընկնում, հաղ անելոն, ուրախանալոն, ծիծաղելոն էթում ընչանք գերեզմաննները, եղ թողում, գալի տղի կուշտը։ Մեռլավորը սաղ մնում ա սառած մտիկ անելոն, թե էս մարդը գի՞ժ ա, ի՞նչ ա. էդ թավուր ջահել-ջիվան տղի վրեն լաց ըլնելու տեղակ՝ էկել ա ուրախանում, հաղ անում։ Ընենց էլ թագավորի տղեն մնացել էր արմացած նոքարի վրեն. ուզում էր խոսա, հարցնի տենա՝ խի՞ ա ըտենց անում, համա ի՛նչ ասես՝ մի հետ խոսք էր տվե, որ ինչ անի՝ անի, ձեն-ծպտոն չհանի. սրա համար էլ սուս կացավ, ասեց՝ տենամ վերջն ի՞նչ ա ըլնում։

Դշերն էդ գեղումը կացան, առավոտը լիսը բացվեց թե չէ, վե կացան գնացին իրանց ճամփեն։ Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, հասան մի ուրիշ տեղ, ըտե վեր էկան։ Տեհան ըտե էլ մի ծեր, գզրզված մարդի հրեն տանում են թաղելու։ Դե չունքի ծեր էր, մեռլավորը ըսկի լաց էլ չէր ըլնում։ Նոքարն էս տեհավ թե չէ, էլի տեղիցը վե կացավ, գնաց ընկավ էդ մեռլի աղաքը, լաց ըլնելոն, գլխին ծեծելոն, սուգ ու շիվան անելոն էկավ ընչանք գերեզմաննները. կացավ ընչանք թաղեցին, պրծան, նո՛ր ինքն էլ մեռլավորի հեննա թողաց եղ էկավ։ Խալխը մնացել ին մաթ էլած, թե էդ մարդն ո՞վ ա, որ քոմմքից շատ ա մրղկտում էդ ծեր, գզրզված

մարդի համար։ Ընենց էլ թագավորի տղեն էս քոմմա տենում էր, համա չէր կարում խոսա, հարցնի տենա էս ի՞նչ բաս ա, խի՞ ա ըտենց անում։

«Աղպե՛ր,— միտք էր անում թագավորի տղեն,— սրանից աղաք էն գեղումը մի ջահել-ջիվան տղա ին թաղում, խալխը քոմմա լաց ին ըլնում, գլխներին վա՛յ տալի, սուգ ու շիվան անում՝ սա ուրախանում, ծիծաղում էր, ըսկի վեջն էլ չէր։ Համի էս ծեր, հարիր տարեկան մարդի համար, որ հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե՝ էսքամ դարտ ա անում. մախլա՛ս, չեմ գիտա էս ի՞նչ թավուր մարդի ռաստ էկա։ Խոսամ՝ չիլնի, չունքի մի հետ խոսք եմ տվե. չխոսամ՝ սիրտս ա ճաքում։ Էլի լավն էն ա,—ասեց,—սուս կենամ, հենց ինչ ուզում ա անի. տենամ սրա տուտը ո՞րդի ա կտրվում»։

Առավոտը աղոթարանը բացվեց թե չէ, էդ գեղիցը դուս էկան ընկան ճամփա։ Էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, գշեր, ցերեկ գնացին՝ հասան մի ուրիշ գեղ։ Էս գեղումը դրանց բախտիցը հարսանիք ա ըլնում։ Հարսանքատերը գալիս ա սրանց էլա հարսանիք կանչում. ասում ա՝ ղարիբ մարդիկ են, թո՛ղ գան մի քիչ ուրախանան։ Թագավորի տղեն իրա նոքարի հեննա վեր ա կենում, էթում հարսանիք։ Հացի վախտը բերում են հացը քցում, ամանըքով կիրակրները իրար ենուց բերում դնում հարսանքավորի աղաքը։ Ուտում են, խմում, քեֆ, ուրախություն անում։ Հացը որ սլրծնում ա, էդ նոքարը ուսուլով ամանըքանցից մինը վեր ա ունում, դնում փեշի տակը։ Թագավորի տղեն էս տենում ա, համա չի խոսում. ասում ա՝ տենամ ի՛նչ պտի հանի էդ ամանի գլուխը։ Գալիս են հացը հավաքում, աման-չաման կիտում, տանում. նոքարը փեշի տակիցը ամանը չի հանում, կենում ա ընչանք հարսանիքը սլրծնում ա, ամեն մարդ վեր ա կենում էթում իրա տունը, նա էլ թագավորի տղի հեննա թողում ա հարսանքատունը, դուս գալի, էթում։ Թագավորի տղեն էս հետ էլ ձեն-ծպտուն չի հանում. ասում ա՝ «Տենամ սրա վերջն ինչ ա ըլնում»։ Որ լուսացավ թե չէ, էս գեղիցն էլ դուս էկան, ընկան ճամփա։

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասան էն քաղաքը, որդն թագավորի տղեն պտի իրա խրիդն աներ։

Հենց քաղաքին հասվեհաս ին, նոքարն ասեց.— Աղա՛, հրես

մննում ենք քաղաքը. ես դիտամ պտի էթաս ընդհան թագավորի կուշտը։ Ընենց չի՞։

— Հա՛,— ասեց թագավորի տղեն,— հալբաթ պտի էթամ. աղաթ ա, ո՛նց կըլնի չէթամ։

— Բաս որ կէթաս թագավորի կուշտը,—ասեց նոքարը,—մարդ ա, որ կհարցնի. «Իմ քաղաքը ոնց ա, հավանո՞ւմ ես, թե չէ», դու կասես. «Թագա՛վորն ապրած կենա, քաղաքդ շա՛տ լավ քաղաք ա, արար աշխարքում հատը չի գտնվի, համա ափսո՛ս մի բանը փիս ա, որ բստիան մի ծանդր ֆոտ ա գալի, որ թաղա էկողի պնչին ալրիալը դիպնում ա»։

— Լա՛վ, որ ասեմ, սրանից ի՞նչ դուս կգա։

— Սրանից էն դուս կգա,— ասեց նոքարը,— որ էդ թագավորը մի աղջիկ ունի, էս երեսուն տարի տեղով, բարձով հիվանդ ա։ Աշխարումն էլ հեքիմ չեն թողե՝ բերել են, ինչ արել են, չեն արե՝ դրան լավանալու ճար, իլլաճ չի էլե։ Էդ աղջկանից էլ ընե՞նց մի փիս ֆոտ ա գալի, ընե՞նց մի փիս ֆոտ ա գալի, որ ֆոտը մարդ ա վեն քցում, սաղ երկիրը դրա ֆոտը վեր ա կալե, թողե։ Ճարները կտրած,— ասեց,— բերել են քառասուն գազանոց ֆոր են քանդե, աղջկանը քցե ընդե, որ ֆոտը մարդ չըսպանի։ Որ դու կհարցնես,— ասեց,— թագավորը կասի. «Ղո՛րթ ա, ըսե՛նց, ըսե՛նց մի աղջիկ ունեմ», դու կասես. «Թագավո՛րն ապրած կենա, ես մի ընկեր ունեմ, նա կլավացնի»։ Նո՛ր կգաս,— ասեց,— ինձ կտանես, կէթամ կլավացնեմ։ Էն վախտը թագավորից ի՛նչ ուզենք՝ չի խնայի, կտա։

— Լա՛վ,— ասեց թագավորի տղեն,— ըտե՛նց կանեմ։

Գալիս են մննում քաղաքը, մի քարվանսարում վեն գալի, օթախ քրեհում, կենում, իրանց առուտուրի հեննա ըլնում։ Օրեն մի օրը, թագավորի տղեն լավ-լավ փեշքաշներ ա վեր ունում, վե կենում էթում ընդհան թագավորի կուշտը։ Էթում ա դո՛ւռ մննում թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Ո՞րդիան ես գալի. ի՞նչ մարդ ես, խի՞ ես էկե,— հարցնում ա թագավորը։

— Ֆլա՛ն երկրիցը, ֆլա՛ն թագավորի տղեն եմ,— ասում ա,— էկել եմ ապրանքի։— Ասում ա ու բերած փեշքաշները հանում, գնում թագավորի աղաքը։

— Բարո՛վ, հաղա՛ր բարին ես էկե,— ասում ա թագավորը,—

գլխիս վրեն տեղ ունես. է՛, դու էն ասա՝ իմ քաղաքը ո՞նց ա, հավանո՞ւմ ես։

— Թագավո՛րն ապրած կենա,— ասում ա տղեն,— խոսք չունեմ, քաղաքդ շա՛տ լավ քաղաք ա, համա ափսո՛ս ըստիան մի ծանդր ֆոտ ա գալի՝ իսանի՞ ֆոտ ա, թե չանավարի՝ չեմ գիտա։

— Քեզանից պահեմ՝ ասսանից ի՞նչ պահեմ,— ասում ա թագավորը,— մի աղջիկ ունեմ, էս թամամ երեսուն տարի տեղով, բարձով հիվանդ ա։ Աշխարքումն էլ հեքիմ չմնաց, հեքիմբաշի չմնաց՝ բերինք, չկարացին լավացնի. ի՞նչ դեղ անիլ, ի՞նչ դարման անիլ՝ ճար, իլլաճ չէլավ, ընչանք հմի էլ յորղանին քացի ա տալի։ Վերջը որ շատ դեղ ու դիր արինք, տեհանք չիլնում, բերինք մի քառասուն գազանոց ֆոր քանդիլ տվինք, նրան յորղան-դոշակով տարանք դրինք ընդե, որ ֆոտը աշխար չվեր ունի. ընչանք աստոծ հալբա՛թ յա դե՛ս կկտրի, յա դե՛ն։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— ես մի ընկեր ունեմ, որ աղջկանդ տենա թե չէ՝ ալրիալը կլավացնի։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ. թե չլավացրեց՝ մեր արինը քեզ հալալ ա։

— Բա՛ս ըտենց ա, գնա՛ էս սհաթին կանչա՛ գա. Թե լավացրեց, ի՛նչ ուզենա՝ կտամ. ընչանք թագավորությունիս կեսն էլ ուզի, իմաց կաց չեմ խնայի՝ կտամ։

— Ա՛յքիս վրեն, թագա՛վորն ապրած կենա. էթամ կանչեմ։

Էթում ա նոքարին վեր ունում, բերում թագավորի ամարաթը։

— Տղա՛,— հարցնում ա թագավորը,— իմ աղջկանը կա՞րաս լավացնի։

— Կա՛րամ, թագա՛վորն ապրած կենա, խի՞ չեմ կարա,— ասում ա նոքարը։

— Նա՛զիր-վեզի՛ր,— ձեն ա տալի թագավորը,— գնացեք էս սհաթին աղջկանս հանե՛ք, բերե՛ք ըստե։

Նազիր-վեզիրն էթում են ֆորի բերանը բաց անում, պարանը կախ տալի, աղջկանը քաշում, հանում, բերում։

Նոքարն էթում ա աղջկա կռնիցը բռնում ա թե չէ, էն սհաթը աղջիկը տեղիցը վեր ա կենում, ընդե կաննում, սաղանում, ըլնում ոնց որ մորեն մին։ Թագավորը, նազիր-վեզիրը քոմմա մնում են մաթ էլած մտիկ անելոն։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— ուզա՛, տամ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— դու սաղ ըլնես, ինչ տաս՝ ղա՛բուլ եմ։

— Ղարո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ։

— Բա՛ս իմ աղչիկը քեզ եմ տալի,— ասում ա թագավորը,— հալբա՛թ աստոծ նրան քե՛զ էր ղսմաթ արե. տա՛ր, մորդ կաթի նման հալալ ըլնի։

Թագավորը բերում ա էն սհաթը նոքարի հեննա նշան դնում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։ Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛ւն, որ էլ հալ ու հեսաբ չկար։ Աղչկա վրեն էլ լա՛վ բաժինք, լա՛վ փող ա դնում, որ օխտը պորտով ուտեին՝ չէր հատնի։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— չե՞ս գա մնա իմ կշտին, զաթի ես էլ տղա չունեմ, ինձանից եդը դո՛ւ կնստես թագավոր. ի՛նչ ունեմ, չունեմ՝ մա՛լ, դո՛լվաթ, խազինա՛, քոմմա քունը կըլնի։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես էլ մեր երկրումը տո՛ւն, տե՛ղ, հերնըմեր ունեմ, որ աչքները ճամփի ա, պտի էթամ նրանց հավարին հասնեմ։

— Դո՛ւ դիտաս,— ասում ա թագավորը,— որ չես կարա, գնա՛, աստոծ քեզ հետ։ Էրկսով մի բարձի ծերանաք, ո՛րդիք, ապրե՛ք, զորանա՛ք. ծլե՛ք, ծաղկե՛ք, կանանչե՛ք, բարով որդկերանց, թոռների տեր դառնաք։

Թաղափեսին ու հարսին ըստե մի լա՛վ օրհնանք ա տալի, ճամփու դնում։

Թագավորի տղեն էլ իրա առուտուրն անում ա, պրծնում, վե կենում քոչ ու բարխանա են կապում, բարձում ձիանիքը, նոքարի հեննա ընկնում ճամփա՝ դպա հոր քաղաքը։ Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ դիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շարաթ, իրեք շարաթ, մախլասի՝ մի ամիս, հենց հոր քաղաքին հասվհաս են ըլնում, ըստե թագավորի տղեն կպնում ա նոքարի յախեն։

— Քեզ մի բան եմ ուզում հարցնի,— ասում ա,— համա պտի դրուստն ասես, հա՛։

— Կասեմ, խի՞ չեմ ասի,— ասում ա նոքարը։

— Մի՞տդ ա, որ հորս քաղաքիցը նոր ինք ճամփա դուս էկե. էկանք, էկանք՝ մի գեղի կշտի վեր էկանք։ Ըտե մի ջահել-ջիվան տղա ին տանում թաղելու, մեռլատերերը քոմմա լաց ին ըլնում, դու

գնացիր աղաք ընկար, ծիծաղելոն, ուրախանալոն տարար ընչանք գերեզմաններըւ Ասա տենամ՝ խի՞ իր ըտենց անում. լաց ըլնելու տեղակ՝ խի՞ իր էնքամ ուրախանում։

— Աղա՛ ջան,— ասում ա նոքարը.— ես ընդուր ի ուրախանում, որ էդ տղի ֆոգին արդար էր, պտի էթար արքայությունի փայ ըլներ։ Խալխը որ լաց ին ըլնում, անխելք ին, էսքամը չին հասկանում։

— Լա՛վ, էդ էդ։ Բա որ ըտիան գնացինք մի ուրիշ գեղ, ընդե էլ մի ծեր, գզրզված մարդ ին տանում թաղելու՝ նրա վրեն խի՞ իր էնքամ սուգ ու շիվան անում, լաց ըլնում. մի բան որ նրա հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե՝ հենց նրա հալալ մեռնելու վախտն էր։

— Աղա՛ ջան, էն ծեր մարդի համար ես ընդուր ի լաց ըլնում, որ նրա մեղքը շատ էր, հենց ոտով-գլխով պտի էթար դժոխքի կրակի միջին էրվեր, փոթոթվեր։ Խալխը անխելք ին՝ չին հասկանում, թե չէ նրանք էլ ինձ հեննա լաց կըլնեին։

— Շա՛տ լավ, ըս էլ դեն դնենք։ Բա որ ընդիան գնացինք մի ուրիշ գեղ, ընդե էկան մեզ հարսանիք կանչեցին, վե կացանք գնացինք. որ հաց կերանք պրծանք, դու խի՞ նրանց մի ամանը գողացար։

— Աղա՛ ջան, էդ հարսանքատանը ինչ կար, չկար՝ քոմմա հալալ աշխատանքով էր արած. համա էդ մի ամանը գողանովի էր։ Ընդուր համար էլ ես վե կալա, բերի՝ որ հալալը հարամի հեննա չխառնվի։ Ըս էլ ըսենց։ Դե ասա՛ տենամ, աղա՛ ջան, է՞լ բան ես ուզում հարցնի, թե պրծար։

— Պրծա՛,— ասեց,— հենց ըստոնք ին, որ ասեցի։

— Դու պրծար, աղա՛ ջան, դե հմի էլ թո՛ղ ե՛ս ասեմ։

— Ասա՛,— ասեց թագավորի տղեն։

— Աղա ջան,— ասեց,— քու էլ մի՞տն ա, որ մի օր էկար մեյդանը, տեհար մի մեռել քցել են գետինը, հենց ով հասնում ա՝ տալիս ա։ Հարցրիր. «Ախի՞ էք տալի»։ Ասեցին. «Մեզ փող ա տալու, սաղ վախտը չկարացինք առնի, հմի մեռել ա, ծեծում ենք, որ մեր փողի ինադը նրանից հաննենք»։ Դու էն սհաթը հաննեցիր քոմմքի պարտքը տվիր, գնացիր տերտեր կանչեցիր, տարար քու ծախսովը թաղիլ տվիր։ Ես որ կամ,— ասեց,— էն մեռլի Հրեշտակն եմ. ասու հրամանովը ես էկա քեզ նոքար էլա, որ քու արած լավությունի

տեղակ ես էլ քեզ մի ուրիշ լավություն անեմ։ Հրես ա՛ռ,— ասեց,— էս աղջիկն էլ քեզ, էսքամ մալ ու դոլվաթն էլ քեզ, տա՛ր, մորդ կաթի նման հալալ ըլնի։ Դե մնա՛ս բարին. ես էթում եմ էլ եդ իմ տեղը։

Հրեշտակն էս ասեց թե չէ՝ տղի աչքին էլ չերևաց։ Խեղճը մնաց ննջուցը մտիկ անելոն։ Շատ որ մտիկ տվեց, տեհավ չէ՝ չկա, Հրեշտակն անէրևութք էլավ, վե կացավ էկավ հոր քաղաքը, ինչ որ պխովը անց էր կացե՝ նստեց հորը մին-մին նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի։ Հերը էն սհաթը էդ բերած աղջիկը տվեց տղին՝ օխտան օր, օխտը գշեր հարսանիք արեց։ Նո՛ր թագադան դա՞փ, զուռնա՞, բե՞ֆ, ուրախությո՞ւն, որ, ով գիտա, ընչանք հմի էլ չի պրծե։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինն՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



17· ԱՂՎԵՍԸ, ԳԵԼԸ, ԱՐԱԶԸ ՈՒ ԶՄՌՈՒՏ–ՂՈՒՇԸ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր. էս թագավորը հայ ա ըլնում։ Սա ունենում ա ալեյի-մալեյի մի տղա՝ ըն էլ մի բեքյարա, անպետք տղա, որ ամեն աստու օրը, առավոտը լիսը բացվում էր թե չէ՝ նետուանեղը վեր էր ունում, էթում ավդուշ, իրիկունը գալի տուն։ Խեղճ հերը ինչ բանի դնում էր՝ չէր կենում, մի հետ բեդռլվաթ սովորել էր։

Հոր սիրտը չը վե կալավ, որ իրա տղեն ըսենց ավարա մանգա. մի օր ասեց, որ գլուխը վեր ունի, մի դհով էթա՝ իրա համար ապրուստ գտնի։ Նրան մի լավ նետուանեղ տվեց, ճամփի համար պաշար ու տանից դուս արեց։

Տղեն ա՝ հոր ձեռը պաչեց, վե կացավ, գնաց։ Գնա՛ց, գնա՛ց, շատն ու քիչն աստոծ գիտա, հնասավ մի մեշա. ըստե իրա համար տուն շինեց, միջին կացավ։ Ոնց որ աղաք, համի էլ ավչություն էր անում, իրա գլուխը պահում։ Բերած ավից ի՛նչ ուտում էր՝ ուտում, ինչ չէ՝ լա՛վ աղ էր անում, տանում իրա գերզամբում կախ տալի, որ չֆոտի, խարաբ ըլնի։

Ըսենց մի տարի կացավ էս մեշումը։ Մի տարի էլ սա՛ղ աշխարքը սով ընկավ. սո՛վ եմ ասում, էնթավուր սով, որ աստոծ փրկի, աղատի. հերը որդուն էր ուտում, աղպերը՝ աղպորը, բարեկամը՝ բարեկամին. մի խոսքով, ո՛վ ում ձեռն էր ընկնում՝ նրան

էլ պրծնում չկար, սաղ-սաղ պտի ուտեր։ Սովածությունից ջանավարները ընկել ին մեշնքը չափչփում, բալի ձեռները զադ-մադ ընկնի՝ ուտեն, սովից չսատկոտենն։

Մի օր Աղվեսը սոված, փորը վեց-վեց անելոն էս ավչու մեշի միջովը անց էր կենում։ Տեհավ մեշումը մի տուն ա շինած, ինքն իրան ասեց. «Հալրա՛թ ըստե մարդ ա կենում, էթամ տենամ. բալքի կարենամ փորս նուրթ-մուրթ քցիմ։ Աղվեսը կամաց-կամաց մոտացավ տանը. ֆոտ քաշեց, տեհավ մսի ֆոտ ա գալի։ Դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ՝ մի պուճուր ծակ գտավ. էդ ծակովը ուսուվով սլլաց ղերդամբին։ Ի՞նչ տենա՝ լա՛վ-լա՛վ մարալներ, ջեյրաններ մորթոտած՝ պատիցը կախ արած։ Ջաթի նա էլ էսթավուր զադի էր մանգալի. վրա պրծավ, մի լավ կուշտ, կուռ կերավ. հենց էն ա ուզում էր էն ծակովը էլ եդ դուս գա՝ ավչին, որդիան որ էր, զերզամբու դուռը բաց արեց, տեհավ Աղվեսն ընդե։ Նետուանեղը քաշեց որ սա, տեղն ու տեղը չորացնի՝ Աղվեսն էկավ ընկավ նրա ոննները։

— Ամմա՛ն,— ասեց,— ա՛սու սիրուն, թադավորի ցեղ. ինձ մի՛ սրպանի. աշխարը սով ա ընկե, քու արևի սադաղին ըլնի, ինձ մի ճար արա՛։ Ինչ ղուլլուղ ուզում ես կանեմ, թաքիլան օրական ինձ մի կտոր միս տաս, կշտիդ պահես. մի՛ վախի, ես ղիան տվող ջանավարներիցը չեմ։

— Լա՛վ,— ասեց ավչին,— թե որ դու ղիան տվող ջանավար չե՛ս, կենում ես՝ կա՛ց, համա պտի տանս լա՛վ մուղաթ կենաս, հա՛։

— Ջո՛ւստ աչքիս վրեն, թադավորի ցեղը սաղ ըլնի, լա՛վ մուղաթ կկենամ,— ասեց Աղվեսը։

Աղվեսի բախտը լավ էր բանե. ամեն օր կուշտ, կուռ ավի միսը ուտում էր, դուս գալի արևի տակին իրա քեֆին թոնթռի տալի, էն ի՛նչ մեկել ջանավարները սաղ շաբաթներով մանգալի՝ ձեռները զադ չէր ընկնում։

Մի օր էլ, Աղվեսը լսենց փորը կուշտ, արևի տակին թոնթռի էր տալի, Գելը էն դհից տեհավ։— Ա՛յ հարա՛յ,— ասաց,— էս ինչ բաս ա. սա՛ղ աշխարքը սով ա ընկե, մենք սովածությունից կոտորվում ենք՝ սա էնքամ կուշտ ա, որ դեռ հլա իրա քեֆին թոնթռի էլ ա տալի։ Հրե՛ս հաղիր ձեռս ա ընկե, էթամ բռնեմ, ուտեմ՝ մի փորս կշտանա, է՛։

Էս ասեց թե չէ՝ մոտացավ Աղվեսին. ուզում էր սաղ-սաղ կուլ տա, Աղվեսն ասեց.— էլ ի՞նձ խի ես ուտում, Գե՛լ աղպեր. հազիր

արի՛ ես քեզ էնթավուր տեղ տանեմ, որ ուտելուն չկարենաս հատացնի։

Գելը ղաբուլ էլավ, նրան էլ ձեռ չտվեց։ Գելին տարավ դուռ թագավորի տղի զերզամբին։

— Հրե՛սիկ,— ասեց Աղվեսը,— ինչքամ ուզում ես՝ կե՛. քե կուռդ բռնող ըլնի, էն վախտն ասա։

Գելը ուրախ-ուրախ վրա պրծավ մսերին։ Էլ ի՛նչ ասիլ կուզի, սուված, նախից ընկած՝ ոսկոռ-մոսկոռ չէր հարցնում, հենց սաղ-սաղ էր կուլ տալի։ Համա խեղճի բախտիցը, մի քիչ չանցկացավ՝ թագավորի տղեն զերզամբու դուռը բաց արեց, տեհավ մի Գել ա ղոնաղ էկե։ Նետուանեղը քաշեց, որ տա Գելին տեղն ու տեղը չըղնամիշ անի, սատկացնի, Աղվեսը չթողաց։

— Բա՛ն չկա,— ասեց,— թո՛ղ սա էլ մնա քու տանը. սա էլ պիան տվող ջանավարներից չի, հազիր դհա լավ, հեննես տանը մուղաթ կկենա։

— Լա՛վ,— ասեց թագավորի տղեն,— քե որ դա էլ պիան տվող ջանավար չի՝ մնում ա, թո՛ղ մնա։

Աղվեսն ու Գելը ընենց սիրով ին ապրում, ոնց որ հալալ աղպըրտինք։ Փորները կուշտ, ամեն օր դուս ին գալի արևի տակը, իրար քըլըմստորում, հաղ անում, էլի իրիկոմը էթում տուն։ Մի օր էլ էրկսով ըսենց արևի տակին հաղ ին անում, որդիան որ էր՝ մի սուված Արջ էն դհիցը ատամները ղրճտացնելոն դուս էկավ։ Սրանց տեհավ քե չէ՛ վրա վազեց, որ էրկսին էլ մի հանքի ուտի՝ Աղվեսը մուննաթ, աղաչանք, պաղատանք.— Ա՛րջ աղպեր,— ասեց,— դու մեզ խի՞ ես ուտում. հազիր արի մենք քեզ էնթավուր տեղ տանենք, որ միս ուտելոն լեթվես։

— Լա՛վ,— ասեց Արջը,— քե որ ինձ ըտենց մի լավություն անեք, ձեզ էլ խի եմ ուտում։

Արջին տարան թագավորի տղի զերզամբումը կաննացրին։ Խեղճը սաղ շաբաթ սուված՝ ըսկի մսի էրես չէր տեհե. վրա պրծավ մսերի ջանին։ Մի դհիցը ուտում էր, մի դհիցը ասում. «Օխա՛յ, անջախ մի փորա նութ ընկավ. ախա՛ր ես մեռա էսթավուր զադի մանգալոն, է՛»։

Մի ղաֆիլ, էն դհիցը թագավորի տղեն զերզամբու դուռը բաց արեց, նի մտավ. տեհավ ըսօր էլ ա մի թաղա ղոնաղ ավելացե։ Նետուանեղը քաշեց, որ տա Արջին տեղն ու տեղը սըպանի, Աղվեսը չթողաց։

— Թագավորի ցեղն ապրած կենա,— ասեց,— սա էլ ղիան տվող ջանավար չի, Թո՛ղ քու արևի սադաղին ըստե կենա, սովածությունից չսատկի. իրեքով տանդ դհա՛ լավ մուղաթ կկենանք։

— Լա՛վ,— ասեց թագավորի տղեն,— Թե որ ղիան տվող ջանավար չի՝ մնում ա, Թո՛ղ մնա։

Էս հետ իրեք ֆոդի էլան։ Իրար հեննա ուտում ին, խմում, էթում արևի տակին տըռճնկի տալի, հաղ անում, օր մթնացնում, ըսկի վեջները չէր, Թե աշխարումը սուվ կա։

Ջմռուտ-ղուշը՝ ղշերի թագավորը, էն դհիցը էկավ՝ դոռալո՛ն, ծվալո՛ն, դադ-բեդադ քցելո՛ն, տեհավ էս իրեքով արևի տակին հրեն Թոնթռի են տալի։ Վրա պրծավ, որ իրեքին էլ մի կտցելումը վեր ունի տանի՝ Աղվեսը էլի աղաչանք, պաղատանքն ընկավ։

— Ջմռո՛ւտ-ղուշ,— ասեց,— դու արի՛ մեզ ձեռը մի տա, մեղք ենք. հազիր արի մենք քեզ էնթավուր մսի տեղ շանց տանք, որ հա՛ ուտես, հա՛ ուտես՝ ըսկի չհատնի։

— Լա՛վ,— ասեց Ջմռուտ-ղուշը,— շանց տվեք, տենա՛մ։

Սրան էլ վե կալան, տարան դուզ թագավորի տղի ղերզամբին։

Ջմռուտ-ղուշը, քանի իշտահը տալիս էր՝ կերավ, կշտացավ հենց էն ա ուղում էր դուս գա, էթա՝ թագավորի տղեն ղերզամբու դուռը բաց արեց, նի մտավ. տեհավ ըսօր էլ ա մի Թաղա ղոնաղ ավելացե։ Նետուանեղը քաշեց, որ տա Ջմռուտ-ղշին տեղն ու տեղը սատկացնի, էլի Աղվեսը մեջ ընկավ, աղաչանք արեց։

— Աստո՛ւ սիրուն,— ասեց,— թագավորի ցեղ. քու արևի սադաղին Թո՛ղ էս սոված ղուշն էլ մնա մեր կշտին. սա էլ քու ասած ղիան տվող ջանավարներից չի. չորս ֆոդով տանդ դհա՛ լավ մուղաթ կկենանք։

— Լա՛վ,— ասեց թագավորի տղեն,— Թե որ ղիան տվող ջանավար չի՝ կենում ա, Թո՛ղ կենա։

Աղվեսը, Գելը, Արջը ու Ջմռուտ-ղուշը սա՛ղ օխտը տարի կացան թագավորի տղի կշտին։ Սովը որ անցկացավ, աշխարը հանդարտեց՝ միտք արին, որ էթան թագավորի տղիցը իղին առնեն, էթան իրանց բանին։

Ամա Աղվեսն ասեց.— Էսքամ տարի էն մարդը մեզ պահել, պահպանել ա, սովից պրծացրե. բա՛ մենք դրան մի լավություն էլ ա չա՞նենք։ Հազիր կնիկ չունի, էկե՛ք էթանք Տրապիզոնա Թա-

գավորի աղջիկը բերենք սրան կնիկ. չունքի լսել եմ՝ նրա աղջիկը շատ սիրուն, գովական աղջիկ ա։

— Լա՛վ,— ձեն տվին քոմմքով էլ,— է՛թանք։— Խոսքերը մին արին, վե կացան գնացին։

Գնա՛ցին, գնա՛ցին, շատն ու քիչն աստոծ գիտա, հասան Տրապիզոնա քաղաքը։ Ընդհան թագավորը իրա ամարաթից մխելի հնոու վար ու ցանք ուներ. նրա նոքարները ընդե վար ին անում։ Ճաշվա էն ճռճռան շոքին, որ գութանը բաց ին թողե, Աղվեսը տարավ իրա ընկորտանցը լծեց գութանը. Գելին՝ հորի, Արջին՝ ամբոլ, ինքն էլ գութանի մաչը բռնեց։ Ջմռուտ-ղուշն էլ երկնքի էրեսին թևերը բաց արած՝ կացել էր։ Թագավորի նոքարները որ եդ թամաշ արին, տեհան էս ջանավարները մի դհիցը վար են անում, մի դհիցն էլ, «Հոռովելե՛» ձեն տալի՝ լեղիները ջուր կտրեց. թողին, գնացին թագավորին իմաց արին, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց բան։

Թագավորը, նրա կնիկը, աղջիկը դուս էկան բալկոնը թամաշա՝ տենան էս ջանավարները ո՞նց ին վար անում։ Ջմռուտ-ղուշը էն սհաթը բանձրից վեր էկավ, թագավորի աղջկանը վե կալավ, դրեց մեջքին ու թռավ։ Հազար ձեն տվին եննուցը թե՝ «Տարա՛վ, տարա՛վ. բռնե՛ք հա, բռնե՛ք», համա էլ ո՞ւր՝ տանողը տարավ, պրծավ։ Աղվեսը, Արջն ու Գելը տեհան, որ Ջմռուտ-ղուշը աղջկանը թռցրեց, իրանք էլ թողին գութանը ու պուկ էլան։ Տարան, տարան դուզ իրանց թագավորի կշտին վե դրին։

— Թագավորի տղե՛ն ապրած կենա,— ասեցին,— քեզ համար կնիկ ենք բերե։

Թագավորի տղեն մնաց զարմացած, թե նրանք ո՞րդիան գնացին բերին էս հուրի-փարի աղջիկը։ Նոր Աղվեսը նաղլ արեց, ո՞նց գնացին Տրապիզոն, ի՞նչ ֆանդ ու ֆելով փախցրին թագավորի աղջկանը։

— Բա՛ առանց տերտերի ո՞նց պտի անենք,— ասեց թագավորի տղեն,— չունքի մեր մեջը ադաթ կա, որ տղին ու աղջկանը տերտերը պտի պսակի, որ նոր հալալ մարդ ու կնիկ ըլնեն։

— Թե բա՛ս ըսենց ա,— ասեց Աղվեսը,— էթանք մի տեղան մի տերտեր բերենք՝ պսակի։

Ջորսով վե կացան գնացին մոտիկ գեղերանցից մի տերտեր փախցրին՝ բերին նրանց պսակիլ տվին, էլ եդ բաց թողին, գնաց իրա բանին։

Չեմ գիտում ո՞նց ա ըլնում, Տրապիզոնա թագավորի անկաջն ա ընկնում, թե նրա աղջկանը ֆլան թագավորի տղեն ա փախցնիլ տվե, շինե իրան կնիկ ու ինքն էլ ֆլան մեշումն ա կենում։ Մենծ ղոշուն ա վեր ունում՝ գալի սրա վրեն կռիվ։

Թագավորի տղեն Տրապիզոնա թագավորի ղոշունը որ տենում ա՝ վախլությունից չի իմանում ո՞ր ծակը մննի։

Համա Աղվեսը նրան սիրտ ա տալի.— Թագավորի տղե՛ն ապրած կենա,— ասում ա,— դու ըսկի կռվի մի խառնըվի, մենք գիտանք՝ ո՛նց կանենք։

Արջը մի դհիցը, Գելը՝ մի, Աղվեսն ու Ջմռուտ-ղուշն էլ մի դհիցը, որ չթափեցին Տրապիզոնա թագավորի ղոշնի վրեն՝ սաղ ջարդ ու փշուր արին, հաղար մի դիհ քշեցին։ Ընչանք նո՛ր Տրապիզոնա թագավորը մարդ ա ղրկե, աղաչանք արե, թե ասսո՛ւ սիրուն, ինչ էլավ՝ էլավ, հերիք ա, աղջիկը նրան հալալ ըլնի, թաքիլան իրան դինջ թողա։ Նոր որ նրանք կռվիցը ղրաղ են քաշվե։

Սրանից եղը, չոմաքի էլ սուվը չկար, աշխարը լիություն էր ընկե, Աղվեսը, Գելը, Արջը ու Ջմռուտ-ղուշը գնացին թագավորի տղին դլուխ տվին, ասեցին.— Թագավորի տղե՛ն սաղ ըլնի, համի էլ հո աշխարը սուվ չի, ղուր տեղը վրեդ ծանրություն ենք ըլնում, ի՛նչ, մուրախաս արա՝ էթա՛նք մեր բանին։

Թագավորի տղեն սրանց մուրախաս արեց, գնացին։

Թագավորի տղեն սրանից եղը մեշի միջին մի քանի տարի էլ կացավ։ Համա վերջը տեհավ, որ մարդ ու կնիկ դառը, տխուր են անցկացնում իրանց օրը, ասեց՝ վե՛ կենա էթա հոր կուշտը, ընդե իրանց համար դհա՛ լավ կըլնի։

Ըսենց էլ արեց. կնկանը վե՛ կալավ, էկավ իրանց երկիրը, հոր հեննա բարշեց ու ընչանք վերջը նրա կշտին կացավ։

Ներանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։





18· ԳԱՌՆԻԿ–ԱՂՊԵՐ

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ. սրանք ունենում են էրկու էրեխա։ Համա էս էրեխեքը աղաքվա կնկանից են ըլնում. ընդուր հմար էլ էս եղի կնիկը դրանց ըսկի օր չէր տալի։ Ասենք կնիկը շատ էր զոռում մարդին, որ էդ էրեխեքանցը տանի մի դհով կորցնի, համա մարդը չէր լսում։

Մի օր էլ, աշունքը[1]*, մարդը սերմի ցորենը հազրում ա, որ առավոտը տանի արտը՝ ցանի։ Կնի՛կ դու կնիկ, գշերը վե կաց, սերմացու ցորենը աղանձա, էլ եղ լըրա ջվալը, որ մարդը տանի ցանի՝ դուս չգա։*

Մարդը առավոտը թեզ վեր ա կենում, սելը լծում, սերմացուն դնում վրեն, էթում արտը ցանում, եղ գալի. խեղճը ինչ ա իմանում կնկա սատանությունը՝ ինքը բեխաբար։

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս՝ խալխի արտերը կանանչում ա, էս մարդինը՝ չէ։

— Ա՛յ կնիկ,— կասի,— բաս էս ոնց պտի աննենք. խալխի ցորեններըը կանանչել ա, դեռ մի թզաչանք էլ գեննիցը բանձրացե՝ մերոնքը ըսկի ծկթել էլ չեն. էս ի՞նչ բաս պտի ըլնի։

Կնիկը կասի.— Ա՛յ մարդ. ես դրա դեղը գիտամ, թե արիր՝ իմաց կաց ցորենդ կկանանչի. թե չէ՝ հո չէ, էս տարի անհաց

---

[1] Տպագիր տեքստում՝ աշուեիին, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

կմնանք։ Տար էդ էրկու էրեխիդ՝ մինը արտի էս գլխին մորթա, մինը՝ էն. տես ո՞նց ա կանանչում. թե չկանանչի՝ ես տամ։

Մարդը կասի.— Ա՛յ քյաֆուր, ա՛յ անաստուծ, ես ո՛նց կղմրշեմ իմ աղիզ բալեքը տանեմ մորթոտեմ, որ ինչ ա՝ արտս պտի կանանչի։ Ջրհանդամի՛ն կանանչի, սև խավարի՛ն. որդկերանցիցս ձեռը վեր ունեմ, թե պտի ցորենս կանանչի՞։

— Դու գիտաս, ա՛յ մարդ, ես մի բան էր ասեցի, սրանից դենը քեֆը քունն ա, ի՛նչ կուզես արա՛. կուզես մորթա՛, կուզես չէ. դո՛ւ անհաց կմնաս, ի՛նձ ինչ։

Խեղճ մարդը մնացել էր էրկու կրակի միջին. էրեխեքանցը տաներ մորթեր՝ ձեռը չէր զորում. չմորթեր՝ ի՞նչ աներ, պտի սոված մեռնեին։ Վերջը միտք արեց, որ չսըպանի. հենց տանի չոլը, ընդե բաց թողա, գա. ի՞նչ կըլնեն՝ կըլնեն։

Ըտենց էլ անում ա։ Մի օր վեր ա ունում էրեխեքանցը, հենց տանում չոլը։

Ասում ա.— Ա՛յ որդիք, դուք ըտե կացեք, ես հրես գալիս եմ։

Ասում ա ու ինքը մի ուրիշ ճամփով եդ գալի տուն, նրանց թողում ընդե։

Քիր ու աղպեր մնում են մտիկ անելուն, թե էս ա՝ որդե որ ա իրանց հերը կգա։ Մնում են մի սհաթ, էրկու սհաթ՝ տենում են ո՛նչ հեր կա, ո՛նչ զադ։ Քիրը աղպորիցը մի պուճուր մենծ ա ըլնում. գլխի ա ընկնում, որ հերը բերել ա իրանց ըստե բաց թողնե, ինքը գնացե տուն։ Աղպորը վեր ա ունում, մի ճամփա բռնում, էթում։

Քիր ու աղպեր սոված, ծարավ մի քանի օր իրար վրա ճամփա են էթում։ Ճամփեքին էլ, որ ասես, առու, զադ չի ռաստ գալի, որ մի պուճուր ջուր էլ ա խմեն՝ ծարավու խեղճերը պատռվում ին։ Քիրը ասենք մենծ էր, ոնց որ ըլներ էլի կդիմանար, համա աղպերը չէր կարում դիմանա. ծարավու խեղճ աղպոր բերանը պապանձվել էր։

Գալիս են գալի, շատն ու քիչը աստուծ գիտա, աղպերը տենում ա ճամփին մի կովի պճղի տեղ՝ լիքը ջուր։

— Քո՛ւրիկ,— ասում ա,— էս պճղիցը մի քիչ ջուր չխմե՞մ. ախա՛ր ես ծարավ մեռա, է՛։

— Չէ՛, չէ՛, չէ՛, ա՛ղպեր ջան, մի՛ խմի, կով կդառնաս։ Մի քիչ էլ կա՛ց, էս ա որդե որ ա աղբուր ռաստ կգա՝ կխմես։

Մի քիչ գալիս են, գալի, աղպերը տենում ա մի ուղտի ոտի տեղ, մեջը լիքը ջուր։ Ուզում ա խմի, քիրը չի թողում, ասում ա.— Ուղտ կդառնաս։

Մի քիչ էլ գալիս են, տենում են մի ձիու ոտի տեղ՝ լիքը ջուր ա։ Աղպերն էլի ուզում ա խմի, քիրը էլի չի թողում, ասում ա.— Ձի կդառնաս։

Մա՛խլաս, ըսենց աղպերը որդե մի պուտ ջուր ա տենում, ուզում ա խմի՝ քիրը չի թողում։

Վերջը որ աղպոր ճարը կտրվում ա, ծարավու թուք ու մուքը կպչում, քվորիցը թաքուն մի գառան ոտի տեղից ջուր ա խմում, ըլնում մի սիրուն, նաշխուն գառ։ Քիրը եդ ա թամաշ անում, տենում ի՛նչ՝ աղպերը մի սիպտակ գառն ա դառե՝ եննուցը վազում. շատ ա լաց ըլնում, մըխկտում, համա էլ որդե՝ բանը բանից անց էր կացե։

Ըսենց սոված, ծարավ գալիս են գալի, շատ ու քիչն աստոծ գիտա, տենում են ճամփին մի աղբուր, կողքին էլ մի եքա չինարի ծառ։ Էս աղբրումը մի կուշտ ջուր են խմում, ծարավները կոտրում. եննա քիրը նի՛լնում ա էդ չինարու գլուխը, Գառնիկ-աղպերն էլ չինարու տակին արածում ա։

Էդ իրիկունը, թագավորի նոքարները ձիանիքը բերում են էդ աղբուրը ջրելու։ Ի՛նչ անում, են չեն անում՝ ձիանիքը ջուր չեն խմում։ Դու մի ասի՝ աղչկա շողքը ընկնում ա աղբրի մեջը՝ ձիանիքը հուշտ են ըլնում, ջուր չեն խմում։

Թագավորի նոքարները դե՛սն են մտիկ անում, դե՛նն են մտիկ անում, տենում են զադ չկա. մըն էլ որ գլխները չեն բանձրացնում, չինարուն մտիկ տալի, տենում են ի՛նչ՝ մի սիրուն, նաշխուն զադ ընդե ֆըրֆըրահար ա գալի. ձեն են տալի.— Ինս ես, ջինս ես, ջանավար ես՝ վեր արի, տե՛նանք։

Աղչիկը վե չի գալի։

Թագավորի նոքարները էթում են թագավորին իմաց անում, թե.— Թագավորն ապրած կենա, ձիանիքը տարանք աղբուրը ջրելու, ջուր չխմեցին՝ հուշտ ին ըլնում։ Վիրև մտիկ տվինք, տեհանք մի հրեշտակի նման սիրուն զադ չինարու վրեն. ինչքամ ձեն տվինք՝ վե չէկավ։ Չինարու տակին էլ մի սիպտակ, նաշխուն գառն էր արածում։

Թագավորը հրամայում ա, որ էթան, ո՛նց որ ըլնի, ծառիցը վեր բերեն, բերեն իրա կուշտը։ Էթում են, ինչքամ կանչում են. «Ինս ես, ջինս ես, ջանավար ես, վե՛ր արի», աղջիկը վեր չի գալի։

Ասում են.— Ջրհանդամը գյոռ, վեր չի գալի. էս նաշխուն գառն էլ ա տա՛նենք թագավորին։

Գառը որ աղաք են անում տանեն՝ էն սհաթը աղջիկը ծառիցը իրան վեր ա քցում։ Տենում են ի՞նչ՝ մի նաշխուն, ակն ու արեգակ, հուրի-մալաք աղջիկ. էնքա՛մ սիրուն, էնքա՛մ սիրուն, էնքա՛մ սիրուն, որ չուտես, չխմես, հենց նրա գյուլ-ջամալին թամաշ անես։ Նոր վեր են ունում էրկսին էլ՝ տանում թագավորի կուշտը։

Թագավորը հարցնում ա.— Ի՞նչ աղջիկ ես. մեն-մենակ էս դհերանք ի՞նչ ես շինում։

Նոր աղջիկը նաղլ ա անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Թագավորն էլ զաթի ազապ՝ բերում ա սրա հեննա[1] պսակվում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։

Թագավորի պալատումը մի պառավ կնիկ կար, որ նրա աղաքին քոճուբյուն էր անում։ Հարսանքից եղը, մի օր թագավորիցը իղին ա ուզում, ասում ա. «Տանեմ խանըմիս ծովումը լեղացնեմ՝ էլի բերեմ»։ Վեր ա ունում տանում. գառն էլ ենուցը վազ տալեն գալիս ա։ Պառավը աղջկա շորերը հանում ա, որ լեղացնի՝ բոթում ա քցում ծովը։

Բա՛ դու հմի արի տես, պառավը ինչ անում ա չի անում՝ գառանը չի կարում՝ ծովի ղրաղիցը տուն բերի՞։ Ծովի էս գլխիցը բըղըղալեն էթում ա էն գլուխը, էն գլխիցը գալիս էս գլուխը։ Նոր ի՞նչ հալով, զոռով, գյուջով, ծեծելոն գառին քշում ա ընդհան՝ բերում։

Ջադուքյար պառավը թագավորի կնկա շորերը վեր ա ունում տանում իրանց տունը. ինքը մի դարձըվորած, սև աղջիկ ա ունենում. նրա շորերը սրան ա հագցնում՝ տանում թագավորի պալատը. ասում ա.— Թագավորն ապրած կենա, հրես խանըմիս լեղացրի, բերի։

Թագավորն էլ չի իմանում, որ իրա կնիկը չի։

Անց ա կենում մի օր, էրկու օր, էս պառավի աղջիկը ղաստահիվանդ ա տալի՝ պառկում։

---

[1] Տպագիր տեքստում՝ վրա, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Թագավորը հարցնում ա.— Ա՛յ կնիկ, սիրտդ ի՞նչ ա ուզում, բերիլ տամ։

— Ըսկի զադ չէ՛. էն գառան մսիցը որ մի քանի թիքա ըլներ՝ կուտեի,— ասում ա պառավի աղջիկը։

— Բա՛ ասում ես քու հալալ աղպերն ա. հմի ղըմիշըդ ո՞նց ա գալի, որ ուզում ես մորթիլ տաս։

— Ի՞նչ անեմ, իմ ջանիցը հո՛ աղիզ չի. շատ էլ հալալ աղպերս ա, որ սիրտս նրա միսն ա ուզո՞ւմ։

Ասենք պառավի աղջիկը թագավորին շատ էր ղոռում, որ գառին մորթիլ տա, համա թագավորի հենց իրա ղըմիշը չէր գալի, որ էնքավուր նաշխուն, սիրուն գառին մորթի. իլլաքիմ որ գիտար՝ կնկա հալալ աղպերն ա։

Գառնիկ-աղպորը ըստե մնա՝ գանք խաբար տանք սրա քվորիցը՝

Պառավը որ նրան քցում ա ծովը՝ էն սհաթը մի Սիպտակ ձուկը վրա ա հասնում, կուլ տալի։ Ձկան փորումը որ իմանում ա, իրա Գառն-աղպորը ուզում են մորթի՝ ամեն օր, գշերվա ժամերի վախտին, որ ժամհարը ժամը տալիս ա ըլնում՝ ծովի միջիցը ձեն ա տալի. «Ժամհա՛ր, դու քու ժամը սիրես, թագավորին կասես՝ իմ Գառնիկ-աղպորը սուրը չքաշի»։

Ըսենց իրեք հետ, ժամհարը գշերվա ժամը տալիս լսում ա. «Ժամհա՛ր, դու քու ժամը սիրես, թագավորին կասես՝ իմ Գառնիկ-աղպորը սուրը չքաշի»։

Ժամհարը մնում ա զարմացած, թե էս ի՞նչ ձեն պտի ըլնի. վեր ա կենում էթում թագավորին նաղլ անում։

— Թագավորն ապրած կենա,— ասում ա,— ըս էլ իրեք հետ, գշերվա ժամը տալիս՝ ծովի միջիցը մի ձեն եմ լսում. «Ժամհա՛ր, դու քու ժամը կսիրես, թագավորին կասես՝ իմ Գառնիկ-աղպորը սուրը չքաշի»։ Ջեմ գիտա, էս ի՞նչ բաս ա։

— Լա՛վ,— ասում ա թագավորը,— էգուց գշերվա ժամը տալիս արի՝ ինձ էլ իմաց տու՝ գամ տենամ էդ ի՞նչ ձեն ա։

Ժամհարը գշերվա ժամը տալու վախտին, գալիս ա թագավորին կանչում։ Թագավորը ժամհարի հենենա գալիս ա ժամը. հենց որ ժամհարը ժամը տալիս ա թե չէ, լսում ա՝ ղորթ որ մինը ձեն ա

տալի. «Ժամհա՛ր, դու քու ժամը կսիրես, թագավորին կասես՝ իմ Գառնիկ-աղպորը սուրը չքաշի»։

Առավոտը որ կլիսանա, թագավորը կհրամայի, որ իրա երկրումը ինչքամ թռռչի կա՝ հավաքվեն ծովի ղրաղը թռռ քցեն։ Ինչքամ թռռչի կային՝ հավաքվում են, ծովը թռռ քցում. քցում են քցում՝ դուս ա գալի մի Սիպտակ ձուկ։ Ձկան փորը ճղիլ ա տալի, տենում ի՞նչ՝ իրա կնիկը ձկան փորումը։

Գառը քվորը որ տենում ա թե չէ՝ էն սհաթը ճանանչում ա. վազում ա փաթթվում ճտովը։ Փաթթվելու բաշտան՝ Գառը էլ եդ իսան ա դառնում[1]։

Թագավորը կնկանը վեր ա ունում տանում իրա պալատը։ Էն շադուքյար պառավին ու նրա աղչկանն էլ կապիլ ա տալի ղաթրի պոչիցը, որ տանի սա՛րով, քա՛րով, քո՛լով վե քցի, թիքա-թիքա անի՝ մենծ թիքեն անկաշը բերի։

Նրանք հասան իրա՛նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրազին։

---

1 Տպագիր տեքստում՝ ըլնում, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։





19· ՀԱՐՍՆԵՐՆ ՈՒ ՏԱԼԸ

Ըլնում ա չիլնում մի թագավոր։ Էդ թագավորին ունենում ա իրեք տղա, մի աղջիկ։ Թագավորի ծերացած ժամանակն ա ըլնում, կանչում ա իրա իրեք տղին, ասում ա.— Ա՛յ որդիք, ես մեռնում եմ, ձեզ մի վասիաթ ունեմ անելու։

Տղեքն ասում են.— Արա՛, ա՛յ հեր։

Ասում ա.— Իմ վասիաթը ձեզ էս ա, որ դուք իրեք աղպեր եք, մի քիր, էդ քվորը ընենց պտի պահեք, որ մի թոզ էլա չվեզա վրին։

Տղեքն ասում են.— Շա՛տ լավ, ա՛յ հեր, մենք իրեք աղպեր՝ մի քիր ունենք, էն էլ լավ չպահե՞նք։ Ընե՛նց պահենք, որ մեր աչքի լսիցն ավելի։

Հերն ասում ա.— Դե գնացե՛ք, աստված ձեզ օրշնի։

Հերը մեռնում ա։ Տանում են լավ հանդեսով թաղում են, գալիս են տուն, իրանց մենծ աղպորը դնում են հոր տեղը թագավոր։

Իրեք աղպերն էլ պսակված են ըլնում։ Ըդոնց սովորությունը ըլնում ա ավի գնալ։

Ինչ որ անում են, քվորը հարցնում են.— Ա՛յ քիր, էս քանը պտի անենք, անե՞նք թե չէ։ Քիրը հոժարանում էր՝ անում ին, հոժարանում չէր՝ չին անում։

Մի տարի, էրկու տարի, ըդոնց կնանիքը տեհան, որ իրանց

մարդիկը իրանց բանի տեղ չեն դնում, ուշը-մտքները քցել են քվոր վրա։ Էդ կնանիքը բախլեցին էդ աղչկանը, ուզեցան մի հնար անեն, որ աղչիկը աղպորտանց աչքիցն ընկնի։

Գնացին մի պառավի մոտ, ասեցին.— Պառա՛վ, քեղ կղնենք ղանթարի մի թայը, ոսկին կլցնենք մի թայը, մի հնար արա՛, էս աղչկանը քցենք իրա աղպորտանց աչքիցը։

Պառավն ասեց.— Գնացե՛ք, թագավորի տղերանցը իրեք հատ քյահլան ձի ունեն՝ դոմոմը կապած, քարը վե կալեք, տվեք մեկի ոտը կոտրեք, դուք էլ նոքիներդ կիտեք նստեք, ո՛նչ կիրակուր էփեք, ո՛նչ էլ տուն սրբեք, նոքիներդ կկիտեք կնստեք։ Կգան բարով կտան, բարովը չեք առնի։ Ընդոնք կհարցնեն, թե. «Ի՞նչ ա էլե, մեր բարովը չեք առնում»։ Ընդե դուք ասեք. «Դուք էլ չըլնեք, ձեր քիրն էլ. ընքան էրես եք տվե, որ չենք կարում մի բան ասի։ Ասեցինք՝ էրեխեն ջուր ա ուզում, փառչը լցրա տո՛ւ, նա ինադ արեց, քարը վե կալավ, գնաց մտավ դոմը, տվեց քյահլան ձիու ոտը կոտրեց»։ Դրանով էլ էդ աղչիկը աղպորտանց աչքիցը կընկնի։

Կնանիքը եդ դառան տուն, գնացին քարը վե կալան, գնացին դոմը, տվեցին ձիու ոտը կոտրեցին, եդ դառան տուն, իրեքով էլ նոքիները կիտեցին նստեցին, ո՛նչ տուն սրբեցին, ո՛նչ կիրակուր էփեցին։

Իրիկունը մարդիկն էկան տուն, տեհան, որ կնանիքը նոքիները կիտած նստած են։ Բարով տվեցին, բարովները չառան կնանիքը։

Տղեքը հարցրին.— Էդ ի՞նչ խաբար ա, որ ո՛նչ կիրակուր էք էփե, ո՛նչ տուն եք սրբե, բարով ենք տալի, մեր բարովն էլ չեք առնում, ի՞նչ ա էլե, ասե՛ք, տենանք։

Կնանիքը վե կալան ասեցին.— Ո՛նչ դուք ըլնեք, ո՛նչ ձեր քիրը. չենք կարում մի բան ասի, ասեցինք. «Վե կաց էրեխեն ջուր ա ուզում, ջուր տո՛ւ, ինադ արեց, վե կացավ, քարը վե կալավ, տվեց ձեր քյահլան ձիու ոտը կոտրեց, վե քցեց դոմի միջին։

Աղպերտինքն ասեցին.— Մի՛ ձի չի՛, տասը ձի էլ նրան ղուրբան ա։

Կնանոնց սիրտը պատռեց, առավոտը լիսը բացվեց, էլի վե կացան, իրեքն էլ գնացին պառավի մոտն, ասեցին.— Պառա՛վ, չէլա՛վ, հունար ունես՝ խարջա՛[1]։

---

[1] Գործ դիր (Ս. Բ.)։

Պառավն ասեց.— Վե կացեք, գնացեք թունդիրը վառե՛ք, մեկիդ էրեխեն քցեք թունդիրը վառեք, էլի նոթներդ կկիտեք կնըստեք. իրիկունը ձեր մարդիկը որ կգան տուն՝ էլի բարով կտան, չեք առնի, էլի կիրակուր չեք էփի, ո՛նչ էլ տուն կսրբեք։

Եդ դառան կնանիքը էկան տուն, թունդիրը վառեցին, էրեխուն քցեցին թունդիրը վառեցին, իրանք գնացին, նոթները կիտեցին նստեցին։

Իրիկունը մարդիկն էկան տուն, տեհան էլի ո՛նչ տուն սըրբած, ո՛նչ կիրակուր էփած։ Բարով տվին, բարովները չառան։

Ասեցին.— Էս ի՞նչ ա էլե, էս էրկու օր ա դուք ըսենց եք անում։

Ասեցին.— Ո՛նչ դուք ըլնեք, ո՛նչ ձեր քիրը, ասինք. «Պղինձը ջուր լցրա տո՛ւ, դնենք թունդրի վրա բան էփենք», նա վե կալավ էրեխուն, քցեց թունդիրը՝ վառեց։

Աղպերտինքն ասեցին.— Տասը էրեխա էլ մեր քվորը ղուրբան ա։

Հաց կերան, քնեցին։ Էգսի առավոտը էլի մարդիկը գնացին ավի, կնանիքը վե կացան գնացին պառավի մոտը։

Ասեցին.— Պառա՛վ, ճար ունես՝ տե՛ս, ըդով էլ չէլավ, մենք կմեռնենք։

Պառավն ասեց.— Էլ ուրիշ հնար չկա. կէթաք իրեք հատ աղի բաղարջ կթխեք, էս պուճուր օձն էլ կտամ ձեզ, կտանեք կքցեք փարչի մեջը, աղի բաղարջը կտաք իրիկունը կուտի, կքնի, կծարավի, ջուր կուզի՝ ջուրը կտաք, կխմի, օձը կէթա փորը, կմենծանա, կճուտակալի, փորը կուռի, ըդով էլ իրա աղպորտանց աչքիցը կրննկնի։

Կնանիքը եդ դառան էկան տուն, իրեք հատ աղի բաղարջ թխեցին։ Իրիկունը մարդիկն էկան տուն, նստեցին հաց ուտելու, իրեք հատ աղի բաղարջը դրեցին աղջկա առաջը՝ կերավ։ Հացը կերան պրծան, վեկացան քնեցին։ Կնանիքը տարան փարչը ջուր լցրին, օձը քցեցին մեջը, տարան դրեցին աղջկա կուշտը։

Գշերվա մի վախտը աղջիկը զարթնեց, աղպորտանցը ձեն տվեց, թե.— Ծարավ եմ, մի քիչ ջուր տվեք ինձ։

Աղպերտինքը ձեն տվեցին կնանոցը, թե.— Մեկդ վե կացեք, ջուր տվե՛ք քվորա։

Կնիկն ասեց.— Փարչը լցրած կողքին դրած ա, թող վեր ունի, խմի։

Աղջիկն էլ վե կալավ փարչը՝ միամիտ խմեց. օձը գնաց փորը։ Քնեց աղջիկը. առավոտը վե կացավ, էլի իրանց համար հաց կերան, գնացին ավի։ Աղջիկը միամիտ նստած էր իրա բանին, օրեցօր էդ աղջկա փորը ուռեց. դառավ էրկու ֆոգիս կնիկ։

Իրիկունը ըդոնց մարդիկն էկան, ասեցին.— Ա՛յ ձեր լավ քիրը, տեսե՛ք ինչ օյին ա հանե, փորն ուռել ա։

Աղպերտինքը թամաշ արին, տեհան, որ քիրը օրերի վրա ա, մենծ աղպերը վե կալավ թաքուն ասեց պուճուր աղպորը.— Մի ձի կնստես, կքաշես թարքդ, մի տասն օրեն ճամփա հեռու կտանես, կթողաս, կգաս. ընդուց դենը ինչ կուզի թո՛ղ ըլնի։

Քնեցին. լիսը բացվեց, պուճուր աղպերը հաց կերավ, քիրը հաց կերավ, իրանց համար ճամփի պաշար վե կալան, քցեցին խուրջնի մեջը, կապեցին ձիու թարքը, նիլլան ձին, գնացին։ Մեկ օր, հինգ օր գնացել ին, տասն օրը թամմեց, հասան մի վայրենի մեշի։

Ըտեղ աղջիկն ասեց.— Աղպեր, բեզարել եմ, վե գանք ձիուցը, հա՛մ ձին խոտ կուտի, հա՛մ մենք կդինջանանք։

Ձիուցը վեր էկան, ձին աղպերը օրըկեց[1], իրանք նստեցին, հաց կերան։

Աղջիկն ասեց.— Ա՛ղպեր ջան, նստի, գլուխս դնեմ ծնկանդ մի քիչ քնեմ, վե կենանք, էթանք։

Աղպերը նստեց, քիրը գլուխը դրեց ծնկանը քնեց։ Շատ էր քնե, թե քիչ՝ աչքերը բաց արեց, տեհավ, որ ո՛նչ աղպեր կա, ո՛նչ ձի։

— Հե՛յ վա՛խ,— ասեց,— աղպերտինք, էս ի՞նչ օյին էր՝ հանեցիք իմ գլուխը։

Մնաց էդ վայրենի մեշի միջին։ Կես գշեր էր, աղջիկը իլլաջը կտրվեց, նիլլավ մի բանձր ծառի վրա նստեց մինչև լիս, ծառիցը վեր էկավ, մեշի մեջն ընկավ՝ սկսեց ծառապտուղ ուտի։

Մանգալոն, մանգալոն մեշիցը դուս էկավ, տեհավ, որ հրես մի գետ կողքովն էթում ա, ասեց.— Էս լավ էլավ, ջուր խմեմ, լվացվեմ, էթամ։

---

[1] Ներկար պարանով կապեց (Ե. Բ.)։

Կզացավ ջուր խմելու, գետիցը մի օձ ձեն տվեց էդ աղջկա փորի օձին, ասեց.— Ա՛յ ախմախ անասուն, էս լեն ու բոլ աշխարքը խի՞ ես թողե, մտե էդ զանահլու[1] աղջկա փորը, դո՛ւս արի, անուշ օդ ծծա, ման արի ըստեղարենք։

Օձը փորիցը ձեն տվեց, ասեց.— Խի՞ եմ դուս գալի, մի ի, էլել եմ քառասուն, սա էլ ինչ ուտում ա՝ նյութը ես եմ առնում։

Վերջը գետի օձը համոզեց էդ օձին, օձն էկավ աղջկա բերնովը վեր ընկավ։ Աղջիկը դանակը հանեց, օձի գլուխը կտրեց։ Նրա քամակից եռհսուն ինը ճուտերն էլ վեր ընկան, աղջիկը բիրադնի գլխներն էլ կտրեց, փաթրթեց մի տերևի մեջ, դրեց ջեբը։ Դառավ առաջվա աղջիկը, փորը վեր էկավ։ Փա՛ռք տվեց աստուն, եդ դառավ մեջի մեջ, էլի սկսեց պտղներ քաղիլ, ուտել։ Մանգալոն, մանգալոն էկավ հասավ մի մառմառ հավզի, դրա վրին էլ մի հատ չինարի ծառ կար։ Աղջիկը ջուր խմեց, լվացվեց, նիլլավ էդ ծառի վրեն։ Ամեն օր ըդենց էր անում, վեր էր գալի, մեջի մեջ ման էր գալի, պտղներ էր ուտում, նիլլում էր ծառի վրա նստում։

Օրվա մի օրը՝ մի ուրիշ թագավորի տղա իրա նազիր-վեզրի հետ նստեցին ամենքը մի ձի, ասեցին.— Էթա՛նք մեջեն ավ անելու։

Ըդոնք գնացին մեջի մեջը, էս յանը ման էկան, էն յանը ման էկան, ավ չընկավ ձեռները. գնացին հասան էդ մառմառ հավզին։

Թագավորի տղեն ասեց.— Սրանից լավ տեղ չիլնի, վե գանք, հաց ուտենք, ջուր խմենք, ձիանիքը կշտացնենք, եդ դառնանք էթանք մեր տեղը։

Վեր էկան ձիանոնցիցը, ձիանիքը օրըկեցին, իրանք նստեցին մառմառ հավզի կողքին՝ հաց կերան։ Թագավորի տղեն կզացավ որ ջուր խմի, տեհավ, որ մի աղջկա պատկերք ջրի միջին շողշողըմ ա։

Ասեց.— Հե՛յ վա՛խ, նազիր-վեզիր, էկեք տեհեք էս ի՞նչ պատկերք ա, էս ջրի միջին շողշողոմ ա։

Էկան թամաշ արին, տեհան, որ արևի պես լիս ա տալի։ Է՛ս յանը թամաշ արին, է՛ն յանը թամաշ արին, տեհան, որ զադ չի էրեվում։ Բիրդան թագավորի տղեն աչքը բանձրացրեց, տեհավ էդ աղջիկը ծառի վրա նստած ա։

Ասեց.— Նազի՛ր-վեզի՛ր, ես իմ ավը գտա, մի նիլլե՛ք, վե բերե՛ք։

---

[1] Սիրուն (Ս. Բ.)։

Նիլլան, աղջկանը ծառիցը վեր բերին։

— Դե ձիանիքը թամքե՛ք, էթա՛նք,— ասեց թագավորի տղեն։

Ձիանիքը թամքեցին, նիլլան, աղջկանն էլ թագավորի տղեն քաշեց թարքը, գնացին։ Գնացին հասան իրանց քաղաքը։ Նաբար տարան թագավորին, թե՝ տղեդ մեշիցը մի հատ վայրենի աղջիկ ա բռնե, բերում ա։

Էդ թագավորը գնաց տղի աղաքը, տղին վեր կալավ տարավ տուն, ասեց.— Ա՛յ որդի, էդ ի՞նչ ա՝ դու բերել ես։

Տղեն ասեց.— Ա՛յ հեր, իմը կա՝ սա՛ ա, չկա սա՛ ա, որ երկրնքիցը վեր էկած լուսեղեն աղջիկ ըլնի՝ ինձ պետքը չի՛։

Հերն ասեց.— Մեղքը քու շըլինքը, դո՛ւ գիտաս։

Բերեց էդ աղջկանը պսակեց տղի հետ։ Մնաց էդ աղջիկը ըտեղ օխտը տարի, օխտը տարվա միջին մի անգամ էլ ա չխոսաց, լալ մնաց։ Ըդրանից էրկու տղա էլավ, մինը հինգ տարեկան, մինը էրկու տարեկան։ Թագավորի տղի ջանին հասավ։

— Ես պտի,— ասեց,— մի խնձոր տանեմ տամ մենծ տղիս, ես էլ տափ կենամ, տենամ կնիկս լիզու ունի՞, թե լալ ա։

Խնձորը տարավ տվեց մենծ տղին, ինքը գնաց տափ կացավ։ Մենծ տղեն խնձորը հաղացնում էր, պուճուրը լաց էլավ։

Ասեց.— Մայրի՛կ, ես էլ եմ խնձոր ուզում։

Շատ լաց ըլնելուց եդը, մերն ասեց.— Ա՛յ որդի, ի՞նչ անեմ, հերդ կռվի բուն էր բերե էդ մի խնձորը, բերում էր թո՛ղ էրկուսը բերեր, ամեքիդ մեկը տար։

Թագավորի տղեն վազեց ընկավ կնկա շլընքովը, ասեց.— Գլխի՛դ, արևի՛դ մեռնեմ, էս օխտը տարի ա, ես քեզ բերել եմ, բա խի՞ չիր խոսում։

Աղջիկը վեր կալավ ասեց.— Էս օխտը տարի ա ես քու ձեռին եմ [1], դու մեկ օրից մեկ օր ինձ խի՞ չիր հարցնում, թե. «Ի՛նս ես, ջի՛նս ես». ես հո՞ ծառից չի էլե, քոլից չի էլե, ես էլ թագավորի աղջիկ եմ, ինձ էլ ունեմ թագավորություն, աղպերտինք։

— Դե՛,— ասեց,— ի՞նչ անեմ, սխալվել եմ։ Ուզում ես քեզ ղրկեմ քու հերանց տունը, գնա՝ քու աղպորտանցը տե՛ս։

Կանչեց նազիր-վեզրին.— Զորքերը հազրեք,— ասեց,— կառեթ հազրեք, իմ կնկանը վեր ունեք տանեք իրա հերանց տունը։

---

[1] Քո կինն եմ (Ս. Բ.)։

Է՜հ, նազիր-վեզիրը պատրաստություն տեհան, թագավորի հարսին վե կալան, էրեխեքանց հետ գնացին։ Գնացին հասան էն մեշի մեջը, որ էդ աղջըկանը բերել ին։ Ըտեղ մուքն ընկավ։ Վեր էկան ըտեղ, չադըրներ տվեցին, մի չադիր նազիր-վեզրի համար, մի չադիր թագավորի հարսի ու իրա էրկու էրեխու համար, չորս ղրաղն էլ զորքը չադիր տվեց նստեց, իրանց հացը կերան, պրծան։ Նազիր-վեզրի միտքը փոխվեց, գնացին թագավորի հարսի մոտ, բարև տվեցին, նստեցին։

Վե կալան, ասեցին.— Մենք էկել ենք, քու մոտ էս գշեր անցկացնենք։

Կնիկն ասեց.— Մտքներովդ մե՛ք անցկացնի, ըդենց բան չիլնի։

Ասեցին.— Ջէ՛, պտի մնանք։

Թագավորի հարսն ասեց.— Անհնարին ա, վե կացեք, գնացե՛ք։

Ասեցին.— Ջի՛լնի, չես թողա, մենծ տղիդ կմորթենք։

Ասեց.— Մորթե՛ք, չմորթե՛ք, ըդենց բան չի՛լնի։

Նազիր-վեզիրը բռնեցին մենծ տղին, մոր աչքի աղաքին մորթեցին, ասեցին.— Հմի ի՞նչ ես ասում։

Ասեց.— Ինձ էլ մորթեք՝ չե՛մ թողա։

Վե կացան պուճուր տղին էլ մորթեցին։ Կնիկը տեհավ, որ էլ ճար չկա, ասեց.— Դուք ձեր աստվածը յավաշ դուս էթամ, գամ՝ ի՛նչ անում եք, արե՛ք։

Մի թել կապեցին կնկա ձեռիցը, կնիկը չարսափն առավ վրեն՝ գնաց։ Գնաց մի վարդի քոլի տակ նստեց, թելը եդ արեց, կապեց վարդի քոլիցը. չարսափը քցեց վարդի քոլի վրեն, թողաց փախավ։

Նազիր-վեզիրը շատ թամաշ արին, տեհան որ կնիկը չէկավ, ասեցին.— Ջանը՜մ, ի՞նչ էլավ դրա դրսև էթալը, վե կենանք, էթանք բերենք։

Վե կացան գնացին վարդի քոլի կուշտը, չարսափիցը քաշեցին, թե. «Վե կա՛ց, ի՞նչ ես նստե ըդքան», տեհան, որ դարտակ չարսափն էկավ։ Հասկացան, որ կնիկը փախել ա, չկա։ Է՛ս յանը, է՛ն յանը մանգալոն կնկանը չգտան, եդ դառան իրանց չադրները. իրար մեջ խոսացին, թե. «Էթանք թագավորին ի՞նչ ասենք»։

Ասեցին.— Էթանք ասենք, որ քու հերն ասում էր՝ էդ վայրենի աղջիկ ա, դու ասում իր՝ չէ՛, հենց որ հասանք մեշի մեջ, չադըր-

ները տվեցինք նստեցինք, գշերը վեր էր կացե, էրկու էրեխուն էլ մորթե, թողե փախե։

Քնեցին. լիսը բացվեց, վե կացան, ճամփա ընկան գնացին դպա իրանց թագավորի երկիրը։

Գնացին ներկայացան թագավորին, թագավորն ասեց.— Հը՛, սալամաթ տարա՞ք կնկանս իրա հերանց տունը։

Ասեցին.— Հերդ ասում էր՝ դա վայրենի աղջիկ ա, դու չիր հավատում. գնացինք էն մեշի մեջ, որտեղ բռնել ինք, չադրները տվեցինք, նստեցինք, գշերը վեր էր կացե, էրկու էրեխուն էլ մորթե, թողե փախե։ Է՛ս յանը, է՛ն յանը ընքան ման էկանք, հոգըներս[1] դուս էկավ, թողացինք էկանք։

Թագավորի տղեն ասեց.— Անհնար ա, վե կաց, նազի՛ր, ընկնենք երկրե-երկիր, ման գանք, որտեղ ըլնի, պտի գտնեմ նրան։

Թագավորն ու նազիրը դարվշի շորեր հագան, ընկան ման գալու։

Գանք աղջկանից սալըղ տանք։

Էդ մեշիցը դուս էկավ, գնաց տեհավ հրես մի չոբան, ոչխար ա արածացնում։

Ասեց.— Բարո՛վ քեզ, չոբան ախպեր։

Չոբանն ասեց.— Հազար բարին էկար, ա՛յ քիր։ Դու մի զանահլու աղջիկ, ինչ գործ ունես էս վերվերի տեղերում ման էս գալի մենակ։

Աղջիկն ասեց չոբանին.— Ախպեր ջա՛ն, իմ դարդերը շատ ա, մի հարցնի, հլա սոված եմ, մի կտոր հաց տու ուտեմ։

Չոբանը հանեց պարկիցը մի կտոր հաց, դրեց աղջկա աղաքը. վե կալավ թասը գնաց մի ոչխար կթեց, բերեց տվեց աղջկանը։ Աղջիկը կաթը փրթեց կերավ, վե կացավ։

Չոբանն ասեց.— Ինձ քիր չունեմ, ըստուց եղը դու ինձ՝ քիր, ես քեզ՝ ախպեր։

Մնաց չոբանի մոտ, իրիկունը վե կացան, չոբանի հետ գնացին չոբանի տունը, ըտեղ մնաց աղջիկը մի իրեք ամիս։

Իրեք ամսից եղը աղջիկն ասեց.—Ախպեր ջա՛ն, ես պտի էթամ, ինձ մի ձեռք ձեր շորերից տվեք, տղամարդի, մի ոչխար մորթեք դրա փորը տվեք։

[1] Հոգիներս (Ս. Բ.)։

1646—18

Ջոբանն ասեց.— Ա՛յ քիր, չեմ թողա էթաս։

Ասեց.— Անկարելի բան ա, պտի էթամ։

— Է՛, — ասեց, — մեղքը քու շըլինքը։

Բերեց մի գառը մորթեց, դրա փորը հանեց, տվեց էդ աղջըկանը, մնացած միսն էլ՝ կնկանն, ասեց.— Կարմրացրա՛, դիր իմ քվոր հետ, ճամփին կուտի։

Աղջիկը հագավ տղամարդի շորերը, մազերը հավաքեց, ոչխարի փորը անցկացրեց գլուխը, կաննեց արևի տակին, փորը կպավ գլխիցը, դառավ քաչալ։ Դա Ջոբանի հետ մնաս բարով արեց, գնաց։

Շատ էր գնացե, քիչ էր գնացե, աստված գիտա, գնաց հասավ իրա հոր քաղաքը, գնաց իրանց տան աղաքը, նստեց քարի վրա, տեհավ, որ հրես իրեք աղպերն էլ էկան։

Աղպերտինքն ասեցին.— Ա՛յ քաչալ, ի՞նչ մարդ ես։

Քաչալն ասեց.— Ղարիբ մարդ եմ, նոր եմ էկե էս քաղաքը. մարդ չեմ ճանանչում, էկել եմ ըստեղ նստել եմ։

Աղպերտինքն ասեցին.— Կարա՞ս ղազ պահի։

Ասեց.— Խի՞ չեմ կարա պահի։

Տարան քաչալին հետները, ղազեր տվեցին իրան, ամեն օր տանում էր արածացնում, իրիկունը բերում տուն։

Շատ ղոչաղ ու զալում տղա էլավ էդ քաչալը. աղպերտինքը ասեցին, թե.— Զալում տղա ա էրևում, տանենք մեր ամարաթը, թող ընտեղ ծառայի։

Տարան քաչալին ամարաթը, ընտեղ ծառայեց։ Մի քանի ամսից եդը իրա մարդն ու նազիրը դարվշի շորեր հագած, ձիանիքը նիլլած էդ թագավորի տունը ղոնաղ էկան։ Քաչալը տեհավ, որ մեկն իրա մարդն ա, մեկն էլ նազիրն ա։ Ըդոնք հաց շինեցին, նստեցին հաց ուտելու։

Թագավորի տղեն ասեց.— Էրնակ ըստեղ մի առարկա ասող ըլներ, անկաջ անեինք։

Քաչալն ասեց.— Ես կասեմ, համա պտի դռները շինեմ, բալանըքները վեր ունեմ իմ մոտը, մի մարդ իրավունք չունի առանց իմ հրամանի դուռն էթալու, թե ոազի եք էդ պայմանին, կասեմ։

Ասեցին.— Ռազի ենք, ասա՛։

Քաչալը դռները շինեց, բալանքները դրեց ջերը, նստեց իրա տեղը, սկսեց ասիլը։

Ասեց.— Ժամանակով կար մի թագավոր, ըդրան ուներ իրեք տղա, մի աղջիկ։ Էդ թագավորը ծերացել էր, կանչեց իրա իրեք տղին իրա մոտը, ասեց. «Ա՛յ որդիք, գիտա՞ք ընչի համար եմ կանչե»։ Թե. «Ընչի՞ համար ես կանչե»։ Ասեց. «Ձեզ մի վասիաթ ունեմ անելու, որ վիրև՝ աստվածծ, ներքև՝ դուք, ես մեռնում եմ, իմ աղջիկը հանձնում եմ ձեզ, ընենց թամաշ կանեք, որ էս աչքիցը էն աչքը չեք փոխի»։ Տղեքն,—ասում ա,— վե կալան ասեցին հորը. «Շա՛տ լավ էս ասում, ա՛յ հեր, ընենց պահենք ըդրան, որ թոզ էլ չվե գա վրին»։ Էկավ հերը մեռավ, տարան հանդեսով թաղեցին. էկան տուն, մենծ ախպորը օծեցին, դրին թագավոր հոր տեղը։

Ըստեղ հարսները բան ֆահմեցին [1], ասեցին.— Քաշա՛լ, ձենդ կտրա։

Քաշալն ասեց.— Չե՛ք ուզում, չե՛մ ասի, վախա՞ցնում եք ինձ։

Ընտեղան աղպերտինքն ասեցին.— Քաշալ, գլխիդ, արևիդ մեռնենք, դու ասա, օքմին իրավունք չունի քու վրա խոսալու։

Քաշալն սկսեց ասիլը.— Էդ թագավորի իրեք տղեն ընքան ին սիրում էդ աղջկանը, որ էս աչքից էն աչքը չին փոխում, իրանց կնանոցն էլ բանի տեղ չին դնում։ Էկան դրանց կնանիքը ասեցին. «Բա ո՞նց անենք դրան աղպորտանց աչքիցը քցենք, գնացին մի պառավ կնկա մոտ» [2]։

— Քաշա՛լ, դուրը բաց արա, մենք էթում ենք դուրը։

Քաշալն ասեց.— Իրավունք չկա՛, մինչև նաղլը չվերջացնեմ։

Թագավորի տղեքն ասեցին.— Ասա՛, ասա՛, քաշալ ջա՛ն [3]։

— Էդ նոքարը ես եմ, ա՛յ էն օձերի գլխները, ա՛յ էդ աղջիկը,— ու հանում ա վրիցը տղի շորերը, տակից էրևում են աղջկա շորերը, քաշում ա հանում գլխի վրի փոստը, մազերը թափում ա ուսերին։ Նոր ըստեղ աղպերտինքը վազում են ընկնում քվոր ոնները, մարդն էլ էն յանկեցն ա վազում։

Թագավորի տղեքը նոր ասում են իրանց փեսին.— Դու քու

---

1 Հասկացան (Ս. Բ.)։

2 Ամենայն մանրամասնությամբ պատմում է պառավի խորհրդով կատարված խարդավանքը և երբ հասնում է այն կետին, թե հարսները օձը բերին քցեցին ջրի մեջ, որ տալը խմի, հարսներն ասում են. (Ս. Բ.)։

3 Քաշալը շարունակում է պատմել և երբ նկարագրում է, թե ինչպես նապիրն ու վեզիրը մորթում են երեխաներին, նազիրը ուզում է դուրս գնալ, բայց չեն թողնում։ Շարունակում է պատմել մինչև վերջը և ապա ասում. (Ս. Բ.)։

նազրի-վեզրի դատաստանն արա, մենք էլ մեր կնանոնց դատաստանը կանենք։

Թագավորի տղեն նազրին դնում ա տախտակի վրա՝ ղիմա-ղիմա կոտորում ա, ասում ա.— Տարե՛ք թափեք չոլը, թող ղուրդ ու ղուշը ջամդաքը ուտի։

Աղպրտինքը իրանց կնանքանցը կապում են ամեն մեկը մի ձիու պոչից ու բրախում հանդը. իրիկունը ձիանիքը դալիս են տուն, պոչներիցը մենակ մազերն ա մնում կապած։

Նո՛ր բերում են իրանց քվորը օխտն օր, օխտը դշեր հարսանիք են անում, էդ թագավորի տղի հետ պսակում են, ճանապար են դնում իրա երկիրը։ Նա էթում ա ընտեղ իրա թագավորությունն անում, իրեք աղպերը մնում են իրանց երկրումը իրանց թագավորությունն են անում։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաջ դնողին։





20· ԷՐԿՈՒ ԱՂՊԵՐ

Ժամանակով մի թագավոր կար, էրկու տղա ուներ։ Օրերից մեկ օր թագավորն ու թագուհին, իրանց էրկու տղի հետ, իրանց բալկոնումը նստած ին, թամաշ ին անում դպա բախչեն։ Բախչումը մի բարդի ծառ կար, էդ ծառի վրեն լակլակի բուն կար, ամեն վախտ լակլակը ըտեղ էր ըլնում։ Էկավ գարունքը լակլակը էրկու ճուտ հանեց, մի քանի օրից եղը էդ ճուտերի մերը սատկեց։ Լակլակը մի քանի օրից եղը գնաց, մեկը բերեց։ Էդ թագավորի, թագուհու թամաշ արած վախտը ըդրանց խորթ մերը ճուտերին ծեծեց, սատկացրեց, քցեց բնից ներքև։

Թագավորն ու թագուհին որ էս տեհան, մի թավուր էլան, թագուհին ասեց.— Ես էլ որ մեռնեմ, դու կէթաս ուրիշ կնիկ կբերես, քու տղեքանցդ էդ օրը կքցի։

Մարդ ու կնիկ իրար խոսք տվին, որ մարդը մեռնի՝ կնիկը չպսակվի, կնիկը մեռնի՝ մարդը չպսակվի։

Էկավ մի միջոց մնաց, թագավորի կնիկը մեռավ. էկան վեքիլ-վեզիրը կաննեցին, թե.— Պտի՛ պսակվես, թագա՛վոր։

Թագավորն ասեց, թե.— Ես ուխտ եմ արե, որ չպսակվեմ։

Իլլաջ չէլավ, բերին զորով պսակեցին։ Պսակվելուց եղը մի քանի օր արանքը անց կացավ, վեզրի կնիկը, նազրի կնիկն էկան տեսություն ու հարցրին, թե.— Ըսկի քու տղեքը քու մոտը գալի՞ս են՝ քեզ տենալու։

Ասեց.— Ինձ տղա ո՞րդիան ա։

Ասեցին.— Ախար էրկու լավ տղա ունես։

Ասեց.— Հարցնում եմ թագավորին, ասում ա չունեմ։

— Ո՛նց չունի, էրկու տղա ունի, ուսումնարանումն են։

Ըդոնք թողացին գնացին։ Թագավորը, որ իրիկունը էկավ տուն, թագուհին ասեց.— Բա՛ ասում ես՝ ինձ տղա չունեմ։

Թագավորն ասեց.— Տղա չունե՞մ։

Կնիկն ասեց.— Չէ՞ որ ուսումնարանումը կարդում են, ինձ խի՞ ես խաբում, ինձ խորթի տեղ ես դնում, հա՞, տղեքդ չես բերում՝ տեսնամ։

Թագավորը խոստացավ, որ տղեքանցը բերի, տեսնա։

Էգսի օրը մենծ տղին թամբահ արեց, վե կացավ էկավ, ոնց որ իրա ծնող՝ գնաց ձեռը պաչեց։

Մերը տեհավ տղեն շատ սիրուն ա, երիտասարդ ժամանակը, սիրահարվեց, ասեց.— Ես քու հորդ չե՛մ առե, ես քեզ համար եմ էկե։

Տղեն ասեց.— Չէ՛, դու իմ ծնող մերն ես։

Շատ ասելուց եդը, տեհավ որ տղեն կամք չտվեց, գլուխ-մլուխը քանդրտեց, էրես-մերեսը ճանկռտռտեց, վե կացավ յա՛լլա թագավորի կուշտը, ասեց.— Ո՛չ դու ըլնես, ո՛չ քու թագավորությունը, ո՛չ քու տղեն, էս ի՞նչ ա իմ հալը, ինձ քե՞զ համար էս բերե, թե քու տղի՞ համար։

Հերը բարկացած հրամայեց, որ տղին կանչեն, գլուխը տան։

Վեքիլ-վեզիրն ասեցին.— Թագա՛վոր, կարող ա սուտ ըլնի, եդի կնիկ ա, ընչի համար ես առանց քննությունի գլուխը կտրում։

Վեզիրը թաքուն մարդ ա ղրկում, տղին իմաց ա տալի, որ հերը վրին բարկացել ա, գլուխը պտի կտրել տա, քանի թեզ ա, փախնի։

Տղեն էկավ խուրջընի էրկու աչքը ոսկի լցրեց ու ձին նիլլավ, փախավ գնաց։ Գնաց, մի տեղ չադիր տվեց, նստեց։

Խաբարը տանք պուճուր աղպորիցը։

Պուճուր աղպերը եբոր լսեց աղպոր գլխի էկածը, ասեց.— Քանի թեզ ա, ես է՛լ փախնեմ, թե չէ իմ գլխին էլ էն օյինը կհաղա։

Էկավ, մի խուրջին ոսկի վե կալավ, ձին նիլլավ, գնաց։

Գնաց, գնաց, հասավ աղպորը։ Երբոր հասավ աղպորը՝ աղպերն ասեց.— Դո՛ւ էլ էկա՞ր։

Ասեց.— Էլ ես մնալի ի՛նչ անեի, էդուց էդ օյինը իմ գլուխը պտի հաներ։

Վե կացան, շադիրը քանդեցին, ձիանը նիլլան, գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, էդ պուճուր աղպերը շատ ծարավացավ, մենծ աղպորն ասեց.— Ես ծարավ մեռա։

Աղպերն ասեց.— Ի՞նչ անեմ, ըստեղ ջուր չկա։

Ասեց.— Ես մեռա, հմի ձիուցս վեր կընկնեմ, ուշս էթում ա։

Ասեց.— Մի քիչ էլ քեզ պահա՛, հրեն չայիր-չիման ա էրևում, կարելի ա ընտեղ ջուր ըլնի։

Գնացին, տեհան, որ աղպուր կա, պուճուր աղպերը իրան ձիուցը վե քցեց, հասավ ջրին։

Մենծ աղպերն ասեց.— Բո՛լ ա խմես, քեզ կվնասի։

Ասեց.— Թո՛ղ մի կուշտ խմեմ, ես մեռա՛։

Մենծ աղպերը ըտեղ լվացվեց, դինջացավ, նոր ջուր խմեց։

Մին էլ տեհավ, որ պուճուր աղպերը վեր ընկավ ու «մեռա՛, հա՛, մեռա՛» բղավեց։

Մենծ աղպերը հասավ, աչքերը տրորեց, էրեսը տրորեց, տեհավ, իլլաջ չէլավ՝ պտի մեռնի, ասեց.— Աղպե՛ր, էթամ մի հեքիմ բերեմ քեզ համար։

Բերեց աղպոր խուրջինը դրեց գլխատակը, ձին էլ մոտին կապեց, ինքն իրա ձին նիլլավ գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, հասավ մի քաղաք։ Տեհավ Դոլվաթ-ղուշին բաց են թողե, թագավոր են հրնդրում. ինքն էլ գնաց մի ղրաղ տեղ կաննեց, թամաշ ա անում։ Դոլվաթ-ղուշին բրախ տվեցին, ման գալով, ման գալով էկավ, էդ տղի գլխին կաննեց։ Ղուշը վե կալան, էլի բրախ տվին. էլի էկավ էդ տղի գլխին կաննեց։ Երբոր էկան Ղուշը տանելու, էդ տղի վրին բարկացան, տարան մի օթախ քցեցին, դուռը շինեցին։ Ղուշը էլի գնաց բուխարուվը մտավ՝ տղի գլխին կաննեց։ Էկան, վե կալան, տարան համամ, թագավորական շորերը հագցրին, դրին թագավոր։

Խաբարը տանք պուճուր աղպորիցը։

Պուճուր աղպերը ըտեղ շատ պառկեց, մեկ էլ տեհավ մի բազրգյան էկավ, դրքի գլխիցը տեհավ աղպրի կշտին մի ձիավոր պառկած ա։

Գյադին ասեց.— Մի գնա տե՛ս, էն ի՞նչ մարդ ա, կարող ա գող ըլնի՝ մեզ վնասի։

Գնաց, էկավ, ասեց.— Մի մարդ կա՝ ընդի մեռած ա։

Բազրգյանն էկավ ձիուցը վեր էկավ, տեհավ տղի ուշը գնացել ա, ասեց.— Էրևում ա ջուր ա խմել, վնասել ա։

Բերեց սրան ֆոտ տվեց, մասնավոր ուշն էկավ վրեն, ջուր տվեցին էրեսին, լվացվեց, վե կացավ, նստեց ձին, բազրկյանը հաց տվեց, կերավ։

Բազրգյանն ասեց.— Արի՛ քեզ շինեմ ինձ տղա, ինձ ժառանգ չունեմ։

Ասեց.— Չէ՛, ես պտի էթամ իմ աղպորը ման գամ գտնեմ։

Վե կացավ, շնորհակալություն արեց էդ բազրգյանիցը, ձին նիլլավ՝ գնաց։ Շատ գնաց, քիչ գնաց, հասավ էն քաղաքը, որ աղպերը ըտեղ էր։ Երբոր հասավ՝ մութն ընկած էր, դռնապանը դարվաղեն շինում էր. շատ աղաչանք արեց, որ թողա, մննի քաղաքը, տեհավ չէլավ, խուրջնի բերանը բաց արեց, մի բուռ ոսկի տվեց, դռնապանը դուռը բաց արեց, տարավ իրան ղոնաղ։ Գշերվա կիսին դռնապանը կացինն առավ, ընկավ էդ տղի ջանին, ջարդեց, էլ հալ չթողաց, փալասի մեջ կոլոլեց, տարավ համամի դուռը վե քցեց, թողաց էկավ, մի խուրջին ոսկին ու ձին տիրապըտեց։

Առավոտը որ համամչին գնաց դպա համամը, տեհավ փալասի միջին մի կոլոլած բան կա. բաց արեց, տեհավ մի սիրուն տղա ա, անջաղ նվում ա։

Շըլակեց, տարավ իրանց տունը, կնկանը ասեց.— Ա՛յ կնիկ, էս լավ էլավ, մեզ տղա չունեինք, աստված տա՛ր՝ լավանար, կըլներ մեզ տղա։

Պահեցին իրանց տանը, դեղ արեցին, հինգ վեց ամսվա մեջը անջախ դրա յարեքը սաղացան։ Տղեն վե կացավ, յավաշ-յավաշ ման էր գալի։ Մեկ օր դպա բազար գնաց, բիրդան էդ դռնապանը պատահեց։

Տեննալուն քիմի դռնապանը ճանանչեց.— Ա՛յ հա՛յ,— ասեց,— կէթա թագավորին գանգատ կանի, ինձ կկանչի, կսըպանի։

Էդ օրերը թագավորը գյամին ղրկելու էր, որ էթա ծովի էն ղրաղիցը իրա համար մի աղջիկ բերի։

Դռնապանը գնաց գյամչու կուշտը, ասեց.— Ըսքան ոսկի

կտամ քեզ, ասա՛, թե. «Դյամին չի էթում, մատաղ ա ուզում», համամչու տղեն բալքի բերես քցես ծովը։

Դյամչին էթում ա թագավորի կուշտը, գլուխ ա տալի, կանում ա։

Թագավորն ասում ա.— Հը՛, ի՞նչ կա։

Ասում ա.— Թագա՛վորն ապրած կենա, դյամին չի էթում։ Օխտը տարին մի հետ մի տղա մատաղ ենք տալի ծովին, էս ա օխտը տարին թամմել ա, մի տղա պտի մատաղ տանք։

Ասեց.— Ախար մեղք ա, ըտենց բա՞ն կըլնի։

Ասեց.— Դո՛ւ գիտաս, առանց մատաղի դյամին չի էթա։

— Դե որ ըտենց ա,— ասեց թագավորը,— գնա մեկին տար, քցա ծովը։

Դյամչին էկավ համամչու տղին վե կալավ տարավ դյամու մեջ։

Տեհավ տղեն շատ սիրուն ա, դուրեկան, ասեց.— Մեղք ա, խի՞ քցեմ ծովի մեջ, կտանեմ, բրախ կտամ ծովի էն յանը։

Վեր ա ունում, տանում ա, գյամուցը հանում, բրախում։ Տղեն էթում ա էդ քաղաքի մեջ, ման ա գալի, տենում ա մի մարդ մի ղութի շըլակել ա, ման ա գալի, բղավում ա. «Առնո՞ղն էլ ա փոշման, ծախո՞ղն էլ ա փոշման»։

Էդ տղեն մոտանում ա, ասում ա. «Էդ ի՞նչ բան ա, որ առնողն էլ ա փոշման, ծախողն էլ»։

Ասում ա.— Ես էլ չեմ գիտում։

Թե.— Բա ի՞նչ ա դրա գինը։

Թե.— Ինչ կտաս, տո՛ւ։

Տղեն հանում ա մի քանի ոսկի ա տալի, առնում, բերում ա դնում գյամու մեջը։ Թագավորի նազիր-վեզիրը թագավորի համար աղջիկ են ջոկում, բերում գյամին դնում, քշում։ Էդ տղեն էլ էթում ա մի քյոշա, նստում։ Մնում ա մինչև իրիկուն, մութը ընկնում ա, էդ տղեն ղութու դուռը բաց ա անում, տենում ա՝ էս ա մի աղջի՛կ կա միջին, չուտես, չխմես, կաննես խադ ու խալին թամաշ անես։ Նստում են իրար հետ հաց են ուտում։ Բիրդան գյամչին գալիս ա տենում էդ աղջիկն ու տղեն իրար հետ հաց են ուտում, աղջկան տենալուն պես՝ խելքը գլխիցը էթում ա։

Կաննում թամաշ ա անում, տղին ճանանչում ա, ասում ա.— Էս էն տղեն ա, որ պտի քցեի ծովը, համի կքցեմ, աղջիկը կառնեմ։

Թողում ա, էթում։

Աղջիկն ասում ա տղին.— Գլխիդ ճարը տե՛ս, գյամչին քեզ պտի քցի ծովը։ Ըտեղարենք ման արի տես, հաստ քոթուկ կա՝ գտի, բե՛ր, դի՛ քու տեղաշորի մեջը։

Տղեն ման ա գալի, գտնում ա, բերում ա դնում տեղաշորի մեջը, ինքը մտնում ա ղուբու մեջը, աղջկա հետ, նեքսևից դուռը շինում են։ Գշերվա մի վախտը գյամչին գալիս ա, տեղաշորով եգին-եգին վերնում, շըպռտում ա ծովի մեջը։

Առավոտն աղջիկը ղուբուցը դուս ա գալի, ղուբու մոտին նըստում ա։ Գյամչին գալիս, տենում ա աղջիկը մենակ նստած ա, էլ կարծիք չի տանում, որ տղին քցել ա ծովը։

Ծովից դուս գալու ժամանակը գյամչին աղջկանն ասում ա.— Արի՛ էթանք մեր տուն, ես պտի քեզ առնեմ։

Աղջիկն ասում ա.— Ծանդր տեղդ մի թեթևացնի, ես քեզ առնելու կամք չունեմ։

Դե՛ս, դե՛ն, տեսավ որ աղջիկը խոսք չի տալի, վե կացավ, գնաց դուզ թագավորի մոտը, գլուխ տվեց, ասեց.— Թագավորն ապրած կենա, մի հատ աղջիկ կա գյամու միջին, շատ սիրուն ա, համարյա քեզ համար բերած աղջկանից տասը ղաթ սիրուն ա։

Թագավորը վեզրին ղրկեց, վե կալավ, բերեց։

Աղջիկը եբոր մտավ նեքսև, գլուխ տվեց, բարև բռնեց, կանգնեց. ղուբին էլ հետը բերել էր։

Թագավորը հրամայեց, թե՝ նստի։ Գնաց իրա բերած ղուբու վրա նստեց, ասեց.— Խնդրեմ սրանց ճամփու դի՛ր, քեզ հետ խորուրդ ունեմ։

Թագավորը ճամփու դրեց դրանց, աղջիկը սկսեց պատմել միջի տղի գլխի էկածը, ասեց.— Թագավորի մեկին էրկու տղա ուներ, ձալկոնում նստած միջոցին տեհավ՝ մի լակլակի բուն կար բարդի ծառի վրա, լակլակը ճուտերը հանել էր. մի վախտ անցկացավ, սրանց մերը սատկեց, գնաց մի ուրիշը բերեց, էն բերածը մի էրկու օրից եղը ճուտերին սըպանեց, բնիցը վե քցեց [1]։

Թագավորը եբոր լսում ա էս բոլորը, թախտիցը վեր ա թըռնում, ասում ա.— Էդ իմ աղպերն ա, ո՞ւր ա։

Աղջիկն ասում ա.— Էս ա, ղուբու միջին։— Վեր ա կենում,

---

[1] Այսպես կրկնում է ամբողջ հեքիաթը, փոքր-ինչ համառոտելով (Ս. Բ.)։

դուռը բաց անում, պուճուր աղպորը հանում. փաթըթվում են իրար։

Մի քանի օրից եղը թագավորը պսակվում ա, մի քանի օրից եղն էլ պուճուր աղպորն են պսակում։ Օխտն օր, օխտը գշեր հարսանիք են անում, ուտում են, խմում են։

Ասսանից իրեք խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաջ դնողին։





21· ԱՆՋԻԳՅԱՐ ՄԵՐ

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք ունենում են մի տղա, մի աղջիկ. համա մերը խորթ ա ըլնում, հերը հալալ։ Խորթ մերը էս էրկու էրեխեքանցը ըսկի օր չէր տալի։

Մի հետ էլ մարդի յախեն ա կպնում.— Ա՛յ մարդ,— ասում ա,— թե ուզում ես, որ ես քու կնիկն ըլնեմ ու քեզ աչքիս լսի պես սիրեմ՝ էս քու էրեխեքանցդ ոնց ըլնի յա պտի մորթես, յա թե չէ տանես մի դհով կորցնես, որ աչքս չտենա դրանց։ Թե չէ իմաց կա՛ց, ես գլուխ վեր կունեմ, կէթամ։

Խեղճ հերը չէր իմանում ի՞նչ անի, որ ջուրն ընկնի, որ կնկա ձեռիցը պրծնի։ Ճար չկար. եդի վերջը էլի պտի նրա ասածն աներ։

Մի օր, տղին կանչում ա, ասում ա.— Արի՛ գլուխդ վեր ա-նեմ,— ու բիրդան արծլով տալի՝ շլինքը թռցնում։ Մերը տղի միսը էփում ա ու ինքը մեն-մենակ ուտում՝ անուշ անում, մնացածն էլ քվոր համար պահում։

Քիրը իրիկունը տոմ ա գալի, մորից հաց ուզում.— Ա՛զի, սո՛ված եմ. ըսկի ի՞նչ կա ուտելու։

Մերը թոնթորալեն ասում ա.— Մա՛հեն դուռում ուտես դու. գնա՛ հրեն սալի միջին մի քանի թիքա միս կա՝ վե կալ, կե՛։

Խեղճ քիրը գնաց, ի՛նչ տենա՝ իրա աղպոր ձեռները։ Նստեց ընդե մի կուշտ լաց էլավ. համա լաց ըլնելուն ի՛նչ պտի աներ, բա-

նը բանից անց էր կացե։ Աղպոր ձեռները վե կալավ ու դը՞ռնե դուս։ Գժվածի նման քուչա-քուչա ընկած ման էր գալի։

Վերջը սրան մի մոլլա ռաստ էկավ. հարցրեց.— Ախ՞ ես լաց ըլնում։

Քիրը նաղլ արեց, ինչ որ գլխովը անց էր կացե։

— Բա՛ն չկա, ո՛րդի,— ասեց մոլլեն,— մի լաց ըլնի. էդ ձեռները տար դի մի պատի ճղակ՝ վրեն ջուր ածա, աղպերդ էլ եդ կսաղանա։

Քիրը ըսենց էլ անում ա. վեր ա ունում. տանում մի պատի ճղակում ֆորում, վրեն ջուր ածում թե չէ՝ էն սհաթը աղպերը սաղանում ա, ծիտ ըլնում՝ թռնում։ Էս ծիտն ա՝ թռնում ա էթում, դուքանե դուքան ման գալի, հետը ասում.

«Ծիտիկ եմ, ծիտմիտիկ եմ,
Հոր մորթած եմ,
Մոր կերած եմ,
Աղիղ [1] քվոր լացած եմ»։

Ո՛րը մի թուփ ասեղ ա տալի, ո՛րը մի թուփ քորոց, ո՛րը մի բաղդադի աղլուխ. մախլաս, ո՛վ ինչ ուզում ա։ Ըսենց հավաքելոն թռնում ա էթում իրանց երդկի գլխին նստում, ասում ա՝.— Հե՛րիկ, մե՛րիկ. մի վեր մտիկ ա՞նեք։

Հենց որ հերն ու մերը դպա երդիկն են մտիկ անում թե չէ՝ տղեն ամեն մեկի աչքը մի-մի թուփ ասեղ ա քցում, աչքները քոռացնում։

Եննա քվորն ա ձեն տալի.— Քո՛ւրիկ, քո՛ւրիկ. մի վեր մտիկ ա՞նես։

Քիրը գլուվը բանձրացնում ա թե չէ՝ մի բաղդադի աղլուխ էլ նրա գլխին ա քցում։

---

1 Տպագիր տեքստում՝ աճուշ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։





22· ՀԱԼԱԼԸ ՉՀԱՐԱՄՈՂ ԿՆԻԿԸ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ դառն-աղքատ, անճար են ըլնում։

Օրեն մի օրը մարդը միտք ա անում, ասում ա.— Վե կենամ, էթամ ուրիշ երկիր աշխատանքի, բալի մի քանի շայի աշխատեմ, բերեմ օղլուշաղ պահեմ, ընչանք տենանք վերջներս ի՛նչ ա ըլնում. աստոծ ողորմած ա, հալբաթ մեզ մի լիս ու ճար կանի, էրկու դռնից մի դուռը բաց կանի։

Կանչում ա կնկանը.— Ա՛յ կնիկ,— ասում ա,— ուզում եմ էթամ ուրիշ երկիր աշխատանքի. ի՞նչ կասես։

— Ի՛նչ պտի ասեմ, ա՛յ մարդ. թե գիտաս՝ ձեռդ զադ կընկնի, մի բանի տեր կդառնաս, էթաս լավ կանես. յանի պարապ-սարապ մանգալոն ի՞նչ պտի ըլնի։

— Լա՛վ,— ասում ա,— որ էթամ՝ խոսք տա՞լիս ես, ընչանք իմ գալը աբուռ-հայով կենաս, քու հալալը չհարամես։

— Հա՛,— ասում ա կնիկը,— խոսք եմ տալի. թե քեզ մուխաննաթություն արի՝ ի՛նչ ուզում ես ա՛րա, արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ,— ասում ա մարդը,— բա՛ս որ ըտենց ա՝ կէթամ։

Հեգսի օրը ճամփի թաղարեք ա տենում, մի քանի ամսվա պաշար վեր ունում, վե կենում ընկնում ճամփա։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, է՛ս քաղաքը, է՛ն քաղա-

քը, է՛ս գեղը, է՛ն գեղը, որդի ռաստ ա գալի մնում ա, բանում, փող աշխատում, էլի վե կենում էթում իրա ճամփեն։ Ըսենց մի տարի, էրկու տարի, իրեք տարի աշխարե-աշխար, երկրե-երկիր ման ա գալի, ընչանք քիչ-միչ փող ա շինում, նոր ասում ա՝ վե կենամ, էթամ մեր երկիրը։ Վեր ա կենում գալի։ Գալիս ա գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում ա իրանց երկրի սնուռը։ Ըտե սրան մի ցելվոր ա ռաստ գալի։

— Ա՛րի,— ասում ա ինքն իրեն,— մի սրան հարցնեմ, տենամ իմ կնիկը ո՛նց ա, ո՛նց չի, իրա տված խոսքը պա՞հել ա, թե չէ։

Մոտանում ա դրան, ասում.— Բար՛աջողում, ա՛ղպեր։

— Բարո՛վ, հա՛զար բարին,— ասում ա ցելվորը։

— Ցլա՛ն գե՞ղից ես,— հարցնում ա։

— Հա՛, ֆլա՛ն գեղից եմ,— ասում ա ցելվորը,— խի՞ որ։

— Քեզ մի բան եմ ուզում հարցնեմ, չեմ գիտա դրուստը կասես, թե չէ։

— Կասեմ, խի չեմ ասի,— ասում ա ցելվորը։

— Ցլա՛ն մարդի կնկանը ճանա՞նչում ես։

— Լա՛վ, շա՞տ լավ եմ ճանաչում։ Է՞ն չես ասում, որ մարդը գնացել ա ղարբուխյուն՝ աշխատանքի։

— Հա՛, հենց է՛ն։ Ո՞նց ա, լա՞վ ա. հո դարտ չի՞ անում մարդի համար։

— Ի՞նչ պտի դարտ անի,— ասում ա ցելվորը ծիծաղալոն,— ի՞նչն ա բոլ մարդը...

Մարդը էս որ լսում ա, մատը կծում ա.— Բա՛լի,— ասում ա ինքն իրան,— կա չկա, ըստե մի բան կա։

Դառը-տխուր վեր ա կենում, գալի իրանց գեղը։ Կնիկը մարդին տեսնալու բաշտան, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Համա մարդը որ ասես ձեն, ծպտոն չի հանում. նոթերը կիտած էթում ա մի պուճախում նստում։ Էս կնիկն ա՝ էն սհաթը էթում ա լագանով ջուր բերում, մարդի ոնները լվանում, շորերը փոխում, ննա հացի թաղարեք ա տենում, որ մարդին հաց տա։ Հաց են ուտում, պրծնում, թեք են ընկնում, քնում։ Կնիկը մնում ա միտք անելոն, թե էս ի՛նչ ա պատահե իրա մարդին, որ ըսենց նոթերը կիտել ա, որ ասես, չի խոսում։

— Հալբա՛թ,— ասում ա,— գնացել ա ղարբություն, չի կարացե փող աշխատի, դարտակ վեր ա կացե, էկե՝ ընդուր ա ըսենց դառը-տխուր, յա ո՛վ գիտա ճամփին մի փորձանք ա էկե գլուվը, չի ասում։

Մախլա՛ս՝ խեղճ կնիկը ի՛նչ անում ա, չի անում, մարդի դարտը չի կարում իմանա։

Ըսենց անցկացավ մի քանի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը մարդը կնկանը խաբլությունով տարավ գեղիցը դուս, ընդե տվեց սրպանեց, ինքը էլ եդ դառավ, էկավ գեղը։ Ասում հրամանով ալբիալը էդ սրպանած կնկա տեղը աղբուր դուս քցեց։ Էդ աղբուրը ընենց մի Անմահական ջուր ուներ, ընենց մի Անմահական ջուր ուներ, որ մեռելն էլ խմեր, էն սհաթը կսաղանար, ընդե կկաններ։

Ըսենց անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը մի բեզրգյան իրա մարդկերանցով անցկենալիս ա ըլնում էդ գեղի կշտովը։ Հենց հասնում ա էդ կնկա սրպանած տեղը, մութը գետինը կոխում ա։

— Ըստե վե գանք,— ասում ա,— հաց-մաց ուտենք, դինջանանք, գշերը մնանք, նոր էն գլխեն վե կենանք ընկնենք ճամփա։

Էդ աղբրի կշտին վեր են գալի, չադիր տալի, մնում։ Որ վեր են գալի պրծնում, տեսնում են էդ աղբրի կշտին հրենիկ մի սպանած կնիկ։

Ասում են.— Հա՛լբաթ իրա մարդին մուխաննաթություն ա արե, նա էլ սրպանել ա, բերե քցե ըստե, որ շան ու գիլի փայ ըլնի։

Բերում են կրակ անում, որ կիրակուր էփեն։ Իրանք էլ կողագից սավայի զադ չեն ունենում։ Թավով ջուր են դնում կրակի վրեն, որ մի քանի խոտոց կողագ խաշեն։ Կողագը կոտորում են, ածում թավեն թե չէ, ալբիալը սաղանում ա, թավի միջիցը դուս գալի, ընկնում գետինը։ Քոմմա մնում են զարմացած, թե էս աղբրի ջուրը ինչ զորություն պտի ունենա, որ կոտորած կողագը քցում ես մեջը՝ սաղանում ա։ Շատ են միտք անում, խելք խելքի տալի, ի՛նչ անում են չեն անում, չեն կարում իմանա։

— Է՛կեք փորձենք,— ասում ա բեզրգյանը,— էս սրպանած կնկա վրեն էլ եդ ջրհոցը շաղ տանք, տեսնանք կսաղա՞նա, թե չէ։

Բերում են շաղ տալի։ Շաղ տալու բաշտան էդ կնիկը սաղա-

նում ա, վե կենում նստում, ըլնում ա ո՛նց որ մորեն մին։ Քոմմա մնում են սառած իրար էրեսի մտիկ անելոն։

— Ի՞նչ կնիկ ես,— հարցրեց բեզրգյանը,— էս ո՞նց ա էլե, որ քեզ սրպանել են, բերե քցե ըստե։

Նո՛ր էդ կնիկը ըստե նստեց մին-մին նաղլ արեց իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Բեզրգյանը էս որ իմացավ, հարցրեց.— Ջե՞ս գա քեզ տանեմ շինեմ ինձ կնիկ. ղաթի ես էլ աղապ, էթանք գլխներս դինջ իրար հեննա ապրենք։

— Ջէ՛, բեզրգյանը սաղ ըլնի,— ասեց կնիկը,— ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի։

— Ջէ՞,— մըն էլ հարցրեց բեզրգյանը։

— Ջէ՛,— ասեց կնիկը։

— Տե՞ս, կփոշմանես,— ասեց բեզրգյանը։

— Ջե՛մ փոշմանի,— ասեց,— դու քու աստոծ, ի՛նչ ուզում ես՝ ա՛րա։

Բեզրգյանը շատ հերսոտեց էդ կնկա վրեն, նոքարներին հրամայեց, մի քառասուն գազանոց ֆոր փորեն, նրան քցեն մեջը, մի եքա քար էլ դնեն ֆորի բերնին, որ ընդիան դուս չգա։ Նոքարները մի քառասուն գազանոց ֆոր փորեցին, խեղճ կնկանը քցեցին մեջը, մի քար էլ դրին ֆորի բերնին։ Առավոտը լիսը բացվեց թե չէ, սրանք իրանց զադ-մադերը հավաքեցին, վե կացան ընկան ճամփա։

Էդ կնիկը մնաց մեն-մենակ ֆորի միջին։ Շատ ձեն տվեց, հարա՛յ կանչեց, աղաչանք-պաղատանք արեց, հավարին հասնող չէլավ։ Անց ա կենում ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, օրեն մի օրը մի ուրիշ բեզրգյան ա գալի, էդ ճամփովը անցկենում, էդ աղբրի կշտին վեր ա գալի, չադիր տալի մնում, որ մի քիչ դինջանա, հացմաց ուտի, էլի վե կենա էթա իրա ճամփեն։ Վե գալու բաշտան մի նվոցի ձեն ա ընկնում անկաջը։

— Էս ի՞նչ նվոցի ձեն ա,— հարցնում ա բեզրգյանը նոքարներին,— մի գնացե՛ք տեհնք էդ ձենը ո՞րդիան ա գալի։

Նոքարներն էթում են դե՛ս ընկնում, դե՛ն ընկնում, է՛ս դիհը ման գալի, է՛ն դիհը ման գալի, անկաջ դնում, մախլասի՝ ո՛ր շատ ման են գալի, տենում են հրեսիկ մի քառասուն գազանոց ֆոր, էդ ֆորի միջիցը մի նվոց ա գալի։ Ֆորի բերնի քարը եդ են քցում։

1646—19

— Էդ ո՞վ ես,— հարցնում են նոքարները։

— Աստ՛ւ սիրուն,— ձեն ա տալի կնիկը ֆորից,— ինձ ըստիան ազատեք։

Ալբիալը բերում են պարան կախ անում ֆորը, կնիկը կապում ա մեջքը, քաշում են, հանում։ Հանում են ի՞նչ տեսնում՝ մի սի՞րուն, նա՞շխուն կնիկ։ Աղաք են անում դրան, բերում բեզրգյանի կուշտը, բեզրգյանին նաղլ անում թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

— Ի՞նչ կնիկ ես,— հարցնում ա բեզրգյանը,— ըստերանք ի՞նչ ես շինում։

Կնիկը նստում ա ըստե մին մին նաղլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Ինձ չե՞ս առնի,— հարցնում ա բեզրգյանը,— դու ինձ կնիկ, ես քե մարդ։

— Ջէ՛, բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա կնիկը,— ես մարդ ունեմ, իմ հալալը ո՞նց հարամեմ։

Էս խոսքի վրեն բեզրգյանը սրտի հերսիցը չի իմանում ի՞նչ անի։ Նոքարներին հրամայում ա էդ կնկանը դնեն մի ղութկի մեջ, ղութկի բերանը կալնեն, տանեն քցեն ծովը։ Նոքարները բերում են մի ղութիկ շինում, դրան դնում մեջը, ղութկի բերանը ղայիմ կալնում, տանում քցում ծովը, թողում գալի։

Էդ ղութիկը ջրի էրեսին տըմբըտըմբալոն էթում ա։ Էթում ա, էթում, մի օր, էրկու օր, մախլասի՝ իրեք օր, քամին քշում ա, հանում ջրի ղրաղը։ Ըտե ծովի ղրաղին մի թոռչի էր կենում. ինքն էր, մի պառավ մեր, էլ զադ չուներ. էրկսով էդ անվիրի-վիրի տեղը տուն ին շինե, գլխները դինջ իրանց համար ապրում ին։

Էս թոռչին ջրի էրեսին ղութիկը որ տեհավ, ուրախացավ, աշխարով մին էլավ. հենց իմացավ միջինը փող ա, յա ապրանք, յա մի ուրիշ զադ, ասեց.— Կտանեմ, կհարստանամ,— թոռը քցեց, հանեց։

Ճըրընչալոն էդ ղութիկը դրեց շալակը ու դո՛ւզ դպա տուն։ Որ հասավ տուն, բերին ղութկի բերանը բաց արին. բաց արին, ի՞նչ տեսնան՝ միջին մի թրջված, տըմբըսկված կնիկ, որ սովածությունից լղարե, դառել ա չոր չոփ, պինչը բռնես ֆոգին կտա։

— Փա՞ռք քեզ, աստո՛ծ,— ասեցին,— փառքդ շա՞տ ըլնի, հալբաթ էս էր մեր ղսմաթը։

Թոռչու մերը բերում ա էդ կնկանը տաք ջրով չին-չին լեղաց-

նում, իրա հին շորերիցը հագցնում, եննա հացի թադարեք ա տենում. մի քանի ձուկն ա խաշում, կիրակուր էփում, մախլաս՝ ի՛նչ որ աստոծ տվել էր՝ բերում ա դնում աղաքը, որ ուտի։ Խեղճ կնիկը զաթի սուված, նխտից ընկած՝ հացը որ տեհավ, գիլի նման վրա պրծավ հացին։ Կերավ, կշտացավ, աստուն փառք տվեց, թոռուցը, նրա մորիցը շնորհակալ էլավ, ղրաղ քաշվեց։

— Համի ա՛սա տենանք,— հարցրեց թոռչին,— էս ի՞նչ բաս ա, քեզ ո՞վ բերեց քցեց ծովը։

— Բա չե՞ս ասի,— ասեց էդ կնիկը,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

Նո՛ր նստեց ըստե մին-մին նաղլ արեց նրանց իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Ինձ չե՞ս առնի,— հարցրեց թոռչին,— զաթի ես էլ ազապ, մարդ ու կնիկ ըլնենք, ըստե իրար հեննա ապրենք։

— Չէ՛,— ասեց էդ կնիկը,— ես մարդ ունեմ, իմ հալալը ո՞նց հարամեմ։ Ուզում ես,— ասեց,— ա՛րի քիր ու աղպեր ըլնենք։

— Ըլնե՛նք,— ասեց թոռչին,— թող քու ասածն ըլնի։

Ըսօրվանից դենը թոռչին քանի էթում էր ձկան, ասսու հրամանով, ամեն թոռի անհեսաբ ակն ու մարգարիտ էր հանում ծովիցը. համա խեղճը չէր իմանում ըտոնք թանգ բաներ ա, որ տանի ծախի, բոլ փող կտան։ Ըսենց էնքամ ակն ու մարգարիտ հանեց ծովիցը, որ տանը էլ դնելու տեղ չկար՝ էնքա՜մ շատ էր։

Օրեն մի օրը միտք արեց, ասեց՝ արի մի քանի հատ տանեմ քաղաք, շանց տամ, տենամ կա՞ռնեն։ Քաղաք հասավ թե չէ, գնաց մի զարգյարի դուքան, ակն ու մարգարտները հանեց, շանց տվեց։

— Հատին հիսուն մանեթ տա՞մ,— ասեց զարգյարը։

Թոռչին ծիծաղաց, հենց իմացավ տնազ ա անում։

— Դե՛ լավ, հարիր մանեթ տամ,— վրա բերեց զարգյարը։

Թոռչին էլի ծիծաղաց։ Մախլաս՝ գլխներդ ինչ ցավացնեմ, զարգյարը ինչ գին ասում էր, թոռչին ծիծաղում էր։ Էնքամ արեց, որ հատը հինգ հարիր մանեթով ծախեց։

— Ա՛յ ուստա,— ասեց թոռչին,— սրանցից որ էլ բերեմ՝ կա՞ռնես։

— Կառնեմ, խի՛ չեմ առնի,— ասեց զարգյարը։

— Բա՛ս որ ըտենց ա,— ասեց,— կբերեմ։

Թոռչին ուրախ-ուրախ փողերը դրեց չբը, եդ դառավ, էկավ

տուն։ Էկավ մի աղլուխ լիքը լցրեց էն ակն ու մարգարտներիցը, թազադան վե կացավ էկավ քաղաք. գնաց դո՞ւզ էն զարգյարի դուքանը։

— Բար՝աչողում, ո՛ւստա,— ասեց Թոռչին։

— Ա՛յ բարո՛վ, հազա՛ր բարին, խերին, Թո՛ռչի աղպեր, ամեն ճամփեդ սալամաթ. ո՞նց ես, լա՞վ ես։

— Հրես բերել եմ, ո՛ւստա, տես կհավա՞նես։

Ասեց ու աղլխով լիքը մարգարտները դրեց աղաքը։ Զարգյարը աղլուխը բաց արեց, համբրեց, հատը հինգ հարիր մանեթով վե կալավ, հանեց փողը նաղդ տվեց, ձեռիցն առավ։ Դե՛, Թոռչի՛ ու էսքամ փո՛ղ. ուրախությունիցը քիչ էր մնացե գժվեր։

— Ի՞նչ առնեմ, ի՞նչ չառնեմ ըստիան տանեմ, որ լավ ըլնի,— ասեց Թոռչին։

Միտք արեց, միտք արեց, ասեց.— Արի բոլ ցորեն առնեմ, տանեմ լցնեմ ամբարները, մի քանի տարվա պաշար հազրեմ, որ մըն էլ վե չկենամ գամ ըստե ցորնի։

Ինչքամ փող ուներ ձեռին, բիրադի տվեց ցորնի։ Առավ, լըցրեց չվալները, բերաննները ղայիմ կապեց, քրեհդարներ բռնեց, որ տանեն։ Քրեհդարները տարան հասցրին ծովի ղրաղը։ Թոռչին բերեց իրանց ամբարները քոմմա լցրեց. հա՛ կե, թե պտի հատնի։

Անցկացավ մի քանի վախտ, էդ Հալալը չհարամող կնկա երկիրը սով ընկավ։ Սո՛վ եմ ասում, էնթավո՛ւր սով, որ աստոծ փրկի, ազատի, իմ միս կտրողին ռաստ չգա. հերը որդուն էր ուտում, աղպերը՝ աղպորը, բարեկամը՝ բարեկամին. մախլասի՝ ո՛վ ո՛ւմ ձեռն ընկներ, նրան էլ պրծնում չկար, սաղ-սաղ պտի ուտեր, կշտանար, ղրաղին կաններ՝ ընե՞նց մի զուլում սով էր։ Թոռչու ի՞նչ վեչն էր, թե աշխարքը սով ա ընկե. ամբարները լիքը, թեկուզ տասը տարի էլ ուտելին չէր հատնի։

Էդ սով ընկած երկրի մարդիքը իմացան, որ էդ Թոռչու ամբարները լիքը ցորեն ա, ամեն դհից վեր ին կենում, գալի սրա կուշտը. սա էլ քոմմքին տալիս էր, ճամփու դնում։ Մի օր էլ էդ Հալալը չհարամող կնկա մարդը ու էրկու բեզրգյան էկան ցորնի. էդ էն էրկու բեզրգյանն ին, որ իրանց քարվանուվը անցկենալիս՝ էդ կնկանը ռաստ էկան, ուզեցան վրեն պսակվի, նա ղաբուլ չէլավ, ասեց. «Ես իմ Հալալը չեմ հարամի». նրանք էլ բերին էն օղիեքը հաղացին սրա գլուխը։

Էդ կնիկը սրանց տենալու բաշտան ճանանչեց, համա լիս չընկավ, ասեց.— Տենամ սրա վերջն ի՞նչ ա ըլնում։

Նրանք հո, որ ասես, չճանանչեցին։ Ախար ո՞րդիան որդեում մտքովը կանցկենար, թե էդ կնիկը սաղ կմնա, մի օր նրա էրեսը սրանց էրեսին կառնի։

Էդ Հալալը չհարամող կնիկը մի օր բերեց ղոնաղլըղ սարքեց, իրա մարդին ու էդ էրկու բեզրգյանին կանչեց իրա կուշտը ղոնաղ։ Նրանք էլ վե կացան էկան։ Էդ կնիկը նրանց ընենց մի քո՛ֆ շանց տվեց, ընենց մի ուրախությո՛ւն շանց տվեց, որ էլ չեմ կարա ասի։ Քոմմքով էլ որ լուլ ու կուլ հարբեցին, էդ կնիկը վե կալավ թե.— Է՛կեք,— ասեց,— ամեն մարդ իրա գլխով անցկացածը նաղլ անի, անկաջ աննենք։

— Լա՛վ,— ասեցին էն էրկու բեզրգյանը ու էդ կնկա մարդը,— է՛կեք։

Էդ կնիկը աղաք մի բեզրգյանին հարցրեց։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասեց,— դե՛ նաղլ արա տենանք ի՞նչ ա անցկացե քու գլխովը։

— Սրանից մի քանի տարի աղաք,— ասեց էդ մի բեզրգյանը,— նոքարներիս հեննա ճամփա ի էթում։ Էկանք, էկանք, մի աղբրի կշտի մութը գետինը կոխեց։ Վեր էկանք ըտե, չադիր տվինք, կացանք. վարավուրդ արինք, տեհանք էդ աղբրի կողքին հրենիկ մի կնիկ սրպանած, վե քցած։ Բերինք էդ աղբրի ջրիցը շաղ տվինք կնկա վրեն, ալբիալը սաղացավ, ընդե կաննեց։ Ուզեցա հեննեն պսակվի, ղաբուլ չէլավ, ասեց. «Ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի»։ Ես էլ, սրտիս հերսիցը, հրամայեցի նոքարներիս մի քառասուն գազանոց ֆոր փորեն, էդ կնկանը քցեն մեջը, մի քար էլ դնեն ֆորի բերնին։ Ննենա շատ էլ փոշմանեցի, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե։ Հրես էս ա իմ գլխով անցկացածը, որ ընչանք օրս սրտիս միջին դարտ ա դառե, գշեր, ցերեկ ինձ էրում ա։

Ննենա մեկել բեզրգյանին հարցրեց։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասեց էդ կնիկը,— համի դորը քունն ա. ասա տենանք քո՞ւ գլխովը ի՛նչ ա անց կացե, քո՞ւ դարտն ի՛նչ ա։

— Իմ դարտը նրանից շատ ա,— ասեց մեկել բեզրգյանը։— Ես էլ հենց էդ կնկանը ռաստ էկա, ֆորիցը հանեցի։ «Ինձ չե՞ս

առնի»,— հարցրի. «Չէ՛,— ասեց,— չե՛մ առնի. ես մարդ ունեմ, իմ հալալը չեմ հարամի»։ Ես էլ հեբսոտեցի էդ կնկա վրեն. նոքարներիս հրամայեցի դրա ձեռ ու ոտը կապեն, դնեն մի ղուբկի մեջ, տանեն քցեն ծովը։ Խե՜ղճ կնիկ, ո՛վ գիտա հմի ծովի ձկների փայ ա էլե, պրծե։ Եննա ես էլ փոշմանեցի, գլխիս վա՜յ տվի, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե։

Դորը գալիս ա իրա մարդին։ Վերջը նրան ա հարցնում։

Նա էլ թե.— Ջունքի դուք էրկսով էլ ձեր մեղքը շլինքներդ առաք, ես էլ իմ մեղքն եմ շլինքս առնում։ Էն կնիկը որ կար՝ իմ հալալ, թագն ու պսակ կնիկն էր. ե՛ս նրան խաբլուբյունով տարա գեղիցը դուս, ընդե սըպանեցի, հենց իմացա իրա հալալը հարամել ա։ Ի՛նչ ասեմ, ես բիրադնիցդ էլ մեղավոր եմ։

— Պրծա՞ք,— հարցրեց էդ կնիկը։

— Հա՛, պրծանք,— ասեցին։

— Դե՛ հմի դորն իմն ա,— ձեն տվեց ընդհան կնիկը։— Էդ Հալալը չհարամող կնիկր ես եմ, որ կամ։ Աստծ ինձ ամեն փորձանքից ազատեց, սաղ-սալամաթ էս ծովի ղրաղը հասցրեց, որ մի օր իմ դրստուբյունը էրևա, թե ես Հալալը հարամող կնիկ չեմ։

Էս որ լսեցին, իրեքով էլ մնացին էշ կտրած, իրար էրեսի մտիկ անելոն։ Ամոթու պապանձվել ին, մնացե. չին կարում մի խոսք էլա ասի։ Էն սհաթը իրեքով էլ էկան, ընկան էդ կնկա ոները, մեղա էկան։ Նա իրեքին էլ բաշխեց։

Սրանք մի քանի օր էլ կացան ըտե. նո՛ր ճամփի թադարեք տեհան, էդ թոռլու ու նրա մոր հեննա մնաս բարով արին, չորսով վե կացան ընկան ճամփա դպա իրանց երկիրը։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինն՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



23. ԱՍՍՈՒ ՊԱՀԱԾ ԳԱՌԸ ԳԵԼԸ ՉԻ ՈՒՏԻ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր։ Էս թագավորը ունենում ա մի կնիկ, էրկու էլ տղա՝ ամեն մինը ըսենց հինգ-վեց տարեկան։ Էս թագավորը ընե՛նց մի խղճմտանքով մարդ ա ըլնում, ընե՛նց մի արդար դատաստան անող, աղքատներին, անճարներին ողորմող, որ քոմմա սրա անըմովն ին օրդում[1] ուտում՝ ընե՛նց մի հայ-քրիստոնյա մարդ ա ըլնում։

Օրեն մի օրը, մի դարվիշ վեր ա կենում գալի էդ թագավորի ամարաթը։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում են նոքարները։

— Ես ֆլա՛ն դարվիշն եմ,— ասում ա,— էկել եմ թագավորին տեսնամ։

Էթում են թագավորին իմաց տալի.—Թագա՛վորն ապրած կենա,—ասում են,—ըսենց մի դարվիշ ա էկե, ուզում ա քեզ տեսնա, Թո՞ղանք գա, թե չէ՛։

— Թո՛ղ գա,— ասում ա թագավորը,— մա՛րդ ա, բալի մի խնդիրք ունի ասելու։

Նոքարներն էթում են դարվիշին կանչում, բերում թագավորի կուշտը, իրանք թողում դուս գալի։ Դարվիշը թագավորին գլուխ ա տալի, ընդե կաննում։

---

[1] Տպագիր տեքստում՝ ներում. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Ի՞նչ մարդ ես,— հարցնում ա թագավորը,— ի՞նչ բանի համար ես էկե։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես ֆլա՛ն դարվիշն եմ, ֆլա՛ն երկրիցը՝ մի խնդիրք ունեմ քեզ ասելու։

— Ասա՛,— ասում ա թագավորը,— ասա՛ տենամ խնդիրքդ ի՞նչ ա։

— Թագա՛վորն ապրած կենա, կասեմ, համա պտի օրդում ուտես, որ անխոս կկատարես։

— Ասա՛, մի՛ վախի. ինչ որ ձեռիցս գա՝ կանեմ։

Դարվիշը գալիս ա ընկնում թագավորի ոնները.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես ուզում եմ, որ քու թագավորությունը իրեք օր տաս ինձ։ Կտա՞ս, թե չէ։

Թագավորը միտք ա անում, միտք ա անում, միտք ա անում.— Լա՛վ,— ասում ա,— որ տամ, դու էլ խո՞սք ես տալի, որ իրեք օրը թամմի թե չէ՝ իմ թագավորությունը էլ եդ ինձ տաս։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, հա՛, խոսք եմ տալի։ Ըրտվի, ի՛նչ ուզում ես՝ արա՛։

— Որ ըտենց ա, տվի [1]։

Կենում ա ընչանք լավ մութը գետինը կոխում ա, ոտքը խաղաղվում, նոր իրա շորերը հանում ա, տալի դարվիշին, դարվիշինը ինքը հագնում, թողում ամարաթը, դուս գալի։ Էթալիս նորքարները տենում են, ըսկի չեն էլ ճանանչում. ասում են՝ հալբաթ էն դարվիշն ա, թագավորին տեհավ պրծավ, հմի էթում ա. դուռը բաց են անում՝ ճամփու դնում։ Հա՛, ըս էլ պտի ասեմ, որ էս բանր թագավորից ու դարվշից սավայի, որ ասես, մարդ չի իմանում, ընչանք իրա օղլուշաղն էլ խաբար չիլնում։

Թամամ իրեք օր դարվիշը թագավորություն ա անում։ Իրեք օրը թամմում ա թե չէ, թագավորը վեր ա կենում գալի։

— Դա՛րվիշ աղպեր,— ասում ա,— իրեք օրը թամմեց, դե հմի վեր արի թախտիցը՝ ես նստեմ։

— Ի՞նչ ես դուս տալի,— ասում ա դարվիշը,— հո չե՞ս գժվե. ի՛նչ թախտ, ի՛նչ բան, էրա՞զում ես, ի՛նչ ա։

— Լա՛վ, դարվիշ աղպեր, հանաքի վախտը չի. թեզ արա՛, քանի մարդ չի էկե։

[1] Տպագիր տեքստում՝ «Բաս որ ըտենց ա, կտամ». խմբագրումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

հանեի, ես նրան ինձ որբի պըտի շինեմ, իմ թաքավորութունն էլ տամ նրան։

Տղեն գնաց հընդոցը ասեց, թե.— Դա՛վիթ, դե դու գնա քու բանին կաց. վախի՛ր մի, թաքավորը ինձ իրան տղա ա շինըմ. եվոր բանն էլավ, ինչ որ սիրտդ ուզի՝ ես կտամ քեզ։ Դե գնա՛, արևին կաց։

Հընդկերը գնաց իրա տեղը, ինքն էլ գնաց թաքավորի կուշտը։ Թաքավորը գրկեց դրան համամ, համուզ լիզացրին, բերին համուզ շորեր հաբցրին, արին թաքավորի տղա։ Մնաց մի էրկու շափաթ, մի ամիս ըտեղ, թաքավորը մտածեց, ասեց.— Արի՛ սրան պսակենք, ժամանակին իմ թաքավորութունն էլ տամ սրան։

Վաղիրն ու նազիրն ասեցին.— Լավ ես ասըմ, թաքավոր, համա խոսքը տղինն ա, կանչենք հարցնենք, տենանք ո՞ւմ ախչիկն ա առնըմ։

Թաքավորն ասեց.— Շա՛տ լավ։

Կանչեցին տղին, ասեց.— Որբի, ես ուզըմ եմ քեզ հարսանիք անեմ, մի լավ մարթի ախչիկ ուզեմ, որ դու ըլես իմ թախտի թաքավոր, նա էլ ըլի թաքուհի։

Ասեց.— Թա՛քավոր, դու դիտաս։

Ասեց.— Ես դիտամ, համա բանը քեզանըմ ա, տենանք ո՞ւմ ախչիկն ես ուզըմ։

Ասեց.— Թաքավոր, ախր էդ ձեր բանն ա, ես ի՞նչ ասեմ։

Ասեց.— Որբի, դու պըտես ասիլ, ա՛սա։

Ասեց.— Թաքավոր, որ ինձ ես հարցնըմ՝ շատ զոռ ա իմ ասածը։

Ասեց.— Ասա՛, որբի, ինչ որ ասես՝ կկատարեմ։

Ասեց.— Թաքավոր, որ ինձ ես ասըմ՝ ես առնըմ եմ Գյուլինան-Բանովշին [1]։

Ասեց.— Ա՛յ հա՛յ, էդ շատ դժվար ա, ա՛յ որբի։— Ասեց.— Նաղրի ախչիկն առ, վաղրի ախչիկն առ, յա մի ուրիշ թաքավորի ախչիկ առ, թե չէ ո՞վ կարա բերի Գյուլինան-Բանովշին։

Ասեց.— Թաքավոր, եվ որ ինձ իրավունք տաս՝ ես բերել կտամ։

Ասեց.— Ես շատ ուրախ կըլնեմ, իրավունք ունես։

---

1 Դեղնագույն վարդին, (ծաղոր. բանահավաքի)։

— Մարթ ըրկնք,— ասեց,— իմ ընդորը կանչենք, իմ հընգեբը շատ ղոչաղ ա, նա կբերի։

— Մարթ ըրկա՛, Թող կանչեն գա։

Ասեց.— Թաքավոր, ես ինքս կէթամ կբերեմ տղին։

— Դե գնա՛,— ասեց։

Դուս էկավ, գնաց իրա հընգոր կուշաը.— Բարի իրիկուն, ա՛խպեր։

— Բարով, հազար բարի։

— Էհ, մո՞նց ես, լա՞վ ես։

— Լավ եմ, էլի, ապրըմ ենք. էս շափաթ մի իրեք մանեթ վող եմ առե։

— Վախիլ մի, ադա, ասաված որ աչողացրել ա՝ իրեք մանեթի տեղակ իրեք հազար մանեթ կատամ քեզ, ճամփու կդնեմ։— Ասեց.— Ադա, գիտա՞ս ինչ կա։

— Ի՞նչ։

— Քեզ շատ Թաքավորի կշտին դովացել եմ, ասել եմ ըսենց ղոչաղ տղա ա իմ ախպերը։ Էկել եմ քեզ տանեմ, որ էթաս ինձ հըմար ախչիկ ուղես։

— Հա՛յ անաշկն, ես ո՞րտեղան ախչիկ ուղողն եմ։ Ես ի՞նչ գիտամ ախչիկ ուղիլը։

— Այ տունդ շինվի, ի՞նչ ես վախըմ, ինչ որ քե կասենք՝ դու էն արա։ Տանըմ եմ քեզ, որ Թաքավորը քեզ ճընանչի, որ էն ժամանակը, որ ես Թաքավոր ըլեմ՝ դու էլ ըլես իմ նազիրը։

Թև.— Դեհ դու գիտաս, ախպեր, որ ասըմ ես՝ էթանք։

Վե կացան իրանց այնոյինը վե կալան, գնացին Թաքավորի կուշաը։

Գնաց տղեն Թաքավորին գլուխ տվուց, կանգնեց, ասեց.— Թաքավորն ապրած կենա, ի՞նչ ես ասըմ։

Թաքավորն ասեց.— Ես քեզ ասըմ եմ, որ էթաս Գյուլինան-Բանովշին ուղես իմ սանիկին. գնա՛, ինչ որ սիրտդ ուղըմ ա, վե կալ ու գնա։

— Թաքավորը սաղ ըլի,— ասեց,— ես ո՞նց էթամ, դու Թաքավոր ես՝ չես կարըմ, որ զորք ունես, զոռ ունես. ես ի՞նչ անեմ՝ ոչ մարթ ունեմ, ոչ փող։

Սանիկն ասեց.— Սուս կաց, գնա՛, մի վախիլ, ես քեզ տեղը կասեմ, ուղըմ եմ քեզ լավ մարթ շինեմ, ինչ ուղըմ ես՝ ուղի, գնա՛։

Ասեց.— Թաքավոր, որ ախպերս ասըմ ա՝ կէթամ, համա զարիպ տղա եմ, ինձ մի տասը օր ժամանակ տու, մի հազար մանեթ էլ փող տու, ուտեմ, խմեմ, էս քաղաքը ման գամ, մարթ ճընանչեմ, որ նոր էթամ։

Թաքավորն ասեց.— Շատ լավ, հազար մանեթ տվե՛ք էդ տղին։

Էդ տղեն պլուս տվուց ու դուս էկավ, դնաց քաղաքը. օրը հարիր մանեթ էդ քաղաքըմը ծախսեց՝ ուտըմ էր, խմըմ, դափով, զուռնով քեֆ անըմ։ Ինն օր քեֆ արեց, մնաց էն մի օրը, մնկ էլ հարիր մանեթ փող։

Տղեն առավոտը վեր կացավ, էրեսը լվաց, ասեց.— Ա՛ստվածս, էսօր հարիր մանեթը ո՞րտեղ պըտի ուտեմ։

Գնաց քաղաքի ղրաղին, տեհավ մի մկիտանի դուքան կա.— Բարիլո՜ւա,— ասեց,— խազեին։

— Բարո՜վ, հազար բարի։

Ասեց.— Խազեին, մի տրիցատկա արաղ բե՛։

Արաղը բերուց։

— Էրկու թաս էլ բե,— ասեց։

Լցրուց էրկու թասը, մինը ինքը վեր կալավ, մինն էլ տվուց մկիտանչուն։

Ասեց.— Սաղ ըլես, խազեին, աստվածս բարու հետ ըլի։— Ասեց.— Համա՛, խազեին, էտ էլ դու խմա։

Մի մին էլ խմեցին, հանեց արաղի փողը տվուց՝ տասը մանեթ։

— Ա՛ռ, խազեին, ես սաղ ըլեմ քու հըմար։

Խազեինը առավ փողը, դրուց դալխը։ Ինքը մաքի հետ ընկավ. ղաֆիլ տեղ էթալը միտքը ընկավ։ Ձևը դրուց անդաջին, մտածեց։

Խազեինն ասեց.— Ա՛յ տղա, խի՞ ես ըտենց երկար մտածըմ, վախըմ ես տասանոցդ ուտե՞մ։ Արաղի դինը մի աբասի ա, մնացածը ես կտամ։

Ասեց.— Խազեին, դրա հըմար չեմ մտածըմ,— ասեց,— ես դարդ ունեմ։

Ասեց.— Ա՛յ որթի, ի՞նչ ա դարդդ։

Ասեց.— Թաքավորը ինձ ղրկըմ ա էթամ Գյուլինան-Բանուվշին բերեմ։ Տասն օր մհուլ ի առել. էսօր թամամըմ ա, էքուց պըտի էթամ, չեմ գիտըմ, թե ի՞նչ անեմ։

Ասեց.— Վա՜յ, այ որթի, էդ ինչ դժվար բան ա. էդ թաքավորը ինքը խի՞ չի էթըմ, որ քեզ պես մի գյադի ա ղրկըմ։

Ասեց.— Իմ հընդորն ա ուզում էդ ախչիկը, իմ հընգերն էլ ինձ ա ղրկում։

— Ա՛ տղա,— ասեց,— քու ու քու հընդոր մնչ բան կըլի, դու կարա՞ս էդ ախչիկը բերել։

— Ի՞նչ անեմ, որ ղրկում են՝ պըտի էթամ, էլի։

— Դե որ պըտի էթաս, ա՛յ որթի, ես պատվերը քե կասեմ։

Ասեց.— Պըտի ծովով էթաս, մի հատ,— ասեց,— ծովի ղրաղին դյամի շինել կաս, որ մնչը սաղա չամ-չրաղից ըլի. նրա մնչին վե կունես մի աարին ուտելիք, ետո քեզ համար վե կունես տասնէրկու ձեռք բամուղ թաքավորական շորեր, էնու դյորա էլ փող վե կունես. վախիլ մի, թաքավորից ինչ ուզես՝ կտա, թաքի էն ախչիկը բերես։ Վե կունես,— ասեց,— մի ուրաք, մի սղոց, մըն էլ մի կծիկ թել, որ ընչար հազար մղոն երկար ըլի։ Ըտոնք որ թաքավորը տվուց, պրծավ, ընդիան որ նստես դյամին, առաչին սրֆթա մի ձուկ ըռաստ կգա, էն ձկանը քցա ջուրը. ընդիան որ գնացիր, մի ջուր ա գալի՝ մտնըմ ա ծովի մնչը, ինչքան մըչիմ կա՝ բուփ են էլել ընտեղ, սղոցով մի ծառ կկարես, ուրաքով կտաշես ու կդնես էն ջրի վրեն, որ մըչըմները անց կենան։ Էն մըչըմները ժամանակով քեզ կհարկավորին։ Էնտեղան էլ կէթաս կտենաս, որ մի մենձ ծառի վրա մի Ջմբուռթ ղշի բուն կա, նրա ճուտերը ամեն տարի օցը ուտըմ ա, ընտեղ բուսուն կպահես, օցին կսպանես, էն Ջմբուռթ ղուշը քեզ կհարկավորի։ Ետո ընդիան էլ կէթաս մի ծովի ղրաղին, մի ծառի վրի աշխարքը ինչ ղդար մեղրաճանճ կա՝ հավաքվել են ընտեղ, էն թելի տուտը կկապես էն ծառիցը, մի տուտն էլ ձեռիդ կպահես ու դյամին կքըշես, կէթաս՝ ծովի մըչին մի կղզի կա, էն կղզումը մի ծեր, հալիվոր մարթ կա, կէթաս նրան բարով կտաս, նա քու բարովը կառնի, քեզ կօրհնի ու կմեռնի, նրա տեղն ընտեղ կփորես, կդնես փոսի մնչը, ֆողը վրա կտաս, նրանից եննա էլ դու դիտաս, կէթաս, կըլնես Գյուլինան-Բանովչի քաղաքը, ինչ կանես՝ կանես։

Էն օրն էլ մընեց, գնաց իրա տեղը քնեց. առավոտը լիսացավ, շատ թեզ թաքավորի մարթն էկավ կանչեց տարավ. գնաց թաքավորի կուշտը, թաքավորն ասեց.— Հը՛, ա՛յ տղա, պրծա՞ր, քեֆդ արիր, վերչացրիր, լավ մարթիկ ճանչեցի՞ր։ Հըմի ի՞նչ ես ասըմ, կէթա՞ս։

— Թաքավորը սաղ ըլի, կէթամ, ընչի՞ հըմար չեմ էթա։

Թաքավորն ասեց.— Որթի, դե ուզա՝ տենամ ինչ ես ուզելու քու ճամփի հըմար։

Խեղճը հենց իմանում էր հանաք ա անում։ Համա մըն էլ էն տեհավ, որ նոքարներին ձեն տվեց. էկան վրա հասան, գլխին տալոն, բրոթբրոթելոն, քաշքշելոն տարան ընչանք հայաթը, ընդհան էլ արեցին քուչեն՝ դուռը շինեցին։ Խեղճը էլ չկարաց ամոթու ձեն-ծպտոն հանի, փոր-փոշման թողաց՝ գնաց։ Գնաց, հեգսի օրն էլ եդ էկավ, տեհավ ամարաթի դուռը բաց ա, ուսուլով նի մտավ, գնաց սուտ-թագավորի աղաքին կաննեց։

— Ա՛յ դարվիշ աղպեր,— ըսեց,— ըսենց հանաք չիլնի, էրեկ էլ ընենց խաղկ ու խայտառակ անելոն ինձ դուս անիլ տվիր ըստիան։ Թագավորությունս քեզ իրեք օր ի տվե, ըսօր էլ հրես չորս օրը թամմում ա։ Ի՞նչ կասես, աղպեր։

— Հանաք-մանաք չեմ գիտա,— ասեց դարվիշը,— էս սհաթը դուս կորի ըստիան, թե չէ նոքարներիս ձեն կտամ, կգան, էլի քեզ էրեկվա օրը կբցեն։

Խեղճ թագավորը տեհավ, որ ճար, իլլաճ չկա, դարվիշն ուզում ա զոռ-զոռըբա իրա թագավորությունը զավթի.— Դո՛ւ քու աստոծը,— ասեց,— թագավորությունը ձեռիցս խլեցիր, կնիկս ու էրեխեքս էլա տո՛ւ, տանեմ նրանցով մխիթարվեմ։

Դարվիշը գնաց բերեց տվեց իրան։ Նա էլ կնկա ու էրեխեքանց կուռը բռնեց, լալով, լալաշկով ամարաթիցը դուս էկավ՝ գնաց։

— Փա՜ռք քեզ, աստոծ,— ասեց,— փառքդ շատ ըլնի. դո՛ւ տվիր՝ դու էլ առար։ Հալբա՛թ ես մի մեղքի տեր ի, որ օր ծերություն էս զուլումը բերիր գլուխս։ Փա՜ռք, փա՜ռք, հազա՜ր հետ փառք քեզ, աստոծ։

Կնիկը, էրեխեքը աղաք արեց, ասեց. «Էթամ ղարբություն, բալի մի աշխատանքի տուտ բռնեմ, տուն, տեղ, օղլուշաղ պահեմ»։ Մի քանի ամսվա ճամփի պաշար վե կալան, ասսու անումը տվին, ընկան ճամփա։ Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ ընչանք իրիկուն էկան, մի չոլ-յարանի տեղ գշերը վրա հասավ։ Էն սհաթը ըստե վեր էկան, ասեցին. «Կենանք ընչանք լիսանա, նոր վե կենանք էթանք»։

Ըտե վեր են գալի, էթում[1] չոր չոփ, թիթեն-միթեն կիտում,

---

[1] Տպագիր տեքստում այս բառին հաջորդում է՝ ընդհատումից, որը չնշված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

բերում կրակ անում, կրակի չորս բոլորը ջերկուն նստոտում, ննջա բերում հաց-մաց ուտում, թեք ընկնում՝ քնում։ Գշերվա մի վախտը ղրնգղընգոցի ձեն ա գալի. թագավորը գլուխը բանձրացնում ա, տենում մի բեզրգյան իրա քոչ ու բարխանով, նոքարներով էկավ իրանցից մի մանգղյաչանք տեղ հեռու վ'եր էկավ։

Էս բեզրգյանը ըտե վեր ա գալի, չադիր տալի, նոքարներին հրամայում ա կրակ անեն, որ զադ-մադ էփեն ուտեն։ Նոքարներն էթում են[1] ցախ-մախ, թիթեն-միթեն[2] հավաքում, բերում, որ կրակ անեն, բիրդան տենում են՝ հրենիկ հա՜, ֆլա՛ն տեղը կրակ ա էրեվում։

— Էթա՛նք,— ասում են,— ընդիան կրակ բերենք՝ կպցնենք։

Վեր են կենում գալի ի՜նչ տենում՝ մի դարվիշ, էրկու էրեխա, մըն էլ մի կնիկ կրակի չորս բոլորը ջերկուն պառկոտել են։ Կնիկ մի՛ ասի՝ մի ակն-արեգակ, հուրի-մալաք, մարալ, ջեյրան, թառլան ղուշ ասա՛։ Սրանց ոտի ձենիցը թագավորը ալբիալը զարթնում ա։

— Բար՛իրիկուն,— ասում են,— դա՛րվիշ աղպեր։

— Բարո՛վ, հազա՜ր բարին,— ասում ա։

— Ջի՜նի մի քիչ կրակ տաս, տանենք մընք էլ կրակ անենք։

— Խի՜ չիլնի,— ասում ա,— հրենիկ՝ ինչքամ ուզում եք, վե՛ կալեք տարեք։

Նոքարներն էթում են մի քանի կրակ վեր ունում, թողում գալի իրանց չադիրը։

— Խի՜ էսքամ եդացաք,— հարցնում ա բեզրգյանը։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում են նոքարները,— էն ինչ մենք ենք տեհե, դու տենայիր՝ ո՛վ գիտա՝ ընչանք լիս ընդե ղուլ ըլնեիր, մնայիր։

— Խի՜, ի՜նչ կար, ի՜նչ եք տեհե,—հարցնում ա բեզրգյանը,— ասե՛ք տե՜նեմ։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում են,— գնացինք տեհանք կրակի չորս բոլորը պառկոտել են՝ մի դարվիշ, էրկու էրեխա, մըն էլ մի սի՜րուն, մի նա՜շխուն կնիկ. էնքա՛մ սիրուն, էնքա՛մ սի-

---

[1] Տպագիր տեքստում այս բառին հաջորդում է՝ ընդհատիից, որը ջնջված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ կոտոկոտոռաեք. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

րուն, էնքա՛մ սիրուն՝ որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես, հենց նրա դյուլ-ջամալին թամաշ անես [1]։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա բեզրգյանը,— չե՞ք կարա էթա մի ֆանդով էդ կնկանը փախցնի բերի. որ բերեք՝ էլ փո՛ղ, էլ խազինա՛, էլ մա՛լ, էլ դուվա՛թ, մախլաս՝ հենց ի՛նչ ուզեք, իմա՛ց կացեք, կտամ։

— Կա՛րանք, խի՞ չենք կարա, բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասում են։

Նոքարները կրակ են անում, պրծնում, եդ դառնում գալի դարվըշի կուշտը։

— Դա՛րվիշ աղպեր,— ասում են,— քեզ մի խնդիրք ունենք ասելու։

— Խեր ըլնի, ասեք տեննամ. ի՞նչ ա ձեր խնդիրքը,— ասում ա դարվիշը։

— Մեր բեզրգյանի կնիկը էրկուֆոգիս ա,— ասում են,— հրեն որդե որ ա կազատվի. սատանակաև էս չոլ, յարանի տեղը ո՛նչ տատմեր կա, ո՛նչ կնիկարմադ, որ ցավը բռնելիս՝ նրան մուղաթ կենա։ Համի էկել ենք մուննաթ անենք քեզ, կնկանդ ասես՝ գա մեր խանըմին ազատի, էլի մենք նրան մեր քվոր պես կբերենք կհասցընենք ընչանք ըստեն։

— Ա՛յ կնիկ, կէ՞թաս,— հարցնում ա դարվիշը կնկանը։

— Խի՞ չեմ էթա, ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— էս չոլ, յարանի տեղը ծննդկանի հավարին հասնիլը ֆոգու էլ վարձք ա։

Վեր ա կենում նոքարների հեննա գալի, սաքի թե բեզրգյանի կնկանը պտի ազատի։ Հենց որ հասնում ա չադիրը, բեզրգյանը հրամայում ա անսաս վեր ունեն կնկանը դնեն մի ղութկի մեջ, բեռները կապոտեն՝ յա՛լլա։ Նոքարներն էն սհաթը կնկանը բերում են դնում մի ղութիկ, բերանը ղայիմ կալնում, բեռները բարձում, ընկնում ճամփա։

Խեղճ դարվիշը կացավ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ տեհավ չէկավ։

— Հալբա՛թ,— ասեց,—բեզրգյանի կնիկը շատ դժար ա, պահում են ընչանք ազատվի, պրծնի, նո՛ր վեր ունեն, բերեն։ Մխելի

---

[1] Տպագիր տեքստում այս բառին հաջորդում է՝ «ընենց մի սիրունիկ զադ էր», որը չնչված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

— Ջո՛բան աղպեր,— ասում ա թագավորը,— մխելի կաթ բե՞րես՝ խմեմ։

— Ջո՛ւխտ աչքիս վրեն, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա չոբանը։

Չոբանը էն սհաթն էթում ա մննում սուրուի մեջը, մի ոչխար կալնում, կաննացնում, կթում, քերեղանը[1] պռտեպռտունկ կաթը լցնում, տալի իրա տղին, որ տանի տա թագավորին։ Տղեն քերեղանը վեր ա ունում, վազացնում թագավորին։ Էս էրեխեն էլ թագավորին շատ դիր ա գալի։

— Ա՛յ որդի,— հարցնում ա թագավորը,— ո՞ւմ տղեն ես։

— Ջո՛բանի,— ասում ա։

— Գնա՛ հորդ կանչա՛ գա ըստեղ։— Տղեն էթում ա հորը կանչում, բերում թագավորի կուշտը։

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա չոբանը։

— Էս տղեն քո՞ւնն ա,— հարցնում ա։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, իմն ա. ի՞նչ կա որ։

— Ջի՞լնի ինձ բաշխես։

— Խի՞ չիլնի, թագա՛վորն ապրած կենա, փե՞շքաշ ա. ես քեզանից տղա՞ կխնայեմ։—Տղի կռնիցը բռնում ա տալի թագավորին։

Թագավորը չոբանին մի բուռը ոսկի ա տալի, տղին վեր ունում, բերում ամարաթը, սրան էլ ա իրա աղաքին նոքար շինում։ Էս էրկու տղեն իրար հեննա սիրով ապրում են, մենծանում ամարաթումը, ոնց որ մի դռան էրկու շուն՝ ոսկի չեն էլ իմանում, թե աղպերտինք են։

Անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, չորս տարի, հինգ տարի, մախլաս՝ տասը տարի, օրեն մի օրը էս թագավորի երկիրը մի բեզրգյան ա գալի առուտուրի։ Էդ վախտերքը սովորութք ա ըլնում, որ մի բեզրգյան էթում էր ուրիշ երկիր, պտի իրա ապրանքիցը փեշքաշ տաներ էդ երկրի թագավորին։ Էս բեզրգյանն էլ լավ-լավ փեշքաշներ ա վեր ունում, գալի թագավորին տենալու։

— Ո՞րդիանցի ես,— հարցնում ա թագավորը։

— Ցլա՛ն երկրիցը,— ասում ա բեզրգյանը։

---

[1] Տպագիր տեքստում՝ կոտր. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Ի՞նչ բանի համար ես էկել։

— Էկել եմ առուտուրի։ Բերած փեշքաշները հանում ա ընդե վե դնում, ասում ա.— Ըս էլ բերել եմ քու փայը։

— Շա՛տ լավ ես արե,— ասում ա թագավորը,— գլխիս վրեն ես էկել։ Ինչքամ սիրտդ ուզում ա՝ իմ երկրումը կա՛ց, քու առուտուրն արա՛։

Էս բեզրգյանը թագավորին շատ դիր ա գալի. նստում ա նրա հեննա երկար ու բարակ ասում, խոսում, զրից անում, էթալիս էլ թամբահ ա անում, որ քանի ըստե ա՝ իրա կուշտն էթա, գա։ Բեզրգյանն էլ հո՝ ուրախանում ա, աշխարով մին ըլնում. վեր ա կենում թագավորին գլուխ տալի, թողում էթում իրա բանին։ Էս բեզրգյանը է՛ն բեզրգյանն ա ըլնում, որ, է՛, սրանից քանի տարի առաջ չոլումը վեր ա գալի, չադիր տալի, եննա ինչ խաբլուբյունով թագավորի կնիկն առնում՝ փախնում։

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը էլի էս բեզրգյանը վեր ա կենում, ասում ա. «էթամ թագավորին տեննամ»։ Վեր ա կենում գալի թագավորի կուշտը։ Իրար հեննա հաց են ուտում, պրծնում, նստում դե՛սից, դե՛նից ասում, խոսում, զրից անում, ընչանք դառը կես գշեր խոսում են։ Եննա բեզրգյանը վեր ա կենում, որ էթա, թագավորը չի թողում։

— Էս բեվախտին էլ ո՞ւր ես էթում,— ասում ա,— հազիր ըստե կքնես, կլիսանա նոր վե կկենաս, կէթաս։

— Ջէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա բեզրգյանը,— չե՛մ կարա, ես դուքանի տեր եմ, պտի էթամ. բալի գշերն էկան դուքանս կտրեցին, ինչ կա չկա տարան. էն վա՞խտը։

— Մի՛ վախենա,— ասում ա թագավորը,— դուքանիդ մի չոփ էլա չի կորչի. նոքարներիս կղրկեմ, կէթան դուքանիդ մուտաք կենան։ Թե կորավ՝ ես տամ։

Բեզրգյանն էլ չի կարում թագավորի խաթրից անց կենա։

— Դո՛ւ գիտաս, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— որ ասում ես, կկենամ։—Էդ գշերը թագավորի ամարաթումն ա քնում։

Թագավորն էն սհաթը կանչում ա իրա էրկու նոքարին՝ ջաղացպանի՛ ու չորանի տղին։

— Կէթա՛ք,— ասում ա,— էս գշեր բեզրգյանի դուքանին ղարավուլ կքաշեք, մուտաք կկենաք, որ մարդ-մուրդ չմոտանա։ Ջրլենեմ չիմանամ քնեք, հա՛, թե չէ էլ ձեռիցս չեք պրծնի։ Իմացա՞ք։

1646—20

— Իմա՛ցանք, թագա՛վորն ապրած կենա,—ասում են նոքարները,—ո՛նց կքնենք. հո մեր գլխիցը ձեռը չենք վե կալե։

Ասպաբավորվում են, յարաղ, ասպաբ կապում, բեզրգյանի դուքանի բալանիքն առնում, էթում դուքանի դուռը բաց անում, ճրագ վառում, նստում։ Բեզրգյանի կնիկն էլ դուքանի միջին քնած ա ըլնում։

— Բա՛ ո՞նց անենք,—ասում ա պուճուր աղպերը,—որ քընները չտանի։

— Էլ ուրիշ ճար չկա,— ասում ա մենծ աղպերը,— արի՛ հեքաթ ասենք, բալի քիններս փախնի։

— Լա՛վ, ասենք։ Դե բաս ըտենց ա՝ աղաք դու ասա, եննա ես։

— Որ հեքաթի տեղակ իմ գլխով անցկացածը նաղլ անեմ՝ չի՞լնի։

— Խի՞ չիլնի։ Ընենց արա՛, որ չքնենք՝ նրանից դենը դո՛ւ գիտաս, ի՛նչ ուզում ես՝ ասա՛։

Բեզրգյանի կնիկը սրանց ձենիցը զարթնում ա, համա վախլուբյունիցը ձեն-ծպտուն չի հանում. խեղճը հենց իմանում ա գոզեր են, ասում ա. «Տեննամ ի՞նչ են մասլահաթ անում», տեղի միջին տաղ ա անում, մնում։

— Դե՛ անկաջ դի, ասում եմ,— ձեն տվեց մենծ աղպերը։

— Ասա՛, անկաջ եմ դնում։

— Ես,— ասեց մենծ աղպերը,— ֆլա՛ն թագավորի տղեն եմ։ Օրեն մի օրը մի դարվիշ էկավ հորս ամարաթը, խաբլուբյունով հորս ձեռիցը թագավորուբյունը խլեց, մեզ ընդիան դուս արեց։ Խեղճ հերս ի՛նչ արեց, չարեց էլ չկարաց թագավորուբյունը եդ առնի. ճարը կտրած, իմ ու պուճուր աղպորս կուռը բռնեց, մենք դեռ հլա էրեխեք ինք, մորս հեննա դուս էկավ ղարբուբյուն, որ մի աշխատանքի տուտ բռնի, մեր գլուխը պահի։ Էկանք, էկանք, էկանք, շատն ու քիչն աստոծ ա խաբար, մի չոլ, յաբանի տեղ գշերը վրա հասավ։ Գնացինք թիթեն-միթեն կիտեցինք, բերինք կրակ արինք. ընդե գշերը կացանք։ Հաց-մաց կերանք, պրծանք, թեք ընկանք՝ քնեցինք։ Հենց աչքներս նոր ինք կպցրե բիրդան հեռվից ղընգղընգոցի ձեն ընկավ անկաջներս։ Ետ մտիկ արինք, տեհանք մի բեզրգյան իրա քարվանով, քոչ ու բարխանով էկավ, մեզնից մի մանգղիլ հեռու վեր էկավ, ընդե չադիր տվեց։ Վրիցը մի սհաթ չանցկացավ, մըն էլ տեհանք էդ բեզրգյանի նոքարներն էկան, թե

մի քանի կրակ տա՞ք, տանենք կրակ անենք։ Հերս էլ վե կալավ, թե. «Հրե՛ն կրակը, հրե՛ն դուք. տանում եք՝ տարեք»։ Նրանք էլ մի թիթենի կտորի վրեն մի քանի կրակ դրին, վե կալան գնացին։ Գնացին, էլեդ էն սհաթը ետ դառան։— Խի՞ էկաք,— հարցրեց հերս։ «Մեր բեզրգյանի կնիկը էրկուքոգիս ա,— ասեցին,— որդե որ ա կաղատվի. ասում սիրուն, թող կնիկդ գա ազատի, էլ եդ նրան մեր ձեռովը վեր ունենք՝ բերենք»։ Մերս էլ ավատաց նրանց խոսքին, վե կացավ գնաց. հլա էն գալն ա՝ որ պտի գա։ Լիսացավ, վե կացանք, տեհանք՝ ո՛նչ քարվան կա, ո՛նչ զադ...։

Պուճուր աղպերը ընչանք ըստե որ լսեց, ալբիալը մատը կծեց. «Բալի,— ասեց ինքն իրան,— սա իմ աղպերն ա, որ իմ աղպերն ա»։

Էլ չկարաց դիմանա, որ աղպերը քոմմա ասի, պրծնի, վե թռավ փաթթվեց ճտովը։

— Ա՛յ հարա՛յ,— ձեն տվեց,— բաս դու իմ աղպերն ես... — էլ չկարաց խոսա, արտասունքը էն սհաթը բուտը-բուտը աչքերիցը վե թափեց։

Մերն էլ էն դհիցը վրա պրծավ [1], փաթըթվեց տղեքանց ճտովը, նրանց թշերը պաչեց, աչքերը պաչեց, պաչպչորեց, տասը բեռը արտասունք չափեց։

— Ա՛յ իմ կորած աղիզ բայեք,— ասեց,— ես էլ ձեր մերն եմ, ախա՛ր մե՞ռա էսքամ տարի ձեր դարդովն էրվելոն, խորովելոն...

Իրեքով էլ մնացին մաթ էլած, իրար էրեսի մտիկ անելոն, հենց իմանում ին էրազ ա՝ ինչ որ տեսնում են։ Ախա՛ր ո՞րդիաե ո՞րպե. ըսկի ավատալու բա՞ն ա։

Նո՛ր նստում են ըստե թաղադան խոսք ու զրըցի, մասլահաթի ատւտը բաց անում, ասում, խոսում, իրար հալ հարցնում, իրար քեֆ հարցնում, իրար գլխով անցկացածը նաղլ անում, լսում, իրար էրեսի մտիկ տալի, խնդում, ծիծաղում, ուրախանում՝ աշխարով մին ըլնում, ընչանք քննները տանում ա, բերում են թաղադան տեղեր քցում դուքանի միջին, իրար ճիտ անում, անուշ քնում։

Առավոտը լիսը բացվում ա թե չէ, բեզրգյանը վեր ա կենում, թաղավորիցը իզին առնում, կրնկում դպա դուքանը։ Գալիս ա ի՛նչ տեսնում՝ իրա կնիկը թաղավորի նոքարների հեննա ճիտ արած

---

[1] Տպագիր տեքստում՝ վազեց. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

քնած։ Էլ ձեն-ծպտուն չի հանում, թողում ա գալի թագավորին իմաց տալի։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— քո նոքարները, որ ղրկել իր դուքանիս մուտաթ կենան, արի՛ աչքովդ տես ինչ հալի են։

— Խե՛ր ըլնի,— հարցնում ա թագավորը,— ասա տենամ ի՞նչ ա պատահե։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— չեմ ասի. արի՛ քու աչքովդ տես, որ ավատաս։

Թագավորը իրա նազիր-վեզրի հեննա վեր ա կենում, գալի դուքանը, ամեն բան իրա աչքովը տենում։ Թագավորը մնում ա սառած մոիկ անելոն։

— Էդ քո՞ւ կնիկն ա,— հարցնում ա թագավորը։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, ի՛մ կնիկն ա։

— Ջա՛նլաթ, ջա՛նլաթ, ջա՛նլաթ,— ձեն ա տալի թագավորը։ Ջանլաթները գալիս են ընդե կաննում։

— Ի՛նչ կհրամայես, թագա՛վորն ապրած կենա,— ասում են։

— Սրանց վե կացրեք,— ասում ա թագավորը,— իրեքին էլ էս սհաթը իմ աղաքին քյալլա արեք։

Ջանլաթները բռթում են, վե կացնում։ Մերը որ աչքը բաց ա անում, թագավորին, նազիր-վեզրին, բեզրգյանին տենում իրանց գլխավիրև՝ ալբիալը իմանում ա, թե բանը ինչումն ա։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա մերը,— էրկու խոսք ունեմ՝ թո՛ղ ասեմ, եննա ի՛նչ ուզում ես արա՛։

— Ասա՛,— ասում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— որ մեր մի մազին էլա դիպնես՝ իմաց կա՛ց հուր հավիտենական մեզ պարտական կմնաս. չունքի սրանք որ կան՝ իմ տղեքն են, ես էլ սրանց մերը։ Նստում ա ըստե մին-մին, տեղը-տեղին իրա գլխով անցկացածը նաղլ անում, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Ա՛յ հարա՛յ,— ասում ա թագավորը,— բա՛ս դու էլ իմ կնիկն ես, դրանք էլ իմ տղեքը։

Ասում ա ու[1] փաթթվում նրանց ճտովը։ Քոմմա մնացել ին

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ վազեց, որը չնչված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

սառած մտիկ անելոն։ Բեզրգյանի հալը հո մի՛ք հարցնի. ռանգ-մռանգը քցել ա, սիրթնե, դառե պատի ծեփ։

— Ջա՛նլաթ, ջա՛նլաթ, ջա՛նլաթ,—ձեն ա տալի թագավորը,—էս սհաթին բեզրգյանին քյալլա արեք։

Թուրը շողշողալու բաշտան բեզրգյանի գլուվը ֆըռռում ա, ընդե վեր ընկնում։

Թագավորը նո՛ր կնկա, տղեքաց կուռը բռնում ա, էթում ամա-րաթը։ Էլ ինչ քե՞ֆ, էլ ինչ ուրախությո՛ւն, էլ ի՛նչ մատաղներ մոր-թոտիլ, էլ ի՛նչ աղքատներին փող բաժանիլ, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Սուտ չի ասած. «Աստու պահած գառը գելը չի ուտի»։

Նրանք հասան իրա՛նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մու-րազին։



24· ՄԱՐԴԻՍ ՃԱԿԱՏԻ ԳՐԱԾԸ ՉԻ ՋՆՋՎԻ

Կըլնի չիլնի մի թագավոր։ Էս թագավորը ունենում ա հենց մի մինուճար տղա։ Էդ տղեն մի օր վեր ա կենում էթում ավղուշ։ Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, տենում ա մի ծեր, գզըզված մարդ հրեն ճամփի վրեն նստել ա, դաֆթարը բաց արե առ[1] մի բան[2] ա գրում։

Մոտանում ա նրան, հարցնում.— Ա՛յ բաբի, էդ ի՞նչ ես գրում։

— Ի՞նչ քու բան ա,— ասում ա,— հարցնում ես, թագավո՛րի ցեղ. ավի ես էկե՝ գնա ավըդ արա։

Թագավորի տղեն որ շատ աղաչանք, պաղատանք ա անում[3], էդ ծեր մարդը ասում ա.— Ես մարդկերանց մեղքն եմ գրում. թե ամեն մարդ ի՞նչ մեղքի տեր ա, յա ամեն մարդի ճակատի ի՞նչ ա գրած, նրա վերջը ի՞նչ պտի ըլնի։

— Ի՞նչ կըլնի բա՛բի, ասես տենանք իմ ճակատի՞ն ինչ ա գրած. իմ վերջը ի՞նչ պտի ըլնի,— հարցրեց թագավորի տղեն։

— Կասեմ, խի՞ չեմ ասի, թագավորի ցեղ. համա տե՞ս կփոշմանես։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ ինչ-որ, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ զադ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[3] Տպագիր տեքստում՝ գցում. ուղղում բանահավաքինն է (Ս. Կ.)։

Դաֆթարը բաց արեց կարդաց։— Ցլան քաղաքում,— ասեց,— մի նախրչի կա։ Էդ նախրչին մի աղջիկ ունի. էս թամա՛մ օխտը տարի ուտեցվորել ա, քոստե, բորոտե, յաման-յարա ընկե, որ սաղանալու էլ ճար, իլլաճ չիլնում։ Էդ նախրչու աղջիկը եդի վերջը պտի քու ղսմաթն ըլնի. աստծ քու ճակատին էս ա գրե, ըսենց էլ կըլնի։

Թագավորի տղեն էս որ լսում ա՝ թողում ա, դառը-տխուր վե կենում գալի տուն։

Հերն ու մերը հարցնում են.— Ա՛յ որդի, խի՞ ես ըտենց ռանգ-մռանգդ քցե. չըլնի՞ գլխովդ բան ա անց կացե։

Նո՛ր տղեն մին-մին նաղլ ա անում, թե չեք ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

— Ի՞նչ անենք,— ասում են հերն ու մերը,— փառք իրա ողորմությունին. մարդիս ճակատին ինչ գրել ա՝ գրե. ի՞նչ կարանք անի։

Մի քանի օրեն եղը թագավորի տղեն խուրջնի ջուխտ աչքը լիքը ոսկի ա լցնում, քցում ձիու վրեն, նիլնում, էթում էն քաղաքը, որդե՝ էն ծեր մարդը ասել էր, թե մի նախրչի կա, նրա աղջիկը պտի իրան ղսմաթ ըլնի։ Որ հասնում ա քաղաքը, հարց ու փորձ ա անում, նախրչու տունը գտնում։ Դուռը ծեծում ա, նախրչու կնիկը դուս ա գալի։

— Ա՛յ մերա, ղոնաղ չե՞ք ուզի,— հարցնում ա թագավորի տղեն։

— Խի՞ չենք ուզի, թագավորի ցեղ, ղոնաղն աստունն ա, համա քու լայաղի տուն ու տեղ չունենք. նախրչին ի՛նչ ա, որ իրա տունն ինչ ըլնի։

— Բա՛ն չկա,— ասում ա թագավորի տղեն,— ինձ ձեռք կտա. տարով հո չպտի մնամ, էնքամ ըլնի, որ էս գշեր սթար անեմ՝ էգուց վե կենամ, էթամ իմ բանին։

Նախրչու կնկա համար դհա ուրախություն էր, որ թագավորի տղեն լայաղ ա անում, իրանց տունը գալի։ Տարավ տուն, դոշակ քցեց տակը, հացից-մացից, ինչ որ տանը գտնվում էր՝ բերեց աղաքը։ Իրիկունը նախրչին էկավ տուն. թագավորի տղին որ տեհավ՝ մնաց զարմացած։ Ախար ինքը մի քյասիբ նախրչի, թագավորի տղի նման մենծ մարդը ո՛նց ա լայաղ արե՝ էկե իրա տունը։

— Բարո՛վ, հազար բարին ես էկե, թագավորի ցեղ,— ասեց նախրչին,— ո՞նց եք, լա՞վ եք։ Էս խե՞ր ըլնի ըստերանք։

— Խեր չէլած՝ ի՞նչ պտի ըլնի. ուրիշ տեղ եմ էթում, շատ վռազ բան ունեմ,— ասեց թագավորի տղեն։

Իրիկնահացի վախտը թագավորի տղեն նախրչուն հարցրեց.— Ամոթ չըլնի հարցնիլը, քանի՞ տղա ունես։

— Է՛րկու տղա, է՛րկու աղջիկ,— ասեց նախրչին։

Մի քիչ կացան՝ մեկնել օթախիցը մի ծանր տնքոցի ձեն էկավ։

— Բա է՞ն ինչ տնքոցի ձեն ա,— հարցրեց թագավորի տղեն։

— Քեզանից պահեմ, ասսանի՞ց ինչ պահեմ,— ասեց նախրրչին,— մի հիվանդ աղջիկ ունեմ, էս օխտը տարի փորը ուռել ա, ինքը յարոտե-փարոտե, ո՛նչ մեռած ա, ո՛նչ սաղ։ Էն օթախն ենք դրե, տենանք աստոծ նրա ֆոգին ե՞ր պտի առնի, որ դինջանա, սաքի մրնք ենք մեղք, նա էլ՝ զուր մնում ա ի՛նչ։

Թագավորի տղեն լիզուն կծեց. «Բալի՛,— ասեց,— հենց էս էն աղջիկն ա, որ կա»։ Հաց կերան պրծան՝ պառկեցին քնեցին։

Գշերվա մի վախտը թագավորի տղեն վե կացավ, խուրջին ոսկին վե կալավ, ուսուլով մտավ էն հիվանդ աղջկա օթախը։ Ջեռքին մի մենծ դանակ կար, կոխեց հիվանդի փորը թե չէ՝ հիվանդը էն սհաթը դինջացավ։

— Դե՛ տենանք,— ասեց,— հմի ո՞նց իմ ղսմաթը կըլնես։

Թագավորի տղեն հենց իմացավ՝ է՛ն ա հիվանդը ֆոգին տվեց, պրծավ։ Խուրջին ոսկին, մրկ էլ արնոտ դանակը դրեց հիվանդի գլխատակը, սաքի թե արնքի գինն ա տալի, ու ինքը նի էլավ ձին, էկավ էլ եդ իրանց երկիրը։ Համա հիվանդի աղըքներին, որ ասես, ըլան չէր դիպե, մենակ փորի ուռուցքն էր կտրվե, էլ զադ չէ։

Առավոտը մարդ ու կնիկ վե կացան, տեհան թագավորի տղեն չկա։ Դե՛ս թագավորի տղա, դե՛ն թագավորի տղա՝ չգտան ոե չկտան։ Տեհան իրանց աղջկա սաս ու սամուրն էլ կտրվել ա։ Ուրախացան. ասեցին՝ հալբաթ մեռել ա, էթան տերտեր կանչեն՝ գա տանի ժամը։ Գնացին, ի՞նչ տենան՝ փորի ուռուցքը նստել ա, ինքն էլ խրոմփալեն քնած ա։ Գլխատակը բանձրացրին, տեհան մի խուրջին՝ էրկու թայը լիքը ոսկի, կշտին էլ մի արնոտ դանակ։ Էլ նոր ա՞ղջիկ կգար աչքները, ուրախ,ուրախ ոսկին վե կալան տարան, նրան թողին ընենց քնած։

Աղջիկը քննց, քննց մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր՝ անջախ որ քնատեղիցը վե կացավ. ըն էլ ո՞նց վե կացավ՝ լափ սաղ-սալամաթ, հենց իմանաս ըսկի ցավ չէր քաշե։ Մի քանի ամսեն վրա հո՝ լավ-լավացավ, դառավ ընենց մի սիրուն աղջիկ, որ արար աշխարք ման գայիր՝ սրա հատը աղջիկ չէիր գտնի. հենց իմանաս մի հուրի-փարի ըլներ. տենողի խելքը գլխիցը թռնում էր. ասում էր՝ շուտեմ, չխմեմ, չհագնեմ, չմաշեմ, հենց նրա նաշխուն, սի՛րուն էրեսին, չինարի բոյ ու բուսաթին թամաշ անեմ։

Էս նախրչին թագավորի տղի՝ մի խուրջին ոսկով հարստացավ, չավ փողի տեր դառավ, լավ-լավ այվան-օթախներ, լավ-լավ շենքսեր շինիլ տվեց, որ խալխը մնացել ին մաթ էլած, թե էս խեղճ, քյասիբ, օրեն հացի մուրացկան նախրչին ո՞րդիան հավաքեց էսքան փողը։

Մի օր էլ էն թագավորի տղեն վե կացավ, գնաց ավղուշ՝ իրանց ներկրիցը մի քանի օրվա ճամփա դենը։

Դու մի ասի ինքը բեխաբար գա՛լոն, գա՛լոն՝ էկել ա հասե էն քաղաքը, որդե նախրչու աղջկանը ուզեցել էր սըպանի։ Քուչեքանց միջովը անց էր կենում, մի ղաֆիլ աչքը ընկավ մի բալկոնի վրա՝ տեհավ մի սիրուն, նաշխուն, շենքով, շնորքով աղջիկ ընդե պոլթի ա տալի։

Թագավորի տղի խելք ու միտքը գնաց, խելքամաղ էլավ էս աղչկա վրեն. դառը-տխուր, գլուխը կախ քցած ավից էկավ տուն։

Հերը տեհավ ռանգ-մռանգը քցած՝ հարցրեց.— Ա՛յ որդի, խի՞ ես բտենց ռանգ-մռանգդ քցե, հալ ու մաշ էլե. չըլնի՞ սրտումդ մի գարդ կա, ասա՛, մի՛ ամանչի. ո՞ր թագավորի, ո՞ր բեզրգյանի աղջիկն ես սիրե՝ էս սհաթը ուզեմ։

Տղեն մին-մին նաղլ արեց, ինչ որ գլխովը անց էր կացե.— Կա՝ նա՛ ա, չկա՝ նա՛ ա,— ասեց,— նրանից սավայի ուրիշ աղջիկ չեմ առնի, թեկուզ բեզրգյանի աղջիկ ըլնի, թեկուզ թագավորի. մի հետ էն աղչիկը մի կաթ արին ա էլե, կաթացե սիրտս։

— Լա՛վ, ա՛յ որդի,— ասեց թագավորը,— էլ դրանում ի՞նչ կա, որ էդքամ միտք ես անում. էլի մի դժար բան ըլնի, որ գլուխ գալու չըլնի՝ ասեմ հա։ Ուզում ես հենց էս սհաթը մարդ ղրկեմ, էն աղջիկն ուզեմ քեզ։

— Դե ղրկա՛, ա՛յ հեր,— ասեց տղեն,— իմ դարդն էլ զաթի էդ ա։


Թագավորն էն սհաթը մարդ ղրկեց էն հարստի կուշտը, ասեց. «Քու աղջիկը չե՞ս տա իմ տղին»։ Նա էլ ի՛նչ պտի ասեր. թագավորի տղից լա՞վի պտի տար։ Ասեց. «Կտամ, խի՛ չեմ տա»։ Բերին նշան դրին, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արին։

Հարսանքից եդը, մարդ ու կնիկ մի օր գնացին համամ։ Մարդը տեհավ կնկա փորի վրեն յարի տեղ ա էրևում։

— Ա՛յ կնիկ,— հարցրեց,— էդ ի՞նչ յարի տեղ ա։

Կնիկը նո՛ր մին-մին նաղլ արեց, ո՛նց որ ես ձեզ նաղլ արի։ Թագավորի տղեն էն սհաթը մատը կծեց. «Փառք քեզ, աստոծ, փառքդ շատ ըլնի,— ասեց ինքն իրան,— ընդո՞ւր էր էն ծեր մարդը ասում, թե իմ ճակատին գրած ա, որ եդի վերջը էս աղջիկը պտի ինձ ղսմաթ ըլնի»։ Ինքն էլ նո՛ր կնկանը նաղլ արեց իրա գլխով անցկացածը։ Մարդ ու կնիկ մնացել ին իրար էրեսի մտիկ անելոն։

Աստոծ մարդիս ճակատի ի՞նչ գրել ա՝ ըն էլ պտի ըլնի, ճա՛ր չկա։



25· ՖԱԼԱՓ

Կըլնի չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք իրանց յաշն առած կըլնեն, պտուղ էլ, որ ասես, չեն ունեննա։

Մարդը կնկանը կասի.— Ա՛յ կնիկ, ես միտք եմ արե՝ էթամ Երուսաղեմ՝ ուխտ. իմ ֆոդուն էլ ա վարձք, քու ֆոդուն էլ, ի՞նչ կասես։

— Ա՛յ քա,— կասի կնիկը,— տենո՞ւմ ես իմ ոտը ծանդր ա՝ ըսօր, էդուց պտի աղատվեմ, իմ պահող-պահպա՞նողն ով ա, որ գու էլ թողում ես, էթում, անջախ ա ասսու աչքը քաղցրացե վըրներս, մեզ պտուղ ա տալի, բա առանց քեզ ես ի՛նչ պտի անեմ։

Էս մարդն ա՝ կնկա ասածը ըսկի այնումը չի քցի, ճամփի թաղարեք կտենա, կընկնի ճամփա դպա Երուսաղեմ։

Թող սա էթա, գանք խաբարը տանք սրա կնկանիցը։

Մի օր սրանց գիղի չորանը կմննի նեքսև, կտենա իրա խաշնումը պառկած ա։ Միտք կանի՝ չըլնի թե հիվանդ ա։

Աչքը է՛ս դիհը, է՛ն դիհը կքցի, կտենա խանմի կողքին մի պուճուր, նոր էլած քորփա էրեխա։ Նոր գլխի կընկնի, որ աղատվել ա։ Հենց ինքն էլ էկել էր մուշտուվուղ տալու, որ նրանց ոչխարը ծնել ա։ Էլ բան չի ասի, ուսուլով էդ էրեխեն վե կոմի, կտանի կդնի ոչխարի տակը, ոչխարի տակի գառը կբերի շորի մեջ կկոթոլի, կդնի խանմի կողքը, սուս ու փուս կթողա կէթա իրա բանին։

Խեղճ ծննդկանը մի վախտ աչքը բաց կանի, ի՞նչ կտենա՝ իրանից մի սիրուն, նաշխուն գառ ա էլե. էլ ձեն ծպտուն չի հանի, աստուն փառք կտա, էդ գառովը կխնդա, կուրախանա։

Սրան թողանք ըստե, գանք խաբար տանք էն խեղճ էրեխուցը։

Էս չորանն ա՝ ամեն օր էրեխեն կտանի էն ծնած ոչխարի տակը կդնի, ոչխարը կլիզի, ծիծ կտա, էլ եդ վե կունի կտանի տուն. ըսենց կպահի ընշանք էրեխեն կդառնա մի տարեկան։ Որ մի տարեկան կըլնի, վե կունի, կտանի կքցի մի մութը օթախ, դուռը վրեն կշինի, ընդե կպահի։ Ըսենց անց կկենա թամամ օխտը տարի։

Մի օր իրիկունը էս չորանը իրա սուրուն աղաքն արած կգա գեղը. էդ կնկա տան աղաքովը անց կկենա։ Հենց էդ վախտը էդ կնիկը իրա Գառն-էրեխու հեննա քուչի դռանը նստած կըլնի։ Գառը սուրուի միջին իրա մորը կտենա, ալբիալը կվազի դպա մերը։ Խեղճ կնիկը կմնա մաթ էլած էդ Գառան վրեն մտիկ տալոն, չի իմանա՝ էս ի՞նչ բաս ա։ Նոր ըստե չորանը էդ կնկանը մին-մին նաղլ կանի իրա արածը, թե բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։ Էն սհաթը կէթա էրեխեն պահած տեղիցը կհանի, կբերի կտա նրան [1]։ Մերը իրա էրեխուն որ տենում ա, ուրախությունիցը չի իմանում ինչ անի. խտըտում ա, պաչպչորում ա, ուրախ-ուրախ տանում ա տուն։

Խեղճ էրեխեն օխտը տարի ըսկի արևի էրես չէր տեհե. չէր գիտա, թե աշխարքումը ի՛նչ կա, ի՛նչ չկա, մեռնիլ կա, ապրիլ կա։ Ըստոնք որ իմացավ՝ շատ տխրեց, դարտ արեց. միտք արեց գլուխ առնի, էթա էն թավուր երկիր, որ մարդ ո՛նչ ծերանում ա, ո՛նչ էլ մեռնում։ Գնաց է՛ս դիհն ընկավ, սրա՛ն հարցրեց, նրա՛ն հարցրեց, վերջը որ շատ հարց ու փորձ արեց, ասեցին.—Ցալաքի կուշտն ո՛վ էթա, ընդե ո՛նչ կծերանա, ո՛նչ էլ կմեռնի։

«Բա՛ս որ ըտենց ա,—միտք արեց էս տղեն ինքն իրան,—ես պտի էթամ Ցալաքի կուշտը»։

Էկավ մորն ասեց։ Խեղճ մերը շատ դեմ ընկավ, մղկտաց, որ չէթա՝ չէլավ, տղեն անկաջ չարեց, ասեց.— Պտի էթամ, որ պտի

---

[1] Գրաման ձեռագրի սևագիր օրինակում այս բառին հայորդում է հետևյալ նախադասությունը. «է՛լ ինչ աչք պտեր, որ դիմանա, է՛լ ինչ սիրտ պտեր, որ չմոկտար՝ էս մոր ուրախությունը տեսնելուս», որը չնչված է Տ. Նավասարդյանցի ձեռքով (Ս. Կ.)։

էթամ։— Տղեն ճամփի թադարեք տեհավ, հեննեն մնաս բարով արեց, վե կացավ, ընկավ ճամփա։

Էթալիս մորն ասեց.— Ա՛յ մեր, սաղ քու տունը, դուռը, շեմը, շեմակալը ոսկի դառնա։

Ասելու բաշտան էն սհաթը սաղ տունը ոսկի կըլնի։

Էդ տղեն ա՝ կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, կհասնի մի մեծ ծովի ղրաղ. կտեննա անց կենալու ճար-իլլաջ չկա։ Կնստի ծովի ղրաղին ուքուր-ուքուր լաց կըլնի։ Մըն էլ ի՞նչ կտեննա, ըհը՛։ ծովի միջիցը մի եքա Ձուկ դուս էկավ։

— Տղա՛,— հարցրեց Ձուկը,— խի՞ էս ըտենց ուքուր-ուքուր լաց ըլնում։

— Բա ի՞նչ անեմ,— ասում ա տղեն,— ուզում եմ էս ծովը անց կենամ, էթամ Ցալաքի կուշտը, չեմ կարում. չեմ իմանում ի՞նչ անեմ։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա Ձուկը,— քեզ կանց կացնեմ ծովի էն էրեսը, համա որ հասնես Ցալաքի կուշտը իմ դա՛րտն էլ նրան ա՛սա. ասա, որ ինձ ծովի ջանավարները շատ են չարչարում, ինչիմիշ անում, թո՛ղ ասի տեննամ՝ իմ ճարն ի՞նչ պտի ըլնի։

Ձուկը տղին կդնի միջքին, մի սհաթումը կհանի ծովի էն էրեսը։ Տղեն Ձկան հեննա մնաս բարով կանի, իրա ճամփեն կըրռնի, կէթա։

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, կհասնի մի ուրիշ ծովի ղրաղ։ Կտեննա ըստե մի պառավ մի թաս ձեռին ծովի շուրը կռճում ա։

— Էդ ի՞նչ ես անում, ա՛յ նանի,— հարցնում ա տղեն։

— Ծովը ուզում եմ ցամաքացնեմ,— ասում ա պառավը,— որ ըստե թաղա քաղաք շինեմ, ես էլ էդ քաղաքի միջին մենծ դառնամ։

— Թահո՛ւ, էդ ծովը ե՞ր պտի կռճե՞ս, ցամաքացնե՞ս, որ ըստե քաղաք քցես, դու էլ միջին մենծ ըլնես։— Ասում ա, թողում էթում։

Էթում ա, էթում տեննում ա հրես մի լապլապ մի չոր ծառի ծերի նստել ա։

— Բա՛րով լա՛պլապ աղպեր,— կասի տղեն,— էդ ծառի ծերին խի՞ ես նստե։

— Նստել եմ,— կասի լազլագը,— որ ըստե քաղաք դառնա, ես էլ միջին մենծ ըլնեմ։

— Թահո՜ւ,— կասի տղեն,— ա՜ղք պտի, որ տենա էդ չոլ, յաբանի տեղը քաղաք դառնա, որ դու էլ էդ քաղաքի միջին մենծ ըլնես։— Կասի, կտա, կանց կենա։

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, գշեր-ցերեկ կէթա, մի օր, էրկու օր, մախլասի՝ մի շաբաթ կհասնի մի գեղ։ Կտենա, հրես հանդումը, մի տղա իրա մորը մի եզան հեննա լծեք ա գութանիցը, վար ա անում։

Մեր ու տղա էս տղին որ կտենան, ամոթու չեն իմանա ի՛նչ անեն։

— Բար՛աջողում,— կասի տղեն դրանց։

— Բա՛րով, աստու հազար բարին,— կասեն։— Էդ ո՞ւր էս էթում,— կհարցնեն։

— Էթում եմ Ֆալաքի կուշտը,— կասի տղեն։

— Որ էթում ես Ֆալաքի կուշտը՝ ի՛նչ կըլնի իմ գանգատն էլ տեղ հասցնես։ Ես,— կասի,— մի խեղճ ուրշպար մարդ եմ, Ֆալաքին իմ տեղակ աղաչանք արա՝ յա թող ինձ մի եզն էլ տա, որ կարենամ գութան լծեմ, վար անեմ, յա թե չէ էս մի եզն էլ թող առնի, որ իմ մորը ըսենց չչարչարեմ։

— Ի՛նչ պտի ըլնի,— կասի տղեն,— քու դարտը Ֆալաքին կասեմ։— Կասի, կտա, կանց կենա։

Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, կհասնի մի ուրիշ ծովի ղրաղ. կտենա մի մարդ էդ ծովի մեջտեղը նստել ա։

— Տղա՛, ո՞ւր ես էթում,—կհարցնի էդ մարդը։

— Էթում եմ Ֆալաքի կուշտը,— կասի տղեն։

— Տղա՛,— կասի էն մարդը,— որ էթում ես, գիտա՞ս, որ ըստե աշխարքի վերջն ա, արևի դուս գալու վախտը ամեն բան հալում ա. մե՛ղք ես, ջահել-ջիվան ես, ինձանից քեզ ամանաթ՝ արևի դուս գալու վախտը գետինը փորա, միջին տափ կաց, որ չհալես. եր մեր կմննի, նո՛ր դուս արի, գնա քու ճամփեն։ Ֆալաքն էլ հրեն հա՜ էն սարի փեշին ա։

Էս տղեն ա՝ ոնց որ էն մարդը ասել էր, ընենց էլ կանի. արևի դուս գալու վախտը կբերի գետինը կփորի, կմննի մեջը, կկենա ընչանք արևը մեր կմննի, նոր ընդհան դուս կգա, կէթա իրա ճամփեն։

Էդ ծովի ղրաղովը կէթա, կէթա, թամամ մի օր կէթա, կհասնի մի սարի, կտենա էդ սարի փեշին մի Ծեր գղըղված մարդ նստել ա, գավթարը աղաքին բաց արած գիր ա գրում։

Էդ Ծեր մարդը տղին որ կտենա, կհարցնի.— Տղա՛, ո՞ւր ես էթում։

— Էթում եմ Ցալաքի կուշտը,— կասի տղեն։

— Ցալաքը հենց ես եմ,— կասի,— ա՛սա տեննամ, ի՞նչ ես ուզում։

— Ցա՛լաքը սաղ ըլնի,— կասի տղեն,— լսել եմ քու կշտին մեռնիլ չկա, դրո՞ւստ ա։

— Հա՛, դրուստ ա, ո՛վ ըստե ապրի, ո՛նչ կմեռնի, ոնչ էլ. հազար տարի էլ կկենա, չի իմանա՝ ծերուբյունը ի՛նչ զադ ա։

— Բա՛ս որ ըտենց ա, ես քու կշտին կկենամ. ղաբո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ,— կասի Ցալաքը,— խի՛ չեմ ղաբուլ. կենում ես՝ կա՛ց։

Էս տղեն ա՝ մի քանի հազար տարի կացավ Ցալաքի կշտին, ո՛նչ ծերանում էր, ո՛նչ էլ. ո՛նց որ էկել էր, ընենց էլ մնաց։

Համա իրա հերն ու մերը, իրա վաթանը ըսկի մտիցը չէր քցում։ Մի օր էլ, որ շատ միտք արեց, միտք արեց. «Ջհա՜նդամը-գյոռը,— ասեց,—թե կմեռնեմ, հո՛ իմ վաթանումը կըլնի, մեռնեմ էլ, հորնըմորս գերեզմանի կշտին կթաղեն. լավ էն ա՝ էլի վե կենամ էթամ մեր երկիրը»։

Օրեն մի օրը վե կկենա, կգա Ցալաքին կասի.— Ցալաքը սա՛ղ ըլնի, բո՛լ ա ինչքամ քու կշտին կացա, հմի էլ ուզում եմ էթամ մեր երկիրը, ընդե ապրեմ. ի՞նչ կասես։

— Դու գիտաս,— կասի Ցալաքը,— ուզում ես՝ գնա՛։ Մեղքն ու վարձքը քու շլինքը։

— Բաս որ ըտենց ա՝ կէթամ,— ասեց տղեն,— համա էրկու խնդիրք էլ ունեմ, չլինի՞ ասեմ։

— Խի՞ չլինի,—ասեց Ցալաքը,—ա՛սա տեննամ էդ էրկու խընդիրքդ ի՞նչ ա։

— Ցա՛լաքը սաղ ըլնի, քու կուշտը գալիս, էկա, էկա՝ մի ծովի ռաստ էկա, էդ ծովի միջիցը մի Ջուկ դուս էկավ, ինձ անցկացրեց ծովի էն ղրաղը. հարցրեց. ո՞ւր ես էթում,— ասեցի. «էթում եմ Ցալաքի կուշտը»։ Որ էթում ես,— ասեց,— ի՞նչ կըլնի իմ դարտն էլ նրան ասես, բալքի մի ճար անի. ծովի ջանավարները ինձ շատ

ես ինչիմիշ անում, քյոռլուղ տալի, մի Ֆալաքին հարցրա՛, տես իմ մեղքն ի՞նչ ա, որ էս ջանավարները ինձանից ձեռը չեն վեր ունում։

— Էդ Ջկան գլխի միջին,— ասեց Ֆալաքը,— մի անգին քար կա. ո՛ր նրա գլուխը ճղես, էդ քարը հանես, ծովի ջանավարները էլ նրան ինչիմիշ չեն անի։

— Էդ հո՛ էդ. էկա, էկա, ճամփին մի գեղի ռաստ էկա, տեհա հանդումը մի մարդ իրա մորը եզան հեննա լծել ա գութանիցը, վար ա անում։ Էդ մարդը հարցրեց. ո՞ւր ես էթում։ «Էթում եմ,— ասեցի,— Ֆալաքի կուշտը»։ Որ էթում ես,— ասեց,— ինչ կըլնի իմ դարտն էլ Ֆալաքին ասես, յա թո՛ղ ինձ մի եզն էլ տա, որ վար անեմ, յա թե չէ՝ էս մի եզն էլ ինձանից առնի, որ խեղճ մորս չշարշարեմ։

— Էն մարդի դռան շեմքի տակին մենծ խազինա կա,— ասեց Ֆալաքը,— կէթաս կասես քանդի, հանի՝ հա՛մ իրա համար եզ առնի, հա՛մ էլ մալ ու դոլվաթի տեր դառնա, գլուխը դինջ ապրի, աստուն փառք տա։

Տննա Ֆալաքը հանեց իրեք խնձոր տվեց տղին. թամբահ արեց, որ լավ պահի, մարդի չտա, թե չէ իրա ախրը խեր չիլնի։

Էս տղեն ա՝ խնձորներն առավ, դրեց ծոցը, Ֆալաքին գլուխ տվեց, ընկավ ճամփա դպա իրանց երկիրը։

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասավ էն գեղը, որ մի մարդ իրա մորը լծել էր գութանիցը, վար էր անում։ Մտավ գեղը, հարցնելոն էն մարդին գտավ։

— Բար՛աջողում, ա՛ղպեր,— ասեց տղեն։

— Ա՛յ բարո՛վ, աստու հազա՛ր բարին,— ասեց էն մարդը,— ամեն ճամփեդ սալա՛մաթ։ Է՛, Ֆալաքին տե՞հար, խնդիրքս ասե՞ցիր, թե չէ։

— Տեհա, ո՞նց չէ, ասեցի։

— Բա ի՞նչ ասեց։

— Ասեց՝ նրանց դռան շեմքի տակին մենծ խազինա կա ֆորած, թող քանդեն, հանեն իրանց համար եզն առնեն, հարստանան, մալ ու դոլվաթի տեր դառնան։

Էն մարդը էս որ լսում ա, ալբիալը բահն ու քլունգն առնում ա, իրանց դռան շեմ ու շեմակալը քանդում։ Քանդում ա, քանդում

ա, տենում ա, ըհը՛, հրես մի կարաս լիքը ոսկի ընդե ֆորած, հանում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Խեղճ մարդը չէր իմանում ո՞նց շնորհակալ ըլնի էդ տղիցը, որ նրա ձեռովը էդքան խաղինի տեր դառան։

Էդ տղեն ա՝ էս մարդի հեննա մնաս բարով ա անում, իրա ճամփեն բռնում, էթում։ Էթում ա, էթում ա, մի օր, էրկու օր, իրեք օր, հասնում ա էն Լազլազի կուշտը։ Հասնում ա ի՞նչ տեսնում՝ ղորթ որ էն չոր, լեռ սարերը, ձորերը սաղ քաղաք ա դառե, էն Լազլազն էլ էդ քաղաքի միջին մենծ ա էլե։ Կմնա արմացած, թե էս չոլ, յաբանի տեղը ո՞րդիան քաղաք ըհամ էկավ, էդ Լազլազն էլ էդ քաղաքի միջին մենծ դառավ։ Ըստիան վեր ա կենում էթում էլ եղ իրա ճամփեն, էթում, հասնում ա էն պառավի կուշտը, որ ծովի ղրաղին նստե, ջուրը կոճում էր։ Տեհավ դրուստ որ էն պառավը սաղ ծովի ջուրը կոճել ա, ցամաքացրե, տեղն էլ մի մենծ քաղաք ա շինե, ինքն էլ ընդե մենծ դառե։ Էս որ կտեսնա, էլի կմնա արմացած Ցալաքի արարմունքների վրեն։ Էլի կթողա, կէթա իրա ճամփեն։ Կէթա, կէթա, շատն ու քիչն աստոծ գիտա, կհասնի էն ծովի ղրաղը։ Էն Ջուկը ալբիալը դուս ա գալի ջրի էրեսը։

— Բա՛րով, Ջուկ աղպեր,— ասում ա տղեն։

— Բա՛րով, աստու հաղա՛ր բարի,—ասում ա Ջուկը։—Իմ գանգատը տեղ հասցրի՞ր, թե չէ,— հարցնում ա Ջուկը։

— Հասցրի,— ասում ա,— Ցալաքն ասեց. «Քու գլխի մի՛ջին մի անդին քար կա, որ էն քարը հանես, էլ ծովի ջանավարները քեզ ինչիմիշ չեն անի»։

Ջուկը էս որ կլսի, էն սհաթը քյալլեն բաց կանի, անգին քարը մի՛ջիցը կհանի, կտա տղին. եննա տղին կդնի մի՛ջքին, կտանի կանցկացնի ծովի էն էրեսը։

Տղեն ըստե Ջկան հեննա մնաս բարով կանի, կընկնի ճամփա դպա իրանց երկիրը։ Կէթա, կէթա, կէթա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, կհասնի իրանց գեղը, կմննի գեղը, է՛ս դիհը ման կգա, է՛ն դիհը ման կգա, դե՛ս կէթա, դե՛ն կէթա, սրա՛ն, նրա՛ն կհարցնի, իրանց տունը չի գտնի։

Վերջը որ շատ ման կգա, մի ծեր մարդ ռաստ կգա, մոտ կէթա սրան, կհարցնի.— Բա՛բի, էս գեղում ոսկե տուն կար, ո՞ւր ա։

— Ա՛յ որդի,— կասի էդ ծեր մարդը,— էդ ոսկե տունը ըսկի իմ պապերը չեն տեհե, ես ո՞րդիան տենայի։ Մենակ հեքաթներում

լսել եմ, որ ըստե մի տուն ա էլե՝ սա՜ղ ոսկուց, սրանից սավայի էլ ղադից խաբար չեմ։

Էդ տղեն մի քանի վախտ մնաց իրանց գեղումը, շատ հարց ու փորձ արեց, համա իրանց տանիցը մի դրուստ ջուլաբ չիմացավ. վերջը միտք արեց՝ էլի էթա Ֆալաքի կուշտը, ընդե ապրի։ Ճամփի թադարեք տեհավ, վե կացավ փոր-փոշման, դառը-տխուր ընկավ ճամփա։

Գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, հասավ էն ծովի ղրաղը։ Ծովիցը էլի էն Ջուկը դուս էկավ, տղին անցկացրեց սաղ-սալամաթ ծովի էն էրեսը։

Էս տղեն ա՝ կէթա, կէթա, կհասնի էն պառավի քաղաքը։ Կտեսնա էն պառավը է՞ն օրին ա, է՞ն օրին ա, որ էլ չէլած, էնքա՜մ ա պառավե, էնքա՜մ ա ձեռից-ոտից ընկե, որ էլ չի կարում տեղիցը ժաժ գա, հենց միալար գոռում ա.— Ա՜աստոծ սիրողը ինձ մի գթալ ջուր տա, ես մեռա՜, էրվե՜ցի, փոթորվե՜ցի։

Էն սհաթը տղեն ջիբիցը մի Անմահական խնձոր ա հանում, տալի պառավին։ Պառավը ուտելու բաշտան ջահելանում ա, ըլնում տասնըհինգ տարեկան աղջիկ, էն դիհը կաննում։ Տղեն թողում ա ըստե, իրա ճամփեն բռնում, էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա հասնում ա էն լագլագի քաղաքը։ Տենում ա լագլագը էնքա՜մ ա ծերացե, որ ծառիցը վեր ա ընկե, մի թևը կոտրել ա, վրեն ուժ չկա, որ վե կենա, եննա մի հանքի ծվում ա.— Ա՜ման, ա՜աստո սիրուն, ես մե՜ռա, մի կում ջո՜ւր։

Տղեն էս որ տենում ա, էլի ջիբիցը մի Անմահական խնձոր ա հանում, տալի լագլագին։ Ուտելու բաշտան լագլագը ըլնում ա մի նոր ձվից դուս էկած լագլագի ճուտ։ Տղեն լագլագին թողում ա, իրա ճամփեն բռնում, էթում։

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էն մեր ու տղի կուշտը, որ հանդումը վար ին անում. տենում ա նրանք էնքա՜մ են ծերացե, էնքա՜մ են ծերացե, որ տեղներիցը չեն կարում ժաժ գա, հենց միալար գոռում են.— Ա՜աստոծ սիրողը մեզ մի կաթ ջուր տա, մենք մե՜ռանք, էրվե՜ցինք։

Տղեն էս որ տենում ա, սիրտը շատ ա մոմռում. ջիբիցը հանում ա մնացած խնձորն էլ, տապակ անում, տալի նրանց, որ ուտեն։ Ուտելու բաշտան մեր ու տղա ջահելանում են, ըլնում ոնց

որ մորեն մին։ Տվեն էլ է՛ն սհաթը ըստե վեր ա ընկնում, ֆոգին տալի։ Ընդուր էր Ջալաքը ասե. «Խնձորները ուրշի շտաս, թե չէ ախրդ խեր չի՛լնի։ Ղո՛րթ որ, ընենց էլ էլավ։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ աստղին, մինը՝ ասիլ ավոդին, մինն էլ՝ անկաշ դնոդին։



26· ԷՐԱԶ ՏԵՆՈՂ ԱՇԿԵՐՏԸ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի բեզրգյան։ Էս բեզրգյանը մի մինուճար տղա ա ունենում, էլ զադ չէ։ Ինքն էլ շատ ծերացած ա ըլնում, ընենց որ հա՛յ-հայը գնացել, վա՛յ-վայն էր մնացե։ Օրեն մի օրը կանչում ա իրա բարեկամներին։

— Տենում եք,— ասում ա,— ես ծերացել եմ, դեն ընկել. տղես էլ հլա էրեխա ա, աշխարի խերն ու շառը չի գիտա. ձեզանից մեկնակ խնդիրքս էս ա, որ իմ մեռնելուց եղը ինչ ունեմ-չունեմ՝ տո՛ւն, տե՛ղ, մա՛լ, դո՛լվաթ, քոմմա ծախեք, նաղդ փող շինեք, կշտնեբրիդ պահեք, շահացնեք ընչանք տղիս մենծանալը։ Որ մենծացավ,— ասում ա,— կտանեք նրան մի փեշակի կտաք, որ պարապ-սարապ չմանգա։

Անց ա կենում մի քանի վախտ, էս բեզրգյանը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում, էլ չի վեր կենում՝ տղի չարը տանում ա։ Բարեկամները, ոնց որ կարգն էր, տանում են դրան թաղում։ Եննա բերում են, ոնց որ կտակն էր [1], դրա ունեցածչունեցածը քոմմա ծախում են, նաղդ փող շինում, կշտներին շա-

---

[1] Տպագիր տեքստում այս արտահայտությունը եղել է՝ «...ոնց որ վասիաք էր արե», ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

հացնում։ Տղեն էլ որ դառնում ա տասը-տասնէրկու տարեկան, ասում են. «Տաննենք մի փեշակի տանք»։ Դրան աղաք են անում, տանում բաղար՝ է՛ս փեշաքյարի կուշտը, է՛ն փեշաքյարի կուշտը, դե՛ս են էթում, դե՛ն են էթում, մախլաս, որ շատ ման են գալի, ծանդր ու թևթև են անում, տալիս են թագավորի զարգյարի կուշտը աշկերտ։

Էս տղեն ա՝ առավոտները դշերով-դշերհանա վեր ա կենում էթում զարգյարի դուքանը, իրիկները՝ մըղըրբը կոխելիս թողում ա գալի տուն։

Ըսենց անց ա կենում մի վախտ՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, մախլասի՝ մի ամիս, օրեն մի օրը թագավորը կանչում ա էդ զարգյարին իրա կուշտը։ Զարգյարը գալիս ա թագավորին ղլուխ տալի, ընդե կաննում։

— Ո՛ւստա,— ասում ա թագավորը,— առ էս տասը ոսկին ու էս էրկու անգին քարը. կտաննես ինձ համար էրկու լավ մատանիք կշինես, կբերես. մի շաբաթ էլ քեզ վադա եմ տալի։

— Աչքիս վրա,— ասում ա զարգյարը։

Թագավորին ղլուխ ա տալի, ոսկիքն ու անգին քարերը վեր ունում, դուս գալի։

Էթում ա դուքան, ոսկիքն ու անգին քարերը դնում դազգյահի վրեն, աշկերտին թամբահ ա անում, որ մուղաթ կենա ու ինքը վե կենում, էթում տուն, ասում ա. «Հաց ուտեմ պրծնեմ, եննա կգամ կշինեմ։ Լա՛վ»։

Էս աշկերտն ա՝ ուստեն ոտը շեմքիցը դուս ա դնում թե չէ՝ ղլուխը դնում ա դազգյահին, անսաս քնում։

Սատանական հենց էդ վախտը թագավորը իրա նազիր-վեզրի հեննա դարվշի գեյմ մտած, գալիս ա ըտերանք ման գալու՝ տենա ի՛նչ կա, ի՛նչ չկա։ Էդ զարգյարի դուքանի կշտովը անցկենալիս, վարավուրդ ա անում, տենում աշկերտը քնել ա, իրա տված ոսկիքն ու անգին քարերն էլ հրեն դազգյահի վրեն։ Թագավորը էս որ տենում ա, ուսուլով, ոտի մանների վրա մննում ա նեքսև, ա՛ռ հա դրան մի լա՛վ սիլլա։ Տալիս ա ու դուս գալի ծըլկվում։

Աշկերտը վախլությունիցը վեր ա թռնում, տենում մարդ չկա։

— Ա՛յ անաստոծ,— ասում ա,— խի՞ չիր թողում իմ մուրազին հասնեի. ի՞նչ ասեմ, ինձ սիլլա տվող, ոնց որ դու մուրազս փորիս թողիր, բարով դու էլ քու մուրազին չհասնես։

Էս խոսքը թագավորը լսում ա, համա, որ ասես, ձեն-ծպտոն չի հանում. թողում ա գալի ամարաթը։ Կանչում ա իրա նոքարներին։

— Էս սհաթին,— ասում ա,— կէթաք Ֆլա՛ն զարգյարի աշկերտին կկանչէք, կբերեք իմ կուշտը։

Նոքարները գլուխ են տալի, էթում։ Էթում են զարգյարի դուքանը։

— Ուստա,— ասում են,— թագավորը քու աշկերտին կանչում ա։

Զարգյարը մնում ա արմացած։

— Ջա՛նըմ, գյո՛զրմ,— ասում ա,— ախար թագավորը իմ աշկերտի հեննա ինչ բան ունի, յանղլիշ ընկած կըլնեք, բալքի ինձ ա ուզե։

— Չէ՛, ո՛ւստա,— ասում են նոքարները,— հենց քո աշկերտին ա կանչե։

— Դուք գիտաք,— ասում ա զարգյարը,— հրեդ աշկերտը, հրեդ դուք. տանում եք՝ տա՛րեք։

Նոքարները աշկերտին աղաք են անում, բերում թագավորի կուշտը։ Խեղճ աշկերտը մնացել էր գլխի վրեն մոլորած, վախլուբյունից չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի. թագավորի ամարաթը մտավ թե չէ, ձեռները դոշին դրած օխտը հետ թագավորին գլուխ տվեց, ընդե կաննեց։

— Ֆլա՛ն զարգյարի աշկերտը դո՞ւ ես,— հարցրեց թագավորը։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, ես եմ,— ասեց աշկերտը։

— Ա՛յ տղա,— ասեց,— ա՛սա տենամ. ի՞նչ էր քու մուրազը, որ վորիդ թողի. ա՛սա, ես կատարեմ։

— Չէ՛, թա՛գավորն ապրած կենա,— ասեց աշկերտը,— իմ մուրազն ընենց բան ա, որ չեմ կարա ասի։

— Չե՞ս ասի, տե՛ս՝ կփոշմանես։

— Թա՛գավորն ապրած կենա, ի՛նչ ուզում ես՝ ա՛րա, արինս քեզ հալալ ա։

Թագավորը տենում ա, որ չէ, աշկերտը մի հետ պպին ա կաննե, չի ուզում ասի, հրամայում ա իրա նոքարներին՝ տանեն քցեն մի մութը ֆորի մեջ, ֆորի բերանն էլ գայիմ կալնեն, բալի վա-

խննա, ասի։ Նոքարները խեղճ տղին ծեծելոն, ջարդելոն, բլոր-բլոթելոն, քաշքշելոն [1] տանում են քցում մի մութը ֆորի մեջ։

Էդ գշերը տղեն մնում ա ֆորի միջին։ Հեգսի օրը Թագավորը հրամայում ա նոքարներին, որ էթան էն տղին հաննեն, բերեն։ Էթում են հանում, բերում Թագավորի կուշտը։

— Ա՛յ տղա,— ասում ա Թագավորը,— աստանից վախեցի, ա՛րի ինձ էրազդ ա՛սա։ Որ ասես, իմաց կա՛ց՝ ի՛նչ ուզես, կտամ։

— Չէ՛, Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա աշկերտը,— չե՛մ ասի, ի՛նչ ուզում եմ՝ ա՛րա։

— Տարեք դրան էլ եդ գցեք ֆորը,— հրամայում ա Թագավորը,— բալի ընդե խելքը գլուխը գա։

Նոքարները ծեծելոն, քաշքշելոն տանում են յա՛լլա՝ գըրըմփալեն էլ եդ քցում ֆորի մեջ։

Խեղճ տղեն սոված, ծարավ մնում ա ֆորի միջին մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, տեսնում ա ֆորի բերանը բաց անող չկա։ Վերջը միտք ա անում՝ գետինը փորի, բալի մի ծակ գտնի, ընդհան դուս գա, փախնի։ Մի փետի կտոր ա գտնում ֆորի միջին. էդ փետի կտորը վեր ա ունում ու յավաշ-յավաշ ֆորի մի դհիրը քանդում։ Քանդում ա, քանդում ա, քանդում ա, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, տեսնում ա ղամշներ էրևաց. մի էրկու քիզ էլ քանդում ա, տեսնում, ըհը՛, մի ծակ բաց էլավ աղաքին։

— Էս լավ էլավ,— ասում ա,— հմի էս ծակը լեննացնեմ, որ անցկենամ էն դիհը, տեսնամ ի՛նչ կա, ի՛նչ չկա։

Քանդում ա, քանդում ա, էնքամ քանդում ա, որ տեսնում ա էդ ծակովը կարա անցկենա, նոր ղայիշը միջքիցը եդ ա անում, նրա մի տուտը ընդե մի տեղան բանդ անում, մեկել տուտը բռնում ա ու սրլլալեն վե գալի ներքև։ Վեր ա գալի ի՛նչ տեսնում՝ մի օթախ Թամուղ ավլած, սարքած, միջին մի տախտ դրած, տախտի վրեն մի ձեռք խաս տեղաշոր քցած, մի սի՛րուն, նա՛խշուն, հուրի-մալաք աղջիկ էլ էդ տեղաշորի միջին քնած ա. էնքա՛մ սիրուն, էնքա՛մ նաշխուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես, հենց նրա պյուղ-ջամալին Թամաշ անես [2]։ Սրան որ չի տեսնում, խելքամաղ ա

---

[1] Տպագիր տեքստում այս բառը բանահավաքի ձեռքով շնչված է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում հաջորդում է՝ «էնեմամ մի սիրունիկ զագ էր», որը շնչված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

ընում, մնում։ Դե՛ս, դե՛ն ա մտիկ տալի, տենում մի պուճախին էլ մի ոսկե սինի՝ մեջը լիքը փլավ, մի ղազ էլ տապակած, փլավի գլխին դրած։ Նա էլ զաթի էսթավուր բանի էր ման գալի. վրա ա պրծնում, կուշտ ու կուռ փլավն ուտում, բերանը սրբում, էն դիհը կաննում։ Եննա էթում ա աղջկա էրկու թուշը ղայիմ պաչում, նոր ղայշի տուտը բռնում, բանձրանում էլ եդ իրա տեղը։ Դու մի ասի՝ էդ աղջիկը հենց թագավորի աղջիկն ա ըլնում։

Էդ աղջիկն ա՝ մի վախտ զարթնում ա, վե կենում տենում իրա փայ փլավը կերել են. հայլու մեջն ա մտիկ տալի, տենում էրեսի վրեն լաքա կա։

— Կա չկա,— ասում ա,— ըստե մարդ ա մտե, համ իմ փայ փլավն ա կերե, համ էլ ինձ պաչե, թողե գնացե։

Դե՛ս ա ընկնում, դե՛ն ա ընկնում, է՛ս պուճախը, է՛ն պուճախը, տենում ա մալ-մադաթ չկա, դուռն էլ ղայիմ շինած ա։ Մնում ա արմացած, չի իմանում էս ի՛նչ բաս ա։

Էգսի օրը աշկերտն էլ էդ վախտին ֆորի միջիցը էն ծակը բաց ա անում, վե գալի թագավորի աղջկա օթախը, տենում ա էլի քնած ա. էթում ա նստում, անսաս նրա փայ փլավն ուտում, եննա մոտանում ա աղջկա ջուխտ թուշը պաչում, հենց ուզում ա էթա՝ աղջիկը նրա փեշը ղայիմ բռնում ա։

— Ա՛յ տղա,— ասում ա աղջիկը,— օձն իրա պորտովը, ղուշն իրա թևովը ընչանք օրս սիրտ չի արե ըստե ոտ դնի, դու ո՞նց սիրտ արիր մտար իմ օթախը։ Ոնց ես՝ էթամ հորս ասեմ, էն սհաթին քեզ քյալլա անիլ տա։

— Թագա՛վորի աղջիկը սաղ ըլնի,— ասում ա տղեն,— քու սերն ա բերե։ Քանց հորդ ես ասում,— ասում ա,— հաղիր դու քու ձեռովը քյալլա ա՛րա, պրծի էլի։

Էս խոսքը շատ ա դիր գալի աղջկանը։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա,— սրանից դենը ես քունն եմ, դու իմը։ Ռազի՞ ես։

— Ռա՛զի եմ,— ասում ա տղեն։

Նոր թաղադան էրկսով նստում են հացի. ուտում են, խմում, քեֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում ընչանք դառը կեսգշեր։ Եննա տղեն վեր ա կենում էթում էլ եդ իրա տեղը, ծակը ղայիմ կալնում, որ մարդ չիմանա։

Ըսենց անցկացավ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս. էս

աղեն ամեն գշեր էն ծակովը վեր էր գալի թագավորի աղջկա օթախը, նրա հենենա ուտում, խմում, ասում, խոսում, մասլահաթ անում, նո՛ր լիսադեմին էլ եդ գալի իրա տեղը։

Օրեն մի օրը թագավորը հրամայեց իրա նոքարներին՝ էթան տենան զարգյարի աշկերտը մեռել ա, թե դեռ հլա սաղ ա, հանեն, բերեն իրա կուշտը։ Նոքարները գնացին ֆորի բերանը բաց արին, պարանը կախ տվին, էն տղին ֆորիցը հանեցին, բերին թագավորի կուշտը։ Թագավորը տղին որ տեհավ, մնաց արմացած։ Չաղությունիցը տղի շլինքը էնքան էր հաստացե, կասենաս գոմշի շլինք ըլներ։

— Հը՛,— ասեց թագավորը,— էրազդ ասո՞ւմ ես, թե չէ։

— Չէ՛, թագա՛վորն ապրած կենա,— ասեց տղեն,— իրեք ամիս չէ, թեկուզ իրեք տարի էլ պահես ֆորի միջին, ես իմ էրազն ասողը չեմ։

— Ա՛յ տղա,— ասեց թագավորը,— մեղք ես, ջահել-ջիվան ես. տե՛ս՝ վերջը կփոշմանես։

— Թագա՛վորն ապրած կենա, չեմ փոշմանի, ի՛նչ ուզում ես՝ ա՛րա։

Թագավորը հերսոտեց տղի վրեն, նոքարներին հրամայեց, տաննեն էլ եդ քցեն ֆորի մեջը, որ ընդե սովածությունիցը մեռնի։ Նոքարները ծեծելոն, ջարդելոն, քաշքշելոն տանում են նրան էլ եդ քցում ֆորի մեջը, թողում գալի։

Զարգյարի աշկերտն էլ ղաթի էս էր ուզում։ Աղաքվա պես ասում իրան օրը գշերը կախ էր ըլնում աղջկա օթախը, ընչանք լիսադեմ կշտին մնում, ուտում, խմում, կշտանում, նոր լիսադեմին բանձրանում էլ եդ իրա տեղը։

Ըսենց անց ա կենում մի ժամանակ. օրեն մի օրը Ֆրանգըստանի թագավորը էդ երկրի թագավորին իրեք ձի ա ղրկում, հետն էլ թամբահ անում, թե. «Պտի իմանաս սրանց ամեն մնի յաշը՝ ո՛ր ձին քա՛նի տարեկան ա. չիմացար, իմաց կաց քու սաղ թագավորությունը քարուքանդ կանեմ, դու գիտաս»։

Խեղճ թագավորը էս որ լսում ա, թուք ու մուքը կպնում ա, վախլությունիցը չի իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի, ի՛նչ ջուղաբ տա նրան։

Միտք արեց, միտք արեց, վերջը ասեց.— Թե իմանա՝ իմ աղջիկը կիմանա էս բանը, էլ մարդ չէ։

էն սհաթը ղարավաշների բերնով խաբար ղրկեց աղջկանը, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. Ֆրանգստունի թագավորը իրեք ձի ա ղրկե, պտի նրանց յաշը իմանաս։ Դե նրա աղջիկը իմաստուն էր, է՛լի, ամեն բան գիտար, համա մախաուս չասեց. հորը ջուղար ղրկեց, թե իրա իմաստունությունը գնացել ա, թող ուրշին հարցնի։ Ղարավաշները խաբար բերին թագավորին, թե աղջիկդ ըսենց ա ասում։

էդ իրիկուն զարգյարի աշկերտը, ոնց որ իրա ղայդեն էր, էլի ֆորի միջիցը կախ ա ըլնում թագավորի աղջկա օթախը։

— Տղա՛,— ասում ա թագավորի աղջիկը,— բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։ Ֆրանգստունի թագավորը հորս իրեք ձի ա ղրկե, հետն էլ ապսպրե, թե՝ «Պտի իմանաս ո՛ր ձին քա՛նի տարեկան ա»։ Նա էլ ղարավաշների բերնով իմաց էր տվե ինձ, որ էթամ մի ճար անեմ նրան։ Ես էլ մախաուս խաբար ղրկեցի, թե իմ իմաստունությունը գնացել ա, թող ուրշին հարցնի, որ ինչ ա՝ քե սարվացնեմ, էթաս գտնես, բալի էդ ֆորիցը քեզ աղատի։

— Էդ լավ էլավ,— ասում ա տղեն,— դե սարվացրա տեննա՛մ։

— Կէթաս,— ասում ա աղջիկը,— էդ ձիանքանցը աղաք կանես, քու ձեռովը կտանես աղբուրը, կջրես, եննա կբերես դոմը, կկապես, աղաքները գարի կածես, որ ուտեն. որը դունչը կոխեց մսուրքը, եմը կերավ՝ իմաց կա՛ց էն իրեք տարեկան ա. որը եմին դնչով տվեց ու ֆռնչացրեց՝ իմաց կա՛ց ըն էլ էրկու տարեկան ա. որն էլ տեհար դունչը կոխում ա մսուրքը ու ըսկի գարի չի ուտում, հենց դե՛ս, դե՛ն ծուլ ա ըլնում, տռճինկ տալի՝ իմաց կա՛ց, որ էն հլա խամ ա, եմին չի սարվե, ըն էլ մի տարեկան ա։

— Լա՛վ,— ասում ա տղեն,— ոնց որ ասեցիր, ընենց էլ կանեմ։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք թագավորիցը։

Էդ թագավորն ա ղարավաշներիցը որ իմանում ա աղջկա ջուղաբը, մնում ա շիվարած, գլխի վրեն մոլորած, չի իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ խաբար ղրկի Ֆրանգստունի թագավորին։ Կանչում ա իրա նազիր-վեզրին, պալատի մարդկերանցը քոմմըքին էլ հավաքում ա, բալի մի ճար անեն։ Սրանք դե՛ս տվին, դե՛ն տվին, ինչքամ խելք-խելքի տվին, միտք արին՝ զադ դուս չէկավ, չկաթացին գտնի։

Բիրդան թագավորի միտն ընկավ զարգյարի աշկերտը, ասեց.— Մարդ ա, բալի նա գտնում ա։

Հրամայեց էթան ֆորիցը հանեն, բերեն իրա կուշտը։ էն սհաթը էթում են հանում, բերում։ Տղեն գալիս ա թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— քեզ մի բան եմ ուզում հարցնի. չեմ գիտա կգտնես, թե չէ։

— Հարցրա՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— բալքի գտնում եմ։

— Թե իմացար էս իրեք ձիու յաշը,— ասում ա,— ինչ ուզես՝ կտամ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— դրանում ի՛նչ կա, որ չիմանամ։

— Դե իմացի տենա՛մ,— վրա ա բերում թագավորը ուրախացած։

Տղեն էրեկվա տված խրատը մտիցը չէր քցե։ էն սհաթը ձիանոնց նոխտեքն առավ ձեռը, քաշեց, տարավ դպա աղբուրը, լավ-լազաթին ջրեց, լեղացրեց, եդ բերեց գոմումը կապեց։ Ծննա գնաց գարի բերեց, ածեց աղաքները, որ ուտեն. ինքն էլ մխելի հետու կաննենց, որ վարավուրդ անի, տենա ոնց են ուտում։ Տեհավ, որ ձիանոնցից մինը, աղչկա ասածի պես, գլուխը կոխեց մսուրքը ու արխեչին իրա համն ուտում էր։ Տեհավ էն մինն էլ մոտացավ գարուն, համա չա ուտում էր, չա չէ, չա թե չէ ֆռնչացնում էր։ Համա վրա իրեք ձին, որ, ասես, գարի չէր ուտում՝ չա դե՛ս, դե՛ն էր ծով ըլնում, տռճինկ տալի, չա թե չէ քացի քցում, խալխին վախացնում։ Ըստոնք որ լավ վարավուրդ արեց, մոտացավ թագավորին։

— Թագա՛վորը սաղ ըլնի,— ասեց,— հրես էս ձին տենում ես, էս իրեք տարեկան ա. էս մինը էրկու տարեկան. էն մեկելն էլ՝ մի տարեկան ա։— Մին-մին մատով շանց տվեց։

Ֆրանգստանի թագավորի մարդիկը, թագավորի նաղիր-վեզիրը քոմմա մնացին մաթ էլած, բերաննները բաց իրար էրեսի մտիկ անելոն։ Թագավորի ուրախությունին հո հեսաբ չկար. չէր իմանում ի՛նչ անի, ո՛նց աշկերտի լավությունի տակիյը դուս գա, որ լավ ըլնի։ Համա բիրդան նրա էրազը միտն ընկավ։ Թագավորը աղաչանք-պաղատանք արեց, որ ասի, նա էլի սատանի ձին նի էլավ, չասեց։ Թագավորը հրամայեց, որ էլ եդ տանեն քցեն ֆորը.

ընդե կենա ընչանք խելքի գալը։ Նոքարները տարան զարգյարի աշկերտին էլ եդ քցեցին ֆորը, թողին էկան։

Թագավորը Ֆրանգըստունի թագավորի մարդկերանց հենենա լավ-լավ փնչաշներ դրեց, ճամփու քցեց։

Անց ա կենում ըսենց մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը Ֆրանգստունի թագավորը էս թագավորին իրեք խնձոր ա ղրկում, իրեքն էլ մի տեսակի, մի ռանգի ու մի մենծությունի. ապսպրում ա, թե. «Պտի իմանաս էս իրեք խնձորից ո՛րը քա՛նի տարվա ա. չիմացար՝ իմաց կա՛ց սաղ թագավորությունդ քարուքանդ կանեմ, քեզ էլ տնով-տեղով եսիր կտանեմ»։

Թագավորը էլի ղարավաշների բերնովը իմաց ա տալի իրա աղջկանը, թե.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. կարաս՝ մի իլլա՛ճ արա։— Աղջիկը էս հետ էլ ա խաբար ղրկում հորը, թե՝ իրա իմաստունությունը գնացել ա, թո՛ղ ուրիշ մարդ գտնի։

Էդ իրիկուն զարգյարի աշկերտը, ամեն օրվա պես, էլի կախ ա ըլնում թագավորի աղջկա օթախը։ Աղջիկը սրան նաղլ ա անում։

— Բա չես ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։ Ֆրանգստունի թագավորը հմի էլ իրեք խնձոր ա ղրկե հորս, որ իմանա նրանցից ամեն մինը քա՞նի տարվա խնձոր ա. «Չիմացար,— ասել ա,— իմաց կա՛ց սաղ թագավորությունդ քարուքանդ կանեմ»։ Հերս էս հետ էլ էր ինձ կանչե, որ էթամ մի ճար անեմ, համա ես ղաստի չգնացի, որ էլի քեզ կանչի, էթաս գտնես։

— Բա է՞դ ոնց պտի գտնեմ,— հարցնում ա տղեն։

— Խնձորները,— ասում ա,— վե կունես ձեռդ, կէթաս հավվի ղրաղին կկաննես, մին-մին կքցես ջուրը. էն որ գնաց ջրի տակը ու եդի էլավ ջրի էրեսը, իմացի, որ մի տարվա ա. էն որ քցելու բոշտան մի քիչ տակն էլավ, էլ եդ դուս էկավ ջրի երեսը, իմացի, որ էրկու տարվա ա. համա էն որ ըսկի ջրի տակը չի էթա, հենց կմնա էրեսին, իմացի, որ ըն էլ իրեք տարվա ա։

— Լա՛վ,—ասում ա տղեն,—ոնց որ ասեցիր, ընենց էլ կանեմ։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք թագավորիցը։

Թագավորին որ խաբար են բերում, թե աղջիկդ ըսենց ա ասում, էն սհաթը հրամայում ա նոքարներին, էլի էթան զարգյարի աշկերտին ֆորիցը հանեն, բերեն։ Էթում են հանում, բերում թագավորի կուշտը։ Տղեն թագավորին գլուխ ա տալի, ընդե կաննում։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— քեզ մի բան էլ պտի հարցնեմ, չեմ գիտա կգտնես, թե չէ։

— Ա՛սա, թագավորն ապրած կենա, բալքիմ գտնում եմ։

Թագավորը իրեք խնձորը բերում ա, տալի տղին։

— Կարա՞ս իմանա,— ասում ա,— էս խնձորներից ո՛րը քա՛նի տարվա ա։

— Թագավորն ապրած կենա,— ասում ա,— դրանից էլ հեշտ բա՞ն։

Տղեն դե աղջկա խրատը միտն էր պահե, է՛լի։ Խնձորներն առնում ա թագավորի ձեռիցը, էթում հավզի ղրաղին կաննում, մին-մին քցում ջուրը։ Տենում ա, ոնց որ աղջիկն ասել էր, ընենց էլ էլավ։ Ընենց մին-մին որ քցեց, իմացավ ո՛րը քա՛նի տարվա ա, ջկեց, տվեց թագավորին։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— էս մի՛ տարվա խընձոր ա, էս՝ է՛րկու տարվա, ըս էլ՝ ի՛րեք տարվա։

Ֆրանգստունի մարդիկը, թագավորի նազիր-վեզիրը մնացին արմացած, թե՝ էս տղեն ի՞նչքամ իմաստուն, ի՞նչքամ խելոք ա, որ ըս էլ էրկու հետ էսթավուր դժար բանը գտնում ա։ Թագավորը հո՝ ուրախացա, աշխարով մին էր էլե. ուզում էր դրան լավ-լավ փեշքաշներ տա, մուրախաս անի, բիրդան էլի[1] նրա էրազը միտն ընկավ։

— Տղա՛,— ասեց թագավորը,— քեզ ուզում եմ բաց թողամ էթաս, քու արևի ձենն ածես. արի դոքիդ քարը վե՛ր ածա, ասա տենամ էրազդ ի՛նչ ա։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց տղեն,— բան գիտաս՝ բան ա՛սա. ես էրազ ասողը չեմ։

Թագավորը տեհով, որ չէ, չիլնում, էրազը չի ասում, էլի կոշտ ու կոպիտ ջուղաբ ա տալի, հրամայեց որ տանեն էլ եդ քցեն ֆորի մեջը, բալբի ընդե խրատվի, խելքի գա։ Նոքարները տղին քաշքշելոն տանում են էլ եդ գցում ֆորի մեջը, վե կենում գալի։

Թագավորը Ֆրանգստունից էկած ղոնաղներին լավ-լավ փեշքաշներ ա տալի, ճամփու դնում իրանց երկիրը։

Անց ա կենում ըսենց մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց ամիս, մախլասի՝ մի տարի, Ֆրանգստունի թագավորը էլ մարդ չի

[1] Տպագիր տեքստում այս բառը բացակայում է, ավելացված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

ղրկում էս մեր թագավորի կուշտը։ Սա էլ ուրախանում ա, հենց իմանում ա՝ պրծավ նրա ձեռիցը։ Համա ո՞րդէ. օրեն մի օրը մըն էլ ի՛նչ ա տեսնում՝ Ֆրանգստունի թագավորը հրես տասնէրկու էրեխա ա ղրկե, տասնէրկուսն էլ մի բոյի, մի բուսաթի. էնքա՜մ իրար նման, էնքա՜մ իրար նման, կասեսաս տասնէրկուսն էլ աղպրտինք ըլնեին, մի հորից, մի մորից. մի խոսքով՝ ոնց որ մի խնձորը տասնէրկու տապակ արած, ընդե դրած, էնքա՜մ իրար նման ին. թամբահ ա անում, թե. «Պտի իմանաս սրանից ո՛րն ա աղջիկ, ո՛րը տղա. չիմացար՝ իմաց կա՛ց ղոշուն վե կունեմ, կգամ թախտդ տաի ու տարաղ կանեմ»։

Թեղճ թագավորի թուք ու մուքը կպավ։ Չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ վայ տա գլխին։ Ճարը կտրած, էլի ղարավաշներին ղրկեց իրա աղջկա կուշտը, որ գա տեսնա ի՛նչ ա անում, Ֆրանգստունի թագավորի ջուղաբը ո՛նց ա տալի։

Համա աղջիկը էլի գլուխը տակը չտվեց, խաբար ղրկեց, թե.— էդ իմ բանը չի, քեզ համար ուրիշ մարդ գտի։

Որ մթնում ա թե չէ, զարգյարի աշկերտը ֆորիցը քաշ ա լինում թագավորի աղջկա օթախը, աղջիկը դրան ասում ա.— Բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, Ֆրանգստունի թագավորը տասնէրկու էրեխա ա ղրկե հորս, որ իմանա նրանցից ո՛րն ա աղջիկ, ո՛րը տղա։ Հերս էլ ղարավաշներին ղրկել էր ինձ կանչե, որ էթամ Ֆրանգստունի թագավորի ջուղաբը տամ. ես էլի մախսուս չգնացի, ասեցի. «Իմ բանը չի»։

— Բա է՞դ ոնց պտի գտնեմ,— հարցնում ա տղեն։

— Կէթաս,— ասում ա աղջիկը,— իրրուղը տաք ջուր կլցնես. գշերով-գշերհանա հաշտումը կկաննես։ Էն տասնէրկու էրեխեն որ վե կկենան էրեսները լվանան, կէթաս ձեռներին ջուր կածես։ Ջուր ածելու վախտը ով տեհար տաքին չդիմացավ, ձեռը քաշեց ու «օ՛ֆ-օ՛ֆ» արեց, իմաց կա՛ց նա տղա ա. ով ձեռը չքաշեց, տաքին դիմացավ, իմաց կա՛ց նա աղջիկ ա։ Ըսենց,— ասում ա,— մին-մին կչոկես, տղեքանցը ջոկ օթախ կանես, աղջկերանցը՝ ջոկ։ Նոր Ֆրանգստունի թագավորի մարդկերանցը կկանչես, կասես. «Էս վեցը տղա են, մեկել վեցը՝ աղջիկ»։

— Լա՛վ,— ասում ա տղեն,— ոնց որ ասեցիր՝ ընենց էլ կանեմ։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք թագավորիցը։

Դարավաշները թագավորին որ խաբար բերին, թե՝ աղչիկդ ըսենց ա ասում, խեղճը մնաց գլխի վրեն մոլորած։ Ի՛նչ աներ, ի՛նչ չաներ. ո՛ւմ կանչեր, որ կարենար իրա դարտին դարման անի։ Միտք ա անում, միտք ա անում, վերջը հրամայում ա՝ էթան էլի զարդյարի աշկերտին կանչեն։ Էթում են ֆորիցը հանում, բերում թագավորի կուշտը։ Տղեն թագավորին գլուխ ա տալի, էն դիհը կաննում։

— Տղա՛,— ասում ա,— Ֆրանգստունի թագավորը հմի էլ ըսենց մի զուլում ա ապսպարե. տե՛ս կարա՞ս գտնի։

— Խի՞ չեմ կարա, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— դրանից էլ հեշտ բա՞ն։ Համա, թագա՛վորն ապրած կենա, ես էլ քեզանից մի բան պտի ուզեմ. չեմ գիտա՝ կտա՞ս, թե չէ։

— Ուզա՛,— ասում ա թագավորը,— մի՛ վախի, սաղ թագավորությունս էլ ուզես, չեմ խնայի՝ կտամ։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— լսել եմ մի սի՛րուն, մի նա՛շխուն, մի հուրի-մալաք աղչիկ ունես, որ Ֆրանգըստունի թագավորի ուզածը գտնեմ, էդ աղչիկն էլ ինձ տա՛լիս ես։

— Տալիս եմ,— ասում ա թագավորը,— մորդ կաթի նման քեզ հալալ ա։

— Տա՞լիս ես։

— Տալիս եմ,— ասում ա թագավորը։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա տղեն,— Ֆրանգստունի թագավորի ուզածն էլ ջուխտ աչքիս վրեն։

Էգսի օրը, լիսանում ա թե չէ, տղեն իբրուղը տաք ջուր ա լըցնում, մի ձեռին բռնում, լագանն էլ մեկել ձեռն ա առնում, փեշկիրն էլ ուսովը քցում, գալի հաշտումը կաննում։ Թագավորի ղոնաղները վեր են կենում տեղներիցը, դուս գալի հաշտը, որ էրեսները լվանան, տղեն աղաք ա գալի, մին-մին ձեռներին ջուր ածում։ Ով որ տաքին չի դիմանում, ձեռը քաշում ա «օ՛ֆ-օ՛ֆ» անում, նրան ջոկ օթախ ա անում. ով որ չէ, տաքին դիմանում ա, թողում ա ընդե։ Ըսենց քոմմքի ձեռին ջուր ա ածում, իրարից ջոկում, ենենա կանչում ա Ֆրանգստունի թագավորի մարդկերանցը։

— Է՛կեք,— ասում ա,— տեհեք դրո՞ստ եմ ջոկե, թե չէ։

Ֆրանգստունի թագավորի մարդիկը գալիս են տենում՝ դրուստ ա ջոկե. մնում են մաթ էլած էս տղի խելքի վրեն։

— Ա՛ֆֆարիմ,— ձեն են տալի Ֆրանգստոնի մարդիկը,— դրուստ ես ջոկե։

Թագավորը բերում ա դրանց լավ-լավ փեշքաշներով ճամփու դնում դպա Ֆրանգստուն։ Նննա թադարեք ա տենում, բերում աղջըկանը զարգյարի աշկերտի վրեն նշան դնում, պսակում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։

Ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛ւն, ինչ դափ ու ղուռնա՛, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք Ֆրանգստունի թագավորի մարդկերանցիցը։

Նրանք էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են իրանց երկիրը։ Էթում են դուզ թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Հը՛,— հարցնում ա թագավորը,— ի՞նչ ջուղաբ եք բերե էն երկրի թագավորիցը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են,— նրա երկրում մի ջահել-ջիվան տղա կա, էնքա՛մ խելոք, էնքա՛մ իմաստուն, որ էլ չենք կարա ասի. ըս էլ իրեք հետ ինչ հարցնում ես՝ նա՛ ա գտնում։

— Բաս որ ըտենց ա,— ասում ա թագավորը,— կէթաք էլ եղ էն երկիրը, իմ անումը կտաք, էն տղին վե կունեք, կբերեք իմ կուշտը, կասեք. «Մեր թագավորը քեզ կանչում ա». մի տենամ էդ ի՞նչ թավուր իսան ա, որ ըս էլ իրեք հետ իմ ասածը գտնում ա։

— Մեր աչքի վրեն, թագա՛վորն ապրած կենա,— ասում են նրա մարդիկը։

Թագավորին գլուխ են տալի, դուս գալի, էթում ճամփի բադարեք տենում, հեգսի օրը, դեռ լիսն ու մութը չրաժանված, ընկնում ճամփա դպա էն թագավորի երկիրը։

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, գշեր, ցերեկ էթում են՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շարաթ, էրկու շարաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում են էն թագավորի երկիրը։ Էթում են թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

Թագավորը սրանց որ չի տենում, թուք ու մուքը կպնում ա, ասում ա. «Հալբաթ Ֆրանգստունի թագավորը էլի թազա բան ա ապսպրե»։

— Հը՛, խե՞ր ըլնի,— հարցնում ա թագավորը նրանց։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են նրանք,— մեր թագավորը քու էն իմաստուն մարդին կանչում ա։

Թագավորը էն սհաթը մարդ ա ղրկում զարգյարի աշկերտի եննուցը, կանչիլ տալի։ Զարգյարի աշկերտը գալիս ա թագավորին ղուխ տալի, ընդե կաննում։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— Ֆրանգստունի թագավորը բեղ կանչել ա, կէ՞թաս։

Խեղճ տղի ջանը եռ ու քորն ընկնում ա. էթա՝ վայ թե մի բան հարցնի, չկարենա ջուղաբ տա, գլուխը թոցնիլ տա. չէթա՝ վա՛յ թե հերսոտի, ղոշուն վեր ունի, գա վրները կոխվ։ Ըսենց մնացել էր էրկու ջրի արանքին, չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի։ Վերջը որ շատ միտք ա անում, միտք ա անում, տեննում ա՝ ճար, իլլաճ չկա, պտի էթա։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— որ հրամայում ես՝ կէթամ, ի՛նչ անեմ։

Էս տղեն ա՝ մի քանի օր մնում ա, ճամփի համար պաշար ա վեր ունում, վե կենում նրանց հեննա ճամփա ընկնում դպա Ֆրանգստուն։

Գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում են Ֆրանգստուն։ Թագավորի մարդիկը տղին աղաք են անում, տանում դուղ թագավորի ամարաթը, թագավորին գլուվ տալի, ընդե կաննում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են,— հրես էն իմաստուն տղին բերել ենք։

— Ձլա՛ն տղեն դո՞ւ ես,— հարցնում ա թագավորը։

— Հա՛, ես եմ, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն։

— Դե, որ ըտենց իմաստուն ես,— ասում ա,— ա՛ռ էս պողպատի կտորը, ինձ համար սրանից մի լավ ձեռք մախմուրի պես կաղող շոր կարա՛, որ հագնեմ։ Իրեք օր էլ քեզ վադա եմ տալի,— ասում ա,— կարեցիր՝ աղջիկս քեզ կտամ, վրեն էլ բոլ մալ ու դուվաթ. չկարեցիր՝ իմաց կա՛ց գլուխդ կֆը՛ռնա։

Խեղճ տղեն էս որ լսեց, լեղին ջուր կտրեց։ Ճարն ի՛նչ. մի հետ ընկել էր, պտի քաշեր։ Պողպատի կտորը վե կալավ, դառը-տխուր դուս էկավ, գնաց։ Էդ թագավորի աղջկա փանջարի կշտովը անց-

1646—22

կենալիս, թագավորի աղջիկը դրան վարավուրդ արեց. գլուխը փանջարիցը հանեց, տղի հեննա խոսաց։

— Ցլա՛ն իմաստուն տղեն դո՞ւ ես,— հարցրեց աղջիկը։

— Հա՛, ես եմ, թագա՛վորի աղջիկը սաղ ըլնի,— ասեց տղեն։

Տղեն որ գլուխը չի բանձրացնում, մտիկ տալի, տենում ա ի՞նչ, մի ա՞ղջիկ, մի ա՞ղջիկ, մի ա՞ղջիկ, էնքա՞մ սիրուն, էնքա՞մ ձաշխուն, որ չուտես, չխմես, չհագնես, չմաշես, հենց նրա գյուլջամալին թամաշ անես, էնքա՞մ մի սիրունիկ զադ էր։ Դրան որ չի տենում, խելքամաղ ա ըլնում, մնում։

— Բա խի՞ ես ըտենց դառը-տխուր,— հարցրեց աղջիկը։

— Ի՛նչ անեմ, տխուր չըլնեմ,— ասեց տղեն,— հերդ ինձ մի պողպատի կտոր ա տվե, որ իրա համար մի ձեռք շոր կարեմ. չկաբեցի՝ պտի գլուխս կտրիլ տա։ Համի մնացել եմ մոլորած, չեմ իմանում ի՛նչ անեմ, ի՛նչ չանեմ։

— Տղա՛,— ասեց աղջիկը,— մի՛ վախի, ես ընենց կանեմ, որ քու մի մազն էլա չի թեքվի։ Կէթաս,— ասեց,— աղլուխդ լիքը ավազ կլցնես, կտանես հորս կուշտը, կասես. «Թագա՛վորն ապրած կենա, էս ավազիցը թել մանիլ տու, որ քու ուզած մի ձեռք շորը կարեմ»։ Որ կասի. «Ախար ավազիցը թել կմանվի՞»։ Կասես. «Ավազիցը որ թել չի մանվի, բա պողպատիցը շոր կկարվի՞»։

Տղեն էս որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Էն սհաթն էթում ա աղլուխը լիքը ավազ լցնում, եդ գալի թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Հը՛, տղա՛,— հարցնում ա թագավորը,— խի՞ եդ էկար։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էս ավազը բերել եմ՝ մանիլ տաս, որ քու ուզած շորը սրանով կարեմ։

Թագավորը մնում ա սառած, տղի էրեսին մտիկ անելոն։

— Հը՛, թագա՛վորն ապրած կենա,— վրա ա բերում տղեն,— խի՞ ես ըտենց էրկեն ու բարակ միտք անում։

— Ո՛նց միտք չանեմ,— ասում ա թագավորը,— ըսկի էդ ըլնելու բա՛ն ա, որ ասում ես։ Ավազիցը թել կմանվի՞։

— Ավազիցը որ թել չի մանվի,— ասում ա տղեն,— բա պողպատիցը շոր կկարվի՞։

Թագավորը տղի խելոք ջուղաբը որ լսում ա.— Տղա՛,— ասում ա,— դու տարար. աղջիկս մորդ կաթի նման քեզ հալալ ա, գնա՝ քու արևի ձե՛ն ածա։

էն սհաթը բերեց աղջիկը տվեց տղին, աղջկա հենենա լավ բաժինք դրեց, լավ մալ ու դոլվաթով, լավ-լավ փեշքաշներով ճամփու դրեց իրա երկիրը։

Տղա, աղջիկ ճամփի թագարեք տեհան, բեռները բարձեցին, դնացին թագավորի ձեռը պաշեցին, թագավորի կնկա ծիծը պաշեցին, ընկան ճամփա։

Էս տղեն ա՝ էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասավ իրանց երկիրը։

Լաբարը տարան թագավորին, թե.— Հրեն փեսեդ եքա քոչ ու բարխանով գալիս ա, հենենեն էլ մի սի՛րուն, մի նա՛շխուն, մի հուրի-մալաք աղջիկ, որ տենողի խելք ա էթում։

Թագավորը մենծ ղոշուն՛ա վեր ունում, իրա նազիր-վեզրի հենենա դուս գալի փեսի աղաքը։ Թագավորն ու տղեն իրար որ տենում են, ուրախանում, աշխարով մին են ըլնում. իրար հենենա վեր են կենում, գալի թագավորի ամարաթը։ Նո՛ր ըստե ասում են, խոսում, մասլահաթ անում, տղեն իրա գլխով անցկացածն ա նաղլ անում, նրանք իրանց. ըսենց ուրախանում են, խնդում, ծիծաղում, չա՛ն ասում, չա՛ն լսում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— ընչանք օրս իմ էրազը չի ասում, համա հմի պտի ասեմ։

— Աստա՛,— ասում ա թագավորը,—ասա՛ տենամ էդ ի՞նչ էրազ էր, որ ի՛նչ արի, չարի, ի՛նչ Հուդի չարշարանք տվի՝ չասեցիր։

— Էրազում,— ասում ա,— տեհա մի լավ գյուղի բաղում նըստած եմ։ Տեհա էդ բաղի միջիցը էրկու սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաք աղջիկ դուս էկան ու դուղ՝ դպա ինձ։ Դրանցից մինը քու աղջիկն էր, մեկելը՝ Ֆրանգստունի թագավորի աղջիկը։ Էդ էրկու աղջիկը որ էկան իմ կուշտը, մինը մի ծնկանս նստեց, մինը՝ մեկել ծնկանս։ Դե ջահել տղա, ջահել աղջկեք, սիրտս չհամբերեց, ձեռս քցեցի Ֆրանգստունի թագավորի աղջկա ճտուվը, ջուխտ թուշը դուչիմ պաշեցի, եդ դառա, որ քու աղջկա թուշն էլ պաշեմ, մըն էլ էն տեհա, շըրը՛փ. մի սիլլա էրեսիս։ Մուրազս փորիս վն թուա, տեհա՝ ո՛նչ թաս կա, ո՛նչ համամ։ Ես էլ, թագա՛վորն ապրած կենա, դրա համար ասեցի. «Ինձ սիլլա տվող, ոնց որ իմ մուրազը փորիս թողիր, բարով դու էլ քու մուրազին չհասնես»։ Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— հրես էս էր իմ տեհած էրազը, որ ի՛նչ-

քամ չարչարեցիր, ի՛նչ արիր, չարիր՝ չասեցի։ Համա հմի ասում եմ, չունքի ես իմ մուրազին հասել եմ։

Թագավորն էս որ լսում ա, իրա թախտիցը վեր ա գալի, տղին նստացնում իրա տեղը թագավոր։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։





27· ՉՈՒԹՉԻ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ։ Էդ մարդը չութչի ա ըլնում։ Դրանք ունենում են մի մինուճար տղա։

Օրեն մի օրը էդ Չութչին չութը վեր ա ունում, էթում հանդը չութ անելու։ Չութ աննելիս բիրդան չթի սամիքը կոտրվում ա. մնում ա մաթալ, էլ չի կարում չութ անի, փոր-փոշման եդ ա դառնում, գալի տուն։

Էթում ա իրա ընկորտանցը իմաց ա տալի, թե.— Էգուց էկեք իրար հեննա էթանք մեշեն, սամու փետ բերենք։

Չութչու տղեն էս որ իմանում ա, գալիս ա, հորն ասում.— Ա՛յ հեր, մի՛ էթա, փորձանք կգա գլուխդ. ֆլա՛ն օրը, ֆլա՛ն վախտը ընե՞նց մի անձրև պտի գա, ընե՞նց մի բուք ու բորան պտի անի, որ աստոծ փրկի, աղատի։

— Ա՛յ որդի,— ասում ա հերը,— ախար ո՞նց կըլնի, խալխին ե՛ս եմ իմաց տվե, գլխահան արե, ես որ չէթամ՝ ամոթ չի՞։

— Ա՛յ հեր,— ասում ա,— քու ի՞նչ բանն ա. ես նրանց ջուղարը կտամ, դու իրիկունը թեք ընկի, քնի՛։

— Ա՛յ որդի,— ասում ա հերը,— որ ասում ես՝ էլ ի՛նչ ասեմ. թո՛ղ քու ասածն ըլնի։

Իրիկունը թեք ա ընկնում, քնում։

Էն գլխեն, չը՛խկ հա չըխկ, չը՛խկ հա չըխկ, թը՛խկ հա թըխկ,

դուռը ծեծում են։ Տղեն սուս ու փուս վեր ա կենում, չուխեն քցում վրեն, դուս գալի։

— Ո՞վ եք,— ձեն ա տալի։

— Մենք ենք,— ասում են,— դուռը բա՛ց արա։

Տղեն դուռը բաց ա անում, տենում իրա հոր ընկերտինքը։

— Հերդ տա՞նն ա,— հարցնում են։

— Բա չե՛ք ասի,— ասում ա,— հերս էրեկ իրիկուն ամեն բան հազրեց, դրել էր խուրջինը, համա բիրդան հիվանդացավ. էս սհաթին էլ հրեն թեք ընկած ա, որ ասես ուշ չկա վրեն։ Բան չկա,— ասում ա,— դուք էս հետ գնացեք, մըն էլ որ էթալու կըլնեք՝ կգա։

Տղեն դրանց ջուղաբ ա անում, ինքը թողում ա, գալի տուն։

Հերը հարցնում ա.— Հը՛, ա՛յ որդի, ընկորտանցս ճամփու դրի՞ր։

— Հա՛,— ասում ա,— ճամփու դրի. դու արխեին թեք ընկի, քնի՛։

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, դրուստ որ էդ տղի ասած օրը ընե՞նց մի բուք ու բորան ա անում, ընե՞նց մի անձրև ա գալի, որ տանից դուս էկողի բերանմերանը կպնում էր[1]։ Մի քանի օրեն ետը մեշա գնացողներից մինը ընդհան գալիս ա գեղը, ջուղաբ բերում, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ֆլա՛ն օրը ընե՞նց մի բուք ու բորան արեց, ընե՞նց մի անձրև էկավ, ընենց մի ալեկործում արեց, որ իրա ընկերտինքը քոմմա փետացան. ինքն էլ մի հալով պրծել էր, վե կացե, էկե, անջախ իրան քցե գեղը։ Էդ Ջուբչին էս բանը որ իմանում ա, վեր ա կենում տղի ջուխտ թուշը պաչում։

— Ջորա՞նաս, ա՛յ որդի,— ասում ա,— դու ինձ պրծացրիր էդ պուլումիցը. դու չըլնեիր, ես էլ նրանց հեննա ֆողեց-ֆոզի պտի կորչեի։

Տղեն ըսենց մի քանի հետ հորը փորձանքից ազատում ա։ Դրանց գեղի կշտին մի մենծ գետ կար. էդ գետի ղրաղին դրանք ֆող ունեին. օրեն մի օրը հեր ու տղա վե կացան գնացին էդ ֆողը վաթելու։ Դրանց գեղիցը էդ օրը մի քանի ջահել-ջուհուլ վեր ին կացե, գնացե էդ գետը ձուվ կալնելու։ Տենում են, ըհը՛, հրեն թագավորը

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ իրար, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

իրա նազիր-վեզրի հեննա էկավ ըտերանք ման գալու էդ թոռչքը իրենք լավ ձուկն ին կալե. բերում են տալի թագավորին փեշքաշ։ Թագավորն էլ վեր ա ունում, տալի նազրին.

— Ա՛ռ,— ասում ա,— էս ձկները տա՛ր, տո՛ւ աղջկանս, զաթի իվանդ ա, բալի սիրտն ուզում ա, թո՛ղ խաշիլ տա՝ ուտի։

Էս նազիրն ա՝ ձկները վեր ա ունում, բերում թագավորի ամարաթը. դնում ա մի էրծաթե սինու մեջ, տանում ա տալի թագավորի աղջկանը։

Աղջիկը որ տեննում ա, հարցնում ա.— էդ ձկները է՞գ են, թե որձ։

— Թագա՛վորի աղջիկը սաղ ըլնի, ո՛րձ են,— ասում ա նազիրը։

— Դե՛ն տարեք, կորցրե՛ք,— ասում ա աղջիկը,— չե՞ք գիտա, որ ես ըսկի որձեղենի էրես չեմ ուզում տեննամ, ուր մնաց ուտեմ։

Ձկները էս խոսքը որ լսում են, իրենք էլ վեր են կենում, պոչների վրեն կաննում, ծիծաղում, էլ եդ շրըփալեն վեր ընկնում։ Թագավորի աղջիկը, նազիրը քոմմա մնում են արմացած, թե՝ էս ի՞նչ բաս աւ Նազիրը վեր ա ունում էդ ձկները, տանում դնում մի տոլար, պահում. ինքն էլ վեր ա կենում, էթում թագավորին մինմին նազլ անում, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

Թագավորը էս որ լսում ա, բերանը մնում ա բաց։ Աննա նազրին հրամայում ա.— Տա՛ր,— ասում ա,— էդ ձկները մի թաքուն տեղ պահա՛. ես, ոնց ըլնի, պտի իմանամ էս ի՞նչ բաս ա, էդ ձկները խի՞ ին ծիծաղում։

Թագավորը աննա եդ ա դառնում սուս ու փուս իրա ամարաթը։ Անց ա կենում մի վախտ՝ մի ամիս, էրկու ամիս, իրենք ամիս, մախլասի՝ մի տարի, օրեն մի օրը թագավորի աղջիկը կանչում ա նազրին։

— Կէթաս,— ասում ա,— սաղ մեր մհալը ման կգաս, կհարցնես, կտեսնաս որդե իմ անումը չեն տալի, ինձ չեն ճանանչում, կգաս կասես, որ ես ընդե մարդի էթամ։

— Լա՛վ,— ասում ա նազիրը։— Ճամփի թադարեք ա տեննում, վե կենում, ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստծ գիտա, հասնում ա մի գեղ։ Դուս ա գալի հանդը, տեննում հրես մի ծեր մարդ, մըն էլ մի ջահել տղա չութ են անում։

— Էթամ նրանց կուշտը,— ասում ա,— մի քիչ դինջանամ, հաց-մաց ուտեմ, էլ եդ վե կենամ էթամ իմ ճամփեն։

Էդ չութ անողն էլ էն Ջուբչին ա ըլնում, որ մի իմաստուն տղա ա ունենում։

Էդ իմաստուն տղեն թագավորի նազրին որ տենում ա, հորն ասում ա.— Ա՛յ հեր, հրես տենում ես, թագավորի նազիրը գալիս ա. որ գա քեզ բան հարցնի՝ ջուղաբ տո՛ւ. մարդ ա, որ ինձ էլ բան հարցնի, ես ի՛նչ ասեմ՝ չբարկանաս։

— Լա՛վ,— ասում ա,— ա՛յ որդի, դու գիտաս, ի՛նչ ուզում ես ա՛սա։

Թագավորի նազիրը գալիս ա, հասնում դրանց։

— Բարի աջողում, բա՛բի,— ասում ա նազիրը,— ի՞նչ կա, ի՞նչ չկա. քեֆնե՞րդ, հալնե՞րդ. ո՞նց եք, ի՞նչ եք անում։

— Ջանսաղությո՛ւն, թագավորի նազիրը սաղ ըլնի,— ասում ա Ջուբչին,—կանք, ապրում ենք, է՛լի։ Խեր ըլնի, բա դո՞ւ էդ ուր ես էթում,— հարցնում ա։

— Էթում եմ մեր մհալը պտտեմ, տեղնամ ի՛նչ կա, ի՛նչ չկա. թագավորիցը խալխը հո գանգատավոր չե՞ն։

— Թագավորի նա՛զիրը սաղ ըլնի,—ասում ա Ջուբչու տղեն,— զուր ես չարչարվում. ինչքամ էկել ես՝ տասն էսքամ էլ էթաս հլա թագավորի աղջկա անումը կա. զուր տեղը մի՛ էթա, ե՛դ դառ, գնա՛ քու բանին. դու էլ ես մեղք, ձիդ էլ։

Թագավորի նազիրը տղի էս ջուղաբը որ լսում ա, մնում ա զարմացած. փոր-փոշման եդ ա դառնում, գալի։ Գալիս ա թագավորի աղջկանը մին-մին նաղլ անում թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ֆլա՛ն տեղը մի Ջուբչի կար, նրա տղեն ըսենց ջուղաբ տվեց։

Թագավորի աղջիկը էս որ լսում ա, մնում ա միտք անելոն, թե էս ի՛նչ բաս ա, էն տղեն խի՛ պտի ընենց ասեր։

Անց ա կենում մի քանի վախտ, էս թագավորի աղջիկը զաստահիվանդ ա տալի։ Աշխարքումը ինչքամ գլուխ հեքիմ ա ըլնում՝ թագավորը բերիլ ա տալի՝ աղջիկը չի լավանում։ Օրեն մի օրը էս աղջիկը հորը կանչիլ տվեց իրա կուշտը։

— Թագա՛վորը սաղ ըլնի,— ասեց,— բա չես ասի՝ էս գշեր էրազումս տեհա՝ մեր տերտերն էկավ, ասեց. «Ա՛յ որդի, քու դեղ ու դարմանը ի՛նչ մենծ բան ա, որ չեք անում. քանի ամիս ա՝ հիվանդ, տեղ ու բարձով թեք ընկած ես. չէ՛ դու էլ մեղք ես, ջահել-

շիման ես, աչքդ մուրազի ա։ Ջլա՛ն գեղումն,— ասեց,— մի Չութչի կա, էդ Չութչին մի մինուճար տղա ունի, պտի էն տղին մորթեք, արինը խմես, որ լավանաս։

— Ա՛յ որդի,— ասում ա Թագավորը,— ախար ես ո՞նց բերիլ տամ էդ տղին. իլլաքիմ որ մինուճար ա։

— Թագա՛վորն ապրած կենա,—ասում ա աղջիկը,—Թե ուզում ես սաղանամ՝ պտի բերիլ տաս, Թե չէ հո՝ դո՛ւ գիտաս։

Թագավորը միտք ա անում, միտք ա անում, տենում ա, որ Ճար չկա, պտի էն տղին բերիլ տա, բալի աղջիկը լավանա։ Կանչում ա իրա նազրին։

— Մի բեռը ոսկի վե կունես,— ասում ա,— կէթաս Ջլա՛ն գեղը, ընդե մի Չութչի կա, նա մի տղա ունի, էդ բեռը ոսկին կտաս նրան, տղեն կառնես, կբերես, որ մորթենք, աղջիկս նրա արինը խմի, լավանա։

Նազիրը մատը կծում ա։ Թագավորին գլուխ ա տալի, դուս գալի։ Էգուց օրը Ճամփի Թադարեք ա տենում, վե կենում, ընկնում Ճամփա։

Չութչու տղեն դե իմաստուն էր, է՛լի, էս բանը իմանում ա։ Դալիս ա հորը ասում.— Ա՛յ հեր, Թագավորը իրա նազրին ղրկել ա, որ գա քեզ մի բեռը ոսկի տա, ինձ առնի, տանի Թագավորի աղջկա համար։ Որ կգա,— ասում ա,— մի՛ վախի, ոսկին ա՛ռ, ինձ տո՛ւ, տանի։ Արխեին կա՛ց,—ասում ա,—որ ասես, ինձ բան չիլենի. ոնց ըլնի սաղ-սալամաթ էլ եդ կգամ։

Թագավորի նազիրն ա՝ գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստած գիտա, հասնում ա Թագավորի ասած գեղը։ Սրան, նրան հարցնելուն էգ Չութչու տունը գտնում ա, էթում նրա կուշտը։

— Բարո՛վ, բարի՛,— ասում ա նազիրը։

— Բարո՛վ, ասսու հազար բարին,— ասում ա Չութչին,— խեր ըլնի, խի՞ ես էկել,— հարցնում ա։

— Էկել եմ,— ասում ա,— տղիդ տանեմ, Թագավորը ուզել ա. հրես էս մի բեռը ոսկին էլ քեզ փեշքաշ ա ղրկե։

— Տա՛ր, փե՛շքաշ ա,— ասում ա Չութչին,— տղի մալիաթն ինչ ա, որ Թագավորիցը խնայեմ,— ասում ա, տղի կուռը բռնում, տալի նազրին։

Նազիրն ա՝ մի բեռը ոսկին տալիս ա Չութչուն, տղին քաշում Թարքը՝ յա՛լլա։ Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստած գիտա,

հասնում ա թագավորի ամարաթը։ Նազիրը չի ղմշում, որ էդ թավուր գյոզալ տղին մորթեն. էլ չի տանում թագավորի կուշտը, բերում ա, իրանց տանը պահում։ Էդ նազրի կնիկը տենում ա՝ մարդը դատը-տխուր նստած ա՝

— Ա՛յ մարդ,— հարցնում ա,— խի՞ ես ըտենց մալուլ-մաշկյուլ նստե, ասա տենամ դարտդ ի՞նչ ա։

— Տենո՞ւմ ես էս տղին, ա՛յ կնիկ,— ասում ա նազիրը,— պտի մորթենք, որ ինչ ա թագավորի թարառուկ աղջիկը սրա արինը խմի, լավանա։

— Տնա՛շեն,— ասում ա կնիկը,— էդ ի՛նչ ա, որ դրա համար դարտոտե, վարամնոտե նստել ես. հրեն մեր հարևանի տղին էս մի սհաթ չիլնի, որ տարան թաղեցին, եդ դառան. էս գշեր գնա նրա գերեզմանը քանդա, հանա՛, գլուխը կտրա՛, բե՛, եննա մի ոչխար մորթա՛, արինը լցրա՛ մի ամանի մեջ, էս տղի շորերն էլ արնոտ արա՛, տա՛ր թագավորի աղջկանը շանց տո՛ւ, ա՛սա. «Մորթել եմ, արինն էլ հրես բերե». նրանք շատ գիտա՞ն, թե էդ ընչի արին ա։

— Զորա՞նաս, ա՛յ կնիկ,— ասում ա,— լավ խելք սարվացրիր. ըտենց էլ կանեմ։

Էդ նազիրը կես գշերին վեր ա կենում էթում գերեզմաններըման գալի, կնկա ասած էրեխի գերեզմանը գտնում, քանդում, հանում, գլուխը կտրում վրիցը, էլ եդ դնում տեղը, ֆորում ու յա՛լլա՝ դպա տուն ա կրնկում։ Գալիս ա տուն, մի ոչխար ա մորթում, մի խոր աման լիքը էդ ոչխարի արնիցը վեր ունում, էդ տղի հին-մին շորերը հանում ա, թաթխում արնի մեջը, առավոտը գշերով-գշեր-հանա էդ շորերն ու գլուխը վեր ա ունում, տանում դուզ թագավորի աղջկա կուշտը։

— Թագա՛վորի աղջիկը սաղ ըլնի,—ասում ա,—էրեխուն ինչքամ բշտեցի, հեննեն կուվեցի՝ ճար, իլլաճ չէլավ, չէկավ, ես էլ վեկալա ճամփին մորթեցի. հրես էս ա՛րինը, էս գլո՛ւխը, ըս էլ շո՛րերը։

Թագավորի աղջիկը վեր ա ունում արինը խմում, ասում.— Օխա՛յ, անջախ մի սիրտս հովացավ։

Անց ա կենում մի վախտ, օրեն մի օրը թագավորը կանչում ա իրա նազրին։

— Մի շաբաթ քեզ մհուլ,— ասում ա,— պտի իմանաս՝ էն ճկները, որ բերիր տվիր աղջկանս, խի՞ ին ծիծաղում, դրանով ի՞նչ ին ուզում ասի։

— Աչքիս վրեն, թագա՛վորը սաղ ըլնի,— ասում ա նազիրը։ Թագավորին գլուխ ա տալի, թողում դուս գալի։ Էթում ա իրանց տունը, էլի դառը-տխուր, նոքերը կիտած նստում ա։

Չուքչու տղեն էս որ տենում ա, հարցնում ա.— Բի՛ձա,— ասում ա,— խի՞ ես ըտենց նոքերդ կիտե, ա՛սա տենամ դարտդ ի՞նչ ա։

— Է՛յ, ա՛յ որդի,— ասում ա,— էս քեզ ասեցի, իմ դարտին ի՞նչ դարման պտի անես։

— Է՛լի հենց, ա՛սա տենամ, բալի իմ խելքն էլ ա մի բան կտրում։

Նազիրը ըստե նստում ա մին-մին տղին նազլ անում թագավորի հրամանը։

Տղեն էս որ լսում ա, ասում ա.— Էդ ի՞նչ մի դժար բան ա, որ դրա համար դարտ ես անում. մի՛ վախի, ես դրա ջուղաբը կտամ։

— Ղո՞րթ,— հարցնում ա նազիրը։

— Ղո՛րթ,— ասում ա տղեն.—թագավորը թող ինձ կանչի, էն ա՛ս գիտամ ինչ որ կասեմ։

Նազիրը էս որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Էգսի օրը էթում ա թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Հը՛, ի՞նչ խաբար ա,— հարցնում ա թագավորը,— ինչ որ հարցրել ի՝ գտա՞ր, թե չէ։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— գտա։

— Դե ա՛սա տենամ,— ասում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես չեմ ասողը. մեր տանը մի ջահել տղա կա, նա պտի ասի. թե կհրամայես, էթամ բերեմ։

— Գնա կանչա՛ գա,— ասում ա թագավորը։

Նազիրը էթում ա էն իմաստուն տղի կռնիցը բռնում, բերում թագավորի ամարաթը։ Տղեն ջուխտ ձեռը դնում ա դոշին, խորը գլուխ տալի, ընդե կաննում։

— Դե ա՛սա տենամ, իմ ջուղաբը դո՞ւ պտի տաս։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա տղեն,— որ ասեմ՝ հո չե՞ս փոշմանի։

— Չէ՛, չեմ փոշմանի,— ասում ա թագավորը։

— Ասե՞մ,— թագադան հարցնում ա։

— Ասա՛,— ասում ա թագավորը։

— Ասե՞մ։

— Ասա՛։

— Լա՛վ, թագա՛վորն ապրած կենա, հլա կա՛ց մի հեքաթ ասեմ, եննա քու ջուղաբը կտամ։

— Ասա՛,— ասում ա թագավորը։

«Կըլնի, չըլնի,—ասում ա,—մի թագավոր։ Էդ թագավորը ո՛նչ տղա ա ունենում, ո՛նչ աղջիկ, մախլասի՝ ըսկի զադ չի ունենում. ինքն ա ըլնում՝ մի Տուդի-ղուշ։ Ո՛ւր էթում ա, ի՛նչ անում ա՝ էդ Տուդի-ղշի հեննա ա մասլահաթ տենում։ Օրեն մի օրը թագավորը հաց ուտելիս ա ըլնում, էդ Տուդի-ղուշն էլ փանջարումը նստած ա ըլնում, մըն էլ տենում ա՝ մի ուրիշ Տուդի-ղուշ թռավ, էկավ իրա ղշի կուշտը, կտուցը նրա կտցին քսեց, շընքովը փաթթվեց, էրկսուլ էլ լաց էլան, եննա ծիծաղացին. էն նոր էկած Ղուշը մի քիչ կացավ, թռավ, գնաց։ Թագավորը էս որ տեհավ, մնաց արմացած։

— Էն ի՞նչ Ղուշ էր,— հարցրեց թագավորը,— ընչի՞ վրեն լաց էլաք ու վերջը ընչի՞ վրեն ծիծաղացիք։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց Տուդի-ղուշը,— էն Ղուշը իմ աղպերն էր. էկավ ասեց. «Հերներս մեռել ա»։ Է՛հ, սիրտ էր, ջիգյար էր, մոմռաց, լաց էլանք։ Եննա էլ ասեց. «Նշան եմ դրվե, թագավորիցը իզին ա՛ռ, ա՛րի հարսանիք»։ Դե՛, աղպերս էր, էս որ իմացա՝ ուրախացա, խնդացինք, ծիծաղացինք Թագա՛վորն ապրած կենա, հմի թե իզին կտաս՝ կէթամ, թե չէ հո՝ չէ։

— Գնա՛,— ասեց թագավորը,— համա թե՛զ եդ դառ։

Տուդի-ղուշը թագավորին գլուխ ա տալի, թռնում, էթում։ Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը էդ Տուդի-ղուշը եդ ա դառնում, գալի։ Գալիս ա թագավորին գլուխ ա տալի, կտցիցը մի գունդ թուղթ ա վեր քցում։ Թագավորը վեր ա ունում, բաց անում, տենում ի՞նչ՝ իրեք հատ խնձորի կորիզ։ Կանչում ա իրա կատեպանին, թամբահ թամբահի վրեն անում, թե. «էս իրեք կորիզը կտանես ընենց բելլու տեղ կցանես, որ ղուշ, հավ, զադ չմոտանա»։ Կատեպանը թագավորին գլուխ ա տալի, կորզները վեր ունում, տանում մի տալդա, ոտից հեռու տեղ ցանում, ոնց որ պետքն էր՝ ջրում, մուղաթ կենում։ Անց ա կենում մի քանի վախտ՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ խնձորի կորզները դուրս են գալի, ամեն մինը մի-մի եքա ծառ դառնում, էնքա՜մ էլ խնձոր են տա-

վի, որ էլ հա՛լ ու հնսար չկար։ Օրեն մի օրը թագավորի կատեպանն ասում ա. «էթամ տենամ խնձորները հասել ա, թե չէ»։ Վեր ա կենում, էթում հ իքին. դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, վերջը գալիս ա էդ խնձորենքանց տակին կաննում. տենում ա կարմրրել են, էն ա հա՝ հասնելու վրա են. վարավուրդ ա անում, տենում գննին մի մենծ կարմիր խնձոր վեր ընկած։ Վեր ա ունում, ասում ա. «Տանենմ թագավորին շանց տամ»։ Դու մի՛ ասի էդ խընձորը օձը յաղել ա։ Կատեպանը էթում ա թագավորի ամարաթը, թագավորին ղլուխ տալի, ընդե կաննում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— խնձորները հասնելու վրա են. էս մինը ծառի տակին գտա, վե կալա բերի, ա՛ռ տես լա՞վն ա։

Թագավորը խնձորը ձեռիցն առնում ա, տապակ անում, հենց ուզում ա դնի բերանը, նազիր-վեզիրը չեն թողում.

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում են,— բալի դեղած ա, աղաք մի ուրշի տո՛ւ ուտի՝ ննենա դու կե՛ս։

Նազիր-վեզիրը մի ֆորթ են բերիլ տալի, էդ խնձորը քցում աղաքը։ Ֆորթը խնձորը ուտելու բաշտան միջիցը տրաքում ա, վեր ընկնում։ Թագավորը էս որ տենում ա, հերսոտում ա. էն սհաթը տեղիցը վեր ա կենում, Տուպի-ղշի ճիտը կտրում, քցում էն՝ դիհը. ննենա նազիր-վեզրին հրամայում ա՝ իրա իքու չորս դիհը մենծ հասար քաշեն, որ մարդ-մադաթ չմննի էն խնձորիցն ուտի։

Էդ դեղումը մի նախրչի ա ընում, ունենում ա մի կնիկ։ Էդ նախրչին իրա կնկանը ըսկի օր չէր տալի։ Ասում իրան օրը, գշերով-դշերհանա վեր էր կենում, կնկանը լավ ջարդում, ծեծում, նոր նախիրը տանում հանդը. ընենց էլ իրիկունը, որ եդ էր գալի, էլի թազադան ծեծում, սալջարդ անում, նո՛ր հաց ուտում, թեք ընկնում քնում։ Էդ խեղճ կնկա ճարը կտրվում ա, գշեր, ցերեկ սուգ ու շիվան ա անում, մնում ա գլխի վրեն մոլորած, թե էդ մարդի ձեռիցը ո՞նց պրծնի։ Մի օր էլ, որ դանակը ոսկորին ա հասնում, ասում ա. «Ո՛նց անեմ, որ մեռնեմ, էս աշխարքիցը պրծնեմ», բիրդան միտն ա ընկնում, որ թագավորի բաղչի խնձորները յաղված են, որ մարդ ուտի, ալբիալը կմեռնի։ Մարդը որ էթում ա հանդը, ինքն էլ վեր ա կենում, էթում դպա թագավորի բաղչեն։ Բաղչի չորս պիհը ման ա գալի, դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, տենում ա՝ հրես

մի խավակ։ Ուսուլով էդ խավակուվը մննում ա բաղչեն. դե՛ս, դե՛ն ա մտիկ տալի, տենում ա մարդ-մադաթ չկա, վռազ-վռազ մի խրնձոր քաղում ա, էլ եդ դուս ա գալի, էթում։ Էթում ա, չոլի մեջտեղը կաննում. ասում ա. «Ըստե ուտեմ, որ մարդ չիմանա»։ Ուտում ա, պրծնում, տենում ա ի՞նչ՝ հրես դհա ջահելացավ, դառավ ոնց որ մի տասնըհինդ տարեկան աղջիկ։ Խեղճ կնիկը մնաց մոլորած, գլխին վա՛յ տալոն։

— Ես կերա,— ասեց,— որ մեռնեմ, պրծնեմ էս աշխարքիցը, դհա ջահելացա։

Սուս ու փուս գալիս ա, իրանց դռան աղաքին կաննում։ Իրիկունը մարդը տուն ա գալի, տենում ա՝ դռանը մի ջահել, սիրուն աղջիկ կաննած ա, կնկանը չի ճանանչում. մննում ա տուն, քունջ ու պուճախ ա ընկնում, տենում ա կնիկը տանը չի։ Էթում ա հարևաննեքին ա հարցնում, նրանք էլ կնկա տեղը չեն իմանում. վերջը ճարը կտրած, գալիս ա էդ աղջկանն ա հարցնում.

— Ա՛ղջի,— ասում ա,— էս տան կնկանը հո չե՞ս տեհե։

— Ե՛ս եմ,— ասում ա,— էս տան կնիկը. ի՞նչ ես ուզում։

— Չէ՛, ջա՛նըմ, ի՞նչ ես ասում. իմ կնիկը յաշն առած կնիկ էր, դու ջահել աղջիկ ես։

Աղջիկը երդում, կրակն ա ընկնում, թե. «Ես քու կնիկն եմ, որ քու կնիկն եմ», մարդը չի ավատում։

— Դե՛ որ իմ կնիկն ես,— ասում ա մարդը,— արի՛ էթանք տուն։

— Էթա՛նք,— ասում ա։

Կնկա կռնիցը բռնում ա, քաշ տալի նեքսև։ Տանում ա տուն, տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս, մի լավ սրխկում ա, սալջարդ անում, վե քցում, նոր ինքը թեք ա ընկնում, քնում։ Էս խեղճ կնիկը մնում ա գլխին, ոտին տալոն։

— Ես յաշով կնիկ ի,— ասում ա,— մարդս ասսու իրան օրր ծեծում էր, հմի ջահելացա, դհա բեթար ա ծեծում, չեմ գիտա ինչ անեմ, ո՛ր ջուրն ընկնեմ, որ պրծնեմ նրա ձեռիցը։

Առավոտը որ լիսանում ա, մարդը նախիրն աղաքն ա անում, էթում հանդը, կնիկը մտքի հեննա ա ընկնում, միտք ա անում, միտք ա անում. վերջն ասում ա. «էթամ թագավորին գանգատ, աղաչանք անեմ, մարդիս կանչի, խրատի, բալի ինձ չծեծի»։

Դառը-տխուր վեր ա կենում, էթում դուզ թագավորի ամարաքը։ Էթում ա թագավորի խնամաքարի վրեն նստում։

Թագավորի նաղիր-վեզիրը դուս են գալի հարցնում.— Ա՛յ կընիկ,— ասում են,— ի՞նչ ես ուզում, խի՞ ես էկե։

— Էկել եմ թագավորի կուշտը գանգատ,— ասում ա կնիկը։

Նաղիր-վեզիրն էթում են թագավորին իմաց տալի, թե.— Մի չահել, սիրուն կնիկ էկել ա, ուզում ա քեզ տեննա. թո՞ղանք գա, թե չէ։

— Թողնք գա,—ասում ա թագավորը,—տեննամ ի՛նչ ա ուզում։

Էթում են կնկանը բերում թագավորի կուշտը։ Կնիկը թագավորին գլուխ ա տալի ընդե կաննում։

— Ա՛յ կնիկ,— ասում ա թագավորը,— դարտդ ի՞նչ ա, ա՛սա տեննամ։

Հենճ կնիկը նստում ա ըսաե մին-մին, տեղը տեղին նաղլ ա անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։ Թագավոր էս որ լսում ա, մնում ա զարմացած։

— Դրո՞ւստ ես ասում, որ իմ բաղչի խնձորիցը կերար, ջահելացար,— հարցնում ա թագավորը։

— Դրո՛ւստ, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա կնիկը։

Թագավորը էն սհաթը նաղիր-վեզրին ղրկում ա հանդը, որ էթան էն նախրչուն կանչեն, բերեն։ Էթում են, գտնում, կանչում, բերում թագավորի կուշտը։ Ննենա մարդ ա ղրկում իրա բաղչի խընձորիցը բերիլ տալի. որ բերում են, տալիս ա նախրչուն, ասում ա՝ կե՛, նախրչին աղաք չեմ ու չում ա անում, չի ուզում ուտի. համա թագավորը որ ղոռում ա, վեր ա ունում, ուտում։ Ուտում ա թե չէ՝ ջահելանում ա, դառնում տասնըհինգ տարեկան տղա։ Թագավորը էս որ տեննում ա, մնում ա սառած նախրչու ու նրա կնկա էրեսին մտիկ աննելոն. շատ ա գլխին վա՛յ տալի, դարտ անում, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե։ Նախրչուն էլ մի լավ խրատում ա, ասում ա՝ կնկանը չծեծի, սերով ապրի հեննեն ու էլ եդ ճամփու դնում իրանց տունը»։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա իմաստուն տղեն,— համի տե՛ս, ոնց որ էդ թագավորը փոշմանել ա, ընենց էլ դու կփոշմանես՝ որ ասեմ խի ին ծիծաղում էն ձկները։

— Չէ՛,— ասում ա թագավորը,— չեմ փոշմանի, ա՛սա։

— Ա՞սեմ,— հարցնում ա էլի տղեն։

— Ա՛սա,— ասում ա թագավորը։

— Ա՞սեմ,— հարցնում ա վրա իրեք հետը։

— Ա՛սա,— ասում ա թագավորը։

— Բաս որ ըտենց ա, թագա՛վորն ապրած կենա, քու թագավորությունը իրեք սհաթ պտի տաս ինձ։

— Քեզ փե՛շքաշ ա,— ասում ա թագավորը։

Էն սհաթը թախտիցը վեր ա գալի, տղին նստացնում իրա տեղը թագավոր։ Էդ տղեն ա՝ թագավորին իրա կշտին նստացնում ա, հրամայում ա նազիր-վեզիրը, ամարաթի մարդիքը քոմմա թոփ ըլնեն։ Բիրադի կիտվում են, թագավորի չորս դիհը նստոտում։ Ենենա տղեն հրամայում ա, որ թագավորի աղջիկը իրա ղարավաշներին առնի, գա։ Թագավորի աղջիկը ղարավաշներով վեր ա կենում, գալի ամարաթի մեջտեղը կաննում։

— Ա՛ղջի,— ասում ա հերը,— մի՞տդ ա, որ ֆլա՛ն տարին հիվանդ իր, սիրտդ ձուկն ուզեց, իմ նազիրը գնաց իրեք ձուկը բերեց, համա դու չկերար։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա աղջիկը,— դու չես գիտա, որ ես որձեղենի էրես չեմ ուզում տենամ, ուր մնաց թե ուտեմ։

Իմաստուն տղեն էս որ լսում ա, հրամայում ա թագավորի աղջկա ղարավաշներին տկլորացնեն։

Թագավորի աղջիկը աղաք ա գալի, չի թողում.— Ո՞նց կըլնի,— ասում ա,— աղջիկ-խիղան են, էսքամի աղաքին ո՞նց շորները հանեն։

— Էդ քու բանը չի,— ասում ա թագավորը։— Հանե՛ք շորները,— հրամայում ա։

Հանում են ի՞նչ տենում՝ ղարավաշները քառասունն էլ տղա են։ Թագավորը, նազիր-վեզիրը քոմմա մնում են սառած, իրար էրեսի մտիկ անելոն։

— Դե հմի տե՞հար, թագավորն ապրած կենա,— ասում ա իմաստուն տղեն,— հմի իմա՞ցար խի ին ծիծաղում էն ձկնները։

— Ջա՞նլաթ,— ձեն ա տալի թագավորը։

Ջանլաթները էն սհաթը գալիս են ընդե կաննում։

— Էս սհաթին քառասնի գլուխն էլ կտրե՛ք,— հրամայում ա թագավորը։

Ջանլաֆները քառասնի գլուխն էլ թռցնում են։ Նննա Թագավորը հրամայում ա՝ իրա աղչկանը տաննեն քցեն մի հացատուն, օրը մի կտոր հաց տան, քանի սաղ ու կենդանի ա՝ ընդե մնա, արևի էրես չտեսնա։ Թագավորը վեր ա կենում էդ իմաստուն տղի ճակատը պաշում, մի քանի բեռը ոսկի ա տալի, էլ եդ ճամփու դնում իրա հոր կուշտը։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաշ դնողին։





28· ՄԱԽՈՒԽԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ կար, դրան ուներ իրեք աղջիկ՝ իրեքն էլ հասած։ Օրվա մեկ օրը էդ մարդը վեր կացավ, ուզում էր էթա քաղաք աղջկերանց համար բան առնելու։ Վեր կալավ աղջկերանցը հարցրեց, ասեց.— Ի՞նչ եք ուզում, որ քաղաքիցը բերեմ։

— Մինթանա բե՛ ինձ համար, նննաման բե՛,— ասեց մեծը։

Միջնեկ աղջիկն էլ ասեց.— Ինձ համար աղլուխ բե՛, յաղմա բե՛։

Պուճուր աղջիկն ասեց.— Ա՛յ հեր, ես զադ չե՛մ ուզում քեզանից, թե բերում ես, մի մարգարտե շապիկ բե՛ ինձ համար։

Հերն ասեց.— Ա՛յ որդի, ո՞րդիան գտնեմ մարգարտե շապիկ։

— Դե՛,— ասեց,— ա՛յ հեր, էդ ա իմ ուզածը, կըլնի՝ կբերես, չիլնի՝ զադ չե՛մ ուզում քեզանից։

Էդ մարդը վեր կացավ գնաց քաղաք, ինչ որ էն էրկու աղջկերանց ուզածն էր՝ առավ, էդ պուճուր աղջկա ուզածը ո՛րդի ման էկավ՝ չգտավ։

Շատ ման գալուց եղը, մի մարդ ընդիան ձեն տվեց.— Ա՛յ մարդ,— ասեց,— ընչի՞ ես ման գալի ըդքան քաղաքի մեջը։

Ասեց.— Ի՞նչ անեմ, աղպեր ջա՛ն, իրեք աղջիկ ունեմ. ինձ, գալիս ի քաղաքը, հարցրի. «Ի՞նչ եք ուզում ձեզ համար բերեմ», մեկը մինթանա ուզեց, մեկը՝ աղլուխ, յաղմա, դրանց ուզածները գտել եմ, առել, էն պուճուրը մարգարտե շապիկ ուզեց, չեմ կարում գտնի։

Էդ մարդն ասեց.— Իմ կշտին կա մարգարտե շապիկ։ Ա՛րի տամ քեզ,— ասեց։

Դնաց, տվեց իրան, ասեց.— Ես շապիկը տալիս եմ քեզ էն պայմանով, որ շապկի տիրոնչը դամ տանեմ։

Հերն ասեց.— Ե՞րբ դաս տանես։

Ասեց.— Ո՛ր օրը որ ձեր տանը մախոխ էփեցին, էն օրը կգամ կտանեմ։

Էդ մարդը մտածեց, թե.— Ի՞նչ կա, թամբահ կանեմ կնկանս՝ մախոխ չի էփի, ես էս շապիկը առնեմ, էթամ։

Վե կալավ մարգարտե շապիկը, եդ դառավ տուն։ Տարավ տուն՝ ամեքի ուշածը տվեց իրան, մարգարտե շապիկն էլ հանեց տվեց պուճուր աղջկանը։

Ասեց.— Կնի՛կ, քեզ մի բան եմ թամբահ անում, որ մեր տանը անումը մախոխ չէփվի։

Կնիկն ասեց.— Խի՞, ա՛յ մարդ, խի՞ չպտի էփվի։

— Ըտրա համար որ,— ասեց,— էդ շապիկ տվողը ասում էր, ո՛ր օրը մախոխ էփեք, պտի գամ՝ էդ շապկի տիրոնչը տանեմ։

Կնիկն ասեց.— Ա՛յ մարդ, խի՞ եմ էփում, ո՛ր ըտենց ա, չե՛նք էփի։

Կնիկը կանչեց աղջկերանցը ասեց.— Անումը մախոխ չէփեք մեր տանը։

Էկավ երկար ժամանակ անց կացավ, մի օր ըդոնք լվասկ ին անում, լվասկից պրծան, օրն էլ շաբթապաս էր, մերն ասեց մենծ աղջկանը.— Ա՛յ որդի, գնա՛ մի բան էփա, ուտենք։

Աղջիկը գնաց թթուն լցրեց պղնձի մեջը, սկսեց մախոխ էփիլ՝ մտիցն ընկել էր։

Սկսեց էփիլը՝ էդ մարդը տանից մտավ նեքսև, ասեց.— Ա՛յ մարդ, իմ հախլուն տո՛ւր։

Մարդն ասեց.— Տե՛ր եմ պայմանիս, պտի տա՛մ։

Բերեց մենծ աղջկանը, շորերը հագցրեց ու տվեց էդ մարդին։ Էդ մարդը վե կալավ էդ աղջկանն ու գնաց։ Տարավ հասցրեց իրա ամարաթները։

Աղջիկը տեհավ էդ ամարաթները, ասեց.— Ջհաննամը գյո՞ղը, որ հորից-մորից հեռու եմ, չէ՞ էս թավուր ամարաթների միջին կնստեմ։

Աղջկանը տարավ վիրև, եռեսուն իննը օթախ իրար միջից բաց արեց, վրա քառասունին աղջկանը տարավ նեքսև։

Աղջիկը տեհավ՝ բերանը բաց մնաց.— Հե՛յ վա՛խ,— ասեց,— ըսքան էլ ապրա՛նք, կարողությո՛ւն կըլնի՞ մարդի։

Քնեցին։ Լիսը բացվեց, էդ մարդը բերեց քառասուն լիդր բամբակ, մի հատ անկաչ, դրեց էդ աղջկա մոտը, ասեց.— Տե՛ս, աղջի՛, ես էթում եմ, էս քառասուն լիդր բամբակը,— ասեց,— պտի մանես, քառասուն օրեն վրա, էս անկաչի տնքոցն էլ պտի կտրես, որ էկա տեսա չես արել, տենո՞ւմ ես էն շամփուրը, կճխտեմ շամփուրը, քաշ կանեմ օջորքիցը,— ասեց ու ինքը գնաց։

Էդ աղջիկը մնաց մոլորած, ի՞նչ աներ, ո՛նչ կարաց էդ բամբակը մանի, ո՛նչ էլ կարաց էդ անկաչի տնքոցը կտրի, ասեց.— Ա՛ստված ջան, ի՞նչ անեմ, էս ա վերջի օրն ա, որ գա, պտի ճխտի շամփուրը, կախ տա օջորքիցը։

Էկավ քառասուն օրը թամմեց, մարդն էկավ։ Տեհավ ո՛նչ բամբակն ա մանե, ո՛նչ էլ անկաչի տնքոցն ա կտրե, վե կալավ շամփուրը՝ աղջկա բերնիցը խրեց, ոններիցը դուս էկավ, տարավ ճըխտեց օջորքը։

Էլի եդ դառավ էն մարդի տունը, ասեց.— Ա՛յ մարդ, իմ կնիկը տո՛ւր, էն իմ կնիկը չէր։

Մարդը բերեց միջնեկ աղջկանը տվեց էդ մարդին։

Էդ մարդը սրան էլ տարավ իրա ամարաթը, նրա պես քառասուն լիդր բամբակ տվեց մանելու, մի հատ էլ անկաչ՝ տնքոցը կտրելու։ Սա էլ ո՛նչ բամբակը կարաց մանի, ո՛նչ անկաչի տընքոցը կարաց կտրի։

Մարդն էկավ սրան էլ ճխտեց շամփուրը, քաշ արեց օջորքիցը, էլի եդ դառավ էն մարդի տունը, ասեց.—Ա՛յ մարդ, իմ հախլուն, իսկական հախլուն տո՛ւր, էդ տվածներդ իմ հախլուն չեն։

Մարդը վե կացավ գնաց աղջկա մոտը.— Վե՛ կաց,— ասեց,— ա՛յ որդի, հմի էլ քեզ ա էկե տանելու էդ անիրավը։

Էդ աղջիկը վե կացավ, մարգարտե շապիկը հագավ տակիցը, շորերը հագավ, ասեց.— Ա՛յ մեր, իմ ղութին բեր, իմ կատուն բեր։— Բերեց կատուն դրեց ղութու մեջը, էդ մարդը վե կալավ ու գնաց։ Տարավ հասցրեց իրա ամարաթը, նստեցին ընտեղ, քնեցին։ Լիսը բացվեց, էդ մարդը բերեց քառասուն լիդր բամբակ և էդ անկաչը, ասեց.— Էս քառասուն լիդր բամբակը տալիս եմ քեզ, քա-

ռասուն օրվա վրա պտի մանես, էս անկաշի տնքոցը պտի կտրես մինչանք իմ գալը. ո՛ր էկա, տեսա չես արել, տե՞նում ես էն էրկուսը, որ կախ եմ արե ընտեղ, քեզ էլ ըտոնց կողքիցը կախ կանեմ։

Թողաց էդ մարդը գնաց. էդ խեղճ կնիկը մնաց ըտեղ մոլորված, թե.— Ա՛ստվածո, ես էս քառասուն լիդր բամբակը ո՞նց մանեմ քառասուն օրվա վրա։

Դշեր-ցերեկ մեկ արեց ու մանեց, տեհավ հնար չկա, բամբակը տեղն ու տեղն ա։ Գալու օրերը մոտացել էր.— է՛, աստվածո,— ասեց,— ի՞նչ անեմ, չպրծա էս բամբակը, նստում եմ հաց եմ ուտում՝ եդանում եմ։

Մի պղինձ կիրակուր էփեց, թևերը մինչև ուսագլխները բաց արեց, էդ կիրակուրը քսեց թևերն ու ջահրեն դրեց աղաքը, մի յանիցն էլ էդ կիրակուրը լիզվով լիզում էր։ Տեհավ, որ հնար չկա։

Մոտիկ քաղաք կար, թագավորի տղի բուկը ուտել էր, ինչ հնար անում ին՝ չէր լավանում, թագավորը ջաո էր ձեն տալի. «Ո՛վ որ իմ տղին լավացրեց, ոսկի, երկիր ուզի՝ կտամ, թաքըլի իմ տղին լավացնենա։ Ձենն ընկավ էդ աղջկա անկաշը, աղջիկն ասեց.— Յավա՛շ, ես էլ էթամ, թամաշ անեմ, տենամ էդ ինչ թավուր հիվանդ ա։

Թևերը ընենց քշտած, կիրակուրը վրեն քսած վե կացավ գնաց թագավորի տղի աղաքին կաննեց, թամաշ էր անում թագավորի տղին, մի յանիցն էլ հենց իմանում էր, թե ջահրա էր մանում՝ ձեռները ժաժ էր տալի, լիզուն հանում, թևերը լիզում։ Թագավորի տղեն աչքը բաց արեց դրան տեհավ՝ ծիծաղաց. ծիծաղալու վախտը բուկն ուռած էր՝ բլեց. թագավորի տղեն լավացավ։ Խաբար տարան թագավորին, որ մի աղջիկ քու տղին լավացրեց։

Թագավորն ասեց.— էն աղջկանը բերե՛ք տենամ։

Աղջկանը տարան թագավորի մոտը, աղջիկը գլուխ տվեց, կաննեց։

Թագավորն ասեց.— Ա՛ղջի, ի՞նչ ես ուզում՝ տա՛մ քեզ։

Ասեց.— Ջադ չեմ ուզում, մենակ քառասուն լիդր բամբակ ունեմ՝ տա՛ս մանելու։

Թագավորն ասեց.— Գնացե՛ք սրա բամբակը բերեք, ցրվեք քաղաքի վրա, թող մանեն մի օրվա միջին, տան իրան։

Սաղ տարան, մի օրվա միջին մանեցին, բերին տվին էդ աղ-

ջրկանը։ Աղջիկը վե կալավ տարավ իրա ամարաթը, էն անկաջն էլ քցեց իրա կատվին, կատուն կերավ, տնքոցը կտրվեց։

Քառասուն օրը թամմեց, մարդն էկավ տեհավ, որ բամբակը մանած ա, անկաջի տնքոցը կտրված ա, գնաց կնկա ճակատը պաչեց, ասեց.— Ապրես դու, կնի՛կ, նո՛ր իմացա, որ դու իմ կնիկն ես։

Նստեցին հաց ուտելու, մարդը, տեհավ, որ մի Թստան-բըլոջ դենն էթում ա, ասեց.— Կորի՛ դեն, մուտտաւ անասուն, դու խի՞ ես ընկե ըստեղ։

Կնիկն ասեց.— Վա՜յ, ա՛յ մարդ, դրան բան մի՛ ասի, ախար դա իմ մոքիրն ա։

Մարդն ասեց.— Բա որ քու մոքիրն ա, խի՞ ա էլե Թստան-բըլոջ։

Ասեց.— Իմ մոքոր մարդն էլ քեզ պես չար էր, ընքան բամբակ մանիլ տվեց, որ էլավ Թստան-բըլոջ։

Ասեց.— Կնի՛կ, դու է՞լ որ շատ մանես պտի ըլնես Թստան-բըլո՞ջ։

Ասեց.— Բա ի՞նչ պտի անեմ։

Մարդն ասեց.— Որ ըտենց ա, էլ պետքը չի, մի՛ մանի։

Պառկեցին, քնեցին. լիսը բացվեց, մարդն ասեց.— Ա՛ռ էս իմ ա՛արաթների բալանըքները տամ քեզ, ես էլի էթում եմ։

Բերեց քաշեց դրա աղաքի էրկու ատամը, մինը վիրինը, մեկը ներքինը, արծաթից ատամներ շինեց, դրեց ըտոնց տեղը, ինքը թողաց, գնաց։

Մարդը որ գնաց, կնիկը բալանըքները առավ, ընկավ օթախները ման գալու. մի օթախ բաց արեց՝ տեհավ արծաթ էր կիտած, մի օթախ բաց արեց՝ տեհավ ոսկի էր կիտած, մի օթախ բաց արեց՝ բուլիանտ էր կիտած. վերջը դրա կարողության չափ ու սահման չկար։

Մի օթախ էլ բաց արեց՝ տեհավ աղբուր ա դուս գալի, տարավ ճկութը թաթխեց մեջը՝ էլավ ոսկի։

— Օ՜հ,— ասեց,— էս ի՞նչ լավ բան էր,— մազերն էլ թաթխեց մեջը՝ դառավ ոսկե թելեր։

Մի օթախ էլ բաց արեց՝ տեհավ սաղ արհեստավոր տղեք են նստած, մեկը զարգյար ա, մեկը՝ կտավ գործող, մեկը՝ խառատ, վերջը ամեն արհեստավոր կար ըտեղ։

Աղջիկը վե կալավ ասեց.—Տղե՛ք, դո՛ւք ըստեղ ի՞նչ եք անում։

Ասեցին.— Էդ անիրավը մեզ բռնել ա քցե ըստեղ, հրեսի մի կողմը չամիչ ա, մի կողմը բաղամի մեջ ա, մի կողմը պնդուկ ա, ուտում ենք, իրա համար բանում, ինքն էլ տանում ա ծախում։

Ասեց.— Ա՛յ տղեք, որ ըստիան ձեզ աղատեմ, ինձ համար կա՞րաք բնենց մի ղուբի շինի, որ ո՛նչ չուր քաշի, ո՛նչ էլ բացվի։

Տղեքն ասեցին.— Շա՛տ լավ, մեր բանն ա։

— Դե՛ որ ըտենց ա, մի ձեռք էլ ինձ համար զառբաբից բնենց շորեր կարեք, որ աշխարքի մեջ չնարվի։

Ասեց ու գնաց։ Մի օրվա-միջին հա՛մ շորերը կարեցին, հա՛մ ղուբին շինեցին։ Բերին տվին էդ աղչկանը։ Էդ աղջիկը իրա համար ուտելիք էր հաղրե՝ դրեց ղուբու մեջը, ինքն էլ մտավ ղուբին.— Դե՛,— ասեց,— էս բալանըքները ձեզ, ինչ կուզեք՝ արե՛ք, էս քոմմա կարողությունը ձե՛զ։

Ինքը մտավ ղուբին, դուռը նեքսևից շինեց.— Դե՛հ,— ասեց,— ինձ տարեք քցեք ծովի մեջը։

Աղչկանը տարան քցեցին ծովը, իրանք էկան տուն տեղ քարուքանդ արեցին ու տարան։

Էդ ղուբին ո՛ր քցեցին ծովը, ծովը տարավ։ Տարավ հանեց մի թագավորանիստ քաղաք։ Ըտեղ ավազի վրա բանդ էլավ ղուբին։

Թագավորի տղեն իրա նազիր-վեզրովը էկավ ծովի ղրաղը ման դալու։

Տեհավ հրեա մի ղուբի բանդ էլած, ասեց.— Նազի՛ր-վեզի՛ր, մի լեղվոր բերեք՝ էս ղուբին հանի, մալ ըլնի, դոլվաթ ըլնի՝ ձե՛զ, թե իսան ըլնի՝ ի՛նձ։

Լեղվոր բերեցին, լեղվորն ընկավ ծովը, գնաց ղուբին բերեց։ Ղուբին հանեց ղրաղը. ի՛նչ հնար արեցին՝ չբացվեց։ Աղջիկը նեքսևիցը բաց արեց, ղուբին բաց անելուն քիմի թագավորի տղի աչքն առավ աղջկանը՝ խելքը գլխիցը թռավ։

— Հե՛յ վա՛խ,— ասեց,— ըսենց էլ սիրուն աղջիկ կըլնի՞, իմը կա՝ սա՛ ա, չկա՝ սա՛ ա։

Վե կալան տարան էդ աղջիկը թագավորի ամարաթը, խաբար տարան տղի հորը։

— Աչքդ լի՛ս, տղեդ ծովիցը մի աղջիկ ա հանե։

Հերն էկավ, տեհավ, որ շատ աննման, սիրուն ա։

Տղեն ասեց.— Ա՛յ հեր, իմը կա՝ սա՛ ա, չկա՝ սա՛ ա, որ երկընքից վեր էկած լիսեղեն աղջիկ ըլնի՝ պետքը չի՛։

Թագավորը բերեց օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց, իրա տղի հետ պսակեց։

Սալըղը տանք էն մարդիցը։

Էս մարդն էկավ տեհավ ո՛նչ մալ, ո՛նչ դոլվաթ, ո՛նչ կնիկ, ո՛նչ տուն ու տեղ. քար ու քանդ արած, թալանած, տարած բիրադի։

Ասեց.— Լա՛վ, կնի՛կ, դու իմ ջանին վա՛յ տաս, տե՛ս քու գլուխը ի՞նչ կհանեմ։

Էդ մարդը սեհրբազ էր, քյանդրբազություն սարքեց։ Ընկավ գեղից-գեղ, քաղաքե-քաղաք, մանգալոն, մանգալոն գնաց դուս էկավ էն քաղաքը, որտեղ որ կնիկը ընտեղ ա։ Տարավ պարանը կապեց թագավորի ամարաթի աղաքին ու սկսեց հաղալ։ Ընենց օյընններ էր հանում, սաղ էդ ժողովուրդը ծիծաղու թիլանում ին։ Համա էդ մարդի աչքը է՛ս կնկա էրեսին էր, է՛ն կնկա էրեսին էր, իրա կնկանն էր ման գալի։

Թագավորի տղեն գնաց նեքսև, ասեց.— Ա՛յ կնիկ, դու էլ դուս արի, տես՝ ի՞նչ թավուր քյանդրբազ ա։

Կնիկն ասեց.— Ես չեմ սիրում քյանդրբազ հաղալը, ես շատ եմ տեհե։

Մարդը շատ զոռեց, կնիկը դուս էկավ բալկոնը թամաշ արեց էդ քյանդրբազին, տեհավ, որ իրա մարդն ա։ Էդ քյանդրբազը ընենց օյընններ հանեց, էդ կնիկը բիրդան ծիծաղաց, որ ծիծաղաց մարդի աչքն առավ էրծաթե ատամներին, ճանաչեց, որ իրա կնիկն ա։ Էն հրոպպեին պարանիցը վեր էկավ, քանդ ու քար արեց, տարավ պահեց ըտոնք։ Էկավ մուքն ընկավ, ընենց մի գիր արեց, որ իսաննները բիրադի քնեցին, շները քնեցին, հավերը քնեցին, վերջը ո՛նչ մի անասուն չմնաց զարթուն, մնացին էդ կնիկն ու մարդը զարթուն։ Եդո ընենց արեց, որ քաղաքի մեջ ո՛նչ մի ճրագ վառ չմնաց, բիրադի հանգավ։

Էդ մարդը էկավ էդ կնկա մոտը, ասեց.— Հըմի էլ ո՞ւր սըտի փախնես իմ ձեռիցը։

Էդ կնիկը գնաց իրա մարդի միսը ճմկըթեց՝ չզարթնեց, ի՛նչ արեց՝ չզարթնեց, ուզեցավ ճրագ վառի՝ չվառվեց, շիվարեց, մնաց։

Մարդն ասեց.— Արի՛, արի՛, քու վերջի օրն ա, զուր դե՛ս ոտ դե՛ն մի ընկնի։ Արի՛, էն մենծ պղինձը բե՛։

Աղջիկը ճարը կտրած գնաց պղինձը վե կալավ, բերեց։

Ասեց.— Դի՛ օջաղի վրա, ջուրը լցրա՛, տակը վառա՛, որ քեզ տաղ-սաղ պտի կոխեմ պղինձը, խաշեմ։

Ասեց.— Դու քու աստոծը, էլ ճար չունեմ, ի՛նչ ուզում ես՝ արա՛։ Մննակ ինդ մի էթամ դրսև, վերջի աղոթքս անեմ, գա՛մ։

Ասեց.— Գնա՛, ո՛ւր ուզում ես, իմ ձեռիցն էլ չես աղատվի։

Աղջիկը նիլլավ կտուրը, տեհավ հեռու մի ճրագի լիս ա էրեվում, սաղ քաղաքը մութը կոխել ա։

Վեր էկավ կտրիցն ու վազեց դպա էդ ճրագի լիսը։

Գնաց տեհավ, որ հրես մի գևի կնիկ նստել ա, աջու ծիծը ձախ ուսն ա քցե, ձախու ծիծը աջ ուսն ա քցե, մի փուք էլ արճիճ քցել ա բերանը՝ ծամում ա, հետն էլ հաց ա թխում։ Աղջիկը հասավ, բամակիցը ծծերը առավ բերանը՝ ծծեց։

Պառավը նդ թամաշ արեց, տեհավ մի հողածին, ասեց.— Ա՛յ աղջի, ղուշն իրա թևովը, օձն իրա պորտովը ըստեղարինք չի էկե, դու ո՞նց ես էկե։

Ասեց.— Նա՛նի, վիրև՝ աստված, ներքև՝ դու, ճարս մնաց քեզ. մարդս բսենց անիրավ ա, պղինձը ջուր ա լցրե, էփացրե, որ ինձ ճխտի մեջը, էփի։

— Է՛,—ասեց,—էն անիրավը հլա կա՞, էն իմ աղպերն ա. ա՛յ որդի,— ասեց,— ի՞նչ կտաս, որ քեզ աղատեմ էդ անիրավիցը։

Ասեց.— Ի՞նչ որ լեզուդ պրտրտի՝ կտա՛մ։

Ասեց.— Էդ փորինդ կտա՞ս ինձ։

Ասեց.— Աստված միջնորդ ըլնի, դու ինձ աղատես էս անիրավիցը, տղա էլ ըլնի՝ տա՛մ քեզ, աղջիկն էլ ըլնի՝ տա՛մ քեզ։

Ասեց.— Դե՛, որդի, գնա՛, նա դիր ա արե քցե ժամի կտուրը՝ ո՛նչ բնողը զարթնի, ո՛նչ շուն հաչա, ո՛նչ էլ ճրագը վառվի, գնա՛ ժամի կտուրը, ման արի՛, էդ թուխտը քթի բե ներքև ճղա՝ լիսը կբացվի, մարդիքը կզարթնեն, շները կհաչան։

Էդ աղջիկը էթում ա նիլնում ժամի կտուրը, ձեռները ափլըփորելոն դիրը գտնում ա, վեր ա բերում, ճղում ա։ Որ ճղում ա՝ լիսը բացվում ա, մարդիկ վեր են կենում, աքլորները կանչում են, շները հաչում։ Էդ կնիկը վազում ա տուն, տենում ա, որ իրա մարդը զարթնել ա, էն մարդն էլ չկա։

Մարդն ասում ա.— Ա՛յ կնիկ, էդ ի՞նչ ա էլե քեզ։

— Քու տունը չքանդվի՛, վե կա՛ց, էթանք տե՛ս։

Էթում ա տենում, որ պղինձը լիքը ջուր էփում ա։

Թե.— Էս ո՞վ ա արե։

Թե.— Էրեկվա հաղող[1] փայլևանը։

Ասում ա.— Բա ի՞նչ էլավ։

Ասում ա.— Թողաց, փախավ, հլա ոններդ բաց արա տես-տե՛ս, ընքամ ճմկթել եմ, որ յարա ա էլե, չէիր զարթնում. ո՛նչ շուն էր հաչում, ո՛նչ աքլոր էր կանչում, ո՛նչ էլ ճրագ էր վառվում։ Նիլլա կտուրը, տեհա, որ հեռվանց մի ճրագի լիս ա էրևում, վեր էկա, վազեցի էդ լըսին, տեհա մի դևի կնիկ, ծծերը ծծեցի, աղաչեցի, որ ազատի ինձ, նա ինձ ասեց, որ էդ մարդը գիր ա արել, քցել ժամի կտուրը, որ ո՛նչ մեկը չզարթնի, լիսն էլ չբացվի։ Գնացի ժամի կտրիցը գիրը վե բերեցի, լիսը բացվեց, էկա տուն՝ դու զարթնել իր։

— Բա էն մարդն ի՞նչ էլավ,— հարցրեց թագավորի տղեն։

— Որ լիսը բացվեց, ես տեսա, որ փախավ։

Թագավորի տղեն հրամայեց՝ քաղաքի չորս ղրաղը փակեցին, էդ փայլևանին բռնեցին. բերին ճխտեցին պղինձը, խաշեցին։

Տարին անցկացավ, էկավ էդ թագավորին մի տղա էլավ։ Էդ տղեն մեծացավ, դառավ էրկու տարեկան, մերը կուտը բռնեց, տարավ էն դևի կնկանը, ասեց.— Ա՛ռ, ես իմ խոսքը կատարեցի։

Պառավն ասեց.— Տա՛ր, քեզ փեշքաշ, դու որ քու խոստումը կատարեցիր, քեզ փեշքաշ ըլնի։ Վե կա՛լ քու էրեխեն, գնա՛։

Առավ էկավ տուն։ Ղրկեցին էդ աղչկա հորնումորը բերել տվին, իրար հետ ուրախ-զվարթ ապրեցին մինչևանք իրանց մահը։

Դրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ, մինն՝ ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ անկաջ դնողին։

---

[1] Խաղացող (Մ. Բ.)։





29· ՔՈՍԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ

Կըլնի, չիլնի մի թագավոր։ Էդ թագավորը կունենա թաք էրկու տղա, էլ ղադ չէ։ Օրեն մի օրը էդ թագավորը իրա տղեքանցը, իրա նազիր-վեղրին կկանչի, կասի.— Ձեղ էլ ա այան, ասսուն էլ, որ հա՛յ-հա՛յս դնացել ա, վա՛յ-վա՛յս ա մնացե, աջալս էկել ա, պտի մեռնեմ, էկե՛ք քանի սաղ ու կենդանի եմ, իմ ձեռովը կտակս անեմ։ Իմ սաղ թագավորութ՛յունը,—կասի,—տալիս եմ մենծ տղիս, մի Աքլոր ու մի Կատու ունեմ, էն էլ տալիս եմ պուճուր տղիս։

Կասի ու ֆոդին կտա։ Կտաննեն թագավորին առոք-փառոք, ոնց որ կարգն ա, կթաղնեն, կթողան կգան։ Էդ մենծ տղին կշինեն թագավոր, կնստացնեն թախտին, որ հոր երկիրը կառավարի[1]։ Անց կկենա քսենց մի քանի վախտ. օրեն մի օրը պուճուր աղպերը կգա մենծ աղպոր կուշտը։

— Ա՛յ աղպեր,— կասի,— բոլ ա ինչքամ քու ումուդին մնացի, մեր հերը ոնց որ կտակ[2] ա արե, բե՛ իմ փայը տո՛ւ, էթամ իմ բանին։

— Ա՛յ աղպեր,— կասի մենծ աղպերը,— շատ էլ մեր հերը բաննց կտակ ա արե, ի՛նչ անենք. դու ա՛րի դոքիդ քարը վե՛ր

---

[1] Գրաման ձեռագրում բանահավաքը այս բառն ուղղել է, դարձրել՝ յոլա տանի (Ս. Կ.)։

[2] Գրաման ձեռագրում բանահավաքը այս բառն ուղղել է, դարձրել՝ վաւիաք (Ս. Կ.)։

ածա, ըտենց բան մի՛ անի, արի՛ իմ կշտին կա՛ց, մեր հոր երկիրը յոլա տանենք, քանի սաղ ու կենդանի ենք. իրար հեննա գըլխներս դինջ ապրինք։

— Չէ՛, որ չէ,— կասի պուճուր աղպերը,— մեր հոր վասիաթը ես գետինը չեմ քցի. պտի էթամ, որ պտի էթամ։

Մենծ աղպերը, որ տենում ա էլ ուրիշ ճար չկա, բերում ա պուճուր աղպոր փայը տալիս ա, հեննեն մնաս բարով ասում, ճամփու դնում։

Պուճուր աղպերն ա՝ Աքլորն ու Կատուն վեր ա ունում մի ճամփա բռնում, էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մախլասի՝ մի ամիս. հասնում ա մի գեղ։ Էդ գեղի գլխին սրան մի Քոսա ա ռաստ գալի։

— Բա՛րով, թագա՛վորի ցեղ,— ասում ա Քոսեն,— էդ ո՞ր խաչից ա մեր գեղն ես էկե։

— Ա՛սու բարին, Քոսա աղպեր, էթում եմ ղարբություն,— ասում ա թագավորի տղեն։

— Բաս որ ըտե՛նց ա, ա՛րի էթանք մեր տունը ղոնաղ, մի քիչ հաց-մաց կուտես, կդինջանաս, էլ եդ վե կկենաս, կէթաս քու ճամփեն։

Թագավորի տղեն աղաք չեմ ու չում արեց, թե՝ չէ՛, չեմ գա, համա տեհավ Քոսեն շատ ա զոռում, դեմ ընկնում, վերջը կակղում ա[1]։

— Լա՛վ,— ասեց,— որ ասում ես, էթանք։

Վեր ա կենում Քոսի հեննա գալի նրանց տունը։ Ջունքի Քոսեն իմաստուն ա ըլնում, ալբիալը իմանում ա ի՛նչ հունար կա թագավորի տղի Աքլորի միջին. միտք ա անում, բալի մի ֆանդով նրա Աքլորը մորթել տա, միջի թլիսմը վեր ունի, իրան պահի։

Տղին ղրաղ ա կանչում, ասում.— Տե՛ս, ա՛յ որդի, հացի վրեն ես քեզ մի մհանով կծեծեմ, ի՛նչ անենք, չանենք՝ ձենդ չես կտրի, ընչանք մեր ղոնաղի աքլորը չմորթեն, իմացա՞ր։

— Լա՛վ,— ասում ա, տղեն— ոնց ասացիր՝ ընենց էլ կանեմ։

Ենենա Քոսեն կանչում ա կնկանը.— Ա՛յ կնիկ,— ասում ա,—

---

[1] Գրաման ձեռագրում բանահավաքի ձեռքով այս արտահայտությունը ջնջված է, վերականգնում ենք (Ս. Կ.)։

Թե՛ղ արա հացի թադարեք տես, մըրնք էլ ենք սոված, մեր ղոնաղն էլ. խեղճը շատ ճամփա ա էկե՝ բեզարած կըլնի, հաց ուտենք, որ մի քիչ դինջանա, մե՛ղք ա։

Կնիկը սուփրեն[1] բերում ա քցում, հացից-մացից, մածնից-ղադից, ինչ կա, չկա տանը՝ բերում ա սուփրի վրեն շարոտում։ Նստում են հացի։

Ուտելու վախտը Քոսի տղեն մածունը ղաստի հա՛ վեր ա ունում, լղողում դոշին, հա՛ վեր ունում, լղողում դոշին։ Քոսեն էս որ չի տենում, վեր ա կենում տեղիցը, ա՛ռ հա մի սիլլա՝ տղի էրեսին. ո՛ր չի տալի, քիչ ա մնում աչքի պեծը թռչի։ Տղեն, որ գիտար բանը ընչումն ա, սիլլի վրեն մի զռո՛ց ա քոքում, մի զռո՛ց ա քոքում, որ աստոծ հետու տանի։ Հերը, մերը ի՛նչ անում են, չեն անում, տղեն ձենը չի կտրում։

— Ա՛յ որդի,— հարցնում ա Քոսեն,— ի՞նչ ես ուզում, ասա տանք, թաքլի ձենդ կտրես, անկաշներս դինջանա։

— Հավի միս եմ ուզում,— ասում ա տղեն լացակրկնած։

Մերը վեր ա կենում, ինչքամ հավ ուներ՝ քոմմա մորթոտում ա, էլի տղեն ձենը չի կտրում։

— Ախար ի՞նչ ես ուզում,— թաղադան հարցնում ա հերը,— հավի միս իր ուզում, մեր հավերը սաղ մորթոտեցինք. հմի՞ ինչ ես ուզում։

— Էս մեր ղոնաղի Աքլորի միսը ընչանք չուտեմ, ձենս չեմ կտրի, ի՛նչ ուզում եք՝ ա՛րեք։

Վերջը ղոնաղի զահլեն որ էթում ա.— Ա՛յ ջանը՛մ,— ասում ա,— էդ էրեխեն մեռավ լաց ընելուն, մի Աքլորի մա՛լիաթն ինչ ա, վի կացեք իմ Աքլորը մորթեք, մե՛ղք ա, բալքի ձենը կտրի։

Ջաթի Քոսեն էլ դրան էր բանդ. էն սհաթը տեղիցը վեր ա կենում ղոնաղի Աքլորը մորթում ա, նո՛ր որ տղեն ձենը կտրում ա։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— էս լավ էլավ, հաղիր ըսենց աղիվ ղոնաղ ունենք, էդ հավերիցը մի լավ հարիսա դի՛, գշերով-գշերհանա մեր ղոնաղն ուտի, նոր ճամփա ընկնի։

Կնիկը վեր ա կենում իրանց մորթած հավերը, թաղավորի տղի աքլորը ղաշանդ թերում ա, իստկում, լավ փորը-մորը լվանում, լցնում մնծ պղինձը, թունդիրը վառում, հարիսեն դնում վրեն։

---

[1] Գրաման ձեռագրում՝ դաստախուռը. ուզումը բանահավաքինն է (Ս. Ա.)։

էն բաշտեն ժամի ձենը որ Քոսի անկաջն ա ընկնում, վեր ա կենում էթում ժամ, չունքի Քոսեն ասում իրան օրը, ինչքամ էլ որ վռազ բան ունենար՝ առավոտ, իրիկուն պտի ժամ էթար։ Քոսեն որ վեր կացավ գնաց, թագավորի տղեն էլ վեր կացավ, հագնվեց, որ էթա իրա ճամփեն։ Վեր կացավ տեհավ Քոսեն տանը չի։

— Ա՛յ քիր,— ասեց Քոսի կնկանը,— դե ինձ ճա՛փու դի, էթամ իմ բանին, ես չեմ կարա կենամ, ընչանք Քոսի գալը։

Քոսի կնիկը շատ դեմ կընկնի, թե.— Կա՛ց հարիսա ուտենք, հմի որդիորի ա հազիր կըլնի։

Թագավորի տղեն անկաջ չի անի, կասի.— Պտի էթամ, որ պտի էթամ։

— Բաս որ ըտենց ա,— կասի Քոսի կնիկը,— էթամ մի հալ բերեմ, դի՛ հացիդ մեջը, ճամփին կուտես։

Էթում ա, հենց քաֆքիրը հարըսի մեջը տալու բաշտան, սատանական հենց թագավորի տղի Աքլորն ա դուս գալի. հանում ա մի հացի մեջ կոլոլում, բերում տալի թագավորի տղին։ Թագավորի տղեն Քոսի կնկա հեննա մնաս բարով ա անում, վեր կենում ընկնում ճամփա։

Սրան թողանք էթա. գանք խաբար տանք Քոսիցը։

Ժամը որ դուս ա գալի, Քոսեն վեր ա կենում, գալի տուն։ Գալիս ա տուն թե չէ, կնկանը հարցնում ա.— Ա՛յ կնիկ, մեր ղոնաղն ո՞ւր ա, չըլնի՞ գնացել ա։

— Բա ի՛նչ ա արե. ի՛նչ արի, չարի՝ չմնաց, թե՝ վռազ եմ։

— Ճամփի պաշար հո չտվի՞ր։

— Բա ի՛նչ անեի, մեղքը չէ՞ր. էսքամ հավի, աքլորի միջիցը բա մի ղադ չտա՞յի։

Քոսեն քաֆքիրը վեր ա ունում, վազում դպա հարըսի պղինձը։ Դե՛ս ա քրքրում, դե՛ն ա քրքրում, դե՛ս ա տալի, դե՛ն ա տալի, շատ ա ման գալի, համա թագավորի Աքլորը չի գտնում։ Փոր-փոշման թողում ա գալի կնկա կուշտը։

— Վա՛յ, քու տունը չքանդվի, ա՛յ կնիկ,— ասում ա,— դու էդ ի՞նչ օյին հանեցիր[1] իմ գլուխը,— ասում ա, ու յա՛լլա դռնե դուս գլուխն առնում կորչում։

---

[1] Գրաման ձեռագրում՝ բերիր. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Թող Քոսեն էթա, գանք խաբար տանք թագավորի տղիցը։

Էս տղեն ա՝ էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, ճամփին մի սառը, քչքչան աղբրի ա ռաստ գալի։ «Ա՛րի,— ասում ա,— էս աղբրի կշտին նստեմ, մի քիչ հաց-մաց ուտեմ, դինջանամ, նոր վե կենամ ընկնեմ ճամփա»։

Էդ աղբրի ղրաղին նստում ա, բերում ա դաստախունը բաց անում, որ հաց ուտի։ Էն հավի մսիցը ուտում ա, ուտում ա, ուտում ա, ընչանք ճնաղը որ ուտում ա, տենում ա, ըհը՛, ճնաղի արանքին մի ժանգոտած Մատանիք։ Վեր ա ունում, դնում մատը։ Դնելու բաշտան տենում ա էրկու արաբ, հրես էկան աղաքին կաննեցին։

— Հը՛, ի՞նչ ես հրամայում, թագա՛վորի ցեղ,— ասեցին արաբները։

Թագավորի տղեն մնաց արմացած, թե էս ի՛նչ բան ա, էս արաբները ո՞րդիան դուս էկան, ըտե ցցվեցին. մի վախտ մնաց շշմած, գլխի վրեն մոլորած, համա բիրդան որ ուշը վրա էկավ [1], ասեց.— Ինձ տա՛րեք ֆլա՛ն թագավորի երկիրը։

Էն սհաթը արաբները տղին վե կալան, դրին ուռների վրեն՝ յա՛լլա, տարան որդե ասել էր, ընդե վե դրեցին, թողին գնացին։ Էդ տղեն էր՝ գնաց, գնաց՝ տեհավ, հրեն մի գեղ ա էրևում, զաթի մութն էլ գետինը կոխել էր; ասեց. «էթամ տենամ էն գեղումը ի՛նչ կա, ի՛նչ չկա»։

Ճամփա ընկավ դպա էն գեղը։ Հասավ էն գեղը, մի քուչա բռնեց, դուզ գնաց։ Գնաց, գնաց, տեհավ՝ հրեն մի պառավ կնիկ քուչի դռանը նստած թեշին ձեռին թել ա մանում։

— Բա՛րով, նա՛նի,— ասում ա թագավորի տղեն։

— Ա՛ստու բարին,— ա՛յ որդի,— ասում ա պառավը,— էս բեվախտին ո՞ւր ես էթում [2],— հարցնում ա։

— Եսի՛մ, նա՛նի, ղարիբ, անտեր տղա եմ, էթում եմ էլի։ Նա՛նի, ինձ տղա չե՞ս շինի,— հարցնում ա թագավորի տղեն։

— Խի՞ չեմ շինի,— ասում ա պառավը,— զաթի ես էլ տղա չունեմ, հրես պառավել եմ, մինը չունեմ, որ պահի ինձ, մուղաթ կենա, նեղ օրին հավարիս հասնի, մատիցս փուշ հանի։

---

1 Գրառման ձեռագրում՝ խելքը գլուխն էկավ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

2 Գրառման ձեռագրում՝ որդիա՞ն ես գալի. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Բաս որ ըտենց ա, ես քեզ՝ տղա՛, դու ինձ՝ մե՛ր, ղաբուլ ե՞ս։

— Ղա՛բուլ եմ,— ասում ա պառավը։

Թագավորի տղին աղաք ա անում, տանում տուն։

Անց ա կենում ըսենց մի վախտ, մեր ու տղա շատ սիրով իրար հեննա յոլա ին էթում։

Օրեն մի օրը տղեն գալիս ա, մորն ասում.— Նա՛նի ջան, քեզ մի բան եմ ուզում ասեմ, չեմ դիտա անկաջ կանես, թե չէ։

— Ա՛սա, ա՛յ որդի,— ասում ա պառավը,— ասա անկաջ կանեմ, խի՞ չեմ անկաջ անի։

— Ուզում եմ էթաս թագավորի աղջիկն ուղես ինձ, ի՞նչ կասես։

— Վա՛յ, ֆո՛ղն իմ գլխին, հո չէ՞ս գժվե, ըտենց բան ո՞նց կըլնի, մենք քյասիպ, օրեն հացի կարոտ ենք, թագավորը խելքը հո հացի հետ չի կերե՝ քեզ աղջիկ տա, հլա վախում չէ՞ս մեր գըլխներն էլ կտրիլ տա, թե խի՞ չենք ձեր ոտը ձեր կարպետնու գյորա մեկնում։ Էն վախտը ի՞նչ կասես։

— Որ չուզես,— ասում ա տղեն,— ես էլ գլուխ կառնեմ, կկորչեմ։

Սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, տղեն մորը որ շատ զոռում ա, մերը վեր ա կենում էթում թագավորի կուշտը։ Դառը-տխուր էթում ա թագավորի խնամաքարի վրեն նստում։

Նազիր-վեզիրը պառավին տեննալու բաշտան, մոտ են գալի, հարցնում.— Հը՛, նա՛նի, խե՞ր ըլնի, խի՞ ես էկե։

— Էկել եմ թագավորի կուշտը,— ասում ա պառավը,— խընդիրք ունեմ ասելու։

Նազիր-վեզիրը էթում են թագավորին իմաց տալի, թե.— Թագա՛վորն ապրած կենա, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց մի պառավ ա էկե, ուզում ա քեզ տենա. թողա՞նք գա, թե՞ չէ։

— Թողե՛ք գա,— ասում ա թագավորը,— տեննանք էդ պառավը ի՞նչ ա ուզում։

Նազիր-վեզիրը էթում են պառավին աղաք անում, բերում թագավորի կուշտը։ Պառավը ձեռները դոշին դրած՝ թագավորին գլուխ ա տալի ընդե կաննում։

— Հը՛, ա՛յ պառավ, ի՞նչ ես ուզում,— հարցնում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա պառավը,— մի խնդիրք ունեմ, համա էրեսս չի բռնում ասեմ։

— Ա՛սա, բան չկա, ա՛սա տենանք խնդիրքդ ի՞նչ ա։

— Թագա՛վորն ապրած կենա, ես մի տղա ունեմ, էկել եմ քու աղջիկը ուզեմ իմ տղին, հմի կտաս՝ դու գիտաս, չես տա՝ էլի դու գիտաս, մեր արինը քեզ հալալ ա։

— Կտամ, խի՞ չեմ տա. համա մի բան պտի ուզեմ, թե արեցիք՝ շատ լավ, թե չէ հո էրկսիդ գլուխն էլ կֆը՞ռա։ Ղաբո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ, ասա տենանք,— ասում ա պառավը։

— Մի գշերվա միջին իմ ամարաթի նման պտի ընե՞նց մի ամարաթ շինեք, ընե՞նց մի ամարաթ շինեք, որ տենողի բերնի ջուրն էքա, որ աղջիկս գա էդ ամարաթի միջին ապրի։ Շինեցիք՝ լա՛վ, աղջիկս ձեզ հալալ ա, չշինեցիք՝ իմաց կացեք, էրկսիդ գլուխն էլ կտրիլ կտամ, իմացա՞ր։

— Իմացա, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա պառավը։

Թագավորին գլուխ ա տալի, թողում դուս գալի, էքում։

Դառը-տխուր, նոքերը կիտած գալիս ա տուն։

— Հը՛, նա՛նի,— հարցնում ա տղեն,— թագավորի կուշտը գնա՞ցիր։

— Գնացի, բա ի՞նչ արի,— ասում ա պառավը։

— Է՛, ի՞նչ ասեց թագավորը,— հարցնում ա թազադան տղեն։

— Ի՛նչ ասեմ, որդի, թագավորը ընենց բան ա ուզում, որ անելու ճար իլլաջ չկա։

— Մի՛ վախի, նա՛նի, ասա տենանք ի՞նչ ա ուզե, որ դու ընենց դարտոտել ես։

— Ա՛յ որդի, ասելու բա՞ն ա, որ ասեմ. «Մի գշերվա միջին, ասում ա, իմ ամարաթի պես մի ամարաթ պտի շինեք, որ իմ աղջիկը գա միջին ապրի»։ Դե՛ ո՞նց շինենք, ա՛յ որդի, էս ախար ըսկի ըլնելու բա՞ն ա։

— Ա՛յ նանի, դուս ըսկի դարտ մի անի, դրանից էլ հեշտ բան չկա, հենց օրն էգուց [1] թագավորի ամարաթը հազիր կըլնի, դու գնա արխեին քու բա՛նին կաց։

---

1 Գրաման ձեռագրում այս արտահայտությունը դժվար ընթեռնելի է (Ս. Կ.)։

Տղեն կասի, կհանի Մատանիքը կդնի մատը, ալբիալը արաբ-ները կգան։

— Ի՛նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ,— կասեն։

Տղեն կասի.— Ըստե էնթա՛վուր ամարաթներ պտի կաննաց-նեք. էնթա՛վուր ամարաթներ, որ սաղ աշխարքը ման գաս՝ հատը չգտնվի, մի խոսքով՝ ո՛վ տենա, խելքամաղ ըլնի մնա. մըն էլ որ ամարաթներն ընչանք լիս պտի հազիր ըլնի, իմացա՛ք։

— Աչքներիս վրեն, թագա՛վորի ցեղ,— կասեն արաբները ու անէրևույթք կըլնեն։

Առավոտը գշերով-գշերհանա պառավը կզարթնի, աչքերը բաց կանի, ի՛նչ կտեսնա՝ թագավորին լայտղ ամարաթների միջին թեք ընկած ա. չորս դիհը մտիկ կուտա, կմնա մոլորած, թե էս ո՞րդի ա, խեղճը ըսկի էրազումն էլ չէր տեհե էսթավուր ամարաթներ, ուր մնաց ինքն էլ միջին քնած ըլներ։ Բիրդան միտը կընկնի, որ էս քոմմա իրա տղի հունարն ա, կուրախանա, աշխարով մին կըլնի։

— Հը՛, նա՛նի,— ձեն կուտա էն դհիցը տղեն,— մեր ամարաթ-ներին հավանո՞ւմ ես. դե՛, թե՛զ արա, գնա՛ թագավորի աղջի-կը բե՛։

— Էթամ, ա՛յ որդի,— կասի պառավը,— էս հետ ումուդ ու-նեմ, որ թագավորն իրա աղջիկը կտա։

Թեզ հագնում ա, էրեսը լվանում, գլուխ-մլուխը կապում, կո-կում, զուգում, վե կենում էթում դպա թագավորի ամարաթը։ Էթում ա դուզ թագավորի խնամաքարի վրեն նստում։ Թագավորը փան-ջարիցը պառավին վարավուրդ ա անում, ալբիալը գլխի ա ընկնում, որ իրա աղջկա հավարին ա էկե, չունքի խաբարը բերել են, որ պա-ռավի տղեն իրա ուզած ամարաթները շինել ա, հազրե. ամարաթ-նե՛ր, ամարաթնե՛ր, ամարաթնե՛ր եմ ասում, որ տենողի խելք էր էթում։ Թագավորը իրա նազիր-վեզրին ղրկում ա, որ էթան պառա-վին բերեն իրա կուշտը։

Նազիր-վեզիրն էթում են պառավին աղաք անում, բերում թա-գավորի կուշտը։

— Հը՛, պա՛ռավ, էկա՞ր,— ասում ա թագավորը,— իմ ուզած ամարաթները տղեդ հազրել ա, համա մենակ էդ չի, էլ բան պտի ուզեմ։

— Թագա՛վորը սաղ ըլնի,— ասում ա պառավը,— ասա տե-նամ է՞լ ինչ ա ուզածդ։

— Մի ընենց մենծ խալիչա պտի հազրեք, որ իմ ամարաթիցը ընչանք ժամը, ժամիցը ընչանք ձեր տունը փռած ըլնի. էս դիհը, էն դիհն էլ կանաչ ուտի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվըլան, աղջկանս քեֆը բերեն, իմացա՞ր։

— Իմացա, թագա՛վորն ապրած կենա, խի՞ չիմացա,— ասում ա պառավը։

Թագավորին գլուխ ա տալի, թողում, դուս ա գալի, էթում։ Էս պառավն ա՝ էթում ա տուն, էլի դառը-տխուր նստում ա ընչանք տղի գալը։ Տղեն գալիս ա տուն, տենում ա էլի մերը նոթերը կիտած նստել ա։

— Ի՞նչ կա, նա՛նի, էլի խի՞ ես ըտենց դարտոտե։

— Է՛հ, ա՛յ որդի, թագավորը հմի էլ ընենց բան ա ուզում, որ ըսկի ըլնելու բան չի։

— Ի՞նչ ա ուզում նա՛նի, ա՛սա տենանք։

— Ընենց մենծ խալիչա ա ուզում, որ իրա ամարաթիցը ընչանք ժամը, ժամիցը ընչանք մեր տունը փռած ըլնի. է՛ս դիհը, է՛ն դիհն էլ ուտի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվլան, աղջիկը գա էդ խալիչի վրովը անց կենա։ Դե՛, քեզ եմ հարցնում, ա՛յ որդի. էս ըսկի ըլնելու բա՞ն ա։

— Դու դարտ մի անի, նա՛նի, էդ խալիչեն էլ հազիր կանեմ, տենանք սրանից եդը ինչ պտի ուզի։

Տղեն էս ասում ա թե չէ, Մատանիքը հանում ա դնում մատը։ Դնելու բաշտան արաբները ալուստի գալիս են ընտե կաննում։

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ,— հարցնում են արաբները։

— Ձեզանից ընենց մենծ խալիչա եմ ուզում, որ թագավորի ամարաթից ընչանք ժամը, ժամիցը ընչանք մեր տունը փռած ըլնի. է՛ս դիհը, է՛ն դիհն էլ ուտի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ծլվլան. իմացա՞ք։

— Իմացանք, թագա՛վորի ցեղ,— ասում են արաբները ու անէրևույթ են ըլնում։

Մթնում ա։ Մեր ու տղա թեք են ընկնում արխեին քնում։

Լիսադեմին, բիրդան թագավորի անկաջը մի անուշ բլբլի ձեն ա ընկնում, որ մնում ա հայիլ-մայիլ էլած։ Ասում ա. «Ա՛րի մի վեր կենամ, տենամ բլբլները էս ո՞րդե են ծլվլացնում»։

Դուս ա գալի, ի՞նչ տենա՝ իրա ամարաթի աղաքին ընե՞նց մի

ճամփա ա սարքած, ընե՞նց մի ճամփա ա սարքած, եքա խալիչեն էլ վրեն. է՛ս դիհն, է՛ն դիհն էլ ուրի ծառեր տնկոտած, վրեն էլ բլբլները ո՛ր չեն ծլվլում, կկկլացնում, մարդի խելքամաղ են անում, թողում. մարդ ասում էր՝ չուտի, չխմի, չհագնի, չմաշի, հենց էդ խալիչի վրովը ման գա, բլբլների ձենին անկաջ դնի, էնքա՜մ մի սիրուն թամաշի բան էր։

«Չէ,— ասում ա թագավորը ինքն իրան,— էս հետ պառավը պտի աղջիկս տանի, որ տանի, հմի էլ կաց ընենց մի բան ուզեմ, բալքի չկարենա գլուխ բերել»։

Թագավորն ըստե, պառավն ու իրա տղեն էլ ընտե են զարթնում բլբլների անուշ ձենիցը։

— Հը՛, նա՛նի,— ձեն ա տալի տղեն,— թագավորի ուզած խալիչեն ու ճամփեն հազիր ա, դե՛ գնա թագավորի աղջիկը բե՛։

— Էթամ,— ասում ա պառավը ուրախացած։

Վռազ-վռազ հագնում ա, գլուխ-մլուխը կապում, գուգում ու յա՜լլա՝ դպա թագավորի ամարաթը։ Էթում ա դուզ թագավորի խնամաքարի վրեն նստում։ Նազիր-վեզիրը նրան որ տենում են, էթում են աղաք անում բերում թագավորի կուշտը։ Պառավը թագավորին գլուխ ա տալի, ընտե կաննում։

— Հը՛, պա՛ռավ,—ասում ա թագավորը,—էկար, որ աղջիկը տանե՞ս։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա պառավը։

— Իմ ուզած էրկու բանն էլ հազրել եք, մնացել ա մինը. ըտ էլ որ բերեք, իմաց կացեք՝ աղջիկս ձերն ա ու ձերը։

— Ա՛սա, թագա՛վորն ապրած կենա,— ասա տենանք վրա իրեքն ի՛նչ ա,— ասում ա պառավը։

— Էս հետ աղջկանս համար մի ձեռք ընենց շոր պտի բերեք, որ ո՛նչ ասեղ կպած ըլնի, ո՛նչ թել, ո՛նչ մկրատ, որ աղջիկս հագնի էթա ժամ, ընտիան էլ դուզ ձեր տունը, իմացա՞ր։

— Իմացա, թագա՛վորն ապրած կենա,— ասում ա պառավը, թագավորին գլուխ ա տալի, ամարաթիցը դուս գալի, թողում, էթում։

Պառավը դառը-տխուր գալիս ա տուն։

— Հը՛, նա՛նի,— հարցնում ա տղեն,—թագավորն ի՞նչ ասեց։

— Է՜հ, ա՛յ որդի,— ասում ա,— թագավորը էս հետ ընենց բան ա ուզում, որ ըսկի գլուխ գալու բան չի։

— Ասա տենամ ի՞նչ ա ուզում,— հարցնում ա տղեն։

— Ասում ա. «Մի ձեռք էնթավուր շոր պտի բերեք աղջկանս համար, որ ո՛նչ ասեղ դիպած ըլնի, ո՛նչ թել, ո՛նչ մկրատ, ո՛նչ զադ». դե՛ արի ու ըտենց շոր գտի։

— Դու դարտ մի անի, նա՛նի, էդ մի ձեռք շորն էլ կհազրեմ, տենանք եննա ի՛նչ պտի ասի, չտա։

Տղեն կասի, Մատանիքը կհանի կդնի մատը, ալբիալը արաբները կգան։

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ,— կասեն արաբները։

— Մի ընենց ձեռք աղջկա շոր եմ ուզում ձեզանից, որ ո՛նչ ասեղ կպած ըլնի, ո՛նչ թել, ո՛նչ էլ մկրատ, իմացա՞ք։

— Աչքներիս վրեն,— կասեն արաբները ու էն սհաթին կշըքվեն. անէրևույթք կըլնեն։

Առավոտը լիսը կբացվի թե չէ, տղեն մորը կասի.— Նա՛նի, դե վե՛ գնա թագավորի ամարաթը. նրա ուզած մի ձեռք շորը հմի հասած կըլնի։

— Լա՛վ, որ ասում ես, կէթամ։

Պառավը էն սհաթը կհագնվի, գլուխ-մլուխը կկապի, կզուգվի, կզարդարվի ու կկըրնկի դպա թագավորի ամարաթը։ Կէթա դուռ թագավորի խնամաքարի վրեն կնստի։ Նազիր-վեզիրը պառավին որ կտեննան, կէթան, կկանչեն կբերեն թագավորի կուշտը։ Պառավը թագավորին գլուխ կտա, ընտե կկանգնի։ Կտեննա, թագավորի կշտին իրա աղջիկը նստել ա, հագին մի ընենց շոր կա, որ էլ ի՛նչ ասեմ, մարդ չուտի՛, չխմի՛, հենց նրան ու նրա շորերին մտիկ անի, էնքա՛մ մի սիրունիկ զադ էր։

— Պա՛ռավ,— կասի թագավորը,— հմի որ աղջիկս տարաք, դե գնա՛ տղեդ բե՛, պսակենք։

Պառավը ուրախ-ուրախ վեր ա կենում գալի տուն։

— Ա՛յ որդի,— ասում ա,— թեզ արա վե՛ կաց էթանք, թագավորը քեզ կանչում ա, ասում ա. «Թող գա, աղջիկս տամ նրան»։

— Ղո՞րթ,— հարցնում ա տղեն։

— Ղո՛րթ,— ասում ա մերը։

Մեր ու տղա վեր են կենում, գալի թագավորի ամարաթը։ Թագավորը իրա աղջիկը տալիս ա նրան, օխտն օր, օխտը գշեր հարսանիք են անում. ինչ քե՛ֆ, ինչ ուրախությո՛ւն, որ էլ հալ ու հեսաբ չկար։ Հարսանիքից եդը տղեն թագավորի աղջկանը վեր ա ունում, բերում իրա տունը։

Սրանց թողանք ըստեն, գանք խաբար տանք մեր Քոսիցը։

Քոսեն, ախար, իմաստուն էր էլեւ։ Թագավորի տղի գլխով անցկացածը քոմմա գիտար, ամեն բան գիտար ու միտք էր անում՝ ո՞նց անի, որ իրա ինադը նրանից հանի, էն հունարով Մատանիքը նրա ձեռիցը խլի։

Օրեն մի օրը մի բոլ ռանգ-ռանգ ուլունքներ, մարջաններ, մարգարտներ ու շուշից շինած ջուտա-ջուտա զադեր ա վեր առնում գալի Թագավորի տղի տան աղաքին մի պուճուր դուքան ա գնում, որ ծախի։ Թագավորի տղի կնիկը, դե ինչքամ չըլնի կնիկ էր էլի՛, ամեն օր զարավուլներին փող էր տալի, էթում էն Քոսի դուքանից ուլունք-մուլունք, մարջաններ առնում, բերում։ Մի օր էլ ակուշկիցը տեսնում ա՝ ըսօր դհա լավ-լավ մենծ-մենծ մարջաններ կա Քոսի դուքանումը. ասում ա. «Ես էթամ, իմ ձեռովը լավերը ջկեմ, առնեմ»։

Վեր ա կենում գալի Քոսի դուքանը։ Քոսեն սրան որ տեսնում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։

— Խա՛նում ջան, ի՞նչ ես ուզում,— հարցնում ա Քոսեն։

Թագավորի տղի կնիկը մի քանի հատ մարջան ա ջկում, վեր ունում։

— Սրանց գինն ի՞նչ ա,— հարցնում ա Քոսին։

— Ջէ՛, խա՛նում ջան,— ասում ա Քոսեն,— էս փողով չեմ տալի։

— Բա ընչո՞վ ես տալի,— հարցում ա։

— Ժանգոտած մատանիքներով, վաղուցվա հին բաներով, թե չէ փող չեմ ուզում,— ասում ա Քոսեն։

— Լա՛վ,— ասում ա Թագավորի տղի կնիկը,— զաթի մեր պատրհանումը մի ժանգոտած Մատանիք կա, յավաշ էթամ բերեմ։

Էթում ա Մատանիքը բերում, տալի Քոսին, մարջաններն առնում, թողում գալի տուն։

Դու մի՛ ասի էդ մատանիքը էն հունարով Մատանիքն ա ըլնում։ Քոսեն քիչ ա մնում ուրախությունիցը գժվի. ալբիալը մատանիքը դնում ա մատը։ Դնելու բաշտան արաբները գալիս են։

— Հը՛, ի՞նչ ես ուզում, Քո՛սա,— հարցնում են արաբները։

— Էս սհաթը գնացեք Թագավորի տղին ու պառավին բերեք վեր դրեք ըստեն, ինձ ու նրա կնկանը տարե՛ք ծովի միջի ցամաքը

հանենք, իրա ամարաթներն էլ շալակեք տարեք էդ ցամաքի վրեն վե դրեք, որ մենք էրկսով նրանց միջին ապրենք։

Է՜հ, արաբների ձեռին էս հո դժար բան չէր։ Ալբիալը թագավորի տղի ամարաթները վեր են ունում, տանում ծովի միջի ցամաքի վրեն վե դնում, Քոսին ու նրա կնկանը տանում էդ ամարաթների միջին նստացնում, թագավորի տղին ու պառավին էլ վե բերում Քոսի դուքանի միջին վե դնում ու թողում էթում իրանց բանին։

Թագավորի տղեն մի վախտ աչքը բաց ա անում, ի՜նչ տեսնում՝ պառավի հեննա Քոսի դուքանի միջին, թագավորի աղջիկն էլ կըշտին չի։

Ալբիալը գլխի ա ընկնում, թե բանը ընչումն ա. շատ ա գըլխին վա՛յ տալի, լաց ըլնում՝ էլ ո՞ւր, բանը բանից անց էր կացե։

— Նա՛նի,— կասի թագավորի տղեն,— սրանից դենը իմ. ապրիլը հարամ ա. դու ըստե կա՛ց, ես էթամ երկրե-երկիր, աշխարե-աշխար ման գամ, բալի մի ճար անեմ, իմ ինադը Քոսից հանեմ, նո՛ր որ սիրտս դնջանա։ Սաղ եդ էկա՝ էլի մեր ու տղա ենք, թե չէ հո՝ աստոծ քեզ հետ։

Ճամփի թադարեք կտենա, պառավի ձեռը կպաչի, իրա կատուն վե կունի, կընկնի ճամփա։ Կէթա, կէթա, կէթա, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, մախլասի՝ մի շաբաթ, կհասնի մի գեղ, մութը գետինը կկոխի։ Կմննի էդ գեղը, մի տան դուռ կծեծի։ Տանտերը կգա, դուռը բաց կանի։

— Ո՞վ ես,— կհարցնի տանտերը,— էս բեվախտին ո՞ւր ես էթում։

— Ճամփորդ եմ,— կասի թագավորի տղեն,— չի՞լնի էս գշեր տեղ տաք՝ քնեմ, առավոտը էնբաշտեն էլի վե կենամ, էթամ իմ բանին։

— Խի՞ չիլնի, ղոնաղն աստուն ա,— կասի տանտերը ու նրան աղաք կանի, կտանի նեքսև։

Կբերեն դոշակ կքցեն, ղոնաղին վրեն կնստացնեն։ Մի քիչ վախտ կանցկենա, կբերեն հաց կքցեն, մի դաստա էլ դագանակ կբերեն. ամենքին մի-մի դագանակ կտան, մեծն էլ կտան ղոնաղին։ Թագավորի տղեն շատ կզարմանա էս բանի վրեն, կհարցնի.— Է՞ս ինչ բան ա, էս դագանակները խի՞ եք բերե։

— Մի քիչ սա՛բր արա,— կասի տանտերը,— ննջա կիմանաս, թե էս դագանակները ընչի համար ա։

Թագավորի տղեն սուս կկենա։ Հենց կնստեն հացի, մըն էլ ի՞նչ կտեսնա՝ ամեն դհից եքա-եքա մկներ դուս էկան ու վրա տվեցին հացին։ Նրանք էլ դագանակներով տալիս ին մկներին, որ կաչենային մի քիչ հաց ուտի։ Մի դհիցը դագանակներն ին վրա բերում, մի դհիցը հաց ուտում։ Թագավորի տղեն էս որ կտեսնա, ալբիալը տեղիցը վե կկենա, կէթա իրա խուրջնի բերանը բաց կանի։ Բաց կանի թե չէ, Կատուն ընտիան դուս կգա։ Մկները կատվին տեսնալու բաշտան, քոմմա կփախչեն, մի-մի ծակ կմննեն. ինչ ա՝ իրանց Կատուն չուտի։ Տանտերը կմնա զարմացած, թե՝ ի՞նչ թավուր ղոնաղ ա, որ մկները նրանից վախեցան։ Դու մի՛ ասի, սրանց երկրում, որ ասես, կատու[1] չիլնում։ Մի քանի օր թագավորի տղեն սրանց տանը մնում ա, տանտերերը արխեին հաց ին ուտում, մի մուկ էլա չէր մոտանում Կատվի ահիցը։ Վերջը մկների ճարը ո՛ր կտրվում ա, թուի են ըլնում, էթում իրանց թագավորի կուշտը գանգատ, թե. «Բա չես ասի ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ֆլա՛ն թագավորի տղեն էկել ա մեր երկիրը, հետն էլ մի Կատու ա բերե, նրա ահիցը չենք կարում բներիցս դուս գանք։ Մնացել ենք սոված, ձեռներս զադ չի ընկնում, որ ուտենք, քիչ ա մնում բիրադի սատկոտենք»։

Մկների թագավորը մի ղոչաղ մուկ ա ջոկում.— Կէթաս,— ասում ա,— թագավորի տղի կուշտը, կասես. «Ի՛նչ ուզում ես, ա՛սա տանք, թաքլի քու Կատուն առնես ըստիան էթաս»։

Էդ ղոչաղ մուկը վեր ա կենում էթում թագավորի տղի կուշտը։

— Թագա՛վորի ցեղը սաղ ըլնի,— ասում ա մուկը,— մեր թագավորը ասում ա. «Ինչ լեզուդ կպտտի, ա՛սա տամ, թաքլի կատուդ վեր ունես, մեր երկրիցը քաշվես»։

Թագավորի տղեն ասում ա.— Ֆլա՛ն ծովի միջին մի ամարաթ կա, էդ ամարաթի միջին մի Քոսա ա կենում, նրա կշտին մի Մատանիք կա, թե կարաց էդ Մատանիքը բերել տա, Կատուս վե կունեմ ըստիան կէթամ, թե չէ՝ չեմ էթա։

---

[1] Այս բառի փոխարեն եղել է՝ մուկը, հավանաբար արտագրելիս բանահավաքը վրիպել է (Մ. Կ.)։

էդ մուկը խաբարը տանում ա իրանց թագավորին, թե թագավորի տղեն ասում ա. «Գլա՛ն ծովի միջին մի Քոսա ա ապրում, Քոսի կշտին մի Մատանիք կա, ընչանք էդ Մատանիքը բերել չտաս, էս երկրից չեմ էթա»։

Մկների թագավորը էս որ լսում ա, էն սհաթը մի ղոշաղ մուկ ա ղրկում էդ Քոսի ամարաթը, որ էթա, ո՛նց որ ըլնի մի ֆանդով էն Մատանիքը գողանա, վեր ունի բերի։

Էդ ղոշաղ մուկն ա՝ վեր ա կենում ընկնում ճամփա դպա Քոսի ամարաթը։ Էդ մուկն ա՝ ծովի տակովը փորիլոն, լաղում տալոն կէթա, կէթա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, կհասնի Քոսի ամարաթները, գշերը տակիցը կփորի, կնիլնի վիրև, կտեսնա Քոսեն քնած ա։ Քոսեն քնելիս հունարով Մատանիքը դնում էր բերանը ընենց էր քնում, որ չըլնի թե կնիկը գողանա, դնի մատը, արաբները գան, իրան վնասիլ տա։ Մուկը դե՛ս, դե՛ն կընկնի, Մատանիքը չի գտնի, վերջը որ շատ ման կգա, վարավուրդ կանի, կտեսնա, Քոսի բերանումը պահած ա։ Ըտեղ մի շուշա թունդ քացախ կըլնի դրած, մըն էլ աղաթասով սև տաղտեղ. կէթա պոչը կթաթխի աղաք քացախի մեջը, եննա սև տաղտեղի մեջը, ա՛ռ Քոսի պինչը կկոխի։ Կոխելու բաշտան Քոսեն կփռշտա, Մատանիքը բերնիցը վե կընկնի։ Մուկն էլ զաթի դրան էր բանդ. կվերունի ու յա՛լլա իրա էկած ճամփովը կգա, կհասնի իրանց երկիրը, Մատանիքը կտանի կտա թագավորի տղին։ Թագավորի տղեն իրա կատուն վե կունի, էդ գեղիցը դուս կգա, կէթա, կէթա մի ղրաղ տեղ, Մատանիքը կդնի մատը։ Դնելու բաշտան արաբները կգան։

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորի ցեղ,— կասեն արաբները։

— Ինձ վե կալեք, տարեք մեր երկիրը։

Արաբները նրան վե կունեն, կտանեն իրա երկիրը. եննա թագավորի տղեն կասի.— Էս սհաթը կէթաք Գլա՛ն ծովի միջի ամարաթիցը Քոսին վե կունեք, կքցեք ծովը, ամարաթը իրա սարք ու կարգովը, թագավորի աղջկանովը կտանեք կդնեք էլի աղաքվա տեղը։

Արաբները ալբիալը թագավորի տղի հրամանը կկատարեն, Քոսին կքցեն ծովը, ամարաթը իրա սարք ու կարգովը, թագավորի աղջկանովը կտանեն կդնեն իրա աղաքվա տեղը։

Թագավորի տղեն կնկանը ո՛ր կտեսնա, կուրախանա, աշխարով մին կըլնի, ուրախություններիցը չեն իմանում ի՛նչ անեն։ Նո՛ր

կնստեն ըստե դե՛սից, դե՛նից կխոսան, ջան կասեն, ջան կլսեն, իրար գլխով անցկացածը իրար նաղլ կանեն։ Պառավի ուրախությունին հո հալ ու հեսաբ չկար։ Սրանից դենը մարդ ու կնիկ, լավ-լազաթին իրար հեննա սիրով կապրեն ընչանք իրանց մահը։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։



30. ԱՐՋԻ ՔՈԹՈԹԸ

Ըլնում ա, չի ըլնում մի տերտեր։ Էս տերտերը էնքամ ղվաթով ա ըլնում, որ ամեն օր գեղի ժամը շալակում ա, տանում մեշեն, ընդե աղոթք անում, էլ եդ բերում գեղը։

Մի օր էլ ըսենց ժամը շալակե տարել էր մեշեն[1], մի Արջի քոթոթ ռաստ էկավ. հարցրեց, թե էս ժամը խի՞ ա բերե։

Տերտերն ասեց.— Բերել եմ, միջին աղոթք անեմ։

— Բա՛ս որ ըտենց ա[2],— ասեց Արջի քոթոթը,— որ դու էդքամ զոռով ես, արի իրար հեննա կոխ պրծնենք. ով ում գեննովը տա՝ նա նրան ուտի։

Տերտերն ասեց.— Լա՛վ, արի կոխ պրծնենք։

Արջի քոթոթն ու տերտերը կոխ պրծան։ Արջի քոթոթը վե կալավ տերտերին գեննովը տվեց. ուզում էր նրան թիքա-թիքա անի՝ տերտերը աղաչանք-պաղատանք, թե.— Ա՛սու սիրուն, ինձ մի՛ ուտի. ես քեզ կտանեմ մեր տունը՝ լավ կպահեմ, մուղաթ կկենամ։

Արջի քոթոթն էլ ռազի էլավ ու տերտերի հեննա էկավ գեղը։

Արջի քոթոթը տերտերի տանը էլ հաց չթողաց՝ կերավ. խեղճ

---

1 Տպագիր տեքստում հաջորդում է՝ նրան, որը չնչված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

2 Տպագիր տեքստում՝ «— թե բաս ըտենց ա...». ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

տերտերը սրա ձեռիցը չէր իմանում ի՞նչ անի, դվո՞րն էթա։ Վերջը միտք արեց, որ տանի իրանց թագավորին փեշքաշ անի, բալի նրա ձեռիցը պրծնի, թե չէ իրանց տաշտ ու մաղը կկապի, տանը էլ ղադ չի թողա՝ կուտի, կհատացնի։

Տերտերը ըսենց էլ արեց. վե կալավ Արջի քոթոթը տարավ թագավորին փեշքաշ։ Թագավորն էլ առավ, հավեսի խաթեր պահեց։ Համա մի քանի օրեն եղը տեհավ, որ՝ չէ՛, էս արջի քոթոթը իրա տունը կքանդի, ինչքամ տալիս են, ասում ա. «Սոված եմ». միտք արեց, որ մի դհով կորցնիլ տա։

Թագավորը իրա նազիր-վեզրին ասեց, որ մի ջադուքյար պառավ կանչիլ տան, բալքի նա՛ սրան մի ճար անի։ Գնացին մի պառավ կնիկ բերին։ Թագավորը հարցրեց, թե էնթավուր տեղ չի՞ գիտա, որ էս Արջի քոթոթին ղրկեն, էլ եդ չդա։

Պառավն ասեց.— Թագավորն ապրած կենա, խի՞ չեմ գիտա. օխտը սարի քամակին մի մեշա կա, դրան որ ղրկես էն մեշիցը ցախ բերի՝ էլ եդ չի գա. ընդն քառասուն աղպեր դևերը [1] դրա մենծ թիքեն անկաջը կթողան։

— Լա՛վ,— ասեց թագավորը։ Կանչիլ տվեց Արջի քոթոթին, ասեց.— Պտի էթաս, օխտը սարի քամակին մի մեշա կա, ինձ համար ընդիան հարիր սել ցախ բերես՝ պետքն ա։

— Ջո՛ւխտ աչքիս վրա,— ասեց Արջի քոթոթը,— ինձ հարիր սել տո՛ւ, իրա սելվորներովը, ճամփի պաշար՝ նրանից դենը ցախ բերիլը իմ շլնքին։

Արջի քոթոթը ինչ ուզել էր ճամփի համար, թագավորը տվեց ու ճամփու դրեց։ Էս մեր Արջի քոթոթը հարիր սելը աղաքն արած՝ հաղ ասելոն, քեֆ անելոն էր ճամփա էթում։ Գշերը որդե մթնում էր՝ վեր էր գալի, կրակ անում, սելերի եղներից մինը մորթում, էփում՝ սելվորների հենենա ուտում, սելն էլ մեկել սելերի քամակիցը կապում՝ էլի էթում։ Ընենց որ ընչանք մեշի ղրաղը հասան, Արջի քոթոթը հարիր սելի եղներն էլ կերել, հատացրել էր. մնացել էր մի հատ, ըտ էլ ըստե մորթեց, կերակուր արեց՝ կերան։

Քառասուն դևը տեհան, որ մեշի ղրաղին մի մուխ ա բանձրանում. մնացին զարմացած, թե էս ո՞վ պտի ըլնի, սիրտ ա արե էկե էս դհերանքը, որ ղուշն իրա թևովը, օձն իրա պորտովը ընչանք

---

[1] Տպագիր տեքստում՝ դևը. ուղղումը բանահավաքինն է (Մ. Կ.)։

համի չեն կարացէ ոտ դնի։ Դևերի մենծ աղպերը պուճուր աղպորը ղրկեց, տենա էն ի՞նչ ծուխ ա վեր ըլնում մեշի ղրաղին։

Պուճուր աղպերը գնաց, տեհավ մի Արջի քոթոթ, հարիր մարդ՝ կրակի չորս բոլորը նստոտել են, կերակուր են ուտում։ Հեռվից ձեն տվեց.— Ի՞նչ մարդ եք, որ էս բեվախտին էկել եք մեր մեշի ղրաղին կրակ արե. ինս եք, չինս եք, ջանավար եք՝ թեզ ձեն հանեք, թե չէ ձեզանից մինն էլ ա սաղ չի պրծնի դև աղպորտանց ձեռիցը։

Արջի քոթոթը դհա կատաղեց.— Դեռ հլա դու մի աղաք արի, տենանք ի՞նչ ջանավար ես, որ հեռվից ըտենց մենծ-մենծ փրթում ես, եննա կիմանաս, թե մենք ի՞նչ մարդ ենք։

Դևը մոտկացավ կրակին թե չէ, Արջի քոթոթը ձեռի դագանակովը մի դրրբ որ չտվեց՝ էն սհաթին դևը շշմեց վեր ընկավ։ Արջի քոթոթը տարավ սրան սելիցը պարանով կապեց, որ չըլնի թե փախշի, ինքն էլ եդ էկավ իրա հացը կերավ։

Մենծ դևը տեհավ, որ պուճուր աղպերը եդացավ, չէկավ՝ մեկել աղպորը ղրկեց, տենա խի՞ եդացավ։

Արջի քոթոթը սրա գլխին էլ էն օղիեն հաղաց, տարավ աղպոր կողքին՝ սելիցը կապեց։ Մի խոսքով, գլխներդ ինչ ցավացնեմ, ըսենց երեսունը իննը դևին էլ ջերկուն իրար կշտի կապոտեց։

Մենծ դևը տեհավ, որ իրա աղպրտինքը գնացին, էլ եդ չէկան. վերջը ինքը վե կացավ, կատաղած, փրփրած գնաց տենա՝ էս ի՞նչ խաբար ա, որ նրանք էսքամ ետացան։

Գնաց տեհավ իրա աղպրտինքը՝ երեսունը իննն էլ սելիցը ջերկուն կապոտած են. կրակի ղրաղին մի Արջի քոթոթ, հարիր մարդ նստոտած՝ հաց են ուտում։ Հարցրեց.— Ի՞նչ մարդ եք, էս վախտին ըստերանք ի՞նչ եք շինում։

Արջի քոթոթը ձեն, ծպտուն չհանեց, քաշեց դագանակը սրան էլ մեկել աղպորտանց հացին հասցրեց, տարավ նրանց կողքին կապեց։

Առավոտը որ լիսացավ թե չէ, Արջի քոթոթը հրամայեց քառասուն դևին էլ, որ էթան մեշիցը իրանց ձեռովը ցախ կտրեն՝ բերեն սելերը բարձեն։ Դևերը վրա պրծան մեշին. մի սհաթումն էնքամ ցախ կտրատեցին, որ հարիր սելը բարձեցին՝ դեռ հլա ավելացավ էլ։ Արջի քոթոթը հարիր սելն էլ իրար եննուց կապոտեց, քառասուն դևին աղաքի սելիցը լծեց, ինքն էլ ճիպոտը ձեռն առավ,

նստեց սելը՝ քշեց։ Ըստիան ընչանք թագավորի երկիրը, որ վեց ամսեն ճամփա էր, դևերը մի ամսում էկան։

Խաբարը տարան թագավորին, որ Արջի քոթոթը գալիս ա։ Թագավորը մնաց շվարած, թե էլի պտի դա, իրան դարդավարամ անի։ էն սհաթը հրամայեց էն ջադուքյար պառավին քյալլա անեն, որ սուտ դուս էկավ, Արջի քոթոթին էնթավուր տեղ ղրկիլ տվեց, որ էլ եդ էկավ։

Արջի քոթոթը բերեց սելերը դարդկեց թագավորի ամարաթի աղաքին։ Դևերին ըստիան ճամփու դրեց իրանց տեղը. ինքը գնաց թագավորին ասեց, որ իրա ուղած հարիր սել ցախը բերել ա։ Թագավորը երեսհանդ իրան ընենց էր շանց տալի, սաքի թե նրա ցախ բերելու վրա ուրախ ա. համա սրտովը, ո՛վ գիտա, ինչքավուկ բաներ ին անցկենում։

Թագավորը կանչիլ ա տալի մի ուրիշ ջադուքյար կնիկ, հարցնում, թե էնթավուր տեղ չի՞ գիտա, որ Արջի քոթոթին ղրկեն՝ էլ եդ չգա։

Պառավն ասում ա.—Ֆրանգստունի թագավորը մի սիրուն աղջիկ ունի, նրան քնդ համար բերիլ տու. ընդե էթացողը ոտով-գլխով էլ եդ չի գա։

Թագավորը պառավին անկաջ արեց. կանչեց Արջի քոթոթին, ասեց, որ պտի էթա Ֆրանգստուն, ընդիան թագավորի աղջիկը իրան կնիկ բերի։

Արջի քոթոթն ասեց.— լա՛վ, ջուստ աչքիս վրա, թագավորն ապրած կենա։

Առավոտը որ լիսը բացվեց թե չէ, Արջի քոթոթը ճամփա ընկավ դպա Ֆրանգստուն։ Գնա՛ց, գնա՛ց, շատն ու քիչը աստոծ գիտա, տեհավ մի մարդ ամեն մի ոտիցը մի եքա ջաղացաքար ա կապե ու ընենց ա եգին վազ տալի[1], որ ալափստրակը փախչելիս տեղը՝ եննուցը հասնում ա, կալնում։ էս մարդը Արջի քոթոթին որ տեհավ, հարցրեց.— Քոթո՛թ աղպեր, էդ ո՞ւր էս էթում։

— էթում եմ Ֆրանգստուն. ընդիան թագավորի աղջիկը մեր թագավորի համար կնիկ բերեմ։

---

[1] Տպագիր տեքստում՝ «ընենց եգին վազ ա տալի, որ...». բանահավաքը փոխել և դարձրել է՝ «ընենց եգին վազում ա, որ...». ժողովրդական ոճը չաղավաղելու համար թողնում ենք տեքստում տպագրված ձևը՝ մասնակի ուղղմամբ (Մ. Կ.)։

— Ի՞նչ կըլնի, ինձ էլ հետդ[1] տանես։

— Արի՛ էթանք. մին չըլնեմ՝ թող էրկու ըլնենք։

Էրկուով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ ծովի միջին կանգնել ա. սաղ ծովը փորն ա քաշում՝ դեռ ասում ա. «Ամա՜ն, ես ծարավ մեռա»։ Էս ծով կուլ տվողը հարցրեց.— Էդ ո՞ւր եք էթում. ընձ էլ ձեզ[2] ընկեր չե՞ք անի։

— Խի՞ չենք անի. էրկու չըլնենք, թո՛ղ իրեք ըլնենք. արի՛ էթանք։

Ըսենց իրեքով ընկեր էլան, գնացին։ Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիտա, մի օխտը աչքանի ջաղացի ռաստ էկան։ Նեքսև մտան, տեհան մի ջաղացպան ընդե ալիր ա աղում. էլ մաջալ չի տալի, որ ալիրը դուս գա, ունցի, հաց թխի, ուտի՝ հենց ընենց ալիրը հում-հում ա նի տալի, դեռ հլա ասում ա. «Ամա՜ն, մի ճար արեք, սուված մեռա»։

— Բա՛ր'աջողում, ջաղացպան աղպեր,— ասեցին մեր ճամփորդները։

— Բարո՛վ, ասսու բարին. տերն աջողա, գնալներդ ո՞ւր ա։

— Ֆրանգստո՛ւն, ընդիան թագավորի աղջիկը բերելու։

— Որ ես էլ գամ ձեր հեննա, չե՞ք տանի։

— Խի՞ չենք տանի, իրեք չըլնենք՝ թո՛ղ չորս ըլնենք. գալիս ես, արի՛։

Չորս ֆոգով իրար հեննա ընկեր էլան՝ գնացին։ Գնացին, գնացին, շատն ու քիչը աստոծ գիտա, տեհան մի մարդ անկաջը գետնին ա կպցրե՝ լսում ա, հետը խոսում։

— Բարո՛վ, իմաստուն աղպեր,— ասեցին մեր ճամփորդները։

— Բարին ձեր որդվերանց արևը. աստոծ աջողա, էդ ո՞ւր եք էթում։

— Էթում ենք Ֆրանգստուն, թագավորի աղջիկը բերենք։

— Ջի՞լնի ես էլ գամ։

— Խի՞ չիլնի. գալիս ես, արի՛. չորս չըլնենք՝ թո՛ղ հինգ ըլնենք։

Հնգով խելի տեղ գնացին, գնացին՝ տեհան մի մարդ սաղը ձեռին ածում ա. էլ սա՛ր, էլ քո՛ւ, էլ քա՛ր իրանց տեղներիցը ժաժ

---

[1] Տպագիր տեքստում՝ ֆեզ ճեննա. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում հաջորդում է՝ ճեննա, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

ին էկե սազի ձենիցը. ընչանք երկնքի ղշերն էլ էկել ին անկաչ ին անում նրա սազին [1]։

Մեր ճամփորդները ասեցին.— Բա՛ր՝աջողում, սազ ածող աղպեր։

— Բարո՛վ, ասսու հազար բարին, խերին. աստոծ աջողա, գնալներդ ո՞ւր ա։

— Ֆրանգստո՛ւն, թագավորի աղջիկը բերելու։

— Ի՞նչ կըլնի, ընձ էլ ձեր հեննա վե կալնեք։

— Ի՞նչ պտի ըլնի. գալիս ես, արի՛. հինգ չըլնենք, թո՛ղ վեց ըլնենք։

Վեցով գնացին, գնացին՝ տեհան մի մարդ Մասիսը շալակում ա տանում Հուսիս, Հուսիսը տանում Մասիս։

Մեր ճամփորդներն ասեցին.— Բա՛ր՝աջողում, ղոչաղ աղպեր. էդ ի՞նչ ես անում։

— Ըսկի՛, ղվաթս եմ փորձում. դուք էդ ո՞ւր եք էթում։

— Էթում ենք Ֆրանգստուն։

— Չիլնի՞, որ ընձ էլ ընկեր անեք։

— Գալիս ես, արի՛. վեց չըլնենք՝ թո՛ղ օխտն ըլնենք։

Էս օխտը ֆոգին՝ Արջի քոթոթը, Եզին վազողը, Անկշտում ջաղացպանը, Մով կուլ տվողը, Իմաստունը, Սազ ածողը ու Մասիս շալակողը էկան, էկան՝ հասան Ֆրանգստուն։

Գնացին դուզ թագավորի դուռը ծեծեցին. նոքարը դուս էկավ, հարցրեց, թե ո՞ւմն են ուզում։

Արջի քոթոթն ասեց.— Թագավորին։

Նոքարը գնաց թագավորին իմացում տվեց, թե օխտը չեշուտ-չեշուտ մարդիկ ուզում են նրան տեննան. թողա՞ գան, թե չէ։

Թագավորն ասեց.— Գալիս են, թո՛ղ գան. տեննանք էդ ի՞նչ մարդիկ են։

Թագավորի նոքարը գնաց նրանց կանչեց։ Արջի քոթոթը իրա ընկերտանցովը էկավ թագավորի աղաքին կաննեց, ասեց.— Թագավորն ապրած կենա. էկել ենք աղջկանդ տաննենք. տալիս ես՝ քու խոշովը տո՛ւ. թե չէ, որ բանը մեզ մնա, իմաց կաց զոռով էլ կտաննենք։

---

[1] Տպագիր տեքստում՝ «... իրանց տեղներիցը ժաժ ին գալի սազի ձենիցը. ընչանք երկնքի ղշերն էլ ին գալիս անկաչ անում նրա սազին». ուղղումները բանահավաքինն են (Ս. Կ.)։

Թագավորն ասեց.— Տալը կտամ, համա իրեք բան կասեմ. թե արեցիք, հո աղջիկս ձերն ա ու ձերը, թե չէ՝ ձեր քոմմըքի գլուխն էլ թռցնիլ կտամ. դուք գիտաք։

Արջի քոթոթն ասեց.— Ղաբուլ ենք, թագավորն ապրած կենա, կանենք. թե չկարացինք, մեր արինը քեղ հալալ ա՝ ինչ ուզում ես, ա՛րա։

Թագավորը սաղ իրա երկրումը ջառ գոռալ տվեց, որ տունը մի մենծ բղուղ լիքը կերակուր բերի իրա ղոնաղների համար։ Ընենց էլ հացը՝ իրա երկրի ամեն փռնչքանցը թամբահ արեց, որ սաղ օրը հա՛ հաց թխեն, իրար եննուց հասցնեն, բալքի նրանք դեմ առնեն, չկարենան ուտի։

Ոնց որ թագավորը թամբահ էր արե, տունը մի բղուղ կերակուր բերեց. ընենց որ հազար մարդ ուտեր՝ կկշտանար, դեռ հլա կավելնար էլ։ Համա էս մեր ղոնաղները օխտը ֆոդով ընենց կերան՝ ամանները թամղացրին, որ թագավորը մնաց զարմացած. մի-տք արեց, որ էս չէլավ, պտի ուրիշ բան միտք անվի. թե չէ իրա աղջիկը էս արենխում ջանավարների ձեռը կգցի՝ ֆողեց ֆոդի կկորցնի։

Արջի քոթոթին կանչեց, ասեց.— Ինձանից ես մի մարդ կղերկեմ օխտը սարի քամակը, ընդե մի Անմահական աղբուր կա, էն աղբրիցը ջուր բերի. դու էլ քու մարդկերանցից ղրկի. ո՛ւմ մարդը բնդ գա, իմաց կաց՝ նա տարել ա։

Արջի քոթոթը ռազի էլավ. կանչեց էն Եգին վաղ տվողին, ասեց, որ պտի էթա օխտը սարի քամակիցը Անմահական ջուր բերի։

Եգին վաղողն ասեց.— Աչքիս վրա, Քոթոթ աղպեր. դրանից էլ հեշտ բա՞ն կա աշխարքումը։

Համա ըս էլ պտի ասեմ, որ թագավորը սրանից մի շաբաթ աղաք հրեղեն ձիավոր մարդ էր ղրկե Անմահական ջրի, որ նրանից թեզ գա. չունքի էդ ճամփեն շատ հեռու էր՝ էրկու, իրեք շաբթումը լավ քյահլան ձին անջախ էթար, գար։

Համա Եգին վազողը ընենց գնաց, որ թագավորի ղրկած ձիավորին ճամփին ռաստ էկավ, նրանից անց էլ կացավ, գնաց Անմահական աղբրիցը ջուր լցրեց, եդ էկավ՝ դեռ նա նո՛ր էր հասե աղբուրը։ Տարավ Անմահական ջուրը թագավորին տվեց։

Թագավորն ասեց.— Աղպե՛ր, էս հետ էլ ախտեցիք. մնաց մի

1646—25

բան, թե ըս էլ արիք՝ հո՝ աղջիկս ձերն ա, տարե՛ք, ձեզ հալալ ըլնի։— Իմ համամը տաքացնիլ եմ տվե. գնացե՛ք թամուզ լեղացեք, ընդհան էկեք հաց կերեք. հացից հդը աղջիկս վե կալեք՝ տարեք, ոտով-գլխով ձեզ եմ տալի։

Արջի քոթոթը իրա ընկերտանցով գնաց թագավորի համամը։ Թագավորը աղաքուց թամբահ էր արե իրա նոքարներին, որ համամը էնքամ տաքացնեն, որ նրանք մննելու բաշտան՝ տեղն ու տեղը խաշվեն մնան։ Արջի քոթոթը գնաց համամ. տեհավ էնքամ տաքացրել են, որ պատերն էլ ա կարմրե, հեռվից նրա դոլը մարդի էրում ա թողում. Ով կուլ տվողին ասեց, որ փչի, համամը սառցրնի։ Ով կուլ տվողը որ մին չփչեց՝ համամի պատերը, ջուրը ընենց սառնացան, հենց իմանաս ըսկի տաքացրած չըլներ։ Քոմմըքով էլ մտան հավուզը, չին-չին լեղացան, դուրս էկան գնացին թագավորի կուշտը, որ հաց ուտեն՝ եննա նրա աղջկանը վեր ունեն, տանեն։

Թագավորը տեհավ, որ ոնչ մի բանով էլա չկարաց Արջի քոթոթին զոռի, իրա նոքարներին հրամայեց, որ նրանց աղաքը կերակուր բերելիս՝ ամաններրի մեջը դեղ քցեն, որ նրանք ուտեն թե չէ, տեղն ու տեղը չորանան. բալքի սրանով պրծնի էս մարդակեր ջանավարների ձեռիցը։

Որ հացի նստեցին, նրանց Իմաստուն ընկերը անկաջը գեննին դրեց՝ ալրիալը հասկացավ, որ իրանց ամաննները դեղել են։ Ընկերտանց անկաջին փսփսաց, թե իրանց աղաքի կերակրներրի մեջը դեղ ա քցած, չուտեն։

Սաղ ածող ընկերը էս որ իմացավ՝ իրա սաղն ածեց. թագավորը, նրա կնիկը, աղջիկը, նոքարները՝ բիրադնով էլ սաղի ձեննիցը խելքամաղ էլան, մնացին։ Ընչանք նրանց աղաքի ամաններն էլ սաղի ձենը որ լսեցին, իրանց տեղներիցը ժաժ էկան՝ դեղած ամանիքը գնացին թագավորի ու նրա տանըցոնց աղաքը, նրանց ամանիքը էկան սրանց աղաքը։ Սաղ ածողը սաղը ձեռիցը վե դրեց, որ նրանք կարացին հաց ուտի։ Թագավորը իրա ամանիցը որ մի գդալ չկերավ՝ էն սհաթը միջից տրաքեց, չաթմիշ էլավ։ Կնիկը էս որ տեհավ՝ վախլուբյունիցը նա էլ տեղն ու տեղը ընդե մեռավ [1]։

---

[1] Տպագիր տեքստում՝ «էս որ տեհավ թե չէ, նրա կնիկը վախլուբյունից նա էլ տեղն ու տեղը ընդե մեռավ». ուղղումները բանահավաքինն են (Ս. Կ.)։

Սրանից եղը, հա՛լբաթ Արջի քոթոթի ձեռը էլ ո՛վ կարար բռնի. թագավորի աղջիկը նրանն էր ու նրանը. ուզենար վե կուներ, կտաներ իրանց թագավորին։ Համա մըկ էլ միտք արեց, թե խի՞ տանի նրան. հաղիր իրան կնիկ կշինի։

Իրա ընկերտանցով թագավորի ղոշնի հեննա կռիվ արեց՝ ախտեց. ինքն էլ նստեց ընդե թագավոր։ Թագավորի աղջիկն էլ իրան կնիկ առավ՝ օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ. մինն՝ աստղին, մինն՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



31· ԽՄՈՐ ՈՒՏՈՂ ԷՐԵԽԵՆ

Ըլնում ա չիլնում մի կնիկ։ էդ կնիկը ունենում ա մի տղա, մի աղջիկ. տղեն ըսենց տասը-տասնըհինգ տարեկան, աղջիկն էլ հլա ծծի էրեխա ա ըլնում։

Օրեն մի օրը էդ կնիկը հաց թխելիս ա ըլնում։ Բերում ա էդ ծծի էրեխին օրորոցումը քուն դնում, եննա իրա բանին կենում։ Տղեն էլ դե՝ եքա տղա, մորը օգտում էր՝ գունտ էր կրում, ցախ էր բերում թունդիրը վառում, մախլասի՝ մոր աղաքին բան էր անում։ Էս տղեն ա՝ մըն էլ որ էթում ա գունտ բերելու, տենում ա ի՞նչ՝ իրանց ծծի էրեխեն հրեն ուսուլով օրորոցիցը վեր էկավ, գնաց խմորի գնտերից մինը կերավ, էլ եդ գնաց մտավ օրորոցը։ Էս որ տենում ա, մնում ա զարմացած, թե էրեխեն էլ խմոր կուտի։

Գալիս ա մորը նաղլ անում.— Ա՛զի,— ասում ա,— բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց բան, մեր էրեխեն օրորոցիցը վեր էկավ, խմորի գնտերից մինը կերավ, էլ եդ գնաց մտավ օրորոցը։

— Չէ՛,— ասում ա մերը,— դու էլ ընե՞նց սուտ ես ասում, որ «էշն ախոռումը կզռաս». ծծի էրեխեն էլ գո՞նտ կուտի։

— Չես ավատում,— ասում ա տղեն,— բո՛ւսուն քաշ-ս, տե՛ս դրուստ եմ ասում, թե չէ։

Սա՝ հա՛, նա՝ չէ՛, սա՝ հա՛, նա՝ չէ՛, մախլաս՝ ի՛նչ անում ա, չի անում՝ մորը չի կարում ավատացնի։ Տղեն էլի էթում ա գունտ

բերելու, էլի տենում ա էն էրեխեն օրորոցիցը վեր էկավ, գնաց խմորի գնտերից մինը կերավ, էլ եդ գնաց մտավ օրորոցը։ Էլի գալիս ա մորն ասում, էլի մերը չի ավատում, հլա տղի վրեն բարկանում էլ ա։ Մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը, քանի տենում ա՝ գալիս ա մորն ասում ա, համա մերը տղին անկաշ չի անում։

Էդ տղեն ա՝ տենում ա, որ մերը իրա ասածը բանի տեղ չի դնում, ինքն իրան միտք ա անում. «Ա՛ղպեր,— ասում ա,— էս ծայ էրեխեն հմիկուց որ խմոր ա ուտում, մենծանա, ո՛վ գիտա, մըղ էլ ուտի. պտի աղաքուց .ես իմ գլխի ճարը տենամ»։

Էթում ա մի քանի հաց վեր ունում ու յա՛լլա՝ դռնեն դուս. գլուխը առնում, անսաս էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մախլասի՝ մի շարաթ. գշեր, ցերեկ գալիս ա՝ մի սարի ա ռաստ գալի։ Վարուվուրդ ա անում, տենում՝ էդ սարի դոշին հրենիկ մի սուրու ոչխար. դե՛ս ա մտիկ տալի, դե՛ն ա մտիկ տալի, տենում ա ո՛նչ չորան կա, ո՛նչ զադ։ Մնում ա միտք անելոն, թե էս ի՛նչ բաս ա, էս սուրու ոչխարը խի՞ ա անտեր-անտիրական ըստե արածում։

«Կա, չկա,— ասում ա,— ըստե մի բան կա. պտի ընչանր իրիկուն ըստե կենամ, տենամ էս ոչխարը ո՞ւր ա էթում, ես էլ հեննեն էթամ»։

Մնում ա ընչանք իրիկուն. մութը գետինը կոխում ա թե չէ, տենում ա հրես սարը ճղվեց, բաց էլավ ու եդ սուրու ոչխարը ինքն իրան գնաց, մտավ մեջը։ Տղեն էս որ տենում ա, ինքն էլ ուսուվով ոչխարի հեննա մննում ա նեքսև։ Ոչխարը որ քոմմա մննում ա, սարը էլ եդ խփվում ա, կալնվում։

Էս տղեն մննում ա սարի մեջը, ի՛նչ տենում՝ լա՛վ-լա՛վ տներ, լա՛վ-լա՛վ օթախներ, լա՛վ-լա՛վ ամարաթներ, տո՛ւն, տե՛ղ, գո՛մ, մա՛րագ, մախլաս՝ ի՛նչ ասես կա. մի մարդ, մի կնիկ էլ էդ օթախների միջին, որ էրկսի աչքերն էլ հանած ա, ո՛ր ասես, զադ չեն տենում։ Էդ կնիկը դուս ա գալի ոչխարի աղաքը, քշում, տանում անում գոմը, եննա մաթրաթը վեր ա ունում, էթում ոչխարը կթում, մաթրաթը պրոտեպռունգ լցնում, բերում։ Մարդ ու կնիկ էդ մաթրաթ կաթը լավ-լազաթին փրթում են, գթալներն առնում, ընկնում նրա ջանին։ Տղեն էս որ տենում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում. զաթի ինքն էլ սոված, նըխտից ընկել էր, մի դհիրն էլ նա ա վրա պրծնում կաթին։ Մարդ ու կնիկ սաղ մաթրաթը դարտը-

կում են, չեն կշտանում։ Կնիկն էթում ա թաղադան կթում, բերում։ Ըս էլ են ուտում, էլի չեն կշտանում։ Մնում են արմացած. աղաք մի մաթրաթ ին ուտում, կշտանում ին, համ էրկու մաթրաթ կեբան, էլի նուշած մնացին։ Ալբիալը սայմիշ են ըլնում։

— Կա, չկա,— ասում են,— ըստե իսանաորդի կա, որ մեր փայիցն ուտում ա, չենք տենում։ Ի՞նս ես, ջի՞նս ես, ջանավար ես,— ասում են,— ձե՛ն հանա։

Տղեն էս որ լսում ա, նոր արշա ա ընկնում, ընդիան ձեն տալի.— Հողա՛ծին եմ,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց էկել եմ, ընկե ըստե. ա՛սու սիրուն,— ասում ա,— մի տեղ տվեք սթար անեմ, կշտներիդ մնամ, ես ըլնեմ ձեզ ո՛րդի, դուք ինձ՝ հերնըմեր։

Նստում ա մին-մին, տեղը-տեղին նաղլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Լա՛վ,— ասում են էդ քոռերը,— ղա՛բուլ ենք։ Դե որ ըտենց ա, էս ոչխարը քեզ ենք պահ տալի. առավոտները սարը կբացվի՝ կտանես հանդը, կարածացնես, իրիկները էլ եդ կքշես, կբերես։ Մեզանից քեզ ամանաթ,— ասում են,— էս սարի վրեն ո՛ւր ուզում ես գնա, ի՛նչ ուզում ես արա՝ ձեն, ծպտուն հանող չիլնի, համա ֆլա՛ն սարը չէ՛թաս, ընդե սատանեք կան, գլուխդ փորձանք կգա. հրես տենում ես՝ մեր աչքերն էլ էն սատանեքն են հանե։ Էդ հո էդ. ֆլա՛ն տեղումը, ֆլա՛ն սարումն էլ մի Ասլան կա, ընդե էլ չէ՛թաս, թե չէ Ասլանը քեզ կքրքրի, մենծ թիքեն անկաշդ կթողա։

— Ա՛չքիս վրեն,— ասում ա տղեն,— որ ասում եք՝ չեմ էթա։

Էս տղեն մնում ա դրանց կշտին. ասսու իրան օրը առավոտը գշերով-գշերհանա վեր էր կենում, ոչխարը աղաք անում, սարը բացվում էր, քշում էր հանդը, արածացնում, իրիկունը, որ մութը գետինը կոխում էր, էլ եդ քշում էր, բերում տուն։

Ըսենց մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, ի՛րեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, օրեն մի օրը ինքն իրան միտք ա անում. «Հերնըմերս,— ասում ա,— ինձ թամբահ են արե, որ ֆլա՛ն սարը չէթամ, ընդե սատանեք կան, գլուխս փորձանք կգա։ Ի՛նչ ըլնում ա ըլնի,— ասում ա,— պտի էթամ, տենամ ընդե ի՛նչ կա, ի՛նչ չկա»։

Ասում ա, ոչխարը քշում դպա էն սարը։ Գալիս ա ի՛նչ տենում. հրենիկ սատանեքը կիտվել են, մի գերանի վրեն չերկուն

նստոտե։ էս որ տենում ա՝ տղի թուք ու մուքը կպնում ա, քիչ ա մնում լեղաճաք ըլնի։

— Ա՛յ տղա,— ձեն են տալիս սատանեքը,— ա՛րի էս գերանը ճղա՛։

Տղեն մոտանում ա, տենում սատանեքը ուզում են էդ գերանը ճղի, համա չեն կարում։

— Ըտենց ո՞նց կըլնի,— ասում ա տղեն,— սեպ բերեք որ ճղեմ։

— Մեզ ո՞րդիան ա սեպ,— ասում են սատանեքը։

Տղեն բերում ա կացնով տալի, գերանը մխելի տեղ ճղում, ենա նա ասում ա.— Որ սեպ չունեք, բերեք ձեռքներդ դրեք էս գերանի արանքը, կացնով տամ, ալբիալը կճղվի։

— Լա՛վ,— ասում են սատանեքը։

Բերում են ձեռները դնում գերանի արանքը։ Տղեն կացինը որ չի հանում, քոմմըքի ձեռն էլ մնում ա գերանի արանքին։ Նոր քաշում ա կացինը էդ սատանեքանցը քոմմըքին էլ կոտորում, շանսատակ անում, թողում։ Մենակ մի չոլախ սատանա ա պրծնում դրա ձեռիցը, էդ սատանեն որ տենում ա ընկերտինքը սատկեցին, գլուխն առնում ա փախնում։ Տղեն կացինը վեր ա ունում, ընկնում դրա եդևիցը։

Վազում ա, վազում ա, վազում ա՝ հասնում ա էդ սատանին. ուզում ա կացնով տա, տեղն ու տեղը չըղնամիշ անի, սատկացնի, նա աղաչանք, պաղատանք ա անում.— Ա՛ղպեր,— ասում ա,— ինձ մի սըպանի, ես էլ քեզ մի լավություն կանեմ։ Քու հորնըմոր աչքերը,— ասում ա,— մենք ենք հանե, հրես իմ ձեռին ա, ուզում ես տամ, թաքիլան ինձ ձեռը չտաս։

— Լա՛վ,— ասում ա տղեն,— բե տո՛ւ, ձեռը չեմ տա։

Էդ չոլախ սատանեն ձեռը տանում ա ջեբը, նրա հորնըմոր աչքերը հանում, տալի նրան։

— Ա՛ռ,— ասում ա,— էս հորդ աչքերը, ըս էլ մորդ աչքերը։

Բերում ա տղին մի բմբուլ տալի։— Ա՛ռ,— ասում ա,— էս բըմբուլը. աչքերը որ կդնես իրանց տեղը, եննա էս բմբուլը ջրի միջին թաց կանես, կքսես աչքերին. քսելու բաշտան աչքերը կլավանան։

Էս տղեն ա՝ աչքերը առնում ա, դնում ջեբը, սատանի հեննա մնաս բարով անում, վե կենում ոչխարը աղաք անում, քշում։ Քշում ա, քշում ա, մութը որ կոխում ա գետինը, հասնում ա էն սարը։

Սարը բացվում ա, ոչխարը նեքսև ա անում, սարը էլ եդ կալնվում ա։ Էդ մայիֆ մարդ ու կնիկը որ իմանում են տղեն էկավ, ուրախանում, աշխարով մին են ըլնում։

— Հը՛, ա՛յ տղա,—ասում են,—ըսկի ի՞նչ կա, ի՞նչ չկա, մենք քեզանից նիգյարան ինք, հո էն սարը չգնա՞ցիր։

— Ո՛նց չէ,— ասում ա տղեն,— գնացի, էն սատանեքանց հախից էկա, քոմմըքին էլ սատկացրի, ձեր ինաղը հանեցի նրանցից. հրես էրկսիդ աչքերն էլ բերել եմ։

Ռներում ա աչքերը դնում իրանց տեղր. սաղացնում, ոնց որ պետքն ա դրստում, եննա հանում ա բմբուլը ջրի միջին թաց անում, քսում նրանց աչքերին։ Քսում ա թե չէ, աչքները բացվում ա, տեսնում են։

— Ջորա՜նաս, ա՛յ որդի,— ասում են,— դու որ մեզ էս լավությունը արիր, սրա տակիցը մենք ո՞նց պտի դուս դանք։

— Շա՜տ մենծ բան ա,—ասում ա տղեն,—էսքամ վախտ ձեր տանը կենում եմ, ձեր հացն ուտում, ձեր ջուրը խմում, ի՛նչ կըլնի, որ ես էլ մի օր ձեր հավարին հասնեմ։

— Ա՛յ որդի,— ասում են,— էս հետ որ անփորձանք էն սատանեքանց ձևիցը պրծար, սաղ-սալամաթ եդ էկար, ըստուց դենը քեզ մուղաթ կաց, էն Ասլանի սարը չէթաս հա՜, թե չէ քեզ կքրքրի, ձվիգ-ձվիգ կանի, մենծ թիքեն անկաջդ կթողա։

— Լա՛վ,— ասում ա տղեն,— որ ասում եք՝ չեմ էթա։

Հաց են ուտում, պրծնում, թեք են ընկնում քնում։ Առավոտը լիսը բացվում ա, տղեն էլի ոչխարը աղաք ա անում, քշում տանում հանդը արածացնելու։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, ճամփին ինքն իրան միտք ա անում. «Ի՛նչ կըլնի, կըլնի,— ասում ա,— ա՛րի հմի էլ էթամ էն մի սարը, տեսնամ ընդե ի՛նչ կա, ի՛նչ չկա»։

Ասում ա, տալի սնուտն անց կենում, ոչխարը քշում էն սարը։ Էթում ա ի՛նչ տեսնում՝ Ասլանի ձենը սաղ աշխարքը վեր ա կալե, ընե՜նց մի ձեն ա հանում, ընե՜նց մի ձեն ա հանում, որ աստոծ փրկի, ազատի. դու մի ասի, էդ Ասլանը ցավում ա։

Ասլանը էս տղին որ տեսնում ա, ձեն ա տալի.— Ի՜նս ես, ջի՜նս ես, ջանա՛վար ես՝ ձե՜ն հանա, ինձ էս նեղ տեղիցը ազա՛տա. հրես ցավում եմ, քանի ճուտ բերեմ, հալալ կես անեմ հեննեդ. էրկուսը

ընի, մինը՝ ինձ, մինը՝ քեզ, չորսը ընի, էրկուսը՝ քեզ, էրկուսը՝ ինձ. ղարո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ,— ասում ա տղեն։

Էթում ա Ասլանի աղաքին չոքում, նրան աղատում։ Էդ Ասլանը չորս ճուտ ա բերում։ Ասլանը էրկուսը ինքն ա վեր ունում, էրկուսը տալի էդ տղին։

— Տա՛ր,— ասում ա Ասլանը,— դու որ ինձ էս նեղ տեղիցը աղատեցիր, տա՛ր, մորդ կաթի նման քեզ հալալ ա։

Էդ տղեն ա՝ Ասլանի ճուտերը վեր ա ունում, ոչխարը աղաք անում, գալի տուն։ Սարը ճղվում ա, բաց ընում, տղեն ոչխարը անում ա նեքսև։

— Հը՛,— հարցնում են էն մարդ ու կնիկը,— խի՞ էսքան եղացար։

— Բա՛ չեք ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, գնա՛ն Ասլանին աղատեցի, էս էրկու ճուտն էլ ինձ փեշքաշ արեց։

Էդ տղեն ա՝ բերում ա Ասլանի ճուտերը իրա կշտին պահում։ Բանի պուճուր ին, դրանց կաթ ա ուտացնում, որ մի քիչ մենծանում, զնջլով կապոտում ա, որ չփախնեն։ Մնի անումը Ասլան ա դնում, մեկելինը՝ Ղափլան։

Անց ա կենում ըսենց մի քանի վախտ՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, մախլասի՝ վեց ամիս, օրեն մի օրը էս տղեն միտք ա անում. «էթամ մեր երկիրը,— ասում ա,— տենամ ի՛նչ կա, ի՛նչ չկա, մերս ո՞նց ա, ի՞նչ ա անում, սաղ-սալամա՞թ ա, թե չէ»։

Գալիս ա էդ մարդ ու կնկա կուշտը։

— Ուզում եմ էթամ մեր երկիրը,— ասում ա,— ի՞նչ կասեք. իզին կտաք՝ կէթամ, թե չէ, հո չէ։

— Դո՛ւ գիտաս, ա՛յ որդի,— ասում են էն մարդ ու կնիկը,— սիրտդ ուզում ա՝ գնա՛, ի՛նչ ուտի ասենք։

— Բա՛ս որ ըտենց ա,— ասում ա,— կէթամ։ Ինձանից ձեղ ամանաթ, իմ Ասլան-Ղափլանին լավ մուղաթ կկենաք ընչանք իմ գալը. բան ա, թե տենաք չարչարվում են, տեղները դինջ չեն կենում, ուզում են փախնի՝ իմաց կացեք նեղ տեղ եմ, բաց թողեք գան, հավ՛արիս հասնեն։

— Լա՛վ,— ասում են էն մարդ ու կնիկը,— արիսեին կաց, ոնց որ ասեցիր, ընենց էլ կանենք։

Էս տղեն ա՝ ճամփի թադարեք ա տենում, յարաղ-ասպարը

կապում, նիլնում ձին՝ յա՛լլա։ Գալիս ա, գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, ճամփի կեսը որ գալիս ա, ըտե մի սարի գլխի մի ջուխտ մում ա վառում, տալի անց կենում։ Գալիս ա, գալի, հասնում ա իրանց երկիրը։ Գալիս ա ի՛նչ տենում՝ իրանց երկիրը սաղ բրիշակ ա դառե, որ ասես, մարդ-մադաթ չկա։ Էթում ա իրանց տունը. ձին դռանը կապում ա, ինքը մննում նեքսև, տենում ա ո՛նչ մեր կա, ո՛նչ զադ, մենակ քիրը ընդե նստել ա, աչքերն էլ ճրաքի նման լիս ա տալի։ Էս որ չի տենում, մնում է սառած մտիկ անելոն։

Քիրը որ աղպորը տենում ա, վազում է փաթթվում ճտովը։

— Քի՛րը չարդ տանի, ա՛ղպեր ջան,— ասում ա,— բարո՛վ, հա՛զար բարին ես էկե, ո՞նց ես, լա՞վ ես. էս ո՞ւր իր էսքան վախտ։

— Ա՛ղպերը քեզ մատաղ,— ասում ա,— գնացել ի ղարբություն. հմի էկել եմ քեզանից կարոտս առնեմ, էլի վե կենամ էթամ։

— Ա՛ղպեր ջան,— ասում ա,— ո՞տով ես էկե, թե ձիով։

— Ձիով եմ էկե,— ասում ա։

Քիրը էս որ լսում ա, ալբիալը դուս ա գալի դուռը, տենում ձին ընդե կապած ա։ Վրա ա պրծնում ձիու մի ոտը կուլ տալի։

Եննա գալիս ա հարցնում.— Ա՛ղպեր ջան, իրեք ոննանի ձիո՞վ ես էկե։

— Հա՛,— ասում ա,— իրեք ոննանի ձիով եմ էկե։

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա ուտում, գալի հարցնում.— Ա՛ղպեր ջան, էրկու ոննանի ձիո՞վ ես էկե։

— Հա՛,— ասում ա,— էրկու ոննանի ձիով եմ էկե։

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա ուտում, գալի հարցնում.— Ա՛ղպեր ջան, մի ոննանի ձիո՞վ ես էկե։

— Հա՛,— ասում ա,— մի ոննանի ձիով եմ էկե։

Քիրը դուս ա գալի ձիու մի ոտն էլ ա կուլ տալի, գալի հարցնում.— Ա՛ղպեր ջան, քու ձին ո՞ններ չուներ։

— Հա՛,— ասում ա,— չուներ, փորսող ա էկե։

Քիրը էս խոսքի վրեն էթում ա ձին սաղ ուտում, պրծնում, եննա գալիս ա հարցնում.— Աղպեր ջան, փիադա՞ ես էկե։

— Հա՛,— ասում ա,— փիադա եմ էկե։

— Ա՛ղպեր ջան, բա՛ս որ ըտենց ա, կաց էթամ ձու բերեմ, ձվաձեղ անեմ, կե՛։

Քիրը թողում ա դուս գալի։ Էդ աղջիկը քոմմըքին կերել էր, մե-

նակ թողե մի դարբին, որ եր ուզենա՝ էթա նրա կուշտը, ատամները սրիլ տա։ Սա որ ոտը դուս ա դնում թե չէ, աղպերը վեր ա կենում, փախնում. գլխի ա ընկնում, որ պտի գա իրան էլ ուտի։ Մի քիչ մնում ա, քիրը գալիս ա տենում աղպեր չկա։ Դե՛ս աղպեր, դե՛ն աղպեր, մանե ա գալի՝ չի գտնում. դուս ա գալի ընկնում նրա քամակիցը։ Աղպերը վազում ա, քիրը սրա ննուցը։ Աղպերը գալիս ա, գալի, հասնում ա էն սարի գլուխը, որդե մի ջուխտ մում էր վառե. տենում ա էն մմերը դառել են, ասսու հրամանով, էրկու հաստ բարդու ծառ, տենում ա քիչ ա մնում քիրը նրան հասնի, ալբիալը նիլնում ա մի բարդու գլուխը։ Քիրը գալիս ա հասնում աղպորը. տենում ա աղպերը նի ա էլե բարդու գլուխը, բերում ա էդ բարդու քոքը կոծում ա, որ վե քցի. կոծում ա, կոծում ա, էնքամ կոծում ա, որ բարդին բարակում ա, քիչ ա մնում վեր ընկնի։ Տղեն էս որ տենում ա, իրան քցում ա էն մի բարդու գլուխը։ Քիրը գալիս ա էդ բարդու քոքն էլ ա կոծում։

Տղեն տենում ա, որ քիչ ա մնում էդ բարդին էլ վե քցի՝ ձեն ա տալի.— Հե՛յ գիդի իմ Ա՛սլան-Ղա՛փլան, ո՞րդի եք՝ հասե՛ք, ընե՛նց հուպ տվեք, ընե՛նց կուլ տվեք, որ մի պուտ արին կաթա։

Ձեն ա տալի թե չէ, տենում ա հրենիկ գիդիջրղ Ասլան-Ղափլանը էկան։ Գալու բաշտան վրա են պրծնում էդ աղջկանը ընենց հուպ տալի, ընենց կուլ տալի, որ մենակ մի պուտ արին ա կաթում։

Կաթալու բաշտան էդ մի պուտ արինը ասսու հրամանով լիզու էլավ, խոսաց.— Ա՛ղպեր,— ասեց,— ինձ վե կալ կշտիդ պահա, մի նեղ տեղ քեզ պետքը կգամ։

Աղպերը մի պուտ արինը վե կալավ, դրեց քթակի ծալը, Ասլան-Ղափլանի հեննա ընկավ ճամփա։

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, ճամփին մի չորան ռաստ էկավ։

— Բա՛ր՛աջողում, ա՛ղպեր,— ասեց չորանը,— էդ ո՞ւր ես էթում։

— Բարո՛վ, ասսու հա՛ղար բարին,— ասեց տղեն,— էթում եմ մեր երկիրը։

— Արի մի բանի վրեն մարջ դանք,— ասեց,— դտար՝ էս սուրու ոչխարը քեզ, չգտար՝ էդ Ասլան-Ղափլանը ինձ։ Ղաբո՞ւլ ես։

— Ղա՛բուլ եմ,— ասեց,— ա՛րի մարջ գանք։

— Էս շրվու փետը ընչի՞ ա,— հարցրեց չորանը։

Տղեն միտք արեց, միտք արեց, միտք արեց, շատ գլխին զոռ տվեց՝ չգտավ։

Էն պուտ արինը քթակի ծալիցը ձեն տվեց.— Ճրոը-ճա՜պկի, ճրոը-ճա՜պկի, ճրոը-ճա՜պկի։

— Ա՛ղպեր, գտար,— ասեց չոբանը,— էս սուրու ոչխարը մորդ կաթի նման քեզ հալալ ա, տա՛ր։

Տղեն էդ սուրու ոչխարը աղաք արից, քշեց։ Էկավ, էկավ, հասավ էն սարը։ Սարը ճղվեց, բաց էլավ, տղեն ոչխարը քշեց, արեց նեքսև։ Էն մարդ ու կնիկը սրան որ տեհան, ուրախացան, աշխարով մին էլան։ Նո՛ր տղեն նստեց ըստե մին-մին նաղլ արեց իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Ինչ քե՜ֆ, ինչ ուրախությո՜ւն, որ էլ հա՛լ ու հեսաբ չկար։

Նրանք հասան իրա՛նց մուրաղին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրաղին։



32· ՕՁԻ ՀԵՓԻԱԹԸ

Ժամանակով մի ուշադար մարդ կար, չորս-հինգ տղա ուներ. ուրադի մանդր, խմորակեր, ինքն էլ քյասիբ, ողորմելի. աշխատում էր, աշխատում էր, էլի սո՛ված, սո՛ված։

Մի իրիկուն նստեց կնկա մոտը, ասեց.— Ա՛յ կնիկ, ես էգուց պտի էթամ ղարրություն՝ աշխատելու։

— Էթում ես՝ գնա՛, ըստեղ մնում ես ի՞նչ օգուտ։

Տղեն առավոտը քնատեղիցը վեր կացավ, հինգ օր գնաց, հասավ մի քաղաք։ Էդ քաղաքի միջին ման էր գալի, տեհավ մի կնիկ բալկոնումը կաննած էր, եըոր մոտացավ, էդ կնիկը ձեն տվեց, ասեց.— Ա՛յ տղա, վի՛րև արի, վի՛րև արի։

Տղեն շատ ուրախացավ, ասեց.— Լա՛վ ա, հարուստ կնիկ ա, գործի կդնի։

Գնաց բանձրացավ բալկոնը, կնիկն ասեց.— Ա՛րի նեքսև։

Տղեն ասեց.— Գո՞րծ կա, ասա անեմ, գամ նեքսև ի՞նչ անեմ։

— Հլա ա՛րի նեքսև, եդով։

Տղեն ամոթու մտավ նեքսև, կուչ էկավ, կաննեց։

Ասեց.— Խի՞ ես կաննել, ա՛րի նստի։

Կռնիցը բռնեց, նստացրեց։ Սկսեց հացի պատրաստություն անելը։ Եըոր հացը բերեց, իրար հետ նստեցին, կերան։

Հացը ուտելուց եդը տղեն ասեց.— Խանո՛մ, դե ի՛նչ անելու եմ, ասա՛, վե կենամ, անեմ։

Ասեց.— Նստի՛, խոսանք հլա։

Երբոր նստեցին, աղջիկն ասեց.— Ա՛յ տղա, ինձ կառնե՞ս։

Տղի սարսափը բռնեց, ասեց.— Խանո՛ւմ, էդ ի՞նչ ես ասում։

Վե կացավ որ կաննի, փեշը բռնեց.— Խի՞ ես վե կենում,— ասեց։

Ասեց.— Խանո՛ւմ, ես մի քյասիբ մարդ, էս տների տիրոնչը ես ո՞նց առնեմ։

Ասեց.— Բա՛ն չկա, ես քեզ կառնեմ։

Տղեն ասեց.— Չէ՛, չե՛մ առնի, ես երկուղ եմ անում քեզանից։

Ասեց.— Խի՞ ես երկուղ անում, ինձ չես հավանո՞ւմ։

Ասեց.— Հավանում եմ, համա էդ սիրունությունի, էդ հարըստությունի տեր աղջիկը ո՞նց լայաղ կանի, ինձ կառնի։

Վե կացավ, գնաց։

— Ա՛յ տղա, ո՞ւր ես էթում, ո՞ւր ես էթում։

Տղեն անկաջ չարեց, վեր էկավ գնաց։ Գնաց մինչև իրիկուն ման էկավ, իրիկունը գնաց խանը պառկեց, տեսավ լուն մի դհիցը, ոչիլը մի դհիցը, մինչանք լիս քունը չտարավ։

Ասեց. «Ափսո՜ս, նրան պտի առած ըլնեի, համի փափուկ դոշակի վրա պառկած կըլնեի։— Ասեց.— Առավոտը վե կենամ, էթամ էլի էն քուչեն, երթոր կանչեց, կէթամ, կառնեմ»։

Առավոտը ուրշպարը վե կացավ, էլի ման գալով էկավ հասավ էդ բալկոնի տակը։ Էդ աղջիկը բալկոնումը կաննած էր, դրան տենալուն քիմի, կանչեց.— Ա՛րի վիրև, ա՛րի վիրև,— ասեց։

Էդ տղեն գնաց վիրև։ Երթոր գնաց վիրև, էլի ամանչեց, ամոթու կաննեց բալկոնումը, նեքսև չմտավ։ Աղջիկը կռնիցը բռնեց, տարավ նեքսև, էլի նստացրեց, բերեց հաց դրեց, նստեցին կերան։

Կերան, խմեցին, աղջիկն ասեց.— Ա՛յ տղա, ա՛րի ինձ առ, չե՛ս փոշմանի։

Ասեց.— Ո՞նց անեմ, էս տների տերը, էս կարողության տերը կարող ա մի ասկական ունենա, գա ինձ սըպանի։

Ասեց.—Ո՛չ ասկական, ո՛չ բարեկամ, ոչ մի բան չունեմ ես, ա՛ռ, չես փոշմանի։ Սավայի էս տները, տասը հատ էլ դուքան ունեմ բազարումը, մեկումը դու նստի առըտուր արա, իննը տու քրեհով։

— Ո՛ր ասում ես, կառնեմ,— ասեց տղեն։

Աղջիկն ուրախացավ, վե կացավ, ջուր դրեց, տաքացրեց, դրեց դրան թեշտը, լեղացրեց, բերեց մի թամուզ ձեռք շոր հագցրեց, ասեց.— Դե գնա՛, տերտերին կանչա՛, թող գա մեզ պսակի։

Տղեն վե կացավ վազեց, տերտերին վե կալավ, բերեց։ Էկավ տերտերը պսակեց, Թողաց գնաց։

Աղջիկն ասեց.— Համի մենք էլանք մարդ ու կնիկ, մենակ մի բան եմ խնդրվում. ես միս չեմ ուտում, միս մի բերի տուն, սիրտդ կուզի՝ բազարումը ա՛ռ, կե՛։

Տղեն ասեց.— Շա՛տ լավ, չե՛ս ուտի՝ չե՛մ բերի։

Վե կացան, իրար ճիտ արին ու քնեցին։ Քե՞ֆը դրանց քեֆն էր։

Ըտենց ապրեցին իրեք տարի։

Իրեք տարուց եղը դուքանումը նստած վախտը խաբարն էկավ, թե Ստամբուլա յանիցը մի մենծ բազրկյան ա էկե, բերածը քոմմա խաս ապրանք աւ։ Վե կացավ, դուքանի դուռը շինեց, գնաց էդ բազրկյանի մոտը, որ տենա, թե ի՛նչ ապրանք ա բերե։

Բարև տվեց, նստեց, ասեց.— Ի՞նչ թանկագին բան ես բերե, ուզում եմ կնկանս համար առնեմ։

Ասեց.— Մի շատ լավ մարգարտե շապիկ կա, տա՛ր Թող տենա, թե վրին կըլնի, կհավանի՝ վե կա՛լ, թե չէ՝ իմ մալը եդ բե՛։

Վե կալավ, տարավ։ Տարավ կնկանն ասեց.— Մի լավ բան եմ բերե։

Ասեց.— Ի՞նչ ես բերե։

Ասեց.— Մարգարտե շապիկ, քու սիրուն ջանին լայաղ։

Ծրոր տեհավ, ասեց.— Էս ես չեմ հագնի։

Ասեց.—Խի՞, թանկ ա դրա համար, ես էլ քեզ ղուրբա՞ն, մեր կարողությո՞ւնն էլ։

— Չէ՛,— ասեց,— ա՛յ մարդ չե՛մ հագնի։

— Չէ՛, պտի հագնես։

— Որ հագնեմ, կմեռնեմ, ուզում ես մեռնեմ՝ հագնե՛մ։

— Էդ ի՞նչ ես ասում, ա՛յ կնիկ, կտանեմ կտամ տիրոնչը։

Վե կացավ, տարավ։ Բազրկյանն ասեց.— Խի՞ բերեցիր, չհավանե՞ց, թե նեղ էկավ։

— Չէ՛,— ասեց,— չի ուզում,— ասում ա,— որ հագնեմ՝ կըմեռնեմ։

— Ո՛ր ըտենց ա, քու կնիկը օձ ա։

— Ի՞նչ ես ասում, ա՛յ մարդ, կնիկն էլ օձ կըլնի՞։

— Միամի՞տ մարդ, էդ շապիկը ո՛ր չի հագնում, քու կնիկը օձ ա։ Քու կնիկը միս ո՞ւտում ա։

Ասեց.— Չէ՛։

Ասեց.— Օձ ա, ո՛ր օձ։ Ես ստամբոլցի եմ, ես երկինք-գետինք քննել եմ, ես չեմ գիտում օձ ա՞։ Քեզ վեց տարի ժամանակ ա դրել, իրեքը անց ա կացե, մնացել ա իրեքը, հըլա երկուղ մի՛ անի, իրեք տարուց եղը նոր կսըպանի քեզ։ Ըտենց շատերին ա արել, սըպանել, էդ կարողությունը հավաքել ա։

Ասեց.— Վիրև աստված, ներքև դու, պտի ինձ ազատես էդ անիրավիցը։

— Երկուղ մի՛ անի, կազատեմ։ Էս իրեք տարի ա ըսկի միս տարե՞լ ես տուն։

— Ջէ՛։

— Ես չեմ գիդո՞ւմ՝ օձ ա քու կնիկը, միս չի ուտում։—Ասեց.— Իրիկունը իրան բան չասես, առավոտը կգաս ոչխարի մսի էն լավ տեղիցը կառնես, դուքանումը կպահես մինչանք իրիկուն, իրիկունը մախսուս մքնով կէթաս, կասես. «Ա՛յ կնիկ, ըսօր մուշտարին շատ-շատ էր, մաջալ չարի էփիլ տայի, առավոտվանից սուված եմ, վե կա՛ց, էս միսը խորոված արա՝ ուտենք»։ Կնիկդ խորոված կանի, դու զոռա՝ Թող մի Թիքա ուտի, երոր կերավ, քնելու վախտը գնա դու դրսև, արի նեքսև. Նա ո՛ր կէթա դուս՝ ինչքան տանը ջուր կա՝ Թափա՛, մի փարչի միչի ջուր ածա, կախ տու, դու գնա քու տեղը մտի, քնի. երկուղ մի՛ անի. զշերվա մի վախտը երոր ծարավացավ, էն ուղղակի կդառնա օձ. էն ժամանակը քու ջանը կսկսի սառիլը, դու երկուղ մի՛ անի, քեզ վնաս չի տա, Թող վե կենա, էթա՝ կէթա, ջուր կխմի, կգա եդ, էլի կդառնա կնիկ, քու ծոցին կպառկի։ Երոր լիսը բացվի, արի իմ մոտը։

Էդ տղեն իրիկունը կնկանը բան չասեց։ Էգսի առավոտը էն գլխեն գնաց ոչխարի միսը առավ, բերեց դուքանումը պահեց, իրիկունը էկավ տուն, կնկանն ասեց.— Ըսօր մուշտարիս շատ-շատ էր, միսն առա, մաջալ չէլավ էփիլ տայի, մնաց. վե կա՛ց, խորոված արա՛, ուտենք։

Կնիկը վե կացավ, օջաղը վառեց, խորովածը արեց, դրեց մարդի առաջը, գնաց ղրաղ նստեց։

Ասեց.— Ա՛յ կնիկ, ես ուտեմ՝ բա դու ըտեղ նստե՞ս, ախար մեղք ա. սրա Ֆոտը սաղ քաղաքը բռնել ա, դու մի կտոր էլ ա չես ուտում։

Ասեց։— Քեզ անուշ ըլնի՝ կե՛ր։

Ասեց.— Ա՛յ կնիկ, մի Թիքա էլ ա կե՛ր։

Կնիկն ամոթու մի թիքա կերավ։

Հացը վե կալան, տեղերը քցեցին. մարդը գնաց դրսև, էկավ, կնիկը գնաց դրսև. մարդը տան միջի ջրերը քոմմա թափեց, մի փարչ ջուր լցրեց, պատիցը կախ արեց, էկավ պառկեց, քնեց։ Կնիկն էլ դրսևից էկավ՝ քնեց։ Կես գշերին մարդը տեհավ, որ ջանը սառեց, սառելուն քիմի զարթնեց, տեհավ կնիկը օձ դառավ, տեղաշորիցը դուս էկավ, օթախի մեջը ֆշշալեն դե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ, տեհավ փարչը կախ. տված ա՝ բանձրացավ խմեց, էլի վեր էկավ, էկավ տեղաշորի մեջ մտավ, էլավ էլի կնիկ։

Առավոտը էդ մարդը վե կացավ, դո՛ւզ գնաց էն բաղրկյանի մոտը, ասեց.— Ո՛նց որ դու ասել իր, ընենց էլ էլավ։

Բաղրկյանն ասեց.— Ես չեմ գիտո՛ւմ, որ քու կնիկը օձ ա, ես ո՛վ եմ, ա՛յ հա՛յ։

Տղեն ասեց.— Վիրև աստված, ներքև դու, ինձ ազատա էդ անիրավի ձեռիցը։

Ասեց.— Սրկուղ մի՛ անի, կազատեմ։ Էս իրեք տարվա միջին քեզ համար ըսկի գաթա թխե՛լ ա։

— Չէ՛։

— Էս իրիկուն, երոր կէթաս, կասես. «Ա՛յ կնիկ, էս ա իրեք տարի ա քեզ առել եմ, մեկ օրից մեկ օր չասեցիր՝ մի գաթա թխեմ, մարդս ուտի. սիրտս գաթա ա ուզում, վե կա՛ց, էրկու հատ էլ ա թխա»։ Երոր Թունդիրը կվառի, կսկսի էփիլը, ոտիցը բռնա, քցա Թունդիրը, խուփը դի՛ բերնին։ Կես սհաթից եղը խուփը վե կալ, կըլնի էրկու հատ կուտ; մինը բե ի՛նձ, մինը քե՛զ։

Էդ տղեն իրիկունը գնաց տուն, ասեց.— Ա՛յ կնիկ, սիրտս մի գաթա ա ուզում, էս ա իրեք տարի ա, գաթա չեմ կերե, վե կա՛ց մի էրկու հատ էլ ա գաթա թխա՛, ուտենք։

— Շա՛տ լավ,— ասեց,— ա՛յ մարդ, ե՞րբ ուզեցիր, որ ես չըթխեցի։

Կնիկը առավոտը վե կացավ, գաթեն ունեցավ, Թունդիրը վառեց, բադիով ջուրը դրեց կողքը, ձեռը տվեց ջրին, տվեց գաթի քամակը, կռացավ, տվեց Թունդրի կողին, երկրորդը տալու վախտը, մարդը դրա ոններից բանձրացրեց՝ քցեց Թունդիրը, խուփն էլ դրեց բերնին։ Մի կես սհաթ համբերեց։ Կես սհաթից եղը խուփը վե կալավ, տեհավ բան չկա միջին, էրկու հատ կուտ ա։ Կռացավ մեկը հանեց, ձեռները էրվեց՝ կուտը շըպռտեց, էլավ էրկու կտոր-

1646—26

կոացավ էն մեկը հանդարտ հանեց, հանեց դրեց կողքը։ Տեհավ ձեռները կեղտոտել ա, էն բադիի ջրի միջին ձեռները լվաց, տեհավ որ բադիի ջուրը դառավ ոսկի, բադիեն էլ դառավ ոսկի, եղ դառավ թամաշ արեց, որ կըտերն էլ են դառել ոսկի։ Կըտի կեսը վե կալավ, տարավ բազրկյանին։

Բազրկյանն ասեց.— Ախար դու մի հատ սաղը պտի բերեիր։

Ասեց.— Ներողությո՛ւն, կեսն եմ բերե։

Ասեց.— Էս էլ բո՛լ ա։

Տղեն բազրկյանից շնորհակալություն արեց, գնաց իրանց տունը. մտածեց, ասեց.— Էթամ իմ կնկանը, էրեխեքանցս վեր ունեմ, բերեմ ըստեղ, մարդավարի ապրենք։

Առավոտը գնաց մի ձի առավ, մի ձեռք ասպար առավ, տունն ու դուքանը շինեց, ձին նիլլավ՝ գնաց։ Գնաց, մի իրիկուն մութն ընկավ, հասավ իրա տունը։ Դուռը ծեծեց, կնիկը դուս էկավ, տեհավ, որ մի ձիավոր, ասպարի միջին կորած, դռանը կաննած ա, վախեցավ։

Ասեց.— Ա՛յ կնիկ, դուռը բաց արա՛։

Ասեց.— Դու ո՞վ ես։

Ասեց.— Ջե՞ս ճանանչում, ես եմ էլի, չե՞ս ճանանչում։

Ասեց.— Ջէ՛, ո՞վ ես։

Ասեց.— Քո՛ւ մարդն եմ,— ասեց ու ձիուցը վեր էկավ, մտավ նեքսև։

Կնիկը տեհավ դրուստ իրա մարդն ա, ասեց.— Բարո՛վ ես էկե, էս ո՞ւր մնացիր։

Ասեց.— Եղացա, համա գո՛լ եմ աշխատե, էկել եմ քեզ տանեմ, էրեխեքանցը տանեմ։

Ասեց.— Ա՛յ մարդ, մենք ընտեղ չենք կարա ապրի, քաղաք ա, ծախսներս շատ կըլնի, ըստեղ գեղ տեղ ա, ո՛նց ուզենք, ընե՛նց կկառավարվենք։

Ասեց.— Ա՛յ կնիկ, մի՛ վախի, ընքան աշխատել եմ, որ քու օխտը պորտն էլ ուտի՝ չի հատնի։

Առավոտը վե կացան, էլած-չէլածը բաշխեցին քյասիբ հարևաններին, իրանք գնացին իրանց թազա տունն ու տեղը։

Նրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Երկնքից իրեք հատ խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաջ դնողին։



33. ԻՐԵՔ ԱՂՊՐՏԻՆՔ

Կըլնի, չիլնի մի թագավոր։ Էս թագավորի երկրումը մի գիժ կնիկ կար՝ ուներ իրեք տղա. նրանցից մինը ոըշպար էր, մինը՝ կատեպան, մեկնըը՝ ջուլհակ։ Մի տարի էս թագավորի երկիրը սով ընկավ. սո՛վ, էն թավուր սո՛վ, որ իմ միս կտրողին ռաստ չգա. մի կտոր հացի համար հազար գլուխ ին ջարդում, ըն էլ ձեռ չէր ընկնում։ Մի օր, չեմ գիտա ոնց էլավ, թագավորի ուղտը կորավ։ Էս գիժ կնկա տղեքը տեհան թե չէ՝ բռնեցին, տարան տուն։ Գիտային, որ իրանց մերը գիժ ա, կէթա թագավորին խաբար կտա՝ բերին նրան հարսի շորեր հագցրին, լաշակ քցեցին էրեսին, տարան տան պուճախումը կաննացրին։

— Նա՛նի,— ասեցին,— քեզ պտի թագադան պսակենք. էս ուղտն էլ քու հարսանքի ուղտն ա, մորթում ննք, որ հարսանքավորի համար կերակուր էփենք։

Իրեք աղպրտինքը ուղտը մորթեցին, քերթեցին. միսը ղավուրմա արին, լցրին աքաշները, տարան թաքուն տեղ պահեցին, որ չգտնեն՝ բալի ման ին գալի, թե չէ նրանք տնով, տեղով Սիբիրական ին։ Ննա ամեն մարդ գնաց իրա բանին։

Թագավորը իրա նոքարներին ղրկեց, որ էթան կորած ուղտին ման գան։ Նոքարները շատ դե՛ս ընկան, դե՛ն ընկան՝ չգտան։ Վերջը էկան, որ էս գիժ կնկա տղեքանցը հարցնեն։ Աղաք ոըշպար աղպոր կուշտը գնացին, որ հանդումը վար ու ցանք էր անում։

Թագավորի նոքարները հարցրին.— Ա՛ղպեր, ըստերանք ուղտ հո չե՞ս տեհե։

— Ձե՞ք տենում, որ վար եմ անում։— Սա իրան ընենց էր շանց տալի, սաքի թե գիժ ա։

— Մենք քեզ հարցնում ենք՝ ուղտ չես տեհե, դու ասում ես՝ վար եմ անում։ Էդ հո մենք էլ ենք տենում. թե բան գիտաս՝ ասա՛։

— Ջէ՛, ընենց օր ա ըլնում, որ մի՛ օրավար ենք վարում, ընենց օր ա ըլնում՝ էրկու օրավար։

— Ո՛ւղտ ենք ասում, ո՛ւղտ՝ չորս ոննանի, էրկու անկաշանի, շլինքը ծուռը։

— Էս հլա վարում ենք. վարից եղը պտի ցանենք, բնջարենք, վախտին ջրենք, որ մասիլը չչորանա։

Թագավորի նոքարները իրար մեջ ասեցին. «Ա՛ղպեր, սա գիժ ա, սրանից բան չենք հասկանա. էթանք է՛ն մեկել աղպոր կուշտը, քալի մի դրուստ ջուղար տա»։

Գնացին կատեպան աղպոր կուշտը, տեհան պոպոք ա թափ տալի. հարցրին.— Ա՛ղպեր, թագավորի ուղտը կորել ա, բալքի տեհա՞ծ ըլնես։

— Քո՞ւ եք, ինչ ա. չե՞ք տենում, որ պոպոք եմ թափ տալի։— Սա էլ իրան ընենց շանց տվեց, սաքի թե գիժ ա։

— Թագավորի ո՛ւղտն ենք ասում, թագավորի ո՛ւղտը. տեհել ես, ասա՝ տեհել եմ, թե չէ՝ պրծավ գնաց։

— Ընենց տարի ա ըլնում, որ պոպոքի հազարը [1] մի մանեթով ենք ծախում. ընենց տարի էլ ա ըլնում, որ հազարը [2] էրկու մանեթով ա էթում. տա՛րին գիտաս։

— Ո՛ւղտ ենք ասում, ո՛ւղտ. քա՞ւ ես, ինչ ա։

— Էս հլա դեռ պուճուր ծառն ա. մենծ ծառը հիքու գլխին ա. էն եննա պտի թափ տանք։

Նոքարները իրանց-իրանց միտք արին, թե սա նրանից դհա գիժ ա. էթան սրանց տունը, մեկել աղպորը հարցնեն. բալքի նա՛ թագավորի ուղտիցը խաբարութիւն ունենա։

Գնացին ջուլհակ աղպոր կուշտը, հարցրին.—Թագավորի ուղտը կորել ա, ա՛ղպեր, հո չե՞ս տեհե, քեզ մուշտուլուղ կտանք։

— Աչքներդ լա՛վ բաց արեք, լա՛վ. չե՞ք տենում ինչ ա, որ

---

[1], [2] Տպագիր տեքստում՝ ճարիր. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

կտավ եմ գործում։— Սա էլ մեկել աղպորտանց պես՝ իրան գիժ շանց տվեց։

— Քեզ ո՛ւղտ ենք հարցնում, դու ասում ես՝ ֆլան չի, բեհման ա։

— Հա՛, ընենց օր ա ըլնում՝ մի թուփ եմ գործում. ընենց օր ա ըլնում՝ կես թուփ էլ ա չեմ կարում գործի. վա՛խտը գիտա։

— Գիժ հո չե՞ս, ա՛յ աղպեր. մենք քեզ թագավորի ուղտն ենք հարցնում՝ դու կտավիդ վրա ես խոսում։

— Էժան վախտը կտավի թուփը վեց աբասի ա, թանկ վախտը՝ ութ աբասի, յա էրկու մանեթ։

Թագավորի նոքարները ասեցին.— Ա՛ղպեր, սա էն էրկու աղպորից էլ գիժ ա էրևում. էթա՛նք սրանց մորը հարցնենք, բալքի նա՛ մեզ դրուստ ջուղաբ տա։

Գնացին սրանց գիժ մորը հարցրին, թե թագավորի ուղտը հո չի՞ տևհե։— Ո՛նց չէ,— ասեց,— տեհել եմ. իմ տղեքը բերին մորթեցին, ղավուրմա արին՝ հրենիկ աքաշներում պահել են։

— Էդ ե՞ր։

— Եր որ ես թագա հարս ի, ինձ նոր պտի պսակեին։

Թագավորի նոքարները տեհան, որ էս կնիկը նրանցից գիժ ա՝ թողին գնացին թագավորին իմաց տվին, թե մեռան մանգալոն ուղտը չկարացին գտնի։





34· ԱՂԴԻԼԱԿ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի մարդ, մի կնիկ։ Սրանք ունենում են մի մինուճար տղա։ Էդ տղի անումը Աղդիլակ ա ըլնում։ Իրանք էլ շատ դառն-աղքատ, քյասիբ, անճար են ըլնում. մի եզն են ունենում, մըն էլ մի էշ. դե որշպար մարդիկ ին, մի արտ էլ ունեին, վարում ին, ցանում, տան հացն էլ ընդիան էր գալի, սրանով գլուխ ին պահում։ Հնձի վախտը էս մարդը էթում էր խալխի համար փոխարա բանում, որ նրանք էլ իրա արտը հնձելիս գային իրան օգտին։

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հունձն ընկնում ա. էս մարդը էթում ա մի քանի օր խալխի հունձն ա անում. վերջը սրեն գալիս ա սրա արտին։ Թուփ են ըլնում մի տասը-տասնըհինգ հոգի, մննում են նրա արտը, որ հնձեն։ Գալիս ա հացի վախտը, էդ մարդը Աղդիլակին ղրկում ա տուն, որ հաց բերի հնձվորի համար։

Աղդիլակը վազեվազ էթում ա տուն, մորն ասում.— Նա՛նի, ափին ասում էր. «Մեր եզը մորթե՛ք, խորոված արեք, հնձվորին հաց բերե՛ք»։

— Ա՛յ որդի,— ասում ա մերը,— գժվե՞լ ես, ցնդե՞լ ես, ինչ ա. մենք ենք՝ էս մի եզը, ըն էլ մորթե՞նք։ Ես,— ասում ա,— հընձվորի հացը հազրել եմ, հրես վե՛ կալ, տա՛ր. էլ ե՞զը խի ես մորթում։

— Չէ՛ որ չէ,— ասում ա Աղդիլակը,— պտի մորթեմ, որ պտի մորթեմ։

Մերը ինչքամ աղաչանք-պաղատանք ա անում, կռվում ա, բշտում ա, ճար, իլլաճ չիլնում։ Տղեն էթում ա եզը վե քցում, դանակը քաշում մորթում, քերթում, կաշին ջոկ ծալում՝ վե դնում, միսը մանդր կոտորում, եննա էթում ա շշերը բերում, շարում, տանում թունդիրը կախ անում, որ խորովի՝ էն սհաթը հերը գոռգոռալեն, անծելոն տուն ա մննում։

— Ո՛տդ կոտրի, ո՛տդ,— ասում ա հերը,— ես քեզ հացի ղրկեցի, էսքամ վախտ ի՞նչ էլար. էն խեղճ հնձվորները սոված կոտորվեցին քու ճամփեն պահելոն։

Տղեն էդ որ լսում ա, ձեռի շամփրները քցում ա թունդիրը, մաշեն թունդրի կշտին ա ըլնում, մաշովը թունդրիցը մի կրակ ա վեր ունում ու յա՛լլա դպա արտն ա կրնկում։

Հենց որ հասնում ա արտը, հնձվորներին ձեն ա տալի.— Դո՛ւս էկեք,— ասում ա,— որ արտը կրակում եմ. հրես թագավորը իրա ղոշնովը գալիս ա, ձիանիքը պտի անեն մեր արտը ուտացնեն։

— Ա՛յ ջանըմ, ա՛յ գյողըմ,— ասում են հնձվորները,— շատ էլ թագավորը պտի ձիանիքը անի ձեր արտը, արածացնի, հո սաղ արտը չեն ուտի, խի՞ ես կրակ տալի, բա քու հերնըմները մեղքը չե՞ն։

— Չէ՛ որ չէ,— ասում ա,— պտի կրակ տամ, որ պտի կրակ տամ։

Ասում ա ու կրակը քցում արտի մեջը։ Արտը ալբիալը վոթվըռթում ա, կպնում։ Տղեն էլ էթում ա, արտի գլխին էշը կապած ա ըլնում, նիլնում ա ու յա՛լլա։

Սրան թողանք ըստե, գանք խաբար տանք սրա հորիցը։

Խեղճ հերը որ տենում ա՝ տղեն եզը մորթել ա, մնում ա գլխի վրեն մոլորած։ Ի՛նչ աներ, բանը բանից անց էր կացե. հնձվորի հացը վեր ա ունում, որ ինքը տանի։ Հենց դուս ա գալի քուչեն, հնձվորները գալիս են աղաքը։

— Հը՛, խե՞ր ըլնի,— հարցնում ա,— էս վախտ խի՞ եք էկե։

Հնձվորները ասում են.— Ըսե՛նց, ըսե՛նց բան. տղեդ էկավ արտը կրակ տվեց, թե թագավորը իրա ղոշնովը գալիս ա, պտի ձիանիքը անեն արտը, արածացնեն։ Էնքամ ասեցինք. «Ա՛յ ջանըմ, ա՛յ գյողըմ, մի՛ անի, հերդ մեղք ա», չէլավ, անկաչ չարեց։ Սաղ արտը

կրակ տվեց, ինքն էլ գլովխն առավ, կորավ։ Մընք էլ մնայինք, ի՛նչ անեինք, վե կացանք էկանք։

— Ա՛յ գետինը մննի, ա՛յ ոչ ու փուչ ըլնի, ա՛յ գրողը տանի նրան,— ասեց հերը բարկացած։— է՛կեք,— ասեց,— էկե՛ք հաց կերե՛ք։

Հնձվորները գալիս են տուն, նստում, հաց ուտում։ Հաց են ուտում, պրծնում, վեր են կենում, էթում իրանց տները։

Սրանց թողանք ըստե, գանք խաբար տանք Աղդիլակիցը։

Աղդիլակն ա՝ էթում ա, էթում ա, հասնում ա մի գեղ, ըտե մութը գետինը կոխում ա. մննում ա էդ գեղը, մի քուչա բռնում ա, էթում։ էթում ա, էթում, մի բաց դուռ ա տեսնում, էդ դուռը ծեծում ա։ Մի ջահել, սիրուն կնիկ ընդիան դուս ա գալի։

— Հա՛րսի, ղո՛ւրբան,— ասում ա Աղդիլակը,—ի՞նչ կըլնի տեղ տաս, էս գշեր սըթար անեմ, էն բաշտեն վե կկենամ, կէթամ իմ բանին։

— Չէ՛,— ասում ա հարսը,— չիլնի. ես ջահել օղլուշաղ, մարդս էլ գնացել ա առուտուրի, քեզ ո՛նց թողամ գաս մեր տանը քնես. խա՛լխն ինչ կասեն։

Ասում ա ու դուռը շըրըխկալեն քամակիցը հետ ա անում, թողում էթում իրա բանին։ Աղդիլակը տեսնում ա կնիկը գնաց մտավ տուն, ինքն էլ եննուցը դուռը բաց ա անում, ուսուլով մննում հայաթը։ Մննում ա, տեսնում չարդախումը թունդիրը վառած ա, թունդրի կշտին էլ մի մննծ աթարի դեզ կա։ Ուսուլով էշը քաշում ա նեքսև, դիզի ետևը կապում, ինքն էլ մննում ա դիզի բունը, տափ կենում։

Էդ կնիկն ա՝ գալիս ա թունդրի վրեն լավ-լավ կիրակրներ ա էփում, ղազ ա տապակում, հալվա ա անում, տանում, դռանը մի փետե ղութի ա ըլնում, դնում էդ ղութու մեջը, պահում։ Կիրակրըները էփում ա պրծնում, եննա բերում ա մի մննծ պղինձ ջուր ա լցնում, տանում թունդրի բերնին ղափարթմիշ անում։ Մի քիչ անց ա կենում, տեսնում ա, ըհը՛, թը՛խկ, թը՛խկ՝ քուչի դուռը ծեծեցին։ Կնիկը ափալ-թափալ էթում ա դուռը բաց անում։

Աղդիլակը դիզի միջիցը վարավուրդ ա անում, տեսնում մի ջահել-ջիվան, սիրուն տղա հրեն կնկա հեննա մտավ նեքսև։ Դու մի ասի՝ էդ տղեն էդ կնկա սիրեկանն ա ըլնում։ Կնիկը տղին աղաք ա

անում, տանում տուն. նստում են, իրար հետևից քաղցր մասլահաթ են անում։ Հենց էդ մասլահաթի վախտը քույրի դուռը էլի ծեծում են. էդ կնիկը ալբիալը իմանում ա, որ իրա մարդն ա։ Ի՛նչ աներ, ի՛նչ չաներ, տղին որդե պահեր, որ մարդը բան չֆահմեր. բերում ա պարանը կապում դրա միջքիցը, կախ անում փորը, մի քար էլ դնում բերնին, նո՛ր էթում ա քույրի դուռը բաց անում։ Բաց ա անում, տենում՝ իրա մարդը։ Փաթթվում ա մարդի ճտովը, ուրախանում, աշխարով մին ըլնում։ Գալիս են տուն, մարդ ու կնիկ նստում են, իրար քեֆ հարցնում, իրար հալ հարցնում, ասում, խոսում, ծիծաղում, խնդում, ջան ասում, ջան լսում։

— Ա՛յ կնիկ,— հարցնում ա մարդը,— բա էսքան վախտ ո՞նց իր յոլա էթում. ի՞նչ իր ուտում, կիրակուր, զադ ընկնո՞ւմ էր ձեռդ, թե չէ։

— Է՛հ, ա՛յ մարդ,— ասում ա,— ապրում ի, էլի, դե առանց քեզ իմ օրը ի՞նչ պտի ըլներ։ Օրը մի կտոր չոր հաց ի դնում աղաբրս, ըն էլ կուլ չէր էթում։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— ես սոված եմ,— հացից-մացից ի՞նչ կա տանը, բե՛ ուտենք, պառկենք քնենք. ես էլ ջարդված, բեզարած եմ։

Կնիկը էթում ա դաստախունը բերում քցում, մի էրկու հաց թրջում, մաշկում, էրկու էլ սոխ ա ճղում, բերում դնում մարդի աղաքը։ Էս որ տենում ա Աղդիլակը, սիրտը մրմռում, մխկտում ա. էն ահաթը էրեսը անում ա իշին, գտակը վեր ունում, պտտում. պտտելու բաշտան էշը զռում ա։ Աղդիլակը իշին իրա գտակովն էր զարի տալի. ընենց որ սարվել էր, հենց որ տերը գտակը ժաժ էր տալի, հենց իմանում էր՝ գարի ա բերում, ալբիալը զռում էր։

— Ա՛յ կնիկ,— հարցնում ա մարդը,— էս ի՞նչ էշի ձեն ա։

— Է՛հ, կրեմ դրա գլուխը. ժամեժամքի վախտն էր, մի տղա փշով էկավ, թե. «Ղարիբ եմ, մի տեղ տո՛ւ քնեմ», չտվեցի. հալբաթ իմ եննուցը թաքուն մտել ա հայաթը, էշն էլ բերե, ընդե կապե։

— Ա՛յ կնիկ, մեղքը չէ՛ր, խի՞ չէր տեղ տալի. գնա՛ կանչա գա, ղոնաղն ասսունն ա։

Կնիկն էթում ա, տղին կանչում, բերում։ Տղեն գալիս ա. «Բար՛իրիկոմս» ասում, ընդե նստում. էրեսն էլ իշի դիհն ա անում, որ եր ուզենա՝ զռացնի։ Նստում են հացի. Աղդիլակը էլի գտակը պտտում ա։ Էշը ալբիալը զռում ա։

— Ջո՛ւ,— ասում ա Աղդիլակը,— շատ բան ունեն պահած, դու պտի խաբար տա՛ս։

— Ի՞նչ ա, խի՞ ես բարկանում իշիդ վրեն,— հարցնում ա տանտերը։

— Բա ի՞նչ անեմ. էշս ասում ա. «Ղութու միջին հալվա կա, ղազ կա տապակած, խի՞ չեք բերում ուտում, խի՞ եք սոխ ու հաց ուտում»։

— Վա՛յ, քոռանամ ես,— ասում ա կնիկը,— ըսկի մտի՞ս էր, ուրախությունից գլուխս կորցրել եմ։

Էթում ա ղութին բաց անում, ի՛նչ կար չկար բերում, դնում մարդի աղաքը։

Խեղճ կնիկը ըստոնք ո՛ւմ համար էր պահե, ում ղսմաթ էլավ։

Հացը որ ուտում են, պրծնում, կնիկն ասում ա.— Քա՛, ջուր եմ դրե թունդրի վրեն. բերեմ գլուխդ, ոններդ լվանամ։

— Շա՛տ լավ կանես, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— ղաթի ջարդված, բեզարած եմ։

Կնիկն էթում ա տնքտնքալոն պղինձը բերում, ուզում ա ածի թեշտը, Աղդիլակը գտակը պտտում ա. պտտելու բաշտան էշը ալբիալը ղռում ա։

— Ջո՛ւ,— ասում ա Աղդիլակը,— ի՛նչ անում են՝ անեն, քու ի՞նչ բանն ա։

— Ի՞նչ ա, խի՞ ես բարկանում իշիդ վրեն,—հարցնում ա տանտերը։

— Բա ի՞նչ անեմ,— ասում ա Աղդիլակը,— էշս ասում ա. «էդ ջուրը դեղած ա, տա՛րեք ածեք ֆորը, թազադան ջուր դրեք տաքանա»։

— Ա՛յ ջանըմ, ա՛յ գյողըմ,— ասում ա կնիկը,— դեղածս ո՞րն ա, զադս որն ա. ե՛ս եմ իմ ձեռովը պղինձը թամուզ լվացե, իմ ձեռովը ջուրն ածե, տարե ղափարթմիշ արե։

— Ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— խի՞ ես հուջաթություն անում. բալի էդ էշը մի բան գիտա, որ ասում ա. տարե՛ք դեն ածեք է՛լի, դրանում ի՛նչ կա, որ խոսում ես։

Էդ կնիկը Աղդիլակի հեննա պղինձը վեր ա ունում, տանում տաք, եուման ջուրը շրռռալեն լցնում ֆորը՝ դո՞ւզ էն մարդի գլխին, որ ընդե տափ էր կացե։ Էդ խեղճ մարդը տեղն ու տեղը ալբիալը դիք ա չորանում։

— Ա՛յ Աղդիլակ աղպեր,— ասում ա կնիկը,— որ էս օյինը հաղացիր իմ գլուխը, դե էգուց թեզ վե կկացնեմ, օլուն դի իշիդ վրեն, տար գեղիցը դուս, մի ղրաղ տեղ ֆորա՛, որ սաղ աշխարքումը խաղկ ու խայտառակ չըլնենք։

— Ա՛չքիս վրեն,— ասում ա Աղդիլակը,— կտանեմ։

Հաց են ուտում, պրծնում, թեք են ընկնում, քնում։ Բիրադի քնում են, համա կնիկ՝ քունդ ըսկի կտա՞նի։ Որդիան կտաներ, մահապարտ էր էլե, մնացե։ Կես-գշերին կնիկը տենում ա, որ մարդը քնել ա, սուս ու փուս էթում ա Աղդիլակին բըռթում, վե կացնում։ Աղդիլակը վեր ա կենում, էշը դուս քաշում, փալանը դնում վրեն, եննա պարանը քաշում ա, խաշվաճ մարդին ֆորիցը հանում, դնում իշի վրեն, պարանով ղայիմ կապում։ «Ջո՛շ, հա չոշ, չո՛շ հա չոշ, չո՛շ հա չոշ», քշում ա էթում։

Էթում ա, էթում, շատն ու քիչն աստոճ գիտա, մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, աքլորականչին հասնում ա մի գեղ։ Էշը դուզ քշում ա դպա էդ գեղի կալերը։ Էթում ա մի կալում վե գալի, բհիրը վե տալի. իշի նոխտեն ղայիմ կապում բհրիցը, էթում մի խուրճ էլ ցորեն դողանում, բերում քցում իշի աղաքը, ինքն էլ կշտին թեք ընկնում, քնում։ Էն բաշտեն էդ կալի տերը վեր ա կենում, շորերը հագնում, էթում, որ կալին ակը տա. համա մթնաժեռ ա ըլնում, աչքը ղադ չի ջոկում, էթում ա՝ կպնում իշին, իշի վրիցը էն մեռելը գըրըմփալեն վեր ա ընկնում Աղդիլակի վրեն։ Աղդիլակը էն սհաթը վեր ա կենում տեղիցը, ի՛նչ տենում՝ մի մարդ կողքին շիվարած կաննած ա, մեռելն էլ էն դիհը վեր ընկած ա։

— Վա՛յ քու տունը չքանդվի, ա՛յ մարդ,— գոռում ա Աղդիլակը,— էս ի՛նչ օյին հանեցիր իմ գլուխը։— Ասում ա ու «Վա՛յ, ա՛փի ջան» գոռալեն ընկնում ա էդ մեռլի վրեն։

— Էդ ո՞վ ա, ի՞նչ էլավ,— շիվարած հարցնում ա կալի տերը։

— Էլ ի՛նչ պտի ըլնի, տունս քանդվեց, գնաց. խեղճ հերս հիվանդ էր, ասեցի՝ տանեմ հեքմի քցեմ։ Էկանք, էկանք, մութը գետինը կոխեց, ասեցինք՝ ըստե վե գանք, մի քիչ քնենք, դնջանանք, առավոտը էլ էդ վե կենանք, էթանք մեր ճամփեն։ Համի ես ի՞նչ անեմ, ո՛ր ջուրն ընկնեմ, խեղճ հորս վե քցեցիր, բանֆոգի արիր. էս ա ես էլ կէթամ տանուտերին կկանչեմ, թո՛ղ գա, մեր դատաստանն անի։

— Ամմա՛ն, աղպեր,— ասում ա էդ կալի տերը,— ես քու ոտի

տակին մեռնեմ. էս ե՛զներս, ըս էլ ցո՛րենս,— քոմմա քեզ, թաքըլի տաՒուտերի կուշտը մի՛ էթա, բե ըստե մի տեղ թաղենք, որ մարդ չիմանա։

Քոռն ի՞նչ կուզի՝ էրկու աչք։ Աղդիլակն էլ զաթի էս էր ուզում։

— Լա՛վ,— ասում ա,— թող քու ասածն ըլնի։

Բերում են ըստե մի տեղ քանդում, մեռելը թաղում։ Նննա էդ կալի տերը բերում ա Աղդիլակին քսան եզն ա տալի, քսան խալվար ցորեն. ցորենը լցնում ա ջվալները, բարձում եզները, ճամփու դնում։

Աղդիլակն ա՝ եզները աղաք ա անում, գալի։ Գալիս ա, գալիս ա, գալիս ա՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մութը գետինը կոխում ա՝ հասնում ա իրանց գեղը։ Էթում ա դո՞ւռ իրանց դուռը ծեծում։ Մեըը դուս ա գալի, դուռը բաց անում, տեսնում՝ իրա տղեն։ Վազում ա ճտովը փաթթվում, ջուխտ թուշը պաչում, աչքերը պաչում, ուրախանում, աշխարով մին ըլնում։

— Վա՜յ, Ա՛ղդիլակ ջան,— ասում ա,— ես քու էկած ճա՜մփին մեռնեմ, արևի՜դ մեռնեմ, աչքե՜րիդ ղուրբան, ղադեդ առնեմ, բա՛լա ջան. էսքամ վախտ էս ո՞րդի իր։

— Ա՛յ մեր,— ասում ա տղեն,— հլա դրա վախտը չի. կաց եզները տուն անենք, բեռները վե դնենք, եզները դինջանան, մեղք են։

Ասում ա ու քշում, եզները տանում նեքսեն։ Հերը էդ ղալմաղալի վրեն տանիցը դուս ա թռնում, տեսնում՝ ղո՛րթ որ հրեն իրա տղեն, եքա քոչ ու բարխանով էկել ա, հայաթի միջին վեր էկել։

— Ա՛յ հեր,— ասում ա Աղդիլակը,— ես քու մի եզն եմ մորթե, ա՛ռ հրես նրա տեղակ քսանը, քու էրկու խալվար ցորենն եմ կրակ տվե, փչացրե, ա՛ռ նրա տեղակ քսան խալվար։

— Է՛հ, Ա՛ղդիլակ ջան,— ասում ա հերը,— դո՛ւ սաղ ըլնես. քեզ որ սաղ-սալամաթ տեհանք, հենց իմացանք սաղ աշխարքը մեզ տվին։

Նո՛ր էթում են տուն, նստում, ասում-խոսում, մասլահաթ անում, իրար հալ հարցնում, ջան ասում, ջան լսում, ուտում, խմում, քեֆ անում ընչանք դառը կես-գշեր. նոր թեք են ընկնում, քնում, լավ-լավ էրազներ տեսնում։

Նրանք հասան իրա՛նց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրազին։



35. ՄԱՐԴ ԻՐԱ ՅՈՐՂԱՆՆՈՒ ԳՅՈՐԱ ՊՏԻ ՈՏԸ ՄԵԿՆԻ

Մի թագավոր իրա երկրումը ինչքամ դերձիկ կար կանչիլ ա տալի, հրամայում, որ իրա համար մի է՛նթավուր յորղան կարեն, որ բոյովը մին ըլնի՝ ո՛նչ երկեն, ո՛նչ կարճ։ Համա ոչ մի դերձիկ չի կարում նրա հրամանը կատարի. քոմմքի գլխներն էլ կտրիլ ա տալի։

Նդի վերջը մի դերձիկ ա գալի.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես քու ուզած յորղանը կկարեմ, որ ոնչ երկեն ըլնի, ոնչ կարճ. թե կհրամայես՝ կարեմ։

— Լա՛վ, կարա՛,— ասում ա թագավորը,— համա որ մի պուճուր երկեն էլավ, յա՛ կարճ՝ իմաց կաց քեզ քյալլա կանեմ. տե՛ս, աղաքուց ասում եմ, հա՛։

— Ղա՛բուլ եմ, թագավորն ապրած կենա. թե չկարացի՝ գլուխըս կտրիլ տու։

Էս մեր խելոք դերձիկն ա՝ էթում ա մի լավ յորղան կարում, զաստի էլ յորղանը մի պուճուր կարճ ա անում։ Վեր ա ունում տանում թագավորի աղաքին վե դնում. փեշի տակին էլ թաքուն մի զամշի ա պահած ըլնում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա դերձիկը,— հրեսիկ քու ուզած յորղանը կարել եմ. տես հավան կկենա՞ս։

— Տենանք բոյովս մին ա, թե ավել-պակաս ա,— ասում ա թագավորը։

Թագավորը պառկում ա, յորղանը քաշում վրեն՝ ոնները բաց ա մնում։ Դերձիկը էն սհաթը փեշի տակիցը հանում ա ղամշին, մի լավ շեպում ոններին թե չէ՝ ալբիալը թագավորը ոնները իրան ա քաշում, յորղանի տակովն անում։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա դերձիկը,— յորղանու գյորա ոտդ մեկնա։

Թագավորը որ լսում ա դերձիկի էս խելոք ջուղաբը, էլ ըսկի ձեն, ծպտուն չի հանում. դեռ հլա մենծ փող էլ ա բաշխում նրան ու ընենց ճամփու դնում։

Շատ դրուստ ա ասած, որ՝ մարդ իրա յորղանու գյորա պռնդոտը մեկնի։



36· ՍՈՒՏԱՍԱՆ

Ըլնում ա չիլնում մի թագավոր։ Էս թագավորը սաղ իրա երկրումը չառ ա գոռալ տալի, թե՝ «Ո՛վ կարենա մի էնթավուր լավ սուտ ասի, որ ինքը հավան կենա, նրան մի ոսկե խնձոր կտա»։

Գալիս են, ամեն դհից վեր են կենում գալիս՝ է՛լ թագավորի տղա, է՛լ նազրի տղա, է՛լ վեզրի տղա, մախլաս՝ ո՛վ ասես գալիս ա սուտ ասում։ Թագավորը ոչ մինին էլա չի հավանում։

Վերջը գալիս ա մի խեղճ քյասիբ, օրեն հացի մուրուցկան. մի ճքա բղուղ վեր ա ունում, գալի թագավորի կուշտը։

— Ա՛յ մարդ, խի՞ ես էկե,— հարցնում ա թագավորը։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էկել եմ փողս ուզեմ. էս բղղովը մին ոսկի ես պարտ՝ տո՛ւ։

— Սո՛ւտ ես ասում,— ասում ա թագավորը,— ես քեզ զատ չեմ տալու։

— Սուտ եմ ասում՝ ոսկե խնձորը տո՛ւ, ոնց որ խոստացել ես։

Թագավորը նոր ա գլխի ընկնում, թե բանը ընչումն ա, խոսքը փոխում ա.— Չէ՛, ղո՛րթ ես ասում,— ասում ա։

— Ղորթ եմ ասում՝ մի բղուղ ոսկիս տո՛ւ։

Թագավորը տենում ա, որ չէ՛, Սուտասանը տարավ, էլ ձեռնպատուն չի հանում, առա ու փուա վեր ա ունում ոսկե խնձորը տալի Ձրան։



37. ԳԻԺ ԱՂՊՈՐ, ԽԵԼՈՔ ԱՂՊՈՐ ՆԱՂԼԸ

Ժամանակով էրկու աղպեր կային, մեկը խելոք էր, մեկը՝ գիժ։ Խելոքը պսակված էր, Գիժը ազապ էր։ Մի քանի տարուց եղը Գիժն ասեց.— Իմ բաժինը տո՛ւ, ես բաժանվում եմ։

Խելոք աղպերն ասեց.— Ի՛նչ կա, որ ինչ տամ։

Ասեց.— Ջիլնի՛, պտի բաժանվեմ ես։

Երբոր շատ ղալմաղալ արեց, ասեց.— Ունեցած-չունեցածներս մի եզ ա, էն էլ տար քե՛զ։

Էգսի օրը Գիժ աղպերը պարանը դրեց եզան շլինքը, վե կալավ տարավ։

Շատ տարավ, քիչ տարավ, տարավ տեսավ մի մենծ քար կա, տարավ եզը կապեց էդ քարիցը, ասեց.— Մենծ աղպե՛ր, իմ եզան գինը էրկու ոսկի ու կես ա, ըսօր, գիտամ, միչդց չունես, էգուց կգամ, կտանեմ փողը։— Օդ դառավ, էկավ տուն։

Աղպերը հարցրեց, ասեց.— Ընչի՞ տվիր եզը։

Ասեց.—Էրկու ոսկի ու կիսի։—Ասեց.—Էգուց կէթամ, կբերեմ։

Էն էգսի օրը գնաց, տեհավ, որ գիլանը, արշերը կաննած եզանը ուտում են, ասեց.— Իշխանավոր աղպերտա՛նք, եզը որ փայ եք արել՝ ուտում եք, իմ փողը ե՞ր պտի տաք։

Էլի ինքն իրան ասեց.— Բա՛ն չկա, ըսօր, գիտամ, մաջալ չունեք, էգուց կգամ, կտանեմ։

Թողաց գնաց տուն։

Աղպերը էլի հարցրեց.— Փողը բերի՞ր։

Ասեց.— Ի՞նչ բերեմ, փայ ու փուշկ են անում, ղոնախլըղ էր ինչ էր, մաշալ չունեին, մնաց էգուց էթամ բերեմ։

Էգսի օրը վե կացավ գնաց։ Գնաց տեհավ ագռավ ա, ալափըս-տրակ ա, վրին կաննած ոսկոներն են կոծում։

Ասեց.— Բա՛րև ձեղ, պուճուր աղպերտինք, բա իմ փողը ե՞ր պտի տաք։ Տենում եմ ձեղ մաշալ չունեք, թո՛ղ մնա, էգուց կգամ, կտանեմ։

Թողաց ու գնաց։

Գնաց տուն, էլի աղպերը հարցրեց, թե.— Փողը բերի՞ր։

Թե.— Չէ՛, պուճուր աղպրտանքը մաշալ չունեին, թողի էկա, էգուց կէթամ, կբերեմ։

Էգսի օրը վե կացավ, գնաց։ Գնաց տեհավ օքմին չկար, անց կացավ քարի էն յանը, տեհավ Աղվեսը տափ ա կացել։ Աղվեսը որ դրան տեհավ, վե կացավ, փախավ։

Ձեն տվեց քամակիցը.— Քավո՛ր, քավո՛ր, կաննի, փողս տո՛ւ։

Աղվեսը փախավ, էդ էլ ընկավ քամակիցը։ Շատ գնաց, քիչ գնաց, Աղվեսը գնաց հասավ իրա բունը։ Էդ էլ քամակիցը մտավ ըդրա բունը։

Մտավ՝ տեհավ որ մի գիհը ոսկի ա կիտած, մի դիհը արծաթ ա կիտած, մի դիհը սև փող ա կիտած, ասեց.— Քավո՛ր, իմ փողը տո՛ւ, ես էթամ։

Քավորը բան չխոսաց։ Մեկ, էրկու, իրեք հետ ասեց, տեհավ քավորը բան չխոսաց, գնաց իրա ձեռովը էրկու ոսկի վե կալավ, մեկն էլ վե կալավ ատամովը կիսեց, կեսը քցեց դեն, էրկու ոսկի ու կեսը դրեց ջեբը, մի գունդ էլ էն արծաթիցը վե կալավ, ասեց.— Քավո՛ր, էս էլ շինեմ ինձ ծամոն,— կոտացավ, մի գունդ էլ վե կալավ, ասեց,— էս էլ տանեմ իմ աղպորը։ Դե, մնաս բարո՛վ, քավո՛ր, ես գնացի։

Վե կացավ գնաց տուն։

Մենծ աղպերն ասեց.— Բերի՞ր։

Ասեց.— Հա՛, քավորս կոտս բռնեց, տարավ իրանց տունը։

Ասեց.— Փողը տենանք, հլա՛։

Հանեց, շանց տվեց, տեհավ էրկու ոսկին սաղ ա, մեկը ատամով կտրած ա։

1646—27

Աղպերն ասեց։— Էս խի՞ ես ջարդե ըսենց։

Ասեց.— Իմ հախը էրկու ոսկի ու կես էր, ես կիսեցի, վե կալա։

Ասեց.— Շա՞տ կար ընտեղ։

Ասեց.— Շա՛տ։

Ասեց.— Ա՛րի էթանք, էլի բերենք։

Ասեց.— Է՛թանք։

Վե կացան ամեն մեկը մի մի մեշոկ վե կալան, գնացին։ Երբոր հասան Աղվեսի բունը, տեհան Աղվեսը ընտեղ չի, իրանք լցրեցին ջվալները ոսկով, վե կալան էկան։

Երբոր իրանց գեղին մոտեցան, տեսան լիսը սկսում ա բացվիլը, Խելոք աղպերը եգին-եգին գնաց տուն, որ մարդ չտենա, համա Դիժ աղպերը ծանդր-ծանդր էթում էր։

Գնաց, մտավ գեղի մեջը, գղիրը պատահեց, ասեց.—Էդ ի՞նչ ա։

Ասեց.— Ոսկի ա, ի՛նչ ա։

Ասեց.— Տո՛ գիժ, ըղքան ոսկի կըլնի՞։

Ասեց.— Քեզ ի՛նչ, ես իմ քավորի տանիցն եմ բերում։

Ասեց.— Մեկը տա՞ս էս իմ տղին։

Մեշոկը վե դրեց, ասեց.— Ա՛ռ էս մեկը քու տղին։

Ասեց.— Մինն էլ տա՞ս իմ աղջկանը։

Ասեց.— Ա՛ռ։

Ասեց.— Մինն էլ տա՞ս իմ կնկանը։

Ասեց.— Ա՛ռ։

Ասեց.— Մինն էլ տա՞ս ինձ։

— Շան որդի,— ասեց,— իմ փողը պտի հատացնես, հասավ մի ոտը դրեց մի ոտի վրեն, էն մեկել ոտիցը քաշեց՝ էրկու արեց, դեն քցեց։

Խելոք աղպերը փողը եգին-եգին տարավ տուն, վե դրեց ու լկավ։

Էկավ, տեհավ, որ աղպերը գեղի ղրաղին կանգնած ա, գղրի ջամդակն էլ ընտեղ ընկած ա, ասեց.— Խի՞ ես սըպանել սրան։

— Բա ի՞նչ անեմ, մեկը ուզեց՝ տվի, մեկն էլ ուզեց՝ տվի, մեկն էլ ուզեց՝ էլի տվի, չկշտացավ, էլի ուզեց, տվի սըպանեցի։

Խելոք աղպերը ըտեղ ֆողը քանդում ա, գղրին ճխտում ա մեջը, որ չդտնեն։

Թողում են, էթում տուն։

Էրկու, իրեք օրից եղը իմանում են, որ գղիրը սըպանվել ա,

ասում են.— Ո՛վ արած կըլնի, ով արած չիլնի. կա չկա, Խելոք աղպերն ու Գիժ աղպերը արած կըլնեն։

Գալիս են բռնում են, էրկսին էլ տանում են։ Տանում են մի հոդի մեջ բռնում են, Խելոք աղպորը պարանով են կապում, Գիժ աղպորը ժնջըլով։ Գալիս ա ճաշվա վախտը, սովածանում են։

Գիժ աղպերը ասում ա.— Սոված եմ ես։

Խելոք աղպերն ասում ա.— Ես ի՞նչ անեմ, հաց ո՞րդիան ա ըստեղ, դու հացի դարդն ես, չե՛ս դիդա, հրես կգան՝ մեղ կխեղդեն։

— Պտի խեղդե՞ն,— ասում ա Գիժ աղպերը ու թափ տալի ժընջիլը կտրում, ուղում ա փախնի։

Խելոք աղպերն ասում ա.— Ի՛նչ կըլնի, իմ պարանն էլ կտրես, իրար հետ փախչենք։

— Խի՞,— ասում ա,— ես իմ ժնջիլը կտրեցի, դու քու պարանը չես կարա կտրի՞։

— Չէ՛, չէ՛, ա՛րի ու կտրա։

Գիժ աղպերը քաշում ա կտրում, Խելոքը սկսում ա փախնիլ, Գիժը տենում ա ըտեղ մի պղինձ կա, էթում վեր ա ունում, քցում ա շալակը, ընկնում աղպոր ետևիցը էթում։

Աղպերն ասում ա.— Էդ պղինձն ի՞նչ ես բեռ արել. վե քցա, փախնենք, էթանք։

— Խի՞ վե քցեմ, սոված եմ, տանեմ, կերակուր էփեմ, ուտեմ։

Փախնում են, էթում ուրիշ երկիր։ Արևը տալիս ա, մութն ընկնում ա էդ աղբրի կշտին, էդ աղբրի գլխին նստում են։ Նստում են, տենում են ղանդուլակի ձեն ա գալի։

Մենծ աղպերն ասում ա.— Վե՛ կաց, նիլնենք ծառը, կարող ա մեր գեղից մարդ ըլնի, մեղ ճանանչեն։

Գիժ աղպերն էլ Խելոքի քամակիցը պղինձը քաշ տալո՛վ, քաշ տալո՛վ նիլնում ա ծառը։

Խելոքն ասում ա.— Ի՞նչ ես քաշ տալի էդ պղինձը, թող մնա ըտեղ։

— Չէ՛,— ասում ա,— գան տանե՞ն։

Նստում են ճղքերի վրեն, մի քիչ անց ա կենում, տենում են մի բաղդդյան էկավ, բեռները վե դրեց էդ ծառի տակը, կրակ արեցին, ըսկսեցին կիրակուր էփիլը։

Մի քիչ անցկացավ, Գիժ աղպերն ասեց.— Ուղում եմ դուս ըլնեմ։

Ասեց.— Ըտենց բան կըլնի՞, կթափի դրանց վրա. պղնձի միջին դուս իլ, առավոտը կթափենք դեն։

— Ո՞նց թե,—ասում ա,—գիժ հո չե՞ս. պղնձի մեջը դուս ըլնեմ, առավոտը կիրակուր էփեմ միջի՞ն։

Մի ոտը դրեց ծառի մի ճղքանը, պըպըղեց, սկսեց դուս ըլնիլը, ոտը գնաց, ճուղքը կոտրվեց, ինքն էլ, պղինձն էլ էս ճղքից ընկավ էն ճուղքը, էն ճղքից ընկավ էս ճուղքը, շղշըղկալով ընկավ ներքև։ Բաղրգյաննները լեղապատառ ապրանքը թողին ու փախան։ Խելոք աղպերը որ տեհավ՝ դրանք փախան, վեր էկավ, նստեցին կրակի կշտին, դրանց էփած կիրակուրը կերան։

Լիսը որ բացվեց, էդ բաղրգյաններից մինն ասեց.— է՛ թանք, տենանք էդ ի՞նչ էր յարաբ։

Էկավ, տեհավ կրակի մոտին էրկու հոգի նստած են։

Աղպերն ասեց.— Ա՛րի, ա՛րի, ա՛րի տաքացի։

Էկավ, նստեց։

Ասեց.— Քեզ ատամ ունե՞ս։

Ասեց.— Բա՛ չունե՞մ։

Ասեց.— Բա՛ց արա, տենանք։

Բաց արեց, Գիժը մի թեժ կրակ վե կալավ ու ճխտեց բերանը, դա վե կալավ, «ա՛փ, ա՛փ, ա՛փ» անելով փախավ։ Նբոր հասավ հընկորտանց մոտը, հընկերտանքը հարցրին, թե.— Ի՞նչ կա։

Ասեց.— Հա՛պ, պա՛-պա՛։

Ասին.— Խեղճի լեզուն բռնվել ա, ո՛վ ա գիտում, ի՞նչ ա պատահե,— ասին ու վե կացան, փախան։

Ջորս օր, հինգ օր ըտեղ մնացին, Խելոք աղպերն ասեց.— Վե կենանք, ըստիան էթանք։

Գիժ աղպերը վե կացավ, բաղրգյանների տեղաշորը վե կալավ դրեց պղնձի մեջ, շըլակեց։

Խելոք աղպերն ասեց.— Ա՛յ տղա, ի՞նչ բանի վրա ես, արի փողն ու ոսկեղենը ջոկի վե կալ, տեղաշորի եննուցը ի՞նչ ես ընկել։

Ասեց.— Փողն ու ոսկին քեզ ըլնի , չեմ ուզում, տեղաշորն ինձ։ Պտի տանեմ, որ քնեմ։

Խելոք աղպերը փողը, Գիժը տեղաշորը վե կալան, ընկան ճամփա, գնացին։ Շատ գնացին, քիչ գնացին, օրվա մի օրը մութն ընկավ, սկսեց վարար անձրև գալ։

Գիժ աղպերը տեղաշորը քցեց, մտավ մեջը տազ արեց, Խելոքը

մնաց անձրևի տակին թրջվեց, դողաց, աղպորը խնդրվեց, թե.— Ես էլ գա՞մ պառկեմ, տաքանամ։

— Չո՛ւտի, չո՛ւտի, գնա՛ քու փողի վրա պառկի, փողն իր վեր ունում։

Շլինքը թեքեց, նստեց աղպերը, դողաց մինչև լիսը բացվեց։ Երոր լիսը բացվեց, ասեց.— Ա՛րի, ա՛րի, ա՛րի դու էլ պառկի։ Ասեց.— Էլ ի՛նչ պառկեմ, վե կաց, է՛թանք։

Վե կացան էլի ընկան ճամփա, գնացին։

Գնացին, շատ գնացին, քիչ գնացին, աստված գիտա, մի օր արևը տվեց, մութն առավ, բանձրացան սարի գլուխը, տեհան մի ճրագ ա էրևում։ Գիժ աղայերն ասեց.— Է՛թանք էնտեղ։

Խելոք աղպերն ասեց.— Էթանք ընտեղ ի՞նչ անենք, ըստեղ պառկենք, լիսը բացվի, էթանք։

Ասեց.— Մութը տեղը խի՞ պառկեմ, հազիր էն ա ճրագ, կէթամ ընտեղ կպառկեմ։

Ասեց, քշեց գնաց. Խելոքն էլ ննուցը գնաց։

Գնացին, տեհան մի ղաղա, մտան նեքսև, տեհան դևերը պառկած են. Գիժը աղպոր կուռը բռնեց, տարավ քոմմըքի գլխավիրևը պառկացրեց, իրա տեղն էլ ջոկ քցեց, համա Խելոքի քունը չտարավ։

Դևերը մեկ-մեկ իրար զարթնացրին, էկան Խելոք աղպոր կուշտը, թուփ էլան, ասեցին.— Դուք ո՞նց սիրտ արիք, առանց մեզ իմաց տալու էկաք ըստեղ պառկեցիք։

Խելոք աղպերն ասեց.— Երոր դուք քնած իք, չզըմըշեցինք ձեզ վե կացնենք։

Դևերը երկյուղ արին, թե՝ էրևում ա ըստոնք շատ ղոչաղ են, որ իրանց բանի տեղ էլ չդրին։

Իրար մեջ խոսացին, ասեցին.— Լավն էն ա, մենք ըդրանց հետ աղպեր ըլնենք, թե չէ մեզ կսըպանեն։

Խորուրդ արեցին պրծան, էկան Խելոք աղպոր մոտը, ասեցին.— Մենք օխտը աղպեր ենք, ըլնենք իննը։

— Ըլնե՛նք,— ասեց Խելոք աղպերը,— մի տեղ աշխատենք, մի տեղ ուտենք։

Քնեցին իրար հետ, առավոտը վե կացան, Գիժ աղպորն ասին.— Գնա՛ էս սարի քամակը, չորան կա, մի ոչխար ուզա՛, բե՛ր ուտենք։

Գիժ աղպերը վե կացավ գնաց։ Հասավ չորանի կուշտը, չորանին ասեց.— Մի չորս-հինգ հատ ոչխար լավերիցը ջկա՛, տո՛ւ։

Ջորանն ասեց.— Գի՞ժ ես, ո՞ւմ ոչխարը տամ։

— Տո՛ւր,— ասեց,— ո՛ւմն ըլնում ա, թող ըլնի։

— Ի՞նչ ես գիժ-գիժ խոսում,— ասեց,— վե կա՛ց ոադ ի՛լ[1]։

Գիժը բարկացավ, վե քցեց չորանին, մի ոտը դրեց մի ոտին, էն մնկել ոտից քաշեց, արեց էրկու, քցեց էն յանը, սաղ սուրուն քշեց դպա դևերի տունը։

Դևերը տեհան, որ ոչխարը քոմմա վեր ա կալել, բերել ա, ասեցին.— Էս ի՞նչ խաբար ա, ասեցինք՝ մի հատ բեր, հմի սաղ գեղը թոփ կըլնի կգա։

Մի հինգ հատ ջկեցին, մնացածը տարան հեռու բրախ տվեցին, էկան։

Մի էրկու օր, իրեք օր արանքը անց կացավ, գոմշի տիկը տվեցին Գիժ աղպորը, ասեցին.— Գնա՛ սարիցը ջուր բե։

Գոմշի տիկը քցեց շըլակն ու գնաց դպա սարը։ Հասավ ջրի կուշտը, ասեց.— Հազիր կկապեմ, էլ խի՞ եմ տկով տանում։

Քաշեց ջրի առաջի մենծ-մենծ քարերը պոկեց, ջուրը կապեց դպա դևերի տունը։

Ջուրն էկավ էրը[2] լցրեց։

Դևերը վե կացան, «Ա՛յ հարա՛յ» արին.— Վե կացե՛ք, էթանք ջուրը կտրենք։— Ջուրը կտրեցին, Գժին ասին,— Խի՞ կապեցիր ջուրը։

Ասեց.— Ես հո ձեր նոքարը չեմ՝ ամեն օր էթամ, ձեզ համար տկով ջուր բերեմ. ջուր ա էլի, կապեցի, խմե՛ք։

Արանքը մի քանի օր անց կացավ, ասեցին.— Գնա՛ մեր բաղիցը մի շըլակ ցախ վե կալ, բե՛։

Վե կացավ, պարանը վե կալավ գնաց, չորս-հինգ տարվա տընկիքը քոքով հանեց, դրեց[3] պարանի վրա, համարյա մի սեղ, շըլակեց, վե կալավ, էկավ։

Դևերը տեհան, որ բաղումը ծառ չի թողե, քոմմա քոքով հանել ա բերե։

---

[1] Կորի՛ր, գնա՛ (Ծ. Բ.)։

[2] Այր (Ծ. Բ.)։

[3] Այս բառը մենք ենք ավելացրել (Ծ. Կ.)։

Եվլոք աղպորն ասեցին.— Էս ի՞նչ օյին ա հանել քու աղպերը մեր դլխին. էլ ըստուց դենը տեղ չղրկենք, ո՛րդե էթում ա, մեղ վնաս ա տալի։

Էգսի օրը դևերը վե կացան, տնկիքը վե կալան, տարան բաղը, որ թաղադան տնկեն, էլ դրան չտարան։ Դա մնաց տանը, տեհավ դևերի կնանիքը, էրեխեքը դուս էկան արևտմը նստեցին ջանները քորեցին։

Տեհավ որ ջանները քորում են, ասեց.— Խեղճերը շատ կեղտոտ են, ջուր դնեմ, ըդրանց լեղացնեմ։

Բերեց իրա բերած պղնձովը ջուր տաքացրեց, համարյա տաքնէրկու կուժ ջուր կտաներ պղինձը, ընքան վառեց, որ ջուրը եռաց, նոր մեկ-մեկ դրանց ոններիցը բռնեց, ճխտեց պղնձի մեջը, սաքի թե լեղացնում ա, տարավ դրեց տեղաշորի մեջը։

Եվլոք աղպերը բաղիցը եդ դառավ էկավ տուն, ասեց.— Մի՛ տենամ ինչ ա անում աղպերս։

Էկավ տուն, Գիժն ասեց.— Թամաշ արա տե՛ս, դևերի կնանոնցն ու էրեխեքանցը լեղացրել եմ, պառկացրել, տես ո՜նց են ծիծաղում։

Եվլոք աղպերը տեհավ, որ քոմմա էլ խաշվել են, սատկել։ Գիժը դևերի տանը էլ բրի՛նձ, ձա՛վար, ե՛ղ չի թողե, բերել ա ածել էդ պղնձի մեջը, քաշովի ա էփում։

Եվլոք աղպերը ասեց.— Վե կա՛ց, փախնենք, դևերը հրես կգան, մեղ կսրպանեն։

Ասեց.— Ո՞ւր փախնենք, քաշովի եմ էփե, ուտենք, նո՛ր էթանք։

Եվլոքն ասեց.— Դու գիտաս, ես փախնում եմ, ուզում ես արի, ուզում ես մի գա, որդի որի ա՝ դևերը կգան, քեզ կսրպանեն։

Եվլոք աղպերը փախավ, Գիժը պղինձը վե կալավ դրեց ուսին՝ տաք-տաք, ընկավ աղպոր ննուցը, գնաց։

Դևերը էկան տուն, տեհան որ քոմմա կնանիքն ու էրեխեքը սրպանած են, վե կացան օխտն աղպերներով ընկան դրանց քամակը։ Եվլոք աղպերը եդ թամաշ արեց, տեհավ էդ դևերը օխտն էլ ո՜նց են գալի, ղուդումը կոտրվեց՝ նստեց։ Գիժ աղպերն էլ նստեց, պղինձը դրեց առաջն ու կերավ։ Դա ուտում ա, Եվլոք աղպերը դողում ա։ Դևերն էկան հասան, Եվլոք աղպոր յախեն բռնեցին, էն ա պտի սրպանեին։ Գիժ աղպերը ըսկի տերը չէր ըլնում, նստած իրա համար ուտում էր, Եվլոքը վե կացավ, մի բուռ ֆող վե կալավ, քցեց պղնձի մեջը։ Գիժը հենց իմացավ, թե դևերը վե կալան քցեցին ֆողը

պղնձի մեջը, գիժ-գիժ վե կացավ՝ հասավ դևերին, մի-մին սըպանեց, վե քցեց, օխտին էլ վե քցեց, նո՛ր աղպորն ասեց.— Ա՛րի հաց կե, սոված ես։

Աղպերը ուրախացավ, նստեց հետը կերավ։

Երբոր կերան պրծան, խելոք աղպերն ասեց.— էլ ո՞ւր էթանք, քոմմա դևերին սըպանեցիր, էթանք ընդոնց տանը նստենք։

Վե կացան էկան, հասան դրանց տունը, նստեցին ըտեղ, իրանց համար ապրեցին։

Ըդրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Աստվածանից իրեք հատ խնձոր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաջ դնողին։



38. ՈՒՐԻՇԻ ՀՄԱՐ ՓՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿԸՆԿՆԻ ՄԵՋԸ

Ըլնում ա չիլնում մի մարդ։ Էս մարդը շատ հարուստ ա ըլնում. էլ մա՛լ, էլ դո՛լվաթ, էլ տա՛վար, էլ ոչխարի սո՛րուս, էլ ձիու ի՛լխիք, ես ինչ գիտամ մեղրի փեթակնե՛ր, ջաղացնե՛ր, մախլասի՝ էնքա՜ մ հարուստ ա ըլնում, որ իրանց երկրումը սրան մատով ին շանց տալի։

Էս մարդը ավալ ախըր էրկու տղա ա ունենում, էրկուան էլ բեդոլվաթ, ասսու էրեսիցը թափած. սաղ օրը պարապ-սարապ մանին դալի, ըսկի միտք չին անում մի բանի, մի գործի կպնեն, մի աշխատանքի տուտ բռնեն։ Սրանց հերն էլ ծերացե, հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն էր մնացե։ Օրեն մի օրը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում, էլ չի վե կենում, տղեքանց չարը տանում ա։

Տղեքը բերում են իրանց հորը առոք-փառոք, ոնց որ կարգն ա, ժամով, պատարագով թաղում են։ Ըսենց անց ա կենում մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, վե՛ց ամիս, մախլասի՝ մի տարի, օրեն մի օրը մենծ աղպերը պուճուր աղպորն ասում ա.— Ա՛յ աղպեր, հերիք ա քեզ պահեմ, վե կաց գնա քու բանին, սրանից դենը ո՛նց ուզում ես գլուխ պահա։

— Ա՛յ աղպեր,— ասում ա պուճուր աղպերը,— չէ՞ որ ես էլ քու հալալ աղպերն եմ, մի հորից, մի մորից, խի՞ ես ինձ զրկում. էսքան մալ ու դոլվաթիցը, էսքան հարստությունիցը բա ինձ փայ չի հասնի՞։

— Ջէ՛,— ասում ա մենծ աղպերը,— ե՛ս եմ, ի՛նչ կա չկա՝ հերս ինձ ա թողե, դու ընչացու ես։

— Ա՛յ աղպեր,— ասում ա,— դու ա՛րի մի ըլնի, մի անի, չէ՞ ես մեղք եմ, ես էլ քեզ պես կնկատեր, էրեխատեր եմ։

Համա ո՞ւմ ես ասում, մենծ աղպերը ըսկի չէր էլ ուզում անկաջ դնի, աղպոր կուտը բռնեց, դափ-դարդակ տանիցը դուս արեց։

Էս պուճուր աղպերն ա՝ էթում ա գեղի գլխին մի հացատուն բռնում; իրա ճնգլաճուտերը անում մեջը, ապրում։ Ինքն էլ էթում ա սրա-նրա կուշտը ֆահլություն անում, հոտաղություն անում, օրենը մի քանի շայի աշխատում, բերում օղլուշաղ պահում։

Է՛հ, փառք իրան, ըսենց կուչ ու ձիգ անելոն յոլա էր էթում, համա մենծ աղպոր էրեսը չէր էթում։ «Աստու ողորմությունը շատ ա,—ասում էր,—ամեն մարդի իրա սրտովը կտա»։

Համա մենծ աղպոր սիրտը ըտ էլ չէր վեր ունում, որ իրա աղպերը շատ թե քիչ ապրուստ ունի, մի կտոր հացի տեր ա, օր աշխատում ա, օր ուտում. հերսիցը սիրտը տրաքում էր, չէր իմանում ի՛նչ անի, ո՛նց անի, որ աղպոր գլուխը մի օղիա գա, մի փորձանքի մեջ քցի, որ սիրտը հովանա։

— Ա՛րի,— ասում ա,— աղպորս ղրկեմ Ֆլա՛ն սարի գլուխը խաբեմ, թե ընդե խազինա կա, որ էթա՝ էլ եդ չի գա, ընդե ջանավարների փայ կըլնի, կմնա։

Օրեն մի օրը վեր ա կենում, գալի պուճուր աղպոր տունը։

— Բա՛րով, ա՛ղպեր,— ասում ա,— ո՞նց ես, լա՞վ ես։

— Բա՛րով, ա՛ստու հազար բարին,— ասում ա պուճուր աղպերը,— կա՛մ էլի, յոլա եմ էթում։

— Ա՛յ աղպեր,— ասում ա,— ընչանք ե՞ք դու պտի ըտենց քյասիբ, օրեն հացի մուրացկան մնաս, չէ դո՛ւ էլ ես մեղք, քու օղլուշաղն էլ։

— Բա ի՞նչ անեմ, ա՛յ աղպեր,— ասում ա։

— Որ մի բան ասեմ, անկաջ կանե՞ս։

— Խի՛ չեմ անի,— ասում ա,— ասա։

— Բա՛ս որ ըտենց ա, մի ջվալ վե կալ, գնա Ֆլա՛ն սարը։ Ընդե

ման կդաս, մի էր կգտնես, կմննես էդ էրը, կտեսնաս մեջը լիքը ոսկի, խազինա, ակն ու մարգարիտ, բուլիանտ ու հազար մի ջուտա թանկագին քարեր. վե կունես, կբերես, կհարստանաս, քանի սաղ ու կենդանի ես, գլուխդ դինջ քեզ համար դովրան կքաշես։

— Ղո՞րթ,— հարցնում ա պուճուր աղպերը։

— Ղո՛րթ,— ասում ա մենծ աղպերը։

— Բա՛ս որ ըտենց ա՝ հենց էգուց ճամփա կընկնեմ։

Էդ պուճուր աղպերն ա՝ առավոտը լիսանում ա թե չէ, կնկանն ասում ա.— Ա՛յ կնիկ, թե՛զ արա մի ջվալ բե՛, մի քիչ էլ հաց թրջա, կապա՛ դաստախունը։

— Խի՞, ա՛յ մարդ, ի՞նչ կա, ո՞ւր ես էթում,— հարցնում ա կնիկը։

— Աղպերս ասում ա՝ ֆլա՛ն սարի կշտին մի էր կա, էդ էրը լիքը ոսկի ա, էթում եմ բերեմ։

— Բախտա՛վար գլխիդ,— ասում ա կնիկը,— աղպորդ լսեցիր, որ քու ձիուվը քու տունը քանդեցիր, է՛։

— Դե՛ շատ մի՛ խոսա,— բարկանում ա մարդը,— ի՛նչ քու խելքի բանն ա. քեզ ի՛նչ ասում եմ՝ է՛ն արա։

Կնիկը րերում ա մի քանի հաց թրջում, կապում դաստախունը, մի ջվալ էլ բերում տալի մարդին։ Էս պուճուր աղպերն ա՝ դաստախունը քցում ա ջվալի մեջը, վեր ունում, ընկնում ճամփա։ Էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստծ գիտա, հասնում ա աղպոր ասած սարը։ Տենում ա մի չոլ, յաբանի տեղ, որ ըսկի իսանաֆոտ չի գալի։

— Վա՛յ քու տունը քանդվի, ա՛ղպեր,— ասում ա,— ինձ որդե գրկեցիր. ի՛նչ անեմ, ի՛նչ գլուխս վայ տամ, հմի ջանավարները կգան, ինձ կուտեն։

Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, որ մի տեղ գտնի, ընդի սրթար անի։ Որ շատ ման ա գալի; տենում ա հրես մի էր, կողքին էլ մի մենծ քար, ընենց որ էդ քարը տալդա ա անում էդ էրին։ Մըտնում ա էդ քարի տակը, ջվալը քցում գլխին, կուչ գալի։ Անց ա կենում մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, ի՛րեք սհաթ, տենում ա հրես էկան՝ մի Մուկը, մի Գել, մի Աղվես, մըն էլ մի Արջ, էկան մտան էդ էրը, իբար կշտի նստոտեցին։ Պուճուր աղպերը էս ջանավարներին որ չի տենում, քիչ ա մնում ահաչոր ըլնի, լեզաճաք ըլնի մնա։

— Օ՛ֆ, օ՛ֆ,— ասում ա Մուկը։

— Հը՛, խի՞ դարտոտեցիր,— հարցնում են ընկերտինքը։

— Բա ի՛նչ անեմ,— ասում ա,— իմ բունը մի մենծ, դարտակ տեղ ա. բնիս կշտին մի կարաս ոսկի ա ֆորած, մարդ էլ չըկա, որ վեր ունի, տանի. ընձ էլ պետքը չի, որ ուտեմ, յա բանացնեմ, մնացել եմ սոված զկուտալոն։

— Է՛հ,— ասում ա Արջը,— էկեք իմ դարտիցը խաբար տվեք. ֆլա՛ն տեղը մի ծառ կա, էդ ծառի քոքին մեղրի ճանճերը էկել են բուն դրե, էնքա՜մ մեղր ածե, էնքա՜մ մեղր ածե, որ էլ տեղ ու դադար չկա,— էնքամ ա մեղրը դիզվե, կիտվե, թուփ էլե, մնացե։ Համա ի՛նչ անեմ, որ չեմ կարում մոտանա, էն սհաթը ճանճերը վրա են տալի, կծոտում, դաղդղորիկ ածում։

Ըսենց ջանավարները մին-մին դարտլամիշ են ըլնում։ Էս մարդը ըստոնք որ լսում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։

— Իմ խեղճ աղպերը,— ասում ա,— ընդուր էր ինձ ղրկում ըստե. հալբաթ նա մի բան գիտար, որ ասում էր, հո իմ դո՜ւշմանը չէր։

Առավոտը բարիլսի հեննա ջանավարները վեր են կենում, էթում իրանց բանին։ Էդ մարդն էլ ալուստի վեր ա կենում ըտիան ծըլկվում։ Էթում ա աղաք Մկան ասածը տեղը։ Ման ա գալի, ման ա գալի, Մկան բունը գտնում ա։ Էթում ա մի տեղան մի քլունգ ա ճարում, բերում Մկան բնի կուշտը քանդում։ Քանդում ա, քանդում ա, մի էրկու, իրեք արշին քանդում ա, տենում ա, ըհը՛, դրուստ որ մի կարաս էրևաց։ Կարասի բերանը բաց ա անում, ի՛նչ տենում՝ մեջը լիքը ոսկի։ Բերում ա էդ ոսկուցը մի բուռը վեր ա ունում, ածում ջերը, էլ եդ կարասի բերանը ղայիմ ծեփում, ֆողը եդ վրա ա տալի, թողում, էթում։ Ըտե մոտիկ մի գեղ ա ըլնում, էթում ա էդ գեղը, մի տասը, քսան ֆահլա բռնում, բաննահ բռնում, խառադ բռնում, մախլասի՝ տուն շինելու համար ի՛նչ ուստա պետքն էր բռնում ա, հեննները բարշում, բերում էդ չոլ, յաբանի տեղը։

— Ըստե,— ասում ա,— ինձ հմար մի ձեռք տո՛ւն շինեք։

Ուստեքը բանում են, բանում՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րեք ամիս, վե՛ց ամիս ըտե մի ձեռք ընե՜նց տներ են շինում, ընե՜նց տներ են շինում, որ չուտես, չխմես՝ հենց դրան թամաշ անես, ընենց մի սիրունիկ զադ էր։ Եննա դրա կշտին էլ մի քանի պուճուր օթախներ ա շինիլ տալի, մի քանի նոքար բռնում, որ ընդե կենան, իրա տներին մուտաթ կենան։ Եննա բերում ա մի տասը, քսան փեթակ ա շինիլ տալի, իրա նոքարների հեննա վե կենում, էն փեթակ-

նները վեր ունում, գալի, էն Արջի ասած ծառը մանա գալի, գըտնում. տենում ա՝ դրուստ որ էնքա՜մ մեղր ա կիտվե, էնքա՜մ մեղր ա կիտվե, որ էլ հնսար չկա։ Մեղրը բիրադի հավաքիլ ա տալի, ածիլ տալի ամաններըը, մեղրի ճանճերն էլ քշում, անում փեթակներըը, բերում։ Բերում ա փեթակներըը իրա հայաթումը շարոտում, մեղրն էլ դնում ա մի օթախ, դուռը շինում։

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը միտք ա անում՝ էթա իրանց գեղը։ Տները նորքարներին պահ ա տալի, ինքը վե կենում, ընկնում ճամփա։ Գալիս ա, գալի, շատն ու քիչն աստծ դիտա, հասնում ա իրանց գեղը. հասնելու բաշտան դուզ էթում ա աղպոր տունը։

— Բա չես ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

Նստում ա ըստե մին-մին նաղլ անում իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեղ նաղլ արի։ Մենծ աղպերը էս որ լսում ա, մնում ա մաթալ։

«Ա՛յ հարա՜յ,— ասում ա ինքն իրան,—ես աղպորս ղրկեցի, որ ղուրդ ու ղշի, ջանավարների փայ ըլնի, նա գնացե, հարստություն, մալ ու դոլվաթ ա գտե։ Բա՛ս որ ըտենց ա,— ասում ա,— ես էլ կէթամ, բալի ես էլ եմ գտնում»։

Էն մենծ աղպերն ա՝ առավոտը սուրբ ծեքի հեննա վեր ա կենում, կնկանիցը թաքուն հաց-մաց կապում, մի ջվալ վեր ունում՝ ընկնում ճամփա։ Էթում ա, էթում, հասնում ա էն սարը։ Մտնում ա աղպոր ասած տեղը, տափ կենում։ Տենում ա իրիկունը էլի էն ջանավարներն էկան, էկան մտան էրը, իրար կշտի նստոտեցին։

— Ըսկի ի՛նչ կա, ի՛նչ չկա,— հարցնում են իրար ջանավարները։

— Էլ ինչ պտի ըլնի,— ասում ա Մուկը,— իմ բնի վրեն էկել են ամարաթներ շինե, էն ոսկիքն էլ քոմմա հանե, տարե. կա, չկա,—ասում ա,—էն օրը ըստե իսանաորդի ա տափ կացե, մեր մասլահաթին անկաջ ա դրե։

— Էդ օյինը իմ գլուխն էլ են էկե,— վրա ա բերում Արջը,— մեղրի թրիշա չեն թողե, քոմմա տարել են։

— Բաս որ ըտենց ա,— ասում են Աղվեսն ու Գելը,— էկեք վե կենանք մա՛ն գանք։

— Էկե՛ք,— ասում են մեկելները։

Մենծ աղպեր, ըսօր ես մեռե թե էդուց, էս որ լսում ա, ջանը մահման դող ա ընկնում, դողմանի դիպնում։

Էդ ջանավարները վեր են կենում դե՛ս ընկնում, դե՛ն ընկնում, գալիս են էդ քարի տակը մննում, ի՞նչ տեսնում, ըհը՛, հրեսիկ մի մարդ ընդե կուչ ա էկե, մնացե։ Վրա են պրծնում դրան փարչա-փարչա անում, ձվիգ-ձվիգ անում, մենծ թիքեն անկաջը թողում։

Սրան թողանք ըստե, գանք խաբար տանք պուճուր աղպորիցը։

Էս պուճուր աղպերը որ տենում ա մենծ աղպերը եդացավ, չէկավ, ալբիալը գլխի ա ընկնում, որ էն ջանաչարների ձեռն ա ընկե, նրա մենծ թիքեն անկաջն են թողե։ Շատ ա դարտ անում, գլխին վա՛յ տալի, համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացե։ Վեր ա կենում, էթում աղպոր տունը, աղպերակնկանը մին-մին նաղլ անում աղպոր գլխով անցկացածը։

— Տե՛ղն ա,— ասում ա աղպերակինը,— «Ուրշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը»։

— Է՛հ, աղպերակին,— ասում ա,— բա՛ն չկա, ի՛նչ էլավ էլավ. դե՛ տուն ու տեղդ հավաքա, էն սարի գլխին լավ-լավ համարթներ եմ շինե, էթանք ընտե ապրենք։

— Է՛թանք,— ասում ա աղպերակինը։

Էգսի օրը վեր են կենում, մի տասը սել քրեհում, այնոյինը բարձում, ընկնում ճամփա։ Գալիս են, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում են պուճուր աղպոր ամարաթը։ Ջատ-մատերը դարսոտում են, տեղավորում, օթախները լքցնում, սարքում՝ միջին կենում։

Ուրիշ դհարեներից էլ մարդիկ էս որ լսում են, վեր են կենում գալի ըտե տներ շինում, ապրում։ Ընենց որ կամաց-կամաց ըտե եքա շենլիկ ա դառնում։

Ընենց պուճուր աղպերը իրա հալալությունովը մենծ հարստությունի, մալ ու դուլվաթի տեր ա դառնում, մենծ աղպերը իրա չհամությունովը, խայինությունովը ջանավարների փայ ըլնում։

Ասսանից իրենք խնճոր վեր ընկավ. մինն՝ ասողին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ անկաջ դնողին։





39· ԲԵԴՈԼՎԱԹ ՏՂԵՆ

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի թագավոր։ Էս թագավորը ուններում ա իրեք տղա։ Էս տղեքը քանի պուճուր՝ ին, գլխները դինջ ապրում ին, համա որ մեծանում են, իրանց յաշն առնում, էլ «ջրները մի առվով չի էթում»։

Ասսու իրան օրը ուշունց, կռիվ, ղալմաղալ, տուր ու դմփոց, մախլասի՝ էլ իրար հեննա յոլա չեն էթում։

Օրևն մի օրը գալիս են իրանց հորն ասում.— Թագա՛վորն ապրած կենա, չունքի իրար հեննա չենք կարում յոլա էթա, ուզում ենք բաժանվի, ի՞նչ կասես։

— Դո՛ւք գիտաք, ա՛յ որդիք,— ասում ա հերը,— որ յոլա չեք էթում, ամեն օր իրար «յախից ձավար եք հավաքում», լավն էն ա բաժանվեք, ամեն մարդ իրա փայն առնի, էթա՛ իրա համար տուն դնի, ո՛նց ուզում ա ապրի։

Էս թագավորն ա՝ բերում ա տղեքանցը ամեն մեկին իրա փայը տալի, ճամփու դնում։ Էս աղպորտանցից ամեն մեկը իրա փայն առնում ա, էթում ա իրա համար ջոկ տուն դնում, պսակվում, տնավորվում, ապրում։ Համա մեծ աղպերը քոմմըքից բեդոլվաթ դուս էկավ. իրա փայը տարավ ստղ կերավ, փչացրեց, ղրաղին կաննեց։ Գնաց էլ հդ հոր յախեն կպավ, թե իրա փայը աղպորտանց փայիցը քիչ ա էլե. ղոռով-դյուջով էնքան արեց, որ հորիցը ինչքամ աղաք

էր առե, մի էնքամ էլ հմի առավ։ Էլի տարավ կերավ, էն դիհը կանեց։ Էկավ հորիցը էլի թազադան փայ ուզեց, տարավ ըն էլ խժռեց, կոմդ արեց, էլ եղ էկավ հոր յախեն կպավ, թազադան փայ ուզեց։ Մախլաս՝ ըսենց չորս-հինգ հետ փայ ուզեց, տարավ կեր ու խումի տվեց, փչացրեց, մնաց մատը լպստելոն։

Վերջը էս մենծ աղպերը ինքն իրան միտք արեց. «Մի էթամ,— ասեց,— աստու կուշտը գանգատ, տենամ ես ինչ մեղքի տեր ի, որ իմ մալ ու դոլվաթը ըս էլ քանի հետ ձեռիցս առավ, թողաց աղքատ, քյաֆրի ֆողումը, է՛ն ինչ աղպորտանցս դհա հարստացրեց, դհա մալ ու դոլվաթի տեր շինեց»։

Ճամփի թադարեք տեհավ, մի քանի ամսվա սլաշար վե կալավ, վե կացավ, ընկավ ճամփա՝ դպա աստու կուշտը։

Էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, մախլասի՝ մի շաբաթ, մի մեշի միջի սրան մի յարա-փարեն կոխած, քոստ Արջ ռաստ էկավ։

Արջը սրան որ տեհավ, հարցրեց.— Թագա՛վորի ցեղ, էդ ո՞ւր ես էթում։

— Էթում եմ,— ասեց,— աստու կուշտը գանգատ. էնքա՞մ մալ ու դոլվաթ, էնքա՞մ հարստություն ունեի, քոմմա ձեռիցս գնաց, մնացի ըսենց աղքատ, օրեն հացի մուրացկան։ Հմի էթում եմ,— ասեց,— աստու կուշտը, մի հարցնեմ, տենամ մեղքս ի՞նչ ա, որ ինձ էս օրը քցեց։

— Բա՛ս որ ըտենց ա,— ասեց Արջը,— ես էլ իմ դարտը քեզ ասեմ. որ աստու կուշտը հասնես, իմ դհիցն էլ գանգատ ա՛րա։ Էսքամ տարի ա,— ասեց,— յարա-փարի միջին կորել եմ, ի՛նչ անում եմ, չեմ անում, լավանալու ճար, իլլաճ չիլնում. մի՛ հարցրա, տես ի՞մ վերջը ի՛նչ պտի ըլնի։

— Ա՛չքիս վրեն,— ասեց,— կհարցնեմ. եդ գալիս քեզ մի չուղաբ կբերեմ։

Ըսենց գնաց, գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, հասավ մի մենծ քաղաք։ Էս քաղաքի միջովն անց կենալիս սրան մի մարդ ռաստ էկավ։

— Բարո՛վ, թագա՛վորի ցեղ,— ասեց էդ մարդը։

— Բարո՛վ, աստու հա՛զար բարին,— ասեց թագավորի տղեն։

— Էդ ո՞ւր ես էթում,— հարցրեց։

— Էթում եմ աստու կուշտը գանգատ։

— Որ էթում ես,— ասեց,— ի՛նչ կըլնի իմ դհիցն էլ գանգատ անես։ Մի եքա գյուղի բաղ ունեմ,— ասեց,— որ ասսու ինչ բար ու նուբար ասես միջին կա. համա որ գարունքը գալիս ա, ծառերը ծաղկում են, բար բռնում, դեռ չհասած բարը վեր ա տալի։ Ասսուն մի հարցրա՛, տես սրա ճարն ի՞նչ պտի ըլնի

— Լա՛վ,— ասեց թագավորի տղեն,— քու գանգատն էլ տեղ կհասցնեմ։

Ասեց, տվեց անցկացավ։ Գնաց, գնաց, գնաց՝ մի օր, էրկու օր, իրեք օր դուս էկավ մի ուրիշ թագավորի երկիր։ Էդ երկրի թագավորը սրա գալը որ իմացավ, կանչեց իրա կուշտը։

— Ի՞նչ մարդ ես,— հարցրեց թագավորը,— էդ ո՞ւր ես էթում։

— Ցլա՛ն թագավորի տղեն եմ,— ասեց,— էթում եմ ասսու կուշտը գանգատ։

— Որ էթում ես,— ասեց,— ի՛նչ կըլնի իմ գանգատն էլ տեղ հասցնես։ Ես,— ասեց,— էսքան տարի ա թագավորություն եմ անում, ի՛նչ անում եմ, չեմ անում, ի՛նչ պատիճ ասես տալիս եմ, չեմ կարում ընենց անի, որ իմ երկրումը զողություն, մարդասպանություն չպատահի։ Ասսուն իմ դհիցը գանգատ արա՛, տես ի՞մ ճարն ինչ պտի ըլնի, ո՞նց անեմ, որ կարենամ էս խալխի հախից դա։

— Ջո՛ւտ աչքիս վրեն, թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— քու գանգատն էլ տեղ կհասցնեմ։

Ասեց, տվեց անցկացավ։ Գնաց, գնաց, գնաց՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, գշեր գնաց, ցերեկ գնաց, լիս գնաց, մութ գնաց՝ հասավ աշխարքի վերջը. էն ա էթա պտի ծովն ընկներ, աստոծ իրա հրեշտակը ղրկեց, որ էթա նրան ճամփից եդ դարձնի, հարցնի, տենա նրա գանգատն ի՞նչ ա։ Հրեշտակը գնաց թագավորի տղի աղաքը կտրեց։

— Ի՞նչ մարդ ես, էդ ո՞ւր ես էթում,— հարցրեց հրեշտակը։

— Ցլա՛ն թագավորի տղեն եմ,— ասեց,— էթում եմ ասսու կուշտը գանգատ։ Աղպորտանցիցս բաժանվեցի,— ասեց,— նրանք իրանց փայն առան, գնացին տուն ու տեղ դառան, հարստացան. ես ի՛նչ ունեի, չունեի՝ կերա, փչացրի, վերջը միտք արի գամ ասսու կուշտը գանգատ, տենամ ի՞նչ մեղքի տեր ի, որ ինձ էս օրը քցեց։

— Ես որ քու շարթերը քոմմա կտրեմ,— ասեց հրեշտակը,— գո՞բուլ ես։

— Գա՛բուլ եմ,— ասեց,— զաթի ես էլ դրա համար եմ աշխարե-աշխար, երկրե-երկիր ընկե, որ իմանամ իմ ճար ի՞նչ պտի ըլնի։

— Ե՛ս,— ասեց,— աստու հրեշտակն եմ. աստոծ ինձ ղրկեց, որ քեզ ասեմ, էթաս էլ եդ քու երկիրը, ընդե կորցրած հարստությունդ էլ եդ քու ձեռը կընկնի։

— Աստու փառքը շա՛տ ըլնի,— ասեց թագավորի տղեն,— ոնց որ հրամայել ա, ընենց էլ կանեմ։ Մի ուրիշ գանգատ էլ ունեմ,— ասեց,— ճամփին գալիս մի մեշի միջին մի յարա-փարեն կոխած Արջ ռաստ էկավ։ «Ո՞ւր ես էթում»,— հարցրեց։ Ասեցի. «էթում եմ աստու կուշտը գանգատ»։ «Որ էթում ես,— ասեց,— ինչ կըլնի իմ դհիցն էլ գանգատ անես. էսքամ տարի յարեն սաղ ջանս վեր ա կալե, ի՛նչ անում եմ, չեմ անում, չեմ կարում լավանա. մի հարցրա՛, տես իմ ճարն ի՞նչ պտի ըլնի»։

— Էն Արջը,— ասեց հրեշտակը,— որ մի իսան բռնի ուտի, ալ-բիալը նրա յարեն կսաղանա։

— Էդ հո էդ,— վրա բերեց թագավորի տղեն.— Ճամփին մի քաղաքի միջով անցկենալիս մի մարդ ռաստ էկավ։— Ո՞ւր ես էթում,— հարցրեց։ Ասեցի. «էթում եմ աստու կուշտը գանգատ»։— Որ էթում ես,— ասեց,— ինչ կըլնի իմ գանգատն էլ տեղ հասցնես. ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գյուղի բաղ ունեմ, որ ի՛նչ բար ու նուբար ասես մեջը լիքն ա. համա գարունքը որ գալիս ա, ծառերը ծաղկում են, բարը խակ-խակ վեր ա տալի, մի լոլոկ էլ ա չեմ կարում բերանս դնեմ. աստուն մի հարցրա՛, տես սրա ճարն ի՞նչ պտի ըլնի։

— Էդ մարդի բաղի բարն էլ ընդուր ա վեռ տալի, որ նրա ամեն մի ծառի տակին մի գյուգյում ոսկի ա ֆորած, էն ոսկու ժանգը չի թողում բարը հասնի։ Գնա՛, ասա՛ թող քանդի, էն գյուգյում ոսկիքը հանի, էն վախտը իրա բաղի բարին արժանի կըլնի։

— Էդ էլ հո էդ,— ասեց թագավորի տղեն։— Ճամփին մի ուրիշ թագավորությունի միջով անցկացա. էն երկրի թագավորը ինձ կանչեց, հարց ու փորձ արեց.—Ի՞նչ մարդ ես,—ասեց,—ո՞ւր ես էթում։ «Ճլան թագավորի տղեն եմ,— ասեցի,— էթում եմ աստու կուշտը գանգատ»։— Որ էթում ես,— ասեց,— իմ գանգատն էլ տեղ հասցրա։ Ես,— ասեց,— էսքամ տարի ա ըստեռ թագավոր եմ, ի՛նչ անում եմ, չեմ անում, ի՛նչ պատիճ ասես տալիս եմ, չեմ կարում

իմ երկրի դողությունը, մարդասպանությունը վերջացնի, մի աստուն հարցրա՛, տես իմ ճարն ի՞նչ պտի ըլնի։

— Էդ երկրի թագավորը,— ասեց հրեշտակը,— կնիկ ա, ընդուր նրա խոսքը կապի չեն դնում. նրա տեղակ որ տղամարդ ըլնի, նրա մի խոսքն էլ ա գեննին չի մնա, արած դիվանն էլ կանցկենա ու մարդասպանությունը, դողությունն էլ կվերջանա։

Հրեշտակը էս կասի թե չէ, ալբիալը անէրևութք կըլնի։

Թագավորի տղեն աստուն փառք ա տալի, վեր կենում, ուրախ-ուրախ իրա էկած ճամփովը եդ դառնում։ Գալիս ա, գալիս ա, գալիս ա, հասնում ա էն թագավորի երկիրը։ Էթում ա դրան մին-մին նաղլ անում հրեշտակի ասածը։

— Դրո՛ւստ ա,— ասում ա էդ երկրի թագավորը,— ես կնիկ եմ, դրա համար էլ խոսքս չի անցկենում։ Բաս որ ըտենց ա,— ասում ա,— ա՛րի դու ինձ ա՛ռ, իմ տեղը նստի թագավոր, հազիր աստոծ քեզ ինձ զամաթ ա արե։

— Չէ՛,— ասում ա թագավորի տղեն,— ես պտի էթամ իմ երկիրը, բալի իմ կորցրած հարստությունը, մալ ու դոլվաթը էլ եդ իմ ձևոը քցեմ։

Ասեց, տվեց անցկացավ։ Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ դիտա, հասավ էն մի քաղաքը։ Ման էկավ, էն մարդին գտավ, ասեց, թե աստոծ նրա դանդատին ինչ դիվան ա կտրե։ Էն հիքաթիրոնչ հիննա գնաց, նրա ծառերի քոքերի տակը փորեց, տեհավ, ղորթ որ, ամեն մի ծառի տակիցը հրես մի դյուդյում ոսկի դուս էկավ։ Հիքաթերը ուրախանում, աշխարով մին ա ըլնում։

— Թագա՛վորի ցեղ,— ասում ա հիքաթերը,— քեզ մի բան պտի ասեմ, չեմ դիտա անկաջ կանես, թե չէ։

— Ա՛սա,— ասում ա թագավորի տղեն,— խի՛ չեմ անկաջ անի։

— Ջունքի դու ինձ ըսենց մի լավություն արիր, իմ. դանդատը տեղ հասցրիր, էս հարստությունի, էս խազինի տեր դարձրիր, ես էլ ուզում եմ քեզ մի լավություն անեմ։ Ես եմ,— ասում ա,— մի մինուճար աղջիկ, էլ զադ չունեմ. ա՛րի աղջկանս ա՛ռ, դառի ինձ փեսա, ըմտե կաց։ Իմ էլ հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն ա մնացե. մեռնելուցս եդը էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթն էլ կմնա քեզ. քանի սաղ ու կենդանի եք՝ մարդ ու կնիկ կուտեք, կխմեք, դուվրան կքաշեք։

— Չէ՛,— ասում ա թագավորի տղեն,— ես ըստե չեմ կարա-

մնա, պտի էթամ էլ եդ իմ երկիրը, իմ կորցրած հարստությունը էլ եդ ձեռ քցեմ։

Ըսենց թագավորի բեդուլվաթ տղեն իրա բախտին քացի տվեց, հիքսատիրոնչ ասածին անկաջ չարեց, իրա ճամփեն բռնեց, գնաց։ Գնաց, գնաց, գնաց, էն մեշի միջի յարալու Արջին ռաստ էկավ։

— Հը՛, թագա՛վորի ցեղ,— ասեց Արջը,— աստուն տեհա՞ր, իմ գանգատն արե՞ցիր։


— Հա՛,— ասեց թագավորի տղեն,— արեցի։

— Բա ի՞նչ ասեց,— հարցրեց Արջը։

— Ասեց՝ թո՛ղ մի իսան բռնի, ուտի, ջանի յարեն ալբիալը կսաղանա։

— Բա՛ս որ ըտենց ա,— ասեց Արջը,— ա՛րի քեզ ուտեմ, հաղիր աստոծ քեզ ինձ ղսմաթ ա արե. մոտիկը թողած էլ խի՞ հեռու ման գամ։

Էս ասեց թե չէ, վրա պրծավ, բեդուլվաթ տղին ձվիգ-ձվիգ արեց, կերավ։ Ուտելու բաշտան յարա-փարեն սաղացավ։ Աստու հրամանն էր, որ թագավորի բեդուլվաթ տղեն էս յարա-փարեն կոխած Արջին փայ ըլնի։



40· ԾՆՈՂԱՍԵՐ ՏՂԵՆ

Ժամանակով մի բազրկյան ա ըլնում. դրան ունենում ա էրկու տղա, մեկը պսակված, մեկը աղափ. պսակվածը էրեխու տեր։ Պսակվածը առըտուր էր անում, պուճուրը հողագործություն էր անում։

Էկավ՝ որ էն մենծը, իրիկունը հացի իրա նստած վախտը, ասեց.— Ես պտի բաժանվեմ։

Պուճուր աղպերն ասեց.— Ա՛յ աղպեր, խի՞ ես բաժանվում, պսակվածը՝ դու, էրեխու տերը՝ դու, ինձ զադ չունեմ,— ասեց,— որ ես չեմ ուզում բաժանվեմ, դու խի՞ ես բաժանվում։ Դու տեննո՞ւմ ես, որ ես էս աշքիցը էն աշքը քեզ չեմ փոխում, էն տեսա՞կ քեզ ղուլլուղ եմ անում. քարից քցում ես՝ էքում եմ, քոլից քցում ես՝ էքում եմ, ո՛ր ասես՝ դնա՛ ջուրն ընկի՝ կէքամ, դու խի՞ ես բաժանվում ինձանից։

Մենծն ասեց.— Չէ՛, պտի բաժանվեմ։

Պուճուրն ասեց.— Ես առաջինը ասում եմ՝ մի բաժանվի, եբոր բաժանվում ես, թագավորի բարեբար մեզ ապրանք ունենք, էդ ապրանքը մի յան, մեր հերը մի յան. ուզում ես՝ հերը վե կալ, ապրանքիցը զրկվի, ուզում ես՝ ապրանքը վե կալ՝ հորից զրկվի, զաթի մեզ մեր չունենք, էս մի հերն ա։ Քեզ իրեք օր ժամանակ, մտածա՛, որը կուզես՝ էն արա։

Մենծ տղեն սկսեց մտածիլ. ասեց.— Թե ապրանքը թողամ, հորս վերնե՞մ՝ ես էրեխատեր եմ, չեմ կարա ապրի, լավն էն ա թողամ հորս՝ վերնեմ ապրանքը։

Էկավ իրեք օրը թամմեց, պուճուր աղպերն ասեց մենծ աղպորը.— Ա՛սա տենանք ի՞նչ ես ասում։

Աղպերն ասեց.— Ես ապրանքը վե կունեմ։

— Է՛հ,— ասեց,— որ ապրանքը վե կունես, հերն էլ իմն ա։ Քու չոփն ինձ պետքը չի։

Գշերը քնեց, առավոտը վե կացավ, հորը վե կալավ՝ գնաց։

Գնացին, շատ ու քիչն աստոծ գիտա, հասան Ըստամբոլ քաղաքը։ Գնաց մի պուճուր օթախ բռնեց, նստեցին ըտեղ։

Քնեցին գշերը ըտեղ, լիսը բացվեց, ասեց.— Ա՛յ հեր, ես էթում եմ բազար բանելու։— Գնաց ֆահլեքանց մեջը կաննեց. եթմիշ իքի[1] միլլեթ կար էդ ֆահլեքանց մեջը, բիրադի բռնվեցին, գնացին բանելու, էդ տղին մի մարդ չհարցրեց, թե. «Ի՞նչ տղա ես, յա ի՞նչ ես ուզում»։ Ձեռները դրել էր ծոցը, կաննել էր։ Էն յանիցը մի կարմիր ձիավոր էկավ, տեհավ էդ տղեն ըտեղ կաննած։

Ասեց.— Տղա՛, ի՞նչ տղա ես։

Ասեց.— Ղարիբ տղա եմ։

Ասեց.— Ի՞նչ ունես ըստեղ։

Ասեց.— Մի հեր։

— Բա ըստեղ ի՞նչ ես անում,— ասեց։

Ասեց.— Էկել եմ էթամ բանելու։

— Բա խի՞ չգնացիր բանելու,— ասեց։

Ասեց.— Ի՞նչ անեմ, ա՛ղա ջան, եթմիշ իքի միլլեթ կար, բիրադի բռնվեցին գնացին, ինձ մեկը չհարցրեց, թե. «Ա՛յ տղա, որդիա՞նցի ես»։

Ձիավորն ասեց.— Արի՛, էթանք ինձ մոտ բանի։

Տղեն ընկավ ձիու քամակը, գնաց։ Գնաց հասավ մի բանձր ամարաթների, ձիուցը վեր էկավ, տղեն ձին տարավ նեքսև կապեց։

— Դե՛հ,— ասեց,— ա՛յ տղա, արի էթանք վիրև։

Տղեն բանձրացավ վիրև, տեհավ, որ մի սուփրա փռած ա, աստրծու մի հոգին միջին դրած[2]։

---

[1] Յոթանասուներկու (Ծ. Բ.),

[2] Ամեն բան կար մեջը (Ծ. Բ.)։

Ասեց.— Ա՛յ տղա, արի իմ կողքին նստիր։

Տղեն դնաց էդ մարդի կողքին նստեց, մինչանք իրիկուն կեբան, խմեցին։ Իրիկվա ժամերը տվեց։

— Դե՛հ,— ասեց,— ա՛յ որդի, վե կաց գնա՛։

Հանեց չիբիքը մի մանեթ, տվեց էդ տղին, ասեց.— Դե՛ էս էլ տար հորդ համար բան ու ման կառնես, հերդ սուված կըլնի, համա,— ասեց,— էդուց առավոտ էլ ուրիշ տեղ չես էթա, կգաս դո՛ւզ ըստեղ։

Տղեն շնորհակալ էլավ էդ մարդիցը, դուս էկավ գնաց։ Գնաց քաղար, տաս շահուն բանըման առավ հոր համար, տարավ տուն։

Հերը հարցրեց.— Ա՛յ որդի, ըսօր ի՞նչ իր անում։

Ասեց.— Ա՛ւիի ջան, գնացի բազար, ինչքան ֆահլա կար՝ բռնեցին տարան, ինձ մի մարդ չհարցրեց, թե. «Ո՞րդիանցի ես»։ Էկավ ճաշ դառավ, մի կարմիր ձիավոր էն յանիցն էկավ, ասեց. «Ա՛յ տղա, ո՞րդիանցի ես», ասեցի. «Ղարիբ տղա եմ»։ Ասեց. «Ըստեղ էլ ի՞նչ ունես», ասեցի. «Ես եմ, մի հեր»։ «Դե,— ասեց,— ա՛րի, էթանք ինձ հետ, ինչ որ կասեմ, էն արա»։ Գնացի էդ Ձիավորի քամակիցը, գնացինք հասանք մի բանձր ամարաթների, դարվազի դռները բացվեց, մտանք ներսև, ձին տարա կապեցի, նիլլանք վիրև, տեհա, որ մի սուփրա փռած՝ աստծու մի հոգին միջին կար։ «Դե,— ասեց,— ա՛յ տղա, արի նստի կողքիս»։ Նստեցի կողքին, մինչև համի կերանք, խմեցինք, մի մանեթ էլ փող տվեց ինձ, ասեց. «Ա՛ռ էս էլ կտանես՝ քու հոր համար բան կառնես»։ Շնորհակալություն արի, դուս էկա, ինձ ասեց, թե. «Առավոտը էլի կգաս ըստեղ»։— Հորն ասեց.— Ա՛յ հեր, ամանչում եմ, չե՛մ էթա։

Քնեցին. լիսը բացվեց, տղեն վե կացավ էլի գնաց բազար։ Էլի սաղ ֆահլեքը բռնվեցին, գնացին, էդ տղեն մնաց կաննած։

Տեհավ, որ էն յանիցը էն Ձիավորը էլի եկավ, ասեց.— Ա՛յ տղա, քեզ էրեկ չասեցի՞, թե կգաս իմ մոտը։

Ասեց.— Ա՛ղա, քեզանից պահեմ, աստանից չեմ կարա պահի, ամանչեցի՝ չէկա։

— Դե՛,— ասեց,— ընկի աղաք, է՛թանք։

Տղեն ընկավ աղաք, գնացին էլի էն ամարաթները, ձիուցը վեր էկավ, ձին տարավ կապեց, գնացին վիրև, տեհավ էլի էն սուփրեն փռած, աստծու մի հոգին միջին դրած. կերան խմեցին մինչև իրիկվա ժամերի վախտը։

ժամերը որ տվին, էդ մարդն ասեց.— Ա՛յ տղա, դե վե կաց, գնա՛։

Հանեց մի մանեթ, տվեց էդ տղին, ասեց.— Էս էլ քու հոր համար բանըման կառնես։ Առավոտը էլի կգաս ըստեղ։

Տղեն շնորհակալություն ա անում, էթում ա։ Էթում ա բազար, էլի իրա հոր համար բանըման ա առնում, տանում ա տուն, տալիս ա հորը։

Հերը ասում ա.— Ըսօր որտեղ ի՞ր։

Ասեց.— Էլի էն Զիավորը էկավ տարավ, էլի կերա, խմեցի, մինչանք ժամերը տվեց, ասեց. «Դե վե կաց գնա՛», հանեց մի մանեթ տվեց, ասեց. «Էս էլ կտանես հորդ համար բան կառնես»։ Եդով ասեց. «Էգուց առավոտ էլի կգաս ըստեղ»։

Պառկեցին, քնեցին։ Լիսը բացվեց, տղեն վե կացավ, լվացվեց, աստված կանչեց ու գնաց։ Գնաց դո՛ւզ էդ ամարաթները։ Գնաց նիլլավ վիրև, տեհավ էն տղեն նստած սուփրի վրա, էդ տղի ճամփեն էր պահում։

Ասեց.— Ա՛յ տղա, խի՞ եդացար ըսքան։ Դե, արի՛, նստի կողքիս։

Տղեն նստեց կողքին, կերան խմեցին, մինչև իրիկվա ժամերը տալը։ Ժամերը տվեց։

— Ա՛յ տղա,— ասեց,— դե վե կաց, գնա՛։

Տղեն վե կացավ տեղիցը՝ էդ մարդը հանեց ջիբիցը մի հատ մենծ նուռ, ասեց.—Ա՛յ որդի, ա՛ռ, է՛ս ա, ըստուց դենը դու գիտաս։

Տղեն առավ նուռը, շնորհակալություն արեց էդ մարդիցն ու գնաց։

Ճամփին ասեց.— Ջանը՛մ,— ասեց,— հըլա էն էրկու օրը օրական մի մանեթ տալիս էր, իմ հոր համար բանըման ի առնում, ըսօր էս մի նուռը տվեց, ես ի՞նչ անեմ։

Գնաց տուն, նուռը դրեց հոր աղաքը, ասեց.— Ա՛յ հեր, էս ա տվե ըսօր էլ։

Հերը նուռը տեհավ, խելքը գլխիցը թռավ, ճանանչեց, թե ինչ նուռ ա, ասեց.— Փա՛ռք քեզ, աստվա՛ծ, քու ստեղծած հոգին չես կորցնում դու։

Նուռը կտրեց հերը, տեհավ, որ մեջը սաղ թանկագին քարեր։

— Դե՛,— ասեց,— ա՛յ որդի, քնի՛, առավոտը վե կենանք, տանենք մի քարը ծախենք։

Քնեցին. լիսը բացվեց, վե կացան, հերը մի քար տվեց տղին, ասեց.— Կտանես ֆլա՛ն սառաֆին, դրա գինը օխտը քիսա ոսկի ա, կտա՝ կբերես։

Տղեն տարավ տվեց, օխտը քիսա ոսկին առավ, էկավ տուն։

Հերը համբրեց, տեհավ վերջի քիսումը էն քարը դուս էկավ, ասեց.— Ա՛յ որդի, էս ի՞նչ էս արե, խի՞ էս գողացե. բերե քարը։

Տղեն երդում կերավ, որ չի գողացե։ Էգսի օրն էլ տարավ էլի էն քարը, էլի օխտը քիսա ոսկին բերեց, հերը համբրեց, էլի էն քարը միջից դուս էկավ։

Հերն ասեց.— Ա՛յ որդի, էս չէլավ, դու գողություն ես սովորե։

Տղեն էլի երդում կերավ, թե՝ «ես խաբար չեմ», չհավատաց։

Էգսի օրը ասեց.— Ա՛յ հեր, դու տա՛ր։

Հերը վե կալավ տարավ էլի էն քարը, տվեց սառաֆին, օխտը քիսա ոսկին առավ, էկավ տուն։

Տղեն ասեց.— Ա՛յ հեր, դե բե համբրե՛նք։

Համբրեցին, էլի վերջի քիսումը քարը դուս էկավ։

Տղեն ասեց.— Ա՛յ հեր, ես հըլա ջահել ի, թամահություն ունեի, դու հալիվոր մարդ, դու խի՞ գողացար բերեցիր քարը։

Հերը երդում կերավ, ասեց.— Ա՛յ որդի, աստվա՞ծ, երկի՞նք, գետի՞նք, ես չեմ գողացե։

Տղէն ասեց.— Բա՛ որ ես քեզ ասում ի՞, բա դու խի՞ չիր հավատում ինձ։

Ըդրանով ընքան ոսկի դիղեցին, չափ ու սահմանը կորավ։

Տղեն վե կալավ հորն ասեց.— Ա՛յ հեր, գնա թագավորի կուշտը, քաղաքից դրսև մի ամայի տեղ առ, ընտեղ մեզ համար շինենք քարվանսըրա, դուքաններ, բախչա, տներ, էթանք ընտեղ ապրենք, առըտուր անենք։

Հերը գնաց առավ գետինը, ֆահլա, ուստա բռնեցին, քարվանսըրին, տները շինեցին, բաղ ու բախչա քցեցին։

Քաշվեցին էդ տները, տղեն գնաց ամեն տեսակ ապրանքներ առավ, դուքանները լցրեց, պրիկաշչիկներ բռնեց, ասեց.— Ինչ որ ուզում եք՝ ամսական տամ, թաքիլան իմ ապրանքի մեջ հարամություն չըլնի։

Ըդոնք էլ խոստացան։ Ըսկըսեցին առըտուր անիլ։ Ապրանքը ինչ դնով որ առել էր, մի շահի պակասի ծախում էր. էկավ որ էդ սաղ քաղաքը անցկացավ էդ տղի դիհը առըտուրի։ Քաղաքի առըտուրա-

կանները հավաքվեցին, գնացին թագավորի կուշտը, ասեցին, թե.— Մի մարդ ա էկե, մեր սաղ քաղաքի առըտուրը փակել ա։

Թագավորը ասեց էդ մարդկանցը, թե.— էդ մարդը զոռով հա չի՞ տանում։

Ասեցին.— Չէ՛, ժողովուրդը իրանք են էթում։

Թագավորն ասեց.— Ես իրավունք չունեմ էդ բանի վրա խոսալու, ապրանքն ինչ գնով որ առնում ա, մի շահի պակասով ծախում ա, ես էլ ըլնեմ՝ կէթամ։

Ըդոնք թողացին գնացին։ Էդ վաճառականի անումը հրատարակվեց երկրի մեջ։ Օրվա մի օրը թագավորը մարդ ղրկեց էդ դարիբ առըտուրականին կանչեց իրա տունը հացի։ Էդ մարդը վե կացավ գնաց։

Էդ տղեն որ դռնից մտավ՝ թագավորի խելքը գլխիցը թռավ.— Հե՛յ վա՛խ,— ասեց,— ըսենց էլ տղա կըլնի աշխարքի էրեսին, քաշկա[1] սա իմ աղչիկն ուզեր, տայի սրան։

Նստեցին, հաց կերան, խմեցին, վերջը թագավորն ասեց էդ տղին.— Ա՛յ տղա,— ասեց,— ես քեզ շատ եմ սիրում, արի՛, ես եմ՝ մի աղչիկ, տամ քեզ, իմ թագավորությունն էլ տամ քեզ, կաց ըստեղ։

Տղեն ասեց.— Թագա՛վոր, ինձ վրա ես ծիծաղո՞ւմ։

Թագավորն ասեց.— Դրուստ եմ ասում, տալիս եմ։

Տղեն վե կալավ ասեց.— Որ դրուստ ես ասում, յավաշ էթամ իմ հոր միտքն էլ իմանամ, էգուց քեզ պատասխան կտամ։

Տղեն գնաց հոր կուշտը, ասեց թագավորի ասածները, հերն ասեց.— Ա՛յ որդի, մեզ վրա ա ծիծաղացե։

Տղեն ասեց.— Չէ՛, խոսք ա տվե։

Հերն ասեց.— Ո՛ր խոսք ա տվե՝ դե գնա ա՛ռ։

Էգսի օրը տղեն գնաց թագավորի մոտ, զլուխ տվեց, կաննեց։

Թագավորն ասեց.— Ա՛րի նստի, տենամ հերդ ի՞նչ ասեց։

Գնաց նստեց թագավորի կշտին, ասեց.— Հերս հոժար ա։

— Որ ըդենց ա,— ասեց թագավորը,— տերտերներ կանչեք, նշան դնենք։

Ղրկեցին տղի հորը կանչեցին. տղեն ասեց.— Ես քու աղչիկդ

---

[1] երանի թե (Ս. Ռ.)։

կառնեմ էն պայմանով, որ ես պտի բաց անեմ աղքատանոց, հիվանդանոց, ճաշարան, փուռ, ուռումնարան, դուք չհակառակեք։

Թագավորն ասեց.— Շատ ուրախ եմ ես էդ բանին։

Տերտերներն էկան, նշանն օրշնեցին, մնաց մի քանի օր, հարսանիքն արեցին, օխտն օր, օխտը գշեր կերան խմեցին, դրանց պսակեցին։

Մի ժամանակ անցկացավ, էդ տղեն սկսեց շինել փուռ, հիվանդանոց, ճաշարան, աղքատանոց, ուռումնարան, ամեքը իրա կարգին։

Մի ժամանակ էլ անցկացավ թագավորը ծերացավ, թախտիցը վեր էկավ, փեսին օծեց թագավոր՝ դրեց թախտը։

Էդ տղի սովորությունը ի՛նչ էր՝ ամեն օր կէթար էդ հիվանդանոցը, ճաշարանը, աղքատանոցը, ման կգար, կթողար կգար։

Գանք սալրեղը տանք մենծ աղպորիցը։

Մենծ աղպերը ահագին կարողություն կերավ, բիրադի փչացրեց, մնաց օրեն հացի կարոտ, վերջը հագին շոր էլ չուներ հագնելու, մի ջվալ ծակել էր՝ քցել էր շլինքը։

Իմացավ, որ Ըստամբոլումը թագավորը անփող հաց ա բաժանում, կիրակուր ա բաժանում, շոր ա տալի, ասեց.— Ա՛յ կնիկ, դուս հնարքով էրեխեքանցը պահա, ես էթամ ընտեղ տենամ, մի կուշտ փորով հաց էլ ա կուտեմ, կկշտանամ, գործ էլ կըլնի, փող կաշխատեմ, կղրկեմ, դուք կուտեք։

Թողաց էրեխանցը սոված տանը, ինքը վեր կացավ գնաց։

Շատ էր գնացել, թե քիչ, աստված դիտար, հասավ Ըստամբոլ. մանդալոն, մանդալոն է՛ս դիհը, է՛ն դիհը, հարց ու փորձ անելով գտավ էդ աղքատանոցը, գնաց կաննեց դռան աղաքին։ Շորերը շատ հին էր, ամանչում էր, որ նեքսև մտներ, համա էդ վախտը թագավորը ընտեղ էր, հևալան թամաշ արեց տեհավ, որ դռան աղաքին մի մարդ կա կաննած, շատ թամաշ արեց, տեհավ որ իրա մենծ աղպերն ա։

— Հե՛յ վախ,— ասեց,— աչքերս քոռանա, ես ի՞նչ օրն ա ընկել իմ աղպերը։

Թագավորը մոտացավ ըղրան, դա Թողաց փախավ. մարդկերանց ասեց.— Գնացեք բռնե՛ք դրան։

Գնացին բռնեցին դրան, բերին թագավորի կուշտը։

Թագավորն ասեց.— Ա՛յ մարդ, խի՞ իր փախնում։

Ասեց.— Բա ի՞նչ անեմ, քեզ տեհա ընտեղ, ամանչեցի, թողացի, փախա։

Ասեց.—Դե տարեք սրան քցեք, իմ օթախի կողքին մի օթախ կա, ընտեղ։ Ինչ որ ես ուտում եմ, էն կիրակրներիցը տվեք ըդրան, թող ուտի։

Թագավորը ման էկավ, ինչքան տեղեր ուներ, եդ դառավ գնաց իրա ամարաթները։

Առանց հաց ուտիլ գնաց աղպոր մոտն, ասեց.— Բարո՛վ քեզ, ա՛յ մարդ։

Վե կացավ կաննեց, գլուխ տվեց, թագավորի բարևն առավ։

— Ա՛յ մարդ,— ասեց,— ի՞նձ ճանանչում ե՞ս,— ասում ա, համա մի դհիցն էլ լալիս ա, մի դհիցն էլ թաքուն արտասունքն ա սրբում, որ աղպերը չտենա։

Էդ տղեն ասեց.— Թագավորն ապրած կենա, ես ի՞նչ ճանանչեմ քեզ, դու մի թագավոր, ես մի աղքատ մարդ։

— Բա դու ո՞ր երկրիցն ես,— ասեց։

— Է՜հ,— ասեց,— էրևանու դըհիցն եմ։

— Բա քեզ ինչ ունես, ի՞նչ չունես ըսկի։

— Թագա՛վորը սաղ ըլնի, ինձ բան մի հարցնի, իմ դարդը շատ ա,— ասեց։— Ես էլ մի թագավորի բարեբար մարդ ի, ունեի հեր, ունեի աղպեր, էկավ որ օրվա մեկ օրը սատանեն մտավ իմ սիրտը, ասեցի. «Աղպե՛ր, ես պտի բաժանվեմ»։ Աղպերս ինձ ասեց. «Աղպեր ջա՛ն, խի՞ ես բաժանվում, խի՞ ես մեր հալալ հացը հարամում»։ Նա շատ ասեց, ես քիչ լսեցի. անկաջ չարի ես իմ աղպորը, ասեցի. «Պտի բաժանվեմ»։ Աղպերս ասեց. «Շա՛տ լավ, բաժանվում ես՝ բաժանվի,— ասեց,— մեր հերը մի յան, մեր ապրանքը մի յան. ուզում ես՝ հերը վեկալ, ապրանքից զրկվի, ուզում ես՝ ապրանքը վեկալ, հորից զրկվի, իրեք օր քեզ ժամանակ»։ Ես ապրանքը վե կալա, պուճուր աղպերս հորս վե կալավ գնաց։ Էլ չեմ գիտա ո՞ւր են գնացե, ուր չեն գնացե, իմ աչքերը քոռանա։ Ընդոնք ոննները տանից քաշեցին, ձախորդությունը ինձ վրա տվեց, հմի ընկել եմ էս օրը. էրեխեքս սոված տանն եմ թողե, էկել եմ ըստեղ։

— Ա՛յ տղա,— ասեց,— բա դու ինձ չե՞ս ճանանչում։

Ասեց.— Չէ՛, ընքան սոված եմ մնացե, որ աչքերիս լիս չի մնացե, որ ճանանչեմ։

Թագավորն ասեց.— Աչքերդ քոռանա՛, ես քու պուճուր աղ-
պերն եմ։

Հենց որ ասեց. «Քու պուճուր աղպերն եմ», աղպերը լաց էլավ, ընկավ թագավորի ոտները։

— Ա՛ղպեր,— ասեց,— վիրև՝ աստված, ներքև՝ դու, ես արել եմ, դու մի՛ անի։

Ասեց.— Մի՛ վախի, աղպեր ջա՛ն, մի՛ վախի, էլի դու ինձ մենծ աղպեր, ես քեզ պուճուր աղպեր։ Էն վախտը ոնց որ քեզ դուլլուտ ի անում, էլի ընենց քեզ դուլլուտ կանեմ։

Կանչիլ տվեց դերձիկ, ասեց.— Մինչև իրիկուն մի ձեռք լավ թագավորական շորեր կկարեք։— Ոննման կարիլ տվեց, իրիկունը ամեն բան հաղրեցին, վե կալան բերին տվին թագավորին։ Թագավորը վե կալավ աղպորը ղրկեց համամ [1], լավ լեղացնիլ տվեց, շորերը քամակիցը ղրկեց, հագցրին աղպորը, վե կալան բերին ամարաթը։

Ասեց.— Աղպեր ջա՛ն, ըստուց դենը թագավորությունը քեզ արժանի ըլնի, ես էգուց վե կենամ էթամ իմ հարսին բերեմ, էրեխանցը բերեմ, ըստեղ ապրենք իրար հետ։

Հարսի համար շորեր կարիլ տվեց, էգսի օրը զորք վե կալավ, դնաց։ Գնաց հասավ իրանց քաղաքը, իրանց դուռը ծեծեց, տեհավ, որ հրես հարսն էկավ, հագին շոր չկա, մի կտոր շոր աղաքին ա կապած, մի կտոր շոր քամակին ա կապած։

— Հե՛յ վա՛խ,— ասեց,— աչքերս քոռանար, ըսենց չտենայի իմ հարսին։

Հարսն էկավ դռան մոտը կաննեց, ասեց.— Ո՞վ ես։

Ասեց.— Դուռը բաց արա՛, հարսի՛, դուռը բաց արա, ես եմ։

Հարսը դուռը բաց արեց ուսուլով, տեհավ, որ մի թագավորի պես մարդ, ամոթու փախավ մտավ դռան քամակը։

Տեգրը մտավ ներքև, ասեց.— Հա՛րսի, ես քու տեգրն եմ, ա՛ռ էս շորերը, տար դու էլ հագի, էրեխանցն էլ հագցրա։

Հարսը տարավ շորերը, էրեխանցն էլ հագցրեց, ինքն էլ հագավ, էկավ դուռը բաց արեց, զորքերը ներքև լցվեցին։

Գշերը մնացին ընտեղ, առավոտը լիսը բացվեց, կանչեց ինձ [2]

---

[1] Բաղնիք (Ս. Բ.)։

[2] Բանասացի հավելումն է, նկատի ունի իր անձնավորությունը (Ս. Կ.)։

պես մի աղքատ մարդի, ասեց.— Էս տները քեզ ըլնի, մեզ պետքը չի։

Վե կալավ հարսին, էրեխանցը ու գնաց։ Գնացին հասան Ըստամբոլ, գնաց իրա ամարաթները, կանչեց իրա հորը, կանչեց իրա աներ թագավորին, ասեց.— Ա՛յ հեր, ա՛յ թագավոր, մինչև հմի թագավորը ես ի, ըստուց դենը թագավորությունը տալիս եմ իմ մենծ աղպորը։


Ասեցին.— Դո՛ւ գիտաս, մենք չենք խառնվի։

Աղպերը բերեց մենծ աղպորն էլ, կնկանն էլ օծեց թագավոր, ու դրեց թախտը։ Կերան, խմեցին, կյանք վայելեցին մինչև իրանց մեռնիլը։

Ընդոնք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

Աստանից իրեք խնձոր վեր ընկավ, մեկը՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն էլ՝ անկաջ դնողին։





41. ՋՈՒՏՈՂԻ ՄԱԼԸ ՈՒՏՈՂԻՆ ՀԱՆԱԼ Ա

Մի հարուստ մարդ առավոտը դուս ա գալի էթում բազար՝ տան համար դադ-մադ առնելու։ Էս մարդը ջեբումը ունենում ա մի ոսկի, մըն էլ մի կոպեկանոց։ Ճամփին սրան մի աղքատ ա ռաստ գալի, ողորմություն ուզում։ Էս մարդը ձեռը ջեբն ա տանում, որ մի կոպեկանոցը հանի տա աղքատին՝ ոսկին ա ձեռն ընկնում, ու չունքի վռազում էր, մըկ էլ մտիկ չի անում՝ տալիս ա, անց կենում։

Բազարումը զադ առնելիս ձեռը տանում ա ջեբը, որ ոսկին հանի, խուրդա անի, տենում ա՝ ոսկի չկա, մենակ մի կոպեկանոց ա։ Նոր գլխի ա ընկնում, որ աղքատին ա տվե։

Էն սհաթը գալիս ա էն աղքատին գտնում, աղանչաք անում.— Ա՛յ բարի,— ասում ա,— էն վախտը քեզ փող տալիս շըշկլվեցի՝ մի կոպեկանոցի տեղակ ոսկի տվի. չի՞նի եդ տաս։

Աղքատը օրդում, կրակն ա ընկնում, թե չէ՛, իրան ոսկի չի տվե. հրե՛ս, ուզում ա դա, տենա իրա փողերը։ Հարուստն էլ բան չի ասում. դրաղ ա քաշվում ու մի տեղ տափ կենում, որ տենա աղքատը ո՞րդի ա էթում՝ ինքն էլ եննուցն էթա։ Նրա բախտիցը՝ աղքատն էլ ջուխտ աչքով մայիֆ ա ըլնում։

Իրիկունը աղքատն ուրախ-ուրախ էթում ա տուն, հարուստն էլ նրա եննուցը։ Աղքատը էթում ա, էթում՝ մննում մի տուն, հարուստն էլ նրա եննուցն ա մննում։ Աղքատը տախտի տակիցը չորս բղուղ ա

հանում՝ մեջները լիքը փող, որի մեջ սև փող, որինը՝ սիպտակ, որինը՝ մանեթանոց, որինն էլ՝ ոսկի. ու սաղ օրվա հավաքած փողերը իրանց տեղերն ա ածում. սև փողը՝ սև փողի վրա, սիպտակը՝ սիպտակի, մանեթանոցը՝ մանեթանոցի։ Էն նոր բերած ոսկին էլ ծըրընգալեն քցում ա ոսկըքանց վրեն։

«Ա՛ռեք,— ասում ա,— ո՛սկիք, ձեզ ըսօր մի թաղա ընկեր էլ եմ բերե»։

Աղքատն էլ եդ բըղըղները դնում ա տախտի տակը, ինքն էլ պառկում քնում։ Հարուստը էլ վախտ չի կորցնում, տախտի տակիցը ուսուլով չորս չորս բղուղն էլ վեր ա ունում, դուռը բաց անում ու ծլկվում։

Առավոտը որ լիսանում ա թե չէ՝ աղքատը էլի դուս ա գալի աղքատություն անելու։ Սաղ օրը ինչ որ հավաքում ա՝ հավաքում, իրիկունը էլ եդ տուն ա գալի։ Տախտի տակիցը ուղում ա փողի բղըղները հանի, որ հավաքած փողերը իրանց տեղերն ածի՝ մնում ա սառած, որ տենում ա՝ ո՛նչ փող կա, ո՛նչ զադ։ Շատ ա գլխին տալի, լաց ըլնում, համա ձեռը զադ չի ընկնում։

Մի օր էլ էս աղքատը բազարի դռանը ողորմություն էր կիտում։ Էն սրա փող տանող հարուստ մարդը տեհավ թե չէ՝ ճանանչեց. կանչեց տարավ աշպազխանեն, իրա փողովը կերակուր ածիլ տվեց նրա համար, տվեց ուտի։

Աղքատը ի՛նչքան զոռ էր անում [1], կերակուրը բողազովը կուլ չէր էթում։

Աղքատը ինքն իրան միտք արեց. «Բա՛լի էս իմ փողն ա, որ կուլ չի էթում. կա, չկա՝ էս մարդն ա փողերս գողացե»։ Էթում ա դուզ էն հարստի յախեն ղայիմ բռնում.— Աղաե՛ր,— ասում ա,— իմ փողերը դու ես գողացե՝ տո՛ւ։

— Ջանը՛մ, գյո՛ղըմ,— ասում ա հարուստը,— ես քեզ լավություն արի, որ դու նրա տեղակ ինձ վրա հլա [2] շառ էլ քցե՞ս։

Աղքատը կռիվ, ղալմաղալ.— Չէ՛, իմ փողերը դո՛ւ ես տարե, որ դու ես տարե։

Հարստին քաշ տալոն տանում ա թագավորի կուշտը։

Թագավորը հարցնում ա.— Բա՛բի, ի՞նչ ես ուղում։

---

[1] Տպագիր տեքստում՝ զոռում էր. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ դեռ. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Թագավորն ապրած կենա, էս մարդը փողերս գողացել ա, չի տալի։

— Ո՞րիան գիտաս, որ սա՛ ա գողացե,— հարցնում ա թագավորը։

— Չունքի ես իմ փողովը որ զադ ի առնում՝ ըսկի բողազովս կուլ չէր էթում։ Համի էս մարդը բազարումը ինձ կերակրի ղոնաղ արևց՝ չկարացի ուտեմ, կուլ չգնաց. էրևում ա, որ գողացած փողերս էս մարդի կշտին ա։

— Թե որ քու փողը քեզ կուլ չի էթում,— ասում ա թագավորը,— բա՛ էլ քու ընչի՞ն ա պետք. հազի՛ր թող նա՛ բանացնի՝ ում կուլ ա էթում։ Դնա՛, բա՛բի, դնա՛ բանիդ. քու փողը էս մարդին իրա մոր ծծի կաթի նման հալալ ա,— ասում ա թագավորը ու ջուղար անում։





42· ՓԱՀԼԵՎԱՆ ՀԵՐ ՈՒ ՏՂԱ[1]

Ավալ ժամանակին ըլնում ա չիլնում մի բեզրգյան։ Էս բեզըրգյանը մի փահլևան նոքար ա ունենում, էնքա՜մ ղոչաղ, էնքա՜մ հունարով, որ արար աշխար տակն ու վրա աներիր, ման գայիր՝ նրա հատը փահլևան չիր գտնի։ Ի՛նչ ղվաթով փահլևանի հեննա ասես կոխ էր պրծե՝ ընչանք օրս նրա մեջքը գեննին չէր դիպե, էնքա՜մ ղոչաղ էր։

Էս փահլևանը մի մինուճար տղա ա ունենում, բերում ա սրան պսակում, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։ Սա էլ հոր նման ղոչաղ ա ըլնում։

Գալիս ա մի վախտ, էս փահլևանը ծերանում ա. կանչում ա տղին.— Ա՛յ որդի,— ասում ա,— տենում ես իմ հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յս ա մնացե. արի՛ հմի էլ դո՛ւ գնա բեզրգյանին նոքար։

— Լա՛վ, ա՛յ հեր,— ասում ա տղեն,— ո՛ր ասում ես՝ կէթամ, խի՞ չեմ էթա։

Վեր ա կենում, էթում բեզրգյանին նոքար։

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը բեզրգյանը նոքարին կանչում ա։

---

[1] Տպագիր տեքստում հեքիաթի վերնագիրը բանահավաքը չնշել և գրել է՝ «Հալալը ճարամող, հալալը չճարամող կնանիք» (Ս. Կ.)։

— Կէթաս,— ասում ա,— մի քանի ամսվա ճամփի թաղարեք կտենաս, որ էդուց պտի էթամ Երուսաղեմ ուխտ։

— Աչքիս վրեն, բեղրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա նոքարը։

Էթում ա, ինչ որ ճամփի համար պետքն էր՝ հաց-մաց, ամանչաման, ես ինչ դիտամ, չադիր, մախլաս՝ ինչ որ պետքն էր, բերում ա կապոտում, հաղիր անում։ Էդ գշեր քնում են, հեգսի օրը, բարըլսի հեննա բեղրգյանը, ինքը, իրա կնիկը վեր են կենում ընկնում ճամփա։

Էթում են, էթում, շատն ու քիչն աստոծ գիտա, գշերը մի տեղ վեր են գալի, չադիր տալի, որ մի քիչ հաց-մաց ուտեն, դինջանան, կենան ընչանք լիսանա, էլի վե կենան էթան իրանց ճամփեն։ Լիսը բացվում ա թե չէ նոքարը վեր ա կենում, տենում իրա կնիկը չկա։ Դե՛ս կնիկ, դե՛ն կնիկ, ման ա գալի՝ չի գտնում։ Գալիս ա բեղրգյանին իմաց տալի։

— Բեղրգյա՛նը սաղ ըլնի,— ասում ա,— բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց բան. էս գշեր էկել են կնկանս փախցրե, տարե. իդին տո՛ւ էթամ աշխարե աշխար, երկրե երկիր ման գամ բալի գտնեմ, բերեմ։

— Դո՛ւ գիտաս,— ասում ա բեղրգյանը,— էթում ես՝ գնա՛, մնդքն ու վարձքը քու շլինքը, համա ասսու կշտին շարթ ըլնի, թե ե՛ս թնդ գնացի Երուսաղեմ էկա՝ ե՛ս իմ չադիրը ըստե վե տամ, կենամ ընչանք գաս, թե դո՛ւ ինձանից թեզ էկար՝ դո՛ւ կենաս, ընչանք իմ գալը։ Լա՞վ։

— Լա՛վ,— ասում ա,— բեղրգյա՛նը սաղ ըլնի։

— Դե հմի մուրախաս ես, գնա՛. աստոծ քեզ բարի ճամփա տա, բարո՛վ էթաս, բարո՛վ գաս։

Տղեն ասպարավորվեց, նի էլավ ձին, բեղրգյանի հեննա մնաս բարով արեց, մի ճամփա բռնեց՝ գնաց։ Գնաց, գնաց, շա՛տ գնաց, քի՛չ գնաց, տեհավ էդ ճամփի վրեն ձիու ոնների տեղեր ա մալում անում։

— Էրևում ա,— ասեց,— ըստիան ձիավոր ա անց կացե։

Էդ իղը բռնեց՝ գնաց. ասեց. «Տեննամ ո՞րդի ա կտրվում»։ Գնաց, գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, էկավ հասավ մի չադիր։ Էն սհաթը ձիուցը վեր էկավ, ձին չադրի դռանը կապեց, մտավ չադիրը, տեհավ մի մարդ ընդե նստած։

— Բա՛ր՝աջողում, ա՛ղպեր,— ասեց։

— Բարո՛վ, հազա՜ր բարին,— ասեց չադրատերը։

— Ղոնաղ չե՞ս ուզի։

— Խի՞ չեմ ուզի, ղոնաղն ասսուն ա։ Էդ ո՞ւր ես էթում,— հարցրեց չադրատերը։

— Բա՛ չես ասի՝ հալ նաղլ ըսե՛նց, ըսե՛նց բան. ֆլա՛ն տեղը, ֆլա՛ն բեզրգյանի հեննա չադիր ինք տվե, գշերը կացե. լիսացավ թե չէ, վե կացա տեհա կնիկս չկա։ Դե՛ս ման էկա, դե՛ն ման էկա, ի՛նչ արի, չարի՝ չգտա ո՛ր չգտա։ Հմի էթում եմ կնկանս հավարին աշխարե աշխար, երկրե երկիր ման գամ, բալի գտնեմ, բերեմ։

— Տղա՛,— ասեց չադրատերը,— էդ ճամփեն, որ էթում ես, շատ դժար ճամփա ա, էթողն էլ եդ չի գալի. գիտաս խի՞։

— Խի՞,— հարցրեց տղեն։

— Ա՛սեմ։ Հերս աղաք մենծ երկրի, թագավորությունի տեր էր։ Մենք մի Քոսա նոքար ունեինք. Քոսա մի՛ ասի, մի ղուլում ասա՛՝ սաղ աշխարքը ձեռին դողում էր՝ ընե՛նց մի ազրեհիլ տղամարդ էր։ Էկավ մի վախտ, էդ Քոսեն մեզ մեր երկրիցը, տուն ու տեղիցը քշեց, ի՛նքը նստեց ընդե թագավոր։ Էդ Քոսեն,— ասեց,— մեր մհալումն էլ կնիկ չի թողե՝ էկել ա փախցրե, տարե շինե իրան կնիկ։ Որ սուտ չասեմ, ով գիտա հմի նա թամամ հազար կնիկ կունենա. կա, չկա՝ կնկանդ փախցնողն էդ Քոսեն ա, էլ մարդ չէ։ Քեզանից ղոչաղ, ջահել-ջիվան տղամարդիկ են էկե էս ճամփովն անց կացե, համա դեռ հլա էն ա, որ պտի եդ գան։ Ջունքի էդ Քոսեն մի ընննց քամու ձի ունի, որ մի տարվա ճամփեն մի օրումն ա էթում. է՜, էլ դրա ձեռիցը իսանաո՞րդի կպրծնի։ Դու արի՛,— ասեց,— ա՛յ տղա, եդ դառ, մեղք ես, ջահել-ջիվան ես՝ գնա՛ քու արևի ձենն ածա։

— Չէ՛, որ չէ,—ասեց տղեն,—ինչ ուզում ա ըլնի՝ պտի էթամ, ո՛ր պտի էթամ։ Ջրհանդա՞մը գյոռը, մի օր էլել եմ, մի օր էլ պտի մնոնեմ։

Չադրատերը տեհավ, որ չէ, տղեն մի հետ պպին ա կաննե, չի ուզում եդ դառնա.—Տղա՛,—ասեց,—մի բան ասեմ անկաջ կա՞նես։

— Խի՞ չեմ անի, ասա՛ տենամ։

— Մերս,— ասեց,— էդ Քոսի կնանոցը լեղացնող, մուտաթ կենողն ա. հրես ա՛ռ էս մատանիքն ու աղլուխը նշանաբան. կտանես մորս, կասես. «Տղեդ ա ղրկե»։ Թե անի, բալի էլի նա մի ճար անի քեզ, թե չէ իմաց կաց՝ էթալդ կըլնի, գալդ չիլնի։

Եննա դնաց մի քյահլան ձի բերեց, տվեց իրան։

— Էս ձին որ կա,— ասեց,— էդ ճամփովը շատ ա գնացե էկե-կնիլնես, հենց դյամը բաց կթողաս՝ քեզ կտանի դո՛ւզ Քոսի ամարաթի աղաքին վե կբերի։

Տղեն մատանիքն ու աղուխն առավ, դրեց ջեբը, իրա ձին թողաց ընդե, նրա քյահլան ձին նի էլավ, ընկավ ճամփա։ Գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ դիտա, դշեր գնաց, ցերեկ գնաց՝ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րեք օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, ի՛րեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս՝ հասավ Քոսի ամարաթը։ Ձիուցը վեր էկավ, դուռը ծեծեց, մի պառավ դուս էկավ։

— Ո՞ւմն ես ուզում,— հարցրեց պառավը։

— Ձյա՛ն չադրատիրոնչ մորը,— ասեց տղեն։

— Հենց ե՛ս եմ,— ասեց,— տենամ ինչ ես ուզում։

Տղեն հանեց նշանաբանը, տվեց պառավին, ասեց.— Քու տղեն ա ղրկե,— ու մին-մին նաղլ արեց, թե՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

— Լա՛վ,— ասեց պառավը,— ինչ որ ձեռիցս կգա կանեմ, չեմ խնայի. նրանից դևնը դու գիտաս, ղոչաղ տղա ես՝ Քոսի ձեռիցը կպրծնես, թե չէ հո՝ իմա՛ց կաց մենծ թիքեն անկաշդ կթողա։ Հրես էդուց,— ասեց,— հինգշաբթի ա, Քոսի կնանոնցը պտի տանեմ լեղացնեմ, դու էլ մեր եննուցը վե կա՛ց արի։ Ես մի մհանով,— ասեց,— կնկանդ ղրաղ կկանչեմ, կխոսացնեմ. դու էլ մտիկ չես տա, կքաշես թարքդ՝ յա՛լլա։

— Լա՛վ,— ասեց տղեն,— ոնց որ ասեցիր՝ ընենց կանեմ։

Հենգի օրը, պառավը Քոսի կնանոնցը աղաք արեց, տարավ լեղացնի։ Ամարաթիցը մի քիչ հեռու լավ-լավ հավրզներ կային, ամեն շաբաթ նրանց բերում էր ըտե չին-չին լեղացնում, եդ բերում ամարաթը։

Ճամփին պառավը էն տղի կնկա հեննա եդ մնաց մեկելներից, նրան խաբեց, թե թաքուն բան ա ուզում ասի։ Տղեն ձին նի էլած, հետևներից բուռուն էր պահում. հենց էս տեհավ թե չէ, ձին վրա քշեց, կնկանը քաշեց թարքը, ձիու դլուվը բրախ տվեց ու յա՛լլա։

— Հարա՛յ, հարա՛յ, հարա՛յ, էկե՛ք, հասե՛ք. Քոսի կնկանը փախցրին, տարա՛ն,— ձեն տվեց պառավը։ Սաքի թե, որ ասես՝ ինքը բանից խաբար չի։

Կնանիքն ընչանք կիտվեցին տղեն իրա մանգղիլն առավ։ Խեղ-

ճերի համամները գլխներին հարամ էլավ. բիրադնով եղ դառան, էկան՝ամարաթը։ Տղի բախտիցը Քոսեն մենծ քուն էր մտե, շնթռկե, մարդ սիրտ չէր անում էթա վե կացնի, չունքի քառասուն օրը դեռ հլա չէր թամմե։ Կացան ընչանք թամմեց, նոր որ Քոսեն քնիցը վե կացավ։

Պառավը գնաց ասեց.— Բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, կնկանդ փախցրին տարան, ճար ունես՝ տե՛ս։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

— Ո՞ր դհովը տարան։

— Է՛ս դհովն,—ասեց պառավը, ղաստի ուրիշ դիհ շանց տվեց, որ տղի եննուցը չկարենա հասնի։

Քոսեն թռավ ձին, յա՛լլա։ Դե՛ս քշեց, դե՛ն քշեց, տեհավ մի ճամփի վրա հրեն մինթանի կտորտանք։ Տղեն կնկանը որ փախցրել էր, դու մի ասի՝ կնիկը թաքուն մինթանի փեշը ճղի, շաղ տա ճամփին, որ Քոսեն իմանա իրան դվո՞րն են տարե, գա հավարին հասնի։

— Բա՛ս,— ասեց Քոսեն,— դեսն են տարե։

Էս ճամփեն բռնեց՝ գնաց։ Գնաց, գնաց, կես սհաթումը տղի եննուցը հասավ։

— Հո՛ղածին,— ասեց,— ո՞նց ես մենծ թիքեն անկաջդ թողամ։ Կնիկս տա՞լիս ես, թե չէ։

— Սելը գոռալու տեղ՝ սե՞լվորն ա գոռում,— ասեց,— էկել ես կնկանս փախցրե հերիք չի, դեռ հլա դո՞ւ ես մենծ-մենծ խոսում։ Ուզո՞ւմ ես,— ասեց,— ա՛րի կռվենք, ով ում ախտեց՝ նա նրան սրպանի։

— Լա՛վ, արի՛ կռվենք։

Էս ասեցին թե չէ, հասան իրար։ Տղի վրա պրծնիլն ու Քոսին ախտիլը՝ մին էլավ։

— Էսթա՛վուր չի,— ասեց Քոսեն,— արի ձիանոնցից վե գանք, կոխ պրծնենք. ով ում գեննովը տվեց, նրա արինը նրան հալալ ըլնի։ Ղա՞բուլ ես։

— Ղա՛բուլ եմ,— ասեց,— արի հմի էլ կոխ պրծնենք։

Կոխ պրծան։ Ջա՜նըմսան տղեն, Քոսին որ չվեկալալ բոյովը մին գեննովը տվեց՝ բըղկոնը բերնովը դուս էկավ։ Կնիկը տեհավ, որ Քոսի բանը բուրդ ա, ինքն էլ մի դհիցը վրա հասավ, ինչ հալով Քոսին տակիցը հանեց՝ քցեց տղի վրեն։ Էս հետ էրկսով տղին

վև կոխեցին, ձեռ ու ոտը կապեցին։ Ամառվա էն ճրոճրոան շոքին էր։ Բերին եռման ավազը քանդեցին, տղին ընչանք ճիտը միշին թաղեցին, իրանք գնացին ծառի հովը, որ մի քիչ քնեն, դինջանան։

Խեղճ տղեն շոքու պատռում էր, լերդ ու չիգյարը էրվում, փոթիվում. մի պուտ ջուր էր ուզում, տվող չկար, խմեր՝ սիրտը հովանար։ Ասենք նրանց կշտին մի կուժ ջուր կար, համա խեղճի ձեռ ու ոտը կապած ին, չէր կարում էթա, վեր ունի՝ խմի։ Ըսենց կացավ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ՝ տեհավ էն դհիցը սարը ճղվեց, մի եքա վիշապ դուս էկավ ընդհան ու դո՛ւզ դպա իրան։

— Փա՛ռք քեզ, աստոծ, փառքդ շա՛տ ըլնի,— ասեց տղեն,— էս խաթիցը չպրծած՝ թաղա խաթի մեջ ընկա։

Համա մնաց արմացած, որ տեհավ վիշապը գնաց, կուժը բերից տվեց իրան.— Խմա՛, ինչքամ ուզում ես,— ասեց։

Ջաթի ծարավ թուքը-մուքը կպել էր. առավ, քաշեց բերնին, մի կո՛ւշտ խմեց, եդ տվեց վիշապին։ Վիշապը տարավ դրեց էլ եդ նրանց կուշտը, բերանը բաց արեց, մի էրկու կաթ յաղու ածեց կժի մեջը, էլ եդ գնաց քաշվեց սարը։ Տղեն մնացել էր սառած մտիկ անելոն։

Մի վախտ Քոսեն քնատեղիցը վե կացավ, կուժը վե կալավ, տղին ճիճիկ տալոն դրեց բերնին՝ խմեց։ Դե միշին յաղու կար, է՛լի խմելու բաշտան՝ տրաքվեց, մեջտեղիցը էրկու[1] էլավ։ Կնիկն էս տեհավ թե չէ, վազեց Քոսի թուրը հաննց, վրա հասավ, որ տղին սրպանի։ Նո՛ր տղեն աղաչանք, պաղատանք։

— Ա՛յ կնիկ,— ասեց,— խի՞ ես ինձ մուխաննաթյուն անում, չէ՞ ես էլ քու մարդն եմ։ Արի՛,— ասեց,— ձեռ ու ոտս եդ արա, էլի ես քեզ մարդ, դու ինձ կնիկ. էթա՛նք գլխներս դինջ ապրենք։

Կնիկն ավատաց մարդի խոսքին, ձեռ ու ոտը եդ արեց, նի էլան ձիանիքը՝ էկան։ էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, հասան էն չաղրատիրոնչ կուշտը։ Նի մտան չադիրը, տեհան չադրատերը ընդեն նստած։

— Բա՛րով,— ասեց տղեն։

— Ա՛յ դու բարո՛վ, աստու հազա՛ր բարին, խերին,— ասեց չադրատերը.— ամեն ճամփեդ սալամա՛թ։ Դու էն ասա՝ տղա՞ ես, թե աղջիկ։

---

[1] Տպագիր տեքստում այս բառի փոխարեն եղել է՝ երկու, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Տղա՛ եմ,— ասեց,— գնացի, Քոսի հեննա կռիվ արի, ախտեցի, կնիկս ձեռիցը խլեցի, բերի։

Էդ գշեր դրա կշտին կացան, տղեն մին-մին նաղլ արեց՝ ո՛նց գնաց, ի՛նչ արեց, ի՛նչ չարեց, մախլաս՝ ամեն բան տեղը-տեղին ասեց։ Նստեցին, էրկեն ու բարակ զրից արին, մասլահաթ արին, եննա թեք ընկան քննեցին։ Լիսը բացվեց թե չէ, տղեն չադրատիրոնչ ձին տվեց նրան, իրա ձին նի էլավ, կնկանն էլ Քոսի ձին նի հանեց, ընկավ ճամփա։

Էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, տեհավ, է՛, հրեն մի սարի դոշի մի չադիր։ Ալբիալը ճանանչեց, որ բեզրգյանի չադիրն ա։

— Բա՛ս,— ասեց,— Երուսաղեմից եդ ա էկե, իմ ճամփեն ա պահում։ Էկան հասան չադիրը, ձիանոնցից վեր էկան, բեզրգյանին գլուխ տվին, ընդե կաննեցին։

— Ամեն ճամփեդ սալամա՛թ,— ասեց բեզրգյանը,— դե ասա տեննանք ի՛նչ արիր, ի՛նչ չարիր. ո՞ւր գնացիր, ո՞րդե գտար կնկանդ։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասեց տղեն,— բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։— Նստեց մին-մին նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Բեզրգյանը էս որ իմացավ, բերեց կնկանը մի ղաթրի պոչից կապեց, որ տանի սա՛րով, քա՛րով, քո՛ւլով տա՝ մենծ թիքեն անկաջը բերի։

Հեգսի օրը չադիրը հավաքեցին, էկան իրանց երկիրը։ Բեզրգյանը ըստե տղի համար թազադան մի սի՛րուն, նա՛շխուն աղջիկ ուզեց, պսակեց, օխտն օր, օխտը գշեր հարսանիք արեց։

Գա՛նք համի խաբար տանք նրա հորիցը։

Նրա հերը դեռ հլա սաղ էր, համա դառը-տխուր, ընչանք վերջը նոթերը կիտած, ըսկի մարդի հեննա չէր խոսում։ Բեզրգյանը ի՛նչ անում էր, ինչքամ հարցնում. «Ախար ասա՛ տեննամ՝ դարտդ ի՞նչ ա, է՞», չէր ասում։ Մի օր էլ շատ որ զոռեց, էս հետո նրա խաթրիցը չկարաց անց կենա։

— Բեզրգյա՛նը սաղ ըլնի,— ասեց,— աղաք մի գյուրզս բերիլ տո՛ւ, եննա կասեմ դարտս։

Բեզրգյանը էն սհաթը հրամայեց, որ էթան գյուրզը բերեն տան իրան։ Գնացին, իրեք, չորս ֆոգով անջախ ճըրընչալոն բերին՝ էն-

քա՛մ ծանդրն էր։ Համա փահլևան հերը մի ձեռով գյուրզը վե կալավ, մանների վրեն հաղացրեց.

— Բոշ ա,— ասեց,— ծերացել եմ. էլ հալ չի մնացե վրես։ Ես,— ասեց,— աղաք շատ ղոչաղ ի. համա գլխովս մի բան անց կացավ, նրանից դեսը ղուդումս կտրվել ա։ Իմ հարսը ես տեհար ո՞նց իրա հալալը հարամեց, մարդին մուխանեաթություն արեց. էն օձը չըլներ, Քոսի հեննա պտի սլպաներին նրան, թողայինք ընդե, ղուրդ ու ղուշի կիրակուր աներին, էն դիեը կաներին։ Համա կեանիքը ֆոմմա ես բաենց չեն. մի բանի տարի աղաք ես մի հալալ կաթնակերի ռաստ էկա, որ արար աշխար մանե գայիր՝ նրա հատը չիր գըտնի։ Հըմի բեզրգյանը սա՛ղ ըլնի, ֆեզ ճաղլ աներ՝ ո՞նց ռաստ էկա էդ թասըրով, ղոչաղ կնկանը [1]։

Մի հետ,— ասեց,— ձիս նի էլած, ասպաբավորված, էս գյուրզն էլ ձեռիս համփա ի էթում։ Մխելի տեղ գնացի, տեհա էն դհիցը մի ձիավոր դուս էկավ։— Բա՛ր'աչողում, աղպեր,— ասեցի։— Չեն չհաննեց, ո՛ր ասես եդ էլա մտիկ չտվեց, տենա ո՛վ եմ, ո՛վ չեմ՝ հենց մի գլուխ ձին քշում էր։ Ինձ ու ինձ միտք արի. «Ես,— ասեցի,— էսքան ղոչաղ փահլևան ըլնեմ, ո՞նց թե նա ինձ մարդատեղ չդնի, բարովս էլա չառնի՞»։ Ասեցի ու գյուրզս ետևիցը շպռտեցի. համա մնացի զարմացած, որ տեհա գյուրզս դիպավ՝ քյար չարեց. նա ըսկի տեղիցն էլ ժաժ չէկավ։ Ասեցի՝ մի հետ էլ տամ տե՞նամ։ Ձիուց վեր էկա, գյուրզս վե կալա, մի դըրբ էլ հասցրի՝ էլի ժաժ չէկավ։ Համա մըն էլ որ քցեցի, էս հետ նա ձիու գլուխը շուռ տվեց, քշեց դպա ինձ։ էկավ անկաջիցս բռնեց, ընենց մի ղիլ քաշեց, որ մնացի տեղն ու տեղս շըշմած, վախլությունից թուքը-մուքս կպավ՝ էլ ձեն, ծըպտուն չհաննեցի։— Իմ ետևիցն արի,— ասեց ձիավորը։ Գնացի։ Գնաց, գնաց, գնաց՝ մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, էկավ, մի ամարաթի կշտի վեր էկավ։— Ձիուցդ վե՛ր արի,— ասեց։ Վեր էկա։ Ձիավորը ջիրիցը հաննեց տասը տասնէրկու թաբլամեխ, տվեց ինձ։— Ա՛ռ ըստոնք,— ասեց,— վե տու էս ամարաթի պատին, որ ես նիլեմ վիրև։— Ճարս ինչ. ի՛նչ ասեր՝ պտի աներ, մի հետ աչքս վախեցել էր։ Ձևիցն առա, գնացի մի եքա քար բերի, որ վե տամ։ Բըրը՛խկ հա բըրը՛խկ, բըրը՛խկ հա բըրըխկ, բըրը՛խկ հա բըրըխկ՝ ինչքամ

---

[1] Շղատառով տպված ամբողջ պարբերությունը տպագիր տեքստում բացակայում է. ավելացված է բանահավաքի ձեռքով (Մ. Կ.)։

արի, չէլավ, չկարացի վե տամ։ Տեհավ, որ չեմ կարում, էկավ եր ձեռիցս առավ, դըմսկով մի դըրը տալու բաշտան՝ վե տվեց պատին։ Ըսենց դըմսկով մի դհիցը մեխն էր վե տալի, մի դհիցը նիլնում վիրև։ Վե տվեց՝ նի էլավ, վե տվեց՝ նի էլավ, վե տվեց՝ նի էլավ, ընչանք հասավ ամարաթի անգլուխը։ Մի ղաֆիլ հարայ-հրոցի ձեն ընկավ աննկաչս. հենց իմանաս ընդե իրար կոտորում ին։ Անց կացավ մի քանի վախտ, նա էլի էն մեխերովը վեր էկավ, նի էլավ ձին։— Հեննես արի՛,— ասեց։ Գնացի։ Էդ ձիավորը գնաց, գնաց, գնաց, մի գերեզմանի կողքի կաննեց, ձիուցը վեր էկավ, ձեռով էդ գերեզմանը քանդեց՝ տեհա միչին մի մեռել։

— Տե՞նում ես էս օլուն,— ասեց ձիավորը,— սա իմ մարդն ա։ Ասենք ես տղամարդի շորեր եմ հագե, համա ես տղամարդ չեմ՝ կնիկարմատ եմ։ Սրանից մի ամիս աղաք,— ասեց,— մեր դուշմաններն էկան որ ինձ փախցնեն տանեն, մարդս չթողաց, հետները կռիվ արեց. նրանք տվին մարդիս սըպանեցին։ Նրանից դեսը ես այսուն աղաչանք արի՝ ինձ էնքամ ղվաթ տա, որ մարդիս ինադը հանեմ՝ հննա ֆոդիս առնի։ Ըսօր որ էն ամարաթի գլուխը նի էլա՝ մարդիս սըպանողներին էլ ես սըպանեցի։ Սրանից դենը,— ասեց,— ինձ ապրիլը հարամ ա կացե, ես էլ պտի էթամ մարդիս կուշտը։ Քեզանից մենակ խնդիրքս էս ա, որ ինձ մարդիս կշտին թաղես։ Ձի՛ս, ասպա՛րներս քեզ եմ բաշխում, մնա՛ս բարով։

Էս ասեց թե չէ, թուրը հանեց, կոխեց իրա սիրտը, ընկավ մարդի գերեզմանի վրեն, ընդե տեղն ու տեղը դինջացավ։ Ես էլ ափալ-թափալ ֆողը վրա տվի, նրան ընդե թաղեցի։ Թողի էկա։ Էն օրվանից դեսը աչքս շատ ա վախեցե. գշեր, ցերեկ էլ դնջում չունեմ՝ հենց սրա վրեն եմ միտք անում...։

Բեզրդյանը նո՛ր իմացավ, թե էսթավուր ղոչաղ փահլևանը խի՞ պտի է՛սքամ դեն ընկնի։





43· ԱՄՈԹՈՎ ՀԱՐՍԸ

Կըլնի չիլնի մի աղջիկ։ Էս աղջիկը ղարիբ տեղ հարս գնացած ա ըլնում։ Զատկի շաբթին էս հարսի աղպերը գալիս ա քվորը տանի հերանց, որ մի քանի օր ընդեն կենա, հորնըմոր հեննա, բարեկամների հեննա, ես ինչ գիտամ՝ տես ու ճանանչի հեննա ուրախանա, էլ եդ դա կեսառանց գեղը։ Ջունքի հերանց գեղը մոտիկ ա ըլնում, ընդուր համար էլ ձի չի նիլում, վեր ա կենում աղպոր հեննա ոտով ընկնում ճամփա։ Ինքն էլ էդ վախտերքը էրկուֆոդիս ա ըլնում, որ ըսօր, էգուց պտի աղատվեր։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, խելի տեղ գալիս են, մի ղաֆիլ քվոր ցավը բռնում ա։

Ի՛նչ անի, ի՛նչ չանի, աղպորն ասում ա.— Դու աղաք-աղաք գնա՛, ես գալիս եմ։

Նրա բախտիցը ըտերանք մի էր ա ըլնում. էթում ա էդ էրի միջին ինքն իրան աղատվում, բերում մի սի՛րուն, նա՛շխուն, դրմբըռճիկ, լխտիկ-մխտիկ էրեխա։ Գոգնոցը եդ ա անում, ճոճ կապում էրի միջին, էթում ծառի լեն տերևներ պոկոտում, բերում էրեխին տոտաշոր, թաթաշոր շինում, էրեխին լավ լազաթին փաթթում, դնում ճոճը։ Ինքն իրան բերում ա էրեխի անումը դնում Օրսագյով, նըստում ըտե ճոճն օրորում, ասում.

Նանի՛կ, նանի՛կ, Օրսագյո՛վ,
Օրդ թամամ, Օրսագյո՛վ.
Լենատերև տոտաշոր,
Նեղատերև թաթաշոր.
Ջեյրանը քեզ ծիծ կտա,
Քամին կգա, կօրորա։

Ասում ա՝ օրորում, ասում՝ օրորում, ընչանք էրեխի քունը տանում ա։ Ննջա էրեխի ջոխտ թուշը պաչում ա, ըտեղ օխտը բեռը արտասունք չափում, լաց ըլնում, թողում գալի աղպոր եննուցը հասնում։ Աղպորիցն էլ ամանչում ա, բան չի ասում նրան, ընչանք հասնում ա հերանց գեղը, մորը թաքուն անկաչին ասում, թե. «Լսե՛նց, լսե՛նց, լսե՛նց բան, ֆլա՛ն էրումը ազատվել եմ, մի էրեխա բերե, ընդե ճոճ չինե, միջին քուն դրե, էկե»։

Նո՛ր մերը մարդ ա ղրկում, էրը սալըղ տալի, որ էթան բերեն։ Էթում են ման գալի, էրը գտնում, նի մննում տեննում՝ ղո՛րթ որ էրեխեն ճոճի միջին, մի ջեյրան էլ էկել ա, նրան ծիծ ա տալի։ Վեր են ունում էրեխին սաղ-սալամաթ բերում տուն։

Էլ ի՛նչ ասիլ կուզի, մերը էրեխին որ տեննում ա, ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Նո՛ր բերում են էրեխին կնքում, անումը էլի դնում Օրսագյուվ, ոնց որ մերը դրել էր։





44· ԵՐՈՒՍԱՂԵՄ ԴՈՒ ԳՆԱՑԻՐ

Ավալ ժամանակին մարդ ու կնիկ են ըլնում, ունենում են մի տղա ու մի արտով-հայով, տնարար հարս, էնքա՛մ ժամասեր, էնքա՛մ ասուվածապաշտ, էնքա՛մ աղքատներին ողորմություն տվող, որ էլ ասել չի ուզի։

Էդ հարսը օրեն մի օրը էթում ա իրանց հարևանի տունը, տենում ա հարևանի կնիկը թունդիրը վառել ա, վրեն պղնձով բան ա դրե, էփում ա։ Մոտանում ա պղնձին, խուփը վեր ունում, ի՛նչ տենում՝ միջին մի շան թուլա։ Էս որ չի տենում, մազերը գլխին բիզ-բիզ ա ըլնում։

— Ա՛յ մաղխուզվածի կնիկ,— ասում ա,— էդ ի՛նչ ես էփում։

— Քեզանից պահիմ՝ ասսա՛նից ինչ պահիմ,— ասում ա հարևանի կնիկը,— մոքափոխ ի, սիրաս գառան միս ուզեց։ Դե՛, ինձ փող ո՞րդիան ա, որ էթայի առնեի. բերի մեր շան թուլեն մորթեցի, որ էփեմ, ուտեմ։

Էդ հարսն ա՝ էն ահաթը պղինձը թունդրի վրիցը վեր ա ունում, տանում դարտկում, բերում լավ սիրունիկ լվանում, թամզացնում, թաղադան ջուր դնում թունդրի վրեն, ինքն էլ վազ ա տալի իրանց սուրուի միջիցը մի լխտիկ-մխտիկ[1] դմբռճիկ գառը ջոկում, վեր ունում, բերում մորթում, քերթում, իստակում, եննա կոտորում ա,

---

[1] *Տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով մխտիկ բառը շնշված է (Ս. Կ.)։*

ածում պղինձը, լավ-լազաթին խաշում, հանում դնում մոքափոխ կնկա աղաքը։

Էդ կնիկը հո՛, ուրախությունից չէր իմանում ի՛նչ անի. նստում ա կուշտ ու կուռ ուտում, կշտանում, էն դիհը կաննում։ Էս բանը էդ կնկանից ու հարսից սավայլի մարդ չի իմանում։

Անց ա կենում մի վախտ. էդ հարսի կեսուրն ու կեսաուը միտք են անում էթան Երուսաղեմ ուխտ։ Ճամփի թաղարեք են տենում, օրեն մի օրը էն գլխեն վե կենում, ընկնում ճամփա։ Հարսին ու տղին էլ թամբահ են անում, որ տանը մուղաթ կենան, ընչանք իրանց գալը։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ դիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, հինգ օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մի վախտ վարավուրդ են անում, տենում ի՛նչ՝ իրանց հարսը հրեն աղաքներին մեն-մենակ էթում ա։ Մնում են մարդ ու կնիկ իրար էրեսի մտիկ անելոն։

— Ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— մեր հարսը ըստերանք ի՞նչ ա շինում. չըլնի՞ սա էլ ա էթում Երուսաղեմ ուխտ։

— Բալի յանղլիշ ենք,— ասում ա կնիկը,— ա՛րի մի քիչ եզին-եզին էթանք, բալքի հասնենք, տենանք դրուստ մեր հարսն ա, թե չէ։

Մարդ ու կնիկ հարսի ենուցը կրընկնում են, ինչքամ ջաննեռումը ջան կար վազում են։ Վազում են մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, ի՛նչ անում են, չեն անում՝ չեն կարում հասնի։

Գա՛լիս են գալի, հասնում են Երուսաղեմ։ Ըտե մի օթախ են քրեհում, որ մի քանի վախտ կենան, ուխտներն անեն, պրծնեն, էլի վե կենան գան իրանց երկիրը։ Ընց որ ադաթ էր, որ ուխտավորը տեղ հասներ թե չէ՝ պտի էթար ժամ համբուրի, սրանք էլ օթախը քրեհում, տեղավորվում են թե չէ՝ վեր են կենում գալի Երուսաղեմա ժամը։ Մննում են ժամ, տենում էնքա՜մ խալխ ա լըցվե, էնքա՜մ խալխ ա լըցվե, որ ասեղ քցելու տեղ չկա։ Ժամի միջին մի տեղ կաննում են, էրեսները խաչըհանում, ծունդր դնում, աստուն աղոթք անում։ Մարդ ու կնիկ մի վախտ աչքնները դես-դեն են ման ածում, տենան ո՛վ կա, ո՛վ չկա ժամումը, մի ղաֆիլ տենում են ի՛նչ՝ իրանց հարսը հրեն բեմի կշտին կաննած։

Մարդը կնկանը թաքուն բզում ա.— Ա՛յ կնիկ,— ասում ա,— տենում ես մեր հարսը հմի էլ ո՛րդե ա էկե։

— Հա՛,— ասում ա կնիկը,— տենում եմ։ Մարդ իմանա ո՞ւմ հենենա ա էկե։

էլ ձեն-ծպտուն չեն հանում, կենում են ընչանք ժամը դուս ա գալի, իրանք աղաք-աղաք էթում են դռան կշտին կաննում, բուստն քաշում, որ հարսը դուս գա թե չէ՝ բռնեն։ Լա՛վ կենում են մի սհաթ, էրկու սհաթ, ժամը դուս ա գալի, խալխը քոմմա քաշվում են, իրանց հարսը չկա ու չկա։

Փոր-փոշման թողում են գալի իրանց օթախը։ Հեդսի օրը էլի վեր են կենում, գալի ժամ։ Պատարագը որ կաննում ա, մարդ ու կնիկ աչք են ածում, տենում իրանց հարսը էլի էկել ա հրեն բեմի աղաքին կաննե, աղոթք ա անում։ Ժամը որ դուս ա գալի, մարդ ու կնիկ էլի դուս են գալի դռանը կաննում, հարսի ճամփեն պահում։ Մտիկ են անում, մտիկ՝ տենում են խալխը բիրադի քաշվեցին, էլի իրանց հարսը չկա։ Էլի փոր ու փոշման թողում են գալի իրանց օթախը։

Մարդ ու կնիկ մի քանի վախտ ըտե կենում են, իրանց ուխտն անում, մատաղ անում, աղքատներին բաժանում, էթում քաղաքի լավ-լավ տեղարենքը ման գալի, թամաշ անում, նոր վե կենում, ճամփա ընկնում դպա իրանց երկիրը։

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստծ գիտա[1], վերջը[2] հասնում են իրանց երկիրը։ Վռազ-վռազ էթում են տուն, ասում են՝ տենանք մեր հարսն է՞կել ա, թե չէ։ Որ գալիս են տենում հարսը ընդն, մնում են արմացած, թե էս ի՞նչ էկավ տեղ հասավ, որ իրանք ճամփին չտեհան։

— Ա՛րի մի դրան թաքուն հարցնեմ,— ասում ա կեսուրը,— տենամ ի՛նչ կասի։

Հարսի կռնիցը բռնում ա, ղրաղ քաշում։

— Ա՛ղջի,— ասում ա,— մի բան եմ ուզում հարցնի, դրուստը կասե՞ս, թե չէ։

— Ա՛սա,— ասում ա հարսը,— կասեմ, խի՛ չեմ ասի։

— Դու ա՛րի դրուստն ա՛սա. էն ո՞ւմ հեննա իր գնացե սրուսաղեմ։

— Ա՛յ նանի,—ասում ա հարսը,—ա՛աստծ, ե՛րկինք, գե՛տինք, ծո՛վ, ցա՛մաք, ձեր գնալու օրից ընչանք հմի ոտս մեր շեմքիցը դուս չեմ դրե։ Ըտ էլ դեն կենա,— ասում ա,— առանց իմ մարդի ո՞նց տեղ կէթամ։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ «մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, մախլասի մի ամիս», որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում չի եղել, ավելացված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

Ըտենց նա հա՛ ա ասում, սա՝ չէ՛, նա՝ հա՛, սա՝ չէ՛, խեղճը օրթում-կրակն ա ընկնում, թե Երուսաղեմ չի գնացե՝ կեսուրը չի ավատում։ Կանչում ա իրանց տերտերին։

— Ա՛յ տերտեր,— ասում ա,— քեզ մի խնդիրք ունեմ ասելու։

— Ա՛սա,— ասում ա տերտերը։

— Սրանից մի ամիս աղաք,— ասում ա,— մարդ ու կնիկ գնացել ինք Երուսաղեմ ուխտ։ Գնացինք, գնացինք՝ տեհանք, ըհը՛, հրեն մեր հարսը, մեն-մենակ, աղաքներիս էթում ա։ Ինչ արինք-չարինք, որ եննուցը հասնենք, չկարացինք։ Էկանք, էկանք, հասանք Երուսաղեմ։ Գնացինք ժամ, որ աղոթք անենք, տեհանք մեր հարսը մեզանից աղաք ա էկե, բեմի կշտին կաննե, աղոթք ա անում։ Ժամը որ դուս էկավ, գնացինք ժամի դռանը կաննեցինք, որ դուս գա՝ բռնենք։ Ժամը դուս էկավ, խալխը քոմմա իրանց տները քաշվեցին, մեռանք մտիկ անելոն՝ ո՛նչ հարս էրևաց, ո՛նչ զադ։ Հեգսի օրն էլ էկանք՝ էլի ըտենց։ Ուխտներս արինք, պրծանք, վե կացանք եդ էկանք, տեհանք հարսը մեզանից աղաք ա էկե, տանը նստե։ Հարցրի՝ օրթում-կրակն ընկավ, թե՛ Երուսաղեմ չե՛մ գնացե։ Ա՛յ տերտեր,— ասում ա,— հմի դու կանչա՛ խոստովանացրա, բալքիմ քեզ ասի, տենանք էս ի՛նչ բաս ա։

— Լա՛վ,— ասում ա տերտերը,— ղրկա՛ գա տենամ։

Կեսուրն էթում ա հարսին ղրկում տերտերի կուշտը։ Հարսը գալիս ա տերտերի աջն առնում, աղաքին չոքում։

— Ա՛յ որդի,— ասում ա տերտերը,— լսել եմ դու մեն-մենակ վեր ես կացե գնացե Երուսաղեմ. դրո՛ւստն ասա գնա՞ցել ես, թե չէ։

Հարսն էլի օրթում-կրակն ա ընկնում, թե ինքը ո՛նչ Երուսաղեմ ա տեհե, ո՛նչ էլ գիտա Երուսաղեմա ճամփեն դվորն ա։

— Բաս որ էտենց ա, ա՛յ որդի,— վրա ա բերում տերտերը,— մի վարձք արած կըլնես, որ գնացել ա ընչանք Երուսաղեմ հասե։

Հարսը տենում ա տերտերը շատ ա զոռում, նստում ա մին-մին, տեղը-տեղին նաղլ անում իրա արած վարձքը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

Տերտերն էլ էթում ա կեսորը, կեսաուին նաղլ անում։

Կեսուրը, կեսաուը, որ իմանում են բանն ընչումն ա, վազում են հարսի ճակատը պաչում։

— Ջորանա՛ս,— ասում են,— ա՛յ որդի. Երուսաղեմ դո՛ւ գնացիր, չէ թե մեզ։

45· ՀՈՐ ՏՎԱԾ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ

Ավալ ժամանակին[1] ըլնում ա չիլնում մի մարդ, ունենում ա մի մինուճար տղա։ Էդ մարդը չունքի շատ էր ծերացե, դե՛ն ընկե, հա՛յ-հա՛յը գնացե՝ վա՛յ-վա՛յը մնացե, տղին ուզեց՝ քանի սաղ ու կենդանի ա, մի փեշակի տա, բա՛լի իրանից եղը մի կտոր հացի տեր ըլնի, գլուխ պահի։ Համա խեղճ հերը ի՛նչ բանի դրեց, ի՛նչ փեշակի տվեց՝ չէլավ, մի տեղ էլա չրնակալեց, թողաց, սալախանի ուրած ընկավ քուչեքը։

— Ջըհա՛նդամը գյոռը,— ասեց հերը,— ա՛րի դուքան դնեմ տենամ, բալի ընդե սթրում ա։— Բերեց տղին դուքան դրեց։

Անց ա կենում մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, վեց ամիս, մախլասի՝ մի տարի, էս մարդն ա՝ մի ղաֆիլ հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում. կանչում ա տղին։

— Ա՛յ որդի,— ասում ա,— տենում ես հրես մեռնում եմ. ինձանից եղը ինչ պտի անես. հլա ջահել ես, աշխարի խերն ու շառը չես գիտաս։ Ո՛րդի,— ասում ա,— քեզ ուզում եմ իրեք խրատ տամ. կլսես՝ դո՛ւ գիտաս, չես լսի՝ էլի՛ դու գիտաս, մեղքն ու վարձքը քու շլինքը։

---

[1] *Տպագիր տեքստում այս բառին հաջորդում է՝ էջմիածնում, որը ջնջված է բանահավաքի ձեռքով։ Ջնջված է նաև այդ բառի մասին տողատակին դրված ծանոթությունը. «Վաղարշապատ գյուղը նաճախ այսպես է կոչվում տեղացիներից» (Ծ. Կ.)։*

1646—30

— Ա՛յ հեր,— ասում ա տղեն,— կլսեմ, խի՞ չեմ լսի։

— Ա՛յ որդի,— ասում ա,— որդե ըլնես, ինչ բանի էլ որ ղուվլուղ անես, հենց որ ժամի ձենը լսեցիր՝ ձեռիդ ինչ վռազ բան ըլնի՝ թո՛ղ, գնա՛ ժամ, ասսուն աղոթք արա՛։ Էս մի՛ն։ Մարդ ա, ո՛րդի, կպատահի ճամփա կէթաս, որ վարար ջուր ռաստ գա՝ առանց վալադ մարդի չըմննես անց կենաս. մի քանի օր էլ եդ ինկ, բա՛ն չկա, ընչանք սրա՛ն, նրա՛ն հարցնես, հարց ու փորձ անես, մարդ գըտնես, գա քեզ անփորձանք անցկացնի։ Ըս էլ չ՛րկու։ Վրա իրեք էլ, ո՛րդի, ինձանից քեզ ամանաթ, գշերը ըսկի ճամփա չէթաս, հենց ո՛րդե մթնեց, վե՛ր արի, կա՛ց, ընչանք լիսանա. մի՛ ասի թե՝ ֆլա՛ն գեղը մոտիկ ա, էթամ հասնեմ, չէ՛։ Հրե՛ս ո՛րդի, է՛ս ա իմ իրեք խրատը. սրանից դենը դու գիտաս, կլսես՝ դո՛ւ գիտաս, չես լսի՝ է՛լի դու գիտաս, մեղքն ու վարձքը քու շլինքը։

Ասում ա, ֆոզին տալի։ Տղեն տանում ա հորը առոք-փառոք, ո՛նց որ կարգն ա, թաղում, թողում գալի տուն։

Անց ա կենում ըսենց մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մի ամիս, էրկու ամիս, մախլասի՝ իրեք ամիս, օրեն մի օրը էս տղի ընկերտինքը, որ իրա նման առուտուրական ին, ճամփի թաղարեք են տենում, ասում են. «էթանք Թիֆլիս ապրանքի, դուքանի համար ճոթ-մոթ առնենք, բերենք»։ Էդ տղեն էս որ իմանում ա, միտք ա անում՝ ինքն էլ հետները վե կենա էթա, հա՛մ աշխարք տենա, համ էլ թազա ապրանք բերի, լցնի դուքանը, ծախի։

Գալիս ա ընկորտանցն ասում.— Ես էլ եմ ուզում գա ապրանքի, չե՞ք տանի։

— Գալիս ես՝ ա՛րի,— ասում են,— խի՞ չենք տանի։

— Ե՞ր էք ճամփա ընկնում,— հարցնում ա։

— Ցլա՛ն օրը,— ասում են։

Լա՛վ։ Էս տղեն ա՝ ճամփի թաղարեք ա տենում, մի սաղ ամսվա պաշար վեր ունում, քոշ ու բարխանա անում, ընկորտանց հեննա վե կենում, ընկնում ճամփա դպա Թիֆլիս։

Գալիս են գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում են Թիֆլիս։ Ըստե ամեն մարդ իրա առուտուրն անում ա, պրծնում, եննա քոմմքով էլ վեր են կենում, բեռները կապոտում, քոշ ու բարխանա անում, քրեհդարներ բռնում, ետ դառնում գալի իրանց երկիրը։ Քոմմքից եդը մնում ա էդ տղեն. դա էլ

որ իրա առուտուրն անում ա, պրծնում, ինչ որ դուքանի համար պետքն էր առնում, էթում ա քրեհդարներ կանչում. գալիս են նրա ապրանքը բարձում ձիանիքը, հենց որ լիսը բացվում ա ընկնում են ճամփա։

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, ճամփին մի վարար ջրի ռաստ էկան, էնքա՜մ վարար, էնքա՜մ վարար, էնքա՜մ վարար՝ հենց իմանաս հետը արին էր բերում։ Խեղճերը մնացել ին գլխների վրեն շիվարած, չին իմանում ի՛նչ անեն, ի՛նչ չանեն, ո՛նց ջուրն անց կենան։ Քրեհդարներն ուզում ին տա անց կենա էն ղրաղը, տղեն չթողաց, հոր վասիաթը միտը բերեց թե. «վարար ջուր ռաստ գալիս, առանց վալադ մարդի չանցկենասա»։

— Չէ՛, ա՛ղպեր,— ասեց տղեն,— ըստե բեռները վեր դնենք, էթանք ըստերանք հարց ու փորձ անենք, բալի մի վալադ մարդ գտնենք, դա մեզ անփորձանք գետն անցկացնի։

Քրեհդարներից մինը էն դհիցը ինքն իրան ղուդուղացավ.— Ի՛նչ կա,— ասեց,— տնա՛շեններ, որ էդքան վախենում եք. էսթավուր պուճուր, մարմանդ[1] ջրիցն էլ մա՛րդ կվախի. ո՞ւզում եք աղաք ես ջուրը մննեմ, եննա՝ դուք։

Ասեց ու ղուդուղավարի ձին քշեց. ջուրը մննիլն ու գյում ընկնիլը մին էլավ։

— Հարա՛յ, մադա՛թ, հեղդվե՛ցի, հասե՛ք,— ձեն տվեց մեր ղուդուղ քրեհդարը։

Համա էլ ո՞ւր, բանը բանից անց էր կացե. ընկերտինքը ինչ արին, չարին՝ չկարացին խեղճի հավարին հասնի. իրան էլ, իրա ձիուն էլ ջուրը վեր կալավ տարավ։ Դե համի արի տես էն մեկելները ո՞նց են ուրախացե, ո՞նց են ուրախացե, որ տղի խոսքին անկաշ արին, ջուրը չմտան, թե չէ քոմմքով էլ պտի հեղդվեին, էթային ֆոդնց-ֆոդի կորչեին։

Նո՛ր էդ տղեն ձին նիլնում ա, քշում էթում մոտիկ գեղարեքը, սրա՛ն, նրա՛ն հարց ու փորձ անում, մի վալադ մարդ գտնում, բերում, լավ-լավ փեշքաշներ, բոլ փող խոստանում, որ իրանց գետն անցկացնի, հանի էն ղրաղը։ Էդ վալադ մարդն ա՝ դե՛ ջրի սաղրիկ տեղարեքը ընե՛նց գիտար, ոնց որ իրա հինգ մատը, ձին նի ա

---

[1] Տպագիր տեքստում այս բառը բանահավաքի ձեռքով ջնջված է. թողնում ենք այնպես, ինչպես տպագիր տեքստումն է (Ս. Կ.)։

ըլնում, ընկնում աղաք, սաղ-սալամաթ դրանց ջուրն անցկացնում, էլ եդ թողում, էթում իրա բանին։

Թիֆլիսից որ նոր ին դուս էկել, էդ տղին ճամփին մի բեզըրգյան ռաստ էկավ։ Էս բեզըրգյանը ընդե իրա խրիդն արե, էթում էր Գյանջա. էդ[1] տղի խելքն ու քյամալը որ տեհավ՝ շա՛տ հավանեց.

— Տղա՛,— հարցրեց բեզըրգյանը,— ո՞րդիանցի ես։

— Ցլա՛ն գեղիցն եմ,— ասեց տղեն։

— Ինձ հեննա ընկեր չե՞ս ըլնի։

— Խի՞ չեմ ըլնի,— ասեց,— համա հերս մեռնելիս ինձ վասիաթ ա արե, չեմ գիտա դու էլ ղա՞բուլ կըլնես, թե չէ։

— Ի՞նչ վասիաթ ա, ա՛սա տենամ. թե ինձ խեր ա, ձեռ կտա, ինչ պտի ասեմ, որ ղաբուլ չըլնեմ։

— Ո՛րդե ըլնեմ,— ասեց տղեն,— ինչքա՛մ վռազ բան էլ ըլնի ձեռիս, հենց որ ժամերը տվին, ալբիալը պտի վե քցեմ, թողամ էթամ ժամ, աստուն աղոթք անեմ։ Էս մի՛ն։ Ճամփա էթալիս,— ասեց.— ո՛րդե մթնի, ընդե պտի վե գամ, կենամ ընչանք լիսանա։ Էս է՛րկու։ Վրա իրեքն էլ որ,— ասեց,— վարար ջուր ռաստ գալիս՝ առանց վալադ մարդի չանցկենամ, ոնց որ դու քու աչքովը տեհար։

— Տնա՛շեն,— ասաց բեզըրգյանը,— բա՛ն գիտաս, բա՛ն ասա, թե չէ էդթավուր խելոք խրատներին ո՞վ չի ղաբուլ ըլնի։

— Լա՛վ, որ ղա՛բուլ ես, բաս ես էլ եմ ղա՛բուլ։ Ա՛րի ընկերանանք։

Ընկերանում են։ Ըստե բեռները բաց են անում, իրար ապրանք համբրում, հաշիվ անում, տղի ապրանքը բեզըրգյանի ապրանքից քիչ ա դուս գալի. ընդուր համար էլ, տղեն դառնում ա բեզըրգյանի չարեքդարը. սաքի թե՝ ինչ որ աշխատեն, չորս փայից մինը նրանը պտի ըլնի։

— Տղա՛,— ասում ա բեզըրգյանը,— բաս որ ըտենց ա, դու վե՛ աղաք-աղաք գնա Գյանջա, թադարեք տես, ընչանք ես գամ։ Հրես քեզ նշանաբան կտամ,— ասում ա,— կտանես կտաս կնկանս, կնիկս, դուքանի բալանիքը կտա, կէթաս բաց կանես, ավլիլ կտաս, կթամզացնես, որ ես գամ թե չէ՝ հազիր ըլնի, բերենք ապրանքը դարստենք, մեր բանին կենանք։

— Լա՛վ,— ասում ա տղեն,— կէթա՛մ։

---

[1] Տպագիր տեքստում՝ էդմիածնեցի, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Բեղրդյանը նշանաբանը տալիս ա տղին, տղեն վեր ա ունում, դնում ծոցը, նիլում ձին՝ յա՛լլա դպա Գյանջա։

Էթում ա, էթում ա, էթում ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, գշեր, ցերեկ էթում ա, հասնում ա Գյանջա։ Էթում ա սրա՛ն, նրա՛ն հարց ու փորձ անում։

— Յլա՛ն բեղրդյանի տունը ո՞րն ա,— ասում ա։

— Հրես է՛ս ա,— ասում են։— Տղեն էթում ա դուռը ծեծում, բեղրդյանի կնիկը դուս ա գալի, տենում մի ջա՛հել, սի՛րուն, բո՛յով, բուսա՛թով տղա հրեն ընդե կաննած։ Կնիկը տղին տեննալու բաշտան խելբամաղ ա ըլնում, մնում։

— Ո՞ւմ ես ուզում,— հարցնում ա կնիկը։

— Յլա՛ն բեղրդյանի տունն է՛ս ա,— հարցնում ա։

— Հա՛, է՛ս ա,— ասում ա կնիկը։— Խի՞ որ։

Տղեն նշանաբանը ծոցիցը հանում ա, տալի կնկանը ու մին-մին ասում, թե ինքն ո՛վ ա, յա ի՛նչ բանի համար ա էկե։ Կնիկը որ իմանում ա բանը ընչումն ա, տղին ուրախ-ուրախ կանչում ա տանում տուն։

— Ա՛յ դու բարո՛վ, հա՛զար բարին ես էկե,— ասում ա կնիկը,— ամեն ճամփեդ սալա՛մաթ. ո՞նց ես, լա՛վ ես։ Ախա՛ր ես մե՛ռա քու ճամփեն պահելուն. խի՞ էսքան եղացար։

Տղեն մնում ա սառած մտիկ աննեղն կնկա երեսին։ «Ա՛ղպեր,— ասում ա ինքն իրան,— ե՛ս ով, է՛ս կնիկն ով, որ էսքան հարց ու փորձ ա անում, էսքան ուզում, խնդում, ծիծաղում, ուրախանում, աշխարով մին ըլնում»։

Դո՛րթ ա, կնկա միտքը ծուռն էր, համա խեղճ տղեն միամիտ, սիրտը դուղ, նրան ընենց էր մտիկ տալի, ոնց որ իրա հալալ քվորը։

Կնիկը տեհավ, որ չէ՛, սա իրա ասածը չի, էլ ձեն-ծպտուն չհանեց, հեննեն ինադ ընկավ. «Թո՛ղ մի մարդա դա,— ասաց ինքն իրան,— էն վախտը ե՛ս գիտամ, դո՛»։ Գնաց դուքանի բալանիքը բերեց, տվեց տղին, տղեն տարավ, դուքանը բաց արեց, պուճախ-պուճախ լավ, սիրուն ջրջրհանեց, սրբոտեց, հազիր արեց։

Անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, բեղրդյանն էկավ, տեհավ դուքանը սիրուն ջրջրհանած, ավլած ամեն բան իրա տեղը, սարքին, կարգին՝ ուրախացավ, աշխարով մին էլավ, որ էսթավուր ղոչաղ տղա ա ընկե ձեռը։ Բերեցին էրկսով բեռները քանդոտեցին,

ապրանքը լքցրին դուքանը, է՛, ոնց որ կարգն էր դարստոեցին, իրանց առուտուրին, իրանց բանին կացան։

Անցկացավ մի վախտ, մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, օրեն մի օրը բեզրգյանի կնիկը կպավ մարդի յախեն.— Ա՛յ մարդ,— ասեց,— քեզ մի սրտ պտի ասեմ։

— Ա՛սա,— ասեց,— ա՛յ կնիկ, ասա տենամ ի՛նչ ես ասում։

— Պտի էդ տղին,— ասեց,— ջո՛ւղաբ անես, որ նրա էրեսը էլ չըտեսնամ։

— Խի՞, ա՛յ կնիկ. քեզ ի՞նչ ա արե,— ասաց մարդը։

— Բա՛ չե՞ս ասի,— ասեց,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան. ուզում էր իմ «հալալը հարամի»։— Նստում ա մարդին մին-մին նաղլ անում, մնին էրկու ավելացնում։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

— Բա ո՞նց անեմ, ա՛յ կնիկ, էդքավուր աչքաբաց, զալում տղին ո՞նց ջուղաբ անեմ. գիտա՞ս էս մի քանի ամսումը ինձ աշխարքի խեր ա տվե։ Սավայի էդ,—ասեց,—հեննեն տարով եմ կապնըվե, որ դուս էլ անեմ՝ պտի սաղ տարվա հախը տամ։

— Դո՛ւ գիտաս, ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— դուս կանես՝ լա՛վ, չես դուս անի՝ ե՛ս գլուխս կառնեմ ըստիան կկորչեմ։

Խեղճ մարդը մնացել էր էրկու ջրի արանքին, չէր գիտա ի՛նչ անի, ի՛նչ չանի։ Տղին ջուղաբ աներ՝ պտի սաղ տարվա հախը տար, դուս չաներ՝ չէր ըլնի, կնկա ձեռիցը չպտի պրծներ։

Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց.— Բա՛լի կարենամ էդ տղին մի դհով կորցնի, յա սրպանիլ տա, թե չէ էլ ուրիշ ճար իլլաջ չկա։

Էդ բեզրգյանը իրանց տան կշտին մի փուռ ուներ. վե կացավ, գնաց փռնչու յախեն կպավ.— Փռնչի՛,— ասեց,— քեզ մի բան կասեմ, պտի ա՛նկաջ անես։

— Ա՛չքիս վրեն, ա՛ղա ջան, էրկուսն ասա՛,— ասեց փռնչին։

— Էգուց էն գլխեն,— ասեց,— մընին կղրկեմ կուշտդ, կգա կհարցնի, թե. «Աղես ասում էր, ինչ որ քեզ հրամայեցի՝ արե՞ցիր, թե չէ»։ Էս որ կասի, էլ մտիկ չես տա, է՛ն սհաթը վե կունես դրան սաղ-սաղ կկոխես փուռը։

— Լա՛վ,— ասեց փռնչին,— դու ղրկա՛, նրանից դեմը ե՛ս գիտամ։

Իրիկունը տղեն դուքանիցն էկավ տուն, բեզրգյանը նրան, որ ասես, բան չասեց, սաքի թե բանից խաբար չի։ Կնիկը հացը բերեց քցեց, նստեցին, կերան, կշտացան, պրծան, դե՛սից-դե՛նից ասեցին, խոսեցին, ղրից արին՝ ընչանք քնելու վախտը։

Քնելու վախտը որ էկավ, բեզրգյանը տղին ասեց.— Է՛գուց էն գլխեն կէթաս մեր փռնչու կուշտը, դուռը կծեծես, կհարցնես. «Աղես ինչ որ հրամայել էր՝ արե՞ցիր, թե չէ»։ Կասես, էլ եդ կէթաս քու բանին։

— Լա՛վ,— ասեց տղեն,— կէթամ կհարցնեմ։

Պառկեցին քնեցին։ Տղեն որ բանից խաբար չէր, էն գլխեն թեզ վե կացավ, շորերը հագավ, էրեսը լվաց, գնաց փռնչու կուշտը, որ բեզրգյանն ինչ ապսպրել էր՝ ասի։ Քարը վե կալավ, որ դուռը ծեծի, մըն էլ տեհավ՝ ծը՛նդ, ժամերը տվին։ Ալբիալը քարը ձեռիցը վե քցեց, հոր վասիաթը միտն ընկավ, ասեց. «Էթամ ժամ, կենամ ընչանք ժամը դուս գա, էն վախտն էլ փուռը բաց կըլնի, կգամ կասեմ»։ Թողաց գնաց ժամ։

Լա՛վ։ Բեզրգյանի կնիկը չունքի մարդի միտքը գիտար, էն գըլխեն թեզ վե կացավ, թազա շորերը հագավ, լավ, սիրուն զուգվեց, զարդարվեց, կոկվեց՝ ուրախ-ուրախ գնաց ժամ։ Մի քիչ ժամումը կացավ, աղոթք արեց (աղոթքը գլխնին խոռվ կենա)[1], ասեց. «Էթա՛մ մի փռնչուն հարցնեմ, տենամ մարդիս ասածն արել ա, թե չէ»։ Մի քանի հետ ծունդր դրեց, էրեսին խաչ հանեց, դուս էկավ, գնաց փռնչու կուշտը, դուռը ծեծեց։

— Էդ ո՞վ ես,— ձեն տվեց փռնչին։

— Ես եմ,— ասեց,— դուռը բա՛ց արա։

Փռնչին դուռը բաց արեց, տեհավ իրա աղի կնիկը։

— Հը՛,— հարցրեց կնիկը,— աղեդ քեզ բան էր հրամայե՝ արե՞ցիր, թե չէ։

Փռնչին էլ ձեն-ծպտուն չհանեց, ալբիալը վե կալավ կնկանը սաղ-սաղ կոխեց թեժ փուռը։ Խեղճը հենց իմացավ աղեն դրա համար թամբահ արե. «Ո՛վ գիտա,— միտք արեց ինքն իրան,— բալի մի մուխաննաթիւթյուն ա արե մարդին, նա էլ ուզում դրան կորցնի»։

Ժամը դուս ա գալի, պրծնում, տղեն գալիս ա փռնչու կուշտը։

---

1 Փակագծում դրված արտահայտությունը ասացողինն է (Մ. Կ.)։

— Փռնչի՛,— ասում ա,— աղեդ ինչ որ Թամբահ էր արե՝ արե՞ցիր, Թե չէ։

— Հա՛,— ասում ա փռնչին,— արեցի։

Տղեն Թողում ա գալի տուն, բեզրգյանին ջուղաբ տանում, Թե փռնչուն հարցրեց, ասում էր՝ ինչ որ հրամայել էր, արել եմ։ Ասում ա, ետ գալի էթում դուքանը բաց անում, իրա առուտուրին, իրա բանին կենում։

Բեզրգյանը որ տենում ա տղեն սաղ-սալամաթ ետ էկավ, ալբիալը մատը կծում ա. «Բա՛լի,— ասում ա,— կա չկա՝ ըստե մի բան կաս։ Վեր ա կենում գալի փռնչու կուշտը։

— Փռնչի՛,— ասում ա բեզրգյանը,— էդ ո՞ւմն ես կոխե փուռը։

— Աղա՛,— ասում ա փռնչին,— դո՞ւ չասեցիր էն գլխեն ով կգա կուշտդ, ըսե՛նց, ըսե՛նց կասի՝ վե կունես կկոխես փուռը։ Էն գլխեն կնիկդ էկավ, ոնց որ ասել իր՝ ընենց հարցրեց, ես էլ անսաս վե կալա քցեցի Թեժ փուռը։

— Ա՛յ հարա՛յ,— ձեն ա տալի բեզրգյանը,— քու տո՛ւնը քանդվի, ոնց որ դու իմ տունը քանդեցիր, Թո՛ղիր։

Խեղճը շատ ա գլխին վա՛յ տալի, լա՛ց ըլնում, համա էլ ո՞ւր՝ բանը բանից անց էր կացե։ Թողում ա փոր-փոշման, դառը-տխուր գալի տուն։

Իրիկունը տղեն դուքանիցը գալիս ա։

— Տղա՛,— ասում ա բեզրգյանը,— քեզ մի բան պտի հարցնեմ, համա որ դրուստը չես ասե՝ էլ ձեռիցս չես պրծնի։

— Ասա՛,— ասում ա տղեն,— կա՛սեմ, խի՛ չեմ ասի։

— Դու ա՛րի դրուստն ասա՝ քու ու կնկանս արանքը ի՞նչ ա անցկացե։

Տղեն առաջ չեմ ու չում արեց, չուզեց մղուր գա, ասեց՝ բալի իզակորուստ անի, համա տեհավ որ չէ, բանը ուրիշ Թավուր ա, բեզրգյանը ամեն բան գիտա, էլ չկարաց պահի. ասեց. «Հալ-նաղլ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան», նստեց մին-մին նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Լա՛վ,— ասեց բեզրգյանը,— ես քեզ ավատում եմ, համա որ դու իմ կնկա կորչելու սաբաբն էլար, սրանից դենը քու աշխատանքը ինձ հարամ ա կացե, որ ոտիցդ ընչանք գլուխ ոսկի էլ դառնաս՝ ինձ պետքը չես։ Հրես,— ասեց,— էս քու սաղ տարվա Թամամ

հախը. ապրանքից էլ ինչ որ քեզ կհասնի, կէթաս վե կունես, կէթաս նո քու երկիրը։ Ատոծ քե՛զ էլ բարի տա, ընձ էլ։

— Լա՛վ,— ասեց տղեն,— որ ուզում ես՝ ըտե՛նց կանեմ։

Հաց կերան պրծան, պառկեցին, քնեցին։ Առավոտը լիսը բացվեց թե չէ, տղեն վե կացավ գնաց դուքան, դուռը բաց արեց, ապրանքից ինչ որ իրան կհասներ, չորսից մինը վե կալավ, էլ եդ դուռը շինեց, բերեց բալանիքը տվեց բեզրգյանին, հեննեն մնաս բարով արեց, էկավ քրեհդարներ բռնեց, ապրանքը բարձիլ տվեց, ընկավ ճամփա դուզ դպա իրանց գեղը [1]։

Էկավ, էկավ, էկավ, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, հինգ օր, մախլասի՝ մի շաբաթ, էրկու շաբաթ՝ հենց էն ա [2] հասվե հաս էր՝ գեղի [3] կշտին մութը գետինը կոխեց։

— Քրեհդարնե՛ր,— ասեց տղեն,— բեռները վե՛ դրեք, ըստե չադիր տանք՝ կենանք ընչանք լիսանա, նոր վե կենանք ճամփա ընկնենք։

— Տնա՛շեն,— ասեցին քրեհդարները,— էլ ըստե ինչ կա որ կենանք. հրենիկ գեղն էրևում ա։

— Չէ՛, որ չէ,— ասեց տղեն,— հերս վասիաթ ա արե, որ գշերը ճամփա չէթամ։

Ինչ արին չարին՝ չէլավ, տղեն մի հետ ս ա տ ա ն ի ձին նի էր էլե, չէր ուզում վե գա։ Դե՛ նրանք էլ ինչ պտի ասեին. բերին բեռները վե դրին, չադիր տվին՝ կացան։ Գշերվա մի վախտ տղեն վե կացավ, ասեց. «Տենամ քրեհդարները քնե՞լ են, թե չէ, հո գող, հարամի չկա՞»։ Բեռների չորս բոլորը ման էկավ, է՛ս դիհը գնաց, է՛ն դիհը գնաց՝ մըն էլ տեհավ հրենիկ գեղիցը մի մարդ ֆանառը ձեռին մի զադ ուսին կրընկում ա դպա գերեզմաննները։ Ասեց. «Արի՛ բուսուն պահեմ, տենամ էդ մարդը էս բեվախտին ուր ա էթում»։ Սատանական ընե՛նց էլ զուլում մթնագշեր էր, ընե՛նց զուլում մըթնագշեր, որ մատդ մարդի աչքը կոխեիր՝ չէր իմանա։ Տեհավ էդ մարդն էկավ, էկավ՝ հասավ գերեզմաննները. ըտե դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, մի քար գտավ. էդ քարը բանձրացրեց, բահով տակը փո-

---

[1] Տպագիր տեքստում՝ էջմիածին, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում հաջորդում է՝ էջմիածին, որը ջնջված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

[3] Տպագիր տեքստում՝ Հոռոմամի, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

րեց, ուսի զադը վե դրեց, ընդե ֆորեց, քարն էլ եդ ուսուլով քցեց վրեն, թողաց, դեղի ճամփեն բռնեց գնաց։

Տղեն էս որ տեհավ, ուրախացավ, աշխարով մին էլավ։ Խեղճը հենց գիտար էն մարդը խաղինա յա ապրանք բերեց, էն քարի տակին ֆորեց, ասեց. «Կէքեամ, կհանեմ, կհարստանամ, մալ ու դոլվաթի տեր կըլնեմ»։ Լա՛վ։ Դե՛ս մտիկ տվեց, դե՛ն մտիկ տվեց, տեհավ քրեհդարնները ընենց խոմփալեն քնած են, որ ոններիցը բռնեիր դեն քցեիր՝ չին իմանա։ Նրանց թողաց ընդե քնած, ինքը ֆանառը վառեց, յավաշ-յավաշ երմիշ հլավ դպա գերեզմաննները. դե՛ս ման էկավ, դե՛ն ման էկավ՝ էն քարը գտավ, ուսուլով բանձրացրեց, տակը մխեվի տեղ քանդեց, ընդե պահած զադը հանեց, դրեց ուսին, բերեց չադիրը։ Բաց արեց ի՛նչ տենա՝ մի սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաք աղջիկ, թագավորի աղջկանը լայաղ շորեր հագին, յարալու արած, արենշաղաղ խանչալն էլ կողքին դրած։ Ձեռը դրեց սրտին, տեհավ, ըհը՛, սիրտը քցում ա։ «Բա՛ս լավ ա,— ասեց,— դեռ հլա սաղ ա. թեզով սրան մի ճար անեմ»։

Առավոտը լիսը բացվեց թե չէ, քրեհդարներին ասեց, որ էլ չէթան գեղը, ձիանիքը ուրիշ գեղ քշեն [1]։

Դե՛, քրեհդարնե՛րին ինչ, նրանք իրանց քրեհի վեքիլն ին. ձիանիքը բարձեցին, ընկան ճամփա։

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շարաթ, էկան հասան մի ուրիշ գեղ [2]։ Ըստե տղեն իրա ապրանքը քոմմա ծախոտեց, փող շինեց, քրեհդարների հախը տվեց, ճամփու դրեց. ջոկ օթախ քրեհեց, կացավ. ենենա էդ գեղի մհալումը ինչքամ գլուխ հեքիմ կար՝ քոմմքին էլ կանչեց. «Ինչ ուզեք՝ կտամ,— ասեց,— թաքիլան էս աղջկանը մի ճար անեք»։

Էս հեքմներն ին, խելք խելքի տվին, է՛ս դեղը տվին, է՛ն դեղը տվին, հա՛յ դես, հա՛յ դեն, գշեր, ցերեկ չարչարվեցին՝ մի ամիս, էրկու ամիս, իրեք ամիս, կամաց-կամաց հիվանդը լավացավ, վե կացավ, ման էկավ, էլավ ոնց որ մորեն մին։ Հեքմներին բոլ փող

---

[1] Տպագիր տեքստում՝ «...ձիանիքը էշեն դո՛ւզ դպա Գյումրի», խմբագրումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ Գյումրի. նախորդ պարբերության մեջ բանահավաքը այս բառը փոխել է, իսկ տվյալ դեպքում մոռացմամբ թողել է, ուղղումը մեր կողմից է (Ս. Կ.)։

տվեց, ճամփու դրեց, գնացին։ Ընչանք օրս տղեն չէր գիտա՝ էս աղջիկն ո՛վ ա, ո՛վ չի, հերնըմեր ո՛ւնի, չո՛ւնի, յա ոնց ա էլե, որ սրան յարալու են արե, բերե էն գերեզմանաքարի տակը դրե, թողե գնացե։ Որ լավ լավացավ, պրծավ, նոր աղջկանը հարց ու փորձ արեց։

Աղջիկը նստեց մին-մին, տեղը-տեղին նաղլ արեց իրա գլխովը անցկացածը։

— Ե՛ս,— ասեց [1],— թագավորի աղջիկ եմ։ Հերս մի սառաֆ ուներ,— ասեց,— դրա տղի աչքն ընկել էր վրես, ուզում էր ինձ առնի։ Էդ սառաֆի տղեն ա՝ դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, մարդիկ մեջ քցեց, ինչ արեց, չարեց, չէ՛լավ, հերս ղա՛բուլ չէլավ, նա մի հետ չէ՛ էր ասե՝ է՛ն դիհը կաննե։ Էդ օրվանից սառաֆի տղեն հեննես ինադ ընկավ։ Օրեն մի օրը, իմ ղարավաշների հեննա գնացել ի գեղիցը դուս սեհր անելու։ Հենց գեղիցը մխելի հեռացել ինք, մըն էլ էն տեհանք, մի քանի ձիավոր էն դհիցը դուս էկան, ձիանոնց գլուխը բրախ տվին ու յա՛լլա դպա մեզ։ Էս որ տեհան ղարավաշներս, վախլուվյուններիցը թողին փախան, ես մնացի մեն-մենակ։ Էդ ձիավորներն էկան հասան, տեհա դրանցից մինը էն սառաֆի տղեն, ձիանոնցից վեր էկան, ձեռ ու ոտս կապեցին, վե կալան, տարան։ Ես ուշաթափ էլա, մնացի. էլ միտս չի՝ ո՛ւր տարան, ի՛նչ արին, ի՛նչ չարին. մենակ էս ա միտս, որ աչքս բաց արի՝ տեհա կշտիդ։

— Ղո՞րթ ես ասում, ա՛ղջի, թե սուտ,— հարցրեց տղեն։

— Ղո՛րթ։

— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

— Բաս որ ըտե՛նց ա,— ասեց տղեն,— դու ի՛մն ես, ես՝ քո՛ւնը։

Գնաց էն սհաթը տերտեր կանչեց, էդ տերտերը բերեց դրանց պսակեց, էլան մարդ ու կնիկ։ Ըստե մի քանի վախտ կացան, ննենա միտք արին, ասեցին. «Վե կենանք էթանք մեր քաղաքը [2], տենանք ի՛նչ կա, ի՛նչ չկա»։ Համա կնկա միտքն ուրիշ էր, նա ուզում էր սառաֆի տղից իննադը հանի, նո՛ր որ սիրտը հովանար։ Ճամփի թաղարեք տեհան, ի՛նչ ունեին-չունեին կապոտեցին, ընկան ճամփա՝ դպա իրանց քաղաքը։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ էջմիածնա, որը ջնջված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ էջմիածին. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ դիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, հասան իրանց քաղաքը։ Ըստե աղջկա հորնըմորիցը թաքուն չոկ օթախ քրեհեցին, կացան։ Անց-կացավ մի օր, էրկու օր, իրեք օր, տղի ձեռի փողը հատավ, չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի, ո՛ւմ դուռն էթա, ո՛ւմ ձեռը դեմ անի, մի քանի շահի ուզի, որ սթար անեն, ընչանք տենան վերջներն ի՛նչ ա ըլնում։ Ըսենց օրեն մի օրը տղեն դառը-տխուր նստել էր, մտքի հեննա ընկե։

— Ա՛յ մարդ,— ասեց թագավորի աղջիկը,— ի՞նչ ես միտք անում, ասա տենամ դարտդ ի՞նչ ա. խի՞ ես ըտենց դառը-տխուր նստե, չըլնի՞ ձեռիդ խարջլըղը պրծել ա, ընդուր համր ես միտք անում։

— Հա՛,— ասեց,— ա՛յ կնիկ, քեզանից պահեմ, ասսանից ի՛նչ պահեմ, լափ սրթար-մրթարից ընկել եմ, ո՛նչ վուղ կա, ո՛նչ զադ. միտք եմ անում, թե մեր վերջն ինչ պտի ըլնի։

Թագավորի աղջիկը էս որ լսեց, էն սհաթը ձեռը տարավ մազե-րի միջիցը մի ակը հանեց տվեց նրան։

— Ա՛ռ,— ասեց,— էս ակը կտանես բազար, կտաս թագավորի սառաֆի տղին։— Ի՞նչ աժի,— կհարցնես։ Կասի. «Հազար էրկու հարիր մանեթ»։— Բաս որ ըտենց ա,— կասես,— վեց հարիր մա-նեթ տո՛ւ, էն վեց հարիրն էլ քեզ փե՛շքաշ։ Սավալի էս,— ասեց,— բան ա, որ սառաֆի տղեն քեզ կանչի, ասի. «էթա՛նք մեր տունը ղոնաղ», կէթաս. համա ընենց կանես, որ հեգսի օրն էլ դու նրան բերես մեր տունը։ Իմա՞ցար։

— Իմա՛ցա,— ասեց տղեն,— ոնց որ ասեցիր՝ ընենց էլ կանեմ։

Ակը ձեռիցն առավ, վե կացավ գնաց բազար։ Դե՛, շորը-մորը փոխել էր, ուրիշ գեյմ մտե, ո՛ր ասես մարդ էլա չճանանչեց նրան, թե ո՛վ ա, ո՛վ չի։ Տարավ դո՛ւզ թագավորի սառաֆի տղի կուշտը, ակը հանեց շանց տվեց։

— Էս ակն ի՞նչ աժի,— հարցրեց։

— Հազար էրկու հարիր մանեթ,— ասեց սառաֆի տղեն։

— Բաս որ ըտենց ա,— ասեց,— վեց հարիր մանեթ տո՛ւ, վեց հարիրն էլ քեզ փե՛շքաշ։ Ռա՞զի ես։

— Ռա՛զի եմ,— ասեց սառաֆի տղեն։ Էն սհաթը ուրախ-ուրախ հանեց, վեց հարիր մանեթը նաղդ համբրեց, ակը ձեռիցն առավ, դեռ հլա իրա միջին էլ ծիծաղաց նրա վրեն, թե էս մարդը

գի՜ժ ա, ի՛նչ ա, որ էսթավուր գյողալ ակը բերել ա, կիսագին ծախում։ Իրիկունը որ էկավ տուն, հորը մին-մին նաղլ արեց.— Բա՛ չես ասի,— ասեց,— ա՛յ հեր, լսե՛նց, լսե՛նց, լսե՛նց բան, լսօր մի տղա բերեց հաղար էրկու հարիր մանեթանոց ակը վեց հարըրով ծախեց, ես էլ առա, թողաց գնաց։

— Ա՛յ որդի,— ասեց հերը,— բա խի՞ չիր էն տղին կանչում, բերում տուն, որ լավ պատիվ տայինք, ընենց ճամփու դնեինք։ Ո՛րդի, դեռ հլա ջահել ես, չես իմանում, որ էդթավուրներից մարդ, տեղն ընկած վախտը, շատ խեր կտենա։

— Լա՛վ, ա՛յ հեր,— ասեց,— որ մըն էլ ռաստ գա՝ կբերեմ։

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը, թագավորի աղջիկը տղեն էլի ղրկում ա բազար, ասում ա.— է՛ս առ, է՛ն առ, է՛ս բե, է՛ն բե, մախլաս՝ ի՛նչ որ պետքն էր, փող ա տալի, որ էթա առնի։

Էս տղեն ա՝ գնյմը փոխում ա, դուս գալի, էթում բազար։ Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, ի՛նչ որ կնիկը թամբահ էր արե՝ առնում ա, թողում գալի տուն։ Ճամփին սառաֆի տղեն սրան ռաստ ա գալի։

— Այ բարո՛վ, հազա՛ր բարին,— ասում ա սառաֆի տղեն,— քե՛ֆդ, հա՛լդ. ո՞նց ես, լա՛վ ես։

— Փա՛ռք իրա ողորմությունին,— ասում ա,— կա՛նք էլի։

— Ինչ կըլնի-կըլնի,— ասում ա սառաֆի տղեն,— ա՛րի լսօր էթանք մեր տունը ղոնաղ. շատ վախտ ա իրար չենք տեհե, դե՛սից, դե՛նից կասենք, կխոսանք, ղրից կանենք, ընչանք օր ա, կմթնի էլի։

— Լա՛վ,— ասում ա,— սառաֆի տղա, լսօր որ ես ձեր տունը գամ, խոսք տա՞լիս ես, էգուց էլ դու գաս մեր տունը։

— Խո՛սք եմ տալի,— ասում ա սառաֆի տղեն։

— Դրո՞ւստ։

— Դրո՛ւստ [1]։

— Բաս որ ըտենց ա, է՛թանք։

Վեր ա կենում գալի թագավորի սառաֆի տունը։ Գալիս են տուն, նստում են, դե՛սից, դե՛նից ասում, խոսում, մասլահաթ անում, ընչանք հացի վախտը գալիս ա, բերում են դաստախուանը բաց անում՝ նստում են հացի։ Սառաֆի տղեն իրա ղոնաղին լավ քե՛ֆ,

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է նույն հարց ու պատասխանի կրկնությունը, որը ջնջված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

ուրախությո՜ւն ա շանց տալի։ Ուտում են, խմում, լավ լվում, թըրջվում, ընենց որ լա՛փ հալից ընկնում են։ Դե՛, տղեն էդ հալին էլ հո չէր կարա վե կենա, էթա իրանց տունը, հենց ըտե գշերը մնում ա։

Մնում ա, առավոտը վե կենում, սառաֆի տղին ասում.

— Սառաֆի տղա՛, հմի՞ ինչ ես ասում. գա՞լիս ես մեր տունը ղոնաղ, թե չէ։

— Գա՛լիս եմ,— ասում ա սառաֆի տղեն,— է՛թանք։— Վեր են կենում գալի։

Գալիս են տուն։ Թագավորի աղջիկը սառաֆի տղին տենալու բաշտան՝ ալբիա՛լը ճանանչում ա, էթում ա տափ կենում, ասում ա. «Վա՛յ թե ինձ տենա, բան ֆահմիա։ Էդ էրկսով նստում են, ասում, խոսում, մասլահաթ անում, ընչանք էդ վախտը թագավորի աղջիկը կերակուր ա էփում, հաց-մաց շինում, հազիր անում։ Տղեն տանում ա դաստախուանը փռում, կերակուր ածում, բերում դնում իրանց առաջը. նստում են, ուտում, խմում, քեֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում ընչանք կես գշեր։ Սրանք որ շատ խմում են, գինովանում, հենց տեղնուտեղը թևք են ընկնում՝ քնում։ Դե՛, հո գինովը, հո մեռելը մին ա, որ ոտիցը բռնես քաշ տաս՝ չի իմանա։ Սրանք էլ ըտենց։

Գիշերվա մի վախտ թագավորի աղջիկը վեր ա կենում, էն արնոտ խանչալը վեր ունում, ո՛ր խանչալով որ իրան յարալու ին արե, ուսուլով էթում սառաֆի տղի գլխավիրևը կանգնում։ Տենում ա խըռմփալեն քնած ա. խանչալը որ չի կոխում փորը, մի քանի հետ էլ պտիտ տալի, աղիք-մաղիքը խառնըշտորում, ալբիալը ֆոգին տալիս ա։ Նո՛ր մարդին բոթում ա, վե կացնում։ Մարդը վեր ա կենում տենում ի՞նչ՝ սառաֆի տղի մեյիդը կողքին էրկեն մեկնվել ա, աղիք-մաղիքը դուս թափած, արնի միջին կորած։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— էս ի՛նչ զուլում բերիր մեր գլուխը, հմի հո մենք ֆողեց-ֆոգի կորանք։

— Բա՛ն չկա,— ասում ա կնիկը,— դրան տեղն ա. ես հո ինադա հանեցի, սրանից դենը ինչ ուզում ա ըլնի։ Մի շորի միջի էդ օլուն կփաթթես,— ասում ա,— կտանես գերեզմաննները, ման կգաս, էն գերեզմանաքարը կգտնես, որդե ինձ բերել ին ֆորե, տակը լավ կքանդես, կդնես ընդե, ֆողը վրա կտաս, քարը էլ եդ կքցես վրեն, կթողաս կգաս։

Մարդն էլ տենում ա, որ ճար, իլլաջ չկա, կնկա ասածը պտի

անի. բերում ա էդ օլուն մի շորի միջի փաթթում, դնում ուսին, տանում գերեզմանները, դե՛ս, դե՛ն ընկնում, ման գալի, էն քարը գտնում, բանձրացնում, տակը քանդում, մեյիդը դնում. ընդե, ֆողը վրա տալի, քարը էլ եդ գցում վրեն, թողում գալի տուն։

Առավոտը լիսը բացվում ա թե չէ, կնիկն ասում ա մարդին.— Ա՛յ մարդ, սրանից դենը ըստերանք մնալը հարամ ա, պտի գլուխ առնենք էթանք ուրիշ երկիր, թե չէ որ իմացան, բանը բացվեց, վա՛յն էկել ա մեզ տարե։ Կէթա՛ս,— ասում ա,— ինձ համար մի ձեռք տղամարդի շոր կառնես, թուր, ասպար ու մի հատ էլ լավ քյահլան ձի, մախլաս՝ ճամփի համար ինչ պետքն ա կառնես, վե կենանք էթանք Ըստամբոլ, ընդե կենանք, ընչանք տենանք վերջներս ի՛նչ ա ըլնում։

— Լա՛վ, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— թող ըտենց ըլնի, էթամ առնեմ։

Էս մարդն ա՝ գեյմը փոխում ա, վե կենում, էթում բազար, դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, կնկա համար մի լավ ձեռք տղամարդի շոր ա առնում, ասպար-մասպար ա առնում, էրկու էլ քյահլան ձի, թողում գալի տուն։ Էդ գշեր ըտե մնում են, ճամփի թաղարնք տենում, ի՛նչ ունեին-չունեին բերում, հազիր անում, առավոտը դեռ լիսն ու մութը չբաժանված, մարդ ու կնիկ վեր են կենում, թագավորի աղջիկը տղամարդի գեյմ ա մննում, ասպարբավորվում են, ասսու անումը տալի, թռնում ձիանիքը՝ յա՛լլա։

Էթում են, էթում են, էթում են, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, գալիս են մի չայիր-չիման տեղ, մի աղբրի կշտի վե գալի, մի քիչ դինջանան, հաց-մաց ուտեն, էլ եդ վե կենան էթան իրանց ճամփեն։ Թագավորի աղջկա վրեն հո էլ հալ չէր մնացե՝ բեզարել էր, թըլըպպե, մնացե։ Ախար խեղճը աղիզ-մազիզ մենծացած, արևի էրես չտեհած՝ կարար իրեք օր իրար վրա ճամփա էթա, ըն էլ ձիով։ Հաց որ կերան պրծան, գլուխը դրեց տղի ծընկանը, ասեց. «Մի քիչ աչքս էլա կպցնեմ, դինջանամ»։ Տղեն տեհավ, որ քնեց, ինքն էլ իրա դարտի հեննա էլավ։

— Հրե՛ս,— ասեց ինքն իրան,— ձեռներիս փողը պրծնում ա, սրանից դենը ինչ պտի անենք. ո՞ւմ դուռն էթանք, ո՞ւմ ձեռը մեկնենք, մի կտոր հաց ուզենք։ Կնիկս,— ասեց,— է՛ն դռնում որ մի ակը տվեց, տանեմ խարջեմ, իրա մազերի միջիցը հանեց, ա՛րի մի ման գամ, տենամ նրանից է՞լ կա, թե հենց էն էր, որ տվեց։

Անկաջ դրեց, տեհավ խըռըմփալեն քնած ա, ուսուլով ձեռը տարավ մազերը, դե՛ս քրքրեց, դե՛ն քրքրեց, մըն էլ ի՛նչ տենա՝ մի նարմիր մահդի կտոր, վրեն օխտ-ութ ակը շարոտած, ընե՛նց էլ մի շողշողում ին, ֆըրֆըրահար գալի, որ քիչ էր մնում մարդի աչք քոռացնեին թողային։ Էս որ տեհավ, նոր մի քիչ խեղճի սիրտը արխեյնացավ, տեղն ընկավ։ Քրտնած մատներով որ բռնել էր, ակները մի քիչ սևացել ին, ասեց. «Դնեմ արևը, չորանա, եդ վեր ունեմ պահեմ»։ Մահդի կտորը վե կալավ, դրեց արևը։ Որդիան որ էր է՛ն դհիցը մի ագռավ վեր էկավ, հալբա՛թ իմացավ միս ա, մահդի կտորը կտցեց, թռավ։ Տղեն ընկավ եննուցը, թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ, համա էլ ո՛ւր, տարավ ու տարավ։ Շատ գլխին վա՛յ տվեց, լաց էլավ՝ համա էլ ի՛նչ, բանը բանից անց էր կացե։ Մնացել էր շիվարած, չէր իմանում ի՛նչ անի, ի՛նչ չանի, ի՛նչ էրեսով կնկա էրեսին էրևա։ Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց՝ լավն էն ա գլուխ վեր ունեմ, էթամ մի դհով, աշխատանք անեմ, մի քանի շահի հավաքեմ, նոր ընդհան տամ էթամ Ըստամբոլ։ Ղունքի դիտար, եդ ու աղաք թագավորի աղջիկն էլ կգա Ըստամբոլ, ասեց. «Ընդե իրար կգտնենք»։ Ըտենց էլ արեց, ուսուլով կնկա գլուխը վե կալավ ծնկան վրիցը, դրեց գեննին, բերեց ձին թամքեց, նի էլավ՝ յա՛լլա։

Գնաց, գնաց, գնաց, շատ գնաց թե քիչ՝ աստոծ ա խաբար, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, լիս գնաց, մութ գնաց՝ դուս էկավ Թիֆլիսա շհարը։ Ըստե իրա ձին, ասպաբները քոմմա ծախոտեց, փող շինեց, որ նրանով մի քանի օր սթար անի, ընչանք մի բանի կպնիլը։ Դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, սրա՛ն հարցրեց, նրա՛ն հարցրեց, վերջը մի հարուստ մարդի ռաստ էկավ։

— Ա՛ղպեր,— հարցրեց էդ հարուստ մարդը,— կատեպան չե՞ս ըլնի։

— Խի՛ չեմ ըլնի, աղա,— ասեց տղեն,— ղաթի ես էլ գեղցի, ռանչպար մարդ, հենց էդ իմ սիրած փեշակն ա։

Իրար հեննա խոսացին, պրծան, բարըշեցին տարեկան եռեսուն մանեթ, վրեն էլ մի ձեռք շոր։

Էս մեր կատեպանն ա՝ Թիֆլիսա շհարումը մնում ա, էդ հարուստ մարդի հիքին բեջարում, մուղաթ կենում, իրա վախտին ջրում, քախանում, էտում, թաղում, եդ տալի, մախլաս, գլխներդ ի՛նչ ցավացնեմ, հիքումն ինչ չարչարվում էր՝ չարչարվում, իրի-

գունը դալիս էր, նրանց տան բանին հասնում, աղաքներին ղովլուղ անում, է՛ս անում, է՛ն անում, ընենց որ քոմմքով էլ նրան ընե՛նց ին սիրում, ընե՛նց ուզում, ոնց որ մի տան տղա։ Ըսենց մի քանի տարի կացավ դրանց կշտին, մի քանի մանեթ փող շինեց, վերջը միտք արեց, ասեց. «էթամ կնկանս հավարին, աշխարե-աշխար, երկրե-երկիր ման գամ, բալի գտնեմ»։

Էդ հարուստ մարդը շատ կպավ յախեն, թե մի տարի էլ կա՛ց, մի՛ էթա՝ չէլավ, ասեց.— Չե՛մ կարա, որ չե՛մ կարա, մուրազ ունեմ, պտի էթամ։

Դե՛ աղեն էլ ի՛նչ պտի ասեր. տեհավ՝ չիլնում, չի ուզում, բերեց նրա փողը տվեց, մի ձեռք էլ լավ շոր առավ, հագցրեց, ճամփու դրեց։ Կատեպանը հենց նոր էր ոտը շեմքիցը դուս դրե, աղեն ննուցը ձեն տվեց։

— Տղա՛,— ասեց,— մտիցս ընկել էր, մեր հիքումը մի չոր բարդի կա, մի է՛թաս կտրե՛ս, կոտորես, ցախ անես, լցնես սելը, բերես տուն, եննա էթում ես՝ գնա՛, աստոծ քեզ հեննա։

— Ա՛չքիս վրեն, ա՛ղա,— ասեց կատեպանը,— ըստե ինչ կա, որ քու խաթրը կոտրեմ. ըսօր չեմ էթա, էգուց կէթամ, մին չի՞։

Էն սհաթը եդ դառավ, էկավ տուն, սելը լծեց, կացինը քցեց վրեն, պարանը քցեց վրեն, քշեց՝ դուզ դպա հիքին։ Էկավ հիքին, կացինը վե կալավ, գնաց աղի ասած բարդին կտրեց, կոտորեց, բարձեց սելը, եննա ուզում էր ծառի խուր ու խուշը [1] կիտի, տեհավ՝ ը՞հը, ագռավի տարած մահդի կտորը՝ ակները քոմմա վրեն, էդ խուր ու խուշի միջին։ Դու մի՛ ասի, էն ագռավի բունը էն բարդու ծերին ա էլե. մահդի կտորը որ կտցել ա, բերել ա դուզ իրա բունը։

— Փա՛ոքդ շատ ըլնի,— ասեց,— աստոծ, որ իմ մալը էլ եդ ինձ ղսմաթ արիր. էս հետ պարզէրես կէթամ կնկանս կուշտը։

Ակները շորի միջին ղայիմ փաթթեց, դրեց ջեբը։ Բերեց սելը լծեց, քշեց էկավ, ցախը տանը դարտկեց, գշերն էլ ընդե կացավ, նոր էն մի օրը առավոտը սուրբ ծեքի հեննա վե կացավ, ուրախ-ուրախ ճամփա ընկավ դպա Ստամբոլ։

Սրան թողանք էթա, գանք խաբար տանք թագավորի աղջկանիցը։

---

[1] Տպագիր տեքստում՝ խուշուր-մուշուրը, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

Թագավորի աղջիկն ա՝ ո՛ր մի վախտ աչքը բաց ա անում, տենում մարդ-մադաթ չկա, մարդի ձին էլ ընդե չի՝ նստում ա ուրուրուրուր լաց ըլնում։ Ձեռը տանում ա մազերը, տենում խճճված ու ակներն էլ միչին չի։

— Հե՛յ գիտի թամահքյար մարդ,— ասում ա,— քնած վախտս ակները հանել ա, գլուխ առե, փախե։ Փա՛ռք քեզ,— ասեց,— աստոծ, փա՛ռք քու ողորմությունին։

Խեղճը կենում ա, կենում ա, ասում ա. «Ով գիտա, բալի մարդս գալիս ա»։

Կենում ա մի սհաթ, էրկու սհաթ, իրեք սհաթ, մախլասի՝ էնքա՛մ կենում ա, որ մութը գետինը կոխում ա, տենում ա՝ ո՛նչ մարդ կա, ո՛նչ զադ, նո՛ր վեր ա կենում դառը-տխուր ձին նիլնում, ընկնում ճամփա։ Գալիս ա, գալիս, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, գշեր, ցերեկ գալիս ա, հասնում ա Ստամբոլա շհարը։ Ձեռին էլի շատից-քչից փող ա մնացած ըլնում, բերում ա ըստե էդ փողովը մի փուռ ա բաց անում, հաց ծախում. սավալի էդ՝ մի հատ էլ ղարըբանոց ա շինիլ տալի, որ շհարումը ի՛նչքամ քյասիբ-քյուսուբ, ղարիբ մարդ ըլնի, գա, ըտե սթար անի. «Բա՛լի,— ասում ա,— ըսենցությունով կարենամ մարդիս գտնիմ»։

Ըսենց մեր կատեպանն էլ, որ մի քանի տարուց եդը ոտը դնում ա Ստամբոլա շհարը, էթում ա սրա՛ն, նրա՛ն հարցնում, թե.— էնթավուր էժան քարվանսրա, զադ չե՞ք գիտա, էթամ վե գամ։

— Հրենիկ ֆլա՛ն տեղն,— ասում են,— ֆլա՛ն մարդը ղարըբանոց ա շինե, քյասիբ-քյուսուբ, ղարիբ մարդիկ էթում, ընդե կենում են, ո՛նչ փող են տալի, ո՛նչ զադ. ուզում ես՝ դո՛ւ էլ գնա։

Ձաթի նա էլ էսթավուր բանի էր ման գալի, ուրախ-ուրախ վեր ա կենում, էթում՝ հարցնելոն, հարցնելոն [1] ման գալի, էդ ղարըբանոցը գտնում։

— Ղա՛րիբ եմ, ա՛ճար եմ,— ասում ա կատեպանը,— չի՞լնի, մի տեղ տաք, սթար անեմ։

— Խի՞ չիլնի,— ասում են։ Բերում են սրան մի օթախ տալի, որ կենա։

---

[1] Տպագիր տեքստում նույն «ճարցնելոն» բառը կրկնվում է երրորդ անգամ, որը բանահավաքի ձեռքով չնշված է (Ս. Կ.)։

Թագավորի աղջիկը տղին տենալու բաշտան ալբիալը մատը կծում ա. «Բա՛լի,— ասում ա ինքն իրան,— էս նա ա, ո՛ր նա»։ Համա ճանանչութիւն չի տալի. ասում ա. «Տենամ սրա վերջն ինչ ա ըլնում»։ Տղեն հո, ո՛ր ասես, չի ճանանչում կնկանը. հենց իմանում ա, ղորթմանց փռնչի ա։

Սրանց թողանք ըստե, գանք խաբարն ո՞ւմից տանք՝ սրանց երկրի թագավորից ու նրա սառաֆից։

Խաբարը որ բերին թագավորին, թե. «Աղջկանդ փախցրին, տարա՛ն», էն սհաթը թագավորը ձիավորներ ղրկեց քամակներից, որ էթան կալնեն, բերեն։ Համա ընչանք գնալները, նրանք իրանց մանգղիլը կտրել ին։ Ձիավորները դափ-դարտակ ետ դառան, էկան։ Ննա թագավորը թազադան մարդիկ ղրկեց, իրա երկրումն էլ տեղ չթողացին՝ ման էկան, սա՛ր, քա՛ր, քո՛ւ ոտատակ տվին, էլ մարդ չթողացին՝ հարցրին, աղջկանը չգտան ո՛ր չգտան։

Ըսե՛նց էլ թագավորի սառաֆը. խեղճը մեռավ ման գալոն, չարչարվելոն, դե՛ս, դե՛ն ընկնելոն, սրա՛ն, նրա՛ն հարցնելոն՝ ո՛նչ տղա գտավ, ո՛նչ ղադ. էն կորչիլն էլ որ կորավ՝ ո՛նչ իշն էրևաց, ո՛նչ թողը։

Անցկացավ ըսենց մի տարի, էրկու տարի, իրեք տարի, մախլասի՝ հինգ տարի, թագավորը, որ շատ դե՛ս ընկավ, դե՛ն ընկավ, էլ տեղ չթողաց ման էկավ, աղջկանը չկարաց գտնի, օրեն մի օրը կանչեց իրա սառաֆին։

— Ա՛ղպեր,— ասաց,— ըսե՛նց բան չիլնի. իմ աղջիկն ա ոտովգլխով կորե, քու էլ՝ տղեն. կա չկա, ըստե մի բան կա։ Ա՛րի,— ասեց,— էրկսով էլ շորներս փոխենք, աղքատի գեյմ մննենք, էթանք աշխարե-աշխար, երկրե-երկիր ման գանք, բա՛լի գտնենք, բերենք։

— Լա՛վ ես ասում, թագա՛վորն ապրած կենա,— ասեց սառաֆը,— է՛թանք։

Թագավորն ու սառաֆը խոսքները մին արին, աղքատի շորեր հագան, մի քանի տարվա ճամփի պաշար վե կալան, ընկան ճամփա։ Դե՛ն գնացին, դե՛ս գնացին, է՛ս քաղաքը, է՛ն քաղաքը, է՛ս գեղը, է՛ն գեղը, էլ տեղ չթողացին՝ տակն ու վրա արին, չգտան։ Վերջն ասեցին. «էթանք Ստամբոլա շհարը, մի՛ ընդե սալըղ առնենք, տենանք»։

Ճամփեքը ծռեցին դպա Ստամբոլ։ Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասան Ստամբոլ։ Շհաըի մեջը որ մտան՝ սրա՛ն, նրա՛ն հարցրին, թե. — Ջե՞ք գիտա էնթավուր էժան քարվանսրա, ղադ, էթանք վե գանք։

— Խի՛ չենք գիտա,— ասեցին,— հրե՛ն ֆլա՛ն տեղը, ֆլա՛ն մարդը ղարըբանոց ա շինե, ո՞վ ասես՝ էթում ա վե գալի, ո՛նչ փող ա տալի, ո՛նչ ղադ։

Թագավորին ու սառաֆին աղաք են անում, բերում էդ ղարըբանոցը։

— Ղա՛րիբ ենք,— ասում են թագավորն ու սառաֆը,— չի՞նի մի տեղ տաք, սթար աննենք։

— Խի՛ չինի,— ասում են։ Բերում են սրանց մի օթախ տալի, որ իրանց համար կենան։

Փռնչին թագավորին ու սառաֆին տենալու բաշտան՝ ալբիալը ճանանչում ա. համա ո՛ր ասես ձեն, ծպտոն չի հանում, ասում ա. «Տենամ սրա վերջն ի՛նչ ա ըլնում»։

Թագավորն ու սառաֆը հո, ո՛ր ասես, փռնչուն չճանանչեցին։ Դե՛, ախար որդիան որդե. ո՞ւմ մտքով կանցկենար, որ թագավորի աղջիկը կգար Ստամբոլ, փռնչու գեյմ կմաններ, ղարըբանոց բաց կաներ, նրանց ռաստ կգար։

Անցկացավ ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շաբաթ, օրեն մի օրը փռնչին բերեց ղոնաղլրղ սարքեց, թագավորին, սառաֆին ու կատեպանին (իրա մարդին)[1] կանչեց ղոնաղ։ Դե նրանք էլ ի՛նչ պտի ասեին՝ ուրախ-ուրախ վե կացան, էկան։ Փռնչին էս իրեքին ընե՛նց մի լավ քե՞ֆ, ընե՛նց մի լավ ուրախությո՞ւն շանց տվեց, որ էլ ասել չի ուզի։

Գլխները մի լավ տաքացավ գինուցը, փռնչին խոսք բաց արեց։

— Ի՞նչ մարդ եք,— հարցրեց,— ի՞նչ բանի համար եք էկե ըստերանք։

Թագավորն ու իրա սառաֆը ջուղաբ չտվին, մնացին իրար էրեսի մտիկ աննելոն։ Համա կատեպանը, որ տեհավ՝ սուս են կացե, ձեն, ծպտոն չեն հանում, ինքը էն դհիցը վե կացավ, մին-մին իրա գլխովն անցկացածը նաղլ արեց, ոնց որ ես ձեզ նաղլ արի. ասեց.

---

[1] Փակագծի մեջ դրված բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

— Լսե՛նց, լսե՛նց, լսե՛նց բան. էսքամ վախտ էլ ես աշխարե-աշխար, երկրե- երկիր եմ ընկե, իմ կնկա հավարին եմ ման գալի։

Թագավորն էս որ լսեց թե չէ, էն դհիցը ձեն տվեց.— Տղա՛,— ասեց,— է՛ն [1] թագավորը հենց ես եմ, որ կամ։ Բաս որ ըտենց ա,— ասեց,— հախ ու նհախ իմ աղջիկը ես քեզանից կուզեմ, էլի դու խաբար կըլնես նրանից, մարդ չէ։

— Ես էլ թագավորի սառաֆն եմ,— ձեն տվեց էն մեկել դհից սառաֆը,— ես էլ իմ տղեն կուզեմ քեզանից։

Նոր ըստե փռնչին (թագավորի աղջիկը) [2] մեջ ընկավ։

— Թագա՛վորի սառաֆ,— ասեց փռնչին,— դու քու տղեն ես ուզում, ընենց չի՞։

— Հա՛,— ասեց սառաֆը։

— Տղիդ ինչ ա՛րել են,— ասեց փռնչին,— տեղն ա. խի՞ էր ուզում թագավորի աղջկանը սրպանի, որ վերջն էն օղիեն իրա գլուխը զար։ Էդ աստու հալալ դատաստա՞նն ա,— ասեց,— որ էլ խոսք չունես ասելու— Ննան թագավորին հարցրեց.— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— դու էլ քու աղջիկն ես ուզում, ընենց չի՞։

— Հա՛,— ասեց թագավորը։

— Կա՛ց,— ասեց,— էթամ բերեմ։— Գնաց իրա օթախը, փռնչու շորերը հանեց, աղջկա շորեր հագավ, գլուխը շինեց, կոկեց, զուգվեց, զարդարվեց՝ էկավ ընդե կաննեց։

Աղջկանը տեննալու բաշտան թագավորը մի դհից, տղեն մի դհից վազեցին, փաթթվեցին ճտովը, ուրախությունից լաց էլան, խոսք չէր գալի բերաննները, որ խոսային։ Սառաֆը հո՝ մնացել էր էշ կըտրած, բերանը բաց սրանց մտիկ աննելոն։

Նոր նստեցին թաղադան քե՛ֆ, ուրախությո՛ւն, ընչանք լիսվելիս կերան, խմեցին, չա՛ն ասեցին, չա՛ն լսեցին, իրար գլխով անցկացածը նաղլ արին, հին դարմանը ֆամուն տվին, դաղդա՛ն, դաշդա՛ն, դե՛սից, դե՛նից ասեցին, խոսացին, մասլահաթ արին։

Սրանից դենը մի քանի օր էլ կացան Ստամբոլ, նոր ըստե ինչ ունեին-չունեին, հավաքեցին, կապոտեցին, քոչ ու բարխանա արին, ճամփի թադարեք տեհան, չորսով ընկան ճամփա՝ դպա իրանց երկիրը։

---

[1] Տպագիր տեքստում՝ էջմիածնա, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[2] Փակագծերի մեջ դրված բացատրությունը ասացողինն է (Ս. Կ.)։

Էկան, էկան, էկան, շատն ու քիչն աստոծ գիտա[1], հասան իրանց երկիրը[2]։ Նոր ըստե թագավորը բերեց իրա աղջկանը թագադան նշան դրեց տղի վրեն, պսակեց, օ՛խտն օր, օ՛խտը գշեր հարսանիք արեց։ Էլ ինչ քե՜ֆ, ինչ ուրախությո՜ւն, ինչ դափ ու ղուռնա՜, որ էլ հալ ու հեսաբ չկար։

Նրանք հասան ի՛րանց մուրազին, դուք էլ հասնեք ձե՛ր մուրազին։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է. «մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի մի ամիս», որը չնշված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ էջմիածին. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։



46. ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ, ԸՆ ԷԼ ԿՀՆՉԵՍ

Ըլնում ա, չիլնում մի լաշառ, անզգամ հարս։ Օրեն մի օրը էդ հարսի կեսուրը հիվանդանում ա, տեղով-բարձով թեք ընկնում։ Էդ կեսոր սիրտը խորոված ա ուզում։

Կանչում ա հարսին.— Ա՛ղջի,— ասում ա,— սիրտս խորոված ա ուզում, ի՛նչ կըլնի՝ էթաս մի քանի թիքա խորոված անես, բերես ուտեմ։

Հարսն ա՝ ջուղաբ չի տալի, փնթփնթալոն, թոնթորալոն դուս ա գալի քուչեն, առվիցը մի քանի գորտ ա բռնում, բերում խրում շամփուրը, լավ-լազաթին խորովում, եննա քաշում հացի վրեն, տանում դնում կեսոր աղաքը։ Խեղճ կեսուրը մի կտոր վեր ա ումում ուտում, տենում ա՝ գորտի միս ա։

— Ա՛յ որդի,— ասում ա,— ինձ գորտի միս ուտացրիր, բան չկա. ասսանից եմ խնդրե՝ քե՛զ էլ փոխ ըլնի, թիքումդ գտնվի։

Ասում ա՝ ֆոգին տալի։

Անց ա կենում մի վախտ՝ մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ անզգամ հարսը մի հասած տղա ա ունենում, բերում ա, դրան պսակում։ Դրան մի շատ խոնար, ասսու գառը հարս ա ռաստ գալի։

Օրեն մի օրը էդ կեսուրը սաթլըմամ ա ըլնում, հիվանդանում, տեղով-բարձով թեք ընկնում։ Հարսը կեսոր յորղան-դոշակի կշտից չէր հեռանում՝ գշեր, ցերեկ մուղաթ էր կենում, ի՛նչ ուզում էր,

ալբիալը էթում էր բերում, է՛ս տալի, է՛ն տալի, դեղ խմացնում, շորվա անում, ուտացնում, մախլաս, գլխներդ ինչ ցավացնեմ, հիվանդ ա էլի՛, ինչ սիրտն ուզում էր՝ ալուստի վազում էր բերում։

Օրեն մի օրը էդ կեսոր սիրտն էլ ա խորոված ուզում։

Կանչում ա հարսին.— Ա՛ղջի— ասում ա,— սիրտս խորոված ա ուզում. ի՛նչ կըլնի՝ էթաս մի քանի թիքա խորոված անես, բերես՝ ուտեմ։

— Ա՛չքիս վրեն,— ասում ա հարսը։

Էթում ա էն սհաթը մարդին ղրկում բազար, մի լավ [1] սուկի առնիլ տալի, բերում կոտորում [2], սոխը վրեն չրթմիշ անում [3], էթում շամփուրը բերում, շարում, տանում քաշ անում թունդիրը, որ խորովի։ Մի քանի հետ շուռ-շուռ ա տալի, որ չէրվի, ննջա հանում ա՝ տենա էփել ա, թե չէ։ Հանում ա... ի՛նչ տենում՝ խորովածացուն քոմմա գորտ ա դառե։ Շամփուրը ձեռին մնում ա սառած կաննած. չի իմանում՝ էս ի՛նչ բաս ա։

Բերում ա էդ խորոված գորտերը շամփրի վրիցը քաշում, դեն ածում, թազադան մարդին ղրկում, սուկի բերիլ տալի, խորովում, շամփրի վրեն շարում, կախ տալի թունդիրը։ Մի քիչ կենում ա, հանում ա, տենում՝ էլի գորտ ա դառե։

Որ շատ ետանում ա, կեսուրը ընդիան ձեն ա տալի.— Ա՛ղջի,— ասում ա,—ի՞նչ էլար, թե՛զ արա խորովածը բե՛, է՞։

Հարսը թողում ա, գալի կեսոր կուշտը։

— Ա՛յ, նանի,— ասում ա,— բա չես ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց բան. խորովածացուն ինչքամ շարում եմ՝ գորտ ա դառնում։ Չեմ իմանում է՛ս ինչ բաս ա։

Կեսուրը ալբիալը գլխի ա ընկնում, թե բանն ընչումն ա։

— Գնա՛ բե, ա՛յ որդի,— ասում ա,— գնա՛ բե. տվել եմ, պտի առնեմ։

Դրուստ ա ասած. «Ինչ որ ցանես՝ ըն էլ կհնձես»։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ ոշխարի, որը ջնջված է բանահավաքի ձեռքով (Ս. Կ.)։

[2] Տպագիր տեքստում՝ «սուկին խորովում», ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

[3] Մանրացնում (Ս. Բ.)։ «Սոխը վրեն չրթմիշ անում» արտահայտությունը տպագիր տեքստում բանահավաքի ձեռքով ջնջված է. պահպանել ենք տպագիր տեքստում եղածը (Ս. Կ.)։

47· ԳՈՂ ՀԱՐՍԸ

Հարս ու կեսուր են ըլնում. դրանք բոլ սիսեռ են ունենում։ Էդ հարսը շատ սիսեռակեր ա ըլնում։ Ասում իրան օրը սիսեռը գողանում էր, տանում թաքուն էփում, ուտում։ Մի՛ն, է՛րկու, հի՛նգ, տա՛սը, օրեն մի օրը կեսուրը վարավուրդ ա անում, տեսնում՝ իրանց սիսեռի տոպրակը կեսքն ա ընկե։

«Կա չկա,— ասում ա ինքն իրան,— էս մեր հարսի բաներն ա»։

Թե կեսուրը սատանա էր, հարսն էլ պակաս չէր նրանից. ալբիալը ֆահմում ա, որ կեսուրը գլխի ա ընկե։

«Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ,— ասում ա,— որ ինձ վրա սայիշ չտանի»։

Օրեն մի օրը տունն ավելելիս մի հատ սիսեռ ա գտնում. վեր ա ոռնում տանում կեսորը շանց տալի, ասում.— Ընթի՛կ ունի, քընթի՛կ ունի, կատվի նման դնչի՛կ ունի. նա՛նի, յարաբ էս ի՞նչ ա։

Կեսուրն էս որ լսում ա, ինքն իրան ասում ա. «Ծողն իմ գլխին, ո՞նց ի էս խեղճ հարսի մեղքը վեր ունում. նա ըսկի չի էլ իմանում՝ սիսեռն ի՛նչ ա, ի՛նչ չի. ո՛ւր մնաց, թե գողանա»։

48· ՍԸՌ ՁՊԱՀՈՂ ԿՆԻԿ

Կըլնի, չիլնի մի մարդ, մի կնիկ։ Էս կնիկը ասսու իրան օրը մարդի յախեն էր կպնում։

— Ա՛յ մարդ,— ասում էր,— դու խի՞ չես ինձ սըռ ասում, հենց ինչ ըլնում ա ինձանից պահում ես. հալբա՛թ վախում ես՝ էթամ սրան, նրան ասեմ։

— Հենց ըտենց ա, ա՛յ կնիկ,— ասում ա մարդը,— քեզանից պահեմ, ասսա՞նից ինչ պահեմ։ Կնկա տամարը մի քիչ բոշ ա. բերնիճ շիր չի թրջվի. դժարն էն ա մի բան ասես՝ կէթա, սա՛ղ աշխարքը չավ կանի։

— Չէ՛, ա՛յ մարդ, ես հո չեմ գժվե՝ մեր սըռն էթամ խալխին ասեմ։ Ուզում ես, փորձի համար մի հետ ասա՛, տե՛ս ո՛նց սըռ պահող եմ. թեկուզ հերս էլ պատանն ուսին գա, չեմ ասի։

— Բաս որ ըտենց ա, ա՛յ կնիկ, ըստուց ետը [1] կասեմ, տենանք ո՛նց կպահես։

Էդ գշերը քնելիս, մարդն էթում ա թաքուն մի ձու բերում, դնում ծոցը։ Առավոտը վեր ա կենում, կնկանը կանչում.— Ա՛յ կնիկ, ա՛յ կնիկ։

— Ի՞նչ ա, ա՛յ մարդ։

— Բա չես ասի՝ էս գշեր ես մի ձու եմ ածե։

— Չէ՞, դու է՞լ. մարդն էլ ձո՞ւ կածի։

---

[1] Տպագիր տեքստում՝ օրես դեները, ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։

— Չես ավատում, հրես ա՛ռ տե՛ս. համա չըլնեմ-չիմանամ, էթաս մեր հարևաններին ասես, հա՞։

— Չէ՛, ա՛յ մարդ, ո՞նց կասեմ. հո չե՞մ գժվե։

— Լա՛վ, տենանք՝ ոնց խոսքիդ տեր կըլնես։

Ջուն վեր ա ունում տալիս կնկանը։ Նա էլ միամիտ՝ ավատում ա, ձուն առնում, պահում։

Մարդը վեր ա կենում էթում բազար, իրա բանին։ Կնի՛կ դու կնիկ, էլ մաջալ մի տա, էն սհաթը ձուն վե կալ տար հարևաններին շանց տու։

— Ա՛յ խիզան,— ասում ա,— բա չե՞ք ասի, մարդս էս գշեր մի ձու ա ածե։

— Տո դե չէ՞. դու էլ ընենց սուտ ես ասում, որ «էշն ախոռումը կղռա»,—ղնամիշ են անում հարևանները։

— Ձնք ավատում՝ հրե՛ս, տեհե՛ք։—Հանում ա շանց տալի։

— Էս հո հա՞վի ձու ա,— ասում են։

— Չէ՛, ի՞նչ հավ, ի՞նչ զադ. առավոտը մարդս իրա ծոցիցը հանեց, դուք ասում եք՝ ֆլա՛ն չի, բեհման ա։

Սա հա՛ ա ասում, նրանք՝ չէ՛, սա հա՛ ա ասում, նրանք՝ չէ՛, մախլա՛ս՝ էնքամ անում ա, որ ավատացնում ա խեղճերին։

Իրիկունը մարդը բազարիցը տուն ա գալի, տենում՝ իրենց հարևանի դուռը կնանիքը կիտվե զրից են անում։ Դու հմի արի տես՝ ի՞նչ են խոսում։

— Ա՛ղջի, բա չե՞ս ասի, էս մարդը էրեկ գշեր մի ձու ա ածե։— Ըսենց իրար ասում ին, մատով նրան շանց տալի։

Մարդն էլ անկաջը կախ արած ըստոնք քոմմա լսում ա։ Թողում ա գալի տուն, քաշում ա կնկանը՝ տո՛ւր թե կտաս, տո՛ւր թե կտաս՝ չոքացնում, կաննացնում, մի՛ն, է՛րկու, տա՛սը, մախլաս, մի լա՛վ, ձեր հավան կացած, գորսում ա։

— Տեհա՞ր,— ասում ա,— ա՛յ կնիկ, ասսու իրան օրը յախես իր կպնում, թե. «Սրո չես ասում, սրո, չես ասում»։ Հրենիկ ասեցի. քա խի՞ էն սհաթը փեշոմդ կոլոլեցիր, տարար քուչեն։ Բալի էդ չէր՝ մի ուրիշ թաքուն բան ի ասում, պտի էթայիր սաղ գեղը չա՞վ աներիր։

Սրանից դենը մարդը թոբա[1] արեց, որ ասես, կնկանն էլ սրո չէր ասում։

---

[1] Տպագիր տեքստում՝ բորալամա, ուղղումը բանահավաքինն է (Մ. Կ.)։



49· ԱՆԶԳԱՄ ԿՆԻԿԸ

Կըլնի, չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ քյասիր, անճար են ըլնում։ Մարդը էթում էր սրա-նրա կուշտը ֆահլություն անում, հոտաղություն անում, յա էթում էր հանդը, չոփ-մոփ հավաքում, թիթեն հավաքում, տանում ծախում, մի քանի շայի աշխատում, բերում օղլուշաղը պահում։ Մի խոսքով, մարդը շատ աշխատավոր մարդ էր. համա կնիկը ընե՞նց մի անզգամ, ընե՞նց մի աստու էրեսիցը թափած, ընե՞նց մի տնաքանդ, որ էլ չեմ կարա ասի։

Աստու իրան օրը մարդի յախեն էր կպնում.— Ա՛յ մարդ,— ասում էր,— գնա՛ ինձ համար է՛ս առ, է՛ն առ. գնա է՛ս բե, է՛ն բե. է՛ս չթին չեմ հավանում, է՛ն չթիցը բե։

Ըսենց խեղճ մարդին դարդավարամ էր արե, թողե։

Մեռնում էր կնկանը խրատելուն.— Ա՛յ կնիկ, ախար ըսենց չիլնի. տենում ես քյասիբ, օրեն հացի մուրացկան ենք, անջախ ենք ծերը ծերին հասցնում, գլուխ պահում, պտի մեր յորղանու գյորա ոնևերս մեկնենք։

Համա ո՞ւմ ես ասում. նա հենց իրա էշն էր քշում։ Վերջը որ շատ մարդի աֆաթն առավ, մարդը միտք արեց, գլուխն առնի, մի դհով էթա, բայի կնկա ձեռիցը պրծնի։ Օրեն մի օրը մի քիչ հացմաց վե կալավ ու յա՛լլա՝ դռնե դուս։

Գնաց, գնաց, գնաց, շատն ու քիչն աստոծ գիտա, դուս էկավ

մի շոլ, յաբանի տեղ։ Ըսենց մտքի հենենա ընկած էթում էր, բիրդան տեհավ հրեն գեննին մի եքա կոլոլ քար։ Ճըռընչալեն էդ քարը բանձրացրեց, եդ քցեց՝ տեհավ տակին. ըհը՛, մի խոր, անտակ ֆոր, միջից էլ մի ղըժվըժոցի, ղալմաղալի ձեն ա գալի։ Վախլությունիցը էն սհաթը քարը էլ եդ դնում ա ֆորի բերնին։

«Էս լավ էլավ,—ասում ա ինքն իրան,—սրանից էլ լավ տեղ չկա. էթամ կնկանս խաբլությունով բերեմ քցեմ ըստե, բալի մի հետ յախես աղատվի նրա ձեռիցը»։ Թողաց, էկավ տուն։

— Ա՛յ կնիկ,— ասեց,— ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ըսօր դնացել ի հանդը չոփ հավաքելու. տեհա՝ գեննին մի կոլոլ քար վեր ընկած ա, բանձրացրի քարը, ի՞նչ տենամ՝ մի եքա ֆոր, մեջը լիքը խազինա՝ էլ ոսկե մատանքնե՞ր[1], էլ մարգարտնե՞ր, էլ մարջանե՞ր ու հազար մի ջուտա թանկագին քարեր. քոմմա ընենց ֆըրֆըրահար ին գալի, պսպղում, որ մարդի քեֆ ին բերում։

— Ղո՞րթ,— հարցնում ա կնիկը։

— Ղո՛րթ։ Ջես ավատում, է՛թանք տես։

— է՛թանք,— ասում ա կնիկը։

Մարդ ու կնիկ առավոտը գշերով-գշերհանա վեր են կենում, մի էրկեն պարան վեր ունում, ճամփի համար պաշար վեր ունում, ընկնում ճամփա։ Գալիս են, գալի, հասնում են էդ ֆորի ղրաղը։ Մարդը քարը բանձրացնում ա։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— բե՛ պարանը կապենք մեջքս, կախ ըլնեմ ֆորը, ի՛նչ կա չկա, հավաքեմ, դուս գամ։

— Ջէ՛, ա՛յ մարդ, ես պտի կախ ըլնեմ. դու կէթաս լավ զադերը վե կունես, փսերը կթողաս ինձ։

Քոռն ի՞նչ կուզի՝ էրկու աչք։ Ջաթի մարդն էլ հենց էս էր ուզում։ Բերեց պարանը կապեց կնկա մեջքը, կախ արեց ֆորը։ Հենց որ հասավ անտակը, մարդը պարանի տուտը ձեռիցը բաց թողաց։ Ննննա բերեց էն քարը էլ եդ դրեց ֆորի բերնին, որ դուս չգա։

— Ջըհա՜նդամը գյոռ,—ասեց,—հո՛ յախես պրծացրի անզգամ կնկանս ձեռիցը, սրանից դենը ի՛նչ ուզում ա ըլնի. որ էն աշխարքումը Կարե կարասի միջին էլ տնկվեմ, դուս չգամ, յա թե չէ Դժոխքի կրակում էրվեմ, փոթոթվեմ, է՛լի այնումս չի։

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ էլ բոլիաճանե՞ր, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

Վե կացավ, էկավ տուն։ Անցկացավ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, օրեն մի օրը ասեց. «էթամ, տենամ կնիկս ինչ հալի ա. մեռա՜վ, սա՜ղ մնաց»։

Էկավ, էկավ, հասավ ֆորի ղրաղը։ Անկաջ դրեց, ի՜նչ տենա՝ ֆորի միջիցը մի ընե՜նց ղըժվըժոցի, մի ընե՜նց հարայ-հրոցի ձեն ա գալի, որ աստոծ փրկի, ազատի։

Քարը մի քիչ դեն տարավ թե չէ, տեհավ ընդհան ձեն տվին. «Ա՜սու սիրուն, ա՛յ հողածին, ի՛նչ կըլնի՝ էդ քարը դեն քցես, մի ըստիան դուս գանք, էս Անզգամ կնկա ձեռիցը պրծնենք. հալբաթ մընք էլ մի օր քու լավությունի տակիցը դուս կգանք»։

Էդ մարդի մեղքն էկավ, քարը բանձրացրեց, ֆորի բերանը բաց արեց, տեհավ, ըհը՛, ընդհան Սատանեքը իրար եննուցը դուս էկան, ֆորի չորս բոլորը կաննեցին։ Սատանեքանցը որ տեհավ, վախլությունիցը քիչ մնաց լեղի-մեղին պատռի։

Համա Սատանեքանց մենծը մոտացավ նրան.— Մի՛ վախի,— ասեց,— դու որ մեզ ըսենց մի լավություն արիր, էն Անզգամ կնկա ձեռիցը պրծացրիր, պտի քու լավությունի տակիցը դուս գանք՝ մընք էլ քե՛զ մի լավություն անենք։ Ես,— ասեց,— հրես կէթամ, կմննեմ թագավորի աղջկա փորը. ի՛նչ դեղ, դարման անեն, ի՛նչ հեքիմ բերեն, չեմ դուս գա։ Էս որ կլսես,— ասեց,— վե կկենաս, կգաս թագավորի կուշտը. «Թագա՛վորն ապրած կենա,— կասես,— ես քու աղջկանը կլավացնեմ»։ Հենց որ կմննես աղջկա օթախը, ալբիալը ես դուս կգամ, կէթամ. աղջիկը կլավանա, կըլնի ոնց որ մորեն մին։

Սատանեն էս կասի ու աներևութք կըլնի։ Էս մարդն ա՝ վե կկենա, կգա իրանց տունը։ Անց կկենա մի վախտ, սաղ գեղը շավ կըլնի, թե. «Թագավորի աղջիկը գժվել ա, քառասուն տակ ղընջլով նրա ձեռ ու ոտը կապել են, քցե մի օթախ. աշխարումն էլ հեքիմ չի մնացե, բերել են՝ լավանալու ճար, իլլաջ չիլնում»։

Էս մարդը էս որ կլսի, վե կկենա կէթա թագավորի կուշտը։

— Խի՞ ես էկե,— կհարցնի թագավորը։

— Ես հեքիմ եմ,— կասի,— էկել եմ աղջկանդ լավացնեմ։

— Թե լավացրիր,— կասի թագավորը,— ի՛նչ ուզես՝ կտամ։

Սրան կտանեն աղջկա օթախը։ Կտենա, ղորթ որ, հրեն քառասուն տակ ղընջլով ձեռ ու ոտը կապված։ Կմոտանա աղջկանը, սուտմուտ գիր կանի, ինքն իրան կփընթփընթա, սաքի թե աղոթք ա

ասում։ Սատանեն սրան որ կտեսնա, ալբիալը դուս կգա աղջկա փորից, կէթա։

— Տե՛ս,— կասի Սատանեն,— ըստիան էթում եմ Հնդստանու թագավորի աղջկա փորը մննեմ։ Համա չըլնեմ-չիմանամ գաս ընդե հա՞, թե չէ իմաց կաց՝ նրան կթողամ, քու փորը կմննեմ։

— Չէ՛,— կասի,— հո չեմ գժվե. գալիս եմ՝ ի՛նչ անեմ։

Սատանեն կթողա, կէթա։ Էդ մարդը աղջկա զընջլները եդ կանի, կրերի թագավորի կուշտը։ Աղջիկը կլավանա, կըլնի ոնց որ մորեն մին։ Թագավորը կուրախանա, աշխարով մին կըլնի։

— Ա՛յ մարդ,— կասի,— ուզա՝ տամ։

— Թագա՛վորը սաղ ըլնի,— կասի,— ի՛նչ տաս՝ ղաբուլ եմ։

— Բաս որ ըտենց ա, իմ աղջիկը տալիս եմ քեզ. տա՛ր, մորդ կաթի նման քեզ հալալ ա. չունքի դու չըլնեիր՝ նրան լավացնելու ճար, իլլաջ չէր ըլնի։

Թագավորը բերում ա աղջիկը սրան ա տալի, օխտն օր, օխտը գշեր հարսանիք անում։

Սրան թողանք ըստե, գանք խաբար տանք Սատանիցը։

Սատանեն էթում ա մննում Հնդստանու թագավորի աղջկա փորը։ Թագավորը աշխարումն էլ հեքիմ չի մնում՝ բերիլ ա տալի, չեն կարում լավացնի։ Վերջը խաբար են տալի թագավորին, թե՝ ֆլան թագավորի փեսեն ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գլուխ հեքիմ ա, թե լավացնի՝ նա կլավացնի, էլ մարդ չէ։ Հնդստանու թագավորը էն սհաթը մարդ ա ղրկում էդ թագավորի կուշտը, ապսպարում, որ փեսին ղրկի, գա իրա աղջկանը լավացնի, թե չղրկեց,— ասում ա,— մենծ ղոշուն վե կունեմ, կէթամ վրեն կռիվ։

Էդ Հնդստանու թագավորի մարդն ա՝ ճամփի թադարեք ա տենում, վե կենում, ընկնում ճամփա։ Գալիս ա, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էդ թագավորի երկիրը։

Էթում ա թագավորին գլուխ տալի, ասում.— Թագա՛վորն ապրած կենա, Հնդստանու թագավորի աղջիկը գժվել ա. լսել ա, որ քու փեսեն ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գլուխ հեքիմ ա, կանչում ա, որ նրան լավացնի։

Խեղճ փեսեն մնացել էր էրկու ջրի արանքին. չէր իմանում ինչ անի, չէթար՝ պտի էրկու թագավորի արանքը կռիվ դուս գար. էթար՝ վախում էր Սատանեն աղջկանը թողար, գար մններ իրա փորը։

Միտք արեց, միտք արեց, վերջն ասեց. «Ջրհա՛նդամը գյոռ, կէթամ, ինչ ըլնում ա՝ ըլնի»։

Էս մարդն ա՝ ճամփի թագարեք ա տենում, Հնդստանու թագավորի ղրկած մարդի հեննա վե կենում, ընկնում ճամփա։ Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ գիտա, մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ մի շարաթ [1], հասնում ա Հնդստան։ Էթում ա դուզ թագավորի ամարաթը, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Ֆլա՛ն հեքիմը դո՞ւ ես,— հարցնում ա թագավորը։

— Հա՛, թագա՛վորն ապրած կենա, ես եմ,— ասում ա։

— Իմ աղջկանը կարա՞ս լավացնի։

— Բանն աստոծ,— ասում ա,— թագա՛վորը սաղ ըլնի։

Էս մարդին տանում են թագավորի աղջկա օթախը։ Տենում ա՝ հրեն աղջիկը զընջլներով կապկպած ա։ Սատանեն սրան որ տենում ա, ձեն ա տալի.— Ա՛յ մարդ, չէ՞ ես քեզ ասեցի՝ չգաս. դու ո՞նց սիրտ արիր էկար։

— Սո՛ւս, Սատանա աղպեր,—ասում ա,—ես հո չե՞մ էկե սրան լավացնեմ. էկել եմ քեզ իմաց տամ, որ էն Անզգամ կնիկը ֆորի միջիցը դուս ա էկե, քու եննուցը ման ա գալի։ Լսել ա, որ էկել ես Հնդստան, ինքն էլ վեր ա կացե, էկե քու հավարին. ճար ունես՝ տե՛ս։


— Ամմա՜ն, ասսու սիրուն,— ասում ա Սատանեն,— բաս որ ըտենց ա՝ դուս գամ ըստիան փախնեմ, էթամ ուրիշ երկիր, քանի էն կնիկը չի էկե, ինձ գտե։

Սատանեն էս ասում ա թե չէ, թագավորի աղջկա փորիցը դուս ա գալի, փախնում։ Աղջիկը ալրիալը լավանում ա, ըլնում ոնց որ մորեն մին։ Նոր էդ մարդը աղջկա զընջլները եդ ա անում, տանում թագավորի կուշտը։

Թագավորը ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Բերում ա էդ մարդին իրա քաշովը մին ոսկի ա տալի, ճամփու դնում էլ եդ իրանց երկիրը։

---

[1] Տպագիր տեքստում այս արտահայտությունը բանահավաքի ձեռքով չընչված է (Ս. Կ.)։



50· ԸՍԵՆՑ ԷԼ ՉԻ ՄՆԱ

Կրլնի, չիլնի մի մարդ։ Էս մարդը ավալախրը մի մինուճար տղա ա ունենում՝ ըսենց տասնըհինգ-տասնըվեց տարեկան։ «Ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ,— միտք ա անում հերը,— տղիս ի՞նչ բանի, ի՞նչ փեշակի տամ, որ լավ ըլնի։ Տանեմ թագավորի կուշտը՝ նոքար,— ասում ա,— սրանից էլ լա՛վ բան չիլնի»։ Էթում ա թագավորի նաղրին ա աղաչանք անում, վեզրին ա աղաչանք անում, սրա՛ ոտն ընկնում, նրա՛ ոտն ընկնում, սրա՛ն ասում, նրա՛ն ասում, մախլաս՝ էնքամ անում ա, որ թագավորը բերում ա, դրա տղին վեր ունում իրան նոքար։

Էս տղեն ա՝ թագավորի աղաքին ղուլլուղ ա անում մի տարի, էրկու տարի, իրեք տարի։ Թագավորին շատ դիր ա գալի։ Թագավորը սրան էնքա՞մ էր սիրում, էնքա՞մ ուզում, որ էս աչքից էն աչրը չէր փոխում։

Օրեն մի օրը, էս տղի հերն ասում ա՝ «էթամ տեննամ՝ տղես ի՛նչ ա անում, ի՛նչ չի անում, սաղ-սալա՞մաթ ա»։

Վեր ա կենում գալի թագավորի ամարաթը։ Տղին տեննալու բաշտան, վազում ա փաթթվում ճտովը, պաչում, պաչպչորում, ուրախանում, աշխարով մին ըլնում։

— Հը՛, ո՛րդի,— հարցնում ա հերը,— ո՞նց ես, լա՞վ ես. հալից հո գանգատավոր չե՞ս։

1646—32

— Չէ՛, ա՛յ հեր,— ասում ա,— գանգատավոր չեմ, համա ինչ անես՝ ըսե՛նց էլ չի մնա։

Հեր ու տղա ասում են, խոսում, էրկեն ու բարակ զրից անում, մասլահաթ անում, եննա հերը թողում ա գալի իրա տունը։

Ըսենց մի քանի վախտ անց ա կենում, էդ տղեն թագավորի աղաքին ընե՛նց լավ ղուլլուղ ա անում, ընե՛նց լավ ղուլլուղ ա անում, որ թագավորը բերում ա դրան նազրություն ա տալի, մի քանի տարուց եդը՝ վեզրություն. մախլաս՝ ըսենց քանի էթում, դհա՛ ա թագավորի աչքը մննում։ Գալիս ա մի վախտ, էս տղեն էնքամ մենծանում ա, որ դառնում ա թագավորի քոմմըքից մոտիկ մարդը, որ առանց նրան հարցնելու, առանց նրա հեննա մասլահաթ տեննալու՝ բան չէր բռնում։ Թագավորը մի բան էր ուզում անի, աղաք պտի նրան հարցներ՝ եննա աներ։

Օրեն մի օրը, էս տղի հերը էլի ասում ա՝ էթամ տեննամ՝ տղես ո՞նց ա, ո՞նց չի, ի՞նչ ա անում, ի՞նչ չի անում։

Վեր ա կենում գալի թագավորի ամարաթը։ Տղեն հորը տեննալու բաշտան գալիս ա ձեռը պաչում, հերն էլ տղի թշերը պաչում, աչքերը պաչում, նստում են իրար հեննա էրկեն ու բարակ զրից անում։ Հերը ուրախանում, աշխարով մին ա ըլնում, որ իմանում ա տղեն էնքամ աղաքացել ա, դառե թագավորի քոմմըքից մոտիկ մարդը։

— Հը՛, ո՛րդի,— էլի հարցնում ա հերը,— ո՞նց ես, լա՞վ ես. համի էլ հո գանգատավոր չե՞ս։

— Չէ՛, ա՛յ հեր,— ասում ա,— համի աղաքվանից դհա լավ եմ, համա ի՛նչ անես՝ ըսե՛նց էլ չի մնա։

Հերը էլի թողում ա գալի տուն։ Անց ա կենում մի քանի տարի, էս թագավորը տեղով-բարձով հիվանդանում ա, մեռնում։ Խեղճը իրանից եդը տղա էլա չի թողում, որ բերեին, նրա տեղը նստացնեին թագավոր։ Միտք են անում, միտք են անում, թե ո՞ւմ ջոկլն թագավոր, ո՞ւմ չջոկեն, որ լավ ըլնի. վերջը որ շատ խելք-խելքի են տալի, միտք անում՝ գալիս են կաննում էդ վեզրի վրեն։ — Նրանից էլ լավ մարդ չենք գտնի,— ասում են,— հազիր թագավորն էլ նրան էնքամ սիրում էր, էկե՛ք դրա՛ն ջոկենք։ Բերում են դրան շինում իրանց թագավոր։

Էս մեր թագավորը շատ լավ յոլա ա տանում իրա խալխին, լավ արդար դատաստան անում, իրա երկրին լավ մուղաթ կենում։

ընենց որ դրան էնքա՜մ են սիրում, էնքա՜մ են սիրում, որ քոմմա դրա անմով ին երդում ուտում՝ ընենց մի լավ թագավորություն ա անում։

Սրա հերը, որ իմացավ տղի թագավոր ըլնիլը, ուրախացավ, աշխարով մին էլավ, վե կացավ էկավ տղին տեննալու։

— Հը՜, ո՛րդի,— հարցրեց,— հմի հո լա՞վ ես. փա՛ռք աստու թագավոր էլ էլար, էլ ի՞նչ դարդ ունես։

— Հա՛, ա՛յ հեր,— ասեց թագավորը,— փա՛ռք իրա ողորմությունին, լավ եմ, համա ինչ անես՝ ըսե՛նց էլ չի մնա։

Էս հետ հերը մնաց միտք աննելուն, թե խի՞ տղեն ըս էլ իրեք դոնում ասեց. «Ըսե՛նց էլ չի մնա». քանի էկավ հարցրեց. «Ո՞նց ես, լա՞վ ես», նա ասեց. «վավ եմ, համա ինչ անես՝ ըսե՛նց էլ չի մնա»։ Տղին սրա համար բան չասեց, վե կացավ էկավ իրա տունը։

Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, հինգ տարի, մախլասի՝ տասը տարի, էս թագավորն էլ ա բիրդան հիվանդանում, մեռնում։ Մեռնելիս էլ կտակ ա անում, որ իրան կտանեն կթաղեն, վրեն քար քցեն՝ քարի վրեն գրեն. «Ըսենց էլ չի մնա»։ Մեռնում ա, տանում են լավ-լաղաթին թաղում, ոնց որ ասել էր, վրեն քար են քցում, քարի վրեն գրում. «Ըսենց էլ չի մնա»։

Խեղճ հերը տղի մեռնիլը որ իմանում ա, վեր ա կենում գալիս։ Գալիս ա տենում՝ տարել են թաղե։

— Ո՞րդի եք թաղե,— հարցնում ա հերը։

— Հրենիկ ֆլա՛ն տեղը,— ասում են։

Տանում են նրան շանց տալի։ Հերը տղի գերեզմանի վրեն շատ ա լաց ըլնում, մրղկտում, արեն-արտասունք թափում. մի ղաֆիլ աչքն ընկնում ա գերեզմանի քարին, տենում ա վրեն գրած ա. «Ըսենց էլ չի մնա»։

— Էս գիրն ո՞վ ա գրե,— հարցնում ա։

Նո՛ր ըստե ասում են.— Բա չե՞ս ասի, տղեդ մեռնելիս կտակ ա արե, որ էդ խոսքը գերեզմանի քարի վրեն գրենք, մընք էլ գրել ենք։

— Ա՛ղպեր,— ասում ա հերը ինքն իրան,— էս ի՞նչ բաս ա։ Քանի տղես սաղ ու կենդանի էր, ինչ հարցնում ի, ասում էր. «Ըսենց էլ չի մնա»։ Հմի մեռնելիս վասիաթ ա արե, որ էդ խոսքը իրա գերեզմանի քարի վրեն գրեն։— Միտք ա անում, միտք ա անում՝ խելքը

սրանից բան չի կտրում [1], թողում ա, դառը-տխուր էլ եդ գալի իրա տունը։

Մի քանի տարի անց ա կենում, էս մարդը միտք ա անում, ասում ա՝ «էթամ տղիս գերեզմանը տենամ, գամ»։ Գալիս ա ի՞նչ ա տենում՝ ո՛նչ գերեզման կա, ո՛նչ զադ. սաղ ֆողի հեննա հավասարվել ա։ Սրան, նրան հարց ու փորձ ա անում, իմանում ա, որ ևքա սելավ ա էկե, գերեզմանը քանդե, տարե։

Նո՛ր ըստե գլխի ա ընկնում, հասկանում տղի ասածը թե. «Ըսենց էլ չի մնա», սաքի թե աշխարքս ո՛ր կա՝ փորձանքի տեղ ա, ի՛նչ ասես՝ կըլնի, մի բան էլա իրա տեղը չի մնա, ըսօր ըսե՛նց ա, էգուց ով գիտա, ի՛նչ կըլնի։

---

[1] Տպագիր տեքստում՝ դուս գալի. ուղղումը բանահավաքինն է (Ս. Կ.)։



51. ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴ

Ավալ ժամանակին ըլնում ա, չիլնում մի թագավոր։ Էս թագավորը իրա ամարաթի աղաքին մի լավ գյուլլի բաղ ա ունենում՝ մի-ջին մի Անմահական վարդի ծառ։ Համա խեղճ թագավորը ի՛նչ ա-նում ա, չի անում, ի՛նչ կատեպան բռնում ա, ի՛նչքամ մուղաթ են կենում, չիլնում՝ հենց գալիս ա բացվելու վախտերքը, խարը գալիս ա էդ վարդն ուտում, էթում, չի թողում, որ բացվի։ Ըսենց անց ա կենում մի տարի, էրկու տարի, իրեք տարի, էդ թագավորը մնում ա հասրաթ էդ վարդի ֆոտին։ Օրեն մի օրը գալիս ա մի կատեպան։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— որ ինձ կատե-պան բռնես, քու վարդին ընենց մուղաթ կկենամ, որ խարը չի ու-տի։ Հենց բացվեց թե չէ,— ասում ա,— կքաղեմ, կբերեմ, կտամ քեզ։

— Տղա՛,— ասում ա թագավորը,— աշխարքումն էլ կատեպան չի մնացե՝ էկել ա, ի՛նչ ա չաթե, որ դու ի՛նչ չաթես։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— ես կարամ. չկա-րացի՝ արինս քեզ հալալ ա։

— Լա՛վ, դո՛ւ դիտաս,— ասում ա թագավորը,— կարաս՝ դնա մուղաթ կաց։ — Բերում ա, սրան բռնում իրան կատեպան։

Գարունքը գալիս ա թե չէ, էս կատեպանն ա՝ նետուանեղը վեր-ա ունում, էթում Անմահական վարդի ծառի տակին գշեր-ցերեկ ղա-

գավուլ քաշում։ Կենում ա մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, հենց էն ա պտի վարդը բացվեր՝ մի վախտ տղի քունը տանում ա։ Էն դհիցը խարը գալիս ա վարդն ուտում, թողում էթում։ Կատեպանը աչքը բաց ա անում, տենում ո՛նչ վարդ կա, ո՛նչ ղադ։

Գալիս ա թագավորին խաբար տալի.— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— սաղ շաբաթ գշեր-ցերեկ ղարավուլ քաշեցի, հենց էկավ բացվելու վախտերքը, սատանական քունս տարավ. մի վախտ աչքս բաց արի, տեհա՝ խարն էկել ա կերե, գնացե։ Թագա՛վորն ապրած կենա, էս հետ բաշխա՛, գյալաջաղը ո՛նց ըլնի՝ ես խարի հախիցը կգամ։

— Բա՛ն չկա,— ասում ա թագավորը,— կերել ա՝ կերե, նրա՛ն էլ չի մնա։

Էս մի տարին ըսենց անց ա կենում, գալիս ա էն մի տարին։ Գարունքը բացվում ա թե չէ, էս կատեպանը վեր ա կենում, էլի էթում վարդին մուտաթ կենում։ Հենց գալիս ա բացվելու վախտերքը, տենում ա՝ խարն էլի էկավ, որ ուտի. ուզում ա նետուանեղով տա, էն դհիցը մի բլբուլ թռնում ա գալի, խարին կտցում, տանում։

Վարդը մնում ա սաղ-սալամաթ։ Կատեպանը ուրախ-ուրախ քաղում ա, տանում տալի թագավորին։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— հրես վարդը քաղեցի, բերի։ Էս հետ էլ խարն էկավ, որ ուտի, էն դհիցը մի բլբուլ թռավ, էկավ խարին կտցեց, տարավ։

— Բա՛ն չկա,— ասում ա թագավորը,— էն բլբուլին էլ չի մնա։

Էս տարին էլ ա ըսենց անց կենում։ Գյալաջաղը իրա վախտին էս կատեպանը էլի էթում ա վարդին մուտաթ կենում, գշեր-ցերեկ ծառի տակին ղարավուլ քաշում։ Հենց գալիս ա բացվելու վախտերքը, տենում ա՝ էլի մի խար դուս էկավ, վրա պրծավ վարդին հենց էն ա ուզում էր՝ ուտի, էն դհիցը էլի էն բլբուլը վեր էկավ, որ խարին կտցի, տանի՝ որդիան որ էր, թփերի տակիցը մի վիշապ դուս էկավ, բըլբուլին էլ, խարին էլ մի հանքի կուլ տվեց. վարդը մնաց էլ եղ իրա տեղը անարատ։ Կատեպանը ուրախանում ա, աշխարով մին ըլնում, վարդը քաղում ա, տանում տալի թագավորին։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասում ա,— էս տարի էլ ամեն տարվա պես էլի մի խար էկավ, ուզեց վարդն ուտի, էն դհիցն էլի էն բլբուլը թռավ, վեր էկավ, հենց էն ա ուզում էր՝ խարին կտցի, տանի, ալբիալը թփերի տակիցը մի վիշապ դուս էկավ, վրա հասավ,

էրկսին էլ մի հանքի կուլ տվեց։ Հրես սաղ-սալամաթ վարդը քաղեցի, բերի։

— Բա՛ն չկա,— ասեց թագավորը,— էդ վիշապին էլ չի մնա։

Էս մի տարին էլ ըսենց անց կացավ, գյալաջաղը էլի կատեպանը վե կացավ գնաց, որ վարդին մուղաթ կենա։ Էկավ բացվելու վախտերքը, տեհավ՝ էլի մի խար դուս էկավ, վրա հասավ, որ վարդն ուտի։ Էն դհիցը էլի մի բլբուլ թռավ, վեր էկավ, հենց էն ա ուզում էր՝ խարին կոցի, տանի, թփերի տակիցը էլի էն վիշապը դուս պըրծավ, վրա հասավ, էրկսին էլ մի հանքի կուլ տվեց։ Կատեպանը որ տեհավ, էս հետ էլ չհամբերեց, քաշեց նետուանեղը, տալու բաշտա՝ն յա՛լլա, վիշապը գլխի վրեն կունտկի տվեց, արենճեճեխ ընկավ գետինը, սատկեց։ Էն սհաթը վարդը քաղեց, տարավ տվեց թագավորին։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— էս տարի էլ խարն էկավ, ուզեց՝ վարդին ուտի, բլբուլն էկավ, ուզեց՝ խարին ուտի, էլի էն անիսաֆ վիշապը թփերի տակիցը դուս պրծավ, վրա հասավ, էրկսին էլ կուլ տվեց։ Էս որ տեհա, ես էլ քաշեցի նետուանեղս, տվի, վիշապին տեղն ու տեղը չորացրի։

— Դո՛ւ էլ լավ ես արե,— ասեց թագավորը,— համա քե՛զ էլ չի մնա։

Կատեպանը էս խոսքի վրեն մնում ա միտք անելոն, թե էս ի՞նչ բաս ա, թագավորը խի՞ պտի ասի. «Քե՛զ էլ չի մնա»։ Միտք ա անում, միտք ա անում, խելքը բան չի հասնում։ Էթար թագավորին հարցներ՝ վախում էր, չըլնի՞ թե հերսոտի. ըսենց մնաց, ասեց. «Տենամ՝ սրա վերջն ինչ ա ըլնում»։

Թագավորի գյուղի բաղի միջին մարմարից շինած մի հավուզ կար, որդե թագավորը, իրա կնիկը վախտ-վախտ գալիս ին լեղանում։ Օրեն մի օրը, կատեպանը նի էլավ էդ հավզի կշտի ծառը, վրեն չորուկ-մորուկ կար, ուզում էր կտրի։ Բիրդան տեհավ՝ թագավորի կնիկը իրա ղարավաշներով էկավ, որ հավզի միջին լեղանա. նա էլ վախլուբյունիցը վե չէկավ ծառիցը, ասեց. «Կենամ, լեղանա, պրծնի, էթա՝ ննանա»։ Թագավորի կնիկը շորերը հանեց, նի մտավ հավուզը, լեղացավ, պրծավ, դուս էկավ, շորերը հագավ, որ էթա՝ մի ղաֆիլ գլուխը բանձրացրեց, տեհավ՝ կատեպանը ծառի վրեն։ Էլ ձեն-ծպտուն չհանեց, թողաց էկավ ամարաթը, թագավորին մին-մին նաղլ արեց։

— Բա՛ չե՞ս ասի, ըսե՛նց, ըսե՛նց բան. ես գնացել ի հավուզը, որ լեղանամ. լեղացա սրծա, շորերս հագա, ուզում ի էթա, մի ղաֆիլ վիրև մտիկ արի, տեհա՝ մեր կատեպանը ծառի վրեն. դու մի ասի, աղաքուց էկել ա նի էլե ծառը, որ տենա՝ ոնց եմ լեղանում։

Թագավորը էս որ լսում ա, կատաղում, ասլան ա դառնում։ Էն սհաթը ձեն ա տալի.— Ջա՛նլաթ, ջա՛նլաթ, ջա՛նլաթ։

Էն սհաթը ջանլաթները գալիս են, թագավորին գլուխ տալի, ընդե կաննում։

— Ի՞նչ կհրամայես, թագա՛վորն ապրած կենա,— ասում են։

— Կէթա՛ք,— ասում ա,— էս սհաթին կատեպանին կբերեք, իմ աղաքին քյալլա կանեք։

Ջանլաթներն էթում են, կատեպանին բերում թագավորի կուշտը։ Դե՛ կատեպանը էս որ տեհավ, ալբիալը գլխի ընկավ, թե բանը ընչում ա։

— Թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— չի՞լնի, ինձ թողաս՝ էրկու խոսք ասեմ, եննա ի՛նչ ուզում ես՝ արա՛։

— Լա՛վ,— ասեց թագավորը,— ասա՛ տենամ՝ ի՞նչ ես ասում։

— Թագա՛վորը սաղ ըլնի,— ասեց կատեպանը,— մի՞տ ա, որ ինձ կատեպան բռնեցիր. առաջի տարին էկա քեզ ասեցի, թե. «Խաբը վարդին կերավ», դու ասեցիր. «Բա՛ն չկա, նրան էլ չի մնա»։ Լա՛վ։ Էն մի տարին էլ գնացի վարդին մուղաթ կենալու, էկա ասեցի. «Մի բլբուլ էլ էկավ խարին կերավ», դու էլի ասեցիր. «Բա՛ն չկա, դրան էլ չի մնա»։ Լա՛վ։ Վրա իրեք տարին էլ որ էկա ասեցի. «Էս հետ էլ թփերի տակիցը մի վիշապ դուս սրծավ, բլբուլին կուլ տվեց», դու էլի ասեցիր. «Բա՛ն չկա, նրան էլ չի մնա»։ Լա՛վ։ Վրա չորս տարին, որ էկա ասեցի. «Վիշապին էլ ես տվի, սրսպանեցիր», դու էս հետ ասեցիր. «Բա՛ն չկա, քե՛զ էլ չի մնա»։ Համի, թագա՛վորն ապրած կենա,— ասեց,— դրուստ որ ընձ էլ չմնաց. քու խոսքը կատարվեց, որ ուզում ես նհախ տեղը իմ գլուխը թռցնիլ տա։ Դե բաս ըտենց ա, թագա՛վորն ապրած կենա, համի էլ ես եմ ասում, որ. «Քե՛զ էլ չի մնա»։

Թագավորը որ լսում ա կատեպանի խելոք ջուղաբը, նրան բաշխում ա, էլ չի թողում, որ քյալլա անեն։



52. ԱՍՏՈՒԾ ՈՐ ՄԱՐԴԻ ՈՒԶԵՆԱ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՏԱ, ԿԲԵՐԻ ՀԵՐԴԿՈՎ ԷԼ ՎԵ ԿԱԾԻ

Մարդ ու կնիկ են ըլնում։ Մարդը էնքա՜մ թամբալ ա ըլնում, էնքա՜մ թամբալ, որ էլ չեմ կարա ասի։

Խեղճ կնիկը ասում իրան օրը նրան ասում էր.— Ա՛յ մարդ, ա՛րի ըռենց[1] մի՛ անի. ընչանք ե՞ր պարապ-սարապ պտի մանգաս, մի բանի, մի գործի չկպնես. ախար չէ՛ որ մենք էլ մեղք ենք. մեզ ուտիլ ա պետք, հագնիլ ա պետք. մեզ ո՞վ կտա, ո՞վ կբերի հերդկովը վե կածի։

Համա ո՛ւմ ես ասում. մարդը ըսկի այնումն էլ չէր քցում. հենց միալար ասում էր.— Աստուծ որ մարդի ուզենա հարստություն տա, կբերի հերդկով էլ վե կածի։

Մին, էրկու, հինգ, տասը, խեղճ կնիկը էնքամ ասում ա, որ մարդի բեյինը մննում ա։ Օրեն մի օրը չութը վեր ա ունում, էթում հանդը, որ վար անի։ Մխելի տեղ վարում ա, մրն էլ մի ղաֆիլ տեննում ա չութը մի ղադի դեմ առավ։ Եզները կաննացնում ա, մտիկ տալի, տեննում ի՞նչ՝ մի գյուղյում լիքը ոսկի։ Էս մեր թամբալը ձեռովը գյուղյումը վեր ա ունում ընդիան, էն դիհը քցում ու էլի իրա վարն ա անում։

— Թե՛ աստուծ էս գյուղյում ոսկին ինձ ա ղամաթ արե,— ասում

---

[1] Տպագիր տեքստում հաջորդում է՝ մի ըլնի, որը բանահավաքի ձեռքով ջնջված է (Ս. Կ.)։

ա,— թո՛ղ իրա ձեռովը վեր ունի, բերի մեր հերդկովը վեր ածի, թե չէ ես վեր ունող, տուն տանողը չեմ։

Իրիկունը գալիս ա տուն, կնկանը նաղլ անում իրա գլխով անցկացածը, թե.— Լսե՛նց, լսե՛նց, լսե՛նց բան. հանդումը մի գյուգյում ոսկի գտա, թողի ընդե, էկա։

— Ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— հո չե՞ս գժվե. խի՞ չիր վեր ունում, բերում. հազիր քեզ աստոծ էրկու ձեռով էր տվե. համի հո՞ խալխը կտանեն։

— Չէ՛, ա՛յ կնիկ,— ասում ա,— քու խելքը ի՞նչ ա կտրում. տե՛ս, աստոծ ո՛նց ա իրա ձեռովը էն գյուգյում ոսկին վեր ունում, բերում մեր հերդկովը վեր ածում։

Սա՝ հա, նա՝ չէ, սա՝ հա, նա՝ չէ, մախլաս՝ մարդ ու կնիկ ըստե մի լավ կռիվ են անում. համա էլի մարդը իրա ասածն ա անում։

Նո՛ր կնիկը, ճարը կտրած, էթում ա իրանց հարևանին թաքուն ասում, թե.— Լսե՛նց, լսե՛նց, լսե՛նց բան. իմ գիժ մարդը հանդումը ֆլա՛ն տեղը մի գյուգյում ոսկի ա գտե, հենց ընդե էլ թողել ա, վե կացե էկե. գնա բե՛, կեսն ինձ, կեսը քեզ։ — Լսենց տեղը-տեղին, նշանով ասում ա։

Էդ հարևանն ա՝ էն սհաթը ուրախ-ուրախ վեր ա կենում, էթում հանդը, կնկա ասած տեղը ման գալի, գյուգյումը գտնում ա։ Բաց ա անում, ի՞նչ տենում՝ մեջը լիքը օձ ու կարիճ։

— Բա՛ն չկա,— ասում ա ինքն իրան— նրանք հո լսենց ինձ խաբեցին, տես, ե՛ս ինչ օղիա եմ բերում նրանց գլուխը։

Անսաս էդ հարևանը գյուգյումի բերանը էլ եդ կալնում ա, ղալիմ կապում, վեր ունում բերում գեղը։ Մութը գետինը կոխում ա, թե չէ, գյուգյումը վեր ա ունում, գալի նրանց կտրանը կաննում. գյուգյումի բերանը ուսուլով բաց ա անում, յա՛լլա, նրանց հերդկովը շուռ տալի ներքև։ Շը՛ռ, ոսկին գեննին կիտվում ա։ Աստու հրամանով օձ ու կարիճը էլ եդ ոսկի ա դառնում։

— Ա՛յ կնիկ,— ձեն ա տալի թամբալ մարդը,— դե ա՛րի հավա՛քա. քեզ որ ասում ի՛, դու չիր ավատում. տե՛հար՝ ոնց աստոծ իրա ձեռովը էն գյուգյում ոսկին բերեց, մեր հերդկովը վեր ածեց։

Կնիկը գալիս ա տենում՝ ղորթ որ, դեղին-դեղին ոսկիքը հրենիկ գեննին կիտած. ուրախանում, աշխարով մին ա ըլնում։



53· ԹԱՄԲԱԼԸ

Ժամանակով մի մարդ կար, ըդրան ուներ մի տղա։ Էդ մարդը շատ հարուստ էր, լա՛վ ուտում, լա՛վ խմում ինչ։ Տղեն որ մեծացավ, դառավ տառնօխտ-տասնութ տարեկան, հերը պսակեց, շատ խելոք աղջիկ ուղնց։

Մի քանի տարուց եդը հերը մեռավ։ Էդ տղեն մի սովորություն ուներ՝ ամառ ձմեռ թունդրի միջից դուս չէր գա, ասում էր. «Մըրսում եմ»։

Կնիկը գնաց հարևաններին ասեց, թե.—Մարդս հոր թողած կարողությունը կէրավ, հըմի ամառ-ձմեռ թունդրի միջիցը դուս չի գալի, ասում ա. «Մրսում եմ». տանը հաց չկա, չեմ գիտա՝ ի՛նչ անենք։

Հարևաններն ասում են.— Գնա՛ չամիչ առ, լցրա թունդրի շըրթիցը մըղչանք տան դուռը. դու տափ կաց, եր որ ինքը կտենա չամիչը՝ կհավաքի, կուտի, կհասնի մղչանք տան դուռը, դուռը բաց կանի, դուս կգա. դու դուռը եդ կանես քամակիցը, ինչքան ձեն կտա՝ բաց չես անի, ո՛ւր էթում ա, թո՛ղ էթա։

Կնիկը էթում ա չամիչ առնում բերում, թունդրի շրթից շաղ ա տալիս մղչանք տան դրսի դուռը, ինքը տափ կենում։ Տղեն թունդրի միջին կաննում ա, որ դինջանա, տենում ա՝ չամիչը թափած ա. ձեռը. քցում յավաշ-յավաշ հավաքում ա, ուտում ա, ձեռը որ չի

հասնում, թունդրից դուս ա գալիս, պուպուզ անելով հավաքում ա, ուտում ա, մընչանք գալիս ա տան դուռը։ Եր որ հասնում ա տան դուռը, ձեռը քցում ա՝ դուռը բաց ա անում, տենում ա դրսևն էլ թափած կա, հավաքելոն դրսևն ա դուս գալի. կնիկը հասնում, դուռը շինում ա։

Տղեն ձեն ա տալի.— Վա՜յ, ոններս ցուրտը տարավ, վա՜յ ոններս ցուրտը տարավ, ա՜յ կնիկ, դուռը բա՛ց արա։

Կնիկն ասում ա.— Բո՛լ էլավ թունդրի միջին նստես, գնա՛ մանարի, աշխատա՛նք արա։

Մարդն ասում ա.— Ա՜յ կնիկ, ես մրսում եմ, ո՞ւր էթամ։

Կնիկն ասում ա.— Էս օրը ամառ՝ խի՞ պտի մրսես, գնա քեզ համար մանարի, աշխատա՛նք արա։

Մարդը ճարը կտրած քուչեն բռնում, էթում ա։ Էթում ա, տենում՝ մի աղլուխ ըտե վեր ընկած ա, աղլուխը վեր ա ունում։ Աղլուխն էլ հակառակին թագավորի աղջկա աղլուխն ա ըլնում։ Թագավորի աղջիկը իրա քառասուն ղարավաշովը եըոր գալիս ա բախչեն ման գալու, աղլուխը վեր ա ունում իրա գլխից, քցում ա ծառի ճըղքին, քամին վերնում ա, քցում ա պատի էն յանը։

Էդ տղեն գտնում ա, վեր ա ունում, բերում ա կնկանը, ասում.— Ա՜յ կնիկ, էս աղլուխը գտել եմ։

Կնիկը աղլուխը ձեռիցը առնում ա, թամաշ ա անում, տենում ա՝ թագավորի աղջկա աղլուխն ա, ասում ա.— Էս թագավորի աղջկա աղլուխն ա, տա՛ր տու թագավորին, մի քանի մանեթ փեշքաշ կտա, ո՛չ կարամ կապի գլուխս, ո՛չ կարաս ծախի։

Մարդը աղլուխը վերնում ա ու թագադան եդ ա դառնում։ Բերում ա ընենց մի հարմարին տեղ, տենում ա պատը ճաքած ա, կոլոլում ա մի թղթի մեջ, դնում ա էդ պատի ճղակը։ Մի քանի ոտ փոխում ա, տենում է՝ դալալը ընկած ձեն ա տալի. «Ո՛վ որ թագավորի աղջկա աղլխիցը խաբար ա՝ քսան հինգ մանեթ մուշտուլուղ կա»։

Տղեն մոտանում ա դալալին, ասում ա.— Ես գտել եմ։

Դալալը ասում ա.— Տո՛ւ, քու մուշտուլուղդ տա՛մ։

Ասում ա.— Քեզ խի՞ եմ տալի, կտանեմ, թագավորին կտամ։

Էրկսով իրար հետ էթում են, հասնում են թագավորի կուշտը, դալալն ասում ա, թե.— Աղլուխն էս տղեն ա գտել։

Թագավորն ասում ա.— Հանա տո՛ւ, քու մուշտուլուղը տանք։

Տղեն ասում ա.— Իմ մոտին որդիա՞ն ա։

Թագավորն ասեց.— Բա խի՞ ես էկե։

Տղեն ասեց.— Ես ռամ քցող եմ, կքցեմ. կգտնեմ։

Թագավորն ասեց.— Մգար դու ըտենց շնո՞րք ունես։

Ասեց.— Ես լավ ռամ կքցեմ։

Ասեց.— Դե քցա՛, տենանք։

Տղեն ձեռի էրեսին թամաշ արեց, ասեց.— Աղլուխը ֆլա՛ն քուշի պատի ճղակումն ա։

Թագավորը մարդ ղրկեց, որ բերի։ Ասեց.— Ո՛ր դուզ էլավ, մենծ փեշքաշ կտամ քեզ։

Դալալը վե կացավ, գնաց բերեց։

Թագավորը երոր աղլուխը տեհավ, զարմացավ, ասեց.— Երևելի իմաստուն ես դու, մինչև հմի ո՞րդի իր, որ քու անումը չէի լսե։

Ասեց.— Ես մի քյասիբ մարդ եմ, իմ անումը ո՞վ պտի լսի։

— Ըսօրվանից,— ասում ա թագավորը,— քու ամսականը քսանըհինգ ոսկի ա, կե՛ր, խմա՛, իմ կշտին կա՛ց։

Տղեն վեր ա կենում, գալիս ա տուն, կնկանն ասում ա.— Աչքըդ լի՛ս։

Կնիկն ասում ա.— Հը՛, ի՞նչ խաբար ա։

Մարդն ասում ա.— Էլ ի՛նչ խաբար պտի ըլնի, ամիսը քսանըհինգ ոսկի պտի առնեմ, լավ ուտեմ, լավ խմեմ, ման գամ. էլել եմ թագավորին վեզիր։

Կնիկն ուրախացավ, ասեց.— Տեհա՞ր, մի բուռ չամիչը քեզ խելքի բերեց, թամբալություն իր անում, թունդրի միջից դուս չիր գալի. բա էն վախտը, որ ասում իր «մրսում եմ», բա հմի խի՞ չես մրսում։

Արանքը քաշեց մի տասն օր, թագավորը կանչեց էդ տղին, ասեց.— Է՛թանք ման գալու։

Վեր են կենում, էթում են։ Էթում են թագավորի բաղը։ Երոր մտնում են նեքսև, թագավորը էդ տղին հրամայում ա, թե.— Դու էդ յանովը գնա՛, ես էլ էս դհովը ման գալոն գամ։

Թագավորը ասում ա. «Արի մին էլ փորձեմ սրա իմաստությունը»։ Վարդը քաղում ա, բոի միջին պահում, էթում ա իմաստուն վեզրի կուշտը։

— Հը՛,— ասում ա,— բոիս միջինն ի՞նչ ա, իմացի՛։

Տղեն տենում ա, որ գլուխը պտի թռնի կնկա պատճառովը.

անումը Գյուվի՝ ա ըլնում, ասում ա.— Նո՜ր ք..... Գյուվի հոր կոտին։

Թագավորը բուռը բաց ա անում, ասում ա.— Դու ի՞նչ իմացար, թե իմ բունը գյուվ էր։

Տղեն ասում ա.— Իմաստուն ի, իմացա։

— Որ ըտքան իմաստուն ես, ամսականդ շինեցի եռեսուն ոսկի։

Արանքը անց ա կենում մի տասն օր, թագավորի խազինեն օխտը հոգի կտրում են, ամեն մեկը մի ջվալ ոսկի են տանում։

Թագավորը կանչում ա էս իմաստուն վեզրին, ասում ա.— Խազինես կտրել են, օխտը ջվալ ոսկի են տարե, յա՛ պըտի գտնես, յա՛ գլուխդ կկտրեմ։

Ասեց.— Քառասուն օր ժամանակ տո՛ւ, գտնեմ։

Ասեց.— Լա՛վ, քառասուն օր քեզ ժամանակ։

Տղեն գլխին տալով էկավ տուն, ասեց.— Կնի՛կ, գլուխս կբրար, թագավորի խազինեն կտրել են. ասում ա. «Յա՛ պտի գտնես, յա՛ գլուխդ կկտրեմ»։ Ես ո՞րդիան գտնեմ։ Թեզ հաց շինա ուտեմ, մի քիչ քնեմ, վեր կենամ, գլուխս առնեմ, փախնեմ։

Կնիկը վե կացավ, օխտը ձու խաշեց, բերեց դրեց մարդի առաջը։ Հենց էդ վախտն էլ թագավորի խազինի գողերը, օխտը հոգի, իմացել ին, որ թագավորը թամբահ էր արե էս վեզրին՝ գտնելու, էկել ին կտուրը, որ անկաջ անեն, տենան իրանց անումը տալի՞ս ա։

Օխտը հոգուց վեցը նստել ին ղրաղ, մեկն էկել էր հերդկի կուշտը, պրպրզել էր. տեհավ՝ ձեն-ձուն չկա, վե կացավ, որ էթա, էդ վախտը իմաստուն վեզիրը ձվի մեկը կերավ, ասեց. «Էս մեկը գնա՛ց։ Էս էլ մի բան չի»։

Գողը լսեց, զարմացավ, գնաց հընկերներին ասեց, թե.— Վեզիրն իմացավ։

Էն մեկել հընկերը վե կացավ էկավ։

Էլի վեզիրը մի ձու կերավ, ասեց.— Էս էլ էրկուսը գնա՛ց, էս էլ մի բան չէր։

Էդ գողը գնաց հընկորտանցը պատմեց, թե.— Դրուստ որ իմաստուն մարդ ա, իմացավ իմ էթալը։

Ըտենց օխտն էլ էկան, գնացին՝ տեհան, որ իմաստունը իմացավ նրանց գալն ու էթալը։

---

[1] Վարդ (Ծ. Բ.)։

Իրար միջի խորուրդ արին, վեր էկան ներքև, վեզրի դուռը ծեծեցին, վեղիրը դուս էկավ դուռը, օխտով էլ ընկան վեզրի ոնները, թե.— Վիրև ա՛ստված, ներքև դո՛ւ, մեզ աղատա՛, թագավորի խաղինեն մենք ենք կտրե։

— Լա՛վ,— ասեց վեղիրը,— ես գիտամ, որ դուք եք կտրե, համա որ էկաք ոններս ընկաք, ձեր անումը չեմ տա, կասեմ՝ ես ոամ եմ քցե, գտել եմ։ Դուք գնացե՛ք, մի ջվալ ոսկին ձեզ, վեցը բերեք։

Գողերը ուրախացան, գնացին վեց ջվալ ոսկին շալակեցին, քերին դրին վեզրի տունը։

Վեղիրը առավոտը լիսը բացվեց, վե կացավ, գնաց թագավորի մոտը, ասեց.— Գտել եմ, թագավորն ապրած կենա, հրեն մեր տանն ա ջվալները, ղրկա, բերիլ տու։

Թագավորը շատ ուրախացավ, ասեց.— Դու քառասուն օր ժամանակ իր ուզե, ո՞նց էս գշեր գտար։

— Ոամ քցեցի, գտա, էլ խի՞ եմ քառասուն օր մնում։

Ասեց.— Իրեք ջվալը քեզ, չորսը բե՛, մեզ բոլ ա։

Համբալին վե կալավ, տարավ տվեց շըլակները, բերեց, տվեց թագավորին։

Թագավորն ասեց.— Ո՛ր ըսքան իմաստուն ես, քու ամսականը չինում եմ քառասուն ոսկի։

Տղեն թագավորին գլուխ տվեց, գնաց իրա տունը, կնկանն ասեց.— Բախտի բերմունքով էս ա իրեք անգամն ա, աղատվում եմ, հմի ամսականս չինել ա քառասուն ոսկի, էս մեզ բոլ ա, մի բան մտածենք, բալքի ղլխներս աղատենք։

— Դե ի՞նչ մտածենք,— ասեց կնիկը։

Մարդն ասեց, թե.— Ա՛րի ես ինձ դնեմ հիվանդությունը, ասեմ. «Հիվանդությունը իմաստությունս տարավ»։

— Լա՛վ,— ասեց կնիկը, բերեց տեղաշորը քցեց, մարդը պառկեց։ Խաբարը գնաց թագավորին, թե վեղիրը հիվանդացել ա։

Թագավորն ինչքամ բժիշկ ղրկեց, չկարեցան ճար անի, թագավորը վե կացավ, իրա ոտովն էկավ։

Էկավ նստեց վեզրի կշտին, վեղիրը աչքով արեց, կողքի մարդիքը քաշվեցին, նո՛ր թագավորը հարցրեց, թե.— Քու ցավն ի՞նչ ա, որ ըսքան բժիշկը բան չեն հասկանում։

Ասեց.— Թագա՛վորը սաղ ըլնի, էս իրեք անգամ ա էդ փորձանքները, որ քեզ պատահում ա, ես իմաց եմ տալի, չարքերը ասում

են. «Մենք թագավորին ուզում ենք վնաս տանք, դու խի՞ չես թողում». էս քանի գշեր ա հավաքվում են, ինձ ընքան ծեծում են, որ վրես հալ չի մնացել, խելքս գլխիցս գնացել ա, ցնորել եմ, էլ իմաստություն չի մնացել։

Թագավորն. ասեց.— Բա՛ն չկա, ընենց արա, ես ու դու իմանանք, էլ մարդ չիմանա, ես քու ամսական քառասուն ոսկին կտամ։



54. ՍՈՒՏ ՀԵՔԻԱԹ

Կըլնի, չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք շատ քյասիբ, դառնաղբատ, օրեն հացի մուրացկան են ըլնում։ Սրանք ավալախըը մի հավ են ունենում, ըն էլ էնթավուր հավ, որ աղաքիցը էթողին կըտցով էր տալի, ետևիցը էթողին՝ քացով. ընենց որ էս հավի ահու սրանց քուչովը մարդ-մադաթ սիրտ չէր անում անց կենա, էնքա՜մ մի զուլումքյար զադ էր։

Գնդըցոնց ամալ-աջալը որ կտրում ա, օրեն մի օրը գալիս են տանուտերի կուշտը գանգատ։ Էդ տանուտերն ա՝ կանչում ա հավի տիրոնչը, հրամայում ա, որ յա հավը մորթի, յա թե չէ քցի մի զերզամբի, վրեն դուռը շինի, որ դուս չգա, գնացող-էկողին չդիպնի։ Տերն էլ չի ղմշում մորթի, տանում ա անում մի հացատուն՝ դուռը, երթիկը ղայմացնում, ծակ ու ծուկերը կալնում, թողնում գալի։ Լա՛վ։

Անց ա կենում ըսենց մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շարաթ, մախլասի՝ մի ամիս, էս հավին ո՛նչ կուտ են տալի, ո՛նչ ջուր են դնում աղաքը՝ բալի սատկի, նրանից ազատվեն պըրծնեն։ Օրեն մի օրը էդ մարդի միտն ա ընկնում հավը։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— ըսկի ակը չենք տալի մեր հավին, ո՛վ գիտա՝ հմի սատկել ա, որդնե, ֆոտն աշխար ա վեր ունում, էթամ, տանեմ դեն էլա քցեմ։

1646—33

— Լա՛վ, ա՛յ մարդ,— ասում ա կնիկը,— գնա՛ տես, թե սատկել ա՝ տա՛ր դեն քցա՛։

Էս մարդը էթում ա, հացատան դուռը բաց անում, ի՞նչ տենում՝ հացատունը ընչանք օջորքը լիքը ձու ա. դու մի ասի, էն հավն ա ածե։ Մարդը ուրախանում, աշխարով մին ա ըլնում։

Էթում ա կնկանը իմաց տալի.— Բա՛ չես ասի,— ասում ա,— ըսե՛նց, ըսե՛նց բան։

Մարդ ու կնիկ էթում են ամեն մինը մի քթոց վեր ունում, գալի, էդ ձվանները բիրադի կրում իրանց կալը։ Կրում են պրծնում, եննա իրանց գոմշները լծում են կամին, քշում։ Քշում են, քշում են, ընչանք ճաշ քշում են, ձվանները բիրադի փխլվում, խժռվում ա. տեննում են՝ մի դհիցը աքլոր ա դուս գալի, մի դհիցը՝ վառեկ։ Վերջը որ շատ քշում են, տեննում են բիրդան ձվանների միջիցը մի ղազ դուս էկավ, փախավ։ Տերը էդքամ աքլորն ու վառեկը թողում ա ըտե, ինքը ղազի ետևիցն ընկնում, որ կալնի։ Էթում ա, էթում, մխելի տեղ էթում ա, տեննում՝ հրես մի մարդ իրանց ղազը լծել ա կամին, կամ ա անում։

— Ա՛յ աղպեր,— ասում ա,— էդ մեր ղազն ա, խի՞ ես լծե։

— Մենք ի՞նչ իմանանք ձերն ա,— ասում ա էդ մարդը,— իրա ոտովն էկավ մեր կալը, դե տեհանք՝ տեր-տիրական չկա, բերինք, լծեցինք. հմի ասում ես՝ ձերն ա, վե՛ կալ տար, ա՛ռ ըս էլ էրկու խալվար ցորեն դրա հախը։

Էդ մարդը էրկու խալվար ցորենը առնում ա, լցնում ջվալները, գյոզակները էրեսներին փռում, ղայիմ կապում, բարձում ղազին, քշում դպա տուն։

Գալիս ա, գալի, հասնում ա իրանց տունը. ջվալները ղազի վրիցը վեր ա ղնում. վեր ա ղնում, տեննում ի՞նչ՝ ղազի մեջքը յարալափաչա ա դառե։ Մարդ ու կնիկ. կմնան մոլորած։ Դե՛ս կընկնեն, դե՛ն կընկնեն, է՛ս հարևանի դուռը, է՛ն հարևանի դուռը, հա՛յ դես, հա՛յ դեն, բո՛ւ յան, օ՛յ յան, դեղ, դարման չեն գտնի։ Վերջը որ շատ կհարցնեն, ման կգան, մի մարդ սրանց կասի, թե. «էդ յարի դեղը պոպոքն ա, որ քսեք՝ ալբիալը կլավանա»։ Սատանական դրանց նրկրումն էլ ըսկի պոպոք չիլնում։ Դե՛ս են ընկնում, դե՛ն են ընկնում, չեն գտնում. վերջը որ շատ ման են գալի, տեննում են՝ հրեննիկ մի ահլի պառավ կնիկ քուչի դռանը նստած ա։

— Ա՛յ նանի,— ասում են,— քեզ արքայություն, թե քու որդ-

կերանց արևը կսիրես, բալի հոգապահուստ պոպոքի մանրուք ունենաս, մեր ղազի մեջքը յարա ա էլե, ի՛նչ կըլնի՝ տաս, քսենք մեջքին։

— Ա՛յ որդիք,— ասում ա,— ես քորփա էրեխա ի, հերս Հընդըստանու պոպոք էր բերե, կերանք. մի փեթ տվե՛ք, քչփորեմ, տենամ, բալի ատամներիս արանքին մի կտոր մնացած ըլնի։

Մարդ ու կնիկ ուրախություններիցը էլ չեն իմանում, ի՛նչ անեն. ըտե մի եքա գերան ա վեր ընկած ըլնում, վեր են ունում, տալի էդ պառավին։ էդ պառավը էդ գերանովը ատամները քչփորում ա. է՛ս դիհը, է՛ն դիհը, սեղանքի տակիցը մի պճեղ պոպոք ա հանում, տալի դրանց։ Նրանք ուրախանում են, պառավի ձեռը պաչում, պոպոքը վեր ունում, եդ դառնում իրանց տունը։ Բերում են, լավ նարին ծեծում, քսում ղազի մեջքին։

Անց ա կենում մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շարաթ, իրեք շարաթ, մախլասի՝ մի ամիս, մըն էլ տենում են՝ էդ ղազի մեջքին մի եքա պոպոքի ծառ ա դուս էկե, էնքա՜մ էլ պոպոք տվե, որ հալ ու հեսար չըկա։

Էդ ղազը ասում իրան օրը էթում էր հանդը արածում, իրիկունը ինքն իրան գալի տուն։ Հանդումը հոտաղները, լակոտ-լուկուտը ո՛րը քար էր քցում, ո՛րը փետ էր քցում, ո՛րը ճիմ էր քցում, որ պոպոք վեր ածեն, ուտեն. չայիր-չիմանը, քոլ ու քոսը ընկնում էր պոպոքի ծառի ճղքների արանքը, ընդերանք եքա չայիր չիման ա դուս գալի։ Մարդիք նիլնում ին էդ չայիր-չիմանի վրեն, ընդե բաղ ու բաղչա քցում, բոստան քցում, վար անում, ցորեն, գարի ցանում. հոտաղները, չորաններն էլ բերում ին ընդե իրանց գառները, ոչխարը, տավարը արածացնում։

Օրեն մի օրն էլ մի մարդ նիլնում ա ղազի մեջքի բոստանը, մի ձմերուկ ա առնում, ուզում ա կտրի, ուտի, բիրդան դանակը խրվում ա ձմերկի մեջը, էլ դուս չի գալի։

— Ա՛յ հարայ, դա՞նակս, դա՞նակս,— էլ ո՛րդե, դանակը ձմերկի մեջին բաթմիշ էլավ, կորավ։

Էդ մարդը ճարը կտրած, շորերը հանում ա, մննում ձմերկի մեջը, որ դանակը հանի. ձմերկի մեջին դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, չի գտնում. վերջը որ շատ ման ա գալի, տենում ա՝ հրեշտակ դագանակը ուսին մի չոբան։

— Ա՛յ աղպեր,— հարցնում ա չոբանը,— ի՞նչ մարդ ես, էս ձմերկի մեջին ի՞նչ ես շինում։

— Դանակս ընկել ա մեջը,— ասում ա,— ման եմ գալի, բալի գտնեմ։

— Է՛հ, ֆո՛ղը հալիդ,— ասում ա չոբանը,— էս թամամ էրկու տարի ա՝ իմ եքա սուրու ոչխարը կորել ա էս ձմերկի միջին, մեռա ման գալոն, չեմ կարում գտնի, դու հմի դանակդ ես ուզում գտնի։

Էդ խոսքը դանակ կորցնողի սրտին կպնում ա, վրա ա հասնում նրան, որ ծեծի. սա՝ նրան, նա՝ սրան, սա՝ նրան, նա՝ սրան, ըստե էնքամ իրար տալիս են, որ ձմերուկը ժաժ ա գալի, ղազի միջքիցը գըրըմփալեն վեր ընկնում գետինը, միջիցն էլ մի ալափստրակ ա դուս գալի, փախնում։ Փախնելու վախտը էդ ալափստրակի պոչի տակիցը մի թղթի կտոր ա վեր ընկնում։

Հոտաղները էդ թղթի կտորը վեր են ունում, տանում գեղը, տերտերին տալի, որ կարդա։ Տերտերը բաց ա անում, կարդում, տեսնում գրած ա. «Սո՛ւտ, սո՛ւտ, սո՛ւտ», յանի թե էս ղազի հեքաթը քոմմա սուտ ա։



55· ՍՈՒՏԼԻԿ ԱՎԶՈՒ ՀԵՔԻԱԹԸ

Ըլնում ա, չիլնում մի Ավչի։ Էս Ավչին ո՛նչ թվանք ա ունենում, ո՛նչ բարութ, ո՛նչ սեչմա, ո՛նչ շուն, մախլասի՝ ըսկի զադ չի ունենում։

Օրեն մի օրը էդ Ավչին վեր ա կենում, էթում ալի։ Էթում ա, էթում, տենում, ըհը՛, ճամփին իրեք թվանք վեր ընկած։ Ուրախանում, աշխարով մին ա ըլնում։ Էն սըհաթը կռանում ա, վեր ունում, տենում՝ էդ իրեք թվանքից էրկուսը կոտրած ա, որ ասես բանի պետքը չի, էն մինն էլ՝ չախմախ չունի։ Էդ անչախմախ թվանքը ուան ա քցում, էթում։ Էթում ա, էթում ա, էթում ա, մխելի տեղ էթում ա, ճամփին իրեք գյուղի ա ռաստ գալի. դրանցից էրկուսը ցամաքած ա ըլնում, էն մնի միջին էլ, ո՛ր ասես, ջրի բրիշա չիլնում։ Էդ անջուր գյուղի միջին տենում ա՝ իրեք օրդակ լեղ են տալի. դրանցից էրկուսը սառկած ա ըլնում, մինն էլ՝ կիսաջան։ Թվանքը ղարավլում ա, կրակ տալի։ Տալու բաշտան էն կիսաջան օրդակը վեր ա ընկնում։ Էթում ա, վեր ունում, էլ եդ էթում իրա ճամփեն։

Էթում ա, էթում ա, էթում ա ճամփին իրեք գեղի ա ռաստ գալի։ Էդ գեղարենքից էրկուսը խարաբա ա ըլնում, մնի միջին էլ, ո՛ր ասես, շենլիկ չիլնում։ Մտնում ա էդ անշենլիկ գեղը, դե՛ս ա էթում, դե՛ն ա էթում, ո՛ր շատ մարդ ա գալի, մի քարուքանդ, բրիշակ էլած

տուն ա գտնում։ Մննում ա նեքսև, տեննում՝ տան պուճախին, հրենիկ, իրեք պուլիկ դրած. էդ պուլիկներից էրկուսը ջարդած ա ըլնում, մինն էլ ոռք չի ունենում։

— Ի՛նչ անեմ, ի՛նչ չանեմ,— ասում ա,— որ էս օրդակը խաշեմ։

Բերում ա կրակ անում, էդ անոռք պուլիկը ջուր ա լցնում, դնում վրեն, որ տաքանա։ Ննննա օրդակը թեբռում ա, փորը ճղում, լա՛վ, սիրունիկ իստկում, քցում պուլկի մեջը։ Էդ օրդակը խաշում ա, նստում մեն-մենակ ուտում, կշտանում, աստուն փա՛ռք տալի։ Ըստե մի քիչ մնում ա, դինջանում, նո՛ր վե կենում, ընկնում ճամփա։

Էթում ա, էթում ճամփին սրան մի ուղտ ա ռաստ գալի։ Էդ ուղտը բռնում ա, նիլնում, քշում։ Էթում ա, էթում ա, մի քանի օր կուզեկուզ էթում ա, դուս ա գալի մի քաղաք։ Էդ քաղաքումը էդ ուղտը ծախում ա, ըտրա փողը տալիս ա մի էշ առնում, էրկու հատիկ էլ կորեկ։ Էդ էրկու հատիկ կորեկը խուրջնի ջուխտ աչքն ա լցնում, խուրջինը քցում իշի վրեն, էլ եդ էթում իրա ճամփեն։

Էթում ա, էթում՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մախլասի՝ հինգ օր, ճամփին սրան մի գետ ա ռաստ գալի։ Տրխները հանում ա, որ գետը անցկենա, ո՛նց ա ըլնում, ո՛նց չիլնում, էշը փախնում ա։ Իշի ննննուցը վազ ա տալի, բռնում, եդ բերում։ Ընչանք դրա գալը՝ տրխները գետը անց են կենում էն էրեսը։ Դե՛ս տրեխ, դե՛ն տրեխ, ման ա գալի՝ չի գտնում։ Վարավուրդ ա անում, տեննում՝ իրա տըրխները անց են կացե գետի էն ղրաղը, դառե մի լուծ եզը ու ընդե իրանց-իրանց գետինը վարում են։ Ինքն էլ էշը նիլնում ա, մի ֆանդով գետը անցկենում։ Ըտե խուրջինը վեր ա դնում, էն էրկու հատիկ կորեկը հանում, մի հատիկը բերում ա եղների վարած տեղը ցանում, մի հատիկն էլ եդ քցում խուրջինը։ Ծանում ա, պրծնում, խուրջինը էլ եդ քցում ա իշի վրեն, վե կենում, ընկնում ճամփա՝ էլ եդ իրանց գեղը։

Գալիս ա, գալի՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, հասնում ա իրենց գեղը։ Էշը քշում ա դո՛ւզ գեղի ջաղացը։ Տանում ա էն կորկի հատիկը ըտե աղում։ Աղում ա, աղում ա, օխտն օր, օխտը գշեր աղում ա, չի պրծնում։ Տեննում ա՝ պրծնելու ճար, իլլաճ չկա, բերում ա մնացածը ջաղացպանին ա բախշում, աղացածն էլ լցնում ա ջվալները, բեռաննները կապոտում, սելեր քրեհում, բերում իրանց տունը։

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը էդ Ավչին ասում ա.—Է՛թամ տենամ՝ կորեկը հա՞սել ա, թե չէ։

Մանգաղը վեր ա ունում, ընկնում ճամփա։ Գալիս ա, գալիս ա, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա էն գեղի ղրաղը։ Տեսնում ա՝ է՛, կորեկը հասել ա, հնձելու էլ լա՛վ վախտն ա։ Մանգաղը քցում ա, որ հնձի, բիրդան կորկի միշիցը մի վիրունի խոզ ա դուս պրծնում, փախնում։ Մանգաղը ննջուցը ո՛ր վրա չի անում, մանգաղը կբում ա խրվում խոզի կողքը։ Էդ խոզը մանգաղը փորին վազ ա տալի արտի միջովը. մի դհիցը վազում ա, մի դհիցն էլ արտը հնձում։ Ընենց վազ տալոն կորեկը սաղ հնձում ա, պրծնում, գլուխ առնում, փախնում։ Ննջա էդ Ավչին կամաց-կամաց հնձածը հավաքում ա։ Հավաքում ա, հավաքում, որ տեսնում ա պրծնելու ճար չկա, կորկի շատ փայը թողում ա առանց հավաքիլ. էրում ա սելեր քրհնում, հավաքածը բարձում՝ յա՛լլա դպա իրանց դեղը։

Գալիս ա, գալի, շատն ու քիչն աստոծ գիտա, հասնում ա իրանց դեղը։ Սելերը քշիլ ա տալի դո՞ւռ իրանց կալերը։ Ըտեղ սելերը դարտկիլ ա տալի, դեղեր դնիլ տալի, թողում։ Ննջա հոտաղներ ա բռնում, էդ կորեկը շաղ են տալի, փռում կալի միջին, կամերը լծում, քշում։ Քշում են, քշում են, քշում են՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, չի պըրծնում։ Մի քանի դեղ ընենց թողում ա, կալսած կորեկը կրիլ ա տալի տուն. է՛լ ամբար, է՛լ ֆոր, է՛լ ծակ ու ծուկ չի մնում՝ լցնիլ ա տալի, չի հատնում։

— Ի՛նչ անեմ, ի՛նչ չանեմ,— ասում ա,— մնացածը ո՛րդև լցնեմ։

Միտք ա անում, միտք ա անում, վերջը մի լու ա բռնում, մորթում, կաշին քերթում, տիկ հանիլ տալի, մնացած կորեկն էլ բերում ա էդ տկի մեջն ածում։

Անց ա կենում մի քանի վախտ, օրեն մի օրը մի ձիավոր ա անցկենալիս ընում էդ Ավչու տան կշտովը։ Էդ ձիու նալը մի քարի ա դիպնում, ընենց մի կրակ ա դուս գալի, ընենց մի կրակ ա դուս գալի, որ էդ Ավչու դեղերը սաղ կպնում ա, էրվում. տո՛ւն, տե՛ղ, գո՛մ, մա՛րաք, մախլաս՝ ի՛նչ ուներ, չուներ էրվում ա, քուլ դառնում։

Կրակը որ հանդարտում ա պրծնում, էդ Ավչին ասում ա. — Է՛թամ տենամ՝ ըսկի ի՛նչ ա մնացե, ի՞նչ չի մնացե։

Դե՛ս ա ման գալի, դե՛ն ա ման գալի, ը՛ստե ա փորում, ը՛նդե ա փորում, վերջը որ գալիս ա, իրանց մարաքի պատի տակը փորում ա, տենում ա, ըհը՛, ընդիան մի կապոց դուս էկավ։ Էդ կապոցը բաց ա անում, տենում միջին մի թղթի կտոր, միջին էլ մի բան ա գրած։ Տանում ա սրա՛ն, նրա՛ն կարդալ ա տալի. կարդում են, տենում՝ էդ թղթի միջին գրած ա. «Քու գլխով անցկացածը քոմմա սուտ ա»։





56. ԻՐԵՔ ՔԱՌԻ ՀԵՔԻԱԹԸ

Կըլնի, չիլնի մի մարդ։ Էս մարդին մի սուրու ոչխար կունենա։ Օրեն մի օր էս մարդը հանդումը քնով կրնկնի, կղարթնի, կտենա՝ սուրուն աղաքիցը կորել ա։ Էդ խեղճ մարդը քառ ա ըլնում։

Ընկնում ա ճամփա դպա իրա սուրուն, սաքի գտնի։ Դրան ճամփին մի մարդ ա ռաստ գալի, որ արտը վարում էր, կասի.— Բար՛աջողում ա՛ղպեր, իմ ոչխարի սուրուն չե՞ս տեհե՞ դվորը գնաց։

Էս մարդի բախտիցը վար անողն էլ ա քառ ըլնում։ Նա հենց իմանում ա, թե էդ սուրու կորցնողը ասում ա. «Ինձ էլ տեղ տու վարիմ»։

Ձեռով շանց կտա դպա արտի գլուխը, կասի.— Ա՛յ, հրե ընտեղ անվարել ա, գնա ընդե վարա։

Նա հենց իմանում, թե ասում ա. «Սուրուն դե՛սը գնաց»։ Էդ ճամփեն բռնում ա, դուզ էթում ա, էթում ա էթում, դրուստ որ, իրա սուրուն գտնում ա։

Միտքն ա անում, թե մի ոչխար, յա էծ տանի էն վար անող մարդին, որ բանից լավություն արնց, իրա ոչխարը գտավ։

Իրա սուրուի միջին մի պողը կոտրած էծ ա ըլնում, էդ էծը չկում ա, տանում ա վար անողին փեշքաշ. վար անողը հենց իմանում ա՝ ասում ա. «Իմ էծի պողը խի՞ ես կոտրե», ասում ա.— Ա՛յ ջանը՛մ, գյողը՛մ, ես ընչի՞ց եմ խաբար, ե՞ս որդե, քո՛ւ սուրուն որդե, որ պողը կոտրեի։

Նա՝ հա՛, սա՝ չէ՛։ Դրանք ըտենցությունով տալիս են, եքա կռիվ են անում։

Նոր միտք են անում, ասում են. «էթանք դպա գեղը, ճամփին ո՛վ ռաստ գա նրան հարցնենք. թող նա մեր գանգատը լսի, տեննանք՝ ո՞վ ա մեղավորը»։

Էկուսն էլ ռազի կըլնեն՝ կէթան։ Կէթան, կէթան, կէթան, կտեննան՝ հրես մի ջահել հարս ա գալի. հենց էդ հարսին կհարցնեն.— Ա՛յ քիր, ղուրբա՛ն, հլա լսի մեր գանգատը, տես՝ որս ենք մեղավոր, ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։

Իրենց գանգատը կանեն էս հարսին։

Սրանց բախտիցը էս հարսն էլ ա քառ ըլնում. դու մի ասի դրան իրա կեսուրը տանիցը դուս ա արե։ Հարսն էլ հենց իմանում ա, թե ասում են. «էլի գնա ձեր տունը», հարսը կասի.— Ջէ՛, ախպեր ջան, ընչանք կեսուրս չմեռնի, ես էն տունը ոտ չեմ դնի։

Դրանք կտեննան, որ սա էլ ա իրանց օրին, մի ղադ ա, կթողան կէթան իրանց բանին։



Հայկական Սովետական

ՀԱՎԵԼՎԱԾ I

ՏՕՐԲԵՐՈՒԿՆԵՐ

1· ՍՈՒՄԲԱԹԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի բազրգյան կար, շատ հարուստ էր։ Դրան ուներ մի տղա՝ անումը Սումբաթ։ Էդ բազրգյանը քառասուն չրաղ ուներ, երբոր էթում էր խրդի, քառասուն եզի բեռ էր բռնում, քառասուն չրաղին էլ հետը տանում էր։ Երբոր Սումբաթը էլավ տասնութ տարեկան, հերը դրան պսակեց, մի սիրո՜ւն, փնփո՜ւշ, սիպտակ աղջիկ ուղեց, կասես թե՝ նոր էկած ձին ըլներ։ Մի քանի տարուց եղը Սումբաթի հերն էլ մեռավ, մերն էլ մեռավ։ Սումբաթը մնաց մենակ։ Սումբաթն էր՝ առավոտն էթում էր դուքան, օրական էրկու, իրեք անգամ գալիս էր կնկանը մտիկ էր անում, էթում էր, ընքան սիրում էր։ Մի օր էկավ տեհավ՝ իրանց քառասուն չրաղն էլ իրանց դռանը նստած են։

Երբոր հասավ դրանց, բարև տվեց։ — Խի՞ եք դռանը նստել, խի՞ չեք նեքսև էթում։

— Դու տանը չիր, մենք էլ խանըմի հետ անծանոթ ենք։

— Վի՛ կացեք, է՛թանք տուն։

Վե կացան, գնացին նեքսև։ Հաց բերեցին, նստեցին կերան, Սումբաթն ասեց.— Խե՛ր ըլնի ձեր գալը։

Ասեցին.— Էկել ենք, որ ո՛նց որ քու հերը մեզ մտիկ էր անում, ընենց էլ դու մեզ մտիկ անես։

Ասեց.— Ես ախար մենակ եմ, չեմ կարա, օրական իրեք ան-

գամ գալիս եմ տուն, կնկանս մտիկ եմ անում, թողում էթում դուքս:նը, ես ո՞նց կարամ թողա, ըստիան էթա: Քառասուն հոգի եք էկեք ամեքիդ հինգ հարուր մանեթ տամ, գնացեք ձեզ համար ապրեք:

— Ախար չէ՞ նաղդ փող ա, կտանենք, կփշացնենք, կմնանք քու մոտին ամոթով:

Կնիկն ասեց.— Դրուստ են ասում, նաղդ փող ա, հինգ շահի մեկին, տասը շահի մեկին, կփշանա կէթա:

— Լա՛վ, ամեքիդ հազար մանեթ կտամ, գնացե՛ք:

Ասեցին.— Մեկ ա, էլի կփշացնենք, կմնանք ամոթով քու կըշտին, ոնց որ քու հերը մեզ պահպանել ա, ընենց էլ դու պտի պահպանես:

Կնիկն ասում ա.— Դրուստ են ասում, նաղդ փողը կտանեն, կփշացնեն, գործ տո՛ւ, գո՛րծ:

— Գործն էն ա, ա՛յ կնիկ, որ հետները պտի էթամ քաղաքեքաղաք ման գամ, առըտուր անեմ. երբոր քեզ չեմ տենում մի սհաթ խելքս էթում ա, տենում ես օրական իրեք հետ դուքանիս դուռը շինում եմ, գալիս եմ քեզ տենալու, ես ո՞նց քեզ թողամ, էթամ:

Ասեց.— Չէլա՛վ, իմ պատկերքը քաշա՛, դիր ծոցդ, երբոր կարոտես, հանա՛ մտիկ տո՛ւ:

— Էդ էլավ,— ասեց,— առավոտը թաղարեք տեննանք, է՛թանք:

Հանեց էդ չրաղներին փող տվեց, ասեց.— Գնացե՛ք քառասուն եզ առեք, ապրանք առե՛ք, էթանք խրիդ անելու:

Առավոտը Սումբաթը գնաց պատկերըհանին բերեց, կնկա պատկերը քաշիլ տվեց, թաղարեք տեհան, մի քանի օրից եղը ընկան ճամփա: Գնացին: Շատ գնացին, քիչ գնացին, մի չայիր-չիման տեղ վեր էկան, չադիր տվեցին, նստեցին:

Սումբաթը չրաղներին ասեց.— Մի տասն օր ըստեղ բանդ ըլնենք, համ մենք կդինջանանք, համ տավարը, մեղք են, գարընթվա տավար են:

Մի սհաթից եղը, տեհան՝ մի բաղրդյան էլ էկավ, իրանց կողքին չադիր տվեց, նստեց: Սումբաթը տեհավ դրանցն էլ քառասուն չրաղ ա:

Էդ էկած բաղրդյանը իրա չրաղներին ասեց.— Էս բաղրդյանը խամ ա, օրենքով մեզ պտի կանչեր ղոնաղ, ինքը մեզանից առաջ էր էկե. համ բան չի ասե, գնացեք իրան կանչեք՝ գա, մի քիչ խոսանք:

Գնացին Սումբաթին կանչեցին, նստեցին, խոսացին:

Էդ բաղրդյանն ասեց.— Ա՛րի մի քիչ նարդի հաղանք։ Քառասուն բեռ քունն ա, քառասուն բեռ իմն ա, իրար դեմ հաղանք։

— Հաղա՞նք։

Հաղալու փիս վախտը, քիչ էր մնացե որ Սումբաթը տաներ, բիրդան կնիկն ընկավ միտը, շըշկըլվեց, տարվեց։ Տարվեց, ըսկսեց լաց ըլնիլը։

Բաղրդյանն ասեց.— Խի՞ ես լաց ըլնում, էրևում ա, էդ ա քու կարողությունը։

— Ներողություն,— ասեց,— էս չի՛, համա անտեղի տարվեցի։

— Ընչի՞ համար անտեղի տարվեցիր։

— Նրա համար որ սիրուն կնիկս միտս ընկավ՝ շըշկըլեցի, տարվեցի։

— Կնիկդ ի՞նչքան սիրուն ա, որ անտեղի տարվեցիր։

Պատկերը ծոցիցը հանում ա, շանց ա տալի։

Սրոր պատկերը տենում ա բաղրդյանը, ասում ա.— Էդ իմ սիրեկանն ա, ամեն ժամանակ որ էթում եմ ձեր քաղաքը, գալիս ա իմ կուշտը, դրա համար խի՞ իր լաց ըլնում։

— Ի՞նչ ես ասում,— ասեց,— իմ կնիկը էդ բանը չի անի, սուտ ես խոսում, ա՛րի մարշ գանք։

— Գնա՛նք։ Քառասուն բեռն իմն ա, քառասուն բեռը քունն ա, քառասուն չրաղ իմն ա, քառասուն՝ քունն ա. թե ես դնացի քու կնկա պատկերը բերեցի, քու քառասուն բեռը, քառասուն չրաղը ինձ, դու էլ ինձ նոքար, թե չբերի, իմ ունեցածը քեզ, ես քեզ նոքար։

Թե.— Լա՛վ։

Բաղրդյանը վեր ա կենում, խուրջընով ոսկին վեր ա ունում, էթում. էթում ա հասնում Սումբաթի քաղաքը։ Հարցնելով, հարցնելով էթում ա տունը գտնում ա. դուռը ծեծում ա։

Ղարավաշը դուս ա գալի, ասում ա.— Գնա՛ խանըմիդ ասա՝ աղիցը նամակ եմ բերի, թող գա, տա՛մ։

Ղարավաշն էթում ա, խանըմին ասում ա, թե.— Աղիցը նամակ ա էկե։

Ասում ա.— Գնա ասա, թող տա քեզ, վերկալ բե՛։

Գալիս ա բաղրդյանին ասում ա.— Տո՛ւ, տանեմ։

Ասում ա.— Գնա, ասա, ինքը գա, իմ ձեռովը տամ իրան։

էթում. ասում ա։ Խանումն ասում ա.— Ումից բերել ա, թո՛ղ տանի տա նրան, ինձ հարկավոր չի՛։

Ղարավաշը գալիս ա ասում.— Հարկավոր չի՛, ումից բերել ես, տար տո՛ւ նրան։

Ասում ա.— Ա՛ղջի, դուռը բաց արա՝, տամ քեզ։

Ղարավաշը դուռը մի քիչ բաց ա անում, աղջկանը բռթում ա, ձին քաշում ա նեքսև։

Աղջիկը վազում ա վիրև, ասում ա.— Խանո՛ւմ, ինձ բռթեց, վե քցեց, հրես գալիս ա վիրև։

Խանումն ասում ա.— Իրեք հոգի ենք, իրեքս էլ ճիպոտներով տա՛նք, դուս աննենք։

Բազրգյանը որ բանձրացավ վիրև, դրանք օթախիցը դուս էկան ու տվեցին, ընքան տվեցին, որ քիթ-պռունգն արնացրին։ Բռթեցին, փիլաքաններից քցեցին ներքև։

Վեր էկավ, ձին քաշեց, գնաց։ Գնաց քաղաքի մի ղրաղը, տեհավ մի առու կա, նստեց ղրաղին լվացվեց։ Իրիկվա ժամի վախտն էր, տեհավ՝ մի պառավ գալիս ա ժամիցը։

Պառավը մոտացավ, տեհավ որ քիթ ու բերանը արնոտ ա, ասեց.— Ա՛յ մարթ, էդ ի՞նչ խաբար ա։

Ասեց.— Դուսն եմ մնացե, է՛թանք ձեր տուն, ասե՛մ։

Գնացին պառավի տունը, բազրգյանը գլխի էկածը պատմեց, ասեց.— Ես պատկերըհան եմ, ուզում էի տենայի, որ պատկերը բաշեի, համա չկարացի տենայի։

Պառավն ասեց.— Արխեին կա՛ց, ես քեզ կտանեմ նրա կուշտը։

Առավոտը պառավը վե կացավ, մի էրկու բուռ ոսկի առավ բազրգյանից, գնաց խառատի կուշտը, ասեց.— Մի թևթև ըշկապ շինա՛, կեսը շուշա, ընենց ըլնի, մի մարթ նստի մեջը։

Խառատը շինեց, պառավը հնամբալի շըլակը տվեց, տարավ տուն, ասեց.— Բազրգյա՛ն, ա՛րի, սրա մեջը նստի, ես քեզ տանեմ էն կնկա օթախը։

Բազրգյանը մտավ ըշկապի մեջը, դուռը շինեց, տվեց համբալի շըլակը, տարավ Սումբաթենց տունը, դուռը ծեծեց, ղարավաշն էկավ, ասեց.— Գնա՛ խանըմիդ ասա, էթում եմ Երուսաղեմ, մի ըշկապ ունեմ, դնեմ ըստեղ ամանաթ, թե էկա՝ կտանեմ, թե չէկա՝ թո՛ մնա ձեզ։

Ղարավաշը գնաց, խանըմին ասեց։

Ասեց.— Թո՛ բերի դնի, ի՞նչ կըլնի։

Պառավը բերեց, բերեց դուզ դրեց աղչկա օթախը, թողաց գնաց։ Բաղրդյանը շուշիցը թաքուն մտիկ տվեց, էդ աղչկա պատկերը քաշեց, մնկ էլ մնաց իրիկունը, քնելու վախտը, երբոր աղջիկը տկլորացավ, որ քներ՝ էն վախտն էլ պատկերը քաշեց։

Պառավը առավոտը էկավ, ասեց.— Ես ընչանք էկա ըստեղ, գնացի, ընկերներս գնացել ին, էկել եմ՝ իմ ըշկապը տանեմ։

Էլի տվեց համբալի շըլակը, տարավ իրանց տունը։ Բաղրդյանը դուս էկավ, պառավիցը շնորհակալություն արեց, գնաց։ Գնաց, հասավ իրա ապրանքի մոտը. կանչեց Սումբաթին, պատկերները շանց տվեց։

Սումբաթը կաննած տեղը մոլորեց, ասեց.— Երբոր իմ կնկա սիրողը չըլներ, ո՞նց կարար նրա տկլոր վախտը պատկերը քաշի։

Բաղրդյանը քաշեց Սումբաթի ապրանքը քոմմա, իրան չրաղներով տարավ, իրան էլ շինեց նոքար։

Չրաղի մնկն էկավ, ասեց.— Աղա՛, իմ փողը տո՛ւ, ես էթում եմ, ես քու ծառեն եմ, ես էս մարթին ծառայություն չե՛մ անի։

Էն բաղրդյանը վե կալավ ասեց.— Ո՛նց որ քու աղեն տալիս էր, ամսական մի հինդ մանեթ էլ ավել կտամ, խի՞ չես մնում։

Ասեց.— Չի՛մ մնում։

Սումբաթը հանեց փողը տվեց, էդ չրաղը առավ, գնաց։

Սումբաթը կանչեց, ասեց.— Որ էթում ես, գնա՛ մեր տունը, խանըմիդ էրեսին թքա՛, անցի, գնա՛։

Չրաղը վե կացավ գնաց։ Մնկ օր գնաց, հինդ օր գնաց, գնաց հասավ Սումբաթենց տունը։

Դուռը ծեծեց, ղարավաշը դուս էկավ, ղարավաշի հետ բանձրացավ խանըմի օթախը, դուռը բաց արեց.— Ամո՛թ քեղ համար,— ասեց, թքեց ու եդ դառավ։

Խանումը ղարավաշներին հրամայեց, թե.— Դրան բռնե՛ք, տեսնանք՝ ընչի՞ համար պտի իմ էրեսին թքի։

Ղարավաշները բռնեցին, ասեց.— Ընչի՞ համար թքեցիր իմ էրեսին։

Ասեց.— Ընդրա համար թքեցի, որ քու էրեսիցը քու մարդը հա՛մ սաղ կարողությունը կորցրեց, հա՛մ դառավ նոքար։

— Էդ ի՞նչ ես ասում,— ասեց,— էդ ո՞նց էլավ։

1646—34

Ջրաղն ասեց.— Ըսենց մի բազրգյան ա էկել, գշերը քու ծոդին քնել ա, պատկերդ քաշել ա, տարել տվե Սումբաթին։

Թե.— Ղո՞րթ։

— Ղո՛րթ։

Աղջիկը մտածեց, թե էրևում ա էն պառավի արածը կըլնի, չունըի բազրգյանը էկավ, ես ծեծել տվի, դուս արի, ինձ չտեհավ, էլ իմ պատկերը ո՞նց պտի քաշեր։

Ասեց.— Ի՞նչ տեղ ա աղեդ։

Ասեց.— Ցլա՛ն տեղը նոքար ա։

Ասեց.— Ընդհան ո՞ւր պտի էթայինն։

Ասեց.— Պտի էթային Թեհրան։

Ասեց.— Մի ընենց ճամփա գիտա՞ս, որ մենք մի էրկու օր առաջ էթանք ընտեղ։

Ասեց.— Էրկու օր չէ, իրեք օր առաջ տանեմ քեզ ընտեղ։

— Դե՛,— ասեց,— ա՛ռ քեզ փող, գնա էրկու հատ լավ ձի ա՛ռ, էրկու ձեռք էլ ասպար ա՛ռ, մի ձեռք թագավորական թամուզ շոր ա՛ռ, մի ձեռք էլ վեզրի շոր ա՛ռ, բե՛։

Ջրաղը գնաց քոմմա առավ, բերեց։ Աղջիկը շորերը փոխեց, թագավորական շորերը հագավ, ասպարը կապեց, ձին նիլլավ գնաց։ Ջրաղն էլ վեզրի շորերը հագավ, ասպարը կապեց, ձին նիլլավ ընկավ ետևը։

Գնացին, մի տասն օրից եղը հասան Թեհրան քաղաքի ղրաղը, իմաց տվին թագավորին, թե Ինգլիզի թագավորի տղեն գալիս ա քեզ տեսություն։

Թագավորը զորք ա ղրկում առաջը, պատվով վեր ա ունում բերում ա։ Երոր իրար տենում են, բարևում են, թագավորն ասում ա.— Խե՛ր ըլնի քու գալը։

Աղջիկն ասում ա.— Խե՛ր ա, էկել եմ մի տաս-տասնէրկու օր մանգամ քու քաղաքը, թողամ, էթամ։

Էգսի օրը բազրգյանները էկան հասան քաղաքի ղրաղը, խաբար բերեցին թագավորին, թե մի բազրգյան ա էկել, ութսուն բեռ ունի, ութսուն էլ նոքար։

Էդ աղջիկը թագավորին խնդրվում ա, թե մի իրեք օր քու թագավորությունդ ինձ տո՛ւ, ես թագավորություն անեմ, դու էլ կշտիս նստի, տեյր արա։

Ասում ա.— Իրեք օր չէ, իրեք շաբաթ իրավունք ունես։

Երոր աղջիկը նստեց թագավորի թախտին, թագավորություն էր անում, բաղդչանը՝ Սումբաթի ձեռը մի խոնչով փեշքաշներ տված, էկան։

Աղջիկը տեհավ, որ իրա մարդը դառել ա նոքար՝ շատ սիրտը ւցվնց, ասեց.— Ի՞նչ մարդ եք։

Բաղդչանն ասեց.— Ես բաղդչան եմ, ութսուն բեռ ունեմ, ութսուն էլ նոքար ունեմ, էկել եմ քու քաղաքը՝ ապրանքս ծախեմ, քեզ փեշքաշ եմ բերե։

Աղջիկն ասեց.— Ախար բաղդչանները քառասուն բեռ, քառասուն նոքար են ունենում, էդ ո՞նց ա, որ քունը ութսուն բեռ, ութսուն նոքար ա։ Ըդքան կարողությունը մի մարդի էս երկրի էրեսին դժար կպատահի. էս ո՞նց ա, որ ըդքան ապրանքը քունն ա, ա՛րի դուզ ասա՛։

Ասեց.— Դրուստ ա քու ասած խոսքը, թագա՛վորն ապրած կենա, էդքան ապրանքը մի մարդի չի ըլնի, մենակ,— ասեց,— էս ապրանքի կեսը էս տղինն ա։

— Ո՞նց էդ տղինն ա։

— Երոր պատահեցինք իրար, իրար հետ նարդի հաղացինք, սրան տարա, սկսեց լաց ըլնիլ, ես հարցրի, թե. «Ախի՞ ես լաց ըլնում», ասեց. «Ես նրա համար եմ լաց ըլնում, որ անտեղի տարվեցի, փա՛ռք աստու, ինչքան ունեմ ըստեղ, հինգ ըտքամ էլ տանն ունեմ. բիրդան կնկանս պատկերը միտս ընկավ, ես ըտեղ շըշկլվեցի, տարվեցի»։ Ասեցի. «Մի կնկանդ պատկերը տենամ»։ Հանեց տեհա, շատ սիրուն էր։ Ես էլ չկարացի ուրիշ պատճառ բռնեի, ասեցի. «Քու կնիկը իմ սիրեկանն ա»։ Էդ տղեն սրտի հերսիցը լաց էլավ, թե՝ «Ի՞նչ ես ասում, թե ես գիտամ, իմ կնիկը էդ բանը չի անի»։ Երոր հակառակվեց, ասեցի. «Արի՛ պայման կապենք. թե դնացի քու կնկա պատկերը բերի՝ էնա քու քառասուն բեռն էլ, քառասուն չրաղիդ հետ իմը ըլնի, դու էլ իմ նոքարը դառնաս, երոր չբերի՝ իմ քոմմա ապրանքը քեզ իմ նոքարներով, ես էլ քեզ նոքար»։ Վե կացա, դնացի հասա Սումբաթի քաղաքը. հարցնելով-հարցնելով դնացի տունը գտա. դուռը ծեծեցի, ղարավաշը դուս էկավ, ասեցի. «Գնա՛, խանմիդ ասա՝ գա, նամակ եմ բերե, աղիցդ, տամ իրան»։ Գնաց էկավ, ասեց. «Տո՛ւ, ես տանեմ», ասեցի. «Չիլնի, ես իմ ձեռովը պտի տամ»։

Ըտեղ աղջիկը հարցրեց.— Ընչի՞ համար նամակը ղարավաշին չտվիր, տանի։

— Թագա՛վորը սաղ ըլի, չտվի, որ ինքը գար տենայի, ես պատկերըհան եմ, պատկերը քաշեի։ Ըբոր ասեցի, թե. «Իմ ձեռովը պտի տամ», ղարավաշը գնաց, էկավ, թե ասում ա. «Ո՛ւմից բերել ես, տար տուր իրանց»։ Ճարս կտրվեց, ղարավաշին բռթեցի, մտա նեքսև։ Աղջիկը հրամայեց ղարավաշներին, ճիպոտները վե կալան, ինձ էնքան տվին, որ էլ չիմացա, թե ո՛նց գլուխս ազատեցի։ Գնացի մի առվի վրա, որ լվացվեմ, տեհա մի պառավ էկավ, գնացի էդ պառավի տունը, ըդրան պատմեցի գլխիս էկածը։ Պառավը մի ըշկապ շինիլ տվեց, ինձ մեջը դրեց, տարավ աղջկա տունը, ասեց. «Ես պտի էթամ Երուսաղեմ, թո՛ղ էս ըստեղ մնա, թե էկա՝ կտանեմ, թե չէկա՝ քեզ ըլնի»։ Ըշկապի միջիցը պատկերը քաշեցի։ Առավոտը պառավն էկավ ըշկապը վե կալավ, տարավ։ Ըբոր հասցրեց իրա տունը, վե կացա, էկա, պատկերը բերեցի շանց տվի տղին, էս մալը զավթեցի։

Աղջիկն ասեց.— Ջանլա՛թ։

Ջանլաթը էկավ. հրամայեց, բազրգյանին կտոր-կտոր արին։

Ետ դառավ Սումբաթին, ասեց.— Սրա ապրանքն էլ, քու ապրանքն էլ քեզ ըլնի, տար ծախա՛, Երոր կծախես կպրծնես, մի օր առաջ ինձ իմաց տո՛ւ։

Սումբաթը շնորհակալություն արեց, գնաց։ Ըբոր ապրանքը ծախեց պրծավ, էկավ ասեց, թե. «Էգուց էթում եմ իմ քաղաքը»։

Աղջիկն ասեց թագավորին.— Ես էլ պտի էթամ, շնորհակալ եմ քեզանից էլ, քու ժողովրդից էլ։

Վե կացավ, իրա շրաղին վե կալավ գնաց, հասավ իրա տունը։

Մի էրկու օրից եղը Սումբաթը թազա ապրանքը առած էկավ իրա դուքանի առաջին վեր ածեց, ասեց.— Էթամ տուն դիպչեմ, գամ, դուք տեղավորեք։

Էկավ տուն, տեհավ թագավորը ընտեղ նստած ա, վեզիրն էլ կողքին կաննած։ Զարմացավ մնաց։ Մտածեց, թե կա, չկա, էս իմ կնիկը սիրող ա անում։ Ըբոր կնիկը մարդին տեհավ, ասեց.— Արի՛ նստի, արի՛ նստի։

Ասեց.— Ներողությո՛ւն, էթամ ապրանքը տեղավորեմ։

Ասեց.— Ախի՛ քու ծառեքը հավատարիմ չե՞ն, նրանք կտեղավորեն։

Վև կացավ թագավորը, մտավ էն մեկել օթախը, չորերը փոխից, իրա շորերը հագավ, էկավ բարևեց։ Մարդը շատ տխուր էր, անշախ բարևն առավ։

Ասեց.— Ախ՛ էս տխուր։

Ասեց.— Ճամփից եմ էկե, բեզարել եմ։

Ասեց.— Նիաթդ մի՛ կախի, էն թագավորը ես ի, ե՛ս, բա սրան չե՞ս տենում, էս ո՞վ ա։

Տեհավ, որ իրա չրաղ կարթպետն ա։ Նո՛ր հասավ փաթըթվեց կնկանը, լաց էլավ։

Ընդրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Ասսանից իրեք հատ խնձոր ընկավ, մինն ասողին, մինը՝ լսողին, մինն էլ՝ անկաջ դնողին։



2· ԱՎՉԻ–ՕՂԼԻ

Կըլնի, չիլնի մի մարդ, մի կնիկ։ Սրանք ալեհ-մալեհ մի մինուճար տղա են ունենում, էլ զադ չէ։ Էս մարդը լավ ավչի ա ըլնում. աստու իրան օրը նետվանեղը վեր էր ունում, էթում մեշեն, ավ անում, բերում ավի մսովը իրա խիղանը պահում։ Էս Ավչին շատ էր ծերացե, դեն ընկե. օրեն մի օրն էլ հիվանդանում ա, տեղովրարձուլ պառկում, էլ չի վե կենում, մեռնում ա։

Էս Ավչու տղեն ա՝ եր մեծանում ա, իմանում ա, որ իրա հերը ավչի ա էլե, գալիս ա, մորն ասում.— Ես էլ պտի ավչություն անեմ, իմ հոր փեշակը բանացնեմ. բե՛ իմ հոր նետվանեղը տո՛ւ, էթամ հանդը, ավ անեմ, բա՛լքի կամաց-կամաց սարվեմ։

— Շա՛տ լավ ես միտք արե, ա՛յ որդի,— կասի մերը,— տենում ես աշխատանք անող չկա, ըսկի չէ՝ հո ֆորսի միս էլա կուտենք, սթար կանենք։

Կէթա մարդի նետվանեղը կբերի, կտա տղին, ջուվստ թուշը կպաչի, ճամփու կդնի հանդը։

Էս տղեն ա՝ կէթա հանդը, ծիտ, չոբան-խաբուկ ոաստ կգա, նետվանեղով կտա, վե կքցի, վե կունի կբերի տուն։ Մերը կուրախանա, աշխարով մին կըլնի, որ տղեն հոր փեշակը սարվում ա։ Ըսենց մին, էրկու, իրեք, հինգ, տասը, տղեն էթում ա չոլը՝ ըսկի դարտակ չի գալի, ղշից-մշից մի զադ վեր ա քցում, բերում տուն։

Ըսենց անց ա կենում մի քանի վախտ. տղեն ընենց թեզ ա սարվում ավչությունը, որ էլ չէլած, կարգին հոր փեշակը բանացնում ա։

Էս Ավչի-օղլին ա՝ ո՛ր նետվաններ բանացնելը լավ սարվում ա պրծնում, միտք ա անում դհա հետու տեղերանք էթա ավի։

Օրեն մի օր նետվանեղը վե կալավ, աստու անումը տվեց, ընկավ ճամփա դպա մեշեն։ Գնաց, գնաց, հասավ մեշեն. ըստե ընշանք իրիկուն ավ արեց, ուղում էր տուն գա, տեհավ՝ մի մղրըբը կոխեց. էլ չուզեց էս բնվախտին էթա, ասեց. «Նիլնեմ մի բանձր ծառի ծեբը,— որ ինչ ա՝ ջանավարները վրա չտան,— ընշանք լիսանա, նո՛ր վե կենամ, էթամ տուն»։ Ման էկավ, մի բանձր ծառ գտավ, էլավ ծառի գլուխ, ընդե քնեց։

Գիշերվա մի վախտ Ավչի-օղլին զարթնում ա, ի՞նչ տենում՝ հրես սաղ մեշեն ընե՞նց լիս ա, ընե՞նց լիս ա, հենց իմանաս շրաղդան ըլնի։ Հենց իմացավ սաղ մեշեն կպել ա, վաովում ա։ Է՛ս յան մտիկ արեց, է՛ն յան մտիկ արեց՝ զադ չգտավ. բիրդան աչքը քցեց ներքև, տեհավ՝ հրո՛ս մի եքա ջանավար էկել ա փռվել էդ բանձր ծառի տակին, ինքն էլ ընե՞նց ա պսպղում, ֆըռֆըռահար գալի, կաանեաս ակն ու արեգակ ըլնի։

Ավչի-օղլին էս որ չի՞ տենում, սիրտը ահ ու դողն ընկնում ա. միտք ա անում՝ նետվանեղը քաշի, տա՛ էդ ջանավարին տեղնուտեղը սատկացնի, մին էլ վախում ա՝ փըստ անցկենա, ու ջանավարը դհա կատաղի, վրա հասնի իրան, նիլնի ծառը, իրա մենծ թիքեն անկաջը թողա։ Միտք արեց, միտք արեց, վերջը որ շատ միտք արեց. «Ծա՛ տեր աստոծ, դո՛ւ ըլնես իմ կռանը,— ասում ա,— ի՛նչ կըլնի, կըլնի, պտի տամ»։ Ասում ա ու նետվանեղը բռնում ա դպա ջանավարը։ Տալու բաշտան ջանավարը մնում ա տեղնուտեղը։

Ալուստի տղեն ծառիցը վեր ա գալի, ուղում ա ջանավարի ջամդաքը քաշ տալով բերի հասցնի գեղը, տենում ա՝ շատ ծանդր ա. բերում ա կաշին քերթում ա, ընե՛նց թամուզ, իստակ քերթում ա՝ կաշին սկի մի տեղ էլ ա չի ծակվում. եննա ծալում ա, քցում շալակը, բերում տուն։

Մերը ջանավարի փոստը որ տենում ա, մնում ա զարմացած։

— Տղա՛,— հարցնում ա,— էս սիրուն փոստը ո՞րդիան ա։

— Ա՛յ մեր,— ասում ա տղեն,— բա չե՞ս ասի՝ ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան։— Նստում ու ըստե մին-մին նաղլ անում. իրա գլխով անցկացածը, ոնց որ ես ձեզ նաղլ արի։

— Էդ լա՛վ էլավ,— ասում ա,— տո՛ւր հազիր թագավորին փեշքաշ. նա էլ քեզ լա՛վ-լա՛վ փեշքաշներ կտա սրա տեղակ, ճամփու կդնի։

— Լա՛վ, ա՛յ մեր, ո՛ր ասում ես, կտանեմ։

Էս տղեն ա՝ էգսի օրը ջանավարի կաշին վեր ա ունում, դո՛ւզ էթում դպա թագավորի ամարաթը։ Էթում ա, մննում ա նեքսև, թագավորին գլուխ տալի, փոստը աղաքին բաց անում։ Թագավորը, իրա նազիր-վեզիրը էս որ չեն տենում, բերաննները մնում ա բաց, թե էս ի՛նչ թավուր ջանավար ա, որ կաշին ըսե՛նց լիս ա տալի։ Թագավորը հրամայում ա՝ Ավչի-օղլուն լա՛վ-լա՛վ փեշքաշներ տան, ճամփու դնեն։

Համա նազիր-վեզիրը իրանց մտքումը շատ են թոնթորում տղի վրեն, թե. «Ո՞նց սրա պես մի ջահել տղեն կարենա թագավորին ըսենց փեշքաշ բերի, մենք չկարենանք։ Ցա՛վաշ սրա գլուխը մի ըննե՛նց օյին բերննք, որ ինքն էլ մնա շշմած»։

Վեր են կենում գալի թագավորին գլուխ տալի, ասում.— Թագա՛վորն ապրած կենա, էս արեգակի պես շողշողուն կաշուն պետք ա ֆլի ոսկոռներից մի ամարաթ, որ նրա հենենա սազի։— Թագավորի բեյլինը կմննի էս բանը։

— Շա՛տ լավ եք ասում,— կասի,— ֆլի ոսկոռներից մի լավ ամարաթ դրուստ որ շատ լավ կըլնի. համա ո՞վ կարա բերի։

— Է՛հ, թագա՛վորն ապրած կենա,— կասեն նազիր-վեզիրը,— դրա վրա՞ էլ ես դարդ անում. էսթավուր ճրագի պես վառվող կաշի բերողի ձեռքին ի՛նչ դժվար բան ա ֆլի ոսկոռները բերիլը։ Թե բերի՝ Ավչի-օղլին կբերի, էլ մարդ չէ։

— Բա՛ս որ ըտենց ա, գնացե՛ք Ավչի-օղլուն կանչեք գա,— կասի թագավորը։

Էն սհաթը նազիր-վեզիրը կէթան, Ավչի-օղլուն կկանչեն, կբերեն թագավորի կուշտը։

Ավչի-օղլին կգա թագավորին գլուխ կտա, ընդեն կկաննի։

— Տղա՛,— կասի թագավորը,— պտի էթաս ինձ համար էնքա՞մ ֆլի ոսկոռ բերես, որ մի ամարաթ շինիլ տամ, միջին ապրեմ. կարա՞ս բերի։

— Թագա՛վորն ապրած կենա, կբերեմ, խի՛ չեմ բերի. համա ի՛նչ որ ուզեմ՝ քու նազիր-վեզիրը քոմմա պտի տան, ռազի՞ ես։

— Ռա՛զի եմ,— կասի թագավորը,— թող քու ասածը ըլնի։

Տղեն թագավորին գլուխ կտա, կթողի կէթա տուն, մորը նաղլ կանի թագավորի ուղածը։

Սրա մերը իմաստուն կընի, կասի.— Դու սկի դարտ մի անի, կէթաս թագավորիցը իրեք հարիր մարդ կուզես, իրեք հարիր տիկ դինի, իրեք հարիր տիկ արաղ. վե կունես կէթաս ֆլա՛ն մեշեն, ընդե օխտը մենծ հավուղ կա. էդ հավուղների ջուրը լավ կկռճեք, դուս կածեք, էդ դինի, արաղը շուռ կտաք էդ հավուզների մեջը. ֆլերը ճաշվա էն ընջոթան շոդին կգան կխմեն. խմելու բաշտան քոմմա կբենզովանան, վե կթափեն, դու՛ք քու մարդկերանցովը վրա կհասնեք, քոմմըդին էլ կկոտորեք, ոսկոռները կջըկեք, կբարձեք սեյերը, կդաք։

— Լա՛վ,— կասի տղեն,— ո՛նց որ ասեցիր, ըտե՛նց էլ կանեմ։

Է՛հ, էդ տղեն ա՝ էգսի օրը թեզ վե կկենա, կէթա թագավորի ամարաթը, թագավորին խորը գլուխ կտա, կասի.— Թագա՛վորն ապրած կենա, ինձ պտի տաս իրեք հարիր մարդ, իրեք հարիր սեյ, իրեք հարիր տիկ դինի, իրեք հարիր տիկ արաղ։

Թագավորն էն սհաթը հրամայում ա, որ տղի ուղածը քոմմա բերեն տանե։ Բերում են, ամեն բան հաղրում, ճամփի թադարեք տեսնում, ընկնում ճամփա։

Էթում են, էթում են, շատն ու քիչը աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, մախլասի՝ մի շարաթ, հասնում են Ավչի-օղլու մոր ասած մեշեն։ Էթում են դե՛ս-դե՛ն ընկնում. ո՛ր շատ ման են գալի, էթում են էն հավղները դռնում են։ Էդ հավղների ջուրը Ավչի-օղլին թամուղ կոճել ա տալի, դինի, արաղր քոմմա դարտկում են էտ օխտը հավուղը, իրանք էլ էթում են ղրաղ տափ կենում։ Անց ա կենում մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, էն ճաշվա ղրե շոդին, մին էլ ի՞նչ տեսնան՝ եքա սուրուքով ֆլերը։

Գալիս են քոմմա վրա պրծնում, որ ինչ ա ջուր խմեն. արաղի, դինու ֆռտիցը հուշտ են ըլնում, փռնչալոն եդ փախչում. համա դե՝ ո՞րդն պտի ջուր դռնեին, որ խմեին. էլի մի քիչ վախտից եդը վրա են պրծնում ու մի կուշտ քաշում գլխները. հենց խմելու բաշտան քոմմա հարրում են, շուրուքյութ ըլնում, վե թափում։

Էս Ավչի-օղլին ա՝ էն սհաթը իմաց ա տալի հընկորտանցը՝ վրա են պրծնում մի սհաթումը քոմմըդին մորթոտում, քերթում, ոսկոռները բարձում սեյերը, ընկնում ճամփա դպա իրանց երկիրը։

Ըսենց գալիս են, գալիս են, մի՛ օր, է՛րկու օր, մախլասի՝ մի

շաբաթ, գալիս հասնում են թագավորի երկիրը. դո՛ւզ սելերը քշում են թագավորի ամարաթի աղաքին վեր ածում։

Էս որ տենում են՝ թագավորի նազիր-վեզիրը մնում են մոլորած, թե էս ի՛նչ բան էր, որ իրանց ղրկած տեղիցը Ավչի-օղլին սաղ-սալամաթ եդ էկավ։ Միտք կանեն, որ թազադան ընե՛նց տեղ ղըրկեն, որ էլ ըսկի եդ գալու ճար չլնի։

Համա թագավորը ուրախացել, աշխարքովը մին էր էլե. էս ոսկոռների համար Ավչի-օղլուն լավ-լավ փեշքաշներ կտա, քոմմա կդնի իրա տանը։

Ըսենց երկար վախտ էդ ֆլի ոսկոռները կմնա թագավորի ամարաթի աղաքին վերածած։

Կգա էդ երկիրը խոլեր կընկնի. ընե՛նց խոլեր, ընե՛նց խոլեր, որ էլ չէլած։ Օրական մի հազար մարդ կմեռնի խոլերիցը։ Թագավորը իրա նազիր-վեզրին կկանչի, դիվան կսարքի, որ տենան, թե՝ էս ի՛նչ բան ա, խի՞ բիրդան ըսենց խոլեր ընկավ իրանց երկիրը։

Ջաթի նազիր-վեզիրը դրան ին բանդ, հենց էն սհաթը կասեն. — Ավչի-օղլունն ա մեղքը, նա որ ֆլի ոսկոռները չըներ, չթափեր ըստերանք, ըսենց խոլեր չէր ընկնի մեր երկիրը։

Թագավորը կհարցնի.— Բա ի՛նչ անենք, ո՞վ կարա ամարաթը շինի, էս ֆլի ոսկոռները հավաքի ըստերանք։

— Սավայի Ավչի-օղլուցը մարդ էլա չի կարա շինի,—կասեն նազիր-վեզիրը։

Էն սհաթը մարդ կղրկեն, Ավչի-օղլուն կկանչեն. թագավորը կասի.— Որ էս ֆլի ոսկոռներիցը ամարաթ չշինես՝ իմաց կա՛ց, որ քյալլա կանեմ քեզ։

Խեղճ Ավչի-օղլին դառը-տխուր կգա, մորը նաղլ կանի թագավորի հրամանը։

Մերը կասի տղին.—Ա՛յ որդի, ըսկի դարտ մի անի, գնա թագավորիցը հազար ուղտաբեռ նոխուդ, չամիչ ուղա, ընկի ճամփա։ Կէթաս, կէթաս, մի մենծ ծովի ռաստ կգաս։ Էդ հազար ուղտաբեռն էլ շուռ կտաս ծովը, ծովի ձկները կուտեն, կէթան, իրանց թագավորին իմաց կտան։ Թագավորը դուս կգա ջրիցը քեզ կհարցնի, թե՝ «Ի՞նչ ես ուզում». դու էլ կասես՝ «Ինձ տա՛ր, էն ծովի մեջտեղի ցամաքը հանի»։ Քեզ կտանի ծովի միջի ցամաքը, ընտեղ քու հոր աղպերն ա մնում, կէթաս նրա կուշտը, նաղլ կանես՝ ի՛նչ որ քեզ հրամայել ա թագավորը։

Է՛հ, Ավչի-օղլին էգսի օրը վն կկենա կէթա, թագավորիցը կուզի հազար ուղտաբեռ չամիչ-նոխուդը, կընկնի ճամփա։ Կէթա, կէթա, կէթա, շատն ու քիչը աստոծ գիտա, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մախլասի՝ մի ամիս, կհասնի մոր ասած ծովին։ Էդ հազար ուղտաբևոն էլ շուռ կտա շոռալոն ծովը, ինքը ղրաղին կնստի, թամաշ կանի։ Անց կկենա մի սհաթ, էրկու սհաթ, մին էլ կտեսնա, ըհը՛, հրես Զկնևրի թագավորը դուս էկավ։

— Հը՛, ի՞նչ ես հրամայում, ուզա, անեմ,— կասի Զկնևրի թագավորը։

Տղեն կասի.— Զադ չեմ ուզում. ուզում եմ, որ ինձ տանես, ծովի մեջտեղի ցամաքը հանես։

Էն սհաթը Ջուկը կասի.— Նի՛լ մեջքիս։—Տղեն կնստի Զկան մէջքին, մի սհաթումը կտանի կհասցնի ծովի միջի ցամաքին։ Տղեն ըտեղ վն կգա, կէթա հորողբորը կգտնի, նաղլ կանի, ի՛նչ որ թագավորը հրամայել էր։

Էն սհաթը հորողբները մատի մատտանիքը ժաժ կտա, կասի Ավչի-օղլուն.— Գնա՛, ամարաթը հմի հազիր ա։

Ավչի-օղլին ուրախ-ուրախ էլ եդ կնստի Զկնևրի թագավորի մէջքին, եդ կդառնա ծովի էն էրեսը. Զկնիցը շնորհակալ կըլնի, ճամփա կընկնի իրանց երկիրը։

Շա՛տ կէթա, քի՛չ կէթա, աստուն ա այան, սաղ-սալամաթ էլ եդ կհասնի իրա վաթանը։ Կգա, ղրո՛ւստ, կտեսնա թագավորի ամարաթի տեղը ընենց մի թաղա ամարաթ ա կաննած, ընե՛նց մի ամարաթ, որ էլ չեմ կարա ասի. մարդ ուզում ա՝ ո՛նչ ուտի, ո՛նչ խմի՝ հենց էդ ամարաթին հայլի-մայլի ըլնի, թամաշ անի։ Դո՛ւզ էթում ա թագավորին գլուխ տալի, էն դիհը կաննում։ Էլի թագավորը լավ-լավ փեշքաշներ կտա, ճամփու կդնի Ավչի-օղլուն իրա տունը։

Սրանց թողանք ըստե, գանք խաբարը տանք թագավորի նաղիրվեզրիցը։

Նաղիր-վեզիրը էս որ կտեսնան, դհա՛ կպատռեն, տրաք-տրաք կգան. թաղադան միտք կանեն, բալքի Ավչի-օղլուն լափ կորցնիլ տան։

Վն կկենան, էլի կգան թագավորին գլուխ կտան, կասեն.— Թագա՛վորն ապրած կենա, էս քոմմա լա՛վ, համա էս տեսակ ամարաթը հո՛ էլած, հո՛ չէլած. ը՞նչի ա պետքը առանց Անմահական ջրի,

առանց Անմահական խնձորի. ա՛յ, ըտոնք էլ որ բերիլ տաս, դրուստ որ քու լայաղի ամարաթներ կունենաս։

Թագավորի բեյինը կմննի սրանց ասածը, կասի.— Շա՛տ լավ եք ասում, համա ո՛վ կարա էդ Անմահական ջուրը, խնձորը բերի։

— Տնաշե՛ն, դրանից էլ հե՛շտ բան. ֆլի ոսկոռ բերողի, էսքան վուր ամարաթ շինողի ձեռին դժա՞ր ա Անմահական ջուրն ու Անմահական խնձորը բերիլը։ Ավչի-օղլու ձեռին ըստոնք մի օրվա բան ա. համա սաղ աշխարքի միջին քու պալատը մի հատ կըլնի,— կասեն թագավորի նազիր-վեզիրը։

Թագավորը էն սհաթը կհրամայի Ավչի-օղլուն կանչեն. մարդ կղրկեն, Ավչի-օղլին կգա, գլուխ կտա թագավորին, աղաքին կըկաննի։

— Տղա՛,— կասի թագավորը,— թե իմ ամարաթի համար կարեցար Անմահական ջուրն ու Անմահական խնձորը բերի, իմացած կաց՝ ի՛նչ ուզես կտամ, համա որ չբերեցիր՝ գլուխդ կթռնի վրիցդու գիտաս։

Խեղճ Ավչի-օղլին էլի դառը-տխուր գալիս ա տուն, մորը նաղլ անում թագավորի հրամանը։

Մերը ասում ա.— Ա՛յ որդի, դու ըսկի դարտ մի անի, ես քեզ ի՛նչ կսովորցնեմ, դու ընենց արա՛, քեզ զիան չի պատահի։— Կասի.— Նետվանեղդ վե կունես, կէքաս ֆլա՛ն մեշեն, ընդե մի մենծ ծառ կա, էդ ծառի վրեն Արծիվը բուն ա դրե. Վիշապը ամեն վախտ գալիս ա, Արծվի ճտերը ուտում ա։ Կէքաս մի ղրաղ տեղ տափ կկենաս, էն Վիշապին կսպանես։ Արծիվը քեզ կհարցնի, թե՝ «Ի՞նչ ես ուզում, ասա՝ տամ»։ Դու կասես, որ. «Անմահական ջուր ու Անմահական խնձոր»։ Նա քեզ կասի, թե ո՛նց պտի բերես։

Ավչի-օղլին ա՝ էգսի օրը աղոթրանին՝ թեզ վե կկենա, իրա նետն ու աղեղը կքցի ուսը, մոր հեննա «մնաս բարով» կանի, կընկնի ճամփա։ Կէքա, կէքա, շատն ու քիչը աստոծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, մի՛ շաբաթ, է՛րկու շաբաթ, մախլասի՝ մի ամիս, կհասնի մոր ասած մեշեն. դե՛ս ման կգա, դե՛ն ման կգա, էն մենծ ծառը կգտնի։ Կտենա, դրուստ որ, հրե՛ս Արծվի ճուտերը իրանց բնումը ծառի վրեն քնած են. կէքա ուսուլով մի ղրաղ տեղ տափ կկենա։ Անց կկենա մի վախտ, մըկ էլ ի՛նչ տենա՝ հրես մի եքա Վիշապ էկավ շուլալվեց էդ ծառը։ Վիշապին տենալու բաշտան Արծվի ճուտերը ծլվլոցը կքըցեն. հենց էդ վախտը Ավչի-օղլին՝ առ հա՛, նետով կտա Վիշապին.

վիշապը ծառիցը վեր կրնկնի, կկիտվի էն դիհը. ինքն էլ զաթի բեզարած ա ըլնում, պառկում ա ծառի տակին ու անուշ քնում ա։ Արծվի ճտերն էլ գալիս են թևերը փռում են էդ տղի գլխին, որ արևը չտա, դինջ քնի, չունքի ճաշվա ընջոթան շոգի արևի փիս վախտն էր։

Էն դհիցը Արծիվը կգա, կտեսնա՝ հրես իրա բնի ծառի տակին մի մարդ ա պառկած. կուղենա, որ ձվիդ-ձվիդ անի, հենց կիմանա՝ ամեն վախտ դա ա կհրել իրա ճուտերին. նո՛ր ընդհան ճուտերը քոմմա նաղլ կանեն Ավշի-օղլու արած լավությունը, վիշապի ջամդաքն էլ շանց կտան իրանց մորը։ Արծիվը ո՛ր էս կիմանա, իրա թևերն էլ կփռի, որ դհա հով ըլնի Ավշի-օղլուն։ Ըսենց կքնի մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, բիրդան կղարթնի կտեսնա, որ հրես Արծիվը իրա ճուտերովը թևները բաց են արել իրա վրա, որ հով ըլնի։ Սիրտը կարխեյնանա, ուրախ-ուրախ տեղիցը վեր կկենա, էն դիհը կկաննի։

Արծիվը կասի.— Ի՞նչ ես ուզում, ա՛յ հողածին, ասա՝ տամ, որ բու լավությունի տակիցը բալի դուս գամ։

— Ջադ չեմ ուզում,— կասի Ավշի-օղլին,— Անմահական ջուր ու Անմահական խնձոր եմ ուզում։

— Դե՛ որ բաենց ա,— կասի Արծիվը,— վե կունես օխտը տիկ ջուր, օխտը բուդ միս. կնստես միջքիս, ես քեզ կտանեմ Անմահական ջրի ու խնձորի կուշտը. որ «բու» կանեմ՝ ջուրը կքցես, «ղո՛ւ» կանեմ՝ միսը, մինչև կէթանք տեղ կհասնենք։

Ըսենց Ավշի-օղլին ա՝ միսն ու ջուրը վե կունի օխտը տիկ՝ ու կնիլնի Արծվի միջքին. Արծիվը կթռնի, «ղո՛ւ» կանի՝ Ավշի-օղլին միսը կքցի, «բու» կանի՝ ջուրը, մինչև կէթա էփեջա տեղ. բիրդան ճամփին մի բուդ միսը վե կքցի Ավշի-օղլին։ Իրա բուդը կկտրի, հազիր կանի, հենց Արծիվը «ղու» կանի՝ Ավշի-օղլին իրա բուդը կքցի։ Արծիվը կտեսնա, որ շատ աղի ա, կդնի լնդերի տակը, կպահի։ Ավշի-օղլուն կասի.— Աչքերդ պինդ խփի՛, քեզ էլ ղայիմ պահի՛, հրե՛ս, էս մենծ սարը տեսնում ես՝ պտի ճղվի, մննենք սրա մեջը։

Ավշի-օղլին ղայիմ կբռնի, ու Արծիվը ընե՛նց բարձր կթռնի, որ սաղ աշխարը Ավշի-օղլու աղաքին մրջմի չանք էր էրևում։ Բիրդան Արծիվը վե կգա մի՛ սաուր քլքլան աղբրի ղրաղ, որ էլ չեմ կարա ասի. ընե՛նց մի չայիր-չիման տեղ, ընե՛նց մի բաղչա, որ էլ ի՞նչ ասեմ. էնքա՜մ խնձորներ, էնքա՜մ խնձորներ, որ Ավշի-օղլին մնացել էր շշմած։

Արծիվն էն սհաթը իրա լնդի տակի բուդը կհանի, կդնի Ավշի-

օղլու վրա, իրա բմբլիցը կպոկի, կթաթախի Անմահական ջրի մեջ, կքսի Ավչի-օղլու ոտին, էն սհաթը ոտը էլի կսաղանա։

Արծիվը Ավչի-օղլուն կասի.— Հրե՛ս Անմահական ջուրը, հրե՛ս Անմահական խնձորը, ինչքա՛մ կուզես կե՛ր ու վե՛ կա՛լ։

Ավչի-օղլին մի բոլ խնձոր կլցնի ջեբերը, ծոցերը, մի կուշտ ինքը կուտի, Անմահական ջրիցն էլ վրեն կխմի։ Մի կուժ էլ Անմահական ջուր կլցնի ու էլի կնստի Արծվի միջքին։ Արծիվը կբերի Ավչի-օղլուն իրանց երկրի սնոռումը վե կդնի, մի բոլ էլ շնորհակալություն կանի, որ իրա ճուտերին Վիշապի ձեռիցը պրծացրեց. հեննեն «մնաս բարով» կանի, կէթա իրա ճուտերի կուշտը։

Ավչի-օղլին էլ ուրախ-ուրախ Անմահական ջրի կուժը կդնի ուսին ու յա՛լլա՝ կկրընգի դպա թագավորի ամարաթը։ Կէթա դո՛ւզ թագավորի աղաքին գլուխ կտա, Անմահական ջրի կուժն ու ծոցի խընձորները կհանի, կդնի թագավորի աղաքը։

Թագավորը, իրա նազիր-վեզիրը էս որ կտեսնան, շատ կզարմանան, թե սա ո՞նց գնաց ըսենց թեզ Ջուրն ու խնձորը գտավ բերեց։

Թագավորը կասի.— Տղա՛, գնա՛ դինջացի, էգուց արի ի՛նչ ես ուզում՝ տա՛մ սրա տեղակ։

Համա ա՛րի նազիր-վեզիրի սրտիցը խաբար տուր։ Սրանք էրկուսն էլ շատ միտք կանեն, շատ միտք կանեն, թե չարաբ մենք ո՞րդե պտի սրան ճամփենք, որ էթալն ըլնի, գալը չըլնի։ Ըտենց միտք կանեն, միտք կանեն, բիրդան մտները կրնկնի, որ Լեմա թագավորը մի շա՛տ սիրուն աղջիկ ունի։ Լավ կըլնի, որ թագավորին սրեն՝ Ավչի-օղլուն ղրկի Լեմայի աղջկանը բերի. զաթի որ թագավորը ղրկի, էլ Ավչի-օղլին եդ էկողը չի։ Դուզ կէթան թագավորի կուշտը։

— Ջես ասի՛, թագա՛վորն ապրած կենա, ի՛նչ ենք միտք արե,— կասեն նազիր-վեզիրը։

— Ի՞նչ,— կհարցնի թագավորը։

— Որ Ավչի-օղլին ըտենց ղոչաղ ա, շատ լավ կըլնի, որ ղրկենք էթա՝ Լեմայի թագավորը մի սիրուն աղջիկ ունի, ղրկի թո՛ղ էթա էն աղջիկը բերի քեզ համար. էսթավուր ամարաթին ընենց հուրի-մալաք թագուհի ա պետք,— ուրախ-ուրախ կասեն նազիր-վեզիրը։

— Դե որ ըտենց ա, ղրկեք, Ավչի-օղլին թող գա՛,—կասի թագավորը։

Զաթի նազիր-վեզիրին էլ հենց էդ էր պետք. մարդ ղրկեցին Ավչի-օղլու ենթուցը։

Ավչի-օղլին կգա, գլուխ կտա թագավորին, կասի.— Էլի ի՞նչ ես հրամայում, թագա՛վորն ապրած կենա։

Թագավորը կասի.— Որ ըսքան բանը բերեցիր, իմ ամարաթը դարդարեցիր, մնաց, որ էթաս, Լևմսի թագավորի աղջկան էլ բերես ինձ թագուհի, նոր են վախտը ի՛նչ ուզում ես՝ կտա՛մ ու էլ ինձ բան չի մնա պակաս։

Ավչի-օղլին դառը-խուր կգա, մորը նաղլ կանի թագավորի հրամանը։

Մերը կասի.— Դու արխեին կաց, դժար հրամանները քոմմա կատարել ես, հմի դրանում ի՛նչ կա, որ դարտ ես անում։ Կէթաս թագավորիցը օխտը ձեռք դափ ու զուռնա, մի քանի հատ էլ լավ դյամի կուզես, քոմմըրի հադին էլ ոսկե շորեր ըլնի։ Վե կունես կէթաս Ֆլա՛ն ծովը. դյամիրը կնստեք, կէթաք դո՛ւզ ծովի մեջտեղը։ Հենց ծովի միջին էդ թագավորի ամարաթն ա, նրանք համիշա ընտող ջրի միջին են ապրում, ըսկի իսանի էրես չեն դուս գալի։ Ածիլ կտաս, թագավորի աղջիկը դուս կգա անկաջ անելու. հենց դուս էկավ բն չէ, վե կալ դի դյամին ու փախեք եդ։

Ավչի-օղլին ա՝ էլի առավոտը թեղ վե կկենա, կէթա՝ թագավորի ամարաթը. նի կմննի նեքսև, թագավորին խոր գլուխ կտա, կասի.— Թագա՛վորն ապրած կենա, ինձ օխտը ձեռք լավ դափ-զուռնա հրամայի տան. քոմմըրի հադին էլ ոսկե շորեր ըլնի հազած, մի քանի հատ էլ լավ դյամի։

Թագավորը էն սհաթը կհրամայի, Ավչու-օղլու ուզածները քոմմա կտան։

Ավչի-օղլին օխտը ձեռք դափ-զուռնեն վե կունի, կընկնի ճամփա։ Կէթա, կէթա, կէթա, լի՛ս կէթա, մո՛ւթ կէթա, ըսենց օխտը շաբաթ ճամփա կէթա, աստու զորությունովը կհասնի մոր ասած ծովին։

Էն սհաթը կհրամայի՝ կամանց դյամիրը քոմմա ոսկով կզուրեն կհագրեն, իրանք էլ ոսկե շորները կհագնեն, կնստեն, դյամիրը կքշեն դպա ծովի մեջտեղը։ Շատ կէթան, քիչ կէթան, աստուն ա այան, կհասնեն լաւ ծովի մեջտեղը. նո՛ր ըստե Ավչի-օղլին գյամչըքանցը կանննացնել կտա դյամիրը, դափը-զուռնեն ածիլ կտա։

Էդ դափը-զուռնաչիքն են՝ մի ընե՞նց ղայդեք կածեն, մի ընե՞նց ղայդեք, որ սաղ ծովի ձկներին, ջանավարներին մղկտացնել կտան. մարդ ըսկի ո՛նչ ուզում էր ուտի, ո՛նչ խմի, հենց նստի

դրանց ածելուն լսի։ Ըսենց կածեն մի օր, էրկու օր, մըն էլ կաենան՝ էն թագավորը դուս էկավ ջրի էրեսը, հայիլ-մայիլ էլավ էդ զուռնաչքանց ածելուն։ Մի սաղ թամամ ամիս էդ դափը-զուռնաչիքը կածեն գյամըքանց միջին, համա էդ թագավորն էլ ո՛նչ ուտում էր, ո՛նչ խմում, հա լսում էր դրանց։

Դե՛ հո մի սաղ ամիս սոված չէ՞ր կարա մնա. գնաց տուն՝ հացմաց ուտի ու էլի դուս գա լսի, տնեցիք հարցրին.— էսքան վախտ ո՞ւր իր գնացե։

Թագավորը կասի.— Ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց բան, ծովի վրա, չեմ գիտա որդիան են էկե էդ դափը-զուռնաչիքը. ընե՞նց են ածում, որ մարդի միտք ո՛նչ ուտիլն ա գալի, ո՛նչ խմիլը։

Թագավորի աղջիկը էս որ կլսի, կզարդարվի, կզուգվի, դուս կգա ծովի էրեսը, որ ինքն էլ լսի։ Խեղճը հենց դուս գալը կիմանա՝ էն սհաթը Ավչի-օղլին վրա կպրծնի, վե կունի թագավորի աղջկանը ու գյամչքանցը կհրամայի, որ քշեն դպա իրանց երկիրը։

Ըսենց կգան, կգան, շատն ու քիչը աստոծ գիտա, օխտը շաբաթվա վրա կհասնեն իրանց երկիրը։

Ավչի-օղլին ուրախ-ուրախ աղջիկը վե կունի կտանի թագավորի ամարաթը։

Թագավորը էս աղջկանը որ կտեսնա, շատ կուրախանա, վե կկենա Ավչի-օղլու ճակատը կպաչի, էդ աղջկանն էլ կտա Ավչի-օղլուն։ Նո՛ր Ավչի-օղլուն թագավորը կղրկի իրա մոր եննուցը։

Ավչի-օղլին ուրախ-ուրախ կէթա մորը քոմմա գլխի անցկացածը նաղլ կանի, ոնց որ ես ձեզ նաղլ արի, նոր վե կունի, կբերի թագավորի ամարաթը։

Նո՛ր ըստե օխտը օր, օխտը գշեր հարսանիք կանեն, լավ ուրախությունով Ավչու-օղլուն կպսակեն։ Ինչ քե՞ֆ, ինչ ուրախությո՛ւն, էն օխտը ձեռք դափը-զուռնեն էլ ածիլ կտան։

Դե գաթի թագավորն էլ հալիվորել էր, կբերի Ավչի-օղլուն էլ իրա ձեռքովը կկարդի թագավոր, որ իրանից եդը Ավչի-օղլին երկիրը կառավարի։

Խեղճ նազիր-վեզիրն էլ կտեսնան, որ իրանց մտքի շատ բաները քամին տարավ, իրանք էլ կգան Ավչի-օղլուն գլուխ վե կբերեն։ Ավչի-օղլին էլ նրանց կբաշխի։

Նրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։



3· ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ

Ժամանակով մի աղքատ մարդ ա ըլնում, ունենում ա մի կնիկ։ Էդ կնիկը շատ սիրուն ա ըլնում։ Էդ մարդը կնկա սիրունութ֊յունի խաթեր մոտիցը չի հեռանում։

Կնիկն ասում ա.— Ա՛յ մարդ, բո՛լ ա նստես, մեր էրեխեքը սոված կոտորվեցին, վե՛ կաց, գնա աշխատանք արա՛, բե՛, մեր էրեխեքը սոված չմեռնեն։

Մարդն ասում ա.— Չե՛մ էթա։

Ասում ա.— Ընչի՞ համար չես էթում։

Մարդն ասում ա.— Վախենում եմ քեզանից։

Ասում ա.— Ա՛յ մարդ, մի՛ վախենա, վե կաց, գնա՛։ Աստված թող միշնորդ ըլնի մեր միջին, մինչանք քու էթալը գալը ես որձեղենի էրես չտենամ։

Մարդը համոզվում ա, վեր ա կենում, ասում ա.— Դո՛ւ ըլնես քու կաթը, ես ո՛ր գնացի, դո՛ւ դիտաս,— ասում ա, ընկնում ճամփա, էթում։

Մեկ օր, էրկու օր, իրեք օր էթում ա, էթում, դուս գալի մի քաղաք։ Ըտեղ սկսում ա աշխատանք անիլ։

Կնիկը դուռը շինում ա՝ մարդն էթալուց եղը, մննում ա նեքսև։ Ունենում են ապրուստ. մի վախտ ուտում են, գալիս ա հատնում ա ուտելիքը։

1646—35

Կնիկն ասում ա.— Ա՛յ աստված, դուս չեմ կարա գա, նեքսև չեմ կարա գա, ո՞նց պահեմ իմ էրեխեքը։

Էրեխանց սովածությունը որ շատ ախտում ա, սկսում են լաց ընկիլ, թե՝ «Սոված մեռանք, մեզ հա՛ց»։

Մերը, իլլաջը կտրվում ա, բերում ա օջախը վառում, պղինձը ջուր ա լցնում, դնում օջաղի վրա, քարերը քցում ա մեջն ու սկսում ա խառնիլը։

Էրեխեքն ասում են.— Սոված մեռա՞նք, թե էփեց, տո՛ւ, ուտենք։

Մերն ասում ա.— Լա՛վ, հլա չի էփե, համբերե՛ք։

Շատ ասելուց եղը մերը խաբում ա ըդոնց, քնելու վախտը գալիս ա՝ քնում են։ Էգսի օրն էլ ըտենց ա անում, խաբում ա, քնացնում։ Իրեք օր ըտենց անց ա կենում։ Իրեք օրից եղը տերը հրեշտակին ղրկում ա աղքատի գեյմով, որ գա էդ կնկա հավատարմությունը փորձի։

Հրեշտակը գալիս ա աղքատի գեյմով կես գշերին դուռը ծեծում ա։

Կնիկն ասում ա.— Ո՞վ ես։

Ասում ա.— Ղարիբ մարդ եմ, մի տեղ տո՛ւ, էս գշեր գամ քնեմ։

Կնիկը նեքսևիցն ասում ա.— Ջիլնի՛, ես մենակ օղլուշաղ եմ, չիլնի, որ մարդ գա իմ մոտը։

Ասում ա.— Ա՛սու սիրու խաթեր, բաց արա դուռը, գամ էն դռան տակին վեր ընկնեմ քնեմ, լիսը բացվի, էթամ։

Կնիկն ասում ա.— Ա՛նկարելի բան ա։

Մարդն ասում ա.— Ինչ որ ուզես կտամ, թաքիլան դուռը բաց արա։

Կնիկն ասում ա.— Իմ քաշովը մին ոսկի էլ տաս, դուռը բաց չե՛մ անի։

Հրեշտակը թողում ա էթում։ Իրեք օր իրար վրա գալիս ա, կնիկը դուռը բաց չի անում։ Էթում ա հրեշտակը՝ տիրոջը հայտնում ա էդ կնկա պնդությունը։ Տերը հրամայում ա, որ ինչքան քնի՝ մի քիսա ոսկի գլխատակին ընկնի։

Քնում ա էդ կնիկը իրիկունը, առավոտը վեր ա կենում, բարձը վեր ա ունում, տենում ա, որ մի քիսիկ բան բարձի տակին դրած ա, ասում ա.— Ա՛ստված, էս քիսեն ո՞վ բերեց դրեց իմ գլխատակը։

Վեր ա ունում քիսիկը, բաց անում բերանը, տենում ա, որ լիքը ոսկի, ասում ա.— Փա՛ռք քեզ, ա՛ստված, իմ էրեխանց առզրեն հասցրիր։

Մի ոսկի հանում ա տալի մենծ տղին, ղրկում բազար, ասում ա.— Ա՛յ որդի, գնա՛ հաց առ, ուտելիք ա՛ռ, տեննանք աստված ի՞նչ դուռ ա բաց անում։

Էդ տղեն էթում ա բազար, մերն ինչ որ թամբահ ա անում, առնում ա, բերում ա տուն. ուտում են, իրանց համար ապրում։ Ընդուց դենը ըլնում ա սովորական, ամեն օր մի քիսա ոսկի վերնում ա գըլխատակիցը։ Էնքան ոսկի ա կիտում, որ հաշիվը կորում ա։

Էդ կնիկը մի հավատարիմ բարեկամ մարդ ա ունենում, ղրկում ա մենծ տղին, կանչում ա. էդ մարդը գալիս ա, գալիս ա՝ էդ կնիկը նեբսև չի առնում, ինքը նեբսևն ա մնում, մարդը դրսևը։

Մարդն ասում ա.— Ի՞նչ ես ասում։

Ասում ա.—Գնա՛ քաղաքից դրսև, տես ամայի տեղ կա՞, ա՛ռ, փողը տամ, ինձ համար շենլիկ շինա՛։

Էդ մարդը դուս ա գալի քաղաքիցը, առնում ա էդ կնկա ասած տեղը, գալիս ա էդ կնկա մոտը, կնիկն ասում ա.— Գնա ուստեք բըռնա, մի ամարաթ շինա՛, որ թագավորիցը լավն ըլնի։

Էդ մարդը էթում ա, ուստեք ա բռնում, ֆահլեք ա բռնում, սկըսում շինիլը։ Շինում ա ընենց մի բան, որ ոչ մի երկրում չի ըլնում ըտենց շենք։

Գալիս ա էդ կնկա մոտն, ասում ա.— Շինեցի, հազրեցի, փողերը տո՛ւ, տանեմ տամ ուստեքանցն ու ֆահլեքանցը։

Կնիկը տալիս ա փողերը, ասում ա.— Տար տո՛ւ, եդ դառ, արի իմ կուշտը։

Էդ մարդը տանում ա փողերը բաժանում ա, գալիս ա էդ կընկա մոտ։

Էդ կնիկն ասում ա.— Ա՛ռ էս փողը, գնա տան մեջ առ։

Էթում ա առնում ա, գալիս ա էդ կնկա մոտը, ասում ա.— Ամեն բան հազիր ա։

Էդ կնիկը հանում ա մի բուռ ոսկի տալիս ա էդ մարդին, ասում ա.— էս էլ քեզ փեշքաշ, գնա՛։

Էդ մարդը թողում ա, էթում։ Ինքը քաշվում ա էդ տները, առնում ա ոչխարներ, առնում ա կովեր, առնում ա գոմշըներ, առնում ա ձիանիք, առնում ա դավեք, ընենց որ ապրանքի չափ ու սահմանը կորչում ա։

Դրա տեղը տենում ա, բախտում ա. «էս կնիկը ո՞րդիան հավաքեց ըսքան ապրանքը. կա, չկա՝ դա բոզություն ա անում»։

Օխտը տարի անցնում ա, էդ կնկա մարդը գիր ա ղրկում, թե. «Գալիս եմ». աղպորն էլ ա ղրկում, կնկանն էլ։

Գալիս ա էդ մարդը հասնում, ասենք էրևան, աղպերը վեր ա կենում, ասում ա.— էթամ աղպորս կուշտը, կնկա արածները ասեմ իրան։

էթում ա, աղպորը պատմում ա, թե.— Դու որ ընտեղ իր, օրեն հացի կարոտ իր, հմի կնիկդ՝ գնա, տե՛ս ի՛նչ կարողություն ա թոփ արե, էլ նոր տուն շինի՛լ, էլ ոչխար, կով, ձի առնի՛լ։

Մարդն ասում ա.— Ո՞րտեղան ա առե։

Աղպերն ասում ա.— Դու չե՞ս գիտա՝ որտեղան ա առե. քեզ խաբեց, ղրկեց ղարբություն, ինքն սկսեց լրբություն անիլ, օրական հարուր մարդ գալիս ա, հարուրն էթում, ըտենցությունով էլ հավաքեց էդ կարողությունը։

Էդ կնիկը կանչում ա իրա քավորակնկանը ասում ա.— Մարդս գալիս ա, քավորակի՛ն, արի ձիանիքը նստենք, էթանք աղաքը։

Ձիանիք են նստում, էթում մարդի աղաքը։ Ճամփեն մինչև կեսն էթում են, մարդը պատահում ա իրա աղպոր հետ. ըտեղ հարց ու բարով են անում, էդ մարդն ու կնիկը եդ են ընկնում։ Քավորակինն ու տեգրը աղաք են ընկնում, գալիս են։

Քավորակինը ասում ա.— Էս ա օխտը տարի ա, իրար չեն տեսե, թող իրար հետ խոսալոն գան, մենք աղաք-աղաք էթանք։

Էդ մարդը կնկանը վեր ա բերում ձորի մեջը, ձիուցը վեր ա բերում, շլինքը կտրում, չարսափը քաշում վրին, թողում, ձին նստում գալի, աղպորը հասնում։ Գալիս են իրանց տունը, կնկա մարդը տենում ա, ի՛նչ կարողություն՝ հաշիվ, սահման չկա, ասում ա. «Դրուստ էր իմ աղպոր ասածը»։

Մի էրկու շաբաթ մնում ա, էդ մարդի ոչխարն էլ ա սատկում, կովերն էլ, գոմշըներն էլ, վերջը էլ բան չի մնում. մի օր էլ սելաֆը գալիս ա, լցվում ա դրա ամարաթների մեջը, ամարաթներն էլ քանդվում ա, ընենց որ էդ մարդը դառնում ա օրեն հացի կարոտ։

Տղեն վեր ա ունում ասում ա.— Իմ մերն ո՞ւր ա։

Ասում ա.— Մերդ լրբություն էր արե, ըտքան կարողությունը թոփ էր արե, դրա համար էլ սըպանեցի։

— Իմ մերն,— ասում ա,— ինչ դու գնացել իր, տանիցը դուս չէր էկե, շաբաթներով մենք սուված ինք մնում տան միջին, նա պղինձը դնում էր օջաղի վրա, ջուրը լցնում էր մեջը, քարերը քցում

մեչը, մեղ ըտով խաբում, քնացնում։ Մի մարդ իրեք օր իրար վրա էկավ, ասում սերը դրեց՝ իմ մերը դուրը բաց չարեց, ասեց, որ. «Ես իմ մարդի հետ ուխտ ու պայման ունեմ, մինչև իմ մարդի գալը ես որձեղենի էրես պոի չեմնամ»։ Ըդուց դենը իմ մերը քնում էր, մի քիսիկ ոսկի գլխատակիցը առավոտը վեր էր ունում։ Թոփ էլավ ահագին ոսկի, իմ մերը կանչեց ֆլա՛ն մարդին, տվեց՝ նա շինեց ամարաթը։ Կուղես էդ մարդին կանչա, հարցրա, տես՝ մարս էրեսը տեհե՞լ ա։

Կանչեց էդ մարդին, հարցրեց։

Էդ մարդն ասեց.— Վա՛յ քու տունը քանդվի, քո՛ւ շինքը կոտրվի, դու ո՞նց ղրմըշեցիր, էն թավուր կնկանը սըպանեցիր, նա ինձ որ կանչեց էդ ամարաթները շինելու, իմ էրեսը դուս չէկավ, փողը տալիս էր տղիդ, տղեդ բերում էր տալիս ինձ։ Ինչ որ ասել են քեզ՝ սուտ են ասե։

Էդ մարդը նո՛ր տալիս ա գլխին, ոններին, թե՝ ես իմ ձեռովը իմ տունը քանդեցի։

Խարարը տանք կնկանիցը։

Մարդը որ կնկանը սըպանում ա, ասում հրամանով դրա բերնիցը մի աղբուր ա դուս գալի, վազում։ Ընտեղ էլ բաղրկյանի յուրդ ա ընում, էդ բաղրկյանը գալիս ա, բեռները վեր ա ածում, տենում ա, որ բառասուն տարի ինքը բաղրկյան էր, ըտեղ ջուր չէր տեսե, համի աղպուրը գալիս, անց ա կենում։

Ասում ա.— Յավա՛շ, էթամ տենամ էս աղպրի ակը։

Էթում ա, տենում ա, որ մի կնիկ պառկած ա, շարսափը վրին քաշած, բերնիցը աղպուրը դուս ա գալի։ Զարմացած նստում ա, թամաշ ա անում։ Մեկ էլ տենում ա, հրես էրկու մուկ դուս էկան բնիցը, իրար հետ հաղ արին, եդուլ մի մուկը վե կալավ մի խեցյաոի կտոր, դրեց էն մկան շլինքը կտրեց, թողաց ընտեղ, ինքը փախավ, մտավ իրա բունը։ Մի քիչ մնաց, էդ մուկը բնիցը էկավ, գնաց էդ կնկա բերնիցը դուս էկած ջրիցը բերեց, մկան գլուխը դրեց տեղը, էդ ջրիցը քսեց, կնկա կողքին քոլեր էր դուս էկե, գնաց մի քոլ պոկեց, բերեց տվեց էդ մկան պնչին, մուկը սաղացավ, ընկան իրար ննուց՝ փախան, մտան իրանց բունը։

Բաղրկյանն ասեց.— Էս ի՞նչ հրաշք էր՝ ես տեսա։

Վե կացավ, էդ կնկա շլինքը դրեց տեղը, էդ ջրիցը քսեց, լա-

վացավ յարեն, գնաց էն քուլիցը քաղեց, տարավ դրեց էդ կնկա պնչին, կնիկը փռշտաց, վե կացավ նստեց։ Թամաշ արեց է՛ս դիհը, է՛ն դիհը, տեհավ, որ մոտին բազրկյանը կաննած ա, չարսափը էլի քաշեց իրա գլխին։

Բազրկյանն ասեց.— Դրուստ որ հում կաթնակերին էյթիբար չկա. ես ըսքան չարչարվեցի, ազատեցի քեզ, հմի դու ինձանից էրեսըդ պահում ես։

Կնիկն ասեց.— Դու բազրկյան ես, համբերություն ունեցի, ըսքան վախտ ա ըստեղ սուված, ծարավ վեր ընկած եմ, էթանք չադիրդ, մի քիչ հաց տո՛ւ՝ ուտեմ, կշտանամ, էն վախտը դու իմն ես, Էս քունն եմ։

Բազրկյանը վե կացավ, կնիկն էլ հետը՝ գնացին. ճամփին բազրկյանը ուզեցավ ձեռը քցի ճտովը, թշերը պաչի, կնիկն ասեց.— Ամո՛թ ա, համբերի։

Գնացին չադիրը, հաց բերին, հաց կերան, պրծան, բազրկյանը կնկանն ասեց.— Դե՛,— ասեց,— ես քունն եմ, դու իմն ես։

Կնիկն ասեց.— Համբերի՛, մի դուս գամ դրսև, նոր գամ, զաթի ես քունն եմ, դու իմն ես։

Կնիկը դուս էկավ դրսև, չարսափը վե կալավ քցեց մի վարդի թփի վրա, ինքը փախավ։

Բազրկյանը շատ թամաշ արեց, տեսավ կնիկը չէկավ, դուս էկավ դրսև, տեհավ, որ չարսափը քցած ա ընտեղ, գնաց չարսափը քաշեց, ասեց.— Վե՛ կաց էթանք։

Տեհավ, որ կնիկ չկա։ Սդ դառավ փոր ու փոշման էկավ չադիրը։ Նոքարներին կանչեց, ասեց.— Էս էլած չէլածը ձեզ փեշքաշ, ես էթում եմ։

Ասեց.— Աշխարքը քանի շեն ա, ես պտի մ.ան գամ էդ կնկա ճննուցը։

Ասեց, գնաց։

Գանք, կնկանիցը սալըղ տանք։

Կնիկը գնաց հասավ մի չոբանի, ասեց.— Բարո՛վ քեզ, չոբան աղպեր։ Ինձ մի կտոր հաց տո՛ւ ուտեմ, սուված եմ։

Չոբանը հանեց պարկիցը հաց դրեց, մի ոչխար կթեց, դրեց կնկա աղաքը։ Չոբանը սկսեց էդ կնկա հետ հանաք անիլ։

Կնիկն ասեց.— Հաց ուտեմ, պրծնեմ, զաթի ես քեզ համար եմ էկե ըստեղ, դու իմն ես, ես քունն եմ։

Կնիկը հաց կերավ պրծավ, չորանին ասեց.— Դե գնա, ոչխարդ ցվրրվել ա, հավաքա՛, բե՛։

Չորանը գնաց ոչխարը հավաքելու, կնիկը փախավ։

Չորանը տեհավ, որ կնիկը փախնում ա, Թողաց ոչխարը, ընկավ կնկա քամակը։ Կնիկը տեհավ, որ չորանը ընկել ա ննուցը, էն ա, պտի հասնի իրան, մի գետ կար, գնաց էդ կնիկը, ջանի դարդիցը իրան ջրից գետի մեջը։ Չորանը էկավ տեհավ, որ կնիկ չկա, ոչխարը տարավ դեղը, տվեց տիրոնչը, ինքն ասեց.— Աշխարքը քանի շեն ա, պտի ընկնեմ էս կնկա ննուցը, ման գամ։

Գանը, խաբարը տանք կնկանիցը։

Գա որ ընկավ գետը, ջուրը քշեց տարավ. տարավ բանդ արեց մի ջաղացի նավի։ Ջաղացպանը մի հալիվոր մարդ էր, տեհավ, որ ջաղացի ջուրը կտրվեց, վե կացավ գնաց, տեհավ՝ մի կնիկ նավին բանդ էլած։ Բռնեց էդ կնկա թևիցը, ջրիցը դուս հանեց, տեհավ, որ էդ կնիկը հլա չի մեռե, վե կալավ, տարավ ջաղացը, էդ կնկա ուշը բերեց վրա։ Կնիկը դարթնեց, տեհավ, որ ջաղացի մեջն ա, մի հալիվոր մարդ գլխավիրևը կաննած ա։

— Է՛,— ասեց,— ա՛փի, սոված եմ, մի կտոր հաց բե, ուտեմ, ըստուց դևն դու ինձ՝ հեր, ես քեզ՝ աղջիկ։

Մնաց էդ ջաղացպանի մոտին։ Քնեց. լիսը բացվեց, տեհավ մի քիսիկ ոսկի գլխատակին դրած ա։ Ընդուց դևնը դառավ սովորական, օրը մի քիսիկ գլխատակիցը վեր էր ունում. ընքան կիտեց, որ հաշիվը կորավ։

Օրերի մի օրն ասեց.— Ափի՛, գնա ուտեք բե՛, ըստեղ շենլրկ-ներ շինենք, ամբարներ շինենք, ցորեն հավաքենք։

Հալիվորը վե կացավ գնաց բաղար, բռնեց՝ ֆահլեք, ուտեք, բերեց, սկսեց էդ շենլիկը շինել։ Շենլիկը շինեց վերջացրեց, ամբարներ շինեց, ցորեն առավ, կիտեց։ Եդով գնաց էդ կնկա համար մի ձեռք տղամարդի շորեր առավ, բերեց, տվեց էդ կնկանը։ Կնիկը հագավ, դառավ մի սիրուն տղամարդ։ Մի քանի տարուց եդը սով ընկավ էդ երկրի մեջ։ Էդ կնիկը հայտնեց ամեն տեղ, թե. «Ցորեն ունեմ, բաժանում եմ, թե հարուստ, թե աղքատ, ով ուզում ա, գա տանի»։

Զենը հասավ ըդոնց, թե ըսենց մի մարդ ցորեն ա բաժանում

մուֆթա, էրկու աղպերն էլ վե կացան, ասեցին.— Է՛թանք, մենք էլ բերենք, սովամահ էլանք։

Ըդոնք վե կացան, ճամփա ընկան, գնացին։

Գանք, սալըղը տանք բազրկյանիցն ու չոբանիցը։

Ըդոնք էլ լսեցին, որ անփող ցորեն են բաժանում, վե կացան էկան էդ մարդի մոտը։

Էդ կնիկը, որ տենում ա էդ մարդկերանցը, ճանանչում ա, որ իրա բազրկյանն ու չոբանն են։

Տեղ ա տալիս, ասում ա.— Նստե՛ք, շատ մարդիկ կան, պըրծնեմ, նոր ձեզ տամ ցորեն, տարե՛ք։

Մի էրկու օրից եդը, գալիս ա իրա մարդն ու տեգրը։ Մտնում են էդ կնկա մոտ, գլուխ են տալի, կաննում են։ Կնիկը ճանանչում ա, համա ծանոթություն չի տալի, իսկ ընդոնք չեն ճանանչում։

— Դե՛հ,— ասում ա,— գնացեք էն օթախումն էլ դուք նստեք, մինչև վերջացնեմ էս մարդկերանցը, նո՛ր ձեզ էլ ցորեն տամ, գնացե՛ք։

Մնում ա մինչև իրիկուն, քոմմա մարդկանցը ճամփու ա դնում, կանչում ա բազրկյանին, չոբանին, իրա մարդին ու տեգորը։

— Է՛,— ասում ա,— ո՞ր երկրիցն եք դուք,— հարցնում ա էդ կնիկը։

Բազրկյանն ասում ա.— Ես Ըսպըհանցի եմ։

Չոբանն ասում ա.— Ես Ջալալցի եմ։

Նդով հարցնում ա իրա մարդին.— Դո՞ւ որտեղանցի ես։

Ասում ա.— Ես էլ էրևանցի եմ։

Տեգորը հարցնում ա.— Դո՞ւ որտեղանցի ես։

Ասում ա.— Սա իմ աղպերն ա, էրկուսս էլ էրևանցի ենք։

Էդ կնիկը վեր ա ունում, ասում ա.— Բազրկյա՛ն, դու շատ տեղեր ես մանե էկե, գլխովդ շատ բան անցկացած կըլնի, երկար գշեր ա, պատմա՛, անկաջ անենք։

Բազրկյանն ասում ա.— Պատմեմ։ Ես մի զարմացք բան տեհա։ Էս քառասուն տարի բազրկյանութիւն ի անում, ըդենց բան չէի տեհե։ Տարվա մի տարին ինձ մի յուրդ ունեի, էկա ըտեղ բեռներս վե դնելու. բեռներս վե դրեցի, տեհա, որ ջուր ա գալի էդ ձորովը, Անմահական ջուր, ասի՝ «էս ա քառասուն տարի ես բազրկյան եմ,

ես չէի տեղ բտեղ շուրթ. նոքաներիս ասեցի. «Դուք չադրները տվե՛ք, ես էթամ, տենամ՝ էս շուրը ո՞րտեղան ա գալի»։ [1]...

— Բա էդ կնկանը տանելու վախտը ըսկի թուշը չպաչեցի՞ր,— հարցրեց էդ կնիկը բաղրկյանին։

Բաղրկյանն ասեց.— Երկի՛նք, գետի՛նք, ծո՛վ, ցամա՛ք, չթողաց ձեռ տալ, ոնց որ իմ քիրը, իմ մոտիցը հեռացավ, էն օրվանից ընկել եմ էդ կնկա ետևուցը ման եմ գալի, որ մեկ էլ էրեսը տենամ, չեմ գտնում։

— Լա՛վ,— ասեց կնիկը,— հմի էլ, քո՛ւրդ, դու ասա՛։

— Է՛,— ասեց,— աղա ջա՛ն, իմ դարդը շատ ա. էդ կնիկը ինձ ոսսա էկավ եդո, էկավ ասեց. «Հաց տո՛ւ, սոված եմ»։ Հաց տվեցի կերավ, ուղեցա ձեռս բցեմ շընքովը, պաչեմ, ասեց. «Համբերա՛, հացս ուտեմ պըրծնեմ, դաթի ես քեզ համար եմ էկեծ»։ Հացը կերավ պրծավ, ասեց. «Ջորա՛ն, ոչխարդ ցրվել ա, գնա՛ հավաքա իրար վրա»։ Ես մինչու գնացի ոչխարը հավաքելու, թամաշ արի տեհա՝ էդ կնիկը փախնում ա. Թողացի ոչխարը, ընկա էդ կնկա քամակը։ Է՛ս յանը, է՛ն յանը, մի վարար դետ կար, էդ կնիկը իրան քցեց էդ գետի մեջը, Թողացի եդ դառա ոչխարիս մոտը փոր ու փոշման, տարա ոչխարը տվեցի իրա տիրոնջը, ասեցի. «Աշխարքը քանի շեն ա, պտի ընկնեմ էդ կնկա ետևուցը, ման դամ. հլա ման եմ գալի, չեմ կարում գտնիմ»։

Էդ կնիկը վե կալավ ասեց.— Ջորա՛ն, դու սարի քուրդ, էն կընկանը չպաչեցի՞ր, ձեռ չտվի՞ր։

Ասեց.— Չէ՛, աղա՛, աստվա՛ծ, երկի՛նք, գետի՛նք, չԹողաց, էն օրվանից էլ ընկել եմ քամակը, պտըտվում եմ, չեմ գտնում։

Մարդը բտեղ ինքն իրան մտածում ա.— Էս կա, չկա, իմ կնիկն ա, յարար սա՞ղ ա, թե մեռած։

Ասեց.— Ա՛յ մարդ, դու էլ քու գլխի էկածը պատմա՛,— մարդին ա ասում։

Ասեց.— Աղա ջա՛ն, գլխի՛դ, արևի՛դ մեռնեմ, ի՞նչ ասեմ, դարդերս շատ ա, չեմ կարա։

Ասեց.— Է՛լի հենց, ասա՛։

Ասեց.— Ասե՛մ, աղա։ Մեռնի էս աղպերր. էս աղպերը արեց, որ իմ տունը քանդվեց, ընդոնք որ պատմում ին, էդ իմ կնիկն ա։

---

[1] Այսպես մանրամասն պատմում է ամբողջ եղելությունը (Մ. Բ.)։

— Բա խի՞ իր սըպանում քու կնկանը։

— Ես գնացել ի ղարբություն, գալիս ի, աղպերս էկավ աղաքսթե. «Մեր տանըցիք, կնիկս, էրեխեքս ո՞նց են», հարցրի աղպորս, նա վե կալավ ասեց, թե. «Օրական հարուրը գալիս են կնկանդ կուշտը, հարուրը էթում են, եքա հարստություն ա թոփ արե լրբությունովը»։ Նդո էկանք, ճամփին կնիկս էկավ առաջս քավորի կնկա հետ, հարց ու բարով արինք իրար հետ, ընդոնք ընկան աղաք աղպորս հետ, ես ու կնիկս եդ մնացինք, եդով կնկանս վեր բերի էդ ձորի մեջը, շըլինքը կտրեցի, չարսափը քաշեցի վրեն, ձիս քշեցի, գնացի հասա աղպորս ու քավորակնկանս։ Գնացինք տուն։ Գնացինք տուն, հարց ու փորձ արի, տեհա, որ անմեղ ա իմ կնիկը, նո՛ր գլխիս տվեցի, ոններիս տվեցի, էլ ո՞րդի՝ կնիկ չեմ կարա գտնի։

Էդ կնիկը վե կալավ ասեց.— Որ էդ կնկանը տենաս, կճանանչե՞ս։

Ասեց.— Բա չե՞մ ճանանչի։

Կնիկը գնաց մտավ նեքսև, տղամարդի շորերը հանեց, իրա շորերը հագավ, հալիվորի հետ էկավ ըդոնց մոտին կաննեց։

Բազրկյանը ըտեղան հասավ, որ փաթըթվի, չորանը ընտեղան հասավ, որ փաթըթվի, մարդը չոդեց, ընկավ ոնները, ասեց.— Կնի՛կ, վիրև՝ աստված, ներքև՝ դու, ես արել եմ, դու մի՛ անի։

Բռնեց էդ չորանին էլ ցորեն տվեց, բազրկյանին էլ տվեց.— Դե՛հ,— ասեց,— գնացե՛ք, աստված ձեզ հետ։

— Դե՛,— ասեց,— ա՛յ մարդ, ես էլի քու կնիկն եմ, քու աղպոր դիվանը քու ձեռովն արա։

Աղպերը բռնեց աղպորը թութունի պես կոտորեց, լցրեց գետի մեջը, ասեց.— Գնա՛, ձկներին բաժին ի՛լ։

— Ա՛յ մարդ,— ասեց կնիկը,— դե վե կաց գնա էրեխեքը բե՛, ըստեղ ուտենք, խմենք կյանք վայելենք։

Մարդը գնաց էրեխեքանցը հավաքեց, բերեց ըտեղ, հալիվորի հետ մի տեղ ապրեցին մինչև իրանց մահը։

Դրանք հասան իրանց մուրազին, դուք էլ հասնեք ձեր մուրազին։

Աստծուց իրեք խնձոր ընկավ, մեկն՝ ասողին, մեկը՝ լսողին, մեկն՝ անկաչ դնողին։

4. ՕՀԱՆԵՍԻ ՀԵՔԻԱԹԸ

Ժամանակով մի մարդ կար, բոլան ուներ վեց տղա. մենծ տղի հետ էթում էր, ցախ էր քաշում, բերում էր ծախում։

Մենծ տղեն մի օր ասեց.— Ես պտի տանեմ ցախը, քուշեքը մեն ածեմ։

Տարավ։ Մի կնիկ դուռ էկավ տանիցը, շատ հարուստ էր, էդ տղին տեհավ, աչքն բնկավ էդ տղին, շատ հավանեց։

— Ա՛յ տղա, ցախդ բե՛, ես կառնեմ։

Ասեց.— Ի՞նչ ածի։

Ասեց.— Ի՞նչ սիրած կուզի, տո՛ւր։

Հաննեց մի մանեթ փող տվեց։

Ասեց.— Քեզ հեր, մեր ունե՞ս։

Ասեց.— Ո՛չնեմ։

Ասեց.— Աղպեր էլ ունե՞ս։

Ասեց.— Հինգն էլ տանը կա։

Ասեց.— Հերդ ի՞նչ բանի ա։

Ասեց.— Հերս էլ ա ցախ քաշում, բերում. ենք, ծախում։

Ասեց.— Հորդ էլ ասա՛, էրկսով էլ ցախը բերեք ըստեղ, էրկսիդ ցախն էլ կառնեմ։

Տղեն վե կացավ, գնաց։ Տեհավ՝ հերը հլա ցախը չի ծախե, ասեց.— Ա՛յ հեր, ես տարա տվի մի մանեթի, էգուց ես էլ, դու էլ էրկսով տանենք, բնտեղ ծախենք։

Էգսի օրը ցախն առան, գնացին ընտրանց տունը։ Էդ կնիկը հանեց մի-մի մանեթ փող տվեց ամեքին, ասեց.— Էս տղին չե՞ս ծախի, ես առնեմ։

Ասեց.— Էթամ մորիցը հարցնեմ, էգուց պատասխան կբերեմ։

Ասեց.— Մի կոտ ոսկի կտամ քու տղին, էգուց գալուս մի-մի շըլակ էլ ցախ վե կալեք բերեք, մի-մի մանեթ էլ փող կտամ։

Թողացին, գնացին։

Գնացին տուն, կնկանը հարցրեց, ասեց.— Ա՛յ կնիկ, մեր տղին մի կոտ ոսկի են տալի, կարող ա մեզանից էլ լավ պահի, մի բան որ տանը հինգը կա, արի՝ տանք։

— Տա՛նք, զաթի դու էլ հալիվորել ես, չես կարում աշխատի, մի կոտ ոսկի կառնես, հա՛մ դու լավ կապրես հա՛մ քու տղեքը։

Ասեց.— Շա՛տ լավ ես ասում, ա՛յ կնիկ։

Էգսի օրը ցախը վե կալան հեր ու տղա գնացին։ Երբոր ցախը վե ղրին, հանեց էրկու մանեթը տվեց, ասեց.— Տղիդ տալի՞ս ես։

Ասեց.— Տալիս եմ։

Մի կոտ ոսկի չափեց, լցրեց ջվալի մեջը, ասեց.— Դե տար կե՛։

Տղին վե կալավ, մի ջոկ օթախ տարավ. մարդ ղրկեց, մի լավ վարժապետ կանչեց, հախը բարըշեց, ասեց.— Լա՛վ ուսում պետտաս իմ տղին։

Վեց ամսից եղը խանումը էդ տղին հարցրեց.— Ո՞նց ա ուսումդը, լա՞վ ա։

Ասեց.— Շա՛տ լավ ա։

Ասեց.— Կարաս քեղնու գլուվա մի դուքան բաց անի, առուտուր անի։

Ասեց.— Շա՛տ լավ։

Էդ կնիկը մի քանի հազար մանեթ տվեց, տղեն գնաց դուքան բռնեց, ապրանք առավ, սկսեց առուտուր անիլը։ Մի օր, էրկու օր եղը, տեհավ՝ մուշտարին շատացավ, մի պրիկաշչիկ բռնեց։ Մի քանի օր արանքը անց կոցավ, տեհավ՝ մի պրիկաշչիկը չի կարում օգտիցը դա, էրկու իրեքն էլ բռնեց, համարյա տասնէրկու պրիկաշչիկ պահեց։ Սաղ քաղաքը զարմացավ դրա առուտուրի աջողության վրա։

Խարարը տանք էդ կնկա մարդիցը։

Էդ մարդն էլ առուտուրական էր, երբոր իրա դուքանը նստած

միշտին՝ էս ու էն էթում ին Օհաննեի դուքանը մտիկ ին անում, դա էլ վե կացավ, դնաց։

Սրոր մտավ դրա դուքանը, բարև տվեց, տղեն վե կացավ, ասեց.— Տղե՛ք, ըսկամի տվե՛ք, Թո՛ղ Նստի հերս։

Ինքը ճանանչում էր էդ մարդին, մինակ հերը չէր ճանանչում դրան։

Մրխեի նստելուց նրը, հաց բերին, ասեց.— Հայրի՛կ, ա՛րի հաց ուտենք։

Ասեց.— Շնորհակալ եմ, ես նոր հաց կերա, ո՞նց ա, որ ըսքան նդի ևք հաց ուտում։

Ասեց.— Ի՞նչ աննենք, տենում ես, մաշալ չի ըլնում։

Էդ մարդը նստում ա, հաց ուտում, շնորհակալ ըլնում, էթում։

Իրիկունը կնկանը ասում ա.— Ըսօր գնացել ի Օհաննեի դուքանը, լավ պատիվ տվեց, շատ լավ տղա ա, լավ էլ գործ ունի, էրնակ յա բաննց տղա ունեննայինք, յա ըտեննց փեսա, էլ աշխարքի տակին պարդ չինք ունեննա։

Կնիկն ասեց.— Էդուց շարաթ ա, կարաս, կանչա դա՛ մեր տունը, ես կհամոզեմ, մեր աղչիկը կտանք։

Ասեց.— Չի՛ դա, անծանոթ տղա, խի՞ ա գալի։

Ասեց.— Դու ասա՛, բալթիմ էկավ, կանչում ես պատիվ տալու, հո ուրիշ բանի համար չե՞ս կանչում։

Առավոտը դշերով կնիկը գնաց Օհաննեի օթախն, ասեց.— Իրիկվա ժամերի վախտը որ հերդ կգա քու դուքանը, կասի. «էթանք մեղ դռնաղ», մի քիչ չեմ-չում կանես, նո՛ր վե կկենաս, իրար հետ կգաք։ Սրոր էկար տուն, ոնց որ անծանոթ, ինձ հետ կբարևես, Շուշանկի հետ էլ կբարևես, ըննց որ հերդ կարծիք չանի, թե դու բոտեղ ապրել ես։

Տղեն վե կացավ, գնաց դուքան։ Իրիկունը, ժամերի վախտը էդ մարդը գնաց Օհաննեի դուքանը, բարև տվեց, էլի հրամայեց պրիկաշչիկներին, թե՝ ըսկամի տվե՛ք, հայրիկը նստի։

Մի սհաթ քիմի նստեց, ասեց.— Խնդրում եմ էս իրիկուն էթանք մեր տուն, մի քիչ խոսանք։

Ասեց.— Էս իրիկուն շարաթ իրիկուն ա, պտի հաշիվ տենանք, ո՞նց դամ։

Ասեց.— Հաշիվը էդուց կտեննաք, էկե՛ք էթանք։

Ասեց.— Շա՛տ լավ, է՛թանք։

Վե կացան, գնացին։ Երբոր հասան ժամի դուռը զանգերը տվեց, մարդն ասեց.— Մտնենք, մի էրկու ծունդր դնենք, էթանք։

Մտան եկեղեցի, եդ թամաշ արեց տեհավ, որ իրանց հարևանի տղեն էթում էր տուն, ասեց.— Ա՛ռ քեզ մի աբասի, գնա խանըմին ասա. «Աղեն Օհանեսին բերում ա»։

Տղեն վազեց, գնաց։

Մի էրկու ծունդր դրին, վե կացան գնացին։ Գնացին տուն, բարև տվին, կնիկը բարևն առավ, նստացրեց, սկսեցին խոսալը։ Ջայ բերին՝ խմեցին, հաց բերին՝ կերան, տղեն վե կացավ էթալու, կնիկը մի դհիցը, մարդը մի դհիցը կախ ընկան փեշիցը, թե.— Էս վախտ ո՞ւր ես էթում, էս գշեր ըստեղ կաց, առավոտը կէթաս։

Տղեն չկացավ, էլի գնաց իրա օթախը, պառկեց։

Առավոտը մարդ ու կնիկ շատ թեզ վե կացան, մարդն ասեց.— Մի լավ պատրաստություն տե՛ս, էդ տղին լավ պատվենք։

Կնիկն ասեց.— Լավ կպատվենք, եդո ես կասեմ. «Ա՛րի, մեր աղջիկն ա՛ռ»։

Ասեց.— Քու էրեսը ո՞նց պտի բռնի։

Ասեց.— Կասեմ։

Կնիկը գնաց տղի օթախն, ասեց.— Համի որ չայ կխմենք, կպըրծնենք, ես կասեմ, թե. «Օհանե՛ս, իմ Շուշանիկը պտի տամ քեզ», դու մի քիչ թաշախուստ ծախա. երբոր մենք կզոռենք, ասա՝ լա՛վ։

Վե կացավ լվացվեց, էկավ, նստեցին, չայ խմեցին։

Կնիկն ասեց.— Օհանե՛ս, տենո՞ւմ ես՝ իմ աղջիկն ինչքա՞ն սիրուն ա, պրի իմ աղջիկը տամ քեզ, ըլնես իմ փեսեն։

Օհանեսը մտիկ տվեց Շուշանրկի էրեսին, տեհավ՝ շատ սիրուն ա, սիրտը կպավ, համա ասեց.— Ջէ՛, հլա իմ վախտը չի, հլա տասնէրկու պրիկաշչիկ ունեմ, շինեմ քսանչորսը՝ նո՛ր։

Մարդը վե կալավ ասեց.— Ինչքան փող ես ուզում՝ տանք. փա՛ռք աստու, ըսքան կարողություն ունեմ, մի աղջիկ։

Տղեն ասեց.— Շա՛տ լավ, որ ուզում եք՝ ես էլ կառնեմ։

Էն սհաթը նշան տվին, մի հինգ, տասն օրից եդը պսակեցին։ Երբոր հարսանիքը պրծան, տղեն գնաց, որ աղջկա ծոցին քնի, շորը հանեց, տեղաշորի միջին նստեց, աղջիկն էկավ կողքին կանգնեց, մի «ա՛խ» քաշեց։

Տղեն ասեց.— Խի՞ «ախ» քաշեցիր։

Ասեց.— Ընե՛նց, միտս մի բան ընկավ, «ախ» քաշեցի։

Ասեց.— Պախ՛ ասես, թե խի՞ «ախ» քաշեցիր, թե չէ շորբեր հագնում եմ։

Աղջիկը ճարը կտրվեց, ասեց.— Ես մի միլիոնչու աղջիկ, դու մի շուչու տղա, ո՛նց իրար առանք։

Տղեն ասեց.— Ես հլա քու ծոցը չեմ մտե, դու էդ խոսքը ինձ ասեցի՛ր,— վե կացավ, շորերը հագավ, ասեց,— դե՛, մնաս բարո՛վ, դնա՛, միլիոնչու տղի ա՛ռ։

Վե կացավ, գլուխն առավ; գնաց։ Թե մեկ օր գնաց, թե հինգ օր գնաց, հասավ մի քաղաք։

Խարարը տանը աղջկանիցը։

Աղջիկը ընքան լաց էլավ, որ աչքերը կոկոնեց, ուռեց, նստած տեղը քնեց։ Առավոտը վե կացավ մերը, տեհավ, ո՛նչ աղջիկն ա դուս գալի, ո՛նչ տղեն։

Մարդն ասեց.— Ա՛յ կնիկ, գնա տես՝ ի՛նչ էլան, կանչա՛, գան՝ շայ խմենը։

Գնաց, մտավ աղջկա օթախը, տեհավ աղջիկը շորերը հագին, քիթ ու բերնի վրա ընկած ա։

— Աղջի՛, աղջի՛։

Աղջիկը զարթնեց, տեհավ, որ մերն ա։

— Օհաննան ո՞ւր ա։

Սկսեց լաց ընելի։ Նո՛ր պատմեց մորը թե՝ էս խոսքը ասեցի, տղեն խռովեց, գնաց։ Էրկու բամփ տվեց աղջկա գլխին, թե.— Բե-մուրադ մեռնես, խի՞ էդ խոսքը ասեցիր։ Դու չտեհա՞ր՝ ես ի՛նչքան ոսկի տվի առա, ի՛նչքան չարչարվեցի, ուսումի տվի, բիրադի քեզ համար, դու խի՞ իր էդ խոսքն ասում։

Հերն էլ իմացավ, շատ բարկացավ վրեն, համա էլ անց էր կա-ցե։ Մարդը շորս մարդ բռնեց, է՛ս յանը, է՛ն յանը ղրկեց, որ Ման գան, գտնեն, բերեն։

Խարարը տանը Օհաննեսիցը։

Երոր Օհաննեսը հասավ մի քաղաք, գնաց մի ղայֆաչու դուքան, տեղ մախսուղ լիզուն լալացրեց, մի գիր գրեց, թե. «Ղայֆա բե՛ր»։ Բերեց՝ խմեց։

Խմելուց նոր, մի գիր գրեց, ասեց. «Ես քեզ կլնեմ պրիկաշչիկ»։

Ասեց.— Դու լալ, ո՞նց պտի մուշտարու հետ խոսաս։

Ասեց.— Բա՛ն չկա, կխոսամ։

— Դե՛, դու գիտաս,— ասեց,— իլ[1]։

Երբոր էլավ պրիկաշչիկ, ընքան մուշտարի թափեց էդ ղայֆեն, որ մաջալ չէր ըլնում հաց ուտեին։

Էդ Օհաննեսին ման էկող տղեքանց մեկը՝ ման գալով՝ էկավ Օհաննեսին գտավ, ասեց.— Բարո՛վ, աղա՛։

Օհաննեսը չխոսաց ըսկի, ինչքան արեց, չխոսաց։

Ղայֆաչին էկավ ասեց.— Էդ տղեն լալ ա, չի խոսում։

— Ո՞նց թե լալ ա, տասնէրկու պրիկաշչիկ ունի, ինքը միլիոնչու փեսա։

Էկան ըտի մառջ էկան՝ հինգ օրվա միջին թե խոսացրեց, հինգ հարուր մանեթ ղայֆաչուցն առնի, թե չկարացավ՝ հինգ հարուր մանեթ ինքը տա։

Հինգ օր գնաց-էկավ, գնաց-էկավ, ինչքան խնդրվեց՝ չէլավ, չխոսաց. հինգ օրը թամմեց, հինգ հարուր մանեթ ղայֆաչին առավ, ինքը փոր ու փոշման եդ գնաց, ասեց.— Կէթամ հազար մանեթ կբերեմ, կխոսացնեմ։

Գնաց պատմեց Օհաննեսի անորը, ասեց.— Ես կէթամ, կբերեմ։ Անները վե կացավ էկավ Օհաննեսի կուշտը, տեհավ՝ շատ ուրախացավ, ուզեց խոսացնի, չխոսաց։

Ղայֆաչին էկավ, ասեց.— Էդ մարդը լալ ա, ի՞նչ եք ուզում էդ մարդից։

Ասեց.— Չէ՛, իմ փեսեն ա, լալ չի՛։

Ասեց.— Կուզես մառջ գանք, լալ ա։

Մառջ էկան հազար մանեթի վրա, հինգ օր ժամանակի։

Անները շատ աշխատեց, որ խոսացնի՝ չխոսաց։ Ղայֆաչին հինգ օրը թամմելուց եդո գնաց, թագավորին գանգատվեց. թագավորը հազար մանեթ առավ էդ մարդիցը, տվեց ղայֆաչուն։ Էդ մարդը եդ դառավ, էկավ տուն, կնկանն ոս աղջկանը պատմեց, թե.— Ընտիր էր, հա՛մ չկարացի խոսացնի, հա՛մ էլ չէկավ —։

Աղջիկը խնդրվեց հորը, թե.— Ես էթամ, բալքի բերեմ։

Հերը փող տվեց աղջկանը. աղջիկը վե կացավ, գնաց։ Գնաց հասավ մարդի մոտը, բարով տվեց՝ բարովը չառավ. շլինքը թեքեց, կանգնեց կողքին, ինչքան խոսաց՝ չխոսաց։

Ղայֆաչին ընդիան էլի էկավ, տեհավ էդ աղջկանը, ասեց.— Լա՛լ ա, լա՛լ, էս մարդը։

---

[1] Եղիր (Ս. Ք.)։

Աղջիկն ասեց.— Իմ նշանածն ա, ո՞նց թե լալ ա։

Ղայֆաչին ասեց.— Էս քանի ամիս ա իմ մուտին ա կենում, լա՛լ ա։

— Իմ նշանածն ա, ես գիտամ, որ լալ չի։

Ղայֆաչին ասեց.— Քեզ հինգ օր ժամանակ, թե խոսացրիր՝ քեզ հաղար մանեթ փող տամ, իմ գլուխն էլ թող կտրվի, թե չխոսացրիր՝ հաղար մանեթ դու տաս, քու գլուխն էլ կտրվի։

Դնացին Թագավորի մոտ, պայման արին։ Պայման արին, էկան. աղջիկը շատ աղաչեց ու լաց էլավ, տղեն չխոսաց։

Հինգ օրը թամմեց, ղայֆաչին գնաց Թագավորի կուշտն, ասեց.— Մեր ժամանակը ըսօր թամմել ա։

Թագավորը աղջկանը կանչեց, ասեց.— Էգուց գլուխդ պտի կըտրեմ, Ճարդ տենում ես, տե՛ս։

Աղջիկը փոր ու փոշման վե կացավ էկավ տղի մոտ, էլի լաց էլավ, ասեց.— Չէ՞ ես քու նշանածն եմ, անտեղի խի՞ ես իմ գլուխը կտրիլ տալի, ես մեղքը չի՞մ, ես քեզ ի՞նչ եմ արե։

Տղեն բան չխոսաց։ Մնաց էն էգսի օրը, Թագավորը կանչեց հա՛մ աղջկանը, համ ղայֆաչուն։ Բազմությունը քոմմա էկել էր Թամաշ աներու։ Տղեն մտածեց, որ աղջկանը անպատճառ պտի խեղաներն, գնաց նղելիցը, Թագավորին գլուխ տվեց, կաննեց. տեհավ տարաղաջը հաղրել են, պտի խեղտեն, մի գիր գրեց տվեց Թագավորին, թե.— Կես սհաթ ինձ ժամանակ տո՛ւ, եդո խեղտա։

Թագավորը ժամանակ տվեց. տղեն էկավ, ման էկավ, մի փուչ պոպոք առավ ու գնաց, ձեռը մեկնեց Թագավորին, ասեց.— Ա՛ռ, Թագավորն ապրած կենա, էս պոպոքը տո՛ւ էդ աղջկանը։

Երոր բիրադի տեհան, որ տղեն հանկարծ խոսաց, քոմմեքն էլ մնացին շիվարած։

Թագավորը ասում ա տղին.— Էդ խի՞ քանի ամիս ա չիր խոսում, համի խոսացիր։

Ասեց.— Քանի ամիս ա չի խոսում, չունքի էդ աղջիկն ինձ ասեց, թե. «Ես մի միլիոնչու աղջիկ, դու մի չուխչու տղա, ո՞նց էկանք իրար առանք»։ Ես էլ ինադ արի, էլ չխոսացի, գլուխս առա, էկա էս կողմը։ Համի էլ իրավունք չունի խոսալու, չունքի մի փուչ պոպոքով եմ առե սրա արինը։

Թագավորը հասավ դրա ճակատը պաչեց, ասեց.— Ղո՛չաղ տղա ես, քու թասըրին կեր չարիր։

Ղայֆաչին մոլորած կաննած էր, թե իրա գլուխը պտի կըտրիլ տա։

Թագավորը հարցրեց տղին.— Համի ղայֆաչու գլուխը կտրե՞մ։

Ասեց.— Չէ՛։

Ղայֆաչին տղիցը շնորհակալություն արեց, գնաց։

Թագավորը տղին պարգևներ տվեց, տղեն շնորհակալություն արեց, վե կալավ կնիկն ու գնաց։ Գնաց, հասավ իրա անոր տունը. թազադան օխտն օր, օխտը գշեր հարսանիք արին։

Դրանք հասան իրանց մուրազին, ով որ կարոտ ա՝ նա էլ հասնի իրա մուրազին։

Աստանից իրեք խնձոր ընկավ, մինն՝ աստղին, մինը՝ լուսնին, մինն էլ՝ անկաջ դնողին։



5. ՋԱԴՈՒ ՊԱՌԱՎ

Ըլնում ա, չի ըլնում մի աղքատ մարդ։ Էդ աղքատը շատ ոսկի ա ունենում հավաքած, իրա շորերի միջին կարած։

Օրերի մի օրը գալիս ա մի քաղաք, մի խուլվաթ տեղ ա ըլնում, թամաշ ա անում է՛ս յանը, է՛ն յանը, տենում ա մարդ չկա, ասում ա. «Յավա՛շ, հանեմ իմ փողերը համբրեմ, տենամ՝ ի՞նչքան աս։

Դու մի ասի, մի պառավ կնիկ աչքը սրա վրին ա. տենում ա, որ էս աղքատ մարդը հանեց ոսկիքը, համբրեց, էլի դրեց իրա տեղը, կարեց։

Պառավը դնաց էդ աղքատի յախեն բռնեց, ասեց.— Բա՛րև քեզ, ա՛յ մարդ, ըսքան վախտ ո՞րդի իր, դու իմ մարդն ես։

Աղքատն ասեց.— Ա՛յ կնիկ, դու հո սատանա չէիր, էկար իմ յախեն բռնեցիր, ինձ ո՞ւր ա կնիկ։

Պառավն ասեց.— Չէ՛, որ չէ՛, դու իմ մարդն ես, ո՛ր իմ մարդն ես։

Տվեցին, կռվեցին, վե կացան գնացին դատավորին գանգատ։

Դատավորն ասեց.— Ա՛յ հալիվոր, դա որ քեզ առնում ա, դու էլ ա՛ռ, վեր ընկի, էլ ի՞նչ ես ընենց ման գալի. դա կաշխատի, քեզ կպահի։

Պառավը էդ մարդին վե կալավ, տարավ տուն։

— Վա՛յ,— ասեց,— իմ աչքերը քոռանա, ա՛յ մարդ, էս ի՞նչ

կեղտոտ շորերի մեջ ես, հանա՛ մի լվանամ, լեղացնեմ քեզ, թամուզ հագի։

Հալիվորը հանեց շորերը, տվեց պառավին։ Պառավը շորերը տարավ լվաց, ոսկիքը հանեց, շորերը փռեց պարանի վրա, ինքը թողաց, փախավ։

Հալիվորը շատ թամաշ արեց, թե պառավը պտի գա, տեհավ որ պառավը չկա, ասեց.— Ջա՛նըմ, էս պառավը ո՞ւր գնաց, մի դուս գամ, տենամ։

Ըտեղ ոսկիքը միտն ընկավ, գնաց շորերը ման էկավ, տեհավ, որ ոսկի չկա, է՛ս յանը պառավ, է՛ն յանը պառավ, պառավ չկա՛։

Հալիվորը գլխին տվեց, ոտին տվեց, ասեց.— Իլլաջ չկա, պառավը իմ տունը քանդեց, տարավ իմ ոսկիքը։ Ցավաշ ընկնեմ դրա ննուցը, բալքի գտնեմ։

Գանք, պառավիցը սալըղ տանք։

Պառավը գնաց դուս էկավ մի քաղաք, ընկավ մանգալոն գնաց, մի հարուստ մարդի ակուշկի տակին կաննեց։ Տան տղամարդը տանը չէր, մենակ կնիկն էր, շատ սիրուն օղլուշաղ էր։

Էդ կնիկը թամաշ արեց ակուշկիցը, տեհավ, որ մի պառավ կաննել ա, ասեց.— Ա՛յ պառավ, խի՞ ես կաննել։

Ասեց.— Պա՛ռավը ղուրբան ըլնի քեզ, ի՞նչ անեմ, անտեր օղլուշաղ եմ։ Մուննաթ եմ անում՝ մի տեղ տա՛ս, սըթրվեմ, քու որդկերանց սադաղիցը։ Մի կտոր հաց կուտեմ քու տանը, քեզ էլ ծառայութիւն կանեմ առանց փողի, քանի սաղ ու կենդանի եմ։

Էդ կնիկը դրան տարավ նեքսև, հաց տվեց՝ կերավ, տեղ տվեց՝ քնեց։ Մի վախտ մնաց, օրվա մեկ օրը էդ կնիկը պառավին ղրկեց բազար բանի։

Պառավը գնաց բազար, բան էր առնում, ընդիան մի մենծ բազըրկյան կանչեց, ասեց.— Ա՛յ պառավ, իմ աչքը էն կնկա վրին ա, ի՛նչքան փող որ ուզում ես՝ կտամ, թաքիլան մի գշեր, մի հնար անես, գամ նրա մոտը։

Պառավն ասեց.— Իրեք հարուր մանեթ տո՛ւ, կես գշերին կգաս։

Բազրկյանը փողերը տվեց. պառավն առավ, գնաց տուն։ Մնաց գշերը քնեցին, կես գշերին էդ բազրկյանը էկավ, դուռը ծեծեց, պառավը վե կացավ, դուռը բաց արեց։

Կնիկն ասեց.— Պա՛ռավ, էդ ի՞նչ մարդ ա։

Ասեց.— Ո՛սկի, մեր երկրացի մեր բարեկամներից ա, էս գշեր մնա, առավոտը վե կենա է՛ֆա։

Ասեց.— Չի՛նի, դրսի մարդ խի՞ ես նեքսև բերում։

Պառավը շատ մուննաթ արեց, թե իրա բարեկամն ա, գա, իրա օթախումը քնի։

Կնիկն ասեց.— Որ ըտենց ա, թո՛ղ գա, քու օթախումը քնի։

Պառավը էդ մարդին տարավ իրա օթախումը քնացրեց։ Գշերվա մի վախտը էդ մարդն ասեց պառավին.— Բա ի՞նչ ես անում։

Ասեց.— Ի՞նչ պտի անեմ, ես ասել եմ իրան, շորերդ հանա՛, դնա մոտը։

Էդ բաղրկյանը հանեց շորերը, գնաց էդ կնկա մոտը։ Ջանը՛մսան պառավ, վե կալավ էդ մարդի շորերը, սհաթը, քամարը, ոննամաննները, դուրս շինեց, փախավ։

Էդ բաղրկյանը մտավ էդ կնկա կուշտը, կնիկը վախեցավ, ասեց.— Խի՞ ես էկե իմ օթախը։

Ասեց.— Դու էս ասե, որ էկել եմ։

— Ես ո՞ւմ եմ ասե։

— Պառավին։ Պառավը ինձանից իրենք հարուր մանեթ առավ, որ քու կուշտը բերի։

— Վա՛յ, անիծած պառավ,— ասեց,— էս ի՞նչ օյին էր իմ գլուխը հանեցիր,— ասեց, վազեց պառավի օթախը, տեհավ, որ ո՛նչ պառավ կա, ո՛նչ բաղրկյանի շորերը։

Ղայմաղամն ընկավ մեջները, հարևանները էկան հավարի, բաղրկյանը ճարը կտրած շապիկ-ոտաշորով թողաց փախավ։

Լիսը բացվեց, էդ կնիկը ջոռ ձեն տալ տվեց, թե՝ ըսենց մի պառավ էս օյինը հանեց իմ գլուխը՝ բռնե՛ք։ Ձեն տվեցին. դու մի ասի՝ էդ ոսկու տեր հալիվորն էլ ըտեղ ա էկել հասել։

Էդ հալիվորն էլ գնաց էդ կնկա մոտը, ասեց.— Վա՛յ խանում, գլխիդ, արևիդ մեռնեմ, էդ կնիկն իմ ոսկիքն էլ առել ա տարել, ընկել եմ ննջուցը, ման եմ գալի։

Պառավին բռնեցին, բաղրկյանն էլ էկավ, վե կալան գնացին թագավորի կուշտը դանդատ։ Գնացին հասան թագավորի ամարաթները, մտան հայտեր, թագավորը տեհավ, որ հրե չորս հոգի էկան, մեկը ջահել կնիկ, շատ սիրուն, մեկը պառավ, էրկուսն էլ տղամարդիկ։

Թագավորի աչքն ընկավ էդ կնկանը։ Պառավը կամաց-կա-

մանց մոտացավ թագավորին, ասեց.— Թագա՛վոր, խի՞ ես ըտքան թամաշ անում մեզ։

Ասեց.— Բա ինչ անեմ, քու տունը քանդվի, ըտքան էլ սիրուն կնիկ կըլնի՞։

Ասեց.— Թագա՛վոր, էդ իմ աղջիկն ա, ի՞նչ ես տալի, որ տամ քեզ։

Ասեց.— Ինչ որ քու սիրտը ուզում ա՝ կտամ։

Ասեց.— Իրեք հարուր մանեթ փող տո՛ւ։

Հանեց թագավորը իրեք հարուր մանեթ տվեց պառավին. պառավն ասեց.— Թա՛գավոր, դե մի ճամփա շանց տուր, որ աղջիկս ինձ չտենա, չլաց ըլնի քամակիցս։

Թագավորն ասեց.— Էս ակուշկովը դուս արի, փախի՛, թող չտենա քեզ։

Պառավը ակուշկովը դուս էկավ, փախավ։ Թագավորը կանչեց էդ կնկանը, ասեց.— Ես քեզ քու մորիցը առա՛, դու իմն ես։

Կնիկն ասեց.— Ի՞նչ մեր։ Նա գիտա՞ս ի՞նչ օյիններ ա հանե մեր գլուխը, մենք էկել ենք նրանից գանգատ։

Նոր թագավորը դե՛ս, դե՛ն.— Բռնե՛ք էդ պառավին, բռնե՛ք։— Բռնեցին, բերեցին։

Բերեցին. թագավորը վե քցեց պառավին, ընքան տվեց, որ մեռավ. փաթաթել տվեց մի քեչի մեջ, կանչեց իրա ղաթըրչըքանցը, ասեց.— Տարե՛ք, սրան քցեք ծովը։

Ղաթըրչիքը դրեցին ղաթրի վրեն՝ տարան, քիչ էր մնում, որ հասնեին ծովի ղրաղը, պառավի ուշն էկավ վրա, վե կացավ, նըստեց։ Ղաթըրչիքը զարմացան։

Պառավն ասեց.— Գնացե՛ք, թագավորին աչքալիսնք տարեք, թե ձեր մերը սաղացավ, էկեք, տարեք. ես վասյաթ ի արել, որ մեռնելուս ինձ ծովը քցի։

Ղաթըրչիքը վե կացան, գնացին թագավորի մոտը. ասեցին.— Թագա՛վոր, աչքդ լիս ըլնի, մերդ սաղացել ա, ասում ա թող գան, ինձ տանեն։

Թագավորն ասեց.— Վա՛յ, ձեր տունը չքանդվի, գնացեք, տեհնք՝ ի՛նչ էլավ, բռնեք բերե՛ք։

Գնացին տեհան՝ ո՛նչ պառավ կա, ո՛նչ էլ ղաթիր։ Պառավը ղաթըրները լցրել էր գյամին, ծովն ընց էր կացել էն էրեսը։ Ղաթըրչիքը թողացին, փոր ու փոշման եղ դառան։

Թագավորն ասեց.— Ի՞նչ էլավ պատահե՞ր։

Ասեղին.— Թագա՛վորը սաղ ըլնի, մինչանք մենք գնացինք, դաթըրները լցրել էր գլամին, Թողել փախե։

Թագավորն ասեց էդ կնկանն ու մարդկանցը.— Իմ գլուխն էլ էս օլինը հանեց, Թողաց փախավ՝ ի՞նչ կարանք անի։

Թողացին փոր ու փոշման՝ աղքատը գնաց իրա բանին, բազրկյանը Թողաց գնաց իրա բանին, կնիկն էլ գնաց իրա բանին։

6· ԿԵՂՏԱԿԵՐ ՄԱՐԴ

Կըլնի, չիլնի մի[1] մարդ։ Էս մարդը ընե՞նց մի կեղտակեր, ղայիմ մարդ ա ըլնում, ընե՞նց մի հախվերմազ, որ էլ չեմ կարա ասի. դրուստ որ կոպեկի համար ֆոգի էր տալի։ Մի ուրիշ մարդ գալիս ա, սրա հեննա ընկեր ա դառնում, մի քանի տարի էրկսով առուտուր են անում։ Մի քանի տարի որ անց ա կենում, էս մարդը միտք ա անում՝ սրանից բաժանվի, իրա համար ջոկ առուտուր անի։

Գալիս ա էդ հախվերմազ մարդին ասում.— Ա՛ղպեր, ա՛րի մեր ունեցածը փայ աննենք, բոլ ա՝ ինչքամ ընկեր էլանք։

— Լա՛վ,— ասում ա էդ ձեռիցը ղայիմ մարդը,— ա՛րի փայ աննենք։

Կբերեն՝ ի՛նչ ունեին, չունեին, էսքամ տարի ի՛նչ աշխատել ին, քոմմա փայ կաննեն. էդ հախվերմազը մի աբասի կմնա ընկորը պարտ։ Ըսենց անց կկենա մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ. հա՛ ընկերը կուզի, սա չի տա՝ ըսօր, էգուց կքցի, որ աբասին ուտի, չտա։

Էս ընկերը՝ որ կտեննա ճար, իլլաջ չիլնում, չի կարում իրա պարտքն առնի, կասի. «Հմի էլ էֆամ տուն, բալի իրա օղլուշաղիցը ամանչի, տաք։

---

[1] Գրաման ձեռագրում այս բառը բացակայում է, հավանաբար վրիպված է (Ս. Կ.)։

Օրեն մի օրը վե կկենա, կէթա էդ Կեղտակեր մարդի տունը։ Դուռը կծեծի, կնիկը դուս կգա։

— Մարդդ տա՞նն ա,— կհարցնի։

— Հա՛, տանն ա,— կասի կնիկը։

— Մի ա՛սա դուս գա, բան եմ ասում։

Կնիկը կէթա, մարդին կասի, թե.—Ընկերդ քեզ կանչում ա։

Էդ հախվերմազը՝ էս որ կիմանա, ալբիալը կֆահմի, թե բանն ընչումն ա, կասի. «Հալբաթ էկել ա իրա աբասին առնելուց։ Սննա կնկանը կասի.—Դնա՛, ասա՝ «Մարդս մե՞ռել ա»։

Կնիկը կթողա, կէթա քուչեն։— Ա՛յ աղպեր,— կասի,— բա չես ասի՝ մարդս միղաֆիլ վեր ա ընկե, մեռե, չեմ գիտա՝ ի՛նչ անեմ։

— Բաս որ ըտենց ա,— կասի ընկերը,— դու ջուր տաքացրա, ես էլ էթամ տերտեր բերեմ, լեղացնենք, տաննենք ժամ։ Օղո՞րմի իրան, մի աբասիս կերավ։— Կասի ու կէթա տերտեր կանչելու։

Դրա ընկերը էթում ա, տերտեր ա բերում։ Ընկերը գլխի էր ընկե, թե բանը ընչումն ա. բերում ա լավ տաքացրած ջրով մեռելին լեղացնում ա, եննա կտավ ա՝ բերում, որ պատանի։ Պատանելու վախտը մի ասեղ պատանին էր տալի, տասը՝ մեռլի ջանին։ Ըսենց էդ սուտ մեռելը էս չարչարանքին էլ դիմացավ, բալքի մի աբասին չտա։ Պատանում են պրծնում, դնում են ղուբուրի մեջը, տանում ժամ։ Որ ժամավորի ոտքը խաղաղվում ա, ընկերը ինքն իրան ասում ա. «Ես պտի իմ մեռած ընկորը բուսումն պահեմ, տենամ՝ վերջը ի՛նչ ա ըլնում»։ Ուսուլով մննում ա ժամի միջին մի տալդա տեղ, տափ ա կենում։

Հենց էդ գշերը թագավորի խազինեն գողերը կտրել ին բերե ժամ, որ փայ անեն։ Էդ գողացած բաների միջին էլ մի լավ, թանկագին թուր ա ըլնում։ Էդ թրի վրեն գողերը կռիվ են անում. մինն ասում ա, թե. «Լավ թուր ա»։ «Մեկելն ասում ա. «Ղոռադա թուր ա»։ Ըսենց որ շատ կռվում են, գողերի մինը ընդիան ասում ա. «Ա՛ղպեր, խի՞ եք կռվում, էկեք էս մեռելի վրեն փորձենք. թե մի տալոն էս մեռլի գլուխը կտրեց, էնա գլուխ թուր ա, թե չէ հո՝ զաթի ղոռադա ա ու ղոռադա»։

Էդ խոսքին քոմմա էլ հավանում են։ Ընկերներից մինը թուրը վերա ա ունում, գալի մեռլի կուշտը. հենց էն ա ձեռը բանձրացնում ա, որ թուրը վրա բերի մեռլի շլնքին, էն սհաթը մեռելը ղուբուրի միջիցը վեր ա կենում, թռնում, էն դիհը կաննում։ Գողերը էս որ

տենում են, քոմմա թողում են, փախնում։ Հենց էդ վախտը մեռլի ընկերը իրա տափ կացած տեղիցը դուս ա գալի։

— Ա՛րի, ա՛ղպեր ջան, էլի ես ու դու ընկեր ենք. զաթի ես էլ ղաստի ի մտե ըստե, որ էս գողերին վախացնենք ու էս խազինեն իրար հեննա փայ աննենք։

Սուտ մեռելն էլ կավատա ընկոր խոսքին։ Կբերեն, ինչ կա չկա, քոմմա փայ կաննեն, կպրծնեն։ Պարտքատերը էլի կկպնի մեռլի յախեն, թե.— Մի աբասիս տո՛ւ։

Հենց էդ վախտը գողերը մարդ կղրկեն՝ էթա տենա՝ էն մեռելը ի՞նչ էլավ։ Էդ գողը կէթա գլուխը կկոխի ժամի փանջարեն, որ տենա՝ նեքսեր էն մեռելը ի՛նչ ա անում։ Հենց կոխելու բաշտան էն սուտ մեռելը ձեռքը կգցի էդ գողի քթակը վեր կունի, կտա ընկորը։

— Հը՛,— կասի,— էս էլ քու մի աբասու տեղը։

Էդ գողը էս որ կտենա, վախլությունիցը օխտը գազ ծլունգ կըլնի, փանջարիցը կթռնի, կփախնի, կէթա ընկորտանցը նաղլ կանի։

— Բա՛, չե՞ք ասի,— կասի,— մեռելները իրար միջի մեր գողացած խազինեն փայ ին արե, մնին մի աբասի պակսել էր, իմ քթակը վե կալան աբասու տեղակ։



7· ՀՈՒՆԱՐՈՎ ԳՈՂԵՐ

Ավալ ժամանակին էլել ա, չի էլե մի թագավոր։ Էս թագավորի երկրումը ընե՞նց գողություններ ին ըլնում, որ ինչքան ման ին գալի, գողերին չին կարում գտնի։

Էս թագավորը միտք ա անում, թե ո՞նց անի, ի՞նչ իլլաջ անի, որ գողերին գտնի. ա՛խր, ըսենց բան չիլնի՝ օր չիլնի, որ իրա խալխը չգան գանգատ։

Վերջը որ շատ միտք ա անում, մի օր էլ գեյմը փոխըմ ա, ասում ա. «Էլի ե՛ս ման գամ, բալքի իմ երկրի գողերին գտնեմ»։

Ըտենց գեյմը փոխած ընկնում ա իրա քաղաքը՝ ման գալի։ Տենըմ ա, հրե իրեք մարդ իրար հեննա քչփչում են. մատը կծում ա, ասում ա. «Կա, չկա սրանցում մի բան կա»։

Դուզ էթում ա դրանց յախիցը պինդ բռնում ա, թե.—Բար՛աջո՛ղում, ա՛յ աղպրտինք, դուք ո՞վ եք։

Նրանք թագավորի բարովն առնում են ու ուզում են թոլը տան դրան՝ գլխներիցը ռադ աննեն։

Համա թագավորը ղայիմ կայնըմ ա դրանց կշտին ու պոկ չի գալի դրանցից, ասում ա.— Աղպե՛ր, ես էլ ղարիբ մարդ եմ, դուք ի՞նչ փեշակի տեր եք՝ ինձ էլ ձեզ հեննա ընկեր արեք. իմ ձեռիցն էլ ինչ գա, ձեզ կօգտեմ։

Դրանք ռազի են ըլնըմ, ասում են, թե.— Գողությունով ենք գլուխ պահում. թե դու ղաբուլ ես մեզ հեննա գողություն անիլ՝ արի՛։

Թագավորն ասում ա.—Ի՛նչ անենք, ես ղաբուլ եմ. դե՛, ասեք տենամ՝ ձեր հունարը ի՞նչ ա, որ կարըմ եք գողութին անի։

Մինը՝ ասում ա.— Ես ըսե՛նց հունարի տեր եմ, որ ինչքան ղայիմ փակած դուռ ըլնի՝ ձեռ տամ թե չէ, էն սհաթը կբացվի։

Էն մինը ասում ա.— Իմ հունարն էլ էն ա, որ գշերը ընչքան էլ մութը ըլնի, որ մարդի տենամ, ցերեկը էն սհաթը կճանանչեմ։

Էն մինն էլ ասում ա.— Ես շան լեզուն հասկանում եմ. հենց հաչում ա թե չէ, իմանում եմ՝ ինչ ա ասում։

Թագավորն էլ ասում ա.— Իմ հունարն էլ էն ա, որ մի բեղս օլորեմ՝ ինչհան նեղ տեղը մարդ ըլնի կազատվի [1]։

Գողերն ասում են.— Աղպեր քոս հունարն էլ մեծ հունար ա. որ ըտենց ա, շա՛տ լավ, մեզ հեննա հալալ ընկեր ես։

Քոմմեքը իրար հեննա միտք են անըմ, թե. «Ո՞ւմ տունը էթանք կտրենք»։ Ընդհան թագավորը ասում ա.— Էկեք ըսօր էթանք թագավորի ամարաթը կտրենք, հազիր չորս հոգով ենք։

Գողերը քոմմա ղաբուլ են ըլնում սրա ասածին։

Հենց մենում ա թե չէ՝ էթում են թագավորի ամարաթը. նի են մննում թե չէ՝ շունը հաչում ա։

Գողերի մինը, որը որ շան լեզու էր հասկանըմ, ասում ա.— Տղե՛րք, էկեք նե էթանք. շունը ասում ա. «Ո՞ւր եք գալի, տերը ձեզ հետ ա»։

Թագավորը էն դհիլը վրա ա բերում.— Տնա՞շեն, ընենց բան ասեցիր դու էլ, որ էփած հավի ծիծաղը կգա, մեզ հեննա ուր ա տեր։

Քոմմեքն էլ նի կմննեն նեքսև. լավ, թամուղ, ինչ կա, չկա կբերեն, փայ կանեն թագավորի խազինեն. իրան էլ ընչքան հասնելու էր՝ փայը վերնում ա, գալի էլի ամարաթը։

Էգսի օրը խաբար ա դուս գալի, որ գշերը թագավորի ամարաթը սրբել են տարե։

Թագավորը մարդ ա ղրկըմ գողերին բերել ա տալի կուշտը, հարցնըմ ա.— Դո՛ւք եք իմ ամարաթը կտրե։

Էն գողը, որ մարդի ճանանչում էր, ասում ա.— Թագա՛վորն ապրած կենա, քեզ հեննա ենք կտրե քու ամարաթը։

Թագավորը էս որ լսում ա, շատ ա հերսոտում, թե.— Ո՞նց եք համարձակվում, ինձ էլ ձեզ հեննա գող եք շինում։

---

[1] Գրաոման ձեռագրում այս արտահայտության փոխարեն եղել է. «աշխարեք կխաեդվի» բառերը, որոնք գրի առնողը չնշել է (Ս. Կ.)։

Համա էն գողը էլի ասում ա.— Դո՛ւ գիտաս. ի՛նչ կուզես արա, համա դու մեզ հետ իր։

Թագավորը, որ տենում ա սրանց հունարը, էլ ափսոսը գալիս ա սրանց վնասի. լավ-լավ փեշքաշներ ա տալի, բոլ փող, թամբահ ա անում, որ էլ գողությունով չապրեն, իրենց համար մի գործ գտնեն։

Էդ գողերն էլ շնորհակալություն են անում, խոսք են տալի, որ էլ ըսկի գողություն չանեն։ Գլուխ են տալի, էթում։ Էթում են իրենց երկիրը, իրենց համար մի գործ գտնում, հալալ աշխատանքով ապրում են, համ թագավորին օրհնում են, որ իրանց էն չար ճամփիցը ազատեց։

Ասսանից իրեք խնձոր վեր ընկավ. մեկը՝ ասողին, մինը՝ ասիլ տվողին, մինն էլ՝ էն գողերին ու անկաջ դնողին։

ՀԱՎԵԼՎԱԾ II

ՆՄՈՒՇ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻ ԽՈՍՎԱԾՔԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅԱՄԲ

ՀՕՐ ՏՎԱԾ ԻՐԵՆՔ ԽՐԱՏԸ

Ա՛վալ ժամանա՛կին ըլնո՛ւմ ա, չի՛լնում մի մարթ, ունէ՛նում ա մի մինուճար տղա։ Էդ մարթը, չունքի շա՛տ էր ծէրացէ, դէ՛ն ընդէ, հա՛յ-հայը գնացէ՝ վա՛յ-վայը մնացէ, տղին ուղից, քանի սաղ ու կենթա՛նի ա, մի փէշա՛կի տա, բա՛լի իրա՛նից յէդը մի կտօր հացի տէ՛ր ըլնի, գլո՛ւխ պահի։ Համա խեղչ հէրը ի՛նչ բանի դրէց, ի՛նչ փէշակի տվէց՝ չէլավ, մի տէղ էլա չբնակալէց, թօ՛ղաց, սալախա՛նի արած ընգավ քո՛ւչէքը։

— Ջրհա՛նդամը գյօռը,— ասէց հէրը,— ա՛րի դուքան դնեմ տէ՛նամ, բալի ընդէ սթրո՛ւմ ա։— Բէրէց տղին դո՛ւքան դրէց։

Անց ա կէնում մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, վէ՛ց ամիս, մախլասի՝ մի՛ տարի, էս մարթն ա, մի ղաֆիլ հիվանդանո՛ւմ ա, տեղօվ-բարցօվ թէչ ընգնում. կանչում ա տղին։

— Ա՛յ վօրթի,— ասում ա,— տէ՛նում էս՝ հրէս մէ՛ռնում էմ. ինձա՛նից յէդը ի՛նչ պտի անէս. հլա ջա՛հել էս, աշխարի խէրն ու շառը չէս գիտաս։ Վօ՛րթի,— ասում ա,— քէզ ուղում էմ իրէք խրատ տամ, կլսէ՛ս՝ դո՛ւ գիտաս, չէ՛ս լսի՝ է՛լի դու գիտաս, մէղքն ու վարցքը քո՛ւ շլինքը։

— Ա՛յ հէր,— ասում է տղէն,— ա՛սա, կլսէմ, խի՛ չէմ լսի։

— Ա՛յ վօրթի,— ասում ա,— վօ՛րդէ ըլնէս, ի՛նչ բանի էլ դուշ-

լուղ անէս, հլնց վօր ժամի ձէնը լսէցիր, ձէռիդ ի՛նչ վռազ բան ըլ-նի՝ թօ՛ղ, գնա՛ ժամ, ասսուն ա՛ղօթք արա։ Էս մի՛ն։ Մա՛րթ ա, վօ՛րթի, կպատա՛հի ճամփա կէթաս, վօր վարար ջուր ռաստ գա՝ առանց վալադ մարթի չմննէս անց կէնաս. մի քանի օր էլ յէ՛դ ինկ, բա՛ն չկա, ընչանք սրա՛ն, նրա՛ն հարցնէս, հարց ու փօրց անէս, մարթ քթնէս, գա քէզ անփօրձանք անցկացնի։ Ըս էլ է՛րկու։ Վրա ի՛րէքն էլ, վօ՛րթի, ինձանից քէզ ամանաթ, քշէրը ըսկի ճամփա չէ-թաս. հէնց վօ՛րդէ մթնէց, վէ՛ր արի, կա՛ց, ընչանք լիսանա. մի՛ ասի, թէ՝ ֆլա՛ն դէղը մօտիկ ա, էթամ հասնէմ, չէ՛։

Հրէ՛ս, վօ՛րթի, է՛ս ա իմ իրէք խրատը. սրանից դէնը դո՛ւ գի-տաս, կլսէս՝ դո՛ւ գիտաս, չէս լսի՝ է՛լի դու գիտաս, մէղքն ու վարցքը քու շլինքը։— Ա՛սում ա, ֆոքին տալի։

Տղէն տանում ա հօրը առօք-փառօք, վօնց վօր կարքն ա՝ թա՛-զում, թօղում գալի տուն։

Ա՛նց ա կէնում ըսէնց մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շա-փաթ, մի՛ ամիս, է՛րկու ամիս, մախլասի, իրէք ամիս՝ օրէն մի օրը էս տղի ընկէ՛րտինքը, վօր իրա նման առուտուրական ին, ճամփի թաղա՛րէք էն տէնում, ասում էն. «էթանք Թիֆլիս ապրա՛նքի, դու-քանի համար ճօթ-մօթ առնէնք, բէրէնք»։ Էդ տղէն էս վօր իմա՛նում ա, մի՛տք ա անում՝ ինքն էլ հէտները վէ կէնա էթա, համ ա՛շխարք տէնա, համ էլ թազա ա՛պրանք բէրի, լքցնի դուքանը, ծախի։

Գալիս ա ընկօրտանցն ասում.— Ձէ՛ս էլ էմ ուզում գա ապ-րանքի, չէ՞ք տանի։

— Գա՛լիս էս՝ արի,— ասում էն,— խի՞ չէնք տանի։

— Ձէ՞մ էք ճամփա ընգնում,— հարցնում ա։

— Ֆլա՛ն օրը,— ասում էն։

Լա՛վ։ Էս տղէն ա՝ ճամփի թաղա՛րէք ա տէնում, մի սաղ ամսվա պա՛շար վէր ունում, քօշ ու բարխա՛նա անում, ընկօրտանց հէննա վէ՛ կէնում, ընգնում ճամփա՝ դպա Թիֆլիս։

Գա՛լիս էն գալի, շատն ու քիչն ասուօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի, մի ամիս՝ հասնում էն Թիֆլիս։ Ըստէ ամէն մարթ իրա առուտուրն ա՛նում ա, ապրծնո՛ւմ, յէննա քօմմըքօվ էլ վէր էն կէնում, բէռնէրը կապօ՛տում, քօշ ու բարխա՛նա անում, քրէհդա՛րնէր բռնում, յէդ դառնում՝ գալի իրանց յէրկիրը։ Քօմմքից յէդը մնում ա էդ տղէն. դա էլ վօր իրա առուտուրն ա՛նում ա, ապրծնո՛ւմ, ինչ վօր դուքանի

համար պէտքն էր՝ ա՛ռնում, է՛թում ա քրէհդարնէր կանչում. գալիս էն նրա ապրանքը բարցում ձիանիքը, հէնց վօր լիսը բա՛ցվում ա՝ ընդնում էն ճամփա։

Է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ դիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, ճամփին մի վարար ջրի ռաստ էկան, էնքա՛մ վարար, էնքա՛մ վարար՝ հէնց իմանաս հէտը ա՛րին էր բէրում։ Խէղճէրը մնացէլ ին գլխնէրի վրէն շիվարած, չին իմանում ի՛նչ անէն, ի՛նչ չանէն, վո՛նց ջուրն անց կէնան։ Քրէհդարնէրն ուզում. ին տա, անց կէնա էն ղրաղը, տղէն չթողաց, հօր վասիաթը միտը բէրէց, թէ. «Վարար ջուր ռաստ գալիս, առանց վալադ մարթի չանցկէնաս»։

— Չէ՛, ա՛խպէր,— ասէց տղէն,— ըստէ բէռնէրը վէ դնէնք, էթանք ընտէրանք հարց ու փո՛րց անէնք, բալի մի վալադ մա՛րթ քթնէնք, դա մէզ անփօրցանք գէտն անցկացնի։

Քրէհդարնէրից մինը էն դհիցը ինքն իրան ղուդուղացավ.— Ի՛նչ կա,— ասէց,— տնա՛շէննէր, վօր էդքամ վախէնում էք. էս թավուր պուճուր ջրիցն էլ մա՛րթ կվախի. ո՞ւզում էք, չէ՛ս ջուրը մընանէմ, չէննա՝ դուք։

Ասէց ու ղուդուղավարի ձին քշէց. ջուրը մննիլն ու գլում ընկիլը մի՛ն էլավ։

— Հարա՛յ, մադա՛թ, հէխտվէցի, հա՛սէք,— ձէն տվէց մէր ղուդուղ քրէհդարը։ Համա էլ ո՛ւր, բանը բանից անց էր կացէ. ընկէրտինքը ինչ ա՛րին, չա՛րին, չկարացին խէղճի հավարին հասնի, իրան էլ, իրան ձիուն էլ ջուրը վէ՛ կալավ, տարավ։ Դէ հմի ա՛րի տէս էն մէկէլնէրը վո՞նց են ուրախացէ, վո՞նց էն ուրախացէ, վօր տղի խօսքին ա՛նկաջ արին, ջուրը չմտան, թեև չէ քօմմըքօվ էլ պտի հէխտվէին, էթային ֆօղէց-ֆօքի կօրչէին։ Նօր էդ տղէն ձին նի՛լնում ա, քշում էթում մօտիկ գէղարէնքը, սրա՛ն, նրա՛ն հարց ու փօրց անում, մի վալադ մա՛րթ քթնում, բէ՛րում, լավ-լավ փէշքաշնէր, բօլ փո՛ղ խոստանում, վօր իրանց գէտն անցկացնի, հանի էն ղրաղը։ Էդ վալադ մարթն ա՝ դե ջրի սաղրիկ տէղարէնքը ընէ՛նց գիտար, վօնց վօր իրա հինգ մատը, ձին նի՛ ա ըլնում, ընգնում աղաք, սաղ-սալամաթ ղրանց ջուրն ա՛նցկացնում, էլ յէդ թողում, էթում իրա բանին։

Թիֆլիսից վօր նո՛ր ին դուս էկէ, էդ տղին ճամփին մի բէզըրգյան ռաստ էկավ։ Էս բէզրգյանը ընդէ իրա խրիդն արէ, է՛թում էր

Գյանջա. էդ տղի խելքն ու քյամալը վոր տէհավ, շա՛տ հավանէց։

— Տղա՛,— հարցրէց բէզրգյանը,— վո՞րդիանցի էս։

— Ցլա՛ն գէղիցն էմ,— ասէց տղէն։

— Ինձ հէննա ընկէր չէ՞ս ըլնի։

— Խի՞ չէմ ըլնի,— ասէց,— համա հէրս մէռնէլիս վասիաթ ա արէ, չէմ գիտա՝ դու էլ ղաբո՞ւլ կըլնէս, թե չէ։

— Ի՞նչ վասիաթ ա, ա՛սա տէնամ. թէ ինձ խէր ա՝ ձէռ կտա, ի՛նչ պտի ասէմ, վոր ղաբուլ չըլնէմ։

— Վո՛րդէ ըլնէմ,— ասէց տղէն,— ի՛նչքամ վռազ բան էլ ըլնի ձէռիս, հէնց վոր ժամերը տվին, ալբիալը պտի վէ քցէմ, թօղամ էթամ ժամ, աստուն աղօթք անէմ։ Էս մի՛ն։ Ճամփա էթալիս,— ասէց,— վո՛րդէ մթնի, ընդէ պտի վէ՛ գամ, կէ՛նամ ընչանք լիսանա։ Էս է՛րկու։ Վրա ի՛րէքն էլ, վոր,— ասէց,— վարար ջուր ռաստ գալիս՝ առանց վալադ մարթի չանցկէնամ, վօնց վոր դու քու աչքովը տէհար։

— Տնա՛շէն,— ասէց բէզրգյանը,— բա՛ն գիտաս՝ բա՛ն ասա, թէ չէ էդ թավուր խէլօք խրատներին օվ չի ղաբուլ ըլնի։

— Լա՛վ, վոր ղա՛բուլ է՛ս, բաս յէս էլ էմ ղաբուլ։ Ա՛րի ընկէրանանք։

Ընկէրա՛նում էն։ Ըստէ բէռնէրը բա՛ց էն անում, իրար ապրանք համբրո՛ւմ, հա՛շիվ անում, տղի ապրանքը բէզրգյանի ապրանքից քի՛չ ա դուս գալի. ընդուր համար էլ տղէն դառնում ա բէզրգյանի չարէքդարը, սաքի թե՝ ի՛նչ վոր աշխատէն, չօրս փայից մինը նրա՛նը պտի ըլնի։

— Տղա՛,— աստում ա բէզրգյանը,— բաս վոր ըտէ՛նց ա, դու վէ՛, աղաք-աղաք գնա՛ Գյանջա, թադա՛րէք տէս, ընչանք յէս գամ։ Հրէս քէզ նշանաբան կտամ,— աստում ա,— կտանէս, կտաս կնկանս, կնիկս դուքանի բալանիքը կտա, կէթաս բա՛ց կանէս, ա՛վլիլ կտաս, կթամզացնէ՛ս, վոր յէս գամ թէ չէ՝ հա՛զիր ըլնի, բէրէնք ապրանքը դարսօտէնք, մէր բանին կէնանք։

— Լա՛վ,— աստում ա տղէն,— կէ՛թամ։

Բէզրգյանը նշանաբանը տալիս ա տղի՛ն. տղէն վէ՛ր ա ունում, դնում ծօ՛ցը, նիլնում ձին՝ յա՛լլա դպա Գյանջա։

Է՛թում ա, է՛թում ա, է՛թում ա, շատն ու քիչն աստօծ գիտա՝ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, քշէր, ցէրէկ էթում ա, հասնում ա Գյանջա։ Էթում ա սրա՛ն, նրա՛ն հարց ու փորց անում։

1646—37

— Ձլա՛ն բէզրգյանի տունը վո՞րն ա,— ասում ա։

— Հրէս է՛ս ա,— ասում էն։

Տղէն էթում ա դուռը ծէծում, բէզրգյանի կնիկը դուս ա գալի, տէնում՝ մի ջա՜հել, սի՜րուն, բո՜յով-բուսա՜թով տղա հրէն ընդէ կանանած։ Կնիկը տղին տէնալու բաշտան՝ խէլքամաղ ա ըլնում, մնում։

— Ո՞ւմ էս ուզում,— հարցնում ա կնիկը։

— Ձլա՛ն բէզրգյանի տունն է՞ս ա,— հարցնում ա։

— Հա՛, է՛ս ա,— ասում ա կնիկը։— Խի՞ վօր։

Տղէն նշանաբանը ծօցիցը հա՛նում ա, տալի կնկանը ու մին-մին ասում, թէ ինքն օ՛վ ա, յա ի՛նչ բանի համար ա էկէ։ Կնիկը վօր իմանում ա՝ բանը ընչումն ա, տղին ուրախ-ուրախ կա՛նչում ա, տանում տուն։

— Ա՛յ դու բարո՞վ, հա՜զար բարին էս էկէ,— ասում ա կնիկը.— ամէն ճամփէդ սա՛լամաթ. վո՞նց էս, լա՞վ էս։ Ախար յէս մէռա քու ճամփէն պահէլօն. խի՞ էսքամ յէդացար։

Տղէն մնում ա սառած՝ մտիկ անէլօն կնկա էրէսին։

«Ախպէր,— ասում ա ինքն իրան,— յէ՛ս օվ, էս կնի՛կն օվ, վօր էսքամ հարց ու փօրց ա անում, էսքամ ուզում, խնդում, ծիծաղում, ուրախանում, աշխարօվ մին ըլնում»։

Ղօ՛րթ ա, կնկա միտքը ծուռն էր, համա խէղճ տղէն մի՛ միտ, սիրտը դուզ, նրան ընէ՛նց էր մտիկ տալի, վօնց վօր իրա հալալ բվօրը։

Կնիկը տէհավ, վօր չէ՛, սա իրա ասածը չի, էլ ձէն-ծպտօն չհանէց, հէննէն ինադ ընկավ. «Թօ՛ղ մի մարթս գա,— ասէց ինքն իրան,— էն վախտը յէ՛ս դիտամ՝ դո՛ւ»։ Գնաց դուքանի բալանիքը բէրէց, տվէց տղին. տղէն տարավ դուքանը բա՛ց արէց, պուճախէ-պուճախ լավ, սիրուն ջրջրհա՛նէց, սրփո՛տէց, հա՛զիր արէց։

Անցկացավ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, բէզրգյանն է՛կավ, տէհավ՝ դուքանը սիրուն ջրջրհա՛նած, ա՛վլած, ամէն բան իրա տէ՛ղը, սա՛րքին, կա՛րքին՝ ուրախացավ, աշխարօվ մին էլավ, վօր էս թավուր ղօչաղ տղա՛ ա ընկէ ձէռը։ Բէ՛րէցին էրկսով բէռնէրը քանդոտէ՛ցին, ապրանքը լքցրին դո՛ւքանը, է՛, վօնց վօր կա՛րքն էր՝ դարսօտէ՛ցին, իրանց առուտուրին, իրանց բանին կացան։ Անցկացավ մի վախտ՝ մի՛ ամիս, է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, օրէն մի օրը բէզրգյանի կնիկը կպավ մարթի յախէն։

— Ա՛յ մարթ,— ասէց,— քէզ մի սըռ պտի ասէմ։

— Ա՛սա,— ասէց,— ա՛յ կնիկ. ասա տէնամ՝ ի՛նչ էս ասում։

— Պտի էդ տղին,— ասէց,— ջո՛ւղաբ անէս, վօր նրա էրէսը էլ չտէնամ։

— Խի՞, ա՛յ կնիկ, քէզ ի՞նչ ա արէ,— ասէց մարթը։

— Բա՛ չէ՞ս ասի,— ասէց,— ըսէ՛նց, ըսէն՛ց, ըսէ՛նց բան. ուզում էր իմ «հալալը հարամի»։— Նստում ա մարթին մին-մին նա՛ղլ անում, մնին էրկու ավէլացնում։

— Ղօ՞րթ։

— Ղօ՛րթ։

— Բա՛ վօնց անէմ, ա՛յ կնիկ, էդ թավուր աչքաբաց, զալում տղին վօ՞նց ջուղար անէմ. գիտա՞ս էս մի քանի ամսումը ինձ աշխարքի խէր ա տվէ։ Սավայի էդ,— ասէց,— հէննէն տա՛րօվ էմ կապնըվէ, վօր դո՛ւս էլ անէմ՝ պտի սաղ տարվա հախը տամ։

— Դո՛ւ գիտաս, ա՛յ մարթ,— ասում ա կնիկը,— դո՛ւս կանէս՝ լավ, չէ՛ս դուս անի՝ յէ՛ս գլուխս կառնէմ, ըստիան կկօրչէմ։

Խէղճ մարթը մնացել էր էրկու ջրի արանքին, չէր գիտա՝ ի՛նչ անի, ի՛նչ չանի։ Տղին ջուղաբ անէր՝ պտի սաղ տարվա հախը տար, դո՛ւս չանէր՝ չէր ըլնի, կնկա ձէռիցը չպտի պրծնէր։ Մի՛տք արէց, մի՛տք արէց, վէրջն ասէց. «Բալի կարէնամ էդ տղին մի դհօվ կօրցնի, յա սըպանիլ տա, թէ չէ էլ ուրիշ ճա՛ր, իլլաջ չկա»։ Էդ բէզրգյանը իրանց տան կշտին մի փուռ ունէր. վէ կացավ գնաց փռնչու յախէն կպավ։

— Փռնչի՛,— ասէց,— քէզ մի բան կասէմ, պտի ա՛նկաջ անէս։

— Ա՛չքիս վրէն, ա՛ղա ջան, է՛րկուսն ասա,— ասէց փռնչին։

— Էքուց էն գլխէն,— ասէց,— մրնին կղրգէմ կուշտդ, կգա, կհարցնի, թէ. «Ա՛ղէս ասում էր՝ ինչ վօր քէզ հրամայէցի, արէ՞ցիր, թէ չէ»։ Էս վօր կասի, էլ մտիկ չէս տա, էն սհաթը վէ՛ կունէս դրան սաղ-սաղ կկօխէս փուռը։

— Լա՛վ,—ասէց փռնչին,—դու ղրկա՛, նրանից դէնը յէ՛ս գիտամ։

Իրիգունը տղէն դուքանիցն էկավ տուն, բէզրգյանը նրան, վօր ասէս, բան չասէց, սաքի թէ բանից խաբար չի։ Կնիկը հացը բէրէց քցէ՛ց, նստէ՛ցին, կէ՛րան, կշտա՛ցան, պրծա՛ն, դէսից-դէնից ասէ՛ցին, խօսա՛ցին, զրի՛ց արին՝ ընչանք քնէլու վախտը։

Քնէլու վախտը վօր էկավ, բէզրգյանը տղին ասէց.— է՛քուց էն գլխէն կէթաս մէր փռնչու կուշտը, դուռը կծէ՛ծէս, կհարցնէս. «Աղէս ինչ վօր հրամայէլ էր՝ արէ՞ցիր, թէ չէ»։ Կա՛սէս, էլ յէդ կէթաս քու բանին։

— Լա՛վ,— ասէց տղէն,— կէթամ, կհարցնէ՛մ։

Պառկէցին, քնէցին։ Տղէն վօր բանից խաբար չէր, էն գլխէն թէզ վէ՛ կացավ, շօրերը հա՛քավ, էրէսը լվա՛ց, գնաց փռնչու կուշտը, վօր բէզրգյանն ինչ ապսպրել էր՝ ա՛սի։ Քարը վէ կալավ, վօր դուռը ծէծի, մըն էլ տէհավ՝ ծը՛նգ, ժամերը տվին։ Ալբիալը քարը ձէռիցը վէ՛ քցէց, հօր վասիաթը միտն ընգավ, ասէց. «էթամ ժամ, կէնամ, ընչանք ժամը դուս գա, էն վախտն էլ փուռը բա՛ց կըլնի, կգամ կասէմ»։ Թօղաց գնաց ժամ։

Լա՛վ։ Բէզրգյանի կնիկը չունքի մարթի միտքը գիտար, էն գլխէն թէզ վէ՛ կացավ, թազա շօրերը հա՛քավ, լավ սիրուն զո՛ւթվէց, զարթա՛րվէց, կո՛կվէց՝ ուրախ-ուրախ գնաց ժամ։ Մի քիչ ժամումը կացավ, ա՛ղօթք արէց (աղօթքը գլխին խռօվ կէնա), ասէց. «էթամ մի փռնչուն հարցնէմ, տէնամ՝ մարթիս ասածն ա՞րէլ ա, թէ չէ»։ Մի քանի հէտ ծո՛ւնդր դրէց, էրէսին խաչ հանէց, դուս էկավ, գնաց փռնչու կուշտը, դուռը ծէծէց։

— Էդ օ՞վ էս,— ձէն տվէց փռնչին։

— Յէ՛ս էմ,— ասէց,— դուռը բա՛ց արա։

Փռնչին դուռը բա՛ց արէց, տէհավ՝ իրա աղի կնիկը։

— Հը՛,— հարցրէց կնիկը,— աղէդ քէզ բան էր հրամայէ՝ արէ՞ցիր, թէ չէ։

Փռնչին էլ ձէն-ծպտօն չհանէց, ալբիալը վէ՛ կալավ կնկանը սաղ-սաղ կօխէց թէժ փուռը։ Խէղճը հէնց իմացավ՝ աղէն դրա՛ համար ա թամբահ արէ. «Օ՞վ գիտա,— միտք արէց ինքն իրան,— բա՛լի մի մուխաննաթուբյուն ա արէ մարթին, նա էլ ուզում ա դրան կօրցնի»։

Ժամը դուս ա գալի, պրծնում, տղէն գալիս ա փռնչու կուշտը։

— Փռնչի՛,— ասում ա,— աղէդ ինչ վօր թամբահ էր արէ՝ արէ՞ցիր, թէ չէ։

— Հա՛,— ասում ա փռնչին,— արէցի։

Տղէն թօղում ա գալի տուն, բէզրգյանին շուտաբ տանում, թէ փռնչուն հարցրէց, ասում էր. «Ինչ վօր հրամայէլ էր՝ արէլ էմ»։ Ասում ա, յէդ գալի, էթում դուքանը բա՛ց անում, իրա առուտուրին, իրա բանին կէնում։

Բէզրգյանը վօր տէնում ա տղէն սաղ-սալամաթ յէ՛դ էկավ, ալբիալը մատը կծում ա. «Բա՛լի,— ասում ա,— կա չկա՝ ըստէ մի բան կա»։ Վէր ա կէնում գալի փռնչու կուշտը։

— Փռնչի՛,— ասում ա բէզրգյանը,— էդ ո՞ւմն էս կօխէ փուռը։

— Ա՛ղա,— ասում ա փռնչին,— դո՞ւ չասեցիր. «էն գլխէն օվ կգա կուշտդ, ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց կասի՝ վէ կունէս կկօխէս փուռը»։ էն գլխէն կնիկդ էկավ, վօնց վօր ասէլ իր՝ ընէնց հարցրէց, յէս էլ անսաս վէ կալա քցեցի թէժ փուռը։

— Այ հարա՛յ,— ձէն ա տալի բէզրգյանը,— քու տո՛ւնը քանդվի, վօնց վօր դու իմ տունը քանդեցիր, թօղիր։

Խէղճը շատ ա գլխին վա՛յ տալի, լա՛ց ըլնում, համա էլ ո՛ւր, բանը բանից ա՛նց էր կացէ։ Թօ՛ղում ա փօր-փօշման, դառը-տխուր գալի տուն։

Իրիգունը տղէն դուքանիցը գալիս ա։

— Տղա՛,— ասում ա բէզրգյանը,— քէզ մի բան պտի հարցնէմ, համա վօր դրուստը չէս ասէ՝ էլ ձէռիցս չէ՛ս պրծնի։

— Ա՛սա,— ասում ա տղէն,— կա՛սէմ, խի՛ չէմ ասի։

— Դու ա՛րի դրուստն ասա՝ քու ու կնկանս արանքը ի՞նչ ա անցկացէ։

Տղէն առաջ չէմ ու չում արէց, չո՛ւղէց մղուր գա, ասէց բալի իղակօրուստ անի, համա տէհավ վօր չէ՛, բանը ո՛ւրիշ թավուր ա, բէզրգյանը ամէն բան գիտա, էլ չկարաց պահի. ասէց՝ հա՛լ-նաղլ ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէնց բա՛ն, նստէց մին-մին նա՛ղլ արէց, վօնց վօր յէս ձէզ նա՛ղլ արի։

— Լա՛վ,— ասէց բէզրգյանը,— յէս քէզ ավատում էմ. համա վօր դու իմ կնկա կօրչէլու սաբաբն էլար, սրանից դէնը քու աշխատանքն ինձ հա՛րամ ա կացէ, վօր վօտիցդ ընչանք գլուխ վօ՛սկի էլ դառնաս՝ ինձ պէտքը չէս։ Հրէ՛ս,— ասէց,— էս քու սաղ տարվա թամամ հախը. ապրանքից էլ ինչ վօր քէզ կհասնի, կէթաս վէ՛ կունէս, կէթաս յէդ քու յէրկիրը։ Աստօծ քէ՛զ բարի տա, ընձ էլ։

— Լա՛վ,— ասէց տղէն,— վօր ուզում էս՝ ըսէ՛նց կանէմ։

Հա՛ց կէրան պրծա՛ն, պառկէցին, քնէցին։ Առավօտը լիսը բա՛ցվէց թէ չէ, տղէն վէ՛ կացավ, գնաց դուքան, դուռը բա՛ց արէց, ապրանքից ինչ վօր իրան կհասնէր, չօրսից մինը վէ՛ կալավ, էլ յէդ դուռը շի՛նէց, բէրէց բալանիքը տվէց բէզրգյանին, հէննէն մնաս բա՛րօվ արէց, էկավ քրէհդա՛րնէր բռնէց, ապրանքը բա՛րցիլ տվէց, ընգավ ճամփա՝ դո՛ւզ դպա իրանց գէղը։

Է՛կավ, է՛կավ, է՛կավ, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, հի՛նգ օր, մախլասի, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ՝ հէնց էն ա հասվէհաս էր, գէղի կշտին մութը գէտինը կօխէց։

— Քրէհդա՛րնէր,— ասէց տղէն,— բէռները վէ՛ դրէք, ըստէ չադիր տանք, կէ՛նանք ընչանք լիսանա, նօր վէ՛ կէնանք ճամփա ընգնէնք։

— Տնա՛շէն,— ասէցին քրէհդարնէրը,— էլ ըստէ ի՞նչ կա, վօր կէնանք, հրէ՛նիկ գէղն էրէվում ա։

— Չէ՛ վօր չէ,— ասէց տղէն,— հէրս վասիաթ ա արէ, վօր քշէրը ճա՛մփա չէթամ։

Ինչ ա՛րին չա՛րին՝ չէ՛լավ, տղէն մի հէտ սատանի ձին նի՛ էր էլէ, չէ՛ր ուզում վէ դա։ Դէ՛ նրանք էլ ի՛նչ պտի ասէին. բէրին բէռնէրը վէ՛ դրին, չա՛դիր տվին, կացան։ Քշէրվա մի վախտ տղէն վէ՛ կացավ, ասէց. «Տէնամ քրէհդարնէրը քնէ՞լ էն, թէ չէ, հօ գօղ, հարամի չկա՞»։ Բէռնէրի չօրս բօլօրը մա՛ն էկավ, է՛ս դիհը գնաց, է՛ն դիհը գնաց՝ մըն էլ տէհավ՝ հրէնիկ գէղիցը մի մարթ՝ ֆանառը ձէ՛ռին, մի զադ ուսին կրընկում ա դպա գէրէզմաններըր։ Ասէց. «Ա՛րի բուսուն պահէմ, տէնամ էդ մարթը էս բէվախտին ո՞ւր ա էթում։ Սատանական ընէ՛նց էլ զուզում մթնաքշէր էր, ընէ՛նց զուզում մըթնաքշէր, վօր մատդ մարթի աչք կօխէիր՝ չէ՛ր իմանա։ Տէհավ՝ էդ մարթն է՛կավ, է՛կավ՝ հասավ գէրէզմաններըր. ըստէ դէ՛ս ընգավ, դէն ընգավ, մի քար գտավ. էդ քարը բանձրացրէց, բահօվ տակը փօ՛րևց, ուսի զադը վէ՛ դրէց, ընդէ ֆօ՛րէց, քարն էլյէդ ուսուլօվ քցէց վրէ՛ն, թօղաց, գէղի ճամփէն բռնէց գնաց։

Տղէն էս վօր տէ՛հավ, ուրախացավ՝ աշխարօվ մին էլավ։ Խէղճը հէնց գիտար՝ էն մարթը խաղի՛նա յա ա՛պրանք բէրէց, էն քարի տակին ֆօրէց. ասէց. «Կէթամ կհա՛նէմ, կհարսուա՛նամ, մալ ու դօլվաթի տէր կըլնէմ»։ Լա՛վ։ Դէ՛ս մտիկ տվէց, դէ՛ն մտիկ տվէց, տէհավ՝ քրէհդարնէրը ընէ՛նց խոմփալէն քնած էն, վօր վօննէրիցը բռնէիր դէն քցէիր՝ չի՛ն իմանա։ Նրանց թօղաց ընդէ քնած, ինքը ֆանառը վա՛ռէց, յավաշ-յավաշ յէրըմիշ էլավ դպա գէրէզմաննէրը, դէ՛ս ման էկավ, դէ՛ն ման էկավ՝ էն քարը գտավ, ուսուլօվ բանձրացրէ՛ց, տակը մխէլի տէղ քա՛նդէց, ընդէ պահած զադը հա՛նէց, դրէց ուսին, բէրէց չադիրը։ Բաց արէց, ի՛նչ տէնա՝ մի սի՛րուն, նա՛շխուն, հուրի-մալաք ա՛խչիկ, թաքավօրի ախչկանը լայէղ շօրէր հագին, յարալու արած, արէնշաղաղ խանչալն էլ կօխքին դրած։ Զէռը դրէց սրտին, տէհավ ըհը՛, սիրտը քցում ա։

— Բաս լա՛վ ա,— ասէց,— դէռ հլա սաղ ա. թէզօվ սրան մի ճա՛ր անէմ։

Առավօտը լիսը բացվէց թէ չէ, քրէհդարնէրին ասէց, վօր էլ չէ-
քան գէղը, ձիանիքը ուրիշ տէղ քշէն։

Դէ՛, քրէհդարնէ՛րին ինչ, նրանք իրանց քրէհի վէքիլն ին, ձիա-
նիքը բարցէցին, ընկան ճամփա։

Է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛ր-
կու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ՝ էկան հասան Գյումրի։
Ըստէ տղէն իրա ապրանքը քօմմա ծախօ՛տէց, փօ՛ղ շինէց, քրէհ-
դարնէրի հախը տվէց, ճա՛մփա դրէց, ջօկ օ՛թախ քրէհէց, կա՛ցավ,
յէննա Գյումրու մհալումը ինչքամ գլուխ հէքիմ կար՝ քօմմըքին էլ
կա՛նչէց. «Ի՛նչ ուղէք՝ կտամ,— ասէց,— թաքիլան էս ախչկանը մի
ճա՛ր անէք»։

Էս հէքիմներն ին՝ խէ՛լք խէլքի տվին, է՛ս դէղը տվին. է՛ն դէղը
տվին, հա՛յ դէս, հա՛յ դէն, քշէր-ցէրէկ չարչարվէցին՝ մի՛ ամիս,
է՛րկու ամիս, ի՛րէք ամիս, կամաց-կամաց հիվանդը լավացավ, վէ
կացավ, ման էկավ, էլավ վօնց վօր մօրէն մին։ Հէքիմներին բօլ
փօ՛ղ տվէց, ճա՛մփու դրէց, գնացին։ Ընչանք օրս տղէն չէր գիտա՝
էս ախչիկն օ՛վ ա, օ՛վ չի, հէրնըմէր ո՛ւնի, չո՛ւնի, յա վօ՛նց ա էլէ,
վօր սրան յարալու էն արէ, բէրէ էն գէրէզմանաքարի տակը դրէ,
թօղէ գնացէ։ Վօր լավ լավացավ պրծավ, նօր ախչկանը հարց ու
փօրց արէց։ Ախչիկը նստէց մին-մին, տէղը-տէղին նա՛ղլ արէց
իրա գլխօվ անցկացածը։

— Ցէ՛ս,—ասէց,—թաքավօրի ա՛խչիկն էմ։ Հէրս մի սառաֆ ու-
ներ,—ասէց,—դրա տղի աչքն ընկէլ էր վրէս, ուզում էր ինձ առնի։ Էդ
սառաֆի տղէն ա՝, դէ՛ս ընգավ, դէ՛ն ընգավ, մա՛րթիկ մնչ քցեց, ինչ
ա՛րէց, չա՛րէց՝ չ՛էլավ, հէրս ղա՛բուլ չէլավ, նա մի հէտ չէ՛ էր ասէ՝ էն
դիհը կաննէ։ Էդ օրվանից սառաֆի տղէն հէննէս ի՛նադ ընգավ։ Օրէն
մի օրը, իմ ղարավաշնէրի հէննա գնացէլ ի գէղիցը դուս սէհր անէլու։
Հէնց գէղիցը մխէլի հէռացէլ ինք, մըն էլ է՛ն տէհանք՝ մի քանի ձիա-
վօր էն դհիցը դուս էկան, ձիանօնց գլուխը բրա՛խ տվին ու յա՛լլա՝
դպա մէզ։ Էս վօր տէհան ղարավաշնէրս, վախլուբյուննէրիցը թօ՛-
ղին փախան, յէս մնացի մէն-մէնակ։ Էդ ձիավօրնէրն էկան հա՛սան,
տէհա՝ դրանցից մինը էն սառաֆի տղէն։ Ձիանօնցից վէ՛ր էկան, ձէռ
ու վօտս կա՛պէցին, վէ՛ կալան տարան։ Ցէս ուշա՛թափ էլա, մնա-
ցի. էլ միտս չի՛ ո՛ւր տարան, ի՛նչ արին, ի՛նչ չարին. մէնակ է՛ս ա
միտս, վօր աչքս բա՛ց արի՝ տէհա կշտիդ։

— Ղո՞րթ էս ասում, ա՛խչի, թէ սուտ,— հարցրէց տղէն։

— Ղօ՛րթ։

— Ղօ՞րթ։

— Ղօ՛րթ։

— Բա՛ս վօր ըտէ՛նց ա,— ասէց տղէն,— դու ի՛մն էս, յէս՝ քո՛ւնը։

Գնաց էն սհաթը տէրտէր կանչէց, էդ տէրտէրը բէրէց դրանց պսա՛կէց, էլան մարթ ու կնիկ։ Ըստէ մի քանի վախտ կա՛ցան, յէննա միտք արին, ասէցին՝ վէ՛ կէնանք էթանք մէր քաղաքը, տէնանք ի՛նչ կա, ի՛նչ չկա։ Համա կնկա միտքն ո՛ւրիշ էր, նա ուզում էր սառաֆի տղից ինադը հանի, նո՛ր վօր սիրտը հօվանար։ Ճամփի թադա՛րէք տէհան, ինչ ունէին-չունէին կապօտէ՛ցին, ընկան ճամփա դալա իրանց քաղաքը։

Է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ՝ հասան իրանց քաղաքը։ Ըտէ ախչկա հօրնըմօրիցը թաքուն չօկ օ՛թախ քրէհէցին, կա՛ցան։ Անցկացավ մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, տղի ձէռի փօղը հատավ, չէր իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ չանի, ո՛ւմ դուռն էթա, ո՛ւմ ձէռը դէմ անի, մի քանի շահի ուղի, վօր սթա՛ր անի, ընչանք տէնան՝ վէրջ-նէրն ի՛նչ ա ըլնում։ Ըսէնց օրէն մի օրը տղէն դառը-տխուր նստէլ էր, մտքի հէննա ընկէ։

— Ա՛յ մարթ,— ասէց թաքավօրի ախչիկը,— ի՞նչ էս միտք անում, ասա տէնամ դարդդ ի՞նչ ա. խի՞ էս ըտէնց դառը-տխուր նըստէ, չըլնի՞ ձէռիդ խարչլըղը պրծէլ ա, ընդուր համար էս միտք անում։

— Հա՛,— ասէց,— ա՛յ կնիկ, քէզանից պահէմ, ասսանից ի՛նչ պահէմ, լափ սրթար-մրթարից ընկէլ էմ, վօնչ փօ՛ղ կա, վօնչ զա՛դ միտք էմ անում, թէ մէր վէրչն ի՛նչ պտի ըլնի։

Թաքավօրի ախչիկը էս վօր լսէց, էն սհաթը ձէռը տա՛րավ, մազէրի միչիցը մի ա՛կը հանէց, տվէց նրան։

— Ա՛ռ,— ասէց,— էս ակը, կտանէս բազար, կտաս թաքավօրի սառաֆի տղին. ի՞նչ աժի,— կհարցնէս։ Կասի. «Հա՛զար էրկու հարիր մանէթ»։— Բաս վօր ըտէ՛նց ա,— կասէս,— վէց հարիր մանէթ տո՛ւ, էն վէց հարիրն էլ քէզ փէ՛շքաշ։ Սավալի էս,— ասէց,— բան ա, վօր սառաֆի տղէն քէզ կանչի, ասի. «էթանք մէր տունը ղօնաղ», կէ՛թաս, համա ընէ՛նց կանէս, վօր հէքսի օրն էլ դո՛ւ նրան բէրէս մէր տունը։ Իմա՞ցար։

— Իմա՛ցա,— ասէց տղէն,— վօնց վօր ասէցիր՝ ընէնց էլ կանէմ։

Ակը ձէռիցն ա՛ռավ, վէ՛ կացավ գնաց բազար։ Դէ՛, շօրը-մօրը փօխել էր, ուրիշ գէյմ մտէ, վօր ասէս՝ մարթ էլա չճանանչեց նրան, թէ օ՛վ ա, օ՛վ չի։ Տարավ դո՛ւզ թաքավօրի սառաֆի տղի կուշտը, ակը հանէց շանց տվէց։

— Էս ակն ի՞նչ աժի,— հարցրէց։

— Հա՛զար էրկու հարիր մանէթ,— ասէց սառաֆի տղէն։

— Բաս վօր ըտէ՛նց ա,— ասէց,— վէց հարիր մանէթ տո՛ւ, վէց հարիրն էլ քէզ փէ՛շքաշ։ Ո՞ւր էս։

— Ո՛ւր էմ,— ասէց սառաֆի տղէն։

Էն սհաթը ուրախ-ուրախ հա՛նեց, վէց հարիր մանէթը նաղդ համբրէ՛ց, ակը ձէռիցն ա՛ռավ, դէռ հլա իրա միջին էլ ծիծաղաց նրա վրէն, թէ էս մարթը գի՞ժ ա, ի՛նչ ա, վօր էս թավուր գյօզալ ակը բէ-րէլ ա, կիսագին ծախում։

Իրիգունը վօր էկավ տուն, հօրը մին-մին նաղլ արէց.— Բա չէ՛ս ասի,— ասէց,— ա՛յ հէր, ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց բան, ըսօր մի տղա բէրէց հազար էրկու հարիր մանէթանօց ակը վէց հարըրօվ ծա՛խէց, յէս էլ առա, թօղաց, գնաց։

— Ա՛յ վօրթի,— ասէց հէրը,— բա խի՞ չիր էն տղին կանչում, բէրում տուն, վօր լավ պատիվ տայինք, ընէ՛նց ճամփու դնէինք։ Վօ՛րթի դէռ հլա ջա՛հել էս, չէ՛ս իմանում, վօր էդ թավուրնէրից մարթ, տէղն ընկած վախտը, շա՛տ խէր կտէնա։

— Լա՛վ, ա՛յ հէր,— ասէց,— վօր մըն էլ ռաստ գա՝ կբէրէմ։

Անց ա կէնում մի քանի վախտ, օրէն մի օրը, թաքավօրի սհ-չիկը տղին էլի ղրկում ա բազար, ասում ա. «է՛ս առ, է՛ն առ, է՛ս բէ, է՛ն բէ», մախլաս, ինչ վօր պէտքն էր՝ փօղ ա տալի, վօր էթա ա՛ռնի։ Էս տղէ՛ն ա՝ գէյմը փօ՛խում ա, դուս գալի, էթում բազար։ Դէ՛ս ա ման գալի, դէ՛ն ա ման գալի, ինչ վօր կնիկը թա՛մբահ էր արէ՝ ա՛ռնում ա, թօղում գալի տուն։ Ճամփին սառաֆի տղէն սրան ռաստ ա գալի։

— Ա՛յ բարօ՛վ, հազա՛ր բարին,— ասում ա սառաֆի տղէն,— քէ՛ֆդ, հա՛լդ, վօ՞նց էս, լա՛վ էս։

— Փա՛ռք իրա օղորմությունին,— ասում ա,— կա՛նք էլի։

— Ինչ կըլնի՝ կըլնի,— ասում ա սառաֆի տղէն,— ա՛րի ըսօր էթանք մէր տունը ղօնաղ. շատ վախտ ա իրար չէնք տէհէ, դէ՛սից,

դէ՛նից կա՛սէնք, կխօ՛սանք, ղրի՛ց կանէնք, ընչանք օր ա, կմըթ-նի է՛լի։

— Լա՛վ,— ասում ա,— սառաֆի տղա, ըսօր վօր յէս ձէր տունը դամ, խօսք տա՞լիս էս, էքուց էլ դո՛ւ գաս մէր տունը։

— Խօսք էմ տալի,— ասում ա սառաֆի տղէն։

— Դրո՞ւստ։

— Դրո՛ւստ։

— Բաս վօր ըտէ՛նց ա, է՛թանք։

Վէր ա կէնում գալի թաքավօրի սառաֆի տունը։ Գալիս էն տուն, նստո՛ւմ էն, դէ՛սից, դէ՛նից ա՛սում, խօ՛սում, մասլահա՛թ անում, ընչանք հացի վախտը գա՛լիս ա, բէրում էն դաստախունը բա՛ց անում՝ նստում էն հացի։ Սառաֆի տղէն իրա ղօնաղին լավ քէ՛ֆ, ուրախությո՛ւն ա շանց տալի։ Ո՛ւտում էն, խմո՛ւմ, լավ լըլվո՛ւմ, թռչվո՛ւմ, ընէնց վօր լա՛փ հալից ընգնում էն։ Դէ՛, տղէն էդ հալին էլ հօ չէր կարա վէ կէնա, էթա իրանց տունը, հէնց ըտէ քշէրը մնում ա։

Մնում ա, առավօտը վէ՛ կէնում, սառաֆի տղին ասում.— Սա՛ռաֆի տղա, հմի՞ ինչ էս ասում. գա՞լիս էս մէր տունը ղօնաղ, թէ չէ՛։

— Գա՛լիս էմ,— ասում ա սառաֆի տղէն,— է՛թանք։

Վէ՛ր էն կէնում գալի։

Գալիս էն տուն։ Թաքավօրի ախչիկը սառաֆի տղին տէնալու բաշտան՝ ալրիա՛լը ճանանչում ա, էթում ա տափ կէնում, ասում ա. «Վա՛յ թէ ինձ տէնա, բա՛ն ֆահմիր։ Էդ էրկսով նստո՛ւմ էն, ա՛սում, խօ՛սում, մասլահա՛թ անում, ընչանք էդ վախտը թաքավօրի ախչիկը կէրա՛կուր ա էփում, հաց-մա՛ց շինում, հազի՛ր անում։ Տղէն տանում ա դաստախունը փռո՛ւմ, կէրակուր ածում, բէրում դնում իրանց աղաքը. նստո՛ւմ էն, ո՛ւտում, խմո՛ւմ, քէ՛ֆ անում, ջա՛ն ասում, ջա՛ն լսում ընչանք կէս քշէր։ Սրանք վօր շատ խմում էն, գինօվանում, հէնց տէղնուտէղր թէք էն ընգնում, քնում։ Դէ՛ հօ գինօվը՝ հօ մէռէլը՝ մի՛ն ա, վօր վօտիցը բռնէս, քաշ տաս՝ չի՛ իմանա։ Սրա՛նք էլ ըտէնց։

Քշէրվա մի վախտ թաքավօրի ախչիկը վէր ա կէնում, էն արնօտ խանչալը վէ՛ր ունում, վօր խանչալօվ վօր իրան յարա՛լու ին արէ, ուսուլօվ էթում սառաֆի տղի գլխավիրէվը կա՛ննում։ Տէնում ա խըռըմփալէն քնած ա. խանչալը վօր չի՛ կօխում փօրը, մի քանի

հէտ էլ պտիտ տալի, աղիք-մաղիքը խառնըշտորում, ալբիա՛լը ֆոքին տալիս ա։ Նօր մարթին բռթո՛ւմ ա, վէ կացնում։ Մարթը վէ՛ր ա կէնում տէնում ի՛նչ՝ սառաֆի տղի մէյիդը կողքին է՛րգէն մէկնըվէլ ա, աղիք-մաղիքը դուս թափած, արնի միջին կօրած։

— Ա՛յ կնիկ,— ասում ա,— էս ի՛նչ զուլում բէրիր մէր գլուխը. համի հօ մէնք ֆողէց-ֆօքի կո՛րանք։

— Բան չկա,— ասում ա կնիկը,— դրան տէ՛ղն ա. յէս հօ ինադրս հանէցի, սրանից դէնը ի՛նչ ուզում ա ըլնի։ Մի շօրի միչի էդ օլուն կփաթաթէ՛ս,— ասում ա,— կտանէս գէրէզմա՛ննէրը, մա՛ն կգաս, էն գէրէզմանաքարը կքթնէ՛ս, վօրդէ ինձ բէրէլ ին ֆօրէ, տակը լավ կբա՛նդէս, կդնէս ընդէ՛, ֆողը վրա՛ կտաս, քարը էլյէդ կքցէս վրէ՛ն, կթօղաս կգաս։

Մարթն էլ տէնում ա, վօր ճար, իլլաջ չկա, կնկա ասածը պտի անի, բէ՛րում ա էդ օլուն մի շօրի միչի փաթթո՛ւմ, դնում ուսի՛ն, տանում գէրէզմա՛ննէրը, դէ՛ս, դէ՛ն ընդնում, մա՛ն գալի, էն քարը գտնո՛ւմ, բանձրացնո՛ւմ, տակը քա՛նդում, մէյիդը դնում ընդէ՛, ֆողը վրա՛ տալի, քարը էլ յէդ քցում վրէն, թօղում գալի տուն։

Առավօտը լիսը բա՛ցվում ա թէ չէ, կնիկն ասում ա մարթին.— Ա՛յ մարթ, սրանից դէնը ըստէրանք մնալը հա՛րամ ա. պտի գլուխ առնէնք էթանք ուրիշ յէրգիր, թէ չէ վօր իմացան, բանը բացվէց, վա՛յն էկէլ ա մէդ տարէ։ Կէթաս,— ասում ա,— ինձ համար մի ձէռք տղամարթի շօր կառնէս, թո՛ւր, ա՛սպաբ ու մի հատ էլ լավ քյահլան ձի, մախլաս, ճամփի համար ի՛նչ պէտքն ա կա՛ռնէս, վէ կէնանք էթանք Ստամբօլ, ընդէ կէ՛նանք, ընչանք տէնանք վէրչնէրս ի՛նչ ա ըլնում։

— Լա՛վ, ա՛յ կնիկ,— ասում ա մարթը,— թօղ ըտէ՛նց ըլնի, էթամ ա՛ռնէմ։

Էս մարթն ա՝ գէյմը փօ՛խում ա, վէ կէնում, էթում բա՛զար, դէ՛ս ա ման գալի, կնկա համար մի լավ ձէռք տղամարթի շօ՛ր ա առնում, ասպաբ-մա՛սպաբ ա առնում, էրկու էլ քյահլան ձի, թօ՛ղում գալի տուն։ Էդ քշէր ըտէ մնո՛ւմ էն, ճամփի թադա՛րէք տէնում, ինչ ունէին-չունէին, բէրում հազի՛ր անում, առավօտը, դէռ լիսն ու մութը չբաժանվա՛ծ, մարթ ու կնիկ վէ՛ր էն կէնում, թաքավօրի ախչիկը տղամարթի գէյմ ա մննում, ասպաբավօ՛րվում էն, ասսու անումը տա՛լի, թռնում ձիանիքը՝ յա՛լլա։

Է՛թում էն, է՛թում էն, է՛թում էն, շատն ու քիչն աստօծ գիտա,

մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, գալիս էն մի չայիր-չիման տէղ, մի ախպրի կշտի վէ՛ գալի՝ մի քիչ դինջա՛նան, հաց-մա՛ց ուտէն, էլ յէդ վէ՛ կէնան, էթան իրանց ճամփէն։ Թաքաւօրի աղչկա վրէն հօ էլ հա՛լ չէր մնացէ՝ բէդա՛րէլ էր, Թըլըպպէ, մնացէ։ Ախար խէղճը ա-պիղ-մապիղ մէնձա՛ցած, արէվի էրէս չտէ՛հած՝ կա՛րար իրէք օր իրար վրա ճա՛մփա էթա, ըն էլ ձի՛օվ։ Հաց վօր կէրան պրծան, գլու-խը դրէց տղի ծնգանը, ասէց. «Մի քիչ աչքս էլա կպցնէմ, դինջա-նամ»։ Տղէն տէհավ, վօր քնէց, ինքն էլ իրա դարդի հէննա էլավ։

«Հրէ՛ս,— ասէց ինքն իրան,— ձէռնէրիս փօղը պրծնում ա-սրանից դէնը ի՛նչ պտի անէնք, ո՛ւմ դուռն էթանք, ո՞ւմ ձէռը մէկ-նէնք, մի կտօր հաց ուղէնք։ Կնիկս,— ասէց,— էն դօնում վօր մի-ակը տվէց, տանէմ խարջէմ՝ իրա մաղէրի մի՛ չիցը հանէց, ա՛րի մի-ման գամ, տէնամ նրանից է՞լ կա, թէ հէնց է՛ն էր, վօր տվէց»։ Ա՛ն-կաջ դրէց, տէհավ՝ խըռըմփալէն քնած ա. ուսուլօվ ձէռը տարավ մա-ղէրը, դէ՛ս քրքրէց, դէ՛ն քրքրէց, մըն էլ ի՛նչ տէնա՝ մի կարմիր մահդի կտօր, վրէն օխտ-ութ ակը շարօտած, ընէնց էլ մի շօղշօ՛ղում ին, ֆըրֆրահա՛ր գալի, վօր քիչ էր մնում մարթի աչք քօռացնէին թօղային։ Էս վօր տէհավ՝ նօ՛ր մի քիչ խէղճի սիրտը արխէյնացավ, տէ՛ղն ընգավ։ Քրտնած մատնէրօվ վօր բռնէլ էր, ակնէրը մի քիչ սէվացէլ ին. ասէց. «Դնէմ ա՛րէվը, չօրա՛նա, յէդ վէ՛ր ունէմ, պա-հէմ»։ Մահդի կտօրը վէ՛ կալավ, դրէց արևը։ Վօրդիան վօր էր, էն դհիցը մի ագռավ վէր էկավ, հալրաթ իմացավ միս ա, մահդի կտօ-րը կտցէց՝ թռավ։ Տղէն ընդավ յէննուցը. «Թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ, թը՛ռ հա թըռ», համա էլ ո՛ւր՝ տա՛րավ ու տարավ։ Շա՛տ գլու-խին վայ տվէց, լա՛ց էլավ՝ համա էլ ի՛նչ, բանը բանից անց էր կացէ։ Մնացէլ էր շիվարած, չէր իմանում՝ ի՛նչ անի, ի՛նչ չանի, ի՛նչ էրէսով կնկա էրէսին էրէվա։ Միտք արէց, միտք արէց, վէրջն ասէց. «Լավն էն ա գլուխ վէր ունէմ, էթամ մի դհով, աշխա՛տանք անէմ, մի քանի շա՛հի հավաքէմ, նօ՛ր ընդհան տամ, էթամ Ստամբօլ։ Ջունքի գիտար, յէդ ու աղաք թաքաւօրի ախչիկն էլ կգար Ստամ-բօլ, ասէց. «Ընդէ իրար կքթնէնք»։ Ըտէ՛նց էլ արէց, ուսուլօվ կնկա գլուխը վէ՛ կալավ ծնգան վրիցը, դրէց գէննին, բէրէց ձին թա՛մ-քէց, նի էլավ՝ յա՛լլա։

Գնա՛ց, գնա՛ց, գնա՛ց, շատ գնաց, թէ քիչ՝ աստօծ ա խաբար, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի, մի շափաթ, լի՛ս գնաց, մո՛ւթ գնաց՝ դուս էկավ Թիֆլիսա շհարը։ Ըստէ իրա ձին, ասպաբնէրը

քսմմա ծախօ՛տէց, փօ՛ղ շինէց, վօր նրանօվ մի քանի օր սթա՛ր անի՝ ընչանք մի բանի կպնիլը։ Դէ՛ս ընգավ, դէ՛ն ընգավ, սրա՛ն հարցրէց, նրա՛ն հարցրէց, վէրջը մի հարուստ մարթի ռաստ էկավ։

— Ա՛խպէր,— հարցրէց էդ հարուստ մարթը,— կատէպան չէ՞ս ըլնի։

— Խի՛ չէմ ըլնի, ա՛ղա,— ասէց տղէն,— զաթի յէս էլ գէղցի, ռանչպար մարթ, հէնց էդ իմ սիրած փէ՛շակն ա։— Իրար հէննա խօսա՛ցին, պրծան, բարըշէցին՝. տարէկան յէռէսուն մանէթ, վրէն էլ մի ձէռք շօր։

Էս մէր կատէպանն ա՝ Թիֆլիսա շհարումը մնո՛ւմ ա, էդ հարուստ մարթի հիքին բէջա՛րում, մո՛ւղաթ կէնում, իրա վախտին ջրո՛ւմ, քախանո՛ւմ, է՛տում, թա՛ղում, յէ՛դ տալի, մախլաս, զլխնէրդ ի՛նչ ցավացնէմ, հիքումն ինչ չարշա՛րվում էր, չարշարվում, իրիգունը գալիս էր՝ նրանց տան բա՛նին հասնում, աղաքնէրին ղո՛վլուղ անում, է՛ս անում, է՛ն անում, ընէնց վօր քսմմըքօվ էլ նրան ընէ՛նց ին սիրում, ընէ՛նց ուզում, վօնց վօր մի տան տղա։ Ըսէնց մի քանի տարի կացավ դրանց կշտին, մի քանի մանէթ փօ՛ղ շինէց, վէրջը մի՛տք արէց, ասէց. «է՛թամ կնկանս հավարին, աշխարէ-աշխար, յէրզրէ-յէրզիր ման գամ, բալի գտնէմ»։ Էդ հարուստ մարթը շա՛տ կպավ յախէն, թէ. «Մի տարի էլ կաց, մի՛ էթա», չէ՛լավ, ասէց. «Չէ՛մ կարա, վօր չէմ կարա, մուրազ ունէմ, պտի է՛թամ»։ Դէ աղէն էլ ի՛նչ պտի ասէր, տէհավ՝ չի՛լնում, չի՛ ուզում, բէրէց նրա փողը տվէ՛ց, մի ձէռք էլ լավ շօ՛ր առավ, հաքցրէ՛ց, ճա՛մփու դրէց։

Կատէպանը հէնց նօ՛ր էր վօտը շէմքիցը դուս դրէ, աղէն յէննուցը ձէն տվէց.— Տղա,— ասէց,— մտիցս ընգել էր՝ մէր հիքումը մի չօր բարդի կա, մի է՛թաս, կտրէս, կօտօ՛րէս, ցա՛խ անէս, լցնէս սէ՛լը, բէրէս տո՛ւն, յէննա է՛թում էս՝ գնա, աստօծ քէզ հէննա։

— Ա՛չքիս վրէն, ա՛ղա,— ասէց կատէպանը,— ըստէ ի՛նչ կա, որ քու խաթրը կօտրէմ. ըսօր չէմ էթա, է՛քուց կէթամ, մին չի՞։

Էն սհաթը յէ՛դ դառավ, էկավ տո՛ւն, սէլը լծէ՛ց, կացինը քցէց վրէ՛ն, քշէց դո՛ւզ դպա հիքին։ Էկավ հիքին, կացինը վէ՛ կալավ, գնաց աղի ասած բարդին կտրէ՛ց, կօտօ՛րէց, բարցէց սէ՛լը, յէննա ուզում էր ծառի խուրսխուշը կիտի, տէհավ, ըհը՛, ագռավի տարած մահդի կտօրը՝ ակնէրը քսմմա վրէն՝ էդ խուրսխուշի միչին։ Դու մի՛ ասի, էն ագռավի բունը էն բարդու ծէ՛րին ա էլէ. մահդի կտօրը վօր կտցէլ ա, բէրէլ ա դո՛ւզ իրա բունը։

«Փա՜ռքդ շատ ըլնի,— ասէց,— ա՛ստօծ, վօր իմ մալը էլ յէդ ի՛նձ ղսմաթ արիր. էս հէտ պարզէրէս կէթամ կնկանս կուշտը»։

Ակնէրը շօրի միչին զայիմ փաթթէց, դրէց ջէրը։ Բէրէց սէլը լծէ՛ց, քաշէց էկավ ցախը տանը դարտկէ՛ց, քշէրն էլ ընդէ կա՛ցավ, նօր էն մի օրը առավօտը սուրփ ծէքի հէննա վէ՛ կացավ, ուրախ-ուրախ ճամփա ընկավ դպա Ստամբօլ։

Սրան թօղանք է՛թա, գանք խաբար տանք թաքավօրի ախչկանիցը։

Թաքավօրի ա՛խչիկն ա՝ վօր մի վախտ աչքը բաց ա անում տէնում՝ մարթ-մադաթ չկա, մարթի ձին էլ ընդէ չի՝ նստում ա, ուրուրուրուր լա՛ց ըլնում։ Ջէռը տանում ա մաղէրը, տէնում խաճվաճ ու ակնէրն էլ միչին չի։

«Հէ՛յ դիտի թամահքյար մարթ,— ասում ա,— քնած վախտս ակնէրը հա՛նէլ ա, գլո՛վս ատէ, փա՛խէ։ Փա՛ռք քէզ,— ասէց,— ա՛ստօծ, փա՛ռք քու օղորմությունին»։

Խէղճը կէ՛նում ա, կէ՛նում, ասում ա. «Օ՛վ դիտի, բալի մարթս գալիս ա»։ Կէնում ա մի՛ սհաթ, է՛րկու սհաթ, ի՛րէք սհաթ, մախլասի, էնքամ կէնում ա, վօր մութը գէտինը կօ՛խում ա, տէնում ա վօնչ մա՛րթ կա, վօնչ զա՛դ, նօր վէ՛ր ա կէնում դառը-տխուր ձին նի՛լնում, ընգնում ճամփա։ Գա՛լիս ա, գալի, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի՝ մի ամիս, քշէր, ցէրէկ գալիս ա, հասնում ա Ստամբօլա շհարը։ Ջէռին էլի շատից-քշից փօ՛ղ ա մնացած ըլնում, բէ՛րում ա ըստէ էդ փօղօվը մի փո՛ւռ ա բաց անում, հա՛ց ծախում. սավայի էդ՝ մի հատ էլ ղարըբա՛նօց ա շինիլ տալի, վօր շհարումը ինչքամ քյասիբ-քյուսուբ, ղարիբ մա՛րթ ըլնի, դա ըտէ սթա՛ր անի. «Բա՛լի,— ասում ա,— ըսէնցությունօվ կարէնամ մարթիս քթնի»։

Ըսէնց մէր կատէպան էլ, վօր մի քանի տարուց յէդը վօտը դնում ա Ստամբօլա շհարը, էթում ա սրա՛ն, նրա՛ն հարցնում, թէ.— էն թավուր էժան քարվանսարա, զադ չէ՞ք գիտա, էթամ վէ գամ։

— Հրէ՛նիկ ֆլան տէղն,— ասում էն,— ֆլա՛ն մարթը ղարըբանօց ա շինէ, քյասիբ-քյուսուբ, ղարիբ մարթիկ է՛թում, ընդէ կէ՛նում էն, վօնչ փօ՛ղ էն տալի, վօ՛նչ զա՛դ. ուզում էս՝ դո՛ւ էլ գնա։

Ջաթի նա էլ էս թավուր բա՛նի էր ման գալի, ուրախ-ուրախ

վէ՛ր ա կէնում, է՛թում՝ հարցնէլօ՛ն, հարցնէլօ՛ն ման գալի, էդ ղարրբանօցը քթնում։

— Ղա՛րիբ էմ, ա՛նճար էմ,— ասում ա կատէպանը,— չի՞լնի մի տէղ տաք սթա՛ր անէմ։

— Խի՞ չիլնի,— ասում էն։— Բէրում էն սրան մի օ՛թախ տալի, վոր կէնա։

Թաքավօրի ախչիկը տղին տէնալու բաշտան՝ ալբհա՛լը մատը կծում ա։ «Բա՛լի,— ասում ա ինքն իրան,— էս նա՛ ա, վոր նա ա»։ Համա ճանաչութիւն չի տալի. ասում ա. «Տէննամ՝ սրա վէրչն ի՛նչ ա ըլնում»։ Տղէն հօ՝ վօ՛ր ասէս չի ճանանչում կնկանը. հէնց իմա՛նում ա՝ ղօրթմանց փռնչի ա։

Սրանց թօղանք ըստէ, գանք խաբարն ո՞ւմից տանք՝ սրանց յէրգրի թաքավօրից ու նրա սառաֆիցը։

Խաբարը վօր բէրին թաքավօրին, թէ ախչկանդ փախցրին, տարան, է՛ն սհաթը թաքավօրը ձիավօրնէր ղրգնց քամակնէրիցը, վօր էթան կա՛ընէն, բէ՛րէն։ Համա ընչանք գնալնէրը, նրանք իրանց մանգղիւը կտրէլ ին։ Ձիավօրնէրը դա՛փ-դարտակ յէդ դառան, է՛կան։ Յէննա թաքավօրը թազադան մա՛րթիկ ղրգնց, իրա յէրգրումն էլ տեղ չթօղացին՝ ման էկան, սա՛ր, քա՛ր, քօ՛լ վօննատակ տվին, էլ մա՛րթ չթօղացին՝ հարցրին, ախչկանը չքթա՛ն, վօր չքթան։

Ըսէնց էլ թաքավօրի սառաֆը. խէղճը մէ՛ռավ ման գալօն, չարչարվէլօն, դէ՛ս, դէ՛ն ընգնէլօն, սրա՛ն, նրա՛ն հարցնէլօն՝ վօնչ տղա քթավ, վօնչ ղադ. էն կօ՛րչիլն էր, վօր կօրավ՝ վօնչ ի՛ն էրէվաց, վօնչ թօ՛ղը։

Անցկացավ ըսէնց մի՛ տարի, է՛րկու տարի, ի՛րէք տարի, մախլասի, հինգ տարի։ Թաքավօրը, վօր շատ դէ՛ս ընգավ, դէ՛ն ընգավ, էլ տէղ չթօղաց մա՛ն էկավ, ախչկանը չկարաց քթնի, օրէն մի օրը կանչէց իրա սառաֆին։

— Ա՛խպէր,— ասէց,— ըսէնց բան չիլնի. իմ ա՛խչիկն ա վօտօվ-գլխօվ կօրէ, քու էլ՝ տղէն. կա՛ չկա, ըստէ մի բան կա։ Ա՛րի,— ասէց,— էրկօվ էլ շօրնէրս փօ՛խէնք, ախքատի գէ՛յմ մննէնք, էթանք աշխարէ-աշխար, յէրգրէ-յէրգիր մա՛ն գանք, բալի քթնէնք, բէրէնք։

— Լա՛վ էս ասում,— թաքա՛վօրն ապրած կէնա,— ասէց սառաֆը,— է՛թանք։

Թաքավօրն ու սառաֆը խօսքնէրը մի՛ն արին, ախքատի շօրէր հագան, մի քանի տարվա ճամփի պաշար վէ կալան, ընկան ճամ-

փա։ Դէ՛ս գնացին, դէ՛ն գնացին, է՛ս քաղաքը, է՛ն քաղաքը, է՛ս գէղը, է՛ն գէղը, էլ տէղ չթօղացին, տակն ու վրա՛ արին՝ չբթան։ Վէրչն ասէցին. «էթանք Ստամբօլա շհարը, մի ընդէ՛ էլ սալըղ առնէնք, տէնանք»։ Ճամփէքը ծռէցին դպա Ստամբօլ։ Է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ գիտա, մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մի՛ շափաթ, է՛րկու շափաթ, ի՛րէք շափաթ, մախլասի, մի ամիս՝ հասան Ստամբօլ։ Շըհարի մէչը վօր մտան, սրա՛ն, նրա՛ն հարցրին, թէ. «Չէ՞ք գիտա էն թավուր էժան քարվանսարա, զադ, էթանք վէ դանք»։

— Խի՞ չէնք գիտա,— ասէցին,— հրէն ֆլա՛ն տէղը, ֆլան մարթը ղարըբա՛նօց ա շինէ. օ՛վ ասէս էթում ա վէ՛ գալի, վօնչ փօ՛ղ ա տալի, վօնչ զա՛դ։

Թաքավօրին ու սառաֆին ա՛ղաք էն անում, բէրում էդ ղարըբանօցը։

— Ղա՛րիբ էնք,— ասում էն թաքավօրն ու սառաֆը,— չի՞լնի մի տէղ տաք, սթար անէնք։

— Խի՛ չիլնի,— ասում էն։— Բէրում էն սրանց մի օ՛թախ տալի, վօր իրանց համար կէնան։

Փունչին թաքավօրին ու սառաֆին տէնալու բաշտան՝ ալբիա՛լը ճանանչում ա. համա վօր ասէս ձէն-ծպտօն չի հանում, ասում ա. «Տէնամ՝ սրա վէրչն ի՛նչ ա ըլնում»։

Թաքավօրն ու սառաֆը, վօր ասէս, փունչուն չճանանչէցին։ Դէ՛, ախար, վօ՛րդիան վօրդէ. ո՛ւմ մտքովը կանցկէնար, վօր թաքավօրի աչխիկը կգար Ստամբօ՛լ, փունչու գէ՛յմ կմաննէր, ղարըբա՛նօց բաց կանէր, նրանց ռաստ կգար։

Անցկացավ ըսէնց մի՛ օր, է՛րկու օր, ի՛րէք օր, մախլասի՝ մի շափաթ, օրէն մի օրը փունչին բէրէց ղօնա՛ղըղ սարքնց, թաքավօրին, սառաֆին ու կատէպանին (իրա մարթին) կանչէց ղօ՛նաղ։ Դէ նրանք էլ ի՛նչ պտի ասէին, ուրախ-ուրախ վէ՛ կացան, է՛կան։ Փունչին էս իրէքին ընէ՛նց մի լավ քէֆ, ընէ՛նց մի լավ ուրախութիւն շանց տվէց, վօր էլ ա՛սէլ չի ուզի։ Գլխնէրը վօր լավ տաքա՛ցավ գինուցը, փունչին խօ՛սք բաց արէց։

— Ի՞նչ մարթ էք,— հարցրէց,— ի՞նչ բանի համար էք էկէ ըստէրանք։

Թաքավօրն ու իրա սառաֆը չուղաք չտվին, մնացին իրար էրէսի մտիկ անէլօն։ Համա կատէպանը վօր տէհավ սուս էն կացէ, ձէն-ծպտօն չէն հանում, ինքը էն դհիցը վէ՛ կացավ, մին-մին իրա

գլխովն անցկացածը նա՛ղլ արէց, վօնց վօր յէս ձէզ նա՛ղլ արի. ասեց «Ըսէ՛նց, ըսէ՛նց, ըսէ՛նց բան. էսքամ վախտ էլ յէս աշխարէ-աշխար, յէրդրէ-յէրգիր էմ ընդէ, իմ կնկա հավարին էմ ման գալի»։

Թաքավօրն էս վօր լսէց թէ չէ, էն դհիցը ձէն տվէց.— Տղա՛,— ասէց,— էն թաքավօրը հէնց յէ՛ս էմ՝ վօր կամ։ Բաս վօր ըտէ՛նց ա,— ասէց,— հախ ու նհախ, իմ ախչիկը յէս քէզանից կուզէմ, էլի դո՛ւ խաբար կըլնէս նրանից, մարթ չէ։

— Ձէ՛ս էլ թաքավօրի սառաֆն էմ,— ձէն տվէց էն մէկէլ դհից սառաֆը,— յէս էլ իմ տղէ՛ն կուզէմ քէզանից։

Նօր ըստէ փոնչին (թաքավօրի ախչիկը) մէչ ընգավ։

— Թաքա՛վօրի սառաֆ,— ասէց փոնչին,— դու քու տղէն էս ուզում՝ ընէնց չի՞։

— Հա՛,— ասէց սառաֆը։

— Տղիդ ինչ ա՛րէլ էն,— ասէց փոնչին,— տէ՛ղն ա, խի՞ էր ուզում թաքավօրի ախչկանը սրպանի, վօր վէրչն էն օղիէն իրա գլուխը գար։ Էդ աստու հալալ դատա՞ստանն ա,— ասէց,— վօր էլ խօ՛սք չունէս ասէլու.— Ձէննա թաքավօրին հարցրէց.— Թաքա՛վօրն ապրած կէնա,— ասէց,— դու էլ քու ա՛խչիկն էս ուզում, ընէնց չի՞։

— Հա՛,— ասէց թաքավօրը։

— Կա՛ց,—ասէց,—էթամ բէրէմ։—Գնաց իրա օ՛թախը, փոընչու շօրէրը հա՛նէց, ախչկա շօ՛րէր հագավ, գլուխը շի՛նէց, կօկէց, զո՛ւքվէց, զարթա՛րվէց՝ էկավ ընդէ կա՛ննէց։

Ախչկանը տէնալու բաշտան թաքավօրը մի՛ դհից, տղէն մի՛ դհից վազէցին, փաթաթվէցին ճտօվը, ուրախությունից լա՛ց էլան, խօսք չէր գալի բէրաննէրը, վօր խօսային։ Սառաֆը հօ՝ մնացել էր է՛շ կտրած, բէրանը բաց սրանց մտիկ անէլօն։

Նօր նստէցին թազադան քէ՞ֆ, ուրախությո՛ւն, ընչանք լիսվէլիս կէ՛րան, խմէ՛ցին, ջա՛ն ասէցին, ջա՛ն լսէցին, իրար գլխօվ անցկացածը նա՛ղլ արին, ճիճ դարմանը համուն տվին, դաղդան, դաշդա՛ն, դէ՛սից, դէ՛նից ասէ՛ցին, խօսա՛ցին, մասլահա՛թ արին։

Սրանից դէնը մի քանի օր էլ կացան Ստամբօլ, նօր ըստէ ինչ ունէին-չունէին հավաքէ՛ցին, կապօտէ՛ցին, քօշ ու բարխա՛նա արին, ճամփի թադա՛րէք տէհան, չօրսօվ ընկան ճամփա դպա իրանց յէրգիրը։


Է՛կան, է՛կան, է՛կան, շատն ու քիչն աստօծ գիտա, հասան իրանց յէրգիրը։ Նօր ըստէ թաքավօրը բէրէց իրա ախչկանը թագա-

1646—38

դան նշա՛ն դրէց տղի վրէն, պսա՛կէց, օ՛խտն օր, օ՛խտը քշէր հարսանիք արէց։ Էլ ինչ քէ՛ֆ, ինչ ուրախությո՛ւն, ինչ դափ ու զուռնա՛, վօր էլ հա՛լ ու հէսաբ չկար։

Նրանք հասան ի՛րանց մուրաղին, դուք էլ հասնէք ձէ՛ր մուրաղին։







ԱՅՐԱՐԱՏ

Պատմական Այրարատ նահանգից այս հատորում զետեղված են բացառապես Վաղարշապատի հեքիաթները, որոնք տարբեր ժամանակներում հավաքել են Տիգրան Նավասարդյանցն ու Երվանդ Լալայանը։ Մի քանի խոսք Տ. Նավասարդյանցի և Եր. Լալայանի հավաքած նյութերի մասին, որոնք օգտագործված են ներկա հրատարակության մեջ։

1. Հատորի հիմնական մասը Տ. Նավասարդյանցի հավաքած հեքիաթներն են, որոնցից գերակշռող բաժինը տպագիր նյութեր են. ա) Տպագիր նյութերը վերցված են Տ. Նավասարդյանցի հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներից» I—X գրքերից։ Այդ գրքերում հավաքված են տարբեր վայրերի բանահյուսական բազմաթիվ ժանրերի ստեղծագործություններ։ Ներկա հրատարակության մեջ օգտագործված են միայն Վաղարշապատի հեքիաթները։ Տալիս ենք Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» գրքերի հրատարակության տեղերն ու թվականները։ I գիրք՝ Վաղարշապատ, 1882, II գիրք՝ Երևան, 1882, III գիրք՝ Թիֆլիս, 1884, IV գիրք՝ Տփխիս, 1888, V գիրք՝ Տփխիս, 1889, VI գիրք՝ Թիֆլիս, 1890, VII գիրք՝ Թիֆլիս, 1891, VIII գիրք՝ Թիֆլիս, 1894, IX գիրք՝ Թիֆլիս, 1902, X գիրք՝ Թիֆլիս, 1903։

«Հայ ժողովրդական հեքիաթների» I գրքի նյութերը Տ. Նավասարդյանցը նախապես տպագրել է «Արարատ» ամսագրի 1881 թ. № 11, 1882 թ. № 1, 2, 3 և 4 թերթոններում։ Նույն 1881 թ. № 11-ում զետեղված է մի անստորագիր խմբագրական հոդված, որտեղ նշված է բանահյուսական նյութերի հավաքման անհրաժեշտությունն ու կարևորությունը և բարձր գնահատված Տ. Նավասարդյանցի անձնվեր, հայրենասիրական գործը։

Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» տասը գրքերում տպագրված հեքիաթների գրառման ձեռագրերը մեծ մասամբ չեն պահպանված։

Հայկական ՍՍՀ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում պահվող Տ. Նավասարդյանցի ֆոնդում (տես գործ

1, № 2) կա մի կազմած սովարածավալ տետր, որի անվանաթերթի վրա Տ. Նավասարդյանցի ձեռագրով գրված է՝ «Հայ ժողովրդական հեքիաթներ», Տ. Նավասարդյանց, ժողովածու, 1876—1880 թ. Տփխիս։ Ինչպես երևում է, Տ. Նավասարդյանցը այս ընդհանուր տետրում ի մի է ժողովել իր հավաքած հեքիաթները և պատրաստել տպագրության։ Ընդհանուր տետրից կտրված են մի շարք հեքիաթներ, որոնք տպագրված են նրա գրքերում։ Թերթի մյուս էջում նյութ լինելու պատճառով մնացել է կտրված մի քանի հեքիաթների սկիզբը, որտեղ կա Տ. Նավասարդյանցի նշումը. «Արտագրված է տպելուց»։ Բայց գրքերում տպագրված շատ հեքիաթների դրաման ձեռագրերը պահպանում են այդ ընդհանուր տետրում։

Ցավոք սրտի, Տ. Նավասարդյանցը իր հավաքած ու հրատարակած նյութերի մասին շատ կցկտուր տեղեկություններ է տալիս։ Էջատակի շատ անցողակի ծանոթություններից և հարևանցիորեն արված ակնարկներից պարզվում է, որ այդ նյութերը ինքն է գրի առել վաղարշապատ գյուղում։ Իսկ ովքե՞ր են ասացողները, կոնկրետ ե՞րբ են գրի առնված այդ նյութերը, ի՞նչպիսի հանգամանքներում և այլն, այդ մասին գրեթե ոչ մի տեղեկություն չի տրվում։ Մի բան միայն պարզ է, որ Տ. Նավասարդյանցը իր բանահավաքչական աշխատանքներն սկսել է դեռևս 1876 թվականից (ինչպես նշված է նրա ձեռագիր հավաքածուի անվանաթերթի վրա) և շարունակել է մինչև 90-ական թվականները։

Հայտնի է, որ հրատարակված նյութերի մեծ մասը ինքը՝ Տ. Նավասարդյանցն է գրի առել, իսկ երբ ձեռքի տակ ունեցել է ուրիշների ուղարկած նյութերը, այդ մասին նա հիշատակել է։

Տ. Նավասարդյանցի հրատարակած գրքերը առաջաբաններ ու ծանոթագրություններ չունեն, բացառությամբ առաջին գրքից, որին կցված է մի հակիրճ առաջաբան՝ ձեռնարկված աշխատանքի նպատակների և նշանակության մասին։

Իր անդրանիկ գրքույկի ճակատին Տ. Նավասարդյանցը թողել է հետևյալ ընծայականը. «Ցուր նախկին ուսուցչին, մեծ. Ս. Պալասանյանին խորին հարգանոք նվիրում է ժողովողը»։

Ստորև ամբողջությամբ բերում ենք Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներից» I գրքի առաջաբանը։

«ՀԱՌԱՋԱԲԱՆ

Մի ազգի հնադույն ժամանակներից մնացած մի ավերակ, մի արձանագրություն, մի դրամ և այլ սոցա նման հնության հետքեր կրող առարկաներ՝ կենդանի վկայք են նույն ազգի փառավոր կամ անշուք անցյալի, որո՛նց վերա հնագետները հիմնեն իրանց գիտնական հետազոտությունները՝ այդ ազգի անցյալ կյանքի հետ ծանոթանալու համար։ Սակայն, բացի դորանից, ո՛չ պակաս հնագիտական նյութ են և մի ազգի՝ ժողովրդական, այսպես ասած՝ խոսուն հնություններ, որոնք իբրև նորա մտքի և երևակայության ծնունդ՝ նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերներն են արտացոլում իրանց մեջ։

Այդ հնությունները՝ ժողովրդական բանավոր վեպերն են. ճեխիաթները ազգային հին երգերը, առածները, հանելուկները, շուտասելուկները, անեծքները, օրե-

նություններ և այլն, որոնք իբրև սրբազան ժառանգություն՝ դարերից հետե, բերանե բերան՝ հասել են մինչև մեր օրերը։ Խոսք չկա, այդքան երկար ժամանակամիջոցում, այդ ավանդությունները ժողովրդյան բերանում ենթարկվել են զանազան փոփոխությանց։

Ներկա ժամանակում, համարյա ամեն մի փոքր ի շատե քաղաքակրթված ազգի մեջ, այդ բանկագին հնությունները արդեն մեծ մասամբ ժողովված են և տպագրությամբ ի լույս ընծայած։ Բայց մեր՝ հայերիս մեջ, ցավոք սրտի պետք է ասել, նոքա դեռևս մեր ռամիկ դասի սեպհականություն են և որոնք հետզհետե զոհ են դառնում ժամանակի անդուր ձանիքներին (նոցանից միայն մի քանի հատու կտոր նյութեր են ժողովված և զանազան դրքերի մեջ հրատարակված)։ Այն ի՛նչ, այդ հետաքրքրական նշխարները կարող են մեծ լույս ձգել մեր գրականության վրա և ամեն մի հայ անհատի գրասեղանի բանկագին զարդ կազմել, իբրև նվիրական ավանդ՝ իրանից շատ հարյուրավոր տարի առաջ ապրող հայ ժողովրդյանը։

Ահա՛ այդ աչքի առաջ ունենալով՝ այս մի քանի տարի շարունակ, իմ թույլ ուժերը նվիրել եմ (և այսուհետև էլ նվիրվելու եմ) այդ նպատակին ծառայելու։

Հայ ժողովրդյան մեջ ցիր ու ցան եղած այդ վիպերը և ավանդությունները ժողովելով և տպագրությամբ ի լույս ընծայելով՝ իմ միակ նպատակը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ ևում նյութ առաջարկել հնագետներին և բանասերներին՝ թողնելով նոցա քննության և հետազոտության։

Այդ վիպերի ամեն տեսակներից արդեն մեծ քանակությամբ ունիմ, որոնք թե անձամբ եմ ժողովել՝ ճանապարհորդելով շատ նահանգներ և թե զանազան տեղերից ուրիշ անձինքներից ստացել։ Առայժմ, ձեռնարկել եմ հեքիաթների հրատարակության. հուսալով, որ հեքիաթները մեր ժողովրդյան մեջ (գոնե այն նահանգում, որի բարբառով գրված են նոքա) նաև իբրև ընթերցանության հետաքրքիր նյութ ևս կարող են ծառայել։

Վերջացնելով տողերս, պատիվ ունիմ հրապարակավ հայտնել իմ անկեղծ շնորհակալությունը հետևյալ հարգելի պարոններին, որոնք բարեհաճեցին նյութականապես օգնել, անցյալ տարի ձմրան ժամանակ ճանապարհորդելու սույն նպատակով՝ Գանձակու, Նոր Բայազետի և մի քանի ուրիշ նահանգներ. Տփխիսում մեծ. դոկտոր Գ. Արծրունի, մեծ. բժիշկ Բ. Նալբանդյանց, ինժեներնի նաչալնիկ Պ. Ա. Սապայանց և կլասիկական գիմնազիոնի հայ ուսանողների մի խումբ. Բագվում մեծ. պ. պ. Մինեչ Միրզոյանց, Սամուել Բաղիրյանց, Առաքել Ծատուրյանց և փաստաբան Պատկանյանց։ Հայտնում եմ իմ խորին շնորհակալությունս և հետևյալ պարոններին՝ Մեծ. պ. պ. Ս. Պալասանյանցին, Գ. Տեր-Աղեքսանդրյանցին և Պ. Պողոսյանցին, որոնք ներկա գրքույկիս վերաբերությամբ՝ չզլացան ինձ յուրյանց խելացի խորհուրդներով։ Տ. Ն.»։

Ինչպես իր հրատարակած «Հայ ժողովրդական հեքիաթներիս» դրքերում, այնպես և պարբերական մամուլում («Մշակ», 1882 թ. № 4, № 222, 1883 թ. № 79, 1890 թ. № 109, 1894 թ. № 10 և այլն) Տ. Նալբանդյանցը հայտարարություններով ու ազդերով տեղյակ է պահել ընթերցող հասարակությանն ու մտավորականությանը իր գործի ընթացքին, կոչ անելով նրանց մասնակցելու տեղերում ժողովրդական նյութերի հավաքման գործին։

Պարբերական մամուլում ու այլ օրգաններում տպագրվել են հոդվածներ ու դրախոսականներ, որոնց հեղինակները շատ բարձր են գնահատել Տ. Նավասարդյանցի նախաձեռնությունը և խրախուսել են նրա սկսած գործը (Րաֆֆի, «Համայի մելիքություններ», 1882 թ. Հ. Մ. Հովհաննիսյան, Ներքին տեսություն, «Մշակ» 1882 թ. № 238, Մ. Բարխուդարյանց, Ճատենախոսություն Պ. Տ. Նավասարդյանի Հայ ժողովրդական հեքիաթների ժողովածուի առիթով, «Արձագանք» 1884 թ. № 21, Վարսամ (Մ. Արեղյան), Մատենախոսություն, «Նոր-Դար», 1891, № 137, Մատենախոսություն (անստորագիր), «Տարազ», 1894, № 10 և այլն)։

Ինչպես ասված է այս հատորի նախաբանում, պահպանվել է Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» գրքերի սևիական օրինակները, որոնց տեքստերի վրա բանահավաք-հրատարակիչը մանանի փոփոխություններ ու ճշտումներ է կատարել։ Ներկա հրատարակության համար հիմք ընդունելով այդ ճշտված տեքստը, սակայն բոլոր ուղղումները չէ, որ փոխանցել ենք ներկա տեքստում, այլ յուրաքանչյուր դեպքում հաշվի ենք առել ժողովրդական պատումներին հարազատ մնալու ձգտումը։

բ) Զեռագիր, անտիպ նյութեր, Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդից այս հատորում օգտագործված է «Հայ ժողովրդական հեքիաթներին» հերթական XI պրակի համար պատրաստված կիսամաքրագիր, անմշակ նյութերը (տե՛ս գործ 2, № 20—21)։ Դրանք իրար կցված մի քանի տետրեր են, որոնք պարունակում են 12 հեքիաթ. դրանց մեծ մասը ինքը՝ Տ. Նավասարդյանցն է գրի առել Վաղարշապատում, իսկ մի քանիսը, ինչպես երևում է ձեռագրերից, գրի են առել ուրիշները։ Հիշված 12 հեքիաթներից բացի, հիշյալ տետրի ցանկերում կան երկու հեքիաթների անուններ («Ջոլախ կնիկը» և «Սրապիոն»), որոնք, սակայն, այդ տետրում բացակայում են։ Ինչպես իր գրառումների, այնպես էլ հատկապես ուրիշների գրի առած նյութերի տեքստերի վրա Տ. Նավասարդյանցը կատարել է բազմապիսի ուղղումներ։ Ուրիշների գրի առած նյութերը Տ. Նավասարդյանցը հիմնավոր վերամշակման է ենթարկել, վերացնելով բանահավաքների վրիպումները, այժեհատային գծի աղավաղումները, բարբառից շեղումները և այլն։ Ընդհանուր առմամբ այս անտիպ նյութերը սևագիր վիճակում են, շնջումներով ու լրացումներով լցված, որը գրեթե անընթեռնելի է դարձնում տեքստը։ Աշխատել ենք ուղղել բոլոր տիպի վրիպումները։ Հարկ եղած դեպքում, եթե իմաստային կամ գեղարվեստական արժեք են ներկայացնում, էջատակին տվել ենք այն բառերն ու արտահայտությունները, որոնք ուղղված կամ փոփոխված են բանահավաքի կողմից։ Զեռագիր, անտիպ նյութերի մեջ էլ Տ. Նավասարդյանցը որևէ տեղեկություն չի հաղորդում ասացողների և գրառման հանգամանքի մասին։

2. Ներկա հատորում տպագրված հեքիաթների մյուս մասը Եր. Լալայանի նյութերն են, որ նա հավաքել է 1913 թ. Վաղարշապատում և հրատարակել «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուի II գրքում (1914 թ.) Օշականի և Փարպի գյուղերի հեքիաթների հետ։ Եր. Լալայանը նույնպես շատ սեղմ ու ժլատ տեղեկություններ է հաղորդում հեքիաթների ասացողների ու գրառման հանգամանքների մասին։

***

Սույն հատորի հեքիաթների ծանոթագրություններում տրվում են հետևյալ կարգի տեղեկություններ։

1. Ներկա հրատարակության համար հիմք ծառայած աղբյուրի մասին։

2. Գրառման հանգամանքների և ասացողների մասին բանահավաքների հաղորդած բուռ վկայություններ։

3. Գրառման ձեռագիրը պահպանվելու դեպքում՝ հրատարակվող տեքստի և գրառման ձեռագրի միջև եղած տարբերությունների մասին, եթե դրանք բանասիրական հետաքրքրություն են ներկայացնում։

4. Տվյալ հեքիաթի վերահրատարակությունների կամ թարգմանությունների մասին։

5. Տվյալ հեքիաթի սյուժետի առնչությունը նախորդ հատորի հեքիաթների սյուժետների հետ։

6. Տվյալ հեքիաթի դրական մշակման մասին, եթե կա ստույգ վկայություն այդ նյութը մշակող հեղինակի կողմից։

Ծանոթագրություններում համառոտության համար Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթները» անվանում ենք՝ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներ...», Սր. Լալայանի «Մարգարիտներ հայ բանահյուսության» ժողովածուն՝ Սր. Լալայանի «Մարգարիտներ...», Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվը՝ ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվ։

1. ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽՆՁՈՐ

(էջ 23)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» II գրքում (էջ 3—25) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաք-հրատարակիչը հայտնում է, որ այդ գրքում զետեղված հեքիաթները ժողովել է ինքը վարպետապետ գյուղում և «գրել բուն տեղական բարբառով»։ Ուրիշ տեղեկություն հեքիաթի գրառման հանգամանքների մասին չի հայտնում։ Ասացողը անհայտ է։ Հեքիաթի գրառման ստույգ թվականը ևս չի տրված։ Բայց ելնելով այն փաստից, որ ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդում (տե՛ս գործ I, № 2) եղած ձեռագիր նյութերի հավաքման սկիզբը նշանակված է 1876 թ., իսկ «Հայ ժողովրդական հեքիաթներին» II գիրքը լույս է տեսել 1882 թ., պետք է եզրակացնել, որ այս հեքիաթը գրի առնված կարող է լինել 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Անմահական խնձոր» հեքիաթը իր թեմատիկ նպատակադրմամբ առնչվում է «Հայ ժողովրդական հեքիաթներին» գիտական հրատարակության նախորդ՝ I հատորում տեղ գտած «Հազարան բլրուլ կամ Ալո-Դինոյի նաղլը» (№ 1) և «Ղուշ-Փարին» (№ 2) հեքիաթներին, որպես ընդհանրություն պահպանելով երեք եղբայր-

ների արկածները և փոքր եղբոր նկատմամբ ցուցաբերած խարդախությունը, սակայն տարբերվելով դեպքերի ընդգրկման ու սյուժետային գծի զարգացման տեսակետից։

«Անմահական խնձոր» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական եկիաթներ», կազմեց և խմբագրեց Ա. Ղանալանյան, Երևան, 1950, էջ 5—20։ Ժողովածուի մեջ մեզ հետաքրքրող հեքիաթները արտատպված են Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» դրքերից և Ր. Լալայանի «Մարգարիտների...» II դրքից։ Հաջորդ ծանոթագրություններում համառոտության համար օժանդակ այս աղբյուրը կոչված է՝ «Հայ ժողովրդական եկիաթներ», 1950։

«Հայ ժողովրդական եկիաթներ», ժողովածուն կազմել և հեքիաթները լուվական մասնակի մշակման է ենթարկել Ա. Նազինյանը. ձևավորումը՝ ժողովրդական նկարիչ Հ. Կոջոյանի, Երևան, 1956, էջ 5—16։ Ժողովածուի մեջ մեզ հետաքրքրող հեքիաթները վերցված են Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» դրքերից։ Հաջորդ ծանոթագրությունների մեջ օժանդակ այս աղբյուրը համառոտության համար կոչված է՝ «Հայ ժողովրդական եկիաթներ», 1956։

«Հատընտիր նայ ժողովրդական բանահյուսություն», կազմեց Գր. Գրիգորյան, Երևան, 1956, էջ 174—190։ Մեզ հետաքրքրող հեքիաթները արտատպված են Ա. Ղանալանյանի կազմած ու խմբագրած «Հայ ժողովրդական հեքիաթների» ժողովածուից։ Հաջորդ ծանոթագրությունների մեջ այս աղբյուրը համառոտության համար կոչված է՝ «Հատընտիր նայ ժողովրդական բանահյուսություն», 1956։

«Basme populare Armene», Cartea Rusâ, 1956, էջ 7—28։ Սույն ժողովածուն պարունակում է հայ ժողովրդական հեքիաթների ռումիներեն թարգմանությունը, որ կատարել են Շտեֆանա Վելիսուր Թեոդորյանուն և Սիրակ Կսկանյանը՝ օգտագործելով Ա. Ղանալանյանի կազմած ու խմբագրած «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուն, Երևան, 1950։ Թարգմանված են ժողովածուի ոչ բոլոր հեքիաթները։ Թարգմանությունը լույս է տեսել Բուխարեստում, «Ռուսական դիրք» (Cartea Rusâ) հրատարակությամբ։ Հաջորդ ծանոթագրությունների մեջ այս աղբյուրը կոչված է՝ «Basme populare Armene», 1958։

«Հայ ժողովրդական հեքիաթների» I դրքում Տ. Նավասարդյանցը հեքիաթների տեքստերից առաջ զետեղել է չափածո մի հատված, որը հայտնի է որպես մանկական երգիծական երգ, տողատակին նշելով. «Երբեմն հեքիաթներն այսպիսի նախաբանով են սկսվում»։ Բերում ենք այդ հատվածը, որովհետև դա վերաբերում է ժողովածուի բոլոր դրքերին։

«Հե՛քաթ, հե՛քաթ պատրաստ ա,
Դաշխա քուռակ տակրա ա,
Նի՛ննեմ էքամ էրևան,
էրևանա կուտ բերեմ։
Կուտը տանեմ տամ հավերին,
Հավերն ինձ ձու-ձու տան.
Ձու-ձուն տանեմ խառադին տամ,
Խառադն ինձ մի շրվու տա.

Շրվուն տանեմ չոբանին տամ,
Չոբանն ինձ մի դառ տա.
Դառը տանեմ աստուն տամ,
Աստուծ ինձ մի աղպեր տա։
«Ա՛ղպեր, ա՛ղպեր, ջա՛ն աղպեր,
Ես սարի տակին աղպեր.
Դու բերդի տակին աղպեր.
Ջալ-ջալ կովերն ի՞նչ էլան»։
— Նախրատափին դյում էլան,
Ժումե-ժում կաթ կտան»։

2. ՈՍԿԵ ԶՈՒԿԸ

(էջ 39)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 22—27) հրատարակված տեքստի։ Տ. Նավասարդյանցը գրքի սկզբում, տողատակին դրել է մի համառոտ ծանոթություն. «Այս հեքիաթները ժողովել եմ Երևանյան նահանգում՝ Վաղարշապատ գյուղում և գրել բուն տեղական բարբառով»։ Ասացողն անհայտ է։ Հայտնի չէ նաև գրառման ստույգ թվականը, բայց պետք է ենթադրել, որ այն գրի է առնվել 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Ոսկե ձուկը» հեքիաթը թեմայով առնչվում է «Հայ ժողովրդական հեքիաթների» դիտական հրատարակության I հատորի «Հազարան բլբուլ կամ Ալո-Դինոյի նաղլը» (№ 1) և «Ղուշ-Փարին» (№ 2) հեքիաթների սյուժետներին, սակայն այստեղ սյուժեները միատարր չէ և ղուգակցվում են մի քանի այլ էպիզոդներ։

Այս հեքիաթը նախքան Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում տպագրվելը, հատվածաբար առաջին անգամ հրապարակվել է «Արարատ» ամսագրի 1881 թ. № 1 և № 2 թերթոններում։

«Ոսկե ձուկը» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», *1950, էջ 307—317։*

«Basme populare Armene», *1958, էջ 329—338։*

3. ՋԱՆ-ՓՈՂԱՏ

(էջ 50)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» III գրքում (էջ 2—42) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում նշված է՝ հայ ժողովրդական հեքիաթ։ Գրքի մեջ այլ ծանոթություն չկա, որից հնարավոր լինի տեղեկություն քաղել գրառման հանգամանքների մասին։ Բայց հավանական է, որ այս հեքիաթը նույնպես գրի է առել Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատում, 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետային գծերով ընդհանրություններ ունի ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Անա քաքավորի հեքիաթը» (№ 3), «Աբգար քաքավոր» (№ 4), «Հուրի քաքավորի ախչկա հեքիաթը» (№ 7), «Օհան որնչպարի տղի հեքիաթը» (№ 8) և մի շարք այլ հեքիաթների հետ։

«Ջան-Փոլատ» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 55—84։

«Basme populare Armene», *1958, էջ 67—96։*

4. ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՐԱՄԻ

(էջ 82)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» IX գրքում (էջ 30—48) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակին Տ. Նավասարդյանցը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Ջուլֆի», «Ուրշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը»[1], «Ադդիլակ», «Սուտ հեքիաթ» և «Քառասուն հարամի» հեքիաթները մեզ պատմել է հարգելի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանցը, որը բնիկ վաղարշապատցի է։ Աշխեն Հովհաննիսյանցը նշանավոր բանաստեղծ Հ. Հովհաննիսյանի քույրն է, որի հետ հետագայում ամուսնացել է ինքը՝ բանահավաք Տ. Նավասարդյանցը։

Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետային զարգացմամբ ընդհանուր շատ գծեր ունի ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Հուրի քաքավորի ախչկա հեքիաթի» (№ 7) և «Օհան որնչպարի հեքիաթի» (№ 6) և ուրիշ այլ հեքիաթների հետ։

5. ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 95)

Տպագրված է ըստ Նր. Լալայանի «Մարգարիտներից...» II գրքում (էջ 92—101) հրատարակված տեքստի։ Տողատակի համառոտ ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է. «Այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյանը 1913 թ. հուլիսի 19-ին, Վաղարշապատ գյուղում»։

Սյուժետային որոշ գծերով այս հեքիաթը առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ոսկե քաքուլով տղի հեքիաթին» (№ 18)։

---

[1] *Այս հեքիաթը տպագրված է Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» X գրքում* (Ս. Կ.)։

6. ԽՈՉԱՐԱՏ

(էջ 107)

Տպագրվում է ըստ Ստ. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 67—78) հրատարակված տեքստի։ Տողատակին դրված է բանահավաքի հետևյալ ծանոթությունը. «Այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյան 55-ամյա անգրագետ ժամկոչը, 1913 թ. հուլիսի 21-ին, Վաղարշապատ գյուղում» (տես № 5 հեքիաթի ծանոթագրությունը)։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝ Վաղարշապատ։

Այս հեքիաթը որոշ չափով նմանվում է ներկա հրատարակության նախորդ՝ 4 հատորի «Դավթի հեքիաթին» (№ 21)։

«Խողաբած» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 283—296։

«Basme populare Armene», 1958, էջ 303—318։

7. ԿՈՄԲԱԼ ՏՈՒ...

(էջ 121)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, դործ 2, № 21)։ Ձեռագրից պարզվում է, որ այս հեքիաթը գրի է առել, կամ այլ դրառումից արտագրել է Տ. Նավասարդյանցը։ Գրառման հանգամանքների մասին ոչ մի տեղեկություն չի հաղորդում։ Միայն հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։ Աստցողի մասին նույնպես հիշատակություն չկա։ Հեքիաթի առաջին էջում Տ. Նավասարդյանցը թողել է այսպիսի մակագրություն. «Արտագրված է տպելու համար, 11-րդ գրքում, 29 փետրվարի 1908 թ.»։ Այդ 11-րդ գիրքը, ինչպես հայտնի է, մնացել է անտիպ։ Սույն հեքիաթի արտագրված մաքուր օրինակը չի պահպանվել. ներկա հրատարակության համար հիմք է ծառայել սևագիր օրինակը, որտեղ կան Տ. Նավասարդյանցի ձեռքով կատարված բազմաթիվ ուղղումներ ու ջնջումներ։ Հեքիաթը հավանաբար գրի է առնված 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։

8. ՂԱՄԲԱՐ

(էջ 134)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 20)։ Ձեռագիր օրինակում որևէ հիշատակություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Միայն վերնագրի տակ, փակագծի մեջ

նշված է՝ արարատյան բարբառով։ Հեքիաթը գրված է Տ. Նավասարդյանցի ձեռագրով, բայց դժվար է ասել իրե՞ն՝ Տ. Նավասարդյանցի գրառումն է, թե այլ բանահավաքի գրառման մշակված արտագրությունը։ Ասացողն անհայտ է։ Հավանաբար հեքիաթը գրի է առնվել 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում, Վաղարշապատում։ «Ղամբար» հեքիաթը մտցված է եղել Տ. Նավասարդյանցի պատրաստած «Հայ ժողովրդական հեքիաթներին» հերթական 11-րդ գրքի մեջ, որը մնացել է անտիպ։

9. ՂԱՀՐԱՄԱՆ-ԲԼՈՒԹ

(էջ 145)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» VII գրքում (էջ 3—23) հրատարակված տեքստի։ Գրքում Նավասարդյանցը ծանոթություն չի թողել հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1891 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Ղահրաման-բլութ» հեքիաթը թեմայով և սյուժետային դծերով ներկա հրատարակության I հատորի «Անա թաքավորի հեքիաթի» (№ 1) տարբերակն է, գեղարվեստական-արտահայտչական որոշ նրբերանգների զանազանությամբ։

10. ԶՈՓԶԻ

(էջ 161)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 37—53) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չի տրված, որտեղից կարելի լիներ իմանալ հեքիաթի գրառման հանգամանքները։ Բայց հավանական է, որ այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթի տարբերակն է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորում տպագրված նույնանուն հեքիաթը (հավելված, № 2)։

11. ԹԱՐԽՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 175)

Տպագրվում է ըստ Ներ. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 54—66) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝ Վաղարշապատ, իսկ տողատակին բանահավաքը թողել է հետևյալ համառոտ ծանոթությունը. «Պատմեց 1913 թ. հուլիսի 20-ին՝ Վաղարշապատ գյուղում, նույն գյուղացի Մանուկ Խաչատրյան անգրագետ, 55-ամյա ծերունի ժամկոչը» (տես սույն հատորի № 5, 6 հեքիաթների ծանոթագրությունները)։

«Թարխուն թագավորի հեքիաթը» սյուժետային զարգացմամբ ու դեպքերի և էպիզոդների ընդգրկմամբ նման է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Հուրի թաքավորի ախչկա հեքիաթին» (№ 7)։

12. ՄՈՓԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 189)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 47—61) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության համաձայն այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Մոթալի հեքիաթը» բնույթով ու ոճաժետային գծով առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ջուկ տղան» հեքիաթին (№ 31), իսկ առանձին էպիզոդներով ու դեպքերով մասնակիորեն նման է նաև նույն հատորի «Մուրզի հեքիաթին» (№ 24)։

«Մոթալի հեքիաթը» նախքան «Հայ ժողովրդական հեքիաթների» I գրքում տպագրվելը Տ. Նավասարդյանցը հատվածաբար տպագրել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 3—4-ի թերթոններում։

13. ՕԽԱՅ-ԲԱԲԻ

(էջ 199)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 3—33) հրատարակված տեքստի։ Գրքում չկա ծանոթություն, որտեղից հնարավոր լիներ պարզել հեքիաթի գրառման հանգամանքները։ Բայց կասկածից դուրս է, որ այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

14. ԽՈՒԴԱՎԵՐԴԻ

(էջ 222)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։ Ձեռագրում տեղեկություններ չկան հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Վերնագրի տակ, փակագծում նշված է՝ արարատյան բարբառով։ Գրառումը Տ. Նավասարդյանցի ձեռագրով չէ. հայտնի չէ նաև, թե ով է ասացողը։ Հավանաբար այս հեքիաթը գրի է առնվել 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Այս հեքիաթը ևս մտցված է եղել Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթների» 11-րդ գրքի մեջ, որը մնացել է անտիպ։ Այս հեքիաթի գրառման տեքստի վրա կան նույն ձեռագրով կատարված բազմաթիվ ջնջումներ և ուղղումներ, որոնք բանասիրական արժեք չեն ներկայացնում, այդ պատճառով էլ չենք անդրադարձել դրանց։

15. ԳԵՂՑՈՒ ՏՂԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ

(էջ 234)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։ Ձեռագրում տեղեկություն չի տրվում հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ, միայն վերնագրի տակ, փակագծում նշված է՝ արարատյան բարբառով։ Ձեռագրից պետք է ենթադրել, որ այս հեքիաթը գրի է առել Վաղարշապատցի Գասպար Աղաղադյանը, հավանաբար 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։ Գրառման ձեռագրի վրա կա Տ. Նավասարդյանցի ձեռքով կատարված բազմաթիվ ուղղումներ ու ջնջումներ։ Այս հեքիաթը ևս մտցված է եղել Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներից» հերթական 11-րդ գրքում, որը մնացել է անտիպ։

16. ՄԵՌԵԼԻ ՀՐԵՇՏԱԿԸ

(էջ 243)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 68—81) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ։ Կասկածից դուրս է, որ այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Այս հեքիաթի թեման առնչվում է երախտիքի փոխհատուցման շուրջը հյուսված հեքիաթներին, բայց այստեղ որոշակիորեն արտացոլված է նաև ողիների մասին ունեցած ժողովրդի վաղեմի պատկերացումներն ու նախապաշարմունքները։

17. ԱՂՎԵՍԸ, ԳԵԼԸ, ԱՐՋԸ ՈՒ ՋՄՌՈՒՏ-ՂՈՒՇԸ

(էջ 254)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» II գրքում (էջ 29—37) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակին դրված ծանոթության համաձայն, այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողը անհայտ է։

Այս հեքիաթը իր բնույթով տարբերվում է ինչպես կախարդական, այնպես էլ կենցաղային հեքիաթներից։ Սույն հեքիաթի գործողությունների մեջ կենտրոնական տեղ են գրավում կենդանական աշխարհի ներկայացուցիչները, որոնք նման չեն մյուս հեքիաթների կերպարանափոխված կենդանիներին։

Այս հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունը։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 45—49։

18. ԳԱՌՆԻԿ-ԱՂՊԵՐ

(էջ 260)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 14—21) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթությունից պարզվում է, որ այս հեքիաթը գրի է առել ինքը՝ Տ. Նավասարդյանցը, Երևանյան նահանգի Վաղարշապատ գյուղում և գրել «բուն տեղական բարբառով»։ Աղբյուրն անհայտ է։ Հավանաբար հեքիաթը գրի է առնված 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Այս հեքիաթը իր թեմայով առնչվում է խորթ մոր կողմից հալածված զավակների մասին հյուսված հեքիաթներին (տե՛ս ներկա հրատարակության՝ նախորդ՝ I հատորի № 16, 17 հեքիաթները)։

«Գառնիկ-աղպեր» հեքիաթը օգտագործել և գեղարվեստական չափածո մշակման է ենթարկել Հ. Թումանյանը 1905 թ., թողնելով հետևյալ վկայությունը. «Բովանդակությունը քաղված է Տ. Նավասարդյանցի «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուից» (տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. Ա, Երևան, 1958 թ.)։

«Գառնիկ-աղպեր» հեքիաթը նախքան «Հայ ժողովրդական հեքիաթներ» I գրքում տպագրելը Տ. Նավասարդյանցը հրապարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 1-ի թերթոնում։

«Գառնիկ-աղպեր» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 109—114։

«Basme populare Armene», 1958, էջ 126—131։

19. ՀԱՐՍՆԵՐՆ ՈՒ ՏԱԼԸ

(էջ 266)

Տպագրվում է ըստ Ս. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 165—174) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հիշում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Վաղարշակ Վարդանյանը 1913 թ. օգոստոսի 22-ին, Վաղարշապատում։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետային զարգացմամբ առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ասլան թաքավոր» հեքիաթին (№ 15)։

«Հարսներն ու տալը» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունը.

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 183—192։

20. ԷՐԿՈՒ ԱՂՊԵՐ

(էջ 277)

Տպագրվում է ըստ Ս. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 117—122) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում նըշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է,

1646 - 39

որ այս հեքիաթը պատմել է Վաղարշապատցի Մանուկ Խալատյանը 1913 թ. օգոստոսի 14-ին, Վաղարշապատում (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11 հեքիաթների ծանոթագրությունները)։

21. ԱՆՋԻԳՅԱՐ ՄԵՐ

(էջ 284)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 41—43) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակի ծանոթությունից պարզվում է, որ հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակաշրջանում։ Ասացողն անհայտ է։

ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդում կա ձեռագիր մի ստվարածավալ տետր (տե՛ս գործ 1, № 2), որի խորագիրն է «Հայ ժողովրդական հեքիաթներ», 1876—1882 թթ.։ Այդ ձեռագիր նյութերի մեջ այս հեքիաթը կտրված-հանված է, մնացել է միայն գրառման վերջին մի քանի տողը։ Պահպանված գրառման այդ մի քանի տողի և տպագրվածի համեմատությունից պարզվում է, որ Նավասարդյանցը շտկումներ է կատարել, ուղղելով ու փոխելով պատմելու գործողության քերականական ժամանակը, առանձին արտահայտություններ ու ոճեր, նպատակ ունենալով մոտեցնել ժողովրդական պատումներին։

Այս հեքիաթը նախքան առանձին գրքում տպագրվելը, Տ. Նավասարդյանցը հրատարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 3-ի թերթոնում։

22. ՀԱԼԱԼԸ ՉՀԱՐԱՄՈՂ ԿՆԻԿԸ

(էջ 286)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 53—64) հրատարակված տեքստի։ Հեքիաթի գրառման հանգամանքների մասին գրքում ծանոթություն չկա։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետով առնչվում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Սուրբայի Սովդաքյարի որբու հեքիաթին» (№ 13) և «Մուխսու հեքիաթին» (№ 14)։

23. ԱՍՍՈՒ ՊԱՀԱՆՋ ԳԱՌԸ ԳԵԼԸ ՉԻ ՈՒՏԻ

(էջ 295)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» V գրքում (էջ 3—20) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծերի մեջ նշված է՝ արարատ-

յան բարբառով։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1889 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Աղացողն անհայտ է։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետով զուգադիպում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Սուրայի սովդաքյարի որթու հեքիաթին» (№ 13) և «Մուխսու հեքիաթին» (№ 14)։

24. ՄԱՐԴԻՍ ՃԱԿԱՏԻ ԳՐԱԾԸ ՉԻ ՋՆՋՎԻ

(էջ 310)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» II գրքում (էջ 38—44) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակի ծանոթության համաձայն այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Այս հեքիաթը չի կարելի անվերապահ կախարդական կամ կենցաղային համարել։ Հեքիաթի թեման՝ նախախնամության անփոփոխ վճիռը, որ սովորաբար աստծո անունով է ներկայացվում, հանդիպում է և՛ կախարդական, և՛ կենցաղային բնույթի հեքիաթներում։

25. ՖԱԼԱՔ

(էջ 315)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։ Հեքիաթի գրառման հանգամանքների մասին տեղեկություն չկա։ Պահպանվել է հեքիաթի սևագիր և մաքրագրված օրինակները։ Սևագիր օրինակի ձեռագրից կարելի է ենթադրել, որ հեքիաթը գրի է առել Գ. Աղազադյանը։ Տ. Նավասարդյանցը սևագիր օրինակի վրա կատարել է բազմաթիվ ուղղումներ և շտկումներ, և ամբողջը նորից արտագրել։ Այդ ուղղումների մի խոշոր մասը լեզվա-ոճական են, նպատակ ունենալով շտկել բանահավաքի վրիպումները և պահպանել բարբառի անաղարտությունը. մի մասը խմբագրումներ են, որոնց նպատակն է, վերացնել հեքիաթի ճապաղությունը և այլն։ Որոշակի է, որ այս հեքիաթը ևս գրի է առնված Վաղարշապատում, 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Աղացողն անհայտ է։ Տ. Նավասարդյանցի ձեռքով հեքիաթի գրառման ձեռագրի առաջին էջի անկյունում նշված է՝ «արտագրված է տպելու», իսկ հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ՝ «արարատյան բարբառով»։ Այս հեքիաթը ևս Նավասարդյանցը նախատեսել էր հրապարակել իր «Հեքիաթների...» հերթական 11-րդ պրակում, որը չի իրականացել։

Ներկա հրատարակության համար հիմք է ընդունված Տ. Նավասարդյանցի ձեռքով արտագրված մաքրագիր օրինակը, համեմատելով սևագիր օրինակի հետ։ Սակավ բացառությամբ տողատակին նշել ենք սևագիր օրինակում ուղղված կամ ջնջված արտահայտությունները, եթե դրանք որևէ հետաքրքրություն են ներկայացնում։

26. ԷՐԱՋ ՏԵՆՈՂ ԱՇԿԵՐՏԸ

(էջ 324)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» VIII գրքում (էջ 10—32) հրատարակված տեքստի։ Գրքում հեքիաթի վերաբերյալ ծանոթություն չկա, Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, 1876—1894 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

«Էրազ տենող աշկերտը» հեքիաթը բնույթով ու սյուժետով հիշեցնում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Հալվաչու հ'աշկերտը» հեքիաթը (№ 32)։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 337—350։

«Basme populare Armene», 1958, էջ 345—456։

27. ՁՈՒԹՁԻ

(էջ 341)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից....» IV գրքում (էջ 3—19) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակին դրված Տ. Նավասարդյանցի համառոտ ծանոթությունից պարզվում է, որ այս հեքիաթը պատմել է բնիկ վաղարշապատցի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանցը (տե՛ս սույն հատորի № 4 հեքիաթի ծանոթագրությունը)։ Վերնագրի տակ նշված է՝ արարատյան բարբառով։ Հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։

«Ձութչի» հեքիաթը բնույթով ու սյուժետով ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Կարապետ-բոկի հեքիաթի» (№ 35) հետ տարբերակներ են։

28. ՄԱԽՈԽԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 354)

Տպագրվում է ըստ Եր. Լալայանի «Մարգարիտներից...» II գրքում (էջ 140—147) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է, որ այս հեքիաթը պատմել է Վաղարշապատցի Վաղարշակ Վարդանյանը 1913 թ. օգոստոսի 24-ին (տե՛ս սույն հատորի № 19 հեքիաթի ծանոթագրությունը)։

«Մախոխի հեքիաթը» ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 297—305։

«Basme populare Armene», 1958, էջ 319—328։

29. ՔՈՍԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ

(էջ 363)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 20)։ Ձեռագրում ոչ մի հիշատակություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝ արարատյան բարբառով։ Այս հեքիաթը մտնում է այն անտիպ տեքստերի մեջ, որը Տ. Նավասարդյանցը պատրաստել է հրատարակելու որպես «Հայ ժողովրդական հեքիաթների» հաշորդ՝ 11-րդ պրակ։ Տետրում եղած հեքիաթների մի մասը մնացել է սևագիր՝ գրված այլ բանահավաքի ձեռագրով և Տ. Նավասարդյանցի բազմաթիվ ուղղումներով։ Ասացողն անհայտ է։ Հայտնի չէ նաև, թե ով է գրի առնողը։ Սակայն, պարզ է, որ այս հեքիաթը գրի է առնված 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Այս հեքիաթը բնույթով հիշեցնում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ուհան աշըղն ու Քոսեն» հեքիաթը (№ 30), սյուժետային զարգացման տարբեր պլանով։

30. ԱՐՋԻ ՔՈԹՈՐԸ

(էջ 379)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 2—13) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության համաձայն այս հեքիաթը գրի է առել ինքը՝ Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

«Արջի քոթոթը» հեքիաթը նախքան առանձին գրքի մեջ տպագրվելը Տ. Նավասարդյանցը հրատարակել է «Արարատ» ամսագրի 1887 թ. № 11-ի թերթոնում։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունը։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 39—44։

31. ԽՄՈՐ ՈՒՏՈՂ ԷՐԵԽԵՆ

(էջ 388)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» X գրքում (էջ 3—14) հրատարակված տեքստի։ Գրքի տողատակին դրված է հետևյալ ծանոթությունը։ «Արարատյան բարբառով սույն երկու հեքիաթը ժողովված են Վաղարշապատ գյուղում»։ Հիշատակված մյուս հեքիաթը՝ «Ուրշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը» հեքիաթն է (տես սույն հատորի № 38)։ Այս հեքիաթը ևս գրի է առել ինքը՝ Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1903 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։ Հեքիաթը սյուժետային գծով հիշեցնում է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ամիր-Շամիրի հեքիաթը» (№ 19)։

32. ՕԶԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 397)

Տպագրվում է ըստ Ր. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 123—128) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյանը 1913 թ. օգոստոսի 14-ին, Վաղարշապատում (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11, 20 հեքիաթների ծանոթագրությունները)։

33. ԻՐԵՔ ԱՂՊՐՏԻՆՔ

(էջ 403)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 43—46) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության համաձայն՝ հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը թեմայով հիշեցնում է ներկա հրատարակության I հատորի «Թամբալ տղի հեքիաթը» (№ 37), սյուժետային գծից որոշ խոտորումներով։

Նախքան «Հայ ժողովրդական հեքիաթների» I գրքում տպագրվելը, Տ. Նավասարդյանցը այս հեքիաթը հրատարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 3-ի թերթոնում։

«Իրեք աղպրտինք» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները՝

«Հայ ժողովրդական հեքիաթներ», *1950*, *էջ 461—463*։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», *1956*, *էջ 77—79*։

34. ԱՂԴԻԼԱԿ

(էջ 406)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 28—29) հրատարակված տեքստի։ Համաձայն տողատակի ծանոթության, այս հեքիաթը պատմել է ընիկ վաղարշապատցի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանցը (տե՛ս սույն հատորի № 4, 27 հեքիաթների ծանոթագրությունները)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։ Այս հեքիաթը թեմայով հիշեցնում է ներկա հրատարակության I հատորի «Էծի հեքիաթը» (№ 36)։

«Աղդիլակ» հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունը՝

«Հայ ժողովրդական հեքիաթներ», *1950*, *էջ 493—499*։

35. ՄԱՐԴ ԻՐԱ ՅՈՐՂԱՆՈՒ ԳՅՈՐԱ ՊՏԻ ՈՏՔ ՄԵԿՆԻ

(էջ 413)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» II գրքում (էջ 26—27) հրատարակված տեքստի։ Համաձայն դրքի տողատակի ծանոթագրության, այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, 1876—1882 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։ Հեքիաթի բովանդակությունը հյուսված է ժողովրդական նույնանուն առածի հիման վրա։

Սույն հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Армянские сказки», Москва, Academia, 1930 г., էջ 82—83. Перевод и примечания Я. Хачатрянца, введение М. Шагинян, рисунки художника М. Сарьяна.

Այս ժողովածուում թարգմանված մեզ հետաքրքրող հեքիաթները վերցված են Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» դրքերից և Ղ. Լալայանի «Մարգարիտների...» II դրքից։ Սույն ժողովածուն վերահրատարակվել է 1933 թ. լրացված նոր հեքիաթների թարգմանությամբ և վերջում հավելվածով՝ Ն. Պ. Անդրեևի կազմած հայկական հեքիաթների սյուժեների համառոտ ֆոլկլորային ցուցահեռներով։ Այս հեքիաթը II հրատարակության մեջ տե՛ս էջ 30—31։

Հետագա ծանոթագրությունների մեջ այս աղբյուրը համառոտության համար կոչված է «Армянские сказки», 1930, իսկ 2-րդ հրատարակությունը՝ «Армянские сказки», 1933։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 397—398։

«Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության», 1956, էջ 225—226։

«Basme populare Armene», *1958, էջ 386—387։*

36. ՍՈՒՏԱՍԱՆ

(էջ 415)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» II գրքում (էջ 43) հրատարակված տեքստի։ Գրքում հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ ծանոթություն չկա։

Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, 1876—1884 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

«Սուտասան» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Армянские сказки», *1930, էջ 84, 1933, էջ 92։*

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 395—396։

«Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության», 1956, էջ 225։

«Basme populare Armene», *1958, էջ 389։*

37. ԳԻԺ ԱՂՊՈՐ, ԽԵԼՈՔ ԱՂՊՈՐ ՆԱՂԼԸ

(էջ 416)

Տպագրվում է ըստ Ս. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 84—91) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյանցը Վաղարշապատում, 1913 թ. օգոստոսի 13-ին (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11, 20, 32 հեքիաթների ծանոթագրությունները)։

38. ՈՒՐՇԻ ՀՄԱՐ ՖՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿՐՆԿՆԻ ՄԵՋԸ

(էջ 425)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» X գրքում (էջ 15—22) հրատարակված տեքստի։ Գրքում տողատակի ծանոթության մեջ Տ. Նավասարդյանցը հայտնում է միայն, որ արարատյան բարբառով գրած այս հեքիաթները ինքն է հավաքել Վաղարշապատ գյուղում։ Հեքիաթը պատմել է վաղարշապատցի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանցը (տե՛ս սույն հատորի № 4, 27, 34 հեքիաթների ծանոթագրությունները)։ Տ. Նավասարդյանցը այս հեքիաթը հավանաբար գրի է առել 1876—1903 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 193—198։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 60—63։

«Basme populare Armene», 1958, էջ 213—218։

39. ԲԵԴՈՂՎԱԹ ՏՂԵՆ

(էջ 431)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 65—72) հրատարակված տեքստի։ Գրքում այս հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ ծանոթություն չկա։

Այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ Արարատյան բարբառով, իսկ տողատակին բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Տե՛ս «Հեքիաթների...» ե դիրք, երես 71, «Աստուն գանգատ գնացող մարդը» Լոռու բարբառով գրած»։ Հիշյալ Լոռու տարբերակը կհրապարակվի համապատասխան հատորում։

«Բեդողվաթ տղեն» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 209—214։

«Basme populare Armene», 1958, էջ 230—235։

40. ԾՆՈՂԱՍԵՐ ՏՂԵՆ

(էջ 437)

Տպագրվում է ըստ Ս. Լալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 157—164) հրատարակված տեքստի։ Հեքիաթի ծանոթության մեջ բանահավաքը նշում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Վաղարշակ Վարդանյանը, 1913 թ. օգոստոսի 25-ին, Վաղարշապատում (տե՛ս սույն հատորի № 19, 28 հեքիաթների ծանոթագրությունները)։

«Ծնողասեր տղեն» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 199—208։

«Basme populare Armene», 1958, էջ 219—229։

41. ՁՈՒՏՈՂԻ ՄԱԼԸ ՈՒՏՈՂԻՆ ՀԱՆԱԼ Ա

(էջ 447)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» I գրքում (էջ 38—40) հրատարակված տեքստի։ Համաձայն «Հեքիաթների...» I գրքի տողատակի ծանոթության, այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը, Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1882 թթ. ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Հեքիաթի սյուժետային զարգացումը հանդում է ժողովրդական նույնանուն առածի մտքին։

«Ձուտողի մալը ուտողին հալալ ա» հեքիաթը նախքան «Հայ ժողովրդական հեքիաթների» I գրքում տպագրվելը Տ. Նավասարդյանցը հրատարակել է «Արարատ» ամսագրի 1882 թ. № 2—3-ի թերթոններում։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 505—507։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 102։

42. ՓԱՀԼԵՎԱՆ ՀԵՐ ԱՐ ՏՂԱ

(էջ 450)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 56—57) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Հեքիաթի վերնագիրը տպագիր տեքստի վրա բանահավաքը փոխել է և դարձրել՝ «Հալալը հարամող, հալալը չհարամող կնանիք», հաշվի առնելով հեքիաթի քնարական նպատակադրումը։ Նպատակահարմար համարեցինք վերնագիրը թողնել նույնությամբ, ինչպես տպագիր տեքստում էր։

43. ԱՄՈՒՈՎ ՀԱՐՍԸ

(էջ 459)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IV գրքում (էջ 54—55) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

44. ԵՐՈՒՍԱՂԵՄ ԴՈՒ ԳՆԱՑԻՐ

(էջ 461)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» VII գրքում (էջ 43—48) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության համաձայն այս հեքիաթը գրի է առել Դասպար Աղազադյանը Վաղարշապատում և ուղարկել Տ. Նավասարդյանցին։ Ասացողն անհայտ է, հայտնի չէ նաև գրառման ստույգ թվականը, բայց որոշ է, որ այն գրի է առնվել 1876—1891 թթ. ընկած ժամանակամիջոցում։

45. ՀՈՐ ՏՎԱԾ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ

(էջ 465)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» VI գրքում (էջ 3—31) հրատարակված տեքստի։ Այս գրքում նույնպես Տ. Նավասարդյանցը ծանոթություն չի թողել, որտեղից հնարավոր լիներ պարզել հեքիաթի գրառման հանգամանքները։

Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառ։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1890 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը թեմատիկ ընդգրկման և սյուժետային զարգացման տեսակետից միատարր չէ. այնտեղ միաձուլված են մի քանի սյուժետներ. 1) Հոր տված երեք խրատին հավատարիմ մնալը, 2) Բեզրգյանի մոտ ծառա մտնելը և նրա կնոջ գայթակղությունից խուսափելը, 3) Անհայտ չարագործներից վիրավորված աղջկան օգնելը և հետագայում գաղտնիքը բացելը աղռավի գողացած իրի շնորհիվ։

46. ԻՆՉ ՈՐ ՑԱՆԵՍ, ԸՆ ԷԼ ԿՀՆԱՉԵՍ

(էջ 487)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» VII գրքում (էջ 36—38) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նըշված է՝ արարատյան բարբառով, իսկ տողատակին դրված է հետևյալ ծանոթությու-

նը. «Ինչ որ ցանես, ըն էլ կհնձես», «Աղքատին պաչ տվող կնիկը», «Գող հարսը» և «Երուսաղեմ դու դնացիր» առակները ուղարկել է մեզ պարոն Գասպար Աղազադյանը՝ Վաղարշապատից»։

Բացառությամբ «Աղքատին պաչ տվող կնիկը» նյութից, որը ավանդություն է՝ ամոթխած իրիցկնկա բոնիրն ընկնելու և ձուկ դառնալու մասին, մյուս նյութերը իրենց բնույթով ավելի շատ կենցաղային հեքիաթներ են, քան թե առակներ. այդ պատճառով էլ գետեղում ենք ներկա հրատարակության մեջ։

Այս հեքիաթը, ըստ Տ. Նավասարդյանցի վերոհիշյալ ծանոթության, գրի է առել Դ. Աղազադյանը Վաղարշապատում, հավանաբար 1876—1891 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

47. ԳՈՂ ՀԱՐՍԸ

(էջ 489)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» VII գրքում (էջ 42) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։ Տ. Նավասարդյանցի տված տողատակի ծանոթության համաձայն այս հեքիաթը ուղարկել է Գասպար Աղազադյանը Վաղարշապատից, որը հավանաբար գրի է առել 1876—1891 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

Այս հեքիաթը իր թեմայով ու սյուժետով տարբերակն է ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Թիթեռ մորաքույրը» հեքիաթի (№ 44)։

«Գող հարսը» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունը։

«Հայ ժողովրդական հեքիաթներ...», 1950, էջ 469—470 (հեքիաթի վերնագիրը տպագրված է՝ «Խորամանկ հարսը»)։

48. ՍԸՌ ՋՊԱՀՈՂ ԿՆԻԿ

(էջ 490)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» V գրքում (էջ 34—36) հրատարակված տեքստի։ Գրքում չկա ծանոթություն հեքիաթի գրառման հանգամանքների մասին։

Այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

49. ԱՆՋԴԱՄ ԿՆԻԿԸ

(էջ 492)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներից...» VIII գրքում (էջ 3—9) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝

արարատյան բարբառով։ Այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1894 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

50. ԸՍՆՑ ԷԼ ՉԻ ՄՆԱ

(էջ 497)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներիր...» IV դրքում (էջ 82—86) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1888 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

51. ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴ

(էջ 501)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներիր...» V դրքում (էջ 21—26) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառ։ Այս հեքիաթը գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1880 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

52. ԱՍՏՈՒ ՈՐ ՈՒՉՆԱ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՏԱ՝ ԿՐԵՐԻ ՀԵՐԴԿՈՎ ԷԼ ՎԵ ԿԱՃԻ

(էջ 505)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթներիր...» VIII դրքում (էջ 33—35) հրատարակված տեքստի։ Գրքում հեքիաթի վերաբերյալ ծանոթություն չկա։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։

Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1894 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Ասացողն անհայտ է։

53. ԹԱՄԲԱԼԸ

(էջ 507)

Տպագրվում է ըստ Եր. Լալայանի «Մարդարիտներիր...» II դրքում (էջ 79—83) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ Վաղարշապատ, իսկ տողատակին հիշվում է, որ այս հեքիաթը պատմեց 1913 թ.

Հոկտեմբերի 13-ին, Վաղարշապատ գյուղում նույն գյուղացի Մանուկ Խաչատրյանը (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11, 20, 32, 37 հեքիաթների ծանոթագրությունները)։

«Թամբալը» հեքիաթը ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 443—448։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 72—76։

54. ՍՈՒՏ ՀԵՔԻԱԹ

(էջ 513)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 49—52) հրատարակված տեքստի։ Տողատակի ծանոթության համաձայն՝ այս հեքիաթը պատմել է բնիկ վաղարշապատցի օրիորդ Աշխեն Հովհաննիսյանը (տե՛ս սույն հատորի № 4, 27, 34, 38 հեքիաթների ծանոթագրությունները)։ Գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատում, հավանաբար 1876—1902 թթ. ընկած ժամանակամիջոցում։

Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝ արարատյան բարբառով։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունը։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1956, էջ 52—54 (վերնագիրը փոխված է և դարձված՝ «Պոչով սուտը»)։

55. ՄՈՒՏԼԻԿ ԱՎԶՈՒ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 517)

Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի «Հեքիաթների...» IX գրքում (էջ 73—77) հրատարակված տեքստի։ Գրքում ծանոթություն չկա հեքիաթի գրառման հանգամանքների մասին։ Այս հեքիաթը ևս գրի է առել Տ. Նավասարդյանցը Վաղարշապատ գյուղում, հավանաբար 1876—1902 թթ. ընթացքում. Ասացողն անհայտ է։

Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։

Այս հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունները։

«Հայ ժողովրդական հեքիաթներ», 1950, էջ 509—512։

«Հատընտիր հայ ժողովրդական բանահյուսության», 1956, էջ 244—245։

56. ԻՐԵՔ ՔԱՌԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 521)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Դրականության ինստիտուտի բանահյուսական արխիվի Տ. Նավասարդյանցի ֆոնդում (գործ 2, № 21)։ Ձեռագրից պետք է ենթադրել, որ այս հեքիաթը գրի է առել Վաղարշապատցի Գասպար Աղաղադյանը, հավանաբար 1876—1908 թթ. ընկած ժա-

մանակամիջոցում։ Ձեռագիր տեքստի վրա կան Տ. Նավասարդյանցի ուղղումները։ Այս հեքիաթը նույնպես Տ. Նավասարդյանցը մտցրել է «Հայ ժողովրդական հեքիաթներին» հերթական 11-րդ գրքի մեջ, որը մնացել է անտիպ։

ՀԱՎԵԼՎԱԾ I

1. ՍՈՒՄԲԱԹԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 525)

Տպագրվում է ըստ Եր. Լալայանի «Մարգարիտներիս...» II գրքում (էջ 102—109) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծում նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հիշում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյանը 1913 թ. օգոստոսի 15-ին Վաղարշապատ գյուղում (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11, 20, 32, 37, 53 հեքիաթների ծանոթագրությունները)։

2. ԱՎԶԻ-ՕՂԼԻ

(էջ 534)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։ Հեքիաթի գրառման հանգամանքների վերաբերյալ տեղեկություններ չկան։ Գրառման ձեռագիրը սևագիր է. ձեռագրից հայտնի չէ, թե ով է գրի առնողը։ Հայտնի չէ նաև. ասացողը։ Հավանաբար հեքիաթը գրի է առնվել 1876—1908 թթ.։ Գրառման տեքստի վրա Տ. Նավասարդյանցի ձեռագրով արված են բազմաթիվ ուղղումներ, որոնց նպատակն է եղել հեքիաթի բարբառի և պատմելաձևի շեղումներն ու աղավաղումները շտկել։ Այդ պատճառով էլ հարկ չենք համարել այդ ուղղումները նշել։ Տպագրվում է ըստ Տ. Նավասարդյանցի ուղղումների։ «Ավշի-օղլի» հեքիաթը ներկա հրատարակության նախորդ՝ I հատորի «Ավշու տղի հեքիաթի» (№ 23) տարբերակն է։

3. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ

(էջ 545)

Տպագրվում է ըստ Եր. Լալայանի «Մարգարիտներիս...» II գրքում (էջ 148—156) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը նշում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Վաղարշակ Վարդանյանը, 1913 թ. օգոստոսի-

22-ին, Վաղարշապատ գյուղում (տե՛ս սույն հատորի № 19, 28, 40 հեքիաթների ծանոթագրությունները)։

Այս հեքիաթը թեմայով ու սյուժետով սույն հատորի «Հալալը չհարամող կնիկը» հեքիաթի (№ 22) տարբերակն է։

4. ՕՀԱՆԵՍԻ ՀԵՔԻԱԹԸ

(էջ 555)

Տպագրվում է ըստ Ներ. Ղալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 129—135) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակի ծանոթության մեջ բանահավաքը հայտնում է, որ այս հեքիաթը պատմել է վաղարշապատցի Մանուկ Խաչատրյանը 1913 թ. օգոստոսի 15-ին Վաղարշապատ գյուղում (տե՛ս սույն հատորի № 5, 6, 11, 20, 32, 37, 53, հավ. 2 հեքիաթների ծանոթագրությունները)։

5. ՋԱԴՈՒ ՊԱՌԱՎ

(էջ 563)

Տպագրվում է ըստ Ներ. Ղալայանի «Մարգարիտների...» II գրքում (էջ 136—139) հրատարակված տեքստի։ Հեքիաթի վերնագրի տակ, փակագծում նշված է՝ Վաղարշապատ։ Տողատակին բանահավաքը թողել է հետևյալ ծանոթությունը. «Պատմեց 1913 թ. օգոստոսի 22-ին Վաղարշապատում, նույն գյուղացի Վաղարշակ Վարդանյանը՝ քառասուն տարեկան անգրագետ մարդը, որ պարապում է մշակությամբ, իսկ առաջ եղել է դերձակ»։ (Ասացող Վ. Վարդանյանի մասին տես սույն հատորի № 19, 28, 40, հավ. 4 հեքիաթների ծանոթագրությունները)։

Այս հեքիաթը այն հազվադեպ հեքիաթներից մեկն է, որտեղ չարը չի պատժվում։ Սույն հեքիաթում Ջադու պառավը կախարդական հեքիաթների նույնատիպ հերոսների դերը չի կատարում, այստեղ նա ավելի շուտ կենցաղային հեքիաթների հնարագետ ու խորամանկ հերոսի դերում է, որը սակայն, համակրելի գծերով ու վարքագծով չի ներկայացված։

«Ջադու պառավ» հեքիաթն ունեցել է հետևյալ վերահրատարակությունը։

«Армянские сказки», 1930, էջ 216—222, 1933, էջ 235—240։

6. ԿԵՂՏԱԿԵՐ ՄԱՐԴ

(էջ 568)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։

Վերնագրի տակ փակագծի մեջ նշված է՝ արարատյան բարբառով։ Այս հեքիաթը արտագրված է Տ. Նավասարդյանցի ձեռքով և կան մի շարք ուղղումներ ու շրջկումներ։ Ասացողն անհայտ է։ Հավանաբար գրի է առնված 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։ «Կեղտակեր մարդ» կամ «Ղայիմ մարդ» արտահայտությունը այլաբանական է, նշանակում է՝ ժլատ մարդ։

7. ՀՈՒՆԱՐՈՎ ԳՈՂԵՐ

(էջ 571)

Տպագրվում է առաջին անգամ։ Գրառման ձեռագիրը պահպանվում է ՀՍՍՌ ԳԱ Գրականության ինստիտուտի բանահյուսական արխիվում (տե՛ս Տ. Նավասարդյանցի ֆոնդ, գործ 2, № 21)։ Գրառման հանգամանքների մասին տեղեկություններ չկան։ Ձեռագրից կարելի է ենթադրել, որ հեքիաթը գրի է առել վաղարշապատցի Գ. Աղազադյանը, հավանաբար 1876—1908 թթ. ընկած ժամանակամիջոցում։ Հեքիաթի ձեռագիր տեքստի վրա կան Տ. Նավասարդյանցի կատարած ուղղումներն ու շտկումները։

ՀԱՎԵԼՎԱԾ II

(էջ 574)

Սույն հավելվածում Վաղարշապատ գյուղի խոսվածքի համար որպես օրինակ բերված է «Հոր տված իրեք խրատը» հեքիաթը (Տ. Նավասարդյանց, «Հեքիաթներ...» VI գիրք, էջ 3—31, սույն հատորի № 45)։ Հեքիաթի տեքստում Տ. Նավասարդյանցը հետևողականորեն պահպանել է արարատյան բարբառի շեշտադրությունը։ Բաղաձայնական սիստեմի հնչական-արտասանական փոփոխությունները Տ. Նավասարդյանցը մասամբ է պահպանել։ Սույն օրինակի մեջ հնարավոր չափով աշխատել ենք վերականգնել խոսվածքի արտասանական յուրահատկությունները, օգտագործելով Տ. Նավասարդյանցի արխիվային ֆոնդերում եղած գրառումների լեզվական փաստերը։

ԲԱՌԱՐԱՆ

(էջ 629)

Բառարանի մեջ տրված են այս հատորում հանդիպող բարբառային դժվար հասկանալի բառերի, ոճերի ու դարձվածքների, ինչպես նաև օտար և փոխառյալ բառերի բացատրությունները։


Բառերի ու արտահայտությունների բացատրության ժամանակ նկատի է առնված սույն հատորի տեքստերում պարունակող իմաստն ու առումը։ Եթե նույն բառը կամ ոճը հեքիաթներում ունի մի քանի առումներ ու իմաստային տարբերություններ, ապա այդ բառի բացատրության տակ տրվում են տարբեր իմաստները։ Կան

բառեր ու արտահայտություններ, որոնք փոխաբերական մտքով են օգտագործված, այդպիսի դեպքերում բառի բացատրությունից առաջ նշվում է՝ փխբ.:

Բառերը, ձևերն ու դարձվածքները բառարանում տրված են այբբենական կարգով, հաշվի առնելով պատումների մեջ պահպանված հնչումն ու տառադարձությունը: Երբեմն, բառին կից տրվում է ավյալ բառի հնչունափոխված կամ տառադարձված այլ ձևը:

Բառարանում օգտագործված են նաև հատորի տողատակերին դրված բանահավաքների բացատրությունները, երբեմն ընտելով ու լրացնելով դրանք: Շատ սակավ պատահում են բառեր ու արտահայտություններ, որոնք նեղ, տեղական բնույթ ունեն և դժվար է տալ դրանց ստույգ մեկնությունը. բառարանի այդպիսի բառերի դիմաց նշվում է՝ անստույգ, և կցվում հավանական ենթադրական բացատրություններ: Հատուկ անունները և մի շարք կենցաղային, ծխական, առասպելական և այլ տիպի երևույթներ ու առարկաներ արտահայտող բառերի բացատրությունները մանրամասնորեն չեն տրվում, հաշվի առնելով, որ դրանք բացատրվելու են տվյալ բնակավայրի հնքիաբններն ամփոփող վերջին հատորի անվանական և առարկայական ցանկերում:

Սույն բառարանը պատրաստելիս հիմնականում օգտագործել ենք Տ. Նալբանդյանցի «Բառգիրք արարատյան բարբառի» (Տփխիս, 1903 թ.) և Սահակ վարդապետ Ամատունու «Հայոց բառ ու բան» (Վաղարշապատ, 1912 թ.) աշխատությունները: Մասնակիորեն օգտագործել ենք նաև Հրաչյա Աճառյանի «Հայերեն գավառական բառարանը» (Թիֆլիս, 1913 թ.), Ստեփանոս Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանը» (Երևան, 1944 թ.), ինչպես և տաճկերենից—հայերեն, պարսկերենից—հայերեն և մի շարք այլ բառարաններ ու բառացանկեր:



Զուլեյխա

Բունարի



ԲԱՌԱՐԱՆ[1]

Ա.

Ա.բասի—*բան կոպեկանոց արծաթե դրամ։*
Ա.բուռ—*ամոթ, պատկառանք։*
Ա.դար—*սովորություն։*
Ա.դամորդի—*մարդ։*
Ա.զատել—*ծննդկանին փրկել, ծնունդն ընդունել։*
Ա.զատվել—*ծնել, ծննդաբերել։*
Ա.զատ—*ամուրի։*
Ա.զի—*մայր, մայրիկ։*
Ա.ժենալ—*արժենալ։*
Ա.լաճի—*անադ, առանց աղի, աղը պակաս։*
Ա.լապտորակ—*նապաստակ*
Ա.լրիալը—*խակույն։*
Ա.լեի-մալեի—*եղած-չեղածը, ընդամենը։*
Ա.լեկոծում—*ալեկոծություն, փոթորիկ։*
Ա.լիր—*այլուր։*
Ա.լմազ (ալմաստ)—*ադամանդ, որպես ածական նշանակում է՝ սուր։*
Ա.լչախ—*վատ, ստոր, անարգ։*
Ա.լչու—*վեդի կեռմանաձև փոս ընկած կողմ, փխբ. հաջողակ։*
Ա.լուստի—*խակույն։*
Ա.խամախ—*հիմար։*
Ա.խպերտիեմ—*եղբայրներ։*
Ա.խպեր-տղություն—*ընկերություն։*
Ա.խտել—*հաղթել։*
Ա.խտուշարբ անել—*պայմանավորվել, խորհրդակցել։*
Ա.խրը—*վերջը, վերջ ի վերջո։*
Ա.ծել—*նվագել։*
Ա.ծիլ տալ—*նվագել տալ։*
Ա.կը տալ—*ստուգել, նայել, տեղեկանալ։*
Ա.կուշկա—*պատուհան, լուսամուտ։*
Ա.հաչոր ըլլել—*սաստիկ վախենալ։*
Ա.ելի—*ծեր, տարիքավոր։*
Ա.ղա—*հարուստ, տեր։*
Ա.ղամ—*առաջ, առջև։*
Ա.ղզա—*անցք, բացվածք, դուռ։*

---

[1] *Բառարանի վերաբերյալ բացատրական տեղեկությունները տե՛ս ծանոթագրությունների մեջ (էջ 649)։*

Աղլուխ—*թաշկինակ։*
Աղոթարանը բացվել—*լուսաբաց։*
Աղու—*թուլն։*
Աղունիկ—*աղավնի։*
Ամալ-աջալ—*վերջ, վախճան։*
Ամակ—*երախտիք, խնամք։*
Ամակատար—*երախտավոր, երախտիք ունեցող։*
Ամանաք—*ավանդ, պահ տված։*
Ամարաք—*ապարանք, պալատ։*
Ամբար—*շտեմարան։*
Ամի—*հորեղբայր։*
Այբեջար—*անկարող, անհաջող, անճոռնի։*
Այճոյին—*մանր-մունր, չնչին բան։*
Այճումն ընկնել—*աչքի առաջ ունենալ, ուշադրություն դարձնել։*
Անեղ—*գզրարի աղեղնաձև գործիք, որի լարին թակով խփելով գզում են բուրդ, բամբակ, աղեղ։*
Անզգամ—*անամոթ։*
Անըմ—*անուն։*
Անըմը կտուրվել—*համբավից ընկնել, վարկաբեկվել, անվանարկվել։*
Անըմով—*հայտնի, նշանավոր։*
Անբոց—*թոնրի կրակը խառնելու ձող։*
Անիսաֆ—*անգութ, անխիղճ։*
Անծերը—*ամենավերջը, ամենավերջին ծայրը։*
Անկաչ անել—*լսել, հնազանդվել։*
Անկարծ—*հանկարծ։*
Անծող—*ածուխ, փայտածուխ։*
Անղալատ (անկալատ)—*ընտիր, անթերի, անփորձանք։*
Անոշ (անուշ)—*քաղցր, հաճելի։*
Անջախ (անջաղ)—*հազիվ հազ, վերջապես։*
Անսաս—*անձայն, լուռ։*
Անվիրի-վիրի տեղ—*ամայի, անմարդաբնակ տեղ։*
Անտակ—*տակ՝ հատակ չունեցող, անհատակ, շատ խոր։*
Աշխատով միճ ըլնել—*1. տաքածվել, հայտնի դառնալ 2. Շատ ուրախանալ։*
Աշկերտ—*աշակերտ (արհեստավորի)։*
Սշմիշ ըլնել—*թուլել իջնել, անցնել։*
Աշշի—*խոհարար։*
Աչ—*բաժին, մաս։*
Աչերիցը վեր ածել—*արտասվել, լաց լինել։*
Աչիր կպցնել—*ննջել, քնել։*
Աչիր մննել—*աչքը մտնել։*
Աչիր ջուր դառնալ—*շատ սպասել։*
Աֆալ—*վերջ, վախճան, օրհաս։*
Առաջնեկ—*առաջին զավակ։*
Առարկա—*առակ, պատմություն։*
Ասլաճ—*առյուծ։*
Ասպար (ասպապ)—*զենք։*
Ասպարավորված—*զինված։*
Ասսու աչիր վրեճ խաղցրանալ—*ծանր վիճակից, նեղությունից ազատվել։*
Ասսու էրեսից բախած (ընկած)—*շար, անօրեն, լիրբ։*
Ասսու սիրուճ—*աստծու սիրո համար, եթե աստված կսիրես (մեկից մի բան խընդրելու, կամ քաղցր լեզվով հետը խոսելու բանաձև)։*
Ավ—*որս։*
Ավալ—*առաջ, նախ, ամենից առաջ, հին։*
Ավալախիր—*սկիզբն ու վերջը, փխր. անցյալը, կյանքի պատմությունը։*
Ավլատ—*զավակ։*
Ավղուշ—*1. որս, որսի (թռչուններ), 2. թռչնորսություն։*
Ավչի—*որսորդ։*
Առեժ (էտաժ)—*հարկ։*
Առեճեճեճեխ (առեճլվիկ, առեճկոլոլ)—*արյունաթաթախ, արյունաշաղաղ։*
Արիճը առճել—*վրեժը հանել։*
Արխեիճ—*հանդիստ, միամիտ։*
Արճիճ—*կապար։*
Արջա ընկճել—*հայտնվել, լույս ընկնել։*
Արևի ձեճճ ածել—*ապրել, կյանք վայելել։*

Ախալ-թախալ—շտապով, հապճեպ
Ախսոս գալ—ափսոսալ
Ափու—հայր, հայրիկ

Ամաշ—կավե հաստափոր աման, որի մեջ պահում են պանիր, ձուկ
Աֆարիմ—կեցցես, ապրես

Բ

Բաբի—ծերունի, պապ (ասում են օտարականներին)
Բաղամ—նուշ
Բադիա—պղնձե խոր աման
Բազար—շուկա
Բազմանդ—ապարանչան, բազկակապ
Բաժինէ—օժիտ
Բալա—1. զավակ, 2. ցավ
Բալանիէ—բանալի
Բալի—դուցե
Բալկոն—պատշգամբ
Բալուլ—խանձարուր, նորածին մանկան փաթաթելու շորը
Բախլել—նախանձել
Բախչա (բաղչա)—պարտեզ, բանջարանոց
Բախտին էար էցել—բախտավորություն խանդարել, վնաս պատճառել
Բաղ—այգի
Բաղդադի—գլխաշոր, գլխի ծածկոց
Բաղմանշի—այգեպան
Բամբաշել—ձեռքի բաց թաթով հարվածել
Բանդ անել—կապել
Բանդ ըլնել—1. դանդաղել, հապաղել, 2. մնալ, կապնվել-մնալ
Բանել—աշխատել
Բանը բուրդ ըլնել—վատ դրության մեջ լինել, վիճակը վատանալ
Բանֆոզի անել—սպանել
Բաշարել—կարողանալ, հաջողությամբ կատարել
Բաշտան—պես, հենց սկզբից
Բաս—1. դրազ 2. դեպք, դիպվածք, պատահիք

Բաւր—պատուհ, բերդ
Իար'աշողըմ—ողջույն, բարի հաջողություն
Բարեբար—հավասար
Բարխանա—կահ-կարասի, տնային իրեր
Բարձով-տեղով բեէ ընկնել—հիվանդանալ, պառկել
Բարութ—վառոդ
Բերախտ—անբախտ
Բեդովլաք—անպետք, փուչ, անառակ
Բնգրգյան (բազրգյան)—առևտրական (ղեկտի, կտորի)
Բեթար—ավելի վատ, վատթար
Բեխաբար—անտեղյակ, խայտառակ
Բեղաֆիլ—հանկարծակի
Բլյին—ուղեղ, խելք
Բլյինը մենել—հասկանալ
Բիջարել—մշակել, խնամել
Բիրան—փոխ. հատ, անգամ
Բիրանի գալը—կարծիքը,
Բիրանին գալ—հանդիմանական խոսքերով մեկի բերանը փակել, լռեցնել
Բիրանին չիր չի բրշվի—անդադրնապահ է
Բեհարա—անպետք
Բժուր—կավե փոքրիկ աման, պուլիկ
Բիլակ—բազուկ
Բլնձա—ծերունի, տարիքով մարդ
Բիրադի—բոլորը, ամենքը
Բիրդան—հանկարծ
Բլրոզ—սոխակ
Բլել—թարախալից ուռուցքը պատռել
Բնամ գալ—առաջանալ, բուսնել
Բնիր—ցից

Բլուղ (բղղղ)—*կավե աման, որտեղ յուղ, կաթ, մածուն են լցնում։*
Բմբուլ—*փետուր։*
Բնակալել—*տուն ու տեղ դառնալ, հաստատվել։*
Բշտել—*1. բշտիկ առաջանալ։ 2. հրել, հրմշտել, գրդռել։*
Բոլ—*շատ, բավական։*
Բոլքի տալ—*թրև գալ, թափառել։*
Բոլուկ—*խումբ։*
Բողչա—*կապոց։*
Բոյախանա—*ներկատուն։*
Բոյ-բուսաք—*հասակ ու տեսք։*
Բոնձ—*կոտրած ամանի մի մասը։*
Բոնձ անել—*փխբ. սպանել։*
Բոշ—*թույլ, ազատ։*
Բոխոն—*բոլորակ՝ կլոր հաստ հաց։*
Բռնավոր—*բանտարկյալ։*
Բռախել—*արձակել, ազատ թողնել։*
Բրիշակ—*ավերակ։*
Բրդուճ—*պատառ, մաս, կտոր։*
Բուբու—*բու։*
Բուբա—*1. երազում տեսած սիրահար, սիրեկան, սիրուհի։ 2. պաշտելի, սիրելի։*
Բուբիլ—*շիշ։*
Բուխարի—*պատի մեջ շինված վառարան, որի կամարանման բերանը միշտ բաց է լինում։*
Բուսուն պահել—*ծածուկ մեկին հետևել, դարան մտնել, լրտեսել։*

Գ

Գիչմ—*կեպարանք։*
Գեննովը տալ (գետնովը տալ)—*վայր գցել։*
Գըմվել—*անհետանալ, կորչել։*
Գիղիջըղ—*կեցցե՛, ապրի՛։*
Գիլա—*1. խաղողի առանձին հատիկ։ 2. աչքի բիբ։*
Գլխել—*գերազանցել։*
Գլխի վրեն մոլորած մնալ—*գլուխը կորցնել՝ շփոթվել, մոլորվել։*
Գլխին-ոտին անել—*կոծել, լալ, ողբալ, սգալ։*
Գլխիցը ձեռ վեր ունել—*մահը աչքն առնել՝ նպատակին հասնելու համար։*
Գլուխ—*փխբ. 1. սկիզբ, 2 անգամ, 3. առաջնակարգ։*
Գլուխը գլել—*գլուխը յուղել՝ համոզելով խաբել։*
Գլուխը վայ տալ—*սգալ, փոշմանել։*
Գլուխ վե բերել—*խոնարհվել։*
Գլուխ տանել—*ձանձրացնել։*
Գյադա—*1. ծառա, 2. խնդճ, նվաստ։*
Գյալաջաղ—*գալիք։*
Գյամ—*սանձ։*
Գյամի—*նավ, նավակ։*
Գյամչի—*նավարար։*
Գյոզալ—*գեղեցիկ, թանկագին։*
Գյոլ—*լիճ, լճակ։*
Գյորա—*համեմատ, չափ։*
Գյուգյում—*մետաղյա սափոր։*
Գյուլաբաթին—*ոսկեթել, ոսկեհուռ (ժապավեն)։*
Գյուլլա—*գնդակ (հրացանի)։*
Գյուլլի բաղ—*առասպելական այգի, ուր անմահական ծառ է բուսնում, ծաղկանոց։*
Գշերով-գշերհանա—*առավոտյան վաղ արշալույսին։*
Գաբուլ—*դագաղ։*
Գուրսել (գորսա տալ)—*ծեծել։*
Գոմի խարը վեր ածել—*համաձայնել, չհամառել, զիջել։*
Գրվանճա—*ծանրության չափ՝ 400 գրամ։*
Գուրզ—*գնդաձև, երկաթագամ գլխով և կարճ բռնակոթով սառը զենք։*

Դ

Դագա—*հյուղ, վրան։*
Դաղարկուն ընկնել—*փախստական լինել, հնռանալ, տեղ ու դադար կորցնել։*
Դալալ—*մունետիկ։*
Դալի—*դիժ, ծուռ։*
Դաղդան-դաշտան—*աղբից-քարից։*
Դաղդռոիկ ածել—*դաղել, սատկիկ ծեծել, կսկծեցնել։*
Դամաղ—*քիմք։*
Դամաղ խաշել—*փխր. լավ տրամադրության մեջ լինել։*
Դաստախուն—*սփռոց։*
Դավա—*ուղտ։*
Դավի—*վնճ, կռիվ։*
Դավաբեռ—*ուղտաբեռ։*
Դավուլ—*թմբուկ։*
Դատում—*աշխատանք, վաստակ։*
Դարտ (դարդ)—*վիշտ, ցավ։*
Դարդավարամ ըլել—*վշտերով ծանրաբեռնվել, վշտից հիվանդանալ։*
Դաւսըվորել—*դարձվոր դառնալ՝ պլլանդակվել։*
Դաւ ման—*1. հարդ, 2. բժշկություն։*
Դաւրվազա—*դարպաս։*
Դափ—*թմբուկ։*
Դհ դապետ—*հիվանդի սրտատւղելիք։*
Դեղ ու դիր աճել—*բուժել, առողջացնել։*
Դեմ ընկնել—*արդելքի հանդիպելով կանգ առնել, դեմ առնել։*
Դեյին—*որովհետև։*
Դեհ—*հրճակայական գազան՝ հնքիաքնների մեջ։*
Դզել—*ուղղել։*
Դըրբ—*հարվածե. անգամ։*
Դիլիմ—*շերտ, կտոր։*
Դին—*կողմ։*
Դինջ—*հանգիստ, անդորր։*
Դինջանալ—*հանգստանալ։*
Դիվան—*դատաստան, դատարան։*
Դիվաղաբար անել—*անհանգստացնել։*
Դիմ—*բարձրություն, բլուր, զառիվեր։*
Դիա—*ավելի։*
Դմբռնիկ—*դեր, փափլիկ։*
Դյուզգան—*հարթ, արձակ։*
Դյունիա (դունյա)—*աշխարհ։*
Դոլվար—*ունեցվածք, հարստություն։*
Դռնում—*անգամ։*
Դոշ—*կուրծք։*
Դաշակ—*նևրքնակ։*
Դոստ—*բարեկամ։*
Դոստանալ—*մտերմանալ, բարեկամանալ։*
Դովրան—*ժամանակ։*
Դովրան խաշել—*ժամանակ անցկացնել։*
Դոր—*հերթ։*
Դորակ—*ջրի փոքրիկ կուժ, փարչ։*
Դռնաղ—*ամրակ։*
Դվո՞ր—*ո՞րտեղով, դնպի ո՞ր կողմը։*
Դուզ—*դաշտ, հարթավայր։*
Դուշման (դյուշման)—*թշնամի։*
Դուշմանաւար ըլնել—*թշնամուց վնասվել։*
Դռւռում—*պատառ։*
Դուռը շինել—*դուռը փակել։*
Դուս ածել—*արձակել։*
Դուս ընել—*դուրս դնալ՝ բնական կարիքը հոգալ։*
Դուխան—*խանութ։*

Ե

Եզին—*արագ։*
Եղ ըցող—*ծնող։*
Եղի—*ուշ։*
Երիմ (երըմ)—*որբ։*
Ելման—*առագաստ։*
Եղ—*յուղ։*

Եմ—*կեր, ուտելիք*։
Եմակ—*տե՛ս եմ*։
Եմիշ—*սեխ*։
Եննա—*հետո*։
Եննուց—*հետևից*։
Եոալ—*շարժվել*։
Եո ու էոր—*խիստ քոր, քերվուքս*։
Եսի՞մ—*ես ի՞նչ իմանամ, չգիտեմ*։
Եսիր—*գերի*։
Ետ ընկնել—*հղիանալ*։
Երեսիցը կախ ըլնել—*սաստիկ զզվեցնել, որևէ բան խնդրելով*։
Երեսնարէ—*երես, դեմք, դիմագծեր*։
Երըմիշ ըլել—*քայլել, առաջ գնալ*։
Երլիկ (երդիկ)—*հին տների տանիքի այն բացվածքը, որ ծառայում էր իբրև լուսամուտ և օդահան*։
Երկնրի աստղերի հեննա խաղալ—*առաջնակարգ, լավագույն, հրեղեն*։
Եմա—*մեծ, ահագին*։

Զ

Զաթի—*հենց, մանավանդ*։
Զաճար—*թույն*։
Զանլա տանել (գեալ)—*զզվեցնել, զզվել*։
Զաղա—*քարայր, այր*։
Զաճանլի—*սիրուն, գեղեցիկ*։
Զանգու—*տե՛ս օրզանգուե*
Զանգուլակ—*գանգ, բոժոժ*։
Զանհաչ—*զոքանչ*։
Զառրար—*մեծաքար*։
Զավդ (զավբ) ըլել—*զսպվել, հետ պահվել*։
Զաղ—*բան*։
Զարգար—*ոսկերիչ*։
Զարզանդել—*սարսափել, վախենալ*։
Զարպ (զարբ)—*հարվածք, թափ, ուժ, զորություն*։
Զերզամբի—*ներքնատուն, նկուղ*։
Զըրխ—*զրահ*։
Զիաճ—*վնաս*։
Զիլ—*շատ, խիստ, սաստիկ, սուր, բարձր*։
Զնդան—*1. բանտ, 2. սալ (դարբնոցի)*։
Զնջիլ—*շղթա*։
Զոռ—*ուժեղ*։
Զոռել—*հաղթել*։
Զոռով—*ստիպմամբ, ուժով*։
Զոռով-գյուջով—*հազիվ-հազ*։
Զվիր բերել—*1. սարսափ ձգել, 2. ձանձրացնել*։
Զրից—*զրույց*։
Զուլում—*1. ուժեղ, 2. պատուհաս*։
Զուլումխյար—*ահավոր, սարսափելի*։

Է

Էբալ—*գնալ*։
Էբիբար—*վարկ, երախտիք, հավատարմություն*։
Էճ էրեսը—*հակառակ կողմը*։
Էճ բաշտեճ—*առավոտյան շուտ, արշալույսին*։
Էշխ—*հոանդ, փափագ, սեր*։
Էր—*այր, քարայր, քարանձավ*։
Էրեսը պարզ անել—*արդարացնել հույսը*։
Էրկու անել—*կիսել*։
Էրկու դռնից մի դուռը բաց անել—*օգնություն հասնել, նեղ տեղից փրկել*։
Էրկուֆոգիս—*հղի*։
Էրճակ—*երանի*։
Էտաժ—*հարկ*։
Էփեջա—*բավականին*։
Էգսի—*մյուս, հաջորդ*։

Ը

Ըղար (ըղդար)—այդքան, այդչափ։
Ըզդար—այսքան, այսչափ։
Ընդար—այնքան, այնչափ։
Ընդիան—այն տեղից։
Ընչանէ—մինչև։
Ընկատ—պահարան։
Ըսկի—բոլորովին։
Ըստեռանէ—այս տեղերը։
Ըստոնէ—սրանք։
Ըտի (ըտե)—այդտեղ։

Թ

Թարաուուկ—ապաշնորհ, անպետք, ղռվելիք։
Թաղաւեէ—պատրաստություն։
Թազա—նոր։
Թազաղան—նորից։
Թազի—շուն։
Թաթաշոր—նորածնի ձեռքերը փաթաթելու շոր։
Թալակ—որոգայթ, թակարդ։
Թախկուն—սանրելու ժամանակ թափված մազերը, թնջուկ։
Թախտ—գահ, աթոռ։
Թաիր—կերպ, տեսակ։
Թամահ—ցանկություն։
Թամամ—լրիվ, ուղիղ։
Թամաշ անել—նայել, հանդիսատես լինել։
Թամբալ—ծուլ։
Թամբահ անել—պատվիրել, հանձնարարել։
Թամմել (թամըմել)—լրանալ։
Թամմ—թամբ։
Թամուզ—մաքուր։
Թայ—1. հակ, բնո, կապոց, 2. համապատասխան, հավասար, զույգից մեկը։
Թայդաշ—ընկերակից, հասակակից։
Թաշախուստ ծախել—նազկտալ, չմուշում անել։
Թաուլան—բազե, փխբ. զեղեցկուհի։
Թաս—գավաթ։
Թավա—կոթսավոր բոլորշի աման, տապակ։
Թավլա—գոմ (ձիերի, էշերի համար)։
Թավլաբաշի—խոռոչապետ։
Թավուր—կերպ, տեսակ։
Թաւեէ—տան պատի վրա տախտակից շինած առանձին սարք՝ զանազան մանրմունր բան դարսելու համար։
Թար-թամըզացնել—մաքուր, մաքրել։
Թարխը տալ—շրշվել, ձև ցույց տալ։
Թարս—հակառակ։
Թարէ—գավակ։
Թարը հաշել—ձին հեծած ժամանակ մեկին գավակն առնել։
Թափա—բարձունք, զագաթ։
Թափան—փորոտիք։
Թաք—միայն։
Թաքիլա—միայն թե։
Թաքլի (թաքլա)—տե՛ս թաքիլա։
Թերոել—փետրել, փխբ. ծեծել։
Թե դրել ես՝ առի տար—չկա, անհայտացել է, մեռել է։
Թեշի—թել մանելու գործիք, իլիկ։
Թեշտ—լվացքի աման։
Թեպուր—փետուր։
Թեմ ընկենել—պառկել։
Թլսորել—խաբել։
Թիքեն—անասունների չորացած աղբ, որ դաշտերից են հավաքում։
Թիկունդ գեննիե մաշի—(անեծք) մեռնես։
Թիմարել—ձիուն հարդարել, խնամել, քերիչով մաքրել։

Թխփի—*ձնախառն քամի, բուք*։
Թխ֊ա—*պատառ, կտոր*։
Թլիսմ—*կախարդանք, կախարդական իր, հուռութ*։
Թոզ ու դուման—*փոշեխառն քամի*։
Թոլ ըլնել—*գլորվել*։
Թոլը տալ—*խաբել, համոզել*։
Թոնբոի տալ—*խաղալ, թռչկոտել*։
Թոնբոռալ—*քրթմնջալ*։
Թոռ—*ուռկան*։
Թոռչի—*ձկնորս*։
Թոփ—*կաշպոց, հակ*։
Թոփալ—*ոտքից կաղ*։
Թոփ ածել—*հավաքել*։
Թվաճ—*հրացան*։
Թրիշա—*կտոր, կաթիլ, նշույլ*։
Թուբուճ—*ծխախոտ*։
Թուլա—*շան ձագ*։
Թուլուխ—*1. տիկ, 2. միզափամփուշտ*։
Թուշ—*այտ*։
Թուշ ածել—*ուղղություն վերցնել, շարժվել*։
Թուշ ըլնել—*հանդիպել, պատահել*։
Թուջար—*վաճառական*։
Թուխ ու մուխը կպչել—*սաստիկ ծարավել, պապակվել*։
Թխածը չլիզել—*խոսքը կատարել, տված խոսքից չհրաժարվել*։

Ժ

Ժաժ գալ—*շարժվել, երկրաշարժ լինել*։
Ժամ—*եկեղեցի*։
Ժեջտել—*թիթեղապատել*։
Ժեջիլ—*տե՛ս ղնջիլ*։
Ժուամ—*անգամ, պահ*։

Ի

Իբրուղ—*պղնձե ջրածիկ*։
Իզ—*հետք*։
Իզակորուսա ածել—*հետքը կորցնել*։
Իզին տալ—*թույլտվություն, իրավունք տալ*։
Իլ—*եղիր*։
Իլլաֆիմ—*մանավանդ, հատկապես*։
Իլլաջ—*հնար, միջոց*։
Իլխի—*ձիերի ջոկ, երամակ*։
Իլխըշի—*ձիապած*։
Իմ միս կարողին ոսաստ չգա—*թշնամուս անգամ այդպիսի բան չպատահի*։
Ինադ—*վրեժ*։
Ինադ ածել—*հակառակվել, կամակոր դառնալ, համառել*։
Ինամ (իմած)—*հավատ*։
Ինձ էցել—*ինձ հարցնել*։
Ինս—*կենդանի արարած*։
Ինս ու չինս—*կենդանի շունչ*։
Ի՞նչ ես, չի՞ես ես—*մարդ ե՞ս, կենդանի ե՞ս*։
Իշտաճ—*ախորժակ*։
Իշկիլ—*պատկեր*։
Իսաճ—*մարդ, արարած*։
Իսկը—*ճիշտ որ, իսկույն*։
Իսաֆ—*խիղճ, գութ*։
Իստակ—*մաքուր*։

Լ

Լափան—*կոնք։*
Լազար—*համ, հանուլթ, բավականություն։*
Լազարին—*լավ, հանուլթով, ճաշակով։*
Լալ—*1. համր 2. բանկադին քար։*
Լալաշկ—*լաց, աղաղակ։*
Լալմիշ ըլլել—*անհանդստանալ, տանջվել։*
Լախտամ—*պայթեցում։*
Լամբար—*խարխախ, շղթա, օղակ։*
Լայաղ—*վայել, արժանի։*
Լաշակ—*գլխաշոր, շղարշ։*
Լաշառ—*անամոթ, լկտի (կին)։*
Լափ—*բոլորովին, ամբողջական։*
Լաֆա—*բիծ։*
Լիլվել—*հագնվել մի բանից։*
Լեղին պատռվել—*սաստիկ վախենալ։*
Լեմս—*դերմանացի։*
Լիրդ ու շիգարը էրել—*փխբ. վշտացնել։*
Լիդր (լիտր)—*ծանրության չափ, մոտ 5 կգ։*
Լիզվավորվել—*խոսել սկսելը, մարդկային լեզվով խոսելը։*
Լիսե էրեսից կաթալ—*շատ սիրուն լինել։*
Լիսվելիս—*լուսադեմին մոտ։*
Լիս ու ճար աներ—*օգնության հասնել, օգնել։*
Լոդմա—*բժիշկ։*
Լոզել—*կեղտոտել, քսելով կեղտոտել, ապականել։*
Լոմ—*քայլ։*
Լոմ տալ—*ցատկել։*
Լուլուկուլ ըցել—*ագահաբար խմել, հարբել։*

Խ

Խաբար—*լուր, տեղեկություն։*
Խազինա—*դանձ, հարստություն, դանձարան, դրամատուն։*
Խաթա—*փորձանք։*
Խաթարալա—*դժբախտություն, անհաջողություն։*
Խաներ—*1. ի պատիվ, 2. համար։*
Խաբր—*տես՝ խաբեր։*
Խալ—*բիծ, նշան մարմնի վրա։*
Խալաթ—*պարզև, նվեր։*
Խալիս—*մաքուր, անխառն։*
Խաղ ու խայտառակ աներ—*անպատվել, անարգել, ծաղրուծանակի ենթարկել։*
Խալխ—*ժողովուրդ, բազմություն, փխբ. օտար։*
Խամ—*անփորձ, անմշակ հող։*
Խային—*չարամիտ, նենգ, ծուռ։*
Խան—*իջևանատեղ։*
Խանչալ—*դաշույն։*
Խաշիլ—*ալյուրից կամ ձավարից եփած կերակուր։*
Խաշլամա—*եփած միս։*
Խառադ—*հյուսն, առաղձադործ։*
Խասիաթ—*բնավորություն։*
Խար—*որդ։*
Խարաբա—*ավերակ։*
Խարաբ աներ—*փչացնել։*
Խարաբ ըլլել—*փչանալ։*
Խարջ—*ծախս, հարկ։*
Խարջել—*ծախսել։*
Խարջլըղ—*ծախսելու փող։*
Խելմամաղ ըլլել—*ապշել, զարմանալ։*
Խելքը էթալ—*հիանալ, սքանչանալ, ոմայլվել։*
Խեյրաթխանա—*1. անկելանոց, 2. ժողո-*

վարան, ուր հավաքվում են պարապ մարդիկ և ժամանակ անցկացնում։

Խեր—*օգուտ, վաստակ։*

Խեցատ—*խեցի։*

Խելվլալ—*շարժվել։*

Խի՞—*ի՞նչու։*

Խիզան—*կին։*

Խմորակեր—*փոքր։*

Խոլեր (խոլերա)—*մաղձախտ (հիվանդություն)։*

Խոլվաք—*հանդիստ, անդորր, թաքուն։*

Խոլվաքացնել—*դատարկել, ազատել։*

Խոնչա—*փայտից պատրաստած մատուցարան։*

Խոնչա շինել—*բաժին (նաև ուտեստ) պատրաստել, հարսանիք կամ ծննդկանի մոտ գնալիս։*

Խոշ ու բեշ անել—*զրույց անել, սիրաբանել։*

Խոջով—*սիրով, համերաշխությամբ։*

Խոսմերն իրար եասնել—*վեճի բռնվել, բանավիճել։*

Խոսմ կապել—*պայմանավորվել։*

Խոսմը կոտրել—*մերժել։*

Խոսմը մին անել—*իրար հետ միաբանվել, համաձայնել, դաշնավորվել։*

Խոսմը մնա չորս պատի մեջ—*գաղտնիքը ոչ ոք չիմանա։*

Խոտոց—*ձկան միջքի մասը։*

Խորթ ու փորթ—*խորտուբորտ, անհարազատ։*

Խուվակ—*ճեղք, պատի մեջ անցք։*

Խոխտա—*գիրկ։*

Խրիդ—*առևտուր։*

Խրխի—*կենդանիների մորթի, որ հեքիաթներում հագնում են մարդիկ կենդանիների կերպարանք ստանալու համար։*

Խուղավերդի—*աստվածատուր։*

Խուրդել—*փողը մանրացնել։*

Խուրջին—*երկու աչկանի տոպրակ։*

Խուռուխուշ—*տաշեղ, փայտի կտորտանքներ։*

Խև—*հիմար, գիժ։*

Ծ

Ծակ—*անցք։*

Ծանդր—*ծանր, փխբ. կամաց, հանդարտ։*

Ծեփել—*խփել, հարվածել։*

Ծեխ—*լուսաբաց։*

Ծիծ—*ստինք։*

Ծիծաղատեղ—*ծաղրի առարկա, խեղկատակ։*

Ծլծեռ—*իլիկի պոչը։*

Ծլունկ ըլնել—*վեր թռչել։*

Ծովեղեն—*ջրային ծագում ունեցող։*

Ծոր տալ—*ծորել։*

Ծպտոն—*նվազ, բարակ ձայն։*

Ծուռդր դնել—*ծնկաչոք խոնարհվել։*

Կ

Կալնել—*բռնել։*

Կախկալ—*դույլի նման փայտե կամ մետաղե աման, որով ջրհորից ջուր են հանում։*

Կամքն առնել—*համաձայնությունը վերցնել։*

Կանճել—*կանգնել։*

Կանճել ոտի—*հղիանալ։*

Կապա—*վերնազգեստ։*

Կապիտ—*կապույտ։*

Կստեպան—*այգեպան։*

Կարծրքավոր—*կասկածավոր։*

Կարմուճջովն էլ ացկացնել—*վերջին օգնությունն էլ ցույց տալ։*

Կեղտակեր—*փխբ. ժլատ։*

Կլլխկոճձի տալ—*գլխի վրա գլորվել, շրջվել։*

Կիտել—*ժողովել, կույտ անել։*

Կիտուկ—*կույտ, հավաքած իրերի գումդ, խումբ (մարդկանց համար)։*

Կլոճ—*բաղարջ։*

Կխտար—*եղնիկ։*

Կմրշտել—*կսմթել։*

Կոլալել—*պարուրել, ծրարել, փաթաթել։*

Կոլտիկ—*ցածրահասակ։*

Կոխ—*ըմբշամարտի ձև, գոտեմարտ։*

Կոխ բռնել—*գոտեմարտել։*

Կոկոմ—*կոկոն։*

Կողմի ընկնել—*համառել։*

Կոմրալ—*գավազան։*

Կոնդ—*1. անդամալուծ, 2. բլուր։*

Կոտ—*1. ցորեն չափելու փայտե աման, 2. գլուխ։*

Կպնել—*բռնկվել (կրակը)։*

Կռանճ ընկնել—*զորավիգ լինել։*

Կռնել—*դատարկելով ջուրը ցամաքեցնել։*

Կրնկել—*կրնկակոխ հետապնդել։*

Կուզ—*չրաշուն։*

Կունդ անել—*խժռել, հարստությունը վատնել, մեկից փող վերցնել՝ չտալ։*

Կունտկի անել—*տե՛ս կըլխկոնձի տալ։*

Կուշտը—*մոտը։*

Կուռ—*1. բազուկ, թև, 2. կողմ։*

Կուռիկ—*փարչ։*

Կուտապ գալ—*գալարվել, կծկվել (սողուն), փխբ. ցավի ազդեցությունից գալարվել, կծկվել (մարդ)։*

Հ

Հադաղը—*ժամանակ, միջոց, մոմենտ։*

Հազիր—*պատրաստ։*

Հալ—*դրություն, վիճակ։*

Հալա—*դեռ։*

Հալալ—*արդար, հարազատ, իսկական։*

Հալալ ա—*արժանի է։*

Հալալ մոր կաթնակեր—*պարկեշտ ընտանիքի զավակ, ազնիվ։*

Հալբաթ—*երևի, գուցե։*

Հալիվոռ—*ծեր, ծերունի։*

Հալ-հալբաթ—*անկասկած, հենց դա է, իհարկե։*

Հալվաչի—*հալվա պատրաստող։*

Հախ—*1. արդար, իրավացի, 2. վարձ, վճար։*

Հախը կտրել—*1. վարձ նշանակել, 2. հասանելիքը չտալ։*

Հախիցը գալ—*պատժել, ընկճել։*

Հախտու—*փխբ. նշանածը։*

Հախվերմազ—*պարտքը, վարձը չտվող, պարտուրացու։*

Հաղ—*խաղ, երգ, պար։*

Հաղալ—*պարել, խաղալ։*

Համա—*բայց։*

Համամ—*բաղնիք։*

Համամչի—*բաղնիսպան։*

Համբալ—*բեռնակիր։*

Համբարճ—*հաշիվ։*

Համբարձվել—*փխբ. չերևալ, անհետանալ։*

Համեշա—*միշտ, մշտապես, բոլոր։*

Համը դուս գալ—*ախորժելիությունը կորցնել, տախտկալի, ձանձրալի դառնալ։*

Հայա—*ամոթ, պատկառանք։*

Հայաթ—*բակ, սրահ։*

Հայիլ-մայիլ ընկնել—*սգաընչանալ, հիանալ։*

Հայ-հայը գնացել, վայ-վայը մնացել—*ծերացել, հալից ընկել։*

Հայիֆ—*ոխ, քեն։*

Հայվան—անասուն։
Հանգամ—ժամանակ, միջոցին։
Հանգը-հունգը—մինչև այս, մինչև այն, մինչև պատրաստվելը։
Հանճի—ձև, եղանակ, օրինակ, տեսակ։
Հանճ—շունչ, շնչառություն։
Հանդ—դաշտ։
Հաշտ—սրահ։
Հաջար—գործիք։
Հասար—պարիսպ, պատ։
Հասվեճաս ըլնել—հասնելու մոտ լինել։
Հասրաթ—կարոտ։
Հավալամիշ ըլնել—վեր թռչել, բարձրանալ, ծառս լինել։
Հավար տալ—օգնության կանչել։
Հավես—եռանդ, բավականություն։
Հավը խոսել—դժբախտություն պատահել։
Հավուզ—ավազան, ջրավազան։
Հարամ—վատ, անարդար։
Հարամի—ավազակ։
Հարբ ու զարբ—սպառնալիք, հոխորտանք։
Հացկերություն—ճաշկերույթ, քեֆ։
Հնծել—հնծելազոր։
Հեղդվել—խեղդվել։
Հեննա—հեռը, միասին։
Հեչ—բնավ, բոլորովին։
Հեղսողաց—լսողներից հեռու, նրանց չվերաբերում։
Հեսաբ—հաշիվ։
Հետ—անդամ։
Հետ աճել (հետ աճել)—ազատ արձակել։
Հերբմեր—հայր ու մայր։
Հերս—բարկություն, ջղայնություն։
Հեքիմ—բժիշկ։
Հիքի (իքի)—այդի։
Հլա—դեռ։
Հնդուշկա—հնդուհավ։
Հոգու ճետ ըլնել—մահամերձ լինել։
Հողածին—մարդ։
Հողը ձեր գլխին—(անեծք) մեռնե՛ք։
Հրեսիկ—ահավասիկ։
Հրճանդացնել—մեղմացնել, հանդարտացնել։
Հուլ—1. թանկագին քար (դոհար, ջավահիր), 2. հուլունք։
Հունար—շնորհք, հմտություն։
Հուշտ ըլնել—խրտնել։
Հուպ տալ—սեղմել։
Հուջաք կայնել—վիճել, հակառակվել, առարկել։
Հուրի-մալամ—շատ գեղեցիկ, հավերժահարս։
Հուրի-փարի—տես՝ հուրի-մալաք։

Ձ

Ձեն տալ—կանչել։
Ձեռ ու ոտ—փխր. ծառա, սպասավոր։
Ձեռի տակ—հպատակյալ։
Ձեռից գնալ—1. ոչնչանալ, փշանալ, 2. հյուծվել, վատ վիճակի մեջ լինել, 3. ուշաթափվել։
Ձեռից պրծնել—ազատվել։
Ձեռնամուզդ—աշխատանքի վարձ։
Ձեռք—զույգ, կամ տվյալ առարկան իր մասերով։
Ձվիկ-ձվիկ աճել—պատառոտել։

Ղ

Ղաբուլ—համաձայն, ձեռնտու։
Ղադաղա աճել—արգելել։
Ղադեճ առնել—(փաղաքշ. խոսք) ցավը տանել։

Ղաղր—պատիվ, հարգանք, նշանակություն.— ուժ, կարողություն։
Ղազ—սագ։
Ղազար—փորձանք, պատուհաս, պատիժ։
Ղազար անել—պատժել։
Ղազարել—տես՝ ղազար անել։
Ղազիա—վտանգ, փորձանք։
Ղար—շերտ։
Ղարիբ—ջորի։
Ղալիբ—կաղապար, ձև։
Ղալխան—վահան։
Ղալմաղալ—աղմուկ։
Ղամիշ—եղեգն։
Ղամշի—մտրակ։
Ղայդա—1. երաժշտական եղանակ, 2. կարգ, կարգ ու կանոն։
Ղայբան—ժապավեն, երիզ։
Ղայիմ—ամուր, պինդ, փխբ. ժլատ։
Ղայիշ—գոտի։
Ղայրար—ջանք, աշխատանք։
Ղայֆա—սուրճ։
Ղանբար—հասարակական մեծ կշեռք։
Ղանջրղ (ղանճրղ)—էգ շուն, գործ է ածվում կանանց վերաբերյալ՝ անարգական նշանակությամբ։
Ղաշանգ—սիրուն։
Ղաչաղ—ավազակ, փախստական։
Ղառիճ—փոր։
Ղասաբ—մսագործ, փխբ. դահիճ։
Ղաստաֆուն—սուտ քոմս։
Ղաստի—դիտմամբ։
Ղավալ—1. թմբուկ, 2. շվի, սրինգ։
Ղավվա-ղաբղր—գոմ (ձիերի, ջորիների)։
Ղահրավաշ—աղախին։
Ղահրավլել—1. պահակություն անել, պահակել, 2. նշան բռնել։
Ղահրավուլ—պահակ։
Ղահրավուլ կալել—պահպանել, հսկել։
Ղահիր—պանդուխտ։
Ղափարբմիշ անել—թոնրի խուփը այնպես դնել թոնրի վրա, որ ոչ մի անցք չմնա։
Ղափլան—վագր։
Ղաֆազ—վանդակ։
Ղաֆիլ—հանկարծ։
Ղդար—չափ։
Ղիամար—ցուրտ։
Ղիմա—փոքր կտոր։
Ղիմա-ղիմա անել—մանր-մունր կարտել, հոշոտել։
Ղին—պատյան։
Ղմշել—ափսոսալ, մեղք գալ։
Ղեամիշ անել—հանդիմանել, նախատել, համոզել։
Ղոլան-ղոշղուն—ձիու թամբի պարագաներ, փորկապ, կաշվե փոկեր։
Ղոնաղ—հյուր։
Ղոնաղլըղ—ճաշկերույթ, հրավեր, հյուրասիրություն։
Ղոշուն—զորք, բազմություն։
Ղոչ—խոյ։
Ղոչաղ—քաջ, կտրիճ։
Ղոռաղա—անպետք։
Ղովտ—հնքիաբների մեջ երևակայական հաղթանդամ, ահռելի գաղան, հրեշ։
Ղորբ—ուղիղ, ճշմարիտ, արդար։
Ղորբմանց—ճիշտ որ, իրոք։
Ղսմար—բախտ, վիճակ։
Ղսմար ըլնել—վիճակվել։
Ղվար—ուժ, զորություն։
Ղրաղ—ծայր, եղր, ափ։
Ղրղի—բաղեհ։
Ղուրուր—պատյան, դագաղ։
Ղուդուզ—պարծենկոտ, հպարտ։
Ղուբի—արկղ, տուփ, անդուկ։
Ղուլ—ծառա։
Ղուղ—ուղեղ։
Ղումար—թղթախաղ։
Ղունգ—եղունգ։
Ղուշ—թռչուն։
Ղուսա—ցավ, հոգս։
Ղուրբան ըլնել—(փաղ. խոսք) մատաղ լինել։
Ղուրդ—գայլ։

1646—41

Ճ

Ճար—*կորեկի հաց։*
Ճամփեն պաճել—*սպասել մեկին։*
Ճաշ—*կեսօր, կեսօրվա հաց։*
Ճապկի—*ծառի տեսակ։*
Ճար աճել—*օգնել, հնարը գտնել։*
Ճաճել—*ճեղքվել, փխր. բարկանալ։*
Ճիտ—*պարանոց, վիզ։*
Ճիտ աճել—*գրկախառնվել, փաթաթվել։*
Ճխտել—*1. սեղմելով դնել, հագցնել, 2. լցնել։*
Ճղակ—*ճեղք։*
Ճղրիկ—*ճաղար, կապույտ աչքեր։*
Ճլրճղրճռոտել—*ճյուղեր տալ, բազմանալ։*
Ճնաղ—*թռչունների թամբանման ոսկոր, որով դրազ են բռնում։*
Ճոր—*1. բաժին, մաս, 2. գործվածքեղեն։*
Ճորոած—*պատռտված, մաշված։*
Ճոր աճել—*բաժանել, կիսել։*
Ճրագվառոց—*երևկոյան կողմ։*
Ճրագքար—*փայտե բարձր աշտանակ, որի ծայրից փոքր-ինչ ցած հագցրած փայտե թաթի վրա դրվում է ձեթով լի ճրագը։*
Ճուտակալել—*շատ ճուտեր բերել։*

Մ

Մաղա—*1. էգ կաքավ, 2. ախորժակ։*
Մաք ըլնել—*ապշել, զարմանալ։*
Մաթալ մնալ—*հուսահատվել, չիմանալ ինչ անել, շշկլվել, շփոթվել։*
Մաթրաք—*կավե աման։*
Մալ—*ապրանք, հարստություն. ընտանի կենդանիներ։*
Մալիաք—*արժեք, ինքնարժեք։*
Մալամիշ ըլել—*տանջվել։*
Մալուլ—*տխուր։*
Մալուլ-մշկուլ—*մոլորված, տխուր-տրրտում։*
Մսլուամ աճել—*երևալ, որոշվել։*
Մախլաս (մախլասի)—*վերջապես, ինչևիցե։*
Մախմուր—*թավիշ։*
Մախոխ—*քթու դրած կաղամբով և ձավարով պատրաստած անժուր ապուր։*
Մախսուս—*դիտմամբ, հատուկ, դիտավորությամբ։*
Մաճը տալ—*սպանել։*
Մսղրուճ—*զուրկ, զրկված։*
Մաղրուճ պաճել—*իշացնել, ոշնշացնել։*
Մայա—*1. դրամագլուխ, 2. մակարդ։*
Մայիլ մնալ—*հիանալ մի բանով, զմայլել, զարմանալ։*
Մայիֆ—*կույր։*
Մանկզիլ—*տարածություն, տարածության չափ, ասպարեզ։*
Մաշակար—*մաշիկ կարող, մաշկակար։*
Մաջալ—*միջոց, ժամանակ։*
Մասալ—*դրույց, պատմություն։*
Մասլահաթ—*դրույց, խորհուրդ։*
Մասլահաթ աճել—*խորհրդակցել։*
Մարալ—*եղջերու, փխր. գեղեցկուհի։*
Մարդ-մադաթ—*ոչ ոք։*
Մարմանդ—*խաղաղ։*
Մարջ—*գրազ։*
Մարիֆաթ—*շնորհք։*
Մգար (մկար)—*մի՞թե, արդյո՞ք, ուրեմն։*
Մեզար—*1. մաղից և բամբակից գործած սփռոց, 2. կանանց գոգնոց։*
Մեյդան—*հրապարակ, ասպարեզ։*
Մեյդանը կտրել—*հրապարակը անցնել։*
Մեյբարխանա—*ախոռ։*
Մեյիդ—*դիակ։*
Մեշա—*անտառ։*
Մզրախ—*նիզակ։*

Մըխելի—*մի քիչ*
Մըղրըրը կոխել—*մրնել*
Մըն էլ—*մեկ էլ, ևս*
Մի բարձի ծերանալ—*(բարեմաղթ. ամուսիններին մասին) մինչև վերջը համերաշխ ապրել*
Մի դաֆիլ—*տես՝ դաֆիլ*
Միբամ—*իրրև թե*
Միհեռից—*միանգամից*
Միևուևար—*ծնողների միակ որդին*
Միրզամ—*աներորդի, աներձագ*
Մնուլ—*ժամանակամիջոց*
Մղուր գալ—*մեղքը խոստովանել*
Մճձրվել—*վատվել, խանձվել*
Մոտի-մոտի անել—*կեղծել, հաճոյանալ*
Մարիցն ըլնել—*ծնվել*
Մտաճաճ անել—*մոռանալ*
Մոխի անել—*նայել, տեսնել*
Մրչիմ—*մրջյուն*
Մուխ—*ծուխ*
Մուհր (մոհր)—*կնիք*
Մուղաք կենալ—*զգույշ լինել, պահպանել, հսկել*
Մուխանեաք—*անհավատարիմ, դավաճան, ննդ*
Մում—*մոմ*
Մունեաք անել—*աղաչել, խնդրել*
Մուշամբա—*մոմալաթ, մեղրամոմի հալվածքի մեջ ձգած ու հանած կտավ*
Մուշամբել—*մոմալաթով պատել*
Մուշտուլուղ—*աչքալուսանք*
Մուռ—*վրեժ, քեն, ոխ*
Մուռաան—*կեղտոտ, պիղծ*
Մուրազ—*իղձ, ցանկություն*
Մուրախաս անել—*արձակել, ազատել*
Մուֆքա—*ձրի*

Յ

Յա—*կամ*
Յադ—*օտար*
Յալ—*1. բաշ, 2. բլուր*
Յալլա՛—*(բացականչություն) հայդե գնաց*
Յախա—*օձիք*
Յախու—*սպեղանի*
Յաղի—*թույն*
Յաղվել—*թունավորվել*
Յա՞ղուզ—*ի՞նչու*
Յաճ—*կողմ*
Յաճի բե—*իրր թե*
Յաճղլիշ—*սխալ*
Յաշ—*տարիք*
Յասավուլ—*ոստիկանության ստորին պաշտոնյա*
Յավաշ—*1. կամաց, դանդաղ, 2. սպասիր*
Յարա—*վերք*
Յարալու-փարալու—*վիրավոր*
Յարաղ—*զենք*
Յափնջի—*թաղիքից պատրաստած վերարկու, այծենակաճ*
Յոլա գնալ—*հարմարվել, հաշտ ապրել*
Յոնջա—*առվույտ*
Յորղան—*վերմակ*
Յորղանին բացի տալ—*երկար ժամանակ հիվանդ պառկել*
Յոխտում տալ—*ուտել-վերջացնել, ոչընչացնել*

Ն

Նազիր-վեզիր—*թագավորի նախարար, պալատական*
Նազ ու տուզ անել—*կոտրատվել, նազկըտալ*

Նախրչի—նախրապան։
Նանախ—անարդար, անիրավացի։
Նաղլ—զրույց, պատմություն։
Նաղլ անել—պատմել, ասել։
Նադդ—կանխիկ, պատրաստի, առձեռն։
Նամ—խոնավ։
Նամաղուլ անել—անխոհեմություն, անմտություն անել։
Նամարդ—տմարդի։
Նաչար—խեղճ, թշվառ, անճար։
Նարդըվանե—սանդուղք (շարժուն)։
Նաֆաս—շունչ։
Նեռուանեղ (նեռվանեղ)—աղեղն ու իր սլաքավոր նետը։
Նըվալ—թույլ ձայնով լաց լինել։
Նյաբ—չար դիտավորություն, չար աչք։
Նիլնել, նիլլավ, (նի ըլնել)—բարձրանալ, հնծնել։
Նխտից ընկնել—ուժասպառ լինել։
Նըղղալ—ննջալ, քնել։
Նոբաթ—հերթ։
Նոթերը կիտած—անտրամադիր, դժգոհ։
Նոխտա—սանձ՝ առանց բերանի երկաթի։
Նոխար—ծառա։
Նուբար—առաջին բերքը։

Շ

Շալակ—բեռի այն քանակը, որ մարդ միանգամից կարող է շալակով տանել։
Շաճել—հոգ տանել, խնամել։
Շայի (շաճի)—հինգ կոպեկանոց։
Շամադաճ—մոմակալ։
Շանց տալ—ցույց տալ։
Շար—փորձանք, զրպարտություն, վնաս։
Շարբաթ—քաղցր ջուր։
Շախիլ—պատկեր, նկար։
Շաֆաղ—շողք։
Շենկս—շինություն։
Շեպել—հարվածել, խփել շեշտակի։
Շիմ տալ—մի բանի վրայով ոտը գցել, անցնել։
Շրլակ—տես՝ շալակ։
Շիրախանա—ներքնատուն, նկուղ, ուր պահվում է շիրան՝ քաղցուն։
Շիֆել—պատրաստել, շինել։
Շլիեմ—պարանոց, վիզ։
Շնադ—վկա։
Շնար—քաղաք։
Շնթռկել—քնել, պառկել, նստել։
Շշկլվել—շփոթվել։
Շորշոփ—1. խիստ վախի, երկյուղի ազդեցության ենթարկվելը, 2. բարի կամ չար ազդեցության ենթարկելը, 3. ցրտոտք։
Շվաֆ—ստվեր։
Շուլալվել—փաթաթվել։
Շուլուխյուր ըլնել—հարբել, վեր ընկնել։
Շուջա—ապակի։
Շուջաբանդ—ապակե շրջանակներով ծածկված պատշգամբ։

Ո

Ոճերճ ընկնել—խնդրել, աղաչել։
Ոռ-ոռ—հետ-հետ։
Ոռֆը—ամանի տակը, հետևի կողմը։
Ոտը ծանդրանալ—հղիանալ։

Ոտով-գլխով—*ամբողջովին*։
Ոտը ճանդարավել—*երթևեկությունը դադարել*։
Որբվեր—*այրի կին, կամ կին կորցրած (մեռած) տղամարդ*։
Ո՞ւրդի (ո՞ւրդե)—*ո՞րտեղ*։
Որձ—*արու*։

Չ

Չադիր—*վրան*։
Չաբել—*1. բռնել, ճանկը գցել, 2. կապել, կապոտել*։
Չաբմիշ ըլնել—*մեջտեղից կտրվել, փխբ. համբերությունից հանել*։
Չաբու—*թոկ, պարան*։
Չախ—*ժամանակ*։
Չախմախ—*կայծահան, հրահան*։
Չամի (չամի)—*սոճի*։
Չայլաղ—*գետի չորացած հուն, ուր աճում է բուսականություն*։
Չայիր-չիման—*կանաչ խոտով ծածկված տարածություն*։
Չայ շինել—*թեյ պատրաստել*։
Չանա—*ծնոտ*։
Չանէ—*մինչև*։
Չանչուլ—*լայն բացած բաթե*։
Չավ ըլնել—*տարածվել*։
Չարդախ—*տան կտուրին չորս սյունով փայտե շինություն՝ հասարակ ծածկով*։
Չարեֆտար—*մեկ քառորդի բաժնետեր*։
Չարը տանել—*(փաղաք. խոսք) մեկի ցավը տանել*։
Չարխ—*մեքենայի անիվ*։
Չարսաբ (չարսավ)—*սավան, ծածկոց*։
Չափարխանի—*արագ, արշավասույր*։
Չակուչ—*մուրճ*։
Չեշտա—*տեսակ, նմուշ*։
Չէչոտ—*ծաղկատար*։
Չիմա—*բկով կոշիկ*։
Չրեղրել (չրեղիլ)—*քարակուտ, կարկառ*։
Չրոռալ—*հորդալ, հոսել*։
Չին-չին—*մաքուր, խստակ*։
Չիփլաղ—*մերկ*։
Չորաե—*հովիվ*։
Չոլ—*վայրի, ամայի տեղ*։
Չոռ—*ցավ, նաև կենդանիների և բույսերի հիվանդություն*։
Չսփչի—*ցախ հավաքող*։
Չոմ—*ծունկ*։
Չվաե—*պարան*։
Չռաղ—*1. ճրագ, 2. հովանավոր*։
Չռաղդաե—*հրավառություն*։
Չրմիշ աեել—*մանրացնել*։
Չուր—*արոր*։
Չուրչի—*չիով վար անող, հողագործ*։

Պ

Պաչել—*համբուրել*։
Պաս մնալ—*փխբ. չմոտենալ, չմերձենալ, հաղորդակից չլինել*։
Պատաեել—*մեռելին շոր հագցնել*։
Պատրեաե—*պատի մեջ շինած պահարան*։
Պատկերաեաե—*նկարիչ*։
Պեծ—*կայծ*։
Պեծին տալ—*կայծկլտալ, փայլփլալ*։
Պզտի—*փոքր*։
Պրեել—*պահել*։

Պինչ—*քիթ, քթածակերը։*
Պլոկվել—*1. կաշեհան լինել, քերծվել, 2. կողոպտվել։*
Պճեղ—*կճղակ, կտոր։*
Պպիե կանգնել—*համառել։*
Պոզ—*եղջյուր։*
Պոլոլիկ—*կլոր, լրիվ։*
Պռոշտի անել—*համբուրվել։*
Պռտեպռտունկ—*լիքը։*
Պտուղ—*փխբ. սերունդ։*
Պռունկ—*1. շրթունք, 2. եզր։*
Պրծնել—*վերջացնել։*
Պրիկաշչիկ—*գործակատար։*
Պրծացնել—*ազատել, փրկել։*
Պուլիկ—*կավե աման, կճուճ։*
Պուճախ—*անկյուն։*
Պուճուր—*փոքր, կրտսեր։*
Պուտ—*կաթիլ։*

Ջ

Ջադու—*վհուկ, կախարդ։*
Ջադուխյար—*տես՝ ջադու։*
Ջախլախ—*հին, խարխուլ։*
Ջայնամ—*տես՝ ջհանդամը։*
Ջամդակ—*դիակ, լեշ։*
Ջամ—*պղնձե աման։*
Ջան ասել, ջան լսել—*սիրով լինել, չհակառակվել։*
Ջանը՛մսաե—*(ոգևորող խոսք) կեցցե։*
Ջա՛նըմ-գյոզը՛մ—*(աղաչանք) ջանըս-աչքս, փխբ. մի՛ անի, մի՛ լինի։*
Ջանավար—*գազան, նաև՝ ուժեղ։*
Ջանին ճասնել—*համբերությունը սպառվել։*
Ջանլար—*դահիճ։*
Ջան-փոլատ—*երկաթե մարմին։*
Ջանջար—*դրախտ։*
Ջառ ըցել, ջառ կանչել—*վիճակ գցել, հայտարարել, հռչակել, իմաց տալ։*
Ջառչի (նաև՝չի)—*մուննաթիկ։*
Ջաումա—*տուգանք, վնաս։*
Ջավաճիր—*գոհար, թանկագին քար։*
Ջաղդուխուրթ անել—*կտոր-կտոր անել։*
Ջդիր—*խաղ՝ ձիարշավ։*
Ջէյրան—*եղնիկ։*
Ջերկ—*կարգ։*
Ջըլիզ—*բոլոր, բոլորովին, ավելի։*
Ջրնջխել—*ծեծել։*
Ջիգյար—*1. թոք, 2. գութ, սեր։*
Ջին—*դև, չարքս։*
Ջինս—*1. կենդանի, 2. սերունդ։*
Ջնահդամ—*դժոխք։*
Ջնեըը գալ—*զայրանալ։*
Ջոկ—*առանձին։*
Ջվալ—*հաստ կտորից կարած մեծ պարկ։*
Ջրջրնանել—*ջուր ցանել։*
Ջրվեթ անել—*միզել։*
Ջուխտ—*զույգ։*
Ջուղար—*պատասխան։*
Ջուղար տալ—*պատասխանել։*
Ջուռա—*տեսակ։*

Ռ

Ռադ անել—*կորցնել, հեռացնել, վռնդել։*
Ռազի ըլնել—*համաձայնել, բավական մնալ։*
Ռամ ըցել—*գուշակել։*
Ռամդար—*գուշակող։*
Ռանգ—*գույն, տեսակ։*

Ռաստ գալ—*պատահել։*
Ռչիար (ռաճիար)—*հպատակ, ժողովուրդ։*
Ռչշար (ռաճշար)—*երկրագործ։*
Ռուզղ (ռըզղ)—*ուտեստ, ապրուստ։*

Ս

Սարար—*պատճառ։*
Սարր անել—*համբերել, սպասել։*
Սարր գալ—*փոշտալ։*
Սաղա—*դուռ, ամբողջովին, միմիայն։*
Սաղաղին—*ի սեր։*
Սազ—*երաժշտական լարային գործիք։*
Սազել, սազ գալ—*հարմարվել, հաշտ լինել։*
Սալ—*տափակ քար։*
Սալա—*ձառի դալար շյուղերից պատրաստված սկուտեղանման մատուցարան։*
Սալախանի—*բնթևսոլիկ, բնթևամիտ։*
Սալամաթ—*առողջ, ապահով։*
Սալղար—*զինվոր։*
Սալըղ—*լուր, համբավ, տեղեկություն։*
Սալըղ-սուլուղ—*տե՛ս սալըղ։*
Սալջարդ անել—*խիստ ծեծել։*
Սաղ—*ողջ, առողջ, ամբողջը։*
Սաղացնել—*առողջացնել, փխբ. վաճառել։*
Սաղ-սալամաթ—*տե՛ս սաղ։*
Սաղրիկ—*ծանծաղ։*
Սաղություն—*առողջություն։*
Սաղի—*արագավազ։*
Սամբ—*հարմար միջոց, հարմարանք։*
Սամբին—*հարմար, վարպետորեն։*
Սայիշ տանել—*կասկածել։*
Սաս-սամուր—*ձայն, ձեն ու ձուկ։*
Սավայի—*բացի։*
Սավաջաղ—*ջրաղացի նավը։*
Սատանի ձին նիլել—*փխբ. համառել, չհամաձայնվել։*
Սատանի համի (սատանի բուլուլուգ)—*պտուտահողմ։*
Սատկած—*փխբ. թուլլ, անպետք։*
Սարաֆ—*սեղանավոր, դրամափոխ։*
Սարվացնել—*սովորեցնել։*
Սարմ ու կարգ—*պատրաստություն, տան կահկարասիք։*
Սամի թե—*իբրև թե։*
Սեհրի—*1. կախարդանք, 2. խորհրդավոր, 3. գուշակող։*
Սեհրբազ—*տե՛ս սեհրի։*
Սեհր անել—*ղրոսնել։*
Սըխ—*խիտ, մուտ, մտերիմ, ամոթ։*
Սըխկել—*ծեծել։*
Սրհաթ—*ժամ։*
Սրո—*գաղտնիք, նաև՝ ցուրտ։*
Սթար անել—*պատսպարվել։*
Սիլլա—*ապտակ։*
Սինի—*սկուտեղ։*
Սինոբապետ—*ատենապետ։*
Սիրտ անել—*համարձակվել։*
Սիրտը բերանովը դուս գալ—*սաստիկ հուզվել, նեղանալ։*
Սիրտը լիքը—*վշտերով ծանրաբեռնված, վշտակիր։*
Սիրտը մաշել—*տանջել։*
Սիրտը վեր ունել—*հավանել, համաձայնվել։*
Սիրտ ունենալ—*1. տրամադրված լինել, 2. քաջ լինել։*
Սնոռ (սինոռ)—*սահման։*
Սովրաթ—*սիրալիր զրույց։*
Սովրամյար—*վաճառական։*
Սոսման—*բաժակ։*
Սոտլ—*սեղան։*
Սրտ—*կարգ, հերթ։*

Սուրգուն անել—*հալածել, աքսորել, քշել, հեռացնել։*
Սուրու—*հոտ (ոչխարի)։*
Սուփրա—*1. սփռոց, 2. սեղան։*
Սևասռտել—*տխրել։*
Սևացնել—*փխբ. զայրացած մի բան տալ։*
Սֆրա—*առաջ, նախ, փխբ. օրվա առաջին վաճառքը։*
Սֆար—*դեմք։*

Վ

Վադա—*ժամկետ։*
Վազիր—*թագավորի նախարար, պալատական։*
Վազը գալ—*թողնել, ձեռք քաշել, հեռանալ։*
Վալադ—*տեղյակ։*
Վախտ—*ժամանակ, միջոց։*
Վաճր—*թարախ։*
Վասյաք—*ավանդ, պայման, կտակ, ուխտ։*
Վարամնոտել—*վշտանալ, հուզվել։*
Վարավուրդ անել—*տեսնել, նկատել։*
Վարձ—*լավություն, բարի գործ։*
Վաֆիլ—*պալատական։*
Վեզիր—*տես՝ վազիր։*
Վեֆիլ—*տես՝ վաֆիլ։*
Վե գալ—*իջնել, նստել։*
Վե կալնել—*վերցնել։*
Վե կենալ—*նստած տեղից վեր կենալ։*
Վեր ածել—*թափել, թողնել։*
Վեր ըլնել—*բարձրանալ։*
Վեր ունել—*վերցնել։*
Վեր ցցել—*վայր ձգել։*
Վիրի գլուխ (վերի գլուխ)—*վերը, բարձր փխբ. պատվավոր տեղ։*
Վիրի-վիրի—*ամայի, անմարդաբնակ, վայրենի։*
Վիրունի—*վայրենի։*
Վրա անել—*գցել, նետել։*

Տ

Տազ անել—*լռել, ձայնը կտրել։*
Տալ—*խփել, ծեծել, հարվածել։*
Տալտա (տալդա)—*պատսպարված, մեկուսի, ապահով, տեսողությունից ծածկված։*
Տալու ֆիմի—*խփելուն պես։*
Տակիցը դուս գալ—*երախտահատույց լինել։*
Տամար—*երակ, մկան։*
Տայազ—*դատարկ։*
Տան մեջ—*կահ-կարասի։*
Տապակ—*մաս, բաժին, կտոր, ծալ։*
Տաշտ ու մաղը կապել—*հացը ուտել վերջացնել։*
Տատանմիշ ըլնել—*տատանվել, երկմտել։*
Տատաշ—*տատասկ։*
Տատմեր—*մանկաբարձուհի։*
Տարաղաջ (տարաղան)—*կախաղան։*
Տարաղաջի ֆաշել—*կախաղան հանել։*
Տափան—*չրաղացի ցցի տակի տափակ, կարճ գերանը։*
Տափ կենալ—*թաքնվել։*
Տեղերը ցցել—*անկողին բացել։*
Տեղը մննել—*անկողին մտնել։*
Տրոճնկի տալ—*խաղալ, ցատկել։*
Տիրունի—*տեր ունեցող։*
Տկլոզ—*մերկ։*

Տկճոր—*տիկ։*
Տնազ անել—*ծաղրել։*
Տոլապ—*պահարան։*
Տոլի—*բաժակ։*
Տոտաշոր—*նորածնի ոտի շորը։*
Տոլնգալ—*գոմշի ձայն հանելը։*
Տուզաղ—*թակարդ։*
Տուտը—*ծայրը, սկիզբը։*

Ց

Ցավը բռնել—*ծննդաբերել։*
Ցոկոլակ—*չհասած, կիսահաս, խակ։*
Ցոքել—*ծնել (շան վերաբերյալ)։*
Ցվրվել—*ցրվել։*
Ցրտոն—*ջրաղացի այն մասը, որտեղից դուրս է հոսում ջուրը, ջրտուն։*

ՈՒ

Ուզընկան—*ամուսնության համար աղջիկ փնտրող։*
Ումբր—*կյանք։*
Ումուդ—*հույս։*
Ունկ—*կանթ, կոթ։*
Ուշաք (ուշապ)—*վիշապ։*
Ուշագնաց ըլնել—*ուշաթափվել։*
Ուշունց—*հայհոյանք, հիշոց։*
Ուսուա—*վարպետ։*
Ուսուլով—*ղգուշությամբ։*
Ուֆուր-ուֆուր լաց ըլնել—*դառնապես, հոնգուր-հոնգուր լաց լինել։*

Փ

Փալան—*համեստ։*
Փանիվան (փանիւան)—*բմբիշ, լարախաղաց։*
Փայ—*բաժին, մաս։*
Փանջարա—*պատուհան, լուսամուտ։*
Փար—*ձկան փոր։*
Փարատել—*թոնրի պատերը սրբել։*
Փարդա—*վարագույր։*
Փարի—*հրեղեն, գեղեցիկ։*
Փարխաջ—*պղնձե դույլիկ։*
Փարչա-փարչա անել—*մաս-մաս անել։*
Փափախածալ—*գդակի ծալք։*
Փափախով անել—*նշանացի հասկացնել։*
Փեյին—*գոմաղբ։*
Փեշակ—*արհեստ։*
Փեշեմար—*արհեստավոր։*
Փեշկիր—*երեսսրբիչ։*
Փեշքաշ—*նվեր, պարգև, ընծա։*
Փըմփուխ—*փափուկ։*
Փքիր—*աղբ։*
Փիաղա—*հետիոտն։*
Փիլաֆան—*աստիճան, սանդղամատ։*
Փիս—*վատ, անպիտան։*
Փոխան—*վարտիք։*
Փոստ—*մորթի։*
Փորամնա—*դեռևս չծնված երեխա։*
Փորացավ—*փխբ. մտադրություն։*
Փսթռթվել—*սաստիկ այրվել, խորովվել։*
Փրթել—*կտրտել։*
Փուշկ—*վիճակ։*

Քալավա—*ավերակ շենք։*
Քաներքար (քաներպար)—*սաթ։*
Քաղալակ—*կողով։*
Քամար—*գոտի։*
Քաշկա—*երանի թե։*
Քաշովի—*ձավարից կամ բրնձից եփած շոր ճաշ։*
Քաչվել—*ամաչել։*
Քաշալ—*ճաղատ։*
Քաո—*խուլ։*
Քաստաճալ—*աղքատանալ։*
Քավթառ—*պառավ կին (անարգական մտքով)։*
Քարգա անել—*ասեղնագործել։*
Քարի հետ խաղվել, ավազի հետ մաղվել—*շատ աշխատել։*
Քարերը կրծել—*լաց ու կոծ անել, անհանգստանալ։*
Քարվանսարա—*իջևանատեղ։*
Քաֆկիր—*մետաղյա շերեփ, ծակոտկեննեբով՝ կերակրի քափը քաշելու համար։*
Քելեխ—*մեռելաճաշ։*
Քեչա—*թաղիք։*
Քեչա-խյուլյահ—*թաղիքե գլխարկ։*
Քհրեղան (խրեղան)—*կավի աման, որի մեջ ճաշ են ուտում։*
Քնֆը չաղաճալ—*ուրախանալ, տրամադրությունը բարձրանալ։*
Քրնար հանել—*գլուխ հանել։*
Քրռալ—*տաքանալ, կպչել։*
Քրչ—*մաշված հին շորեր։*
Քրոց—*կողով։*
Քիրը աղաղվել—*խրատվել։*
Քիր ու պռունկը վե բռղած—*անտրամադիր։*
Քիմի—*չափ, մոտավորապես։*
Քիշմիշ—*չամիչ։*
Քիսա—*քսակ։*
Քիր—*քուրր։*
Քյալագ—*աղետ, պատուհաս։*
Քյալլա—*գլուխ։*
Քյալլա անել—*գլխատել։*
Քյահլահ—*հրեղեն։*
Քյամալ—*խելք, միտք։*
Քյանդրազ—*լարախաղաց։*
Քյասիր—*աղքատ, խեղճ։*
Քյասիր-քյուսուր—*տե՛ս քյասիր։*
Քյար անել—*ազդել, ներգործել, օգնել, նպաստել։*
Քյաֆուր—*անգութ, անխիղճ։*
Քյորլուղ տալ—*նեղություն, անհանգստություն պատճառել։*
Քյուլեանչի—*մոխիր հանող, թափոր։*
Քնահարամ—*քունը լրիվ չառած, կիսաքուն։*
Քնձռոտ—*հասարակ, աննշան։*
Քոզ—*կրակից մնացած վառ ածուխը։*
Քոզար—*կալսած հասկերի կոշտ մնացորդը։*
Քոթակ տալ—*ծեծել։*
Քոլ—*անտառ, թփուտ։*
Քոմակ—*օգնական, օգնություն։*
Քոմմա—*ամբողջը, բոլորը։*
Քոչ—*չու, տեղափոխություն։*
Քոփակ—*ծերունի (անարգական նշանակությամբ)։*
Քոռ—*կույր։*
Քոռաղաղնա—*քոռի պես, ւխխր. հակառակի պես։*
Քոսա—*անմազ, անրեղ, անմորուք տղամարդ։*
Քոփա—*մանուկ, ծծկեր, մատղաշ։*
Քոֆ—*արմատ։*
Քոֆահան անել—*արմատահան անել։*
Քոֆել—*լարել։*
Քվերտիճ (խվորտիճ)—*քույրեր։*
Քրեճ—*վարձ։*
Քրեճդար—*վարձու տվող։*

Քւչոտ-մրչատ—հին, մաշված շորերով։
Քցել—ննջադրել, հաշվել, փխր. խմել։
Քուրքուրել—գլուխը նայել, մազերը մաքրել։
Քուրուկ (Խորուկ)—կոճղ, արմատ։
Քուլ—մոխիր։
Քուչա—փողոց։

Օ

Օթախ—սենյակ։
Օլու—մեռել։
Օխճել—օրհնել։
Օղլուշաղ—1. կին, 2. ընտանիք երեխաներ։
Օլիա—պատուհաս։
Օճռոմ—առաստաղ։
Օյաղ—զգույշ, արթուն։
Օյանմիշ ըլճել—սթափվել։
Օյին—փորձանք, խաղ։
Օջախ—կրակատեղի, (փխր. ընտանիք, ընդդատան)։
Օրդակ—բադ, վայրի սագ։
Օրդում ուտել—երդվել։
Օրճե ճացի մուրացկան—ծայրահեղ աղքատ։
Օրը մեկ աճել, տուրը հազար—շատ ծեծել։
Օրզանգու—ասպանդակ։
Օրբգել—ձիուն կապել, թողնել արածելու։
Օխմի—արարած։

Ֆ

Ֆաճլա—մշակ։
Ֆաճմել—հասկանալ, ըմբռնել։
Ֆայդա—օգուտ։
Ֆանդ—հնար, ճար, խորամանկություն։
Ֆաճառ—լապտեր։
Ֆառաշ—ծառա, դահիճ։
Ֆրֆրաճար գալ—ֆոֆռալ, շողշողալ։
Ֆիլ—փիղ։
Ֆինջան—բաժակ, սկահակ։
Ֆլան—այսինչ։
Ֆնդուխտ—կաղին, տխիլ։
Ֆոգին տալ—մեռնել։
Ֆող—հող։
Ֆողեց-ֆոգի կորչել—հոգով մարմնով կորչել, ոչնչանալ։
Ֆոտ—հոտ։
Ֆոր—հոր։
Ֆորթաթող—տարվա այն ժամանակամիջոցը, երբ ձմռան մոտենալու պատճառով հորթերն այլևս դաշտ չեն տանում արածացնելու։



ՀԵՔԻԱԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԸՍՏ ՏԵՂԻ ԵՎ ԱՍԱՑՈՂՆԵՐԻ

1. *ԱՆՄԱՀԱԿԱՆ ԽՆՁՈՐ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
2. *ՈՍԿԵ ՁՈՒԿԸ*, *Վարաշապատ*, ասացողն անհայտ
3. *ՋԱՆ-ՓՈՂԱՏ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
4. *ՔԱՌԱՍՈՒՆ ՀԱՐԱՄԻ*, *Վաղարշապատ*, Աշխեն Հովհաննիսյանց
5. *ՁՈՒԹՁԻ*, *Վաղարշապատ*, Աշխեն Հովհաննիսյանց
6. *ԱՂԴԻԼԱԿ*, *Վաղարշապատ*, Աշխեն Հովհաննիսյանց
7. *ՈՒՐՇԻ ՀՄԱՐ ՁՈՐ ՓՈՐՈՂԸ ԻՆՔԸ ԿՐՆԿՆԻ ՄԵՋԸ*, *Վաղարշապատ*, Աշխեն Հովհաննիսյանց
8. *ՍՈՒՏ ՀԵՔԻԱԹ*, *Վաղարշապատ*, Աշխեն Հովհաննիսյանց
9. *ՄԱՐՏԻՐՈՍԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
10. *ԽՈՋԱՐԱՇ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
11. *ԹԱՐԽՈՒՆ ԹԱԳԱՎՈՐԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
12. *ԷՐԿՈՒ ԱՂՊԵՐ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
13. *ՕՁԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
14. *ԴԻԺ ԱՂՊՈՐ, ԽԵԼՈՔ ԱՂՊՈՐ ՆԱՂԼԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
15. *ԹԱՄԲԱԼԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
16. *ՍՈՒՄԲԱԹԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
17. *ՕՀԱՆՆԵՍԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, Մանուկ Խաչատրյան
18. *ԿՈՄԲԱԼ ՏՈՒ...*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
19. *ՂԱՄԲԱՐ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
20. *ՁՈՒԹՁԻ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
21. *ՄՈԹԱԼԻ ՀԵՔԻԱԹԸ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
22. *ԿԵՂՏԱԿԵՐ ՄԱՐԴ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ
23. *ՀՈՒՆԱՐՈՎ ԳՈՂԵՐ*, *Վաղարշապատ*, ասացողն անհայտ

24. ՕԽԱՅ-ԲԱԲԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
25. ԽՈՒԴԱՎԵՐԴԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
26. ԴԵՂՑՈՒ ՏՂԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ԱՂՋԻԿԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
27. ՄԵՌԼԻ ՀՐԵՇՏԱԿԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
28. ԱՂՎԵՍԸ, ԳԵԼԸ, ԱՐՋԸ ՈՒ ՁՄՌՈՒՏ ՂՈՒՇԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
29. ԳԱՌՆԻԿ-ԱՂՊԵՐ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
30. ՀԱՐՄՆԵՐՆ ՈՒ ՏԱՎԸ, Վաղարշապատ, Վաղարշակ Վարդանյան
31. ՄԱՀՈՒՆ ՀԵՔԻԱԹԸ, Վաղարշապատ, Վաղարշակ Վարդանյան
32. ՄՆՈՂԱՍԵՐ ՏՂԵՆ, Վաղարշապատ, Վաղարշակ Վարդանյան
33. ՀԱՎԱՏԱՐԻՄ ԿՆԻԿԸ, Վաղարշապատ, Վաղարշակ Վարդանյան
34. ՋԱԴՈՒ ՊԱՌԱՎ, Վաղարշապատ, Վաղարշակ Վարդանյան
35. ԱՆՋԻԴՅԱՐ ՄԵՐ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
36. ՀԱԼԱԼԸ ՁՀԱՐԱՄՈՂ ԿՆԻԿԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
37. ԱՍՍՈՒ ՊԱՀԱՆ ԳԱՖԸ ԳԵԼԸ ՁԻ ՈՒՏԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
38. ՄԱՐԴԻՍ ՃԱԿԱՏԻ ԳՐԱՆԸ ՁԻ ՁՆՁՎԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
39. ՖԱԼԱՔ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
40. ԷՐԱՁ ՏԵՆՈՂ ԱՇԿԵՐՏԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
41. ՔՈՍԵՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՏՂԵՆ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
42. ԱՐՁԻ ՔՈՔՈՓԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
43. ԽՄՈՐ ՈՒՏՈՂ ԷՐԵԽԵՆ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
44. ԻՐԵՔ ԱՂՊՐՏԻՆՔ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
45. ՄԱՐԴ ԻՐԱ ՅՈՐՂԱՆՆՈՒ ԳՅՈՐԱ ՊՏԻ ՈՏԸ ՄԵԿՆԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
46. ՍՈՒՏԱՍԱՆ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
47. ԲԵԴՈՂՎԱՔ ՏՂԵՆ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
48. ՁՈՒՏՈՂԻ ՄԱԼԸ ՈՒՏՈՂԻՆ ՀԱԼԱԼ Ա, Վաղարշապատ, ասացողն անհայտ
49. ՓԱՀԼԵՎԱՆ ՀԵՐ ՈՒ ՏՂԱ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
50. ԱՄՈՔՈՎ ՀԱՐՍԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
51. ԵՐՈՒՍԱՂԵՄ ԴՈՒ ԳՆԱՑԻՐ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
52. ՀՈՐ ՏՎԱԾ ԻՐԵՔ ԽՐԱՏԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
53. ԻՆՁ ՈՐ ՑԱՆԵՍ, ԸՆ ԷԼ ԿՀՆՁԵՍ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
54. ԳՈՂ ՀԱՐՍԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
55. ՍՐՒ ՁՊԱՀՈՂ ԿՆԻԿ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
56. ԱՆՁԳԱՄ ԿՆԻԿԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
57. ԸՍԵՆՑ ԷԼ ՁԻ ՄՆԱ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
58. ԱՆՄԱՀԱԿԱՆ ՎԱՐԴ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
59. ԱՍՏՈՑ ՈՐ ՈՒՁԵՆԱ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ ՏԱ՝ ԿԲԵՐԻ ՀԵՐԴԿՈՎՆ ԷԼ ՎԵ ԿԱՑԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
60. ՍՈՒՏԻԿ ԱՎՁՈՒ ՀԵՔԻԱԹԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
61. ԻՐԵՔ ՔԱՖՒ ՀԵՔԻԱԹԸ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
62. ՂԱԶԱՐԱՄԱՆ-ԲԼՈՒԹ, Վաղարշապատ, ասացողն անհայտ
63. ԱՎՁԻ-ՕՂԼԻ, Վաղարշապատ, ասացողն անհայտ

ՀՆՔԻԱԹՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳՈՎ

Աղդիլակ 406
Ամոթով հարսը 459
Աղվեսը, Գելը, Արջը և Ջմռուք ղուշը 254
Անզգամ կնիկը 492
Անմահական խնձոր 23
Անմահական վարդ 501
Անջիգյար մեր 284
Աստու պահած գառը գելը չի ուտի 295
Աստոծ որ ուզենա հարստություն տա՝ կբերի հերդկով էլ վե կածի 505
Ավչի-օղլի 534
Արջի քոթոթը 379
Բեդուվաթ տղեն 431
Գառնիկ-աղպեր 260
Գեղցու տղեն ու թագավորի աղջիկը 234
Գիժ աղպոր, խելոք աղպոր նաղլը 416
Գող հարսը 489
Երուսաղեմ դու գնացիր 461
Էրազ տենող աշկերտը 324
Էրկու աղպեր 277
Ըսենց էլ չի մնա 497
Թամբալը 507
Թարխուն թագավորի հեքիաթը 175
Ինչ որ ցանես, ըն էլ կհնձես 487

Իրեք աղպրտինք 403
Իրեք քառի հեքիաթը 521
Խմոր ուտող էրեխեն 388
Խոզարած 107
Խուդավերդի 223
Մնողասեր տղեն 437
Կեղտակեր մարդ 568
Կոմբալ տու... 121
Հալալը չհարամող կնիկը 286
Հավատարիմ կնիկը 545
Հարսներն ու տալը 266
Հոր տված իրեք խրատը 465
Հունարով գողեր 571
Ղահրաման-Բլութ 145
Ղամբար 134
Մախոխի հեքիաթը 354
Մարդիս ճակատի գրածը չի չնչվի 310
Մարդ իրա յորղաննու գյորա պտի ոտը մեկնի . . 413
Մարտիրոսի հեքիաթը 95
Մեռլի հրեշտակը 243
Մոթալի հեքիաթը 189
Ոսկե ձուկը 39
Չոփչի 161
Չութչի 341
Չուտողի մալը ուտողին հալալ ա 447
Չադու պառավ 563
Չան-Փոլատ 50
Սըռ չպահող կնիկ 490
Սոմբաթի հեքիաթը 525
Սուտասան 415
Սուտիկ ավչու հեքիաթը 517
Սուտ հեքիաթ 513
Ուրշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը . . . 425
Փահլևան հեր ու տղա 450
Քառասուն հարամի 82
Քոսեն ու թագավորի տղեն 363
Օխայ-բաբի 199
Օհանեսի հեքիաթը 555
Օձի հեքիաթը 397
Ֆալաք 315

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան երկրորդ հատորի 5

ԱՅՐԱՐԱՏ

1. Անմահական խնձոր 23
2. Ոսկե ձուկը 39
3. Ջան-Փոլատ 50
4. Քառասուն հարամի 82
5. Մարտիրոսի հեքիաթը 95
6. Խոզարած 107
7. Կոմբալ տու... 121
8. Ղամբար 134
9. Ղահրաման-Բլուք 145
10. Ջոփլի 161
11. Թարխան թագավորի հեքիաթը 175
12. Մորթալի հեքիաթը 189
13. Օխալ-բաբի 199
14. Խուդավերդի 222
15. Գնդցու տղեն ու թագավորի աղչիկը 234
16. Մեռլի հրնշտակը 243
17. Աղվեսը, Գելը, Արջը ու Ջմռուտ-ղուշը . . . 254
18. Գառնիկ-աղպեր 260
19. Հարսներն ու տալը 266
20. Երկու աղպեր 277

1646—42

21. Անչիգյար մեր 284
22. Հալալը չհարամող կնիկը 286
23. Աստու պահած գառը գելը չի ուտի 295
24. Մարդիս ճակատի գրածը չի ջնջվի 310
25. Ֆալաք 315
26. Էրազ տեսնող աշկերտը 324
27. Ջուբչի 341
28. Մախոխի հեքիաթը 354
29. Քոսեն ու թագավորի տղեն 363
30. Արջի քոթոթը 379
31. Խմոր ուտող էրեխեն 388
32. Օձի հեքիաթը 397
33. Իրեք աղպրտինք 403
34. Աղդիլակ 406
35. Մարդ իրա յորղաննու գյորա պտի ոտը մեկնի . . 413
36. Սուտասան 415
37. Գիժ աղպոր, խելոք աղպոր նաղլը 416
38. Ուրշի համար ֆոր փորողը ինքը կընկնի մեջը . . 425
39. Բեդոլվաթ տղեն 431
40. Մնողասեր տղեն 437
41. Ջուտողի մալը ուտողին հալալ ա 447
42. Փահլևվան հեր ու տղա 459
43. Ամոթով հարսը 459
44. Երուսաղեմ դու գնացիր 461
45. Հոր տված իրեք խրատը 465
46. Ինչ որ ցաննես, ըն էլ կհնձես 487
47. Գող հարսը 489
48. Սըռ չպահող կնիկ 490
49. Անզգամ կնիկը 492
50. Ըսենց էլ չի մնա 497
51. Անմահական վարդ 501
52. Աստոծ որ ուղենա հարստություն տա՝ կրեբի հերդկով էլ վե կածի 505
53. Թամբալը 507
54. Սուտ հեքիաթ 513
55. Սուտիկ ավչու հեքիաթը 517
56. Իրեք քառի հեքիաթը 521

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1. Տարբեր ակներ

1. Սամթաղի հեքիաթը 525
2. Ավչի-օղլի 534
3. Հավատարիմ կնիկը 545
4. Օհաննեսի հեքիաթը 555
5. Քադու պառավ 563
6. Կեղտակեր մարդ 568
7. Հունարով գողեր 571

Հավելված II. Նմուշ վաղարշապատի խոսվածքից՝ գիտական տառադարձությամբ 574

ՊԱՆՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 597

ԲԱՌԱՐԱՆ, ՑԱՆԿԵՐ

Բառարան 629
Հեքիաթների ցանկը ըստ տեղի և ասացողների . . 652
Հեքիաթների այբբենական ցանկ 654

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐ
ՀԱՏՈՐ II

Հրատ. խմբագիր՝ Հ. Մկրտչյան
Գեղ. ձևավորումը՝ Լ. Սապոյանի
Տեխ. խմբագիր՝ Մ. Մարտիրոսյան
Վերատեսուչ սրբագրիչներ՝ Ա. Ալանյան, Ա. Միրզոյան

ՎՖ 07634 Պատվեր 1646, Հրատ. 1749 ԽՀԽ 580 Տիրաժ 15 000

Հանձնված է արտադրության 25/VIII 1959 թ.
Մտորագրված է տպագրության 20/XI 1959 թ.։
Թուղթ՝ 60×92 1/16։ Տպագր. 41,25 մամ.+ 1 ներդիր, հրատ. 31 մամ.։
Գինը կազմով 14 ռ. 50 կ.։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության Հրատարակչության գործերի
և պոլիգրաֆարդյունաբերության Գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Լենինի պողոտա № 51։

ՀԱՅՊՈԼԻԴՐԱՖՀՐԱՏԻ
№ 6-րդ ապարան, Լենինի պողոտա № 51
ՍՏՈՒԳՈՂ № 2
Գրքի մեջ դեֆեկտ հայտնաբերելու դեպքում խնդրվում է գիրքը բերքիկի հետ միասին վերադարձնել ապարանին, փոխարենը առանձալ նորը: